208.2
Z-93

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

1849 [illegible]

[illegible]

3

59

2007-42

2004

220
1836
486-ԱՎ ՆՈՐ
220
486-ԱՎ

ԿՏԱԿԱԲԱՆ

208.2
Ա-93 Կ

ՏԵՂԻՆ ՄԵԲՈՑ ՅԻՍՈՒՍՈՒ

ՔՐԻՍՏՈՍԻ

1004
T 5558

Վերադառնալ հաստատությանը պետական
հաշիվ ներկայացնելու համար
վճռով:

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի Տպարանի Ս. Ղազարու Ս. Աբգարեան:
1848

Հ.Ս.Խ.Հ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. ԱՄՆ ԱՉԱՆԱ ԵՐԵՎԱՆ
7
ИМЕНИ Мясни и на
Ա. Ս. ԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

[illegible]

[illegible]

[illegible]

ՑԱՆԿ

Էջ.

Ա. Հետարան ըստ Մատթէոսի . . .
Ա. Հետարան ըստ Մարկոսի . . 80
Ա. Հետարան ըստ Ղուկասու . . 130
Ա. Հետարան ըստ Յովհաննու . . 215
Առաքելոց Գործքերը . . . 277
Պօղոս Առաքեալին Թուղթը առ Հռով-
մայեցիս 357
» Ա. Կորնթացիս Առաջին . 392
» Ա. Կորնթացիս Երկրորդ . 426
» Ա. Գաղատացիս . . . 450
» Ա. Եփեսացիս . . . 462
» Ա. Փիլիպեցիս . . . 474
» Ա. Կողոսացիս . . . 483
» Ա. Թեսաղոնիկեցիս Առաջին . 492
» Ա. Թեսաղոնիկեցիս Երկրորդ . 500
» Ա. Տիմոթէոս Առաջին . 505
» Ա. Տիմոթէոս Երկրորդ . 515
» Ա. Տիտոս 523
» Ա. Փիլիմոն 528
» Ա. Եբրայեցիս . . . 531
Ընդհանրական Թուղթ Յակոբոս . 557
Առաջին Ընդհանրական Թուղթ Պետրոսի 567
Երկրորդ Ընդհանրական Թուղթ Պետրոսի 577
Առաջին Ընդհանրական Թուղթ Յովհաննու 584
Եքերորդ Ընդհանրական Թուղթ Յովհան-
նու 594
Երրորդ Ընդհանրական Թուղթ Յովհան-
նու 596
Ընդհանրական Թուղթ Յուդայի . 598
Յայտնութիւն Յովհաննու . . . 601

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ։

ԳԼ. Ա։

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի Դաւթի
որդւոյն , Աբրահամի որդւոյն ։
2 Աբրահամ ծնաւ Իսահակը . Իսահակ ծնաւ
Յակոբը . Յակոբ ծնաւ Յուդան ու անոր եղ-
3 բայրները ։ Յուդա ծնաւ Փարէսը ու Զարան
Թամարէն . Փարէս ծնաւ Եզրոնը . Եզրոն ծնաւ
4 Արամը ։ Արամ ծնաւ Ամինադաբը . Ամինադաբ
ծնաւ Նաասոնը . Նաասոն ծնաւ Սաղմոնը ։
5 Սաղմոն ծնաւ Բոոսը Հռաքաբայէն . Բոոս ծնաւ
Ովբէդը Հռութէն . Ովբէդ ծնաւ Յեսսէն .
6 Յեսսէ ծնաւ Դաւիթ թագաւորը ։ Դաւիթ թա-
7 գաւոր ծնաւ Սողոմոնը Ուրիայի կնիկէն ։ Սողո-
մոն ծնաւ Րոբոամը . Րոբոամ ծնաւ Աբիան .
8 Աբիա ծնաւ Ասափը ։ Ասափ ծնաւ Յովսաբաթը .
Յովսաբաթ ծնաւ Յովրամը . Յովրամ ծնաւ
9 Ոզիան ։ Ոզիա ծնաւ Յովաթամը . Յովաթամ
10 ծնաւ Աքազը . Աքազ ծնաւ Եզեկիան ։ Եզեկիա
ծնաւ Մանասէն . Մանասէ ծնաւ Ամովսը . Ա-
11 մովս ծնաւ Յովսիան ։ Յովսիա ծնաւ Յեքոնիան
ու անոր եղբայրները Բաբելացւոց գերութեան
12 առնելը ։ Բաբելացւոց գերութենէն ետև՝ Յեքոնիա
ծնաւ Սաղաթիէլը . Սաղաթիէլ ծնաւ Զօրաբա-
13 բէլը ։ Զօրաբաբէլ ծնաւ Աբիուդը . Աբիուդ
ծնաւ Եղիակիմը . Եղիակիմ ծնաւ Ազովրը ։
14 Ազովր ծնաւ Սադովկը . Սադովկ ծնաւ Աքինը .

Ա֊քին ծնաւ Եղիուդը ։ Եղիուդ ծնաւ Եղիա֊ 15
զարը · Եղիազար ծնաւ Մատթանը · Մատթան
ծնաւ Յակոբը ։ Յակոբ ծնաւ Յովսէփը Մա֊ 16
րիամին կրիկը , որուն նշանված էր Մարիամ
կոյս , ուրկից ծնաւ Յիսուսը , որ ըսվիցաւ
Քրիստոս ։ Ասանկ բոլոր ազգերը Աբրահամէն 17
մինչև Դաւիթ տասնըչորս ազգ , և Դաւիթէն
մինչև Խարելացոց գերութիւնը՝ տասնըչորս
ազգ , ու Խարելացոց գերութենէն մինչև Քրիս֊
տոս՝ տասնըչորս ազգ ։

Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդը աս կերպով 18
էր · անոր մայրը Մարիամ Յովսէփին նշանված ,
դեռ իրարու քով չեկած՝ Հոգին Սուրբէն յղա֊
ցած գտնվեցաւ · Եւ Յովսէփ անոր կրիկը 19
արդար մարդ ըլլալով՝ ու չուզելով որ անիկա
խայտառակ ընէ , մտմտաց առանց ձանձունի թող
տայ անիկա ։ Եւ երբոր անիկա աս կմտմտար՝ 20
ահա Տէրոջը հրեշտակը երազին մէջ երեւցաւ
իրեն ու բսաւ , Յովսէփ Դաւիթի որդի՝ մի՛ վախ֊
նար քեզի առնելու քու Մարիամ կնիկդ , ինչու
որ անոր ներսիդին ծնածը՝ Հոգին Սուրբէն է ։ 21
Որդի պիտի ծնանի , ու անոր անունը Յիսուս
դնես , որ անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն
պիտի խլրսէ ։ Ա֊ ասոնք ամէն բաները եղաւ որ 22
կատարվի Տուածոյ բսածը՝ Եսայի մարգարէին
ձեռքով ։ Ահա կոյսը պիտի յղանանի ու որդի պի֊ 23
տի ծնանի և անոր անունը Էմմանուէլ պիտի
դնեն , որ կրնի արգմանվի Տուած մեզի հետ ։
Եւ Յովսէփ քունէն արթնցալով ինչպես Տուա֊ 24
ծոյ հրեշտակը իրեն հրամայեց նէ այնպես բրաւ ,
ու իրեն կնիկը քովն առաւ ։ Եւ չէր գիտեր անի֊ 25
կա մինչև իր առջնեկ որդին ծնաւ , ու անոր
անունը Յիսուս դրաւ ։

ԴԱՆԻԷԼ · Ի ։

1 Եւ երբոր Յիսուս ծննաւ Երեմիայի Գալիլեա-
հեմին մէջ Երեսփոխան թագաւորին օրերը ,
2 ահա մոգերը արեւելքէն Երուսաղէմ եկան , ա-
սելին · Ո՞ւր տեղ է ան՝ որ հրեաներուն թագաւոր
ծնաւ · ինչու որ մենք անոր աստղը արեւելքը տե-
սանք՝ ու եկանք անոր երկրպագութիւն ընելու ։
3 Եւ երբոր Երեսփոխան թագաւորը լսեց՝ տակնուս-
4 վրայ եղաւ , ու բոլոր Երուսաղէմ իրեն հետ ։ Եւ
ժողվելով բոլոր քահանայապետները ու ժողո-
վուրդին գրագացողները , հարցուց անոնց՝ թէ
5 Քրիստոս ո՞ւր պիտի ծնանի ։ Անոնք ալ իրեն ը-
սին՝ Երեսփոխան Գալիլեհեմին մէջ · ինչու որ
6 այսպէս գրուած է մարգարէին ձեռքովը ։ Եւ
դուն Գալիլեհեմ Յուդային երկիրը , Յուդայի
իշխաններուն մէջ պզտիկ մը չես · քու մէջէդ իշ-
խան մը պիտի ելլայ՝ որ իմ Իսրայէլ ժողո-
7 վուրդս կառավարէ ։ Այն ատենը Երեսփոխան գաղ-
տուկ մոգերը կանչեց , ու ատկէ մը քննեց ա-
8 նոնցմէ աստղին երեւցած ատենը ։ Եւ Գալիլե-
հեմ խրկեց անոնք , ըսելով , Գացէք տեղեկացեք
իմացէք ան մանուկին համար , ու երբ որ գտնաք՝
ինծի իմացուցէք , որ ես ալ գամ անոր երկրր-
9 պագութիւն ընեմ ։ Եւ երբ անոնք թագաւորէն
ա լսեցին՝ գացին · ու ահա ան աստղը որ տեսան
արեւելքը՝ անոնց առջեւէն գնաց , մինչեւ որ եկաւ
10 կայնեցաւ մանուկին եղած տեղին վրայ ։ Երբոր
տեսան աստղը , շատ մեծ ուրախութիւնով խըն-
11 գացին ։ Եւ երբ որ տունն մտան՝ տեսան մանուկը
իր Մարիամ մօրը հետ , ու իյնալո երկրպագու-
թիւն բրին անոր , և իրենց գանձերը բանալով՝
ընծաներ տըրին անոր՝ ոսկի ու կնդրուկ և զմուռ ։
12 Ու հրաման առնելով երազի մէջ՝ որ Նորէն Երե-
սփոխին չի դառնան , ուրիշ ճամբով գացին
իրենց աշխարհը ։

Երբոր անկից գացին անոնք , ահա Հրեշտակ Տեառն երազի մէջ երեւցաւ Յովսէփին՝ ու 18
ըսաւ . Ելիր , առ մանուկը և իրեն մայրը՝ ու Եգիպտոս փախիր , և հոն կեցիր մինչև ես քեզի ըսեմ , ինչու որ՝ Հերովդէս կորսընցնել կուզէ մանուկը ։ Ան ալ ելաւ մանուկը ու անոր մայրը 14
գիշերանց առաւ՝ և գնաց Եգիպտոս . ու մինչև Հերովդէս մեռաւ հոն էր ։ Որ կատարվի Տէ- 15
րոջմէն ըսածը մարգարէին ձեռքով , որ կըսէ , Եգիպտոսէն պիտի կանչեմ իմ որդիս ։

Ինատեներ երբոր տեսաւ Հերովդէս թէ խաբ- 16
վեցաւ մոգերէն՝ սաստիկ սրդողեցաւ , ու խրկեց ջարդեց բոլոր Երեմիէի և անոր բոլորտիքը գտնուած մանր տղաքը երկու տարվընէն վար , ան ժամանակի վրայ՝ որ մոգերէն հասկրցաւ ։ Ան 17
տեներ կատարվեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով ըսածը , որ կըսէ ։ Ուսմայի ձայն մը լսվեցաւ , 18
ողբ , լաց ու մեծ կոծ . Հռաքել կուլար իրեն զաւակները , ու չեր ուզեր միխիթարվիլ , ինչու որ չի կային ։

Եւ երբ որ Հերովդէս մեռաւ՝ ահա Տէրոջը 19
հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէփին երեւցաւ , ու ըսաւ , Ելիր , առ մանուկը ու անոր 20
մայրը՝ և գնա Իսրայելի երկիրը . ինչու որ՝ մեռան անոնք , որ մանուկին կեանքը կուզէին ։ Ան ալ 21
ելաւ մանուկը ու անոր մայրը առաւ՝ և եկաւ Իսրայելի երկիրը ։ Եւ երբոր լսեց թէ Արքեղայոս 22
Թագաւորեց Հրէաստանի վրայ իր հօրը Հերովդէսին տեղը , վախցաւ հոն երթալու . ու երազին մէջ հրաման առնելով Գալիլեայի կողմերը 23
գնաց ։ Եւ եկաւ Նազարէթ բնակեցաւ . որ մարգարէներուն խօսքը կատարվի թէ Նազովրեցի պիտի կանչվի ։

ԳԼՈՒԽ Գ ։

1 Ն օրերը Յովհաննէս մկրտիչ եկաւ Հրեաս-
2 տանի անապատին մէջ քարոզելու , ու ըսե-
լու , Պաշխարեցէ՛ք , ինչու որ երկնից թագա-
3 ւորութիւնը մօտիկ է ։ Վասն զի ասիկա ան է ,
որուն համար Եսայի մարգարէին ձեռքով ըսվե-
ցաւ , որ կըսէ , Ձայն մը՝ որ անապատին մէջ կը-
կանչէ , Պատրաստ ըրէք Տէրոջը ճամբան , ու շըտ-
4 կեցէք անոր քայլելու գետինը ։ Եւ Յովհաննէսին
հանդերձը էր՝ ուղտի մազ , ու իր մէջքը կաշիէ
գօտի . և իրեն կերակուրը էր մարախ ու լեռնա-
5 մեղր ։ Նաեւներ բոլոր Երուսաղէմացիք ու բոլոր
Հրէաստան և Յորդանանի բոլոր կողմերը իրեն
6 կերթային , կըմկրտվէին իրմէն Յորդանան գե-
տին մէջ , ու իրենց մեղքերը կըխոստովանէին ։
7 Եւ երբոր տեսաւ Փարիսեցոց-
մէ շատերը եկած իրեն մկրտութեանը , ըսաւ
անոնց , Ժէխտնուղներ , ո՞վ խրատուց ձեզի՝ գալու-
8 քարկութենէն փախչիլ ։ Ուրեմն ապաշխարու-
9 թեան արժանաւոր պտուղ բերէք ։ Եւ մի՛ խոր-
հիք դուք ձեր ներսիդին ըսել , Թէ մենք մեզի
հայր Աբրահամ ունինք . ձեզի կըսեմ՝ որ Աս-
տուած կարող է աս քարերէս Աբրահամին որդի-
10 ներ հանել ։ Հիմայ ալ կացինը ծառերուն ար-
մատին քով դրուած է , ամէն ծառ որ բարի պըտ-
ուղ չի բերեր , կըկտրվի ու կրակը կրձգվի ։
11 Ես ձեզ կըմկրտեմ ջրով ապաշխարութեան հա-
մար՝ բայց իմ ետևէս եկողը՝ ինծմէ զօրաւոր է ,
ու ես անոր կոշիկները կրելու արժանի չեմ ,
անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու կրա-
12 կով ։ Որուն հեծանոցը իրեն ձեռքն է և իրեն
կալը պիտի մաքրէ , ու ցորները իրեն համբարը
պիտի ժողվէ . և յարդը անմարելի կրակով պիտի
էրէ ։

Ընտանիք Յիսուս Պաղեստինէն Յորդանան 13
եկաւ Յովհաննէսի , որ անկից մկրտուի ։ Եւ 14
Յովհաննէս արգիլեց անոնք ու ըսաւ , ինծի
պէտք է որ քեզմէ մկրտուիմ , ու դուն ինծի՞ մի
կուգաս ։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ 15
անոր , թող տուր հիմայ . ինչու որ մեզի այսպէս
կըվայելէ որ բոլոր արդարութիւնները կատա-
րենք . ու ետքը թող տուաւ անոր ։ Եւ երբոր 16
Յիսուս մկրտուեցաւ՝ շուտ մը ջուրէն դուրս ելաւ ,
և ահա երկինքը անոր բացվեցաւ , ու տեսաւ որ
Աստուծոյ Հոգին աղաւնիի պէս կիջնար ու կու-
գար իրեն վրայ ։ Եւ ահա երկինքէն ձայն մը 17
որ կըսէր , Ասիկա է իմ սիրական որդիս , որ իրեն
հաճեցայ ։

Գ.

Ընտանիք Յիսուս անապատը տարվեցաւ 1
Հոգիէն՝ Սատանային փորձվելու համար ։
Եւ քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պա- 2
հելէն ետքը՝ անօթեցաւ ։
Եւ փորձողը եկաւ իրեն ըսաւ . Եթէ որ դուն 3
Աստուծոյ որդին ես՝ ըսէ որ այս քարերս հաց ըլ-
լան ։ Նայիկա պատասխան տուաւ ու ըսաւ , Գրու- 4
ած է որ , Չէ թէ հացով միայն մարդ կապրի . հա-
պա՝ ան բոլոր խօսքերովը որ Աստուծոյ բերնէն
կելլայ ։
Նայնանիք Սատանան առաւ տարաւ անիկա 5
սուրբ քաղաքը , և կայնեցուց անիկա տաճարին
աշտարակին վրայ , ու ըսաւ իրեն , Եթէ որ Աս- 6
տուծոյ որդին ես նէ՝ դուն քեզ ասկից վար ձգէ .
ինչու որ գրուած է , Թէ Իր հրեշտակներուն
ապագըրված է քեզի համար . ու քեզ ձեռքի վրայ
պիտի կրբռնեն , որ քնաս քու ոտդ քարի չի զար-
նես ։ Յիսուս՝ նորան ըսաւ անոր , Գրուած է թէ 7
քու Տէր Աստուածդ չի փորձես ։

8 Այսաւնան նորէն առաւ Հանեց անիկա շատ
բարձր լեռան մը վրայ, և ցուցուց անոր բոլոր
աշխարհին թագաւորութիւնները ու անոնց
9 փառքերը. ու ըսաւ իրեն՝ Ասոնք ամէնը քեզի
կուտամ՝ թէ որ իյնաս ինձի երկիրպագութիւն
10 ընես։ Ինսուսը ըսաւ անոր. Երթս գնա
Սատանա, ինչու որ գրուած է Տէրոջ Աստու-
ծուդ երկիրպագութիւն ընես, ու միայն անիկա
11 պաշտես։ Այս ատեն Սատանան իրեն թողուց, և
ահա հրեշտակները եկան ու իրեն ծառայութիւն
կընէին ։

12 Եւ երբոր լսեց Ինսուս թէ Յովհաննէս մատ-
13 նըվեցաւ՝ ձգեց գնաց Գալիլեա. ու ձգելով Նա-
զարէթը եկաւ բնակեցաւ Կափառնայում՝ ծովե-
զերքին քով, Զաբուղոնի ու Նեփթաղիմի եր-
14 կիրները. որ կատարվի Եսայի մարգարէին ձեռ-
15 քով ըսած խօսքը. Զաբուղոնի երկիրը ու Նեփ-
թաղիմի երկիրը, ծովու ճամբով Յորդանանու
16 միկայ կողմը, հեթանոսներուն Գալիլեան։ Ժո-
ղովուրդը որ խաւարի մէջ նստող, մեծ լոյս տեսաւ,
ու լոյս ծագեց անոնց վրայ՝ որոնք մահուան երկի-
17 րին ու շուքին մէջ կընստէին։ Ընկէ ետև՝ Ին-
սուս սկսեց քարոզել ու ըսել, Ապաշխարեցէք
ինչու որ երկնից թագաւորութիւնը մօտ է։
18 Երբոր Ինսուս Գալիլեացոց ծովին քովերը
կըպտրտէր, տեսաւ երկու եղբայրները՝ Սիմոնը
որ Պետրոս կըսուէր, և անոր եղբայրը Անդրէաս
զը, ծովը ուռկան ձգած. քանզի որ ձուկ բռնող
19 էին։ Ու ըսաւ անոնց. Իմ ետևէս եկէք, ու ձեզ
20 մարդիկներու ոսրսորդ ընեմ։ Անոնք ալ շուտ մը
21 գործերնին թողուցին՝ անոր ետևէն գացին։ Եւ
անկից առաջ երթալով, տեսաւ երկու եղբայր-
ներ ալ, Զեբեդեան Յակոբոսը, ու անոր եղ-
բայրը Յովհաննէսը նաւին մէջ՝ իրենց հօրը
Զեբեդեային հետ երբ իրենց ուռկանները կկար-
22 կըտէին ու կանչեց անոնք։ Անոնք ալ շուտ մը

նաւը ու Հայրերնին Թողուցին՝ անոր հետէն գա-
ցին ։

Եւ Յիսուս բոլոր Գալիլեացոց կողմերը կը- 23
պտռտէր , կըսորվեցուներ անոնց ժողովարանն-
րուն մէջ , ու աւետեարանը կը-
քարոզէր , և ժողովուրդներուն մէջի ամէն կերպ
հիւանդութիւնները ու ամէն կերպ ցաւերը կը-
բժշկէր ։ Եւ իր անունը Ասորիներուն բոլոր եր- 24
կիրը տարածվեցաւ , և բերին իրեն բոլոր հի-
ւանդները որ կերպ կերպ ցաւերով ու տանջանք-
ներով կընեղէին , ու դիւահարները և լուսնոտ-
ները ու անդամալոյծները . և բժշկեց անոնք ։
Եւ շատ ժողովուրդ իրեն հետէն կերթային ։ 25
Գալիլեացին ու Վեհապօլիսէն , և Երուսաղէ-
մէն , ու Հրէաստանէն , և Յորդանանին մէկալ
կողմէն , ու բժշկեց անոնք ։ Եւ տեսնալով ան Ե
ժողովուրդները՝ լեռը կըլաւ , ու երբոր նստաւ հոն՝
իր աշակերտները քովը դացին . և իր բերանը բա- 2
նալով՝ կըսորվեցուներ անոնք , ու կըսէր ։

Երանի հոգւով աղքատներուն , ինչու որ 3
երկնից թագաւորութիւնը անոնցն է ։ Երանի 4
ազաւորներուն , ինչու որ անոնք պիտի մխիթար-
ուին ։ Երանի հեզերուն , ինչու որ անոնք պիտի 5
ժառանգեն աշխարհը ։ Երանի անոնց՝ որ անօ- 6
թի ու ծարաւ են արդարութեան , ինչու որ անոնք
պիտի կըշտանան ։ Երանի ողորմածներուն , ինչու 7
որ անոնք ողորմութիւն պիտի գտնան ։ Երանի 8
անոնց՝ որ սրտովնին սուրբ են , ինչու որ անոնք
պիտի տեսնան Աստուած ։ Երանի խաղաղութիւն 9
ընողներուն , ինչու որ անոնք Աստուծոյ զաւկը-
ներ պիտի բաւին ։ Երանի անոնց՝ որ հալածված 10
են արդարութեան համար , ինչու որ երկնից
թագաւորութիւնը անոնցն է ։ Երանի ձեզի՝ 11
երբոր կրնախատեն ձեզ և կրհալածեն , ու սուտ
տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կրխօսին վրանիդ՝
ինձի համար ։ Խնդացէք և ուրախ եղէք , ինչու 12

որ ձեր վարձքը շատ է երկինքը · քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները ։

13 Դուք երկրին աղն էք · Հապա թէ որ աղը իր համը կորսընցուներ , ինչը ինչով պիտի աղվի · անկէ ետև բանի մը չի գար , միայն թէ դուրս ձգվելու և մարդկանց ոտքին տակը կոխվելու ։

14 Դուք աշխարհի լոյսն էք · քաղաք մը՝ որ լեռան

15 վրայ կեցած է , չի կրնար պահվիլը ։ Ու ճրագը չեն վառեր և դներ գրուխին տակը · հապա՝ աշտանակին վրայ , և լոյս կուտայ բոլոր տանը մէջ ե-

16 զողներուն ։ Նմանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին , որ տեսնան ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը՝ որ երկինքն է ։

17 Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները ապրելու · չեկայ ապրելու , հապա կա-

18 տարելու ։ Ճշմարիտ կըսեմ ձեզի՝ Մինչև որ երկինք և երկիր անցնին , օրէնքներէն և մարգարէներէն ոեմիամը որ նշանագիր մըն է՝ պիտի

19 չանցնի , մինչև բոլորն ալ կատարվին ։ Ով որ այս պզտիկ պատուիրանքներուն մէկը կաւրէ , ու մարդոց անանկ կրսորվեցունէ , անիկա պզտիկ պիտի կոչվի երկնից թագաւորութեան մէջը · բայց ով որ կրնէ և կրսորվեցունէ անիկա մեծ պիտի կոչ-

20 վի երկնից թագաւորութեան մէջը ։ Ուստի կըսեմ ձեզի որ՝ թէ ձեր արդարութիւնը կարգացողներուն ու փարիսեցիներուն արդարութենէն աւել չըլլայ՝ երկնից թագաւորութիւնը չէք մտնար ։

21 Լսերէք՝ որ առաջիններուն ըսվեցաւ թէ , Սպանութիւն մի՛ ընար , քանզի ով որ սպանութիւն կրնէ դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ ։

22 Բայց ես ձեզի կըսեմ թէ Ով որ իր եղբօրը պարապար տեղը սրդողի , դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ · և ով որ իր եղբօրը անմիտ ըսէ՝ տեսանի պարտաւոր պիտի ըլլայ · և ով որ իր

եղբօրը խնդի ըսէ՝ դէհ՚ևանի կրակին պարտաւոր
պիտի ըլլայ ։ Ով որ քու ընծադ սեղանին վրայ 23
կը բերես , ու հոն միտքդ կուգայ՝ թէ քու եղ-
բայրդ քէն բաներ է քու վրադ , ձգէ քու ընծադ 24
սեղանին առջևը , դնա առաջ եղբօրդ հետը հաշ-
տուիլ , և յետոյ եկող քու ընծադ մատո ։ Վրա- 25
նէրհակիդ հետը չուտով մը միաբանէ , քանի որ
անոր հետ ճամբուն մէջ ես · չըլլայ թէ քու ներ-
հակդ քեզ դատաւորին մատնէ , և դատաւորը
դահիճին , և բանտը ձգվիս ։ Ամէնարիւ կըսեմ 26
քեզի , չի պիտի ելլաս անկից , մինչև որ եւթի մանր
ստակը չի վճարես ։

Լսեր էք որ բսվեցաւ , Չ ընու թիւն մի՛ ընէր ։ 27
Բայց ես ձեզի կըսեմ , թէ Ով որ կնիկ մարդու 28
կընայի անոր ցանկանալու համար , անիկա իրեն
սրտին մէջն ալ շնութիւն ըրաւ անոր հետ ։ Եւ 29
որ աչ աչքդ չեզ կրգայլմակղեցունէ , հանէ
անիկա՝ ու քեզմէ ձգէ , ինչու որ՝ աղէկ է քեզի որ
անդամներուդ մէկը կորսըվի , ու քու բոլոր մար-
մինդ դժոխքը չերթայ ։ Եւ թէ որ աջ ձեռքդ քեզ 30
կրգայլմակղեցունէ , կտրէ անիկա ու քեզմէ ձգէ ·
ինչու որ՝ աղէկ է քեզի որ անդամներուդ մէկը
կորսըվի , ու քու բոլոր մարմինդ դժոխքը չի ձգվիս ։
Ըրաւ բսվեցաւ թէ՝ Ով որ իր կնիկը թող կու- 31
տայ , թող անոր արձակման գիր տայ ։ Բայց ես ձե- 32
զի կըսեմ , Ով որ իր կնիկը թող կուտայ
առանց պոռնկըլուն պատճառի , ինքը պատճառ
կըլլայ անոր շնութիւն ընելուն , և ով որ ան
թողված առնէ՝ շնութիւն կըզործէ ։

Կարձեալ լսեր էք որ բսվեցաւ առջիններուն , 33
թէ Սուտ երդում մի՛ ըներ , հապա ըրած երդում-
ներդ վճարէ Տէրոջը ։ Բայց ես ձեզի կըսեմ , Ո- 34
մէնևին երդում մի՛ ընէք · ոչ երկինքի վրայ՝ որ
Աստուծոյ աթոռն է , և ոչ երկրի վրայ՝ որ անոր 35
ոտացը դնելու տեղն է , ու ոչ Երուսաղէմի վրայ՝
որ մեծ թագաւորին քաղաքն է · և ոչ քու գլխուդ 36

վըայ երդում՝ ընես , ինչու որ չես կընար մէկ
37 մազ մը ձերմըկցուներ կամ սեցուներ ։ Հապա
ձեր խօսքը ըլլայ հան՝ հա , ու չէն՝ չէ · և ասկէ
եվելը՝ չարէն առաջ կուգայ ։
38 Լսերէք որ ըսուեցաւ , թէ Աչքի տեղ՝ աչք · ու
39 ակռայի տեղ՝ ակռա ։ Բայց ես ձեզի կըսեմ՝ , Չա-
րին հակառակ մի՛ կենաք · բայց թէ որ մէկը ապ-
տակ մը զարնէ աջ երեսիդ՝ դարձուր անոր մէ-
40 կալնալ ։ Եւ մէկը որ կուզէ քեզ դատել՝ ու քու
շապիկդ առնել , թող տուր անոր քու վերար-
41 կուդ ալ ։ Եւ ով որ զոր տեղը քեզ մղոն մը
42 ճամբայ կըբշէ՝ գնա անոր հետ երկուբ ։ Ո՛ևէմ
ուզողին տուր , ու երես մի՛ դարձուներ անկէ՝ ո՛
կուզէ քեզմէ փոխ առնել ։
43 Լսերէք աս ալ որ ըսուեցաւ , քու ընկերդ սի-
44 րես ու թշնամիդ ատես ։ Բայց ես ձեզի կըսեմ՝ ,
սիրեցէք ձեր թշնամիները · օրհնեցէք ձեզ անի-
ծողները · բարի ըրէք անոնց՝ որ ձեզ կատէն , և
աղօթք ըրէք անոնց վրայ , որ ձեզ կըչարչըրկեն
45 ու կըհալածեն · որ ձեր երկնաւոր Հօրը որդիքը
ըլլաք · ինչու որ իր արևը կըծագեցունէ չարե-
րուն ու բարիներուն վրայ , և անձրև կըթրկէ
46 արդարներուն ու մեղաւորներուն վրայ ։ Վասն
զի թէ դուք ձեզ սիրողները սիրէք՝ նէ՝ ինչ
վարձք ունիք · չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը
47 կընեն ։ Եւ թէ որ ձեր բարեկամներուն միայն
բարև տաք · ինչ աւելի կընէք ։ — չէ՞ որ
մաքսաւորները ու մեղաւորներն ալ նոյնը կընեն ։
48 Ուրեմն դուք կատարեա՛ղ եղէք՝ ինչպես որ ձեր
Երկնաւոր Հայրն ալ կատարեալ է ։

6 Զգուշ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջևը չը-
նէք , իբր թէ անոնց ցուցընելու համար · չենէ
վարձք չէք առներ ձեր Հօրմէն՝ որ երկինքն է ։
2 Ասա՛ երբոր ողորմութիւն կընես՝ առջևդ փող
մի՛ չալեր , ինչպես որ կեղծաւորները ժողովարան-
ներուն ու փողոցներուն մէջ կընեն , որ մարդոցմէ

փառաւորին ։ Ա՛յսմարիտ կըսեմ ձեզի , անոնց
վարձքը միայն ան է ։ Իսկ դուն երբոր ողոր- 3
մութիւն կընես՝ ձախ ձեռքդ թող չգիտնայ ձէ
ձեռքիդ ինչ գործելը ։ որ քու ողորմութիւնդ 4
գաղտուկ ըլլայ , ու քու Հայրդ որ գաղտուկը
կըտեսնայ՝ քեզի յայտնապէս հատուցում պիտի
ընէ ։

Եւ երբոր աղօթք կընես , կեղծաւորներուն 5
նման չըլլաս , որոնք կըսիրեն ժողովարանները
ու փողոցներուն գլուխները աղօթք ընել , որ
մարդոց երեւնան ։ Ճշմարիտ կըսեմ ձեզի , անոնց
վարձքը միայն ան է ։ Իսկ դուն երբոր աղօթք 6
կընես , մտիր քու սենեակդ ու գոցէ դուռներդ և
աղօթք ըրէ քու Հօրդ գաղտուկ , ու քու Հայրդ
որ գաղտուկը կըտեսնայ , քեզի յայտնապէս հա-
տուցում պիտի ընէ ։ Եւ երբոր աղօթք կընէք , 7
հեթանոսներուն պէս շատախօս մի ըլլաք , ինչու
որ կրկարծեն թէ իրենց շատ խօսելուն համար
պիտի լսուին ։ Ուրեմն անոնց չի նմանիք , ինչու որ 8
ձեր Հայրը՝ ձեզի պէտք եղածը գիտէ դուք իրմէն
գոռ չի խնդրած ։ Ուստի ասանկ աղօթք ըրէք 9
դուք ,

Ա՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես , քու անունդ
սուրբ ըլլայ ։ Գալ թագաւորութիւնդ գա , քու 10
կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ
երկրի վրայ ։ Մեր ամէն աւուր հացը՝ տուր 11
մեզի տուր ։ Եւ մեզի նեղէ մեր պարտքերը , ինչ- 12
պէս որ մենք ալ կրնեղինք մեր պարտականներուն ։
Եւ մեզ փորձութեան մի՛ տաներ , հապա՝ չարէն 13
մեզ ազատէ , ինչու որ քուկդ է թագաւորու-
թիւնը և զօրութիւնը , ու փառքը , յաւիտեանս ,
ամէն ։ Վասն զի եթէ որ դուք նեղէք մարդոց ի- 14
րենց յանցանքները , ձեր երկնաւոր Հայրն ալ

15 ձեզի կըներ է : Հապա թէ որ դուք չէք ներեր
մարդոց իրենց յանցանքները , ձեր Հայրն ալ ձե-
զի չի ներեր ձեր յանցանքները :
16 Եւ երբոր ծոմ կըպահէք՝ կեղծաւորներուն
պէս տրտում մի՛ ըլլաք · որ իրենց երեսները կաւ-
րեն որ մարդոց երևնան թէ ծոմ կըպահեն .
ճշմարիտ կըսեմ ձեզի անոնց վարձքը միայն ան
17 է : Իսայց դուն երբոր ծոմ կըպահես՝ գլուխդ օ-
18 ծէ , ու երեսներդ լուա՛ , որ մարդոց ծոմ պահո-
ղի պէս չերևնաս , հապա՝ քու Հօրդ գաղտուկ ,
ու քու Հայրդ որ գաղտուկը կըտեսնայ , քեզի
յայտնապէս Հատուցում պիտի ընէ :
19 Երկրի վրայ ձեզի Համար գանձ մի՛ դիզէք , ուր
որ ցեցը ու ժանկը կապականեն , և ուր գողերը
20 գետնին տակէն կըծակեն ու կըգողնան : Հապա
ձեզի Համար գանձ երկինքը դիզեցէք , ուր որ ոչ
ցեցը և ոչ ժանկը կապականէ , ու ոչ գողերը
21 գետնին տակէն կըծակեն և կըգողնան : Ինչու որ
ձեր գանձը ուր է նէ՝ սիրտերնիդ ալ Հոն կըլլայ :
22 Մարմինին ճրագը աչքն է · Թէ որ քու աչքդ
պայծառ է , բոլոր մարմինդ լուսաւոր կըլլայ :
23 Իսայց թէ որ քու աչքդ վատ է , բոլոր մարմինդ
մութ կըլլայ · ուրեմն՝ թէ որ քու մէջդ եղած լոյ-
սը մութ է նէ , ալ ան մութը որչա՜փ է :
24 Մարդ մը չի կրնար երկու տէրոջ ծառայութիւն
ընել · Քանի՜ որ կամ մէկը պիտի ատէ , և մէկալը
պիտի սիրէ · կամ մէկը պիտի պատուէ , և մէկալը
անարգէ · չէք կրնար Ծառայել Աստուծոյ ու մա-
25 մոնայի : Ինոր Համար կըսեմ՝ ձեզի , Ձեր կեան-
քին Համար մի՛ մտմտաք , թէ՝ ինչ պիտի ու-
տէք , կամ՝ ինչ պիտի խըմէք · ոչ ալ ձեր մար-
միններուն Համար թէ՝ ինչ պիտի հագնիք · չէ՞
որ կեանքը կերակուրէն աւելի է , ու մարմինը՝
26 հագուստէն : Նայեցէք երկինքի թըռչուններուն ,
որ ոչ կըցանեն և ոչ կըքաղեն և ոչ ամբարի
մէջ կըժողվեն , ու ձեր երկնաւոր Հայրը կըկե-

թակրէք անոնք . չէ՞ որ դուք անոնցմէ աւելի ըն-
էք ։ Հիմայ՝ ո՞վ կրնայ ձեզմէ իրեն մեծցնել 27
իր հասակին վրայ կանգուն մը երկրնցունել ։ Եւ 28
հագուստի համար ինչո՞ւ կը մտմտայք . նայեցէք
լեռանը շուշան ծաղիկին՝ ինչպէս կը մեծնայ . ո՛չ
կաշխատի և ո՛չ կը մանէ ։ Ձեզի կըսեմ որ՝ Սո- 29
ղոմոն ալ իրեն բոլոր փառաւորութեան մէջը ա-
նոնցմէ մէկին պէս չի հագուեցաւ ։ Եւ ստի՝ թէ որ 30
լեռան խոտը որ այսօր կայ՝ և վաղը փուռը պի-
տի ձգուի , Աստուած անանկ կը հագուեցունէ նէ ,
հապա որչափ առաւել ձեզ՝ Թերահաւատներ ։
Ասկէ ետև մի՛ մտմտայք ու ըսէք՝ ինչ պիտի ու- 31
տենք , կամ ինչ պիտի խըմենք , կամ ինչ պիտի
հագնինք ։ (Ինչու որ ամէն ատ բաները հեթա- 32
նոսները կրնդունին ։) վասն զի ձեր երկնաւոր
Հայրը գիտէ թէ՝ ամէն ատ բաները ձեզի պէտք
են ։ Պինդ առաջ Աստուծոյ թագաւորութիւնը 33
խնդրեցէք և անոր արդարութիւնը , ու ամէն ատ
բաները ձեզի կեվճնայ ։ Ասկէ ետև վաղուան հա- 34
մար մի՛ մտմտայք . ինչու որ վաղուան օրը իրեն
բանէքուն համար պիտի մըտմըտայ . հերիք է օր-
վան՝ իրեն սըրտմաշուքը ։

Ի ։

Ատի դատէք՝ որ չի դատուիք ։ Ինչու որ՝ ինչ դա- 1
տաստանով դատէք , անով պիտի դատուիք . և 2
ինչ չափով չափէք , պիտի չափուի ձեզի ։ Ինչո՞ւ 3
կընայիս եղբօրդդ աչքին մէջի շուղին , ու քու
աչքիդ մէջի գերանը չես տեսնար ։ Կամ ինծո՞ր 4
կրսես քու եղբօրդդ . Թող տուր աչքէդ շուղը հա-
նեմ , և ահա՛ քու աչքիդ մէջը գերան կայ ։ Կեղ- 5
ծաւոր՝ առաջ քու աչքէդ հանէ գերանը , ու
եղբը պայծառ պիտի տեսնաս եղբօրդդ աչքէն շու-
ղը հանել ։
Ուրբ բանը շուներուն մի՛ տաք , և ձեր մար- 6

գաբիտը խոզերուն առջև մի՛ ձգեք , որ ոտքեր-
նուն տակը չի կոխկըռտեն անոնք , ու գառնան
ձեզի փառատեն :
7 Խնդրեցէք և պիտի տըրվի ձեզի · փնտռեցէք
և պիտի գտնաք , չալեցէք և պիտի բացվի ձեզի :
8 Ինչու որ՝ ամեն ով որ կըխնդրէ՝ կառնէ , և ան
որ կըփնտռէ՝ կըգտնայ , և ան որ կըչալէ՝ պիտի
9 բացվի իրեն : Ձեզմէ ո՞ր մարդը կայ՝ որմէն իր
10որդին հաց ուզէ նէ , քար մի կուտայ անոր : Եւ
կամ թէ ձուկ ուզէ նէ՝ ճա մի կուտայ անոր :
11 Ասպա դուք որ չար էք , ձեր զաւակներուն ա-
ջեկի ընծաներ տալ գիտէք · որչափ աւելի ձեր
Հայրը՝ որ երկինքն է , բարի բաներ պիտի տայ
անոնց՝ որ իրմէն կըխնդրեն :
12 Ուստի ամեն բան՝ որ կուզէք թէ մարդիկ ձեզի
ընեն , դուք ալ անոնց անանկ ըրէք · ինչու որ՝
ասա է օրէնքը ու մարգարէութիւնները :
13 Նեղ դուռնէն ներս մըտէք · ինչու որ լայն է
ան դուռը՝ ու համարձակ ան ճամբան , որ կըտանի
կորստեան · և շատերը կան՝ որ անկէց կըմտնան :
14 Ինչու որ նեղացեալ է ան դուռը՝ ու նեղ է ան
ճամբան , որ դէպի կեանքը կըտանի · և քիչերը
կան՝ որ անկից կըգտնան :
15 Զգոյշ կեցէք ան սուտ մարգարէներէն՝ որ
ձեզի կուգան ոչխարի հագուստներով · բայց
16ներսըմէնց յափշտակող գայլեր են : Իրենց
պտուղէն պիտի ճանչնաք անոնք · մի՞թէ փուշե-
րէն խաղող կըքաղեն , կամ սև փուշէն թուզ :
17 Այսանկ ալ ամեն բարի ծառ՝ բարի պտուղ կու-
18տայ , և չար ծառ՝ չար պտուղ կուտայ : Բարի
ծառը չի կրնար չար պտուղ տալ , ոչ ալ չար
19ծառը բարի պտուղ տալ : Ամեն ծառ որ բարի
պտուղ չի տա՝ կըկտրըվի , ու կըձկին մէջը կը-
20ձգվի : Ուրեմն իրենց պտուղէն իրենք պիտի
ճանչնաք :
21 Ոչ թէ ամեն մէկը՝ որ ինծի Տէր Տէր կըսէ ,

պիտի մանայ երկինքին թագաւորութիւնը · Հա-
պա ան՝ որ իմ՝ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ ։
Շ ատերը ան օրը ինծի պիտի ըսեն , ով Տէր 22
Տէր՝ չէ՞ որ քու անունովդ մարգարէութիւն ը-
րինք , ու քու անունովդ դևեր հանեցինք , ու
քու անունովդ շատ հրաշքներ ըրինք ։ Եւ ան 23
ատենը անոնց պիտի ըսեմ՝ , Ես բնաւ ձեզ չեմ
ճանչնար · մեկ դի գացէք քովէս ամբիծքդ՝ որ անօ-
րէնութիւն կը գործէիք ։
Ա մէն ով որ իմ այս խօսքերս կը լսէ՝ ու կը կա- 24
տարէ անոնք , անիկա կընմանի խելացի մարդու մը
որ իր տունը վէմի վրայ շինեց ։ Անձրևները խ- 25
ղան , ու գետերը վազեցին · հովերը փչեցին և
զարկին տանը՝ ու չի փրլաւ · ինչու որ վէմի վրայ
հաստատուած էր ։ Եւ ամէն ով որ այս իմ խօսքե- 26
րս կը լսէ ու չի կատարեր անոնք , կընմանի ան-
խել ք մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ շի-
նեց ։ Անձրևները իջան , գետերը եկան , հովերը 27
փչեցին՝ զարկին տունը ու փրլաւ , և խիստ մեծ
էր անոր կործանումը ։
Եւ երբ եղաւ՝ որ Յիսուս լմընցուց ամէն այս 28
խօսքերը , ժողովուրդները կը զարմանային անոր
վարդապետութեանը վրայ ։ Ինչու որ՝ իշխանու- 29
թիւնով մը կը սորվեցնէր , ու չէ թէ կարգա-
ցողներուն պէս ։

Գ Լ ՈՒ Խ Ը ։

Բ այց երբոր ան լեռնէն վար իջաւ՝ շատ ժողո- 1
վուրդներ գացին անոր ետևէն ։ Եւ ահա մէ- 2
բորտ մը եկաւ , երկրպագութիւն կընէր անոր՝
ու կըսէր , Տէր՝ թէ որ ուզես՝ կրնաս զիս մաք-
րել ։ Յիսուս իրեն ձեռքը երկնցուց ու դպաւ 3
անոր՝ և ըսաւ · Կուզեմ՝ մաքրուիլ · ու շուտով
մը իրմէն բորոտութիւնը մաքրըվեցաւ ։ Եւ Յի- 4
սուս ըսաւ անոր · զգոյշ կեցիր՝ մէկու մը չը՛սես ·
հապա գնա՛ դուն քեզ քահանային ցուցուր , ու

Ա՛ովսէսին ապրսպըրած ընծան տուր , իրենց վկայութիւն ըլլալու համար :

5 Եւ երբոր Կափառնայում մըտաւ՝ հարիւրա-
6 պետ մը եկաւ իրեն , կաղաչէր իրեն . ու կըսէր , Տէր՝ իմ ծառաս տունը անդամալոյծ պառկած է ,
7 չարաչար կըտանջըվի : Յիսուս ըսաւ անոր , Ես
8 կուգամ և անիկա կըբժշկեմ : Պատասխան տուաւ հարիւրապետը և ըսաւ . Տէր՝ ես արժանի չեմ , որ դուն իմ երդիքիս ներքեւը մըտնաս . միայն թէ խօսքով ըսուցէ , ու պիտի բժշկըվի իմ ծա-
9 ռաս : Ինչու որ՝ ես ալ հրամանի տակ մէկ մարդ մըն եմ , իմ ենթականեր ներքեւս զինուորներ ունիմ , ասոր կըսեմ՝ Գնա , ու կերթայ . և մէկալին՝ Եկո՛ր , ու կուգայ . և ծա-
10 ռայիս սա բանը ըրէ՝ ու կընէ : Յիսուս երբոր լսեց՝ զարմացաւ , և իր հետեւէն գացողներուն ըսաւ . Ա՛մէն կըսեմ ձեզի , որ՝ Իսրայէլի մէջ
11 ալ ես ասանկ հաւատք բնաւ չի գտայ : Եւ ձեզի կըսեմ , Որ արեւելքէն ու արեւմուտքէն շատերը պիտի գան , ու երկնից թագաւորութեան մէջ պիտի բազմին՝ Աբրահամին , ու Իսահակին , և
12 Յակոբին հետը : Իսկ թագաւորութեան զաւկըները դուրսի խաւարը պիտի ելլան . հոն պիտի
13 ըլլայ լալ և ակռաներնին կըճըռցունել : Եւ Յիսուս հարիւրապետին ըսաւ , Գնա , և ինչպէս որ դուն հաւատացիր՝ անո՛նք թող ըլլայ քեզի . Իսկ ան օրը անոր ծառան ողջընցաւ :

14 Եւ Յիսուս Պետրոսին տունը եկաւ , տեսաւ որ՝ անոր զրաանչը ջերմէն բռնըված պառկած էր :
15 Անոր ձեռքէն բռնեց , ու ջերմը թող տըւաւ անիկա . ոտքի վրայ ելաւ՝ և ծառայութիւն կընէր անոր :

16 Երբոր իրիկուն եղաւ՝ շատ դիւահարներ բերին իրեն , ու [illegible] հանեց չար ոգիները , և
17 [illegible] Եսայի մարգարէին [illegible] ըսուած [illegible] Անիկա

1004 19558 1936

մեր Հիւանդութիւնները վերցուց և մեր ցաւերը
կրեց ։
Ցետս իրեն չորս կողմը շատ ժողովուրդ տես- 18
նալով , հրաման ըրաւ՝ որ մէկալ կողմը երթան ։
Ու կարգացողին մէկը եկաւ և ըսաւ իրեն . Վար- 19
դապետ՝ ես ալ քու ետևէդ գամ , ուր որ եր-
թաս նէ ։ Ցետս անոր ըսաւ , Աղուէսները որջ 20
ունին , և երկնից թռչունները բոյն . բայց Որ-
դին մարդոյ տեղ մը չունի , որ հոն իր գլուխը
դնէ ։ Ու իր աշակերտներուն մէկը ըսաւ իրեն , 21
Տէր՝ ինծի հրաման տուր , որ երթամ առաջ իմ
հայրը թաղեմ ։ Ցետս ըսաւ անոր , Եկո՛ իմ 22
ետևէս , ու թո՛ղ տուր մեռելներուն որ թաղեն
իրենց մեռելները ։
Եւ երբոր նաւը մտաւ , իր աշակերտները 23
իրեն ետևէն գացին ։ Ու ահա՛ մեծ ալեկոծու- 24
թիւն մը եղաւ ծովին մէջ . անանկ որ՝ նաւը ա-
լեքսներէն կծածկուէր , և ինքը կրքնանաքոր ։
Ու աշակերտները գացին արթնցուցին անոր և 25
ըսին . Տէր՝ մեզ ազատէ . ինչու որ կրկորսը-
վինքմոր ։ Եւ ըսաւ անոնց . Թո՛ւրխաւաստներ՝ 26
ինչու վախկոտ էք . անաստներ նկաւ Հովերը ու
ծովը սաստեց , և մեծ խաղաղութիւն եղաւ ։ Ու 27
մարդիկը զարմացան և կըսէին , Ո՛նչպէս մարդ է
ա՛ս՝ որ հովերը ու ծովը ասոր կը հնազանդին ։
Եւ երբոր մէկալ կողմը Գերգեսացոց երկիրը 28
անցաւ , հոն երկու դիւահար պատահեցան իրեն
գերեզմաններէն ելած՝ սաստիկ կատաղած . որ հետ
չէր մէկուն ան ճամբայէն անցնել ։ Ու մէ՛կալ 29
կանչ վըռտացին և ըսին . Ցետս Աստու-
ծո՛յ դուն մեր հետը ինչ բան ունիս , ատենէ
գո՞ւրս եկար մեզ տանջելու ։ Եւ անոնցմէ քիչ մը 30
հեռու խոզի երամակ մը կար , որ կարածկէին ։
Ու դեները կաղաչէին իրեն և կըսէին , Թէ՝ որ 31
մեզ ասկէ կը հանես՝ հրաման ըրէ մեզի որ եր-
թանք խոզերուն երամակին ։ Ու ըսաւ անոնց . 32

Կացէք · և անոնք եկան գացին խոզերուն երա-
մակին · ու բոլոր երամակը բարձր տեղէն ծովը
33 վազեցին , և ջուրերուն մէջը մեռան : Խոզաբա-
ծողներն ալ փախան , և գացին քաղաքը բոլորը
պատմեցին , ու դիւահարներուն պատահած բա-
34 նները : Ու ահա բոլոր քաղաքը Յիսուսին դէ-
մը ելաւ · երբոր տեսան անիկա՝ աղաչեցին իրեն ,
որ իրենց երկիրէն երթայ :

ՂՈՒԿԱՅ · ԺԱ ·

1 Ան նաւը մտաւ՝ մէկալ կողմը անցաւ , և եկաւ
2 իրեն քաղաքը : Ու ահա անդամալոյծ մը
բերին իրեն , որ մահիճին մէջը պառկած էր · և
Յիսուս անոնց հաւատքը տեսնալով՝ անդամալոյ-
3 ծին ըսաւ , Տէրվի քեզի քու մեղքերդ : Եւ
ահա կարդացողներէն ոմանք իրենց մտքին մէջը
4 ըսին · Այս մարդս հայհոյութիւն կընէկոր : Յիսուս
ալ անոնց խորհուրդը իմանալով՝ ըսաւ իրենց ·
Ինչու սրտերնուդ մէջը չար բաներ կխորհիք :
5 Ո՞րը դիւրին է , ըսել՝ Տէրվի քեզի քու մեղ-
6 քերդ , եթէ ըսել՝ Ելիր ու քալէ : Այլ գիտնաք
որ , Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի
վրայ մեղքերու թողութիւն տալու · (ան ատենը
անդամալոյծին ըսաւ) Ելիր՝ մահիճդ առ ու տուր
7 դէպ տունդ : Ու նորա իր տունը գնաց : Ժողո-
8 վուրդները երբոր տեսան՝ զարմացան , ու կրկին
ուռուցին Աստուած , որ մարդոց անանկ իշխա-
նութիւն կուտայ :

9 Եւ Յիսուս անկէց որ կանցնէր՝ մէկ մարդ մը
տեսաւ Մատթէոս անունով , որ մաքս ընդու-
նելու նստեր էր , ու ըսաւ անոր , Եկուր ետևէս եկոր ·
10 և ելաւ անոր ետևէն գնաց : Ու եղաւ որ տունը
սեղան նստած ատենը՝ ահա ուրիշ շատ մաքսա-
ւորներ և մեղաւորներ ալ եկած , ու սեղան նըս-
տած էին Յիսուսին և իրեն աշակերտներուն

հետը ։ Փարիսեցիները երբոր տեսան՝ ըսին իրեն 11
աշակերտներուն . Ինչու համար ձեր վարդապետը
մաքսաւորներուն և մեղաւորներուն հետը կուտէ ։
Այլ Յիսուս երբոր լսեց՝ ըսաւ անոնց , Ա՛ռողջ- 12
ներուն բժիշկ պէտք չէ , հապա՝ հիւանդներուն ։
Գացէք սորվեցէք ի՛նչ է ասոր խօսքը՝ Ողորմութիւն 13
կուզեմ , և չէ թէ զոհ . ինչու որ ես արդարները
կանչելու չեկայ , հապա մեղաւորները ։

Յն ատենը Յովհաննէսին աշակերտները եկան՝ 14
ու ըսին . Ինչու մենք և փարիսեցիները շատ ան-
գամ ծոմ կըպահենք , ու քու աշակերտներդ չեն
պահեր ։ Յիսուս ըսաւ անոնց . Միթէ կարելի՞ 15
է որ՝ հարսնիքին տղաքը սուգ պահեն , քանի որ
փեսան իրենց հետն է . բայց օրեր պիտի գան՝ որ
ատեն փեսան իրենցմէ վիրցըվի՝ ու հապա ծոմ
պիտի պահեն ։ Մէկը չի ձգեր նոր կարպետի կը- 16
ատոր հին հագուստի վրայ , ինչու որ ան՝ որ անոր
լրութեանը համար դրված է , կառնէ հանդեր-
ձէն՝ ու պատռածը ալ էվելըք գէշ կըլլայ ։ Ու- 17
ալ նոր գինին հին տիկերու մէջ կդընեն . չէ նէ՝
տիկերը կըպատուին՝ ու գինին կըթափի , և տիկե-
րը կըկորնչին ։ Հապա նոր գինին նոր տիկերու
մէջ կըդընեն , և երկուքն ալ կըպահվին ։

Երբոր Յիսուս անոնց հետը ասիկա կըխօսէր , 18
ահա իշխան մը եկաւ երկիրպագութիւն կընէր
իրեն ու կըսէր . Աղջիկս մինչև ալ հիմայ մեռաւ ,
բայց կուգ ձեռքդ անոր վրայ դիր որ պիտի ապրի ։
Ելաւ Յիսուս ու գնաց անոր ետևէն աշակերտ- 19
ներուն հետը ։

Եւ ահա տասներկու տարուան տեւառատես կին 20
մը եկաւ ետևէն անոր հանդերձին ծայրին դպաւ ։
Ինչու որ իր միտքին մէջը ըսաւ , Միայն թէ որ 21
անոր լաթերուն դպչիմ՝ կըբժշկիմ ։ Այլ Յի- 22
սուս երբոր ետին դարձաւ ու անիկա տեսաւ ,
ըսաւ . Կարիճ կեցիր աղ չկէ , քու հաւատքդ քեզ
բժշկեց . և ան ժամէն բժշկեցաւ ։

23 Երբոր Յիսուս իշխանին տունը եկաւ , ու տե-
սաւ փող չալողները և շատ բազմութիւնը , ըսաւ
24 անոնց · Մեկ դի կեցէք · ինչու որ աղ չիկը մեռած
չէ հապա կը քնանակոր · և ծաղր կընէին անիկա :
25 Եւ երբոր բազմութիւնը մեկ դի եղաւ՝ ներս մտաւ՝
անոր ձեռքէն բռնեց , ու աղ չիկը յարուցաւ ա-
26 ռաւ : Եւ ասոր ձայնը բոլոր ան երկիրը տարածե-
ցաւ :
27 Ու երբոր Յիսուս անկից կանցնէր՝ երկու կոյր
իրեան անոր նուէին , կաղաղակէին՝ ու կըսէին ·
28 Դաւիթ մեզի Որդի Ազատի : Եւ երբոր տունն
եկաւ , կոյրերը իրեն եկան · և Յիսուս անոնց
ըսաւ · կըհաւատաք , թէ կրնամ ասոր բանը ձեզի
29 ընել · ըսին անոր այո Տէր : Ան ատենը անոնց
աչքերուն դպաւ՝ ու ըսաւ · Ձեր հաւատքին
30 պէս ըլլա ձեզի : Ու անոնց աչքերը բացվեցան ,
և սաստիկ պատուէր տուաւ Յիսուս անոնց ու
31 ըսաւ · Ողջուշ կեցէք , մեկը չիմանայ : Բայց ա-
նոնք ելան բոլոր ան երկիրները ձանձրնեցին
անիկա :
32 Եւ երբոր անոնք դուրս ելան , ահա մունճ դի-
33 ւահար մարդ մը բերին իրեն : Ու երբոր դեւը
եկաւ համրը խօսեցաւ , և ժողովուրդները զար-
մացան՝ ու ըսին · Թէ ասանկ բան Իսրայէլացոց
34 մէջ բնաւ չի տեսնըվեցաւ : Բայց փարիսեցիները
կըսէին ասիկա դեւերուն իշխանին ձեռքովը դեւե-
րը կըհանէ :
35 Եւ Յիսուս կըպտըտէր բոլոր քաղաքները ու
գեղերը , անոնց ժողովարաններուն մէջը կըսոր-
վեցնէր , ու կըքարոզէր Թագաւորութեան
աւետարանը · և կըթժշկէր բոլոր ախտերը ու բո-
36 լոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ : Եւ
ժողովուրդները տեսնալով՝ անոնց վրայ խղճաց ·
ինչու որ հոգնած ու ցիրուցան եղած էին՝ հովիւ
37 չունեցող ոչխարներու պէս : Ան ատենը ըսաւ իր
աշակերտներուն · Հունձքը առատ են , բայց մը-

շակները քիչ ։ Ուստի Հունձերուն Տէրոջը աղա- 38
չեցէք , որ մշակ հանէ իր Հունձերուն ։

ԳԼՈՒԽ Ժ ։

Եւ իր քովը կանչելով իրեն տասներկու աշա- 1
կերտները , իշխանութիւն տուաւ անոնց
պիղծ դևերուն վրայ՝ անունք հանելու , և ամէն
կերպ ցաւերը ու ամէն կերպ հիւանդութիւնները
բժշկելու ։
Եւ տասներկու Առաքելոց անուններն ասոնք 2
էին ։ առջինը Սիմոն՝ որ Պետրոս կոչուեր , և անոր
եղբայրը Անդրէաս ։ Յակոբոս Հալեդեայ , և 3
անոր եղբայրը Յովհաննէս ։ Փիլիպպոս և Բար-
թողիմէոս , Թովմաս և Մատթէոս մաքսաւոր ։
Յակոբոս Ալփեան , և Դ եբէոս որ Թադէոս ըս-
վեցաւ ։ Սիմոն կանանացի և Յուդա Իսկարիով- 4
տացի , որ նաև մատնեց զնիքը ։
Զս տասներկուքը Յիսուս խրկեց , ապըպրեց 5
անոնց՝ ու ըսաւ ։ Հեթանոսներուն ճամբան մի՛ եր-
թաք , ու Սամարացիներուն քաղաքը մի՛ մտնաք ։
Հապա երթալէք Իսրայէլի տանը կորսուած ոչ- 6
խարներուն գացէք ։ Եւ երբ որ կերթաք՝ քարո- 7
զեցէք ու ըսէք թէ , Երկնից թագաւորութիւնը
մօտ է ։ Հիւանդները բժշկեցէք , բորոտները 8
սրբեցէք , դևերը հանեցէք , ձրի առեր էք՝ ձրի
տուէք ։ Ո՛չ ոսկի և ոչ արծաթ , և ոչ 9
պղինձ ձեր գօտիներուն մէջը ։ Ո՛չ ճամբու տոպ- 10
րակ , և ոչ երկու հանդերձ , ոչ կօշիկ , ոչ գա-
ւազան ։ Ինչու որ մշակը իրեն կերակուրին ար-
ժանի է ։ Ու քաղաք կամ գեղ մտնաք , հար- 11
ցուցէք թէ՝ ո՞վ է անոր մէջը արժանաւոր ։ ու հոն
կեցէք մինչև որ անկէց ելլաք ։ Եւ երբոր տունը 12
կրմտնաք՝ բարև տուէք անոր ու ըսէք , Խաղա-
ղութիւն տանը ։ Եթէ որ ան տունը արժանաւոր է նէ՝ 13
ձեր բարևը անոր վրայ թող գայ ։ Հապա թէ որ
արժանաւոր չէ նէ՝ ձեր բարևը ձեզի թող դար-

14 նայ : Եւ ով որ ձեզ չընդունի ու ձեր խօսքին
մտիկ չընէ , երբոր ան տունէն կամ քաղաքէն
15 կելլաք՝ ձեր ոտքերուն փոշին թօթվեցէք : Ճշ-
մարիտ կըսեմ ձեզի՝ Սոդոմացոց ու Գոմորացոց
երկրին դիւրին պիտի ըլլայ դատաստանին
օրը՝ քան թէ ան քաղաքին :
16 Ահա ես ձեզ ոչխարներու պէս գայլերուն մէջ
կըխրկեմ . ուստի օձերու պէս շատ խոհեմ եղէք , և
17 աղաւնիներու պէս միամիտ : Մարդիկներէն զգ-
ուշ կեցէք , ինչու որ ձեզ ատեաններու պիտի
մատնեն , ու իրենց ժողովարաններուն մէջը ձեզ
18 պիտի տանջեն : Եւ դատաւորներուն ու թագա-
ւորներուն առջին ձեզ պիտի տանին ինծի հա-
մար , վկայութիւն ընելու անոնց՝ և հեթանոսնե-
19 րուն : Երբոր ձեզ մատնեն՝ հոգ մի ընէք
թէ ինտր կամ ինչ պիտի խօսիք . ինչու որ ձե-
զի պիտի տրըվի այն ժամին , ինչ որ պիտի խօսիք :
20 Ինչու որ՝ չէ թէ դուք էք որ կըխօսիք , հապա
ձեր Հօրը Հոգին , որ ձեր ներսի դին կըխօսի :
21 Եղբայր՝ եղբայրը մահու պիտի մատնէ , ու հայ-
րը՝ որդին . և որդիք հօրերուն վրայ պիտի ել-
22 ան՝ ու մեռցունեն անոնք : Եւ ամէնէն ատելի
պիտի ըլլաք իմ անունիս համար . բայց ան՝ որ
23 մինչև ետքը կրհամբերի , պիտի ապրի : Եւ եր-
բոր ասոր քաղաքին մէջ ձեզ կրհալածեն՝ ուրիշ
տեղ փախէք . և թէ որ անկից կրհալածեն ձեզ՝
միւս տեղը փախէք . Ճշմարիտ կըսեմ ձեզի ,
Իսրայէլի քաղաքները չի պիտի հասցունէք ,
24 մինչև Որդին մարդոյ գայ : Աշակերտը իր վարդա-
պետէն էվել չէ , և ոչ ծառան իրեն Տէրոջմէն :
25 Հերիք է ան աշակերտին՝ թէ որ իրեն վարդապե-
տին պես ըլլայ , ու ծառային իրեն տերոջը պես .
թէ որ տունին տէրը Բէեղզեբուղ կանչեցին , որ-
26 չափ էվելոք անոր ընտանիքներուը : Ուստի մի
վախնաք անոնցմէ . ինչու որ՝ բան մը չի կայ ծա-
ծուկ՝ որ չի պիտի յայտնըվի , և գաղտուկ՝ որ չի

պիտի գիտցըվի ։ Ինչ որ ձեզի մուխին մէջը կը- 27
սեմ , ան՝ի՛ս լոյսին մէջ խօսեցէք · և ինչ որ ա-
կանջ ի վար կը լըսէք , տանիքներուն վրայ քա- 28
րոզեցէք ։ Եւ մի՛ վախնաք անոնցմէ՝ որ մարմինը
կըսպաննեն , ու չեն կրնար հոգին սպաննել ·
Հապա՝ երկեղը անկէց վախցէք , որ կրնայ հոգին
ու մարմինը գեհեանին մէջ կորսընցնել ։ Ա՛ի 29
որ երկու ճնճղուկ մէկ ատակի կը ծախվին , և
անոնցմէ մէկը գետինը չի՛նար առանց ձեր հօրը ։
Այլ ձեր գլուխն բոլոր մազերն ալ համրըված 30
է ։ Ա՛ւրեմն մի՛ վախնաք · ինչու որ շատ ճնճղուկ- 31
ներէն լաւ էք դուք ։ Ա՛վ որ մարդոց առջև իս 32
կըդաւանի , ես ալ անիկա կըդաւանիմ իմ՝ հօրը
առջեւ՝ որ երկինքն է ։ Եւ ո՛վ որ մարդոց 33
առջև իս կուրանայ , ես ալ անիկա կուրանամ
իմ՝ հօրը առջև՝ որ երկինքն է ։ Ա՛ի խորհիք թէ՝ 34
ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ · խա-
ղաղութիւն ձգելու չեկայ , հապա՝ թո՛ւր ։ Ինչու 35
որ՝ եկայ մարդը իր հօրմէն քակելու , ու աղ չիկը՝
իր մօրմէն , ու հարսը՝ իր կեսուրէն ։ Եւ մարդուն 36
թշնամիները իր ընտանիքը պիտի ըլլա՛ն ։ Ա՛ն՝ որ 37
հայրը ու մայրը ինծմէն աւելի կըսիրէ , ինծի ար-
ժանի չէ · և ա՛ն՝ որ տղան կամ աղ չիկը ինծմէ
աւելի կըսիրէ , ինծի արժանի չէ ։ Եւ ա՛ն՝ որ իր 38
խաչը չառնէր ու իմ ետևէս գար , ինծի ար-
ժանի չէ ։ Ա՛ն՝ որ իր անձը կըգտնայ , պիտի կոր- 39
սընցունէ անիկա · և ա՛ն՝ որ իր անձը ինծի համար
կըկորսընցունէ , պիտի գտնայ անիկա ։ Ա՛ն՝ որ 40
ձեզ կընդունի , իս կընդունի · և ա՛ն՝ որ իս կըն-
դունի , իս խրկողը կընդունի ։ Ա՛ն՝ որ մարգարէ 41
մը կընդունի մարգարէի անունով , մարգարէի
վարձք կառնէ · և ա՛ն՝ որ արդար մը կընդունի ար-
դարի անունով , արդարի վարձք կառնէ ։ Ու ա՛ն՝ 42
որ ասպետիներէն մէկուն միայն գաւաթ մը պաղ
ջուր կըխմցունէ աշակերտի մը անունով , ճշմա-
րիտ կըսեմ ձեզի իր վարձքը չի՛ կորսընցնեներ ։

ԴԱ · ԺԸ ։

1 Եւ եղաւ որ երբ Յիսուս լմնցուց իր տաս-
ներկու աշակերտներուն պատուէրը , գնաց
անկէց անոնց քաղաքները քարոզելու և սորվե-
ցունելու ։
2 Իսայի Յովհաննէս բանտին մէջը երբոր լսեց
Քրիստոսի գործքերը՝ իր աշակերտներուն ձեռ-
3 քովը խրկեց , ու ըսաւ անոր · Դուն ա՞ն ես՝ որ
4 պիտի գաս , թէ ուրիշի մը նայինք ։ Պատասխան
տուաւ Յիսուս և ըսաւ անոնց , Գացէք պատ-
մեցէք Յովհաննէսին՝ ինչ որ տեսաք ու լսեցիք ։
5 Կոյրերը կրտեսնան , կաղերը կրգրալեն , բորոտ-
ները կրսրբրվին , ու խուլերը կրլսեն , և մե-
ռելները յարութիւն կառնեն , ու աղքատները
6 աւետարանի քարոզութիւն կրնդունին ։ Եւ երա-
նէ է անոր , որ իմ վրաս չի գայթակղիր ։
7 Եւ երբոր անոնք գացին՝ Յիսուս սկսաւ ժողո-
վուրդներուն ըսել Յովհաննէսին համար , Ինչ
տեսնալու ելաք անապատին մէջ · եղէգ մը հովին
8 շարժուած ։ Այլ ինչ տեսնալու ելաք · փափուկ
լաթերով զարդարուած մարդ մը · ահա փափուկ
պատեր հագնողները թագաւորներուն տուները
9 են ։ Հապա ինչ տեսնալու ելաք · մարգարէ՞ ,
իրաւ կրսեմ ձեզի , Այո մարգարէէ մըն ալ աւե :
10 Ինչու որ ան է որուն համար գրուած է · Ահա
ես իմ դեսպանս պիտի խրկեմ քու երեսիդ առ-
ջևին , որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առ-
11 ջևդ ։ Ճշմարիտ կրսեմ ձեզի , կիներուն ծը-
նունդին մէջը Յովհաննէս Մկրտիչէն մեծը եւած
չէ · սակայն երկնից թագաւորութեան մէջի պզտիկը
12 անկից մեծ է ։ Ու Յովհաննէս Մկրտիչին
օրերէն մինչև հիմայ երկնից թագաւորութիւնը
ուժով կառնըվի , և ուժովները կրսպրչտակեն
13 անիկա ։ Ինչու որ բոլոր օրէնքը ու մարգարէ-

ներբը մինչև Յովհաննէս մկրտարէութիւն ըլլին ։
Եւ թէ կուզէք ընդունել , անիկա է Եղիան՝ որ 14
պիտի գար ։ Ան՝ որ լսելու ականջ ունի , թող 15
լսէ ։ Որո՞ նմանցուցնեմ ես այս ազգը . կը նմանի 16
տղոց , որ շուկաները կը նստին իրենց ընկերները
կը կանչեն , ու կըսեն . Փող չալեցուինք ձեզի՝ ու չէք 17
խաղացիք , ողբ կարգացինք ձեզի՝ ու չէք լացիք ։
Յովհաննէսը եկաւ՝ ո՛չ կուտէր և ո՛չ կը խմէր , 18
ու կըսեն՝ Դեւ կայ ներսիդին ։ Որդին մարդոյ 19
եկաւ՝ կուտէ և կը խմէ , ու կըսեն՝ Ա՛յս ուտող և
խմող մարդ մը՝ մաքսաւորներուն ու մեղաւոր-
ներուն բարեկամը . և իմաստութիւնը արդարա-
ցաւ իրեն տղոցմէն ։

Անոնք սկսան նախատել ան քաղաքները , 20
որոնց մէջը եղան իրեն շատ հրաշքները , ու ա-
պաշխարեցին ։ Ա՛յ քեզ Քորազին , վա՛յ քեզ 21
Բեթսայիդա . ինչու որ եթէ Տիւրոսի և Սիդոնի
մէջը եղած ըլլային ան զօրաւոր հրաշքները՝ որ
ձեր մէջը եղան , շատոնցմէ պիտի քուրձով ու մո-
խիրով ապաշխարած ըլլային ։ Ասոր ձեզի կը 22
սեմ . Տիւրոսի երկրին և Սիդոնին եվել դիւրին
պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ ձեզի ։
Եւ դուն Կափառնայո՛ւմ՝ մինչև երկինքը չէ 23
պիտի բարձրընաս , հապա մինչև դժոխքը պիտի
իջնաս . ինչու որ եթէ Սողոմի մէջ եղած ըլլային
ան զօրաւոր հրաշքները , որ քու մէջդ եղան ,
իրաւ որ մինչև այս օրը պիտի մնային ։ Ասոր ձեզի 24
կըսեմ՝ որ Սողոմացոց երկրին եվել դիւրին պիտի
ըլլայ դատաստանին օրը , քան թէ քեզի ։

Յայն ժամանակին պատասխան տուաւ Յիսուս՝ 25
ու ըսաւ , Շնորհակալ եմ քեզմէ՝ ով Հայր՝
Տէր երկինի և երկրի , որ ասոնք ծածուկ պահե-
ցիր իմաստուններէն և գիտուններէն , ու տղոցը
յայտնեցիր ։ Այո՛ ով Հայր . ինչու որ քու առ- 26
ջիդ ասանկ հաճելի եղաւ ։ Ամեն բան ինծի տըր- 27
ւեցաւ իմ Հօրմէս . ու մեկը չի ճանչնար Որդին՝

բայց Հայր · և մեկը չի ճանչնար Հայրը՝ բայց Որդին · և ան՝ որուն որ Որդին կուզէ յայտնել :
28 Եկէք ինծի բոլոր հոգնած ու բեռնաւորածներ ,
29 և ես ձեզ կ՚հանգչեցնեմ : Իմ լուծս ձեր վրայ առէք , և ինծմէ սորվեցէք որ՝ հեզ եմ ու սրտով խոնարհ · որ ձեր անձերուն հանգիստ
30 թիւն պիտի գտնէք : Ինչու որ՝ իմ լուծս քաղցր է , և իմին բեռս՝ թեթեւ :

ԺԲ՝ ԺԱ՝ :

1 Ան ատենը Յիսուս շաբաթի օրը գնաց անոնց արտերուն միջէն · և իր աշակերտները անօթեցան , ու սկսեցին ցորենի գլուխ փըրցուցնել և
2 ուտել : Փարիսեցիները՝ երբոր տեսան , ըսին անոր · Ա՛հա քու աշակերտներդ կը գործեն , որ
3 արժան չէ շաբաթի օրը գործել : Ան ալ անոնց ըսաւ , Չէք մի կարդացեր դուք Դաւիթին ըրածը , երբոր անօթեցաւ ինք՝ ու անոնք որ իր
4 հետ էին : Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը , և առաջաւորութեան հացը կերաւ , որ չէր իրեն օրհնուած էր ուտել , և ոչ անոնց՝ որ իր հետ
5 էին , բայց միայն քահանաներուն : Կամ թէ՝ օրէնքին մէջը չէք կարդացեր , որ քահանաները շաբաթի օրերը տաճարին մէջը շաբաթը կ՚պղծեն , ու անմեղ են : Բայց ձեզի կ՚ըսեմ որ , Ա՛ս տեղը
7 տաճարէն մեծ մէկը կայ : Եւ թէ որ գիտնայիք՝ թէ ըսել է , Ողորմութիւն կ՚ուզեմ՝ ու չէք մեղ
8 ադ , անտանները անպարտները չէիք դատապար տեր : Ինչու որ՝ Որդին մարդոյ շաբաթին տէր է :

9 Եւ Յիսուս անկէց գնաց՝ եկաւ անոնց ժողո-
10 վարանը : Եւ հոն մէկ մարդ մը կար՝ որ իր ձեռքը չորցած էր · հարցուցին անոր՝ ու ըսին թէ , Շաբաթի օրը բժշկել արժան է · որ անոր վրայ
11 շաբաթասութիւն բնեն : Ան ալ անոնց ըսաւ · Ձեզմէ ո՛վ է ան մարդը՝ որ մէկ ոչխար մը ու-

նենայ , և ան՝ շաբաթ օրը փոսի մէջ իյնայ՝ նէ՝
չի բռներ ու վեր հաներ անկից ։ Ուրեմն ինչափ 12
եվլ է մարդը ոչխարէն . անանկ է նէ՝ շաբաթ
օրը բարի գործել պէտք է ։ Ընտաներն ըսաւ ան 13
մարդուն . Երկնցուր ձեռքդ . ան ալ երկնցուց ,
ու ողջընցաւ ձեռքն ալ ։ Նայց փարիսեցիները 14
դուրս ելան՝ անոր վրայ խորհուրդ կընէին՝ թէ
ինտոր անկից կորսընցնեն ։

Ու Յիսուս երբոր գիտցաւ՝ զատվեցաւ անկից · 15
և շատ ժողովուրդներ անոր ետևէն գացին , ու
ամէնը բժըշկից ։ Եւ պատուիրից անոնց , որ ին- 16
կուն չի յայտնեն իրեն համար ։ Որ Եսայի մար- 17
գարէին ձեռքով ըսածը լցվի · Ահա իմ ծառաս՝
որ ընտրեցի , և իմ սիրելիս՝ որուն հաւնեցաւ իմ
անձը . իմ հոգիս անոր վրայ պիտի դնեմ , ու
հեթանոսներուն իրաւունք պիտի պատմէ ։ Ան 19
պիտի հակառակի , և ոչ պիտի կանչվըռտէ . և
ոչ մէկը պիտի լսէ անոր ձայնը փողոցներուն
մէջ ։ Ջախջախած եղէգը չի պիտի փորէ , ու 20
պլպլըլած պատրույկը չի պիտի մարէ , մինչև որ
դատաստանը յաղթութեան հանէ ։ Եւ հեթա- 21
նոսները անոր անունին պիտի յուսան ։

Ընտաներն իրեն դիւահար մը բերվեցաւ , կոյր 22
ու մունջ . և բժըշկից անիկա՝ անանկ որ մունջը
ու կոյրը խօսցաւ և տեսաւ ։ Զարմացան բոլոր 23
ժողովուրդները՝ ու կըսէին . Արդեօք ասիկա է
Քրիստոսը Դաւիթին որդին ։ Նայց փարիսեցի- 24
ները երբոր լսեցին՝ ըսին . Ասիկա ուրիշ բանով
դևերը չի հաներ . բայց Հէեղզեբուղով դևե-
րուն իշխանովը ։ Երբոր Յիսուս անոնց խոր- 25
հուրդը իմացաւ՝ ըսաւ անոնց . Ամէն թագաւո-
րութիւն իրեն դէմ բաժնըված՝ կաւերի . և ամէն
քաղաք կամ տուն իրեն դէմ բաժնըված՝ չի
ձեար ։ Եւ թէ որ Սատանան՝ Սատանայ հանէ , 26
իրեն դէմ բաժնըվեցաւ . ուստի ինտոր պիտի
ձեայ անոր թագաւորութիւնը ։ Ու թէ որ ես 27

Ո՛վ եղկելաւորուած գաւառը կը՛ծանեայ , ձեր զաւկանը-
րը ինչո՞վ կը՛ծանին . ուրեմն անոնք պիտի ըլլան
28 ձեզի դատաւորներ : Այլ թէ որ Աստուծոյ հո-
գիովը կը՛ծանեայ ես դեւերը , ուրեմն Աստուծոյ
29 թագաւորութիւնը ձեր վրայ հասած է : Կամ
ինծի՞ կրնայ մէկը ուժով մարդու մը տուները
մտնել , և անոր բաները յափշտակել , թէ որ
առաջ ան ուժով մարդը չի կապէ , ու տապա
30 թէ անոր տուները յափշտակէ : Ան՝ որ իմ հետս
չէ , ինծի հակառակ է . և ան՝ որ ինծի հետ չի
31 ժողվեր , ցիրուցան կընէ : Անոր համար ձեզի
կըսեմ , Ամէն մեղքերը ու հայհոյանքները պի-
տի ներվին մարդոց , բայց Ա՛ՍՊԻՒ Հոգիին դէմ
32 հայհոյանքը չի պիտի ներվի : Եւ ով որ Որդւոյ
մարդոյ դէմ բան կըսէ՝ պիտի ներվի անոր , բայց
ով որ Հոգւոյն սրբոյ դէմ կըսէ՝ չի պիտի ներվի
անոր , ո՛չ աս աշխարհիս մէջ , և ո՛չ գալու աշ-
33 խարհին մէջ : Կամ ծառը բարի՝ բրէք , ու անոր
պտուղը՝ բարի . կամ ծառը չար բրէք , ու անոր
պտուղը՝ չար . ինչու որ՝ ծառը պտուղէն կըճանչ-
34 ցըվի : Ո՛վ ծնունդներ՝ ի՞նչպէս կրնաք բարի
խօսիլ , որ չար էք . ինչու որ՝ սիրտին էվելցու-
35 քէն բերանը կը՛խօսի : Բարի մարդը՝ իր սիրտին
բարի գանձէն բարի բաներ կը՛հանէ . և չար մար-
դը՝ իր սիրտին չար գանձէն չար բաներ կը՛հանէ :
36 Այլ ձեզի կըսեմ որ , Ամէն դատարկ խօսքերու
համար՝ որ մարդիկ կը՛խօսին , դատաստանին օրը
37 համար պիտի տան : Ինչու որ՝ քու խօսքերէդ պի-
տի արդարանաս , և քու խօսքերէդ պիտի դատա-
պարտիս :

38 Ընաւոնք ոմանք կարդացողներէն ու փարիսե-
ցիներէն պատասխան տուին իրեն՝ ու ըսին .
Ո՛վ արդարեայ՝ կուզենք որ քեզմէ մէկ նշան մը
39 տեսնանք : Անիկա պատասխան տուաւ՝ ու ըսաւ
անոնց . Չար և չնացող ազգը նշան կուզէ , ու
նշան չի պիտի տրըվի անոր , բայց Յովնան մար-

գարէին նշանը ։ Ինչու որ՝ ինչպէս Յովնան իրեք 40
օր՝ իրեք գիշեր կէտ ձուկին փորին մէջն էր , ա-
սանկ Որդին մարդոյ պիտի ըլլայ երկրիս սրտին
մէջը իրեք օր և իրեք գիշեր ։ Նինուէի մարդիկը 41
դատաստանին ատ ազգին դէմ պիտի ելլան , ու
պիտի դատապարտեն զանիկա . ինչու որ՝ Յովնանի
քարոզութիւնէն զղջացան . և ահա Յովնանէն
մեծ մէկը կայ հոս ։ Հարաւի թագուհին՝ դատաս- 42
տանին ատ ազգին դէմ պիտի ելլայ , ու պիտի
դատապարտէ զանիկա . ինչու որ՝ ինքը երկրի ծայ-
րերէն եկաւ , որ Սողոմոնի իմաստութիւնը լսէ .
և ահա Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս ։

Եւ երբոր պիղծ դեւը մարդէ մը կ'ելլայ՝ ցամաք 43
տեղեր կ'պտըտի , հանգիստ կ'փնտռէ ու չի
գտներ ։ Ինա'տներ կ'ըսէ , Վառնամ նորէն իմ 44
տունըս՝ ուսկից որ ելայ . և կուգայ անիկա կը-
գտնայ պարապ՝ մաքրըված ու շքեղըված ։ Ինա- 45
տներ կ'երթայ՝ և իր հետը կառնէ եօթը ուրիշ
դեւեր իրմէն էվելի չար , ու կ'մտնեն՝ կը բնակին
հոն . և ան մարդուն վերջը՝ առջինէն գէշ կ'ըլլայ .
ասանկ պիտի ըլլայ ասչառագիս ալ ։

Երբոր ինքը ժողովուրդին հետը կը խօսէր , 46
ահա՛ իր մայրը և իր եղբայրները դուրսը կայ-
ներ էին՝ ու կ'ուզէին իր հետը խօսիլ ։ Ու մէկը 47
իրեն ըսաւ . Ա'հա քու մայրդ և եղբայրներդ
դուրսը կայներ են , ու կ'ուզեն հետդ խօսիլ ։
Ինիկա իրեն ըսողին պատասխան տուաւ՝ ու ը- 48
սաւ . Ո՞վ է իմ մայրը , կամ ո՞վ են իմ եղբայր-
ները ։ Եւ իր ձեռքը դէպ ի՛ աշակերտներուն 49
երկնցուներով՝ ըսաւ . Ա'հա իմ մայրըս՝ և իմ
եղբայրներըս ։ Վասն զի՝ ո՛վ որ իմ երկնաւոր 50
Հօրըս կամքը կ'կատարէ , անիկա է իմ եղբայրըս
ու քոյրըս , և մայրըս ։

ԳԼ. ԺԹ ։

1 Ա՚ն օրը Հիսուս տունէն ելաւ՝ ծովին եզերքը
2 նըստեցաւ ։ Եւ շատ ժողովուրդներ քովը
ժողվըվեցան , անոնք որ ինքը նաւը մըտաւ՝ ու
նըստեցաւ ։ և բոլոր ժողովուրդը ծովին եզերքը
3 կայներ էր , ու շատ բաներ կըխօսէր անոնց ա-
ռակներով՝ և կըսէր ։
4 Ա՚հա սերմ ցանողը ելաւ՝ որ սերմ ցանէ ։ ու
երբոր կըցանէր՝ որ ճամբուն վըայ ինկաւ , և
5 երկինքի թռչուները եկան՝ ու կերաւ անիկա ։ Եւ
ուրիշը ապառաժի վըայ ինկաւ՝ ուր որ շատ հող
չի կար ։ ու շուտով մը բուսաւ , հողը խորուն-
6 կութիւն չունենալուն համար ։ երբոր արեը
ծագեց՝ տաքցաւ , ու արմատ չունենալուն համար
7 չորցաւ ։ Եւ ուրիշը ինկաւ փուշերուն մէջը , ու
8 փուշերը եան՝ և խըղդեցին անիկա ։ Եւ ուրիշը
ինկաւ աղէկ հողի մէջ ։ ու պտուղ կուտաւ՝ որը
Հէնց տարիւր , որը վաթսուն , և որը երե-
9 սուն ։ Ա՚ն որ լսելու ականջ ունի՝ թող լսէ ։
10 Ու աշակերտները եկան՝ ըսին իրեն , Ինչու
11 համար առակներով կըխօսիս անոնց հետ ։ Ա՚նիկա
պատասխան տըւաւ՝ և ըսաւ անոնց ։ Ա՚նոր համար
որ՝ ձեզի տըրված է գիտնալ երկնից թագաւո-
րութեան խորհուրդները , ու անոնց տըրված
12 չէ ։ Ինչու որ՝ ով որ ունի , անոր պիտի տըրվի
ու էվելնայ ։ և ով որ չունի՝ ունեցածն ալ անկէց
13 պիտի վերցրվի ։ Ա՚նոր համար առակներով կը-
խօսիմ անոնց հետ ։ որ տեսնան , ու չի տեսնան ։
14 և լսեն , ու չի լսեն՝ ու միտք չունեն ։ Եւ անոնց
վըայ կըկատարվի Եսայիին մարգարէութիւնը՝ որ
կըսէ ։ Լսելով պիտի լսէք՝ ու պիտի չիմանաք ։ և
տեսնալով պիտի տեսնաք՝ ու պիտի չի տեսնաք ։
15 Ինչու որ՝ աս ժողովուրդս սիրտը թանձրըցաւ ,
և իրենց ականջովը ծանր լսեցին , ու աչքերնին

գոցեցին · որ չըլլայ թէ բնաւ աչքով տեսնան՝ և ականջով լսեն և սիրտով իմանան ու դարձի գան՝ և բժշկեմ ես անոնք ։ 16 Ձայց երանի՛ ձեր աչքերուն՝ որ կը տեսնան ու ձեր ականջներուն՝ որ կը լսեն ։ 17 Ճշմարիտ կըսեմ ձեզի որ շատ մարգարէները և արդարները փափաքեցան տեսնալ՝ ինչ որ դուք կը տեսնաք՝ ու չի տեսան և ձեր լսածը լսելու՝ ու չի լսեցին ։

18 Ձեք դուք սերմնացանողին առակը լսեցէք ։ 19 Ամէն մէկուն՝ որ թագաւորութեան խօսքը կը լսէ և միտք չառնէր՝ չարը կուգայ՝ ու անոր սրտին մէջը ցանուածը կը յափշտակէ · ասիկա՛ է որ ճամբան վրայ ցանուեցաւ ։ 20 Եւ ապառաժին վրայ ցանուածը՝ ան է՝ որ երբ կը լսէ խօսքը՝ ուրախութեամբ կընդունի անիկա ։ 21 Ձայց իր ներսի դին արմատ չունի՝ հապա քիչ մը ատեն կը բերէ · երբոր ան խօսքին համար նեղութիւն մը կամ հալածանք մը ըլլայ՝ շուտով մը կրդայթակղի ։ 22 Փուշերուն մէջ ցանուածը՝ ան է՝ որ երբ կը լսէ խօսքը՝ ու աշխարհիս զգաստութիւնները և հարստութեան խաբեբայութիւնները՝ ան խօսքը կը խեղդեն՝ ու կը լլայ անպտուղ ։ 23 Ձայց աղէկ հողի մէջ ցանուածը՝ ան է՝ որ երբ կը լսէ խօսքը՝ ու միտք կառնէ՝ և պտուղ կուտայ՝ ոմանք հարիւր՝ ոմանք վաթսուն՝ և ոմանք երեսուն ։

24 Ուրիշ առակ մըն ալ առաջ բերաւ անոնց՝ ու ըսաւ · Երկնից թագաւորութիւնը նմանեցաւ մէկ մարդու մը՝ որ իրեն արտին մէջը աղէկ սերմ կրցանէ ։ 25 Եւ երբոր մարդիկները քնացան՝ իր թշնամին եկաւ՝ ու ցորենին մէջը վայրէն որոմ ցանեց՝ ու գնաց ։ 26 Եւ երբոր խոտը բուսաւ՝ ու պտուղը բերաւ՝ անկէ ետև որոմնալ երեցաւ ։ 27 Տանը տիրոջ ծառաները եկան՝ ու իրեն ըսին · Տէր՝ չէ՞ որ դուն քու արտիդ մէջը աղէկ սերմ ցանեցիր · ուստի՞ որոմը ունի՞ ։ 28 Եւ ան ըսաւ անոնց՝ Թշնամի մարդ ըրաւ անիկա · ծառաները

իրեն ըսին . Աւգոս որ՝ երեմանք անիկա մէկ դի
29 քաղենք : Եւ ան ըսաւ անոնց . Չէ . որ չըլլայ թէ՝
որոմը քաղած ատեններիդ ցորենն ալ անոր հետը
30 իրերցունէք : Թող տուէք երկուքն ալ մէկ տեղ
մեծ ցանողը , մինչև հունձի ատենը . և հունձին
ատենը հնձողներուն պիտի ըսեմ . Նախ որոմը
քաղեցէք՝ և անիկա խուրձ խուրձ կապեցէք երե-
լու համար , ու ցորենը իմ ամբարիս ժողվեցէք :
31 Ուրիշ առակ մըն ալ առաջ բերաւ անոնց՝ և
ըսաւ . Երկնից թագաւորութիւնը մանանեխի
հատի նման է , որ անիկա մէկ մարդ մը առաւ՝
32 իր արտին մէջը ցանեց : Որ ամէն սերմերէն պզտ-
իկ է , և երբոր աճի՝ ամէն խոտհնձներէն մեծ
է . ու ծառ կըլլայ , անանկ որ՝ երկինքի թռըչ-
չունները կուգան , և անոր ճիւղերուն վրայ կը-
հանգչին :
33 Ուրիշ առակ մըն ալ զրուցեց անոնց՝ և ըսաւ .
Երկնից թագաւորութիւնը խմորի նման է . որ
անիկա մէկ կընիկ մը առաւ՝ իրեք չափ ալուրի
մէջ պահեց , մինչև որ ամէնն ալ խմորեցաւ :
34 Այս ամէնը առակով խօսեցաւ Յիսուս ժողո-
վուրդին հետ , ու առանց առակի բան մը չէր խօ-
35 սեր անոնց : Որ մարգարէին բանածը կատարվի .
Առակներով պիտի բանամ իմ բերանս . աշ-
խարհին սկիզբէն ծածկըված բաները յայտնի պի-
տի բերեմ :
36 Ինաւնները Յիսուս ժողովուրդները արձրկեց ,
տուն եկաւ . իր աշակերտները եկան իրեն՝ և ը-
սին . Բացին որոմներուն առակը մեկնէ մեզի :
37 Պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Բարի սերմ
38 ցանողը Որդին մարդոյ է : Եւ արտը՝ աշխարհքս
է . բարի սերմ անոնք են , որ թագաւորութեան
39 որդիք են . ու որոմը՝ չարին որդիքներն են : Եւ
թշնամին որ անիկա ցանեց , Սատանան է . ու
հունձքը՝ աշխարհիս վերջն է . և հնձողները՝ հր-
40 եշտակներն են : Ինչպես որ որոմը կըժողվվի

ու կրակին մէջը կերթի , աշխարհիս վերջը անանկ
պիտի ըլլայ ։ Որդին մարդոյ իր հրեշտակները 41
պիտի խրկէ , ու պիտի ժողվեն անոր թագաւո-
րութենէն ամէն գայթակղութիւնները՝ և անունք
որ անօրէնութիւն կը գործեն ։ Ու կրակի փոս- 42
ին մէջը պիտի ձգեն անոնք . հոն պիտի ըլլայ
լալ և ակռաներին կրճրտցունել ։ Այնատենը՝ ար- 43
դարները արեւի պէս պիտի ծագին երկնից թա-
գաւորութեան մէջը . ան՝ որ լսելու ականջ ունի ,
թող լսէ ։

Կարձեալ երկնից թագաւորութիւնը արտի 44
մը մէջ պահված գանձի նման է , որ անկնիկա մէկ
մարդ մը գտնելով կրծածկէ . և ուրախութենէն
կերթայ բոլոր ունեցածը կծախէ , ու ան արտը
կգնէ ։

Կարձեալ՝ երկնից թագաւորութիւնը վաճա- 45
ռական մարդու մը նման է , որ գեղեցիկ մարգա-
րիտներ կփնտռտէ ։ Եւ մէկ պատուական մար- 46
գարիտ մը գտնելով՝ գնաց իրեն բոլոր ունեցածը
ծախեց , ու ան մարգարիտը գնեց ։

Կարձեալ՝ երկնից թագաւորութիւնը ուռկա- 47
նի մը նման է , որ ծովը ձգված է՝ և ամէն տե-
սակէն ժող մը ածած ։ Որ անիկա երբոր լեցաւ՝ քա- 48
շքը հանեցին , ու նստան ափկնները ամանները
ու մէջ ժող մը ընտրեցին , և անպէտը դուրս ձգեցին ։
Այսպէս պիտի ըլլայ աշխարհիս վերջն ալ . հրեշ- 49
տակները պիտի ելլան՝ ու արդարներուն մէջէն
չարերը պիտի պատեն , և անոնք պիտի ձգեն կո- 50
րակի փուռին մէջը . հոն պիտի ըլլայ լալ՝ ու ակ-
ռաներին կրճրտցունել ։

Ասաւ անոնց Յիսուս , Հասկըցաք աս ամէն 51
բաները . ըսին անոր . Այո՛ Տէր ։ Եւ ան ըսաւ 52
անոնց . Ասոր համար ամէն կարդացող՝ որ երկնից
թագաւորութեան աշակերտեալ է , նման է տա-
նուտէր մարդու մը՝ որ իրեն գանձէն կը հանէ նոր
ու հին բաները ։

53 Եւ երբ եղաւ որ կատարեց Յիսուս զայս առակ-
54 ները՝ անկից գաղթեցաւ ։ Ու եկաւ իր գաւառը ,
կսորվեցուներ անոնք իրենց ժողովարանին մէջը ·
մինչեւ որ կզարմանային անոնք և կսէին · Որ-
կա ուսկից ունի այս իմաստութիւնը և զօրութիւն-
55 ները ։ Որկա հիւսին որդին չ՚է մի · չ՚է որ՝ ասոր
մայրը Մարիամ կըսվի , ու ասոր եղբայրները՝
56 Յակոբոս , և Յոսէս , և Սիմոն , և Յուդա ։ Ու
իրեն քոյրերը ամէնը մեր քովը չ՚են մի · ալ ինչը
57 ուսկից այս ամէն բաները ունի ։ Ու կըգայթակ-
ղէին անոր վրայ · և Յիսուս ըսաւ անոնց · Մար-
գարէ մը անպատիւ չ՚է բայց եթէ իր գաւառին
58 ու իր տանը մէջ ։ Եւ հոն շատ զօրութիւններ
չըրաւ՝ անոնց անհաւատութեանը համար ։

ԳԼ · ՅԴ ։

1 Ան ժամանակը Հերովդէս չորրորդապետ Յի-
2 սուսի համբաւը լսեց ։ Ու իր ծառաներուն
ըսաւ , Ասիկա Յովհաննէս մկրտիչն է · ինքը մե-
ռելներէն յարութիւն առաւ · և անոր համար
հրաշքներ կըլլանկոր անով ։
3 Ինչու որ Հերովդէս Յովհաննէսը բռնեց , ա-
սիկա կապեց ու բանտը դրաւ իր եղբօրը Փիլիպ-
4 պոսին կնկանը Հերովդիային համար ։ Վասն զի
Յովհաննէս իրեն կըսէր · Կրնայ արժան չ՚ասիկա
5 առնել ։ Եւ կուզեր սպոր համար անիկա սպան-
նել , բայց ժողովուրդէն կըվախնար · ինչու որ՝
6 մարգարէի տեղ բռներ էին անիկա ։ Եւ երբոր
Հերովդէսի ծնունդին օրը եղաւ , Հերովդիային
աղ ջիկը խաղաց անդան նըստողներուն առջեւ , ու
7 Հերովդէսին հաճելի եղաւ ։ Ուստի երդումով
խոսք տուաւ՝ ինչ որ ուզէ նէ իրեն տալու ։ Եւ
8 ան առաջուց իր մօրմէն խրատված ըլլալով՝
ըսաւ , Տուր ինծի հոս Յովհաննէս մկրտիչին
9 գլուխը ափսէի մը վրայ ։ Ու թագաւորը տրտմե-
ցաւ · բայց երդումին համար՝ և հետը սեղան

նրստողներուն հետ՝ երամեն բրաւ տալ իրեն ։ Ու 10
իրկեց՝ Յովհաննէսը բանտին մէջ գլխատեց ։ Եւ 11
անոր գլուխը ափսեով բերվեցաւ ու տրվեցաւ
աղջիկին, և ան տարաւ իր մօրը ։ Եւ անոր ա- 12
շակերտները գացին՝ ու մարմինը վերցուցին, և
թաղեցին. ու գացին Յիսուսին պատմեցին ։

Եւ երբոր լսեց Յիսուս՝ անկէց նաւով անա- 13
պատ տեղ մը գնաց առանձին. երբոր լսեցին ժո-
ղովուրդները՝ անոր ետևէն գացին քալելով քա-
ղաքներէն ։

Եւ երբոր ելաւ դուրս՝ շատ ժողովուրդ տե- 14
սաւ, խղճաց անոնց վրայ, ու անոնց հիւանդները
բժշկեց ։

Երբոր իրիկուն եղաւ, աշակերտները իրեն 15
եկան՝ ու ըսին. Այս անապատ տեղ մըն է, և օր-
ւան ժամանակը՝ անցած. արձակէ ժողովուրդնե-
րը, որ երթան բոլորտիքի գեղերը՝ իրենց կերա-
կուր առնեն ։ Եւ Յիսուս ըսաւ. Պէտք չէ ա- 16
նոնց երթալ. դուք տուէք առանց որ ուտեն ։
Անոնք ալ ըսին անոր. Հոս բան մը չունինք 17
մենք, միայն թէ հինգ նկան հաց՝ և երկու ձուկ ։
Ու ըսաւ անոնց. Ինծի՛ հոս անկէ ։ Եւ հրա- 18
ման ըրաւ որ ժողովուրդը խոտին վրայ նրստացու- 19
նեն. ու հինգ նկան հացը և երկու ձուկը առաւ՝
դէպ ի երկինքը նայեցաւ, օրհնեց և կրտրեց՝ ու
տուաւ աշակերտներուն նկանակները. և աշա-
կերտները ժողովուրդին ։ Ամենքը կերան և 20
կշտացան. ու տասներկու սակաւ լցուն կրտոր-
նանքներուն փըշրըմածները վերցուցին ։ Եւ ա- 21
ղջիկ որ կերան՝ հինգ հազարի չափ մարդիկ էին
կնիկներէն և տղոցմէն զատ ։

Ու աշակերտները շուտ մը ստոտրցուց նաւ մը 22
մտնալ՝ և իրմէն առաջ մակոյր կողմը անցնել,
երբոր ինքը ժողովուրդները արձակէ ։ Եւ ժողո- 23
վուրդները որ արձակեց՝ ինքը մինակ լեռը ելաւ
աղօթք ընելու. և երբոր իրիկուն եղաւ՝ հոն էր

24 մինակ ։ Ու նաւը շատ ապաթէդով ցամաքէն
բացված՝ ալեկոծութեան մէջ էր , ինչու որ հո-
25 վը դէմ էր ։ Ու գիշերուան չորրորդ բաժինին
առնը Յիսուս գնաւ իրենց եկաւ՝ ծովին վրայէն
26 քայլով ։ Աշակերտները երբոր անիկա տեսան՝
որ ծովին վրայ կը քալէր , շփոթեցան , և ըսին
Թէ՝ Ուրբի երևոյթ բան մըն է . ու վախերնուն
27 կանչ վըռտեցին ։ Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ
անոնց՝ ու ըսաւ . Վստահ եղէք՝ ես եմ , մի՛ վախ-
28 նաք ։ Պետրոս պատասխան տուաւ անոր՝ ու
ըսաւ , Տէր՝ թէ որ դուն ես , հրաման ըրէ ինծի՝
29 որ քեզի գամ աս ջուրերուն վրայէն ։ Եւ ան
ըսաւ , Եկո՛ր · Պետրոս ալ նաւէն իջաւ , ջուրե-
30 րուն վրայէն քալեց՝ և եկաւ Յիսուսին ։ Ու տես-
նը հովը սաստիկ որ տեսաւ՝ վախցաւ , և երբոր սկըսեց
ընկղմիլ՝ կանչ վըռտեց ու ըսաւ , Տէր՝ ազատէ իս ։
31 Եւ Յիսուս շուտ մը իր ձեռքը երկընցուց , բռնեց
անիկա՝ ու ըսաւ . Թերահաւատ՝ ինչու երկբայ-
32 եցար ։ Եւ երբոր նաւը եկան՝ հովը դադրեցաւ ։
33 Ու անոնք որ նաւին մէջ էին , եկան իրեն երկ-
կիրպագութիւն ըրին՝ և ըսին , Իրաւցնէ Որդի
Աստուծոյ ես դուն ։
34 Ու ծովը անցան՝ ցամաքը եկան Գեննեսարէթ ։
35 Եւ երբոր անոր տեղի մարդիկը ճանչցան անիկա ,
խրկեցին բոլոր գաւառը , ու բոլոր հիւանդները
36 իրեն բերին ։ Եւ կաղաչէին իրեն , որ գոնէ մի-
այն իր հանդերձին ծայրին դպչէին , և անոնք որ
դպան՝ բժշկեցան ։

ԳԼ · ԺԶ ։

1 Նատեներ եկան Յիսուսին փարիսեցիները և
Գրագացողները՝ որ Երուսաղէմէն էին , ու
2 ըսին · Ինչու քու աշակերտերդ ծերերուն ա-
ւանդութիւնը զանց կընեն . ինչու որ՝ ձեռքեր-
3 նին չեն լըւար , երբոր հաց կուտեն ։ Անիկա
պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց ։ Ձա՞ր

դուք ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանքը ձեզ կընէք՝ ձեր աւանդութեան պատճառովը ։ Ինչու որ 4
Աստուած բսաւ . Պատուէ հայրըդ և մայրըդ պատուէ ։ Եւ ան՝ որ հայրը կամ մայրը կրբամբաս- 5
սէ , մահով թող մեռնի ։ Եւ դուք կըսէք , Եթէ 6
որ իր հօրը կամ իր մօրը բսէ թէ , Ան բանը՝ որ ինծմէ պիտի չօգնես , Աստուծոյ պատրաստ ընծայ է . ու իր հայրը և մայրը չի պատուէ նէ ապրած է . և ասանկ ձեր աւանդութեանը համար՝ Աստուծոյ խօսքը բանի տեղ չէք դներ ։ Կեղծաւորներ՝ աղէկ 7
մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ Եսայիա՝ ու բսաւ . Այս ժողովուրդս միայն պատկուներովը 8
իս կըպատուէ . և իրենց սիրտերը հեռացած գտած են ինծմէ ։ Պարապ տեղը իս կըպաշտեն . 9
մարդոց պատուիրած բաները իբրև վարդապետութիւն կըսորվեցուներն ։

Եւ ժողովուրդները իրեն կանչելով՝ բսաւ ա- 10
նոնց . Լսեցէք և միտքերնիդ առէք ։ Չէ թէ ինչ 11
բան՝ որ բերանը կըմտնայ , կըպղծէ մարդը . հապա՝ ինչ որ բերնէն կելլայ , անիկա կըպղծէ մարդը ։

Աշակերտները իր աշակերտները եկան՝ բսին իրեն , 12
Գիտես՝ որ Փարիսեցիները գայթակղեցան , երբոր լսեցին ան խօսքը ։ Անիկա պատասխան տուաւ 13
անոնց՝ և բսաւ . Ամեն տունկ՝ որ իմ երկնաւոր Հայրըս չէ տնկեր , պիտի հանվի ։ Թողուտուէք 14
անոնք . երեւի կույր են՝ կույրերու առաջնորդ . կույր որ երբոր կույրին կառաջնորդէ՝ կըսկսալի , ու երկուքն ալ փոսը կիյնան ։ Պատասխան տուաւ 15
Պետրոս՝ և բսաւ . Մեզի ասա առակը ։ Աստ Յիսուս , Դուք ալ տակաւին անմիտ էք . 16
Եւ չէք հասկընար թէ , ամեն բան՝ որ բերանը 17
կըմտնայ , փորը կերթայ՝ ու դուրս կելլայ ։ Այլ 18
ան՝ որ բերնէն կելլայ՝ սիրտէն առաջ կուգայ , և ան կըպղծէ մարդը ։ Ինչու որ՝ սիրտէն կելլան չար 19
խորհուրդները , սպաննութիւնները , շնութիւն-

Նները, պռոնդկութիւնները, գողգոթիւնները, սուտ վկայութիւնները, հայհոյութիւնները։
20 Խոլորասոնք են՝ որ կըպղծեն մարդը. բայց անլըւայ ձեռքով ուտելը՝ չի պղծեր մարդը։
21 Ու Յիսուս անկէց ելաւ՝ Տիւրոսի և Սիդոնի
22 կողմերը գնաց։ Եւ ահա՛ կանանցի կնիկ մը անոնց սահմաններէն ելած՝ կըկանչ վըռտէր ու կըսէր, Ողորմէ՛ ինծի Տէր՝ որդի Դաւիթ, աղ-
23 ջիկս դեւէն սաստիկ կըչարչարվի։ Եւ ինքը պատասխան չի տըւաւ անոր. ու իր աշակերտները կաղաչէին իրեն և կըսէին, Արձակէ ատիկա.
24 ինչու որ ետևնուն կըկանչէկոր։ Ինքը պատասխան տըւաւ՝ ու ըսաւ, Ես ուրիշին չի խրկըվեցայ՝ բայց Իսրայէլին տան կորսըված ոչխարներ.
25 րուն։ Եւ ան եկաւ երկրպագութիւն կընէր
26 իրեն՝ ու կըսէր, Տէր՝ օգնէ ինծի։ Պատասխան տըւաւ անոր՝ և ըսաւ, Հղկի բան չէ տղոցը հա-
27 ցը առնել, և շուներուն ձրգել։ Եւ անիկա ըսաւ. Իրաւ է Տէր. ինչու որ շուներն ալ իրենց տէրոջը սեղանէն թափած փըշրանքներէն կըկե-
28 րակրին։ Ինքնատնը Յիսուս պատասխան տըւաւ անոր՝ և ըսաւ, Ով կին՝ քու հաւատդ մեծ է. ինչպէս որ կուզես նէ թող անանկ ըլլայ քեզի. և նոյն ժամուն անոր աղ չկիր բժըշկեցաւ։
29 Ու Յիսուս անկէց գնաց՝ Գալիլեացոց ծովե-
30 զերքը եկաւ, և մէկ լեռ մը ելաւ՝ հոն նըստաւ։ Շատ ժողովուրդներ իրեն եկան, որ իրենց հետ ունէին կաղեր, կոյրեր, մունճեր, մկկողմէնները, և ուրիշ շատեր. ու ձգեցին անոնք անոր
31 ոտքը, և բժըշկեց անոնք։ Ինանկ որ՝ ժողովուրդները զարմացան, որ կըտեսնային թէ մունճերը կըխօսէին, կաղերը կըքալէին, մկկողմէնները կըբժշկըվէին, կոյրերը կըտեսնային, ու Իսրայէլի Աստուածը կըփառաւորէին։
32 Եւ Յիսուս աշակերտները կանչեց իրեն՝ ու ըսաւ. Կըխղճամ՝ ատ ժողովուրդին վըայ. ինչու

որ իրեք օր է Հիմայ որ քովը են , և բան մը չու-
նեին ուտելու ։ ու անօթի թող տալ անոնք չեմ
ուզեր , չըլլայ որ ճամբան մարին ։ Աշակերտները 33
իրեն ըսին ։ Ա՛ենք աս անապատին մէջը ուտելիք
պիտի ունենանք այնչափ հաց , որ այսչափ ժողո-
վուրդը կըշտացունենք ։ Եւ Յիսուս ըսաւ ա- 34
նոնց , Քանի՞ նկանակ ունիք ։ անոնք ալ ըսին՝
եօթը , և քանի մը ձուկ ։ Ու հրաման ըրաւ ժո- 35
ղովուրդին գետինին վրայ նստիլ ։ Եւ եօթը 36
նկանակը՝ ու ձուկերը առաւ , գոհութիւն տը-
ւաւ՝ և կտրտրտեց , ու տուաւ աշակերտներուն ։
և անոնք՝ ժողովուրդին ։ Կերան ամէնքը՝ և 37
կըշտացան ։ ու եօթը զամբիլ լեցուն կտորվանք-
ներուն փըշրանքները վերցուցին ։ Եւ անոնք որ 38
կերան՝ չորս հազար մարդիկ էին , կին կներէն և
տղաքներէն իզատ ։

Երբոր ժողովուրդը արձակեց՝ նաւը եղաւ , ու 39
Մ՛ագդաղէայի կողմերը եկաւ ։

ԳԼ ։ ԺՕ ։

Ե՛ փարիսեցիները ու Սադուկեցիները քովը 1
եկան՝ փորձելով իրմէն կուզէին երկինքէն
նշան մը ցուցընել իրենց ։ Ինիկա պատասխան 2
տըւաւ՝ և ըսաւ անոնց ։ Երբոր իրիկուն կըլլայ՝
կ՚ըսէք , Պարզ պիտի ըլլայ , ինչու որ երկինքը
կարմրած է ։ Եւ առտըվանից՝ Այսօր մըրիկ ուներ 3
ըլլայ , ինչու որ երկինքը մըթընցած կարմիր է ։
ուստի երկինքին երեսը կրնաք քննել , բայց աս
ժամանակին նշանը չէք կրնար գիտնալ ։ Չար 4
և շնացող ազգը նշան կուզէ ։ ու նշան չի պիտի
տըրվի անոր , բայց Յովնան մարգարէին նշանը ։
ու թողուց անոնք՝ և գնաց ։

Աշակերտներն ալ գացին մէկալ կողմը , և հաց 5
առնելու մոռցան ։ Ըսաւ անոնց Յիսուս , Տես- 6
եցէք և զգուշացէք Սադուկեցիներուն ու փարի-
սեցիներուն խմորէն ։ Անոնք մէջերնին կըմտմըր- 7

տային՝ ու կրսէին թէ , Հաց չի բերինք հետերնիս ։
8 Նա ։ Իմացաւ Յիսուս և ըսաւ , Ո՛խտերնուդ մէջ ինչո՞ւ կրխոր֊տիք Թերահաւատներ , թէ հաց
9 չունիք ։ Տակաւին չէք՞ հասկրնար , և չէք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին ու քանի՞ սակառ
10 վերցուցիք ։ Ո՞չ ալ եօթը նկանակը չորս հա֊
11 զարին , ու քանի՞ զամբիւղ վերցուցիք ։ Ուրեմն ի՞նչպէս չէք հասկրնար թէ հացի համար ես չը֊
սի ձեզի՝ Դադուկեցիներուն և Փարիսեցիներուն
12 խմորէն զգուշ կենալ ։ Ընտանները հասկրցան՝ որ հաց֊ի խմորէն զգուշանալ չըսաւ , հապա Փարիսե֊
ցիներուն ու Դադուկեցիներուն ուսուցքէն ։
13 Եւ Յիսուս գալ Փիլիպպէի Կեսարիայի կող֊մերը , աշակերտներուն հարցուց՝ ու կրսէր , Ինծի համար ո՞վ կրսեն մարդիկ , թէ Որդին մարդոյ
14 է ։ Ու անոնք ըսին , Ո՛էկը կ֊ըսե֊ըն Յովհաննէս մկրտիչ ես . ուրիշները՝ Եղիան . ոմանք ալ՝
15 Երեմիան , կամ մարգարէներէն մէկը ։ Ըսաւ անոնց , Ձայց դուք ինծի համար ո՞վ եմ կրսէք ։
16 Սիմոն Պետրոս պատասխան տուաւ՝ և ըսաւ . Դուն ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ որդին ։
17 Յիսուս պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոր , Երանէ՛կ քեզի Սիմոն Յովնանին որդին , ինչու որ՝ մարմինը և արիւնը քեզի չի յայտնեց , հապա իմ
18 Հայրը՝ որ երկինքն է ։ Եւ ես քեզի կրսեմ , որ Դուն քար ես , ու ես քարին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս . և դժոխքին դուռները անոր չի
19 պիտի յաղթեն ։ Ու երկնից թագաւորութեան բանալիները պիտի տամ՝ քեզի . և ինչ բան որ երկրի վրայ կապես , երկինքին մէջ կապված ը֊
լայ . ու ինչ բան որ երկրի վրայ արձակես , եր֊
20 կինքին մէջ արձակված ըլլայ ։ Ընտանները աշա֊կերտներուն սաստիկ պատուիրեց , որ մէկուն չը֊
սան՝ թէ ինքը Քրիստոսն է ։
21 Ընկէ ետև սկսեց Յիսուս աշակերտներուն ցուցընել՝ թէ պէտք է որ ինքը Երուսաղէմ եր֊

Թայ , և շատ չարչարանքներ քաշէ՝ ու անարգուին
քահանայապետներէն , և կարգացողներէն , և
ժողովուրդին ծերերէն ։ ու սպանուին , և իրեք
օրէն յարուներ ։ Պետրոս մէկ դի առաւ 22
անիկա՝ սկսաւ վիճաբանիլ ընել իր Տէրը ,
ու ըսել ։ Հեռու ըլլայ քեզմէն Տէր՝ սա բանը
քեզի չըլլայ ։ Եւ ինքը Պետրոսին դառնալով՝ 23
ըսաւ ։ Ա՛հէկ դի գնա ինծմէ Սատանայ , ինծի
գայթակղութիւն ես դուն ։ ինչու որ՝ Աստուծոյ
բաները չես մտմըտար , հապա՝ մարդկային բա-
ներ ։

Ա՛նսաւնը Յիսուս իր աշակերտներուն ըսաւ ։ 24
Թէ որ մէկը իմ ետևէս գալ կուզէ՝ թող ինքը-
զինքը ուրանայ , և իր խաչը առնէ ու իմ ետևէս
գայ ։ Ինչու որ՝ ով որ կուզէ իր անձը ապրե- 25
ցունել , պիտի կորսընցունէ ան ։ և ով որ ինծի
համար իր անձը կորսընցունէ , պիտի գտնայ
ան ։ Ի՞նչ կըշահի մարդ մը՝ թէ որ բոլոր աշ- 26
խարհ վաստըկի , և իր անձը վնասէ ։ կամ՝ իր
անձին համար՝ ի՞նչ ազատելիք պիտի տայ մարդ ։
Ինչու որ՝ Որդին մարդոյ իր Հօրը փառքովը 27
պիտի գայ իր հրեշտակներուն հետը ։ և անա-
տինը ամէն մէկուն իր գործքերուն փոխարէն
պիտի հատուցանէ ընէ ։ Ա՛մէնիրաւ կըսեմ ձեզի , 28
որ՝ Հոս կայնողներէն ոմանք կան՝ որ մահուան
համը չեն պիտի առնեն , մինչև որ անոնք տես-
նան Որդին մարդոյ իր թագաւորութիւնովը
եկած ։

ԺԷ ։ ՅԻՆ ։

Ե՛ւ վեց օրէն առաք Յիսուս իր հետը առաւ 1
Պետրոսը , ու Յակոբոսը՝ և անոր եղբայրը
Յովհաննէսը , ու անոնք մէկ բարձր լեռ մը հանեց
առանձին ։ Ու պլակերպացաւ անոնց առջևը , և 2
իր երեսները փայլեցան արեգակին պէս , ու
իր լաթերը ձերմակցան լուսի պէս ։ Եւ ահաւա- 3

Ա՝ոմսնսը և Եղիան երևցան անոնց , ու իր հետը
4 կրնօսկէին ։ Պատասխան տուաւ Պետրոս՝ ու
ըսաւ Յիսուսին . Տէր՝ աղէկ է մեզի հոս կենալ ,
և թէ որ կուզես՝ իրեք խրճիթ շինենք , մէկը քե-
5 զի , և մէկը Ա՝ոմսնսին՝ և մէկը Եղիային ։ Եւ
երբոր ինքը կրնօսկէր՝ ահա լուսաւոր ամպ մը ա-
նոնց վրայ հովանի եղաւ . ամպէն ձայն մը եկաւ՝
ու ըսաւ , Ա՝տիկա է իմ սիրելի որդիս , որուն հաւ-
6 ներ եմ , ատոր մրմռիկ ըրէք ։ Աշակերտները եր-
բոր լսեցին՝ իրենց երեսնուն վրայ ինկան , և
7 խիստ վախցան ։ Ու Յիսուս գնաց բռնեց անոնք՝
8 և ըսաւ , Ելէք և մի՛ վախնաք ։ Աչքերնին վեր-
ցուցին՝ ու մէկը չի տեսան , միայն թէ Յիսուսը ։
9 Եւ երբոր ան լեռնէն վար կիջնային՝ Յիսուս
ապրեպրեց անոնց՝ ու ըսաւ . Ա՝տ տեսիլքը մար-
դու մի՛ զրուցէք , մինչև Որդին մարդոյ մեռելնե-
10 րէն յարութիւն առնի ։ Աշակերտները իրեն
հարցուցին՝ և ըսին , Ինչու համար կարզացող-
նները կրսեն թէ՝ Պէտք է որ առաջ Եղիան
11 գայ ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ ա-
նոնց , Եղիան պիտի գայ՝ և ամէն բանը պիտի
12 հաստատէ ։ Ա՝յց ձեզի կըսեմ , Եղիան արդէն
եկած է՝ և անիկա չի ճանչցան , հապա ինչ որ
ուզեցին՝ ըրին անոր , անանկ ալ Որդին մարդոյ
13 անոնցմէ պիտի չարչարվի ։ Աշակերտը հասկրցան
աչակերտները , որ Յովաննէս Մկրտիչին համար
ըսաւ անոնց ։
14 Եւ երբոր ժողովուրդին եկան՝ մարդ մը եկաւ ,
ծնրադրութիւն կընէր՝ ու կըսէր , Տէր՝ իմ
տղիս ողորմի՛ , որ կրլուսնոտի , և չարաչար կը-
տիվզնայ . յաճ հիղ կրակի մէջ կիյնայ՝ ու եր-
15 բեմն ջուրի մէջ ։ Եւ անիկա աշակերտներուդ
բերի , ու չի կրցան բժշկել ։ Յիսուս պատասխան
16 տըւաւ՝ ու ըսաւ , Ա՝վ անհաւատ և մոլորեալ
ազգ՝ մինչև երբ պիտի հետերնիդ ըլլամ , մինչև
երբ ձեզի պիտի մրմռիկ ընեմ . բնդէ բեր անիկա ։

Ու Յիսուս սաստեց անիկա՝ և դևը անկէց եկաւ · 17
ու բժշկեցաւ տղան նոյն ժամուն ։ Ընտաներ 18
աշակերտները առանձին քովը գացին՝ ու ըսին
Յիսուսին , Մենք ինչու չի կրցանք անիկա հա-
նել ։ Եւ ինքը ըսաւ անոնց , Ձեր թերհաւա- 19
տութեանը համար · ճշմարիտ կըսեմ ձեզի , Թէ
որ մանանեխի հատի չափ հաւատք ունենաք՝ ան
լեռանըս պիտի ըսէք Թէ Անկէ անդին փոխուէ , և
պիտի փոխուի · ու բան մը անհնարին չի պիտի
ըլլայ ձեզի ։ Սակայն այս տեսակը ուրիշ բանով 20
չելլար , բայց եթէ ծոմով և աղօթքով ։

Եւ երբոր Գալիլեայի մէջ կրպրտաւէին 21
անոնք՝ ըսաւ անոնց Յիսուս , Որդին մարդոյ պի-
տի մատնուի մարդոց ձեռքը · և անիկա պիտի 22
մեռցունեն , և իրեք օրէն յարութիւն պիտի առ-
նէ · ու խիստ արտմեցան ։

Երբոր անոնք Կափառնայում եկան , երկ- 23
դրամեան դո՛ւրը առնողները Պետրոսին եկան՝
ու ըսին , Ձեր վարդապետը երկդրամեան չի՞
տար · և ինքը ըսաւ , Այ՛ ։ Եւ երբոր տուն 24
մտաւ , Յիսուս յառաջ եկաւ՝ ու ըսաւ , Ինչ-
դի ինչպէս կերևայ Սիմո՛ն · ազգերուն թագա-
ւորները որմէ՞ն կառնեն տուրքը կամ մաքսը ·
իրենց տղոցմէ՞ն , թէ օտարներէն ։ Եւ երբոր 25
ըսաւ՝ Օտարներէն , ըսաւ անոր Յիսուս , Ինչնակ
է նէ որդիքը ազատ են ։ Բայց չըլլայ որ անոնք 26
գայթակղեցունենք , գնա՛ ծովը՝ և կարթ ձգէ՛ ,
ու առջի ձուկը որ կելլայ՝ առ , և անոր բերանը
բացի , ու կըգտնաս սատեր մը , և անիկա առ՝
անոնց տուր , ինծի և քեզի համար ։

ԺԸ · ԺՈՂ ։

Ն օրը աշակերտները Յիսուսի քովը եկան՝ և 1
ըսին , Ո՞վ մեծ է երկնից թագաւո-
թեան մէջը ։ Եւ Յիսուս տղայ մը կանչեց իրեն , 2

3 անիկա անոնց մէջը կայնեցուց , ու ըսաւ ։ Ա՛շմա-
բիտ կըսեմ ձեզի , թէ որ դարձի չի գաք՝ և տղոց
պէս չըլլաք , երկինց թագաւորութեան մէջը չի
4 պիտի մըտնաք ։ Ուստի ով որ իր անձը աս տղին
պէս կրխտնարհեցունէ , անիկա է մեծ երկինց
5 թագաւորութեան մէջը ։ Եւ ով որ ասանկ տղայ
6 մը կընդունի իմ անունովս , իս կընդունի ։ Եւ
ով որ կրգայթակղեցունէ աս պզտիկներուն մէկը՝
որ ինծի կրհաւատան , աղէկ է անոր որ իր վիզին
իշու աղաջքի քար մը կախուի , ու ծովին տակը
ընկղմի ։
7 Վա՛յ աշխարհի գայթակղութիւններուն հա-
մար ։ գայթակղութիւնները հարկ է որ գան ,
բայց վա՛յ ան մարդուն՝ որուն ձեռքովը գայթակ-
8 ղութիւն կուգայ ։ Ով որ քու ձեռքդ կամ ոտ-
քդը քեզ կրգայթակղեցունէ , կտրէ ան՝ և քեզ-
մէ ձրգէ ։ աղէկ է քեզի մէկ ձեռքով՝ կամ կաղ
կեանքը մրտնալ , քան թէ երկու ձեռք և երկու
ոտք ունենալ՝ ու յաւիտենական կրակին մէջը
9 իյնալ ։ Եւ թէ որ աչքդ քեզ կրգայթակղեցու-
նէ , հանէ ան՝ և քեզմէ ձրգէ ։ աղէկ է քեզի մէկ
աչքով կեանքը մրտնալ , քան թէ երկու աչք
ունենալ , ու կրակուան գեհենը իյնալ ։
10 Զգոյշ կեցէ՛ք որ չանարգէք աս պզտիկներէն
մէկը ։ ձեզի կըսեմ որ , Երկինքին մէջ անոնց
հրեշտակները միշտ կրտեսեան իմ Հօրըս երեսը՝
11 որ երկինքն է ։ Ինչու որ Մարդին որդին եկաւ՝
12 կորսըված ծները ապրեցունելու ։ Ի՞նչպէս կերեւայ
ձեզի , թէ որ մարդ մը հարիւր ոչխար ունենայ ,
և անոնց մէկը մոլորի , իննըսունըվիցը ոչխարը
լեռները չի ձրգեր , ու երթար մոլորածը փնտը-
13 ռեր ։ Եւ թէ որ գտնալու ըլլայ ան , ճշմարիտ
կըսեմ ձեզի , որ՝ Իչվեցը ուրախ կըլլայ անոր
վրայ , քան թէ իննըսունըվիններէն՝ որ մոլորած
14 չեն ։ Այսանկ իմ երկնաւոր Հօրըս կամքը չէ՝
որ աս պզտիկներէն մէկը կորսըվի ։

ԱՒ որ քու եղբայրըդ քեզի դէմ մեղանչէ , 15
գնա յանդիմանէ անկա՝ երբոր դուն և ան մի-
նակ էք . թէ որ քեզի մտիկ ընէ՝ վաստրկեցար
քու եղբայրըդ ։ Ետպա թէ որ մտիկ չընէ քեզի , 16
քու հետդ մէկ մը կամ երկուք ալ առ , ինչու
որ երկու կամ իրիք վկաներուն բերնէն ամէն
խօսք կըհաստատուի . Եւ թէ որ անոնց ալ մտիկ 17
չընէ , եկեղեցիին ըսէ . բայց թէ որ եկեղեցիին
ալ մտիկ չընէ , ինքը հեթանոսի ու մաքսաւորի
պէս թող ըլլայ քեզի ։

Ամէնարիւ կըսեմ ձեզի , Որ երկրի վրայ ինչ 18
որ կապէք՝ երկինքի մէջ կապուած ըլլայ . և երկ-
րի վրայ ինչ որ արձրկէք՝ երկինքի մէջ արձրկ-
ուած ըլլայ ։ Դարձեալ կըսեմ ձեզի , Եթէ որ 19
ձեզմէ երկուք միաբանին երկրի վրայ՝ ամէն ինչ
բանի համար , ինչ որ խնդրեն պիտի ըլլայ անոնց
իմ Հօրմէս՝ որ երկինքն է ։ Ինչու որ՝ ուր տեղ 20
երկուք կամ իրիք կրժողվին իմ անունովս ,
հոն եմ ես անոնց մէջը ։

Ընաւեսը Պետրոս եկաւ իրեն՝ և ըսաւ , Տէր՝ 21
քանի՞ անգամ թէ որ եղբայրս ինծի մեղանչէ նէ
ներեմ անոր , մինչև եօթը անգամ ։ Յիսուս 22
անոր ըսաւ , Չըսեմ քեզի թէ՝ մինչև եօթը
անգամ , հապա եօթանասուն անգամ եօթը ։
Ասոր համար երկնից թագաւորութիւնը թագա- 23
որի մը նմանեցաւ , որ իր ծառաներէն հաշիւ
առնել ուզեց ։ Եւ երբոր սկսաւ առնել , տասը 24
հազար քանքարի պարտական մը բերվեցաւ իրեն ։
Երբոր ելլալու չունէր վճարելու , իր տէրը 25
հրաման ըրաւ ծախել անկա , և անոր կինը՝ և
որդիքը , և բոլոր անոր ունեցածը , ու վճարել ։
Եւ ծառան ինկաւ՝ երկիրպագութիւն կընէր 26
անոր՝ ու կըսէր , Երկայնամիտ ինծի և ամէնը կը-
վճարեմ քեզի ։ Ան ծառային տէրը վրան խղճա- 27
լով՝ արձրկեց անկա , ու պարտքը թողուց իրեն ։
Եւ նոյն ծառան ելաւ , իր ընկեր ծառաներէն 28

մէկը գտաւ՝ որ իրեն հարիւր մարչիլ պարտք ու-
նէր . ու բռնեց անիկա՝ կըխըղդէր և կըսէր ,
29 Ա՛ձարէ ինծի ունեցած պարտքդդ : Աւստի ընկեր
ծառան իր ոտքը ինկաւ , կաղաչէր անոր՝ և կը-
30 սէր , Համբերէ ինծի , ու քեզի կըվճարեմ : Եւ
ինքը չէր ուզեր , հապա գնաց՝ բանտը դրաւ
31 անիկա , մինչև որ պարտքը վճարէ : Երբոր իրեն
ընկեր ծառաները տեսան եղած բանը , խիստ
տրտմեցան՝ և եկան հասկրցուցին իրենց տէրոջը
32 բոլոր եղած բանը : Ինատեռը իր տէրը կանչեց
անիկա՝ ու ըսաւ , Չար ծառայ՝ բոլոր ան պարտ-
քը ես քեզի թողուցի , ինծի աղաչելուդ համար :
33 Աւրեմն պէտքը չէր քեզի քու ընկեր ծառայիդ
34 ողորմել , ինչպէս որ ես քեզի ողորմեցայ : Եւ
բարկանալով անոր տէրը՝ դահիճներուն մատնեց
35 անիկա , մինչև որ բոլոր պարտքը վճարէ : Նմանկ
իմ Հայրս ալ որ երկինքն է՝ պիտի ընէ ձեզի ,
թէ որ դուք չէք թողուր ամէն մէկը իր եղբօրը
ձեր սիրտերէն իրենց յանցանքները :

ԿԱ . ԻԹ ։

1 Եւ երբ եղաւ որ աս խօսքերը լըմընցուց Յի-
սուս , Գալիլեայէն եկաւ՝ ու եկաւ Հրէաս-
2 տանին կողմերը Յորդանանու մէկալ դին : Եւ
անոր ետևէն շատ ժողովուրդներ գացին , և հոն
բժշկեց անոնք :
3 Ու Փարիսեցիները իրեն եկան , ինքը կըփոր-
ձէին և կըսէին թէ , Արժա՞ն է որ մէկը իր կնիկը
4 արձկէ՝ ամէն պակասութիւնի համար : Պատաս-
խան տուաւ անոնց՝ ու ըսաւ , Չէք մի կարդա-
ցեր , թէ ան որ սկիզբէն ստեղծեց , արու և էգ
5 ըրաւ անոնք՝ ու ըսաւ , Ասոր համար մարդ իր
Հայրը և մայրը պիտի ձրգէ , և իր կնկանը ետևէն
երթայ , ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան :
6 Նանկ է՛ն՝ երկուք չեն , հապա մէկ մարմին .

ուրեմն ինչ որ Աստուած միաւորեց՝ մարդը թող
չի զատէ ։ Անոր իրեն , Հապա Մովսէս ինչու 7
պատուիրեց՝ զատկելու թուղթ տալ և արձակել ։ Ասաւ անոնց , Մովսէս ձեր սիրտերուն 8
կարծրութենանը համար ձեզի հրաման տուաւ կնիկներնիդ արձակելու . բայց սկիզբէն անանկ չեղաւ ։ Ասկայն ձեզի կըսեմ որ , Ով որ առանց 9
պոռնկութեան պատճառի իր կնիկը կրձգէ և ուրիշ մը կառնէ , շնութիւն կընէ . և ով որ արձակածը առնէ շնութիւն կընէ ։ Իր աշակերտ- 10
ները ըսին իրեն , Թէ որ երկան ու կնկան մէջ
առանկ վնաս կայ՝ չի կարգիլը աղէկ է ։ Եւ 11
ինքը անոնց ըսաւ , Ամէն չեն կրնար ընդ- առ
խօսքը , հապա՝ որի որ տրուած է ։ Ինչու որ՝ 12
կան ներքինիներ , որ իրենց մօրը փորէն անանկ ծնան . և կան ներքինիներ , որ մարդոցմէ ներքինի եղան . և կան ներքինիներ՝ որ ինքզինքին ներքինի ըրին երկնից Թագաւորութենանը համար . ան՝ որ կրընայ տանել , թող տանի ։
Աշակերտները մօտ եղան իրեն , ու ըսին 13
անոնց վրայ ձեռք դընէ և աղօթէ , ու իր աշակերտները կըշխեին անոնք ։ Յիսուս ըսաւ , 14
Թող տուէք տղոցը , և մի արգիլէք անոնք ինձի գալու . ինչու որ երկնից Թագաւորութիւնը առանկներուն է ։ Եւ ձեռք դնելով անոնց վրայ՝ 15
գնաց անկէց ։
Եւ ահաւասիկ մէկը եկաւ իրեն՝ ըսաւ , Վար- 16
դապետ՝ ինչ բարի գործ գործեմ , որ յաւիտենական կեանքը վաստկիմ ։ Ինչն ալ անոր 17
ըսաւ , Ինձի ինչու բարի կըհարցնես , բարին մէկ մըն է . թէ որ յաւիտենական կեանքը մտնալ կուզես՝ պատուիրանքները պահէ ։ Ըսաւ 18
անոր , Որը . Յիսուս ըսաւ անոր , Մի սպաններ , և մի շնար , և մի գողնար , և մի սուտ վկայեր . քու հայրըդ և մայրըդ պատ- 19
ուէ , ու քու ընկերըդ քու անձիդ պէս սիրէ ։

20 Պատանին ըսաւ անոր , Տէ՛ր ամէնը տղայու-
թենէս ի վեր պահեր եմ . ուստի ինչ բանով
21 պակաս եմ : Յիսուս անոր ՝ի՛նչ որ կու-
գես կատարեալ ըլլալ , գնա՛ ունեցածդ ծախէ ,
և տուր աղքատներուն . ու դուն երկինք մէջ
22 գանձ պիտի ունենաս , և եկո՛ իմ ետևէս : Եր-
բոր պատանին ան խօսքը լսեց՝ տրտմած գնաց.
ինչու որ՝ շատ ստացուածք ունէր :
23 Յիսուս ըսաւ աշակերտներուն . Ճշմարիտ
կըսեմ ձեզի , որ հարուստը դժուարութիւնով
24 երկինք թագաւորութիւնը պիտի մտնայ : Կարճ
ևս կըսեմ ձեզի , Փիւրին է մալուխին ասեղին
ծակէն անցնիլ , քան թէ հարուստին երկինք
25 թագաւորութիւնը մտնալ : Աշակերտները եր-
բոր լսեցին , շատ զարմացան և ըսին , Ո՞նանկ է
26 նէ՝ ով կրնայ փրկըւիլ : Յիսուս նայեցաւ
անոնց ու ըսաւ , Մարդոցմէ անկարելի է
բայց Աստուծմէ ամէն բան զօրելի է :
27 Ընտենը Պետրոս պատասխան տըւաւ՝ ու
ըսաւ իրեն , Ահա մենք ամէն բան թողուցինք՝
և քու ետևէդ եկանք . ուստի մեզի ինչ պիտի ըլ-
28 լայ : Յիսուս անոնց ըսաւ , Ճշմարիտ կըսեմ
ձեզի , թէ դուք որ իմ ետևէս եկաք՝ միւսան-
գամ գալուստին երբոր Որդին մարդոյ իրեն
փառքին աթոռը պիտի նըստի , դուք ալ տասներ-
կու աթոռի վրայ պիտի նըստիք՝ Իսրայէլի տաս-
29 ներկու ազգը դատելու : Եւ ամէն մէկը որ թո-
ղուց տուն կամ եղբայրներ , կամ քոյրեր , կամ
հայր , կամ մայր , կամ կին , կամ որդիք , կամ
արտեր՝ իմ անունիս համար , հարիւրապատիկ
պիտի առնէ , և յաւիտենական կեանք պիտի ժա-
30 ռանգէ : Շատերը որ են առաջին՝ պիտի ըլլան
յետին , և յետիններըը՝ առաջին : Ինչու որ՝ երկ-
նից թագաւորութիւնը ասոնցմէ մարդու մը նման
է , որ առտուընց կանուխ ելաւ՝ իր այգիին բան-
2 վորներ բըռնելու : Ու բանվորներուն հետ օրը

մէկ դահեկանի մը խօսք կապեց , և անոնք խրբեկեց
իր այգին ։ Եւ ժամը իրեքին եղաւ՝ ուրիշները 3
տեսաւ , որ շուկաներուն մէջ պարապ կայներ
էին ։ Ու ըսաւ անոնց , Դուք ալ գացէք իմ այ- 4
գիս , և ինչ որ արժան է նէ՝ կուտամ ձեզի ։ Եւ 5
անոնք գացին . ու նորէն ժամը վեցին և ժամը
իննին եղաւ՝ անոնց ըրաւ ։ Եւ ժամը տասնըմէկին 6
եղաւ , ուրիշները գտաւ՝ որ պարապ կայներ էին ,
ըսաւ անոնց ալ . Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ
կայներ էք ։ Ըսին իրեն , Ոնոր հաճար որ՝ մարդ 7
մեզ վարձքով չէ բրռնեց . ըսաւ անոնց , Դուք
դուք ալ գացին , և ինչ որ արժան է նէ՝ պիտի
առնէք ։ Եւ իրիկուն որ եղաւ՝ այգիին տէրը իր 8
անտեսին ըսաւ , Հանվորները կանչէ՝ և իրենց
վարձքը տուր , ետբիններէն սկըսեալով մինչև
առջիններուն ։ Երբոր եկան՝ անոնք որ ժամը տաս- 9
նըմէկին գնացեր էին , մէկ մէկ դահեկան առին .
Եւ առջիններուն եկան՝ կըսեպէին որ էվել պիտի 10
առնեն , ու անոնք ալ առին մէկ մէկ դահեկան ։
Երբոր առին , տանը տէրոջմէն դանգատ կըներին՝ 11
ու կըսէին թէ , Այս ետբիններուն մէկ ժամ մը 12
գործեցին . և անոնք մեզի հաւասար ըրիր , որ
օրվան բեռը և տաքութիւնը քաշեցինք ։ Նէ՛կա 13
պատասխան տուաւ անոնցմէ մէկուն՝ ու ըսաւ ,
Ընկեր՛ ես քեզ չեմ զրկեր . չէ՞ որ դուն իմ հետ
տրս մէկ դահեկանի մը խօսք կապեցիր ։ Ա՛ռ քու 14
կըդ՝ ու գնա , կուզեմ որ ասոր ետբիններուն քեզի
պէս տամ ։ Միթէ ես իշխանութիւն 15
չունիմ իմ բաներուս վրայ՝ ինչ որ ուզեմ նէ
ընեմ , կամ թէ քու աչքդ չար է՝ որ ես առա-
տաձեռն եմ ։ Այսպէս յետիններուն առաջին պիտի 16
ըլլան , և առաջիններուն՝ յետին . ինչու որ՝ կան-
չվածները շատ են , բայց ընտրվածները քիչ ։
Երբոր Յիսուս Երուսաղէմ կերթար՝ տասներ- 17
կուքը հետը առաւ առանձին , ու ճամբան ըսաւ
անոնց ։ Ահա Երուսաղէմ կերթանք , և Որդին 18

մարդոյ պիտի մատնըվի քահանայապետներուն և
գրադպետներուն , ու պիտի դատապարտեն անի-
19 կա մեռնելու · և հեթանոսներուն պիտի մատնեն
անիկա , խայտառակելու և ծեծելու , և խաչը հա-
նելու , ու իրեք օրէն յարութիւն պիտի առնի :
20 Ընատանը Զեբեդոսին որդոցը մայրը իր որ-
դոցը հետ եկաւ անոր՝ երկրպագութիւն կընէր՝
21 ու բան մը կընդրկէր անկից : Եւ ան ըսաւ ա-
նոր՝ Ինչ կուզես · ըսաւ անոր , Ըսէ՝ որ աս իմ
երկու որդիքըս մէկը ձախ կողմդ , և մէկալը՝ աջ
կողմդ նըստին քու թագաւորութեանդ մէջ :
22 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ , Չէք գի-
տեր՝ ինչ կընդրկէք · կրնաք խըմել ան գաւա-
ըը , որ ես պիտի խըմեմ · կամ ան մկրտութիւնը
մկրտվիլ՝ որ ես պիտի մկրտվիմ · ըսին իրեն՝
23 Կրընանք : Ըսաւ անոնց Յիսուս , Իմ գաւաըը
պիտի խըմէք՝ և ան մկրտութիւնը որ ես պիտի
մկրտվիմ , պիտի մկրտիք · բայց իմ աջ կողմս և
ձախ կողմս նըստեցունելը իմս չէ տալը , հապա
24 որոնց որ պրըված է իմ Հօրմէս : Եւ երբոր
տասը լըսեցին՝ ան երկու եղբայրներուն վրայ
25 բարկացան : Յիսուս անոնք իրեն կանչեց ու
ըսաւ · Գիտէք որ ազգերուն իշխանները կըտիրեն
26 իրենց , և մեծամեծները կիշխեն անոնց : Բայց
ասանկ պիտի չըլլայ ձեր մէջը , հապա ձեզմէ ով
որ մեծ ըլլալ կուզէ՝ ձեր սպասաւորը թող ըլ-
27 լայ : Ու ձեզմէ ով որ կուզէ առաջին ըլլալ՝ ձեր
28 ծառան թող ըլլայ : Ինչպէս Որդին մարդոյ չե-
կաւ սպասաւորութիւն ընդունելու , հապա սպա-
սաւորութիւն ընելու , և իր կեանքը փրկանք մը
տալու շատերուն համար :
29 Եւ երբոր անոնք Երիքովին ելան՝ շատ ժողո-
30 վուրդներ իր ետևէն գացին : Եւ ահա ճամբուն
վրայ երկու կոյր նըստած էին · երբոր լըսեցին
թէ՝ Յիսուս կանցնի՝կոր , կանչվռտեցին ու
ըսին , Ողորմէ մեզի Յիսուս Որդի Դաւիթ

Եւ բազմութիւնը կրկնեցաւ անոնք , որ լաւն ։
բայց անոնք ալ եվիլի կրկանչ վրառեցին ու կը- 31
սեին , Ողջոյն մեզի Տէր Որդի Դաւթի ։ Յի-
սուս կայնեցաւ , կանչեց անոնք՝ ու ըսաւ , Ի՞նչ 32
կուզէք որ ձեզի ընեմ։ Ըսին անոր , Տէր՝ որ աչ-
քերնիս բացվին ։ Եւ Յիսուս խղճալով անոնց 33
վրայ , աչքերնուն դպաւ՝ ու շուտ մը տեսան , 34
և անոր ետևէն գացին ։

ԿԱ ։ ԻԸ ։

Երբոր Երուսաղէմին մօտիկցան , և եկան 1
Բեթփագէ դիմելնուց լեռանը մօտ՝ անտե-
նը Յիսուս իր աշակերտներէն երկուքը խրթ-
կեց ։ Եւ ըսաւ անոնց , Գացէք ատ ձեր դիմացի
գեղը , և իսկոյն կրգտնաք կապած էշ մը՝ ու 2
անոր հետ աւանակ մը . անոնք արձրկեցէք՝ բերէք
ինծի ։ Եւ թէ որ մէկը ձեզի բան մը ըսէ , զուր-
ցեցէք թէ՝ Իրենց Տէրոջը պէտք են , ու շուտ մը 3
անոնք պիտի խրրկէ ։ Ասոր ամէն բաները
եղաւ , որ մարգարէին խօսքը կատարվի՝ որ կը- 4
սէ , Ըսէք Սիոնի աղջկանը . ահա՛ քու թա-
գաւորդ քեզի կուգակոր , հեզ՝ և իշուն վրայ 5
հեծած՝ ու իշուն աւանակին վրայ ։ Աշակերտնե-
րը գացին , և ինտոր որ Յիսուս իրենց հրաման 6
ըրաւ՝ ըրին ։ Ու բերին էշը և աւանակը , և ա-
նոնց վրայ լաթեր ձգեցին՝ ու նըստաւ անոնց 7
վրայ ։ Եւ շատ ժողովրդ իրենց լաթերը ճամ-
բուն վրայ փրռեցին , և ուրիշները ծառերէն 8
ճիւղեր կրկրտրէին՝ ու ճամբուն վրայ կրփրռէին ։
Եւ ժողովուրդները որ առջևէն ու ետևէն կը- 9
չային , կրկանչէին ու կրսէին՝ Օրհնութիւն
որդւոյ Դաւթի , օրհնեալ է ան՝ որ Տէրոջը
անունովը կուգայ , օրհնութիւն ի բարձունս ։ 10
Եւ երբոր ինքը Երուսաղէմ մտաւ՝ բոլոր 11
քաղաքը շարժեցաւ , ու ըսաւ ։ Ո՞վ է աս ։ Եւ
ժողովուրդները ըսին՝ Նիկա է Յիսուս մարգա-
րէն՝ Նազարեթէն ։

12 Եւ Յիսուս տաճարը մտաւ, ու ամէնն ալ դուրս հանեց՝ որ տաճարին մէջը կրծախէին, և կըգրնէին ու տակ փոխողներուն սեղանները՝ և աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց։
13 Ու ըսաւ անոնց, Կրըված է Իմ տունս աղօթքի տուն պիտի ըսվի, և դուք աւազակներու բուն
14 ըրիք ան։ Ու տաճարին մէջը կոյրեր և կաղեր
15 իրեն եկան, ու բժըշկեց անոնք։ Երբոր քահանայապետները և կարդացողները ըրած հրաշքները տեսան, և մանր տղաքները որ տաճարին մէջը կըկանչէին ու կըսէին՝ Օրհնութիւն որդւոյ Դաւա-
16 թի, բարկացան ու ըսին իրեն, Կըլսես՞ ինչ կըսենասոնք։ ըսաւ անոնց Յիսուս, Այո։ չէք մի կարդացեր թէ՝ Պզտիկ տղոց ու կաթնկերկնեան-ըու բերնէն օրհնութիւն կատարեցիր։
17 Եւ թողուց անոնք՝ քաղաքէն դուրս Բեթանիա եկաւ, ու գիշերը հոն կեցաւ։
18 Եւ առտուընց նորէն երբոր քաղաքը դարձաւ՝
19 անօթեցաւ։ Ու ճամբուն վրայ թուզի ծառ մը տեսնալով՝ քովը գնաց, և տերևէն ի զատ բան մը չի գտաւ վրան, ու ըսաւ անոր, Այսկէետև յաւիտեան քեզմէ պտուղ չըլլայ, և նոյն ժամին
20 թուզին ծառը չորցաւ։ Երբոր աշակերտները տեսան՝ զարմացան՝ ու ըսին թէ, Ինծոր թուզին
21 ծառը չուտ մը չորցաւ։ Յիսուս պատասխան տուաւ՝ և ըսաւ անոնց, Ճշմարիտ կըսեմ ձեզի, թէ որ հաւատք ունենաք՝ ու չի երկմըտիք, չէ թէ միայն այս թուզին ծառիկը կընէք, բայց թէ պետ այս լեռանը ըսէք՝ Ելիր և ծովը ընկիր, պի-
22 տի ըլլայ։ Եւ ամէն բան որ աղօթքի մէջ հաւատքով կրխնդրէք՝ պիտի առնէք։
23 Ու երբոր տաճարը եկաւ՝ քահանայապետները և ժողովուրդին ծերերը իրեն եկան երբոր կըսորվեցուներ, ու ըսին, Ասոնց ինչ իշխանութիւնով այս բաները կընես, և ո՞վ տըւաւ քեզի
24 այս իշխանութիւնը։ Պատասխան տըւաւ Յիսուս

ու բսաւ անոնց , Ես ալ ձեզի մէկ բան մը հաթ-
ցընեմ՝ թէ որ անոր ինծի ըսէք , ես ալ ձեզի
կըսեմ ինչ իշխանութիւնով աս բաները կը-
նեմ ։ Յովհաննէսին մկրտութիւնը ուսկից էր , եր- 25
կինքէ՞ն էր մի՝ թէ մարդոցմէ ։ և անոնք իրենց
մէջը կըմտմըտային ու կըսէին , Թէ որ ըսենք 26
Երկինքէն , մեզի կըսէ թէ՝ Ասպա ինչու չի հա-
ւատացիք անոր ։ և թէ որ ըսենք Մարդոցմէն՝
ժողովուրդին կըվախնանք , ինչու որ՝ բոլորն ալ
Յովհաննէսը մարգարէի պէս կըբռնեն ։ Պա- 27
տասխան տուին Յիսուսի ու ըսին՝ Չենք գիտեր ։
և ինքը անոնց ըսաւ , Ես ալ չեմ ըսեր ձեզի ,
թէ ինչ իշխանութիւնով աս բաները կընեմ ։

Բայց ինչպէս կերեւայ ձեզի , մէկ մարդ մը եր- 28
կու որդի ունէր , ու գնաց առջինին ըսաւ՝ Որ-
գեակ , գնա այսօր այգին բանէ ։ Նինիկա պա- 29
տասխանեց ու ըսաւ՝ Կերթամ Տէր , և չի գնաց ։
Ա՛ետկալին ալ գնաց՝ և անանկ ըսաւ , անիկա պա- 30
տասխան տուաւ ու ըսաւ՝ Չեմ կամիր , բայց ետ-
քը զղջացաւ՝ և գնաց այգին ։ Հիմայ աս երկու- 31
քին որը էր հօրը կամքը կատարեց ։ ըսին՝ Եաբի-
նոր ։ ըսաւ անոնց Յիսուս , Ճշմարիտ կըսեմ ձե-
զի՝ որ մաքսաւորները և պոռնիկները ձեզմէ առաջ
պիտի երթան երկինից թագաւորութիւնը ։ Ինչու 32
որ՝ Յովհաննէսը արդարութեան ճամբայով
եկաւ , ու դուք անոր չի հաւատացիք ։ բայց մաք-
սաւորները և պոռնիկները իրեն հաւատացին , և
դուք տեսաք՝ և չի զղջացիք ետքը անոր հաւա-
տալու ։

Ուրիշ առակ մըն ալ լըսեցէք ։ Մէկ տանտէր 33
մարդ մը կար՝ որ այգի մը տընկեց , ու ցանկով
պատեց անիկա , և անոր մէջը հնձան փորեց , ու
աշտարակ շինեց , ու բանվորներուն տուաւ ան ,
և ինքը հեռու աշխարհ գնաց ։ Երբոր պտուղն 34
ժամանակը մօտիկցաւ՝ իր ծառաները բանվորնե-
քուն խրկեց , որ անոր պտուղները առնեն ։

35 Եւ բանվորները անոր ծառաները բռնեցին,
մէկը տանջեցին՝ մէկը մեռցուցին՝ մէկալը քարկո-
36 ծեցին։ Նորէն ուրիշ ծառաներ խրկեց՝ առջին-
37 ներէն շատ, և անոնց ալ անանկ ըրին։ Ետքը
իր որդին խրկեց անոնց՝ ու ըսաւ, Կ'ուզէ պիտի
38 ամչնան աս իմ որդիէս։ Բայց բանվորները
երբոր տեսան որդին՝ միտքերնուն մէջ ըսին,
Ասիկա է ժառանգը, եկէք ասիկա մեռցուննանք՝
39 և անոր ժառանգութիւնը մենք ունենանք։ Ու
առին անիկա այգիէն դուրս հանեցին՝ և մեռցու-
40 ցին։ Ուստի երբոր այգիին տէրը գայ՝ ի՞նչ կը-
41 նէ ան բանվորներուն։ Ըսին իրեն, Ըն չարերը
չարաչար կըկորսընցունէ, և այգին ուրիշ բան-
վորներու կուտայ, որ իրենց ժամանակին պտուղը
42 տան իրեն։ Ըսաւ անոնց Յիսուս, Ինձա չէք մի
կարդացեր գլխին մէջ, Ըն քարը՝ որ շինողնե-
րը անարգեցին, անիկա անկիւնին գլուխ եղաւ.
ասիկա Տէրոջմէն եղաւ՝ և մեր աչքին առջևը
43 զարմանալի է։ Ուստի կըսեմ ձեզի՝ որ Աստուծոյ
Թագաւորութիւնը ձեզմէ պիտի առ-
նըվի, ու ազգի մը պիտի տըրվի՝ որ անոր պտուղ-
44 ները բերէ։ Եւ ով որ աս քարիս վրայ իյնայ՝
պիտի կոտրըտի, և որի վրայ որ իյնայ՝ պիտի
փոշրէ անիկա։
45 Երբոր քահանայապետները՝ ու կարդացող-
ները և Փարիսեցիները իր առակները լսե-
46 ցին, իմացան որ իրենց համար ըսաւ։ Ու կու-
զէին բռնել անիկա, բայց ժողովուրդէն վախ-
ցան. ինչու որ՝ մարգարէի տեղ բռներ էին
անիկա։

ԻԲ։

1 Պատասխան տըւաւ Յիսուս՝ և
2 առակներով ըսաւ անոնց։ Երկնից Թագա-
ւորութիւնը Թագաւոր մարդու մը կրնմանի, որ
3 իր տղին համար հարսնիք ըրաւ։ Եւ իր ծա-

ռանները խըրկեց՝ որ կանչեն հարսնիքի հրաւիրեալները , և անոնք չուզեցին գալ ։ Նորէն ու- 4
րիշ ծառաներ խըրկեց՝ ու ըսաւ , Ասէք հրաւիրեալներուն՝ ահա իմ՝ ճաշըս պատրաստեցի , զու-
արակներս ու գեր կենդանիներըս մորթըված են , և ամէն բան պատրաստ է . եկէք հարսնի-
քըս ։ Ու անոնք անհոգութեամբ գացին՝ մէկը իր 5
արտը , և մէկալը՝ իր առուտուրին ։ Եւ ուրիշ- 6
ները անոր ծառաները բըռնեցին՝ թշնամիի պէս
վարվեցան հետերնին , ու մեռցուցին ։ Թագա- 7
ւորն ալ կըբոտը լսեց՝ բարկացաւ , և իր զօրքը
խըրկեց՝ ան սպանողները սատկըցուց , ու անոնց
քաղաքը կրնց ։ Ետոյ ծառաներուն 8
ըսաւ , Հարսնիքըս պատրաստ է՝ և հրաւիրված-
ները արժանի չէին ։ Ուստի գացէք պողոտանե- 9
րը , և ով որ գտնալու ըլլաք՝ կանչեցէք իմ՝
հարսնիքըս ։ Եւ ծառաները ելան ճամբաներուն 10
վրայ , ով որ գտան հարս ու բարին՝ ամէնն ալ
ժողվեցին , ու հարսնիքը հարսնևորով լեցվե-
ցաւ ։ Ու թագաւորը կըբոտ մըտաւ հարսնևոր- 11
ները տեսնալու՝ հոն մէկ մարդ մը տեսաւ , որ
հարսնիքի լաթ հագած չէր հագած . Եւ ըսաւ իրեն , 12
Ո՛նկէր՝ ինչո՞ւ համար հոս մըտար , թէ որ հարս-
նիքի լաթ չունիս ։ և անիկա պապանձեցաւ ։
Ետոյ թագաւորը սպասաւորներուն ըսաւ , 13
Կապեցէք ատոր ոտքերը և ձեռքերը՝ ու հանեցէք
անիկա դուրսի մուխի տեղը . հոն պիտի ըլլայ լալ՝
ու ակռաները կըճըռցունել ։ Ինչու որ՝ կանչը- 14
ւածները շատ են , ու ընտրըվածները քիչ ։
Ետոյ փարիսեցիները գացին՝ իր վրայ խոր- 15
հուրդ ըրին թէ , ինչո՞ր որոգայթի մը դնեն անոր
խօսքով ։ Եւ իրենց աշակերտները Հերովդես- 16
եաններուն հետ մէկ տեղ խրկեցին անոր՝ ու
ըսին , Վարդապետ՝ գիտենք որ ճշմարիտ ես , և
ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կըսորվե-
ցունես , ու մէկը հոգ չես ըներ , և մարդու երես-

17 պաշտաւթիւն չես ըներ ։ Ասաի ասէ՝ մեզի՝ քեզի
ինչպես կերևայ , Այսօրին տուրք տալ պէտք է
18 մի՞ թէ չէ ։ Նիսուս գիտցաւ անոնց խորհանքու-
թիւնը՝ ու ըսաւ , Ինչո՞ւ կը փորձէք կեղծա-
19 ւորներ . Ցուցրէք ինծի տուրքին դահեկանը ։
20 և անոնք դահեկան մը տուին իրեն ։ Ու ըսաւ
21 անոնց , Պրի՞ է ասա պատկերը կամ գիրը ։ Ա՛սին՝
Կայսրինը ։ անտոնը ըսաւ իրենց , Վաղէք՝ ան
որ կայսրին է՝ կայսրին տուէք , և ան որ Աստու-
22 ծոյն է՝ Աստուծոյ տուէք ։ Երբոր լսեցին՝ զար-
մացան , ու թողուցին անկից՝ և գացին ։
23 Այն օրը Սադուկեցիները եկան անոր , որ
կ՚ըսեն թէ Յարութիւն չի կայ , հարցուցին
24 անոր՝ ու ըսին , Վ՚արդապետ Մովսէս ըսաւ
թէ , Թէ որ մէկը առանց զաւակի մեռնելու ըլլայ՝
անոր կնիկը իր եղբայրը թող առնէ , և իր եղբօ-
25 րը զաւակ հանէ ։ Ուրեմն եօթը եղբայր կային
մեզի հետ . առջինը կնիկ առաւ՝ և մեռաւ , ու
զաւակ չունենալուն համար՝ իր կնիկը ձգեց իր
26 եղբօրը ։ Նմանկ ալ երկրորդը՝ և երրորդը՝ մին-
27 չև եօթներորդը ։ Մեծէն ետև կնիկն ալ մե-
28 ռաւ ։ Ուստի յարութեան առնեն՝ ան եօթնէն
որո՞ն կին պիտի ըլլայ ասիկա . ինչու որ ամէնն
29 ալ անիկա կնիկ առին իրենց ։ Նիսուս անոնց
պատասխան տուաւ՝ ու ըսաւ , Մոլորեալներ՝ ո՛չ
գիրքերը գիտէք՝ և ո՛չ Աստուծոյ զօրութիւնը ։
30 Ինչու որ յարութեան առնեն՝ ո՛չ կնիկ կառնեն ,
և ո՛չ էրիկ կառնեն . հապա՝ երկինքի հրեշտակ-
31 ներուն պէս են ։ Բայց մեռելներուն յարութիւն
առնելուն համար՝ չէք մի կարդացեր Աստուծմէ
32 ձեզի ըսած խօսքը ։ Ես եմ՝ Աբրահամին Աս-
տուածը , Իսահակին Աստուածը , ու Յակոբին
Աստուածը . և Աստուած՝ մեռելներուն Աստուած
33 չէ , հապա՝ կենդանիներուն ։ Երբոր ժողովուրդ-
ները լսեցին՝ կզարմանային անոր վարդապե-
տութեանը վրայ ։

Ասոյց փարիսեցիները երբոր լսեցին՝ թէ պա- 34
պանեցուց Սադուկեցիները , մէկ տեղ ժողվե-
ցան ։ Եւ անոնցմէ մէկը հարցուց՝ անիկա փոր- 35
ձելով , ու ըսաւ ։ Վ՛ուրդապետ՝ որ պատուիրանքը 36
մեծ է օրէնքին մէջը ։ Եւ Յիսուս ըսաւ անոր , 37
Պ՛ու Տէր Աստուածդ պիտի սիրես քու բոլոր
սրտէդ , և քու բոլոր անձէդ , և քու բոլոր միտ-
քէդ ։ Այս է մեծը ու առաջին պատուիրանքը ։ 38
Երկրորդը ասոր նման՝ քու ընկերդ պիտի սիրես 39
քու անձիդ պէս ։ Այս երկու պատուիրանքէս 40
կախված են բոլոր օրէնքները և մարգարէները ։
Ու փարիսեցիները երբոր ժողվուեցան , Յի- 41
սուս հարցուց անոնց՝ ու ըսաւ ։ Ձեզի ինչպէս 42
կերևայ Պ՛րիստոսին համար , անիկա որի՞ որդին
է ։ Ասին իրեն՝ Դաւիթին ։ Ասաւ անոնց Յիսուս , 43
Ապա ինչու Դաւիթի հոգիովը անիկա Տէր կո-
չանէ՝ ու կըսէ ։ Տէրը իմ Տէրոջս ըսաւ՝ Իմ 44
աջ կողմը նըստէ , մինչև որ քու թշնամիներդ
քու ոտքիդ պատուանդան ընեմ ։ Ուրեմն Դա- 45
ւիթ անիկա Տէր կըկանչէ՝ ինչպէս անոր
որդին կըլլայ ։ Եւ մէկը չէր կրնար անոր բան 46
մը պատասխան տալ ։ ու ան օրէն ևս մէկը չէր
համարձակեր իրեն բան մը հարցունել ։

ԻԳ ։

Ա՛նատեղ Յիսուս խօսեցաւ ժողովուրդներուն 1
հետ և իր աշակերտներուն հետ՝ ու ըսաւ ։
Մովսէսին աթոռը կարգացողները և փարիսե- 2
ցիները նըստան ։ Ամեն բան որ ձեզի կըսեն՝ 3
ըրէք ու պահեցէք , բայց անոնց գործերուն պէս
մի՛ ընէք ։ ինչու որ՝ կըսեն ու չեն ըներ ։ Ծանր 4
և տանելու դժուար բեռներ կըկապեն՝ ու կը-
դնեն մարդոց ուսերը , և իրենց մատովը չեն ու-
զեր անոնք շարժել ։ Եւ իրենց ամեն գործերը՝ 5
մարդոց երևնալու համար կընեն ։ կըլայնցնեն
իրենց գրպանները , ու կերկընցունեն իրենց լա-

6 Թերուն ծայրերը ։ Ընթրիքներու մէջ առաջին
նստարանները կրսիրեն , և ժողովարաններուն
7 մէջ՝ առաջին աթոռները , ու շուկաներուն մէջը
բարևները ։ Ու մարդիկներէն Աբբի Աբբի
8 կանչուիլ ։ Ձայց դուք մի՛ կրնար մի՛
կանչէք . ինչու որ՝ ձեր ուսուցիչը մէկ մըն է , և
9 դուք ամէնդ եղբայր էք ։ Ու երկրի վրայ Հայր
ձեզի՝ Հայր մի՛ կանչէք . ինչու որ՝ ձեր Հայրը
10 մէկ մըն է , որ երկինքն է ։ Եւ դուք Ուսուցիչ-
ներ մի՛ կանչուիլ . ինչու որ՝ ձեր ուսուցիչը
11 Քրիստոս է ։ Եւ ձեր մէջէն մեծ ձեզի սպա-
12 սաւոր պիտի ըլլայ ։ Ամէն որ ինքզինքը կրբարձ-
րացնէ՝ պիտի ցածնայ . և ով որ ինքզինքը կը-
ցածցնէ՝ պիտի բարձրնայ ։
13 Ալ այ ձեզի կեղծաւոր կարգացողներ ու փա-
րիսեցիներ՝ որ երկնից թագաւորութիւնը մարդոց
դէմ կրգոցէք . դուք չէք մտնար , և անոնք որ
14 կրմտնան՝ չէք թողուր մտնալ ։ Ալ այ ձեզի
կեղծաւոր կարգացողներ ու փարիսեցիներ , որ
այրեւարիներուն տուները կուտէք , պատճառան-
քով աղօթքը կերկարցնէնէք . անոր համար
աւելի դատապարտութիւն պիտի ընդունէք ։
15 Ալ այ ձեզի կեղծաւոր կարգացողներ ու փարի-
սեցիներ , որ ծով ու ցամաք կրպտրտիք մէկը
նորադաւանը ընելու . և երբոր ըլլայ անիկա ձեզմէ
16 երկու անգամ աւելի գեհենքի որդի կրնէք ։ Ալ այ
ձեզի կոյր առաջնորդներ , որ կրսէք՝ Ան որ տա-
ճարին վրայ երդնում կրնէ , բան մը չէ . բայց ան
որ տաճարին մէջի ոսկիին վրայ երդնում կրնէ՝
17 անիկա պարտական է ։ Ալ յիմարներ ու կոյ-
րեր՝ որը մեծ է , ոսկին՝ եթէ տաճարը , որ կը-
18 սրբացնէ ոսկին ։ Եւ ով որ սեղանին վրայ եր-
դնում կրնէ՝ բան մը չէ , բայց ով որ սեղանին
վրայի պատարագին վրայ երդնում կրնէ՝ պարտա-
19 կան է ։ Խեղճեր ու կոյրեր՝ որը մեծ է , պատա-
րագը՝ եթէ սեղանը , որ կրսրբացնէ պատարա-

դը ։ Ասսի՝ ով որ սեղանին վրայ երդում կը- 20
նէ, երդում կընէ անոր վրայ՝ և անոր վրայի ա-
մէն բաներուն վրայ. և ով որ տաճարին վրայ եր- 21
դում կընէ, երդում կընէ անոր վրայ՝ և անոր
մէջի բնակողներուն վրայ. և ով որ երկինքին 22
վրայ երդում կընէ, երդում կընէ Աստուծոյ
աթոռին վրայ՝ և անոր վրան նըստողին վրայ ։
Ա՛յ ձեզի կեղծաւոր կարդացողներ ու փարի- 23
սեցիներ, որ անանուխին ու սամիթին և չամանին
տասանորդ կըվճարէք, ու կընձդէք օրէնքին ծանր
ծանր բաները՝ դատաստանը և ողորմութիւնը,
ու հաւատքը. ասանք էր ընել, և ան չի ձր-
գել։ Կո՛յր առաջնորդներ՝ որ մժեղները կքքամէք, 24
և ուղտերը կըլըլէք ։ Ա՛յ ձեզի կեղծաւոր կար- 25
դացողներ ու փարիսեցիներ. որ գաւաթին և
պնակին դուրսի կողմը կըսրբէք, ու ներսէն յա-
փըշտակութիւնով և անկարգութիւնով լեցուն
են ։ Կո՛յր փարիսեցի՝ առաջ գաւաթին և պնա- 26
կին ներսի կողմը սրբէ, որ անոնց դուրսի կողմն
ալ մաքուր ըլլայ ։ Ա՛յ ձեզի կեղծաւոր կար- 27
դացողներ ու փարիսեցիներ, որ կրնմանիք ծե-
փած գերեզմաններուն, որ դուրսի կողմէն գե-
ղեցիկ կերևան, և ներսի կողմէն մեռելներու ոս-
կորներով և ամէն կերպ պղծութիւնով լեցուն
են ։ Ա՛ռաք ալ անանկ՝ դուրսի կողմէն մարդոց 28
արդար կերևաք, ու ներսի կողմէն կեղծաւո-
րութիւնով և անօրէնութիւնով լեցուն էք ։
Ա՛յ ձեզի կեղծաւոր կարդացողներ ու փարի- 29
սեցիներ, որ մարգարէներուն տապանները կը-
շինէք, և արդարներուն գերեզմանները կըզար-
դարէք ։ Ու կըսէք, Թէ որ մեր հօրերնուս օրե- 30
րը ըլլայինք՝ մարգարէներուն արիւնին մասնա-
կից չէինք ըլլար ։ Ուրեմն դուք ձեր վրայ կը- 31
վկայէք՝ Թէ անոնց զաւակներն էք, որ մարգա-
րէները կրսպարդէին ։ Ո՛ւրկ դուք ալ ձեր հօրեր- 32
նուդ չափը լեցուցէք ։ Ո՛ձեր՝ իժերու ծնունդ- 33

ներ , ի՞նչպէս պիտի փախչիք դատաստանի պատուհասէն : 34 Ասոր համար՝ ահա ես մարգարէներ և իմաստուններ ու կարողացողներ կը ղրկեմ ձեզի . և անոնցմէ պիտի մեռցնէք , ու խաչը պիտի հանէք , և անոնցմէ ձեր ժողովարանները պիտի տանջէք , ու քաղաքէ քաղաք 35 հալածէք : Որ ձեր վրայ գայ բոլոր արդար արիւնը երկրի վրայ թափած . արդար Աբէլին արիւնէն մինչև Բարաքիայի որդի Զաքարիային արիւնը , որ տաճարին և սեղանին մէջ տեղը ըսպանեցիք : 36 Ո՛վ ես ուսադէմ Երուսաղէմ , որ մարգարէները կը քարկոծէիր , ու կը քարկոծէիր անոնք՝ որ քեզի ղրկուած էին . քանի՛ անգամ քու տղաքներդ ժողվել ուզեցի՝ ինչպես որ հաւը իր ձագերը թևերուն տակը կը ժողվէ , և դուք չուզեցիք : 38 Ահա ձեր տունը աւեր թող մնայ ձեզի : 39 Ասոր ձեզի կըսեմ , որ՝ Այսկէ ետև իս պիտի չտեսնաք , մինչև որ ըսէք՝ Օրհնեալ է ան , որ Տէրոջը անունովը կուգայ :

ԳԼ · Ի· :

1 Ա՛ Յիսուս տաճարէն դուրս ելաւ կերթար , աշակերտները քովը գացին տաճարին շէնքերը իրեն ցուցնելու : 2 Եւ ինքը պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Կըտեսնաք ատ ամէնը . ճշմարիտ կըսեմ ձեզի , չի պիտի մնայ հոն քար մը քարի մը վրայ՝ որ չի քակուի :

3 Եւ երբոր Ձիթենեաց լեռը նըստեր էր , աշակերտները իրեն եկան առանձին՝ ու ըսին . Ըսէ մեզի՝ երբ պիտի ըլլայ ատ , կամ քու գալըստեանդ և աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ : 4 Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց . Զգուշ կեցէք՝ չըլլայ թէ մէկը ձեզ խաբէ : 5 Ինչու որ՝ շատերը պիտի գան իմ անունով

վըս , և ըսէն՝ Թէ Ես Քրիստոս եմ · ու շատերը
պիտի մոլորցունեն : Պիտի լսէք պատերազմներ՝ 6
և պատերազմներու ձայներ , զգոյշ կեցէք որ չի
շփոթիք · ինչու որ՝ ան ամէն բաները պէտք է որ
ըլլան , բայց դեռ վերջը չէ : Ազգ ազգի վրայ պի- 7
տի կելլայ , ու թագաւորութիւն թագաւորու-
թեան վրայ , և պիտի ըլլան սովեր ու մահտարա-
ժամներ , և տեղ տեղ երկրաշարժութիւններ :
Ասոնց աս ամէնը՝ ցաւերուն սկիզբն է : Անտե- 8
նը ձեզ նեղութիւն քաշելու պիտի մատնեն , ու 9
պիտի սպաննեն ձեզ , և իմ անունիս համար՝
ամէն ազգերէն ատելի պիտի ըլլաք : Եւ անա- 10
տնն շատերը պիտի գայթակղին , ու միմեանց
պիտի մատնեն , և իրար պիտի ատեն : Եւ շատ 11
սուտ մարգարէներ պիտի ելլան , ու շատերը
պիտի մոլորցունեն : Եւ անօրէնութիւնը շատ- 12
նալուն համար՝ սէրը պիտի ցամքի : Ասոնց ան՝ որ 13
մինչև վերջը պիտի համբերէ , անիկա պիտի ապ-
րի : Եւ արքայութեան աս աւետարանը բոլոր 14
դակ աշխարհի մէջ պիտի քարոզվի՝ բոլոր հե-
թանոսներուն վկայութիւն ըլլալու , և անկէ ետև
վերջը պիտի գայ :

Ասոր համար երբոր կըտեսնաք աւերմունքին պղծու- 15
թիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքովը ըսված
է , որ սուրբ տեղը պիտի կենայ · (ով որ կըկար-
դայ՝ թող հասկընայ ·) անատնները Հրէաստանի 16
մէջ եղողները՝ լեռները թող փախչին · և ան որ 17
տանիսին վրայ կայներ է՝ թող չիջնայ իր տունէն
բան մը առնելու · և ան որ արտին մէջն է՝ թող 18
ետ չդառնայ իր լաթերը առնելու : Ասոնց վայ 19
անոնց՝ որ ծոցնոր ու ծիծ տուող են ան օրերը :
Աղօթք ըրէք , որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ , և 20
ոչ շաբաթի օրը : Ինչու որ՝ անատնները մեծ նե- 21
ղութիւն պիտի ըլլայ , անանկ որ աշխարհին
ստեղծումէն սկըսած մինչև հիմայ անոր պէս
եղած չէ , ու ալ պիտի չըլլայ : Եւ թէ որ ան 22

օրերը չի կարճըվիէին , մէկ մարմին մը չէր կրնար
ապրիլ · բայց ընտրեալներուն համար՝ ան օրերը
23 պիտի կարճըվիէին : Ապա եթէ որ մէկը ձեզի
ըսէ , Ահա Քրիստոս հոս է՝ կամ հոն , մի՛ հաւա-
24 տար : Ինչու որ՝ սուտ քրիստոսներ և սուտ
մարգարէներ պիտի կըլլան , ու մեծամեծ նշաններ
և հրաշքներ պիտի ցուցընեն · անանկ որ՝ եթէ
25 հնար ըլլար , ընտրեալներն ալ պիտի մոլորցու-
26 նէին : Ահա առաջուց ձեզի ըսի : Ասպա եթէ որ
ըսեն ձեզի՝ Թէ Ահա անապատին մէջն է , չելլաք ·
և թէ Ահա ծածուկ սենեակներուն մէջն է , մի՛
27 հաւատար : Ինչու որ՝ ինչպէս փայլակը որ արև-
ելքէն կելլայ՝ ու մինչև արեւմուտքը կերեւայ ,
28 անանկ պիտի ըլլայ նաև Որդւոյ մարդոյ գալը :
Ինչու որ՝ ուր սեղ մեռած մարմին կայ , հոն
արծիւները կը ժողովուին :
29 Շուտ մը ան նեղութեան օրերէն ետև՝ արև-
գակը պիտի խաւարի , և լուսինը իր լոյսը չի
պիտի տայ , ու երկինքէն աստղերը պիտի իյնան՝
30 ու երկնից զօրութիւնները պիտի շարժին : Եւ
եթէ Որդւոյ մարդոյ նշանը պիտի երեւայ երկին-
քը , և անտեղ բոլոր ազգերը պիտի ողբան · ու
Որդին մարդոյ պիտի տեսնան երկինքի ամպերուն
վրայ եկած՝ զօրութիւնով , և շատ փառքով :
31 Եւ իր հրեշտակները պիտի խրկէ մեծ փողով ,
ու պիտի ժողվեն իր ընտրեալները չորս հովերէն՝
երկինքի մէկ ծայրէն մինչև մէկալ ծայրը :
32 Թուզին ծառէն առակ մը տեսէք · որ երբ
անոր ճիւղերը կրկակուղտան , ու տերեւը կը-
33 ցրցուի՝ գիտէք թէ ամառը մօտ է : Անոր պէս դուք
ալ երբոր աս ամէն բաները տեսնաք՝ գիտցէք
34 որ մօտ է դուռներուն քով : Ճշմարիտ կըսեմ
ձեզի՝ Որ աս ազգը պիտի չանցնի , մինչև որ աս
35 ամէն բաները ըլլայ : Երկինք և երկիր պիտի
անցնին , ու իմ խօսքերը չի պիտի անցնին :
36 Հայց ան օրվանը և ան ժամին համար՝ մէկը

չի գիտեր , ոչ երկնից հրեշտակները , և ոչ Որդին , հապա Հայրն : Տայց ինչպէս որ Նոյի 37
օրերը եղա՛ն , Որդւոյ մարդոյ գալն ալ անանկ
պիտի ըլլայ : Ինչու որ՝ ինչպէս էին ան օրերը 38
ջրհեղեղն առաջ , կուտէին՝ կըխըմէին՝ կնիկ
կառնէին՝ ու էրիկ կառնէին , մինչև ան օրը՝ որ
Նոյ տապանը մըտաւ , և չի գիտցան՝ մինչև որ 39
ջրհեղեղը եկաւ , ու ամէնքը կորսընցուց . Որ-
դւոյ մարդոյ գալն ալ անանկ պիտի ըլլայ : Ան- 40
տեղ թէ որ երկու հոգի արտի մը մէջ ըլլան՝ մէ-
կը պիտի առնուի , ու մեկալը ձրգուի : Եւ թէ որ 41
երկու հոգի մէկ աղացքի քարի վրայ աղալու ըլ-
լան , մեկը պիտի առնուի՝ ու մեկալը ձրգուի :
Ուրեմն կը յիշէք , ինչու որ՝ չէք գիտեր որ ժա- 42
մուն ձեր տէրը կուգայ : Տինկա գիտցէք , որ 43
եթէ տանտէրը գիտնար՝ թէ գիշերւան որ ժա-
մուն գողը կուգայ , արթուն կըկենար՝ և թող
չէր իսար իր տունին տակէն փոս փորել : Տնոր 44
համար դուք ալ պատրաստ կեցէք . ինչու որ
անանկ ժամու մը՝ որ դուք չէք ապասեր , Որդին
մարդոյ կուգայ : Ուստի ո՞վ է ան հաւատարիմ 45
և խելացի ծառան՝ որ իր տէրը անոնկ իր ծա-
ռաներուն վրայ դրաւ , որ ատենին անոնց կերա-
կուր տայ : Երանի՜ է ան ծառային , որ իր տէրը 46
եկած ատենը՝ ինքը անանկ ըրած պիտի գտնայ :
Ճշմարիտ կըսեմ ձեզի , որ անոնկ իր բոլոր ու- 47
նեցածին վրայ վերակացու պիտի ընէ : Տապա 48
թէ որ չար ծառան իր սրտին մէջէն ըսէ , Իմ տէ-
րը կուշանայ գալ . և սկսի իր ընկեր ծառաները 49
բը ծեծել , գինովնալուն հետ ուտել ու խըմել :
Ան ծառային տէրը պիտի գայ մէկ օր մը՝ որ չի 50
սպասեր , և մէկ ժամու մը՝ որ չի գիտեր . և 51
անոնկ մէջ տնոյնը պիտի կըտրէ , ու անոր բաժի-
նը կնշանակուրնէուն հետ պիտի դնէ . Հոն պիտի
ըլլայ լալ՝ և ակռաներու կըձգըտնալ :

ԴԱՆԻԷԼ · ԺԲ ։

1 Ընդ նմին ելիցէ Միքայէլ իշխան մեծ, որ կայ
ի վերայ որդւոց ազգի քոյ. եւ եղիցի ժամանակ
նեղութեան, որպիսի ոչ եղեւ յորմէ ազգ ի ծնանել
իւր մինչեւ ցայն ժամանակ. եւ յայնմ ժամանակի
2 ապրեսցի ամենայն ժողովուրդ քո, որ գտցի գրեալ
3 ի գրքի. եւ բազումք ի քնարանի հողոյ յարիցեն,
եւ իցեն ոմանք ի կենդանութիւն յաւիտենից, եւ
ոմանք ի նախատինս եւ ի տեսիլ անարգութեան
4 յաւիտենից. եւ իմաստունքն փայլեսցեն իբրեւ
զլոյս հաստատութեան, եւ որ ի բազումս արդա-
րութիւն, իբրեւ զաստեղս յաւիտենից եւ յաւի-
5 տեան. եւ դու, Դանիէլ, ծածկեա զբանս եւ կնքեա
զգիրս մինչեւ ցժամանակ վախճանի. բազումք
6 շրջեսցին, եւ բազմասցի գիտութիւն. եւ ես տե-
սի, եւ ահա երկու այլք կային, մին ի կողմանէ
գետոյն ի հիւսիսոյ, եւ մին ի կողմանէ գետոյն ի
7 հարաւոյ. եւ ասեն առ այրն զգեցեալ զգեստ ոտ-
նից, որ էր ի վերայ ջուրց գետոյն. մինչեւ ցե՞րբ
8 իցէ կատարած հրաշից այսոցիկ. եւ լուայ զայրն
զգեցեալ զգեստ ոտնից, որ էր ի վերայ ջուրց գե-
տոյն, եւ ասէ. մինչեւ ցժամանակ, եւ ժամանակս,
եւ կէս ժամանակի. եւ յորժամ կատարեսցի ցրո-
9 ցումն զօրութեան սրբոյ ժողովրդեանն, կատար-
10 ածեսցին զայսոսիկ ամենայն. եւ ես լուայ, եւ ոչ
իմացայ. եւ ասեմ. տէր իմ, զի՞նչ իցէ կատարած
11 այսոցիկ. եւ ասէ. երթ, Դանիէլ, զի գոցեալ եւ
կնքեալ են բանքս մինչեւ ցժամանակ վախճանի.
12 բազումք շրջեսցին, եւ բազմասցի գիտութիւն.
եւ ոչ ոք իմասցի ամենայն չարագործ, այլ իմաս-
տունքն իմասցին. եւ յորժամ վերասցի ընդ մի-
շտնջենաւորն, եւ ընդ ամենայն ժողովուրդն, եւ
կատարեսցին զայսոսիկ ամենայն, ապա ի կատա-
13 րածի ամենայնի. եւ դու գնա ի հանգիստ, եւ հան-
գիր, եւ յարիցես ի կատարածի աւուրցն. եւ ես
գնացի ի հանգիստ, եւ հանգեայ, եւ յարեայ ի կա-
տարածի աւուրցն։

6* Զ

հեցաւ ։ Եւ ան որ մէկ առաւ՝ գնաց գետինը փո- 18
ըեց , ու իր տէրոջը ստակը ծածկեց ։ Հետ ժա- 19
մանակէն եկաւ ան ծառաներուն տէրը եկաւ , և
անոնց հետ հաշիւ ըրաւ ։ Եւ ան որ հինգ քան- 20
քար առաւ՝ եկաւ ուրիշ հինգ քանքար ալ բե-
րաւ , ու ըսաւ ։ Տէր՝ հինգ քանքար տուիր ինծի ,
ահա ուրիշ հինգ քանքար ալ անոր վրայ շահե-
ցայ ։ Ըսաւ անոր իր Տէրը , Ըպրիճ բարի ու 21
հաւատարիմ ծառայ , դուն որ քիչ բանի մը
վրայ հաւատարիմ ես՝ քեզ շատ բաներու վրայ
պիտի դնեմ ։ մտիր քու տէրոջդ ուրախութեանը
մէջ ։ Ընկնկա ալ որ երկու քանքար առեր էր՝ 22
եկաւ , ու ըսաւ ։ Տէր երկու քանքար տուիր ին-
ծի , ահա ուրիշ երկու քանքար ալ՝ որ անոր վրայ
շահեցայ ։ Ըսաւ անոր իր տէրը , Ըպրիճ բարի
ու հաւատարիմ ծառայ , դուն որ քիչ բանի մը 23
վրայ հաւատարիմ ես , քեզ շատ բաներու վրայ
պիտի դնեմ ։ մտիր քու տէրոջդ ուրախութեանը
մէջ ։ Ընկնկա ալ որ մէկ քանքար առեր էր՝ եկաւ 24
ու ըսաւ , Տէր գիտեի որ դուն պինա մարդ մըն
ես ։ կը քաղես ան՝ որ դուն չես ցաներ , ու կը ժո-
ղովես անկէ՝ որ չես փռեր ։ վախցայ , գացի քու 25
քանքարըդ գետինին մէջ ծածկեցի ։ ուստի ահա՝
քուկդ քեզի ։ Պատասխան տուաւ տէրը՝ ու 26
ըսաւ անոր ։ Չար և ծոյլ ծառայ՝ գիտէիր որ չի
ցանած տեղէն կը քաղեմ՝ , ու չի փռրած տեղէն
կը ժողվեմ՝ , պէտք էր քեզի իմ ստակըս սեղանա- 27
ւորին տայիր , և ես կուգայի՝ շահովը կառնէի
իմս ։ Ուստի առէք ասկէ քանքարը , ու տասը 28
քանքար ունեցողին տուէք ։ Ինչու որ՝ ամէն ոք 29
որ ունի նէ՝ պիտի տըրվի , ու էվէլնայ ։ և ոք որ
չունի նէ՝ ունեցածն ալ անկէ պիտի առնըվի ։
Եւ ատ անչահ ծառան՝ դուրսի մուԹը հանեցէք ։ 30
Հոն պիտի ըլայ լալ ու ակռաները կըճըռցու-
նել ։

Եւ երբոր Որդին մարդոյ իր փառքովը գայ՝ ու 31

բոլոր հրեշտակները իրեն հետ, անատեղը իր
32 փառաց աթոռին վրայ պիտի նըստի։ Եւ անոր
առջեւը պիտի ժողվըվին բոլոր ազգերը՝ ու անոնք
մէկըզմէկէ պիտի զատէ, ինչպէս որ հովիւ մը ոչ-
33 խարներէն այծերը կըզատէ։ Ու ոչխարները
իր աջ կողմը պիտի կայնեցունէ, և այծերը՝ ձախ
կողմը։
34 Ընատեղն Թագաւորը աջ դին կայնողներուն
պիտի ըսէ, Եկէք իմ Հօրըս օրհնածները՝ աշ-
խարհի սկիզբէն ձեզի համար պատրաստըված
35 Թագաւորութիւնը ժառանգեցէք։ Քանզու որ
անօթեցայ՝ և ինծի ուտելիք տըւիք. ծարաւեցայ՝
ու խըմցուցիք ինծի. օտարական էի՝ և իս ներս
36 առիք. մերկ էի, և դուք իս հագուեցուցիք. հի-
ւանդ էի, ու մես եկաք ինծի. բանտի մէջ էի՝ և
37 ինծի եկաք։ Ընատեղն արդարները անոր պա-
տասխան պիտի տան՝ ու ըսեն. Տէր՝ երբ մենք
քեզ անօթի տեսանք՝ և կերակրեցինք կամ ծա-
38 րաւ, ու արբուցինք։ Երբ քեզ օտարական տե-
սանք՝ և ներս առինք, կամ մերկ՝ ու հագուեցու-
39 ցինք։ Երբ քեզ հիւանդ՝ կամ բանտի մէջ տե
40 սանք, և քեզի եկանք։ Պատասխան պիտի տայ
Թագաւորը՝ ու ըսէ անոնց, Ճշմարիտ կըսեմ
ձեզի, որովհետև ասոնց եղբայրներուս պինտ պըզ-
տիկներէն մէկին ըրիք՝ ինծի ըրիք։
41 Ընատեղներն ձախ դին կեցողներուն ալ պիտի
ըսէ, Ա՛ւկ դի գայէք ինծմէ անիծեալներ՝ յաւի-
տենական կրակին մէջը, որ պատրաստուած է Սա-
42 տանային՝ և իր հրեշտակներուն։ Քանզու որ ա-
նօթեցայ, և ինծի ուտելիք չի տըւիք. ծարվե-
43 ցայ՝ ու ինծի չի խըմցուցիք. օտարական էի՝ և իս
ներս չառիք. մերկ էի՝ և իս չի հագուեցուցիք. հի-
ւանդ ու բանտի մէջ էի, և իս տեսնալու չեկաք։
44 Ընատեղներն անոնք ալ պատասխան պիտի տան՝ ու
ըսին, Տէր՝ մենք քեզ երբ տեսանք անօթի կամ
ծարաւ՝ կամ օտարական, կամ մերկ՝ կամ հի-

ւանդ , կամ բանտի մէջ , ու քեզի սպասաւորա-
թիւն չըրինք ։ Անոնք պատասխան պիտի տայ 45
անոնց՝ ու ըսէ , Հաշմարիտ կըսեմ ձեզի՝ որովհե-
տեւ ասոնցմէ պզտիկներէն մէկին չըրիք ,
ինծի ալ չըրիք ։
Եւ անոնք պիտի երթան յաւիտենական տան- 46
ջանքին , ու արդարները՝ յաւիտենական կեան-
քին ։

ԳԼ ։ ԻԹ ։

Ա ւ երբ եղաւ որ Յիսուս լըմընցուց ամէն ա- 1
խօսքերը , ըսաւ իր աշակերտներուն ։ Գի- 2
տէք՝ որ երկու օրէն հաւկի զատիկ կըլլայ , և Որ-
դին մարդոյ կըմատնըվի խաչը հլլալու ։
Անատեն քահանայապետները՝ ու կարգացող- 3
ները , և ժողովուրդին ծերերը ժող վըվէցան քա-
հանայապետին բակը , որուն անունը Կայիափա
էր ։ ու խորհուրդ ըրին՝ որ Հնարքով մը բռնեն 4
Յիսուսը՝ և մեռցունեն ։ Ասյց կըսէին , Թէ Ո՛չ 5
աս տօնիս մէջ , որ ժողովուրդին մէջը խռովու-
թիւն չըլլայ ։
Երբոր Յիսուս Ներեթանիա եկաւ բորոտ Սիմո- 6
նին տունը , ինկիլ մը եկաւ իրեն՝ որ ունէր ծան- 7
րագին եղի շիշ մը ։ և թափեց անոր գլխուն
վրայ՝ սեղանը նստաղներուն առջին ։ Աշակերտ- 8
ները երբոր տեսան , բարկացան՝ ու ըսին , Ինչու
աս եղը փուռ տեղը գնաց ։ Ինչու որ կարելի էր 9
ատիկա սուղ գինով ծախել , և աղքատներուն
տալ ։ Յիսուս հասկըցաւ՝ ու ըսաւ անոնց ։ 10
Ինչու անհանգիստ կընէք աս կինը , ատիկա բա-
րի գործ մը գործեց ինծի ։ Աղքատները ամէն 11
տեղ ձեր հետը ունիք , բայց իս ամէն տեղ ձեր
հետը չունիք ։ Ասոր աս եղը իմ մարմինիս վրայ 12
թափելը՝ իմ թաղվելս նշանակեց ։ Ասյց ճշմարիտ 13
կըսեմ ձեզի , Թէ բոլոր աշխարհի մէջ՝ ուր որ աս
աւետարանս քարոզ վի , ատոր ըրածն ալ պիտի
խօսվի՝ ինքը յիշելու համար ։

14 Ընատեն տասներկուքին մէկը՝ որ Յուդա Իս-
կարիովտացի կըսուէր , գնաց քահանայապետնե-
15 րուն՝ ու ըսաւ . Ի՞նչ կրկամիք տալ ինծի , և ես
անոնիկա մատնեմ ձեզի , ու անոնք հնսուն կտոր
16 արծաթի իրեն կշռատցին : Եւ անկէ ետեւ պատե-
շաւելիւն մը կըխրնտրէր , որ անոնիկա մատնէ
անոնց :

17 Եւ բաղարջակերքին առջի օրը աշակերտները
Յիսուսին եկան՝ և ըսին . Որ կուզես՝ որ քեզի
18 Համար պատրաստենք զատիկը ուտելու : Եւ անի-
կա ըսաւ անոնց , Գացէք քաղաքը ան մէկուն
քովը՝ ու ըսէք անոր՝ Ա՛ր դասատար կրսէ , ժամա-
նակըս մօտ է , աշակերտներուս հետ մէկ տեղ քով
19 քովդ պիտի ընեմ զատիկը : Եւ աշակերտները
ըրին ինչպէս որ հրաման ըրաւ անոնց Յիսուս ,
ու պատրաստեցին զատիկը :

20 Եւ երբոր իրիկուն եղաւ՝ տասներկու աշա-
21 կերտներուն հետը սեղանը նստաւ : Եւ երբոր
կուտէին անոնք՝ ըսաւ . Ա՛շխարհիս կրսեմ ձեզի՝
22 որ ձեզմէ մէկը իս պիտի մատնէ : Ու շատ տըրտ-
մեցան , և ամէն մէկը անոնցմէ սկըսեցին ըսել
23 անոր , Տէր՝ ե՞ս եմ մի : Ընիկա պատասխան տը-
ւաւ՝ ու ըսաւ . Ա՛ն որ իմ հետըս իր ձեռքը պնե-
24 նակը խօթեց , նոյնը պիտի մատնէ իս : Որդին
մարդոյ կերթայ՝ ինչպէս որ գրված է անոր հա-
մար . բայց վա՛յ ան մարդուն որուն ձեռքովը Որ-
դին մարդոյ պիտի մատնըվի . աղէկ էր ան մար-
25 դուն , որ ծընած չըլլար : Պատասխան տըւաւ
Յուդան՝ որ անոնիկա պիտի մատնէր՝ ու ըսաւ ,
Ա՛ր դասատար ե՞ս եմ մի . ըսաւ անոր՝ Դուն ըսիր :
26 Եւ դեռ որ անոնք կուտէին , Յիսուս հաց
առաւ՝ օրհնեց ու կըտրեց , և տըւաւ աշակերտ-
ներուն՝ ու ըսաւ , Առէք կերէք՝ ա՛ս է իմ մարմի-
27 նըս : Եւ գաւաթը առաւ , գոհացաւ՝ տըւաւ
28 անոնց ու ըսաւ , Ա՛մէնդ ալ խըմեցէք ասկէ .
ինչու որ ասիկա է իմ արիւնըս նոր ուխտի , որ

չատերուն համար կը թափի՝ մեղքերու թողու-
թեան համար ։ Ասկայն ձեզի կըսեմ , որ ալ 29
ասկէ ետև որթէն պտուղէն չի պիտի խըմեմ ,
մինչև ան օրը՝ երբոր ձեր հետ անիկա նորէն խը-
մեմ իմ Հօրըս թագաւորութեանը մէջը ։

Եւ օրհնեցին ու ելան Ձիթենեաց լեռը ։ Ա՛ն- 30
ատենը բսաւ անոնց Յիսուս , Ա՛ւդ ամէնդ ա- 31
գիշերը ինծմէ պիտի գայթակղիք · ինչու որ՝ գրված
է , Թէ՝ Հովիւը պիտի զարնեմ , ու հօտին ոչ-
խարները պիտի սփռտըղին ։ Եւ յարութենէն 32
ետևս՝ ձեզմէ առաջ Գալիլեա պիտի եր-
թամ ։ Պատասխան տուաւ Պետրոս ու բսաւ 33
անոր · Թէպէտ ամէնն ալ քեզմէ գայթակղին ,
բայց ես չի պիտի գայթակղիմ ։ Բսաւ անոր Յի- 34
սուս , Ճշմարիտ կըսեմ , քեզի՝ որ Այս գիշեր՝
գեռ հաւը չի խօսած , իրիք անգամ իս պիտի ու-
րանաս ։ Բսաւ անոր Պետրոս · Թէ և քեզի հետ 35
մեռնելու հանիմ՝ քեզ չեմ ուրանար · ասանկ
կըսէին նաև ամէն աշակերտները ։

Ա՛նատենը Յիսուս անոնց հետ գեղ մը եկաւ , 36
որուն անունը Գեթսեմանի էր , ու բսաւ անոնց ·
Հոս նըստեցէք մինչև ես երթամ աղօթք ընեմ ։
Եւ իր հետը առնելով Պետրոսը ու Զեբեդոսին 37
երկու որդիքը , սկսաւ տրտմիլ և հոգալ ։ Ա՛նա- 38
տենը բսաւ անոնց , Իմ անձրս մեռնելու չափ
տրտում է · հոս կեցէք , և իմ հետս արթնուն
ըլլացէք ։ Ու քիչ մը առաջ գնաց՝ երեսին վրայ 39
ինկաւ , աղօթք ըլլալ և բսաւ , Ով Հայր իմ՝
Թէ որ կարելի է , Թող աս գաւաթը ինծմէ անց-
նի · բայց ոչ Թէ ինչպէս ես կուզեմ , հապա՝
ինչպէս որ դուն ։ Եւ կուգայ աշակերտներուն ու 40
կը գտնայ անոնք քունի մէջ , և կըսէ Պետրոսին ·
Այսանկ մէկ ժամ մը չի կրցաք հետս արթնուն կե-
նալ ։ Արթնուն կեցէք և աղօթք ըրէք՝ որ փոր- 41
ձուԹեան մէջ չիյնաք · հոգիս յօժար է , բայց
մարմինըս տկար ։ Կարձեալ երկրորդ անգամ 42

գնաց աղօթք ըրաւ Յիսուս՝ ու ըսաւ , Ա՛վ
Հայր իմ՝ եթէ հնար ըլլար աս գաւաթը ինծմէ
անցնիլ , հապա թէ չէ՝ կրնամ անիկա . քու
43 կամքդ թող ըլլայ : Եւ նորէն եկաւ անոնք քունի
մէջ գտաւ . ինչու որ իրենց աչքերը ծանրացած
44 էին : Թողուց անոնք՝ ու գնաց երրորդ անգամ
աղօթք ըրաւ , և դարձեալ նոյն խօսքը ըսաւ :
45 Յետոյ եկաւ աշակերտներուն՝ ու ըսաւ անոնց .
Քնակ եղէք քնացէք՝ և հանգչեցէք . ահա ժամը
հասաւ , և Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը
46 կըմատնուի : Ելէք ասկէց երթանք , ինչու որ
ահա հասաւ անիկա՝ որ իս պիտի մատնէ :
47 Եւ դեռ անիկա աս որ կրխօսէր , ահա Յուդան
տասներկուքէն մէկը , եկաւ . և իր հետը շատ բազմութիւն սուրերով ու բիրերով ,
48 քահանայապետներէն և ժողովուրդին ծերերէն :
Եւ անոր որ պիտի մատներ զինքը , անոնց նշան մը
տուաւ՝ ու ըսաւ , Ա՛վ որ ես պագնեմ նէ՝ ան է ,
49 անիկա բռնեցէք : Եւ շուտ մը Յիսուսի գալով՝
ըսաւ , Ողջ կեցիր վարդապետ՝ ու պագաւ անի-
50 կա : Եւ Յիսուս ըսաւ անոր , Ո՛նկեր՝ ինչո՞ւ հա-
մար եկար դուն . անատեները եկան ձեռք զարկին
51 Յիսուսի՝ ու բռնեցին անիկա : Եւ մէյ մը Յի-
սուսի հետ եղողներուն մէկը ձեռքը երկընցուց ,
և իր սուրը հանեց՝ ու զարկաւ քահանայապետին
52 ծառային , և անոր ականջը մէկդի հանեց : Յե-
տոյ Յիսուս ըսաւ անոր , Դարձը իր տեղը
դարձուր . ինչու որ՝ ամէն սուր առնողները սու-
53 րով պիտի խլուին : Կրկարծես՝ թէ չեմ կրնար
իմ Հօրմէս աղաչել , և հիմայ հոս հասցուներ ինծի
54 տասներկու գունդէն եվել հրեշտակ : Հապց ինչ-
պես պիտի կատարվին գիրքերը , թէ պէտք է
ասանկ ըլլալ :
55 Յետոյ Յիսուս բազմութեանը , Իբր
թէ գողի վրայ ելլաք՝ սուրերով ու բիրերով իս
բռնելու . ամէն տաճարին մէջը ձեզի հետ

կընտանի՛ և կրսոմվեցուն էի , ու ես չի բռնեցիք ։
Բայց աս ամէն բաները եղաւ՝ որ կատարվին 56
մարգարէից գիրքերը . անասունը բոլոր աշակերտ-
ները թողուցին անիկա՝ ու փախան ։
Եւ անոնք բռնեցին Յիսուսը՝ Կայիափա քա- 57
հանայապետին տարին , ուր որ կարդացողները
ու ծերերը ժող վըվիր էին ։ Եւ Պետրոս հետու- 58
էն անոր ետևէն գնաց՝ մինչև քահանայապետին
բակը , ու ներս մտաւ սպասաւորներուն հետը
նըստաւ , որ վերջը տեսնայ ։ Ա՛ստի քահանայա- 59
պետները և բոլոր ժողով քը Յիսուսի վրայ սուտ
վկայութիւն մը կրնային առնել , որ զինքը սպան-
նեն . ու չէին գտնար՝ ան շատ սուտ վկաներէն 60
ալ որ եկած էին . եաքը երկու սուտ վկայ եկան ,
կըսէին թէ՝ Ասիկա կըզըրկէր , ես կրնամ Ա- 61
ուուծոյ տաճարը քակել , և իրիք աւուր մէջը շի-
նել ։ Ու քահանայապետը կայնելով՝ ըսաւ անոր , 62
Պատասխան մը չես խոսր . ի՛նչ գանգատ կը-
նեննկոր ասոնք քեզի համար ։ Եւ Յիսուս լուռ 63
կեցաւ . պատասխան տուաւ քահանայապետը՝ ու
ըսաւ անոր , Կենդանի Աստուծով քեզ կերդ-
մընցունեմ՝ որ մեզի ըսես , թէ դուն ես ի՛ Քրիս-
տոս Որդին Աստուծոյ ։ Ըսաւ անոր Յիսուս , 64
Դուն ըսիր . բայց կըսեմ ձեզի , Ասկե ետև պի-
տի տեսնաք Որդին մարդոյ՝ Զօրութեան աջ
կողմը նըստած , և երկինքին ամպերովը գալած ։
Անատն քահանայապետը՝ իր լաթերը պատռեց՝ 65
ու ըսաւ , Հայհոյեցաւ ըրաւ . ալ ի՞նչ պետք
է մեզի վկաներ . ահա հիմայ լըսեցիք աստր հայ-
հոյութիւնը . ձեզի ի՞նչ թուեցաւ է . անոնք պա- 66
տասխան տուին ու ըսին , Ա՛նպատճառ է ։ Ե- 67
տոն անոր երեսն ի վեր թքուին , ու բռունցքով ծեծեցին անիկա . ոմանք ալ ապտակ կըզար-
նէին , և կըսէին . Ա՛րդարէացիր մեզի՝ դուն 68
Քրիստոս , ով է ան՝ որ քեզի զարկաւ ։
Բայց Պետրոս դուրսը բակը նըստեր էր . ու 69

աղջիկ ծառայ մը եկաւ անոր՝ ու ըսաւ , Դուն
70 ալ Գալիլեացի Յիսուսի հետ էիր : Ինիկա ամե-
նուն առջեւը ուրացաւ՝ ու ըսաւ , Թէ Չեմ գի-
71 տեր դուն ինչ կ՚ըսես : Եւ երբոր դուռնէն
դուրս եկաւ՝ ուրիշ կնիկ մը ինքը տեսաւ , և հոն
եղողներուն ըսաւ , Այսիկա ալ Յիսուս Նազով-
72 րեցիին հետ էր : Եւ կեարտաս նորէն երդում
ընելով ուրացաւ , Թէ Ես զան մարդը չեմ գի-
73 տեր : Ու քիչ մը ատենէն հոն եղողները
եկան՝ և ըսին Պետրոսին , Ճշմարիտ դուն ալ
անոնցմէ ես . ինչու որ՝ քու խօսքդ ալ քեզ
74 յայտնի կընէ : Ինքն ատենը սկսաւ անիծել ու եր-
դում ընել , Թէ Ես զան մարդը չեմ գիտեր . և
75 շուտ մը հաւը խօսցաւ : Եւ Պետրոս Յիսուսի
բան խօսքը միտքը բերաւ , Թէ Կեռ հաւը չի
խօսած՝ իրեք անգամ պիտի ուրանաս իս . ու
դուրս ելաւ՝ դառն արցունք լացաւ :

ԳԼ · ԻԱ։

1 Երբոր առտու եղաւ , բոլոր քահանայապետ-
ները ու ժողովուրդին ծերերը խորհուրդ
2 բրին Յիսուսի համար անիկա մեռցունելու : Կա-
պեցին անիկա՝ և առին գացին . ու Պոնտացի Պի-
ղատոս դատաւորին ձեռքը տուին :
3 Ինքնին Յուդան՝ որ անիկա մատնեց , տես-
նելով Թէ դատապարտուեցաւ , զղջ չի եկաւ , ու
արծաթէը եւս դարձուց քահանայապետներուն՝ և
4 ժողովուրդին ծերերուն . ու ըսաւ , Մեղայ , որ
անմեղ արիւն մատնեցի . և անոնք ըսին , Ինր
5 հոգը չէ , դուն գիտես : Եւ արծաթէը տաճարին
մէջ ձգեց՝ ու դուրս ելաւ , և գնաց ինքզինքը
6 խղդեց : Քահանայապետն երն ալ արծաթէը առ-
նելով՝ ըսին , Արժան չէ զանիկա կորբանին մէջ
7 դնել . ինչու որ արիւնի գին է : Խորհուրդ
ընելով անով բրուտին արտը ծախսե ատին՝ օտար-
8 ներուն գերեզմանի համար : Անոր համար՝ ան

արտը արիւնի արտ կոչեցաւ մինչև այսօր ։ Ան- 9
տեսը կատարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռ-
քով ըսածը , Եւ առին երեսուն արծաթը՝ ծախ-
ւածին գինը , որ Իսրայէլի որդոցմէն ոմանք գին
կարեցին ։ Եւ տուին անիկա բրուտին արտին , 10
ինչպես որ ինծի հրաման ըրաւ Տէրը ։
Եւ Յիսուս դատաւորին առջեւը կայնեցաւ . 11
դատաւորը հարցուց իրեն՝ ու ըսաւ , Հրեանե-
րուն թագաւորը դուն ես , և Յիսուս ըսաւ ,
Դուն կըսես ։ Ու քահանայապետներէն և ծերե- 12
րէն զրպարտուելուատեն բան մը պատասխան
չի տուաւ ։ Ընտեղը Պիղատոս ըսաւ իրեն , 13
Չես լսեր՝ որչափ քեզի դէմ կըվկայեն ատոնք ։
Եւ անոր բան մը պատասխան չի տուաւ , մինչև 14
որ շատ զարմացաւ դատաւորը ։
Հայց դատաւորը սովորութիւն ունէր , որ 15
ան տօնին կապված մը արձակէր ժողովուրդին , ով
որ կուզէին ։ Եւ անատեղը Յեսու Բարաբբա 16
անունով մէկ նշանաւոր մը ունէին . Եր-
բոր ժող ըվվեցան՝ ըսաւ անոնց Պիղատոս , Ո՞ 17
երկուքէն որը կուզէք՝ որ ձեզի արձակեմ . Յե-
սու Բարաբբան թէ Յիսուսը , որ Քրիստոս
կըսվի ։ Ինչու որ գիտէր՝ թէ նախանձութեան 18
համար մատնեցին անիկա ։
Եւ երբոր տեղը նըստեր էր , իր կնիկը 19
խրկեց իրեն՝ ու ըսաւ , Ան արդարին հետը դուն
բան մը չունիս , ինչու որ՝ այսօր երազիս մէջ
շատ դիպուածներ անցան իմ վըսյէս ատոր հա-
մար ։
Հայց քահանայապետները և ծերերը ժող- 20
ովուրդը հաւանեցուցին , որ Բարաբբան ուզեն՝
ու Յիսուսը կորսնցուցնեն ։ Պատասխան տուաւ 21
դատաւորը՝ ու ըսաւ անոնց , Ո՞ երկուքէն որը
կուզէք՝ որ ձեզի արձակեմ . և անոնք ըսին՝ Բա-
րաբբան . Ըսաւ անոնց Պիղատոս , Ապա ի՞նչ 22
ընեմ Յիսուսը՝ որ Քրիստոս կըսվի ։ Ամէն ալ 23

բսին , (Ծող խաչ վի · և բսաւ անոնց , Ո՞նչ չար գործ ըրաւ · և անոնք ևս առաւել կաղաղակէին՝
24 ու կրսէին , (Ծող խաչ վի : Եւ Պիղատոս տես-
նալով՝ որ օգուտ մը չըլլար , հապա ալ աւելի խռովութիւն կըլլայ , ջուր առաւ՝ ձեռքերը լը-
ացաց ժողովուրդին առջեւը՝ և բսաւ , Ես ատ ար-
դարին արունէն անպարտ եմ · դուք գիտէք :
25 Պատասխան տըւաւ բոլոր ժողովուրդը՝ ու բսաւ ,
Անոր արիւնը մեր վրայ՝ և մեր զաւկընեըուն
26 վրայ : Ընտանեաց Հեսու Խարաբբան արձակեց անոնց , և Հիսուսը ծեծելով ձեռքերնին տըւաւ՝
որ խաչ վի :
27 Ընտանեաց դատաւորին զինուորները պալատին ներսը առին Հիսուսը , ու բոլոր գունդը անոր
28 դուռնին վրայ ժողվեցին · մերկացուցին զինը-
քը՝ և կարմիր վերարկու մը հագցուցին անոր :
29 Ու փուշերէ թագ մը ոլորելով՝ իր գլուխը դրին ,
և եղէգ մը իր աջ ձեռքը · և անոր առջեւը ծըն-
կան վրայ գալով՝ ծաղր կընէին ու կրսէին , Ողջ
30 կեցիր Հրեից թագաւոր : Ու թուքնելով անոր
վրայ՝ եղէգը կառնէին , և անոր գլուխը կծեծէ-
31 ին : Եւ երբոր ծաղր ըրին անիկա՝ կարմիր վե-
րարկուն վրայէն հանեցին , ու իր լաթերը իրեն հագցուցին , և տարին անիկա խաչը հանելու :
32 Եւ դուրս ելան՝ Կիւրենացի մարդ մը գտան Սիմոն անունով , անիկա բռնեցին՝ որ անոր խա-
33 չը վերցունէ : Ու եկան Golgotha ըսված տեղը ,
34 որ է գլուխ կարելու տեղ : Իրեն գինին տըւին լեղիով խառնած՝ որ խմէ , և երբ որ համը ա-
35 ռաւ , խմել չէր ուզեր : Եւ խաչը հանեցին անիկա · անոր լաթերն ալ վիճակով բաժնեցին ,
որ մարգարէին ըսած խօսքը կատարվի , Իմ լա-
թերս իրենց մէջը բաժնեցին , և իմ կապայիս
36 վրայ վիճակ ձգեցին : Ու նըստեր անիկա կըպա-
37 հէին : Եւ անոր գլխուն վրան իր յանցանքը գրված՝ դրին , Թէ Ասիկա է Հիսուս Հրէանե-

բուն Աբագաւորը ։ Անոնք անոր հետ երկու- 38
գողեր ալ խաչեցին - մէկը անոր աջ դին ,ե մէ-
կալը՝ ձախ դին ։

Եւ անոնք որ կանցնէին՝ կը հայհոյէին անոր , 39
գլուխնին կը շարժէին՝ ու կըսէին - Ա՛հ՝ որ տա- 40
ճարը կը քակէիր , և իրեք օրը կը շինէիր ան - դուն
քեզ ապրեցուր - Թէ որ Որդի Աստուծոյ ես՝ իջիր
ատ խաչէդ ։ Անանկ ալ քահանայապետները 41
կարդացողներուն և ծերերուն հետ ծաղր կընէին՝
ու կըսէին - Ուրիշները ապրեցուց , ինքզինքը 42
չի կրնար ապրեցունել - Թէ որ Իսրայէլի Թա-
գաւորն է՝ թող իջնայ հիմայ խաչէն , և իրեն
հաւատանք ։ Թէ որ Աստուծոյ յուսացեր է , հի- 43
մայ թող փրկէ ատիկա՝ եթէ կուզէ ատիկա - ին-
չու որ ըսաւ Թէ՝ Ես Որդի Աստուծոյ եմ ։ Իր 44
հետը խաչված գողերն ալ նոյնպես կընախատէին
անիկա ։

Եւ օրվանը վեց ժամէն մինչև ժամը ինը՝ բո- 45
լոր երկրին վրայ խաւար եղաւ ։ Եւ ժամը իննին 46
Յիսուս մեծ ձայնով մը կանչեց՝ ու ըսաւ , Էլի
Էլի՝ լամա սաբաքթանի , որ ըսել է Աստուած
իմ՝ Աստուած իմ , իս ինչու թողուցիր ։ Անոնց 47
մէ ոմանք՝ որ հոն կայներ էին , երբոր լսեցին՝ կը-
սէին , Ատիկա Եղիան կը կանչէկոր ։ Եւ շուտ 48
մը անոնցմէ մէկը վազեց սպունգ մը առաւ , քացա-
խով լեցուց , ու անցուց եղէգի մը՝ տուաւ անոր
որ խմէ ։ Ու մնացեալները կըսէին՝ Թող տուր նայ- 49
ենք թէ Եղիան կուգայ ատիկա ազատելու ։

Եւ Յիսուս գարձեալ մեծ ձայնով կանչեց՝ ու 50
հոգին արձակեց ։

Եւ ահա տաճարին վարագուրը վերէն ի- 51
վար երկուքի ճեղքվեցաւ , ու երկիր շարժեցաւ ,
և քարերը պատեցան ։ Եւ գերեզմանները բաց- 52
վեցան , ու շատ սուրբ հնջեցեալներու մարմին-
ներ յարութիւն առին ։ Եւ գերեզմաններէն 53
ելան անոր յարութենէն ետև՝ մրտան սուրբ
քաղաքը , ու շատերուն երեցան ։

54 Ասոյց Հարիւրապետը և իրեն հետ Յիսուսը պահպանողները, երբոր տեսան շարժմունքը և եղած բաները՝ շատ վախցան, ու ըսին. Ա՛շմարիտ ասիկա Որդի Աստուծոյ էր։

55 Անոնց տեղը շատ կիներ ալ կային որ հեռուն կայներ էին՝ և կը նայէին, որոնք Գալիլեայէն Յիսուսի հետէն եկան իրեն ծառայութիւն ընե-
56 ու. որոնց մէջն էր Մարիամ Magdաղենացին՝ և Մարիամ Յակոբին ու Յովսէփին մայրը, և Զեբեդեայ որդւոց մայրը։

57 Եւ երբոր իրիկուն եղաւ, Արիմաթիայէն մէկ հարուստ մարդ մը եկաւ՝ որուն անունը Յովսէփ
58 էր, որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր։ Ասիկա գնաց Պիղատոսին՝ Յիսուսի մարմինը ուզեց, անոնք Պիղատոս հրաման ըրաւ՝ որ մարմինը
59 տան։ Եւ Յովսէփ մարմինը առաւ՝ մարմը
60 կտաւներով փաթթեց, ու դրաւ նոր գերեզմանի մը մէջ՝ որ քարէ փորեց, և գերեզմանին դուռը խոշոր քար մը գլորտցնելով գնաց։
61 Անոն էր Մարիամ Magdաղենացին և մէկալ Մարիամը՝ գերեզմանին դէմը նստած։

62 Եւ վաղուն օրը՝ որ ուրբաթէն ետև է, քահանայապետները և Փարիսեցիները ժող վրն-
63 ցան Պիղատոսին քով, ու ըսին. Տէր՝ միտքերնիս եկաւ, որ ան մոլորեցուցիչը իր ողջութեան ատեն կըսէր թէ՝ Իրեք օրէն ետև յարութիւն կա-
64 նեմ։ Ուստի հրաման ըրէ որ մինչև իրեք օր գերեզմանին զգոյշ կենան. չըլլայ թէ իր աշակերտները գիշերանց գան անկից գողնան, և ժողովուրդին ըսեն, թէ Մեռելներէն յարութիւն առաւ. ու ետքի մոլորութիւնը առջինէն գէշ ըլ-
65 լայ։ Պիղատոս անոնց ըսաւ, Պահ ունիք պահապան զինուորներ. գացէք զգուշութիւն ըրէք ինչ-
66 պէս որ գիտէք։ Անոնք ալ գացին գերեզմանին զգուշացան, և քարը զմուեցին հանդերձ զինուորներով։

ԳԼ. ԻԲ.

Եւ չարաչի իրիկուն՝ որ մեկնեալ կրնայինք 1
եկաւ Մարիամ Մագդաղենացին եւ մեկալ
Մարիամ գերեզմանը տեսնելու : Եւ մէկմէկ 2
մեծ շարժ մը եղաւ . ինչու որ Տէրոջը հրեշտակը
երկինքէն իջաւ , գալով մեկդի գլորեց
քարը , ու անոր վրայ նստեցաւ : Եւ անոր տես- 3
քը կը փայլակի պէս , ու իր հանդերը ձիւնի պէս
ճերմակ : Եւ անոր վախէն պահապանները սար- 4
սափեցան , ու մեռելի պէս եղան : Պատասխան 5
տուաւ հրեշտակը՝ ու ըսաւ կիներուն , Վախ
մի վախնաք . գիտեմ որ կ'որոնարուք Յիսուսը՝
որ խաչուեցաւ . անիկա հոս չէ , ինչու որ՝ յա- 6
րութիւն առաւ , ինչպէս որ ըսաւ . եկէք տեսէք
ան տեղը՝ ուր որ էր : Եւ շուտ մը գացէք անոր 7
աշակերտներուն ըսէք , թէ Յարութիւն առաւ .
և ահա ձեզմէ առաջ Գալիլեա կերթայ , հոն
պիտի տեսնուք անիկա . ահա ձեզի զգուշացայ : Եւ 8
շուտ մը գերեզմանէն եկան վախով և մեծ ու-
րախութիւնով՝ կրվազէին աշակերտներուն պատ-
մելու :

Եւ մէկմէկ Յիսուս անոնց դէմը եկաւ՝ ու ը- 9
սաւ , Ողջոյն ձեզ : Եւ անոնք գացին անոր ոտ-
քը բռնեցին՝ ու երկրպագութիւն ըրին անոր :
Յետոյ Յիսուս անոնց ըսաւ . Մի վախնաք՝ 10
գացէք իմ եղբայրներուս ըսէք , որ Գալիլեա եր-
թան , ու հոն իս պիտի տեսնան :

Երբոր անոնք գացին՝ մէկմէկ պահապաններէն 11
մէկ քանին քաղաքը եկան , ու քահանայապետնե-
րուն պատմեցին բոլոր բաները՝ որ եղաւ : Եւ 12
անոնք ծերերուն հետ մէկ տեղ ժողվուելով
խորհուրդ ըրին՝ շատ ստակ տալին զինուորնե-
րուն , ու ըսին . Ըսէք , թէ Յետոյ աշակերտները 13
գիշերը եկան անկից գողցան՝ երբոր մենք քնա-

14 ցեր էինք ։ Եւ թէ որ ասիկա դատաւորին ականջը հասնի՝ մենք անիկա կըշաճեցուենք , և ձեզ
15 ապահով կընենք ։ Եւ անոնք ըստակը առին՝ ու սորվածնուն պէս ըրին . և աս ձայնը Հրէաներուն մէջէն ելաւ՝ մինչև աս օրը ։
16 Ուայց տաճարին աշակերտները գացին Կայիաֆա ան լեւը , ուր որ Յիսուս իրենց խօսք տուեր
17 էր ։ Երբոր տեսան անիկա՝ երկիրպագութիւն
18 ըրին անոր , ու ամենք տարակուսեցան ։ Եւ Յիսուս ետաւ անոնց չեռը խօսեցաւ՝ ու ըսաւ , Ամէն իշխանութիւն ինծի տրըվեցաւ երկինքի ու երկրի
19 մէջ . ինչպէս որ Հայրը իս խրկեց՝ ես ալ ձեզ
20 կրխրկեմ ։ Վացէք ասկէ ետև բոլոր ցեղատոհմները աշակերտեցէք . մկրտեցէք անոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։ Սորվեցուցէք անոնց պահել ամէն բաները , ինչ որ ես պատուիրեցի ձեզի . և աշ ամէն օր ես ձեզի չեմ եմ մինչև աշխարհիս վերջը ։

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ ։

ԳԼ. Ա ։

Ա ստուածոյ Որդիին Յիսուսի Քրիստոսի աւե- 1
տարանին սկիզբը ։ Ինչպէս որ մարգարէնե-
րուն մէջը գրված է . Ահա ես իմ հրեշտակս 2
կրկրկեմ քու առջեւդ , որ քու ճամբադ քու առ-
ջեւդ պատրաստէ ։ Ահեկ ձայն մը՝ որ անապատին 3
մէջ կը կանչէ , Պատրաստ ըրէք Տէրոջը ճամբան ,
և շտկեցէք անոր քայլու գետինը ։ Ու եղաւ որ՝ 4
Յոհաննէս անապատին մէջը կը մկրտէր , և ապաշ-
խարութեան մկրտութիւն կը քարոզէր՝ մեղքերու
թողութեան համար ։ Եւ բոլոր Հրէաստանի 5
աշխարհը և ամէն Երուսաղէմացիները կելթայ-
ին անոր , ու կը մկրտուէին անկէց Յորդանան
գետին մէջ՝ մեղքերնին խոստովանելով ։ Ու 6
Յոհաննէս հագեր էր ուղտի մազ , և իր մէջքը
կաշիէ գօտի . ու իր կերակուրը մարախ և լե-
ռան մեղր էր ։ Կը քարոզէր ու կըսէր . Իմ ետևէս 7
ինծմէ զօրաւորը կուգայ , որ ես արժանի չեմ
ծռռիլ անոր կօշիկներուն կապերը արձրկել ։ Ես 8
ձեզ ջուրով մկրտեցի , բայց անիկա ձեզ Հոգին
Սուրբով պիտի մկրտէ ։
Ան օրերը եղաւ որ՝ Յիսուս Գալիլեացւոց 9
Նազարեթէն եկաւ , ու Յոհաննէսէն մկրտվե-
ցաւ Յորդանանին մէջ ։ Եւ շուտ մը ջուրէն որ 10
եկաւ՝ երկինքը բացված տեսաւ , և Աստուծոյ
Հոգին աղաւնիի պէս՝ որ անոր վրայ կիջնար ։

11 Զայն մը եկաւ երկինքէն՝ որ կ՚ըսէր , Դուն ես
իմ սիրական Որդիս , քեզի հաճեցայ :
12 Ու շուտ մը Հոգին անապատ հանեց անիկա :
13 Եւ ինքը քառասուն օր հոն էր Սատանայէն փոր-
ձըված . ու գազաններու հետ էր , և հրեշտակ-
ները իրեն սպասաւորութիւն կ՚ընէին :
14 Եւ Յովհաննէսին մատնուելէն ետև՝ Յիսուս
Գալիլեա եկաւ , Աստուծոյ աւետարանը քա-
15 րոզելով՝ ու կ՚ըսէր . Թէ՝ Ժամանակը
լըմընցած է , և Աստուծոյ թագաւորութիւնը
հասած է . ապաշխարեցէ՛ք և աւետարանին հաւ-
տացէ՛ք :
16 Երբոր Գալիլեացոց ծովեզերքէն կանցնէր՝
տեսաւ Սիմոնը ու Սիմոնին եղբայրը Անդրէասը ,
որ ծովը ուռկան ձգեր էին . ինչու որ ձուկ բռնո-
17 ղներ էին : Եւ ըսաւ անոնց Յիսուս , Իմ ետևէս
եկէք , ու ես ձեզ ընեմ որ մարդու որսորդ բռ-
18 նաք : Եւ շուտ մը ուռկանները թողուցին՝ անոր
19 ետևէն գացին : Եւ անկէց քիչ մը առաջ գնաց՝
տեսաւ Զեբեդեոսեան Յակոբոսը և անոր Յո-
հաննէս եղբայրը . անոնք ալ նաւին մէջը երբ
իրենց ուռկանները կկարկըտէին . ու կանչեց
20 անոնք : Եւ շուտ մը իրենց Հայրը Զեբեդեոս
նաւին մէջ ձգելով՝ վարձկաններուն հետ , անոր
ետևէն գացին :
21 Ու մտան Կափառնայում . և իսկոյն շաբաթ
օրը ժողովարանը մըտաւ , կըսորվեցուներ անոնք :
22 Եւ կըզարմանային անոր վարդապետութեանը
վրայ , ինչու որ իշխանութիւնով մը անոնք կը-
սորվեցուներ՝ ու չէ թէ կարդացողներուն պէս :
23 Եւ անոնց ժողովարանին մէջը մէկ մարդ մը կար ,
որ պիղծ դև ունէր իր նեղսի դին . որ աղաղակեց՝
24 ու ըսաւ , Թող տուր , մենք քեզի հետ ի՞նչ բան
ունինք՝ Յիսուս Նազովրեցի , ոչ եկար մեզ կոր-
սընցունելու . գիտենք քեզ՝ ով ես . Աստուծոյ
25 Սուրբը : Յիսուս չանեց անիկա՝ ու ըսաւ , Պա-

պանձէ՝ և ել ատկէց ։ Եւ պիղծ դեւը անիկա գե- 26
ֆնը զարկաւ , և մեծ ձայնով մը կանչեց , ու
անկէց ելաւ ։ Եւ ամէնքը զարմացան , անանկ որ՝ 27
մէկ մէկու հետ կըփրսիքսային ու կըսէին , Ի՞նչ
նոր վարդապետութիւն է աս . ինչու որ իշխա-
նութիւնով պիղծ դեւերուն ալ կըհրամայէ , ու
իրեն կըհնազանդին ։ Եւ իր համբաւը Գա- 28
լիլեացիներուն ամէն կողմերը ելաւ ։

Ու շուտ մը ժողովարանէն ելաւ՝ Սիմոնին և 29
Անդրէասին տունը եկաւ Յակոբին և Յովհաննէ-
սին հետ ։ Ու Սիմոնին զքաջը ջերմով պառկած 30
էր , և շուտ մը իրեն բսին անոր համար ։ Ու 31
գնաց անոր ձեռքէն բռնեց՝ վերցուց անիկա . ու
ջերմը թող տուաւ անիկա , և անոնց սպասաւո-
րութիւն կընէր ։

Եւ երբոր իրիկուն եղաւ՝ արեգակը մանալուն 32
ատենը բոլոր հիւանդները և դիւահարները իրեն
բերին ։ Ու բոլոր քաղաքը դուռը ժող վըվեր էր ։ 33
Եւ շատ հիւանդներ կերպ կերպ ցաւերէն բժըշ- 34
կեց , և շատ դևեր հանեց , ու դևերուն խօսել
չէր իտար . ինչու որ գիտէին անիկա Թէ Քրիս-
տոսն է ։

Եւ առտուընց լուսցածին պէս ելլելով՝ ելաւ 35
և գնաց անապատ տեղ մը , ու հոն աղօթք կընէր ։
Ու Սիմոն և իր հետը եղողները գացին անոր 36
ետևէն ։ Եւ երբոր գտան անիկա՝ բսին իրեն , 37
Թէ Ամէնը քեզ կըփընտռտնեկոր ։ Եւ բսաւ 38
անոնց , Եկէք երթանք ուրիշ մօտ քաղաքները ,
որ հոն ալ քարոզեմ . ինչու որ ասոր համար
եկեր եմ ։ Եւ անոնց ժողովարաններուն մէջը 39
կըքարոզէր բոլոր Գալիլեացոց մէջ , ու դևեր
կըհաներ ։

Ա՛կ բորոտ մը եկաւ անոր՝ կաղաչէր , ծունկ 40
կըչոքէր՝ և կըսէր , Տէր՝ Թէ որ կամիս կրնաս իս
մաքրել ։ Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը երկըն- 41
ցուց , դպաւ անոր՝ ու բսաւ անոր , Կըկամի՛մ ,

42 մաքրըվի՛ր ։ Եւ երբոր ա՛ս ըսաւ անոր՝ շուտ մը բո-
43 րոտութիւնը անկէ գնաց , ու մաքրըվեցաւ ։ Եւ
սաստելով անոր՝ շուտ մը դուրս հանեց անիկա ,
44 ու ըսաւ ։ Ո՛գուշ կեցիր՝ մէկուն բան մը չըսես ։
Հապա գնա՛ քեզ քահանային ցուցուր , և քու
մաքրըվելուդ ընծայ տուր , որ Մովսէս հրաման
45 ըրաւ՝ անոնց վկայութեան համար ։ Եւ անիկա
երբ սկսաւ էվելօք քարոզել , ու բանը տարա-
ձայնել , անանկ որ՝ ալ ինքը չէր կրնար յայտնի
քաղաքը մտնալ ։ Հապա դուրս անապատ տեղ-
վանք էր , և ամէն կողմերէն իրեն կուգային ։

ԳԼ · Ե ։

1 Եւ նորէն Կափառնայում մտաւ հանկ ի՛ օրե-
2 րէն եաև ։ ո՛ լըսվեցաւ որ տունն է ։ և շատե-
րը ժող վըվեցան՝ անանկ որ ալ տեղ չի կար ոչ
դռանը քովերն ալ ։ ու կրնաւոր անոնց Խոսե-
3 բանը ։ Եւ կուգային իրեն՝ չորս հոգով վերցու-
4 ցած անդամալոյծ մը կրբերէին ։ Եւ երբոր բազ-
մութենէն չէին կրնար մօտ գալու անոր , քակե-
ցին ծածկը ուր որ Յիսուս էր , ու ատիրը որ բա-
ցին , մահիճը վար իջուցին՝ որուն մէջը անդամա-
5 լոյծը կրկնար ։ Եւ Յիսուս երբոր անոնց հա-
ւատքը տեսաւ՝ ըսաւ անդամալոյծին , Որդեակ՝
6 քու մեղքերդ ներվին քեզի ։ Ու կարգացողնե-
րէն մէկ քանին կային՝ որ հոն նստեր էին , և
7 իրենց սրտին մէջ կրխորհէին ։ Ինչ է աս , որ
ասիկա հայհոյութիւններ կրխօսի ։ ով կրնայ
8 մեղքը թողուլ , բայց Աստուած միայն ։ Եւ
Յիսուս խմացաւ իր հոգիին մէջ՝ որ անանկ կը-
խորհին սիրտերնուն մէջը , ու ըսաւ ։ Ատ ինչ կը-
9 խորհիք սիրտերնուդ մէջը ։ Որը դիւրին է , ան-
դամալոյծին ըսել՝ Ատու մեղքերդ ներվին քեզի ,
եթէ ըսել՝ Ելլէ , մահիճդ առ՝ ու տունդ գնա ։
10 Հապա որ կարող ըլլաք գիտնալ , թէ Որդին մար-
դոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը նե-

բելու. (քսաւ անդամալոյծին) Քեզի կըսեմ, Ելիր 11
մահիճդ առ՝ ու տունդդ գնա ։ Եւ ելաւ, շուտ մը 12
իր մահիճը առաւ ամէնուն առջեւը դուրս ելաւ,
անանկ որ ամէնը զարմացան, և փառք տուին
Աստուծոյ՝ ու ըսին, Թէ Անանկ բան ամենևին
չի տեսանք ։

Ու ելաւ նորէն ծովեզերքը, և բոլոր ժողո- 13
վուրդը իրեն եկաւ, ու կըսորվեցուներ անոնք ։
Եւ երբոր կանցնէր՝ տեսաւ Ղևի Ալփեոսանը, 14
որ մաքս ընդունելու նստեր էր. ու ըսաւ անոր,
Եկո՛ր իմ ետևէս, և անիկա ելաւ գնաց անոր
ետևէն ։ Ու եղաւ որ իր սեղան նըստած ատենը 15
անոր տունը՝ և շատ մաքսաւորներ սեղան նըստած
էին Յիսուսի հետ և անոր աշակերտներուն հետ.
ինչու որ շատերը կային՝ որ իր ետևէն կերթային ։
Գրագիտացողներէն ու Փարիսեցիներէն եր- 16
բոր տեսան՝ Թէ մաքսաւորներուն և մեղաւորնե-
րուն հետ կուտէ, ըսին իր աշակերտներուն.
Ինչո՞ւ է՝ որ մաքսաւորներուն և մեղաւորներուն
հետ կուտէք ու կըխմէք ։ Երբոր լսեց Յիսուս 17
ըսաւ անոնց, Ողջերուն բժիշկ պէտք չէ, հապա՝
հիւանդներուն. և ես արդարները կանչելու չե-
կայ, հապա՝ մեղաւորները ։

Եւ Յովաննէսին աշակերտները և Փարիսեցի- 18
ները ծոմ կըպահէին, եկան ու ըսին իրեն. Ին-
չու Յովաննէսին աշակերտները և Փարիսեցի-
ները ծոմ կըպահեն, ու քու աշակերտներդ ծոմ
չեն պահեր ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Միթէ 19
կարելի է որ հարսնիքին տղաքը՝ քանի որ փեսան
իրենց հետն է, ծոմ պահեն. քանի որ փեսան
իրենց հետ ունին՝ կարելի չէ ծոմ պահել ։ Բայց 20
օրեր պիտի գայ՝ որ առնեն փեսան իրենցմէ վեր-
ցըվի, ու հապա ան օրը ծոմ պիտի պահեն ։
Ա՛ևկը չի ձգեր նոր շի մաշած կապերտի կտոր 21
հին հագուստի վրայ. չէ նէ նորը իր լրումիւնո-
վը հինէն կառնէ, և պատռածը ալ էվելըք գէշ

22 կըլլայ ։ Եւ ոչ մէկը նոր գինին հին տիկերուն
մէջ կ՚ընդնէ · չէ նէ՝ գինին տիկերը կը պատռէ ,
գինին կը թափի , ու տիկերը կ՚ոչընչանան · Հապա՝
նոր գինին նոր տիկերու մէջ կ՚ընդունէ ։
23 Ու եղաւ որ շաբաթի օրը ինքը ցորենի արտերուն միջէն
կանցնէր , և աշակերտները որ կ՚երթային՝ սկը-
24 սեցին ցորենի գլուխ փրցնել և ուտել ։ Ու
փարիսեցիները ըսին իրեն , Նայէ՝ քու աշա-
կերտներդ ի՞նչ կ՚ընեն շաբաթի օրը , որ չի վայ-
25 լեր ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց , Դուք չէք մի
կարդացեր դուք Դաւիթին ըրածը · երբոր պէտք
եղաւ , ու անօթեցաւ ինքը՝ և իրեն հետ եղողնե-
26 րը ։ Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը Աբիաթար
քահանայապետին օրովը , և առաջաւորութեան
հացը կերաւ , ու տըւաւ անոնց ալ՝ որ իր հետն
էին · որ օրինաւոր չէր ուտել , միայն թէ քահա-
27 նաներուն ։ Եւ ըսաւ անոնց , Շաբաթը մարդ-
դուն համար եղաւ , ու չէ թէ մարդը՝ շաբաթին
28 համար ։ Դնանկ է նէ՝ Որդին մարդոյ շաբաթին
ալ տէր է ։

ԳԼ · Գ ·

1 Եւ նորէն ժողովարանը մտաւ · ու հոն մարդ
2 մը կար , որուն ձեռքը չորցած էր ։ Եւ իրեն
կը սպասէին՝ որ շաբաթի օրը անիկա բժշկէ , որ
3 շաբաթապահութիւն ընեն իր վրայ ։ Եւ ինքը՝ ձեռքը
չորցած մարդուն ըսաւ · Ելլէ՝ մէջ տեղը կայնէ ։
4 Ու ըսաւ անոնց · Ինչ կ՚արժէ շաբաթի օրը ,
բարի՞ գործ գործել՝ թէ չարիք ընել , հոգի՞ մը
ապրեցունել՝ թէ կորսընցունել · բայց անոնք
5 լուռ կեցան ։ Եւ Յիսուս անոնց վրայ նայելով
բարկութեամբ լեցուն՝ իրենց սիրտերնուն կու-
րութեանը համար տրտմած , ըսաւ ան մարդ-
ուն · Երկընցուր ձեռքդ · ան ալ երկընցուց ,
6 և իր ձեռքը ողջ ըլլաց ։ Ու փարիսեցիները ել-
լուզակներուն հետ մէկ տեղ շուտ մը դուրս

կան , խորհուրդ կընեին անոր համար՝ թէ ինտո՛ր անիկա կորսընցնեն ։

Ետյց Յիսուս իր աշակերտներովը ծովեզերքը 7
գնաց , և շատ ժողովուրդ անոր ետևէն կերթային
Գալիլեացիներէն , ու Յրէաստանէն և Երուսա- 8
ղէմէն , ու Յորդանանեա՛ւ մէկալ կողմէն , ու ա-
նոնք՝ որ Տիւրոսէն և Սիդոնէն էին , շատ ժողո-
վուրդ երբոր կըլսէին որչափ բան կընէը , կուա-
գային իրեն ։ Եւ ըսաւ իր աշակերտներուն , որ 9
նաւակ մը պատրաստ ըլլայ իրեն համար ժողո-
վուրդին բազմութեանը պատճառովը , որ զինքը
չի նեղեն ։ Ինչու որ շատերը բժշկեց , անանկ որ 10
եկան չորս կողմը ելցվիացան՝ որ իրեն դպչին ,
որոնք որ ցաւ մը ունէին ։ Ու պիղծ դեւերը ևր- 11
բոր զինքը կըտեսնային՝ կիյնային իր առջևը ,
կըկանչ ը՛ըսէին ու կըսէին , թէ Դո՛ւն ես Որ- 12
ուժոյ Որդին ։ և ինքը ասոնիկ կըչեխէր անոնք ,
որ զինքը յայտնի չընեն ։

Եւ մը կելլայ , և իրեն կըկանչէ անոնք որ ին- 13
քը ուզեց ։ ու գացին իրեն ։ Եւ տասներկու հոգի 14
հաստատեց , որ իր հետն ըլլան , ու որ անոնք
խրկէ քարոզելու , և իշխանութիւն ունենալու 15
ցաւերը բժշկելու , և դեւերը հանելու ։ Ու Սիմո- 16
նին անունը Պետրոս դրաւ ։ և Յակոբոսին 17
Յակոբոսին եղբօրը Յոհաննէսին՝
անոնց անունները Բաներգէս դրաւ , որ ըսել
է՝ Որդիք որոտման ։ և Անդրէասը , և Փիլիպպո- 18
սը , և Բարթողոմէոսը և Մատթէոս մաքսաւո-
րը , և Թովմասը , և Ալփէոսեան Յակոբոսը ,
և Թադէոսը , և Սիմոն Կանանացին ։ ու Յուդա 19
Իսկարիովտացին , որ նաև զինքը մատնեց ։

Տուն կուգան , և նորէն ժողովուրդը կուգայ 20
անոնց հետ , անանկ որ՝ նաև հաց ուտելու չտի
ժամանակ չունեցան ։ Եւ երբոր իրենները լսե- 21
ցին՝ եկան որ զինքը բռնեն , ընչու որ կըկարծէին
թէ խելքնուած է ։ Ու Երուսաղէմէն իջնող կար- 22

դացողները կըսէին , Թէ՝ Աստուծոյ ներսի դին Ո՛վ եղեր-
բուղ կայ , և զևերուն իշխանովը ասիկա
23 դևերը կը հանէ : Ուր իրեն կանչելով անոնք ,
առակներով կըխօսէր ՀՆՉպէս կըը-
24 նայ Սատանան Սատանայ հանել : Ուստի Թէ որ
մէկ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժնըվի
25 նէ՝ ան թագաւորութիւնը չի կրնար կենալ : Եւ
Թէ որ տուն մը իրեն դէմ բաժնըվի նէ՝ ան տու-
26 նը չի կրնար կենալ : Ետ որ Սատանան ինքը-
զինքին դէմ ելաւ՝ ու բաժնըված է , անիկա չի
27 կրնար կենալ , հապա վերջը եկած է : Եւ մէկը
չի կրնար ուժեղ մարդու մը բաները՝ անոր տու-
նը մտնալով յափշտակել , Թէ որ առաջ ան ու-
ժեղ մարդը չի կապէ . ու հապա Թէ անոր տունը
28 յափշտակէ : Ո՛չմարիտ կըսեմ ձեզի , որ ամէն
մեղքերը պիտի Թողվի որդոց մարդկան , և հայ-
29 հոյութիւնները՝ որչափ որ հայհոյեն . բայց ան՝
որ Հոգին Սուրբին դէմ կըհայհոյէ , յաւիտեան
Թողութիւն չի պիտի ունենայ . հապա յաւիտե-
նական մեղքերուն պարտական պիտի ըլլայ :
30 Որովհետև կըսէին , Թէ՝ Պիղծ ոգի կայ անոր
ներսը :
31 Ետ իր եղբայրները և մայրը եկան , ու դուրսը
32 կայնելով՝ խրկեցին և կըկանչէին անոր : Եւ
հոն ժողովուրդը իր բոլորտիքը նըստեր էին . ու
ըսին իրեն , Ահա մայրդ և եղբայրներդ
33 դուրսը կայներ են՝ ու քեզ կուզեն : Պատասխան
տուաւ անոնց՝ ու ըսաւ . Ո՞վ է իմ մայրս՝ կամ
34 եղբայրներս : Ետ բոլորտիքը աշակերտներուն
նայեցաւ՝ որ նըստեր էին , ու ըսաւ . Ահա իմ
35 մայրս ու իմ եղբայրներս : Ինչու որ՝ ով որ
Աստուծոյ կամքը կընէ , անիկա է իմ եղբայրըս՝
և քոյրըս՝ և մայրըս :

Գ. Գ։

Ա Ապա նա սկսեց առակներով խօսել նոցա։ Մարդ մի այգի տնկեց, ցանկապատ շինեց նորա շուրջը, հնձան փորեց, աշտարակ շինեց, այգեպանների տուաւ նա, եւ գնաց հեռի երկիր։ Ժամանակի հասանելով՝ ուղարկեց ծառայ մի առ այգեպանսն, որ առնուցու ի նոցանէ ի պտղոց այգւոյն։ Եւ նոքա բռնեցին զնա, ծեծեցին եւ դատարկ արձակեցին։ Եւ դարձեալ ուղարկեց առ նոսա ծառայ մի այլ, եւ զայն քարկոծեցին եւ գլխովն վէրս արարին նմա, եւ անարգեալ արձակեցին։ Եւ դարձեալ ուղարկեց ուրիշ մի, եւ զայն սպանին, եւ բազումս այլս, զոմանս ծեծեցին եւ զոմանս սպանին։ Մնաց նմա մի որդի սիրելի, եւ զայն ուղարկեց առ նոսա յետին, ասելով՝ թէ Ամաչեսցեն յորդւոյ իմմէ։ Եւ այգեպանքն նոքա ասացին ընդ միմեանս՝ թէ Սա է ժառանգ, եկայք սպանցուք զնա, եւ մեր լիցի ժառանգութիւնն։ Եւ առեալ զնա սպանին, եւ արկին զնա արտաքս յայգւոյն։ Ի՞նչ արասցէ տէր այգւոյն, եկեալ կորուսցէ զայգեպանսն, եւ տացէ զայգին այլոց։ Ոչ զայս գրոց ընթերցարք էք, զոր ետուն շինողքն, նոյն եղեւ գլուխ անկեան։ Յտեառնէ եղեւ այս, եւ է հրաշալի առ աչս մեր։ Եւ խնդրէին ունել զնա, եւ երկեան ի ժողովրդենէն, զի գիտացին, թէ առակս զնոսա ասաց։ Եւ թողեալ զնա գնացին։ Եւ առաքեցին առ նա զոմանս ի փարիսեցւոց եւ ի հերովդիանոսէ, զի որսասցեն զնա ի խօսից։ Եւ եկեալ նոքա ասացին նմա՝ Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, եւ ոչ հոգաս զոք, զի ոչ հայիս ի դէմս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանապարհ Աստուծոյ ուսուցանես։ Արդեօք հարկ է հարկս տալ կայսեր, թէ ոչ։ Տացո՞ւք, թէ ոչ տացուք։ Եւ նա գիտացեալ զկեղծաւորութիւն նոցա, ասէ նոցա՝ Զիա՞րդ զիս փորձէք։ Բերէք ինձ դահեկան մի, զի տեսից։ Եւ բերին։ Եւ ասէ նոցա՝ Ո՞ւմ է պատկերս այս եւ գրութիւնս։ Եւ ասացին նմա՝ Կայսեր։ Եւ ասէ նոցա Յիսուս՝ Տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյ Աստուծոյ։ Եւ զարմացեալ էին ի նմանէ։ Եւ եկեալ առ նա Սադուկեցիքն, որ ասեն զի չիք յարութիւն, հարցանէին զնա, եւ ասէին՝ Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ եղբայր ումեք մեռանի, եւ կին թողու, եւ որդի չիցէ, առցէ եղբայրն զկինն նորա, եւ յարուսցէ զսերմն եղբաւր իւրոյ։ Եւ էին եղբարք եւթն, եւ առեալ առն զկին, մեռաւ առանց զաւակի։ Եւ առեալ երկրորդն զկինն, մեռաւ եւ նա առանց զաւակի։ Եւ երրորդն նոյնպէս։ Եւ եւթնեցունքն ոչ թողին զաւակ։ Եւ յետ ամենեցունց մեռաւ եւ կինն։ Յարութեան ժամանակի յորժամ յարիցեն, կնոջ որո՞ւ նոցա լիցի նա։ Զի եւթնեցունքն ունէին զնա կին։ Եւ ասէ նոցա Յիսուս՝ Ո՞չ այդ պատճառաւ մոլորիք, զի ոչ գիտէք զգրոցն եւ զզօրութիւն Աստուծոյ։ Զի յորժամ յարիցեն ի մեռելոց, ոչ կնանան եւ ոչ կնանին, այլ են իբրեւ զհրեշտակս որ յերկինս։ Եւ զմեռելոցն թէ յարիցեն, ոչ ընթերցարք էք ի գրքի Մովսիսի, յայրին, որ խօսեցաւ Աստուած ընդ նմա՝ ասելով, Ես եմ Աստուած Աբրահամու, եւ Աստուած Իսահակայ, եւ Աստուած Յակոբայ։ Ոչ է Աստուած մեռելոց, այլ կենդանեաց։ Դուք ուրեմն մեծապէս մոլորիք։ Եւ մերձեցեալ մի ի դպրացն, որ լսէր նոցա, գիտացեալ զի լաւ պատասխանի ետ նոցա, հարցանէ զնա՝ Ո՞րպիսի է առաջին պատուիրանն ամենայնի։ Եւ ասէ նմա Յիսուս՝ Առաջին պատուիրանն ամենայնի է՝ Լուր Իսրայէլ, Տէր Աստուած մեր Տէր մի է։ Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց, եւ յամենայն զօրութենէ քումմէ։ Սա է առաջին պատուիրանն։ Եւ երկրորդ նման նմին է սա՝ Սիրեսցես զընկերն քո իբրեւ զանձն քո։ Ոչ է այլ պատուիրան մեծ քան զսոսա։ Եւ ասէ նմա դպիրն՝ Ճշմարիտ է, վարդապետ, ասացեր զի մի է Աստուած, եւ ոչ է այլ մեծ քան զնա։ Եւ սիրել զնա յամենայն սրտէ, եւ յամենայն հանճարոյ, եւ յամենայն զօրութենէ, եւ սիրել զընկերն իբրեւ զանձն, քան զամենայն ողջակէզս եւ զպատարագս։ Եւ Յիսուս տեսեալ զի խելամտութեամբ պատասխանի ետ, ասէ նմա՝ Ոչ հեռի ես ի թագաւորութենէ Աստուծոյ։ Եւ ոչ ոք համարձակեցաւ հարցանել զնա։ Եւ պատասխանի ետ Յիսուս եւ ասէր՝ ուսուցանելով ի տաճարի, Զիա՞րդ ասեն դպիրքն, թէ Քրիստոս որդի Դաւթի է։ Եւ ինքն Դաւիթ ասաց ի Հոգւոյն Սրբոյ՝ Ասաց Տէր Տեառն իմում, նստիր ընդ աջմէ իմմէ, մինչեւ դիցեմ զթշնամիս քո սաստ ոտից քոց։ Ինքն Դաւիթ կոչէ զնա Տէր, եւ զիա՞րդ որդի նորա է։ Եւ ամենայն ժողովուրդն լսէին նորա սիրով։ Եւ ասէր նոցա ի ուսուցանելն իւրում՝ Զգուշացարուք ի դպրացն, որ կամին երթալ զգեստիւք երկայնիւք, եւ սիրեն ողջոյնս ի հրապարակս, եւ զաթոռս առաջնակարգս ի ժողովս, եւ զկարգս առաջնակարգս ի հանդէսս։ Որ ուտեն զտունս այրեացն, եւ երկայնապատճառ աղօթս առնուն, նոքա առնուցուն դատաստան յաւելուածոյ։ Եւ նստեալ Յիսուս դէմ առ գանձանակսն, նայէր զիա՞րդ ամբոխն ձգէ դրամ ի գանձանակսն։ Եւ բազումք հարուստք ձգէին բազում։ Եւ եկեալ այրի մի աղքատ, ձգեաց երկու լումայս, որ է դրամ մի։ Եւ կոչեալ զաշակերտսն իւր, ասէ նոցա՝ Ամէն ասեմ ձեզ, զի այրի այս աղքատ ձգեաց քան զամենեսեան, որ ձգեցին ի գանձանակսն։ Զի ամենեքին ի պակասութենէ իւրեանց ձգեցին, եւ նա ի կարօտութենէ իւրմէ ամենայն զոր ունէր ձգեաց, զամենայն կեանս իւր։ Եւ ելանելոյ նորա ի տաճարէ, ասէ նմա մի ի աշակերտացն իւրոց՝ Վարդապետ, տես զի՞նչ քարինք եւ զի՞նչ շինուածք։ Եւ Յիսուս պատասխանի ետ եւ ասէ նմա՝ Տեսանե՞ս զայս մեծամեծ շինուածս։ Ո՛չ թողցի քար ի քարի, որ ոչ քակեսցի։ Եւ նստեալ նորա ի լերինն Ձիթենեաց դէմ առ տաճարն, հարցանէին զնա առանձինն Պետրոս եւ Յակոբոս եւ Յովհաննէս եւ Անդրէաս՝ Ասա մեզ, երբո՞ եղիցին այս, եւ զի՞նչ նշան է յորժամ սկսցին այս ամենայն կատարիլ։ Եւ Յիսուս սկսաւ ասել նոցա՝ Զգուշացարուք, զի մի ոք մոլորեցուսցէ զձեզ։ Զի բազումք եկեսցեն յանուն իմ, ասելով՝ թէ Ես եմ, եւ զբազումս մոլորեցուցանիցեն։ Եւ յորժամ լուիցէք պատերազմունս եւ զբամբասանս պատերազմանց, մի՛ երկնչիք, զի պարտ է այսպէս լինել, եւ ոչ դեռ է վախճան։ Զի յարիցէ ազգ ի վերայ ազգի, եւ թագաւորութիւն ի վերայ թագաւորութեան։ Եւ լինիցին երկրաշարժք ի տեղիս, եւ լինիցին սովք եւ խռովութիւնք։ Սկիզբն ցաւոցն են սոքա։ Դուք զգուշացարուք ինքեանց։ Զի մատնեսցեն զձեզ ի ժողովս, եւ ի ժողովարանս ծեծեսջիք, եւ առաջի իշխանաց եւ թագաւորաց կացուսցեն զձեզ վասն իմ, ի վկայութիւն նոցա։ Եւ ամենայն ազգաց նախ պարտ է քարոզել զաւետարանն։ Եւ յորժամ տարցեն զձեզ մատնել, մի՛ նախ հոգայք զինչ ասիցէք, եւ մի՛ խորհիք, այլ զոր տացի ձեզ ժամուն այնմիկ, զայն խօսեցարուք։ Զի ոչ դուք էք որ խօսիք, այլ Հոգին Սուրբ։ Եւ մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր զորդի, եւ յարիցեն որդիք ի վերայ ծնողաց, եւ սպանցեն զնոսա։ Եւ լինիցիք ատելիք ամենայն մարդկան վասն անուան իմոյ։ Եւ որ համբերեսցէ մինչեւ ի կատարած, նա կեցցէ։ Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն կործանման, որ ասացաւ ի Դանիէլ մարգարէէ, կայցէ ուր ոչ պարտ է, որ ընթեռնոյ՝ իմասցի, եւ որ ի Հրէաստան են՝ փախիցին ի լերինս։ Եւ որ ի տանիքն՝ մի՛ իջցէ ի տունն, եւ մի՛ մտցէ առնուլ ինչ ինչ ի տանէ իւրմէ։ Եւ որ ի դաշտի՝ մի՛ դարձցի ետ առնուլ զհանդերձս իւր։ Վա՛յ յաղուաղուկ եւ ի կաթնասուն ժամանակին։ Աղաչեցէք զի մի՛ լիցի ձմերայն։ Զի եղիցին աւուրքն յայնմիկ նեղութիւն, որպիսի ոչ եղեւ յսկզբանէ արարածոց, զոր արար Աստուած, մինչեւ ցայժմ, եւ ոչ եղիցի։ Եւ եթէ ոչ կրճատեսցէ Տէր զաւուրսն, ոչ կեցցէ ամենայն մարմին։ Այլ վասն ընտրելոցն զոր ընտրեաց, կրճատեաց զաւուրսն։ Եւ յորժամ ասիցեն ձեզ՝ Ահա աստ է Քրիստոս, կամ անդ է, մի՛ հաւատայք։ Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս եւ զարմանս, զի մոլորեցուսցեն, եթէ կարասցեն, զընտրեալսն։ Դուք զգուշացարուք։ Ահա ես նախասացի ձեզ զամենայն։ Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն յայնորիկ, արեգակն խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք երկնից անկցին, եւ զօրութիւնք որ յերկինս շարժեսցին։ Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի մէջ ամպոց, զօրութեամբ եւ փառաւ բազմաւ։ Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակսն իւր, եւ ժողովեսցէ զընտրեալսն իւր ի չորից հողմոց, յերկրէ մինչեւ ի ծագս երկնից։ Եւ ի թզենւոյ առակ ուսարուք։ Յորժամ ոստ նորա մատղաշ լինի, եւ տերեւս հանէ, գիտէք զի մերձ է ամառն։ Նոյնպէս եւ դուք, յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք զի մերձ է ի դրունս։ Ամէն ասեմ ձեզ, զի մի՛ անցցէ ազգս այս, մինչեւ զայս ամենայն եղիցի։ Երկինք եւ երկիր անցցեն, բայց բանք իմ ոչ անցցեն։ Զաւուրն եւ զժամուն ոչ գիտէ ոք, ոչ հրեշտակք որ յերկինս, ոչ Որդի, այլ միայն Հայր։ Զգուշացարուք, արթնացարուք եւ աղօթեցարուք։ Զի ոչ գիտէք զի՞նչ ժամ է։ Որպէս մարդ մի որ գնայ յերկիր հեռի, եւ թողու զտունն իւր, եւ տայ զիշխանութիւն ծառայից իւրոց, եւ իւրաքանչիւր զգործ իւր, եւ դրան պահապանին պատուիրէ, զի արթնասցի։ Արթնացարուք ուրեմն, զի ոչ գիտէք զի՞նչ ժամ գայ տէր տանն, կամ երեկոյին, կամ կիսոյ գիշերի, կամ հաւուն կանչելոյ, կամ առաւօտուն։ Մի՛ երբեմն եկեալ գտցէ զձեզ քնացեալս։ Զոր ձեզ ասեմ, ամենեցուն ասեմ, արթնացարուք։

Եւ էր զաւուրսն երկուս զատկին եւ զաղանդին անխմորոցն։ Եւ խնդրէին քահանայապետքն եւ դպիրքն զի՞նչ միջոցաւ զնա ձեռնհաս արարցեն եւ սպանցեն։ Եւ ասէին՝ Ոչ յաւուրս տօնի, զի մի՛ իցէ խռովութիւն ի ժողովրդեանն։ Եւ նա էր Բեթանիա ի տան Սիմոնի բորոտի։ Եւ նստելոյ նորա ընդ սեղանաւ, եկն կին մի ունելով սրուակ մի մեռոնի նարդոսի հարազատի, պատուական։ Եւ կոտրեալ զսրուակն, հեղոյր ի գլուխ նորա։ Եւ էին ոմանք որ ընդ միմեանս ասէին ի բարկութեան՝ Ընդէ՞ր եղեւ կորուստ մեռոնիս այսորիկ։ Զի կարէր մեռոնիս այս ծախել ի գինոյ երեք հարիւր դահեկանաց, եւ տալ աղքատաց։ Եւ նեղէին զնա։ Եւ Յիսուս ասէ՝ Թողէք զնա, զի՞ նեղէք զնա։ Գործ բարի գործեաց ի վերայ իմ։ Զի զաղքատսն միշտ ունիք ընդ ձեզ, եւ յորժամ կամիցիք՝ կարող էք նոցա բարի առնել, եւ զիս ոչ միշտ ունիք։ Զոր կարաց արար, կանխեաց զօծանել զմարմին իմ ի թաղումն։ Ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ քարոզեսցի աւետարանս այս յամենայն աշխարհի, ասացեալ եւ զոր արար կինս այս, ի յիշատակ նորա։ Եւ Յուդա Սկարիովտացի, որ էր ի թուոյ տասնեցունց, գնաց առ քահանայապետսն, զի մատնեսցէ զնա նոցա։ Եւ նոքա լուեալ ուրախացան, եւ խոստացան տալ նմա արծաթ։ Եւ նա խնդրէր զի՞նչ միջոցաւ զնա մատնեսցէ։ Եւ առաջի աւուրն անխմորոցն, յորում զատիկն մատուցանէին, ասեն աշակերտքն նորա՝ Ուր կամիս երթամք, եւ պատրաստեսցուք զքեզ ուտել զզատիկն։ Եւ առաքեաց երկուս ի աշակերտացն իւրոց, եւ ասէ նոցա՝ Երթայք ի քաղաքն, եւ ընդ առաջ ձեր ելցէ ձեզ մարդ մի ջրով կոմով լցեալ, զհետ նորա գնասջիք, եւ ուր մտցէ ասասջիք տանուտերին, զի ասէ Վարդապետն, ուր է տեղի հանգստեան իմոյ, զի զզատիկն ուտիցեմ անդ ընդ աշակերտս իմ։ Եւ նա ցուցցէ ձեզ տուն մեծ յարկեալ, եւ պատրաստ, անդ պատրաստեցէք մեզ։ Եւ գնացին աշակերտքն նորա, եւ եկին ի քաղաքն, եւ գտին որպէս ասաց նոցա, եւ պատրաստեցին զզատիկն։ Եւ երեկոյին եկն ընդ տասնեցունսն։ Եւ նստելոյ նոցա ընդ սեղանաւ, եւ ուտելոյ նոցա, ասէ Յիսուս՝ Ամէն ասեմ ձեզ, զի մի ոք ի ձէնջ մատնեսցէ զիս, որ ուտէ ընդ իս։ Եւ նոքա սկսան տրտմել, եւ ասել նմա մի առ մի՝ Միթէ ես եմ։ Եւ նա ասէ նոցա՝ Մի ոմն ի տասնեցունց, որ ինձ հետ ի կաթսայ մատուցանէ։ Զի Որդի մարդոյ երթայ, որպէս գրեալ է վասն նորա, բայց վա՛յ այնմ մարդոյ, որով Որդի մարդոյ մատնի։ Լաւ էր նմա եթէ ոչ ծնեալ լինէր այն մարդ։ Եւ ուտելոյ նոցա, առեալ Յիսուս զհաց, եւ օրհնեալ, բեկ արար, եւ ետ նոցա, եւ ասէ՝ Առէք, կերէք, զի այս է մարմին իմ։ Եւ առեալ զբաժակն, եւ շնորհակալ եղեալ, ետ նոցա, եւ արբին ամենեքին ի նմանէ։ Եւ ասէ նոցա՝ Այս է արիւն իմ նորոյ կտակարանի, որ վասն բազմաց հեղու։ Ամէն ասեմ ձեզ, զի ոչ եւս արբից յայսմ ծնունդ որթոյ, մինչեւ յաւուրն յայնմիկ, յորում արբից զայն նոր յարքայութեան Աստուծոյ։ Եւ օրհնութիւն ասացեալ, ելին ի լերինն Ձիթենեաց։ Եւ ասէ նոցա Յիսուս՝ Ամենեքեան գայթագղիցիք ի գիշերի այսմիկ, զի գրեալ է, թէ Զհովիւն եւ զխոյսն ցրուեսցեն։ Եւ յետ յարութեանս իմոյ նախագնասցեմ ձեզ ի Գալիլեա։ Եւ ասէ Պետրոս՝ Եթէ ամենեքեան գայթագղիցին, ես ոչ գայթագղիմ։ Եւ ասէ նմա Յիսուս՝ Ամէն ասեմ քեզ, զի դու այսօր յայսմ գիշերի, մինչեւ աքաղաղ երկիցի երիցս, ուրասցես զիս։ Եւ նա առաւել խօսէր՝ Եթէ ինձ հարկ իցէ ընդ քեզ մեռանել, ոչ ուրասցից զքեզ։ Նոյնպէս եւ ամենեքեան ասէին։ Եւ եկին ի տեղի որում անուն Գեթսեմանի, եւ ասէ աշակերտացն իւրոց՝ Նստարուք աստ, մինչեւ աղօթեցից։ Եւ առեալ զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս ընդ ինքեան, սկսաւ զարհուրել եւ տագնապել։ Եւ ասէ նոցա՝ Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ, նստարուք աստ եւ արթնացարուք։ Եւ անցեալ մի քան զնոսա, անկաւ ի վերայ երկրի, եւ աղաչէր զի եթէ կարասցէ, անցցէ ի նմանէ ժամն։ Եւ ասէր՝ Աբբա Հայր, ամենայն ինչ կարող է քեզ, զանցո՛ զբաժակս զայս ի նմանէ, բայց ոչ զիա՛րդ ես կամիմ, այլ զիա՛րդ դու։ Եւ եկեալ գտանէ զնոսա քնացեալս, եւ ասէ Պետրոսի՝ Սիմոն, քնանա՞ս, ոչ կարացեր մի ժամ արթնանալ։ Արթնացարուք եւ աղօթեցարուք, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն։ Հոգին պատրաստ է, այլ մարմին տկար։ Եւ դարձեալ գնացեալ աղօթէր, ասելով զբանն զայն։ Եւ դարձեալ եկեալ գտանէ զնոսա քնացեալս, զի աչք նոցա ծանրացեալ էին, եւ ոչ գիտէին զի՞նչ պատասխանի տացեն նմա։ Եւ եկեալ երրորդ անգամ, ասէ նոցա՝ Քնացարուք ուրեմն եւ հանգարուք։ Բաւական է, եկն ժամն, ահա մատնի Որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց։ Արթնացարուք, երթիցուք, ահա մերձեցաւ մատնիչ իմ։ Եւ դեռ նորա խօսելոյ, ահա Յուդա մի ի տասնեցունց եկն, եւ ընդ նմա բազում ամբոխ սրով եւ գաւազանաւ, յանէն քահանայապետացն եւ դպրացն եւ ծերոցն։ Եւ մատնիչն տուեալ նոցա նշան, ասելով՝ Զոր համբուրեցից զնա, նա է, զնա բռնեցէք եւ տարուք զգուշութեամբ։ Եւ եկեալ նա մերձեցաւ առ նա, եւ ասէ՝ Ռաբբի, Ռաբբի, եւ համբուրեաց զնա։ Եւ նոքա ձգեցին ի նա զձեռս իւրեանց, եւ բռնեցին զնա։ Եւ մի ոմն ի կայնելոցն, հանեալ զսուր, հարեալ զծառայ քահանայապետին, եւ կտրեաց զականջ նորա։ Եւ Յիսուս պատասխանի ետ եւ ասէ նոցա՝ Իբրեւ ընդ աւազակ մի ելէք սրով եւ գաւազանաւ ինձ բռնել։ Զամենայն աւուր ընդ ձեզ էի ուսուցանելով ի տաճարի, եւ ոչ բռնեցէք զիս։ Այլ զի լցցին գրքն։ Եւ թողեալ զնա ամենեքեան փախեան։ Եւ մի ոմն պատանի հետեւէր նմա, զգեցեալ սինդոնաւ մերկ մարմնոյ, եւ բռնեցին զնա պատանիքն։ Եւ նա թողեալ զսինդոնն մերկ փախեաւ ի նոցանէ։ Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն, եւ ժողովեցան ամենայն քահանայապետքն եւ ծերքն եւ դպիրքն։ Եւ Պետրոս հետեւէր նմա հեռի մինչեւ ի ներքինս քահանայապետին, եւ նստէր ընդ սպասաւորսն եւ տաքանայր առ լոյսն։ Եւ քահանայապետքն եւ ամենայն ատեանն խնդրէին վկայութիւն ընդդէմ Յիսուսի, զի սպանցեն զնա, եւ ոչ գտանէին։ Զի բազումք սուտ վկայէին ընդդէմ նորա, եւ ոչ էր հաւասար վկայութիւն նոցա։ Եւ ոմանք յարուցեալ սուտ վկայէին ընդդէմ նորա, ասելով՝ Մեք լուաք զնմանէ ասելոյ, թէ Ես քակեցից զտաճարս զայս շինեալ ձեռամբ, եւ երիս աւուրս ի մէջ այլ շինեցից ոչ ձեռամբ շինեալ։ Եւ ոչ այսպէս էր վկայութիւն նոցա։ Եւ յարուցեալ քահանայապետն ի մէջ, հարցանէ զՅիսուս՝ եւ ասէ՝ Ոչինչ պատասխանի տաս զոր այսոքիկ վկայեն ընդդէմ քո։ Եւ նա լռէր եւ ոչ պատասխանի ետ։ Եւ դարձեալ հարցանէ զնա քահանայապետն՝ եւ ասէ նմա՝ Դո՞ւ ես Քրիստոս Որդի Աստուծոյ օրհնելոյ։ Եւ Յիսուս ասէ՝ Ես եմ, եւ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեան, եւ գալ ընդ ամպս երկնից։ Եւ քահանայապետն պատառեալ զհանդերձս իւր, ասէ՝ Զի՞ պիտոյ է մեզ վկայից։ Լուարուք հայհոյութեան նորա։ Զիա՞րդ ձեզ երեւի։ Եւ նոքա ամենեքեան դատապարտեցին զնա մահու պարտական։ Եւ սկսան ոմանք թքել ի նա, եւ երեսս նորա ծածկել, եւ բռունցս հարկանել նմա, եւ ասել նմա՝ Մարգարէացո՛ մեզ, Քրիստոս, ո՞վ է որ զքեզ հարկանէ։ Եւ սպասաւորքն ապտակաւք զնա հարկանէին։ Եւ Պետրոս ի դուրս նստէր ի սրահին։ Եւ եկեալ մի ի սպասաւորաց քահանայապետին, որ էր աղախին, տեսեալ զՊետրոս տաքանալ, եւ նայեալ նմա, ասէ՝ Եւ դո՛ւ ընդ Յիսուսի Նազովրեցւոյն էիր։ Եւ նա ուրացաւ առաջի ամենեցուն, ասելով՝ Ոչ գիտեմ եւ ոչ իմանամ զի՞նչ ասես։ Եւ ելանէր ի դուրս ի սրահն, եւ հաւն կանչեաց։ Եւ աղախինն տեսեալ զնա, սկսաւ դարձեալ ասել առ ամենեսեան որ կային անդ՝ Այս է յայնոցանէ։ Եւ նա դարձեալ ուրացաւ։ Եւ մերձ կային անդ որ էին առաջի, եւ ասէին Պետրոսի՝ Ճշմարիտ յայնոցանէ ես, զի եւ գալիլացի ես, եւ խօսք քո նոյնպէս։ Եւ նա սկսաւ անիծանել եւ երդնուլ՝ Զի ոչ գիտեմ զմարդն զայն զոր ասէք։ Եւ երկրորդ անգամ հաւն կանչեաց։ Եւ յիշեաց Պետրոս զբանն զոր ասաց նմա Յիսուս՝ Մինչեւ աքաղաղ երկիցի երիցս, ուրասցես զիս։ Եւ լալով սկսաւ։

Եւ առաւօտուն ժողով արարեալ քահանայապետքն ընդ ծերսն եւ ընդ դպիրսն եւ ընդ ամենայն ատեանն, կապեալ զՅիսուս, տարան եւ մատնեցին Պիղատոսի։ Եւ Պիղատոս հարցանէ զնա՝ Դո՞ւ ես թագաւոր Հրէից։ Եւ նա պատասխանի ետ եւ ասէ նմա՝ Դու ասես։ Եւ մեղադրէին զնա քահանայապետքն բազում բանիւք։ Եւ Պիղատոս դարձեալ հարցանէ զնա՝ եւ ասէ՝ Ոչինչ պատասխանի տաս, տես զի՞նչ բազում բանս վկայեն ընդդէմ քո։ Եւ Յիսուս ոչ եւս պատասխանի ետ, զի զարմացեալ էր Պիղատոս։ Եւ ի տօնի զատկին արձակէր նոցա զմի կապեալ, զոր խնդրէին։ Եւ էր կապեալ մի որում անուն Բարաբբաս, ընդ ապստամբսն կապեալ, որ ի խռովութեան մարդ սպան։ Եւ ելեալ ամբոխն սկսաւ խնդրել զի՞նչ որպէս միշտ առնէր նոցա։ Եւ Պիղատոս պատասխանի ետ նոցա եւ ասէ՝ Կամիք արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից։ Զի գիտէր զի նախանձու համար մատնեցին զնա քահանայապետքն։ Եւ քահանայապետքն գրգռեցին զամբոխն, զի զԲարաբբաս նոցա արձակեսցէ։ Եւ Պիղատոս դարձեալ պատասխանի ետ եւ ասէ նոցա՝ Զի՞նչ ուրեմն առնեմ զթագաւորն Հրէից։ Եւ նոքա դարձեալ գոչեցին՝ Խաչեա՛ զնա։ Եւ Պիղատոս ասէ նոցա՝ Զի՞նչ չար արար։ Եւ նոքա առաւել գոչեցին՝ Խաչեա՛ զնա։ Եւ Պիղատոս կամելով զամբոխն հաճեցուցանել, արձակեաց նոցա զԲարաբբաս, եւ մատնեաց զՅիսուս հարկանել, զի խաչեսցէ։ Եւ զինուորքն տարան զնա ի դատարանն, որ է պրետորիոն, եւ ժողովեցին զամենայն զինուորսն։ Եւ զգեցուցին զնա ծիրանի, եւ հիւսեալ պսակ փշոյ, եդին ի գլուխ նորա։ Եւ սկսան ողջոյնս տալ նմա՝ Ցնծա՛, թագաւոր Հրէից։ Եւ եդին ի գլուխ նորա զեղէգն, եւ ապտակէին նմա, եւ ծնրադրեալ երկրպագանէին նմա։ Եւ յորժամ ծաղր արարին նմա, հանին ի նմանէ զծիրանին, եւ զգեցուցին զհանդերձս նորա, եւ հանին զնա խաչել։ Եւ ստիպեցին անցաւորի մի որ գայր ի գեղջէ, Սիմոնի Կիւրենացւոյ, հօր Աղեքսանդրի եւ Ռուփոսի, զի տարցէ զխաչ նորա։ Եւ տարան զնա ի տեղի որում անուն Գողգոթա, որ է մեկնեալ Գանգատ։ Եւ տային նմա գինի խառնեալ ընդ մռութ, եւ ոչ ընկալաւ։ Եւ խաչեցին զնա, եւ բաժանեցին զհանդերձս նորա, արկանելով վիճակ ի վերայ նոցա, թէ ո՞ր ինչ առցէ։ Եւ էր ժամ երրորդ, եւ խաչեցին զնա։ Եւ էր գրութիւն պատճառին նորա գրեալ՝ Թագաւոր Հրէից։ Եւ ընդ նմա խաչեցին երկու աւազակս, մի ընդ աջմէ նորա եւ մի ընդ ձախմէ։ Եւ լցաւ գրքն որ ասէ՝ Ընդ անօրինացն համարեցաւ։ Եւ անցեալքն հայհոյէին զնա, շարժելով զգլուխս իւրեանց, եւ ասելով՝ Վա՛հ, որ կործանես զտաճարն եւ երիս աւուրս շինես, փրկեա՛ զանձն քո եւ իջի՛ր ի խաչէդ։ Նոյնպէս եւ քահանայապետքն ծաղր առնէին նմա ընդ միմեանս եւ ընդ դպիրսն, եւ ասէին՝ Զայլս կեցոյց, զանձն իւր ոչ կարէ կեցուցանել։ Քրիստոս թագաւոր Իսրայէլի իջցէ հիմա ի խաչէն, զի տեսցուք եւ հաւատասցուք։ Եւ որ ընդ նմա խաչեցան, նոքա եւս նախատէին զնա։ Եւ ժամ վեցերորդ եղեւ, եւ խաւար եղեւ ամենայն երկրի մինչեւ ժամ իններորդ։ Եւ ի ժամ իններորդ գոչեաց Յիսուս ձայնիւ մեծաւ՝ ասելով՝ Էլի, Էլի, լամա սաբաքթանի, որ է մեկնեալ՝ Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Եւ ոմանք յանցաւորացն որ կային անդ, լուեալ ասէին՝ Ահա Եղիա կոչէ զնա։ Եւ մի ոմն վազեալ, լցոյց սպունգ մի քացախով, եւ դրեալ ի ցախի, տայր նմա ըմպել, ասելով՝ Թողէ՛ք, տեսցուք եթէ գայ Եղիա հանել զնա։ Եւ Յիսուս արձակեալ ձայն մեծ, ետ զհոգին։ Եւ վարագոյրն տաճարին պատառեցաւ յերկուս ի վերուստ մինչեւ ի վար։ Եւ տեսեալ հարիւրապետն որ կայր առաջի նորա, զի այսպէս գոչեալ ետ զհոգին, ասէ՝ Ճշմարիտ այս մարդ Որդի Աստուծոյ էր։ Եւ էին կանայք հեռի ի նայելով, որոց մեծ մասն էին Մարիամ Մագդաղենացի, եւ Մարիամ մայր Յակոբայ մանկանն եւ Յովսեայ, եւ Սողոմէ, որ եւ երբ էր ի Գալիլեա, հետեւէին նմա եւ պաշտէին զնա, եւ բազումք այլ կանայք որ ընդ նմա ելին յԵրուսաղէմ։ Եւ յորժամ երեկոյ եղեւ, զի էր պատրաստութիւն, որ է նախաշաբաթ, եկն Յովսէփ մի ի պատուականացն, որ էր խորհրդական, որ եւ ինքն ակնկալէր զարքայութիւն Աստուծոյ, եւ համարձակեցաւ մտանել առ Պիղատոս, եւ խնդրել զմարմին Յիսուսի։ Եւ Պիղատոս զարմացաւ եթէ այսպէս շուտ մեռաւ, եւ կոչեալ զհարիւրապետն, հարցանէ զնա եթէ ի՞նչ ժամանակաւ մեռաւ։ Եւ գիտացեալ ի հարիւրապետէն, շնորհեաց զմարմինն Յովսեփայ։ Եւ Յովսէփ գնեալ սինդոն, եւ առեալ զնա, եւ պատեալ զսինդոնն, եդ զնա ի յարկեալ տեղի, որ էր հանած ի վէմ, եւ արկ վէմ մի ի դրունս գերեզմանին։ Եւ Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ մայր Յովսեայ տեսանէին զտեղի ուր եդին զնա։ Եւ անցեալ շաբաթուն, Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակոբայ եւ Սողոմէ գնեցին խունկս, զի եկեալ օծցեն զնա։ Եւ կանուխ կիրակի գալով, եկին ի գերեզմանն, ի ծագել արեգական։ Եւ ասէին ընդ միմեանս՝ Ո՞վ դարձուսցէ մեզ զվէմն ի դրանց գերեզմանին։ Եւ նայեալ տեսին զի դարձուցեալ է զվէմն, զի մեծ էր յոյժ։ Եւ մտեալ ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի նստեալ ընդ աջմէ կողմանէ, զգեցեալ սպիտակ հանդերձս, եւ զարհուրեցան։ Եւ նա ասէ նոցա՝ Մի՛ զարհուրիք, Յիսուս զՆազովրեցին խնդրէք զխաչեալն, յարեաւ, չիք աստ, ահա տեղի ուր եդին զնա։ Այլ երթայք ասացէք աշակերտացն նորա եւ Պետրոսի, զի նախագնասցէ ձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա, որպէս ասաց ձեզ։ Եւ նոքա ելեալ փախեան ի գերեզմանէն, զի զարհուրեալ էին եւ զարմացեալ։ Եւ ոչ ումեք ասացին զի երկնչէին։ Եւ Յիսուս յարեաւ կանուխ կիրակի, եւ երեւեցաւ նախ Մարիամ Մագդաղենացի, յորմէ հանեալ էր եւթն դեւս։ Եւ նա գնացեալ պատմեաց նոցա որ ընդ նմա էին, որ սգային եւ լային։ Եւ նոքա լուեալ զի կենդանի է եւ երեւեցաւ նմա, ոչ հաւատացին։ Եւ յետ այսորիկ երկոցունց ի նոցանէ գնացելոց ի գեղջ, երեւեցաւ ի կերպարանս այլում։ Եւ նոքա գնացեալ պատմեցին մնացելոցն, եւ ոչ հաւատացին։ Եւ յետ այսորիկ երեւեցաւ ինքն տասնեցունց նստելոց, եւ նախատեաց զանհաւատութիւն նոցա եւ զկարծրութիւն սրտից նոցա, զի որ տեսեալ էին զնա յարուցեալ, ոչ հաւատացին։ Եւ ասէ նոցա՝ Երթայք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց։ Որ հաւատասցէ եւ մկրտեսցի, կեցցէ։ Եւ որ ոչ հաւատասցէ, դատապարտեսցի։ Եւ զհաւատացեալսն զայսոսիկ նշանք հետեւեսցին։ Յանուն իմ դեւս հանիցեն, եւ լեզուաւք նորաւք խօսեսցին,

իններըը անոնք են՝ ուր խօսքը կըցանվի · ու երբոր անիկա կըլսեն , Սատանան կուգայ , և անոնց
16 *սիրտին մէջի ցանված խօսքը կըհանէ : Եւ ապառաժի վրայ ցանվածներըը անոնք են , որ երբոր*
17 *կըլսեն խօսքը՝ շուտ մը խնդալով կընդունին · և իրենց մէջը արմատ չունենալնուն համար՝ միայն քիչ մը ատեն կըդիմանան · ետքը երբոր նեղութիւն կամ հալածմունք մը կուգայ խօսքին պատ-*
18 *ճառովը , շուտ մը կըգայթակղին : Ու փուշերուն մէջ ցանվածներըը անոնք են՝ որ երբ խօսքը*
19 *կըլսեն , և աշխարհիս զբաղմունքները ու հարըստութեան խաբեպայթիւնները մէջ կըմտնան՝*
20 *ու խօսքը կըխըղդեն , և կըլայ անպտուղ : Ու աղէկ հողի մէջ ցանվածներըը անոնք են , որ խօսքը կըլսեն և կընդունին , ու պտուղ կուտան · մէկին տասը երսուն , և մէկին տասը վաթսուն , և*
21 *մէկին տասը հարիւր :*
Եւ ըսաւ անոնց · Միթէ ճրագը գրուանին կամ մահիճին նեըքևը դրվելու համար կուգայ ·
22 *չէ՞ որ աշտանակին վրայ դրվելու համար : Ինչու որ՝ ծածուկ բան մը չի կայ , որ չի պիտի յայտնըվի · և գաղտուկ բան մը չէ եղած՝ որ չի պիտի*
23 *երևան ելլայ : Ականջ ունի որ մէկը լսելու ականջ ունի , թող լսէ :*
24 Եւ ըսաւ անոնց · Նայեցէք ինչ որ կըլսէք , և
ձեզի որ կըլսէք՝ չափով պիտի էվրնայ ·
25 *ինչ չափով որ դուք կըչափէք՝ նոյն չափովը պի-*
տի չափվի ձեզի : Ուր որ ունի՝ անոր պիտի տըրվի · և ան որ չունի՝ ունեցածն ալ իրմէ պիտի առնըվի :
26 Եւ կըսէր · Աստուծոյ թագաւորութիւնը ասանկ է · որպէս թէ մէկ մարդ մը հողին մէջը
27 *սերմ ձգէ , ու քնանայ և արթընանայ գիշեր ու*
ցորեկ , և սերմերը բուսնին ու մեծնան · և ինքը
28 *չի գիտնայ , որ հողը ինքիրմէն պտուղ կուտայ · առաջ՝ խոտը , ու ետքը հասկը , և անկէ ետև լե-*

ցուն ցորենը հասկին մէջ ։ Բայց երբոր պտուղ 29
տայ՝ շուտ մը մանգաղ կ՚ելլէ՝ ինչու որ քա-
ղելուն ատենը հասած է ։

Եւ կ՚ըսէր . Աստուծոյ թագաւորութիւնը 30
ինչ բանի նմանցունենք , կամ ինչ առակով
անիկա ցուցունենք ։ Ինչպէս մանանեխին հատը 31
որ հողին մէջը ցանված ատենը՝ հողի մէջ եղած
սերմերէն ամէնէն պզտիկ է . և երբոր ցանվի՝ կը- 32
բուանի ու ամէն խոտեղէններէն ալ մեծ կ՚ելլայ ,
և մեծ մեծ ճիւղեր կ՚ձգէ , անանկ որ երկինքի
թռչուններուն հովիք կ՚ելլայ անոր շուքին տակը
բնակելու ։

Եւ անանկ առակներով կ՚խօսէր անոնց հետ 33
խօսքը , որ կրնային իմանալ . ու առանց առակի 34
բան մը չէր խօսէր անոնց հետ . բայց առանձին իր
աշակերտներուն կը մեկնէր ամէնը ։

Եւ նոյն օրը երբոր իրիկուն կ՚ելլար՝ ըսաւ 35
անոնց . Եկէք ծովէն մեկալ կողմը անցնինք ։ Ժո- 36
ղովուրդը արձակեցին , ու ինչքը առին ան նաւը-
վը , և ուրիշ նաւերն ալ՝ որ անոր հետն էին ։
Եւ մեծ աղէկոծութիւն մը եղաւ հովի , ու ալիք- 37
ները նաւին մէջը կ՚ելլեցունէր , անանկ որ գրեթէ
լեցուն էր ։ Ու ինքը նաւին խելքին վրայ բարձի 38
վրայ կ՚քնանար . արթընցուցին զինքը՝ և կ՚ըսէին ,
Ո՛վ վարդապետ՝ քուկին հոգը չէ՞ որ մենք ահա կը-
կորընչինքկոր ։ Եւ արթընցաւ սաստեց հովին , 39
ու ծովին ըսաւ . Կաղբէ՝ լռւռ կեցիր . ու հովը
դադրեցաւ , և մեծ խաղաղութիւն եղաւ ։ Ու 40
ըսաւ անոնց . Ինչու ատանկ վախկոտ էք , տակա-
ւին հաւատք չունիք . Ու խիստ վախցան , և կ՚ըսէ-
ին իրարու . Արդեօք ո՞վ է ասիկա , որ հովը և
ծովը ասոր կ՚հնազանդին ։

ԿԱ . Ե ։

Եւ եկաւ ծովին մեկալ կողմը Գերգեսացւոց 1
աշխարհը ։ Եւ երբոր ինքը նաւէն ելաւ՝ գե- 2

բնակութեանցն մարդ մը պատահեցաւ իրեն , որ
3 պիղծ դեւ ունէր · որուն բնակած տեղն ալ գե-
բեզմանոցներուն մէջն էր · ու շղթայով ալ մէկը
4 չէր կրնար անոր կապել · որովհետեւ շատ ան-
գամ ոտնակապերով և շղթայներով կապած
էին , ու շղթայները խզտրտեցան իրմէն , և ոտ-
նակապերը կոտրտեցան , ու մէկը չէր կրնար
5 անոր յաղթել · ինչու որ միշտ ու ցորեկ ամէն
ատեն գերեզմանոցներուն մէջ՝ և լեռները կրկանչ-
մըռտէր , ու ինքզինքը քարերով կրծեծէր ։
6 Երբոր հեռուէնց Յիսուս տեսաւ՝ վազեց և եր-
7 կիրպագուեցաւ ըրաւ անոր · մեծ ձայնով մը
կանչեց՝ ու ըսաւ , Ի՞ւն իմ հետս ինչ բան
ունիս Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ · քեզ
Աստուծով կերդվեցնեմ՝ որ ինծի տանջես ։
8 (որովհետեւ կըսէր անոր , Պիղծ դեւ ելլիր ատ
9 մարդէն) Եւ հարցուց անոր թէ՝ Անունդ ինչ
է · ու ըսաւ անոր , Իմ անունս Լեգեոն է , ինչ-
10 ու որ մենք շատերը ենք ։ Ու շատ կաղաչէին
11 իրեն , որ իրենք աշխարհէն դուրս չի խրկէ ։ Եւ
հոն լեռանը մօտը խոզի մեծ երամակ մը կար՝ որ
12 կարածէին ։ Ասոր դեւերը աղաչեցին իրեն՝ ու
ըսին , Ղրկենք խոզերուն խրկէ , որ անոնց մէջը
13 մտնանք ։ Եւ հրաման ըրաւ անոնց · ու երբոր
պիղծ դեւերը ելան՝ խոզերուն մէջը մտան , և ե-
րամակը բարձր տեղէն ծովը վազեցին , (երկու
հազարի չափ կային) ու ծովին մէջը խըղդըմե-
14 ցան ։ Եւ խոզարածողները փախան , ու պատմեցին
քաղաքը և գեղերը · և անոնք ելան տեսնելու՝ թէ
15 ինչ բան է որ եղաւ ։ Եկան Յիսուսին , ու տեսան
դիւահարը , որ Լեգեոն ունէր՝ հագած և խել-
16 քը վրան եկած նստեր էր , ու վախցան ։ Եւ
անոնք որ տեսեր էին , պատմեցին անոնց՝ թէ ինչ
եղաւ դիւահարին , և ինչ նաեւ խոզերուն վրայ ։
17 Ու սկսեցին աղաչել իրեն , որ իրենց երկիրէն
18 երթայ ։ Եւ երբոր անիկա նաւը մտաւ , դիւա-

Հարը կաղաչէր իրեն՝ որ իր հետը ըլլայ · և Յի- 19
սուս թող չի տըւաւ անոր · Հապա ըսաւ իրեն ,
Գնա քու տունդ քու ընտանիքներուդ՝ ու պատմէ
անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ , և ողորմեցաւ
քեզի : Ու գնաց , և սկըսաց Վհկապօլիսին մէջը 20
քարոզել՝ ինչ որ Յիսուս ըրաւ , և ամէնն
ալ կըզարմանային ։

Եւ Յիսուս երբոր նորէն Հաւէն մէկալ կողմը 21
անցաւ , շատ ժողովուրդ ժող մըմնցան իր քովը ·
և ինքը ծովեզերքն էր : Եւ մէկմալ ժողովրդա- 22
պետներուն մէկը կուգար , որուն անունը Յայ-
րոս էր · երբոր տեսաւ անիկա՝ անոր ոտքը ինկաւ ·
խիստ կաղաչէր անոր՝ ու կըսէր , Թէ՝ իր աղ չիկը 23
մեռնելու մօտ է · որ գայ անոր վրայ ձեռք դնէ ,
որպէս զի ողջընայ և ապրի : Ու գնաց անոր 24
հետ , և շատ ժողովուրդ իր ետևէն կըթլային՝
ու կընեղէին զինքը ։

Եւ կնիկ մը՝ որ տասներկու տարի արիւնի տե- 25
ռատեսութեան մէջ էր · ու խիստ վըշտացած էր 26
շատ բըժիշկներէն , և իր բոլոր ունեցածը վատ-
ներ էր , և օգուտ մը չէր գտեր · հապա աւ առա-
ւել ցաւը գէշ էր եղեր : Երբոր Յիսուսին վրայ- 27
ով լսեց , ետևի կողմէն եկաւ բազմութեան մէջը՝
ու անոր լաթերուն դըպաւ · ինչու որ՝ միտքին 28
մէջ խորհեցաւ Թէ , Ա՛յն անոր լաթերուն որ
դպչիմ՝ պիտի ազատիմ : Եւ չուտ մը անոր 29
արիւնին աղբիւրը ցամքեցաւ · ու իր մարմինին
մէջ զգաց Թէ տանջանքէն բժշկեցաւ : Եւ Յի- 30
սուս չուտ մը գիտցաւ իր անձին մէջ ան զօրու-
թիւնը՝ որ իրմէն ելաւ · դարձաւ բազմութեանը՝
ու ըսաւ , Ո՞վ իմ լաթերուս դըպաւ · և աշա- 31
կերտները ըսին իրեն , Կըտեսնաս որ բազմու-
թիւնը քեզ կընեղէկոր , և կըսես Թէ Ո՞վ իմ
լաթերուս դըպաւ : Եւ չորս կողմը կընայէր որ 32
տեսնայ՝ Թէ ով ան ըրաւ : Ու կնիկը վախցաւ՝ և 33
դողաց գաղտուկ ըրած բանին համար · ինչու որ

գիտէր թէ իրեն ինչ եղաւ. նկաւ՝ անոր առջևը
ինկաւ, և բոլոր բաները զուրցից չիտկէ չիտակ։
34 Եւ Յիսուս բսաւ անոր, Ղազ ջիկ՝ քու հաւատդ
քեզ բժշկից, գնա խաղաղութեամբ, ու բժշկ-
կըմած եղիր քու տանջանքէդ։
35 Երբոր տակաւին ան բանը կըխօսէր՝ ժողովր-
դապետին տունէն ոմանք եկան և բսին թէ, Ղա-
զիկդ մեռաւ, ալ ինչո՞ւ վարդապետը կաչխատ-
36 ցունես։ Բայց Յիսուս երբոր լսից բսած խօս-
քը, ժողովրդապետին բսաւ, Մի վախնար՝ միայն
37 թէ հաւատա։ Եւ մէկը թող չի տըւաւ իր հե-
տը երթալ, բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը
38 և Յոհաննէսը՝ Յակոբոսին եղբայրը։ Ժողովր-
դապետին տունը եկաւ, և տեսաւ շատ բաղում-
թիւն, ու լալիններ՝ և սաստիկ կանչ մըռաւք։
39 Եւ ներս մտաւ՝ բսաւ անոնց, Ինչո՞ւ իրար ան-
ցեր էք՝ և կուլաք. մանուկը մեռած չէ, հապա
40 կըքնանակոր։ Եւ ծաղր կընէին անիկա. բայց
ինքը ամէնը դուրս հանեց, իրեն հետը առաւ մա-
նուկին հայրը ու մայրը՝ և անոնք որ իր հետն էին,
41 ու մտաւ հոն՝ ուր որ մանուկը դրած էր։ Եւ մա-
նուկին ձեռքէն բռնելով բսաւ անոր, Տալիթա
կում, որ կըթարգմանվի, Ղազ ջիկ՝ քեզի կըսեմ,
42 կելիր։ Ու շուտ մը աղջիկը եղաւ, և կըքալէր.
ինչու որ տասներկու տարուան չափ կար. ու զար-
43 մացան մեծ զարմանքով։ Եւ խիստ ապսպրեց
անոնց որ մարդ չի գիտնայ ան բանը. ու բսաւ
որ՝ անոր բան տան ուտելու։

ԳԼՈՒԽ Թ։

1 Ե ան կէ եղաւ՝ նկաւ իր երկիրը, և իր աշա-
2 կերտները իր ետևէն գացին։ Ու եղաւ որ
շաբաթի օրը սկըսից ժողովարանին մէջ սորվեցու-
նել. և շատերը երբոր կըլսէին կըզարմանային
անոր վարդապետութեանը վրայ, ու կըսէին.
Այսիկա ուսկից ունի աս բաները, կամ՝ աս ի՞նչ

իմաստութիւն է որ ասոր տրուած է , որ ասանկ
հրաշքներ կը լլան ասոր ձեռքովը : Ա՛սիկա հիւ- 3
սին տղան չէ՞ և Ա՛արիային որդին , Յակոբին
և Յովսէսին և Յուդային և Սիմոնին եղբայրը ·
ու ասոր քոյրերը հոս մեր քով չե՞ն · և իր վրան
կրգայթակղէին : Ու ըսաւ անոնց , Ա՛արգարէ մը 4
ո՛չ առանց պատիւ չէ , բայց իր երկիրին
մէջ , և իր ազգականներուն , և իր տունին մէջ :
Ու չէր կրնար հոն ոչ մէկ հրաշք մըն ալ ընել , 5
միայն թէ քանի մը հիւանդներու վրայ ձեռք
դրաւ և բժշկեց անոնք : Եւ անոնց անհաւա- 6
տութեանը համար կրզարմանար · ու կրպտըտէր
ան երկիրին բոլորտիքը , և կրսորվեցուներ :
Եւ իրեն կանչեց տասներկուքը , և սկսաց 7
անոնք երկու երկու խրկել , ու իշխանութիւն
տրաւ անոնց պիղծ դևերուն վրայ : Եւ պատուի- 8
րեց անոնց , որ ճանապարհի համար բան մը
չառնեն , բայց գաւազան մը միայն · ոչ տոպրակ ,
ոչ հաց , ոչ բսակի գօտիներնուն մէջ : Հապա 9
ոտքերնուն հագնին · և երկու կապոց մի հագնիք
բսաւ : Ու ըսաւ անոնց , Ո՛ր տուն որ մտնաք՝ հոն 10
բնակեցէք , մինչև որ անկէ ելլաք : Եւ անոնք 11
որ ձեզ չեն ընդունիր՝ ու ձեզի չեն լսեր , երբոր
անկէ կելլաք՝ ոտքերնուդ փոշին թօթվեցէք
անոնց դէմ վկայութեան համար :
Եւ անոնք ելան կքարոզէին , որ ապաշխարեն : 12
Եւ շատ դևեր կրհանէին , ու շատ 13
հիւանդներ եղով կօծէին՝ և կրբժշկէին անոնք :
Ու Հերովդես թագաւորը լսեց , (ինչու որ 14
անոր անունը յայտնի եղաւ) և կրսէր թէ Յո-
հաննէս մկրտիչը մեռելներէն յարութիւն առեր
է , ու անոր համար հրաշքներ կրլլանկոր անով :
Ուրիշները կրսէին թէ Եղիան է · և ուրիշները՝ 15
թէ Մարգարէ մը , կամ մարգարէներուն մէ-
կին պես : Երբոր Հերովդես լսեց՝ ըսաւ , Ա՛սիկա 16
Յոհաննէս է որուն գլուխը ես կտրեցի , մեռե-
ներէն յարութիւն առեր է :

17 Ինչու որ Հերովդէս ինքը խրկեց Յովհաննէսը բռնեց ու կապեց անիկա՝ և դրաւ բանտը Հերովդիային համար իր եղբօրը Փիլիպպոսին կնոջը.
18 ինչու որ ինքը Հեռն կին ըրաւ անիկա : Որովհետև Յովհաննէս Հերովդէսին կըսէր , Թէ Վ.եղի օրի-
19 նաւոր չէ քու եղբօրդ կինիկը ունենալ : Եւ Հերովդէս ոմն ունէր անոր դէմ , ու կուզէր անիկա
20 մեռցունել , և չէր կրնար : Ինչու որ Հերովդէս կըվախնար Յովհաննէսէն , գիտնալով Թէ անիկա արդար և սուրբ մարդ մըն է . և անոր կըսպա-սէր . ու շատ բան անկից լսած՝ կընէր , և անու-
21 շութիւնով իրեն մտիկ կընէր : Երբոր դիպուկ օր մը եղաւ՝ որ Հերովդէս իր ծնած օրուան ընթ-րիքը կուտար իրեն իշխաններուն և հազարա-
22 պետներուն՝ ու Գալիլեացոց մեծամեծներուն . և երբոր Հերովդիային աղջիկը մտաւ՝ ու խաղաց , հաճելի եղաւ Հերովդէսին՝ և սեղան նստողնե-րուն . թագաւորը ըսաւ աղջկան , Խնդրէ
23 ինծմէ ինչ որ կուզես , ու պիտի տամ քեզի : Եւ շատ անգամ երդում ըրաւ անոր , Թէ Ինչ որ դուն ինծմէ խնդրես՝ պիտի տամ քեզի , մինչև
24 թագաւորութեանս կէսը : Անիկա ելաւ իր մօրը ըսաւ , Թէ Ի՞նչ ուզեմ . ու անիկա ըսաւ , Յո-
25 հաննէս մկրտիչին գլուխը : Եւ ինքը շուտ մը արտորալով թագաւորին քով մտաւ , ու ըսաւ . Կուզեմ որ հիմայ շուտ մը սկուտեղի մը վրայ
26 Յովհաննէս մկրտիչին գլուխը տաս ինծի : Եւ թագաւորը խիստ տրտմեցաւ . բայց երդումներուն համար՝ ու սեղան նստողներուն համար չուզեց որ
27 արհամարհէ անիկա : Եւ թագաւորը շուտ մը դահիճ խրկեց՝ հրաման ըրաւ անոր գլուխը բե-րելու . ու ան գնաց բանտին մէջ գլխատեց անիկա .
28 և սկուտեղով մը բերաւ անոր գլուխը՝ ու տուաւ աղջկանը , և աղջիկը տարաւ իր մօրը տուաւ :
29 Երբոր իր աշակերտները լսեցին , եկան մարմինը վերցուցին և գերեզման դրին :

Հաթեաները Յիսուսի քով ժողվեցան , և 30
պատմեցին անոր բոլոր բաները ինչ որ ըրին՝ և
ինչ որ սորվեցուցին ։ Ու Յիսուս ըսաւ անոնց , 31
Եկէք դուք առանձին անապատ տեղ մը՝ և քիչ
մը հանգչեցէք . ինչու որ շատերը կային՝ որ կեր-
թային ու կուգային , և հաց ուտելու ալ առեն
չէին ունենար ։ Եւ նաւով անապատ տեղ մը 32
գացին առանձին ։ Ու ժողովուրդները տեսան 33
անոնք որ կերթային , և շատերը իմացան . ու ոտ-
քով բոլոր քաղաքներէն շատով հոն կրվազէին ,
և կրմտանային անոնց ։ Եւ երբոր ելաւ՝ շատ 34
բազմութիւն տեսաւ , ու խղճաց անոնց վրայ .
ինչու որ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին .
ու սկսաւ շատ մը սորվեցունել անոնց ։
Եւ երբոր առեն անցաւ , աշակերտները 35
նկան՝ ըսին , Այս տեղը անապատ է . քանի որ ցո-
րեկ է՝ արձակէ ժողովուրդները որ երթան բոլոր 36
տիքի ագարակները և գեղերը՝ իրենց ուտելիք
գնեն . ինչու որ հաս ուտելու բան մը չունին ։
Նիկա պատասխան տուաւ՝ ու ըսաւ անոնց , 37
Դուք տուէք առոնց որ ուտեն ։ Անոնք իրեն ,
Երթանք երկու հարիւր դահեկանի հաց գնենք՝
և տանք առոնց որ ուտեն ։ Ան ըսաւ անոնց , Որա- 38
նիկ նկատակ ունիք , գացէք նայեցէք . երբոր
գիտցան՝ ըսին իրեն , Հինգ՝ և երկու ձուկ ։ Ու 39
հրաման ըրաւ անոնց՝ որ կանանչ խոտին վրայ
կարգ կարգ նստին ։ Եւ դաս դաս նստացան 40
հարիւրական և հիսունական ։ Ու հինգ նկատակը 41
և երկու ձուկը առաւ՝ երկինքը նայեցաւ , օրհնեց ,
մանրեց նկատակները՝ ու տուաւ աշակերտնե-
րուն , որ անոնց առջևը դնեն . և երկու ձուկը
ամենուն ալ բաժնեց ։ Կերան և կշտացան . Ու 42
տասներկու կողով լեցուն՝ փշրանքները վերցու- 43
ցին , և ձուկերէն ալ ։ Եւ ուտողները հինգ 44
հազար մարդու չափ կային ։
Ու նոյն ժամուն աշակերտները արտօրցուց՝ որ 45

նաւը մնաւն , և իրմէն առաջ նրմման մէկալ կող-
մը Լևեմպպիդա , մինչև որ ինքը ժողովուրդը
46 արձրկէ : Եւ անոնցմէ որ զատկեցաւ՝ նլաւ լեռը
47 աղօթք ընելու : Եւ երբոր իրիկուն եղաւ՝ նաւը
48 ծովին մէջ տեղն էր , ու ինքը ցամաքը : Եւ տե-
սաւ անոնք որ կրնարշաւելին հովէն քաշելու
առնոնին , ինչու որ հովը իրենց հակառակ էր . և
գիշերվան չորրորդ պահին առնոր՝ ծովին վրայ
քալելով կուգայ անոնց , ու կուզէր անոնցմէ
49 անցնել : Անոնք երբոր տեսան որ ծովին վրայ
կրքալէր , կարծեցին թէ՝ աչքի երևոյթ բան մըն
50 է , ու կանչ վըռտուցին : Ինչու որ ամենն ալ տես-
կա տեսան , և տասանեցան . ու ինքը շուտ մը խո-
սեցաւ անոնց՝ և ըսաւ . Վհաչ եղէք . ես եմ՝ մի՛
51 վախնաք : Եւ երբ նաւը անոնց քով , ու հովը
դադրեցաւ . և էվելոք խելքներ էին միտքերնուն
52 մէջ , և շատ կրզարմանային : Վ ասն զի հացին
վրայ ըսած հրաշքը չի մըտմըտացին . ինչու որ սիր-
տերնին թմրած էր :
53 Եւ երբոր մէկալ կողմը անցան , եկան Վնն-
54 նեսարէթի երկիրը : Ու նաւէն երբոր ելան , ան
55 տեղի մարդիկը իսկոյն ճանչցան անիկա . և ատկեն
անդին վազեցին բոլոր գաւառը , սկըսեցին մա-
հիճներով հիւանդները բերել՝ ուր որ կրլսէին
56 թէ հոն է : Եւ ուր որ կրմտնար՝ գիւղերը կամ
քաղաքները կամ ագարակները , փողոցներուն
մէջ կրդընէին ցաւագարները , ու կաղաչէին
իրեն՝ որ գոնէ իր լաթերուն ծայրին դպչէին . և
անոնք որ միանգամ դըպան՝ բժշկըվեցան :

ԳԼ · Ի :

1 Եւ իր քովը ժող վըվեցան Փարիսեցիները , ու ո-
մանք կարդացողներէն՝ որ Երուսաղէմէն և-
2 կած էին : Եւ երբոր տեսան որ անոր աշակերտ-
ներէն ոմանք պիղծ , այսինքն՝ չի լըացված ձեռ-
3 քով հաց կուտէին , մեղադրեցին : Ինչու որ

փարիսեցիները և բոլոր Հրէաները մինչև աղէկ
մը ձեռքերնին չի լուանան , հաց չեն ուտեր . ինչու
որ ծերերուն աւանդութիւնը կը բռնեն . և շու- 4
կայէն որ կուգան՝ թէ որ առաջ չի լուացուին ,
բան չեն ուտեր , և ուրիշ շատ բաներ կայ՝ որ
կընդունին բռնել . գաւաթներու և փարչերու և
պղնձէ անօթներու և անկողիններու լուացմունք-
ներ : Ա՛նտեղ փարիսեցիները ու կարդացողնե- 5
րը Յիսուսին անոր թէ Ինչու քու աշակերտնե-
րըդ ծերերուն աւանդութեանը պէս չեն երթար ,
հապա պիղծ ձեռքով հաց կուտեն : Ա՛նիկա պա- 6
սասխան տուաւ և ըսաւ անոնց . Ա՛ղէկ մարգա-
րէութիւն ըրաւ Եսայի ձեզի կեղծաւորներուդ
համար . ինչպէս ըսաւ . Ա՛ս ժողովուրդը իս պըտ-
կունքներով կը մեծարէ , և իրենց սիրտերը հե-
ռացած զատված են ինծմէ : Պարապ տեղը իս կը- 7
պաշտեն . մարդոց պատուիրած վարդապետու-
թիւնները կրսորվեցնեն : Ա՛ստուծոյ պատուի- 8
բանքը թողեր էք , մարդոց աւանդութիւնը կը-
բռնէք . փարչերու և գաւաթներու լուացմունք-
ներ , և ասոնց նման շատ ուրիշ բաներ կընէք :
Ու ըսաւ անոնց . Ա՛ղէկ կանարգէք Ա՛ստուծոյ 9
պատուիրանքը , որ ձեր աւանդութիւնը հաստատ
պահէք : Ա՛նչու որ Մովսէս կրսէ . Ա՛ռու հայրդ 10
և մայրդ պատուէ , և ով որ հայրը կամ մայրը
կանիծէ՝ մահով թող մեռնի : Ա՛նա դուք կը- 11
սէք , Թէ որ մէկը հօրը կամ մօրը ըսէ՝ Ա՛յն բանը
որ ինծմէ պիտի շահիս Ա՛ստուծոյ պատրաստ կորբան
է , (որ ըսել է ընծայ ,) ասկէ յետոյ անիկա 12
ալ թող չէք իտար անոր բան մը ընել հօրը կամ
մօրը : Եւ Ա՛ստուծոյ խօսքը բանի տալ չէք դներ 13
ձեր աւանդութիւնովը , որ կաւանդէք . և ուրիշ
շատ բաներ կընէք որ ասոր նման է :

Եւ բոլոր ժողովուրդը իր քովը կանչելով ըսաւ 14
անոնց . Լսեցէք ինծի ամէնդ՝ և հասկըցէք : Ոչ- 15
մը չի կայ որ դուրսէն մարդուն մէջը մտնայ , ու

կարող լլլայ անիկա պղծել · Հապա՝ ան որ ան-
16 կէց կելլայ , անիկա է որ մարդը կըպղծէ : Ըն՝ որ
լսելու ականջ ունի , լսող լսէ :
17 Եւ երբոր ան ժողովուրդէն տուն մտաւ՝ աշա-
կերտները հարցուցին իրմէն ան առակին համար :
18 Ու ըսաւ անոնց , Դուք ալ անանկ անմիտ էք ,
չէք իմանար թէ՝ ամէն ինչ բան որ դուրսէն
մարդուն ներսիդին կըմտնայ՝ չի կրնար անիկա
19 պղծել · ինչու որ՝ չէ թէ անոր սիրտին մէջը կը-
մտնայ , հապա փորը · և դուրս կելլայ , ու բոլոր
20 կերածները կրմաքրէ : Եւ կըսէր թէ , Ինչ որ
կելլայ մարդուն ներսէն , անիկա մարդը կըպղծէ :
21 Ինչու որ ներսէն մարդուն սիրտէն կելլան չա-
րութեան խորհուրդները · շնութիւններ , պոռ-
22 նկութիւններ , գողութիւններ , սպաննութիւն-
ներ , ագահութիւններ , չարութիւններ , նեն-
գութիւններ · գիճութիւն , գէշ աչք , հայհոյ-
23 ութիւն , հպարտութիւն , անզգամութիւն : Ա-
բոլոր չար բաները ներսէն կելլան՝ և կըպղծեն
մարդը :
24 Ու անկէց ելաւ եկաւ Տիւրոսի և Սիդոնի կող-
մերը · տուն մը մտաւ՝ չէր ուզեր որ մէկին յայտ-
25 նըվի , բայց չի կրցաւ ծածկըվիլ : Ինչ- որ կնիկ
մը՝ որուն աղ չիկր կրտանջըվէր պիղծ դևէն , լսեց
26 անոր վրայով · եկաւ՝ անոր առջևը ինկաւ : Եւ
աս կնիկը հեթանոս էր՝ Ասորի Փիւնիկեցի ազ-
գով , ու կաղաչէր անոր՝ որ դևը իր աղջիկէն
27 հանէ : Եւ Յիսուս ըսաւ անոր · Լսող առ-
առաջ տղաքը կըշտանան , ինչու որ՝ աղէկ չէ
28 տղոցը հացը առնել , ու շուներուն ձգել : Ան-
կա պատասխան տուաւ՝ և ըսաւ , Էէր՝ շուներն
ալ տղոցը սեղանին փշրանքներէն կըկերակրին :
29 Ու ըսաւ անոր · Ասա խօսքիդ համար գնա , քու
30 աղ չիկդ դևը ելաւ : Գնաց իր տունը , և գտաւ
դևը ելած , ու աղ չիկը՝ որ անկողինին վրայ ըն-
կած դրած էր :

Եւ նորէն Յիւրոսին և Ալիդոնին կողմերէն 31
գալաւ՝ ու եկաւ Վաղիլացոց ծովեզերքը Դեկա-
պօլիսի սահմաններուն մէջէն ։ Եւ մեկը բերին 32
անոր առջին՝ խուլ ու մունջ, և կաղալէին որ
անոր վրան ձեռք դնէ ։ Ու ժողովուրդէն մէկ դի 33
առաւ անիկա, իր մատները անոր ականջներուն
խօթեց՝ ու հոն թքուրտ, և անոր լեզուէն բռա-
նեց, երկինքը նայեցաւ՝ հառաչեց ու բսաւ անոր ։ 34
Եփփաթա, (որ բսել է՝ բացվէ) ու նոյն ժամուն 35
անոր ականջները բացվեցան, և լեզուին կապերը
քակվեցան, ու շիտակ կրնօսէր ։ Եւ պատուիրեց 36
անոնց որ մէկուն չբսեն ։ և որչափ ինքը կրպատ-
ուիրէր անոնց՝ անոնք ալ աւելի կրտարածաձայնէ-
ին ։ ու չատ դարձ կրզարմանային՝ և կրսէին ։ 37
Ամէն բաները աղէկ բրաւ ասիկա, որ խուլերուն
լսել կուտայ՝ ու մունջերուն խօսիլ ։

Գ.

Ա ն օրերը դարձեալ շատ ժողովուրդ կար, և 1
բան մը չունէին ուտելու ։ կանչեց իր աշա-
կերտները՝ ու բսաւ անոնց ։ Արիզատ ատ ժողո- 2
վուրդին վրայ ։ ինչու որ հիմայ իրեք օր է՝ որ իմ
քովս են, ու բան մը չունին ուտելու ։ Եւ թէ 3
որ տունէք անոնք իրենց տուները՝ ճամբան
պիտի մաբին ։ ինչու որ տուրնյմէ ոմանք հեռու
տեղէ եկած են ։ Պատասխան տբին իրեն իր 4
աշակերտները ։ Ա՛ս անապատին մէջ ուսկէց կրը-
նաս հացով կրշատացունել սոսկ ։ Եւ հարցուց 5
անոնց թէ՝ Քանի՞ նկանակ հաց ունիք, և անոնք
բսին՝ Եօթը ։ Ու հրաման բրաւ ժողովուրդին՝ որ 6
գետնին վրայ նստին, և առաւ եօթը նկանակը՝
գոհացաւ, կոտրեց ու տբաւ աշակերտներուն, որ
դնեն ։ և դրին ժողովուրդին առջեւը ։ Ու քիչ մը 7
ձուկեր ունէին, և անոնք ալ օրհնեց՝ ու հրաման
բրաւ որ դնեն անոնց առջեւը ։ Կերան և կրշատա- 8
ցան, ու կտորվանքներուն փշրանքները վերցու-

9 ցին ասեը զամբիլ : Եւ ուտողները չորս հազարի
10 չափ կային , ու այձրկեց անոնք : Եւ շուտ մը
նաւը մտաւ աշակերտներուն հետը՝ եկաւ Վազ-
մանուենայի կողմերը :
11 Վարիսեցիները եկան՝ ու սկսեցին իրեն հետ
վիճաբանութիւն ընել , և անիկա փորձելով՝ իր-
12 մէն նշան մը կուզէին երկինքէն : Ու իր հոգիին
մէջ սաստիկ հառաչեց՝ և ըսաւ . Ինչ է որ ա-
զգը նշան կուզէ . ճշմարիտ կըսեմ ձեզի որ՝ ա-
13 զգին նշան չի պիտի տրուիւ : Թողուց անոնք ,
նորէն նաւը մտաւ՝ ու գնաց Բեղսէ մակալ կողմը :
14 Եւ հաց առնելու մոռցան , ու նաւին մէջը ի-
15 րենց հետը միայն մէկ նկանակ մը ունէին : Եւ
կըպատուիրէր անոնց՝ ու կըսէր . Զգոյշ կեցէք
Վարիսեցիներուն խմորէն , ու Հերովդեսեաննե-
16 րուն խմորէն : Եւ իրարու հետ կըմտմտային՝ ու
կըսէին թէ , Հաց չունենալնուս համար է :
17 Ուխտացաւ Յիսուս՝ և ըսաւ անոնց . Ինչու կըմտ-
մըտաք սիրտերնուդ մէջ թէ հաց չունիք . տակաւին չէք խմնար՝ և չէք մի-
18 տար , թէ մութ միտքեր ունիք՝ ու չէք տես-
նիր , և տակաւին չէք խմնար՝ ու չէք լսեր :
19 Երբոր հինգ նկանակը հինգ հազարին մէջ կոբէցի ,
քանի՞ կողով լեցուն կտորմանք վերցուցիք . և
20 ըսին անոր՝ Տասներկու : Եւ երբոր եօթը նկա-
նակը չորս հազարին մէջ կոբէցի , քանի՞ զամբիլ
լեցուն կտորմանք վերցուցիք . և անոնք ըսին՝
21 Եօթը : Ու ըսաւ անոնց , Ասպա բնաւ չէք
հասկընար :
22 Ելեթսայիդա եկան , և անոր առջևը կոյր մը
23 բերին , ու կաղաչէին իրեն որ դպչի անոր : Ու
կոյրին ձեռքէն բռնեց՝ գեղէն դուրս հանեց ,
թուքաւ անոր աչքին՝ ու ձեռքը անոր վրան դրէ-
բաւ , կըհարցուներ իրեն թէ՝ բան մը կըտեսնայ
24 մի : Նայելեցաւ՝ և կըսէր , Ա՛րդ իկները կըտես-

նամկոր ծառերու պէս՝ որ կրպըտռին : Ասրեն 25
ձեռքը անոր աչքին վրայ դրաւ՝ բացաւ , ու կը-
ւեռնար . ոդ ջնդացաւ և համաթձակ ամէնը կրտես-
նար : Ինկնա իր տունը խրկեց ու ըսաւ . Վնդը 26
մի՛ մտնար , հապա քու տունդդ գնա . և երբոր
գեղը մտնաս՝ գեղին մէջ մէկուն բան չըսես :
Եւ Յիսուս աշակերտներուն հետ մէկ տեղ 27
փիլիպպեան Կեսարիայի գեղերը ելաւ . ու ճամ-
բան կըհարցունէր աշակերտներուն՝ ու կըսէր .
Ինծի համար ո՞վ կըսեն մարդիկ՝ թէ եմ : Պա- 28
տասխան տուին անոնք ու ըսին . Յովհաննէս մկըր-
տիչն է եղեր . և ուրիշներ՝ Եղիան , և ուրիշներ՝
Մարգարէներէն մէկը : Ետաւ անոնց , Հայց 29
դուք ինծի համար ո՞վ կըսէք՝ թէ եմ . պատաս-
խան տուաւ Պետրոս՝ և ըսաւ անոր , Դուն
Քրիստոսն ես : Եւ սաստիկ պատուիրեց անոնց՝ 30
որ իրեն համար մէկուն չի զուրցեն :
Եւ սկսաւ սորվեցունել անոնց , թէ՝ Պէտք է 31
որ Որդին մարդոյ շատ չարչարանքներ ընդունի ,
ու երեցներէն և քահանայապետներէն ու կար-
գողներէն անարգըվի , և մեռնի , և իրեք օրէն
յարութիւն առնէ : Ու ան խօսքը յայտնի խօսե- 32
ցաւ . և Պետրոս մէկդի առաւ անիկա , սկսաւ
անոր դէմ զուրցել : Եւ ինքը դարձաւ աչա- 33
կերտներուն նայեցաւ , չեմեց Պետրոսին՝ ու
ըսաւ , Երթս գնա Սատանայ . ինչու որ դուն
Աստուծոյ բաները չես խորհիրկոր , հապա՝ մարդ-
կային բաներ :
Եւ ժողովուրդը աշակերտներուն հետ մէկ 34
տեղ իրեն որ կանչեց , ըսաւ անոնց . Թէ որ մէկը
կուզէ իմ ետևէս գալ՝ թող իր անձը ուրանայ ,
և իր խաչը վերցունէ՝ ու իմ ետևէս գայ : Ինչու 35
որ՝ ո՛վ որ կուզէ իր անձը ապրեցունել՝ պիտի
կորսընցունէ անիկա . և ո՛վ որ աւետարանին հա-
մար իր անձը կորսընցունէ՝ պիտի ապրեցունէ
անիկա : Ինչ օգուտ է մարդու մը՝ թէ որ բոլոր 36

աշխարհ վաստըկի, և իր անձը կորսընցուսանէ ։
37 Վասն զի ո՞ր մարդ մը ի՞նչ կրնայ տալ իր անձին
38 տեղը ։ Ուստի ով որ իս և իմ խօսքերս ամօթ կը-
նէսկ ան շնացող ու մեղաւոր ազգիս մէջ , Որ-
դին մարդոյ ալ անկից ամօթով պիտի ունէ՝ երբոր
իր Հօրը փառքովը և սուրբ հրեշտակներով գայ ։
39 Եւ ըսաւ անոնց · Ճշմարիտ կըսեմ ձեզի , որ
ասոնցմէ մէկ քանին կան՝ որ հոս են , որոնք մահ-
ուան համը չեն պիտի առնուն՝ մինչև որ տեսնան
Աստուծոյ թագաւորութիւնը զօրութիւնով
եկած ։

ԳԼՈՒԽ · Թ ։

1 Եւ վեց օրէն ետև Յիսուս իր հետը առաւ
Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը · և
անոնք մէկ բարձր լեռ մը հանեց առանձին · ու
2 անոնց առջևը այլակերպեցաւ ։ Եւ իր լամերը
եղան փայլուն խիստ ճերմակ , անանկ որ երկրի
3 քարկիչները չեն կրնար անանկ ճերմկցուսնել ։
4 Ու եղիան Մովսէսին հետը երևեցաւ անոնց , և
Յիսուսի հետ կըխօսէին ։ Պատասխան ըրաւ
Պետրոս ու ըսաւ Յիսուսին · Ռաբբի՝ աղէկ է
մեզի հոս կենալ , ու թող չաս թոթան շինենք ·
մէկը՝ քեզի , մէկը՝ Մովսէսին , և մէկը՝ Եղիային ։
5 Ինչու որ չէր գիտեր ինչ կրխօսէր · վասն զի
6 զարհուրեր էին ։ Եւ մէկ ամպ մը հովանի եղաւ
անոնց վրայ · ձայն մը եկաւ ամպէն և ըսաւ · Ա՛ս
7 է իմ սիրական որդիս , առուր մտիկ ըրէք ։ Եւ
յանկարծ ապրին անդին որ նայեցան՝ ալ ուրիշ
մէկը չի տեսան , չսպա միայնակ Յիսուս իրենց հե-
8 տը ։ Եւ երբոր լեռնէն վար կիջնային՝ պատուի-
րեց անոնց որ մէկուն չի զրըցին տեսածնին ,
մինչև որ Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն
9 առնէ ։ Եւ անոնք այն խօսքը միաբերնին պահե-
ցին , ու իրարու հետ կըհարցունէին թէ՝ մեռել-
10 ներէն յարութիւն առնելը ի՞նչ է ։ Հարցուցին

անոր՝ ու ըսին , Ո՞վ ի՞նչ է որ կարդացողները
կրսեն Թէ , Պետք է որ առաջ Եղիան գայ ։ Ա- 11
նիկա պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ . Եղիան
առաջ կուգայ՝ ամէն բան կարգի կրդնէ . բայց
ինչո՞ւ գրված է Որդւոյ մարդոյ համար , որ շատ
բաներ պիտի քաշէ և անարգվի ։ Բայց ես ձեզ 12
կը կրսեմ , որ Եղիան եկաւ , և ինչ որ ուզե-
ցին նէ՝ ըրին անոր . ինչպէս որ գրված է իրեն
համար ։
Ու եկան աշակերտներուն քով , տեսան շատ 13
ժողովուրդ անոնց բոլորտիքը՝ և կարդացողները ,
որ վիճաբանութիւն կընէին անոնց հետ ։ Ու շուտ 14
մը բոլոր ժողովուրդը երբոր տեսան անիկա՝ զար-
մացան , և առաջ վազելով բարև կուտային իրեն ։
Եւ հարցուց անոնց Թէ Ի՞նչ վէճ կընէիք անոնց 15
հետ ։ Ժողովուրդէն մէկը պատասխան տուաւ՝ ու 16
ըսաւ . Ո՛վ վարդապետ՝ իմ որդիս քեզի բերի , որ
մէնձ դև ունի . և ուր որ հասնի նէ՝ գետինը կը- 17
զարնէ՝ ու կրփրփրցունէ , և ակռաները կրկը-
ճըռցունէ՝ ու կրցամքի , և ըսի աշակերտներուդ
որ հանեն , ու չի կրցան հանել անիկա ։ Պա- 18
տասխան տուաւ անոնց՝ և ըսաւ . Ո՛վ անհաւատ
ազգ՝ մինչև երբ ձեզի հետ պիտի ըլլամ , մինչև
երբ ձեզի պիտի համբերեմ . բերէք անիկա ։
Եւ անիկա բերին իրեն . երբոր դևը տեսաւ անի- 19
կա՝ շուտ մը թօթվեց ան , ու գետինը ինկած կը-
թաւալըլտկէր՝ և կրփրփրար ։ Հարցուց անոր 20
հօրը՝ ու ըսաւ . Որչափ ատեն է որ ատ բանը
ատոր եղաւ . և ան ըսաւ , Տղայութենէն . շատ 21
անգամ կրակի ու ջուրի մէջ կրնետէ ատիկա՝ որ
կորսընցունէ . ուստի Թէ որ կարող ես բան մը
ընել , օգնէ՛ մեզի՝ խղճալով մեր վրայ ։
Եւ Յիսուս ըսաւ անոր . Ի՞նչ որ՝ կարող ես . 22
ամէն բան կարելի է անոր՝ որ կը հաւատայ ։ Ու 23
տղին հայրը շուտ մը կանչեց՝ և ըսաւ . Կը հաւա-
տամ Տէր՝ օգնէ իմ անհաւատութեանս ։ Յիսուս 24

երբոր տեսաւ Թէ ժողովուրդը վրան կրդիզ վի-
կոր , սաստեց պիղծ դեւին՝ և ըսաւ · Ա՛նձնձ ու
խուլ դեւ՝ ես հրամայեմ կուտամ՝ քեզի , ելլիր ատ-
25կէց , ու մէյմալ չի մտնաս ատոր մէջ : Եւ կանչ-
վռուտեց՝ և խիստ չարչըրկեց անիկա , ու ելաւ · և
տղան մեռելի պէս եղաւ , անանկ որ շատերը ըսին
26 Թէ՝ Ա՛նաւ : Եւ Յիսուս անոր ձեռքէն բռնեց
27 վերցուց անիկա · ու ան կայնեցաւ : Եւ երբոր
ինքը տուն մտաւ , աշակերտները առանձին հար-
ցուցին իրեն · Ա՛նիք ինչու չի կրցանք հանել
28 անիկա : Եւ ըսաւ անոնց · Ա՛յս տեսակը ուրիշ
բանով չելլար , միայն Թէ ծոմով ու աղօթքով :
29 Եւ եան անկէց Վալիլեայի մէջէն կանցնէին ,
30 ու չէր ուզեր որ մէկը գիտնայ : Ինչու որ՝ կրսոր-
վեցունէր իր աշակերտներուն՝ ու կրսէր անոնց
Թէ , Որդին մարդոյ պիտի մատնըվի մարդոց ձեռ-
քը , և անիկա պիտի մեռցնեն · ու մեռնելէն ետև
31 իրեք օրէն յարութիւն պիտի առնէ : Եւ անոնք
չէին հասկընար ան խօսքը , ու կրվախնային հար-
ցունելու :
32 Եկաւ Կափառնայում , և տուն որ մտաւ՝
հարցուց անոնց · Ի՞նչ վիճաբանութիւն կընէք
33 իր ճամբան իրարու հետ : Եւ անոնք լուռ կե-
ցան · ինչու որ՝ ճամբան իրարու հետ վիճաբա-
34 նութիւն կընէին Թէ՝ Ո՛վ մեծ է : Եւ երբոր
նստաւ՝ կանչեց տասներկուքը , ու ըսաւ անոնց ·
Եթէ որ մէկը կուզէ առաջին ըլլալ , ամէնուն
35 պզտիկը պիտի ըլլայ , և ամէնուն սպասաւորը : Ու
տղայ մը առաւ կայնեցուց անոնց մէջը · և իր
36 գիրկը առնելով անիկա՝ ըսաւ անոնց : Ո՛վ որ
ասանկ տղոցմէն մէկը կընդունի իմ անունովս՝ իս
կընդունի · և ով որ իս կընդունի՝ չէ Թէ իս կընդ-
37 դունի , հապա ան որ իս իրկեց : Պատասխան
տուաւ անոր Յօհաննէս՝ ու ըսաւ · Ո՛վ վարդապետ
մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կըհաներ ,
ու մեր հետևէն չէր քալեր , և անիկա արգիլեցինք :

Եւ ինքը ըսաւ . Մի՛ արգիլէք անիկա . ինչու որ՝ 38
մեկը չի կրնար որ իմ անունովս հրաշք գործէ՝ ու
կարող ըլլայ ինծի հայհոյել : Ինչու որ՝ ան որ 39
մեզի հակառակ չէ , մեր կողմէն է : Եւ ով որ 40
ձեզի գաւաթով մը ջուր խմցնելէ աս անունովս ,
թէ՝ Ուրիստոսի էք , ճշմարիտ կըսեմ ձեզի՝
անիկա իր վարձքը չի պիտի կորսընցունէ : Եւ 41
ով որ կրգայթակղեցնէ աս պզտիկներուն մեկը՝
որ ինծի կը հաւատան , շատ աղէկ էր անոր՝ որ
եշու աղացքի քար մը իր վիզին կախուէր , ու ծո-
վը ձգուէր : Եւ թէ որ քու ձեռքդ քեզ կրգայ- 42
թակղեցնէ՝ կտրէ նետէ քեզմէն . ինչու որ՝
աղէկ է քեզի պակասաւոր մտնալ յաւիտենական
կեանքը , քան թէ երկու ձեռք ունենալ՝ ու գե-
հեանը նրմալ չի մարելու կրակին մէջ : Ուր որ 43
անոնց որդը չի մեռներ , և կրակը չի մարիր :
Եւ թէ որ քու ոտքդ քեզ կրգայթակղեցնէ՝ 44
կտրէ նետէ անիկա քեզմէն . աղէկ է քեզի կաղ
մտնալ յաւիտենական կեանքը , քան թէ երկու
ոտք ունենալ՝ ու գեհեանը խրնալ չի մարելու
կրակին մէջ : Ուր որ անոնց որդը չի մեռներ , 45
և կրակը չի մարիր : Եւ թէ որ քու աչքդ քեզ 46
կրգայթակղեցնէ՝ դուրս հանէ անիկա . աղէկ է
քեզի մէկ աչքով Աստուծոյ թագաւորութիւնը
մտնալ , քան թէ երկու աչք ունենալ՝ ու գեհե-
ենը խրնալ : Ուր որ անոնց որդը չի մեռներ , 47
և կրակը չի մարիր : Ինչու որ՝ ամէն բան կրա- 48
կով պիտի աղ ւի , և ամէն ոդ չակէդ աղով պիտի
աղ ւի : Աղը աղէկ է , բայց թէ որ աղը անհամնայ՝ 49
ինչով պիտի համեմնայ , Ունտի դուք աղը ձեր
անձին մէջը պահեցէք , և իրարու հետ խաղաղու-
թիւն ըրէք :

ԳՂՈՒԽՔ Ա։

1 Ա եւ անկէց եղաւ Հրէաստանին կողմերը Յորդանանի մէկալ դին եկաւ . ու նորէն ժողովուրդը գիւղած կերթային իրեն . և ինչպէս որ սովորութիւն ունէր՝ դարձեալ կըսորվեցուներ
2 անոնք ։ Ու փարիսեցիները եկան փորձելով կը հարցուներին անոր՝ ու կըսէին ըսէ , Օրինաւոր է որ էրի-
3 կը իր կնիկը արձկէ ։ Ինքը պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ , Մովսէս ձեզի ինչ պատուիրեց ։ Եւ անոնք ըսին . Մովսէս հրաման տուաւ
5 գաւվելու գիր գրել , ու արձկել ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոց . Ձեր սիրտին կարծրութեանը համար ինքը ան հրամանը գրեց ։
6 Այլ ստեղծուածին սկիզբէն Աստուած անոնք արու
7 և էգ ըրաւ , ու ըսաւ . Ասոր համար մարդ մը իր հայրը ու մայրը պիտի ձրգէ , և իր կնկանը եւուէն
8 երթայ . ու երկուքը մէկ մարմին պիտի ըլլան , և անկէ ետեւ երկու մարմին չեն՝ հապա մէկ մարմին ։
9 Ուստի ինչ որ Աստուած մէկ տեղ կըցուց , մարդ
10 թող չի զատէ ։ Եւ տունը աշակերտները նորէն
11 նոյն բանը հարցուցին իրեն ։ Ու ըսաւ անոնց . Թէ որ էրիկ մը , իր կնիկը արձկէ՝ և ուրիշ մը
12 առնէ , շնութիւն կընէ ։ Ու կնիկ մը իր էրկընէն ելլայ՝ և ուրիշ էրկան մը ըլլայ , շնութիւն կընէ ։
13 Եւ մանր տղաք բերին իրեն , որ ձեռք դնէ անոնց վրայ . բայց աշակերտները կըչէխէին բե-
14 րողները ։ Յիսուս երբոր տեսաւ , սրդողելով չեթող անոնք՝ ու ըսաւ . Թող տղէրք ատ մարդ որ-
15 ղոցը որ ինծի գան , և մի արգիլէք ատոնք . ինչու որ ատանկներուն է Աստուծոյ թագաւորութիւ-
16 նը ։ Ամէնիրէ կըսեմ ձեզի , Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտիկ տղի մը պէս չընդու-

Նիր , անիկա չի պիտի մնայ հոն ։ Եւ անոնք 16
գիրկը առաւ , վրանին՝ ձեռք դրաւ՝ ու օրհնեց
անոնք ։

Եւ երբոր ինքը ճամբայ ելաւ անկէց , մէկմէկ 17
մէկ հարուստ մարդ մը վազեց՝ ծունկ չոքելով կը-
հարցուներ իրեն ու կըսէր ։ Վարի Վարդապետ՝
Ինչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառան-
գեմ ։ Եւ Յիսուս ըսաւ անոր ։ Ինչու ինծի 18
բարի կըսես ։ Մէկէն չի գոտ բարի չի կայ , որ Է
Աստուած ։ Պատուիրանքները գիտես ։ Մի 19
շնար , Մի սպաններ , Մի գողնար , Մի սուտ վը-
կայեր , քու հայրդ և մայրդ պատուէ ։ Անիկա 20
պատասխան տուաւ՝ և ըսաւ իրեն ։ Վարդապետ՝
ասոնք ամէնը տղայութենէս ի վեր ըրի ։ ուստի
այ ի՞նչ պակաս ունիմ ։ Եւ Յիսուս անոր նայ- 21
ելով սիրեց անիկա՝ ու ըսաւ իրեն ։ Այդ քան մը
քեզմէ պակաս է ։ Թէ որ կուզես կատարեալ ըլ-
լալ , գնա ինչ որ ունիս ծախէ՝ ու աղքատներուն
տուր , և երկինքը գանձ պիտի ունենաս ։ ու խա-
չը առ՝ և եկո իմ ետևէս ։ Եւ ան խօսքին խոժո- 22
ռելով՝ գնաց տրտմած ։ ինչու որ՝ շատ ստացուածք
ունէր ։ Յիսուս չորս կողմը նայելով՝ ըսաւ աշա- 23
կերտներուն , Ո՜նչպէս դժուար է անոնց որ հա-
րստութիւն ունին՝ Աստուծոյ թագաւորութիւնը
մտնալ ։ Ու աշակերտները զարմացեր էին անոր 24
ըսած խօսքերուն վրայ ։ բայց Յիսուս նորէն պա-
տասխան տուաւ իրենց՝ և ըսաւ ։ Որդեակներ՝
որչափ դժուարին է իրենց հարստութիւնը յու-
սացողներուն Աստուծոյ թագաւորութիւնը մըտ-
նալ ։ Փիւրին է մալուխին ասղնի ծակէն անց- 25
նիլ , քան թէ հարուստին Աստուծոյ թագաւո-
րութիւնը մտնալ ։ Եւ անոնք այ էվելօր կըզար- 26
մանային՝ ու կըսէին իրարու ։ Ուրեմն ո՞վ կրնայ
փրկուիլ ։ Յիսուս անոնց նայելով ըսաւ ։ Մարդ- 27
մարդու կողմանէ անհնար է , բայց ոչ Աստուծոյ
կողմանէ ։ Պետրոս սկսաւ ըսել անոր , Ահա 28

ձենք ամէն բան թողուցինք՝ և քու ետևէդ եկանք։
29 Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ. Ճշմարիտ
կըսեմ ձեզի, մէկը չէ կայ որ թողուց տուն, կամ
եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ
մայր, կամ որդիք, կամ արտեր ինծի համար՝
30 կամ աւետարանին համար, որ չէ պիտի առնէ
հարիւրապատիկ հիմայ աս ատեններս տուներ, և
եղբայրներ, և քոյրեր, և մայրեր, և որդիքներ,
և արտեր հալածանքի հետ. ու գալու աշխարհին
31 մէջ յաւիտենական կեանքը։ Ինչու որ շատերը
որ են առաջին՝ պիտի ըլլան յետին, ու յետին-
ները՝ առաջին։
32 Եւ դէպ ի Երուսաղէմ կ՚ելլային ճամբուն մէջ
էին. ու Յիսուս անոնցմէ առաջ կերթար, և
անոնք զարմացողները կըզարմանային, ու կըվախ-
նային։ Եւ նորէն առաւ տասներկուքը առանձին,
սկսաւ ըսել անոնց՝ ինչ բաներ որ իրեն պիտի
33 պատահէին. ըսելով, թէ Ահա Երուսաղէմ
կ՚ելլանք, ու Որդին մարդոյ պիտի մատնըվի քա-
հանայապետներուն և կարգացողներուն, ու պի-
տի դատապարտեն անիկա մահուան, և հեթա-
34 նոսներուն պիտի մատնեն անիկա։ Եւ ինքը ծաղր
պիտի ընեն, ու ծեծեն անիկա, և ժխտենեն ա-
նոր, և մեռցունեն, ու իրեք օրէն յարութիւն
պիտի առնէ։
35 Եւ իր քովէն կերթային Յակոբոս ու Յովհան-
նէս՝ Զեբեդեայ որդիքը, և ըսին իրեն. Վար-
դապետ կուզենք որ քեզմէ ինչ որ խնդրենք նէ
36 մեզի ընես։ Եւ ինքը ըսաւ անոնց. Ինչ կուզէք
37 ինծի՝ որ ձեզի ընեմ։ Անոնք ըսին իրեն.
Շնորհէ մեզի՝ որ նստինք մէկս աջ կողմդդ, և
38 մէկալը՝ ձախ կողմդդ քու փառքիդ մէջը։ Պատաս-
խան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց. Չէք գի-
տեր՝ ինչ կրնեդրէք. կրնաք խմել ան գաւաթը
որ ես պիտի խմեմ, կամ ան մկրտութիւնը մկրտը-
39 վիլ՝ որ ես պիտի մկրտըվիմ։ Եւ անոնք ըսին իրեն,

Կրնանք ։ ու Յիսուս բսաւ անոնց , Ըն գաւաթը
որ ես պիտի խմեմ՝ պիտի խմէք , և ան մկրտու-
թիւնը որ ես պիտի մկրտուիմ՝ պիտի մկրտուիք ։
բայց իմ՝ աջ կողմը և ձախ կողմը նստեցնելը՝ 40
իմս չէ տալը ։ Հապա անոնց պիտի պատ-
պատուաստուած է ։ Եւ Տէրը տասը աս որ լսե- 41
ցին , Յակոբին ու Յոհաննէսին վրայ սկսեցին
բարկանալ ։ Եւ Յիսուս կանչեց անոնք իրեն՝ ու 42
բսաւ անոնց ։ Ուսուցէք որ հեթանոսներուն իշխան
ըսածները՝ անոնց վրայ կրթիրեն , և իրենց մե-
ծամեծները վրանին կիշխեն ։ Ասոր 43
անանկ պիտի չըլլայ ։ Հապա՝ ով որ ձեր մէջը մեծ
ըլլալ կուզէ , անիկա ձեզի սպասաւոր պիտի ըլլայ ։
և ով որ ձեր մէջէն առաջին ըլլալ կուզէ , անիկա 44
ձեր ամէնուն ծառայ պիտի ըլլայ ։ Ինչու որ՝ 45
Արդին մարդոյ ալ չեկաւ սպասաւորութիւն ըն-
դունելու , հապա՝ սպասաւորութիւն ընելու , ու
իր կեանքը փրկանք մը տալու շատերուն համար ։
Եւ եկան Երիքով ։ ու երբոր Երիքովէն ելաւ 46
աշակերտներովը և շատ ժողովուրդներով , Տի-
մէոսի որդին կոյր Բարտիմէոսը ճամբուն վրայ
մուրացկան նստեր էր ։ Երբոր լսեց՝ թէ Յիսուս 47
Նազովրեցին է , սկսեց կանչել՝ և բսել , Յի-
սուս որդի Դաւթի ողորմէ՛ ինծի ։ Եւ շատերը 48
անիկա կը նախատէին՝ որ լռէ ։ բայց ան ալ՝ հէվ՛ըլ
կրկանչ վըռտեր , Որդի Դաւթի ողորմէ՛ ինծի ։
Յիսուս կայնեցաւ՝ և հրամայեց ըսուա որ անիկա 49
կանչեն ։ կանչեցին կոյրը՝ ու բսին անոր ։ Քաջ
եղիր ելլէ՛ քեզ կը կանչէ՛կոր ։ Եւ անիկա իր լա- 50
թերը ձգեց՝ ելաւ Յիսուսին եկաւ ։ Պատասխան 51
տուաւ անոր Յիսուս՝ ու բսաւ ։ Ի՞նչ կուզես որ
քեզի ընեմ ։ կոյրը բսաւ իրեն ։ Ռաբբունի՛ որ
աչ՛ բացվի ։ Եւ Յիսուս բսաւ իրեն ։ Գնա՛ քու 52
հաւատքդ քեզ բժշկեց ։ ու շուտ մը բացվեցաւ ,
և ճամբան անոր ետևէն կերթար ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ երբոր Երուսաղէմ մտաւ Յեսուս
ու Յերիքովա՝ ձիրենեաց լեռանը մօտ, աշա-
2 կերտներէն երկուքը խրկեց, և ըսաւ անոնց.
Վարեցէք դուք ատ գեղը որ ձեր դիմացն է. Հոն
մտնալնուդ պէս կապած աւանակ մը պիտի գըտ-
նաք, որուն վրայ բնաւ մարդ չի նստաւ. արձը-
3 կեցէք անիկա՝ ու բերէք։ Եւ թէ որ մէկը ըսէ
ձեզի թէ՝ Ինչու՞ ատ աւանակը կարձրկէքիդ որ,
ըսէք թէ՝ իրեն Տէրոջը պէտք է. և շուտ մը Հոս պի-
4 տի խրկէ անիկա։ Վարցին՝ և գտան աւանակը
դռանը քով կապած դուրսը փողոցին մէջ. ու ար-
5 ձրկեցին անիկա։ Եւ հոն կայնողներէն ոմանք կը-
սեն անոնց. Ի՞նչ կընէք, ինչո՞ւ կարձրկէք ատ
6 աւանակը։ Եւ անոնք ըսին անոնց ինչպէս որ Յի-
7 սուս ըսաւ, ու իրենց թող տուին։ Աւանակը Յի-
սուսին բերին, ու անոր վրայ լաթեր ձգեցին, և
8 նըստաւ անոր վրայ։ Ու շատերը իրենց լաթերը
ճամբուն վրայ կըփռէին, և ուրիշները ծառերէն
ճղաղեր կըկտրէին՝ ու ճամբուն վրայ կըձգէին։
9 Եւ առջևէն ու ետևէն գացողները կըկանչէին ու
10 կըսէին. Ովսաննա Խարձրելոյն։ Օրհնեալ է
գան որ Տէրոջը անունովը կուգայ. օրհնեալ է
մեր Դաւիթի հօրը թագաւորութիւնը եկած. ը-
կինքը՝ խաղաղութիւն, և բարձրերը՝ փառաւո-
րութիւն։
11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ՝ ու տաճարը,
և չորս կողմը ամէն բաները նայեցաւ. և ատոնք
որ իրիկուն էր՝ Յերիքովա ելաւ տասներկուքին
հետ մէկ տեղ։
12 Ու հետևեալ օրը երբոր Յերիքովայէն կել-
13 լային՝ անօթեցաւ։ Եւ հեռվանց տերևներով
լեցուն թզուղի ծառ մը տեսաւ, ու եկաւ որ անոր
վրայ բան մը գտնայ. և երբոր անոր եկաւ՝ տե-

բևներէն ՚ի զատ բան մը չի գտաւ . ինչու որ պէտ
Թուղին տեները չէր ։ Պատասխան տուաւ՝ և ըսաւ 14
անոր . Ա՛է յետ մէկը յաւիտեան քեզմէ պտուղ
չուտէ , և իր աշակերտները լսեցին ։
Եկան Երուսաղէմ . ու մտաւ տաճարը՝ սկըսաւ 15
դուրս հանել ծախողները և գնողները որ տաճա-
րին մէջ էին . և տակ փոխողներուն սեղանները
ցիրուցան ըրաւ , ու աղաւնի ծախողներուն ա-
թոռները կործանեց . և թող չէր իտար որ մէկը 16
տաճարին մէջէն աման մը անցունէ ։ Ու կըսորո- 17
վեցուներ անոնք՝ և կըսէր , Գրված է Ի՛մ տունս
աղօթքի տուն պիտի ըսվի բոլոր հեթանոսներուն ,
ու դուք ատիկա աւազակներու բուն ըրիք ։ Ա- 18
հանայապետները ու կարդացողները լսեցին , և
կուզէին՝ թէ ինտո՞ր անիկա կորսընցունեն , բայց
կըվախնային իրմէն . ինչու որ՝ բոլոր ժողովուրդը
զարմացեր էին անոր վարդապետութեանը վրայ ։
Եւ երբոր իրիկուն եղաւ՝ քաղաքէն դուրս կեան ։ 19
Ու առտուանց երբոր անկէց կանցնէին , թու- 20
զին ծառը տեսան արմատէն չորցած ։ Պետրոսին 21
միտքը եկաւ՝ ու ըսաւ անոր . Ռաբբի՝ ահա թու-
զին ծառը որ անիծեցիր , չորցեր է ։ Պատասխան 22
տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց . Ամէն որ Աստու-
ծոյ հաւատքը ունենաք , Ճշմարիտ կըսեմ ձեզի , 23
մէկ որ սա լեռանը ըսէ՝ Ելիր ու ծովը ինկիր , և
իրեն սիրտին մէջը չի տարակուսի , հապա հաւա-
տայ թէ ինչ որ ըսէ՝ կըլլայ , պիտի ըլլայ անոր
ինչ որ ըսէ նէ ։ Ասոր համար կըսեմ ձեզի , 24
Ինչ բանի համար որ աղօթք ընելով կըխնդրէք՝
և կըհաւատաք թէ պիտի առնէք , պիտի ըլլայ
ձեզի ։ Եւ երբոր աղօթքի կըկայնիք՝ ներեցէք թէ 25
որ մէկուն դէմ բան մը ունիք . որ ձեր Հայրն ալ՝
որ երկինքն է , ներէ ձեզի ձեր յանցանքները ։
Ու եթէ դուք չի ներէք նէ , ձեր Հայրն ալ՝ որ 26
երկինքն է , չի ներէր ձեզի ձեր յանցանքները ։
Նորէն Երուսաղէմ եկան , ու տաճարին մէջ 27

երբոր ժուռ կուգար՝ քահանայապետները և
28 կարգացողները ու ծերերը եկան իրեն, և ըսին
իրեն. Ո՞նչ իշխանութիւնով առ բաները կը-
նես. և ո՞վ տուաւ քեզի առ իշխանութիւնը։
29 Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց.
Ես ալ ձեզի բան մը կարցունեմ՝ ինծի պատաս-
խան տուէք, ու ես պիտի ըսեմ ձեզի՝ ինչ իշ-
30 խանութիւնով կընեմ առ բաները։ Յովհան-
նէսին մկրտութիւնը երկինքէն էր՝ թէ մարդոց-
31 մէն, պատասխան տուէք ինծի։ Խրատու հետ
կըմտմտային՝ ու կըսէին, Թէ որ ըսենք Երկին-
քէն՝ կըսէ մեզի. Ապա ինչու չի հաւատացիք
32 անոր։ Ուայ թէ որ ըսենք՝ Մարդոցմէն, ժո-
ղովուրդէն կըվախնանք. ինչու որ ամէնը դիտէին
33 Յովհաննէսը որ մարգարէ մըն էր։ Պատասխան
տուին ու ըսին Յիսուսի՝ Չենք գիտեր. և Յի-
սուս պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ. Ես
ալ ձեզի չեմ ըսեր՝ ինչ իշխանութիւնով կընեմ
առ բաները։

ԿԱ. ԺԱՌ։

1 Ու սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ՝ ու
ըսել. Մարդ մը այգի մը տնկեց, ու
անոր բոլորտիքը ցանգ քաշեց. և խորունկ հնձան
փորեց անոր մէջ՝ ու աշտարակ մը շինեց, և տը-
ւաւ անիկա մշակներուն. ու ինքը հեռու երկիր
2 մը գնաց։ Ու տունին ծառայ մը խրկեց մշակնե-
րուն, որ ան մշակներէն պտուղէն առնէ։
3 Եւ անոնք բռնեցին՝ ծեծեցին անիկա, ու պարապ
4 ձեռքով ետ։ Նորէն ուրիշ ծառայ մը խրկեց ա-
նոնց, և անոր գլուխը պատռեցին՝ ու անարգված
5 ետ դարձուցին։ Ու նորէն ուրիշ մը խրկեց՝ ու
անիկա մեռցուցին. և շատ ուրիշներն ալ՝ որը կը-
6 ծեծէին և որը կըսպաննէին։ Ան երջը սիրելի որ-
դի մը ունէր, անիկա խրկեց անոնց ետքը՝ ու
7 ըսաւ. Կամչեան իմ որդիէս։ Ուայ մը-

չակները երբոր տեսան անիկա՝ որ կուգար , բոլոր
իրարու . Նայիկա է ժառանգը , եկէք մեզուննք
սա , և ժառանգութիւնը մերը ըլլայ : Եւ բռնե- 8
ցին անիկա՝ մեզուցին , և այգիէն դուրս հանե-
ցին : Ուստի այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ . պիտի 9
գայ՝ ու կորսընցուներ մշակները , և այգին ուրիշ-
ներուն ձեռքը պիտի տայ : Եւ ան գիրը չէք մի 10
կարդացեր զոր , Թէ՝ Ան քարը՝ որ շինողները
բանի տեղ չէ դրին , անիկա եղաւ անկիւնի
գլուխ : Այսիկա Տէրոջմէն եղաւ , և մեր աչքե- 11
րուն զարմանալի է :

Եւ կուզէին անիկա բռնել , բայց ժողովուր- 12
դէն վախցան . ինչու որ՝ գիտցան որ ան առակը
իրենց ըսաւ , և ինքը ձգելցին ու գացին :

Եւ փարիսեցիներէն ու Հերովդեսեաններէն 13
քանի մը հոգի խրկեցին իրեն , որ խօսքով բռնեն
անիկա : Եւ անոնք եկան խաբէութիւնով կը- 14
հարցունէին անոր ու կըսէին . Ո՛վ վարդապետ՝ գի-
տենք որ ճշմարիտ ես , և մէկէ մը հոգ չունիս .
ինչու որ մարդու երեսպաշտութիւն չես ըներ ,
հապա ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան կը-
սորվեցունես . ուստի ըսէ մեզի , Կայսերին տուրք
տալ օրինաւո՞ր է Թէ չէ . տա՞նք՝ Թէ չի տանք :
Ու Յիսուս գիտցաւ անոնց կեղծաւորութիւնը , 15
ըսաւ անոնց . Կ՚ինձ՝ աւորնե՞ր իս ինչու կ՚փորձէք ,
բերէք ինծի մէկ դահեկան մը որ տեսնամ : Եւ 16
անոնք բերին , ու ըսաւ անոնց . Որի՞ է աս պատ-
կերը՝ կամ՝ գիրը . և անոնք ըսին իրեն . Կայս-
րին : Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ ա- 17
նոնց . Կայսրէն որ կայսրին է՝ Կայսրին տուէք ,
և ան որ Աստուծոյ է՝ Աստուծոյ տուէք . ու զար-
մացան իրեն վրայ :

Ապուկեցիները եկան իրեն որ կըսեն Թէ , 18
Յարութիւն չի կայ . կը հարցունէին իրեն՝ և կը-
սէին : Ո՛վ վարդապետ՝ Մովսես մեզի գրեց , Թէ 19
որ մէկուն ղբայրը մեռնի՝ ու կնիկը ձգէ և զա-

ւսակ չի ձրգէ նէ , իր եղբայրը անոր կնիկը պիտի
20 առնէ , և իր եղբօրը զաւակ հանէ : Ուստի մէր
քովը եօթը եղբայր կային , առաջինը կնիկ առաւ՝
21 ու մեռաւ՝ և զաւակ չի ձրգեց : Եւ երկրորդը
առաւ անիկա՝ ու մեռաւ , և ան ալ զաւակ չի
22 ձրգեց · անանկ երրորդն ալ առաւ անիկա : Ու
եօթն ալ , և զաւակ չի ձգեցին · ամենէն ետքը
23 կնիկն ալ մեռաւ : Հիմա յարութեան առնեը՝
երբոր յարութիւն առնեն , անոնցմէ որո՞ն կնիկ
պիտի ըլլայ ան · ինչու որ եօթն ալ անիկա կնիկ
24 ունեցան : Պատասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ
անոնց · Ասոր համար չէ՞ որ կը սխալիք · որ ոչ
գիրքը գիտէք , և ոչ Աստուծոյ զօրութիւ-
25 նը : Ինչու որ երբ մեռելներէն յարութիւն առ-
նեն , ոչ էրիկ մարդիկ կնիկ կառնեն , և ոչ կնիկ-
ները էրիկ կառնեն · հապա երկինքի հրեշտակնե-
26 րուն պէս են : Իսկ մեռելներուն յարութեանը
համար՝ մէկ յարութիւն կառնեն , Մովսէսին
գիրքին մէջը չէ՞ մի կարդացեր մորենիին վրայ ·
Աստուած անոր ի՞նչպէս ըսաւ · Ես եմ ըսաւ՝ Աբ-
րահամին Աստուածը , ու Սահակին Աստուածը ,
27 և Յակոբին Աստուածը : Եւ ան մեռելներուն
Աստուած չէ՝ հապա կենդանիներուն · դուք
ուրեմն՝ շատ մոլորեալ էք :
28 Ու կարգացողին մէկը եկաւ մոտի կըսէր անոնց
երբոր վիճաբանութիւն կընէին · երբոր տեսաւ
թէ աղէկ պատասխան տուաւ անոնց , հարցուց
անոր՝ ու ըսաւ · Առաջին պատուիրանքը ո՞րն է :
29 Եւ Յիսուս ըսաւ անոր · Մինէն առաջինը է ով
Իսրայէլ , մեր Տէր Աստուածը՝ մէկ Տէր մըն է ·
30 և պիտի սիրես քու Տէր Աստուածդ քու բոլոր
սիրտէդ , և քու բոլոր անձէդ , և քու բոլոր մտա-
քէդ , և քու բոլոր զօրութենէդ · ասիկա է առա-
31 ջին պատուիրանքը : Ու երկրորդը ասոր պէս ·
Քու ընկերդ քու անձիդ պէս պիտի սիրես · ա-
32 ւելցնէ մեծ՝ ուրիշ պատուիրանք չի կայ : Ու

կարդացողը բաւ իրեն , Պինտ աղէկ ալ ա՛րդապետ՝
շիտակ խօսեցար , թէ Աստուած մէկ է և անկէց
չի գար ուրիշը չի կայ ։ Եւ բոլոր սիրտէ , ու բո- 33
լոր զօրութենէ , և բոլոր միտքէ անիկա սիրելը ու
ընկերը անձին պէս սիրելը՝ ողջակէզներէն և զո-
հերէն էվել է ։ Եւ Յիսուս տեսաւ որ խելացու- 34
թիւնով պատասխան տուաւ , բսաւ անոր ։ Դա-
ւաճօղ թագաւորութիւնէն հեռու չես ։ և ալ
ուրիշ մէկը չէր համարձակեր բան մը հարցու-
նել անոր ։

Պատասխան տուաւ Յիսուս՝ ու բսաւ , երբոր 35
տաճարին մէջ կըսորվեցնէր ։ Կարդացողները
ինտո՞ր կրսեն թէ՝ Քրիստոս Դաւիթի որդին է ։
Ու Դաւիթ ինքը Հոգւով Սրբով կրսէ ։ Տէրը 36
իմ Տէրոջս բսաւ , Նստէ իմ աջ կողմն մինչև
որ քու թշնամիներդ քու ոտքիդ պատուանդան
ընեմ ։ Ուրեմն թէ որ Դաւիթ ինքը անոր Տէր 37
կըկանչէ , ինչպես անոր որդին կրլլայ ։ և շատ
ժողովուրդ քաղցրութեամբ մտիկ կրնէր անոր ։

Եւ կրսէր սորվեցնելով իր վարդապետու- 38
թեանը մէջ ։ Զգոյշ կեցէք կարդացողներէն , որ
կուզեն փառաւոր լաթերով պտրտիլ , ու շուկա-
ներուն մէջ առչի բարեւները կրսիրատեն , և ա- 39
ռաջին աթոռները ժողովարաններուն մէջ , ու
դլխաւոր տեղերը ընթրիքներու մէջ ։ Որոնք որ- 40
և բնաբներուն տուները կուտեն , պատճառներով
աղօթքը կերկրնցնեն , որ ասոնք ալ աւելի դա-
տապարտութիւն պիտի ընդունին ։

Յիսուս գանձանակին դիմացը կայնէր՝ կընայէր 41
թէ ինտո՞ր ժողովուրդը գանձանակին մէջը տակ
կրձգէ ։ և շատ հարուստներ շատ բան ձգեցին ։
Ա՛ւէկ որբևայրի կնիկ մը եկաւ՝ և երկու լմայ 42
ձգեց , որ մէկ նաբարակիտ մը կընէ ։ Ու աչա- 43
կերտները իրեն կանչեց՝ և բսաւ անոնց ։ Ճշմա-
րիտ կրսեմ ձեզի՝ որ ան խեղճ որբևայրին գան-
ձանակը ասոնք ձգողներուն ամէնէն էվել ձրգեց ։

44 Ինչու որ՝ ամէնը իրենց էվկլցածէն ձգեցին , բայց
անիկա իր աղքատութենէն ունեցածին բոլորը
ձգեց՝ իր ունեցած ապրուստը եւ :

ԴԱՆ · Ի·Ի· :

1 Ա եր բոլոր տաճարէն դուրս ելաւ՝ իր աշակերտ-
ներէն մէկը ըսաւ իրեն . Վարդապետ՝ նայէ
2 ինծի քարերը են , և ի՞նչ չէնքեր : Պա-
տասխան տուաւ անոր Յիսուս՝ ու ըսաւ . Կըտես-
նա՞ ատ ամէն չէնքերը . ճշմարիտ կըսեմ ձեզի ,
որ քար մը քարի վրայ չի պիտի մնայ հոն՝ որ չի
քակվի :
3 Եւ երբոր Ձիթենեաց լեռը տաճարին դիմացը
ինքը նստեր էր , Պետրոսը ու Յակոբոսը և Յո-
հաննէսը ու Անդրէասը զարցուցին իրեն առանձ-
4 ին : Ըսէ մեզի՝ երբ պիտի ըլլայ ատիկա , և ի՞նչ
է նշանը՝ ատ ամէն բաները կատարվելու ատե-
5 նին : Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ ա-
6 նոնց . Զգոյշ կեցէք , մէկը ձեզ չի խաբէ : Ին-
չու որ շատերը պիտի գան իմ անունովս , և ըսեն
թէ Ես եմ Քրիստոսը . ու շատերը պիտի մոլոր-
7 ցունեն : Ասյց երբոր լսէք պատերազմներ՝ և պա-
տերազմներու ձայները , մի՛ շփոթիք . ինչու որ
8 պէտք է ըլլալ , բայց տակաւին վերջը չէ : Ինչու
որ՝ ազգ ազգի վրայ պիտի ելլայ , և թագաւորու-
թիւն թագաւորութեան վրայ . ու տեղ տեղ
երկրաշարժութիւններ պիտի ըլլայ , սովեր՝ և
մահտարաժամներ՝ և իրարանցումներ . բայց ան
9 ամէնը՝ ցաւերուն սկիզբն է : Եւ ձեզ ալ ատեան-
ներու պիտի մատնեն , ու ժողովարաններուն մէջը
պիտի տանջվիք , ու դատաւորներու և թագա-
ւորներու առջև պիտի կենաք ինծի համար անոնց
10 վկայութիւն ընելու , և բոլոր ազգերուն . բայց
11 առաջ պէտք է աս աւետարանս քարոզ վի : Ասյց
երբոր ձեզ մատնելու տանին , առաջուց հոգ մի
ընէք՝ և մի՛ մտմտաք , թէ ինչ պիտի խօսիք . հա-

պա ան ժամուն ինչ որ ձեզի տըրվի նէ՝ անիկա
խօսեցէք · ինչու որ չէ թէ դուք էք որ կը խօսիք ,
Հապա Հոգին Սուրբ ։ Եղբայր եղբայրը մեռնե՝12
լու պիտի մատնէ , ու Հայրը՝ որդին · և որդիք
Հայրերուն վրայ պիտի ելլան , ու պիտի սպաննեն
անոնք ։ Եւ իմ անունիս Համար ամենուն ատելի13
պիտի ըլլաք · բայց ան՝ որ մինչև վերջը կը Համբե՜
րէ , ինքը պիտի ապրի ։ Եւ երբոր կըտեսնաք14
աւերմունքին պղծութիւնը , որ ասիժան չեղած
անդը պիտի կենայ · (ան որ կը կարդայ՝ թող Հաս՜
կընայ ·) անատեները անոնք որ Հրէաստանի մէջն են՝
լեռները թող փախչին · և ան որ տանիսին վրայ15
է՝ թող տուն չիջնայ , ու չի մտնայ իր տունէն
բան մը վերցունելու · և ան որ արտն է՝ թող ետ16
չդառնայ իր լաթերը առնելու ։ Բայց վայ ծոց՝17
մերներուն և ծիծ տըվողներուն ան օրերը ։ Բա՜18
ղօթք ըրէք՝ որ ձմեռը չըլլայ անիկա ։ Ան օրերը19
անանկ նեղութիւններ պիտի ըլլայ , որ արարա՜
ծոց սկիզբէն մինչև հիմայ անանկը ոչ եղան՝ ու
ոչ ալ պիտի ըլլայ ։ Եւ թէ որ Հաստատած իր20
ընտրեալներուն Համար ան օրերը չի կարճցու՜
նէր , մէկ մարմին մը չի պիտի ապրէր · բայց ընտ՜
րեալներուն Համար՝ որոնք ընտրեց , ան օրերը
կարճցուց ։ Հետևեալը թէ որ ձեզի մէկը ըսէ21
թէ՝ Հա հոս է Քրիստոս՝ կամ անա հոն , մի՛
Հաւատաք ։ Ինչու որ՝ սուտ քրիստոսներ և սուտ22
մարգարէներ պիտի ելլան , ու նշաններ և հրաշք՜
ներ պիտի ցուցընեն մոլորցունելու Համար՝ թէ որ
կարելի է , ընտրեալներն ալ ։ Բայց դուք զգոյշ 23
կեցէք , ահա առաջուց բոլ ձեզի ամէնը ։
Բայց ան օրերը ան նեղութիւններէն ետև՝ ա՜24
րեւը պիտի խաւարի , և լուսինը իր լոյսը չի պիտի
տայ · ու երկինքէն աստղերը պիտի թափին , և25
երկինքի մէջ զօրութիւնները պիտի շարժըվին ։
Եւ անատեները պիտի տեսնան Որդին մարդոյ ամ՜26
պերով եկած , ու զօրութիւնով՝ և մեծ փառքով ։

27 Եւ անատեները իր հրեշտակները պիտի խրկէ , ու
իր ընտրեալները պիտի ժողվէ չորս հովերէն՝
28 երկրի ծայրէն մինչև երկինքի ծայրը : Ուստի
դուք թուզին ծառէն առակ մը սորվեցէք . երբոր
անոր ճիւղերը դեռ կակուղ են՝ և վրան տերև-
ներ դուրս կուտայ , կը գիտնաք որ ամառը մօտ
29 է . ասոր պէս ալ դուք՝ երբոր կը տեսնաք աս ամէն
բաները եղած , գիտցէք որ մօտ է դուռներուն
30 քով : Ճշմարիտ կըսեմ ձեզի , որ Այս ազգը պի-
31 տի չանցնի մինչև աս ամէն բաները ըլլայ : Եր-
կինք ու երկիր պիտի անցնին , և իմ խօսքերս պի-
32 տի չանցնին : Այն թէ ան օրուանը ու ժամուն
համար մարդ չէ գիտեր , ոչ հրեշտակները եր-
կինքի մէջ , և ոչ Որդին , հապա միայն Հայրը :
33 Զգոյշ կեցէք , արթնութիւն ընեցէք , և աղօթք ըրէք .
34 ինչու որ չէք գիտեր ատենը երբ է : Ինչպէս հե-
ռու աշխարհ գացող մարդ մը իր տուները ձգող ,
ու իշխանութիւն տայ իր ծառաներուն , և ամէն
մէկուն իրեն գործը . ու դռնապանին ապրպոր-
35 ըէ որ արթնութիւն կենայ : Արթնութիւն կեցէք .
ինչու որ՝ չէք գիտեր թէ երբ կուգայ տունին
տէրը , իրիկունը՝ թէ կէս գիշերին՝ թէ հաւա-
36 խօսքին՝ թէ առաւօտուն . չըլլայ որ յանկարծ մը
37 գայ՝ ձեզ քունին մէջ գտնայ : Ինչ որ կը-
սեմ՝ ամէնուն կըսեմ՝ արթնութիւն կեցէք :

ԴԱ . ԺԴ :

1 Ապէ երկու օրէն եռանկ զատիկ ու բաղարջակերք
էր . քահանայապետները և կարդացողները
կուզէին՝ թէ ինչպէս հնարքով մը անիկա բռնեն
2 սպաննեն : Ինչ կըսէին թէ Այս տօնին մէջ չէ ,
որ ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ :
3 Եւ երբոր ինքը Բեթանիա էր բորոտ Սիմոնին
տունը սեղան նըստած , կինկ մը եկաւ՝ որ շիշ մը
պատուական սուրբ նարդոսի եղ ունէր . ու կոտ-
4 րեց ան շիշը՝ անոր գլխուն վրայ թափեց : Եւ

աշակերտները չարացան՝ ու կըսէին . Ինչո՞ւ հա-
մար ոչինչ տեղը գնաց ատ ելը ։ Որ իրեք հարիւր 5
դահեկանէն էվել կրնար ծախվիլ ատ ելը , ու
աղքատներուն տրվիլ . և խիստ կըբարկանային
անոր ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց . Թո՛ղ տուէք 6
ատոր . ինչո՞ւ անհանգիստ կընէք . ինչու որ բարի
գործ մը գործեց ատիկա ինձի ։ Աղքատները ա- 7
մէն ատեն ձեր հետը ունիք , և երբոր ուզէք՝
կրնաք բարի ընել անոնց . բայց իս ամէն ատեն
ձեր հետը չունիք ։ Ատիկա ինչ որ ունէր նէ՝ ը- 8
րաւ . առաջուց իմ մարմինս օծեց՝ պատանքվելու
նշան ։ Ա՛շմարիտ կըսեմ ձեզի , Ո՛րտեղ որ աշխարհի 9
մէջ՝ ուր որ աս աւետարանը քարոզվի , ատոր
ըրածն ալ պիտի խօսվի՝ ինքը յիշելու համար ։

Եւ Յուդա Իսկարիովտացի տասներկուքին 10
մէկը՝ գնաց քահանայապետներուն , որ անիկա
մատնէ անոնց ։ Անոնք երբոր լսեցին՝ խնդացին , 11
ու իրեն ոսկի տալ խոստացան . և կուզէր՝ թէ
ինչպէս պատեհութիւնով մը մատնէ ։

Ու բաղարջակերքին առջի օրը՝ որ զատիկը կը- 12
մորթէին , աշակերտները ըսին իրեն . Ո՞ւր կուզես
երթանք պատրաստենք՝ որ զատիկը ուտես ։ Եւ 13
ինքը աշակերտներէն երկուքը խրկեց , ու ըսաւ
անոնց . Գացէք քաղաքը , ու երբոր քաղաքը կը-
մտնաք՝ մէկ մարդ մը կըպատահի ձեզի , որ ուսին
վրայ ջուրի ման ունի . գացէք անոր ետևէն ։
Եւ ո՛ր տունը որ մտնայ , տունին տէրոջը ըսէք . 14
Վարդապետը կըսէ , Ո՞ւր է հիւրանոցը՝ որ հոն
աշակերտներովս զատիկը ուտեմ ։ Ան ալ ձեզի 15
զարդարված մեծ վերնատուն մը կըցուցընէ . հոն
պատրաստեցէք մեզի ։ Եւ իր աշակերտները գա- 16
ցին պատրաստելու . քաղաքը եկան , ու ինչպէս որ
իրենց ըսաւ նէ՝ գտան . և զատիկը պատրաստե-
ցին ։

Եւ երբոր իրիկուն եղաւ՝ տասներկուքին հետ 17
մէկ տեղ եկաւ ։ Ու երբոր նստեցան՝ և կուտէին , 18

ըսաւ Յիսուս . Ա՛շմարիտ կըսեմ ձեզի , որ ձեզմէ մէկը իս պիտի մատնէ , որ իմ հետս կուտէկոր :
19 Եւ անոնք սկսեցին տրտմել՝ ու ամէն մէկը ըսել , Միթէ ես եմ մի . և մէկալը՝ միթէ ես եմ մի :
20 Նորա պատասխան տուաւ՝ և ըսաւ անոնց , Ա՛ն տասներկուքէդ մէկը՝ որ ինծի հետ իր ձեռքը պը-
21 նակը խօթեց : Որդին մարդոյ պիտի երթայ՝ ինչպէս որ գրված է անոր համար . բայց վայ այն մարդուն՝ որուն ձեռքովը Որդին մարդոյ պիտի մատնըվի . աղէկ էր անոր՝ որ ծնած ալ չըլլար այն մարդը :
22 Եւ դեռ որ կուտէին՝ Յիսուս հաց առաւ , օրհնեց ու կոտրեց՝ տըւաւ անոնց , և ըսաւ . Առէք՝ առէք . սա մարմինս է :
23 Եւ գաւաթը առաւ , գոհացաւ՝ ու տըւաւ անոնց . և ամէնն ալ անկից խմեցին :
24 Ու ըսաւ անոնց . Ա՛յս է իմ արիւնս նոր ուխտի , որ շատերուն համար կըթափվի :
25 Ա՛շմարիտ կըսեմ ձեզի , որ՝ մէյմալ որթին պտուղէն չի պիտի խմեմ մինչև այն օրը՝ երբոր անիկա նոր խմեմ Աստուծոյ թագաւորութեան մէջը :
26 Եւ գոհացան՝ ելան ձիթենեաց լեռը :
27 Եւ Յիսուս ըսաւ անոնց . Ա՛մէնքդ ալ ասս գիշեր ինծմէ պիտի գայթակղիք . ինչու որ գրված է , Թէ՝ Հովիւը պիտի զարնեմ , ու ոչխարները ցիրուցան պիտի ըլլան :
28 Բայց յարութենէն առնելէս ետքը
29 ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ : Պատասխան տըւաւ Պետրոս՝ և ըսաւ անոր . Թէպէտ
30 ամէնն ալ գայթակղին , բայց ես չէ : Եւ Յիսուս ըսաւ անոր . Ա՛շմարիտ կըսեմ քեզի՝ որ դուն այս գիշեր հաւը երկու անգամ չի խօսած , իրիք
31 հեղ պիտի ուրանաս իս : Բայց Պետրոս էվելըք պնտա կսցեր էր՝ ու կըսէր . Թէ որ քեզի հետ մեռնելու ալ հանիմ՝ քեզ չեմ ուրանար . ասանկ ամէնն ալ կըսէին :
32 Եկաւ ան գեղը՝ որուն անունը Գեթսեմանի էր , և ըսաւ աշակերտներուն . Հոս նստեցէք , մինչև

որ ես աղօթք ընեմ ։ Եւ առաւ իր հետը Պետրոսը՝ ու Յակոբոսը՝ և Յովհաննէսը՝ ու սկսեց 33
արհամարհել և հոգալ ։ Ինքնանը ըսաւ անոնց . Իմ 34
անձիս մեռնելու չափ արտասո՛ւմ է . հոս կեցէ՛ք՝ և արթուն մնացէ՛ք ։ Ու քիչ մը առաջ գնաց , իր 35
երեսին վրայ գետինը ինկաւ և աղօթք ըրաւ , որ եթէ կարելի է՝ ան ժամը իրմէն անցնի ։ Եւ ըսաւ . 36
Աբբայ՝ Հա՛յր , ամէն բան քեզի հնարաւոր է , ահա գաւաթը ինծմէ անցուր . բայց ես թէ ինչպես ես կուզեմ՝ հապա՝ ինչպես որ դուն կրկամիս ։
Ու եկաւ գտաւ անոնք՝ որ կրբնանային , և ըսաւ 37
Պետրոսին . Սիմո՛ն կրբնանա՞ս՝ չի կրցար ժամ մը արթուն կենալ ։ Արթուն կեցէ՛ք և աղօթք ըրէ՛ք , 38
որ փորձութեան մէջ չի մտնաք . հոգիս յօժար է , բայց մարմինս տկար ։ Եւ նորէն գնաց աղօթք 39
ըրաւ , ու նոյն խօսքերը ըսաւ ։ Ա՛ էմյամ նորէն 40
դարձաւ , և անոնք քունի մէջ գտաւ . (ինչու որ աչքերնին ծանրըցած էր ,) և չէին գիտեր թէ ինչ պատասխան տան իրեն ։ Երրորդ անգամ 41
եկաւ՝ ու ըսաւ անոնց , Ա՛սկէ ետև քնացէ՛ք ու հանդչեցէ՛ք . ինչու որ վերջը հասաւ , եկաւ ժամը , և ահա Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը կրմատնուի՛ւ ։ Ելէ՛ք երթանք . ինչու որ՝ ահա մո- 42
տեցաւ ան որ իս պիտի մատնէ ։
Եւ դեռ որ ինքը ան կրխօսէր՝ Յուդա Իսկա- 43
րիովտացի տասներկուքին մէկը եկաւ , ու իր հետը շատ բազմութիւն սուրերով ու բիւրերով քահանայապետներէն և կարգացողներէն ու ծերերէն ։ Մատնիչը նշան մը տուած էր՝ ու ըսեր 44
էր , Ո՛վ որ ես համբուրեմ՝ ան է , բռնեցէ՛ք ա- նիկա և զգուշութեամբ տարէ՛ք ։ Եւ շուտ մը 45
գնաց անոր ըսաւ , Ռաբբի Ռաբբի . ու համբու- րեց անիկա ։ Եւ անոնք ձեռք ձգեցին անոր՝ ու 46
բռնեցին անիկա ։ Եւ իրեն քով կայնողներուն 47
մէկը սուրը ձգեց զարկաւ քահանայապետին ծա- ռային , ու անոր ականջը մէկ դի Հանեց ։ Պատաս- 48

խան տալաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց. Իբր թէ գողի վրայ ելած սուրերով ու բիլուերով ինծի բռնե-
49 լու։ Ամէն առեն ձեր քովն էի, ու տաճարին մէջ կուսուցանէի՝ և ինծի չբռնեցիք. բայց որ
50 մարգարէներուն գիրքերը կատարվին։ Անոնք ամէնը թողլուցին անիկա՝ ու
51 փախան։ Եւ մէկ երիտասարդ մը անոր ետևէն կերթար՝ մերկ մարմինին վրայ կտաւ մը առած,
52 երիտասարդները անիկա բռնեցին։ Ան ալ կտաւը թողլուց՝ մերկ անոնցմէ փախաւ։
53 Ու տարին Յիսուս Կայիափա քահանայապե-
54 տին. և անոր հետ կուգային բոլոր քահանայա-
պետները ու կարգացողները և ծերերը։ Ու
Պետրոս հեռվանց անոր ետևէն կերթար՝ մին-
չև բուն ներսը քահանայապետին բակը, և սպաս-
սաւորներուն հետ նստաւ, ու լուսոյն կը-
55 տաքնար։ Եւ քահանայապետները ու բոլոր
ատեանը Յիսուսի դէմ վկայութիւն կըփնտռէին
56 որ զինքը սպաննեն, և չէին գտներ. ինչու որ շատ
սուտ վկայութիւն կըվկայէին անոր վրայ, ու վը-
57 կայութիւնները իրարու նման չէին։ Ուրիշները
ելան սուտ վկայութիւն կընէին անոր վրայ՝ ու
58 կըսէին, Մենք լսեցինք ատկէ՝ որ կըսէր, Ես
սա ձեռագործ տաճարը պիտի քակեմ՝ և իրեք
աւուր մէջը ուրիշ մը պիտի շինեմ անձեռագործ։
59 Բայց անանկ ալ իրենց վկայութիւնը նման չէր։
60 Ու երջը քահանայապետը եղաւ մէջ տեղը կայնե-
ցաւ կըհարցուներ Յիսուսին, ու կըսէր. Պա-
տասխան չես իտար, ինչ կըվկայեն ատոնք քու
61 վրադ։ Բայց ան միայն լուռ կեցեր էր, և բան
մը պատասխան չէր իտար. քահանայապետը նո-
րէն երկրորդ անգամ կըհարցուներ անոր՝ ու կը-
սէր. Մէնն ես Քրիստոս՝ Օրհնեալ Աստուծոյ
62 Որդին։ Պատասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ
անոր. Մէնն ըսիր որ ես եմ. բայց պիտի տեսնաք
Որդին մարդոյ զօրութեան աջ կողմը նստած՝ ու

երկինքի ամպերովը եկած ։ Եւ քահանայապետը 63
շուռ մը իր կապան պատռեց՝ ու ըսաւ . Ալ ինչ
պէտք է մեզի վկաներ ։ Ա՛յս ամէնքդ ալ լսեցիք 64
հայհոյութիւնը ատոր բերնէն . ինծո՞ր կերեւայ
ձեզի . և ամէնքը դատապարտեցին անիկա թէ
մահապարտ է ։
Եւ ոմանք սկսեցին թուքնել անոր երեսը , 65
գլուխն ալ ծայր լաթ ձգել՝ բռունցքով ծեծել և ը-
սել , Մարգարէացիր մեզի՝ ով Քրիստոս , ո՞վ է
ան որ քեզի զարկաւ . ու սպասաւորները ապտակ
կըզարնէին անոր ։
Եւ Պետրոս դեռ վարը գաւիթին էր , քահա- 66
նայապետին մէկ աղջիկ ծառան եկաւ , ու տեսաւ 67
անիկա որ կըտաքնար՝ նայեցաւ անոր և ըսաւ .
Դուն ալ Յիսուս Նազովրեցիին հետ էիր ։ Ընդ- 68
կա ուրացաւ ու ըսաւ . Չեմ ճանչնար և չեմ
գիտեր՝ դուն ինչ կըխօսիս . ու երբոր դուրսի բա-
կը ելաւ՝ հաւն ալ խօսեցաւ ։
Աղջիկ ծառան նորէն տեսաւ անիկա՝ ու սկը- 69
սաւ բոլորտիքը կայնողներուն ըսել , Թէ Այս ալ
անոնցմէ է . Եւ ան նորէն ուրացաւ ։ 70
Եւ քիչ մը ատենէն հետը նորէն բոլորտիքը
կայնողները ըսին Պետրոսին . Իրաւցունէ դուն
ալ անոնցմէ ես . ինչու որ Գալիլեացի ես , և քու
խօսքդ ալ նման է անոնց ։ Ա՛յց անիկա սկսեց 71
անէծք տալ՝ երդում ընել , Թէ Ես ան
մարդը չեմ ճանչնար , որուն համար որ դուք կըսէք ։
Եւ նոյն ժամուն երկրորդ անգամ հաւսեցաւ հա- 72
ւը . ու Պետրոս միտքը բերաւ ան խօսքը՝ որ Յի-
սուս իրեն ըսաւ , Թէ Դեռ հաւը երկու անգամ
չի հաւսած՝ դուն իրիք անգամ պիտի ուրանաս խո-
ւ սկսեց լալ ։

ԻԵ ։

Եւ առտուընց շուտ մը քահանայապետները 1
ծերերուն և կարգացողներուն հետ՝ ու բոլոր

ժողովքն ալ խորհուրդ ըրին , Յիսուսը կապե-
2ցին՝ ու տարին մատնեցին Պիղատոսին : Պիղատոս
հարցուց անոր՝ և ըսաւ . Դուն ես Հրեաներուն
թագաւորը . անիկա պատասխան տուաւ անոր՝ և
3ըսաւ , Դուն կըսեկոր : Եւ քահանայապետները
զզպարտութիւն կրնէին անոր վրայ . բայց ան
4բան մը պատասխան չէր իսար : Պիղատոս նո-
րէն հարցուց անոր՝ ու ըսաւ . Պատասխան չես ի-
տար , նայէ որչափ բաներ քու վրադ կրխօսինկոր :
5Եւ Յիսուս անկէ ետև բան մը պատասխան չի
տրուաւ , մինչև որ շատ զարմացաւ Պիղատոս :
6 Ինչպէս ան ամէնին կապված մը կարձրկէր անոնց ,
7ով որ իրենք կուզէին : Եւ մէկը կար որուն ա-
նունը Բարաբբա էր՝ խռովարարներուն հետը
կապված , որ անոնց խռովութեան ատենը մարդ
8մը սպաններ էր : Ակըսեց ժողովուրդը բարձր
ձայնով կանչել՝ ու խնդրել ինչպէս որ սովորու-
թիւն ունէր , որ Բարաբբան ըզդ տայ իրենց :
9Պատասխան տուաւ Պիղատոս՝ ու ըսաւ անոնց ,
Կուզէք որ Հրեաներուն թագաւորը արձրկեմ
10ձեզի : Ինչու որ գիտէր թէ քահանայապետները
11նախանձութեան համար անիկա մատնեցին . Ա-
րոնք ժողովուրդն ալ հաւանեցուցին՝ որ Բարաբ-
12բան իրենց արձրկէ : Կորէն Պիղատոս պատաս-
խան տուաւ՝ ու ըսաւ անոնց . Հապա Հրեաներ-
13րուն թագաւորին ինչ կուզէք որ ընեմ : Դար
անոնք նորէն կրկանչէին քահանայապետներէն
14դրգռված , Խաչը հանէ տիկա : Պիղատոս ըսաւ
անոնց . Ինչ՝ ինչ չար գործ ըրած է ան . և
անոնք ալ էվելըք կրկանչ վրառէին՝ ու կըսէին ,
15Խաչը հանէ անիկա : Եւ Պիղատոս երբոր ուզեց
ժողովուրդին միտքը հաճեցուցնել՝ Բարաբբան
արձրկեց իրենց , ու Յիսուսը ծեծելով ձեռք տը-
ւաւ որ խաչվի :
16 Եւ զինուորները տարին անիկա ներսի բակը ,
ուր որ մեծ ատեանն էր . և բոլոր գունդը ժկ

տեղ կանչեցին · ու հագցուցին իրեն կարմիր վե- 17
րարկու և ծիրանիներ , և անոր գլուխը թագ մը
դրին՝ փուշերէ շինված : Ու սկսեցին բարև 18
տալ իրեն և ըսել , Ողջ կեցիր՝ ով թագաւոր
Հրէից : Ու գլուխը եղեգով կը ծեծէին , և երե 19
սը կը թքուտքնէին , ու ծունկի վրայ եկած երկիր-
պագութիւն կընէին իրեն : Եւ երբոր ծաղր ըրին 20
անոր՝ վերարկուն և ծիրանիները վրայէն հան-
ցին՝ ու իր լաթերը հագցուցին իրեն , և դուրս
հանեցին՝ որ զինքը խաչը հանեն :
Ու բռնեցին Սիմոն Կիւրենացին՝ Ալէքսանդ- 21
րին և Ռուփային հայրը , որ անկէց կանցնէր ար-
տէն եկած , որ անոր խաչափայտը վերցունէ : Ու 22
տարին անիկա Golgotha տեղ մը , (որ
կը թարգմանվի՝ Գլուխը կարելու տեղ ·) և լեղիով 23
խառնած գինի տուին իրեն , և ինքը չառաւ · ու
խաչը հանեցին անիկա : Եւ իրեն լաթերը բաժ- 24
նեցին , վրան վիճակ ձգելով՝ թէ ով ինչ պիտի
առնէ : Ժամը իրեքն էր , ու խաչը հանեցին ա- 25
նիկա : Եւ իր յանցանքին գիրը գրված էր , Թէ՝ 26
Հրէից թագաւորն է : Ու անոր հետ երկու 27
գողեր ալ խաչը հանեցին · մէկը անոր աջ դիէն ,
և մէկը անոր ձախ դիէն : Եւ կատարվեցաւ ան 28
գիրը՝ որ կըսէ , Թէ Յանօրէններուն հետ սեպվե-
ցաւ : Եւ անոնք որ կանցնէին կը հայհոյէին անոր՝ 29
գլուխնին շարժելով , ու կըսէին · Վա՛խ՝ որ տա-
ճարը կը քակէիր , և իրեք օրը կը շինէիր · դուն 30
քեզ ապրեցուր՝ ու ատ խաչէն վար իջիր : Նոյնպէս 31
ալ քահանայապետները կարդացողներուն հետ
իրենց մէջը ծաղր ընելով կըսէին · Ուրիշները
ապրեցուց , ինքզինքը չի կրնար ապրեցնել :
Թո Քրիստոսը Իսրայէլի թագաւորը՝ հիմ 32
մայ ատ խաչէն վար իջնայ , որ տեսնանք ու հա-
ւատանք ատոր · և իրեն հետ խաչ եղողները կը-
նախատէին անիկա :
Եւ երբոր ժամը վեց եղաւ , բոլոր երկիր մու- 33

34 թէ պատեց մինչև ինը ժամը : Եւ ժամը իններն
Յիսուս մեծ ձայնով մը կանչեց , ու ըսաւ · Էլի
էլի՝ լամա սաբաքթանի · (որ կը թարգմանվի ,
Աստուած իմ Աստուած իմ՝ ինչո՞ւ ես թողուցիր ·)
35 և անոնցմէ ոմանք որ իր քովը կեցեր էին , երբոր
36 լսեցին՝ կըսէին , Թէ Եղիան կը կանչէկոր : Ու
վազեց մէկը՝ սպունգ մը քացախով լեցուց , ու
եղէգի մը անցուցած իրեն կուտար որ խըմէ , և
ըսաւ · Թո՛ղ տուր նայինք՝ Եղիան կուգա՞ ատիկա
վար իջեցունել :
37 Եւ Յիսուս մեծ ձայնով մը կանչեց , ու հոգին
38 Հանեց : Ու տաճարին վարագոյրը երկուք պատ-
39 ռեցաւ վերէն՝ի վար : Եւ հարիւրապետը որ հոն
կեցեր էր՝ տեսնալով որ կանչեց ու հոգին Հանեց ,
ըսաւ · Ա՛շմարիտ Որդի Աստուծոյ էր ասիկա
40 կայն կիներ ալ՝ որ հեռվանց կը նայէին · որ
անոնց մէջն էր Մարիամ Magdաղենացին , և
Մարիամ պզտիկ Յակոբին ու Յովսէսին մայ-
41 րը , և Սողովմէն · որոնք երբոր Գալիլեա էր՝ իր հետը կրպտրտէին և իրեն սպասաւո-
րութիւն կընէին · և ուրիշ շատ կիներ ալ՝ որ
իր հետը Երուսաղէմ եկեր էին :
42 Եւ երբոր իրիկուն եղաւ , ուրբաթ ըլլալուն
43 համար՝ որ շաբաթը կրմտնար , Յովսէփ Արիմա-
թիացին պարկեշտ խրհրդական մը՝ որ ինքն ալ
Աստուծոյ թագաւորութեանը կսպասէր , եկաւ՝
համարձակութեամբ Պիղատոսին քովը մտաւ , և
44 Յիսուսի մարմինը խնդրեց : Ու Պիղատոս զար-
մացաւ՝ որ անանկ շուտ մեռաւ · և հարիւրապետը
իրեն կանչեց՝ հարցուց անոր ու ըսաւ թէ , Երա-
45 ցունէ անանկ շուտ մեռաւ : Եւ երբոր տղայգի
իմացաւ ան հարիւրապետէն , մարմինը Յովսէփին
46 տըւաւ : Եւ Յովսէփ կտաւ գնեց , ու վար իջե-
ցուց անիկա և կտաւովը փաթթեց , ու դրաւ գե-
րեզմանը՝ որ քարէ փորված էր · ու քար մը գըլ-
47 որցուց գերեզմանին դուռը : Բայց Մարիամ

Ա՝ագդաղենացին , և Ա՝արիամ՝ Յակոբին ու Յովսէսին Հայրը տեսան ան տեղը , ուր որ դրվեցաւ ։

ԳԼ ։ ԺՕ ։

Եւ երբոր շաբաթը անցաւ , Ա՝արիամ Ա՝ագ- 1
դաղենացին և Ա՝արիամ Յակոբին Հայրը՝ և
Մագովմէ գացին խունկերը պատրաստեցին , որ գան
օծեն անիկա ։ Եւ մէկշաբթի առտուընց կանուխ 2
արևը որ կըծագէր՝ եկան գերեզմանը , ու իրա- 3
րու կըսէին ։ Ա՝եղի ան քարը մէ պիտի գըլոր-
ցունէ գերեզմանին դուռնէն ։ (ու նայեցան տես- 4
սան որ՝ գերեզմանէն քարը գրլորած էր) ինչու
որ շատ մեծ էր ։ Եւ ներս գերեզմանը որ մտան , 5
երիտասարդ մը տեսան՝ որ աջ կողմը նստեր էր
ճերմակ կապայ հագած , ու վախցան ։ Եւ անի- 6
կա անոնց ըսաւ ։ Ա՝ի վախնաք դուք ։ Յիսուս
Նազովրեցին կըփնտրէք , որ խաչ եղաւ ։ անիկա
յարուցեր է առաւ , հոս չէ ։ ահա ան տեղը՝ ուր
որ ինքը գրին ։ Ա՝այց գացէք՝ ըսէք իր աշակերտ- 7
ներուն և Պետրոսին , թէ ահա ձեզմէ առաջ
Գալիլեա կերթայ , հոն պիտի տեսնաք անիկա՝
ինտոր որ ձեզի ըսաւ ։ Եւ երբոր լսեցին՝ եկան ու 8
փախան գերեզմանէն ։ ինչու որ՝ շատ վախցեր
էին , և մարդու բան մը չըսին՝ վախնալնուն հա-
մար ։

Յիսուս յարութիւն առած առջի օրը մէկշաբ- 9
թի առտուընց , Ա՝արիամ Ա՝ագդաղենացիին ե-
րևցաւ՝ որ անկէց եօթը դև հաներ էր ։ Եւ անի- 10
կա գնաց անոր հետ եղողներուն պատմեց , երբոր
կուլային՝ ու սուգ կընէին ։ Ա՝նոնք երբոր լսեցին 11
թէ կենդանի է և իրեն ալ երևցաւ , չի հաւա-
տացին ։

Ետքը ուրիշ կերպարանքով արտր գացողնե- 12
րուն երևցաւ ։ Ա՝նոնք գացին ուրիշներուն պատ- 13
մեցին , ու անոնց ալ չի հաւատացին ։

14 Վ երջը՝ երբոր տանըմմկը նստեր էին՝ երևցաւ
անոնց , ու երեսին զարկաւ իրենց անհաւատու-
թիւնը՝ և սրտերնուն կարծրութիւնը՝ որ ինքը
մեռելներէն յարութիւն առնելով երևցաւ անոնց ,
ու անոնք չի հաւատացին :
15 Եւ ըսաւ անոնց · Կացէք բոլոր աշխարհ , և
աւետարանը քարոզեցէք ամէն ստեղծուածներուն :
16 Ան որ հաւատայ ու մկրտվի՝ պիտի փրկվի , և
17 ան որ չի հաւատար՝ պիտի դատապարտվի : Ա-
նոնք որ կը հաւատան՝ ասոնները անոնց հետ
պիտի երթան . Իմ անունովս դևեր պիտի հանեն ,
18 լեզուներ պիտի խօսին . ձեռքերնին օձեր պիտի
բռնեն , և թէ որ մեռցունող դեղեր խմեն՝ իրենց
չի պիտի վնասէ · հիւանդներուն վրայ ձեռք պի-
տի դնեն՝ ու բժշկեն :
19 Եւ Տէր Յիսուս ինքը անոնց հետ խօսելէն
ետքը երկինքը համբարձաւ , ու Աստուծոյ աջ կողմը
20 նստաւ : Եւ անոնք ելան՝ բոլոր երկիր կքարոզէ-
ին Տէրոջը օգնականութիւնովը · ու խօսքը կը-
հաստատէին բոլոր նշաններով՝ որ
իրենց հետը կեր-
թար :

ԵՒՏՐՊՐՆ ՂՍՏ ՂՈՒԿԱՍԻՒ ։

ԳԼ. Ե ։

Որովհետև շատերը ուղեցին նորէն կարգի դնել 1
ան մեր մէջը հաստատուած բաներուն վրայով
եղբ պատմութիւնը · ինչպէս որ աւանդեցին մե- 2
ղի՝ անոնք , որ սկիզբէն աչքով տեսան՝ և սպա-
սաւոր եղան խօսքին : Ես ալ ուղեցի՝ որ սկիզբէն 3
հետէ ան ամէն բաներուն ետևէն գացեր էի ճըշ-
մարտութիւնով , կարգաւ գրել քեզի՝ ով պատ-
ուական Թէոփիլէ · որ դուն աշակերտութիւն 4
ըրած բաներուդ ճշմարտութիւնը իմանաս ։
Հերովդէս Հերովդէս թագաւորին օրերը՝ 5
Աբիային կարգէն Զաքարիա անունով մէկ քա-
հանայ մը կար · և անոր կինիկը Ահարոնի աղջիկ-
ներէն էր , և անոր անունը՝ Եղիսաբեթ : Ու եր- 6
կուքն ալ Աստուծոյ առջևը արդար էին , Տէրոջը
բոլոր պատուիրանքներուն և օրէնքներուն մէջ
անարատ կերթային : Եւ զաւակ չունէին , ինչու 7
որ Եղիսաբեթ ամուլ էր , ու երկուքն ալ օրեր-
նին անցուցեր էին : Եւ երբ եղաւ որ ինքը քա- 8
հանայական պաշտօնը կրկատարէր Աստուծոյ
առջին՝ իրեն կարգին օրերը հասնելուն , քահանայ- 9
ութեան սովորութեանը պէս վիճակը իրեն եկաւ՝
որ Տէրոջը տաճարը մտնայ խնկարկութիւն ընէ :
Եւ բոլոր ժողովուրդին բազմութիւնը դուրսը ա- 10
ղօթքի կայներ էին խունկին ատենը : Ու Տէրոջը 11
հրեշտակը անոր երևցաւ , որ կայներ էր խունկ-

12 կին սեղանին առ կողմը : Եւ Աբրահա երբոր
տեսաւ՝ շփոթեցաւ , ու իր վրայ վախ մը ինկաւ :
13 Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր . Մի՛ վախնար
Աբրահա , ինչու որ քու աղօթքդ լսուեցաւ , և
քու կինդ Եղիսաբեթը որդի մը պիտի ծնանի քե-
14 զի , և անոր անունը Յովհաննէս դնես : Ու քեզի
ուրախութիւն և ցնծութիւն պիտի ըլլայ , և շատերը
15 անոր ծնանելուն վրայ պիտի խնդան . ինչու որ՝
Տէրոջ առջևը մեծ պիտի ըլլայ , ու գինի և օղի
չի պիտի խմէ . ու դեռ իր մօրը փորէն Հոգւով
16 Սրբով պիտի լեցուի : Եւ Իսրայէլի որդոցմէ շա-
տերը իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձունէ :
17 Եւ ինքը անոր առջևէն պիտի գայ Եղիայի հո-
գիովը՝ զօրութիւնովը , հայրերուն սիրտը զաւ-
կներուն վրայ դարձնելու , և անհնազանդնե-
րը՝ արդարներուն իմաստութեանը , Տէրոջը բարե-
18 կարգ ժողովուրդ մը պատրաստելու : Եւ Աբրա-
հա ըսաւ հրեշտակին . Ինծի՞ պիտի գիտնամ ատ
բանը . որովհետև ես ծեր եմ , ու իմ կինս իր
19 օրերը անցուցեր է : Պատասխան տուաւ հրեշ-
տակը և ըսաւ անոր . Ես եմ Գաբրիէլը՝ որ Աս-
տուծոյ առջևը կը կենամ , ու խրկրւեցայ քեզի
20 զրուցելու , և աս աւետիսը քեզի տալու : Եւ ահա
մունջ պիտի ըլլաս դուն , ու չի պիտի կրնաս խո-
սիլ մինչև այն օրը՝ որ ատ բանը ըլլայ . անոր
համար որ իմ խօսքերուս չի հաւատացիր , որ
21 անոնք իրենց ատենին պիտի լցվին : Ու ժողո-
վուրդը Աբրահային կը սպասէր , և կը զարմա-
նային անոր տաճարին մէջ ուշանալուն վրայ :
22 Եւ երբոր ելաւ՝ չէր կրնար խօսիլ անոնց հետ .
ու իմացան որ տաճարին մէջ տեսիլք մը տեսած
է . և ինքը նշանով կը խօսէր անոնց հետ , ու պա-
23 պանձած կեցեր էր : Եւ եղաւ որ երբ անոր պաշ-
24 տօնին օրերը լմընցան՝ գնաց իր տունը : Եւ ան
օրերէն ետքը անոր կինը Եղիսաբեթ ծոցվորցաւ ,
ու հինգ ամիս ինքզինքը կրպահէր՝ և կըսէր

Ի՞նչ բան ըրաւ ինծի Տէրը աս օրերս , որ իմ 25
վրաս նայեցաւ նախատինքս մարդոց մէջէն վեր-
ցունելու ։
Ու վեցերորդ ամսուն մէջը Գաբրիէլ հրեշ- 26
տակը Աստուծմէ խրկուեցաւ Գալիլեացոց մէկ
քաղաքը՝ որուն անունը Նազարէթ էր . մէկ կոյ- 27
սի մը՝ մարդու մը նշանված , որուն անունը Յով-
սեփ էր՝ Դաւիթին տունէն . և ան կոյսին անունը՝
Մարիամ ։ Ու եկաւ անոր ըսաւ . Ուրախացիր 28
դուն բնկերկեալ , Տէրը քու հետդ է ։ Ընիկա 29
ալ աս խօսքերուն վրայ շփոթ վեցաւ , և ինքիրենը
կրմտմտար՝ թէ Ի՞նչպէս բարև պիտի ըլլայ աս ։
Եւ հրեշտակը անոր ըսաւ . Մի՛ վախնար Մա- 30
րիամ՝ , ինչու որ Աստուծմէ շնորհք գտար դուն ։
Եւ ահա պիտի յղանաս , ու որդի պիտի ծնա- 31
նիս , և անոր անունը Յիսուս պիտի դնես ։ Ընի- 32
կա մեծ պիտի ըլլայ , ու Վարձրելոյն Որդի պիտի
ըսվի , և Տէր Աստուած իրեն պիտի տայ անոր
Դաւիթի հօրը աթոռը . ու Յակոբին տանը վրայ
յաւիտեան պիտի թագաւորէ . և անոր թագաւո- 33
րութիւնը վերջ պիտի չունենայ ։ Մարիամ ալ 34
ըսաւ հրեշտակին . Ի՞նչպէս պիտի ըլլայ ատ բա-
նը ինծի , որովհետև ես Էրկի մարդ չեմ գիտեր ։
Պատասխան տուաւ հրեշտակը՝ և ըսաւ անոր . 35
Հոգին Սուրբ պիտի գայ քեզի , ու Վարձրելոյն
զօրութիւնը քու վրադ հովանի պիտի ըլլայ . ին-
չու որ՝ ան որ քեզմէ պիտի ծնանի՝ սուրբ է , ու
Աստուծոյ Որդի պիտի ըսվի ։ Եւ ահա քու ազ- 36
գականդ Եղիսաբէթ անիկա ալ իր պառաւութեան
տարին ծոցովը է . որ աս անոր վեցերորդ ամիսն
է՝ որ ամուլ ըսված էր . ինչու որ Աստուծոյ քով 37
բան մը չի տկարանար ։ Եւ Մարիամ ըսաւ . 38
Ահա ես Էրսոյը Աղախինն եմ . թող ըլլայ ինծի
քու բանիդ պէս . ու հրեշտակը անոր քովէն
գնաց ։
Մարիամ՝ ան օրերը ելաւ՝ ու արտորնօք գնաց 39

40 Հռառնը կողմն Յուդային մեկ քաղաքը։ Եւ մնաւ
Աքարիային տունը, ու Եղիսաբեթին բարև-
41 տուաւ։ Եւ եղաւ որ երբ լսեց Եղիսաբեթ Մա-
րիամին բարևը՝ իր փորին մէջը տղան խաղաց, ու
42 Եղիսաբեթ Հոգւով Սրբով լեցուեցաւ. և բար-
ձրը ձայնով մը կանչեց՝ ու ըսաւ. Կնիկներուն
մէջը օրհնեալ ես դուն, և օրհնեալ է քու փորիդ
43 պտուղը։ Եւ ասա ինծի ուրկից եղաւ՝ որ իմ Տէ-
44 րոջս մայրը ինծի գայ։ Վասն զի ահա երբոր
քու բարևիդ ձայնը ականջիս եկաւ, մանուկը
45 փորիս մէջը խաղաց ուրախութեամբ։ Ու երանէկ
անոր որ կրնաւատայ թէ պիտի կատարուի ան բա-
46 ները՝ որ Տէրոջմէն ըսուեցաւ իրեն։ Եւ Մարիամ
47 ըսաւ. Լեռով իմ անձիս մեծցունէ Տէրը. և իմ
Հոգիս ուրախացաւ իմ Փրկիչ Աստուծոյս վրայ։
48 Ընդու որ իր աղախնին խոնարհութեանը նայե-
ցաւ. որ ահա ասկէ ետև բոլոր ազգերը ինծի
49 երանէկ պիտի տան։ Վասն զի՝ ան որ զօրաւոր է,
ինծի մեծ մեծ բաներ ըրաւ, ու իր անունը սուրբ
50 է։ Եւ անոր ողորմութիւնը իրմէն վախցողնե-
51 րուն վրայ է ազգէ ազգ։ Իր թևին ուժը ցու-
ցուց. ցիրուցան ըրաւ ամբարտաւանները իրենց
52 սիրտերուն մտածմունքներովը։ Ու հզորները ա-
53 թոռունելէն քակեց, ու ցածրերը բարձրացուց։ Ա-
նօթիները բարիքներով լեցուց, և հարուստները
54 դատարկ ետկնց։ Օգնութիւն ըրաւ իր Իսրայ-
էլ ծառային՝ զողորմութիւնները միտք բերելով։
55 Ինչպէս որ խնքը խօսեցաւ մեր Հայրերուն՝ Ա-
բրահամին և անոր զաւակին յաւիտեան։
56 Մարիամ անոր քովը երեք ամիսի չափ կեցաւ,
և իր տունը դարձաւ։
57 Եղիսաբեթին ալ ծնանելու ժամանակները լե-
58 ցաւ, ու տղան ծնաւ։ Եւ լսեցին անոնք որ անոր
քովտանքն էին՝ ու անոր ազգականները, որ Տէ-
րը անոր վրայ իր մեծ ողորմութիւնը ցուցուց. և
անոր հետը ուրախացան։

Եւ եղաւ որ ուԹերորդ օրը եկան տղան ԹլԼ-50
փատելու · և անիկա իր հօրը անունովը Զաքա-
բիա կըկանչէին ։ Պատասխան տուաւ անոր մայ-60
րը՝ ու ըսաւ · Ո՛չ , հապա Յովհաննէս պիտի ըս-
վի ։ Եւ ըսին անոր · Որ քու ազգականներուդ61
մէջ մէկը չի կայ՝ որ անունը Յովհաննէս ըսվի ։
Ուստի կընէին անոր հօրը՝ Թէ ինչ կուզէ կանչել62
անիկա ։ Ան ալ տախտակ մը ուզեց , գրեց ու63
ըսաւ , Յովհաննէս է տուր անունը · և զարմացան
ամենքը ։ Ու բացվեցաւ շուտ մը անոր բերանը և64
անոր լեզուն՝ ու կըխօսէր և կօրհնէր Աստուած ։
Եւ վախ մը ինկաւ ան ամենուն վրայ՝ որոնք որ65
ասոնց կըշրջէին , և անոնք որ անոնց բոլորտիքը կը-
թեակէին · ու բոլոր Հրէաստանի լեռան կողմերը
ամեն ասոնց բաներուն կըզրուցվէին ։ Եւ ան ամենքը66
որ կըլսէին՝ իրենց սրտերնուն մէջը դրին , ու ը-
սին · Ա՛ս տղան ի՞նչ պիտի ըլլայ · ու Տէրոջը ձեռ-
քը անոր հետն էր ։

Եւ անոր հայրը Զաքարիան Հոգւով Սրբով67
լեցվեցաւ , մարգարէացաւ ու ըսաւ ։ Օրհնեա՜լ68
է Իսրայէլի Տէր Աստուածը , որ մեզի այցելու-
թեան եկաւ , և իր ժողովուրդին փրկութիւն
բըսաւ ։ Ու մեզի փրկութեան եղջիւր մը հանեց69
իր Ծառեթ Դաւթի տունէն , (ինչպես որ սուր-70
բերուն բերնովը խօսեցաւ , որոնք որ աշխարհի
սկիզբէն հետէ անոր մարգարէներն էին) փրկու-71
թիւն մեր թշնամիներէն , և բոլոր մեզ ատողնե-
րուն ձեռքէն ։ Ողորմութիւն ընելու մեր հայրե-72
րուն վրայ , և իր սուրբ ուխտը միտք բերելու ,
(ան երդումը՝ որ մեր հօրը Աբրահամին երդմնե-73
ցաւ) մեզի տալու , որ մեր թշնամիներուն ձեռքէն74
խլըված՝ առանց վախի զինքը պաշտենք , Սրբ-75
ութիւնով ու արդարութիւնով անոր առջեւը՝
բոլոր մեր կենաց օրերուն մէջ ։ Եւ դուն ով76
մանուկ՝ Ծարձրկեալին մարգարէ պիտի կոչվիս · ին-
չու որ Տէրոջը երեսին առջեւէն պիտի երթաս՝ ա-

զ[ա]սոր ազատասօրը պատրաստելու ։ Ինչոր Յու-
վուդին գիտցանելու էրենց փրկութիւնը՝ իրենց
78 մեղ քերուն թողութեանը համար · Ա՛ր Աստու-
ծդ գիշած աղօրմութեանը համար , որ անով մե-
79 րէն արեգակը մեզի այցելութեան եկաւ · Երև-
նալու համար անոնց՝ որ խաւարին և մահուան
շուքին մէջը նստեր էին , մեր ոտքերը խաղաղու-
թեան ճամբուն մէջը շիտկելու ։
80 Ու տղան կաճէր և կրզօրանար հոդիով , ու
անապատներուն մէջն էր մինչև ան օրը՝ որ ինքը
Իսրայէլի երևցաւ ։

ԳԼ · Ե։

1 Ա՛ւ եղաւ որ ան օրերը Օգոստոս կայսրէն
2 հրաման եղաւ՝ որ բոլոր աշխարհ գրվի · (աս
առջի աշխարհագիրը եղաւ Սորինեոսին Կիւրե-
3 նոս դատաւօրին ատենը) Եւ ամէնը կերթային
աշխարհագիրը մնալու ամէն մէկը իրենց քաղա-
4 քին մէջը : Յովսէփ ալ Գալիլեայէն Նազարէթ
քաղաքէն եկաւ դէպ ի Հրէաստան Դաւիթին
քաղաքը՝ որ Բեթլեհէմ կըսվի , (ինքը Դաւիթին
5 տունէն ու ցեղէն ըլլալուն համար) աշխարհա-
գիրը մնալու Մարիամին հետ մէկ տեղ , որ ան
6 իր նշանածն էր , և ծոցվոր էր : Ու եղաւ որ երբ
անոնք ան տեղը էրան , անոր ծնանելու օրերը
7 լեցվեցան : Եւ իր առջինեկ որդին ծնաւ , ու լա-
թով փաթթեց , և գրաւ անիկա մնուրին մէջը ·
ինչու որ իջած տեղերնին տեղ չունէին անոնք :
8 Եւ ան տեղը հովիւներ կային բացը կեցած ,
որոնք գիշերանց իրենց ոչխարներուն հօտը պահ-
9 պանելու կըհսկէին : Ու Տէրոջը հրեշտակը երև-
ցաւ անոնց , և Տէրոջը փառքը անոնց վրայ ծա-
10 գեց · ու խիստ շատ վախցան : Եւ հրեշտակը
ըսաւ անոնց · Ա՛ի վախնաք , ինչու որ ահա ես
ձեզի մեծ ուրախութեան աւետիս կուտամ՝ , որ
11 բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ · վասն զի ձեզի

պատ վրկիր մը ծաւալ Յաւիթին քաղաքին մէջը,
որ ինքը Ծնեալ Տէր է։ Եւ ասիկա ձեզի նշան 12
մը ըլլայ. մանուկ մը պիտի գտնաք լանջով փաթ-
թիած, ու մսուրին մէջը դրած։ Եւ խեղդն ան 13
հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմու-
թիւն մը եղաւ, որոնք կօրհնէին Աստուած ու
կըսէին. Ընծեայ բարձրութեանց մէջ Աստուծոյ 14
փառք, և աշխարհի վրայ խաղաղութիւն, մարդ-
կանց հանճութիւն։ Ու եղաւ որ երբ հրեշ- 15
տակները անոնցմէ երկինքը վերցան, հովիւները
իրարու ըսին. Եկէք մինչև Բեթղեհէմ երթանք,
և տեսնանք՝ թէ ինչ է ասը բանը որ եղաւ. որն
որ Տէրը մեզի ցուցուց։ Ու եկան արագութեամբ, և 16
գտան Մարիամ ու Յովսէփ և մանուկը մսու-
րին մէջը դրած։ Եւ իմացան ան խօսքին վրայով, 17
որ մանուկին համար իրենց գուրգվեցաւ։ Եւ 18
ամենքը որ կըլսէին՝ կըզարմանային ան բաներուն
վրայ, որ հովիւները իրենց կըզուցեին։ Իսկ 19
Մարիամ ասոնք ամէն բաները կըպահէր, ու իր
սրտին մէջը կըմտածէր։ Ու հովիւները դարձան, 20
կըփառաւորէին և կօրհնէին զԱստուած ան ամէն
բաներուն համար՝ որ լսեցին ու տեսան, ինչպէս
որ իրենց պատմուեցաւ։

Եւ երբոր ութ օրերը լման եղան անկից թլփա- 21
տելու՝ անոր անունը Յիսուս դրուեցաւ, որ հրեշ-
տակէն լսված էր՝ դեռ ինքը յորովայնին մէջ չի
յղացած։

Ու Մովսէսին օրէնքին պէս երբոր անոր մաք- 22
րութեան օրերը լմնցան՝ Երուսաղէմ տարին
անկից Տէրոջը դիմացը հանելու. (ինչպէս որ գրըւ- 23
ված է Տէրոջը օրէնքին մէջը, թէ Ամէն արու զա-
ւակ որ արդանդ կըբանայ՝ Տէրոջը սուրբ կոչի) ու 24
Տէրոջը օրէնքին մէջ բանածին պէս՝ ընծայ տալու
զուգատ մը տատրակ կամ երկու աղաւնիի ձագեր։
Եւ ահա Երուսաղէմին մէջ մէկ մարդ մը կար, 25
որուն անունը Սիմէոն էր. ու ան մարդը արդար

ու աստուածավախ էր , և Իսրայէլի միաբանու-
թեանը կըսպասէր · ու Հոգին Սուրբ անոր մէջն
26էր ։ Եւ ինքը հրաման առած էր Հոգին Սուր-
բէն՝ որ մահ չի տեսնայ , մինչև որ Տէրոջը
27Քրիստոսը տեսնայ ։ Ու Հոգիով տաճարը եկաւ ·
և երբոր ծնողքը բերին Յիսուս մանուկը՝ որ օ-
րէնքին սովորութեանը պէս անոր վրայ ընեն ա-
28նոնք · ինքն ալ առաւ անիկա իր գիրկը՝ ու օրհ-
29նեց զԱստուած՝ և ըսաւ · Հիմայ Տէր կարձա-
կես քու ծառադ խաղաղութիւնով քու խօսքիդ
30պէս · ինչու որ իմ աչքերս քու փրկութիւնդ
31տեսան · որ ան բոլոր ժողովուրդներուն առջևը
32պատրաստեցիր · մեկ լոյս մը հեթանոսները լու-
սաւորելու , և փառք քու Իսրայէլ ժողովուր-
33դիդ ։ Եւ անոր հայրը ու մայրը զարմացած էին
ան բաներուն վրայ , որ անոր համար կըխօսէին ։
34Եւ Սիմէոն օրհնեց անոնք , և անոր մօրը Աս-
րիամին ըսաւ · Ահա սա պատն Իսրայէլի մէջ շա-
տերուն կրնկալուն ու ելլալուն համար կեցած է ,
և հակառակութեան նշան ։ Ը ԸԼԼԸ համար ·
35(ու քուկին սիրտդ ալ թուր մը պիտի անցնի) որ
ասանկով շատ սիրտերէն խորհուրդները պիտի
յայտնըվին ։
36 Եւ ան տեղն էր Աննա մարգարէն Փանուէլի
աղ չիկը Ասէրի ցեղէն · ասիկա իր օրերը շատ
անցուցեր էր՝ երկաներ հետ եօթը տարի կենալով
37իր կուսութեան ժամանակէն հետև ։ Եւ որբևա-
րի էր ութսունըչորս տարվան չափ · որ տաճարէն
չէր զատվեր , հապա ծոմով և աղօթքով Աստու-
38ծոյ ծառայութիւն կընէր գիշեր ու ցորեկ ։ Եւ
ասիկա նոյն ժամուն ելաւ Տէրոջը գոհութիւն
կուտար , ու անոր վրայով կրխօսէր ան ամենուն
հետը , որոնք որ Երուսաղէմին ազատութեանը
կըսպասէին ։
39 Եւ երբոր բոլոր բաները կատարեցին Տէրոջը
օրէնքին պէս , նորէն Գալիլեա դարձան՝ իրենց

Ղազարէթ քաղաքը ։ Ու մանուկը կըմեծնար և 40
կըզօրանար իմաստութիւնով լեցեալ ։ ու Աստուծոյ շնորհքը անոր վրան էր ։

Եւ անոր ծնողքը ամէն տարի զատիկի տօնին 41
Երուսաղէմ կերթային ։ Ու երբոր անիկա տասներկու տարեկան եղաւ՝ անոնք տօնին սովորութեանը պէս երբոր Երուսաղէմ գնան , և անոնք 43
օրերը որ լմընցուցին՝ ու նորէն ետ դարձան , Յիսուս մանուկը Երուսաղէմ մնաց ։ և իր ծնողքը չէին գիտեր ։ Կըկարծէին անոր համար՝ որ ճամբորդներուն հետ է ։ մէկ օրվան ճամբայի չափ կգան , ու կըփնտռէին անիկա ազգականներուն և ճանչվորներուն մէջը ։ Եւ երբոր չի գտան՝ նորէն 45
Երուսաղէմ դարձան անիկա փնտռելու ։ Ու 46
եղաւ որ իրեք օրէն ետքը տաճարին մէջը գտան անիկա , որ վարդապետներուն հետ նստեր էր ։ անոնց մտիկ կընէր , և անոնց հարց կըհարցնէր ։ Ամէնքը որ անկէց կըլսէին՝ զարմանք կըքաշէին 47
անոր իմաստութեանը վրայ , ու պատասխաններուն վրայ ։ Եւ երբոր տեսան անիկա՝ զարմա- 48
ցան ։ և իր մայրը ըսաւ անոր ։ Որդեակ՝ ասանկ ինչ բան էր որ դուն մեզի ըրիր ։ ահա քու հայրդ ու ես կըշարչըրվինք քեզ կրփնտռէինքկոր ։ Եւ 49
ըսաւ անոնց ։ Ինչու կրփնտռէիք , չէիք գիտեր թէ ինծի պէտք է որ իմ Հօրս տունը ըլլամ ։ Եւ 50
անոնք չի հասկըցան ան խօսքը՝ որ իրենց ըսաւ ։ Եւ իջաւ անոնց հետ՝ ու գնաց Նազարէթ , 51
և ինքը անոնց հնազանդ էր ։ բայց անոր մայրը սա ամէն խօսքերը իր սրտին մէջ կըպահէր ։

Եւ Յիսուս կըշարգանար իմաստութիւնով՝ 52
ու հասակով և շնորհքով , Աստուծմէ և մարդոցմէ ։

ԳԼ ։ Գ ։

Տիբերիոս կայսրին թագաւորութեան տասներ- 1
հինգերորդ տարին՝ Պոնտացի Պիղատոսին

1 Հրէաստանի վրայ դատաւորութիւն բնելոյ ա-
տենը, ու Հերովհամին Գալիլեացոց վրայ տէր-
րորդապետութեան ատենը, և անոր եղբօրը Փի-
լիպպոսին Իտուրիացոց և Տրաքոնացոց աշխարհին
վրայ տէրորդապետութեան ատենը, և Լիսա-
նիայ Աբիլենացոց վրայ տէրորդապետութեան
2 ատենը, և Աննայի ու Կայիափայի քահանայա-
պետութեան ատենը՝ Աստուծոյ պատգամը եղաւ
Զաքարիայի որդւոյն Յովհաննէսին վրայ՝ անապա-
3 տին մէջը։ Ու եկաւ Յորդանան ու բոլոր կողմե-
րը՝ ապաշխարութեան մկրտութիւն քարոզելու,
4 մեղաց թողութեան համար. ինչպէս որ Եսայի
մարգարէին խօսքերուն գիրքին մէջ գրված է.
Ա՛կ ձայն մը որ անապատին մէջ կը կանչէ,
Պատրաստեցէք Տէրոջը ճամբան, շտկեցէք անոր
5 քալելու գետինը. Ամէն ձորերը պիտի լեցվին,
և ամէն լեռներ ու բլուրները պիտի ցածնան, և
դժուարին ուղիները դիւրին պիտի ըլլան, ու խոր-
տուբոտ տեղերը հարթ ճամբաներ պիտի ըլլան.
6 և ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը պիտի
տեսնայ։

7 Ու իրմէն մկրտուելու եկած ժողովուրդներուն
ըսաւ. Օձի ձուկունե՛ր, ո՞վ ցուցաց ձեզի փախ-
8 չել ան բարկութենէն, որ պիտի գայ։ Ա՛ռէք
նաև ապաշխարութեան արժանաւոր պտուղ բե-
րե՛ք, ու մի՛ սկսիք զուրցել՝ Թէ Ունինք Հայր ու-
նինք Աբրահամ. ասկրսեմ ձեզի, որ կարող է
Աստուած ասոնց քարերէս Աբրահամին զաւակներ
9 հանել։ Ալ արդէն կացինը ծառերուն արմատին
քովը կնցած է. ան ամէն ծառ՝ որ աղէկ պտուղ
10 չի բերեր, կրկորըվի և կրակը կրձգվի։ Ժո-
ղովուրդները կը հարցուներէին իրեն՝ ու կըսէին.
11 Ինչի՞ կ՚ընենք ինչ բնենք։ Ինքն ալ պատասխան
տուաւ՝ և ըսաւ անոնց, Ո՛վ որ երկու հանգերձ
ունի՝ մէկը թող չունեցողին տայ. և ո՛վ որ կե-
12 րակուր ունի՝ թող անանկ բնէ։ Ա՛ռքսաւոր-

ներն ալ եկան մկրտվելու , ու ըսին անոր ։
Վարդապետ՝ մենք ի՞նչ ընենք ։ Ան ալ ըսաւ 13
անոնց ։ Չհզի ինչ որ հրաման եղած է նէ , ան-
կէց աւելի բան չընէք ։ Զինուորներն ալ կը հար- 14
ցունէին անոր՝ ու կըսէին ։ Եւ մե՞նք ինչ ընենք ։
ըսաւ անոնց ։ Ո՛կէր մի՛ կողոպտէք , և մէկուն
վրայ զրպարտութիւն մի՛ ընէք ։ վարձքերնիդ ձե-
զի հերիք ըլլայ ։

Երբոր ժողովուրդը յոյս ունէր , և ամէնքը 15
իրենց սիրտերնուն մէջ կը մտմտային Յովհաննէ-
սին համար՝ թէ ան է մի Քրիստոսը , ինքը պա- 16
տասխան տուաւ ամէնուն՝ ու ըսաւ ։ Ես ձեզ ջու-
րով կը մկրտեմ՝ բայց ինձմէ աւելի զօրաւորը
կուգայ , որ անոր կօշիկներէը կրկնելու արժանի
չեմ ես ։ անիկա ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբո-
վով և կրակով ։ Որուն ձեռնոցը իր ձեռքն է 17
իր կալը մաքրելու համար , և ցորենը իր ամբարը
ժողվելու , և յարդը չի մարելու կրակով պիտի
էրէ ։ Ուրիշ շատ բաներ ալ կըքարոզէր ժողո- 18
վուրդին մխիթարելով ։

Բայց Հերովդէս չորրորդապետը անկէց չեխո 19
լսած ըլլալով իր եղբօրը կնկանը Հերովդիային
պատճառովը , և բոլոր չարութիւններուն համար՝
որ Հերովդէսը գործեց , ան ա՛ն ևնուն վրայ աս ալ 20
եվելցուց ։ որ բանտը դրաւ Յովհաննէսը ։

Ու եղաւ որ ամէն ժողովուրդը մկրտվելցան , 21
և Յիսուս ալ մկրտվելցաւ՝ ու աղօթքի կայներ
էր , երկինքը բացվելցաւ ։ և Հոգին Սուրբ 22
մարմնաւոր երևոյթքով աղաւնիի պէս անոր վրայ
իջաւ , ու երկինքէն ձայն մը եկաւ՝ որ կըսէր ,
Դուն ես իմ սիրելի Որդիս ։ քեզմէ հաւնեցայ ։

Եւ ինքը Յիսուս սկսեր էր երեսուն տարեկան 23
ըլլալ , որ (ինչպէս կըկարծվէր) ինքը Յովսէ-
փին որդին , Որ ան Յակոբին , որ ան Հեղիին ,
որ ան Մատաթիային ։ Որ ան Ղևիին , որ ան 24
Մեղքիին , որ ան Յաննէին , որ ան Յովսէփին ։

25 Որ ան Մատթէին, որ ան Ամոսին, որ ան
Նաւումին, որ ան Եսղիին, որ ան Նանգէին։
26 Որ ան Մաաթին, որ ան Մատաթին, որ ան
Սեմէին, որ ան Յովսէփին, որ ան Յովդային։
27 Որ ան Յովհաննային, որ ան Ռեսային, որ ան
Զորաբաբէլին, որ ան Սաղաթիէլին, որ ան
28 Ներիին։ Որ ան Մելքիին, որ ան Ադդէին,
որ ան Կոսամին, որ ան Էլմոդամին, որ ան
29 Երին։ Որ ան Յեսուին, որ ան Եղիազարին,
որ ան Յովրամին, որ ան Մատթային, որ ան
30 Ղևիին։ Որ ան Սիմէոնին, որ ան Յուդային,
որ ան Յովսէփին, որ ան Յովհանին, որ ան Ե-
31 ղակիմին։ Որ ան Մելքիին, որ ան Մէննայ-
ին, որ ան Մատտաթին, որ ան Նաթանին, որ
32 ան Դաւիթին։ Որ ան Յեսսէին, որ ան Ովբէ-
դին, որ ան Բոոսին, որ ան Սաղմոնին, որ ան
33 Նասսոնին։ Որ ան Ամինադաբին, որ ան Քրա-
մին, որ ան Եզրոմին, որ ան Փարէսին, որ ան Յու-
34 դային։ Որ ան Յակոբին, որ ան Իսահակին, որ ան Աբրա-
համին, որ ան Թարայի, որ ան Նաքորին։
35 Որ ան Սերուգին, որ ան Ռագաւին, որ ան
Փաղեկին, որ ան Եբերին, որ ան Սաղային։
36 Որ ան Կայնանին, որ ան Արփաքսադին, որ ան
37 Սեմին, որ ան Նոյին, որ ան Ղամեքին։ Որ
ան Մաթուսաղային, որ ան Ենովքին, որ ան
Յարէդին, որ ան Մահաղելէլին, որ ան Կայնա-
38 նին։ Որ ան Ենոսին, որ ան Սեթին, որ ան
Ադամին, որ ան Աստուծոյն։

ԴԼ։

1 Եւ Յիսուս Հոգւով Սրբով լեցեալ՝ Յորդա-
նանէն դարձաւ. ու Հոգիէն անապատը տար-
2 վեցաւ, քառասուն օր Սատանայէն փորձուեցաւ. և
ան օրերուն մէջ ոչ կերաւ՝ ոչ ալ խմեց. և ա-
նոնք որ լմընցան՝ անօթեցաւ։

Ու Աստանան ըսաւ անոր . Թէ որ Աստուծոյ 3
որդին ես՝ ըսէ ատ քարին որ հաց ըլլայ ։ Պատաս- 4
խան տուաւ անոր Յիսուս՝ ու ըսաւ . Գրված է
որ , չէ թէ հացով միայն մարդ կապրի , հապա
Աստուծոյ ամէն խօսքերովը ։

Եւ մէկ բարձր լեռ մը հանելով անիկա՝ աշ- 5
խարհին բոլոր թագաւորութիւնները ցուցուց
անոր մէկ րոպէի մը տեւնին մէջ ։ Եւ ըսաւ անոր 6
Աստանան , Ես ամէն իշխանութիւնը ու անոնց
փառքը քեզի կուտամ , ինչու որ ինծի տրված է ,
և որի որ ուզեմ՝ կուտամ անիկա ։ Ուստի՝ թէ 7
որ դուն իմ առջևս կրկնաս երկիրպագութիւն
կընես , ամէնը քեզի ըլլայ ։ Պատասխան տուաւ 8
անոր Յիսուս՝ ու ըսաւ . Գրված է , քու Տէր
Աստուծոյդ երկիրպագութիւն ընես , և մինակ
անիկա պաշտես ։

Ու տարաւ անիկա Երուսաղէմ , և տաճարին 9
աշտարակին վրայ կայնեցուց՝ և ըսաւ անոր . Թէ
որ դուն Աստուծոյ Որդի ես՝ քեզ ասկէց վար նե-
տէ ։ Ինչու որ՝ գրված է , Թէ Իրեն հրեշտակներ- 10
դուն ապրսպրած է քեզի համար՝ որ քեզ պահեն .
Որ քեզ ձեռքերնուն վրայ պիտի վերցունեն , որ 11
ամենևին ոտդ քարի չի զարնես ։ Պատասխան տը- 12
ւաւ անոր Յիսուս՝ ու ըսաւ . Ըսված է որ՝ Քու
Տէր Աստուածդ չի փորձես ։ Եւ երբոր Սատա- 13
նան բոլոր փորձութիւնները կատարեց , ատեն
մը ետ կենցաւ անկէց ։

Ու Յիսուս Հոգիին զօրութիւնովը Գալիլեա 14
դարձաւ . և անոր համբաւը ան գաւառին բոլոր
կողմերը տարածվեցաւ ։ Եւ ինքը անոնց ժողո- 15
վարաններուն մէջը կըսորվեցունէր , ամէնէն փա-
ռաւորվելով ։

Ու եկաւ Նազարէթ , ուր որ ինքը մեծցած 16
էր . և իր սովորութեանը պէս շաբաթի օրը մտաւ
ժողովարանը ։ Եւ տուին անոր Եսայի մարգարէին 17
գիրքը . ու ելաւ որ կարդայ . և երբոր գիրքը

քացաւ՝ գտաւ ան տեղը , ուր որ գրված էր :
18 Տէրոջը Հոգին իմ վրաս . անոր համար իս օծեց ,
աղ քաջներուն աւետարան քարոզելու իս խրբո-
կից , սիրտերնին կոտրած եղողները բժշկելու .
19 գերիներուն ազատութիւն քարոզելու , և կոյր-
ներուն տեսութիւն տալու , վիրաւորեալները ազա-
տութեան ձայն տալու , Տէրոջը ընդունելի տա-
20 րին քարոզելու : Ու գիրքը գոցեց՝ տուաւ սպա-
սաւորին և նստաւ . ու ժողովարանը եղողներուն
21 բոլորին աչքը անոր կընայէին : Եւ սկսաւ ա-
նոնց ըսել , Այսօր աս գիրքը ձեր ականջներուն
22 մէջ լեցվեցաւ : Եւ ամենքը իր վրայ կվկայէին ,
ու կզարմանային անոր բերնէն ելած շնորհալի
խօսքերուն վրայ՝ և կըսէին . Այսիկա Յովսէփին
23 որդին չէ՞ մի : Ու բսաւ անոնց . Իրաւցնէն որ
դուք ինծի պիտի ըսէք աս առակը . Բժիշկ՝ քու
անձդ բժշկէ . որքան որ Կափառնայումի մէջ
24 բրիր՝ լսեցինք , հոս քու գաւառիդ մէջն ալ բրէ :
25 Եւ ըսաւ . Ամէնարիւ կըսեմ ձեզի , թէ Մարգա-
րէն իր քաղքին մէջ ընդունելի չէ : Իրաւցնէն
կըսեմ ձեզի , որ շատ որբևարիներ կային Ե-
լիայի օրերը Իսրայելի մէջ , երբոր իրեք տարի
և վեց ամիս երկինքը գոցվեցաւ , ու մեծ սով
26 եղաւ բոլոր երկիրը : Բայց Եղիան անոնցմէ մէ-
կուն չի խրկվեցաւ , հապա միայն Սիդոնացոց
Սարեբթա քաղաքին մէջը մէկ որբևարի կնկան
27 մը : Եւ շատ բորոտներ կային Իսրայէլացոց մէջ
Եղիսէ մարգարէին առենը . ու անոնցմէ մէկը չի
սրբվեցաւ , հապա միայն Նեեման Ասորին :
28 Ու ժողովարանին մէջը ամենն ալ բարկութիւնով
29 լեցվեցան՝ երբոր աս լսեցին : Եւ ելան անիկա
քաղաքէն դուրս հանեցին , ու տարին անիկա մին-
չև լեռան ցրցված ծայրը , որուն վրայ անոնց քա-
ղաքը շինված էր , որ բարձր տեղէն ինքը վար
30 ձրգեն : Բայց ինք անոնց մէջէն անցաւ գնաց :
31 Եւ իջաւ Կափառնայում քաղա-

քը · ու շաբաթ օրերը կըսորվեցուներ անոնց ։
Զարմանք կըքաշեին անոր վարդապետութեանը 32
վըայ · ինչու որ իշխանութիւնով էր անոր խօս-
քը ։ Եւ ժողովարանին մէջը մարդ մը կար , որ 33
պիղծ դեւի հոգի ունէր , ու մեծ ձայնով մը պո-
ռաց՝ ըսելով · Ախ՛ տուր · դուն մեր հետը ի՛նչ 34
բան ունիս Յիսուս Նազովրեցի՛ , եկար որ մեզ
կորսընցուցնես · քեզ գիտենք ով ես , Աստուծոյ
Սուրբը ։ Յիսուս չեղեց անիկա՝ և ըսաւ , Պա- 35
պանէ՛ , ու ելիր ատկէ · դեւը անիկա մէջ տեղը
գետնին զարկաւ՝ ու ելաւ անկէց , և չէն մը չի
տըւաւ անոր ։ Ու զարմանք եկաւ ամենուն վըայ · 36
կըխօսէին իրարու հետ՝ և կըսէին · Այս ի՛նչ խօսք
է , որ իշխանութիւնով և զօրութիւնով կըչեխէ
պիղծ դեւերուն , ու կելլան ։ Եւ անոր վըայով 37
գաւառին բոլորտիքը ամէն տեղեր կըզուարցըվէր ։
Ու ժողովարանէն ելաւ՝ Սիմոնին տունը մտաւ ։ 38
Սիմոնին զոքանչն ալ սաստիկ չեղումով կըտանջը- 39
վէր կոր , և անոր համար աղաչեցին իրեն ։ Կայ- 40
նեցաւ անոր քովը՝ սաստց չեղմին , ու ան թող
տըւաւ անիկա · և շուտով ելաւ , ու անոնց ծա-
ռայութիւն կընէր ։
Եւ արեւը մարը հանելու ատենը՝ ամէնքը որ 41
ունէին տեսակ տեսակ ցաւերով հիւանդներ , կը-
բերէին անոնք իրեն · ինքն ալ անոնցմէ ամէն մէ-
կուն վըայ ձեռք կըդնէր՝ և կըբժշկէր անոնք ։
Դեւերն ալ շատերէն կելլային՝ կըկանչէին ու կը- 42
սէին թէ , Դուն Աստուծոյ Որդին ես · և ինքը
կըչեխէր՝ ու թող չէր իտար անոնց որ խօսին ·
ինչու որ անոնք գիտէին թէ Ինքը Քրիստոսն է ։ 43
Եւ երբոր ցորեկ եղաւ՝ ելաւ գնաց անապատ 44
տեղ մը , ու ժողովուրդները կրտինտրէին անի-
կա · եկան մինչև անոր՝ ու կարգիլէին անիկա , որ
իրենցմէ չերթայ ։ Եւ ինքը ըսաւ անոնց · Ուրիշ 45
քաղաքներուն ալ պէտք է ինծի՛ որ Աստուծոյ
Թագաւորութիւնը քարոզեմ · ինչու որ անոր 46

45 Համար խրկըվեցայ ։ Ու Գալիլեացոց ժողովա-
բաններուն մէջը կըքարոզէր ։

ԳԼ · Ե։

1 Ա ու եղաւ որ երբ ժողովուրդը անոր բոլորտիքը
դիմվեցաւ՝ ու Յ.ստուծոյ խօսքը մօխ կընէին ,
ինքն ալ Գեննեսարէթի ծովակին քովը կեցեր
2 էր ։ Ու տեսաւ երկու նաւեր որ ծովակին քովը
կեցեր էին , և ձուկ բռնողները անոնցմէն ելած՝
3 գործիքները կը լըւային ։ Ինքը ան նաւերուն մէ-
կին մէջը մտաւ՝ որ Սիմոնինն էր , և աղաչեց ա-
նոր՝ որ քիչ մը ցամաքէն դուրս մէջը տանի · Նըս-
տաւ՝ ու նաւին մէջէն ժողովուրդները կըսորվե-
ցունէր ։
4 Եւ երբոր խօսելէն լըռեց , ըսաւ Սիմոնին ·
Յ.առջ տար նաւը դէպի խորունկը , ու գործիք-
5 նիդ ձգեցէք յո՛վ որսալու ։ Պատասխան տուաւ
Սիմոն՝ և ըսաւ անոր · Վ արդապետ՝ բոլոր գիշե-
ըրս աշխատեցանք՝ ու բան մը չի բռնեցինք · բայց
6 քու խօսքիդ համար ձգենք գործիքներս ։ Երբ որ
ասըրսին՝ եվելօք շատ ձուկեր ժողվեցին մէջը ,
մինչև որ իրենց ուռկանները կըպատռտէինկոր ։
7 Եւ ան՝ կընէին մէկալ նաւը իրենց ձուկ բռնող
ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց · և եկան , ու
երկու նաւերն ալ լեցուցան մինչև որ ընկղմելու
8 մօտ էին անոնք ։ Սիմոն Պետրոս երբոր տեսաւ՝
Յիսուսի ծունկերուն ինկաւ՝ ու ըսաւ · Ելը՛ իմ
քովէս մէկ դի գնա , ինչու որ ես մեղաւոր մարդ
9 մըն եմ ։ Վ ասն զի՝ ան զի՝ վախը պատեց անոկա և ա-
նոր հետը եղող ամենքը՝ ան իրենց բռնած ձու-
0 կերուն որսին համար · անանկ ալ Յ.ակոբոսը
որդիքը Զակարիասը և Յ.ովաննէսը , որոնք որ Ա-
մոնին որսորդութեան ընկերներն էին · ու Յիսուս
ըսաւ Սիմոնին · Մ՚ի վախնար , ասկէ ետև մար-
1 դիկ պիտի որսաս կենաց համար ։ Եւ նաւը ցա-

մաքը Հանելով՝ ամէն բաներէն թողուցին , ու
անոր ետևէն գացին ։

Եւ եղաւ որ երբ Ինքը քաղաք մը Հասաւ , մէյ- 12
մալ մէկ մարդ մը բորոտութիւնով լեցուն՝ երբոր
Յիսուսը տեսաւ , երեսի վրայ Ինկաւ՝ աղաչեց
անոր և ըսաւ ։ Տէր՝ թէ որ ուզես , կրնաս իս սրբե-
ցնել ։ Երկրնցուց իր ձեռքը՝ Հասցուց անոր , ու 13
ըսաւ ։ Կուզեմ՝ սրբըրվէ ։ և շուտ մը բորոտու-
թիւնը անկէց գնաց ։ Ու Ինքը ապրսպրեց անոր՝ 14
որ մէկու մը չըսէ , Հապա՝ գնա՛ քու անձըդ քա-
Հանայեին ցուցուր , և քու սրբըրվելուդ Համար
ընծայ տուր , ինչպէս որ Մ՚ովսէս Հրաման ըրաւ՝
անոնց վկայութիւն ըլլալու ։ Եւ անոր վրայով 15
էվլոչ խօսքը կըշատնար ։ ու շատ ժողովուրդներ
կըժողվվէին մարիկ ընելու , և իրենց Հիւանդու-
թիւններէն բժշկըվելու ։ Ու Ինքը անապատ տեղ 16
վանք կըքաշվէր , և աղօթք կընէր ։

Եւ եղաւ որ մէկ օր մը Ինքը որ կըսորվեցու- 17
ներ , ու Փարիսեցիները և օրինաց վարդապետ-
ները նստած էին ։ որոնք որ Գալիլեացոց և Հրէ-
աստանի և Երուսաղէմի բոլոր քաղաքներէն ժող-
վված էին ։ ու Տէրոջը զօրութիւնը կար անոնք
բժշկելու ։ Եւ մէյմալ մարդիկ՝ մէկ անդամալոյծ 18
մարդ մը մահճակալ կըբերէին և կուզէին որ անի-
կա ներս խօթեն՝ ու դնեն անոր առջևը ։ Եւ երբ 19
բոր ամբոխին Համար ճամբայ չէին գտնար՝ որ ան-
կէց ներս խօթեն անիկա , տանիխն վրայ ելան՝ և
առաստաղէն վար կախեցին անիկա , ու մահճակով
մէջ տեղը Յիսուսի առջևը իջեցուցին ։ Եւ տես- 20
նալով ասոնց Հաւատքը՝ ըսաւ անոր ։ Ա՛վ մարդ՝
քու մեղ քերդ քեզի ներված ըլլայ ։ Կարդացող- 21
ները ու Փարիսեցիները սկըսեցին մտածել , և
ըսին ։ Ո՞վ Իկա ասիկ է , որ Հայհոյութիւններ կը-
խօսի ։ ով կրնայ մեղ քի թողութիւն տալ , բայց
միտկ Ա՛ստուած ։ Յիսուս երբոր իմացաւ անոնց 22
խորհուրդները՝ պատասխան տըւաւ՝ ու ըսաւ ա-

նանց · Սիրտերնուդ մէջը ինչ կրմտմտաքկոր :
23 Որն է եղել դիւրին · Ա՛ռ մեղքերդ քեզի ներ-
24 ված ըլլայ ըսելը , թէ՝ Ելլէր և գնա ըսելը : Ա՛ռայ
որ դուք գիտնաք՝ թէ Որդին մարդոյ իշխանու-
թիւն ունի երկրի վրայ մեղքերուն թողութիւն
տալու · (ըսաւ անդամալոյծին) Ա՛ռեալ կըսեմ ,
25 Ելլէր առ մահիճդ՝ և գուն տունդ գնա : Ան ալ
նոյն ժամուն ամէնուն առջևը ելաւ՝ առաւ իր
վրայովը որուն վրայ որ ինքը ննջած դրված էր ,
գնաց իր տունը՝ և Աստուծոյ փառք կուտար :
26 Զարմանքը բռնեց ամէնը , և Աստուծոյ փառք
կուտային · վախով լեցուեցան՝ ու ըսին , թէ Այ-
սօր նոր նշան մը տեսանք :
27 Եւ անկէ ետքը ելաւ անկաց , ու տեսաւ մէկ
մաքսաւոր մը՝ որուն անունը Ղեւի էր , որ մաքս
ընդունելու նստեր էր , և ըսաւ անոր · Ե՛ւ եռևէս
28 կոր : Ան ալ թողուց ամէնը՝ ելաւ գնաց անոր
29 ետևէն : Ու Ղեւի անոր մեծ հարկիք մը ըրաւ
իր տանը մէջ · և շատ մաքսաւոր մարդիկ կային ,
և ուրիշները՝ որ անոնց հետ սեղան նստեր էին :
30 Ու փարիսեցիները և անոնց կարդացողները կը-
տրտրային անոր ըսելու համար իր աշակերտներուն ,
ու կըսէին · Ինչո՞ւ համար մաքսաւորներուն և
31 մեղաւորներուն հետ կուտէք ու կըխըմէք : Պա-
տասխան տուաւ Յիսուս՝ ու ըսաւ անոնց · Ողջ-
ուն բժիշկ պէտք չէ , հապա հիւանդներուն :
32 Եւ ես արդարները կանչելու չեկայ , հապա՝ մե-
ղաւորները ապաշխարութեան :
33 Անոնք ալ ըսին անոր · Ինչո՞ւ Յովհաննէսին
աշակերտները շատ անգամ ծոմ կըպահեն՝ և ա-
ղաչանք կընեն , անանկ ալ փարիսեցիներունը · և
34 քուկիններդ կուտեն ու կըխըմեն : Անիկա ալ
ըսաւ անոնց · Կրնաք մի հարսնիքին տղոցը՝ հրա-
ման ընել որ ծոմ պահեն , քանի որ փեսան ա-
35 նոնց հետն է : Օրեր պիտի գան , որ երբ փեսան
անոնցմէ վերցըվի՝ հապա թէ ան օրերը ծոմ պի-

տի պահեն ։ Ուրակ մըն ալ բսաւ անոնց թէ 36
Ո՛հկը չի ձըգեր նոր լաթէն հինցած հագուստին
վրայ · Հապա թէ չէ՝ ան նորն ալ կըպատռէ , ու
հինցածին հետ չի միաբանիր ան նոր լրէն եղած
կտորը ։ Եւ մկկը նոր գինին հին տիկերու մէջ չի՛ 37
լեցուներ · Հապա թէ չէ՝ նոր գինին հին տիկերը
կըպատռտէ , ինքը կըթափի՝ ու տիկերը կըկորընչ-
չին ։ Հապա նոր գինին նոր տիկերու մէջ դնել 38
պէտք է , ու երկուքն ալ կըպահվին ։ Եւ մկկը 39
հին գինին չի խմեր , ու ներքը նորը ուզեր · ինչու
որ կըսէ , թէ՝ Հինը ալ անուշ է ։

ԳԼՈՒԽ Ը ։

Ե ղաւ որ առջինին երկրորդ շաբաթի օրը՝ 1
ինքը արտերուն միջէն կանցնէր , ու իր աշա-
կերտները ցորեխն հասկ կըփրցունէին , ձեռքեր-
նուն միջը կըշըփէին՝ ու կուտէին ։ Եւ փարիսե- 2
ցիներէն ոմանք ըսին անոնց · Ա՛ս ինչ կըննէ-
կոր , որ օրինաւոր չէ շաբաթի օրը ։ Պատասխան 3
տուաւ անոնց Յիսուս՝ ու բսաւ · Ձեր մի կար-
դացեր դուք Դաւիթին ըրածը , երբոր անօթե-
ցաւ ինքը՝ և իր հետը եղողները · ինչպէս ինքը 4
Աստուծոյ տունը մտաւ , և առաջաւորութեան
հացը կերաւ , ու տուաւ անոնց ալ՝ որ իր հետն
էին · որ անիկա ուտել օրինաւոր չէր մկու մը ,
միայն թէ քահանայապետներուն ։ Եւ բսաւ ա- 5
նոնց · Որդին մարդոյ շաբաթին ալ Տէր է ։
Եւ եղաւ որ մկկալ շաբաթի օրն ալ ինքը ժո- 6
ղովարանը մտաւ՝ ու կըսորվեցունէր · և ան տեղը
մարդ մը կար , որ իր աջ ձեռքը չորցած էր ։
Կարդացողները ու փարիսեցիներն ալ կըսպասէ- 7
ին անոր՝ որ շաբաթի օրը անիկա բժշկէ , որ չա-
րախօսութիւն մը գտնան անոր վրայով ։ Եւ ին- 8
քը գիտէր անոնց մըտքին եղածը , բսաւ ան մար-
դուն որուն որ ձեռքը չորցած էր · Ելիր մէջ տե-
ղը կայնէ · ան ալ ելաւ կայնեցաւ · Յիսուս բսաւ 9

անոնց · Ձեզի բան մը Հարցունեմ · Հ աթէթ
օրը ինչ կըվայլէ , բարի գործ ընել՝ թէ չար
գործել , Հոգի մը ապրեցունել՝ թէ կորսընցու-
10նել : Ու տրամաբանեցաւ չորս դին նայելով ամ-
նուն վրայ՝ բսաւ անոր · Ձեռդ երկընցուր · ան
ալ երկընցուց , և իր ձեռքը բժշկըվեցաւ ուկալին
11պէս : Անոնք ալ խելագարութիւնով լեցվեցան ,
ու իրարու հետ կրխօսէին , թէ ինչ ընեն Յիսու-
սին :
12 Եւ եղաւ որ ան օրերը լեռը ելաւ աղօթք ընե-
լու , ու բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելու
13ուչ կանցուներ : Եւ երբոր առաւօտ եղաւ՝ կան-
չեց իր աշակերտները՝ ու անոնցմէ տասներկուքը
ընտրեց , որ անոնք առաքեալ ալ անուանեց :
14Սիմոնը՝ որ անոնք Պետրոս ալ անուանեց , և
անոր եղբայրը Անդրէասը , և Յակոբոսը , և Յո-
Հաննէսը , և Փիլիպպոսը , և Բարթողիմէոսը ·
15ու Մատթէոսը , և Թովմասը , և Յակոբոս Ալ-
փէոսին , և Սիմոնը Նախանձայոյզ ըսված ·
16ու Յակոբին Եղբայրը Յուդան , և Իսկարիով-
17տացի Յուդան՝ որ ինքը մատնիչ եղաւ : Եւ ա-
նոնց հետը մէկ տափարակ տեղ մը իջաւ , ու իր
աշակերտներուն ժողովքը՝ ու մեծ բազմութիւն
մը ժողովուրդներու բոլոր Հրէաստանէն , ու Ե-
րուսաղէմէն , և Մկիլ կողմէն , ու Տիւրոսի և
18Սիդոնի ծովեզերքէն · որ եկան անկէց լսելու , ու
իրենց հիւանդութիւններէն բժշկըվելու · ու
պիղծ ոգիներէն չարչըրկածներն ալ կըբժշկըվէին :
19Եւ բոլոր ժողովուրդը կուզէր իրեն մօտիկնալ ·
ինչու որ չաս զօրութիւն կելլար անկէց՝ ու ամ-
նը կըբժշկէր :
20 Եւ ինքը իր աչքերը դէպի իր աշակերտնե-
րուն վերցուց՝ ու բսաւ · Երանի Հոգւով աղքատ-
ներուդ · ինչու որ ձերն է Աստուծոյ թագաւո-
21րութիւնը : Երանի անոնց որ հիմայ անօթի են ·
ինչու որ պիտի կըշտանան · երանի անոնց որ հի-

մայ կուլան ։ ինչու որ պիտի խնդան ։ Երանի կ22
ձեզի՝ երբոր մարդիկ ձեզ անարգեն , և երբոր
ձեզ էրեւոյ ընկերս-ընենէն զատեն՝ ևատեն , ու
ձեր վռայով գէշ անուն հանեն Որդւոյ մարդոյ
պատճառովը ։ Ուրախ եղէք դուք ան օրը՝ ու 23
ցնծացէք , որ ահա ձեր վարձքը շատ է երկինքը ։
ատ կերպով իրենց հայրերնին մարգարէներուն
կընէին ։ Այց վայ ձեզի հարուստներուդ ։ ինչու 24
որ դուք միխիթարանքնիդ առիք ։ Վ այ ձեզի , որ 25
հիմայ կուշտ էք ։ ինչու որ պիտի անօթենաք ։ վայ
ձեզի , որ հիմայ կրծիծաղիք ։ ինչու որ պիտի սուգ
մտնաք ու լաք ։ Վ այ ձեզի , երբոր ձեր վռայովը 26
ադէկ բսեն բոլոր մարդիկ ։ ինչու որ իրենց հայ-
րերնին ատանկ կընէին սուտ մարգարէներուն ։
Այց ձեզի կըսեմ որ մտիկ կընէք ։ Սիրեցէք 27
ձեր թշնամիները ։ ձեզի ատողներուն բարի ը-
րէք ։ Ձեզ անիծողները օրհնեցէք , ձեզի չար- 28
չարանք տրվողներուն վռայ աղօթք րնէք ։ Ին որ 29
քու երեսիդ կըզարնէ , մեկալն ալ մօտիկցուր ա-
նոր ։ և ան որ քու վերարկուդ քեզմէ կըչահէ ,
մի՛ արգիլեր անկէց շապիկդ ալ ։ Ին ամէնուն որ 30
քեզմէ կուզէ՝ տուր ։ ու ինչ որ քեզմէ մէկը կըհա-
նէ՝ մի՛ ետ ուզեր ։ Եւ ինսոր կուզէք որ մարդիկ 31
ձեզի ընեն , անանկ րնէք դուք ալ անոնց ։ Եւ 32
թէ որ դուք ձեր սիրելիները սիրէք նէ՝ ինչ
շնորհ կունենաք ։ ինչու որ՝ մեղաւորներն ալ կը-
սիրեն իրենց սիրելիները ։ Եւ թէ որ դուք ձեզի 33
բարի ընողներուն բարի ընէք , ինչ շնորհ կունե-
նաք ։ ինչու որ մեղաւորներն ալ ան բանը կընեն ։
Եւ թէ որ անանկ մարդիկներուն փոխ տաք՝ ո- 34
րոնցմէ յոյս ունէք առնելու , ինչ շնորհ ունէք ։
ինչու որ մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ
կուտան , որ ան չափովը ետ առնեն ։ Ձայց սի- 35
րեցէք դուք ձեր թշնամիները , ու ձեզ ատողնե-
րուն բարի րնէք ։ և փոխ տրվէք ուսկէց որ առնե-
ու յոյս չունիք ։ որ ձեր վարձքը շատ բլլայ , ու

Խարձրելոյն որդիքը ըլլաք · ինչու որ ինքը քաղցր է չարերուն և ապերախտներուն վրայ :
36 Ու գթած եղիք , ինչպէս որ ձեր Հայրն ալ գը-
37 թած է : Ա՛ի դատէք , և դուք չի պիտի դատուիք · մի՛ պատժէք , և չի պիտի պատժըվիք · արձրկե-
38 ցէք , և դուք պիտի արձրկվիք : Տըվէք՝ ու ձեզի ալ պիտի տըըվի · ադեկ չափ՝ կոխված՝ ցնցըված՝ լեփլեցուն պիտի տըըվի ձեր գոգը · ան չափովը՝ որով դուք կըչափիք , ձեզի պիտի չափվի :
39 Առակ մըն ալ բսաւ անոնց · Ա՛ի թէ կոյրը կու-
40 րին կրնայ առաջնորդութիւն բնել , չէ՞ որ եր-
կուքն ալ փոսը կիյնան : Աշկերտը իր վարպետէն ադեկ չէ · ամէն կատարեալը իր վարպետին պէս կըլլայ :
41 Ինչու՞ քու եղբօրդ աչքին մէջի շուղը կըտես-
նաս , և քու աչքիդ մէջի գերանը չես տեսնար :
42 Կամ՝ թէ ինծո՛ր կրնաս բսել , քու եղբօրդ · Ե՛ղ-
բայր՝ թող տուր որ աչքիդ մէջէն շուղը հանեմ · և դուն քու աչքիդ մէջի գերանը չես տեսնար · կեղծաւոր՝ առաջ քու կին աչքէդ գերանը հանէ , ու ետքը նայէ քու եղբօրդ աչքէն շուղը հանել :
43 Ինչու որ ադեկ ծառ մը չի կայ՝ որ գէշ պտուղ կրբերէ · ու նաև գէշ ծառ մը չի կայ՝ որ ադեկ
44 պտուղ կրբերէ · ման ղի ամէն մէկ ծառ իր պը-
տուղէն կրճանչըըվի · ինչու որ փուշերէն թուզ չեն քաղեր , ու մորենիէն խաղող չեն կրնար :
45 Ինարի մարդը՝ իր սրտին բարի գանձէն բարի բան կրհանէ · և չար մարդը՝ իր պոռնի չարութենէն չար բան կրհանէ · ինչու որ իր բերանը սրտին էվելցուքէն կրխօսի :
46 Ինչո՞ւ իս Տէր՝ Տէր՝ կրկանչէք , ու ինչ որ կը-
47 սեմ՝ նէ՝ չէք ըներ : Ին ամէնը որ ինծի կուգայ՝ և իմ խօսքերըս կրլըսէ՝ ու անոնք կրբռնէ , ձեզի
48 ցուցընեմ որի կրնմանի : Անիկա ան տուն շինող մարդուն կրնմանի , որ փորեց ու խորունկցուց , և հիմը քարի վրայ դրաւ · ըլ-ըլն հեղեղները ո՛ր

եղան՝ գետը զարկաւ տունին , ու չի կրցաւ անի-
կա շարժել . ինչու որ հիմը քարի վրայ հաստատ-
ւած էր ։ Բայց անիկա՝ որ իմ խօսքերըս կը լսէ՝ 49
ու չընէր , կընմանի հողին վրայ առանց հիմի տուն
շինող մարդուն . որ անիկա գետը զարկաւ՝ և
շուտ մը ինկաւ , ու ան տանը կործանումը մեծ
էր ։

Գ Լ Ո Ւ Խ Ը Ե ։

Ա Ւ երբոր իր բոլոր խօսքերը լմընցուց ժողո- 1
վուրդին ականջին առջին , մտաւ Կափառնայ-
ում ։ Հարիւրապետի մը ծառայ ծանր հիւանդ- 2
ցած՝ մեռնելու , որ իր սիրականն էր ։ Եր- 3
բոր Յիսուսի վրայով լսեց՝ Հրեաներուն ծերերը
խրկեց , կաղաչէր անոր՝ որ գայ իր ծառան ապ-
րեցունէ ։ Անոնք ալ եկան Յիսուսին՝ շատ կա- 4
ղաչէին անոր , ու կըսէին , թէ՝ Անիկա արժանի
է որուն որ աս շնորհը կընես ։ Ինչու որ մեր 5
ազգը կսիրէ , և ժողովարանը անիկա շինեց մե-
զի ։ Ու Յիսուս անոնց հետ գնաց . երբոր տունէն 6
շատ հեռու չէր՝ հարիւրապետը բարեկամները
անոր խրկեց , և ըսաւ իրեն . Տէր՝ մի՛ աշխատիր ,
ինչու որ ես արժանի չեմ որ դուն իմ երդիքիս
տակը մտնաս . անոր համար ես ինքզինքս ալ ար- 7
ժանի չի սեպեցի քեզի գալու . հապա խօսքով
ըսէ՛ , և իմ ծառաս կըբժշկըվի ։ Ինչու որ ես 8
ալ իշխանութեան տակ դրված մարդ մըն եմ ,
իմ հրամանիս տակը զինուորներ ունիմ . և մէկուն
կըսեմ՝ Գնա՛ , և ան կերթայ , և ուրիշին՝ թէ
Եկո՛ , և կուգայ , և ծառայիս՝ թէ Ա՛յս բանը
ըրէ՛ , ու կընէ ։ Եւ երբոր աս լսեց Յիսուս , զար- 9
մացաւ . դարձաւ դէպ ի՛ ժողովուրդին՝ որ իր
ետևէն կերթային , ու ըսաւ . Ա՛մէնիս կըսեմ
ձեզի , որ Իսրայէլի մէջ ալ ես այսչափ հաւատք
չի գտայ ։ Ու խօսք տանողները նորէն տուն դար- 10
ձան , և հիւանդ ծառան բժշկված գտան ։

11 Եւ եղաւ որ վաղուան օրը քաղաք մը կերթար ,
որուն անունը Նային էր · իր հետը կերթային իր
12աշակերտներն ալ , ու շատ ժողովուրդ : Երբոր
քաղաքին դռանը մօտիկցաւ , մէկ մեռել մը
դո-ւս կելլարկոր՝ իր մօրը մէկ հատիկ տղան , և
ինքը որբևարի էր , ու քաղաքին շատ ժողովուրդը
13անոր հետն էր : Տէրը երբոր անիկա տեսաւ՝
14մեղբըցաւ անոր վրայ , ու ըսաւ · Մի լար : Եւ
գնաց ձաղին մօտիկցաւ , ու անոնք որ վերցուցեր
կրտանէին՝ կանգ առին · և ըսաւ · Ով կտրիճ
15քեզի կըսեմ՝ ելլէր : Մեռելը ելաւ նստաւ՝ և
սկըսաց խօսիլ , ու տըւաւ անիկա իր մօրը : Եւ
բոլորն ալ վախով բռնըվեցան · ու կըփառաւո-
րէին Աստուած՝ և կըսէին թէ , Մէկ մեծ մար-
գարէ մը եղեր է մեր մէջը · և թէ Աստուած իր
17ժողովուրդին տես եկեր է բարեւթիւնով : Եւ
աս խօսքը իր վրայովը բոլոր Հրէաստան ելաւ ,
ու ան աշխարհին բոլոր կողմերը :
18 Ու Յովհաննէսին պատմեցին իր աշակերտները
19աս ամէն բաներուն վրայով : Յովհաննէս ալ իր
աշակերտներէն երկուքը իրեն կանչեց , խրկեց
անոնք Տէրոջը՝ և ըսաւ · Գնա՛ս եա՛ որ պիտի գաս ,
20թէ ուրիշին սպասենք : Եւ ան մարդիկը եկան
իրեն՝ ըսին · Յովհաննէս Մկրտիչ մեզ խրկեց
քեզի , ու կըսէ · Գնա՛ս եա՛ որ պիտի գաս , թէ ու-
21րիշին սպասենք : Եւ նոյն ժամուն մէջ շատերը
իրենց հիւանդութիւններէն բժշկեց , ու խոց-
ուածներէն՝ և չար դևերէն · ու շատ կոյրերուն ալ
22տեսնալ տըւաւ : Պատասխան տըւաւ Յիսուս
անոնց՝ ու ըսաւ · Գացէ՛ք Յովհաննէսին պատմե-
ցէ՛ք՝ ինչ որ տեսաք ու լսեցիք նէ · որ կոյրերը
կըտեսնան , կաղերը կըքալեն , բորոտները կըսրբը-
բըվին , խուլերը կըլսեն , մեռելները կելլան ,
23աղքատներուն աւետարանը կըքարոզվի · և երջ-
նէկ անոր՝ որ իմ վրաս չի գայթակղիր :
24 Եւ երբոր Յովհաննէսին դեսպանները գացին ,

սկըսեց ժողովուրդներուն հետը խօսիլ Յօհաննէսին համար . Ո՞նչ տեսնալու ելաք անապատը . հովէն շարժըված եղէգ մը ։ Ապա ի՞նչ տես- 25
նալու ելաք . փափուկ հագուստներով զարդար- ված մա՞րդ մը . ահա անոնք որ փառաւոր հա- գուստներու ու փափկութեան մէջ են՝ թագա- ւորական պալատներն են ։ Ապա ի՞նչ տեսնա- 26
լու ելաք . Մարգարէ՞ , Այ՛ . ձեզի կըսեմ որ , մարգարէէ ալ շատ աւելի ։ Ասոր որ ասիկա է , 27
որուն համար գրված է , Թէ Ահա իմ դեսպանը քու առջեւէդ կրկարկեմ , որ քու ճամբադ քու առ- ջեւէդ շըտկէ ։ Ա՛շմարիտ կըսեմ ձեզի . Կնիկնե- 28
րէն ծնածներուն մէջ Յօհաննէսէն մեծ մարգա- րէ չի կայ . բայց Աստուծոյ թագաւորութեան մէջի պզտիկը անկէց մեծ է ։

Եւ բոլոր ժողովուրդը երբոր լսեց , ու մաքսա- 29
աւորները՝ արդարացուցին Աստուած , որ իրենք Յօհաննէսին մկրտութիւնովը մկրտվեցան ։ Բայց 30
փարիսեցիները և օրինականները Աստուծոյ խոր- հուրդը իրենց անձին մէջ անարգեցին , որ անկէց չի մկրտվեցան ։

Ո՞ Տէրը ըսա՝ . Ասոր որի՞ նմանցուցեմ ասդ- 31
գին մարդիկը , և որի՞ կընմանին ։ Կընմանին 32
ան տղոցը՝ որ շուկաները կրնստին , մեկզմեկ կը- կանչեն՝ ու կըսեն . Ձեզի փող չալեցինք՝ և պար չի խաղցիք . ողբացինք՝ և չի լացիք ։ Յօհաննէս 33
Ո՝կըտիչ եկաւ՝ չէր ուտեր և չէր խըմեր , ու կը- սէիք . Դեւ կայ անոր մէջը ։ Որդին մարդոյ եկաւ՝ 34
կուտէ և կըխըմէ , ու կըսէք . Ա՛հա կերող և խը- մող մարդ մը՝ մաքսաւորներուն ու մեղաւորներուն բարեկամը ։ Բայց իմաստութիւնը իր զաւակներէն 35
արդար սեպվեցաւ ։

Փարիսեցիներէն մէկը կաղաչէր Յիսուսին՝ որ 36
իր հետը հաց ուտէ . ան ալ փարիսեցիին տունը մտաւ՝ սեղան նստեցաւ ։ Ու քաղաքին մէջը մեղա- 37
ւոր կնիկ մը կար . երբոր գիտցաւ՝ Թէ ինքը փա-

բիսեցիին տունը սեղան նստեր է , մէկ շիշ մը
38 պատուական եղ բերաւ · եւեւի կողմէն անոր ոտ-
վէներուն քով կեցեր՝ կուլար , և արցունքովը
սկըսեց անոր ոտքերը թրջել , և իր գլխուն մա-
զերովը կըսրբէր , և կըպագնէր անոր ոտքերը , ու
39 եղով կօծէր : Եւ երբ տեսաւ փարիսեցին՝ որ ա-
նիկա հրաւիրեր էր , կըսէր իր միտքին մէջը · Ե-
սիկա թէ որ մարգարէ մը ըլլար , ուրեմն կըգիտ-
նար թէ ո՞վ՝ և ինտր կինի է իրեն մօտեցողը ·
40 ինչու որ մեղաւոր է : Պատասխան տուաւ Յի-
սուս՝ ու ըսաւ անոր · Սիմոն՝ քեզի բան մը ունիմ
ըսելու · ան ալ բսաւ , Ըսէ վարդապետ · և ինքը
41 ըսաւ : Մէկ փոխ տուող մը երկու պարտական
ունէր · մէկը հինգ հարիւր դահեկան պարտք ու-
42 նէր , ու մէկալը՝ յիսուն : Եւ երբոր չունէին
անոնք՝ որ կրնան պարտքը հատուցանէին , երկու-
քին ալ բաշխեց · հիմայ զուրցէ՝ որը շատ կըսիրէ
43 անիկա : Ըսաւ Սիմոն · Ինծի ասանկ կերեւայ թէ՝
որին որ շատ բաշխեց նէ · ան ալ բսաւ իրեն ·
44 Հիտակ դատեցիր : Ու դառնալով դէպի կինի-
կը՝ ըսաւ Սիմոնին · Կըտեսնաս աս կինիկը · քու
տունդ մտայ , դուն ոտքիս ջուր չի տրվիր · բայց
սիկա իր արցունքովը ոտքերըս թրջեց , և իր
45 մազերովը սրբեց : Դուն ինծի պաղ մը չի տը-
վիր · սիկա ահա քանի որ հոս մտեր եմ՝ ոտվը-
46 ներըս պագնելէն չի դադրեցաւ : Եղով իմ գը-
47 լուխս չօծեցիր · սիկա անուշ եղով օծեց : Ըսոր
համար կըսեմ քեզի , Ներված ըլլայ սոր իր
շատ մեղքերը · ինչու որ շատ սիրեց · ումն որ
որին որ Ներ շատ կըթողու՝ շատ կըսիրէ · և որին
48 որ քիչ՝ քիչ : Ու ըսաւ անոր · Ներ մեղքերդ
49 քեզի ներվին : Եւ իրեն հետ սեղան նստողները
սկըսեցին իրենց մտքին զուրցել · Ո՞վ է աս՝ որ
50 մեղաց թողութիւն կուտայ : Եւ ինքը ըսաւ կընի-
կանը · Ներ հաւատքդ քեզ ազատեց · գնա խա-
ղաղութեամբ :

ԻԲ ։

Եւ եղաւ որ անկէ ետև ալ ինքը կ՚երթար քաղաքները ու գեղերը , կը քարոզէր՝ և Աստուծոյ թագաւորութիւնը կաւետարանէր . ու տասներկուքն ալ իր հետը . և քանի մը կիներ՝ որ չար դևերէ ու հիւանդութիւններէ բժշկուած էին , Մարիամը՝ որ Մագդաղենացի կ՚ըսվէր , ուսկից որ եօթը դև ելեր էր . և Յովհաննա՝ Հերովդէսին տնտեսին Քուզային կինը , ու Շուշանը , և շատ ուրիշները . որոնք իրենց ստացուածքովը անոր ծառայութիւն կ՚ընէին ։

Եւ երբոր շատ ժողովուրդներ հաւաքեցան , ու շատ քաղաքներէն իրեն որ եկան , առակով մը ըսաւ անոնց ։ Ասիկ ցանող մը ելաւ իր սերմերը ցանելու . և երբոր ցանելու եղաւ՝ մէկ քանին ճամբուն վրայ ինկաւ , ու ոտքի տակ կոխվեցաւ , և երկինքի թռչունները կերան անիկա ։ Եւ ուրիշը ապառաժի վրայ ինկաւ , ու բուսածին պէս չորցաւ՝ թացութիւն չունենալուն համար ։ Եւ ուրիշը փուշերուն մէջ ինկաւ , ու փուշերը անոր հետ բուսնելով՝ խղդեցին անիկա ։ Եւ ուրիշը աղէկ ու պարարտ հողի վրայ ինկաւ , և երբ բուսաւ՝ հարիւրապատիկ պտուղ տուաւ . երբոր ասոնք զրցեց , ըսաւ . Ան որ ականջ ունի , թող լսէ ։

Աշակերտները կը հարցուցնէին անոր , թէ Ինչ պիտի ըլլայ ան առակը ։ Ան ալ ըսաւ . Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները ձեզի տրուած է գիտնալ . բայց ուրիշներուն առակներով . որ պիտի տեսնան՝ և չի տեսնան , ու պիտի լսեն՝ և չիմանան ։

Այդ ան առակը ասա է . Սերմը՝ Աստուծոյ խօսքն է ։ Ու ճամբուն վրայինները անոնք են որ կ՚լսեն , ու ետքը Սատանան կուգայ՝ անոնց սիր-

տէն ան խօսքը կը՛հանէ , որ չը՛լսէ թէ՛ հաւատան՝
13 ու փրկուին : Եւ ապառաժին վրայինները անոնք
են որ երբոր կը՛լսեն , ուրախութեամբ կ՛ընդունին
ան խօսքը . և անոնք արմատ չունին , մէկ ատեն
մը կը՛հաւատան՝ ու փորձութեան ժամանակը կը՛հե-
14 ռանան : Եւ փուշերուն մէջ ինկածն ալ անոնք
են , որ երբ ան խօսքը կը՛լսեն , ու աշխարհիս հո-
գերովը ու մեծութիւնովը և ցանկութիւնովը ըլ-
բաղած ը՛լլալով՝ կ՛երթ ը՛դրվին , և անպտուղ կը՛լ-
15 լան : Ա՛տյց պարարտ հողին վրայինը անոնք են որ
ազնիւ և ուրախ սիրտով լսելով ան խօսքը՝ կը՛ն-
դունին , ու համբերութիւնով պտուղ կ՛ուտան :
16 Ձի կայ մէկը որ ճրագը վառէ՝ ու ամանի մը
տակ կամ մահիճին ներքեւը դնէ . Հապա աշտա-
նակին վրայ կը՛դնէ , որ մտնողները լոյս տես-
17 նան : Ձի կայ ծածուկ բան մը որ յայտնի չը՛լլայ .
և գաղտուկ բան մը որ չի գիտցուի՝ ու երեւան
18 չը՛լլայ : Ա՛ւստի նայեցէք՝ ինչպէս որ կը՛լսէք . ինչու
որ ով որ ունի նէ՝ անոր պիտի տը՛րվի , և ով որ
չունի նէ՝ ան ալ որ ինքը [կը՛կարծէ թէ ունի ,
առմէկէց պիտի վերցը՛վի :
19 Իր մայրը ու եղբայրները իրեն եկան , և բազ-
20 մութենէն չէին կրնար անոր հասնիլ : Ա՛մացու-
ցին անոր՝ և ըսին . Ա՛յրդ ու եղբայրները դուրս
21 կեցեր են , ու քեզ տեսնալ կ՛ուզեն : Եւ
բսաւ անոնց . Իմ մայրս ու իմ եղբայրներս ա-
սոնք են , որ Ա՛ստուծոյ խօսքը կը՛լսեն և կը՛կա-
տարեն :
22 Եւ եղաւ որ մէկ օր մը ինքը նաւը մտաւ , ու
իր աշակերտներն ալ , և ըսաւ անոնց . Եկէք անց
23 ծովակին մէկալ կողմը անցնինք . ու գացին : Եւ
երբոր նաւով կ՛երթային՝ ինքը քուն մտաւ , ու
փոթորիկ չուվ մը իջաւ ծովակին մէջը , և կուռա-
24 նար , ու իրենք մեծ նեղութեան մէջ կ՛էին : Ա՛ր-
տեցան արթընցուցին անոնք՝ ու ըսին . Ա՛յրդա-
պետ վ՛այրդապետ՝ հիմայ կ՛կորսըվինք . ան ալ

եղաւ սաստեց հովին , ու ջուրերուն խռովութեան՝ նը՝ և հանդարտեցան , ու եղաւ խաղաղութիւն ։
Ետու անոնց ։ Ո՞ր է ձեր հաւատքը ։ և մեծ վախ մը մեզի վրայ ինկած զարմացան ։ ու կըսէին մէկզմէկու ։ Ո՛վ պիտի ըլլայ արդեօք ասկիա՝ որ հովերուն ու ջուրերուն ալ հրաման կուտայ՝ և կը հնազանդին ասոր ։
Ու նաւելով իջան Կերգեսացոց երկիրը , որ Գալիլեայի դիմացի կողմն է ։ Եւ երբոր ինքը ցամաքը ելաւ՝ ան քաղաքէն մէկ մարդ մը եղաւ դիմացը , որուն ներսը դեւեր կային , ու շատ ատեն լաթ չէր հագած , ոչ ալ տուներ մէջ բնակած ։ Տեսաւ զերեզմանները ։ Ու Յիսուսը տեսնալով կանչ վըռնեց , և ինկաւ անոր առջևը , ու բարձր ձայնով ըսաւ ։ Ի՞ւն իմ հետս ինչ բան ունիս Յիսուս Որդիդ Աստուծոյ Բարձրեալ կաղաչեմ քեզի՝ խ մի՛ տանջեր ։ (Ինչու որ հրաման կուտար ան պիղծ դեւին՝ որ ան մարդէն ելլայ ։ Ինչու որ շատ ատեն էր՝ որ անիկա յափշտակեր էր ։ որ շղթաներու մէջ կրկապվէր , ու երկաթներու մէջ կրպահվէր ։ և ան կապերը կը խրզտէր , ու դեւէն անապատը կրքշվէր ։) Հարցուց անոր Յիսուս՝ և ըսաւ ։ Ինուն ի՞նչ է ։ ան ալ ըսաւ , Լեգէօն ։ ինչու որ շատ դեւեր մտեր էին անոր մէջը ։ Եւ կաղաչէին անոր՝ որ անդունդը երթալու հրաման չընէ իրենց ։ Եւ ան տեղը շատ խոզերու երամակ մը կար՝ որ լեռը կարածէին ։ ու աղաչեցին անոր՝ որ հրաման տայ իրենց անոնց մէջը մտնալ ։ և հրաման ըսաւ անոնց ։ Ու դեւերը ան մարդէն ելան , մտան ան խոզերուն մէջը ։ ու երամակը ան բարձր տեղէն դէպի ծով վազեց , և խըղդըվեցաւ ։ Խոզ արծողները երբոր ասեղածը տեսան փախան , ու պատմեցին քաղաքը և ագարակները ։ Եւ երբոր ելան եղած բանը տեսնալու , ու եկան Յիսուսին քովը՝ և գտան մարդը ուսկից որ ան դեւերը ելեր էին հագած և

թել քը վրան Յիսուսի ոտքը նստած , ալ վախ-
36 ցան ։ Տեսնողները պատմեցին անոնց , թէ ինչպէս
37 դիւահարը ազատեցաւ ։ Եւ Վերդեսացոց չորս
կողմերը եղող բազմութիւնը կաղաչէր անոր , որ
իրենց սահմաններէն երթայ · ինչու որ՝ մեծ վա-
խով կրդողային · ան ալ նաւը մտաւ՝ նորէն ետ
38 դարձաւ ։ Ան մարդը ուսկից որ դեւերը ելեր
39 էին՝ կաղաչէր անոր , որ իր հետը պրծուի ։ Ետյ
Յիսուս իրկեց անիկա և ըսաւ · Վարձիր քու
տունդ , ու Աստուած քեզի ինչ որ ըրաւ նէ՝
պատմէ · գնաց քաղաքը , ու ինչ որ Յիսուս իրեն
ըրաւ նէ՝ կըքարոզէր ։
40 Եւ երբոր Յիսուս նորէն ետ դարձաւ՝ ժողո-
վուրդը զինքը ընդունեց · ինչու որ ամէնքը անոր
41 կրսպասէին ։ Ու ահաւոր Այրոս անունով մարդ
մը եկաւ · և ինքը ժողովարանին իշխանն էր · ին-
կաւ Յիսուսի ոտքը՝ կաղաչէր անոր , որ իր տու-
42 նը մտնայ · ինչու որ մէկ աղ չկի մը ունէր մօրը
մէկ հատիկը՝ տասներկու տարեան չափ , որ մեռ-
նելու մօտ էր · ու անոր երթալուն ատենը ժողո-
վուրդները զինքը կըճնշէին ։
43 Եւ մէկ կնիկ մը կար՝ որ տասներկու տարիներէ
հետէ արիւնի տեւառտեսութեան մէջն էր , որ իր
բոլոր ստացուածքը բժիշկներուն խարճեր էր ,
44 ուրուն բժշկրվելու ձարը մէկ մը չէր գտած ։ Ե-
տևէն մօտենալով՝ դրպաս անոր լաթին ծայրե-
րուն , ու նոյն ժամուն արիւնին վազելը կտրե-
45 ցաւ ։ Եւ ըսաւ Յիսուս · Ո՞վ էր ան որ ինծի դը-
պաս · երբոր ամէնքը կուրանային՝ ըսաւ Պետրոս
և իր հետը եղողները · Ո՛վ արդապետ՝ ժողովուրդ-
46 ները քեզ կըսխմեն ու կընեղնկոր ։ Եւ Յիսուս
ըսաւ · Ո՛էկը ինծի դրպաս , ինչու որ՝ իմացայ որ
47 մէկ զօրութիւն մը ելաւ ինծմէ ։ Երբոր տեսաւ
կնիկը՝ որ Քանը անկէց չի պահվեցաւ , դողդղա-
լով եկաւ՝ ու ինկաւ անոր առջևը , ինչ բանի
համար անոր դրպչեցաւ նէ՝ բոլոր ժողովուրդին

առջին պատմեց, և թէ՝ ինտոր ինքը խսկոյն բժըշ-
կըվեցաւ : Ան ալ ըսաւ . Ո՛ի վախնար մի՛ չիկ՝ 48
քու հաւատդ քեզ ազատեց, գնա՛ խաղաղու-
թեամբ :

Ու դեռ որ ինքը կըխօսէրկոր՝ ժողովրդապետին 49
տունէն մէկը եկաւ, և ըսաւ անոր . Աղջկադ մե-
ռաւ, ալ ատիկա մի՛ չոգներ : Լսայց Յի- 50
սուս երբոր լսեց պատասխան տուաւ անոր՝ ու
ըսաւ . Ո՛ի վախնար, միայն հաւատա, և պիտի
ապրի : Եւ երբ տունը մտաւ՝ ուրիշ մէկը թող 51
չի տուաւ մտնելու, միայն Թէ Պետրոսը ու Յա-
կոբոսը և Յովհաննէսը, ու աղջկանը հայրը և ա-
նոր մայրը : Ամէնն ալ կուլային ու 52
անոր վրայ . և ինքը ըսաւ, Ո՛ի լաք . ինչու որ
մեռած չէ, հապա կըքնանակոր : Եւ անոնք ծաղր 53
կընէին անկից . ինչու որ գիտէին՝ Թէ մեռաւ :
Ու ինքը ամէնն ալ դուրս հանեց, բռնեց ա- 54
նոր ձեռքէն, խօսեցաւ՝ ու ըսաւ . Աղջիկ՝ ելիր
կայնէ : Եւ անոր հոգին դարձաւ, ու շուտ մը 55
կայնեցաւ . և հրամայեց որ բան տան անոր
ուտելու : Ու անոր ծնողքը զարմանք քաշեցին 56
և ինքը կապըսպրեր որ մէկու մը չի զըրցեն ինչ
որ եղաւ նէ :

ԺԲ . ԹԼ :

Եւ տասներկու աւաքեալները կանչեց՝ անոնց 1
զօրութիւն ու իշխանութիւն տուաւ բոլոր
դեւերուն վրայ, և հիւանդութիւնները բժշկելու :
Եւ անոնք խրկեց որ Աստուծոյ թագաւորութիւ- 2
նը քարոզեն, ու ցաւագարները բժշկեն : Եւ 3
ըսաւ անոնց . Ա՛մբոյ համար բան չառնէք, ոչ
գաւազան՝ և ոչ տոպրակ, ոչ հաց՝ և ոչ դրամ,
ոչ ալ երկու հագուստ ունենաք : Եւ որ տուն 4
որ մտնաք՝ հոն մնացէք, և անկէց գացէք : Եւ 5
անոնք որ ձեզ չեն ընդունիր՝ երբոր ան քաղաքէն
կելլաք, ձեր ոտքի փոշին թօթվեցէք՝ իրենց դէմ

6 վկայութիւն ըլլալու : Ու եղան քաղաքները և
գեղերը կրպտըտուեին , աւետարանը կրքարոզէին՝
և ամէն տեղ բժշկութիւն կընէին :
7 Հերովդէս չորրորդապետը աս բոլոր բաները
լսեց , ու կրզարմանար . որովհետև բսած էր մէկ
8 քանիներէն , թէ Յովաննէս յարութիւն առաւ մե-
ռելներէն . ու մէկ քանիներէն ալ թէ Եղիան
յայտնըվեցաւ . և ուրիշներէն ալ թէ Հնչի մար-
9 գարէներէն մէկը յարութիւն առաւ : Հերովդէս
բսաւ . Յովաննէսը ես գլխատեցի , հապա ասիկա
ով պիտի ըլլայ , որուն համար ասանկ բաներ կը-
լսեմ . ու կուզէր որ տեսնայ անիկա :
10 Առաքեալները դարձան , և պատմեցին անոր՝
բոլոր ինչ որ ըրին . ու առաւ անոնք՝ առանձին
անապատ տեղ մը քաղաքի մը քով ,
11 որուն անունը Բեթսայիդա էր : Եւ ժողովուրդ-
ները երբոր իմացան՝ գացին անոր ետևէն , ու
անոնք ընդունելով՝ հետերնին կրխօսէր Աստու-
ծոյ թագաւորութեան վրայով . և որոնք որ քը-
ժշկութեան կարօտ էին՝ կրբժշկէր :
12 Եւ օրը որ սկըսեց ուշանալ՝ տասներկուքը ե-
կան ու ըսին անոր . Ղրկ ժողովուրդները ,
որ երթան աս բոլորի գեղերը՝ և ագարակները՝
հանգըստանան , ու կերակուր գտնան . ինչու որ
13 հոս անապատ տեղի մէջ ենք : Բսաւ անոնց .
Դուք տըվէք անոնց՝ որ ուտեն . անոնք ալ ըսին .
Մենք հինգ նկանակէն ու երկու ձուկէն աւելի
բան չունինք , թէ որ չերթանք աս ժողովուրդին
14 հերիք ըլլալու կերակուր գնենք նէ . (ինչու որ
հինգ հազարի չափ մարդիկ կային ,) բսաւ աշա-
կերտներուն . Տոնք դաս դաս յիսուն յիսուն
15 նստեցուցէք : Եւ անանկ ըրին , ու ամէնն ալ նըս-
16 տեցուցին : Ու ան հինգ նկանակը և երկու ձուկը
առնելով՝ դէպի երկինքը նայեցաւ , օրհնեց , և
կտրեց՝ ու տըւաւ աշակերտներուն , որ ժողովուր-
17 դին առջևը դնեն : Կերան և կըշտացան ամէնքն

ալ , ու կտորներուն ՇԱցուքը տասներկու սա-
կառ վերցուցին ։

Եւ եղաւ որ երբ ինքը միևասորիկ աղօթք կը- 18
նէր , իր աշակերտներն ալ իր հետն էին · Հար-
ցուց անոնց և ըսաւ · Ժողովուրդները ինծի հա-
մար ով կըսեն՝ որ ես եմ ։ Անոնք ալ պատաս- 19
խան տալով ըսին · Յովհաննէս Մկրտիչը , և ու-
մանք՝ Եղիան , ուրիշներն ալ՝ Թէ Նախ մարգա-
բէներէն մէկը յարութիւն առեր է ։ Ինքը ըսաւ 20
անոնց · Ուստի ինծի համար ով կըսէք որ ես եմ ·
պատասխան տուաւ Պետրոս՝ ու ըսաւ · Աստուծոյ
Քրիստոսը ։

Ինքը սաստիկ պատուիրեց անոնց , ու ապրս- 21
պերեց որ մէկու մը չի զգուցեն ան · ըսելով Թէ , 22
Պէտք է որ Որդին մարդոյ շատ չարչարվի , ու
քահանայապետներէն և ծերերէն ու կարգացող-
ներէն անարգըվի , և սպանվի , ու իրեք օրէն
յարութիւն առնէ ։ Եւ ամենուն կըսէր , Թէ որ 23
մէկը կուզէ իմ ետևէս գալ , իր անձը Թող ու-
րանայ և ամէն իժիր իր խաչը առնէ , ու գայ իմ
ետևէս ։ Վասն զի՝ ով որ իր անձը ապրեցնել 24
կուզէ , պիտի կորսընցունէ անիկա · և ով որ իր
անձը ինծի համար կրկորսընցունէ՝ պիտի ապրե-
ցունէ անիկա ։ Ինչ շահ է մարդու մը , Թէ որ 25
աշխարհը վաստրկի , և իր անձը կորսընցունէ՝
կամ վնասէ ։ Վասն զի ով որ իս ու իմ խօսքերս 26
ամօթի կրսեպէ , Որդին մարդոյ ալ անիկա ամօ-
Թով պիտի ընէ՝ երբոր գալու ըլլայ իր ու Հօ-
րը և սուրբ Հրեշտակներուն փառքովը ։ Ասյց 27
Ճշմարիտ կըսեմ ձեզի՝ որ հոս կայնողներէն մէկ
քանիները կան , որոնք մահ չի պիտի Ճաշակեն ,
մինչև Աստուծոյ Թագաւորութիւնը տեսնան ։

Եւ եղաւ որ աս խօսքերէն ուՀ աւուր չափ 28
ետքը՝ Պետրոս ու Յակոբոս և Յովհաննէս ա-
ռաւ , լեռ մը եղաւ աղօթք ընելու ։ Եւ երբոր ին- 29
քը աղօթք կընէր՝ իր երեսին տեսքը ուրիշ կերպ

մը եղաւ , ու իր Հագուստը փոխվեցաւ եղաւ ճեր-
30մակ՝ փայլուն : Եւ ահ յանկարծ երկու մարդիկ իր հե-
տը կը խօսէին , որոնք Մովսէսէ ու Եղիան էին ,
31փառքով երեւցած , և անոր Երուսաղէմին մէջ պիտի
մեռայով կը խօսէին , որ Երուսաղէմին մէջ պիտի
32կատարվէր : Իսկ Պետրոս և անոր հետ եղողնե-
րը քունով ծանրըցած էին . արթընցան , տեսան
անոր փառքը , ու ան երկու մարդիկը՝ որ անոր
33քովը կեցեր էին : Եւ եղաւ որ երբ անոնք զատ-
վեցան անոր քովէն , Պետրոս ըսաւ Յիսուսին .
Ա՛րդապետ՝ աղէկ է որ մենք հոս ըլլանք , ու թ-
ռնք խրձիթ շինենք . մէկը քեզի՝ և մէկը Մով-
սէսին , և մէկ մալ Եղիային . ու չէր գիտեր ինչ
34կը խօսէր : Եւ երբոր ասը ըսաւ՝ ամպ մը եկաւ ու
անոնց վրայ շուք եղաւ , և ամպին տակը որ մտան
35նէ՝ վախցան : Ձայն մը եղաւ ամպէն՝ և ըսաւ .
Ասիկա է իմ ընտրեալ Որդիս . ասոր մտիկ ըրէք :
36Եւ ան ձայնը որ եղաւ՝ Յիսուս միայնակ գտնըվե-
ցաւ . ու իրենք ալ լռեցան , և ինչ որ տեսան
նէ՝ ան օրերը մէկուն բան մը չի պատմեցին :
37 Եւ եղաւ որ հետևի օրը երբոր անոնք լեռնէն
վար կիջնային , շատ ժողովուրդ անոր դէմ եկաւ :
38Ու ահ յանկարծ ժողովուրդին մէջէն մէկ մարդ մը
կանչեց և ըսաւ . Ա՛րդապետ՝ կաղաչեմ քեզի ,
նայէ իմ որդիիս , որ ինծի՝ մօրը մէկ հատիկն է :
39Եւ ահա դեւը կը բռնէ անիկա , ու ան յանկարծ
կը կանչէ վրուռէ , և անիկա գետինը կը գարնէ ու
կը թաւալըցնէ և կը փրփրըցնէ , ու հազիւ
կը զատվի անկէ՝ ջարդուբուրդ ընելով անիկա .
40և քու աշակերտներուդ աղաչանք ըրի՝ որ հանեն
41անիկա , ու չի կրցան : Պատասխան տուաւ Յի-
սուս՝ և ըսաւ . Ով անհաւատ ու մոլորեալ ազգ ,
մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ՝ ու ձեզի մտիկ
42ընեմ . բե՛ր հոս քու որդիդ : Եւ գետ որ կը մօ-
տիկնար , դեւը անիկա գետինը զարկաւ՝ ու թօթ-
43վռտեց : Յիսուս հեռց պիղծ դեւին , ու բժշկեց

տղան՝ և տուաւ անիկա իր հօրը ։ Ու կըզար- 44
մանային ամէնքը Յ.ստուծոյ մեծ մեծ գործքերուն
վրայ ։

Եւ անոնց ամէնուն զարմացած ատենը իր ըսած 45
բոլոր բաներուն վրայ՝ ըսաւ իր աշակերտներուն ։
Դուք աս խօսքը ձեր ականջը դրէք որ՝ Որդին
մարդոյ պիտի մատնըվի մարդոց ձեռքը ։ Անոնք 45
ալ չէին իմանար ան խօսքը՝ և իրենցմէ ծածկը-
ված էր , որ չի հասկրնան ։ ու կրվախնային ալ
իրեն հարցունելու ան խօսքին համար ։

Ետոր Հուրդ մը մտաւ անոնց մէջ՝ թէ իրենց մէջը 46
մեծ ով է ։ Յիսուս երբոր իմացաւ անոնց սրտին 47
խորհուրդը՝ մանուկ մը առաւ իր քովը կայնեցուց
անոնց մէջ տեղը ։ և ըսաւ անոնց ։ Ով որ աս մա- 48
նուկը իմ անունովս կընդունի նէ՝ իս կընդունի ։
և ան որ իս կընդունի՝ անիկա իս խրկողը կընդու-
նի ։ ինչու որ՝ ան որ ձեր ամէնուն մէջը պզտիկ է
նէ , անիկա մեծ պիտի ըլլայ ։

Պատասխան տուաւ Յօհաննէս՝ և ըսաւ ։ Ով՛ար- 49
գելտ՝ մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր
կրհանէր , ու արգիլեցինք անիկա ։ ինչու որ՝ մեր
հետը չի պըտրտիր ։ Յիսուս ըսաւ անոնց ։ Մի՛ 50
արգիլէք ։ որովհետև ան որ ձեզի հակառակ չէ
նէ՝ ձեր կողմն է ։

Եւ եղաւ որ երբ իր աշխարհէն վերնալու օրերը 51
կըլմընարկոր , ինքն ալ միտքը դրաւ դէպի Եր-
սաղէմ երթալու ։ Ու դեսպաններ խրկեց իր ե- 52
րեսին առջևէն , որ երբոր գացին՝ Սամարացոց
մէկ գեղ մը մտան որ իրեն բան պատրաստեն ։ Եւ 53
չընդունեցին անիկա ։ ինչու որ՝ ինքը երեսը դէպի
Երուսաղէմ երթալու դրեր էր ։ Երբոր Յակոբոս 54
ու Յօհաննէս աշակերտները տեսան՝ ըսին ։ Տէր՝
կուզես որ ըսենք , ու երկինքէն կրակ իջնայ՝ և
սատկեցունէ անոնք ։ Դարձաւ չեխեց անոնք՝ ու 55
ըսաւ ։ Ձէք գիտեր թէ որ Հոգիին էք դուք ։
Ով՛ ան չի՝ Որդին մարդոյ չեկաւ մարդոց Հոգի- 56

նները կարսընցուհնելու , հապա խալըսելու . և ուրիշ գեղ մը գացին ։
57 Եւ երբոր անոնք ձամբան կերթային՝ ըսաւ մեկը անոր . Ես ալ քու ետեւէդ գամ՝ ուր որ
58 դուն երթաս ։ Յիսուս ըսաւ անոր . Աղուէսները բոյն ունին , ու երկինքի թռչունները գադրելու տեղ , բայց Որդին մարդոյ գլուխ չունի որ հոն դնէ ։
59 Ան ուրիշ մըն ալ ըսաւ , Երկո՛ր իմ ետեւէս . ան ալ ըսաւ . Տէր՝ հրաման տուր ինծի որ առաջ
60 երթամ իմ հայրս թաղեմ ։ Յիսուս ըսաւ անոր . Թող տուր որ մեռելները իրենց մեռելները թաղեն . ու դուն գնա՝ Աստուծոյ թագաւորութիւնը քարոզէ ։
61 Ան ուրիշ մըն ալ ըսաւ . Տէր՝ ես քու ետեւէդ կուգամ . բայց հրաման տուր ինծի որ առաջ
62 իմ տունէս հրաժարիմ ։ Յիսուս ըսաւ անոր . Ո՛ մեկը որ ձեռքը մատին վրայով կըձգէ՝ ու ետեւը կընայի , Աստուծոյ թագաւորութեանը յարմար է ։

ԺԱ ։

1 Ա սկէ ետեւ Տէրը ուրիշ եօթանասուներկուք ալ ներկայցուց . և անոնք երկուք երկուք իրկնց իր առջեւէն բոլոր քաղաքներն ու տեղերը՝ ուր որ ին-
2 քը պիտի երթար ։ Եւ ըսաւ անոնց . Հունձքը շատ են , ու բանւորները քիչ . ուստի հունձքերուն տէրոջը աղաչեցէք որ բանւորներ հանէ իր հունձ-
3 քերուն ։ Կացէք դուք . ահա ես ձեզ գառներու
4 պէս գայլերուն մէջը կրնրկեմ ։ Հետերնիդ քսակ մի՛ առնէք , ոչ տոպրակ , ոչ կօշիկներ . ու ճամ-
5 բան մեկուն բարեւ մի՛ տաք ։ Որ տուն որ մտնաք՝
6 առաջ ըսէք , Թէ Խաղաղ ատ տուներն ։ Եթէ որ հոն բարեւի աբժանաւոր որդի կայ նէ՝ ձեր բարեւը պիտի հանգչի անոր վրայ , հապա թէ չէ՝ ձեզի պիտի
7 դառնայ ։ Եւ ան տանը մէջ մնացէք , անոնցմէ

կներէք ու խմեցէք · ինչու որ բանվորը իր վարձքին արժանաւոր է , տունէ տուն մի՛ փոխուիք ։
Եր քաղաք որ մտնաք՝ ու ձեզ ընդունին , ինչ որ 8
առջևնիդ դնեն , ըլլան նէ՝ կերէք · ու բժկեցէք 9
անոր մէջի հիւանդները , և ըսէք անոնց , Յատուածոյ թագաւորութիւնը ձեր վրայ մօտեցեր է ։
Բայց որ քաղաք որ մտնաք՝ և անոնք ձեզ չընդու- 10
նին , երբոր անոր փողոցները կելլաք՝ ըսէք · Նոյն 11
փոշիներն ալ որ ձեր քաղքէն մեր ոտքերը փակչեր են , ձեզի կը թօթվենք · միայն թէ սա դիտեցէք՝ որ Յատուծոյ թագաւորութիւնը մօտեցեր է ։ Ձեզի կըսեմ , որ ան օրը Սոդոմացոց 12
դրութիւնը հեշտ դիւրին պիտի ըլլայ՝ քան թէ ան քաղաքին ։ Ո՛վ քեզի Քորազին · վա՛յ քեզի 13
Բեթսայիդա · ինչու որ եթէ Տիւրոսին ու Սիդոնին մէջը ըլլային ան զօրաւոր գործքերը՝ որ ձեր մէջը եղան , շատոնցմէ քուրձի և մոխրի մէջ նստած ապաշխարեր էին ։ Բայց դատաստանին 14
օրը Տիւրոսին ու Սիդոնին եղէ դիւրին պիտի ըլլայ՝ քան թէ ձեզի ։ Եւ դուն Կափառնայում՝ 15
որ մինչև երկինքը բարձրըցեր ես , մինչև դժոխքը պիտի իջնաս ։ Ան որ ձեզի մտիկ կընէ՝ ինծի մտիկ 16
կընէ · և ան որ ձեզ կանարգէ՝ իս կանարգէ · և ան որ իս կանարգէ՝ իս որ զիս կանարգէ · և ան որ ինծի մտիկ կընէ՝ իս որ զիս մտիկ կընէ ։
Դարձան ան եօթանասունեակները ուրախու- 17
թիւնով՝ ու ըսին · Տէր քու անունովդ դևերն ալ մեզի կը հնազանդին կոր ։ Եւ ըսաւ անոնց · Ես 18
տանէի կայծակի պէս երկինքէն վար ինկած կը տեսնայի ։ Ահա ձեզի իշխանութիւն տուի օձե- 19
րուն և կարիճներուն՝ ու թշնամին բոլոր զօրութիւներուն վրայ կոխկրտելու · ու ձեզի վնաս մը չի պիտի տան ։ Բայց դուք անոր վրայ մի՛ 20
խնդաք որ դևերը ձեզի կը հնազանդին , հապա խնդացէք՝ որ ձեր անունները երկինքը գրված է ։
Ան նոյն ժամուն Յիսուս Հոգւով Սրբով ու- 21

բախացաւ՝ և ըսաւ · Շ ՚նորհակալ եմ քեզմէ ով ՚Տ֊ր , երկինքի ու երկրի Տէրը , որ աս բաները իմաստուններէն և գիտուններէն ծածուկ պահե֊ցիր , ու ազգոյց յայտնեցիր տղոց · այո ՚Տ֊ր , ինչու որ՝ քու առջեդ այսպէս տղէկ երևցաւ :
22 *Ի՚մէն բան իմ ՚Հօրմէս ինծի տրվեցաւ , ու մէկը չի գիտեր Թէ ով է Որդին , միայն Թէ ՚Հայրը · և ով է ՚Հայրը՝ միայն Թէ Որդին · և որի որ Որ֊դին ուզէ յայտնել :*
23 Եւ դարձաւ աշակերտներուն առանձին մը֊ ը֊սաւ · Երանի ան աչքերուն՝ որ ձեր տեսածները
24 կըտեսանան · ձեզի կըսեմ , որ շատ մարգարէներ և Թագաւորներ ուզեցին ձեր տեսածը տեսնալ՝ ու չի տեսան , և ձեր լսածը լսել՝ ու չի լսեցին :
25 Ու ահա՚լ մէկ օրինագէտ մը ելաւ՝ կըփորձէր անիկա ու կըսէր , Ա՚մբարտան՝ ինչ ընեմ , որ
26 յաւիտենական կեանքը ժառանգեմ : Ի՚նիկա ալ ըսաւ անոր · Օրէնքին մէջը ի՚նչ գրված է · ին֊
27 տո՞ր կըկարդաս : Պատասխան տուաւ անիկա՝ ու ըսաւ · Սիրէ քու Տէր Ա՚ստուածդ քու բոլոր սիր֊տէդ՝ և քու բոլոր անձնէդ՝ և քու բոլոր զօրութե֊նէդ՝ և քու բոլոր միաքէդ · և քու ընկերդ ալ՝ քու֊
28 անձիդ պէս : Եւ ինքը ըսաւ անոր · Պատասխանդ շիտակ տուիր · առիկա ըրէ՝ ու պիտի ապրիս :
29 Ի՚նիկա երբոր ուզեց ինքզինքը արդարացունել , ը֊սաւ Յիսուսին · Ո՚վայ իմ ընկերս ով է : Պա֊
30 տասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ · Ա՚ՀԿ մարդ մը Երուսաղէմէն Երիքով կիջնար , ու գողերուն ձեռքը ինկաւ · որոնք մերկացուցին անիկա՝ ու վրան խոցեր դրին , կիսամեռ Թողուցին և գացին :
31 Պատահմունքաւ օր մէկ քահանայ մը ան ճամբէնէն կիջ֊
32 նար , ու տեսաւ անիկա՝ զանց ըրաւ : Ի՚սանկ ալ՝ մէկ Ղ ևտացի մը ան տեղէն երբոր կուգար , տե֊
33 սաւ՝ և զանց ըրաւ : Սամարացի մը ճամբայ ընե֊լով հան եկաւ անոր քով , և երբ տեսաւ անիկա՝
34 մեղքցաւ · Ու մօտեցաւ անոր վէրքերը փաթե֊

թնդ վըան ձէթի և գինի դնելով , ու իր գրաստին
վըայ դրաւ՝ տարաւ անիկա մէկ պանդոկ մը , և
անոր հոգ տարաւ ։ Ու վաղվան օրը երբոր կել 35
լար անկէց՝ հանեց պանդոկապետին երկու դահէ-
կան տըւաւ , և ըսաւ ։ Հոգ տար ատոր , ու ինչ
որ ծախք բնես ատոր վըայ՝ երբոր նորէն գամ
նէ , ես քեզի կրվճարեմ ։ Ասոնց ան իրեքէն որը 36
քեզի կերևայ մօտաւոր ընկէր ըլլալ ան գողերուն
ձեռքը խնողին ։ Ան նիկա ալ ըսաւ ։ Ան որ անոր 37
վըայ ողորմութիւն ըրաւ ։ Յիսուս ըսաւ անոր ։
Գնա՝ դուն ալ անանկ ըրէ ։

Ու եղաւ որ երբ անոնք գացին՝ ինքն ալ գեղ 38
մը մտաւ , և մէկ կնիկ մը Ա՛ռրգա անուանով ա-
նիկա իր տունը ընդունեց ։ Եւ անիկա մէկ քոյր 39
մը ունէր , որուն անունը Մ՛արիամ էր ։ որ նկաւ
Տէրոջը ոտքին տակը նստաւ՝ ու անոր խօսքերը
մտիկ կընէր ։ Բայց Մ՛արթան շատ պատրաստու- 40
թիւն տեսնելու մէջ զբաղած էր ։ նկաւ կայնեցաւ
անոր քով՝ և ըսաւ ։ Տէր՝ քու հոգդ չէ , որ իմ
քոյրս իս մինակ թողուց սպասաւորելեան մէջ ։
ուստի ատոր զըրկէ՝ որ ինծի օգնէ ։ Պատասխան 41
տըւաւ Յիսուս՝ և ըսաւ ։ Մ՛արթա Մ՛արթա ։
դուն կըհոգաս՝ ու շատ բաներով զբաղած ես ։
բայց հոս քիչ բան պէտք է ։ Մ՛արիամ ան ազկէ 42
բաժինը ընտրեց , ու իրմէն չի պիտի առնըվի ։

ԻԱ ։ ԺՈ ։

Ու եղաւ որ երբ մէկ տեղ մը աղօթք կընէր , 1
ու երբոր դադրեցաւ՝ իր աշակերտներէն մէկը
ըսաւ անոր ։ Տէր՝ մեզի աղօթք ընել սորվեցուր ,
ինծոր որ Յովհաննէս իր աշակերտներուն սորվե-
ցուց ։ Ան ալ անոնց ։ Երբոր աղօթք կընէք , ըսը- 2
ցեցէք ։ Ա՛ր ։ Հայրը քու անունդ սուրբ ըլլայ ։
քու թագաւորութիւնդ գայ ։ Ա՛ր ամէն առուր 3
հացը օրէ օր մեզի տուր ։ Եւ մեր մեզ քերը մեզի 4
ներէ ։ ինչու որ մենք ալ մեր պարտականներուն

ամէնուն կըներենք · ու մեզ փորձանքի մէջ մի՛
տաներ ։
5 Եւ բսաւ անոնց · Ձեզմէ ո՞վ է անիկա , որ ին֊
քը բարեկամ մը ունենայ , ու կէս գիշերուան մէջ
երթայ անոր՝ և ըսէ անոր · Բարեկամ՝ ինծի իրեք
6նկանակ փոխ տուր · ինչու որ իմ բարեկամս
ճամբայէն ինծի եկաւ , ու բան մը չունիմ անոր
7առջևը դնելու ։ Ներսիկա ալ ներսէն պատասխան
տայ՝ և ըսէ · Ինս մի՛ հոգներ · ինչու որ
դուռները գոց են , ու տղաքս իմ քովս անկողնի֊
մէջն են · չեմ կրնար ելլալ՝ և քեզի հաց տալ ։
8Ձեզի կըսեմ , թէև բարեկամութեան համար
չելլայ տայ նէ անոր , սակայն թախանձանքին հա֊
մար կելլայ ինչ որ պէտք է նէ՝ կուտայ անոր ։
9Ես ալ ձեզի կըսեմ · Խնդրեցէք՝ ու պիտի տրվի
ձեզի · փնտռեցէք՝ ու պիտի գտնաք · չալեցէք՝ ու
10պիտի բացվի ձեզի ։ Վասն զի՝ ամէն ո՞վ որ
խնդրէ՝ նէ՝ կառնէ · և ան որ կըփնտռէ՝ կըգտնայ ·
11և ան որ կըչալէ՝ կըբացվի անոր ։ Ձեզմէ ո՞վ է
ան հայրը՝ որ իր որդին իրմէն ձուկ ուզէ՝ նէ՝ ձու֊
12կին տեղը ձ՞ մի կուտայ անոր ։ Եւ կամ թէ հաւ֊
13կիթ ուզէ՝ նէ՝ կարի՞ մի կուտայ անոր ։ Ասոնք
թէ դուք՝ որ շար էք , գիտէք աղէկ պարգևներ
տալ ձեր որդւոցը , որչափ ալ աւելի ձեր Հայրը
երկինքէն բարիքներ կուտայ անոնց , որ իրմէն
կըխնդրեն ։
14 Եւ Յսուի դև մը կըհանէրկոր · ու եղաւ որ երբ
դևը ելաւ՝ ան համրը խօսեցաւ , և բոլոր ժողո֊
15մուրդները զարմացան ։ Եւ անոնցմէ մէկ քանի֊
ները ըսին , Թէ՝ Վէերուն իշխանին Յէեղզեբու֊
16զին ձեռքովը սատիկա դևերը կըհանէկոր ։ Ուրիշ֊
ներն ալ կըփորձէին , ու երկինքէն նշան մը կու֊
17զէին անկէց ։ Ասոր ինքը գիտնալով անոնց խոր֊
հուրդը՝ բսաւ անոնց · Իմէն թագաւորութիւն
իրեն դէմ բաժնըված՝ կաւերվի · և տուն մը իրեն
18դէմ բաժնըված՝ կըկործանի ։ Հապա թէ որ Սա֊

տանան ինքիրմէ բաժնուած է՝ ինչպէս անոր
թագաւորութիւնը պիտի մնայ. որ ինծի համար
կըսէք, թէ Վէլզեբուղ իշխանովը Դեւերուն
ատիկա գեւերը կըշանէ։ 19 Եւ եթէ ես Վէլզեբուղ-
ով գեւերը կըշանեմ նէ, ձեր որդիքը ինչով
կըշանեն. ատոր համար ատոնք ձեզի դատաւոր
պիտի ըլլան։ 20 Բայց եթէ որ Աստուծոյ մատովը
գեւերը կըշանեմ՝ անանկ է նէ Աստուծոյ թագա-
ւորութիւնը ձեր վրայ հասեր է։
21 Երբոր ուժով մը զինքերը վրան առած
իր տունը կըպահպանէ, անոր բաները խաղաղու-
թեան մէջ կըմնան։ 22 Բայց եթէ որ անկէց աւելի
ուժովը վրան գալով յաղթէ անիկա, անոր զէն-
քերը կըշանէ որ ինքը անոր յուսացեր էր, և
անկէց առած կողոպուտը կըբաժնէ։ 23 Ան որ իմ
հետս չէ՝ ինծի հակառակ է. և ան որ ինծի հետ
չի ժողվեր՝ կըցրուէ։
24 Որ ատեն պիղծ գևը մարդէ մը կելլայ՝ ցամաք
տեղերը կըպտրտի, հանգստութիւն կըփնտրէ.
ու երբոր չի գտնայ՝ կըսէ, Դառնամ՝ նորէն իմ
տունս, ուսկից որ ելայ։ Եւ կուգայ՝ մաքրրված
25 ու շքեղրված կըգտնայ։ Ընդունելը կերթայ՝ և իր-
26 մէն աւելի չար եօթը հատ գևեր կառնէ, ու կըմտնայ
հոն կըբնակի. և ան մարդուն վերջին վիճակը առ-
ջինէն դէշ կըլլայ։
27 Ու եղաւ որ երբ ատ բաները կըխօսէր, ժողո-
վուրդին մէջէն մէկ կին մը ձայնը վերցուց՝ և
բսաւ. Երանէկ է ան փորին՝ որ քեզ կրեց, և ան
ծիծերուն՝ որ քեզի կաթ տուին։ 28 Եւ ինքը բսաւ.
Այնպէս երանէկ անոնց՝ որ Աստուծոյ խօսքը կը-
լսեն ու կըպահեն։
29 Եւ ժողովուրդը իր վրան դիպչելու որ եղան՝
սկսաւ բսել. Այս ազգը չար ազգ մըն է. նշան
կուզէ՝ բայց երկինքէն նշան մը չի պիտի տրվի ա-
տոր, միայն թէ Յովնանին նշանը։ 30 Վասն զի
ինչպէս որ Յովնան Նինուէացիներուն նշանը

եղաւ , անանկ ալ Աղբին մարդոյ աս ազգիս պիտի
31 ըլլայ : Հարաւի թագաւորին դաստատանին աս
ազգին մարդոցը հետ պիտի ելլայ՝ ու պիտի դաստա-
պարտէ ասոնք . ինչու որ՝ երկրի ծայրերէն եկաւ
Աղտմանին իմաստութիւնը լսելու . և ահա Աղտ-
32 մանէն ալ աւելի մէկը կայ հոս : Հինուացի մար-
դիկը դաստատանին աս ազգին հետ պիտի ելլան՝
ու պիտի դատապարտեն ասիկա . ինչու որ Յով-
նանին քարոզութիւնովը ապաշխարեցին . և ահա
33 Յովնանէն ալ աւելի մէկը կայ հոս :
Ա՝էկը ճրագը չի վառեր՝ ծածուկ տեղ մը դը-
ներ , ոչ ալ գրիւին տակը . հապա աշտանակին
34 վրայ , որ ներս մտնողները լոյս տեսնան : Ա՝ար-
մինին ճրագը աչքն է . երբոր աչքը պայծառ է՝
բոլոր մարմինը լուսաւոր կըլլայ . ու երբոր աչքը
35 վատ է՝ մարմինն ալ մութ կըլլայ : Նայ տես զգոյշ
կեցիր , որ չըլլայ թէ քու մէջդի լոյսը մութ ըլ-
36 լայ : Ուրեմն որ քու բոլոր մարմինդ լուսաւոր է , և
մութ կտոր մը չի կայ՝ բոլորն ալ լուսաւոր կըլ-
լայ , ինչպէս ճրագ մը՝ երբոր իր լուսովը քեզ կը-
լուսաւորէ :
37 Եւ երբոր աս բաները կըխօսէր՝ Փարիսեցի մը
կաղաչէր անոր՝ որ իր քովը ճաշ ուտէ . անիկա
38 ալ մտաւ՝ սեղանը նստեցաւ : Փարիսեցին երբոր
տեսաւ՝ զարմացաւ , որ առաջ չի լուացվեցաւ
39 կերակուրէն առաջ : Տէրը ըսաւ անոր . Հիմա
դուք Փարիսեցիներ՝ գաւաթին ու պնակին դուբ-
սիդին կըսրբէք , և ձեր ներսիդին յափշտակու-
40 թիւնով ու չարութիւնով լեցուն է : Ո՝նեսկ-
ներ՝ ան որ դուրսինը բրաւ , ներսինն ալ ինքը
41 չըրաւ մի : Այլ եվ՝ելքը ողորմութիւն տըվէք որ
արժան է . և ահա ձեր ամէնը մաքուր կըլլայ :
42 Այլ վա՛յ ձեզի Փարիսեցիներուդ , որ անանու-
խին ու փեգենային և բոլոր խոտեղէններուն տա-
սանորդը կըվճարէք , ու զանց կընէք իրաւունքը՝
և Աստուծոյ սէրը . ասիկա պէտք էր ընել , և ա-

նիկա ալ զանց չընել ։ Ա՛յ ձեզի փարիսեցիներ-43
բուդ , որ ժողովարաններուն մէջը վերի նստա-
բանները կը սիրէք , ու շուկաներուն մէջ՝ առջի
բարեւները ։ Ա՛յ ձեզի , որ դուք անյայտ գե-44
ղեզմաններու նման էք , որ մարդիկ վրայէն կը-
քալեն՝ ու չեն գիտեր ։
Օրինականներէն մէկը պատասխան տուաւ՝ ու 45
ըսաւ անոր · Ա՛ւրդապետ՝ ատ խօսքերը զուրցե-
լով՝ մե՛զ ալ վար կը զարնես կոր ։ Ան ալ ըսաւ · 46
Ձեզի օրինականներուդ ալ վա՛յ , որ մարդիկներ-
բուն դժուար տարվելու բեռներ կը բեռնաւորեք ,
ու դուք մէկ մատովիդ ան բեռներուն չէք մօտե-
նար ։ Ա՛յ ձեզի , որ մարգարէներուն գերեզ- 47
մանները կը շինէք · ու ձեր հայրերը անոնք սպա-
նեցին ։ Անանկ է նէ կը վկայէք՝ որ հօրերը- 48
նուդ ըրածին հետ կամքերնիդ մէկ է · ինչու որ՝
իրենք անոնք ջարդեցին , ու դուք անոնց գերեզ-
մանները կը շինէք ։ Անոր համար Աստուծոյ ի- 49
մաստութիւնը ըսաւ · Պիտի խրկեմ անոնց մար-
գարէներ ու առաքեալներ · և անոնցմէ ոմանք պիտի
սպաննեն , ու ոմանք հալածեն ։ Ինչու որ՝ աշխար- 50
հի սկիզբէն հետէ թափված բոլոր մարգարէնե-
րուն արիւնը աս ազգէն պիտի ուզվի ։ Մինչեւ 51
արիւնէն մինչեւ Աբաթիայի արիւնը , որ սեղա-
նին ու տաճարին մէջ սեղը կորսրվեցաւ · Ճշմա-
րիտ կըսեմ ձեզի , Աս ազգէն պիտի ուզվի ։
Ա՛յ ձեզի օրինականներուդ , որ գիտութեան 52
բանալիքը կրպահէք · դուք չէք մտնար , և անոնք
որ պիտի մտնան նէ՝ ետ կը ձգէք ։
Եւ աս ամէն բաները բոլոր ժողովուրդին առ- 53
ջևը անոնց զուրցելու առներ՝ ամէնով կրմեայ-
ին · ու սկրսեցին կարգացողները և փարիսեցինե-
րը չարանալ , ու շատ բաներու վրայով անոր
հետ հակառակութիւն ընել · ու կը սպասէին որ 54
անոր բերնէն բան մը որսան , որ անոր վրայ չա-
խօսութիւն ընեն ։

ԴԱՆԻԷԼ · ԺԱ ։

1 Ես նոյնպէս երբոր բիւրաւոր ժողովուրդներ ալ
2 ոյան ժող վըլնգան , մինչև որ մէկըզմէկ կը-
3 կոխէին , սկըսեց ըսել իր աշակերտներուն . Պիտ
4 առաջ ինքըզինքիդ զգոյշ պահեցեք փարիսեցի-
5 ներուն խմորէն , որ ան՝ կեղծաւորութիւն է ։
6 Ինչու որ՝ ծածուկ բան մը չի կայ որ յայտնի
7 չըլլայ , ու գաղտուկ որ չի գիտցըվի ։ Ինչ հա-
8 մար ինչ որ մուքի տեղը զուրցեցիք՝ անիկա լոյս
9 տեղը պիտի լսվի . և ան որ ներսէ ներս տեղվանք
10 ականջէն խօսեցաք , տաներքներուն վրայ պիտի
11 քարոզ վի ։ Ասայց ձեզի իմ սիրականներուս կը-
12 զուրցեմ . Մի՛ վախնաք անոնցմէ՝ որ մարմինը
13 կրպանանեն , ու անկէ ետև աւելի բան մը չունին
14 ընելու ։ Մի՛ խրն ձեզի ցուցընեմ ուսկից պի-
15 տի վախնաք . անկէց վախցէք՝ որ սպանելէն ետև
16 իշխանութիւն ունի գեհենը ձգելու . Այրաւ կը-
17 սեմ ձեզի , Անկէց վախցէք ։ Չէ՞ որ հինգ Ճըռ-
18 չունչ ձագը երկու մանր ստակի կըծախվի , և ա-
19 նոնցմէ մէկը մոռցըված չէ Աստուծոյ առջևին ։
20 Ասայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրըված
21 է . ասանկ է նէ մի՛ վախնաք , ինչու որ դուք շատ
22 ձագերէ աւելի աղէկ էք ։ Ձեզի կըսեմ որ , Ամեն
23 մի՛ որ իս կըդաւանի մարդոց առջև , Որդին
24 մարդոյ ալ անիկա պիտի դաւանի Աստուծոյ հր-
25 շեշտակներուն առջև ։ Ասայց ան որ իս մարդոց
26 առջև կուրանայ , ուրացած պիտի ըլլայ Աստու-
27 ծոյ հրեշտակներուն առջև ։ Ու ամեն մի՛ որ
28 Որդւոյ մարդոյ դէմ բան կըզուրցէ պիտի ներվի
29 անոր . բայց ան որ Հոգին Սուրբին կըհայհոյէ՝
30 թողութիւն պիտի չըլլայ անոր ։ Եւ երբոր ձեզ
31 ժողովարանները տանելու ըլլան՝ ու դատաւոր-
32 ներուն և իշխաններուն առջև , հոգ մի՛ ընէք
33 ինչպես կամ ինչ պատասխան պիտի տաք , կամ

ի՞նչ պիտի ըսէք ։ Ա՛ սան զի Հոգին Սուրբ պիտի սորվեցունէ ձեզի նոյն ժամուն՝ ինչ որ պէտք է խօսիլ ։ 12

Ա՛ղօղմուրդին մէջէն մէկը ըսաւ անոր ։ Ա՛ռ՛ դասկա՛ զուրցէ՛ եղբօրս , որ հետ հետ ժառանգութիւնը իմ հետս բաժնէ ։ Ան ալ ըսաւ անոր ։ Ա՛ռ՛ ով՛ զիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին ընող դրաւ ։ 13 14

Եւ ըսաւ անոնց ։ Նայեցէք և զգոյշ եղէք ամէն կերպ ագահութենէն , ինչու որ մարդուս դիպած ապրանքներէն չէ կախված իր կեանքը ։ Անոնց մէկ առակ մը խօսեցաւ , ու ըսաւ ։ Ա՛ր՛կ հարուստ մարդու մը արտերը՝ առատ բերքեր տուին ։ և ինքը կըմտմտար ինքնիրենը՝ ու կըսէր ։ Ի՞նչ ընեմ ։ ուան զի տեղ չի կայ , որ հոն իմ բարիքներըս լեցունեմ ։ Եւ ըսաւ ։ Կ՛ուզեմ ինչ պիտի ընեմ ։ իմ ամբարներս քակեմ՝ ու ալ աւելի մեծ շինեմ ։ և հոն ժողվեմ ցորեններըս՝ ու իմ ամէն բարիքներս ։ և իմ անձիս ըսեմ ։ Ո՛վ անձ՛ , շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար ժող վըված ։ Հանգչէ , կեր՝ խըմէ՛ , և ուրախ եղիր ։ Ա՛յլ Աստուած ըսաւ անոր ։ Ա՛նմի՛տ ան գիշեր հոգիդ քեզմէ կըտ պիտի ուզեն ։ ուստի ան որ պատրաստեցիր , որի՞ պիտի ըլլայ ։ Ա՛նոր պէս ան է՝ ան ալ՝ որ իր անձին համար կը դիզէ , ու Աստուծոյ չէ հարուստանար ։ 15 16 17 18 19 20 21

Աւաւ իր աշակերտներուն ։ Ա՛ստր համար կը սեմ՝ ձեզի , որ՝ հոգ մի՛ ընէք ձեր կեանքին համար՝ թէ ինչ պիտի ուտէք , ու ոչ ալ մարմինին համար՝ թէ ինչ պիտի հագնիք ։ Ինչու որ կեանքը կերակուրէն աւելի է , ու մարմինը հագուստէն ։ Նայեցէք ագռաւներուն վրայ , որ ոչ կըցանեն և ոչ կըքաղեն , որոնք մառանները չունին՝ ոչ ալ ամբարներ , ու Աստուած անոնք կըկերակրէ ։ Որքան եվելըք ձեզ՝ որ թռչուններէն ալ աղէկ էք ։ Ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ տանելովը իր հա- 22 23 24 25

26 սակին վրայ կանգուն մըն ալ ելլցուներ ։ Եա-
պա թէ որ պղտիկ բանին կարող չէք , ուրիշնե-
27 րուն համար ինչու՞ հոգ կրնէք ։ Այցեցէք շու-
շան ծաղկին վրայ . ինտո՞ր կաճի . ոչ կաշխատի՝
ու ոչ կրմանէ . ձեզի կրսեմ՝ որ Սողոմոն ալ իր
բոլոր փառքին մէջը ասոնց մէկին պէս չի հագնե-
28 ցաւ ։ Ուստի թէ որ խոտը՝ որ այսօր բաց տեղը
կեցեր է ու վաղը կրակը կրձգվի , Աստուած ա-
նանկ կրհագուեցունէ . որչափ էվելոք ձեզ Թո՛րա-
29 հաւատներ ։ Վասն զի մի՛ եւս կխնամ՝ թէ ի՞նչ
պիտի ուտէք և ի՞նչ պիտի խմէք . ու մի՛ տարա-
30 կուսիք . ինչու որ ատ ամէն բաները աշխարհիս
ազգերը կրփնտրեն . բայց ձեր Հայրը գիտէ՝ որ
31 պէտք է ձեզի ան ամէնը ։ Ա՛նպէս թէ զուք Նա-
տուծոյ թագաւորութիւնը ուզեցէք . և ան ամէն
32 բաները պիտի էվելցրվի ձեզի ։ Ա՛ի վախնար
ա՛նաննե՛ր պրգտիկ հօտ . ինչու որ ձեր Հայրը
33 ուզեց՝ որ ձեզի թագաւորութիւնը տայ ։ Ծա-
խեցէք ձեր ստացուածքը՝ և ողորմութիւն տրվեք ,
ու ձեզի չի հինցնար քսակները չհինցեցէք , ու եր-
կինքը՝ չի պակսըլնար գանձ մը , ուր որ ոչ գող
34 կրմօտենայ՝ և ոչ ցեցը կաւրէ ։ Ինչու որ ձեր
35 գանձը ուր է նէ՝ ձեր սիրտն ալ հոն կրլլայ ։ Ձեր
գօտիները՝ մէջ քերնիդ պինտ կապված ըլլան , ու
36 ձեր ճրագները՝ վառված ։ Ա՛և զուք ան մարդո-
ցը նման , որ իրենց Տէրոջը կրսպասեն , երբոր
Հարսնիքէն կրդառնայ . որ երբ գայ և չալէ նէ՝
37 շուտ մը բանան անոր ։ Երնէկ է ան ծառանե-
րուն , որ Տէրը երբոր գայ՝ անոնք արթուն պիտի
գտնայ . ճշմարիտ կրսեմ ձեզի , որ Ինքը գօտին
ա՛ջքը պիտի զարնէ՝ ու սեղան նստեցունէ անոնք ,
և առաջ անցնի ծառայութիւն պիտի բնէ անոնց ։
38 Եւ թէ երկրորդ կամ երրորդ գիշերապահին գայ
ու անանկ գտայ նէ՝ երանելի են ան ծառաները ։
39 Ա՛սայց ա՛ս գիտնաք որ , Թէ որ տանուտերը գիտ-
նար որ ատեն գող կուգայ , արթուն կրկենար՝

ու թող չէր խտար , որ իր տանը տակէն փոս փո-
րէ ։ Վատ ալ պատրաստ եղիք · ինչու որ չի 40
կարծած ատեննիդ Որդին մարդոյ կուգայ ։
Ըսաւ Պետրոս · Տէր՝ առ առակը մեզի՞ ըսիր , 41
թէ ամենուն ալ ։ Եւ ըսաւ Տէրը · Ո՛վ է ան հա- 42
ւատարիմ ու խելացի անտեսը , որ իր տէրը անի-
կա իր տուընին տեղին վրայ դրաւ , որ ատենին
հէնց ուտելիքը տայ ։ Երանէկ է ան ծառային , 43
որ իր տէրը եկած ատենը գլխուը անանկ բրած պի-
տի գտնայ ։ Ճշմարիտ ձեզի՝ որ Իր բոլոր ու- 44
նեցածն բանեցուն վրայ կրկեցունէ անիկա ։ Բայց 45
պա թէ որ ան ծառան իր սրտովին մէջը ըսէ թէ ,
Իմ տէրըս կուշանայ գալու՝ ու սկսի ծառաները
և աղախինները ծեծել , ուտել ու խմել և գի-
նովնալ , ան ծառային տէրը կուգայ մէկ օրը մը 46
որ ինքը չյոյս չունի , և ան կ՚իմն՝ որ չի գիտեր ,
մէջքէն կրկտրէ անիկա՝ ու անոր բաժինը անհա-
ւատարիմ ծառոանէրուն հետը կըդնէ ։ Եւ ան 47
ծառան՝ որ իր տէրոջը կամքը գիտնայ՝ ու անոր
կամքին պէս չի պատրաստէ նէ , շատ ծեծ կուտէ ։
Իսայց ան որ չի գիտնայ՝ ու ծեծի արժանի բան մը 48
ընէ նէ , քիչ ծեծ կուտէ · որու որ շատ տրվեցաւ՝
շատ պիտի ուզվի անկէց · և որու որ էվելոըք չանձ-
նըվեցաւ , շատ էվելոըք պիտի ուղեն անկէց ։
Ես կրակ ձգելու եկայ երկրիս վրայ · ու ի՞նչ՝ 49
կուզեմ որ ան հիմակվընէ բոցը առներ ։ Իսայց 50
մէկ մկրտութիւն մը ունիմ մկրտվելու · և ի՞նչ-
պէս կարտորամ , մինչև որ ան լըննայ նէ ։ Կը- 51
կարծէք որ երկրի վրայ խաղաղութիւն տալու ե-
կայ · ձեզի կըսեմ՝ Չէ , հապա՝ բաժանմունք ։
Ինչու որ՝ ասկէ ետև մէկ տունին մէջը հինգը 52
իրարջէ բաժնըված պիտի ըլլան · իրիքը երկուքին ,
և երկուքը իրիքին ։ Հայրը պիտի բաժնըվի որ- 53
դիէն , և որդին հօրմէն · մայրը աղջկէն , ու
աղջկը մօրմէն · կնսուրը հարսէն , ու հարսը իր
կնսուրէն ։

54 Եւ ըսաւ ժողովուրդներուն · Երբոր կրտեսնաք
արեւմուտքին կողմէն ամպ մը ելած , շուտ մը կը-
սէք թէ Անձրեւ պիտի գայ , և անանկ կըլլայ ։
55 Ու երբոր հարաւային հովը կըփչէ կրսէք թէ
56 Տաք պիտի ըլլայ , և անանկ կըլլայ ։ Կեղծաւոր-
ներ՝ երկինքի ու երկրի երեսը գիտէք փարձել ,
հապա ի՞նչպէս աս ժամանակս ալ չէք խմանար ։
57 Ինչո՞ւ ալ դուք ձեզմէ չէք դատեր իրաւունքը ։
58 Երբոր դուն քու ոսոխիդ հետ դատաւորին եր-
թալու կըլլաս՝ ճանապարհին տուր տալիքդ ան-
կէց խալըսելու համար · որ չըլլայ թէ քեզ դատա-
ւորին առջեւ քաշէ , ու դատաւորը դահիճին ձեռ-
59 քը տայ , ու դահիճն ալ բանտը դնէ ։ Կ՚ըսեմ կը-
սեմ , Անկէց չի պիտի ելլաս դուն մինչև որ եսքի
մանր ըստակը վճարես նէ ։

ԳԼ · ԺԴ ։

1 Նատեր մէկ քանիներըն ալ ան՝ ու պատմեցին
իրեն Գալիլեացոց վրայով , որ անոնց արիւ-
նը Պիղատոս իրենց զոհերուն հետը խառնեց ։
2 Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց · Կը-
կարծէք մի որ ան Գալիլեացիները բոլոր Գալիլ-
եացիներէն էվելի մեղաւոր էին , որ ասանկ բաներ
3 քաշեցին ։ Չեղի կրսեմ՝ Չէ · բայց թէ որ չա-
պաշխարէք նէ՝ ամէնքդ ալ անանկ պիտի կորսը-
4 վիք ։ Կամ թէ ան տասներեքը , որ անոնց վրայ
Սելոամին աշտարակը ինկաւ՝ և անոնք մեռ-
ցուց · կրկարծէք մի որ անոնք Երուսաղէմի մէջը
բնակած բոլոր մարդիկներէն աւելի պարտաւոր
5 էին ։ Չեղի կրսեմ՝ Չէ · բայց թէ որ չապաշխա-
րէք նէ՝ ամէնքդ ալ անանկ պիտի կորսըվիք ։
6 Յս առանն ալ ըսաւ · Ա՚ենք իր այգիին մէջ
թուզի ծառ մը անկեր էր · ու եկաւ անկէց պտուղ
7 փնտրելու , և չի գտաւ ։ Ըսաւ այգեպանին ·
Ա՚նա իրենք տարի է քանի որ կուգամ սա թու-
զին ծառէն պտուղ փնտրելու՝ ու չեմ գտներ ·

ուստի կտրէ ատիկա , ինչու՞ համար գետինը կը-
խափանէկոր ։ Անիկա պատասխան տուաւ՝ և ը- 8
սաւ . Տէր՝ աս տարի ալ ատիկա թող տուր , մին-
չև որ ատոր բոլորտիքը փորեմ՝ ու թրիք ձգեմ .
կարելի է որ պտուղ տայ . Հապա թէ չէ տարվէն 9
ետև պիտի կտրես ատիկա ։

Եւ ինքը ան ժողովարաններուն մէկուն մէջ շա- 10
բաթ օրը կը սորվեցուներ ։ Եւ ահա մէկ կնիկ մը 11
կար որ հիւանդութեան դև մը ան բանը էր տասը-
նըութը տարի . ու կրծկրտած էր , և ամենևին վեր
չէր կրնար նայիլ ։ Ու Յիսուս անիկա որ տեսաւ , 12
իրեն կանչեց՝ և ըսաւ անոր . Կ՚ընկի՝ դուն քու
հիւանդութենէդ արձկված ես ։ Եւ ձեռքը անոր 13
վրան դրաւ , ու շուտ մը շտկվըվեցաւ , և փառք
կուտար Աստուծոյ ։ Ժողովարանին իշխանը պա- 14
տասխան տուաւ խիստ բարկանալով մը՝ անոր
համար որ Յիսուս շաբաթ օրը բժշկեց , և ըսաւ
ժողովուրդին . Վեց օր կայ՝ որ անտուներ կրվայ-
լէ բան բանիլ , ան օրերը եկէք բժշկըվեցէք , ու
չէ թէ շաբաթ օրը ։ Տէրը պատասխան տուաւ 15
անոր՝ և ըսաւ . Կեղծաւորներ՝ ձեր մէջը ամեն
մէկը շաբաթ օրը իր եզը կամ էշը մսուրէն չի
արձկեր՝ ու տանիր ջուր տար ։ Հապա ասիկա որ 16
Աբրահամի աղջիկ էր , որ ահա տասներու թըը տարի
է Սատանան ինքը կապեց , չէր վայրը շաբաթ
օրը ան կապէն արձկել ։ Եւ աս բանը որ ըսաւ՝ 17
անոր հակառակ կեցողները ամէնքն ալ ամօթով
ծածկին . ու բոլոր ժողովուրդը կուրախանար ան
ամէն փառաւոր գործքերուն վրայ՝ որ իրմէն կըլ-
լար ։

Եւ ըսաւ . Աստուծոյ թագաւորութիւնը ինչի՞ 18
կընմանի , ու ինչ նմանութիւնի անիկա նման-
ցունեմ ։ Ան՝ անանեխին հատին նման է , որ մէկ 19
մարդ մը առաւ՝ իր պարտեզը ձգեց , մեծցաւ և
եղաւ ծառ . ու երկինքի թռչունները անոր ճու-
ղերուն վրայ բնակեցան ։

20 Եւ դարձեալ ըսաւ· Աստուծոյ թագաւորու-
21 թիւնը ինչի՞ նմանցուցնեմ : Խմորի նման է՝ որ
մէկ կնիկ մը առաւ իրեք չափ ալիւրի մէջ ծած-
կեց , մինչեւ որ բոլորը խմորեցաւ :
22 Եւ ինքը քաղաքները ու գեղերը կըպըտրտէր՝
կըսորվեցունէր · ու որ դէպի Երուսաղէմ ճամ-
23 բայ կըներ , մէկը ըսաւ իրեն · Տէր՝ քիչմը՞ն են մի
անոնք որ պիտի փրկըվին : Անիկա ալ ըսաւ ա-
24 նոնց · Ջանք ըրէք որ նեղ դռնէն մտնաք · ձեզի
կըսեմ որ՝ շատերը մտնալ պիտի ուզեն , և պի-
25 տի չի կրնան : Անկէ ետև որ երբ տանուտերը
ներս կրմտնայ , ու դուռը կրգոցէ , և դուք կրս-
կրսկիք դուրսը կենալ ու չալել դուռը՝ և ըսել ,
Տէր Տէր՝ բաց մեզի · և անիկա պատասխան պիտի
տայ ձեզի ըսելով , Ես չեմ ճանչնար ձեզ՝ ու-
26 կէց էք : Անատենը պիտի սկըսիք ըսել · Ո՛նք
քու առջեւըդ կերիանք ու խմեցինք , և դուն մեր
27 փողոցներուն մէջը սորվեցուցիր : Եւ անիկա պի-
տի ըսէ · Ձեզի կըսեմ , Ես ձեզ չեմ ճանչնար՝
ուսկէց էք , մէկ դի կնցէք ինծմէ՝ բոլոր անիրա-
28 ւութիւն գործողներդ : Հոն պիտի ըլլայ լալ՝ ու
ակռաները կրճըռտացունել , երբոր տեսնաք Ա-
բրահամը ու Սահակը և Յակոբը՝ և ամէն մարգա-
րէները Աստուծոյ թագաւորութեան մէջ , ու
29 ձեզ դուրս հանած : Ու պիտի գան արեւելքէն և
արեւմուտքէն , հիւսիսէն և հարաւէն , ու պիտի
30 բազմին Աստուծոյ թագաւորութեան մէջ : Եւ
ահա կան եղբայրներ՝ որ առաջին պիտի ըլլան , ու
կան առաջիններ՝ որ եղբայրներ պիտի ըլան :
31 Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ եկան՝ ու
ըսին անոր · Ելիր և գնա տակէդ , ինչու որ Հե-
32 րովդէս քեզ սպաննել կուզէ : Եւ ինքը ըսաւ
անոնց · Գացէք ան աղուէսին ըսէք · ահա ես դե-
ւեր կրհանեմկոր և բժշկութիւններ կրկատարեմկոր
այսօր ու վաղը , և իրեք օրէն ես պիտի կատար-
33 վիմ : Պէտք է որ այսօր ու վաղը և

մեկալ օրը պըտրտիմ · վասն զի չի կրնար ըլլալ
որ մարգարէ մը Երուսաղէմէն դուրսը կորսըվի ։
Ա՛վ Երուսաղէմ՝ Երուսաղէմ՝ որ մարգարէնե- 34
ըը կըջարդէիը՝ ու քեզի խրկըմածները կըքարկո-
ծէիը · քանի՛ անգամ ուզեցի քու զաւկըներդ
ժողվել՝ ինծոր որ հաւը իր ձագերը թեւերուն
տակը կըձգողվի՝ ու դուք չուզեցիք ։ Ահա ձեր 35
տունը ա՛ւերակ ձեզի թողվի՝ միայն թէ ձեզի կը-
սեմ՝ որ՝ Ա՛լ իս չի պիտի տեսնաք՝ մինչև որ ըսէք՝
Օրհնեալ է Տէրոջը անունով եկողը ։

ԻԳ · ԺԳ ։

Ա՛ւ եղաւ որ երբ ինքը շաբաթի օր մը փարիսե- 1
ցոց գլխաւորներուն մէկուն տունը մտաւ հաց
ուտելու՝ և անոնք անոր կըսպասէինկոր ։ Եւ 2
ահա իր առջևը ջըրգողեալ մարդ մը կար ։ Պա- 3
տասխան տուաւ Յիսուս՝ ու բսաւ օրինականնե-
րուն և փարիսեցիներուն՝ թէ՝ Կրժա՞ն է շաբաթի
օրը բժշկութիւն ընել ։ Անոնք ալ լուռ կեցան · 4
և ինքը բռնեց անիկա՝ բժշկեց ան՝ ու ճամբեց ։
Եւ բսաւ անոնց · Ձեզմէ որ մեկուն էշը կամ եզը 5
չորը կ՚ինայ՝ ու շուտ մը չի հաներ անիկա շաբաթի
օրը ։ Ու չի կրցան անոր պատասխան տալ աս 6
բաներս համար ։

Ա՛նակ մը զուրցեց ան հրաւիրված մարդոցն ալ՝ 7
երբոր տեսաւ թէ ինչպես առջի տեղերը կընտրէ-
ին · բսաւ անոնց ։ Երբոր մեկը քեզ հրաւիրէ 8
հարսնիքի կամ հարկինքի՝ առջի բարձին վրայ մի՛
նստիր՝ չըլլայ թէ քեզմէ աւելի պատուաւոր մեկը
անկէց կանչըված ըլլայ · և ան՝ որ քեզ ու անիկա 9
կանչեց՝ գայ զուրցէ քեզի՝ Այսոր տեղ տուր՝ և
անկէ ետև ակսիս ամօթով ետրի տեղը բռնել ։
Հապա որ տեղն կանչըվիս՝ գնա՝ ետրի տեղը նըս- 10
տէ · որ երբ քեզ կանչողը գայ նէ՝ քեզի բսէ՝
Ա՛մբևկամ վեր հրամմէ · անատեղը քու հետդ
նստողներուն առջևը քեզի փառք կըլլայ ։ Վ՚ասն 11

պի ամէն ով որ ինքզինքը կըբարձրցունէ պիտի ցածնայ . և ան որ ինքզինքը կըխոնարհեցունէ պիտի բարձրըն՚այ ։

12 Ու Յարկինքի տէրոջն ալ ըսաւ . Ո՛ր ատեն ճաշ կամ ընթրիք կընես՝ մի՛ կանչեր քու բարեկամներդ և ոչ քու եղբայրներդ , և ոչ քու ազգականներդ , և ոչ քու գրացիներդ , և ոչ մեծ մարդիկը , որ չըլայ թէ անոնք ալ փոխարէնը

13քեզ կանչեն , ու քեզի փճարք մը ըլլայ ։ Հապա երբոր Յարկինք մը կընես՝ աղքատները և պակասաւորները , կաղերը և կոյրերը կանչէ ։

14Ու երանելի պիտի ըլլաս . ինչու որ անոնք փոխարէնը քեզի փճարելիք չունին . ու արդարներուն յարուԹիւնն առած ատենը փոխարէնը քեզի կըվճարվի ։

15 Ա՚ն սեղան նստողներէն մէկը երբոր լսեց ա՚ սոնր ըսաւ անոր . Երանէկ անոր՝ որ Աստուծոյ ԹագաւորուԹեան մէջը հաց պիտի ուտէ ։

16Եւ ինքը ըսաւ անոր . Ա՚ն էկ մարդ մը ընթրիք ընելու եղաւ , ու շատերը հրաւիրեց ։

17Ու ընթրիքին ատենը խրկեց իր ծառան , որ ան հրաւիրածները կանչէ Թէ՝ Եկէք , ինչու որ՝ ա՚հա ամէն բան պատրաստ է ։

18Եւ սկսանցին ամէնքն ալ միևիկ միևիկ ետքաշ վիլ . առջինը ըսաւ , Ես արտ ծախու առի , ու պէտք է որ ելլամ նայիմ անոր . կաղաչեմ քեզի՝ որ իս Թող տաս ։

19Եւ միւսը ըսաւ . Ես հինգ զուգ եզ ծախու առի , ու կերթամ որ անոնք փորձեմ . կաղաչեմ քեզի՝ որ իս Թող տաս ։

20Եւ միւսը ըսաւ . Կնիկ առի , ու անոր համար չեմ կրնար գալ ։

21Ու ծառան եկաւ՝ իր Տէրոջը պատմեց ան . անատնը տանուտէրը սրտդողվելով ըսաւ իր ծառային . Շուտով քաղքին հրապարակները ու փողոցները ելիր , և աղքատները՝ ու պակասաւորները , ու կաղերը՝ և կոյրերը բեր խոթէ ։

22Ծառան ալ ըսաւ . Տէր՝ ինչ որ հրամայեցիր եղաւ , ու տակաւին տեղ կայ ։

23Եւ Տէրը

բը ծառային ըսաւ . Եւ ճամբանները ու ցանկե-
բը , և գիտածէ հոս մրցուր՝ որ տունս լեցվի ։
Ձեզի կըսեմ , որ ան կանչվածներէն մէկն ալ 24
իմ ընթրիքիս համը պիտի չառնէ ։

Եւ իր հետը շատ ժողովուրդներ կերթային , 25
դարձաւ՝ ու ըսաւ անոնց ։ Թէ որ մէկը ինծի կու- 26
գայ , ու չի ատեր իր հայրը և մայրը , ու կինը և
զաւակները , ու եղբայրները և քոյրերը , նաև իր
անձն ալ , չի կրնար իմ աշակերտս ըլլալ ։
Ա ան զի՝ ով որ իր խաչը չի վերցուներ , և իմ 27
ետևէս գար՝ չի կրնար իմ աշակերտս ըլլալ ։
Ձեր մէջէն ո՞վ աշտարակ մը շինել ուզէ՝ ու նըստ 28
առաջ չի նըստիր համրեր ծախքը , թէ անիկա
կրնցուներ լմընցունելու բաւական բան ունի՞ մի ։ Որ- 29
որ չըլլայ թէ երբ հիմը ձըգէ , ու չի կրնայ լմընց-
ցունել , բոլոր տեսնողները սկսին անիկա ծաղր
ընել , և ըսել , թէ Այս մարդը սկսեց շինել , ու 30
չի կրցաւ լմընցունել ։ Կամ թէ՝ որ թագաւոր 31
կերթայ պատերազմ կրնէ ուրիշ թագաւորի մը
հետ , և առաջ չի նըստիր մրտմրտար՝ թէ ինքը
տասը հազարով դէմը կրնայ ի՞նչ առներ անոր՝ որ
քսան հազարով իր վրան կուգայ ։ Ապա թէ 32
չէ՝ քանի որ անիկա շատ հեռու է , դեսպան խրր-
կելով կաղաչէ խաղաղութեան համար ։ Ասոնք 33
ասանկ ալ ձեր մէջէն ամէն մէկը՝ թէ որ իր բոլոր
ստացուածքէն ետ չի կենայ նէ , չի կրնար իմ ա-
շակերտս ըլլալ ։ Աղը աղէկ բան է ։ Հապա թէ 34
որ աղը անհամնայ՝ ինչո՞վ պիտի համովնայ ։ Ո՛չ 35
հողի՝ ո՛չ թրիքի տեղ պէտք կըլլայ , հապա ա-
նիկա դուրս նետելու է . ան որ լսելու ականջ ու-
նի՝ թող լսէ ։

ԿՒ . ԺԵ ։

Ա՛ռ բոլոր մաքսաւորները ու մեղաւորները անոր 1
մօտ կուգան իրմէն լսելու համար ։ Փարիսեցի- 2
ներն ու կարգաւորները կըտրտըտային՝ և կը-

սէին · Ի՞նչու ասիկա մեղաւորները կընդունի , ու անոնց հետ կուտէ ։

3 Ի՛նչ առակը ըսաւ անոնց ։ Ձեղմէ ով է ան մարդը՝ որ հարիւր ոչխար ունենայ , և անոնցմէ մէկը որ կորսընցնէ , իննըսունըվիցը չի ձգեր անապատին մէջը՝ ու ան կորսրվածին ետևէն երթար ,
5 մինչև որ անիկա գտնայ ։ Եւ երբոր կըգտնայ՝ ինդալով մը իր ուսերուն վրայ կըդնէ անիկա ,
6 և տուն կերթայ , կըկանչէ բարեկամները ու դրացիները՝ և անոնց կըսէ · Ուրախ եղէք ինծի հետ · ինչու որ՝ իմ կորսրված ոչխարըս գտայ ։
7 Ձեզի կըսեմ , որ ասանկ ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի մը համար որ ապաշխարէ , քան թէ իննըսունըվիցը արդարներուն համար՝ որ անոնց ապաշխարութիւն պէտք
8 չէ ։ Կամ թէ ով է ան կինը , որ տասը դրամ ունենայ · ու թէ որ դրամ մը կորսընցնէ , ճրագը չի վառեր , ու տունը մէջը աւել զարներ ,
9 և ուշէկ մը փընտրեր , մինչև որ գտնայ ։ Ու երբոր կըգտնայ՝ կըկանչէ բարեկամները ու դրացիները և կըսէ · Ուրախ եղէք ինծի հետ · ինչու որ
10 իմ կորսընցուցած դրամս գտայ ։ Ինանկ ալ ձեզի կըսեմ , ուրախութիւն կըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջևը՝ մէկ մեղաւորի մը վրայ , որ կապաշխարէ ։
11 Եւ ըսաւ · Ա՛ՀԿ մարդ մը երկու որդի ունէր ·
12 անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ · Հա՛յր՝ քու ստացուածքէդ ինծի հինգ բաժինը տուր ինծի · և ա-
13 նիկա բաժնեց անոնց իր ապրանքը ։ Ու քիչ օրերէն ետքը պզտիկ տղան բոլոր բաները ժողվեց , հեռու երկիր մը գնաց , և հոն իր ունեցածը փըճացուց · ինչու որ՝ անառակութեամբ կեանք կը-
14 վարէր ։ Եւ երբոր ամէնը չատցուց , ան երկիրը սաստիկ սով մը եղաւ , ու ինքը սկսաւ չքաւոր
15 ըլլալ ։ Եւ գնաց ան երկիրին քաղաքացիներուն մէկուն քովը մտաւ · ան ալ զինքը իր արտը խրկեց

խոզերը արծելու : Եւ կրփափաքէր խոզերուն 16
կերած եղջիւրէն իր փորը լեցունել , ու մէկը
չէր իտար անոր : Եւ խելքը վրան գալով՝ ըսաւ · 17
Քանի՛ բանւորներ կան իմ հօրս տունը հացով
լեցված , ու ես հոս սովէն մեռած կրկոսրսրվիկոր :
Ելլամ երթամ իմ հօրըս , և ըսեմ անոր · Հայր՝ 18
մեղայ յերկինս և քու առջևրդ , ու ալ արժանի 19
չեմ քու որդիդ ըսվիլու · իս քու հրկինն բանւորնե-
րուդ մէկուն պէս ըրէ : Ու ելաւ իր հօրը եկաւ · 20
և դեռ որ ինքը շատ հեռուն էր՝ հայրը տեսաւ
անոկա ու խեղճը եկաւ , ելաւ և առջևը վազեց ·
պրլլըվեցաւ անոր վիզը ու պագաւ անիկա : Որ- 21
դին ալ անոր ըսաւ · Հայր՝ մեղայ յերկինս և քու
առջևրդ , ու ալ արժանի չեմ քու որդիդ ըսվի-
լու : Հայրը բաւ իր ծառաներուն · Շուտ մը 22
հանեցէք երևելի հագուստը՝ ու հագցուցէք ա-
նոր , և մատին դրէք իր ձեռքը , ու կօշիկներ իր
ոտքը · և պարարտ եզը բերէք մորթեցէք , ուտենք 23
և ուրախ ըլլանք , ինչու որ՝ աս իմ որդիս մեռած 24
էր՝ ու ող չըննցաւ · կորսրված էր՝ ու գտնըվեցաւ ·
և սկրսեցին ուրախ ըլլալ : Եւ անոր մեծ որդին 25
արտն էր , և երբոր գալու ու տունին մօտեցաւ՝
խաղերուն և պարերուն ձայնը լսեց : Ծառաներ- 26
էն մէկը իրեն կանչեց՝ կրհարցուներ թէ , Ի՞նչ
է ան : Նիկա ալ ըսաւ անոր որ՝ Եղբայրդ է- 27
կաւ , ու հայրդ գեր եզը մորթեց · պատճառն որ՝
ինքը ողջանդամ ձեռք ձգեց անիկա : Սրրդողե- 28
ցաւ՝ ու չէր ուզեր ներս մտնալ · հայրն ալ ելաւ
դուրս կաղաչէր անոր : Նիկա պատասխան տը- 29
ւաւ՝ և ըսաւ հօրը · Ես քանի տարի է որ քեզի
կրծառայեմկոր , ու բնաւ քու խօսքէդ դուրս չե-
լայ , մէկ ուլ մը ինծի բնաւ չի տըվիր , որ իմ
բարեկամներուս հետ ուրախութիւն բնէի : Ասայց 30
որ սանն ատ քու որդիդ եկաւ՝ ան որ քու ապ-
րուստդ բոզերուն հետ կերաւ ,ատոր մորթեցիր
գեր եզը : Եւ ան ըսաւ անոր · Որդեակ՝ դուն 31

ամէն իշխիր իմ հետս ես · ու բոլորը ինչ որ իմն է
32նէ՛ քուկդ է · միայն թէ պէտք էր ուրախ ըլլալ
և խնդալ · ինչու որ՝ աս քու եղբայրդ մեռած էր
ու ողջացաւ, կորսըված էր՝ ու գտնըվեցաւ ։

ԻԱ · ԺՀ ։

1 Եւ ըսաւ աշակերտներուն · Ա՛հա հարուստ
մարդ մը կար, որ ինքը տնտես մը ունէր, ու
անոր վրայով գանգատ եղաւ · որպէս թէ՝ անիկա
2իր ունեցածը կրիճացուներկոր ։ Կանչեց ու ըսաւ
անոր · Ի՞նչ է աս՝ որ քեզի համար կը լսեմկոր ·
քու տնտեսութեանդ համարը տուր, ինչու որ այլ
3չես կրնար տնտես ըլլալ ։ Տնտեսը իր միտքին
մէջը ըսաւ, Ի՞նչ պիտի ընեմ · որովհետև տէրը
իմ տնտեսութիւնը կառնէկոր · բան չեմ կրնար
4բանել, մուրանալու կամչշնամ ։ Գիտեմ ինչ
պիտի ընեմ՝ որ երբ տնտեսութենէս մէկ դի ըլ-
5լամ՝ նէ, իս իրենց տունը ընդունին ։ Եւ իր տէ-
րոջը պարտականները մէկիկ մէկիկ իրեն կանչե-
լով՝ ըսաւ առաջինին · Դուն իմ տէրոջս որչափ
6բան պարտք ունիս ։ Ան ալ ըսաւ, Հարիւր չափ
ձէթ · ըսաւ անոր · Դիրդ առ և շուտով նըստ
7յիսուն գրէ ։ Ետքը մէկալին ըսաւ · Դուն որչափ
պարտք ունիս · ան ալ ըսաւ, Հարիւր չափ ցո-
րեան · ու ըսաւ անոր, Դիրդ առ՝ և նըստ ութ-
8սուն գրէ ։ Ու տէրը անիրաւ տնտեսը գովեց, որ
խելացութիւնով ըրաւ · վասն զի աս աշխարհիս
որդիքը իրենց ցեղին մէջ՝ լուսոյ որդիքներէն ե-
9ռելի խելացի են ։ Եւ ես ալ ձեզի կըսեմ · Ինէ-
րաւ մամոնային ձեզի բարեկամներ ըրէք, որ երբ
անիկա պակսի նէ՝ ձեզ յաւիտենական բնակա-
10րաններուն մէջ ընդունին ։ Ան որ քիչ բանի մէջ
հաւատարիմ է, շատին մէջ ալ հաւատարիմ է ·
և ան որ քիչին մէջ անիրաւ է, շատին մէջ ալ ա-
11նիրաւ է ։ Ուստի թէ որ անիրաւ մամոնային հա-
ւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ով

պիտի հաւատայ ձեզի ։ Ու թէ որ օտարին բանին 12
մէջ հաւատարիմ չեղաք , ձերինը ո՞վ պիտի տայ
ձեզի ։ Ո՛եկ ծառայ մը չի կրնար երկու տէրոջ 13
ծառայել թէ՛ն ընել . ինչու որ կամ մէկը պիտի
ատէ և մէկալը սիրէ . կամ մէկը պիտի մեծարէ և
մէկալը քամահրէ . չէք կրնար Աստուծոյ ծառայել
ու մամոնային ։

Փարիսեցիները երբոր ասոնք ամէնը կը լսեին՝ ո- 14
րովհետև իրենք արծաթասէր էին , ալ ծոր կը-
գարնէին անոնց ։ Եւ բսաւ անոնց . Դուք որ 15
մարդոց առջև ինքզինքնիդ կարդարացունէք .
բայց Աստուած գիտէ ձեր սիրտերը . ինչու որ՝
մարդոց առջևը բարձր եղողը՝ Աստուծոյ առջևը
պիղծ է ։ Օրէնքը ու մարգարէները մինչև Յո- 16
հաննէս էին . անկէ ետև Աստուծոյ թագաւորու-
թիւնը կը քարոզուի վի , և ամէն մէկը անկից ուժովը
ձեռք կը ձգէ ։ Դիւրին է երկինքը ու երկիրը 17
անցնիլը , քան թէ օրէնքներէն մէկ նշանագիր մը
իյնալը ։ Ամէ որ իր կինը կարձկէ՝ և ուրիշ մը 18
կառնէ , շնութիւն կընէ . և ան որ արձկվածը
կառնէ՝ շնութիւն կընէ ։

Ո՛եկ հարուստ մարդ մը կար , որ ինքը բեհեզ- 19
ներ ու ծիրանի լաթեր կը ձգադներ , և ամէն իւիր
եվիլօք ուրախութիւն կրներ ։ Եւ մէկ աղքատ 20
մը անունը Ղազարոս անոր դուռանը առջին վիրա-
ւոր ինկած դրված էր . ու կարօտ կրըլլէր որ մե- 21
ծատունին սեղանէն ինկած փշրանքներովը իր փո-
րը լեցնէ . նաև շուներն ալ կուգային և անոր
վէրքերը կը լըզէին ։ Եւ եղաւ որ ան աղքատը 22
մեռաւ , ու հրեշտակները Աբրահամին գոգը տա-
րին անիկա . մեծատունն ալ մեռաւ ու թաղվեցաւ ։
Ու դժոխքին մէջը՝ երբոր տանջանքի մէջ էր , աչ- 23
քը վերցուց՝ և հեռուէն տեսաւ Աբրահամը , ու
Ղազարոս անոր գոգը հանդիստ նըստած ։ Եւ 24
ինքը ձայնը վերցուց ու բսաւ . Հայր Աբրահամ
ողորմէ՛ ինծի՛ ու խրկէ Ղազարոսը , որ իր մատին

ծարը չուրը թաթխէ ու պաղեշտիկնուն իմ լե-
զուս · ինչու որ՝ աս սասաւիկ տաքէն կրպտպակիմ
25կոր : Աբրահամ ըսաւ անոր · Մրգուակ մի՛ տքըր
բնը , որ դուն անդին քու կեանքիդ առնը քու
բարիքներդ առիր · անոր պէս ալ Ղ ազարոս չար-
չարանքը · հիմայ անկա հոս կ՚մխիթարի , և
26դուն հոս կրպտպակիս : Ու աս ամէն բաներն վրայ՝
մեր մէջը և ձեր մէջը մեծ անդունդ կայ · թէ որ
ասկից ձեզի անցնիլ ուզեն՝ չեն կրնար · ու ոչ ալ
27անկէց մեզ մեղի անցնել : Եւ ան ըսաւ · Ինանկ
է նէ՝ կաղաչեմ քեզի Հայր , որ անիկա իմ Հօրըս
28առնը խրկես · Հոն ես հինգ եղբայր ունիմ · որ
երթայ անոնց վկայութիւն տայ , որ չըլլայ թէ ա-
29նոնք ալ գան աս չարչարանքին տեղը : Աբ ըսաւ
Աբրահամ · Իրենք Մ՚ոյսէս ու մարգարէներ
30ունին , անոնց լսոր մոխի ընեն : Ան ալ ըսաւ ·
Ոչ՝ Հայր Աբրահամ՝ հապա թէ որ մեռելներէն
31մեկը երթայ անոնց՝ ալ կապաշխարեն : Եւ ան
ըսաւ անոր · Թէ որ Մ՚ոյսէսին ու մարգարէնե-
րուն չեն լսեր , ոչ ալ մեռելներէն մեկը ոդ ընենայ
նէ՝ միտքերնին պիտի պառկի :

ԳԼ · Ժ։

1 Ետ աշակերտներուն ալ ըսաւ · Կարելի չէ որ
գայթակղութիւն չի գայ · բայց վայ անոր , ո-
2րուն ձեռքովը կուգայ գայթակղութիւնը : Ել ա-
ղեկ էր անոր , որ իր վիզին աղաչքի քար մը կախ-
ուէր , ու ծովը իյնար , քան թէ աս պզտիկներէն
մեկը գայթակղեցնէ : Զգոյշ կեցէք ինքզինք-
նեռնուդ :
3 Թէ որ քու եղբայրդ դեղ գործ մեղք մը ընէ ,
հեռ տուր անոր · ու թէ որ ապաշխարէ՝ ներէ ա-
4նոր : Եւ թէ որ եօթն անգամ քեզի դէմ մեղք
գործէ՝ ու եօթն անգամ դառնայ քեզի և ըսէ՝
Կապաշխարեմ , ներէ անոր :
5 Եւ ըսին առաքեալները Տէրոջը · Մ՚եր հա-

ատքը էմելցուր · ու Տէրը ըսաւ · Ով որ մանա- 6
նեխին հատին չափ հաւատք ունենար՝ և աս թու-
զին ծառին ըսէր , Տեղէդ փրթիր ու ծովին մէջը
տնկըվէ , ալ ան կըհնազանդի ձեզի ։

Ո՞այց ձեզմէ ով է ան մարդը՝ որ ունենայ մէկ 7
երկրագործ կամ հովիւ ծառայ մը , որ անիկա
երբոր արտէն դառն մտնայ՝ շուտով մը գուրգէ
անոր , թէ՝ Ընցիր սեղան նըստէ ։ Հապա չըսեր 8
մի անոր թէ՝ Պատրաստէ ինչ որ իրիկունս պիտի
ուտեմ · ու գօտիդ կապած ինծի ծառայութիւն
ըրէ , մինչև որ ես ուտեմ և խըմեմ · ու ետքը
դուն ալ ուտես և խըմես ։ Միթէ շնորհակալ մի 9
կըլլայ ան ծառային , որ իր ամէն հրամայածներըը
կատարեց ։ Ընանկ ալ դուք ձեր ատեն բոլոր ձե- 10
զի հրամայված բաներն որ ընէք՝ ըսէք թէ , Մենք
անպիտան ծառաներ ենք · ան որ պարտական էինք
ընելու՝ ըրինք ։

Եւ եղաւ որ երբ Երուսաղէմ կերթար , 11
ու Սամարիայի և Գալիլեացոց մէջ տեղէն կանց-
նէր ։ Ու երբոր մէկ գեղ մը պիտի մտնար՝ տասը 12
հատ բորոտ մարդ հանդըպեցան անոր , որոնք հե-
ռուէն կայնած՝ ձայներնին վերուցին և ըսին , 13
Յիսուս վարդապետ , ողորմի՛ մեզի ։ Եւ երբոր 14
տեսաւ անոնք՝ ըսաւ իրենց · Գացէք դուք ձեզ
քահանային ցուցուցէք · ու եղաւ որ երբ գացին՝
խկոյն սրբըվեցան ։ Ընոնցմէ մէկը երբոր տեսաւ 15
թէ ըրընացաւ , նոր դարձաւ մեծ ձայնով մը
փառք կուտար Աստուծոյ · անոր ոտքը ինկաւ երե- 16
սին վրայ՝ ու շնորհակալ կըլլար անկէց · և ինքը
Սամարացի մըն էր ։ Պատասխան տուաւ Յիսուս 17
ու ըսաւ · Չէ՞ որ տասնք տասն ալ սրբըվեցան ·
հապա ան ինը ուր են ։ Ուր հոս չեն գտնըվեր՝ 18
դառնալու Աստուծոյ փառք տալու , միայն թէ աս
օտարազգին ։ Եւ ըսաւ անոր , Ելլէր գնա · ինչու 19
որ քու հաւատդ քեզ բժշկեց ։

Փարիսեցիները երբոր հարցուցին՝ թէ Աստու- 20

ծոյ թագաւորութիւնը երբ պիտի գայ , պատաս-
խան տուաւ անոնց՝ և ըսաւ ։ Աստուծոյ թագա-
ւորութիւնը դրսեվանից երևեցած բաներով չէ
21 գար ։ ու չըսեն թէ՝ Ահա հոս է կամ հոն ։ ինչու
որ՝ ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներ-
սի դին է ։
22 Աշակերտներուն ալ ըսաւ ։ Օրեր պիտի գան՝
որ դուք մէկ օրը տեսնալու պիտի
23 փափաքիք , և պիտի չի տեսնաք ։ Ու թէ որ ըսեն
ձեզի թէ՝ Ահա հոս է կամ հոն , մի՛ երթաք ետև-
24 էն ։ Վասն զի ինչպես որ փայլակը երկինքին
տակը ֆէի պեղ ֆը կըփածկըլտայ՝ ան երկինքին
տակովը ինքն ինքզինքը լոյսը կըծագէ , անանկ
25 ալ Որդին մարդոյ իր գալըն օրը ։ Մէյնայն թէ
պէտք է որ ինքը առաջ շատ չարչարանք քաշէ ու
26 անարդըվի աս ազգէն ։ Եւ ինչպես որ Նոյէ օրե-
րը եղաւ , անանկ պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ օ-
27 րերն ալ ։ Անոնք կուտէին կըխըմէին՝ կնիկ կա-
նէին՝ ու էրիկ կառնէին՝ մինչև ան օրը , որ Նոյ
տապանը մտաւ , ու ջրհեղեղը եկաւ՝ և բոլորն ալ
28 կորսընցուց ։ Անանկ ալ՝ ինչպես որ Ղոտին օ-
րերը եղաւ , կուտէին՝ կըխմէին՝ ծախու կառնէին՝
29 կըծախէին , կըտնկէին՝ կըշինէին ։ ԵՒ ան օրը որ
Ղոտը Սոդոմէն ելաւ՝ երկինքէն կրակ ու ծծումբ
30 թափվեցաւ , և բոլորն ալ կորսընցուց ։ Այս օրի-
նակին պէս պիտի ըլլայ ան օրը , որ Որդին մար-
31 դոյ պիտի յայտնըվի ։ Ան օրը՝ ան որ տանիքին
վրայ է և իր բաները տանը մէջը , թող վար չիջ-
նայ անիկա առնելու ։ և ան որ արտին մէջն է
32 թող ետ չի դառնայ ։ Մէյթքերնիդ բերէք Ղոտ-
33 տին կնիկը ։ Ան որ իր կեանքը կուզէ ապրեցու-
նել՝ կըկորսընցունէ անիկա ։ ԵՒ ան որ կըկորսըն-
34 ցունէ՝ կապրեցունէ անիկա ։ Ձեզի կըսեմ ։ Ան
գիշերը թէ որ երկու հոգի մէկ անկողնի մէջ
ըլլան , մէկը պիտի առնըվի՝ և մէկալը պիտի ձըգ-
35 վի ։ Ու թէ որ երկու հոգի մէկ տեղ աղալու ըլ-

լան , մէկը պիտի առնըվի՝ և մէկալը ձրգվի · ու
թէ որ երկու հոգի արտին մէջը ըլլան՝ մէկը պիտի
առնըվի՝ և մէկալը ձրգվի ։ Պատասխան տըվին ու 36
ըսին անոր , Տէր՝ ուր ։ Ան ալ ըսաւ անոնց , 37
Ուրտեղ մարմին կայ՝ արծիւներն ալ հոն կը-
ժողվըվին ։

ԳԼ · ԺԲ ։

Ա նոնց մէկ առակ մըն ալ ըսաւ՝ անոր վրայով 1
թէ , Իրենց պէտք է ամէն ատեն աղօթք ընել
ու չի ձանձրանալ · ըսաւ · Մէկ դատաւոր մը կար 2
քաղաքի մը մէջ · Աստուծմէ չէր վախնար՝ ու մար-
դոցմէ չէր ամչնար ։ Եւ մէկ որբևայրի մը կար 3
ան քաղաքին մէջ , կուգար անոր ու կըսէր · Վա-
տաստան ըրէ ինծի իմ ներհակիս դէմ ։ Եւ շատ 4
ժամանակ ինքը չէր ուզեր · անկէ ետքը ըսաւ իր
մտքին մէջ ինքնիրենը · Թէ որ Աստուծմէ ալ չեմ
վախնար՝ ու մարդոցմէ չեմ ամչնար նէ , գոնէ 5
որբևայրիին իս աշխատցնելուն համար իր դա-
տաստանը տեսնեմ , որ չի գայ ամէն ատեն իս
ձանձրացունէ ։ Ու ըսաւ Տէրը · Լսեցէք՝ անիրաւ 6
դատաւորը ինչ կըսէր ։ Հապա Աստուած իր ծա- 7
ռաներուն համար վրէժխնդիր չըլլար մի , որ ցորեկ
ու գիշեր իրեն կըկանչեն , թէ և երկայնամիտ ալ
ըլլայ անոնց վրայ ։ Իրաւ կըսեմ ձեզի , որ շու- 8
տով անոնց վրէժխնդրութիւնը պիտի ընէ · բայց
Որդին մարդոյ գայ նէ՝ արդեօք հաւատք պիտի
գտնայ երկրի վրայ ։

Եւ մէկ քանիներուն դէմ որ ինքնիրենին կը- 9
պարծենային թէ արդար են՝ ու շատերը վար կը-
գարնէին , ասա առակը ըսաւ · Երկու մարդ ելան 10
տաճարը աղօթք ընելու · մէկը՝ Փարիսեցի , և մէ-
կալը՝ մաքսաւոր ։ Փարիսեցին զատ կայներ էր՝ ու 11
սիրտերիկ աս աղօթքը կընէր , Աստուած իմ՝
շնորհակալ եմ քեզմէ , որ ուրիշ մարդոց պէս
չեմ ես՝ յափշտակող , անիրաւ , շնացող , կամ

12 թէ աս մաքսաւորին պէս ։ Հապա շաբաթը երկու
Հեղ ծոմ կը պահեմ , և բոլոր ապրանքներուս
13 տասանորդը կուտամ ։ Ու մաքսաւորը մէկ կողմէ
կայներ էր , ու չէր ուզեր աչքը երկինքը վերցու-
նել . հապա իր կուրծքը կը ծեծէր և կըսէր , Աս-
14 տուած՝ ներէ ինծի մեղաւորիս ։ Ձեզի կըսեմ ,
Այսիկա ան մէկալէն էվելի արդարացած իր տունը
իջաւ . վասն զի՝ ով որ ինքզինքը կըբարձրցու-
նէ , անիկա պիտի ցածնայ . և ով որ ինքզինքը
կըխոնարհեցնէ , անիկա պիտի բարձրանայ ։
15 Անոր տղաքներ ալ կըբերէին անոր , որ անոնց
դըպչի . աշակերտները երբոր տեսան՝ կըչեխէին
16 անոնց ։ Հապա Յիսուս անոնք իրեն կանչելով
ըսաւ . Թող տըվէք աս տղոցը որ ինծի գան , ու
մի՛ արգիլէքատոնք . ինչու որ Աստուծոյ թագա-
17 ւորութիւնը ատանկներուն է ։ Ճշմարիտ կըսեմ
ձեզի . Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը
պըտիկ տղի մը պէս չընդունի նէ՝ չի պիտի մտնայ
անոր մէջը ։
18 Ու մէկ իշխան մը հարցուց իրեն՝ և ըսաւ . Վա-
րի վարդապետ՝ ինչ գործ գործեմ որ յաւիտե-
19 նական կեանքը ժառանգեմ ։ Յիսուս ըսաւ անոր՝
Ինչու՞ ինծի բարի կըսես . մէկէն ի զատ բարի չէ
20 կայ , որ է Աստուած ։ Պատուիրանքները գիտես .
Շնութիւն մի՛ ընար , սպաննութիւն մի՛ ընար , գո-
ղութիւն մի՛ ընար , սուտ վկայութիւն մի՛ ընար ,
21 քու հայրդ ու մայրդ պատուէ ։ Ան ալ ըսաւ . Աս
22 ամէնը տղայութենէս ի վեր պահեցի ։ Երբոր Յի-
սուս լսեց ան՝ ըսաւ անոր . Մէկ բան մըն ալ պա-
կաս է քեզի . բոլոր ինչ որ ունիս նէ՝ ծախէ աղ-
քատներուն տուր , ու երկինքը գանձ պիտի ու-
23 նենաս , և եկո՛ իմ ետևէս ։ Անիկա երբոր լսեց՝
24 տրտմեցաւ , ինչու որ շատ հարուստ էր ։ Յիսուս
երբոր անիկա տրտմած տեսաւ՝ ըսաւ . Անոնք որ
ստացուածք ունին՝ ինչպէս դժուարութիւնով
պիտի մտնան Աստուծոյ թագաւորութիւնը ։

Հ ասա դիւրին է որ մեղուխը ասեղին ծակէն 25
անցնի , քան թէ հարուստը Աստուծոյ թագաւո-
թիւնը մտնայ ։ Եւ անոնք որ լսեցին՝ կրկէին ։ 26
Ա՛ռ ով կրնայ փրկուիլ ։ Եւ ինքը բսաւ ։ Մա- 27
դոյդ անհնար բաները Աստուծմէ հնարաւոր
են ։ Ու Պետրոս բսաւ ։ Ահա մենք մեր ամեն բա- 28
ները թողուցինք՝ և քեզ հետևեցանք ։ Ու ան- 29
կա բսաւ անոնց ։ Ամէնիս կըսեմ ձեզի , թէ
մարդ մը չի կայ , որ իր տուները , կամ ծնողքը ,
կամ եղբայրները , կամ կնիկը , կամ զաւակնե-
րը Աստուծոյ թագաւորութեան համար ձրդեց , 30
թէ որ ինքը էվելօքը չառնէ հիմակու ատենիս մէ-
ջը՝ և ան գալու աշխարհին մէջն ալ յաւիտենա-
կան կեանքը ժառանգէ ։

Ու առաւ տասներկուքը առանձին՝ բսաւ ա- 31
նոնց ։ Ահա մենք Երուսաղէմ կելլանքիոր , և
մարգարէներուն ձեռքով Որդւոյ մարդոյ համար
բոլոր գրածները պիտի կատարվին ։ Ինչու ը- 32
հեթանոսներուն պիտի մատնվի , ու ծաղր պիտի
ըլլայ , ու պիտի ծեծեն և բսպանեն անիկա , ու 33
իրեք օրէն յարութիւն պիտի առնէ ։ Ասոյց անոնք 34
բան մը չի հասկըցան ասոնք բաներէն ։ Ասոնք ան
խօսքը անոնցմէ ծածկըլված էր , և բսածը չէին
հասկընար ։

Ու եղաւ որ երբ ինքը Երիքովին կրմօտենար՝ 35
մէկ կոյր նստեր էր մուրալու ։ Երբոր լսեց ժողովուրդին անցնիլը , հար- 36
ցուց՝ թէ ի՞նչ է ան ։ Եւ իրեն բսին՝ թէ Յիսուս 37
Նազովրեցին կանցնիկոր ։ Կանչ վըտուեց ու բսաւ ։ 38
Յիսուս Դաւիթին Որդին , ողորմի՛ ինծի ։ Եւ 39
անոնք որ առջևէն կերթային՝ կըչեխէին անիկա
որ ձայնը կարէ ։ ու անիկա ալ էվելօք կըպօտար ,
Դաւիթին Որդին՝ ողորմի՛ ինծի ։ Կանկ առաւ 40
Յիսուս , և հրաման բրաւ անիկա իրեն բերել ։
ու երբոր մօտեցաւ իրեն՝ հարցուց անոր և բսաւ ։
Ի՞նչ կուզես գուն որ քեզի ընեմ ։ Անիկա ալ բ-

սաւ , Տէր՝ որ ա՛չքերդս բացվին , ու տեսնամ ։
42 Յետոս ալ ըսաւ անոր ։ Այո՛ք՝ քու հաւատքդ
43 քեզ լաւ ընէ ։ Եւ շուտ մը անոնք ա՛ն տեղէն կերթան՝ և փառք կուտար Աստուծոյ , ու ըսողներդն ալ որ տեսան , Աստուծոյ օրհնութիւն կուտային ։

ԴԱՆԻԷԼ ։

1 Ե՛ս մնաս Երիքովին մէջը կրպտրտակը ։ Ու
2 ահա մէկ մարդ մը՝ անունը Զաքէոս ըսված ,
3 որ իրեն մաքսապետ էր և հարուստ ։ և կուզէր տեսնալ թէ ով է Յիսուս ։ ու բազմութենէն չէր
4 կրնար ։ ինչու որ հասակովը կարճ էր ։ Եւ առաջ վազեց ժանտաքարէն ծառին վրայ նետ , որ անկից տեսնայ ։ ինչու որ անկէց պիտի անցնէր ։
5 Երբոր ան տեղը եկաւ՝ վեր նայեցաւ Յիսուս և ըսաւ անոր ։ Զաքէ՛ք՝ շուտ ըրէ՛ ասկից իջի՛ր ։ ինչու որ այսօր քու տունդ կըմայլէ ինծի բնակիլ ։
6 Շտապաց ու վար իջաւ՝ և ուրախութիւնով ա-
7 նկից ընդունեց ։ Երբոր ամէնքն ալ տեսան՝ կըտրտրային և կըսէին , թէ Ի՛նդուր մարդու
8 քով մնաս Հանդստանալու ։ Եկաւ կայնեցաւ Զաքէոսը՝ և ըսաւ Տէրոջը ։ Տէր՝ ա՛ւա իմ ունցածիս կէսը ազքատներուն կուտամ ։ ու թէ որ մէկուն զրկանք ըրի նէ՝ չորս անգամը կըվճա-
9 րեմ անոր ։ Յիսուս ալ անոր ըսաւ ։ Այսօր աս տանը փրկութիւն եղաւ ։ ինչու որ ասիկա ալ
10 Աբրահամի որդի էր ։ Վա՛ն զի Որդին մարդոյ եկաւ՝ որ կորսըւածը փնտրէ ու փրկէ ։
11 Եւ երբոր անոնք կըլսէինկոր՝ ինքը առակ մը էսկցուց , ու ըսաւ՝ իրեն Երուսաղէմ մօտենալուն վրայով , և անոնց անանկ սեպհականն համար՝ որ ալ շուտ մը Աստուծոյ թագաւորութիւնը պի-
12 տի յայտնըվի ։ Ըսաւ ։ Ա՛ղէկ ազնուական մարդ մը հեռու երկիր մը գնաց՝ իրեն թագաւորութիւն
13 առնելու և դառնալու ։ Եւ իր ծառաները կան-

չեց , տասը մնաս տրւաւ անոնց՝ ու ըսաւ իրենց ։
Առնեցուցէք առիկա մինչև որ ես գամ ։ Եւ իր 14
քաղաքացիները զինքը կատէին ։ դեսպաններ խրր-
կեցին անոր ետևէն՝ ու ըսին թէ , Չենք ուզեր
որ առիկա մեր վրայ թագաւորութիւն ընէ ։ Ու 15
եղաւ որ՝ թագաւորութիւնը առնելով եւս դար-
ձաւ անիկա , ու կանչեց ծառաները որոնց որ ըր-
տակը տրվեր էր , որ իմանայ թէ ինչ շահ
ըրաւ ։ Առջինը եկաւ և ըսաւ ։ Տէր՝ քու մնասդ 16
տասը մնաս շահ ըրաւ ։ Ու ըսաւ անոր , Ապրիս ։ 17
աղէկ ծառայ՝ որովհետև քիչին մէջ հաւատարիմ
եղար , տասը քաղքի վրայ իշխանութիւն ունցող
եղիր ։ Երկրորդը եկաւ ու ըսաւ ։ Վ.ու մնասդ 18
հինգ մնաս շահ ըրաւ ։ Ետև անոր ։ Դուն ալ 19
հինգ քաղաքի վրայ եղիր ։ Եկաւ մեկալը՝ ու ը- 20
սաւ ։ Տէր՝ ահա քու մնասդ՝ որ թաշկինակի մէջ
ծրարած կըպահէի ։ կըվախնայի քեզմէ ։ ինչու որ 21
դուն մէկ դաժան մարդ մըն ես , չի գրած բանդ կը-
վերցնես , ու չի ցանածդ կըքաղես ։ Եւ ան ըսաւ 22
անոր ։ Վ.ու բերնէդ քեզ պիտի դատապարտեմ՝
ով անհաւատ ծառայ ։ գիտէիր որ ես դաժան
մարդ մըն եմ ։ չի գրած բանս կըվերցնեմ , ու
չի ցանածըս կըքաղեմ ։ Ալ ինչու համար իմ ըս- 23
տակս հատավաճառներուն չի տուիր , որ ես եր-
բոր գայի՝ շահովը եստ ուզէի ։ Եւ սպասաւորնե- 24
րուն ըսաւ ։ Առէք տակէդ ան մնասը , ու տարէք
տըվէք անոր որ տասը մնաս ունի ։ (և ըսին իրեն ։ 25
Տէր՝ անիկա տասը մնաս ունի) ձեզի կըսեմ որ , 26
Ան ամէնուն որ ունի նէ՝ պիտի տրվի , և անկէց
որ չունի նէ՝ ունեցածն ալ պիտի առնըվի ։ Բայց 27
ան իմ թշնամիներըս որ իս չեին ուզեր իրենց վրայ
թագաւոր ըլլալ , հնա բերէք՝ ու իմ առջևըս ըս-
պաննեցէք ։ Եւ երբոր ասս խօսեցաւ , առաջ գը- 28
նաց Երուսաղէմ երթալու ։

Ու եղաւ որ երբ Բեթփագէին ու Բեթանիայ- 29
ին մօտեցաւ՝ ան լեռանը մօտ , որ Ձիթենեաց ե-

կըսվի · իր աշակերտներէն երկուքը խրկեց և ը-
30 սաւ · Վաղէք դուք մեր դիմացը եղած գեղը · ո-
րուն մէջը երբ որ մտնաք՝ պիտի գտնաք մէկ կա-
պած աւանակ մը , որ անոր վրայ ընաւ մարդ մը
31 չէ նըստաւ · արձկեցէք ու բերէք : Եւ
թէ որ մէկը ձեզի հարցունէ՝ թէ ինչո՞ւ կարձը-
կէքկոր , ասանկ ըսէք անոր , որ՝ Իր Տէրոջը պէտք
32 է : Երբոր գացին անոնք որ խրկըվեցան , ինչպէս
որ իրենց ըսըցեց նէ՝ գտան , աւանակը կեցեր
33 էը : Ու երբոր աւանակը կարձկէկենկոր՝ անոր
Տէրերը իրենց ըսին · Ինչո՞ւ կարձըկէքկոր աս
34 աւանակը : Նոքա ալ ըսին · Իր Տէրոջը պէտք է ·
35 և անիկա Յիսուսին բերին , ու անոր վրան լաթեր
36 ձգեցին , ու Յիսուսը հեծցուցին : Եւ երբոր
կերթար՝ իրենց լաթերը ճամբուն վրայ կըփրսէ-
37 ին : Եւ երբոր ալ մօտիկցաւ Ձիթենեաց լեռնէն
դէպի վար իջնալուն՝ աշակերտներուն բոլոր բազ-
մութիւնը սկսաւ ուրախութեամբ Աստուծոյ օրհ-
նելով տալ բարձր ձայնով ան ամէն եղած հրաշք-
38 ներուն համար՝ որ տեսեր էին · ու կըսէին · Օրհ-
նեա՛լ է սա թագաւորը՝ որ Տէրոջը անունովը կու-
գայ · երկինքի մէջ խաղաղութիւն՝ ու բարձրերը՝
39 փառաւորութիւն : Եւ ան բազմութենէն մէջէն
վարիսեցիներուն մէկ քանիները ըսին անոր ·
Ա՛րդապետ՝ սա քու աշակերտներըդ չեխե :
40 Պատասխան տուաւ և ըսաւ · Ձեզի կըսեմ՝ , թէ
որ սոսկը լուռ կենան՝ քարերը պիտի կանչեն
ատեն :
41 Ու երբոր մօտեցաւ , քաղաքը տեսնալով լացաւ
42 անոր վրայ՝ և ըսաւ · Կո՛ղնէ աս օրերս ըլլայ որ
գիտնայիր դուն քու խաղաղութիւնդ · բայց հիմայ
43 գտցվեցաւ քու դիմացէդ : Ինչո՞ւ որ՝ օրեր պիտի
գան քու վրադ , որ թշնամիներդ քու բոլորտիդդ
պատ պիտի քաշեն , ու քեզ պիտի պաշարեն , և
44 ամէն կողմէն քեզ պիտի նեղը ձգեն · ու հիմնայա-
տակ պիտի ընեն քեզ՝ և քու կիները մէջդ եղած զա-

ւակներդ · և քար մը քարի մը վրայ բոլորովին պի-
տի չի թողուն քու մէջդ · անոր համար՝ որ չի
ճանչցար քու այցելութեան ժամանակդ ։
Ու մեսա տաձարը՝ սկսեց դուրս հանել աղա- 45
նի ծախողները և գնողները , ու տակի փոխողնե-
րուն սեղանները ցրուեց ։ Եւ բսաւ անոնց · 46
Գրուած է որ՝ Իմ տունս աղօթքի տուն ըլլայ · և
դուք տիկա գողերու այր ըրիք ։
Եւ միշտ կսորվեցունէր անոնք տաճարին մէջը · 47
բայց քահանայապետները ու կարդացողները և
ժողովուրդին գլխաւորները եաւէն էին անկա
սպանելու , ու բան մը չէին կրնար գտնալ՝ թէ 48
ինչ ընեն · ինչու որ բոլոր ժողովուրդը անոր կապ-
ւեր էին մտիկ ընելու ։

Գ Լ · Ի ։

Ու եղաւ որ ան օրերուն մէկը երբոր տաճարին 1
մէջը ժողովուրդը կքսորվեցունէր՝ ու աւետա-
բանը կքարոզէր , քահանայապետները ու կար-
գացողները ծերերուն հետ մէկ տեղ վրայ հա-
սան , և բսին անոր · Օրըդ մեզի՝ ինչ իշխանու- 2
թիւնով գուն տիկա կընեսկոր , կամ ովՀ է որ
սա իշխանութիւնը քեզի տուաւ ։ Պատասխան 3
տուաւ՝ ու բսաւ անոնց · Ես ալ մէկ բան մը հար-
ցունեմ ձեզի , և բսէք ինծի ։ Յովհաննէսին մկրը- 4
տութիւնը երկինքէ՞ն էր , թէ մարդոցմէ ։ Անոնք 5
ալ միտքերնուն մէջ մրմնջացին՝ ու բսին · Թէ
որ բսենք՝ Երկինքէն , պիտի բսէ՝ Հապա ինչու 6
չի հաւատացիք անոր · ու թէ որ բսենք՝ Մարդոց-
մէ , բոլոր ժողովուրդը մեզ քարկոծ կրնեն · ինչու
որ միտքերնին համոտա դրեր են Յովհաննէսին
համար՝ թէ մարգարէ է ։ Եւ պատասխան տըվին՝ 7
թէ չեն գիտեր ուսկից էր ։ Եւ Յիսուս բսաւ ա- 8
նոնց · Ես ալ չեմ բսեր ձեզի՝ ինչ իշխանութի-
նով կընեմկոր ասիկա ։
Սկսաւ ժողովուրդին սա առակը զբսել · 9

Այն մարդ մը այգի մը անկից , ու անկից բան-
վորներուն ալաւ . և ինքը շատ ժամանակ ձամ-
10բորդաձևան դնաց : Ու առանին ան բանվորնե-
րուն ծառայ մը խրկից , որ այգիին պտուղէն ա-
նոր տան . և բանվորները ծեծեցին անկից , ու
11պարապ ձամբեցին : Եւ նորէն ուրիշ ծառայ մըն
ալ խրկից . անոնք անկիա ալ ծեծեցին , անար-
12գացին՝ ու պարապ ձամբեցին : Եւ նորէն երրորդ
մըն ալ խրկից . անոնք անկիա ալ վիրաւորեցին՝
13ու դուրս հանեցին : Այդիին տէրը ըսաւ . Ինչ
ընեմ . իմ սիրական զաւակս խրկեմ , գուցէ ան-
14կից ամչնան : Հանվորները երբոր տեսան անի-
կա՝ մէկմէկու հետ խորհուրդ ըրին և ըսին . Այս-
կա է ժառանգը . սպաննենք աս՝ որ ժառանգուա-
15թիւնը մերն ըլլայ : Եւ անկիա այգիէն դուրս
հանեցին՝ ու սպաննեցին . ուստի ինչ պիտի ընէ
16անոնց այգիին տէրը . Էկ որ պիտի գայ՝ ու կոր-
սընցունէ ան բանվորները , և այգին ուրիշներուն
17տայ . երբոր ասոնք լսեցին՝ ըսին , Վաւ լիցի : Եւ
ինքը անոնց նայելով ըսաւ . Ապա ինչ է ան
գրվածք , թէ՝ Ան քարը որ շինողները բանի տես-
18ին դրին , անկիա անկիւնի գլուխ եղաւ : Ամէն
ով որ աս քարիս գարնըվի նէ՝ ջարդուբուրդ պի-
տի ըլլայ , և որին վրայ որ կ'նայ նէ՝ պիտի փսորէ
19անկիա : Ու կուզէին կարդացողները ու քահա-
նայապետները նոյն ժամին ձեռք ձգել անոր , բայց
ժողովուրդէն վախցան . ինչու որ իմացան՝ թէ ան
առակը իրենց դէմ ղըրցից :
20 Եւ նայը սպասեցին՝ ու խրկեցին կեղծաւորնալ
խաւսեցայ մարդիկ՝ ինքզինքնին արդարներու
կարգ բռնած , որ անկիա խօսքով բռնեն՝ տերու-
թեան ու դատաւորին իշխանութեանը ղինքը մատ-
21նելու : Հարցուցին իրեն և ըսին . Վարդապետ՝
գիտենք որ շիտակ կը խօսիս ու կը սորվեցունես ,
և աչառութիւն չես ըներ . հապա շիտակ-շիտակ
22Աստուծոյ ճամբան կը սորվեցունես : Արդեն կիս-

Նաի Կայսրին տուրք տալ՝ թէ չէ։ Եւ անոնց խա- 23
բամանկութեանը նայելով՝ ըսաւ անոնց. Ինձի 24
մէկ դահեկան մը ցուցուցէք. անոնք ալ ցուցու-
ցին. և ըսաւ. Ո՛ս պատկերը ու գիրը որմունն է.
պատասխան տուին և ըսին՝ Կայսրինը։ Ու ինքը 25
ըսաւ անոնց. Ուրեմն է՛ն դացէք կայսրինը կայս-
րին տուէք, ու Աստուծոյ՝ Աստուծոյ։ Եւ չի 26
կրնացին անիկա ժողովուրդին առջեը խօսքով մը
բռնել. ու զարմանալով անոր պատասխանին
վրայ՝ լուռ կեցան։

Սադուկեցիներէն մէկ քանին եկան (որոնք որ 27
հակառակութիւն կընէին թէ յարութիւն չի կայ)
հարցուցին իրեն ու ըսին. Վ՛ուրդապետ՝ Մով- 28
սէս մեզի գրեց, Եթէ որ մեկուն եղբայրը մեռնի՝
որ ան կնիկ ունենայ, ու ինքը զաւակ չունենայ
նէ, որ անոր եղբայրը թող առնէ ան կնիկը, և իր
եղբօրը զաւակ հանէ։ Ուստի եօթը եղբայրներ 29
կային. ու առջինը կնիկ մը առնելով զաւակ չու-
նեցած մեռաւ։ Ընդհակառակն ալ առաւ, և 30
ինքն ալ մեռաւ առանց զաւակի։ Երրորդն ալ 31
առաւ անիկա. նմանապէս եօթն ալ, ու զաւակ
չի ձգեցին։ Վերջը ալ կինն ալ մեռաւ։ Հիմա՝ 32
յարութեան ատենը անոնցմէ որո՞ւն կնիկ պիտի 33
ըլլայ. ինչու որ եօթն ալ անիկա կնիկ առին։
Պատասխան տուաւ Յիսուս անոնց՝ ու ըսաւ. Ո՛ս 34
աշխարհս զաւկընները կնիկ կառնեն ու երիկ
կառնեն։ Հայց անոնք որ արժանի պիտի ըլլան 35
մեկալ աշխարհին հանելու, ու մեռելներէն յա-
րութիւն առնելուն, ոչ կնիկ կառնեն և ոչ երիկ
կառնեն։ Որովհետև մեռնիլ ալ չեն կրնար. ին- 36
չու որ հրեշտակներուն հաւասար են՝ ու Աստու-
ծոյ զաւակները. պատճառն որ յարութեան որ-
դիք են։ Հապա որ մեռելները յարութիւն կառ- 37
նեն, Մովսէսն ալ խմացուց մորենիին պատմու-
թեանը մէջ, ինտր որ կըսէ Տէրոջը Համար՝ Ա-
բրահամին Աստուածը, ու Իսահակին Աստուածը,

38 ու Յակորին Աստուածը : Եւ Աստուած մեռել-
ներուն չէ , հապա կենդանիներուն . ինչու որ
39 ամէնքը իրեն կենդանի են : Կարգադցողներէն մէկ
քանին պատասխան տրին՝ և ըսին . Ով ուսդապետ
40 աղէկ ըսիր : Ու ալ մէկը համարձակութիւն չէր
ըներ անոր հարցնելու՝ ոչ մէկ բան մըն ալ :
41 Եւ բսաւ անոնց . Ինչպէս կըսեն Քրիստոսին
42 համար՝ Դաւիթի որդին է : Ինչու որ ինքը
Դաւիթ սաղմոսներուն գրքին մէջ կըսէ . Տէրը
43 իմ Տէրոջս բսաւ , Իմ աջ կողմը նստէ , մինչև
որ քու թշնամիներդ քու ոտքիդ կոթողը դնեմ :
44 Ուսոի Դաւիթ անոր Տէր կըկանչէ , ինչպէս անոր որդին կըլլայ :
45 Եւ բոլոր ժողովուրդին ականջին առջև բսաւ
46 իր աշակերտներուն : Ուզոյ կեցէք ան կաղաղ-
ցողներէն , որ կուզեն պըտրտիլ լայն հանդերձ-
ներով , ու շուկաներուն մէջ բարևներ կըսթ-
բեն , և ժողովարաններուն մէջ առջի աթոռնե-
բը , ու ընթրիքներուն մէջ գլխաւոր տեղերը :
47 Որոնք որ որբևարիներուն տուները կուտեն , ու
երևելու պատճառաւ երկար աղօթք կընեն .
անոնք աւելի դատապարտութիւն պիտի ընդու-
նին :

ԳԼ · Ի :

1 Ու նայեցաւ տեսաւ Հարուստները որ իրենց
2 տուրքը գանձանակը կընձկէինկոր : Ու ևկ որ-
բևարի աղքատ կնիկ մըն ալ տեսաւ , որ հոն կը-
3 կու լոմայ ձգեց : Ու ինքը բսաւ . Ճշմարիտ կը-
սեմ ձեզի , որ ան աղքատ որբևարին ամէնէն
4 եվելը ձրդեց : Ուանոնք ամէնը իրենց դիզածներէն
Աստուծոյ ընծային ձգեցին . բայց ասիկա իր չքա-
ւորութենէն բոլորը իր ունեցած ապրուստը ձգեց :
5 Ու տաճարին համար մէկ քանիները երբոր ը-
սին , թէ Գովեր քարերով ու աշտարակներով
6 զարդարված է , բսաւ . Ուա ամէնը որ կըտեսնաք ,

օրեր պիտի գան՝ որ անտառները քար քարի վրայ չի
պիտի մնայ որ չի քակվի ։ Հարցուցին իրեն և բ- 7
սին ։ Ո՛վ արդարև ԵՐբ պիտի բլլայ ատիկա , և
ի՞նչ է նշանը՝ երբոր ատիկա պիտի բլլայ ։ Ին 8
ալ ըսաւ ։ Զգոյշ կեցէք չի խաբուիք ։ ինչու որ
շատերը պիտի գան իմ անունովս և ըսեն , Թէ
Ես եմ Ա՛րքայասէր ։ ու ժամանակը մօտեցաւ , ա-
նոնց ետևէն չերթաք ։ Ա՛յց երբոր լսելու բլլաք 9
պատերազմներ և իրարանցումներ՝ մի վախնաք ։
ինչու որ՝ աս բաները պէտք է որ առաջ բլլան ։
բայց վախճանը իսկոյն չէ ։ Ա՛նտառները ըսաւ ա- 10
նոնց ։ Ազգ ազգի վրայ պիտի ելլայ ։ ու թագաւո-
րութիւն թագաւորութեան վրայ ։ Եւ մեծ մեծ 11
շարժներ , ու տեղ տեղ սովեր և մահատարաժամ-
ներ ։ Երկինքէն սոսկալի բաներ և մեծ մեծ նշան-
ներ պիտի բլլան ։ Ա՛յց աս ամէն բաներէն ա- 12
ռաջ՝ իրենց ձեռքերը ձեզի պիտի դնեն ու հա-
լածեն , ժողովարաններու և բանտերու պիտի
մատնեն , ու դատաւորներու և թագաւորներու
առջևը պիտի տանին իմ անունիս համար ։ Եւ ան 13
պիտի բլլայ ձեզի մէկ վկայութիւն մը ։ Ա՛ստի 14
ձեր սրտին մէջը գրէք՝ որ առաջուց պատասխան
տալու կրթութիւն չընէք ։ Ա՛ռն ալ՝ ես ձեզի 15
բերան մը ու իմաստութիւն մը կուտամ , որուն
չեն կրնար դէմ կենալ , կամ պատասխան մը տալ
ձեր ամէն հակառակորդները ։ Պիտի մատնուիք 16
ծնող քներէ ու եղբայրներէ և ազգականներէ ու
բարեկամներէ , և ձեզմէն պիտի սպաննեն ։ ու 17
ամէնուն ատելի պիտի բլլաք իմ անունիս պատ-
ճառով ։ Ա՛յց մէկ մազ մը ձեր գլխէն չի պիտի 18
կորսուի ։ Եւ ձեր համբերութիւնովը Հոգիները 19
վաստրկեցէք ։

Ու երբոր տեսնաք Երուսաղէմը՝ շրջ. կողմէն 20
զօրքերով պատած , անոնք գիտցէք՝ որ անոր
աւերումը մօտ է ։ Ա՛նոնք Հրէաստանի մէջ և- 21
ղողները՝ լեռները թող փախչին ։ ու անոր մէջի

եղողները թող փախչին . և անոնք որ քովի եր-
22կիրներն են՝ ներս չ մտնան անոր մէջը : Ընչու-
ոյ՝ ան օրերը ոխ հանելու օրեր են , որ բոլոր
23գրվածները կատարվին : Վայ յղի և ան օրերը
ծոցվորներուն , ու ծիծմարներուն . ընչու որ մեծ
նեղութիւն պիտի ըլլայ երկրի վրայ , ու բարկու-
24թիւն ասոնց ժողովրդոցը վրայ : Եւ թռու-
րի բերնով պիտի իյնան , և բոլոր հեթանոսներուն
գերի պիտի ըլլան . ու Երուսաղէմ ոտքե ազգերուն
ոտքին կոխան պիտի ըլլայ , մինչև հեթանոսնե-
25րուն ժամանակները լմննայ : Ու արեգակին և
լուսնին ու աստղերուն վրայ նշաններ պիտի ըլ-
լան . ու երկրի վրայ հեթանոսներուն նեղութիւ-
նը՝ ան ղողալու ձայներէն ծովի և ալեկոծութեան
26պէս , մարդոց հոգիները խլենով վախերուն
և աշխարհի վրայ գալու բաներուն կասկածնե-
րէն . ընչու որ երկինքի զօրութիւնները պիտի
27շարժին : Եւ անոնք պիտի տեսնան Որդին մար-
դոյ ամպերով եկած՝ զօրութիւնով ու մեծ փառ-
28քով : Եւ երբոր ասոնք բաները սկըսին ըլլալ՝ դուք
վեր նայեցէք ու գլուխներդ բարձրացուցէք . ընչու
որ ձեր փրկութիւնը մօտ է :
29 Եւ առակ մը ըսաւ անոնց . Տեսէք թուզին ծա-
30ռը՝ ու ամեն ծառերը . երբոր իրենց պտուղը կը-
ցուցընեն , կը տեսնաք ու անոնցմէ կրճանչնաք՝ որ
31ամառը մօտ է : Ընդ այնս դուք ալ երբոր տեսնաք
ասոնք ըլլալը՝ գիտցէք որ Աստծոյ թագաւո-
32րութիւնը մօտ է : Ամէնարիւ կըսեմ ձեզի , թէ Այս
ազգը պիտի չանցնի մինչև որ ասոնք կատար-
33վին : Երկինքը ու երկիրը պիտի անցնին , բայց իմ
34խօսքերըս պտրաւոր պիտի չանցնին : Ձգոյշ կեցէք
անձերնուդ , չըլլայ որ սրտերնիդ կերուխումով
ու գինովութիւնով և աշխարհային զբաղմունք-
ներով ծանրըննայ , ու յանկարծակի ան օրը ձեր
35վրայ հասնի . ինչ որ մէկ որոգայթի մը պէս բո-
լոր երկրին երեսը բնակողներուն ամենուն վրայ

պիտի Հասնի ։ Ուստի ալ արձուն կեցէք՝ ամէն 36
ժամի աղօթք ըրէք , որ արժանի ըլլաք խալսելու
ան բոլոր ըլլալու բաներէն , և Որդւոյ մարդոյ
առջեւը կայնելու ։
Ու ցորկը տաճարին մէջը կը սորվեցունէր , և 37
գիշերները կելլար Ձիթենեաց լեռը կը-
բնակէր ։ Եւ բոլոր ժողովուրդը առաւոտները 38
կանուխ իրեն կը լծային տաճարը՝ լսելու
ըլլալու ։

ԿԱ · ԻՆ ։

Բաղարջակերքին տօնը մօտեցաւ՝ որ Պասքա կը- 1
ւեր ։ ու քահանայապետները և կարդացողնե- 2
րը եռևէ էին՝ թէ ինտո՞ր զինքը սպաննեն , միայն
թէ ան ժողովուրդներէն կրվախնային ։
Եաքը Սատանան Իսկարիոտացի բսված Յու- 3
դային մէջը մտաւ , որ ան տասներկուքին համրան-
քէն էր ։ Գնաց քահանայապետներուն և կար- 4
գացողներուն ու ժողովուրդին գլխաւորներուն
հետ խօսք կապեց՝ որ անոնց ձեռքը մատ-
նէ ։ Անոնք ալ ուրախացան , և խօսք տրվին անոր 5
բատակ տալու ։ Ու ինքը վբան առաւ , և պատե- 6
հաւթիւն մը կրփնտրէր որ անիկա ժողովուրդէն
զատ գեղ ը իրենց ձեռքը մատնէ ։
Բաղարջակերքին օրը եկաւ , որ ան օրը օրէնք 7
կար պասքը մորթելու ։ Ու իրկնց Պետրոսը և 8
Յոհաննէսը՝ ու բսաւ . Գացէք պասքը մեզի
պատրաստեցէք՝ որ ուտենք ։ Անոնք ալ բսին · 9
Ո՞ր կուզես որ պատրաստենք ։ Եւ բսաւ անոնց · 10
Ահա երբոր քաղաքը կրմտնաք՝ ձեզի մարդ մը կը-
պատահի ջուրի կուժ մը վերցուցած · անոր եռե-
ւեն գացէք ան տունը՝ ուր որ ինքը կրմտնայ · և 11
ան տունին տէրոջը բսէք · Վարդապետը կրսէ
քեզի՝ Իմ տեղս ո՞ւր է , որ հոն աշակերտներուս
հետ մէկ տեղ պասքը ուտեմ ։ Ան ալ ձեզի մեկ 12
մեծ վերնատուն մը պիտի ցուցունէ զարդարված ,

13 ու Հան պատրաստեցէք ։ Եւ գացին՝ ինչպէս որ
իրենց ըսաւ Նէ գտան , ու պատրաստե-
ցին ։
14 Եւ երբոր տաւնը եկաւ՝ սեղան նստաւ , ու
15 առաքեալներու առաքեալներն ալ իր հետը ։ Եւ ը-
սաւ անոնց ։ Փափաքելով փափաքեցայ աս պա-
սեքը ձեզի հետ ուտել իմ չարչարվելէս առաջ ։
16 Ասյց կըսեմ՝ ձեզի , որ՝ Նէ ասկից էլ պիտի ու-
տեմ մինչև որ ան Աստուծոյ թագաւորութեան
17 մէջը կատարվի ։ Ու գաւաթը առաւ՝ գոհացաւ և
ըսաւ ։ Առէք տուիկա՝ ու բաժնեցէք ձեր մէջը ։
18 Զեզի կըսեմ , որ՝ Նսկէ ետև որթին բերքէն էլ
պիտի խըմեմ՝ մինչև որ Աստուծոյ թագաւորու-
թիւնը գայ ։
19 Ու առաւ հացը՝ գոհացաւ , կոտրեց և տըւաւ
անոնց՝ ու ըսաւ ։ Նս է իմ մարմինս , որ շատեր-
ներուն համար կըտրվի ։ ասիկա իս յիշելու համար
20 րսէք ։ Նսանկ ալ գաւաթը առաւ բնեմրեքէն ետև՝
և ըսաւ ։ Նս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս ,
որ ձեզի համար կըթափվի ։
21 Ասյց աշա՝ իս մատնողին ձեռքը ինծի հետ աս
22 սեղանս է ։ Եւ Նըստ Որդին մարդոյ ինծոյ որ
սահմանված է նէ՝ կերթայ , բայց վայ ան մար-
23 դուն՝ որ անոր ձեռքովը պիտի մատնվի ։ Եւ ա-
նոնք սկըսեցին իրարու մէջ փնտռտրկել , թէ ան
ով է իրենցմէ՝ որ ան բանը պիտի ընէ ։
24 Նակառակութիւն մըն ալ եղաւ անոնց մէջը՝
25 թէ իրենցմէ ով մեծ պիտի սեպվի ։ Նէնքն ալ ը-
սաւ անոնց ։ Նզգերուն թագաւորները իրենց վըռայ
կըտիրեն ։ և անոնք որ իրենց վըռայ կիշխեն՝ բա-
26 րերար կըսվին ։ Ասյց ձերը անանկ չէ ։ Հապա ան
որ ձեր մէջը մեծ է պզտիկին պէս ըլլայ , ու
27 առաջնորդը սպասաւորին պէս ։ Որ է մեծը ։ սե-
ղան նստողը թէ սպասաւորը ։ Նէ՞ որ սեղան նըս-
տողը ։ սակայն ես ձեր մէջը սպասաւորի մը պէս
28 եմ ։ Եւ դուք անոնք էք՝ որ միշտ ինծի հետ իմ

փորձութիւններուս մէջը կրկնայիք · ես ալ ձեզ 29
պէս Թագաւորութիւն մը ուխտ կընեմ , հնազոր որ
իմ Հայրս ալ ինծի Թագաւորութիւն մը ուխտ
բրաւ · որ դուք իմ սեղանս ուտէք ու խըմէք իմ 30
Թագաւորութեանըս մէջ , և տաներկու աթոռ-
ներու վրայ նստիք , Իսրայէլի տաներկու ցեղին
դատաստանը տեսնալու ։

Ու բսաւ Տէրը · Սիմոն Սիմոն՝ ահա Սատանան 31
ուզեց ցորենի պէս ձեզ մաղել · բայց ես քեզի հա- 32
մար աղաչեցի որ քու հաւատդ չի պակսի · և դուն
երբոր դարձի գաս նէ՝ քու եղբայրներդ ալ հաս-
տատէ ։ Ինքն ալ բսաւ անոր · Տէր՝ ես պատրաստ 33
եմ քեզի հետ բանտը երթալու ալ , մեռնելու
ալ ։ Ան ալ բսաւ անոր · Պետրոս՝ քեզի կըսեմ , 34
որ այսօր դեռ հաւը չի խօսած՝ դուն երեք հեղ իս
պիտի ուրանաս չի գիտնալու ։

Եւ բսաւ անոնց · Երբոր ձեզ խրկեցի առանց 35
քսակի ու տոպրակի և կօշիկներու , բանի մը կա-
րօտցաք ։ Անոնք ալ բսին , Ոչինչի մըն ալ չէ ։ 36
Հապա հիմայ ան որ քսակ ունի՝ թող
վրան առնէ , անանկ ալ տոպրակը · և ան որ չու-
նի նէ թող իր լաթերը ծախէ , ու իրեն թուր
մը ծախու առնէ · Որովհետև ձեզի կըսեմ , որ ա- 37
դրած բանն ալ պէտք է որ իմ վրաս կատարուի ,
թէ Ընդհանուրին հետ սեպուեցաւ · Վասնզի
իմ վրայով եղած բանը կրկատարուիկոր ։ Անոնք 38
ալ բսին՝ Տէր՝ ահա հոս երկու թուր կայ · ան ալ
բսաւ անոնց , Ա՛րկէք են ։

Ու ելաւ իր սովորութեանը պէս Ձիթենեաց լե- 39
ռը գնաց · աշակերտներն ալ իր ետևէն գացին ։
Երբոր ան տեղը հասաւ՝ բսաւ անոնց · Աղօթք 40
ըրէք որ փորձութեան մէջ չի մտնէք ։ Եւ ինքը 41
անոնցմէ գոփեցաւ՝ քարի նետելու մը չափ , ծունր
կի վրայ եկաւ՝ աղօթք կրնէր , ու կըսէր · Հա՛յր՝ 42
թէ որ կուզես , սա գաւաթը ինծմէ անցուր · բայց
չէ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ ։ Ու 43

երկինքէն հրեշտակ մը երևցաւ անոր , և կը զօ-
բացունէր անիկա · ու սաստիկ նեղութեան մէջ
44էր , և արտանց ալ աղօթք կընէր ։ Ու քրտինքը
որ իրմէն կըվազէր՝ արիւնի պուտերու պէս կըր
45կըր դնտինը կրթափվէր ։ Եւ աղօթքէն ելաւ
աշակերտներուն քովը եկաւ , անոնք քունի մէջ
46դտաւ կընէնց տրտմութենէն · և ըսաւ անոնց · Ին-
չո՞ւ կըքնանաք , երէք աղօթք ըրէք՝ որ փորձու-
թեան մէջ չի մտնաք ։
47 Եւ երբոր առ կրխօսէր՝ ահա մէկ բազմութիւն
մը , ու ան Յուդա ըսուածն ալ տասներկուքին մէ-
կը անոնց առջին էր ինկած · երբոր մօտեցաւ Յի-
սուսին՝ համբուրելց անիկա · ինչու որ անիկա աս
նշանը տըված էր անոնց , թէ Ո՛վ որ ես պագնեմ
48նէ , ան է · անիկա բռնեցէք ։ Յիսուս ըսաւ անոր ,
Յուդա՝ պագնելո՞վ կըմատնես Որդին մարդոյ ։
49Երբոր ան եղած բանը տեսան քովը եղողները՝
50ըսին անոր · Տէր՝ թռւրով զարնենք անոնք ։ Եւ
անոնցմէ մէկը քահանայապետին ծառային զար-
51կաւ , ու մէկ դի հանեց անոր աջ ականջը ։ Պա-
տասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ · Թոդղ տըվեք
մինչև աս տեղը · ու դպաւ ականջին՝ բժշկեց ա-
52նիկա ։ Եւ ըսաւ ան իր վրայ եկողներուն՝ քահա-
նայապետներուն ու տաճարին իշխաններուն ու
ծերերուն · Իբր թէ գողի՞ մը վրայ ելաք թռւրե-
53րով՝ ու բերեր ։ Մէն իմիր ձեզի հետ էի տա-
ճարին մէջը , և ինծի ձեռք չի զարկիք · բայց ան է
54ձեր ատենը՝ ու խաւարին իշխանութիւնը ։ Եւ
բռնեցին տարին զինքը՝ ու քահանայապետին տու-
նը խօթեցին ։

Պետրոս ալ հետևմանց անոր եաւէն կերթար ։
55Երբոր կրակ վառեցին բակին մէջը ու նստան բո-
56լորտիքը՝ Պետրոս ալ նստաւ անոնց մէջը ։ Ա՛ն-
կ աղ չիկ ծառայ մը տեսաւ անիկա՝ որ բոցին դիմա-
ցը նստեր էր , նայեցաւ անոր և ըսաւ · Այսիկա
57ալ անոնցմէ է՝ որ անոր հետն էին ։ Բայց Պետ-

րոս ուրացաւ և ըսաւ . Կը՛նիկ՝ ես անիկա չեմ
Ճանչնար ։ Ու քիչ մը ետքը մէկ ուրիշ մը տեսաւ 58
անիկա՝ և ըսաւ . Դուն ալ անոնցմէ ես . և Պետ-
րոս ըսաւ . Մ՛արդ՝ ես անոնցմէ չեմ ։ Եւ երբոր 59
ժամ՝ մը վրան անցաւ , ուրիշ մըն ալ կըպնդեր
ու կըսէր . Իրաւցունէ ասիկա ալ անոր հետն էր .
ինչու որ՝ ինքը Գալիլեացի է ։ Ը՛սաւ Պետրոս . 60
Մ՛արդ՝ չեմ գիտեր ինչ կըզուրցեսկոր դուն . և
նոյն ժամուն դեռ ան խօսքը որ բերաւն էր՝ հաւը
խօսեցաւ ։ Ւարձաւ Տէրը՝ ու Պետրոսին նայե- 61
ցաւ . Պետրոս ալ միտքը բերաւ Տէրոջը խօսքը՝
թէ իրմէն զուրցեր էր Ըն , Հաւը դեռ չի խօսած՝
իրեք անգամ պիտի ուրանաս իս չէ գիտնալու ։
Ու դուրս ելաւ՝ դառնապրցունք կուլար ։ 62
Եւ ան մարդիկը որ զինքը կըպահէին՝ ծաղր կը- 63
նէին անիկա , ու կըդարնէին ։ Կըծածկէին աներ 64
երեսը՝ և կըշարչարէին , ու կըհարցունէին իրմէն
և կըսէին . Մ՛արգարեացիր ով է ան՝ որ քեզի
զարկաւ ։ Եւ ուրիշ շատ բաներ կըզուրցէին իրմէն 65
Հայհոյելով ։
Եւ երբոր առտու եղաւ՝ ժողովուրդին ծերա- 66
կայրը քահանայապետները և կարգացողները
ժող վըլնեցան , ու Հանեցին տարին անիկա իրենց
առեանը՝ և ըսին . Ով որ Քրիստոսը դուն ես նէ՝
ըսէ մեզի ։ Ը՛սաւ անոնց . Ով որ ձեզի ըսեմ՝ ա- 67
նանկ ալ չի պիտի հաւտաք . և թէ որ բան մըն 68
ալ հարցունեմ ձեզի՝ ինծի պատասխանը չի պիտի
տաք , կամ չ՝ թողլ տաք ։ Ո՛հոյն թէ ասկէ ետև 69
Որդին մարդոյ Ը՛ստուծոյ զօրութեանը աջ դին
պիտի նըստի ։ Եւ ամէնքը ըսին , Ը՛նանկ է նէ՝ 70
դուն Ը՛ստուծոյ որդին ես . ինքն ալ անոնց ըսաւ .
Ւուք կըսէք թէ ես եմ ։ Եւ անոնք ըսին . Մ՛ե 71
ինչ պէտք է մեզի վկայութիւն . ինչու որ մենք
մեզմէ ատոր բերնէն լսեցինք ։

ԳԼ· ԻԴ·

1 Ա՛ն անոնց բոլոր բազմութիւնը ելան՝ տարին
2 անիկա Պիղատոսին · ու սկսեցին անոր վրայ
չարախօսութիւն ընել և ըսելով · Այսիկա գտանք՝
որ մեր ազգը ծուռ ճամբայ կը տանէր , ու կար-
գիլէր կայսրին հարկ տալէն , և ինքը իրեն Համար
3 կ՚ըսէր թէ Քրիստոսը թագաւոր է : Ու Պիղա-
տոս հարցուց անոր՝ և ըսաւ · Հրէաներուն թա-
գաւորը դուն ես · անիկա ալ պատասխան տըւաւ
4 անոր՝ և ըսաւ · Կ՚ուն ըսիր : Պիղատոս քահա-
նայապետներուն ու ժողովուրդներուն ըսաւ · Ես
մարդուն վրայ ես մէկ յանցանք մը չեմ գտներ :
5 Բայց անոնք ոտք կրկոսկին և կրսէին , թէ Ժո-
ղովուրդը իրար կանցունէ , բոլոր Հրէաստանի
մէջ կըսորվեցունէ Գալիլեայէն սկըսած մինչև
6 հոս տեղը : Ու Պիղատոս երբոր լսեց Գալիլեային
համար՝ հարցուց թէ ատ մարդը Գալիլեացի՞ է :
7 Եւ երբոր իմացաւ՝ թէ Հերովդէսի տէրութեան
տակէն էր , անիկա Հերովդէսին տանել տըւաւ ,
որ ան ալ ան օրերը Երուսաղէմ էր :
8 Հերովդէս երբոր Յիսուսը տեսաւ՝ շատ մը ու-
րախացաւ · վասն զի ինքը շատոնցմէ կըփափաքէր
անիկա տեսնալու · որովհետև շատ անգամ անոր
վրայով լսեր էր , և կըսպասար՝ որ անկէց եղած
9 նշան մը տեսնայ : Շատ խօսքերով իրեն հարց-
ուփորձ կըներ · բայց անիկա բնաւ իրեն պատաս-
10 խան մը չի տըւաւ : Քահանայապետները ու
կարգացողներն ալ կեցեր էին՝ և աւելի սաստիկ
11 չարախօսութիւն կընէին անոր վրայ : Հերով-
դէս ալ անարգեց անիկա իր զօրականներուն հետ
12 ը , ու ծաղր ընելով՝ ձերմակ լաթ մը հագցուց
անոր՝ և նորէն Պիղատոսին տանել տըւաւ : Ու
Պիղատոս և Հերովդէս ան օրը բարեկամ եղան ·
որովհետև առաջ իրարու թշնամի էին :

մի լաք. Հապա՝ դուք ձեր անձերնուդ վըտյ ու
29 ձեր պաուկներուն վըտյ լացէք։ Ինչու որ օրեր
պիտի գան՝ որ անատնները ըսեն թէ, Երանէկ ա-
մուլներուն՝ և ան փորերուն որ չի ծնան, և ան
30 ծիծներուն՝ որ չի ծիծցուցին։ Ինատնները պիտի
ակըսին ըսել լեռներուն, թէ Վեր վըտյ ինկէք,
31 ու բլուրներուն, թէ Վեղ ծածկեցէք։ Վ՚ան
զի՝ թէ որ կանանչ փատին ասանկ կընեն, Հապա
չորին ինչ պիտի ըլլայ։
32 Ուրիշ երկու չարագործներն ալ բերին անոր
33 Հետը սպանելու։ Երբոր Կողգոթա ըսված տե-
ղը գացին՝ հոն խաչը հանեցին անիկա, և ան չա-
րագործներն ալ մէկը աջ կողմէն՝ ու մէկը ձախ
34 կողմէն խաչեցին։ Եւ ըսաւ Յիսուս. Հայր՝ թո-
ղութիւն տուր ատոնց. ինչու որ չեն գիտեր ինչ
կընենկոր. և իր լաթերը բաժնելու ատենը վի-
35 ճակ ձգեցին։ Ու ժողովուրդը կայներ կընայէր.
իշխանները անոնց հետ կընախատէին զինքը՝ և
կըսէին. Ուրիշները խալսեց, ինքզինքն ալ
թող խալսէ՝ թէ որ ատիկա է Քրիստոսը Հա-
36 տուծոյ ընտրած Որդին։ Զօրաղը կընէին անիկա
զինուորներն ալ, առջևը կուգային՝ քացախ կու-
37 տային անոր. ու կըսէին, Թէ որ դուն ես Հրեա-
38 ներուն Թագաւորը՝ քու անձդ ազատէ։ Ու գիր
մը գրած էր իր վրան՝ Յունարէն, ու Լատինե-
րէն, և Երբայեցերէն գիրով, թէ Սիկա է
Հրէից Թագաւորը։
39 Կայց ան կախված չարագործներուն մէկը հայ-
հոյութիւն կընէր անոր՝ և կըսէր. Դուն Քրիս-
40 տոս չես մի, ազատէ քու անձդ ու մեզ ալ։ Պա-
տասխան տուաւ ընկերը՝ անիկա չեխելով, և ը-
սաւ. Դուն Հատուծմէ չես վախնար. որովհետև
41 նոյն պատիժին մէջն ես։ Եւ մենք իրաւ՝ մեր ը-
րածներուն արժանաւոր վճարքը կառնենքկոր.
42 բայց ասիկա մէկ գէշ բան մը չըրաւ։ Ու ըսաւ
Յիսուսին. Տէր՝ իս միտքդ բեր, երբոր քու Թա-

գաւորութիւնով կու գաս : Յիսուս ալ բսաւ ա- 43
նոր . Իրաւ կըսեմ քեզի . Վաւն այսօր իմ հետս
դրախտին մէջը պիտի ըլլաս :

Ու ժամը վեցին աւուններն էր՝ և բոլոր երկ- 44
րին վրայ խաւար եղաւ մինչև իներ ժամը . արևը
խաւարեցաւ . ու տաճարին վարագոյրը մէջ տե- 45
ղէն պատռեցաւ : Եւ Յիսուս բարձր ձայնով մը 46
կանչեց ու բսաւ . Հայր՝ քու ձեռքդ կաւանդեմ
իմ հոգիս . երբոր աս բսաւ՝ հոգին հանեց :

Ու հարիւրապետը ան եղած բանը որ տեսաւ՝ 47
Աստուծոյ փառք տըւաւ և բսաւ . Իրաւցնէ՛
աս մարդը արդար էր : Եւ բոլոր ժողովուրդները 48
որ եկեր էին , ու կըտեսնային ան տեսարանը և
եղած բաները՝ կուրծքերնին կըզարնէին՝ ու ետ
կըդառնային : Իմէն իր ճանչվորներն ալ հեռուն 49
կայներ էին , և ան կիներուն որ իր ետևէն եկեր
էին Գալիլեայէն՝ կըտեսնային ան բաները :

Ու ահաւասիկ մէկ մարդ մը Յովսէփ անուն՝ , 50
որ ինքը նախարար էր՝ բարեգործ և արդար մարդ
մը . (ասիկա անոնց խորհուրդին ու գործերնուն 51
հետ միաբանած չէր ,) Յրիմաթեա
քաղաքէն , որ ինքն ալ Աստուծոյ թագաւորու-
թեանը կըսպասէր : Ասիկա Պիղատոսին 52
գնաց , Յիսուսի մարմինը ուզեց : Եւ անիկա խո- 53
ին՝ վար իջեցուց՝ կտաւով փաթթեց , ու քարէ
փորված գերեզմանի մը մէջ դրաւ , որ հոն բնաւ
մեկը դրված չէր : Օրն ալ ուրբաթ էր , ու շա- 54
բաթ պիտի լուսնար :

Եւ անոր ետևէն կըերթային ան կիրկիները՝ որ 55
իրեն հետ Գալիլեայէն եկած էին , տեսան գե-
րեզմանը՝ ու ինչպէս անոր մարմինը հոն գրվեցաւ :
Դարձան ու պատրաստեցին խունկեր ու ներկ , 56
և շաբաթ օրը հանգրստացան պատուիրանքին
համար :

ԻԴ · ԻԴ ։

1 Այլ մէկշաբթի օրը առաւօտեան կանուխ գե-
բեսմանը կ՚ելան , բերին ան խունկերը որ
պատրաստեցին . ևսրիշ կիներն ալ իրենց հե-
2 տը ։ Եւ քարը գերեզմանէն մէկ դի թաղըլտըրված
3 գտան ։ Եւ ներս մտան՝ Տէր Յիսուսին մարմինը
4 հոն չ՚գտան ։ Եւ եղաւ որ երբ անոնք անոր
համար զարմացած էին՝ ու մէկմէկ երկու մարդիկ
5 լուսաւոր հագուստով իրենց կացան ։ Եւ երբոր
վախցան՝ և երեսնին դէպի վար գետինը ծռեցին ,
անոնք ըսին իրենց . Կու֊ինչո֊ համար ողջը մե-
6 ռելներուն հետ կը փնտռտէք . Հոս չէ ան , հապա
յարուԹիւն առաւ . միտքերնիդ բերէք ինտոր ձօ-
7 սեցաւ ձեզի՝ երբոր ինքը Գալիլեա էր , ու կը-
սէր , ԹԷ՝ Որդին մարդոյ պէտք է որ մեղաւոր
մարդոց ձեռքը մատնըվի՝ ու խաչը հլայ , և իրէք
8 օրէն յարուԹիւն առնէ . ու միտքերնին բերին
9 անոր խօսքերը ։ Եւ դարձան աս ամէն բաները
ան տասնըմէկին պատմեցին . ու բոլոր ուրիշնե-
10 րուն ալ ։ Եւ էին Մարիամ Մագդաղենացին ,
ու Յովհաննան , և Յակոբին Մայրը Մարիամը ,
ու անոնց հետ ուրիշներն ալ , որ աս բաները ա-
11 պաքեներուն պատմեցին ։ Եւ անոնց առջևը ա-
փղդրվելով խօսքեր երևցաւ իրենց զուրցածը , ու
12 չէին հաւատար իրենց ։ Այլ Պետրոս ելաւ վազեց
դէպի գերեզմանը , ու նայեցաւ տեսաւ միայն ան
կտաւները որ կէղեր էին , և իր միտքին մէջը զար-
մանալով ան եղածին վրայ՝ գնաց ։
13 Եւ ահա անոնցմէ երկուքը ան օրը մէկ գեղ մը
կերթային որ Երուսաղէմէն հարիւր վաթ-
սուն ասպարէզ հեռու էր , և անոր անունը Էմ-
14 մաուս էր ։ Եւ անոնք կխօսէին որ մէկմէկու
15 հետ ան բոլոր եղած անցած բաներուն վրայ ։ Ու
եղաւ որ անոնց խօսելու և միշ ընելու ատենը Յի-

սուա ինքն ալ մօտիկցաւ՝ ու հետեւներին կերթայր ։
Ասոյց անոնց աչքերը բռնըւած էին , որ զինքը չի 16
ճանչնային ։ Եւ ըսաւ անոնց . Ի՞նչ էատ խօս- 17
քերնիդ , որուն համար իրարու հետ վէճ կընէք
երբոր կըքալէք , ու տրտմած ալ էք ։ Պատասխան 18
տըւաւ անոնցմէ մէկը՝ որ իր անունը Կղէոփաս
էր , և ըսաւ իրեն . Դուն միայնակ ես մեացեր Ե-
րուսաղէմին մէջ , որ չես գիտեր ինչ եղաւ անոր
մէջ ատ օրերըս ։ Եւ ինքը ըսաւ անոնց , Ի՞նչ 19
անոնք ալ ըսին . Նազովրեցի Յիսուսին համար ,
ան որ մարգարէ մարդ մը եղաւ՝ զօրաւոր գործ-
քերովը ու խօսքերով Աստուծոյ առջեւն , և բոլոր
ժողովուրդին ։ Ինչպես անոր մեր քահանայա- 20
պետները ու իշխանները մեռնելու դատաստանի
մատնեցին՝ և խաչը հանեցին անոր ։ Մինք յոյս 21
ունէինք՝ թէ անոր է որ Իսրայէլը պիտի ազա-
տէ . և ատ ամէն բաներուն վրայ ատ երրորդ օրն
է՝ քանի որ ան բաներ եղաւ ։ Դարձ մեր մէջէն մէկ 22
քանի կիներներ ալ մեզ զարմացուցին . որ անոնք
առտուանց կանուխ գերեզմանը գացին , ու անոր
մարմինը չի գտան . եկան և ըսին ալ թէ՝ Հրեշ- 23
տակներու երեւոյթի ալ տեսան , որոնք ըսեր են
անոր համար՝ թէ ողջ է ։ Եւ մեզմէ մէկ քանի- 24
ներն ալ գացին գերեզմանը՝ ու անանկ գտան ,
ինչպես որ անկիները զըւցուցին . միայն թէ
զինքը չի տեսան ։ Ան ալ անոնց ըսաւ . Ով ան- 25
խել քներ ու սրտով Թէմտածներ Հաւատալու ան
բոլոր բաներուն՝ որ մարգարէները խօսեցան ։
Չէ՞ որ ան բաներով պէտք էր Ի՛րիստոսի չար- 26
չարվիլ և իր փառքը մտնալ ։ Ու սկսեց Մովսէ- 27
սէն և բոլոր մարգարէներէն կըմեկնէր անոնց ,
ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն մէջ գրված
էր ։ Երբոր մօտիկցան ան գեղին՝ ուր որ կեր- 28
թային , ինքն ալ կրցուցընէր որպես թէ ալ չէ-
ռու տեղ մը պիտի երթայ ։ Ասոյց յանդիմեցին զինքը՝ 29
և ըսին . Մնա քովը կեցիր . ինչու որ իրիկուն է ,

և օրը ժամանակը անցուցած է · ու չեն մտաւ ա-
30նոնց հետ կենալու : Եւ եղաւ որ երբ ինքը անոնց
հետ սեղան նստաւ , չառաւ՝ օրհնեց , կըտ-
31րեց՝ ու տըւաւ անոնց : Եւ անոնց աչքերը բաց-
վեցան , ու զինքը ճանչցան · և ինքը անոնցմէ ա-
32ներևոյթ եղաւ : Ու մէկըզմէկու կըսէին · Չէ՞ որ
մեր սիրտերն ալ ներսիննիս կրձգտըվէին , երբոր
մեր հետ կրխօսէր ճամբան · և երբոր գիրքերը
կրմեկնէր :
33 Ու ելան նոյն ժամուն Երուսաղէմ դարձան ,
և տասնըմէկը մէկ տեղ ժողվված գտան , ու ա-
34նոնց հետ եղողները : Եւ ըսին թէ՝ Իրաւցնէ
Տէրը յարուներէն առաւ , ու Սիմոնին երևցաւ :
35Եւ իրենք պատմեցին ճամբուն վրայ եղածները ,
և թէ՝ ինքզինքը հաց կրլլլլլլլ իրենց ճանչցուց հացը
կոտրելու առնըը :
36 Երբոր ան կրխօսէին , Յիսուս ինքը կայնեցաւ
անոնց մէջը և ըսաւ իրենց · Խաղաղութիւն ձե-
37զի , ես եմ մի՛ վախնաք : Հայց անոնք զարհու-
րելով կրվախնային , ու կրկարծէին թէ մէկ ոգի
38մը տեսան : Եւ ըսաւ անոնց · Ինչո՞ւ տանկուվայ
եղած էք , և ինչո՞ւ սիրտերնուդ մէջը խորհուրդ-
39ներ կրպըտարահին : Տեսէք ձեռքերս ու ոտքերս ,
որ ես ան եմ · բռնեցէք իս՝ ու նայեցէք · վասն զի
ոգին մարմին և ոսկորներ չունի , ինտոր որ իս
40կրտեսնաքկոր ունիմ : Եւ ասդրցելով ձեռ-
41քերը ու ոտքերը ցուցուց անոնց : Եւ երբոր տա-
կաւին չհնոց խնդումէն չէին հաւատար՝ ու զար-
մանքի մէջ էին , ըսաւ անոնց · Ուտելիք բան մը
42ունիքը հոս : Ինոնք ալ իրեն կտոր մը խորոված
43ձուկ՝ ու չեչոլ մեղր տըւին : Եւ առաւ կերաւ
44անոնց առջևը , ու ևվնցածր անոնց տըւաւ : Եւ
ըսաւ անոնց · Ա՛յս խօսքերն էին որ ձեզի խօսեցայ՝
երբոր ձեր քովն էի , թէ՝ Պէտք է որ կատարվի
ան բոլոր գրվածները Մովսէսի օրէնքին մէջը՝ ու
մարգարէներուն մէջ՝ և սաղմոսներուն մէջ ինծի

Համար : Ընատենը անոնց միտքը բացաւ՝ գիրքե- 45
րը հասկընալու : Եւ ըսաւ անոնց , Թէ Այսպէս 46
պէտք էր Քրիստոսին չարչարուիլ , ու իրեք օրէն
մեռելներէն յարութիւն առնել . և անոր անու- 47
նովը մեղաց ապաշխարութիւն ու թողութիւն քա-
րոզ վիլ բոլոր աղգերուն մէջ՝ Երուսաղէմէն ըս-
կըսած : Ու դուք էք ասոնց վկաները : Եւ 48
ահա ես իմ Հօրըս խոստումնըը ձեղի կըսրկեմ · 49
բայց նստեցէք դուք Երուսաղէմ քաղքիս մէջը ,
մինչև որ վերէն զօրութիւն առնէք վրանիդ :
Ընանք մինչև Լեվթանիա հանեց , և իր ձեռքե- 50
րը վեր վերցուց՝ օրհնեց անոնց : Եւ եղաւ որ 51
ինքը անոնք օրհնելու ատենը՝ զատվեցաւ իրենց-
մէ , ու վեր կելլար դէպի երկինքը : Ընանք ալ 52
երկիրպագութիւն ընելով իրեն՝ մեծ խնդութիւ
Երուսաղէմ դարձան : Եւ ամէն ատեն 53
տաճարին մէջ էին , կըդովէին
ու կօրհնէին զԱստուած :

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՕՀԱՆՆԷՍ ։

ԳԼՈՒԽ ։

1 Սկիզբն էր Խօսքը, ու Խօսքը Աստուծոյ քովն
2 էր, և ան Խօսքը Աստուած էր ։ Նոյնիկա սկիզ-
3 բէն Աստուծոյ քովն էր ։ Ամէն բան անով եղաւ,
և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ նէ ։
4 Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն էր ։
5 և լոյսը ան խաւարին մէջ կը լուսաւորէ, ու խա-
ւարը անիկա չի հասկըցաւ ։
6 Աստուծմէ մէկ մարդ մը խրկըմեցաւ, որուն
7 անունը Յօհաննէս էր ։ Անիկա եկաւ վկայելու
համար՝ որ ան լոյսին համար վկայէ, որ ամէնքն
8 իր անոր ձեռքովը հաւատան ։ Ինքը ան լոյսը չէր,
հապա եկաւ որ լոյսին համար վկայութիւն տայ ։
9 Ճշմարիտ լոյսը ան էր, որ աշխարհ գալու ըս-
10 լոր մարդիկը կը լուսաւորէ ։ Ինքը աշխարհին մէջն
էր, և աշխարհս անով եղաւ, ու աշխարհ անի-
11 կա չի ճանչցաւ ։ Իրենները եկաւ՝ և իրենները
12 զինքը չընդունեցին ։ Հայց անոնք որ զինքը ըն-
դունեցին՝ անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ
որդիները ըլլալու, անոնք որ կը հաւատան իր անու-
13 նին, որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմնին կամ-
քէն՝ ոչ ալ մարդու կամքէն, հապա Աստուծմէ
14 ծնած են ։ Եւ Խօսքը մարմին եղաւ, ու մեր մէջը
բնակեցաւ, (ու անոր փառքը տեսանք, Հօրմէն
մէկ հատիկի փառքին պէս) շնորհքով և ճշմար-
տութիւնով լեցուն ։

Յօհաննէս վկայեց անոր համար , կանչ ըլլուտեց 15
և ըսաւ · Ասիկա է՝ որ իրեն համար կըզուրցէի ,
Ան որ իմ ետևէս պիտի գայ՝ ինծմէ առաջ եղաւ ·
ինչու որ ինծմէ առաջ էր ։ Եւ անոր կատարելու- 16
թենէն մենք ամենքս շնորհք առինք՝ շնորհքի տեղ ։
Ինչու որ՝ օրէնքը Մովսէսին ձեռքովը տրըվեցաւ , 17
Բայց շնորհքը ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիս-
տոսի ձեռքովը եղան ։ Աստուած երբէք չէ տեսած 18
զԱստուած , բայց միածին Որդին որ Հօրը ծոցն
է , անիկա պատմեց ։

Ու Յօհաննէսին վկայութիւնը ասէ , երբոր 19
Հրէաները Երուսաղէմէն քահանաներ ու Ղե-
տացիներ խրկեցին իրեն՝ որ հարցընեն անոր , Թէ
Դուն ո՞վ ես ։ Եւ ան չիտակը բաւ՝ ու չուրա- 20
ցաւ , չիտակը բաւ Թէ Ես Քրիստոսը չեմ ։
Ու հարցուցին իրեն · Ուրեմն ո՞վ ես դուն , Ե- 21
լիա՞ն ես · և բաւ՝ Չեմ · Տապա դուն մարգա-
րէ՞ն ես մի · պատասխան տուաւ Թէ Չէ ։ Ինանկ 22
է նէ ըսէ մեզի՝ դուն ո՞վ ես , որ պատասխան տա-
նինք անոնց որ մեզ խրկեցին · դուն քե՞նչ կըսես
քեզի համար ։ Ըսաւ · Ես մէկ ձայն մը՝ որ անա- 23
պատին մէջ կըկանչէ · Շ ըտկեցէք Տէրոջը ճամ-
բան , ինտոր որ Եսայի մարգարէն բաւ ։ Եւ ան 24
խրկըմածները Փարիսեցինըրէն էին ։ Հարցուցին 25
իրեն և ըսին · Ապա ինչու մկրտութիւն կընես ,
Թէ որ դուն Քրիստոսը չես · ու ոչ Եղիան , և
ոչ մարգարէն ։ Պատասխան տուաւ անոնց Յօ- 26
հաննէս՝ և բաւ · Ես ձեզ ջուրով կըմկրտեմ ·
ձեր մէջը Մէկը կայ որ դուք ան չէք գիտեր · որ ան 27
իմ ետևէս պիտի գայ , որ ես արժանի չեմ անոր
կօշիկներուն կապերը քակելու ։ Այս բանը Բե- 28
թաբարայի մէջ եղաւ Յորդանանի մէկալ դին , ուր
տեղ որ Յօհաննէսը կրկնար՝ և կըմկրտեր ։

Ու ապրան օրը Յօհաննէս տեսաւ Յիսուսը որ 29
գրնեն կուգար , և բաւ · Ահա Աստուծոյ գառը՝
որ աշխարհի մեղքը կըվերցունէ ։ Ասիկա է որ 30

իրեն համար ևս կըզուրջեի , Իմ եռևէս մարդ մը
կուգակոր՝ որ ինձ ինծմէ առաջ եզաւ . ինչու որ
31 անիկա ինծմէ առաջ էր ։ Եւ ես զինքը չէի ճանչ-
նար , հապա՝ որ Իսրայէլացոց յայտնի ըլլայ , ա-
32 նոր համար ես եկայ ջուրով մկրտելու ։ Յովհան-
նէս վկայութիւն տուաւ և ըսաւ , Թէ Կըտեսնայի
Հոգին որ աղաւնիի պէս երկինքէն կիջնար , ու
33 անոր վրայ կըհանդչէր ։ Եւ ես ինքը չէի գիտեր ,
բայց ան որ իս խրկեց ջուրով մկրտելու՝ ինքը ը-
սաւ ինծի . Որի վրայ կըտեսնաս Հոգին որ կիջ-
նայ և կըհանդչի անոր վրայ , անիկա է որ Հոգ-
34 ւով Սրբով կըմկրտէ ։ Ես ալ տեսայ՝ ու վկայե-
ցի , Թէ Աստիա է Աստուծոյ Որդին ։
35 Անոր եռևէի օրն ալ Յովհաննէս կայներ էր՝ և
36 իր աշակերտներէն երկուքը ։ Եւ նայելով Յի-
սուսին վրայ՝ որ կըպըտրտէր , ըսաւ . Ահա Գա-
37 րիսաոս Աստուծոյ Գառը ։ Լսեցին անկից երկու
աշակերտները որ կըխօսէր , ու գացին Յիսուսին
38 եռևէն ։ Յիսուս երբոր դարձաւ՝ և տեսաւ անոնք
որ իր եռևէն կըերթային , ըսաւ անոնց . Ինչ
կուզէք . անոնք ըսին իրեն , Ռաբբի , (որ Թարգ-
մանվելով վարդապետ ըսել է ,) ուր է քու բնա-
39 կարանդ ։ Ըսաւ անոնց , Եկէք ու տեսէք . եկան
ու տեսան ուր տեղ որ իր բնակարանը էր . և ան
օրը անոր քովը կեցան . ինչու որ ժամը տասնին
40 վրայ էր ։ Ան երկուքին մէկը քար ըսէ Սիմոնին
եղբայրը Անդրէասն էր , որ լսեցին Յովհաննէսէն ,
41 և անոր եռևէն գացին ։ Նախ պինտ առաջ իր
Սիմոն եղբայրը կըգտնայ՝ և կըսէ անոր . Մեսիան
42 գտանք՝ որ Թարգմանուած կըթարգմանվի ։ Նախ
տարաւ անիկա Յիսուսին քովը . Յիսուս անոր
նայելով ըսաւ . Դուն ես Սիմոնը Յովնանին որ-
դին . դուն կիսեփաս պիտի ըսվիս , որ Պետրոս կը-
թարգմանվի ։
43 Եռևէն օրն ալ Յիսուս Գալիլեա ելլալ ուզեց .
գտաւ Փիլիպպոսը՝ և ըսաւ անոր Յիսուս . Եկոր

իմ եռանէս ։ Եւ Փիլիպպոսը Նեթանայիդայի մէջէն 44
էր Բեդրեսայիդան ու Պետրոսին քաղքէն ։ Փիլիպ- 45
պոս Նաթանայէլը կը գտնայ՝ և կըսէ անոր ։ Կը-
տանք Յիսուս Նազովրեցին Յովսէփին որդին՝ ո-
րուն վրայ Մովսէս օրինաց մէջը գրեց , ու մար-
գարէներն ալ ։ Նաթանայէլ ըսաւ անոր ։ Նա- 46
զարէթէն կարելի է որ աղէկ բան մը ըլլայ ։ ըսաւ
անոր Փիլիպպոս ։ Եկո՛ ու տես ։ Յիսուս երբոր 47
տեսաւ Նաթանայէլը՝ որ գէպի իրեն կուգար , ը-
սաւ անոր համար ։ Ահա իրաւցնէ Իսրայէլացի
մը , որ իր նենգութիւն չի կայ ։ Նա- 48
թանայէլ ըսաւ իրեն ։ Ուսկից կը ճանչնաս իս ։
պատասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ անոր ։ Փի-
լիպպոս դեռ քեզ չի կանչած , դուն որ թզուկին
ծառին տակն էիր՝ ես տեսայ քեզ ։ Պատասխան 49
տուաւ իրեն Նաթանայէլ՝ և ըսաւ ։ Ռաբբի՛
դուն ես Աստուծոյ Որդին , դուն ես Իսրայէլի
թագաւորը ։ Յիսուս պատասխան տուաւ անոր՝ 50
և ըսաւ ։ Վասնզ թզուկին ծառին տակը տեսայ ըսե-
լուս համար կը հաւատաս՝ մեծ
բաներ պիտի տեսնաս դուն ։ Եւ ըսաւ անոր ։ Ամէն 51
ամարիա ձեզմէ կըսեմ ձեզի ։ տեսնէ երկինքը բացված , և Աստուծոյ հրեշտակ-
ները՝ որ կելլան ու կիջնան Որդւոյ մարդոյ վրայ ։

ԳԼՈՒԽ Բ ։

Եւ երրորդ օրը հարսնիք մը կար Գալիլեայի 1
Կանա քաղաքը , ու Յիսուսի մայրը հոն էր ։
Յիսուս ալ կանչըվեցաւ՝ ու իր աշակերտներն ալ 2
ան հարսնիքը ։ Եւ երբոր գինին պակսեցաւ , 3
մայրը ըսաւ Յիսուսին ։ Գինի չունին ։ Յիսուս 4
ալ ըսաւ անոր ։ Կը նիւ՝ դուն իմ հետս ի՞նչ բան
ունիս ։ իմ ատենս դեռ հասած չէ ։ Իր մայրը 5
սպասաւորներուն ըսաւ ։ Ինչ որ ձեզի զրըջե
նէ՝ ըրէք ։ Հոն վեց հատ մարմարիոն քարէ կարաս- 6
ներ կային Հրէաներուն մաքրութեանը համար ,

որ անոնցմէ ամէն մէկը երկու կամ երեք մար ըն-
7կառնէր ։ Յիսուս բաւ անոնց · Լեցուցէք աս
կաթսաները ջուրով · ու լեցուցին անոնք մինչև
8բերանը ։ Եւ ըսաւ անոնց · Հիմայ առէք՝ ու
9տանեսին բերէք · անոնք ալ բերին ։ Ու անոնք
երբոր դիմի դարձած ջուրին համը առաւ , և չէր
գիտեր ուսկից ըլլալը · (բայց սպասաւորները գի-
տէին որ ջուրը լեցուցին ·) փեսային հետ կրնսեր
10անոնք , և կըսէ · Ամէն մարդ անուշ գինին ա-
ռաջ կըբաժնէ · ու երբոր խրմած կըլլան՝ անա-
տները գէշը · դուն անուշ գինիդ մինչև հիմայ պա-
11հեցիր ։ Յիսուս հրաշքներուն սկիզբը ա՛ս ըրաւ
Գալիլեայի Կանա քաղաքին մէջ , և իր փառքը
յայտնեց · ու իր աշակերտները հաւատացին իրեն ։
12 Անկէ ետև Յիսուս Կափառնայում իջաւ , ին-
քը՝ և իր մայրը՝ ու իր եղբայրները · և շատ օրեր
հոն չի կեցաւ ։
13 Ու Հրէից զատիկը մօտ էր , և Յիսուս Երու-
14սաղէմ ելաւ · ու գտաւ որ տաճարին մէջը ցգեր
ու ոչխարներ և աղաւնիներ կրծախեին · ու ըս-
15տակ փոխողներն ալ նստեր էին ։ Եւ չուանէ խա-
րազան մը շինեց , ու ամէնքը տաճարէն դուրս
հանեց , ոչխարները՝ ու եզները՝ և բոլոր փոխողնե-
րուն պղինձները ցիրուցան ըրաւ , ու սեղանները
16կործանեց ։ Եւ անոնք որ աղաւնի կրծախեին՝ ը-
սաւ անոնց · Հո՛ս տարէք ասոնք , ու իմ Հօրըս
17տունը առուտուրի տուն մի՛ ընէք ։ Եաթը իր ա-
շակերտները միտքերնին բերին որ գրված է ,
18Հո՛ւ տունիդ նախանձը իս պիտի ուտէ ։ Պատաս-
խան տըվին Հրեաները՝ և ըսին իրեն · Ի՞նչ նը-
19շան կրցուցընես դուն մեզի՝ որ ատ կընես ։ Պա-
տասխան տըւաւ Յիսուս՝ և ըսաւ անոնց · Հա՛ւկէ-
ցէք ատ տաճարը , ու իրեք աւուր մէջը ատիկա
20կայնեցնեմ ։ Հրեաները ըսին իրեն · Հա՛ռ-
սունըվեց տարին շինվեցաւ աս տաճարը , և դուն
իրեք աւուր մէջ պիտի կայնեցնես ատիկա ։

Ինչ֊ որ ինքը իր մարմինին տաճարին համար կրսեր ։ 21
Եւ երբ ինքը մեռելներէն յարութիւն առաւ՝ իր 22
աշակերտները միտքերնին բերին , թէ Ասիկա է
եղեր որ ինքը րսաւ . ու հաւատացին գիրքին և
Յիսուսի ըսած խօսքին ։
Եւ երբոր զատկին տօնին տաւնը Երուսաղէմ 23
էր , շատերը հաւատացին անոր անունին , տեսնե֊ լով որ
անոր ըրած հրաշքները կրտեսնային ։ Ինչ֊ որ ինքը 24
Յիսուս իր անձը անոնց չէր հաւատար . ինչու որ
ինքը գիտէր ամեն մարդ . ու պէտք չէր՝ որ մէկը 25
մարդու համար վկայութիւն տայ . ինչու որ ինքը
գիտէր մարդուն ներսի դին ինչ կայ ։

ԳԼՈՒԽ Գ ։

Եւ փարիսեցիներէն մէկ մարդ մը կար՝ իր անու֊ 1
նը Նիկոդեմոս Հրեից իշխան մը ։ Այս մարդս գի֊ 2
շերայդ իրեն եկաւ՝ և րսաւ անոր . Վարդապետ գի֊
տենք որ դուն Աստուծմէ վարդապետ եկած ես .
ինչու որ մէկը չի կրնար բնել այս հրաշքները որ
դուն կընես , թէ որ Աստուած իր հետը չըլլայ ։
Պատասխան տուաւ Յիսուս և րսաւ անոր . 3
Ամէնարիւտ ճշմարիտ կրսեմ քեզի . Թէ որ մէկ
մարդ մը նորէն չի ծընի՝ չի կրնար Աստուծոյ թա֊
գաւորութիւնը տեսնել ։ Նիկոդեմոս րսաւ իրեն . 4
Ինտո՞ր կրնայ մէկ մարդ մը ծնանիլ , ան որ ծեր
է . Նորաւոր բա՞ն է որ մէկայի նորէն իր մօր
փորը մրանայ ու ծընի ։ Պատասխան տուաւ Յի֊ 5
սուս և րսաւ . Ամէնարիւտ ճշմարիտ կրսեմ քեզի .
Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չի ծնաւ֊
նի , չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մըտ֊
նել ։ Ինչու որ մարմինէն ծնածը մարմին է , ու 6
Հոգիէն ծնածը՝ Հոգի ։ Դուն մի՛ զարմանար որ 7
քեզի րսի . Պէտք է ձեզի նորէն ծընիլ . ինչու որ 8
Հովը ուր որ ուզէ կըփըչէ , և անոր ձայնը կը֊լը֊
սես , բայց չես գիտեր ուսկից կուգայ՝ կամ ա՛ր
կերթայ . ասանկ ալ ան ամէնը որ Հոգիէն կըծը֊

9 նի։ Պատասխան տուաւ Նիկոդեմոս և ըսաւ ի-
10 րեն. Ո՞ւր ինչպէս կրնայ ըլլալ։ Պատասխան տու-
ւաւ Յիսուս ու ըսաւ անոր. Դուն Իսրայէլացոց
11 վարդապետ մրն ես, և ատիկա չես գիտեր։ Ճշ-
մարիտ ճշմարիտ կըսեմ քեզի, որ՝ Ինչ որ գիտենք
կրնաօսինք, և ինչ որ կրտեսանք՝ կրվկայենք. ու
12 մեր վկայութիւնը չէք ընդունիր։ Եւսի թէ որ
երկրաւոր բաները ձեզի զուրցեցի ու չէք հաւատար,
ինչպէս՝ թէ որ երկնաւոր բաները զուրցեմ նէ
13 պիտի հաւատաք։ Եւ մէկը երկինքը չելաւ, թէ չէ
ան՝ որ երկինքէն իջաւ Որդին մարդոյ, ան որ եր-
14 կինքն է։ Եւ ինտոր Մովսէս անապատին մէջ
օձը բարձրեցուց, անանկ ալ պէտք է որ՝ Որդին
15 մարդոյ բարձրըն՝ Որ ամեն ով որ անոր հաւա-
տայ՝ չի կորսրվի, հապա յաւիտենական կեանքը
16 ընդունի։ Ինչու որ Աստուած անանկ սիրեց աշ-
խարհ, մինչև որ իր միածին Որդին տուաւ. որ
ամեն ով որ անոր հաւատայ՝ չի կորսրվի, հապա
17 յաւիտենական կեանքը ընդունի։ Վասն զի Աս-
տուած իր Որդին չի խրկեց աշխարհ՝ որ աշխար-
հը դատապարտէ. հապա՝ որ աշխարհ անով փրկ-
18 վի։ Ան որ կըհաւատայ անոր՝ չի դատապարտ-
վիր. և ան որ չի հաւատար անոր, անիկա արդէն
դատապարտված է. ինչու որ Աստուծոյ մէկ հա-
19 տիկ ծընած Որդւոյն անունին չի հաւատաց։ Եւ
ասոր է դատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ ե-
կաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն եվելի սիրեցին.
20 ինչու որ իրենց գործքերը չար էին։ Վասն զի
ամեն ով որ չար կրգործէ՝ անիկա լոյսը կատէ, և
լոյսին դիմացը չի գար՝ որ իր գործքերը չի յան-
21 դիմանվին։ Հապա ան որ ճշմարտութիւն կրգոր-
ծէ՝ լոյսին դիմացը կուգայ, որ իր գործքերը
յայտնի ըլլան թէ Աստուծով գործըվեցան։
22 Ետ բաներէն եկաւ Յիսուս և իր աշա-
կերտները Հրէաստանի երկիրը, և հոն կրպատ-
աէր անոնց հետ ու մկրտութիւն կրնէր։

Յօհաննէսեան ալ Յայնոնը Աղեմի մօտ կըմկրը- 23
տեր . որովհետեւ հոն շատ ջուր կար , ու կուգայ-
ին և կըմկրտեին ։ Ինչու որ Յօհաննէս տակաւին 24
բանտը դրված չէր ։

Ու վիճաբանութիւն մը եղաւ Յօհաննէսին աշ- 25
շակերտներուն մէջ Հրէաներուն հետ մաքրու-
թեան վրայ ։ Եկան Յօհաննէսին՝ և անոր ըսին . 26
Ռաբբի՝ անիկա որ քեզի հետ Յորդանանին մէկալ
կողմն էր , որուն համար դուն վկայութիւն տը-
ուիր , ահա ինքը կըմկրտէկոր . և ամէնքը անոր
կուգան ։ Պատասխան տուաւ Յօհաննէս և ըսաւ . 27
Մարդ ինքիմեն բան մըն ալ չի կրնար ընել ,
թէ որ վերէն չըկրնքէն տրված չըլլայ անոր ։
Դուք ձեզմէն կըվկայէք ինծի , որ ըսի թէ՝ 28
Ես Քրիստոսը չեմ , հապա որ անոր առջեւէն
խրկըված եմ ։ Ան որ հարս ունի փեսան անիկա 29
է . բայց փեսային բարեկամը՝ որ կըկենայ ու կը-
լսէ անոր , ինքը էվիլըք ուրախ կըլլայ փեսային
ձայնին համար . ուստի աս իմ ուրախութիւնս
լըցված է ։ Ինչ անիկա պէտք է որ մեծնայ , բայց 30
ես իջնամ ։ Ան որ վերէն կուգայ՝ ամէնէն վեր է ։ 31
ան որ աս երկիրէս է՝ երկրաւոր է , ու երկիրէն
կըխօսի ։ Ան որ երկինքէն կուգայ , ինչ որ տեսաւ 32
և ինչ որ լսեց՝ ան կըվկայէ , ու անոր վկայութիւ-
նը մէկը չընդունիր ։ Ան որ անոր վկայութիւնը 33
կընդունի , կնքեց՝ թէ Աստուած ճշմարիտ է ։
Վասն զի ան որ Աստուած խրկեց՝ Աստուծոյ 34
խօսքերը կըխօսի . ինչու որ Աստուած անոր չա-
փով չի տար Հոգին ։ Հայրը Որդին կըսիրէ , և 35
ամէն բան անոր ձեռքը տուաւ ։ Ան որ Որդիին 36
կըհաւատայ՝ յաւիտենական կեանքը կընդունի , և
ան որ Որդիին չի հնազանդիր՝ անիկա կեանք չի
տեսնար . հապա Աստուծոյ բարկութիւնը անոր
վրայ կըմնայ ։

ԳԼ · Գ։

1 Ա՛յրըր Յիսուս իմացաւ որ փարիսեցիները լսե-
ցին՝ թէ Յիսուս Յովհաննէսէն է՛վելի աշա-
2կերտներ կընէկոր՝ և կըմկրտէկոր . (թէպէտ չէ
թէ Յիսուս ինքը կըմկրտեր , հապա իր աշակերտ-
3նըրը ։) Թողուց Հրէաստան երկիրը՝ ու նորէն
4Գալիլեա եկաւ ։ Եւ ինքը Սամարիայի միջէն պի-
5տի անցնէր ։ Ե՛կաւ Սամարացոց մէկ քաղաքը՝ ո-
րուն անունը Սիքար էր , ան գեղին մօտ՝ որ անի-
6կա Յակոբ իր որդին Յովսէփին տըւաւ ։ Եւ հոն
Յակոբին մէկ աղբիւրը կար . Յիսուս ալ ճամբայ-
էն հոգնած ըլլալով՝ ան աղբիւրին վրայ նըստաւ .
ժամն ալ վեցին առնէներն էր ։
7 Սամարիայէն կ՚ելի մը եկաւ ջուր հանելու .
8Յիսուս ըսաւ անոր . Տո՛ւր ինծի խըմեմ . (ինչու
որ իր աշակերտները քաղաքը գացեր էին , որ ու-
9տելիք առնեն ։) Սամարացի կ՚ելիը ըսաւ իրեն .
Դուն որ Հրէայ ես՝ ի՞նչպէս կուզես ջո՛ւր խըմել
մէկ Սամարացի կ՚ելիէ մը . (ինչու որ Հրէաները
ընաւ Սամարացիներուն հետ չեն խառնըվիր ։)
10Յիսուս պատասխան տըւաւ անոր՝ և ըսաւ . Թէ
որ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը , և ո՛վ է
ան որ քեզի կըսէ , Թէ Ինծի խըմելու տո՛ւր , դուն
անկէց կուզէիր , և ինքը քեզի կենդանի ջո՛ւր կու-
11տար ։ Կ՚ելիը ըսաւ իրեն . Տէ՛ր՝ դուն ջըրհան ալ
չունիս , ու աս հո՛րը խորունկ է , հապա ալ ու-
12ր կ՚ելի պիտի ունենաս ան կենդանի ջուրը ։ Մի՞թէ
դուն մեր Յակոբ հօրմէն մե՞ծ մըն ես , որ աս հո-
րը մեզի տըւաւ . և ինքը ասկէց խըմեց՝ ու իր զա-
13ւակները՝ և իր անասունները ։ Պատասխան տը-
ւաւ անոր Յիսուս և ըսաւ . Ա՛մէն ո՛վ որ աս ջու-
րէն խըմէ՝ նորէն կըծարաւի . բայց ո՛վ որ խըմէ ան
ջուրէն՝ որ ես անոր կուտամ՝ յաւիտեան չի ծա-
14րաւիր ։ Հապա ան ջուրը՝ որ ես անոր պիտի տամ՝

պիտի բլլայ իրեն ջուրի աղբիւր մը՝ որ յաւիտե-
նական կեանց մէջը կրծղնէ ։ Անիկը բսաւ անոր ։15
Տէր՝ տուր ինծի ան ջուրը , որ չի ծարաւիմ՝ և չոս
չի գամ ջուր հանելու ։ Յիսուս բսաւ անոր ։16
Կնայ քու երիկդ կանչէ , և հոս եկուր ։ Անիկը17
պատասխան տուաւ իրեն՝ ու բսաւ , Ես երիկ չու-
նիմ ։ Յիսուս բսաւ անոր , Լաւէկ բսիր Թէ երիկ
չունիմ ։ Ինչու որ դուն հինգ երիկ փոխեր ես ,18
և ան որ հիմայ ունիս քու երիկդ չէ ։ ատիկա շի-
տակ զուրցեցիր ։ Կսաս կնիկը իրեն ։ Տէր՝ ինծի19
կերեւայ որ դուն մարգարէ մըն ես ։ Ա՛ներ Հայրե-20
րը ասս լեռանըս վրայ երկրիպագութիւն բրին ։ և
դուք կրսէք , Թէ Ա՛խայն Երուսաղէմն է տեղը ,
ուր պէտք է երկրիպագութիւն ընել ։ Յիսուս21
բսաւ անոր ։ Կրնիկ՝ հաւատայ ինծի , որ ժամա-
նակ պիտի գայ որ անատներ ոչ ասս լեռանըս վրայ՝
ու ոչ Երուսաղէմ պիտի երկիրպագութիւն ընեն
Հօր ։ Դուք անոր երկիրպագութիւն կրնէք , որ22
ինքը չէք ճանչնար ։ մենք անոր երկիրպագութիւն
կրնենք՝ որ ան կրճանչնանք ։ ինչու որ փրկու-
թիւնը Հրէաներէն է ։ Ա՛խայն Թէ ատեն պիտի23
գայ , ու հիմայ ալ է , որ ճշմարիտ երկիրպագող-
ները՝ երկիրպագութիւն պիտի ընեն Հօրը Հո-
գիով ու ճշմարտութիւնով ։ ինչու որ Հայրը ի-
րեն անանկ երկիրպագողներ կուզէ ։ Աստուած24
Հոգի է ։ և իրեն երկիրպագողներուն ալ պէտք է
որ Հոգիով ու ճշմարտութիւնով երկիրպագու-
թիւն ընեն ։ Կնիկը բսաւ իրեն ։ Գիտեմ որ Մե-25
սիան պիտի գայ՝ Քրիստոս բսուածը ։ երբոր ինքը
գայ՝ մեզի կրծղրտէ բոլոր բաները ։ Յիսուս բսաւ26
անոր ։ Ես ան եմ՝ որ քեզի հետ կրխօսիմիոր ։ Ե՛ւ27
ասա խօսքին վրայ իր աշակերտները եկան , ու զար-
մացան՝ որ ան կհետ կրխօսէրկոր ։ բայց
անոնցմէ մէկը չբսաւ՝ Թէ Ինչ կուզես , կամ
ինչ կրխօսիսկոր ասոր հետ ։ Անիկը ձրգեց իր28
կուժը , ու քաղաքը գնաց՝ և բսաւ մարդիկներուն ։

29 Եկէք տեսէք մէկ մարդ մը , որ ես ինչ գործեր եմ նէ՝ բոլորը ինծի ըսաւ · արդեօք անիկա է
30 Քրիստոսը ։ Ուղաքէն ելան և իրեն կուգային ։
31 Ու դեռ անոնք չկնած՝ ալակերտները իրեն կա-
32 ղաչէին և կըսէին , Ովքրիչ Հայ կեր ։ Ընիկա բ-
սաւ անոնց · Ես կերակուր ունիմ ուտելու՝ որ
33 զուք չէք գիտեր ։ Ուշակերտները կըսէին իրարու ·
34 Ուրդեօք մէկը ասոր ուտելու բան մը բերաւ ։ Ին-
սուս անոնց ըսաւ · Իմ կերակուրս այն է , որ ես
իս իրկողին կամքը ընեմ , և անոր գործքը կատա-
35 րեմ ։ Ձէ՞ որ զուք կրսէք , Թէ Ձորս ամիս ալ
կայ՝ որ հունձի տուները գայ · ահա ես ձեղի կրսեմ ,
Ուչքերնիդ վեր վերուցէք՝ ու արտերը նայեցէք ,
36 որ ձերմրկցեր են և հնձելու հասեր են ։ Եւ ան
որ կըքաղէ վարձքը կառնէ , ու պտուղը յաւիտե-
նական կեանքին համար կըժողվէ , որ ցանողը ու
37 քաղողը մէկ տեղ ուրախանան ։ Ուստ ան խօսքը
ճշմարիտ է , Թէ Ուրիշը կրցանէ , և մէկ ուրիշը
38 կըքաղէ ։ Ես ձեղ իրկեցի քաղել ան որ զուք
չաշխատեցաք · ուրիշները աշխատեցան , և զուք
անոնց աշխատանքին մէջ մտաք ։
39 Եւ ան Ամմարացոց քաղաքէն շատերը իրեն
հաւատացին ան կընկատը խօսքին համար որ վկայեց
Թէ , Ինչ որ ես գործեր էի նէ՝ բոլորը ինծի ըսաւ ։
40 Ուանիկ երբոր Ամմարացիները իրեն եկան կա-
ղաչէին անոր , որ իրենց քովը մնայ , ու երկու օր
41 ՀՀն կեցաւ ։ Եւ ալ շատերը իրեն հաւատացին իր
42 խօսքին համար ։ Ու կրսէին կնկանը , Ձէ Թէ ա-
կէ ետև քու խօսքիդ համար կրհաւատանք · ինչու
որ՝ մենք մեղմէն լսեցինք ատկէց , և գիտենք որ
ճշմարիտ ատ է աշխարհի Փրկիչը ։
43 Եւ երկու օրէն ետքը կեաւ անկէց՝ ու Գալի-
44 կիա գնաց ։ Ինչու որ Ինսուս ինքը վկայեց , Թէ
Ուարգարէն իր գաւառին մէջը պատիւ չունի ։
45 Ուայց երբոր ինքը Գալիլիա եկաւ՝ Գալիլեացի-
ները անիկա ընդունեցին · ինչու որ տեսած էին

ան բոլոր նշանները՝ որ ինքը ըրաւ Եբուսադէմ
ոճնին առեներ · վասն զի իրենք ալ ան ոճնին ե-
կեր էին ։

Ւորէն եկաւ Գալիլեացոց Կանա Հաղուքը՝ ուր 46
որ ջուրը գինի ըրեր էր · և Հոն Թագաւորի ցեղէ
մէկը կար , որ իր որդին հիւանդ էր Կափառնայ-
ումի մէջ ։ Երբոր ինքը լսեց՝ թէ Յիսուս Հրէ- 47
աստանէն Գալիլեա եկեր է , եկաւ անոր ու կա-
ղաչէր , որ իջնայ և իր որդին բժշկէ · ինչու որ
մեռնելու մօտ էր ։ Յիսուս ըսաւ անոր · Թէ որ 48
նշաններ ու հրաշքներ չի տեսնաք նէ՝ չէք Հաւ-
տար ։ Թագաւորի ցեղ մարդը ըսաւ իրեն · Տէր՝ 49
իջիր քանի որ իմ տղաս չէ մեռեր ։ Յիսուս ըսաւ 50
անոր · Գնա՝ քու որդիդ ողջ է · մարդն ալ Հաւ-
տաց ան խօսքին որ Յիսուս իրեն ըսաւ , ու գնաց ։
Եւ երբոր կիջնար՝ իրեն դիմացը եկան իր ծառա- 51
ները · ասոնք ըսելին՝ ու ըսին , Թէ իր տղան ողջ
է ։ Ուրտեղուներ անոնց անոր բժշկուած ժամը · և 52
ըսին իրեն · Երէկ ժամը եօթնին տենդը Թող տը-
ւաւ անիկա ։ Ուստի անոր Հայրը Թէ ան ժամին 53
էր , որ Յիսուս իրեն ըսաւ , Թէ Քու տղադ ողջ
է · ու Հաւտաց ինքը և իր բոլոր տունն ալ ։ Այս 54
նորէն երկրորդ հրաշքն է՝ որ Յիսուս ըրաւ , եր-
բոր Հրէաստանէն Գալիլեա եկաւ ։

Գ.

Ետկէ ետև Հրէաներուն ոճն էր · և Յիսուս 1
Եբուսադէմ ելաւ ։ Ու Եբուսադէմի մէջ ոչ- 2
խարներուն աւազանը՝ որ Եբրայեցերէն Կնե-
ղեզդա կըսվէր , հինգ բակ կար ։ Որ անոնց մէջ 3
էին բազ շատ հիւանդներ դրված կային , կոյրեր՝ կա-
ղեր՝ չորցածներ , որոնք կըսպասէին ջուրին խառ-
նըվելուն ։ Վասն զի Տէրոջը հրեշտակը ժամա- 4
նակին աւազանը կիջնար , ու ջուրը կըխառնէր ·
և ով որ պիտի առաջ ան ջուրին խառնըվելուն
անոր ներքը կիջնար , կըբժշկըվէր՝ հիւանդու Թեան

5Նշան՝ մը չի մնար։ Եւ հոն մէկ մարդ մը կար ,
որ երեսունըութը տարի իր հիւանդութեան մէջ
6էր ։ Յիսուս երբոր տեսաւ անիկա՝ որ ինկած դր-
բած էր , ու գիտցաւ որ շատ ժամանակէ՝ ի վեր է ,
7րսաւ անոր ։ Կ՚ուզես ողջ ըլլալ ։ Հիւանդը պա-
տասխան տուաւ իրեն ։ Տէր՝ մէկ մը չունիմ , որ
երբ ջուրերը խառնըվին՝ զիս աւազանը ձգէ ։
Հապա մինչև որ ես կ՚երթամ՝ ինծմէ առաջ
8ուրիշ մը կ՚իջնայ ։ Ըսաւ անոր Յիսուս ։ Ելիր
9քու մահիճդ առ ու գնա ։ Եւ ողջնցաւ մարդը ,
ու հեաւ՝ առաւ իր մահիճը և կըպտրտաէր ։ ու ան
10օրն ալ շաբաթ էր ։ Հրէաները ան բժշկվածին
ըսին ։ Շաբաթ է , և քեզի չի վայլեր որ մահիճդ
11վերցնես ։ Պատասխան տուաւ անոնց ու ըսաւ ։
Ան որ իս բժշկեց՝ ինքը ինծի ըսաւ , Առ մահիճդ
12ու գնա ։ Հարցուցին անոր՝ և ըսին ։ Ո՞վ է ան
մարդը որ քեզի ըսաւ՝ Ա՛ռ մահիճդ առ ու պտրտէ ։
13Եւ բժշկըվողը չէր գիտեր թէ ո՞վ է ան ։ ինչու որ
Յիսուս ան տեղէն մէկդի քաշվեցաւ բազմութեա-
14նը համար ։ Անկէց ետքը Յիսուս անիկա տաճա-
րին մէջը կրգտնայ՝ ու կըսէ անոր ։ Ահա ըրբնա-
ցար , ալ մեղք մի գործեր՝ որ ալ աւելի չար բան
15մը չի պատահի քեզի ։ Գնաց մարդը , ու Հրէա-
ներուն պատմեց , թէ Յիսուս էր՝ որ իս բժշկեց ։
16 Եւ ասոր համար Հրէաները կըհալածէին Յի-
17սուս , որ ան բանը շաբաթ օրը կընէր ։ Եւ Յի-
սուս պատասխան տուաւ անոնց ։ Իմ Հայրըս մին-
18չև հիմայ կրգործէ , ես ալ կրգործեմ ։ Ասոր
համար ալ էվելօք եռևէ էին Հրէաները որ անի-
կա սպաննեն ։ ինչու որ չէ թէ միայն շաբաթ օրի-
րը չէր պահեր , հապա նաև Աստուած իր Հայրը
կըկանչէր՝ ու ինքզինքը Աստուծոյ հաւասար կը-
19նէր ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ անոնց ։
Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ ձեզի , Որդին մար-
դոյ ինքիրմէն բան մըն ալ չի կրնար ընել , միայն
թէ ինչ որ տեսնայ՝ որ Հայրը կընէ ։ ինչու որ ան

ինչ բան որ կընէ նէ՝ ան բանը Որդին ալ կընէ
անոր նման ։ Պատճառն որ՝ Հայրը կսիրէ Որ- 20
դին , և ամէն բանը կցուցընէ անոր՝ ինչ որ ին-
քը կընէ · և անոնցմէ ալ աւելի մեծ գործքեր պի-
տի ցուցընէ անոր , որ անոր վրայ զարմա-
նաք ։ Վասն զի ինչպես Հայրը մեռելները կեա- 21
րուցանէ՝ ու կենդանի կընէ , անանկ ալ Որդին՝
որոնք որ կուզէ նէ կենդանացունէ ։ Եւ Հայ- 22
րը մէկը չի դատեր , հապա ամէն դատաստանը իր
Որդիին տուաւ · որ ամէնքը պատուեն Որդին , 23
ինչպես որ Հայրը կըպատուեն · ան որ Որդին չի
պատուէր , անոր որ զինքը Հայրը չի պատուէր ։
Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ ձեզի , թէ Ան որ իմ 24
խօսքիս մտիկ կընէ և կըհաւատայ անոր որ ինծ զր-
կեց , յաւիտենական կեանք կընդունի , ու դա-
տապարտութեան տակ չիգար · հապա մահէն
դէպի կեանքը անցաւ ։ Ճշմարիտ ճշմարիտ կը- 25
սեմ ձեզի , որ՝ ժամանակ պիտի գայ՝ և ալ հիմայ
է , որ անատնները մեռելները պիտի լսեն Աստուծոյ
Որդիին ձայնը · և անոնք որ կըլսեն՝ պիտի ող-
ջենան ։ Վասն զի ինչպես որ Հայրը իր անձին 26
մէջը ունի կեանք , անանկ Որդիին ալ տուաւ՝ որ
իր անձին մէջը ունենայ կեանք · ու իշխանութիւն 27
տուաւ անոր դատաստան ընելու · որովհետև ինքը
Որդի մարդոյ է ։ Ասոր վրայ ինչ կըզարմանաք · 28
ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզ-
մանի մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն , ու 29
դուրս պիտի գան · անոնք որ բարեգործութիւն
ըրեր են՝ կենաց յարութեան համար , և անոնք որ
չարագործութիւն ըրեր են՝ դատապարտութեան
յարութեան համար ։ Ես ինքիրմէս բան մըն ալ 30
չեմ կրնար ընել , հապա ինծի կըլսեմ նէ՝ անանկ
կըդատեմ , և իմ դատաստանս շիտակ է · ինչու-
որ՝ ես իմ կամքըս չեմ փնտրեր , հապա անոր
կամքը՝ որ իս խրկեց ։ Եթէ ես ինծի համար 31
վկայեմ նէ՝ իմ վկայութիւնս ճշմարիտ չէ ։ Ու- 32

բիշն է որ ինծի համար կրվկայէ · և դուք գիտէք
որ ճշմարիտ է ան վկայութիւնը՝ որ ինքը ինծի
33 համար վկայութիւն ըրաւ ։ Դուք Յովհաննէսին
խրկեցիք , և ինքը ճշմարտութեան վկայեց ։
34 Բայց ես չէ թէ մարդոյմէ վկայութիւն կառնեմ ·
35 հապա՛ ասս կըսեմ՝ որ դուք փրկըվիք ։ Անիկա ճր-
ագ մըն էր՝ որ կըվառուէր ու լոյս կուտար · և
դուք քիչ մը առեն ուզեցիք անոր լուսովը ուրա-
36 խանալ ։ Բայց ես Յովհաննէսէն ալ մեծ վկայու-
թիւն ունիմ , ան գործքերը որ Հայրը ինծի տը-
ւաւ՝ որ անոնք կատարեմ , բուն ան գործքերը որ
կըգործեմ՝ ինծի համար կրվկայեն՝ որ Հայրը ին-
37 խրկեց ։ Ու Հայրը որ ինս խրկեց՝ ինքը վկայեց
ինծի համար · դուք ոչ անոր ձայնը բնաւ լսեցիք ,
38 և ոչ անոր կերպարանքը տեսաք ։ Եւ ոչ անոր
խօսքը ձեր մէջը բնակած ունիք · ինչու որ ան որ
39 ինքը խրկեց , դուք անոր չէք հաւատար կոր ։ Կր-
քերը քննեցէք · ինչու որ դուք անոնցմով կըսե-
պէք յաւիտենական կեանքը ունենալ · և բուն
անոնք են որ ինծի համար կրվկայեն , որոնցմով
40 որ կըսկսիք կեանք ունենալ · և դուք չէք ուզեր
41 ինծի գալ , որ կեանքը ունենաք ։ Ես մարդոյմէ
42 փառք չեմ առներ ։ Բայց գիտեմ ձեզ որ Աս-
43 տուծոյ սէրը մէջերնիդ չունիք ։ Ես իմ Հօրս ա-
նունովս եկայ , ու ինս չէք ընդուներ · թէ որ ու-
րիշ մէկ մը իր անունովը գայ՝ անիկա կրնդունիք ։
44 Դուք ինծմէ կրնաք հաւատալ , որ իրարմէ փառք
կառնէք · և ան փառքը՝ որ մէկ Աստուծմէն է ,
45 չէք փնտռեր ։ Մի՛ կարծէք թէ ես ձեզի համար
Հօրը քով ամբաստանութիւն պիտի ընեմ · կայ
մէկը որ ձեզի համար ամբաստանութիւն կընէ
Մովսէսը՝ որուն վրայ որ դուք յուսացեր էք ։
46 Մ ան զի թէ որ դուք Մովսէսին հաւատայիք՝ ին-
ծի՛ալ կրհաւատայիք · ինչու որ անիկա ինծի համար
47 գրեց ։ Բայց թէ որ անոր գրածներուն չէք հա-
ւատար , իմ խօսքերուս ինծմէ պիտի հաւատաք ։

ԳԼՈՒԽ։

Ա՛ս բաներէն ետքը Յիսուս Կալիլեացւոց Տիբե- 1
ըիայի ծովին մէկալ կողմը գնաց . և անոր ե- 2
տևէն շատ ժողովուրդ կերթար . ինչու որ կը-
տեսնային ան հրաշքները որ հիւանդներուն վրայ
կընէր : Յիսուս լեռ մը ելաւ , և հոն նստաւ ա- 3
շակերտներուն հետ մէկ տեղ : Իւ Հրէաներուն 4
զատիկ տօնը մօտ էր :

Յիսուս եղբեաց իր աչքը վեր վերցուց , ու տե- 5
սաւ որ շատ ժողովուրդ կուգար իր քովը , րսաւ
Փիլիպպոսին . Ուսկից հաց ծախու առնենք որ ա-
տոնք ուտեն : Ա՛ս կրսէր անոր փորձելու հա- 6
մար . բայց ինքը գիտէր ինչ պիտի ընէր : Փիլիպ- 7
պոս պատասխան տուաւ անոր . Երկու հարիւր
դահեկանի հաց ատոնց հերիք չէ , թէ և ամէն մէկը
քիչիկ մը առնէ : Իւր աշակերտներէն մէկը՝ քոյր 8
ըսած Սիմոնին եղբայրը Անդրեասը՝ րսաւ իրեն .
Հոս մէկ մանչ մը կայ , որ հինգ հատ գարիի հաց 9
ու երկու ձուկ ունի . բայց անոնք ի՛նչ պիտի ըլ-
լայ ատոնցմէ մարդոցը : Յիսուս ըսաւ , Կատեցուր- 10
ցէք ատ մարդիկը . և ան տեղը շատ խոտ կար , ու
մարդիկը նստան հաշիւնուն հինգ հազարի .
չափ : Եւ Յիսուս հացը առաւ՝ ու գոհացաւ , և 11
ան նստողներուն բաժնեց . անանկ ալ ձուկերէն
որչափ որ ուզեցին : Եւ երբոր կըշտացան՝ ըսաւ 12
աշակերտներուն . Ժողվեցէք ան մնացած կտոր-
վանքները՝ որ բան մը չի կորսրվի : Ժողվեցին , 13
ու տասներկու սակաւ լեցուցին ան հինգ գարիէ
նկատակէն մնացած կտորվանքը , որ ուտողներէն
էվրլցաւ :

Ատոր մարդիկը երբոր ան գրած հրաշքը տե- 14
սան՝ կրսէին Թէ , Արդիւնք է ան ճշմարիտ մարգա-
րէն՝ որ աշխարհ պիտի գար : Յիսուս երբոր իմա- 15
ցաւ որ պիտի գան զինքը յափշտակեն՝ որ անիկա

16 Թագաւոր ըսեն, Նորէն մինակ լեռ մը գնաց։ Եւ
իբրեւ ուր եղաւ, իր աշակերտները ծովեզերքը
17 իջան։ Ու նաւը մտան՝ ծովին միւկալ կողմը Կա-
փառնայում կերթային. և անտառներ մուխը կո-
18 խեց, ու Յիսուս դեռ իրենց չէր եկած։ Ծովն
ալ հովին սաստիկ փչելէն՝ տակնուվրայ կ'ըլլար։
19 Ու քսանըհինգ կամ երեսուն ասպարէզի չափ ա-
ւազ որ գացին՝ տեսան որ Յիսուս ծովին վրայէն
կուգայ՝ և նաւին մօտիկցեր էր, շատ ալ վախցան։
20 Նայց ինքը բսաւ անոնց. Ես եմ՝ մի վախնաք։
21 Եւ կուզէին անիկա նաւը առնել. ու շուտով մը
նաւը ան երկիրը հասաւ՝ ուր որ կերթային։
22 Յաւի օրը՝ ժողովուրդը որ ծովին միւկալ դին
էր, տեսաւ որ ուրիշ նաւ չի կար հոն ան մէկին
չի զատ՝ որուն մէջը Յիսուսի աշակերտները մտան.
և որ Յիսուս աշակերտներուն հետ նաւը մտած
չէր, հապա մինակ իր աշակերտները գացին.
23 (բայց Տիբերիայէն ուրիշ նաւեր եկան ան տեղին
24 մօտ, ուր որ Տէրը կերան.) անտառները ժողովուր-
դը որ տեսաւ՝ թէ ոչ Յիսուս հոն է և ոչ իր ա-
շակերտները, անոնք ալ նաւերը առին՝ ու եկան
25 Կափառնայում Յիսուսը փնտռելու։ Եւ երբոր
անիկա ծովին միւկալ դին գտան՝ ըսին իրեն. Վար-
26 բի՛, երբ եկար դուն հոս։ Յիսուս պատասխան ը-
ւաւ անոնց և բսաւ. Ա՛ժմարիտ ճշմարիտ կըսեմ
ձեզի. Դուք իս կրթնտրեք չէ թէ անոր համար
որ հրաշքներ տեսաք, հապա անոր համար՝ որ ան
27 Տէրեն կերաք ու կըշտացաք։ Գործեցէք գտանեցէք
չէ թէ կորըստական կերակուրին համար, հապա
ան կեդակուրին համար՝ որ յաւիտենական կեան-
քին մէջ կըմնայ, որ անիկա Մարդին Որդին ձեզի
պիտի տայ. վնչու որ Հայրը անիկա Աստուած
28 գըլալ կընքեց։ Ան ատեն իրեն. Ի՞նչ պիտի ընենք՝
29 որ Աստուծոյ գործքերը գործենք։ Պատասխան
տըւաւ Յիսուս՝ և բսաւ անոնց. Ա՛յս է Աստուծոյ
30 գործը, որ անոր խրկածին հաւատաք դուք։ Ան ատեն

իրեն , Ի՞նչ նշան կընեսկոր՝ որ տեսնանք ու հաւատանք , ի՞նչ է քու ըրած գործդ ։ Ա՛ր հայ- 31
րերը անապատին մէջը մանանան կերան՝ ինտոր որ գրված է , Երկինքէն հաց տուաւ անոնց որ ուտեն ։ Յիսուս ըսաւ անոնց . Ա՛շմարիտ ճշմարիտ 32
կըսեմ ձեզի , որ՝ Մովսէս չէ տուաւ ձեզի երկինքէն հացը , այլ իմ Հայրս պիտի տայ ձեզի երկինքէն ան ճշմարիտ հացը ։ Ինչու որ 33
Աստուծմէ տրված հացը ան է որ երկինքէն կիջնէ , ու աշխարհիս կեանք կուտայ ։ Ըսին իրեն . 34
Տէր՝ ամէն ժամու ան հացը մեզի տուր ։ Յիսուս 35
ըսաւ անոնց . Ես եմ կենաց հացը . ան որ ինծի կուգայ՝ չի անօթենար . և ան որ ինծի կը հաւատայ՝ ամենևին չի ծարաւենար ։ Հայց ես ձեզի ըսի , որ 36
զիս ալ տեսաք՝ ու չէք հաւատար ։ Ան ամենը որ 37
Հայր ինծի կուտայ՝ ինծի պիտի գայ . և ան որ ինծի կուգայ՝ զուրս չեմ հաներ ։ Ինչու որ՝ ես 38
երկինքէն իջայ՝ չէ թէ իմ կամքս ընելու , հապա անոր կամքը՝ որ իս խրկեց ։ Ասիկա է իմ Հօրս կամ- 39
քը որ իս խրկեց , որ ան ամենը որ Հայր ինծի տուաւ՝ չի կորսընցունեմ անկէց . հապա յարուցանեմ զանիկա յաւուր վերջին՝ ան տուաւ անոր եղբ օրը ։ Ասիկա է իմ Հօրս 40
կամքը , որ ան ամէն որ կըտեսնայ Որդին՝ և կը հաւատայ անոր , յաւիտենական կեանքը ընդունի . և ես ալ յարուցանեմ զանիկա յաւուր վերջին ։

Հրէաները կրմրմրային իրեն համար , ին- 41
չու որ ըսաւ թէ՝ Ես եմ երկինքէն իջած հացը . և կըսէին . Ասիկա Յիսուս Յովսէփին որդին չէ 42
մի՞ որ իր հայրը ու մայրը մենք կրճանչնանք . հապա ալ ինտո՞ր կրսէ , թէ՝ Ես երկինքէն իջայ ։ Պա- 43
տասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոնց . Իրարու հետ մի՛ մըմռըռաք ։ Ա՛ոկը չի կրնար ինծի գալ՝ 44
թէ որ իս խրկող Հայրը անիկա չի քաշէ նէ . որ ես անոր յարուցանեմ զանիկա յաւուր վերջին ։ Ա՛ար- 45
գարէից մէջը գրված է . Եւ ամենն ալ Աստուծմէ սորված ըլլան . ան ամենը որ Հօրմէն կըլսէ ու

46 կըսորվի՝ ինձի կուգայ ։ Ձէ թէ մէկը Հայրը տե-
սած է, եթէ ոչ ան՝ որ Աստուծմէն է, անիկա
47 Հայրը տեսաւ ։ Ամէնիրեան ճշմարիտ կըսեմ ձեզի,
թէ Ան որ ինձի կը հաւատայ՝ յաւիտենական կեան-
48 քը կընդունի ։ Ես եմ կենաց հացը ։ Ձեր հայ-
49 րերը անապատին մէջ մանանան կերան՝ ու մեռան ։
50 Ասիկա է ան հացը որ երկինքէն իջած է, որ թէ մէկը
51 ասկէց ուտէ՝ չի մեռնիր ։ Ես եմ կենդանի հա-
52 ցը՝ որ երկինքէն իջայ ։ Թէ որ մէկը աս հացէն ու-
տէ՝ յաւիտեան պիտիապրի. և ան հացը՝ որ ես
պիտի տամ՝ իմ մարմինս է, որ ես պիտի տամ
աշխարհի կեանքին համար ։
53 Հրէաները իրարու հետ կըկռուէին ու կըսէ-
ին, Ինծի՞ կրնայ ասիկա իր մարմինը մեզի տալ
54 ուտելու ։ Յիսուս ըսաւ անոնց. Ամէնիրեան ճըշ-
մարիտ կըսեմ ձեզի, Թէ որ Որդւոյ մարդոյ մար-
մինը չուտէք և անոր արիւնը չի խըմէք՝ ձեր ան-
55 ձերուն մէջը կեանք չէք ունենար ։ Ով որ իմ
մարմինս ուտէ և իմ արիւնս խըմէ՝ յաւիտենա-
կան կեանք ունի. ու ես յարուցիւն առնել կու-
56 տամ անոր եղբի օրը ։ Ինչու որ՝ իմ մարմինս
ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս ճշմարիտ
57 խմիչք է ։ Ան որ իմ մարմինս կուտէ և իմ արիւ-
նըս կըխմէ, անիկա իմ ներսի դիս կըբնակի ու
58 ես անոր ներսի դին ։ Ինչպես որ կենդանի Հայ-
րը իս խրկեց, ես ալ կենդանի եմ Հօրըս ձեռ-
քովը. և ան որ իս կուտէ՝ ինքն ալ իմ ձեռքովս
59 կենդանի կըմնայ ։ Ասիկա է ան հացը, որ երկինքէն
իջած է. չէ թէ ինտոր որ հայրերնիդ մանանան
կերան՝ ու մեռան. ան որ աս հացը կուտէ՝ յաւի-
տեան պիտի ապրի ։
60 Ասոնք զըրցից ժողովարանին մէջը՝ երբոր
Կափառնայում կըսորվեցուներ ։
61 Ու աշակերտներէն շատերը երբոր լսեցին՝ ըսին.
Պիտի է ատ խօսքը. ո՞վ կրնայ ատոր մտիկ ընել ։
62 Յիսուս երբոր ինքներնին հասկըցաւ՝ որ աշա-

կերանները ան բանին համար կըտուրուան , ըսաւ
անոնց ։ Ասիկա ձեզ կըդայթակղեցունէ կոր ։
Հապա ես պիտի խոսիմ թէ որ տեսնաք Որդին 63
մարդոյ՝ որ կելայ ուր տես որ առաջ էր նէ ։ Հո- 64
գին է կենդանի ընողը , մարմինը շահ մը չընէր ։
ան խօսքը որ ես ձեզի խօսեցայ՝ հոգի ու կեանք
է ։ Հապայ ձեր մէջէն ունինք կան որ չեն հաւատար ։ 65
ինչու որ Յիսուս առաջմանէ գիտէր թէ ո՛վ են
անոնք որ չեն հաւատար , և ո՛վ է ան որ զինքը
պիտի մատնէ ։ ու կըսէր ։ Ասոր համար ձեզի ըսի , 66
որ՝ Ա՛ռէք չի կրնար ինծի գալ , թէ որ իմ Հօր-
մէս տրուած չըլլայ անոր ։
Ասկից իր աշակերտներուն շատերը ետ գացին , 67
և ալ իր հետը չէին պըտըտիր ։ Յիսուս տասներ- 68
կու աշակերտներուն ըսաւ ։ Դուք ալ կուզէք մի
երթալ ։ Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ա- 69
նոր ։ Տէր՝ որմէն պիտի երթանք , դուն յաւիտե-
նական կեանքի խօսքեր ունիս ։ Եւ մենք հաւատա- 70
ցինք ու ճանչցանք՝ որ դուն ես Քրիստոսը Հո-
գուածոյ Որդին ։ Յիսուս պատասխան տուաւ ա- 71
նոնց ։ Ես ձեզ տասներկուքդ չընտրեցի՞ մի , ու
ձեզմէն ալ մէկը սատանայ է ։ Եւ կըսէր Իսկա- 72
րիովտացի Սիմոնեան Յուդային համար ։ ինչու
որ անիկա էր որ զինքը պիտի մատնէր , ու տաս-
ներկուքէն մէկն էր ։

ԳԼՈՒԽ Է ։

Ա ետ ասիկ հետև Յիսուս Գալիլեայի մէջ ժուռ 1
կուգար ։ ինչու որ չէր ուզեր Հրէաստանի
մէջը պըտըտիլ ։ վասն զի Հրէաները զինքը մեռ-
ցունել կուզէին ։
Եւ Հրէաներուն տաղաւարաշար ըսուած տօնը 2
մօտ էր ։ Իր եղբայրները ըսին իրեն , Ելիր ասկէ՝ 3
ու Հրէաստան գնա , որ քու աշակերտներդ ալ
տեսնան քու գործքերդ որ կընես ։ Ինչու որ մէ- 4
կը չի կայ որ ծածուկ բան մը ընէ , և ուզէ որ ին-

քը ձանչցըված ըլլայ. Թէ որ զուն ատոնք կրնես՝
5 ինքըզինքըդ աշխարհին յայտնէ: Պատճառն որ
6 եղբայրներն ալ իրեն հաւատացած չէին: Յիսուս
ըսաւ անոնց. Իմ ատենս դեռ եկած չէ. բայց ձեր
7 ատենը ամէն ժամու պատրաստ է: Աշխարհը ձեզ
չի կրնար ատել. բայց իս կատէ. ինչու որ ես ա-
նոր վրայ կըվկայեմ թէ իր գործքերը չար են:
8 Դուք գացէք ան տօնին. ես դեռ չեմ երթար ան
9 տօնին. ինչու որ՝ իմ ժամանակս լըցված չէ: Ա-
10 ըրոր ըսաւ, ինքը տեղ Գալիլեա մնաց: Երբոր
իր եղբայրները գան, հապա ինքն ալ գնաւ տօ-
նին. չէ թէ յայտնի՝ հապա գաղտուկ կերթայ մը:
11 Եւ Հրէաները ան տօնին ատենը կըփընտռէ-
12 ին զինքը՝ ու կըսէին. Ո՞ւր է անիկա: Ու ժողո-
վուրդին մէջը սրտմտոց մը կար իրեն վրայ. կէ-
սերնին կըսէին, Թէ՝ Նզովք է, ուրիշները
կըսէին՝ Չէ, հապա ժողովուրդը կըմոլորցունէ-
13 կոր: Եւ մէկը համարձակ չէր կրնար խօսիլ ա-
նոր համար՝ Հրէաներուն վախէն:
14 Տօնը երբոր կէս եղաւ, Յիսուս տաճարը գնաւ՝
15 ու կըսորվեցունէր: Հրէաները կըզարմանային ու
կըսէին, Ինծոր ասիկա գիրերը գիտէ, որ ընաւ
16 սորված չէ: Յիսուս պատասխան տըւաւ անոնց՝ ու
ըսաւ. Իմ վարդապետութիւնս իմս չէ, հապա իս
17 որկողինն է: Թէ որ մէկը կուզէ անոր կամքը ը-
նել, պիտի գիտնայ աս վարդապետութեանս հա-
մար՝ Եէ Աստուծմէ է մի իրաւցունէ, թէ ես ինք-
18 իրմէս կըխօսիմ: Ան որ ինքըմեն կըխօսի՝ իր ան-
ձին փառքը կըփնտռէ. բայց ան որ զինքը կըխր-
կողին փառքը կըփնտռէ՝ անիկա ճշմարիտ է, ու
19 անոր քով անիրաւութիւն չկայ: Մովսէս չէ
տըւաւ ձեզի օրէնքը, ու ձեզմէ մէկն ալ չի պա-
20 հեր օրէնքը: Ինչու կըփնտռէք իս սպաննել.
պատասխան տըւաւ ժողովուրդը ու ըսաւ. Դեւ կայ
21 քու ներսըդ. ո՞վ քեզ կըփնտռէ սպաննել: Պա-
տասխան տըւաւ անոնց Յիսուս ու ըսաւ. Մէկ

գործ մը գործեցի՝ ու ամէնքդ ալ զարմացիր էք ։
Հետեւի Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ ։ (չէ որ ան Մովսէսէն էր , հապա նախնիքներէն ։) ու շաբաթի օրը մարդ կըթլփատէք ։ Հետեւի թէ որ շաբաթի օրը մարդ թլփատութիւն կառնէ որ Մովսէսին օրէնքը չի քակուի · ինծի կըսդողիք որ ես շաբաթի օրը ամբողջ մարդ մը բժշկեցի ։ Էջ քի երեւցածին պէս դատաստան մի՛ ընէք · հապա շիտակ դատաստան ըրէք ։

Ան Երուսաղէմացիներէն ոմանք կըսէին · Չէ՞ կա՛ ան էշ՞ որ զինքը կըմեռցունեն սպաննել · բայց ահա յայտնի կըխօսիկոր , և ասոր բան մը չեն ըսերիկոր · չըլլայ թէ իշխաններն ալ գիտան թէ ասիկա է Քրիստոս ։ Սակայն մենք ասիկա գիտենք ուսկից է · բայց Քրիստոս երբոր գայ՝ մէկը չի գիտեր ուսկից է ։

Յիսուս կանչեց տաճարին մէջը՝ կըսորվեցունէր , և կըսէր · Ես ալ գիտէք , և ուսկից ալ եմ նէ՝ գիտէք , ու ինքիրմէս եկած չեմ · հապա ան որ իս խրկեց՝ ճշմարիտ է , որ անոնիկ դուք չէք գիտեր ։ Ես գիտեմ անոնիկ · ինչու որ ես ասոնց եմ՝ և ինքը իս խրկեց ։ Ասոնցմէն որ զինքը բռնեն · բայց անոնց ձեռքէն չըլաւ , և մէկն ալ իրեն ձեռք չի զարկաւ · ինչու որ՝ իր ատենը դեռ հասած չէր ։ Ու ժողովուրդէն շատերը հաւատացին իրեն , և կըսէին · Քրիստոս որ գալու ըլլայ նէ , էվելի նշաններ մի պիտի ընէ , որչափ որ ասիկա կընէկոր ։ Փարիսեցիները ալ լսեցին ժողովուրդին տուրդան ասոր մասին վրայով · ու քահանայապետներն և Փարիսեցիները սպասաւորներ խրկեցին , որ բռնեն անիկա ։ Յետոյ Յիսուս ըսաւ · Ինչ մը ժամանակ ալ ձեզի հետ եմ , ու կերթամ անոր՝ որ իս խրկեց ։ Ես պիտի փնտռէք՝ ու չի պիտի գտնէք · և ուր որ ես կերթամ , դուք չէք կրնար գալ ։ Հրէաները ըսին իրարու · Այդ ուր պիտի երթայ ասիկա , որ մենք զինքը չի պիտի գտնենք · միթէ

հնձանատներուն մէջը ցիրուցան եղածներուն պի-
տի երթայ , և հնձանատները պիտի սրբկացունէ :
36 Ի՞նչ է ան խօսքը՝ որ ըսաւ ցմեզ . Ինս պիտի փնտռ-
ուէք ու չի կրնար գտնալ , և ուր որ ես կերթամ՝
դուք չէք կրնար երթալ :
37 Վերջին մեծ օրը Յիսուս կայներ էր ,
կրկանչէր՝ և կըսէր , Թէ որ մէկը ծարաւ է՝ ինծի
38 թող գայ՝ ու խըմէ : Ան որ ինծի կը հաւատայ՝ ինչ-
պէս որ գիրքերը կըսեն , Անոր փորէն կենդանու-
թիւն արտող ջուրերու գետեր պիտի բղխեն :
39 Ասիկա Հոգիին համար կըսաւ , որ պիտի ըն-
դունէին անոնք որ իրեն հաւատային . վասն զի Հո-
գին սո՛ւրբ դեռ չէր տակաւին , ինչու որ Յի-
40 սուս դեռ փառաւորած չէր : Ժողովուրդէն ո-
մանք ասոնք խօսքը որ լսեցին՝ կըսէին . Ասիկա է ճշ-
41 մարիտ մարգարէն : Ուրիշները կըսէին . Ասիկա
է Քրիստոսը . բայց կէսերնին կըսէին . Քրիստոս
42 Գալիլեայէն մի պիտի գայ : Չէ՞ որ գիրքերը կը-
սեն , Թէ Դաւիթի ցեղէն ու Բեթղեհէմի գեղէն ,
ուր տեղ որ Դաւիթին էր , անկից պիտի գայ Քր-
43 իստոսը : Եւ ժողովուրդին մէջ երկպառակու-
44 թիւն մը եղաւ անոր համար : Եւ անոնցմէ ումանք
ուզեցին բռնել անիկա . բայց մէկը ձեռք չի դրպ-
ցուց իրեն :
45 Ու սպասաւորները նորէն եկան քահանայա-
պետներուն և փարիսեցիներուն . ուասոնք ըսին
46 անոնց . Ինչո՞ւ անիկա հոս չի բերիք : Պատասխան
տըվին սպասաւորները և ըսին . Երբեք մէկ մարդ
47 մը անանկ խօսած չէ , ինչպէս որ ան մարդը : Պա-
տասխան տըվին փարիսեցիները և ըսին . Միւք
48 ալ մի մոլորեցաք : Իշխաններէն մէկը հաւատաց մի
49 անոր՝ կամ փարիսեցիներէն . միայն Թէ ան չհաս-
մարդիկը՝ որ օրէնքը չեն գիտեր , ալ նզոված են :
50 Նիկոդեմոս ըսաւ անոնց , որ առաջուց գիշեր ա-
51 տեն իրեն եկեր էր , և անոնցմէ մէկն էր : Մեր
օրէնքը մարդ կըդատէ՞ մի , Թէ որ առաջ անկից

բան մը չի լսէ , կամ չի գիտնայ ինչ բրեր է ։
Պատասխան տուին անոր և ըսին . Դուն ալ մի 52
Գալիլեացէն ես . քննէ ու նայէ , որ Գալիլեա-
յէն մարգարէ չելլար ։ Եւ ամէն մէկը իրենց տե- 53
ղերնին գացին ։

ԳԼՈՒԽ Ը ։

Եւ Յիսուս Ձիթենեաց լեռը գնաց ։ Ու առտը- 1
վանց նորէն տաճարը եկաւ , և բոլոր ժողո- 2
վուրդը իրեն կուգար , ու ինքը նստեր կըսորվե-
ցուներ անոնց ։ Գպիրները ու քահանայապետնե- 3
րը և Փարիսեցիները մէկ կնիկ մը բերին շնութեան
մէջ բռնուած , ու կայնեցունելով անիկա առջևը՝
ըսին իրեն . Ո՛վ վարդապետ , սա բռնուած կնիկը՝ 4
ինքը յայտնի շնութիւն բրած է ։ Եւ օրինաց մէջ 5
Մովսէս մեզի պատուիրեց՝ ասանկները քարկո-
ծել . հիմա դուն ի՞նչ կըսես ասոր համար ։ Ա- 6
կըսէին ինքը փորձելով , որ իր վրայ ամբաստա-
նութիւն մը ունենան . բայց Յիսուս դէպի վար
նայելով՝ մատովը գետնին վրայ կըգրեր ։ Ա- 7
երբոր վրայ ինկան հարցընելով իրեն , վեր նայ-
ելով ըսաւ . Ձեր մէջէն անմեղ եղողը՝ առաջ ա-
նիկա թող քար ձըգէ ասոր վրայ ։ Եւ նորէն դէ- 8
պի վար նայելով՝ գետնին վրայ կըգրեր ։ Եւ ա- 9
երբ լսեցին նէ՝ մէկիկ մէկիկ դուրս կելլային՝ առջին-
ներէն սկըսած մինչև ետքինները . և Յիսուս մի-
նակ մնաց , ու կնիկն ալ առջին կայներ էր ։ Պա- 10
տասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ անոր . Կի՛նիկ՝
ուր են , մէկը քեզ չի դատապարտեց ։ Եւ ան 11
ըսաւ , Չէ Տէր . ու ըսաւ Յիսուս , Ես ալ չեմ
դատապարտեր քեզ . գնա՝ ասկէ ետև մեղք մի՛
գործեր ։

Յիսուս նորէն խօսեցաւ անոնց հետ՝ և ըսաւ . 12
Ես եմ աշխարհին լոյսը . ան որ իմ ետևէս կուգայ՝
մութի մէջ չի՛ քալեր . հապա կենաց լոյսը կառնէ ։
Փարիսեցիները ըսին իրեն . Դուն քու անձիդ վա- 13

մար կըվկայեսկոր , և քու վկայութիւնդ ճշմարիտ
14 չէ ։ Պատասխան տուաւ Յիսուս՝ և ըսաւ անոնց .
Թէպէտ ես իմ անձիս համար վկայեմ , բայց իմ
վկայութիւնս ճշմարիտ է . ինչու որ գիտեմ ուր
կից ելայ , և ուր կերթամ . բայց դուք չէք գի-
15 տեր , ուրկից կուգամ՝ կամ ուր կերթամ ։ Դուք
մարմինին նայելով դատաստան կընէք . ես չեմ
16 դատեր՝ ոչ մէկն ալ ։ Եւ թէպէտ որ մէկն ալ դա-
տելու ըլլամ , իմ դատաստանս ճշմարիտ է . ինչու
որ ես միեսակ չեմ . հապա ես՝ և Ի՛ հետս Հայրը ,
17 որ իս խրկեց ։ Ու ձեր օրէնքին մէջն ալ գրված է ,
թէ Երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է ։
18 Ես եմ որ ինծի համար կըվկայեմ , ու կըվկայէ
19 ինծի համար Հայրը՝ որ իս խրկեց ։ Ըսին իրեն ,
Ո՞ւր է քու Հայրդ . պատասխան տուաւ Յիսուս՝
և ըսաւ անոնց . Ո՛չ իս գիտէք՝ և ոչ իմ Հայրս .
թէ որ իս գիտնայիք , ըլլայ թէ իմ Հայրս ալ
կըգիտնայիք ։
20 Այս խօսքը խօսեցաւ գանձատունին մէջ , երբոր
հոն տաճարին մէջ կըսորվեցուներկոր . ու մէկը
չէ բռնեց զինքը , ինչու որ՝ դեռ իր ատենը չէր
հասած ։
21 Յիսուս նորէն ըսաւ անոնց . Ես կերթամ՝ ու
իս պիտի փնտռուէք . և ձեր մեղքերուն մէջ պիտի
մեռնիք . ինչու որ՝ ուր որ ես կերթամ նէ , դուք
22 չէք կրնար գալ ։ Հրեաները կըսէին , Ինքըզին-
քը պիտի մեռցունէ , որ կըսէ թէ Ուր որ ես կեր-
23 թամ նէ , դուք չէք կրնար գալ ։ Եւ ըսաւ ա-
նոնց . Դուք ասկից վարէն էք , ու ես անկից վե-
րէն եմ . դուք աս աշխարհէս էք , ես չեմ աս աշ-
24 խարհէս ։ Ասոր ձեզի ըսի , թէ Ձեր մեղքերուն
մէջը պիտի մեռնիք . ինչու որ եթէ չի հաւատաք թէ
25 ես եմ , ձեր մեղքերուն մէջը պիտի մեռնիք ։ Ը-
սին իրեն , Դուն ո՞վ ես . ըսաւ անոնց Յիսուս ,
26 Ինչ առջինը՝ որ ես կըխօսիմկոր ձեզի հետ ։ Հա-
րան ունիմ ձեր վրայ խօսելու՝ և դատելու . բայց

ան որ իս խրկեց՝ ճշմարիտ է . ես ալ՝ ան բաներ որ
իրմէն լսեցի , անոնիկ կը խօսիմ աշխարհիս մէջ ։
Եւ անոնք չիմացան որ Հօրը համար կըզրուցեր 27
իրենց ։

Ուստի ըսաւ Յիսուս անոնց . Երբոր Որդին 28
մարդոյ կըբարձրացունէք , անատեն պիտի գիտ-
նաք որ ես եմ , ու որ ինքիրմէս բան մը չեմ ը-
ներ . հապա իմ Հայրս ինծի իս սորվեցուց , ան
կը խօսիմ ։ Եւ ան որ իս խրկեց՝ ինծի հետ է , իս 29
մինակ թող չի տուաւ . ինչու որ ես միշտ անոր
ուզածը կընեմ ։

Երբոր ասիկա խօսեցաւ , շատերը իրեն հաւ- 30
ատցին ։ Եւ կըսէր Յիսուս հաւատացող Հրեանե- 31
բուն . թէ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք նէ իմ
ճշմարիտ աշակերտներս էք . և ճշմարտութիւնը 32
պիտի գիտնաք , և ան ճշմարտութիւնը ձեզ պիտի
ազատէ ։ Պատասխան տուին իրեն և ըսին . 33
Մենք Աբրահամին զաւակներն ենք , ու ամենե-
ւին մէկու մը չի ծառայեցինք . ինչո՞ւ կըսես թէ ա-
զատ պիտի ըլլաք ։ Յիսուս պատասխան տուաւ 34
անոնց և ըսաւ . Ճշմարիտ ճշմարիտ կըսեմ ձեզի ,
թէ Հրէն ով որ մեղք կըգործէ՝ անիկա մեղքի
ծառայ է ։ Եւ ծառան տունին մէջ յաւիտեան չի 35
մնար , բայց որդին յաւիտեան կըմնայ ։ Ուստի 36
թէ որ Որդին ձեզ ազատ ընէ , ալ իրաւ ազատ
կըլլաք ։ Գիտեմ որ Աբրահամի զաւակ էք , 37
բայց իս մեռցընել կուզէք . ինչու որ՝ իմ խօսքս
ձեր նեարսի դին տեղ չունի ։ Ես ինչ որ տեսայ 38
Հօրըս քովը՝ կըզրուցեմ . և դուք ձեր հօրմէն
ինչ որ լսեցիք նէ կընէք ։ Պատասխան տուին ի- 39
րեն և ըսին . Մեր հայրը Աբրահամն է . ըսաւ
անոնց Յիսուս . Թէ որ Աբրահամի որդիքը ը-
լայիք , Աբրահամի գործքերը կըգործէիք ։ Հայց 40
հիմայ կուզէք դուք որ իս սպաննէք , մարդ
մը որ ձեզի ճշմարտութիւնն իս խօսեցայ , ան
որ իմ Հօրմէս լսեցի . Աբրահամ այս բանը չը-

41 բաւ : Ոտք ձեր Տօրը գործքը կընէք · ըսին իրեն ,
Մենք պոռնկութենէ չենք ծնած . մենք մէկ
42 Հայր մը ունինք Աստուած : Յիսուս ըսաւ
անոնց · Եթէ որ Աստուած էր ձեր Հայրը , կըսի-
րէիք իս · ինչու որ ես Աստուծմէ ելայ ու եկայ ,
և չէ թէ ինքիրմէս եկայ · Հապա անիկա իս ըղր-
43 կեց : Ինչու դուք իմ խօսքերս չէք հասկընար ·
անոր համար որ չէք կրնար իմ բանըս մտիկ ընել :
44 Ոտք ձեր Տօրմէն Սատանայէն էք , ու ձեր Տօրը
բաղձանքը կու գէք ընել · որ ինքը սկիզբէն հետ
մարդասպան էր , և ճշմարտութեան մէջ չի կե-
ցաւ , ինչու որ՝ անոր նեբսի դին ճշմարտութիւն
չի կայ · երբոր անիկա սուտ մը կըխօսի , բուն ի-
րենովրէն կըխօսի · պատճառն որ ինքը սուտ է՝ և
45 անոր Հայրը : Ասոր ես որ ճշմարտութիւն կրխօ-
46 սիմ , ինծի չէք հաւատար : Ձեզմէն ով կրնայ իս
յանդիմանել մեղքի համար · Եթէ որ ճշմարիտը
47 կըխօսիմ ձեզի , ինչու ինծի չէք հաւատար : Ան
որ Աստուծմէն է՝ Աստուծոյ խօսքերը մտիկ կընէ ·
և դուք անոր համար մտիկ չէք ըներ , որ Աստուծ-
48 մէ չէք : Պատասխան տըվին Հրէանները՝ և ըսին
իրեն · Աղեկ չենք ըսեր մենք , որ դուն Սամա-
49 րացի ես՝ ու դև կայ քու նեբսրդ : Յիսուս պա-
տասխան տըւաւ և ըսաւ · Իմ նեբսրս դև չի կայ ·
հապա ես իմ Հայրս կըպատուեմ , և դուք իս կը-
50 նախատէք : Ես իմ փառքս չեմ փնտրեր · կայ
51 մէկը՝ որ կըփնտրէ , ու դատաստան կընէ : Ամէն-
ճարիտ ճշմարիտ կըսեմ ձեզի · Եթէ որ մէկը իմ
խօսքս պահէ , յաւիտեան մահ չի պիտի տեսնայ :
52 Հրէանները իրեն ըսին · Հիմայ հասկըցանք՝ որ
քու նեբսդ դև կայ · Աբրահամ մեռաւ՝ ու մար-
գարէները · և դուն կըսես՝ Եթէ որ մէկը իմ խօս-
քըս պահէ , յաւիտեան մեռնելու համը չի պիտի
53 տեսնէ : Դուն մէկ մեծ մըն ես մեր Հայր Աբրա-
համէն՝ որ մեռաւ , ու մարգարէները մեռան · ալ
54 դուն քեզ ո՞վ կընես կոր : Յիսուս պատասխան

տըւաւ , ԹԱԽ որ ես ինքզինքըս փառաւորեմ , իմ
փառքս բան մը չէ · Ի՞ՍՈՒՍ Է՛ որ իս կըփառաւո-
րէ , որուն Համար որ դուք կըսէք ԹԷ Ա՛ՍՈՒՍ Ա՛ս-
տուածն է · և անիկա չէք ճանչնար , բայց ես գի- 55
տեմ անիկա · ու ԹԷ որ ըսեմ՝ ԹԷ Ա՛նիկա չեմ գի-
տեր , ձեզի պէս սուտ կըլլամ · Հապա ես գիտեմ
անիկա , և անոր խօսքը կըպահեմ : Ձեր Հայրա- 56
Համ Հայրը կարօտ քաշեց իմ օրըս տեսնելու ,
տեսաւ և ուրախացաւ : Հրէաները ըսին իրեն · 57
Դուն տակաւին Յիսուն տարու չես կաս , Հրէա-
Հա՞մն ալ մի տեսար : Յիսուս ըսաւ անոնց · 58
Ա՛ՄԷՆԱՐԻՒ ՃՇմարիտ կըսեմ ձեզի · Հրէայհամին
ըլլալէն առաջ եմ ես : Վ՚ԱՌԱՐԵՐ վերուցին որ ա- 59
նոր վրայ ձրգեն · բայց Յիսուս պահվըռեցաւ , ու
ելաւ գնաց տաճարէն :

Գ Լ Ո Ւ Խ ։

Եւ երբոր կանցնէրկոր՝ մէկ մարդ մը տեսաւ 1
կոյր ծընած · և իր աշակերտները Հարցուցին 2
իրեն՝ ու ըսին · Վ՚ԱՌԱՐԻ՝ որուն է մեղքը , ասոր՝
Թէ իր Հօրը ու մօրը , որ կոյր ծընի : Պատասխան 3
տըւաւ Յիսուս · Ո՛չ ասորն է մեղքը , ո՛չ ալ իր
Հօրը ու մօրը · Հապա որ Աստուծոյ գործերը ասոր
վրայ յայտնի ըլլայ : Եւ ինծի պէտք է որ իս երբ- 4
կողին գործը գործեմ , քանի որ ցորեկ է · գիշերը
կուգայ , որ անատնը մէկը չի կրնար գործել :
Վ՚ԱՌԱՆ որ աշխարհի մէջն եմ , աշխարհի լոյսն 5
եմ : Երբոր ասը ըսաւ , Թուքաւ գետինը՝ և Թու- 6
քովը կաւ շինեց , ու ան կաւը կոյրին աչքերուն
վրայ ծեփեց : Եւ ըսաւ անոր · Կնա՝ լուա Սիլոամ
մի աւազանին մէջը ,(որ Խրկըված կըԹարգմանվի.)
գնաց լըւացվեցաւ , եկաւ ու կըտեսնար : Ուստի 8
գրացիները՝ և անոնք որ առաջուց անիկա տեսած
էին որ մուրացկանութիւն կընէր , կըսէին · Ասիկա չէը մի որ կընստէր և կմուրար · Կ՚ԵՍԷՐՆԻՆ
կըսէին՝ Ինիկա է : Ուրիշները կըսէին՝ Չէ · Հա- 9

պա՝ անոր նման չէին է . և ինքը կըսէր , Թէ Ես
10եմ : Ըսին իրեն . Հապա ինծի՛ քու աչ վրիներդ
11բացվեցան : Ինչը պատասխան տուաւ . Ա՛հկ մարդ մի՛ որ անոր Հիսուս կըսեն , կաւ շինեց ու ծեփեց աչ քերըս , և բսաւ ինծի՛ Գնա՛ Սելոամ
12ու լուա . գացի լըւացի՛ և կրտեսնամկոր : Ըսին իրեն . Ո՞ւր է անիկա . ըսաւ անոնց , Չեմ՝ դիտեր :
13 Փարիսեցիներուն տարին անիկա՝ որ առեջով
14կոյր էր : Եւ շաբաթի օր էր՝ երբոր Հիսուս կաւը
15շինեց , ու կոյրին աչ քերը բացաւ : Ետրէն փարիսեցիներն ալ կըհարցունէին իրեն , Թէ Ինտո՛ր կրտեսնաս . անիկա ալ ըսաւ անոնց . Կաւ դրաւ
16աչ քերուս վրայ , ու լըւացի՛ և կրտեսնամ : Փարիսեցիներէն ոմանք ըսին . Ա՛ն մարդը Աստուծմէ չէ . ինչու որ շաբաթի օրերը չի պահեր . Ուրիշներն կըսէին , Հապա ինտո՛ր կրնայ մեղաւոր մարդ այսպէս հրաշքներ ընել . և սոսկ մէջերնին երկ-
17պառակտեցին կար : Ետրէն ըսին կոյրին . Դուն ի՛նչ կըսես անոր համար՝ որ քու աչ վրիներդ բա-
18ցաւ . ան ալ ըսաւ , Թէ Մարգարէ մըն է : Եւ չէին հաւատար Հրեաները անոր համար՝ որ կոյր էր ու բացվեցաւ , մինչև որ ան աչ քերը բացվածին
19ծնողքը կանչեցին : Հարցուցին անոնց և ըսին , Ա՞ս է ձեր որդին , որուն համար դուք կրսէիք Թէ կոյր ծնաւ . Հապա հիմայ ինտո՛ր կրտեսնակոր :
20Պատասխան արին իրեն ծնողքները և ըսին . Գիտենք որ ասիկա է մեր որդին , և որ ինքը կոյր
21ծնաւ . բայց հիմայ ինտո՛ր կրտեսնակոր՝ չենք գիտեր , կամ Թէ ո՛վ բացաւ աչքը , մենք չենք գիտեր . ասոր չարցուցէք , ինքը չափահաս
22է . Թող ինքը խօսի իրեն համար : Ա՛ս ըսին անոր ծնողքը՝ որովհետև կրվախնային Հրեաներէն . ինչու որ Հրեաները ուխտ բրած էին , Թէ որ մէկը անիկա Քրիստոս դաւանի՝ ժողովարանէն պիտի
23կրսբս ըլլայ : Ասոր համար անոր ծնողքը ըսին ,

Թէ Ինքը չափահաս է, իրեն հարցուցէք ։ Ինքը 24
իրեն հետմէ կանչեցին ան մարդը որ կոյր էր, ու
ըսին իրեն ։ Աստուծոյ փառք տուր. մենք գիտենք
որ ան մարդը մեղաւոր է ։ Անիկա ալ ըսաւ. Թէ 25
որ մեղաւոր է ես չեմ գիտեր, միայն աս գիտեմ
որ կոյր էի, և հիմայ կը տեսնամ։ Ուրեք ըսին 26
իրեն, Ինչ ըրաւ քեզի. ինչպէս քու աչքերդ
բացաւ ։ Պատասխան տուաւ անոնց, Հիմայ ըսի 27
ձեզի ու չի լսեցիք. ինչո՞ւ համար նորէն լսել կու-
գէք. դուք ալ մի կուգէք անոր աշակերտ ըլլալ ։
Անոնք ալ կը հայհոյեին անոր, և կըսէին. Դուն 28
նորա անոր աշակերտ. մենք Մովսէսի աշակերտն
ենք։ Մենք գիտենք՝ որ Աստուած Մովսէսին 29
հետ խօսեցաւ. ասիկա չենք գիտեր ուսկից է ։
Պատասխան տուաւ մարդը՝ և ըսաւ անոնց. Ասի- 30
կա է զարմանալու բանը՝ որ դուք չէք գիտերկոր
ուսկից է. և ան իմ աչքերըս բացաւ ։ Գիտենք 31
որ Աստուած մեղաւորներուն մտիկ չըներ, բայց
թէ որ աստուածապաշտ մարդ ըլլայ, ու իրեն
կամքը կատարէ նէ՝ անոր մտիկ կընէ ։ Դարձեալ 32
Հետէ ի կէս լսած չէ՝ թէ մէկ մարդ մը ծնեալ կոյր
ծնածի մը աչքերը բացաւ ։ Եթէ որ Աստուծմէ 33
չըլլար ան մարդը՝ բան մը չէր կրնար ընել ։ Պա- 34
տասխան տուին և ըսին իրեն. Ամբողջովին մեղքի
մէջ ծընած ես, ու մեզի վարդապետ կըլլաս կոր,
և դուրս ըրին անիկա ։

Յիսուս լսեց որ Ինքը դուրս ըրին, ու երբոր 35
գտաւ անիկա՝ ըսաւ անոր. Դուն կը հաւատա՞ Ա-
ստուծոյ Որդիին ։ Անիկա պատասխան տուաւ՝ և 36
ըսաւ, Տէր՝ ո՞վ է որ հաւատամ անոր ։ Յիսուս 37
ըսաւ անոր. Տեսար ալ անիկա, և ան որ քեզի
հետ կը խօսի կոր՝ անիկա է ։ Ան ալ ըսաւ. Կը 38
հաւատամ Տէր, և իրեն երկրպագութիւն ըրաւ ։
Եւ ըսաւ Յիսուս. Ես դատաստան ընելու եկայ 39
աս աշխարհս, որ անոնք որ չեն տեսնար՝ տես-
նան, և անոնք որ կրտեսանան՝ կուրնան ։

40 Իր հետը եղող փարիսեցիներէն ոմանք լսեցին ,
41 ու ըսին իրեն . Ա՞ինք ալ մի կոյր ենք : Յիսուս
ըսաւ անոնց . Թէ որ կոյր ըլլայիք՝ դուք մեղք չէ-
իք ունենար . բայց հիմա կ՚ըսէք որ կը տեսնանք .
ուստի ձեր մեղքերը ձեր ներսի դին հաստատուած
ի կ է : Ն՚շմարիտ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի . Ան որ
դուռնէն չի մտներ ոչխարներուն բակը , հապա
ուրիշ տեղէն կելլայ՝ անիկա գող ու աւազակ է :
2 Բայց ան որ դուռնէն կը մտնայ՝ անիկա ոչխարնե-
3 րուն հովիւն է : Անոր դռնապանը կը բանայ , և
ոչխարները իր ձայնին կ՚ունկնդրեն , ու իր ոչխարները
4 անունովը կը կանչէ և դուրս կը հանէ անոնք : Եւ
երբոր բոլոր իրենները կը հանէ՝ անոնց առջևէն
կ՚երթայ , ու ոչխարները իր ետևէն կ՚երթան . ին-
5 չու որ՝ անոր ձայնը կը ճանչնան : Օտարին ետև-
էն չեն երթար . հապա անկէց կ՚փախչին . ինչու
որ՝ օտարներուն ձայնը չեն ճանչնար :
6 Յիսուս ասո առակը անոնց ըսաւ , բայց անոնք
չէին խմնար՝ թէ ինչ էր որ իրենց հետը կը խօ-
7 սէր : Ուրեմն Յիսուս ըսաւ անոնց . Ն՚շմարիտ
ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , որ՝ Ես եմ ոչխարներուն
8 դուռը : Ին ամէնը որ ինծմէ առաջ եկան , գող
ու աւազակ էին . բայց անոնց չի լսեցին ոչխարնե-
9 րը : Ես եմ դուռը . ինծմէն թէ որ մէկը ներս մտ-
նայ նէ՝ կապրի , կը մտնայ ու կելլայ , և արօտ կը գտնայ :
10 Գողը չի գար , միայն թէ գողնալու և
սպանելու ու կորսնցնելու համար . ես եկայ
11 որ կեանք ունենան , և ալ աւելցը ունենան : Ես
եմ աղէկ հովիւը . աղէկ հովիւը իր կեանքը ոչխար-
12 ներուն համար կը դնէ : Բայց վարձկանը՝ որ հովիւ
չէ , որ ոչխարները իրենը չեն , երբոր կը տեսնայ
գայլը՝ որ կուգայ , կը թողու ոչխարները և կը փախ-
չի . գայլն ալ կ՚յափշտակէ անոնք՝ ու կը ցրուէ :
13 Ինչու որ՝ ինքը վարձկան է , և իր հոգը չ՚ունի ոչխար-
14 ներուն համար : Ես եմ աղէկ հովիւը , ու կը-
ճանչնամ իմիններս , և կը ճանչցուիմ իմիններէս :

Ինչպէս որ Հայրը գիտէ իս , ես ալ Հայ- 15
րը գիտեմ , ու իմ կեանքս ոչխարներուն վրայ
կը դնեմ ։ Եւ ուրիշ ոչխարներ ալ ունիմ ես , 16
որոնք աս բակէն չեն . անոնք ալ պէտք է բնծի որ
ձայնս լսեն , ու իմ ձայնիս պիտի լսեն , և պիտի
ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ ։ Ինծի համար իմ 17
Հայրս իս կը սիրէ , որ ես իմ կեանքս կը դնեմ որ
նորէն առնեմ անիկա ։ Մարդ չի հաներ անիկա 18
ինծմէն . հապա ես կը դնեմ անիկա ինքիրմէս . իշ-
խանութիւն ունիմ անիկա դնելու , և իշխանու-
թիւն ունիմ անիկա նորէն առնելու . աս պատ-
ուէրը իմ Հօրմէս առի ։

Նորէն երկպառակութիւն կըլլար Հրէաներուն 19
մէջը աս խօսքերուն համար ։ Եւ անոնցմէ շատերը 20
կ՚ըսէին , Դեւ կայ ատոր մէջը՝ ու խելագած է , ալ
ինչո՞ւ ատոր մտիկ կընէք ։ Ուրիշներն կ՚ըսէին . Չ- 21
սանկ խօսքերը դիւահարի չեն . դեւը կրնա՞յ մի կոյ-
րին աչքերը բանալ ։

Նշանները Երուսաղէմ նաւակատիքի տօները և- 22
դաւ , ու ձմեռ էր ։ Եւ Յիսուս կը պըտըտէր տա- 23
ճարին մէջ Սողոմոնին բակը ։

Հրէաները իրեն չորս կողմ առին և ըսին . 24
Մինչև երբ հոգինիս պիտի հանես , թէ որ Քրի-
ստոսը դուն ես՝ մեզի համարձակ ըսէ ։ Յի- 25
սուս պատասխան տուաւ անոնց՝ և ըսաւ . Ձեզի
ըսի ու ինծի չէք հաւատար . ան գործերը՝ որ ես
իմ Հօրս անունովը կը դործեմ , անոնք կը վկայեն
ինծի համար ։ Բայց դուք չէք հաւատար . ինչու որ 26
ան իմ ոչխարներէս չէք ։ Իմ ոչխարներըս իմին 27
ձայնս կը լսեն , ես ալ անոնք կը ճանչնամ , և իմ
ետևէս կուգան . ու ես ալ անոնց յաւիտենական 28
կեանքը կուտամ , որ յաւիտեան չի պիտի կոր-
սուին , և մէկը անոնք իմ ձեռքէս չի պիտի կը-
նայ խլել ։ Իմ Հայրս որ անոնք ինծի տուաւ , 29
ամենեն մեծ է , և մէկը չի կրնար իմ Հօրս ձեռ-
քէն խլել ։ Ես ու իմ Հայրս մէկ ենք ։ 30

31 Հրէանները քարեր վերցուին , որ անիկա քար-
32 կոծեն : Յիսուս պատասխան տուաւ անոնց .
Շատ բարի գործեր ցուցուցի ձեզի իմ Հօրմէս , անոնցմէ որ գործքին համար իս կրքարկո-
33 ծէք : Հրէաները պատասխան տուին իրեն , Քա-
րի գործքի համար քեզ չենք քարկոծեր , հապա հայհոյութեանդ համար , որ դուն մարդ ես , և
34 ինքզինքդ Աստուած կրնես : Յիսուս պատաս-
խան տուաւ անոնց . Չէ՞ որ ձեր օրէնքին մէջը
35 գրված է . Ես ըսի որ դուք աստուածներ էք . բայց
թէ որ անոնք աստուածներ կրսէ , որոնց վրայ որ
Աստուծոյ խօսքը եկաւ . (ու կարելի չէ՝ որ ան
36 գրվածք ամբիծ) չապա անիկա որ Հայրը սրբեց՝ և
աշխարհ խրկեց , դուք անոր կրսէք թէ հայհոյու-
թիւն կընես՝ Աստուծոյ Որդի եմ ըսելուս համար :
37 Եթէ որ իմ Հօրս գործքերը չեմ գործեր՝ ինծի
38 մի՛ հաւատար : Հապա թէ կը գործեմ՝ թէ որ ինծի
ալ չէք հաւատար , գոնէ գործքերուս հաւատացէք ,
որ գիտնաք ու ճանչնաք՝ թէ Հայրը իմ մէջս է ,
և ես Հօրս մէջ :
39 Նորէն կուզէին զինքը բռնել , և անոնց ձեռքէն
40 ելաւ : Ու նորէն գնաց Յորդանանի մէկալ կողմը՝
ան տեղը , ուր որ Յովհաննէս առաջուց կրկնար
41 ու կմկրտէր , հոն կեցաւ : Շատերը եկան իրեն՝
42 և ըսին , որ Յովհաննէս մէկ հրաշք մը չըրաւ : Հայց
ինչ որ Յովհաննէս բսաւ իրեն համար՝ ամէնը ճըշ-
մարիտ էր . և շատերը հոն իրեն հաւատացին :

ԳԼ՛ · ԺԱ՛ :

1 Ա՛ղ Ղազարոս անուանուած մէկ հիւանդ մը կար
Բեթանիայի մէջ՝ Մարիամին և անոր քրոջը
2 Մարթային գեղէն : Այսիկա ան Մարիամն էր ,
որ Տէրը եղով օծեց , ու անոր ոտքերը իր մազե-
րովը սրբեց , որ իր եղբայրը Ղազարոս հիւանդ
3 էր : Մարդ խրկեցին անոր իր քոյրերը՝ և ըսին .
Տէր՝ ահա անիկա որ դուն կըսիրէիր , հիւանդ է :

Յիսուս երբոր լսեց՝ ըսաւ . Այն մեռնելու հիւանդութիւնը չէ , հապա Աստուծոյ փառքին համար , որ Աստուծոյ Որդին անով փառաւորի ։ Ու Յիսուս կը սիրէր Մարթան և անոր քոյրը Մարիամը և Ղազարը ։ Երբոր լսեց թէ հիւանդ է , ուր տեղ էր նէ երկու օր ալ հոն կեցաւ ։ Եւ անկէ ետքը ըսաւ անոնց . Եկէք նորէն Հրէաստան երթանք ։ Աշակերտները իրեն ըսին , Վարդի Հրէաները հիմայ քեզ կը քարկոծելու , և նորէն հո՞ն կերթաս ։ Պատասխան տուաւ Յիսուս . Չէ որ օրը տասներկու ժամէ թէ որ մէկը ցորեկը քալէ նէ չի մոլորիր . ինչու որ աս աշխարհիս լոյսը կը տեսնայ . բայց թէ որ մէկը գիշերը քալէ նէ կը մոլորի . ինչու որ իր հետ լոյս չունի ։ Ա՛ս որ ըսաւ՝ անկէ ետքը ըսաւ անոնց . Ղազարոս մեր բարեկամը քնացաւ . բայց երթամ որ անկից արթընցնեմ ։ Աշակերտները ըսին իրեն . Տէր՝ թէ որ քնացաւ՝ անանկ է նէ կապրի ։ Բայց Յիսուս անոր մեռնելուն համար կըսէր . իրենց անանկ կերեւար՝ թէ քունը քնանալուն համար կըսէր ։ Ատոնք Յիսուս յայտնի ըսաւ անոնց . Ղազարոս մեռաւ ։ Ես ուրախ եմ ձեղի համար՝ որ հոն չէի , որ դուք հաւատաք . բայց հիմայ եկէք երթանք անոր ։ Թոմմաս՝ որ երկուորեակ կըսուի , ըսաւ իր աշակերտակիցներուն . Եկէք մենք ալ երթանք՝ որ իր հետ մեռնինք ։

Յիսուս եկաւ՝ անիկա չորս օրուան գերեզմանը դրած գտաւ ։ Ու Բեթանիա Երուսաղէմին մօտ էր՝ տասնեհինգ ստատիէզի չափ ։ Հրէաներէն շատերը Մարթային և Մարիամին եկած էին որ մխիթարեն անոնք իրենց եղբօրը համար ։ Մարթա երբոր լսեց թէ Յիսուս կուգայ՝ ելաւ անոր դիմաց գնաց . բայց Մարիամ հոն տունը մէջ նստած էր ։ Մարթան ըսաւ Յիսուսին , Տէր՝ թէ որ հոս եղած ըլլայիր՝ իմ եղբայրս չէր մեռնիր . բայց գիտեմ որ հիմայ ալ ինչ որ խնդրես

23 Նէ Յատուածմէ Յատուած կուտայ քեզի : Յիսուս
ըսաւ իրեն . Պէտք եղբայրդ յարութիւն պիտի
24 առնէ : Մարթա ըսաւ իրեն . Գիտեմ որ պիտի
25 յարութիւն առնէ յարութեան վերջին օրը : Յի-
սուս ըսաւ իրեն , Ես եմ յարութիւն և կեանք .
ան որ ինծի կը հաւատայ՝ թէ որ մեռնի ալ նէ կապ-
26 րի . և ան ամէնը որ կենդանի է ու ինծի կը հաւա-
տայ՝ յաւիտեան չի պիտի մեռնի . դուն կը հաւատա՞ս
27 մի ասոր : Ան ըսաւ իրեն , Այո՛ Տէր . ես հաւատացի՛
որ դուն ես Քրիստոս Յատուածոյ Որդին , որ աշ-
28 խարհ գալու էր : Եւ երբոր ասը ըսաւ՝ գնաց իր
Մարիամ քոյրը գաղտուկ մը կանչեց և ըսաւ .
29 Վարդապետը եկեր է ու քեզ կը կանչէ : Նիկա
30 լսածին պէս շուտ մը եղաւ ու եկաւ անոր : Յիսուս
դեռ չէր եկեր գեղը հասած չէր . հապա ան տեղն էր ,
31 ուր որ Մարթան իր դէմը եղաւ : Հայց Հրէանե-
րը որ իր հետը հոն տանը մէջն էին ու կը մխիթարէին
անիկա , երբոր տեսան որ Մարիամ շուտով
մը եղաւ և գնաց՝ անոնք ալ անոր ետևէն գացին ,
կը կարծէին թէ գերեզմանը կերթայ՝ որ հոն տեղը
32 լայ : Հայց Մարիամ երբոր Յիսուսի եղած տե-
ղը եկաւ՝ ու զինքը տեսաւ , անոր ոտքը ինկաւ և
ըսաւ . Տէր՛ թէ որ հոս եղած ըլլայիր , իմ եղ-
33 բայրս չէր մեռներ : Յիսուս երբոր տեսաւ անիկա՝
որ կուլար , և իր հետը եղող Հրէաները՝ որ կու-
լային , իր սրտին մէջ տանկնուվայց եղաւ վշտացա-
34 ծի մը պէս . և ըսաւ . Ո՞ր դրիք անիկա . ըսին ի-
35 րեն , Տէր՛ եկո՛ր ու տես : Եւ Յիսուս լացաւ :
36 Հրէաները կըսէին . Տեսէ՛ք՝ որքան կը սիրէր և-
37 ղեր անիկա : Ոմանցմէ կէսերնին կըսէին . Կարիկա
որ կոյրին աչքը բացաւ՝ ինքը չէր կրնար ընել՝ որ
38 ան ալ չի մեռնէր : Յիսուս նորէն իր սրտին մէջը
վշտացած՝ գերեզմանը կուգայ . ու հոն մէկ քա-
րայր մը կար , և անոր վրայ մեծ քար մը դրած :
39 Ե՛ ըսաւ Յիսուս . Վերկ դի՛ր քարը . Մե-
ռելին քոյրը Մարթան ըսաւ իրեն . Տէր՛ հիմայ

հոտած է , ինչու որ չորս օրական է ։ Քսաս անոր 40
Յիսուս , Վեղի չըսի՞ ձեզ թէ որ հաւատաս նէ ,
Աստուծոյ փառքը պիտի տեսնաս ։ Ու երբոր վեր 41
առին քարը՝ Յիսուս իր աչքերը վեր վերցուց և
ըսաւ . Հայր՝ շնորհակալ եմ քեզմէ , որ ինծի
լսեցիր ։ Ու ես ալ գիտէի որ ամէն առեն ինծի կը- 42
լսես , բայց ասոր չորս դիս կայնող ժողովուրդին հա-
մար կըսեմ , որ հաւատան թէ դուն խրկեցիր իս ։
Երբոր ասոնք ըսաւ՝ մեծ ձայնով մը կանչեց և ըսաւ . 43
Ղազարոս՝ ելիր դուրս եկոր ։ Ան ալ եկաւ 44
կապած ոտքերովը ու լաթերով փաթթած ձեռ-
քերովը և կտաւէ պատած երեսովը , ու Յիսուս
ըսաւ անոնց . Արձակեցէք ատիկա՝ և թողէք որ
երթայ ։

Հրէաներէն շատերը՝ որ Մարիամներուն եկեր 45
էին , երբոր Յիսուսի ըրածը տեսան՝ հաւատացին
իրեն ։ Եւ անոնցմէ ոմանք ալ գացին Փարիսեցի- 46
ներուն , ու Յիսուսի ըրածը անոնց պատմեցին ։

Քահանայապետները և Փարիսեցիները մէկ 47
տեղ ժողվեցան՝ ու ըսին , Ի՞նչ ընենք . ինչու
որ ան մարդը շատ հրաշքներ կընէ կոր ։ Եթէ որ 48
անիկա անանկ թող տանք՝ ամէնն ալ անոր կը-
հաւատան , ու Հռոմայեցիները պիտի գան՝ և մեր
ազգն ալ վերցունեն ու տեղն ալ ։ Անոնցմէ մէ- 49
կը Կայիափա անուն՝ որ ան տարիին քահանա-
յապետն էր , ըսաւ անոնց . Դուք բան մը չէք գի-
տեր . և ոմանեակին չէք ալ մըտմտար , որ աղէկ է 50
մեզի՝ թէ մէկ մարդ մը ժողովուրդին համար մեռ-
նի , ու աս բոլոր ազգը չի կորսրվի ։ Ա՛ս բանը չէ 51
թէ ինքիրմէն զուրցեց , հապա ան տարւան քա-
հանայապետը ըլլալով , մարգարէութիւն ըրաւ՝
թէ Յիսուս ազգին համար պիտի մեռնէր . և չէ 52
թէ միայն ազգին համար , հապա որ Աստուծոյ
ցիրուցան եղած զաւակներն ալ մէկտեղ ժողվէ ։

Ա՛ն օրէն ետև խորհուրդ բռնին՝ որ սպանանեն 53
զինքը ։ Եւ Յիսուս անկէ ետքը չէ թէ համարձակ 54

կըպըտըտեր Հրէաներուն մէջը, Հապա անկէց ա-
նապատին մօտ մէկ երկիր մը գնաց, մէկ քաղաք
մը՝ որուն անունը Եփրայիմ կըսէր. և աշակերտ-
ներուն հետ մէկտեղ հոն կըլլար։
55 Ու Հրէաներուն զատիկը մօտ էր. և շատերը
Երուսաղէմ կրան ան գաւառէն զատկէն առաջ,
56 որ իրենց անձերնին մաքրեն։ Կըմտըտէին Յի-
սուսը՝ և մէկզմէկու կըսէին երբոր տաճարին
մէջն էին. Ձեզի ինչպէս կերևայ՝ որ աս ոտնէս
հոս չի՛ գար մի. քահանայապետները ու փարի-
սեցիները պատուէր տըւեր էին՝ որ եթէ մէկը գիտ-
նայ ուր տեղ ըլլալը, թող իմացունէ անոր հա-
մար՝ որ անիկա բռնեն։

ԺԱ. ՅՈՎ։

1 Յայց Յիսուս զատիկէն վեց օր առաջ Յեթա-
նիա եկաւ՝ ուր որ Ղազարը մեռեր էր, որ
2 անիկա մեռելներէն յարուցեր։ Եւ հոն տեղը անոր
խնջոյք մը ըրին. ու Մարթան սպասաւորութիւն
կընէր, և Ղազարը իրեն հետ տեղան նստողնե-
3 րուն մէկն էր։ Յայց Մարիամ մէկ լիտր մը
նարդոսի պատուական մեծագին եղ առաւ, Յի-
սուսի ոտքերը օծեց, ու իր մազերովը անոր ոտքե-
րը կրսրբեր. և տունը եղին հոտովը լեցուեցաւ։
4 Աշակերտներուն մէկը Յուդա Իսկարիովտացին՝
5 որ պիտի մատնէր, ըսաւ. Ընչու համար
աս եղը չի ծախուեցաւ իրեք հարիւր դենարի, որ
6 աղքատներուն տրուէր։ Ա՛ս ըսաւ, չէ թէ աղ-
քատներուն համար իր հոգն էր, Հապա որովհե-
տև գող էր, ու սընտուկը ինքը կրպահէր, և ինչ
7 որ ձրդվէր նէ՛ ինքը կրկրէր։ Յսաւ Յիսուս,
Թող տըվէք տուր, որ աս բանը իմին պատանքէ
8 վերուս օրվանը պահեց։ Աղքատները ամէն տեղ
ձեր հետը ունիք, իս ամէն տեն ձեր հետը չու-
նիք։
9 Երբոր Հրէաներէն շատ ժողովուրդ իմացաւ որ

Հոն է եկան , չէ թէ միւնակ Յիսուսի համար , հապա՛ որ Ղազարն ալ տեսնան · որ անիկա մեռելներէն յարուցած ։ Քահանայապետները խորհուրդ բրին՝ որ Ղազարն ալ մեռցունեն · ինչու որ Հրեաներէն շատերը կերթային ու կը հաւատային Յիսուսին ։

Եաւի օրը շատ ժողովուրդ՝ որ տօնին եկած էին , երբոր լսեցին թէ Յիսուս Երուսաղէմ կուգակոր , արմաւի ծառերու ճիւղեր առին ու ելան անոր դիմացը · կը կանչէ վրան էին և կ՚ըսէին , Վօսաննա՛ օրհնեալ է ան որ կուգայ Տէրոջմով՝ Իսրայէլի թագաւորը , որ Տէրոջը անունովը կուգայ ։ Յիսուս ալ մէկ հատ մը գտնալով՝ անոր վրայ նստաւ , ինչպէս որ գրված է · Մի՛ վախնար Սիօնին աղջիկ · ահա քու կինդ թագաւորդ կուգակոր իշուն քուռակին վրայ նըստած ։ Եւ իր աշակերտները ան բանը չհմացան առջի ըլլալնին · բայց երբոր Յիսուս փառաւորվեցաւ՝ անոնք միտքերնին բերին , թէ ան էր՝ որ գրված էր անոր համար · ու իրենք ան բաները ըրին անոր ։ Եւ իր հետը եղող ժողովուրդը վկայեր էին , որ միւնակ ինքը Ղազարոսը գերեզմանէն դուրս կանչեց , ու մեռելներէն հանեց անիկա ։ Եւ անոր համար ժողովուրդը իրեն դիմացը եկաւ · վասն զի լսեցին թէ անիկա ան հրաշքը բրեր էր ։ Նայց Փարիսեցիները միմեանց կ՚ըսէին , Կը տեսնա՞ք որ օգուտ մը չէք կրնար բրնել · աֆ բոլոր աշխարհ անոր ետևէն գընաց ։

Եւ հոն քանի մը Հեթանոսներ կային տօնին երկրպագութիւն բընելու եկողներուն մէջը ։ Անոնք Փիլիպպոսին եկան , որ ինքը Գալիլեացոց Բեթսայիդային էր , կաղաչէին իրեն և կ՚ըսէին · Տէր՝ Յիսուսը տեսնալ կուզենք ։ Փիլիպպոս կ՚երթայ ու Անդրեասին կ՚ըսէ · Անդրեաս ու Փիլիպպոս Յիսուսին կ՚ըսին ։ Յիսուս ալ պատասխան տուաւ անոնց և ըսաւ , Ատենը հասաւ , որ Որ-

24 դին մարդոյ պիտի փառաւորվի ։ Ո՛շմարիտ ճըշ-
մարիտ կըսեմ՝ ձեզի , թէ որ ցորենին հատը հո-
ղին մէջ ձգված չի մեռնի , ինքը միւսակ կըմնայ ։
25 Հապա թէ որ մեռնի՝ շատ արդիւնք կըբերէ ։ Ան-
որ իր անձը կըսիրէ՝ կըկորսընցունէ անիկա ։ և ան
որ իր անձը աս աշխարհիս մէջ կատէ՝ յաւիտենա-
26 կան կենաց համար կըպահէ անիկա ։ Թէ որ մէկը
ինծի կըծառայէ՝ իմ ետևէս պիտի գայ ։ ու ես ուր
որ եմ՝ նէ , իմ ծառաս հոն պիտի ըլլայ ։ Թէ որ
մէկը ինծի կըծառայէ , իմ Հայրս կըմեծարէ անի-
27 կա ։ Այժմ թէ հիմայ իմ հոգիս տանջուվրայ
եղած է ։ և ես ի՞նչ ըսեմ ։ Թէ Հա՛յր՝ իս խալըսէ
աս ժամին ։ բայց ես ասոր համար եկայ աս ժամին ։
28 Հա՛յր՝ փառաւորէ քու անունդ , անոր պէս ձայն
մը եկաւ երկինքէն ։ Փառաւորեցի ալ , և պիտի
29 փառաւորեմ՝ ալ նորէն ։ Ու ժողովուրդը որ կայ-
նէր ու կըլսեր , կըսէին՝ Որոտում կըլլակոր ։ Կէ-
սերնին ալ կըսէին՝ Թէ Հրեշտակ խօսեցաւ իրեն
30 հետ ։ Յիսուս պատասխան տըւաւ և ըսաւ , Ա-
ձայնը ինծի համար չեկաւ , հապա՝ ձեզի համար ։
31 Հիմայ է աս աշխարհիս դատաստանը ։ հիմայ աս
32 աշխարհիս իշխանը դուրս պիտի ձգվի ։ Ես ալ
երբոր երկիրէն բարձրընամ՝ նէ , ամէնն ալ ինծի-
33 պիտի քաշեմ ։ Ա՛ս բանս կըզուրցէր իմացունելով՝
34 Թէ ինչ կերպ մեռնիլ պիտի մեռնի ։ Ժողովուրդը
իրեն պատասխան տըւաւ , Մենք օրէնքէն լսեցինք
որ՝ Քրիստոսը յաւիտեան կըմնայ , և դուն ին-
տո՞ր կըսես՝ Թէ պէտք է որ Որդին մարդոյ բարձ-
35 րընայ ։ ո՞վ է ան Որդին մարդոյ ։ Յիսուս անոնց
ըսաւ , Քիչ մը ատեն ալ լոյսը ձեր հետն է ։
գացէք քանի որ լոյսը ունիք , որ չըլլայ Թէ մութը
վրաննիդ հասնի ։ ինչու որ մութին գացողը չի գի-
36 տեր ուր կերթայ ։ Քանի որ լոյսը ձեր հետը ու-
նիք , հաւատացէք ան լոյսին՝ որ լուսոյ որդիքը
ըլլաք ։ աս զուրցեց Յիսուս , և գնաց պահվեցաւ
անոնցմէ ։

Եւ ԸՀԿՀՔ այնքան հրաշքներ ըրած էր անոնց 37
առջեւը , բայց անոնք չէին հաւատար իրեն · որ Ե- 38
սայի մարգարէին խօսքը կատարվի , որ ըսաւ ·
Տէր՝ մեզմէ լսածին ո՞վ հաւատաց , ու Տէրոջը թեւը
որո՞ յայտնվեցաւ ։ Ընոր համար չէին կրնար 39
հաւատալ , որ կրկին անգամ կրսե Եսայի · Թէ՝ 40
Ընոնց աչ վրնները կուրցուց , և անոնց սիրտերնին
թմրեցուց , որ աչքովին չի տեսնան՝ ու սիր-
տովնին չիմանան , և դառնան , ու ես անոնք բր-
ժշկեմ ։ Ա՛ս բաները Եսային ըսաւ՝ երբոր անոր 41
փառքը տեսաւ և անոր վրայ խօսեցաւ ։ Այսու 42
ամենայնիւ իշխաններէն շատերը իրեն հաւատացին ·
բայց փարիսեցիներուն համար չէին յայտներ , որ
ժողովարանէն դուրս չվրնան · ինչու որ՝ մարդոց 43
փառքը Աստուծոյ փառքէն աւելի սիրեցին ։

Բայց Յիսուս կրկանչէր և կրսէր , Ան որ ինծի 44
կրհաւատայ՝ ինծի չի հաւատար , հապա անոր՝ որ իս
խրկեց ։ Եւ ան որ իս կրտեսնայ , կրտեսնայ ան՝ 45
որ իս խրկեց ։ Ես աշխարհիս լոյս եկայ , որ ամեն 46
ով որ ինծի կրհաւատայ՝ մութին մէջ չի մնայ ։ Եւ- 47
թէ որ մէկը իմ խօսքերս լսէ ու չի պահէ , ես ա-
նիկա չեմ դատեր · ինչու որ ես չեկայ որ աշխար-
հը դատեմ , հապա որ աշխարհը խնայեմ ։ Ան 48
որ իս կանարգէ և իմ խօսքերս չընդունիր , կայ
անիկա դատող · ան խօսքը՝ որ ես խօսեցայ , ան
կրդատէ զինքը նոքի օրը ։ Ինչու որ ես ինքիմքէս 49
չի խօսեցայ · հապա Հայրը՝ որ իս խրկեց , անիկա
ինծի ապրսպրդեց ինչ որ պիտի ըսեմ՝ և ինչ որ
պիտի խօսիմ ։ Եւ գիտեմ՝ որ ան էր ապրսպրդա- 50
ծը յաւիտենական կեանք է · ուստի ինչ որ ես
կրխօսիմ՝ ինոր որ Հայրը ինծի ըսաւ , անանկ
կրխօսիմ ։

ԻԳ · ԺԳ ։

Օ ատիկի ասնէն առաջ՝ Յիսուս գիտցաւ որ իր 1
Ժամանակը հասեր է որ աս աշխարհէս պիտի

ելլայ Հօրը քովը, իրենները որ աշխարհի մէջ
էին՝ սիրեց, մինչև ետքն ալ սիրեց անոնք։
2 Եւ ընթրիքը որ կըլլար՝ (Սատանան ալ Իսկա-
րիովտացի Սիմոնեան Յուդային սիրտին մէջը դը-
3րեր էր, որ անիկա մատնէ) Յիսուս գիտցաւ որ՝
Հայրը ամէն բաներ իր ձեռքը տըւաւ, և որ Աս-
4տուծմէ ելաւ՝ ու Աստուծոյ քովը կերթայ, ընթ-
րիքէն ելաւ, և լաթերը մէկ դի դրաւ՝ ու զինջակ
5մը առաւ փաթթըվեցաւ։ Եւ ետքը ջուր առաւ
կոնքին մէջը լեցուց, ու սկսաւ աշակերտներուն
ոտքները լըւանալ, և ան իր պըլլըած զինջա-
6կովը կըսրբէր։ Եկաւ Սիմոն Պետրոսին. ան ալ
ըսաւ իրեն, Տէր՝ դուն իմ ոտքերս պիտի լը-
7ուա՞ս։ Յիսուս պատասխան տըւաւ անոր՝ և ըսաւ.
Ես ինչ որ կընեմ նէ՝ դուն հիմայ չես խմնար,
8հապա վերջը պիտի խմնաս։ Պետրոս ըսաւ իրեն.
Յաւիտեան դուն իմ ոտքերս չի պիտի լուաս. պա-
տասխան տըւաւ անոր Յիսուս. Թէ որ քեզ չի
9լուամ՝ դուն ինծի հետ բաժին չունիս։ Սիմոն
Պետրոս ըսաւ անոր, Տէր՝ չէ թէ մինակ ոտքե-
10րըս, հապա ձեռքերս ալ ու գլուխս ալ։ Յիսուս
ըսաւ անոր, Լըւացեալին բան պէտք չէ, միայն
թէ ոտքերը լըւանայ. ինչու որ բոլորովին մաքուր
է. և դուք ալ մաքրըված էք, բայց չէ թէ ամէնք-
11նիդ։ Վասն զի գիտէր անիկա որ զինքը պիտի
մատնէր. անոր համար ըսաւ՝ թէ Ամէնքնիդ ալ
12մաքուր չէք։ Եւ երբոր անոնց ոտքերը լըւաց,
իր լաթերը առաւ՝ ու նորէն սեղան նստաւ, և ը-
13սաւ անոնց. Գիտէք՝ ինչ ըրի ես ձեզի։ Կոչ-
ինծի վարդապետ ու Տէր կըկանչէք, և ադէկ կը-
14սէք. ինչու որ բուն անանի եմ։ Հապա թէ որ ես
Տէրըս ու վարդապետս ձեր ոտքերը լըւացի նէ՝
դուք ալ պէտք է որ մէկըզմէկու ոտքերը լըւանաք։
15Վասն զի ձեզի մէկ օրինակ մը տըվի, որ ինծոր
16ես ձեզի ըրի՝ դուք ալ ընէք։ Ճշմարիտ ճշմարիտ
կըսեմ ձեզի. Ծառան իր տէրոջմէն մեծ չէ, ոչ

ալ խրկրմածը զինքը խրկողէն մեծ է ։ 17 Թէ որ ա-
սիկա գիտէք , ալ երանելի էք՝ թէ որ ասիկա ընէք ։
Չէ թէ ձեր ամենուդ համար կըսեմ ։ գիտեմ զիս ես 18
կըճանչնամ անոնք որ ես ընտրեցի , հապա որ ան
գրուածք կատարվի՝ թէ Ան որ իմ հետս հաց կու-
տէր , ինծի խարէութիւն ըրաւ ։ Հիմակուց կը- 19
սեմ ձեզի քանի որ ան ըլլալը չէ եղեր ։ որ երբոր
ըլլայ՝ հաւատաք թէ ես անիկա եմ ։ Ամէնիսիրտ ճշ- 20
մարիտ կըսեմ ձեզի , Ան որ կընդունի ով որ ես
կընդունիմ՝ իս կընդունի ։ և ան որ իս կընդունի՝
իս խրկողը կընդունի ։

Յիսուս երբոր ասը ըսաւ , իր հոգիին մէջ տակ- 21
նուվայ եղաւ , վկայեց և ըսաւ ։ Ամէնիսիրտ ճըշ-
մարիտ կըսեմ ձեզի , որ ձեր մէջէն մէկը իս պիտի
մատնէ ։ Աշակերտները տարակուսած մէկզմէկու 22
կընայէին , թէ Երբ համար կըզուրցէկոր ։ Ու ա- 23
շակերտներէն մէկը կար Յիսուսին գոյը նստած ,
որնոր Յիսուս կըսիրէր ։ Սիմոն Պետրոս անոր 24
աչք կընէր հարցընելու Ըն ով պիտի ըլլայ անի-
կա՝ որուն համար կըզուրցէր ։ Անիկա ալ Յիսու- 25
սին կուրծքին վրայ կթնալով՝ ըսաւ անոր , Տէր՝
ով է ան ։ Յիսուս պատասխան տըւաւ և ըսաւ , 26
Անիկա է որին որ ես պատառը կրթըչեմ ու կու-
տամ ։ և թրջեց պատառը՝ Խակարիովտացի Յու-
դային տըւաւ ։ Ու պատառէն ետքը Սատանան 27
իր մէջը մտաւ ։ և ըսաւ անոր Յիսուս ։ Հիմայ ինչ
որ պիտի ընես նէ շուտով ըրէ ։ Բայց աս բանը 28
սեղան նստողներէն մէկը չհմացաւ , թէ ինչ բա-
նի համար ըսաւ անոր ։ Ոմանք կըխորհէր 29
հէին թէ՝ որովհետև ճնտուկը Յուդան կըպահէր ,
Յիսուս անոր ըսաւ՝ Ուան մը ծախու առ ինչ որ
մեզի աս տօնիս պէտք է , կամ թէ որ աղքատնե-
րուն բան մը տայ ։ Անիկա ալ պատառը առածին 30
պէս՝ շուտ մը դուրս ելաւ , ու գիշեր էր ։

Եւ երբոր դուրս ելաւ՝ Յիսուս ըսաւ , Հիմայ 31
փառաւորվեցաւ Որդին մարդոյ , ու Աստուած

32 անով փառաւորվեցաւ : Որ թէ Աստուած անով
փառաւորվեցաւ՝ Աստուած ալ անիկա իր անձովը
պիտի փառաւորէ , և շուտով անիկա պիտի փա-
33 ռաւորէ : Իմ որդեակներս՝ քիչ մը ատեն ալ ձե-
ղի հետ եմ . դուք պիտի փնտռէք . և ինչպէս որ
Հրեաներուն ըսի , թէ Ուր որ ես կերթամ դուք
34 հէնց կընար գալ , հիմայ ալ ձեղի կըսեմ : Նոր
պատուիրան մը կուտամ ձեղի՝ որ միկդմիկ սի-
րէք , ինծոր որ ես ձեզ սիրեցի՝ որ դուք ալ մի-
35 կդմիկ սիրէք : Ասով ամէնը պիտի գիտանի՝ թէ
իմ աշակերտներս էք , թէ որ միկդմիկ սիրէք :
36 Պետրոս ըսաւ իրեն , Տէր՝ ո՞ւր կերթաս .
Յիսուս պատասխան տուաւ , Ուր որ ես կերթամ՝
դուն հիմայ չես կրնար իմ ետևէս գալ . բայց ետ-
37 քը պիտի գաս իմ ետևէս : Պետրոս ըսաւ անոր ,
Տէր՝ ինչու՞ հիմայ պիտի չկրնամ գալ քու ետև-
էդ . ես հիմակվընէ իմ կեանքս ալ քու վրադ կը-
38 դնեմ : Պատասխան տուաւ Յիսուս , Կանդիդ
պիտի դնես իմ վրաս . ճշմարիտ՝ ճշմարիտ կըսեմ
քեզի , Հաւը դեռ չի խօսած՝ դուն իրիք հեղ իս
պիտի ուրանաս :

ԻԴ · ՅՈՎ :

1 Ա իրտեղինիդ տակնուվրայ թող չըլլայ . Հապա
Աստուծոյ հաւատացէք՝ ինծի ալ հաւատացէք :
2 Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան . Հապա
թէ չէ ես ձեղի կըսէի . որ կերթամ ու ձեղի տեղ
3 կըպատրաստեմ : Եւ թէ որ երթամ՝ ու ձեղի տեղ
պատրաստեմ , նորէն կուգամ և ձեզ քովս կառ-
նեմ . որ ես ուր տեղ եմ՝ նէ դուք ալ հոն ըլլաք :
4 Եւ ուր որ կերթամ՝ նէ գիտէք , ու ճամբան ալ
գիտէք :
5 Թովմաս ըսաւ իրեն , Տէր՝ չենք գիտեր ուր
կերթաս , և ի՞նչպէս ճամբան կրնանք գիտնալ :
6 Յիսուս ըսաւ անոր . Ես եմ ճամբան ու ճշմար-
տու թիւնը ու կեանքը . մէկը Հօրը քով չի գար ,

թէ չէ ինծմէ ։ Ամէն որ ես գիտնայիք՝ Հայտ իմ 7
Հայրս ալ կը գիտնայիք , և ասկէ ետեւ գիտէք ա-
նիկա՝ ու տեսած անիկա ։

Փիլիպպոս ըսաւ անոր . Տէր՝ Հայրը մեզի ցու- 8
ցուր , ու հերիք է մեզի ։ Յիսուս անոր Այսու- 9
քան ժամանակ ձեզի հետ եմ , և ես չի ճանչ-
ցար մի Փիլիպպոս . ան որ ես տեսաւ՝ Հայրը տե-
սաւ , և դուն ինծի կ՚ըսես թէ Հայրը մեզի ցու-
ցուր ։ Չես հաւատար , որ ես Հօր մէջն եմ , ու 10
Հայր իմ մէջս է . ան խօսքերը որ ես ձեզի հետ
կը խօսիմ՝ ինքիրմէս չեմ խօսիր , հապա Հայրը
որ իմ մէջս բնակած է անիկա կը գործէ ան գործ-
քերը ։ Ինծի կը հաւատաք մի , որ ես Հօր մէջը , 11
ու Հայր իմ մէջս է ։ Հապա թէ չէ գոնէ գործ- 12
քերուն համար ինծի հաւատացէք . Ճշմարիտ ճշմա-
րիտ կ՚ըսեմ ձեզի՝ թէ Ան որ ինծի կը հաւատայ , ան
գործքերը որ ես կը գործեմ , ինքն ալ պիտի գոր-
ծէ , և անոնցմէ ալ երկել մեծ մեծ գործքեր պիտի
գործէ . ինչու որ ես Հօր քով պիտի երթամ ։
Եւ իմ անունովս ինչ որ խնդրէք նէ՝ կը կատա- 13
րեմ անիկա , որ Հայրը Որդիովը փառաւորվի . ինչ 14
որ ինծմէ խնդրէք նէ անիկա պիտի կատարեմ ։
Եթէ որ իս կը սիրէք՝ իմ պատուիրանքներս պահէ- 15
ցէք ։ Ես ալ Հօր կաղաչեմ՝ և ուրիշ միխի-
թար մը կը տայ ձեզի , որ յաւիտեան ձեզի հետ 16
բնակի . Ճշմարտութեան Հոգին , որ աս աշխարհս 17
անիկա չի կրնար ընդունիլ , ինչու որ չի տեսնար
անիկա ու չի ճանչնար անիկա . բայց դուք կը-
ճանչնաք անիկա , ինչու որ ձեր քովը պիտի բնա-
կի , և ձեր հետը պիտի ըլլայ ։ Ձեզ որբ չեմ թո- 18
ղուր , կուգամ ձեզի ։ Փոքր մը ատենէն ալ աշ- 19
խարհս իս չի տեսնար . բայց դուք պիտի տեսնաք
իս . ինչու որ ես կենդանի եմ , և դուք ալ կեն-
դանի պիտի ըլլաք ։ Ան օրը պիտի գիտնաք որ ես 20
իմ Հօրս մէջն եմ , և դուք իմ մէջս , ու ես ձեր
մէջը ։ Ան որ իմ պատուէրներս կը բռնէ՝ ու կը պա- 21

չէ անոնք , անոնք է իս սիրողը · և ան որ իս կը-
սիրէ՝ իմ Հօրմէս կըսիրուի , ու ես անոնք կըսի-
րեմ , և ինքըզինքս անոր կերեւցնեմ ։
22 Իսաւ իրեն Յուդան՝ (ոչ Իսկարիովտացին)
Տէր՝ ինչ եղաւ որ դուն ինքըզինքդ մեզի պիտի
23 յայտնես , ու աշխարհին չէ ։ Յիսուս պատասխան
տուաւ՝ և ըսաւ իրեն · Եթէ որ մեկը իս կըսիրէ՝ իմ
պատուէրներս կըպահէ · ու իմ Հայրս անոնք
կըսիրէ · և անոր կուգանք , ու մեր կենալու տեղը
24 անոր քովը կընենք ։ Եւ ան որ իս չի սիրեր՝ իմ
խօսքերս չի պահեր · ու իմ խօսքս որ կըլսէք՝ իմն
25 չէ , հապա Հօրը՝ որ իս խրկեց ։ Ա՛յս բաները ձե-
26 զի հետ խօսեցայ՝ քանի որ ձեր քովն եմ ։ Բայց
մխիթարիչ սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անունովս
պիտի խրկէ , անիկա ձեզի բոլորը պիտի սորվեցու-
նէ · և բոլոր ինչ որ ձեզի ըսի նէ՝ միտքերնիդ պիտի
27 բերէ ։ Խաղաղութիւն կըթողում ձեզի , իմ խա-
ղաղութիւնս ձեզի կուտամ · չէ թէ ինչպէս որ
աշխարհս կուտայ՝ ես ձեզի կուտամ · սիրտերնիդ
28 տանկուվայ թող չըլլայ , և չի վախնայ ։ Լսե-
ցիք որ ես ըսի ձեզի , թէ կերթամ ու կուգամ
ձեր քովը · թէ որ իս կըսիրէիք՝ Հապա ուրախ պի-
տի ըլլայիք ։ թէ ես Հօրը քովը կերթամ · ինչու
29 որ իմ Հայրս ինծմէ մեծ է ։ Եւ հիմակուց դուս
չեղած ըսի ձեզի , որ երբոր ըլլայ նէ՝ հաւատաք ։
30 Ալ ձեր հետ շատ չի պիտի խօսիմ · Քանի՞ որ աս
աշխարհիս իշխանը կուգայ , և իմ վրաս բան մը
31 չի գտնար ։ Այլայն թէ աշխարհ գիտնայ որ ես
Հայրը կըսիրեմ · ու ինչպէս որ Հայրը ինծի
պատուիրեց , անանկ կընեմ · ալ ելէք ասկէց եր-
թանք ։

ԿԻ · ԺԵ ։

1 Ես եմ ճշմարիտ որդը , և իմ Հայրս մշակ է ։
2 Ամէն ճիւղ որ իմ վրաս է՝ ու պտուղ չի բե-
րեր , կըկտրէ անիկա · և ամէնը որ պտուղ կըբե-
րէ՝ կըմաքրէ անիկա , որ շատ էվելօք պտղաբեր

ըլլայ ։ Ասոր հիմակուց մաքուր էք ան խօսքովը՝ 3
որ ձեզի խօսեցայ ։ Իմ մէջս կեցէք՝ ու ես ձեր մէ- 4
ջը · ինծոր որ ճիւղը ինքիրմէն չի կրնար պտուղ
բերել , թէ որ որթին վրայ հաստատված չըլլայ ·
ասոր պէս դուք ալ թէ որ իմ վրաս հաստատված
չըլլաք ։ Ես որթն եմ՝ ու դուք ճիւղ · ան որ իմ 5
վրաս հաստատված է՝ և ես անոր վրայ , անիկա
շատ պտուղ կըբերէ · ինչու որ առանց ինծի բան
մը չէք կրնար ընել ։ Թէ որ մէկը իմ վրաս հաս- 6
տատված չէ՝ անիկա ճիւղի մը պէս դուրս ինկաւ
ու ցամքեցաւ · և կրժողվին անիկա՝ ու կրակը կը-
նետեն և կերէ ։ Թէ որ դուք իմ մէջս կենաք՝ և 7
իմ խօսքերս ալ ձեր մէջը կենան , ինչ որ կուզէք
խնդրեցէք՝ ու պիտի ըլլայ ձեզի ։ Ասով իմ Հայր 8
ըրս փառաւորվեցաւ , որ դուք շատ պտուղ բերէք ,
ու իմ աշակերտներս ըլլաք ։
Ինծոր որ Հայրը իս սիրեց , ես ալ ձեզ սիրե- 9
ցի · իմ սիրոյս մէջը հաստատ կեցէք ։ Թէ որ իմ 10
պատուէրներս պահէք՝ իմ սիրոյս մէջը պիտի կե-
նաք · ինծոր որ ես իմ Հօրս պատուէրները պահե-
ցի՝ և անոր սիրոյն մէջը կեցեր եմ ։ Ես բաներըս 11
ձեզի հետ խօսեցայ՝ որ իմ ուրախութիւնս ձեր
մէջը մնայ , ու ձեր ուրախութիւնը լըման ըլլայ ։
Ասիկա է իմ պատուէրս՝ որ միմիանց սիրէք , ինծոր 12
որ ես ձեզ սիրեցի ։ Ասկէց էվելի մեծ սէր մէկը չի 13
կրնար ունենալ , որ իր կեանքը բարեկամներուն
վրայ դնէ ։ Դուք իմ բարեկամներս էք , թէ որ 14
ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի կըպատուիրեմ ։
Ասկէց ետքը ձեզ ծառայ չեմ կանչեր · ինչու որ 15
ծառան չի գիտեր իր Տէրը ինչ կընէ , հապա ես
ձեզ բարեկամ կանչեցի · ինչու որ ան ամէն բա-
ները որ Հօրմէս լսեցի՝ ձեզի իմացուցի ։ Չէ թէ 16
դուք իս ընտրեցիք , հապա ես ձեզ ընտրեցի՝ ու
դրի ձեզ , որ դուք երթաք և պտղաբեր ըլլաք՝ ու
ձեր պտուղը մնայ · և իմ անունովս ինչ որ իմ
Հօրմէս ուզէք նէ՝ ձեզի տայ ։ Ես կըպատուիրեմ 17
որ միմիանց սիրէք ։

18 [Ա]Ե որ աշխարՀ ձեզ կատէ՝ գիտնաք որ առաջ
19իս առեց ։ [Ա]Ե որ աշխարՀէն եղած ըլլայիք՝ աշ-
խարՀ իրենները կըսիրէր · բայց որովՀետև աշ-
խարՀէ չէք , Հապա ես ձեզ աշխարՀէն ընտրեցի ·
20անոր Համար աշխարՀ ձեզ կատէ ։ Յիշեցնիդ
բերէք ան խօսքը որ ձեզի ըսի , [Թ]է Ծառան իր
Տէրոջմէն մեծ չէ · [Թ]է որ իս Հալածեցին՝ ուրիմն
ձեզ ալ պիտի Հալածեն · [Թ]է որ իմ խօսքս պաՀե-
21ցին , անանկ է նէ ձերն ալ կըպաՀեն ։ Բայց ան
բոլոր բաները պիտի ընեն ձեզի իմ անունիս Հա-
մար · ինչու որ չի ճանչցան անիկա՝ որ իս խրկեց ։
22[Ա]է որ ես եկած և անոնց Հետ խօսած չըլլայի , ա-
նոնք մեղք մը չէին ունենար · բայց ալ Հիմայ ի-
23րենց մեղքերնուն պատճառանք մը չունին ։ Ան
24որ իս կատէ՝ իմ Հայրս ալ կատէ · [Ա]է որ ան
գործքերը իրենց մէջ ըրած չըլլայի , որոնք ուրիշ
մէկ մը չէ ըրած , անոնք մեղք մը չէին ունենար ·
բայց Հիմայ տեսան ուատեցին՝ իս ալ , իմ Հայրս
25ալ ։ Բայց ասիկա՝ որ կատարվի ան խօսքը՝ որ
իրենց օրինաց մէջ գրված է , [Թ]է Զուր տեղը իս
26ատեցին ։ Բայց երբոր մխիթարիչը գայ՝ որ ես
Հօրմէն ձեզի կրխրկեմ՝ ան ճշմարտութեան
Հոգին՝ որ Հօրմէն կելլայ , անիկա ինծի Համար
27պիտի վկայէ · և դուք ալ կըվկայէք · ինչու որ ըս-
կիզբէն Հետ իմ կեցաք ։

ԿԱ · ԺՕ ։

1 [Ա]ս բաները ձեզի խօսեցայ որ չի գայթակղիք ։
2 Հրէից ժողովարաններէն ձեզ պիտի դուրս
Հանեն · ու ժամանակ ալ պիտի գայ՝ որ ամեն ոմ
որ ձեզ մեռցունէ , անանկ պիտի սեպէ որ՝ Հա-
3ճոյ պաշտօն կըմատուցանէկոր ։ Եւ ասոնք բա-
ները ձեզի պիտի ընեն · անոր Համար որ ո՛չ Հայ-
4րը ճանչցան ու ո՛չ իս ։ Բայց ասոնք ձեզի խօսեցայ՝
որ երբ ատոնք գայ՝ միտքերնիդ բերէք [Թ]է ես ըսի
ձեզի · ասոնք խօսքը առաջուց չըսի ձեզի , [Ի]նչու որ
ես Հետերնիդ էի ։

Խայց հիմայ ես կերթամ իս խրկողին քովը , և 5
ձեր մէջէն մէկն ալ չի հարցուներ ինծի Թէ ո՞ւր
կերթաս ։ Խայց որովհետև ա՛ս բաները ձեզի խօ- 6
սեցայ , ձեր սիրտերը տրտմութիւնով լեցաւ ։
Խայց ես ճշմարիտը կըսեմ ձեզի . աղէկ է ձեզի 7
Թէ որ ես երթամ . ինչու որ Թէ որ ես չերթամ ,
մխիթարիչը ձեզի չի գար . հապա Թէ որ երթամ
անոկա ձեզի կրխրկեմ ։ Եւ ինքը որ գայ՝ աշխար- 8
հը պիտի յանդիմանէ . մեղքերուն համար , և ար-
դարութեան համար , ու դատաստանի համար ։
Մեղքերուն համար՝ որ հինծի չի հաւատացին ։ 9
արդարութեան համար՝ որ ես իմ Հօրս քովկեր- 10
թամ , ու իս ալ չէք տեսնար . դատաստանի հա- 11
մար՝ որ աս աշխարհիս իշխանը դատապարտուած
է ։ Ձեզի տակաւին շատ բաներ ունիմ ըսելու , 12
բայց չէք կրնար հիմայ տանիլ ։ Երբոր ինքը 13
ճշմարտութեան Հոգին գայ՝ ամէնը ճշմարտու-
թեամբ կառաջնորդէ ձեզի . ինչու որ չէ Թէ ինք-
իմմէն բան մը պիտի խօսի , հապա ինչ որ լսէ նէ՝
անոկա պիտի խօսի , ու գալիքները պիտի պատմէ ։
Ինոկա իս պիտի փառաւորէ . ինչու որ ինծէ խմի- 14
նէս պիտի առնէ և ձեզի պատմէ ։ Ինչ ամէն բան- 15
եր՝ որ Հայր ունի իմն է . անոր համար ձեզի ըսի՝
Թէ իմինէս պիտի առնէ , և ձեզի պատմէ ։ Փոքր 16
մը առնենէն ալ իս պիտի չի տեսնաք . ու նաև քիչ
մըն ալ իս պիտի տեսնաք , և ես ալ Հօրս կեր-
թամ ։

Աշակերտներէն ոմանք մէկզմէկու կըսէին , 17
Ի՞նչ է աս որ մեզի կրսէ՝ Թէ քիչ մը առնենէն ալ
իս պիտի չի տեսնաք . և նորէն Փոքր մըն ալ իս պի-
տի տեսնաք . և Թէ ես Հօրս կերթամ ։ Ու կը- 18
սէին , Ի՞նչ պիտի ըլլայ ան Փոքր մըն ալը . չենք
գիտեր ինչ կըզրուցէ ։ Գիտուս իմացաւ որ կու- 19
զեն իրեն հարցընել , և ըսաւ անոնց . Խոսր հա-
մար մէջերնիդ կրհարցունէքիտր , որ ըսի , Թէ
Փոքր մը առնենէն ալ իս չի պիտի տեսնաք , և նո-
րէն քիչ մըն ալ պիտի տեսնաք իս ։ Ճշմարիտ 20

ճշմարիտ կըսեմ ձեզի , Որ դուք պիտի լաք ու
ողբաք . բայց աշխարհ պիտի խնդայ . դուք պիտի
տրտմիք , սակայն ձեր տրտմութիւնը ուրախու-
21 թեան պիտի փոխվի : Կնիկ մը երբոր պիտի ծնա-
նի՝ ինքը տրտմութիւն կունենայ , ինչու որ իր
ժամը հասեր է . բայց երբոր տղան կրծնի , ալ
նեղութիւնը միտք չի բերիր ուրախութենէն՝ որ
22 աշխարհ մարդ մը ծնաւ : Դուք ալ հիմայ տըրտ-
մութիւն ունիք . բայց ես ձեզ նորէն պիտի տես-
նեմ , և ձեր սիրտերը ուրախ պիտի ըլլան . ու
ձեր ուրախութիւնը մէկը ձեզմէ պիտի չի հանէ :
23 Եւ ան օրը ինձի բան մը պիտի չի հարցունէք .
ճշմարիտ՝ ճշմարիտ կըսեմ ձեզի , որ Հա՛ն անու-
նովս ինչ որ ուզէք՝ նէ իմ Հօրմէս կուտայ ձեզի :
24 Այ՝ ինչէ հիմայ իմ անունովս բան մը չուզեցիք .
ուզեցէք և պիտի առնէք , որ ձեր ուրախութիւնը
25 լըման ըլլայ : Ես բաները նմանութիւններով խո-
սեցայ ձեզի . ժամանակ ալ պիտի գայ՝ որ անոնց
ձեզի հետ նմանութիւններով պիտի չի խօսիմ .
հապա յայտնապես Հօրը վրայով պիտի պատմեմ
26 ձեզի : Ան օրը իմ անունովս դուք խնդրելիք . և
չեմ ըսեր ձեզի որ ես ձեզի համար պիտի աղաչեմ
27 Հօրմէն . ինչու որ ինքը Հայր ձեզ կըսիրէ , որ
դուք իս սիրեցիք՝ և հաւատացիք թէ ես Աստուծմէ
28 ելայ : Հօրմէն ելայ՝ ու աշխարհ եկայ . նորէն կը-
թողում աշխարհը՝ և Հօրը կերթամ :
29 Աշակերտները ըսին իրեն , Հա՛ն հիմայ յայտ-
նապէս կըխօսիս՝ և մէկ նմանութիւն մըն ալ
30 ես ըսելիքը : Հիմայ խնդացանք որ ամէն բաներ
գիտես . և բան մըն ալ պէտք չէ որ մէկը քեզի
հարցընէ . ասով կըհաւատանք որ Աստուծմէ ելար :
31 Յիսուս պատասխան տուաւ անոնց՝ և ըսաւ . Հի-
32 մայ կըհաւատաք՞ը : Հա՛ն ժամ մը պիտի գայ , և
ան եկած ալ է , որ ցիրուցան պիտի ըլլաք ամէն
մէկը իր տեղը , ու իս մինակ պիտի թողուք . բայց
33 ես մինակ չեմ , ինչու որ Հայրը իմ հետս է : Ես
բաները ձեզի խօսեցայ , որ իմ հետս խաղաղութիւն

ունենաք · Հոս աշխարհի մէջ նեղութիւն պիտի
ունենաք · բայց կարիճ կեցէք , ինչու որ ես աշ-
խարհին յաղթեցի ։

ԳԼ · ԺԷ ։

Յետու երբոր ասոնք խօսեցաւ , իր աչքերը 1
դէպի երկինքը վերցուց՝ և ըսաւ , Հայր՝ ա-
տենը հասեր է , փառաւորէ քու Որդիդ · որ քու
Որդիդ ալ քեզ փառաւորէ ։ Ինչպէս որ իրեն իշ- 2
խանութիւն տուիր բոլոր մարմիններուն վրայ ,
որպէս զի ան ամէնուն որ իրեն տուիր՝ ինքը յաւի-
տենական կեանք տայ անոնց ։ Ա՛յս է յաւիտենական 3
կեանքը , որ ճանչնան քեզ միակ ճշմարիտ Աս-
տուած , ու Հիսուս Քրիստոսը՝ որ անիկա դուն
խրկեցիր ։ Ես քեզ երկրիս վրայ փառաւորեցի , 4
ան գործը որ ինծի տուիր ընելու՝ լմընցուցի ։ Եւ 5
հիմայ դուն , Հայր , իս փառաւորէ քեզմէ նոյն ան
փառքովը որ աշխարհի ըլլալէն առաջ քեզմէ ու-
նէի ։ Քու անունդ յայտնի ըրի ան մարդիկներ-
ուն՝ որոնք որ աշխարհէս ինծի տուիր · քուկդ
էին՝ ու ինծի տուիր անոնք , և քու խօսքդ պահե-
ցին ։ Հիմայ գիտցան՝ թէ ան ամէն բաներըդ որ 7
ինծի տուիր , քեզմէ են · ինչու որ ան խօսքերը 8
որ ինծի տուիր՝ ես տուի անոնց , անոնք ալ ըն-
դունեցին , և ճշմարտութեամբ իմացան՝ որ ես
քեզմէն ելայ , ու հաւատացին թէ դուն խրկեցիր
իս ։ Հիմայ ես անոնց համար կաղաչեմ , ու չէ 9
թէ աշխարհի համար կաղաչեմ · հապա անոնց
համար՝ որոնք դուն ինծի տուիր , ինչու որ քուկդ
են անոնք ։ Եւ ինչ որ իմս է՝ ան բոլորը քուկդ 10
է , և ինչ որ քուկդ է՝ ան իմս է , ու ես անոնցմով
փառաւորված եմ ։ Եւ ես ալ աշխարհի մէջը 11
չեմ · բայց անոնք աշխարհի մէջն են , ու ես քե-
զի կուգամ · Հայր Սուրբ՝ քու անունովդ
պահէ անոնք , որ անով դուն ինծի տուիր , որ մէկ
ըլլան՝ ինծոր որ մենք մէկ ենք ։ Երբոր որ աշ- 12
խարհի մէջ անոնց հետ էի՝ ես կըպահէի անոնք

քու անունովդ , որ անով դուն ինծի տըվիր , ու
պահեցի . և անոնցմէ մէկը չի կորսըվեցաւ , միայն
թէ ան կորստեան որդին որ գրվածքը կատար-
13 վի : Ա՛վ հիմայ քեզի կուգամ . ու աշխարհի մէջ
ասա բանելը կը խօսիմ , որ իմ ուրախութիւնս ի-
րենց անձերնուն մէջ կատարեալ ունենան :
14 Ես քու խօսքդ անոնց տըվի , ու աշխարհս անոնք
ատեց . ինչու որ աշխարհէն չեն . ինծոր որ ես ալ
15 աշխարհէն չեմ : Չխիկա չեմ աղաչեր՝ որ անոնք
աշխարհէն վերցուներս . հապա որ անոնք չարէն
16 պահես : Չես աշխարհէն չեն , ինծոր որ ես ալ
17 աշխարհէ չեմ : Սրբէ անոնք քու ճշմարտութիւ-
18 նովդ , որ քու խօսքդ ճշմարտութիւն է : Ինչպէս
որ դուն իս աշխարհ խրկեցիր , ես ալ անոնք աշ-
19 խարհ խրկեցի : Ու անոնց վրայ ես իմ անձս կը-
սրբացունեմ , որ իրենք ալ ճշմարտութիւնով
20 սրբացած ըլլան : Հայց չէ թէ միայնակ անոնց հա-
մար կաղաչեմ , հապա իրենց խօսքովը բոլոր ինծի
21 հաւատացողներուն համար ալ . որ ամէնքն ալ մէկ
ըլլան , ինծոր որ դուն Ա՛վ , իմ մէջս , ու
ես ալ քու մէջդ , որ անոնք ալ մեր մէջը ըլլան .
որ աշխարհ ալ հաւատայ՝ թէ դուն խրկեցիր իս :
22 Ու ան փառքը որ դուն ինծի տըվիր՝ ես անոնց
23 տըվի , որ մէկ ըլլան՝ ինչպէս որ մենք մէկ ենք . (ես
անոնց մէջ՝ և դուն իմ մէջս) որ իրենք կատար-
եալ ըլլան մէկով . ու աշխարհ ալ գիտնայ որ
դուն խրկեցիր իս , ու սիրեցի անոնք՝ ինչպէս որ
24 դուն իս սիրեցիր : Ա՛վ , որ անոնք որ դուն
ինծի տըվիր , կուզեմ որ ուր որ ես եմ՝ անոնք ալ
իմ հետս ըլլան , որ իմ փառքս տեսնան որ ան
ինծի տըվիր . ինչու որ դուն իս սիրեցիր աշխար-
25 հը ըլլալէն առաջ : Ա՛վ արդար , աշխարհ
ալ քեզ չի ճանչցաւ , բայց ես ճանչցայ քեզ , և
26 անոնք ալ ճանչցան , որ դուն իս խրկեցիր : Ու
քու անունդ անոնց ճանչցուցի . ու կըճանչցու-
նեմ , որ ան սէրը որով դուն իս սիրեցիր , անոնց
մէջն ըլլայ , ու ես ալ անոնց մէջ .

ԻԱ. ՅՀԸ ։

Յիսուս երբոր աս խօսքը ըսաւ, եւաւ աշակերտ- 1
ներուն հետ մէկտեղ Կեդրոն ըսուած ձորին
մէկալ կողմը անցաւ, ուր որ պարտէզ մը կար.
որ հոն մտաւ ինքը՝ և իր աշակերտները ։ Յու- 2
դան ալ որ ինքը պիտի մատնէր, ան տեղը գիտէր.
ինչու որ Յիսուս շատ հեղ իր աշակերտներուն
հետ մէկտեղ հոն ժողվուած էր ։ Ուստի Յու- 3
դան զինուորները և քահանայապետներէն և փարիսեցիներէն սպասա-
ւորներ, ան տեղը եկաւ լապտերը-
ներով և զէնքերով ։ Յայց Յիսուս երբոր տե- 4
սաւ ան ամէնքը իրեն վրայ եկած, ելաւ և ըսաւ
անոնց, Ո՞վ կը փնտռէք ։ Պատասխան տուին 5
իրեն, Նազովրեցի Յիսուսը. ըսաւ անոնց Յի-
սուս՝ Ես եմ. Յուդան ալ որ զնէքը կը մատնէր՝
անոնց հետ էր ։ Երբոր ըսաւ՝ Թէ Ես եմ, նա 6
նահ գացին՝ ու գետինը զարնուեցան ։ Նորէն հար- 7
ցուց անոնց՝ Ո՞վ կը փնտռէք. անոնք ալ ըսին,
Նազովրեցի Յիսուսը ։ Յիսուս պատասխան տը- 8
ւաւ անոնց. Ձեզի ըսի Թէ ես եմ. ուստի Թէ որ
իս կուզէք՝ Թող արվէք ատոնց որ երթան ։ Որ 9
կատարվի ան խօսքը՝ որ ըսաւ, Թէ Ո՛նոնք որ ին-
ձի տվիր՝ անոնցմէ մէկն ալ չի պիտի կորսնցու-
նեմ ։ Ուստեղը Սիմոն Պետրոս՝ որ սուր ունէր, 10
մը հանեց, քաշեց անիկա՝ ու զարկաւ քահանայա-
պետին ծառան, և մէկ դի ձգեց անոր աջ ական-
ջը, և ան ծառային անունը Մաղքոս էր ։ Յի- 11
սուս ըսաւ Պետրոսին. Թուր դնէն իր ամէնը
ձգէ. ան գաւաթը որ Հայր ինձի տուաւ՝ չի պի-
տի խմեմ անիկա ։
Ապա զինուորները գունդը ու հազարապե- 12
տը և Հրէաներուն սպասաւորները բռնեցին Յի-
սուս, ու կապեցին. և առաջ անիկա Աննային 13
տարին՝ որ Կայիափային աներն էր, որ ան տար-

14 վան քահանայապետն էր ։ Ա՛սիկա ան Կայիափան
էր , որ Հրէացւոցն խրատ տուաւ՝ թէ Ա՛ղէկ է
15 որ ժողովուրդին վրայ մէկ մարդ մը մեռնի ։ Ու
Յիսուսին ետևէն կերթային Սիմոն Պետրոս և
մէկալ աշակերտը . և ան աշակերտը հա՛նայայա-
պետին ճանչնալով , Յիսուսին հետը քա-
16 հանայապետին բակը մտաւ ։ Բայց Պետրոս դուր-
սը դռանը քով կեցեր էր . ելաւ մէկալ աշակեր-
տը՝ որ քահանայապետին ճանչնալն էր , և բսաւ
17 դռնապանին , ու ներս խոթեց Պետրոսը ։ Ան
աղջկեակը որ դռնապան էր , բսաւ Պետրոսին .
Դուն ալ ան մարդուն աշակերտներէ՞ն ես մի .
18 ան ալ բսաւ , Չեմ ։ Հոն կայներ էին ծառանե-
րը և սպասաւորները կրակ վառած , որովհետև
ցուրտ էր , ու կրտաքնայինկոր . Պետրոն ալ ա-
19 նոնց հետ կայներ էր ու կրտաքնար ։ Եւ քահա-
նայապետը Յիսուսին հարցուց աշակերտներուն
20 համար ու իր վարդապետու թեանը համար ։ Յի-
սուս պատասխան տուաւ անոր . Ես աշխարհի մէջ
յայտնի խօսեցայ . ես ամէնատեն ժողովարանին
մէջ սորվեցուցի , և տաճարին մէջ . ուր որ բոլոր
Հրէաները ժող վրած էին , ու ծածուկ բան մը
21 չի խօսեցայ ։ Ինչու՞ ինծի կը հարցունես , լսողնե-
րուն հարցուր՝ թէ ինչ խօսեցայ իրենց հետ . ա՛ռ
22 ինչ որ խօսեցայ նէ գիտեն անոնք ։ Երբոր ինքը
ասբսաւ , սպասաւորներէն մէկը որ հոն կայներ
էր , Յիսուսին ապտակ մը զարկաւ ու բսաւ . Ա-
տո՞նկ պատասխան կուտաս քահանայապետին ։
23 Յիսուս ալ անոր բսաւ , Թէ որ չար բան մը խօ-
սեցայ նէ՝ վկայէ չարին համար . Հապա թէ որ ա-
24 ղէկ ըսի , ինչու՞ կը զարնես ինծի ։ Ու Աննա ան ի-
կա կապած Կայիափա քահանայապետին խրկեց ։
25 Սիմոն Պետրոն ալ հոն կեցեր ու կրտաքնար .
ըսին իրեն , Դուն ալ անոր աշակերտներէ՞ն ես
26 մի . ան ի՛կա ուրացաւ և բսաւ՝ Չեմ ։ Հա-
հանայապետին ծառաներէն մէկն ալ , ան մար-
դուն ազգականը՝ որուն ականջը Պետրոս կտրեր

եր , ըսաւ ։ Ձի՞ որ ես քեզ տեսայ պարտէզին մէջ անոր հետ ։ Պետրոս նորէն ուրացաւ , և շուտ մը հաւը խօսեցաւ ։ 27

Ու Յիսուսը Կայիափայի տունէն դատաւորին պալատը տարին ։ և ալ առտու էր , ու իրենք պալատը չի մտան՝ որ չի պղծըվին , հապա որ զատիկը ուտեն ։ Պիղատոս դուրս եկաւ անոնց՝ և ըսաւ ։ Ո՞նչ ամբաստանութիւն կը բերէք այն մարդուն վրայ ։ Պատասխան տուին և ըսին իրեն , Թէ որ այն մարդը չարագործ մը չըլլար՝ ալ անիկա քեզի չէինք մատներ ։ Պիղատոս ըսաւ անոնց ։ Դուք առէ՛ք անիկա , ու ձեր օրէնքին պէս դատատարը ըրէք ։ Հրէաները իրեն ըսին , Մեզի չի վայլեր մարդ մը մեռցնել ։ Որ Յիսուսի բան խօսքը կատարվի , ցուցընելով Թէ ի՛նչ մահով ինքը պիտի մեռնի ։ Պիղատոս նորէն պալատը մտաւ , կանչեց Յիսուսը ու ըսաւ իրեն , Հրէաներուն թագաւորը դուն ես մի ։ Յիսուս պատասխան տուաւ ։ Կտիկա դուն քեզմէ՞ կըսես , Թէ ինծի չատ մարդ ուրիշները քեզի ըսին ։ Պատասխան տուաւ Պիղատոս ։ Մի՞թէ ես ալ Հրէայ եմ , քու ազգդ և քահանայապետները քեզ ինծի մատնեցին ։ Ի՞նչ բան ըրեր ես դուն ։ Յիսուս պատասխան տուաւ ։ Իմ թագաւորութիւնս աս աշխարհէս չէ ։ Թէ որ աս աշխարհէս ըլլար իմ թագաւորութիւնս , իմ սպասաւորներս կըկռուէին՝ որ ես Հրէաներուն ձեռքը չի մատնըվիմ ։ ուստի իմ թագաւորութիւնս աշխէդ չէ ։ Պիղատոս ըսաւ իրեն ։ Հապա Թէ որ տասնկ է նէ՝ դուն մէկ թագաւոր մըն ես ։ պատասխան տուաւ Յիսուս , Դուն կըսեսկոր Թէ թագաւոր եմ ։ ու ես բուն ատոր մէջը ծնած եմ , և ատոր համար աշխարհ եկած , որ ճշմարտութեան համար վկայեմ ։ ան ամէնը՝ որ ճշմարտութենէն է , իմ խօսքիս ականջ կըդնէ ։ Պիղատոս ըսաւ իրեն , Ո՞նչ է ճշմարտութիւնը ։ աս որ ըսաւ՝ նորէն դուրս ելաւ Հրէաներուն , և ըսաւ անոնց ։ Ես մէկ յանցանք մը չեմ գտներկոր անոր 28 29 30 31 32 33 34 35 36 37 38

39 վրայ ։ Հայց ձեր սովորութիւնն է որ մէկ մարդ
մը պիտի արձրկեմ ձեզի զատկիս . Հիմայ կուզէք
40 որ Հրեաներուն Թագաւորը արձրկեմ ձեզի ։ Ա-
յնքան ալ կանչ վրաոնցին , և ըսին . Ոչիկա չէ ,
հապա Յարաբբան . ու ան Յարաբբան մէկ աւա-
զակ մըն էր ։

ԺԹ. ԺԸ։

1 Ա Նատիկը Պիղատոս Յիսուսը առաւ՝ ու ծեծեց ։
2 Զինուորներն ալ փուշերէ Թագ շինելով՝
անոր գլուխը դրին . և իրեն ծիրանի լաթ մը հագ-
3 ցուցին . ու կուգային անոր՝ և կըսէին , Ո՛ղջ ե-
ղիր Հրէից Թագաւոր . և ապտակներ կըզարնէին
4 իրեն ։ Պիղատոս նորէն դուրս ելաւ՝ ու ըսաւ ա-
նոնց . Ո՛հա անիկա դուրս կըբերեմ ձեզի , որ
գիտնաք՝ թէ ես անոր վրայ վնաս մը չեմ գտնար-
5 կոր ։ (Յիսուս դուրս ելաւ , և ունէր փուշերէ
Թագ՝ ու ծիրանի հագուստ) և ըսաւ անոնց , Ո՛հա
6 ատ մարդը ձեզի ։ Քահանայապետները ու սպա-
սաւորները երբոր տեսան անիկա , գոչեցին
ըսելով՝ ու ըսին . Խաչը հանէ՝ խաչը հանէ ատի-
կա ։ Պիղատոս ըսաւ անոնց . Ձեզի առէք ատիկա ,
ու ձեզմէն խաչը հանեցէք . Ինչու որ ես ատոր
7 վրայ յանցանք մը չեմ գտնարկոր ։ Հրեաները
պատասխան տըվին իրեն . Մենք օրէնք ունինք ,
և մեր օրէնքին պէս պէտք է որ մեռնի . Ինչու որ
8 ինքզինքը Աստուծոյ Որդի ըրաւ ։ Պիղատոս եր-
9 բոր ասոր խօսքերը լսեց՝ ալ էվելօք վախցաւ ։ Դա-
րձեալ մէյմալ պալատը մտաւ՝ և ըսաւ Յիսուսին .
Ուրկից ես դուն . բայց Յիսուս պատասխան չի
10 տըւաւ անոր ։ Ասաւ անոր Պիղատոս , Ինծի չես
ուզեր մի խօսիր . Չես գիտեր որ ես իշխանութիւն
ունիմ քեզ խաչը հանելու , ու իշխանութիւն ու-
11 նիմ քեզ արձրկելու ։ Յիսուս պատասխան տը-
ւաւ . Դուն իմ վրաս մէկ իշխանութիւն մըն ալ
չունէիր , թէ որ քեզի վերէն տրված չըլլար . ա-

նոր հաճար՝ ան որ իս քեզի մատնեց , անոր մեղքը
ալ մեծ է ։ Եվ անկէ ետև Պիղատոս կուզէր որ 12
զինքը թող տայ . բայց Հրեաները կըկանչ վըռտե-
ին ու կըսէին , Թէ որ ատիկա արձակես նէ կայս-
րին բարեկամը չես . ամեն ով որ ինքզինքը թա-
գաւոր կըհանդիսէ անիկա կայսրին հակառակ է ։
Պիղատոս ալ երբոր աս խօսքերը լսեց՝ դուրս հա- 13
նեց Յիսուսը , ու նստաւ բեմին վրայ ան տեղը՝ որ
քարայատակ կըսվէր , և Եբրայեցերէն Գաբպա-
թա . (Այսինքն ուրբաթի օրն էր , ու ժամը վե- 14
ցին առեններն էր) և Հրեաներուն ըսաւ . Ահա
ձեր թագաւորը ձեզի ։ Եւ անոնք կըհանչ վըռտե- 15
ին Վ երցուր մեր մէջէն , վերցուր մեր մէջէն ու
խաչը հանէ ատիկա . Պիղատոս ըսաւ անոնց . Ես
ձեր թագաւորը խաչը պիտի հանեմ . քահանա-
յապետները պատասխան տըվին . Մ՚ենք կայսրէն
՛ի զատ թագաւոր չունինք ։ Ինքնատնեը անիկա խ- 16
րենց ձեռքը տուաւ՝ որ խաչը հլլայ ։
Անոնք ալ առին զինքը կըտանէին , ու խաչա- 17
փայտը ինքիրմէն վերցուցեր էր , և անոնք կելլար
Կագաղաձ բսած տեղը՝ որ Եբրայեցերէն Գող-
գոթա կըսվէր . հոն զինքը խաչը հանեցին . և ա- 18
նոր հետ ուրիշ երկուք ալ մէկ դիէն ու մէկալ
դիէն , և մէջ տեղը Յիսուսը ։ Գրեցաւ մըն ալ 19
գրեց Պիղատոս և դրաւ խաչին վրայ , ու գրված
էր՝ ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ-
ԻՈՒ ՀՐԻՒՑ ։ Ըն տախտակը Հրեաներէն շա- 20
տերը կարդացին , որովհետև քաղքին մօտ էր ան
տեղը՝ ուր որ Յիսուս խաչ վիցաւ . ու գրված էր
Եբրայեցերէն Լատիներէն և Յունարէն ։ Հրէ- 21
աներուն քահանայապետները Պիղատոսին ըսին ,
Մ՚ի գրեր Հրեից թագաւոր , հապա թէ Ինքը
ըսաւ թագաւոր եմ Հրեից ։ Պիղատոս պատաս- 22
խան տուաւ . Ինչ որ գրեցի նէ գրեցի ։
Հայց զինուորները երբոր Յիսուսը խաչ հա- 23
նեցին՝ անոր լաթերը առին , ու չորս բաժին ըրին՝
ամեն մէկ զինուորին բաժին մը . միայն թէ շապի-

կը՝ որովհետև առանց կարի էր վերէն՝ ի վար բո-
24լորը հուսած ։ Ի սին իրարու ։ Առիկա չի պատ-
ռուիլ , հապա վիճակ ձգենք ատոր վրայ՝ որի որ
ելլայ նէ ։ որ կատարվի ան գրվածքը՝ որ կըսէ ,
Իմ լաթերս իրենց մէջը բաժնեցին , և իմ շապի-
կիս վրայ վիճակ ձգեցին ։ զինուորները ասանկ
25բրին ։ Եւ Յիսուսի խաչին քով կային հին իր
մայրը , և իր մօրը քոյրը Մարիամ՝ Կղէոպասին
26կինը , ու Մարիամ Magdաղենացին ։ Յիսուս
երբոր տեսաւ իր մայրը՝ և ան աշակերտը՝ որ կը-
սիրէր , որ մօրը կայներ էր , ըսաւ մօրը ։ Կին
27կին՝ ահա քու որդիդ ։ Ետքը ըսաւ աշակերտին ,
Ահա քու մայրդ ։ և անկէ ետև աշակերտը անիկա
իր քովը առաւ ։
28 Ինկէ ետև երբոր գիտցաւ Յիսուս թէ ահա
ամէն բան կատարեալ է , որ ան գրվածն ալ կա-
29տարվի , ըսաւ ։ Ծարաւ եմ ։ Եւ հոն քացախով
լեցուն աման մը կար ։ անոնք ալ սպունգ մը քա-
ցախով լեցնելով եզովի հետ՝ զուպայի մշակին
վրայ փաթթած , դէպի իր բերանը երկնցուցին ։
30Յիսուս երբոր քացախը լեղին հետ առաւ , ըսաւ ։
Ամէն բան կատարվեցաւ ։ ու գլուխը ծռելով հո-
գին աւանդեց ։
31 Ասոր համար հրեաները՝ որովհետև ուրբաթ օր էր ,
որ չըլլայ թէ ան մարմինները խաչին վրայ մնան
մինչև ուրբաթ օրը ։ (ինչու որ ան շաբաթ օրը
մեծ օր էր) Պիղատոսին աղաչեցին որ անոնց ծուն-
32կերը ջարդեն՝ ու վերցնվին ։ զինուորները եկան՝
և առաջինին ծունկերը ջարդեցին ։ անանկ ալ մ-
33կալինը , որ անոր հետ խաչը եղած էր ։ Ասոր եր-
բոր Յիսուսին եկան՝ ու տեսան որ արդէն մեռած
34էր ինքը , անոր ծունկվձնները չի ջարդեցին ։ Հա-
պա զինուորներէն մէկը գեղարդով անոր կողը
35խոցեց , և շուտ մը արիւն ու ջուր ելաւ ։ Եւ ան
որ տեսաւ ատ բանները վկայեց , ու անոր վկայու-
թիւնը ճշմարիտ է , և ինքը գիտէ որ ճշմարիտ կը-
36սէ , որ դուք հաւատաք ։ Ասոնք եղաւ որ կա-

տարվի ան գրվածքը , թէ Աստ ոսկորը չի պիտի
փշրվի ։ Եւ մէկմէկ մեկալ գրվածքը կըսէ թէ 37
Իրեն պիտի նային անոնք՝ որ ան խոցեցին ։

Այսէհ եւս Յովսեփը՝ որ Արիմաթիայէն էր , 38
(Յիսուսի գաղտուկ աշակերտ նըշան Հրեաներուն
վախէն) աղաչեց Պիղատոսին՝ որ Յիսուսի մարմի-
նը վերցունէ . Պիղատոսն ալ հրաման ըրաւ , և-
կաւ՝ և վերցուց անիկա ։ Նիկոդեմոսն ալ եկաւ , 39
(որ ինքը առաջուան գիշերով Յիսուսին եկեր
էր) ու բերաւ հարիւր լիտրի չափ զմուռս հալու-
ած հետառած ։ Անոնք Յիսուսին մարմինը ա- 40
ռին՝ ու կապեցին զանով և հոտերով փաթթեցին ,
ինչպէս որ Հրեաներուն սովորութիւն էր պատ-
րաստել ։ Եւ անտեղը ուր որ խաչ վիացաւ՝ պարտէզ 41
մը կար , ու անոր պարտէզին մէջը նոր գերեզման մը ,
որ անոր մէջը ամենեւին մարդ դրված չէր ։ Հրե- 42
աներուն ուրբաթին համար՝ Յիսուսը
ինչու որ գերեզմանը մօտ էր ։

Գլ ։ Ի ։

Ու մէկշաբթի օրը Մարիամ Մագդաղենացին 1
առաւոտանց մեծ թնաւոտութեն գերեզմանը կու-
գայ , ու կրտեսնայ որ՝ քարը գերեզմանին դուռ-
նէն վերցրված էր ։ Եարթ կրվազէ դէպ ի Սիմոն 2
Պետրոսին և մեկալ աշակերտին՝ որն որ Յիսուս
կըսիրէր , և կրսէ անոնց ։ Տէրը գերեզմանէն վեր-
ցուցին , ու չենք գիտեր ուր դրին անիկա ։ Ելաւ 3
Պետրոս և մեկալ աշակերտը՝ ու դէպի գերեզմա-
նը կուգային ։ Երկուքն ալ մէկ տեղ կրվազէին ։ 4
և մեկալ աշակերտը վազեց չուտ մը Պետրոսէն
առաջ անցաւ , ու ինքը առաջ գերեզմանը եկաւ ։
Եւ ծռնելով նէրս նայեցաւ տեսաւ որ կտաւները 5
Հոն կեցեր էին , բայց ինքը ներս չի մտաւ ։ Սիմոն 6
Պետրոսն ալ հետևաւ , որ անոր ետևէն կուգայիր ,
ու գերեզմանը մտաւ և տեսաւ կտաւները որ հոն
կեցեր էին , ու վարշամակը՝ որ անոր գլուխն էր , 7
ուրիշ կտաւներուն հետը չէր , հապա ծալած

8 զատ մէկ կողմը դրած էր : Աշնատները նէրա մտաւ
մէկալ աշակերտն ալ՝ որ առաջուց գերեզմանը
9 եկեր էր , տեսաւ ու հաւատաց : Ինչու որ դեռ
գիրքերը չէին գիտեր , որ Պէտք է անոր՝ մեռել-
10 նէրէն յարութիւն առնել : Աշակերտները նորէն
մէկալներուն քով գացին :
11 Իսայց Մարիամ գերեզմանին դուրսը կայներ
էր՝ և կուլար . ու երբոր կուլար՝ դէպի գերեզմա-
12 նը ծռեցաւ նայեցաւ , ու տեսաւ երկու հրեշտակ-
ներ ճերմակներով , որ նստեր էին ուր որ Յիսուս-
սի մարմինը գրած էր , մէկը գլխուն կողմէն և մէ-
13 կալը ոտքին կողմէն : Եւ անոնք իրեն ըսին . Կը-
նիկ , ինչու կուլաս կոր . բաւ անոնց , Վասն հա-
մար՝ որ իմ Տէրս գերեզմանէն վերցուցին՝ ու չեմ
14 գիտեր ուր դրին անիկա : Այս որ բաւ , նայեն
դարձաւ՝ և տեսաւ Յիսուսը որ կայներ էր , ու
15 չէր գիտեր թէ Յիսուս է : Յիսուս իրեն բաւ .
Կընիկ ինչու կուլաս , ո՞վ կը փնտրտես . իրեն ա-
նանկ երևցաւ թէ պարտիզպանն է , բաւ անոր .
Տէր՝ թէ որ դուն վերցուցիր անիկա , ըսէ ինծի
16 ուր դրիր ան , որ ես անիկա առնեմ : Յիսուս ը-
սաւ անոր , Մարիամ . ան ալ դարձաւ ու Եբ-
րայեցերէն անոր բսաւ , Թաբունի . որ Ա՛ արդա-
17 պետ կրնայ ըսուիլ : Յսաւ անոր Յիսուս . Ինծի
մի՛ դպչիր . ինչու որ դեռ Հօրս քով ելած չեմ .
Հապա գնա եղբայրներուս , և ըսէ անոնց . Ես կել-
լամ իմ Հօրս քովը ու ձեր Հօրը քովը , և իմ
18 Աստուծոյս քովը ու ձեր Աստուծոյն քովը : Մա-
րիամ Magdalենացին եկաւ՝ ու աշակերտնե-
րուն պատմեց թէ Տէրը տեսաւ , և ան ա-
բաները իրեն զրուցեց :
19 Եւ Կիրակիի օրը իրիկուն էր՝ ու դուռները
ալ գոց , ուր որ աշակերտները Հրեից վախուն
մէկտեղ ժողվված էին , Յիսուս եկաւ և անոնց
մէջը կայնեցաւ , ու բսաւ անոնց՝ Ողջոյն ձեզի :
20 Ան որ բսաւ՝ իր ձեռքերը և կուշտը ցուցուց ա-
նոնց . աշակերտներն ալ ուրախացան՝ երբոր Տէ-

րը տեսան ։ Նորէն բսաւ անոնց · Ողջոյն ձեզի · 21
ինչպէս որ իմ Հայրս իս խրկեց , ես ալ ձեզ կը-
խրկեմ ։ Եւ ասս որ բսաւ՝ փչեց անոնց , ու բսաւ · 22
Առէք Հոգին Սուրբը · Թէ որ մէկուն մեղքը թո-
ղուք՝ թողված ըլլայ անոնց · Թէ որ մէկուներ ես 23
բռնէք՝ բռնըված ըլլայ ։

Բայց Թովմաս տասներկուքէն մէկը՝ երկուոր- 24
նակ ըսուածը , անոնց հետը չէր՝ երբոր Յիսուս ե-
կաւ ։ Ուրիշ աշակերտները կըսէին իրեն՝ Թէ 25
Տէրը տեսանք · ան ալ բսաւ անոնց , Թէ որ իր
ձեռքը գամերուն նշանը չի տեսնամ , ու մատը-
ներս գամերուն տեղը չի խրեմ , և իմ ձեռքս
անոր կողը չի խրեմ՝ նէ չեմ հաւատար ։

Եւ ութը օրէն նորէն աշակերտները ներսն 26
էին , ու Թովմաս իրենց հետը · Եկաւ Յիսուս՝
դուռները գոց ըլլալով , ու կայնեցաւ անոնց մէջը՝
և բսաւ , Ողջոյն ձեզի ։ Ետքը բսաւ Թովմասին · 27
Իմ մատներդ՝ հս դիր հոս , և նայէ իմ ձեռ-
քերս , ու բեր քու ձեռքդ՝ և խրէ իմ կողս , ու
մի՛ ըլլար անհաւատ , հապա հաւատացեալ ։ Պա- 28
տասխան տուաւ Թովմաս՝ և բսաւ անոր , Իմ
Տէրս և իմ Աստուածս ։ Յիսուս բսաւ անոր · Ե- 29
տիկա որ՝ դուն իս տեսար ու հաւատացիր , երանի
անոնց որ տեսած չեն՝ և պիտի հաւատան ։

Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ իր աշա- 30
կերտներուն առջեւն , որ աս գիրքին մէջ գրված
չէ ։ Հապա աս՝ այնչափ բան գրվեցաւ , որ հաւ- 31
տաք Թէ Յիսուս՝ Քրիստոս է Աստուծոյ Որդին ·
և որ հաւատալով յաւիտենական կեանքը ընդու-
նիք անոր անունովը ։

ԿԱ · ԻՆ ։

Ետքէ ետև Յիսուս նորէն ինքզինքը իր աշա- 1
կերտներուն յայտնեց Տիբերիայի ծովին ե-
ղերքը · և ասանկ յայտնեց ։ Ա՛նկուսը էին Սիմոն
Պետրոս՝ ու Թովմաս երկուորնակ ըսուածը՝ և
Նաթանայէլը՝ որ Գալիլեացոց Կանա գիւղէն

էր , ու Հրեղեսի որդիքը՝ և աշակերտներէն ու-
3րիշ երկուք ալ : Սիմոն Պետրոս ըսաւ անոնց ·
Ես ձուկ բռնելու կերթամ · ըսին անոր , Մենք
ալ կուգանք քեզի հետ · գացին ու մտան նաւը ,
4և ան գիշերը բան չի բռնեցին : Երբոր առտու
եղաւ՝ Յիսուս ծովին եղերքը կայներ էր , բայց
5աշակերտները չի ճանչցան թէ Յիսուս է : Յի-
սուս ըսաւ անոնց · Տղաք՝ ուտելու բան մը ունիք
6մի · պատասխան տուին և ըսին իրեն , Չէ : Ա-
նոնց · Ուղղանիդ նաւին աջ կողմը ձգեցէք՝ ու
պիտի գտնաք · ձգեցին , և ձուկերուն շատութե-
7նէն չէին կրնար քաշել : Ուր աշակերտը որ՝ Յի-
սուս կը սիրէր ըսաւ Պետրոսին , Տիկնա
Տէրն է · Սիմոն Պետրոս երբոր լսեց թէ Տէրն է ,
լաթի մը վրան փաթթուեցաւ , (ինչու որ մերկ էր ,
8և ինքը ծովը նետուց : Ու մնացած աշակերտները
նաւով կուգային(որ , (ինչու որ ցամաքէն հեռու
մը չէին , միայն թէ երկու հարիւր կանգունի
9չափ) և ուռկանը ձուկերովը կը քաշէին : Երբոր
ցամաքը ելան՝ հոն տեղը մէկ վառած կրակ մը տե-
10սան , ու վրան ձուկ մը և հաց : Յիսուս ըսաւ ա-
նոնց · Տուէք ատ ձուկերէն որ դուք հիմայ բռը-
11նեցիք : Սիմոն Պետրոս մտաւ , ու ուռկանը ցա-
մաքը կը քաշէր՝ հարիւր յիսուն իրիք խոշոր խոշոր
ձուկերով լեցուն · և այնչափ բան կար , ու չի
12պատռեցաւ ուռկանը : Յիսուս ըսաւ անոնց · Ե-
կէք ճաշ կերէք · ու աշակերտներէն մէկն ալ չէր
համարձակեր հարցնելու թէ Դուն ով ես · ինչու
13որ գիտէին թէ Տէրն է : Յիսուս եկաւ՝ ու առաւ
14հացը և անոնց տուաւ՝ անանկ ալ ձուկը : Այս ի-
րիք հինգ է որ Յիսուս աշակերտներուն երևցաւ՝
մեռելներէն յարութիւն առնելէն ետքը :
15 Ու երբոր ճաշը կերան՝ Յիսուս ըսաւ Սիմոն
Պետրոսին , Սիմոն Յովնանին որդի՝ ինծի աւտնցմէ
էվել կը սիրես մի · անոնք ըսաւ իրեն , Այո Տէր ,
դուն ալ գիտես որ քեզ կը սիրեմ · ըսաւ անոր ,
16Արածէ իմ գառնուկները : Դարձեալ ըսաւ անոր ,

Սիմոն Յովհաննէն ասդին խս կըսիրես մի · բսաւ Ի-
րեն , Աւյ Տէր · դուն ալ գիտես որ քեզ կըսի-
րեմ · բսաւ անոր , Արածէ իմ ոչխարներս ։ Ա- 17
սաւ անոր երրորդ անգամ · Սիմոն Յովհաննէն
ասդին խս կըսիրես մի · Պետրոս տրտմեցաւ որ իրեք
հետ իրեն բսաւ թէ խս կըսիրես · և բսաւ անոր ·
Տէր դուն ամէն բան գիտես , և ամէն բան կը-
ճանչնաս , և որ ես քեզ կըսիրեմ · բսաւ անոր
Յիսուս , Արածէ իմ ոչխարներս ։ Ա՛ՀմարիՀ 18
ձ՛ըսարիս կըսեմ քեզի որ՝ Երբ դուն տղայ էիր ·
ինքդիդդ գօտի կըկապէիր , ու կերթայիր ուր որ
ուզէիր · բայց երբոր ծերանաս՝ ձեռքերդ վեր պի-
տի բանես , և ուրիշները քեզի գօտի պիտի կա-
պեն , ու պիտի տանին ուր որ չես ուզեր ։ Ա- 19
յսոր բսաւ՝ ցուցընելով թէ ինչ մահով
պիտի փառաւորէ Աստուած · և երբոր աս զրուցը
բսաւ անոր · Իմ ետևէս եկիր ։ Պետրոս դարձաւ՝ 20
ու տեսաւ այն աշակերտը որոնը Յիսուս կըսիրէր ,
որ ետևէն կուգար (որ անիկա նաև անոր
կուրծքը ինկեր և բսեր էր՝ Տէր ով է որ քեզ պի-
տի մատնէ) Պետրոս անիկա երբոր տեսաւ , բսաւ 21
Յիսուսին · Տէր՝ հապա ասիկա ինչ պիտի ըլլի ։
Յիսուս բսաւ իրեն · Թէ որ ես ուզեմ՝ որ ասիկա 22
ապրի մինչև որ ես գամ , քու ինչ հոգդ է · դուն
իմ ետևէս եկիր ։ Այս խօսքը եղաւ եղբայրնե- 23
րուն մէջը , ու կարծեցին որ այն աշակերտը չի
պիտի մեռնի · սակայն Յիսուս չըսաւ անոր թէ՝
Չի պիտի մեռնի , հապա՝ թէ որ ես ուզեմ՝ որ ա-
սիկա ապրի մինչև որ ես գամ ։

Ասիկա այն աշակերտն է , որ կըվկայէ աս բա- 24
ներուս համար , որ աս բաները գրեց ալ · ու գի-
տենք որ անոր վկայութիւնը ճշմարիտ է ։ Այլ 25
ուրիշ շատ բաներ ալ կայ , որ Յիսուս ըրաւ , որ
անոնք թէ որ մէկիկ մէկիկ գրուած ըլլար , կար-
ծեմ թէ աշխարհս ալ չերիք չէր այն գիրքերը եր
ՆՀԷ սըղմեցնելու՝ թէ որ
գրուած ըլլային ։

ԸՈՒՐԱԼՈՅ

ԳԻՐՔ ՅԻՌՆԱՅԻ։

ԳԼ. Ա։

1 Ա ոչի պատմութիւնը որ ըրի՛ ամէ Թէոփիլէ , ան
ամէն բաներուն վրայ՝ որ Յիսուս սկսաւ ընել
2 և սորվեցունել , մինչև Հոգւոյն Սրբոյ ձեռքովը
առաքեալներուն պատուէր տալու օրը՝ որոնք որ
3 ընտրեր էր , ու համբարձաւ ։ Որ անոնց ինքզինք-
ը ցուցուց կենդանի իր չարչարանքներէն ետև՝
շատ հրաշներով , քառասն օր անոնց երևնա-
լով , ու Աստուծոյ թագաւորութեանը վրայ խօ-
4 սելով ։ Եւ անոնց հետ միկտուղ հաց կերած ա-
տենը՝ կապրսպրբէր իրենց որ Երուսաղէմէն չի
պատվին , հապա սպասեն Հօրը խոստմունքին՝ որ
5 ան ինծմէ լսեցիք կըսէր ։ Ինչու որ Յով-
նէս ջուրով մկրտեց , բայց դուք ասկէ շատ օրեր
6 չանցած՝ Հոգին Սուրբով պիտի մկրտվիք ։ Ա-
նոնք ալ եկան կըհարցունէին իրեն՝ ու կըսէին ,
Տէր՝ Իսրայէլի թագաւորութիւնը հիմայ աս ժա-
7 մանակս պիտի հաստուներս ։ Ըսաւ անոնց ։
Ձեր ժամերը և ժամանակները գիտնալը ձեր բանը
չէ , որ անոնք Հայրը իր իշխանութեան մէջը
8 դրաւ ։ միայն թէ՝ Հոգին Սուրբին ձեր վրայ
եկած ատենը զօրութիւն պիտի առնէք , ու ինծի
համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմին մէջը՝

և բոլոր Հրէաստանի՝ ու Երուսաղէմի մէջը՝ և մին-
չև երկրիս ծայրերը : Եւ ասոնք բաները որ ըսաւ՝ 9
երբոր անոնք կը նայէին, համբարձաւ, ու մէկ
ամպ մը անոնց աչքերուն առնելէ : Եւ երբոր 10
դեռ աչքերնին անկած դէպի երկինքը կը նայէին
անոր երթալուն վրայ՝ ահա երկու մարդ երևե-
ցան իրենց ճերմակ հագուստով, որոնք նաև ը- 11
սին . Ով Գալիլեացի մարդիկ՝ ինչո՞ւ կայներ դէ-
պի երկինքը կը նայիք . ասոնք Յիսուսը՝ որ ձեզմէն
երկինքը համբարձաւ, ասանկ պիտի գայ ինչպես
որ անիկա տեսաք երկինքը երթալով : Ետևնին 12
Ձիթենեաց բսած լեռնէն Երուսաղէմ դարձան,
որ շաբաթի օրվան ճամբու չափ մտ է Երուսա-
ղէմի : Եւ երբոր հոն մտան, նայն վերնատու- 13
նը, ուր որ կը բնակարանն էր, Պետրոսը և
Յակոբոսը՝ Յովհաննէս և Անդրէասը, Փիլիպպոս
և Թովմասը, Բարթողիմէոս և Մատթէոսը,
Յակոբոս Ալփէոսեանը ու Շմաւոն Նախանձա-
յողը՝ և Յուդա Յակոբեանը : Ասոնք ամէնը 14
միաբանութեամբ միշտ աղօթք կընէին կիներուն
հետը, ու Յիսուսի մայրը Մարիամին՝ և անոր
եղբայրներուն հետ միասին :
Եւ ան օրերը Պետրոս եղբայրներուն մէջը ե- 15
լաւ՝ ու ըսաւ . (և հոն հաւիւր քսան անուն չափ
բազմութիւն կար .) Մարդիկ եղբայրներ՝ պէտք 16
է որ գրուածքը կատարվէր, որ առաջուց Հոգին
Սուրբ Դաւիթին բերնովը բսաւ Յուդային հա-
մար՝ որ ան Յիսուսը բռնողներուն առաջնորդ ե-
ղաւ . ինչու որ անիկա մեզի հետ էր մեր համայն- 17
քին մէջը, և աս պաշտամունքին ան ալ բաժին
ունէր : Անիկա անիրաւ վարձքով գետ մը ունե- 18
ցաւ նէև, և ուռնցած մէջքին ճղքվելցաւ, ու
բոլոր իր փորը դուրս թափելցաւ : Ու Երուսա- 19
ղէմ բնակողներուն ամէնուն յայտնի եղաւ . մին-
չև որ իրենց լեզուովը ան գետին անունը Հակե-
դամա կանչեցին, որ բսել է Արիւնի գետ : Ետև 20

չու որ գրված է Մաղմոսներուն գիրքին մէջը · Ընոր բնակարանը աւերակ թող ըլլայ , ու մարդ չըլլայ որ անոր մէջը բնակի , և անոր պաշտօնը
21 ուրիշը թող առնէ : Ուրեմն պէտք է որ՝ այս մար-
դիկներէն որ մեր հետը եղան ան բոլոր առնելը ,
22 որ Տէր Յիսուս մէջերնիս մտաւ ու ելաւ . Յո-
հաննէսին մկրտութենէն սկսած՝ մինչև ան օրը
որ մեզմէ համբարձաւ . առնցմէ մէկը մեզի հետ
23 վկայ ըլլայ անոր յարութեանը : Եւ երկու հոգի
կանգնեցին , Յովսէփը որուն Բարսաբա կ'ըսէ-
էին , որ Յուստոս ալ կ'ըսէր . ու Մատաթիան :
24 Եւ աղօթք ընելով ըսին . Դուն ով Տէր՝ որ ա-
մէնուն սիրտը գիտես , այս երկուքէն մէկը՝ որն որ
25 կանգնեցիր նէ , մեզի յայտնէ . որ առ պաշտօնիս
և առաքելութեան վիճակը առնէ , որ անկէց Յու-
26 դան ինկաւ երթալու իր տեղը երթալու : Եւ անոնց
վիճակները տըւին , ու վիճակը Մատաթիային
ելաւ . և ան տասնեւերկու առաքելոց հետ սեպվե-
ցաւ :

ԳԼ · Բ :

1 Եւ Պենտեկոստէին օրերը լրիանալու առնեը՝
2 ամէնն ալ միասին մէկտեղ էին : Ու յան-
կարծակի երկինքէն ձայն մը եղաւ՝ աստիճ հովի
մը պէս եկած , որ բոլոր տունը լեցուց ուր որ
3 նստած էին : Եւ բաժնըված լեզուներ երեւցան
իրենց ոյպէս թէ կրակէ , ու ամէն մէկուն վրայ
4 նստաւ : Եւ ամէնքն ալ Հոգւով Սրբով լեցվե-
ցան , ու սկսեցին ուրիշ լեզուներով խօսիլ , ին-
5 ծոր որ Հոգին իրենց խօսիլ կուտար : Ու Երու-
սաղէմի մէջն ալ Հրեաներ կըբնակէին՝ աստուա-
ծաւախս մարդիկներ երկինքին տակը եղած բոլոր
6 ազգերէն : Եւ երբոր այս ձայնը եղաւ՝ բազմու-
թիւնը մէկտեղ եկան ու գիմզմեցան , ինչու որ կը-
լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը-
7 խօսէին : Ամէնքն ալ կըսքանչանային ու կըզար-

մանային՝ և մկրտիմ կրնեին . Ովր որ ահա ա-
8 սոնք ամէն ալ որ կրնասին՝ Գալիլեացի են . և
ինչպէս կը լսենք որ մենք ամէն մէկս մեր լեզուով՝
9 որ անոր մէջը ծնած ենք : Պարթեւներ ու Մարքեր
և Ելամացիներ , և անոնք որ Միջագետքը կբըր-
նակին՝ Հրէաստանի մէջ՝ և Կամիրքի մէջ՝ Պոն-
10 տոսի մէջ՝ և Ասիայի մէջ՝ փռիւգիայի մէջ՝ և
Պամփիլիայի մէջ՝ Եգիպտոսի մէջ՝ և Լիբիացի-
ներուն կողմերը , անոնք որ Կիւրենացիներուն
հետ՝ և անոնք որ օտարական Հռոմայեցիները :
11 Հրէաները ու անոնց դարձածները , Կրետացիներ և
Արաբացիներ՝ կը լսենք անոնց որ մեր լեզուն-
12 ովը կը խօսին Աստուծոյ մեծամեծ բաները : Կը-
քանչանային ամէն ալ զարմանալով՝ և իրարու
13 կրսէին , Ինչ պիտի ըլլայ աս : Իւ կէսերնին
ծաղր ընելով կրսէին , Թէ Անոնք նոր գինիով
լեցուեր են :
14 Եւ Պետրոս տասնըմէկներուն հետ կեցող ,
ձայնը վերցուց՝ ու խօսեցաւ անոնց . Ովր Հրէ-
աստանցի մարդիկներ՝ և դուք ամէնդ որ Երու-
սաղէմ կը բնակիք , աս ձեզի յայտնի ըլլայ , ու
15 ականջ դրէք իմ խօսքերուս : Ովք Թէ ինչպէս որ
դուք կը կարծէք , ասոնք հարբած են . ինչու որ
16 դեռ իրեքն է ժամը աս օրուան : Հապա աս ա-
17 րանն է , որ Յովէլ մարգարէին ձեռքովը ը-
ւեցաւ : Եւ պիտի ըլլայ որ ասկէ ետև վերջին օ-
րերը՝ կրսէ Աստուած , իմ Հոգիէս բոլոր մար-
միններուն վրայ պիտի լեցունեմ , ու ձեր տղաքը
և ձեր աղջիկները պիտի մարգարէանան , ու ձեր
երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնան , և
18 ձեր ծերերը երազներ պիտի տեսնան : Եւ իմ
ծառաներուս վրայ ու իմ աղախիններուս վրայ
ան օրերը իմ Հոգիէս պիտի լեցունեմ՝ և պիտի
19 մարգարէանան : Իւ վերը երկինքը նշաններ պիտի
ցուցընեմ , ու վերը երկիրը նշաններ՝ արիւն և
20 կրակ և մուխի փոթորիկ : Արևը խաւար պիտի

դառնայ , և լուսինը՝ արիւն , Տէրոջը մեծ ու և-
21 լևելի օրը գնա չեկած ։ Եւ պիտի ըլլայ որ՝ ամէն
ոք որ Յ.ստուծոյ անունը կանչէ նէ , պիտի փրկը-
22 վի ։ Ով Իսրայէլացի մարդիկ՝ լսեցէք սա խօսքե-
րը ։ Յիսուս Նազովրեցին՝ Յ.ստուծմէ ձեզի ցու-
ցուած մարդ մը զօրութիւնով ու նշաններով և
հրաշքներով , որ Յ.ստուած անոր ձեռքովը ըրաւ
23 ձեր մէջը ։ ինծոր որ դուք ալ գիտէք ։ Անիկա՝
Յ.ստուծոյ խորհուրդովը և առաջուց գիտնալովը
սահմանուած ըլլալով , անօրէններուն ձեռքովը
24 մատնուած՝ փայտի վրայ գամելով սպաննեցիք ։ որ
անիկա Յ.ստուած յարուց՝ մահուան ցաւերը քա-
կելով ։ որովհետև հնար չէր որ ինքը անկէց
25 բռնուէր ։ Դաւիթ ալ անոր համար կըսէ , Յ.-
ռաջուց ամէն ատեն Տէրը կըտեսնայի իմ առ-
26 ջևըս , որ իմ աջ կողմն է , որ ես չի սասանիմ ։ ա-
նոր համար ուրախ եղաւ իմ սիրտս՝ և իմ լեզուս
ցնծալ ըրաւ , ու իմ մարմինս ալ յուսով հան-
27 գիստ պիտի ննայ ։ Ինչու որ իմ անձս դժոխքին
մէջը չի պիտի թողուս ։ և քու Սուրբիդ ապակա-
28 նութիւն տեսնալ չի պիտի տաս ։ Կեանքին ճամ-
բաները ինծի ծանչցուցիր ։ քու երեսիդ ուրա-
խութիւնովը անուշութիւնով զիս լեցուցիր ։
29 Ա՛արդիկ եղբայրնե՛ր՝ պէտք է որ համարձակ
ըսլսեմ ձեզի Դաւիթ նահապետին համար , որ
մեռաւ ու թաղուեցաւ , և անոր գերեզմանը մինչև
30 աս օրս մեր մէջն է ։ Ինչու որ մարգարէ էր և գի-
տէր՝ թէ Յ.ստուած երդումով երդում ըրաւ ի-
րեն , որ իր փորին պտուղէն իր աթոռը նստե-
31 ցունէ ։ ինքը առաջուցմէ գիտնալով խօսեցաւ
Քրիստոսի յարութեանը համար , թէ անոր հո-
գին դժոխքը չի ձգուց , և անոր մարմինը ապակա-
32 նութիւն չի տեսաւ ։ Զ՚ս Յիսուս Յ.ստուած յա-
33 րուց , որ անոր մենք ամէնքս ալ վկայ ենք ։ Յ.ս-
տուծոյ աջ ձեռքովը բարձրընալով , Հոգւոյն
Սրբոյ խոստմունքը Հօրմէն առնելով՝ տարածեց

ասիկա , որ դուք կրտնանաք և կըլսէքզոր : Ան- 34
ջու որ Պատրեի երկինքը չելաւ , Քայց բուն ինքը
կըսէ · Տէրը իմ Տէրոջս բաւ , իմ աջ կողմըս
նստէ · մինչև որ քու թշնամիներդ քու ոտքիդ կո- 35
խելիք դնեմ : Ուստի՝ բոլոր Իսրայէլի տունը 36
ճշմարիտ թող գիանայ , որ Յաստուած անիկա Տէր
ալ ըրաւ՝ Օծեալ ալ , ան Յիսուսը որ դուք
խաչեցիք :

Ու ասոր որ լսեցին՝ իրենց սիրտերնուն մէջը զար- 37
նըվեցան , և ըսին Պետրոսին ու մեկալ առա-
քեալներուն , Արդիկ եղբայրներ՝ ի՞նչ ընենք :
Պետրոս ըսաւ անոնց · Ապաշխարեցէք՝ ու ձեզմէ 38
ամէն մէկնիդիդ թող մկրտուի Տէր Յիսուս
Քրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան հա-
մար , և Հոգւոյն Սրբոյ ատրճանք պիտի ընդու-
նիք : Ինչու որ աս խոստումնըդ ձեզի է՝ ու ձեր 39
որդոցդ , և ամէն հեռու եղողներուն՝ որոնք որ
մեր Տէր Յաստուածը պիտի կանչէ : Եւ ուրիշ շատ 40
խօսքերով վկայութիւն կըբերէր , ու կըսորդորէր
անոնք՝ և կըսէր · Ա՛ս ծրտած ազգէն ինքզինքնիդ
խալսեցէք : Ուստիև սրտանց ընդունելով անոր 41
խօսքերը՝ մկրտուեցան · և այն օրը իրենք հաւար
Հոգիի չափ եվեցան : Եւ միշտ առաքելոց վարդա- 42
պետութեանը նուիէ էին , և ընկերութեանը , ու
հաց կոտրուն , և աղօթքին :

Եւ ամէն մարդու վրայ ահ ու դող եկաւ · շատ 43
նշաններ և հրաշքներ առաքելոց ձեռքովը կըգոր-
ծըվէին : Հոլոր հաւատացեալները մէկտեղ էին , 44
և ամէն բաներնին հասարակ էր : Ու ստաց- 45
ուածքնին և ունեցած բաներնին կըծախէին՝ ու
կըբաժնէին անիկա ամէնուն , որուն որ ինչ բան
պէտք ըլլար : Ամէն օր կանուխ տաճարը կեր- 46
թային մէկտեղ , և տուները հացը կըկոտրէին , ու
կերակուրնին կուտէին ուրախութիւնով և միա-
միտ սրտով : Յաստուած կօրհնէին , և բոլոր ժո- 47
ղովուրդին առջև ալ հաճելի էին · ու Տէրը օրէ
օր կէվելցուներ ան փրկվածներուն վրայ :

ԴԱՐԻԽ · Գ ։

1 Պետրոս ու Յովհաննէս իններ-
2 որդ ժամուն աղօթ-
քի տանը տաճարը կ'երթային ։ Եւ իր մօրը
փորէն կաղ ծնած մարդ մը կար , որ անիկա ամէն
օր կը վերցնէին տաճարին դռանը քով կը դնէ-
ին որ Աստղիկ դուռ կ'ըսէին , տաճարը մտնող-
3 ներէն ողորմութիւն ուզելու համար ։ Անիկա
տեսնալով Պետրոսը և Յովհաննէսը՝ որ տաճարը
4 կը մտնային , կաղաչէր ողորմութիւն առնելու ։
Պետրոս Յովհաննէսին հետ ակնդետ անոր նայե-
5 ցաւ՝ և ըսաւ , Մ'նդի նայէ ։ Ան ալ դէպի անոնց
6 դառնաւ , ու կ'ըսէր անոնցմէ բան մը առնելու ։
Պետրոս ա՛ ըսաւ ։ Արծաթ և ոսկի չունիմ , հա-
պա ինչ որ ունիմ նէ՛ ան քեզի տամ ։ Յիսուս
Քրիստոսի Նազովրեցիին անունովը ելիր ու քա-
7 յէ ։ Եւ անոր աջ ձեռքէն բռնեց ինքը վերցուց ,
8 և շուտ մը անոր ծունկերը ու ոտքերը ամրացան ։
Ան ելաւ ցատկեց՝ ու սկսաւ քալել , և անոնց հետ
տաճարը մտաւ ։ կը քալէր ու կը ցատկ ը ընէր , և
9 Աստուած կը գոհէր ։ Ու բոլոր ժողովուրդը տե-
սաւ անիկա , որ կը քալէր և Աստուած կը գոհէր ։
10 և կը ճանչնային անիկա թէ աս էր , որ ողորմա-
թեան համար տաճարին Գեղեցիկ դուռը քով կը նստէր ։ ու զարմանքով լեցան ան եղած
հրաշքին վրայ ։

11 Եւ անիկա որ դեռ Պետրոսը և Յովհաննէսը
բռներ էր , բոլոր ժողովուրդը զարմացած վազե-
ցին անոնց քովը ան սրահին մէջը , որ Սողոմոնին
12 կ'ըսէր ։ Պետրոս երբոր տեսաւ՝ պատասխան տը-
ւաւ ժողովուրդին , Ով Իսրայէլացի մարդիկ՝
ինչո՞ւ զարմացեր էք ասոր վրայ , կամ մեր վրայ
ինչո՞ւ ապշեր կը նայիք , որպես թէ մենք մեր ան-
ձին զօրութիւնովը կամ կարողութիւնովը ատոր
13 քալել տըվինք ։ Աբրահամին Աստուածը ու Սա-

Հակին Աստուածը և Յակոբին Աստուածը՝ մեր
Հարերնուս Աստուածը իր Որդին Յիսուսը փա-
ռաւորեց , որ անիկա դուք մատնեցիք , և ուրա-
ցաք Պիղատոսին առջեւը՝ երբոր ինքը վճռեց որ
թող տայ : Նայց դուք ան Սուրբը և Արդարը 14
ուրացաք . ու մահապարտ մարդ մը ուղեցիք որ
ձեզի շնորհէ : Եւ կենաց Առաջնորդը սպաննե- 15
ցիք . որ անիկա Աստուած մեռելներէն յարուց ,
որուն բուն մենք վկայ ենք : Եւ անոր անունին 16
հաւատքովը , անոր անունը հաստատեց ասիկա՝
որ դուք կրտեսնաք ու գիտէք . և ան հաւատքը
որ անով է աս առողջութիւնը անոր տուաւ ձեր
ամենուն առջեւը : Եւ հիմայ եղբայրնե՛ր գիտեմ 17
որ չի գիտնալով ըրիք , ինծոր որ ձեր իշխաններն
ալ : Նայց Աստուած ինչպես որ առաջուց բոլոր 18
մարգարէներուն ձեռքովը զուբցից իրին Քրիս-
տոսին չարչարվիլը , անանկ ալ կատարեց : Ուս- 19
տի դղջացէք ու դարձի եկէք , որ մեղքերնիդ ջնջը-
վի . որ հանգստանալու առանները գան Տէրոջը և 20
րեսէն , և առաջմանէ ձեզի համար սահմանված
Յիսուս Քրիստոսը խրկէ : Որ անիկա պէտք է որ 21
երկինքը ընդունի մինչև ան առանները՝ որ ամէն
բան հաստատվի . որոնց համար Աստուած իր սուրբ
մարգարէներուն բերնովը խօսեցաւ : Մովսէս մեր 22
Հօրերնուս բսաւ , թէ Ձեր Տէր Աստուածը ձեզի
մէկ մարգարէ մը պիտի հանէ ձեր եղբայրներէն՝
ինծի պէս , անոր մտիկ ըրէք ամէն կէսպիս ինչ որ
ձեզի խօսի նէ : Եւ պիտի ըլլայ՝ որ ամէն հոգի որ 23
ան մարգարէին մտիկ չընէ , ժողովուրդին միջէն
պիտի կորսըվի : Ու բոլոր մարգարէները՝ որ Սա- 24
մուէլէն մինչև հիմայ եկան , խօսեցան և պատմեցին
աս օրերուս համար : Դուք էք ան մարգարէներուն 25
որդիքը՝ և ան ուխտին որ Աստուած մեր Հօրեր-
նուս հետ ուխտ դրաւ , և բսաւ Աբրահամին .
Քու զաւակովդ պիտի օրհնվին երկրի բոլոր
ազգերը : Աստուած իր Որդին առաջ ձեզի յա- 26

բուց , ու խրկեց անիկա ձեզ օրհնելու , որ դուք ամէնքդ ձեր չարութիւններէն դառնաք ։

ԳԼ · Ը։

1 Եւ երբոր անոնք ժողովուրդին հետը կրնասէ-
ին , քահանայապետները ու տաճարին իշխան-
ները՝ և Յադուկեցիները անոնց վրայ հասան ,
2 սաստիկ բարկացած՝ որ անոնք ժողովուրդը կըսոր-
վեցունէին , և Յիսուսի ձեռքովը մեռելներուն
3 յարութիւնը կըքարոզէին ։ Ձեռքերնին զարկին
անոնց , ու բանտը դրին անոնք մինչև եռւսի օրը ,
4 հինչու որ իրիկուն էր ։ Խայց ան խօսքը լսողներէն
շատերը հաւատացին , ու մարդոց համրանքը հինգ
հազարի չափ եղաւ ։
5 Եւ եղաւ որ եռւսի օրը անոնք Երուսաղէմ ժողովե-
ցին իշխանները ու երէցները և կարգացողները
6 Երուսաղէմի մէջ ։ ու Ինան քահանայապետը և
Կայիափան՝ ու Յովհաննէսը՝ և Ալէքսանդրոսը , և
7 ան ամէնքը որ քահանայի ցեղէն էին ։ Եւ անոնք
ամէնքին կայնեցուցած՝ կըհարցունէին , Ի՞նչ
զօրութիւնով կամ ի՞նչ անունով ըրիք դուք աս
8 բանը ։ Պետրոս Հոգւով Սրբով լեց-
ուած՝ բսաւ անոնց ։ Ա՛վ ժողովուրդին իշխանները
9 և Իսրայէլի ծերերը ։ Թէ որ արժան է մեզ դա-
տել այսօր ախտ մարդու մը բարիք ընելու հա-
10 մար , որ անով ասիկա բժշկըվեցաւ ։ Յայտնի ըլ-
լայ ձեզի ամէնուդ , ու բոլոր Իսրայէլի ժողովուր-
դիդ , որ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անու-
նովը՝ որ անիկա դուք խաչեցիք որ Աստուած ա-
նիկա մեռելներէն յարուց , ահա անով ասիկա
11 ձեր առջև բուրնացած կեցեր է ։ Անիկա է ան
քարը ձեզմէ շինողներդ անարգուած , որ ան-
12 կիւնի գլուխ եղաւ ։ և ուրիշ մէկով մը փրկու-
թիւն չի կայ ։ Ինչու որ՝ անկէ ի զատ ուրիշ ա-
նուն մը չի կայ երկինքի տակը մարդուս տրուած ,
13 որ անով կարող ըլլանք փրկըվիլ ։ Պետրոսին ու

Յօհաննէսին համաձայնութիւնը նայելով , և իմանալով որ տգէտ ու առանց ուսման մարդիկ են , կըզարմանային . որ կըճանչնային անոնք՝ թէ Յիսուսի հետ էին . և ան բժշկված մարդն ալ կը- 14
տեսնային որ անոնց հետ կայներ էր , ու բան մը չէին կրնար ըսել : Եւ երբոր հրաման ըրին ա- 15
նոնց տանիլէն դուրս ելլալ , իրարու հետ խորհուրդ ըրին , և ըսին . Ի՞նչ ընենք աս մարդոցը . 16
ինչու որ ասոնց ձեռքովը մեծ հրաշք մը եղաւ , ու Երուսաղէմի մէջ բնակողներուն բոլորին յայտնի է , և մենք չենք կրնար ուրանալ : Այլեայն 17
թէ ժողովուրդին մէջ ելլելոք չի տարածվելուն համար՝ վախ տանք անոնց , որ ան անուններով մէկյոլ չըլլայ որ մարդու բան խօսին : Ու կան- 18
չեցին անոնք՝ պատուէր տըվին որ ամենևին չի խօսին և չի սորվեցունեն Յիսուսի անունովը : Պայց 19
Պետրոս ու Յօհաննէս պատասխան տըվին՝ և ըսին անոնց , Թէ որ Աստուծոյ առջևը ուղիղ է որ Աստուծմէ հնչելի ձեղի մեղի ընենք , դուք դատաստանը ըրէք : Պայց մենք ան որ տեսանք ու 20
լսեցինք՝ չենք կրնար չի խօսիլ : Անոնք վախ տա- 21
լով թող տըվին զըրկեցին , ու բան մը չի գտան որ ինչպէս անոնք պատժեն ժողովուրդին համար . ինչու ան ամէն ալ Աստուած կըփառաւորէին եղած բանին համար : Վ ան որ ան մարդը քառ- 22
սուն տարեկան հնչելի էր , որուն վրայ աս բժշկութեան հրաշքը եղաւ :

Եւ անկէց որ արձկվեցան՝ իրենցներուն քովը 23
եկան , ու պատմեցին բոլոր ինչ որ քահանայապետները և երէցները իրենց ըսին : Անոնք ալ որ 24
լսեցին՝ ձայներնին Աստուծոյ վերցուցին՝ և ըսին . Տէր ով Աստուած՝ որ երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր մէջի եղածները ըսիր . և քու ծա- 25
ռայիդ մեր Հօրը Դաւիթին բերնովը՝ Այուրբ Հոգիին ձեռքովը խօսեցար , Ինչու հեթանոսները տակնուվրայ եղան , ու ժողովուրդները փուճ բա-

26 Ներ մնմնացին . Երկրի թագաւորները դէմ կե-
ցան , և իշխանները մէկտեղ ժող վըմեցան Տէրո-
27 ջը համար՝ և իր Օծեալին համար ։ Իրաւ ըզնէ
աս քաղաքին մէջը ժող վըմեցան քու սուրբ Որդ-
ւոյդ Յիսուսին վրայ՝ որ ան դուն օծեցիր , Հե-
րոդէս՝ և Պոնտոս Պիղատոսը՝ հեթանոսներով
28 ու Իսրայէլի ժողովուրդներովը , ընել՝ ինչ որ
քու ձեռդ և կամդ սահմանեց առաջուց որ ըլլայ ։
29 Եւ հիմայ Տէր՝ նայէ անոնց պեղէ վախերուն , ու
շնորհէ քու ծառաներուդ որ բոլոր համարձակու-
30 թիւնով քու բանդ խօսինք . քու ձեռդ երկըն-
ցունելով բժշկելու , ու նշաններ և հրաշքներ
ըլլալու , քու սուրբ Որդւոյդ Յիսուսի անունո-
31 վը ։ Եւ երբոր անոնք աղօթք կընէին՝ ան տեղը
ուր ժող վըմած էին , շարժեցաւ , և ամէնքը Հոգ-
ւով Սրբով լեցուեցան , ու Աստուծոյ խօսքը հա-
մարձակ կըխօսէին ։
32 Եւ հաւատացեալներուն բազմութիւնը մէկ
սիրտ ու մէկ անձ էին . և անոնցմէ մէկը չէր ըսեր
իր բաներուն համար թէ իրենն է , հապա՝ բոլոր
33 իրենց բաները հասարակի էր ։ Եւ շատ զօրու-
թիւնով առաքեալները վկայութիւն կուտային
Տէր Յիսուս Յարութեան համար , և անոնց ամէնուն վրայ մեծ շնորհքներ կայ-
34 ին ։ Եւ անոնցմէ մէկը կարօտութիւն չունէր .
ինչու որ անոնք՝ որ գիղերու ու տուներու Տէր
էին՝ կըծախէին , և ծախածներուն գինը կըբերէ-
35 ին , առաքեալներուն ոտքը կըդնէին , և ամէն մար-
դու կըբաժնէին՝ ինչ որ մէկուն պէտք ըլլար ։
36 Յովսէփ՝ որ առաքեալներէն Բառնաբաս բովե-
ցաւ , (որ կըթարգմանվի՝ Մխիթարութեան որ-
37 դի , Կղ եւտացի էր , ազգով Կիպրոսցի . անիկա մէկ
գիղ մը ունէր , ծախեց ու դինը բերաւ առա-
քեալներուն ոտքը դրաւ ։ Հայց մէկ մարդ մը Ան-
նիա անունով իր կնկանը Սափիրային հետ մէկտեղ
2 ագարակ մը ծախեց . և անոր գինէն խոռնց , որ

կնիկն ալ գիտէր , ու մէկ բաժինը բերաւ առաքելաներուն ոտքը դրաւ : Ետքը Պետրոս , Ինձնից նախ՝ ինչու Աստուած քու սիրտդ լեցուց , որ դուն Հոգւոյն Սրբոյ սուտ խօսիս , ու գնդին գինէն խոնաս . քանի որ ան կեցեր էր նէ քուկդ չէր մի . ու ծախուեցաւ նէ՝ քու իշխանութենովդ չէր մի . ինչու քու սրտիդ մէջ աս բանը դրիր . չէ թէ մարդու՝ հապա Աստուծոյ սուտ խօսեցար : Եւ Ինձնից աս խօսքերը որ լսեց՝ ինկաւ , ու հոգին հանեց . և մեծ վախ ինկաւ ամէնուն վրայ՝ որ ան լսեցին : Կոպիճները ոտքի վրայ ելան , ու պատանեցին անկից , և տարին թաղեցին : Եւ երբոր իրկուամայի չափ վրան անցաւ , անոր կնիկն ալ չէր գիտեր ինչ որ եղեր էր՝ ներս մտաւ : Պատասխան տուաւ անոր Պետրոս՝ և ըսաւ . Ըսէ դուն ինծի , ան գնդը այնքան գինով մի ծախեցիք . ան ալ ըսաւ . Հա՛ այնքան : Ու Պետրոս ըսաւ անոր , Ա՛ս ինչ է որ դուք միտկով նկաք Տէրոջը հոգին փորձելու . ահա ան ոտքերը որ քուկդին երիկդ թաղեցին՝ դռանը քովն են , քեզ ալ դուրս պիտի հանեն : Եւ նոյն կէտին ինկաւ անոր ոտքը , ու հոգին հանեց . կոպիճները ներս մտան՝ անիկա մեռած գտան , ու հանեցին իր երկանը քովը թաղեցին : Եւ մեծ վախ եկաւ բոլոր եկեղեցիին վրայ և ամէնուն վրայ՝ որ ան լսեցին :

Ու առաքեալներուն ձեռքովը շատ նշաններ և հրաշքներ կըլլային ժողովուրդին մէջ , և ամէնը միտկով Սողոմոնի սրահին մէջն էին : Ու մէկալներէն մէկը չէր համարձակեր անոնց մտնել . հապա ժողովուրդը կըմեծարէր անոնք . (և հաւատացեալները խիստ շատ կէվլնային Տէրոջը՝ շատ երիկ մարդ ու կնիկ մարդ) անանկ որ՝ հիւանդները բաց փողոցները կըհանէին և իրենց պատգարակովը ու անկողնովը կըդնէին , որ Պետրոս անցնելու ըլլայ նէ գոնէ անոր շուքը անոնց մէկին վրայ հասնի : Ու քովի քաղաքներէն

բազմութիւնը Երուսաղէմ կը ժողվվէր , հիւանդները և պիղծ դևերէն չարչրկմածները կը-
բերէին , որոնք ամէնքն ալ կը բժշկէին ։
17 Ասոր նման քահանայապետը և բոլոր իր հետը եղողները , ու Սադուկեցոց աղանդաւորները՝ նա-
18 խանձով լեցված · Ու առաքեալներուն ձեռք
19 զարկին , և բանտը դրին անոնք ։ Եղբը Տէրոջը գիշերով բանտին դուռները
20 բացաւ , ու դուրս հանելով անոնք՝ ըսաւ · Գա-
ցէք տաճարը կեցէք՝ ու ժողովուրդին խօսեցէք
21 այս կենաց բոլոր խօսքերը ։ Եւ երբոր այս լսե-
ցին՝ տաճարը մտան առտուընց , ու կրօսրվեցու-
ցին · քահանայապետը եկաւ ու իր հետը եղող-
ները՝ ժողով կը մկսեցին , ու Իսրայէլի
որդւոց բոլոր ծերակոյտը · և դրկեցին բան-
22 տը՝ որ անոնք բերուին ։ Ու երբոր սպասաւորնե-
րը եկան՝ անոնք բանտին մէջը չի գտան նէ , նա
23 դարձան պատմեցին , և ըսին · Թէ Բանտը ադէկ
զգուշութիւնով գոց գտանք , ու պահապանները
որ դուռը կը կեցեր էին · բացինք՝ և ներսը
24 մարդ չի գտանք ։ Երբոր այս բանները լսեցին տա-
ճարին իշխանները ու քահանայապետները՝ կը-
զարմանային անոնց համար՝ Թէ ի՛նչ պիտի ըլլայ
25 ան ։ Եւ մէկը եկաւ պատմեց անոնց՝ Թէ Ահա ան
մարդիկը որ բանտը դրիք , տաճարը կեցեր են և
26 ժողովուրդը կը սորվեցունեն։ Ասոնք իշ-
խանը սպասաւորներուն հետ գնաց ա-
նոնք բերաւ առանց բռնութեան · Քանզի որ ժողո-
27 վուրդին կրնային որ չի քարկոծվին ։ Ու բե-
րին անոնք տանեան կայնեցուցին · քահանայա-
28 պետը անոնց հարցուց , և ըսաւ · Ա՛նք ձեզի ա-
պրպրելով չապրսպրեցի՞նք մի , որ ան անու-
նովը չի սորվեցունէք · և ահա Երուսաղէմը ձեր
ուսմունքովը լեցուցիք , և ան մարդուն արիւնը
մեր վրայ կուզէքկոր ձգել ։
29 Պատասխան տուաւ Պետրոս ու առաքեալները՝

և ըսին · Հրաւիրել Աստուծոյ հնազանդիլ պէտք
է քան թէ մարդու : Որ հօրերնուս Աստուածը 30
Յիսուսը յարուց , որ անիկա դուք փայտէն կա-
խած սպաննեցիք : Անիկա Աստուած իր աջ ձեռ- 31
քովը Հրաշնորդ ու Փրկիչ ընելու բարձրացուց ,
Իսրայէլին ապաշխարութիւն և մեղաց թողու-
թիւն տալու : Եւ մենք ասոնց բաներուն վկաներն 32
ենք , ու Հոգին Սուրբը՝ որուն Աստուած ի-
րեն հնազանդ եղողներուն տուաւ : Անոնք ալ 33
երբոր լսեցին՝ էվելօք կատղեցան , ու կրմնմրտայ-
ին որ զանոնք մեռցունեն :

Ան տաճարին մէջ փարիսեցի մը ոտքի վրայ ե- 34
լաւ՝ որուն անունը Գամաղիէլ էր , օրինաց վար-
դապետ մը՝ բոլոր ժողովուրդին մէջ պատուաւոր
մէկը · հրաման ըրաւ որ՝ քիչ մը ան մարդիկը
դուրս տանին : Եւ ըսաւ անոնց , Իսրայէլացի- 35
մարդիկ՝ զգուշացէք աս մարդոցը վրայ-
ով որ ինչ պէտք է ընել : Որ օրերէս առաջ 36
Թևդասը եղաւ , իրեն համար ըսելով՝ թէ ինքը
մէկն է , որ համրանքով չորս հազարի չափ մար-
դիկ իրեն յարեցան · որ ինքը ըսպաննըվեցաւ ,
և ան ամէնքն ալ որ իրեն հետ մէկ եղեր էին՝
ցրուեցան , ու ոչինչ եղան : Անոր ետևէն 37
Յուդա Գալիլեացին եղաւ աշխարհագիր եղած
օրերը , և շատ ժողովուրդ իր կողմը ձգեց · ան
ալ կորսըվեցաւ , և ամէնքն ալ որ իրեն հնա-
զանդեր էին՝ ցիրուցան եղան : Եւ հիմայ ձեզի 38
կըսեմ , Ձեռ մարդոցմէն մէկ դի կեցէք , ու թող
տըվէք զիրենք · ինչու որ՝ եթէ ատ խորհուրդը
կամ գործը մարդոցմէ է նէ՝ կըքակվի · Հապա թէ 39
որ Աստուծմէ է՝ չէք կրնար ատոնք քակել , չըլ-
լայ թէ Աստուծոյ դէմ կռիւ ընող գտնըվիք :
Հաւանեցան անոր · ու առաքեալները կանչեցին 40
Ծեծեցին , և ապրսպրեցին որ մէկ յայ Յիսուսի
անունովը չի խօսին , ու անոնք թող տըվին : Ու- 41
Ծոնք ալ ատեանին դիմացէն խնդալով գացին ·

ինչու որ Տէրոջը անունին համար արժանի եղան
42 անարգուելու : Եւ ամէն օր տաճարը ու տունը
չէին դադարեր Յիսուս Քրիստոսը քարոզելէն և
ապրեցնելէն :

ԳԼՈՒԽ Ը :

1 Եւ ան օրերը աշակերտները որ շատցան՝ Յոյ-
ներուն կողմէն արտունջ մը եղաւ Եբրայե-
ցիներուն վրայ . ինչու որ իրենց որբևայրիները
ամէն օրուան Հաւատքի ծառայութեան մէջ բանի
2 տեղ չէին սեպուեր : Տասներկուքները կանչեցին
աշակերտներուն բազմութիւնը՝ և ըսին . Մեզ
բան չէ որ մենք Աստուծոյ խօսքը ձգենք , ու սե-
3 ղաններուն ծառայենք : Եղբայրնե՛ր՝ ձեր մէջէն
նայեցէք Հոգիի ընտրեցեա՛ք Եօթ վկայուած՝ Հոգւով
Սրբով և իմաստութիւնով լեցուն , որ անոնք աս
4 գործին վրայ դնենք . ու մենք աղօթքի և պաշտա-
5 մունքի ու խօսելու ետևէն ըլլանք : Եւ ան խօսքը
բոլոր բազմութեան առջեւը դուրէկ երեւցաւ , ու
ընտրեցին Ստեփաննոսը՝ հաւատքով և Հոգւով
Սրբով լեցուն մարդ մը , ու Փիլիպպոսը , և Պրո-
քորոսը , ու Նիկանորը , և Տիմոնը , ու
Պարմենան , և Նիկողայոսը նորահաւատ Անտիոք-
6 ցին : Անոնք առաքեալներուն առջեւը կայնեցուցին ,
և աղօթք ընելով ձեռքերնին անոնց վրայ դրին :
7 Ու Աստուծոյ խօսքը կաճէր , և աշակերտներուն
համարը խիստ կը շատնար Երուսաղէմին մէջ .
ու քահանաներէն խիստ շատերը հաւատքի կը-
8 նազանդէին :
Ստեփաննոսը շնորհքով ու զօրութիւնով լե-
ցած մարդ մը , մեծ հրաշքներ և նշաններ կընէր
9 ժողովուրդին մէջ : Ոմանք ան ժողովարանէն՝ որ
Լիբերտացոց ծոցէլբուն կըսուէր , ու Կիւրենացոց՝
և Աղէքսանդրացոց , և անոնք որ Կիլիկիայէն ու
Ասիայէն էին , եղան Ստեփաննոսին հետը վիճա-
10 բանութիւն ընելու . և չէին կրնար դէմ դնել

անոր իմաստութեանը ու հոգիին , որ անով ինքը
կրնայէր : Նաեւ ինչ քանի մը մարդ գրգռեցին , որ 11
ըսեն , Թէ Մենք լսեցինք որ ատիկա Հայհոյական
խօսքեր կրնայէ Մովսէսին ու Աստուծոյ դէմ : Եւ 12
շարժեցին ժողովուրդը՝ ու ծերերը՝ և կարգացող-
ները , ու վրան հասան զինքը բռնեցին՝ և առեան
տարին : Եւ սուտ վկաներ կայնեցուցին՝ որ կրսէ- 13
ին , Այս մարդը չի դադարիր Հայհոյական բաներ
խօսիլէն սուրբ տեղին և օրէնքին դէմ : Վասնզի 14
առկէց որ կրսէր , Թէ Յիսուս Նազովրեցին ինքը
աս տեղը պիտի քակէ , ու պիտի փոխէ Մովսէսին
մեզի տուած օրէնքը : Եւ առեանը նստողներուն 15
ամէնը իրեն որ նայեցան՝ անոր երեսը հրեշտակի ե-
րեսի պէս տեսան : Քահանայապետը ըսաւ , Թէ Ի 2
Իրաւունէ աս առածնկէ մի : Ան ալ ըսաւ ,
Ա՛րդիւ եղբայրներ՝ ու հայրեր՝ լսեցէք մինչ մ-
ըէք . Փառաց Աստուածը մեր հօրը Աբրահամին
երեւցաւ , քանի որ ան Միջագետան էր , դեռ անիկա
Խառանի մէջ չի բնակեցուցած . և ըսաւ անոր :
Ելիր քու երկրէդ և քու ազգէդ , ու եկոր ան եր- 3
կիրը՝ որ ես քեզի պիտի ցուցընեմ : Նաեւ ան 4
Քաղդէացոց երկրէն ելաւ՝ Խառանը բնակեցաւ ,
և անկէց՝ իր հօրը մեռնելէն ետեւ փոխեց , ու
օտարականի պէս աս երկիրը բնակեցուց անիկա ,
ուր որ դուք հիմայ բնակիը էք : Եւ ասոր մէջը 5
իրեն ժառանգութիւն չի տուաւ , ոչ ալ ոտքի
քայլ մը տեղ , բայց խոստ տուաւ՝ որ ատիկա իրեն
տայ բնակելու . և իրմէ ետեւ՝ իր զաւկին , երբոր
դեռ ինքը որդի չունէր : Աստուած խօսեցաւ Ա- 6
տուած՝ Թէ Անոր զաւակը օտար երկիր պան-
դուխտ պիտի ըլլայ , ու պիտի ծառայեցնեն ա-
նիկա՝ և չորս հարիւր տարի : Եւ ան 7
ազգը՝ որուն որ պիտի ծառայեն , ես պիտի դա-
տեմ , ըսաւ Աստուած . և անկէ ետեւ պիտի ելլան՝
ու աս տեղը իս պաշտեն : Եւ անոր ընկերակա- 8
Թիան ուխտ տուաւ . ու ետքը Աբրահամ Իսահա-

կը ծնաւ , և Թլփատեց անիկա ութ օրին · Սահակն ալ՝ Յակոբը , Յակոբն ալ տասնեւերկու նահապետները : 9Նահապետները Յովսէփին վրայ նախանձելով՝ Եգիպտոս ծախեցին · բայց 10Աստուած անոր հետն էր : Ու փրկեց անիկա իր ամէն նեղութիւններէն , և անոր շնորհք ու իմաստութիւն տուաւ Եգիպտացոց փարաւոն թագաւորին դիմացը · ու ան զինքը կառավար դրաւ 11Եգիպտացոց վրայ՝ և իր բոլոր տանը : Ես սով մը եկաւ Եգիպտոսի բոլոր երկիրը՝ ու Քանանի մէջ մեծ նեղութիւն , և մեր հայրերը ուտելիք 12չէին գտնար : Բայց Յակոբ երբոր լսեց՝ թէ Եգիպտոս ուտելիք կրգտնըվի կոր , առջի անգամին 13մեր հայրերը խրկեց : Ես երկրորդ անգամին Յովսէփ իր եղբայրներուն ճանչցորութիւն տուաւ , ու իր ազգը փարաւոնին յայտնի եղաւ : 14Յովսէփ խրկեց ու կանչեց իր հայրը Յակոբը՝ և բոլոր տունեուտեղը , եօթանասուն և հինգ հոգի : 15Ու Յակոբ Եգիպտոս իջաւ՝ և մեռաւ , ինքը՝ և 16մեր հայրերը : Ու տարվեցան Սիւքեմի երիվրը , և ան քարայրին մէջը դրվեցան , որուն Աբրահամ արծաթի գնով առեր էր Եմմորի զաւկըներէն՝ 17Սիւքեմի մէջ : Երբոր խոստումնէքին ատենը մօտեցաւ , որ Աստուած Աբրահամին խոստացեր էր , ժողովուրդը աճեցաւ՝ և էվկըզ չատցաւ Ես 18գիպտոսին մէջ · մինչև որ Եգիպտոսին մէջ ուրիշ թագաւոր մը եկաւ՝ որ Յովսէփը չէր ճանչ 19նար : Ընիկա հնարք բանեցուց մեր ազգին վրայ՝ ու չարչարեց մեր հայրերը , անոնց տղաքը ձգեցը 20գելով որ չապրին : Ան ժամանակին Մովսէս ալ ծնաւ , և Աստուծոյ առջևը գեղեցիկ մըն էր , 21որ իր հօրը տունը մեծցաւ իրեք ամիս : Ես երբոր անիկա նետեցին՝ փարաւոնին աղջկը անիկա 22վերցուց , և իրեն որդեգիրի տեղ մեծցուց : Ու Մովսէս Եգիպտացոց բոլոր իմաստութիւնովը վարժըվեցաւ , և ինքը զօրաւոր էր իր խօսքերովը

ու գործքերովը : Երբոր իր քառասուն տարեկան 23
ժամանակը լեցուցաւ նէ , իր սիրտը ինկաւ իր
եղբայրներուն Իսրայէլի զաւակներուն քով պր-
տրտիլ : Ու Իսրայէլացիներէն մէկը զրկանք և- 24
կած տեսնալով՝ դժարն եկաւ , և զրկվածին ոխը
առաւ՝ ան Եգիպտացին սպաննելով : Կը մտածէր 25
որ իր եղբայրները իմանան՝ Թէ Աստուած իր ձեռ-
քովը իրենց ազատութիւն պիտի տայ , բայց անոնք
չիմացան : Եւ հետևի օրը անոնց դիմացն ելաւ՝ եր- 26
բոր կռկռտէինկոր , ու խաղաղութիւն ընելու
յորդորեց անոնք , ըսաւ . Ա՛րդեկ դուք եղբայր-
ներ էք , ինչո՞ւ մէկզմէկ կը զրկէք : Ետյց ան՝ որ 27
ընկերին զրկում կընէր , ետ հրեց զինքը՝ և ը-
սաւ , Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր
դրաւ : Կ՚ե՞ս ալ մի սպաննել կուզես , ինծոր որ 28
երէկ Եգիպտացին սպաննեցիր : Ա՛ռմսէս ալ աս 29
խօսքերէն փախաւ , ու Ա՛դեմտու երկիրը օտա-
րական եղաւ , ուր որ ինքը երկու որդի ծնաւ :
Եւ երբոր քառասուն տարի լրնցաւ՝ Տէրոջը հրեշ- 30
տակը Սինա լեռան անապատին մէջը կրակի բոցին
մէջ մորենիին մէջէն երևցաւ իրեն : Ա՛ռմսէս ալ 31
երբոր տեսաւ՝ զարմացաւ ան տեսիլքին վրայ . ու
երբոր մօտեցաւ աղէկ մը նայելու , Տէրոջը ձայնը
եկաւ , որ ըսեր : Ես եմ քու հայրերուդ Ա- 32
տուածը , Աբրահամին ու Սահակին և Յակոբին
Աստուածը . Ա՛ռմսէս ալ վախով բանըված չէր
համարձակեր նայելու : Ու Տէրը ըսաւ իրեն . 33
Ո՛րակէ ոտքիդ կօշիկները , ինչու որ ատ տեղը՝ որ
դուն կայներ ես , սուրբ երկիր է : Ընդէ՛ տեսայ 34
իմ ժողովուրդիս չարչարանքը Եգիպտոսի
մէջ , ու լսեցի անոնց հառաչանքին , և իջայ ա-
նոնք ազատելու . ուստի եկող քեզ Եգիպտոս պի-
տի խրկեմ : Ընդ Ա՛ռմսէսը որ ուրացան և կրսէին՝ 35
Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ ,
Աստուած անիկա իշխան ու փրկիչ խրկեց ան
հրեշտակին ձեռքովը՝ որ մորենիին մէջը իրեն և-

36 բէեցաւ : Ընիկա Հանուց անունը նշաններ և հրաշք-
ներ ընելով Եգիպտացոց երկիրը ու կարմիր ծո-
37 վը , և անապատին մէջը քառասուն տարի : Ա-
Ս՝ոմէեան է՝ որ ըսաւ Իսրայէլի որդւոցը . Ձեր
Տէր Ա՝ստուածը ձեզի մէկ մարգարէ մը պիտի հա-
նէ ձեր եղբայրներէն ինծի պէս , անոր մտիկ ը-
38 նէք : Ա՝յիկա ան է որ անապատը եկեղեցիին մէջ
էր հրեշտակին հետը , որ Սինա լեռան մէջ խօսակ-
ցեցաւ իրեն հետ՝ ու մեր հայրերուն հետ . որ
39 կեանք տըվող հրամաններ առաւ մեզի տալու : Ո-
րուն մեր հայրերը չուզեցին հնազանդ ըլլալ , հա-
պա մէկ դի ձգեցին , և իրենց սրտերովը Եգիպտոս
40 դարձան : Եւ ըսին Ա՝հարոնին , Ա՝զդի աստ-
ուածներ շինէ՝ որ մեր առջևէն երթան . ինչու որ
ան Ա՝ոմէսը՝ որ մեզ Եգիպտացոց երկիրէն հա-
41 նեց , չենք գիտեր թէ՝ ինչ եղաւ իրեն : Եւ ան օրե-
րը ՝ոգի մը շինեցին , ու կուռքերուն զոհ մատու-
ցին , և կուրախանային իրենց ձեռքին գործքե-
42 րուն վրայ : Ա՝ստուած ալ Երես դարձուց , ու
թողուց իրենց որ երկինքի զօրութիւնը պաշտեն .
ինչպես որ գրված է մարգարէներուն գիրքին մէջ՝
Ի՝սրաէլեան տարի ինծի զոհեր ու պատարագներ
մատուցիք անապատին մէջը օվ Իսրայէլի տունը :
43 Եւ Ա՝ղգքին խորանը առիք , և չէր Հռեմփա
աստուածին աստղը , ան պատկերները որ շինեցիք
անոնց երկրպագութիւն ընելու . ու ես ալ ձեզ
44 Բաբիլոնէն անդին պիտի տանիմ : Ա կայութեան
խորանը անապատին մէջ մեր հայրերուն հետն
էր , ինչպես հրաման ըրաւ ան որ Ա՝ոմէսին հետ
կը խօսէր , որ անիկա տեսած օրինակին պէս շինէ :
45 Ո՝ր անիկա մեր հայրերն ալ Յեսուին հետը առին
բերին ան ազգերուն տեղվանքը , որոնք Ա՝ստուած
վռնտեց մեր հայրերուն դիմացեն մինչև Դաւիթ
46 Թին օրերը . որ ան Ա՝ստուծոյ առջևը շնորհք
գտաւ , և ուզեց որ Յակոբին Ա՝ստուծոյն բնա-
47 կարան մը գտնայ : Հայց Սողոմոն անոր տուն մը

չենանց : Սակայն չէ թէ Խարձրնալը ձեռքով շինե- 48
ված տաճարներու մէջ կըբնակի . Հապա ինչպէս
որ մարգարէն կըսէ . Երկինքը իմ աթոռս է , ու 49
երկիրը՝ իմ ոտքիս դնելու տեղը . ան ինչ տուն
է որ շինեցիք ինծի , կըսէկոր Տէրը . կամ՝ ան
ինչ տեղ է ուր պիտի հանգչիմ ես . չէ որ աս 50
ամէնը իմ ձեռքս չենէր է : Ահ պինտ գլուխներ՝ 51
ու սիրտով և ականջով չի թլփատվածներ . դուք
ամէն ժամ Հոգւոյն Սրբոյ հակառակ կըկենաք ,
ինչպէս որ ձեր հայրերը՝ անանկ ալ դուք : Ո՛ար- 52
գարեներէն որ մէկը չէ հալածեցին ձեր հայրերը ,
ու սպաննեցին անոնք՝ որ առաջուց պատմեցին ան
Արդարին գալուն համար , որ դուք հիմայ անոր
մատնողները և սպաննողները եղաք . դուք որ օ- 53
րէնք առիք հրեշտակներուն հրամանովը՝ և չի
պահեցիք :

Եւ երբոր աս բաները լսեցին՝ սիրտերնուն մէջ 54
կըկատղէին , ու ակռաներնին անոր վրայ կըկըճրը-
ցունէին : Բայց ինքը Հոգւով Սրբով լեցված էր , 55
երկինքը նայեցաւ՝ և Աստուծոյ փառքը տեսաւ ,
ու Յիսուսն ալ՝ որ Աստուծոյ աջ կողմը կայներ
էր , և ըսաւ . Ահա կըտեսնամ որ երկինքը բաց-
ված , ու Որդին մարդոյ՝ որ Աստուծոյ աջ կողմը
կայներ է : Ա՛նոնք ձայնով կանչ վըռնտելով ականջ- 56
ներնին գոցեցին , և ամէնքը մէկէն վազեցին անոր
վրայ : Ու քաղքէն դուրս հանելով կըքարկոծէ- 57
ին զինքը , և վկաները իրենց լաթերը պահ կըդը-
նէին երիտասարդի մը ոտքի քով , որ Սաւուղ
կըսվէր : Եւ կըքարկոծէին Ստեփաննոսը , որ կա- 58
ղեթէր ու կըսէր , Տէր Յիսուս ընդունէ իմ հո-
գիս : Ծունկն վրայ եկաւ և բարձր ձայնով կան- 59
չեց , Տէր՝ ասիկա անոնց մեղք մի սեպեր . ու եր-
բոր աս բսաւ՝ քնացաւ . և Սողոս անիկա սպան-
նողներուն հետ կաճքը մէկ էր :

ԳԼ. Ը։

1 Եւ ան օրը մեծ հալածում եղաւ եկեղեցիին
վրայ Երուսաղէմին մէջ , և ամէնքն ալ ցիր-
ուցան եղան Յրէաստանի գաւառները ու Սամարիա՝
2առաքեալներէն ի զատ : Եւ աստուածավախ մար-
դիկ Ստեփաննոսը վերցուցին , և անոր վրայ մեծ
3ողբ ըրին : Նայց Սօղոս եկեղեցիին շատ վնաս
կուտար , տուներ տուն կրմտնար , երիկ մարդ ու
կնիկ մարդ կրքաշէր՝ բանար դնել կուտար :
4 Եւ ան ցիրուցան եղածները կրպտրատէին՝ ու
5խօսքը կրքարոզէին : Փիլիպպոս ալ Սամարացոց
քաղաքը իջնալով՝ Քրիստոսը կրքարոզէր անոնց :
6Ժողովուրդները ամէնը մէկէն Փիլիպպոսի բած-
ներուն ականջ կրդնէին , անոր բրած նշանները
Նլսելով և տեսնալով : Ինչու որ շատերը որ պիղծ
դևերէն բռնըված էին՝ մեծ ձայնով կրկանչ վըո-
8տէին փչելը ու կելլային : Շատ ալ անդամ-
լոյծներ և կաղեր կրբժշկվէին . ու մեծ ուրախու-
9թիւն եղաւ ան քաղքին մէջը : Նայց Սիմոն ա-
նունով մարդ մը՝ որ առաջուց ան քաղքին մէջն
էր , մոգութիւն կրնէր՝ ու Սամարացոց ազգը կր-
զարմացունէր , անանկ ըսելով իրեն համար թէ
10մէկ մեծ մըն է : Որ անոր կրնայէին ամէնքն ալ
պզտիկէն մինչև մեծերնին . և կրսէին , Նսիկա
11Նստուածոյ մեծ ըսված զօրութիւնն է : Շատ ժա-
մանակներէն կախարդութիւններով անոնք զար-
12մացուներնուն համար՝ իրեն կրնայէին : Նայց եր-
բոր Փիլիպպոսին հաւատացին՝ որ Նստուածոյ թա-
գաւորութեանը ու Յիսուս Քրիստոսի անուանը
վրայ կրքարոզէր , կրմկրտվէին ամէնքն ալ երիկ
13մարդիկ ու կնիկ մարդիկ : Եւ Սիմոն ինքն ալ
հաւատաց , ու մկրտվելով միշտ Փիլիպպոսին կենն
էր՝ տեսնալով ան նշանները և մեծ զօրութիւն-
14ները որ կրլլային , կրզարմանար : Ասկէ առա-

քեալներըՙ որ Երուսաղէմի մէջ , երբոր լսեցին Թէ Սամարիա ալ Աստուծոյ խօսքը ընդունեցին , Պետրոսը ու Յովհաննէսը անոնց խրկեցին : Որոնք 15
իջան՝ աղօթք ըրին անոնց վրայ , որ Հոգին Սուրբը առնեն . (ինչու որ մինչև անոնց դեռ ա- 16
նոնց մէկուն վրայ իջած չէր , հապա միայն Տէր Յիսուսի անունովը մկրտուած էին .) անոնք 17
ձեռքերնին դրին անոնց վրայՙ ու Հոգին Սուրբը կառնէին : Երբոր տեսաւ Սիմոն՝ Թէ առաքեալ- 18
ներըն ձեռք վրայ դնելովՙ Հոգին Սուրբ կըտրվի- կոր , անոնց ստակ բերաւ և ըսաւ : Ինծի ալ աս 19
իշխանութիւնը տուէքՙ որ որին վրայ ձեռք դնեմՙ նէ՝ անիկա Հոգին Սուրբը առնէ . Ետոյ Պետրոս
ըսաւ անոր . Քու արծաթդ քեզի հետ թող կոր- 20
սուի . ինչու որ Աստուծոյ պարգեւը կարծեցիր Թէ ստակով պիտի առնես : Դուն աս բանին մէջը 21
մասն ու բաժին չունիս . ինչու որ քու սիրտդ Աս-
տուծոյ առջև շիտակ չէ : Դուն աս քու- 22
րութենէդ զղջ ըլլ եկոր , ու Տէրոջը աղաչէ . գու- ցէ Թողութիւն ըլլայ քեզի քու սրտիդ դէշ խոր- հուրդներէն : Ինչու որ ես քեզ մաղձի լեղու- 23
թեան մէջՙ և անիրաւութեան կապերու մէջ կը- տեսնամկոր : Սիմոն պատասխան տուաւՙ և ըսաւ . 24
Դուք ինծի համար աղաչանք ըրէք Տէրոջը , որ աս ձեր ըսածներէն իմ՝ վրաս բան մը չի գայ :
Ինքնք ալ վկայութիւն տալովՙ Աստուծոյ խօսքը 25
պատմեցին , ու դարձան Երուսաղէմ՝ . և Սամա- րացոց շատ գեղերուն մէջը աւետարանը կըքարո- զէին :

Տէրոջը հրեշտակը փիլիպպոսին խօսեցաւ և 26
ըսաւ . Ելիր ու գնա դէպի հարաւային կող- մը՝ ան ճամբան , որ Երուսաղէմէն Կազա կիջ - նէրվի , որ աս անապատ տեղ մըն է : Ան ալ եղաւ 27
գնաց . և ահա Եթովպացի մարդ մըՙ զօրաւոր ներքինի մը Եթովպացոց Կանդակէ անուն թա- գուհիին , որ ինքը անոր բոլոր գանձերուն վրայ

էր · որ Երուսաղէմ եկեր էր երկիրպագութիւն
28 ընելու · և անկէ ետ դարձած ու իր կառքը նըս-
29 տած՝ Եսայի մարգարէն կրկարդարկոր : Հոգին
ԱՒԷՐ ըսաւ Փիլիպպոսին · Մօտա՛ գնա , և աս
30 կառքի մօտեցիր : Փիլիպպոսն ալ առաջ վազեց՝
մտիկ կրնեը որ Եսայի մարգարէն կրկարդայ , և
31 ըսաւ · Կարդացածդ կրհասկընա՞կոր մի : Ան
ալ ըսաւ , Ինտո՞ր կրնամ , թէ որ մէկը ինծի չի
առաջնորդէ նէ · ու աղաչեց Փիլիպպոսին՝ որ ելլայ
32 իր հետը նստի : Եւ ան գիրքին մէջը կարդացած
գլուխը ա՛ս էր · Ինչպարի մը պէս մը՝ թրվելու տար-
վեցաւ , ու մեղ գառնուկի մը պէս ինքը խուզո-
33 ղին առջևը՝ անանկ իր բերանը չի բանար : Իր
խոնարհութենէն իր դատաստանը վերցրվեցաւ ·
և անոր ցեղը ո՞վ պիտի պատմէ · ինչու որ անոր
34 կեանքը երկրէն վերցրվեցաւ : Ներքինին պա-
տասխան տուաւ Փիլիպպոսին՝ և ըսաւ , Աղաչեմ
քեզի · մարգարէն որի՞ համար կրսէ աս · իրմե՞ն
35 համար՝ թէ մէկ ուրիշի մը համար : Փիլիպպոս իր
բերանը բացաւ , և աս գիրքէս սկըսելով Յիսուս
36 Քրիստոսը քարոզեց : Երբոր իրենց ճամբան կերթ-
թայինկոր՝ ջուրի մը քով եկան , ու ըսաւ ներքի-
նին · Ա՛ս ջուր՝ ալ ի՞նչ բան իս կարգիլէ մկրբ-
37 տվելէն : Եւ ան ըսաւ անոր · Թէ որ քու բոլոր
սրտովդ կրհաւատաս նէ , կարելի է · անիկա պա-
տասխան տուաւ՝ և ըսաւ · Կրհաւատամ որ Յիսուս
38 Քրիստոսը Որդի Աստուծոյ է : Ու հրաման ը-
ըսաւ որ կառքը կայնեցունեն · և երկուքն ալ ջու-
ըը իջան Փիլիպպոսը և ներքինին , ու մկրտեց ա-
39 նիկա : Եւ երբոր ջուրէն դուրս եկան՝ Հոգին
Տէրոջը Փիլիպպոսը առնէց վերցուց , և ալ ներքինին
անիկա չի տեսաւ · ու իր ճամբան կերթար ուրա-
40 խութիւնով : Բայց Փիլիպպոս Ազոտոսին մէջը
գտնվեցաւ · ու պըտըտելով բոլոր քաղաքներուն
աւետարան կրքարոզէր , մինչև որ ինքը Կեսարիա
եկաւ :

ԳԼՈՒԽ ԻԲ

Եւայց Սօղոս տակաւին սպառնալիքով և սպան- 1
նելու մտքով լցված Տէրոջը աշակերտներուն
դէմ, քահանայապետին գնաց · անկէց Թուղթեր 2
ուզեց Դամասկոս ժողովարաններուն համար, որ
թէ որ ան ճամբուն հետևող գտնէր զայն, կամ
էրիկ մարդ կամ կնիկ մարդ, կապած Երուսաղէմ
բերէ : Եւ երթալու ատեներ Դամասկոսին որ մօ- 3
տիկյան՝ յանկարծ իր բոլորտիքը երկինքէն լոյս
մը շողշողաց · և ինքը գետինը ինկաւ · ու ձայն 4
մը լսեց որ կըսէր իրեն, Սաւուղ Սաւուղ՝ ինչու
իս կը հալածեսկոր : Եւ ան րսաւ, Դուն ո՞վ ես 5
Տէր · ան ալ րսաւ, Ես Յիսուս եմ՝ որ դուն
կը հալածեսկոր · կոչնդր բան է քեզի խթանին դէ-
մը ոտք զարնել : Եւ դողդողալով և շուարելը կըսա- 6
րելով րսաւ · Տէր՝ ինչ ինձ կուզես ընել : Եւ 7
Տէրը րսաւ անոր · Հապա ոտքի վրայ կայնէ, ու
քաղաքը մտիր, և քեզի պիտի գուբցրվի ինչ որ
պէտք է քեզի ընել · բայց ան մարդիկը որ իր հե-
տը կերթային, մունջ եղեր կեցեր էին · ձայնը
միայն կը լսէին՝ բայց բան մը չէին տեսնար : Եւ ան 8
Սօղոս գետինէն, ու աչքերը բաց ալ չէր տես-
նար · անոր ձեռքէն բռնեցին՝ Դամասկոս խօթե-
ցին : Եւ հոն իրեք օր կեցաւ՝ ու չէր տեսնար · 9
և ոչ կերաւ՝ և ոչ խրմեց : Եւ Անանիա անու- 10
նով մէկ աշակերտ մը կար Դամասկոսի մէջ · Տէ-
րը տեսիլքի մէջ անոր րսաւ, Անանիա · ան ալ
րսաւ, Տէր՝ հոս հոս եմ : Տէրն ալ րսաւ անոր, 11
Ոտքի վրայ կայնէ՝ ու գնա ան փողոցը՝ որ Ուղիղ
կըսվի · և հոն Յուդային տունը՝ փնտրէ Սօղոս
անունով Տարսոնացի մը, որ ինքը դեռ աղօթք
կընէկոր : Եւ տեսիլքին մէջ մէկ մարդ մը տեսած 12
է Անանիա անունով՝ հոն մտած, և ձեռքը իր
վրան դրած, որ տեսնայ · Անանիան ալ պատաս- 13

խան տալաւ , Տէր՝ շատերէն լսեցի ան մարդուն
համար , որչափ չարիքներ բաւ քու սուրբերուդ
14 Երուսաղէմի մէջ . և հոս ալ քահանայապետանե-
րէն իշխանութիւն ունի կապելու ան ամէնը , որ
15 քու անունդ կրկարդան : Տէրը իրեն ըսաւ ,
Գնա՛ դուն , ինչու որ անիկա ինծի ընտիր ամա-
նի մըն է , իմ անունս կրելու հեթանոսներուն ու
16 թագաւորներուն և Իսրայէլի որդոցը առջև : Ու-
րովհետև ես իրեն պիտի ցուցընեմ որչափ պէտք
է իրեն՝ իմ անունիս համար նեղութիւն քաշել :
17 Անանիան ալ գնաց՝ և ան տունը մտաւ , ու ձեռ-
քը անոր վրայ դրաւ՝ ըսաւ . Սաւուղ եղբայր՝ մեր
Տէրը Յիսուս՝ որ ճամբան
քեզի երևցաւ երբոր կուգայիր , որ դուն տես-
18 նաս՝ ու Հոգւով Սրբով լեցիս : Եւ շուտ մը ի-
րեն աչքերէն կրճեպներու պէս բաներ իննան .
19 տեսաւ՝ ու ելաւ մկրտուեցաւ . և կերակուր ա-
ռաւ՝ ուժ գտաւ եկաւ . ու քանի մը օր Դամաս-
կոսի մէջ աշակերտներուն հետը կեցաւ :
20 Եւ շուտ մը ժողովարաններուն մէջ Յիսուսը
21 քարոզեց , Թէ Անիկա Աստուծոյ Որդին է : Ա-
մէնքն ալ որ կլսէին զարմացեր էին , և կրսէին .
Այսիկա ան չէ՞ , որ Երուսաղէմի մէջ կրկործաներ
անոնք՝ որ Յիսուսի անունը կուտային . և հոս ալ
ան բանին համար եկած էր , որ զանոնք կապած
22 քահանայապետներուն տանի : Սայց Սօղոս ալ
էվելի կրզօրանար՝ և կդադրեր ան Դրեաները ,
որ Դամասկոսի մէջ կբնակէին , ու մտնելին կը-
23 ապացնէր թէ Քրիստոսը ասիկա է : Եթէ շատ
օրեր վրայ անցան , Դրեաները մտրծաւին անի-
24 կա սպաննել : Սօղոս իմացաւ անոնց դնաթը .
ինչու որ ցորեկ ու գիշեր դռները կըսպասէին ,
25 որ անիկա սպաննեն : Եւ աշակերտները գիշերով
ինքը առին՝ պատէն կախած սպասատով վար իջե-
ցուցին :
26 Երբոր Սօղոս Երուսաղէմ եկաւ , աշակերտ-

ներուն հետը ըլլալու եռանդ էր · բայց ամէնքն ալ
կրվախնային անկէց , չէին համարձակեր թէ ինքը ա-
շակերտ էր : Իսայց Յառնաբաս անիկա առաւ՝ ա- 27
ռաքեալներուն տարաւ , ու պատմեց անոնց՝ թէ
ինտր Ճամբուն վրայ Տէրը տեսաւ , ու որ անոր
հետը խօսեցաւ , և որ Դամասկոսին մէջը համար-
ձակ քարոզեց Յիսուսի անունովը : Ու Երուսա- 28
ղէմի մէջ անոնց հետ կըմտնար ու կելլար , Տէրո-
ջը անունովը համարձակ խօսելով : Յոյներուն 29
դէմ կրխօսէր՝ և վիճաբանութիւն կրնէր · անոնք
ալ կրմտմտային որ անիկա սպաննեն : Ու եղ- 30
բայրները որ իմացան՝ ինքը կեսարիա իջուցին , և
Տարսոն խրկեցին անիկա :

Ու եկեղեցին բոլոր Հրէաստանի և Գաղիլ- 31
այի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն ունենալ ,
չինութիւն առնելով և Տէրոջը երկիւղին հետը
երթալով · ու Հոգւոյն Սրբոյ մխիթարու թիւ-
նովը կրշատնար :

Եւ եղաւ որ՝ երբոր Պետրոս ամէն տեղ կըպը- 32
տռտէր , ինքը Սուրբերուն քովն ալ իջաւ , որոնք
Լիւդիա կրբնակէին : Եւ հոն մէկ մարդ մը գտաւ , 33
որուն անունը Էնեա էր , ութը տարիվընէ հետէ
անդամալոյծ մահիճը դրված էր : Եւ բսաւ անոր 34
Պետրոս · Էնեա՛ Յիսուս Քրիստոս Տէրը քեզ
կրբժշկէ · ելլէ՛ և դուն ինքիդիդ քու անկողինդ
յօրինէ՛ · ան ալ շուտ մը ելաւ : Ու Լիւդիայի 35
և Սարովնայի մէջ բնակողները ամէնը անիկա
տեսան , ու իրենք Տէրոջը դարձան : Եւ Յոպ- 36
պէի մէջ աշակերտ եղած կնիկ մը կար՝ անունը
Տաբիթա , (որ թարգմանվելով՝ Փոքրիկ այծ կրս-
վի ·) ասիկա բարի գործքերով ու ողորմութիւն-
ներով լեցված էր , որ ինքը կընէր : Եւ եղաւ 37
որ՝ ան օրերը ինքը հիւմնդացաւ ու մեռաւ , լուացին
անիկա՝ և վերի խուցը դրին : Ու Լիւդիա Յոպ- 38
պէին մօտ ըլլալով՝ աշակերտները լսեցին թէ
Պետրոս հոն է , իրեն երկու մարդ խրկեցին ա-

39 դաչելու , որ չուշանայ իրենց գալու : Պետրոս ալ
եկաւ անոնց հետ եկաւ . երբոր ուրեք վերի խու-
39 ցը հանեցին անիկա , և բոլոր որբևարիները իր
բոլորտիքը կայներ էին՝ կուլային , ու կրցուցընէ-
ին բոլոր ան լաթերը և հագուստները՝ որչափ որ
40 իրենց կընէր ան փոքրիկ այծը : Պետրոսն ալ ա-
մէնքը դուրս հանեց՝ ծունկի վրայ եկաւ աղօթք
բրաւ , ու դէպ ի մարմինը դարձաւ՝ և բսաւ , Տա-
բիթա՝ Տէր Յիսուս Քրիստոսի անունովը հերի
կայնէ . ան ալ իր աչվները բացաւ , ու Պետրո-
41 սը որ տեսաւ՝ ելաւ շիտակ մը նստաւ : Ինդ ալ
ձեռքը անոր տրւաւ՝ և կայնեցուց անիկա . կանչեց
նէրս սուրբերը ու որբևարիները , առջևնին դրջ
42 կայնեցուց անիկա : Եւ բոլոր Յոպպէին մէջ ի-
43 մացվեցաւ , ու շատերը Տէրոջը հաւատացին : Եւ
եղաւ որ ինքը շատ օրեր Յոպպէ կեցաւ՝ մէկ Սի-
մոն Կաշի բանողի մը քով :

ԳԼ · Ժ ·

1 Կեսարիայի մէջ մէկ մարդ մը կար՝ Կոռնելիոս
անուն , Տարիւրապետ էր ան գունդին՝ որ Ի-
2 տալացի գունդ կըսվէր . բարեպաշտ և աստուա-
ծավախ իր բոլոր տունովը . ժողովուրդին շատ ո-
ղորմութիւններ կընէր , և ամէն իժիր Աստուծոյ
3 աղօթք կընէր : Ինկիա օրվան ժամը իննին աստե-
նր տեսիլքին մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի
տեսաւ , որ իր քովը մտաւ՝ և իրեն կրսէր , Կոռ-
4 նելիոս : Ին ալ անոր որ նայեցաւ՝ երկիւղ վարեցաւ
ու բսաւ , Ինչ է Տէր . ան ալ անոր բսաւ ,
Քու աղօթքդ և ողորմութիւններդ Աստուծոյ
5 առջևը եկան յիշվեցան : Ուստի Յոպպէն մարդիկ
6 ղրկէ , ու կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս կըսվի . ին-
քը մէկ Սիմոն կաշի բանողի մը քով մտած է , որ
7 տունը տունը ծովին մօտ է : Եւ երբոր գնաց ան
հրեշտակը՝ որ իր հետը կըխօսէր , իր ծառաներէն
երկուքը կանչեց , ու իր սպասաւորներէն ալ մէկ

բարեպաշտ զինուոր մը , և բոլորը անոնց պատ- 8
մելով՝ Հռոպէ իրկնեց անոնք :
Ու հետևի օրը անոնք որ կերթային , և քաղա- 9
քին մօտեցան , Պետրոս ժամը վկնին տանիները
տանիքը ելաւ աղօթք ընելու : Ընծեցաւ՝ և կա- 10
ղեր ՀԱց ուտել . անոնք ալ երբոր կըպատրաս-
տէին իրեն վրայ մէկ ապշութիւն մը եկաւ . և 11
տեսաւ երկինքը բացված՝ ու չորս մօրեն կախված
մէկ տան մը մեծ տաւանի մը պէս , որ իրաւ նըս-
տաւ գետինին վրայ . անոր մէջը կար բոլոր չորքո- 12
տանիները՝ և երկրի սողուններըը , ու երկինքի
թռչունները : Եւ երկինքէն իրեն ձայն մը եկաւ , 13
Ելիր Պետրոս մորթէ ու կեր : Պետրոս ալ ը- 14
սաւ , Ո՛չ՝ տէր կրկի . ինչու որ ես ամենևին
խառնակ ու պիղծ բան կերած չեմ : Նորէն մէ- 15
մալ ձայն եկաւ իրեն , Ին որ Աստուած սրբա-
ցուց՝ դուն պիղծ մի՛ սեպեր : Ասիկա իրեք հետ 16
եղաւ՝ և ամենը երկինքը վերցաւ : Ու Պետրոս 17
երբոր իր միտքին մէջ կրզարմանար թէ ինչ պի-
տի բլլայ ան իր տեսած տեսիլքը , ահա մարդիկը
Կոռնելիոսէն իրկրված մարդիկը Սիմոնին տունը հար-
ցուցին , ու դռանը առջևը կայնեցան . կանչեցին 18
և կըհարցունէին , թէ Սիմոնը՝ որ Պետրոս կըսը-
վի , հոս մտած է մի : Եւ երբոր Պետրոս ան տե- 19
սիլքին վրայով կըմտածէր , Հոգին Աստուծ բաւ
իրեն . Ահա քանի մը մարդիկ քեզ կըփնտռտեն-
կոր : Ուստի ելիր իջիր , և անոնց հետ գնա ա- 20
ռանց իրդնմտնելը ընելու . ինչու որ ես իրկեցի ա-
նոնք : Պետրոս ալ երբոր անոնց իջաւ՝ բաւ , 21
Ահա ես եմ որ դուք կըփնտռտէկիր . ինչ բան
կայ որ անոր համար դուք եկաք : Անոնք ալ ը- 22
սին . Կոռնելիոս հարիւրապետը՝ արդար և աստ-
ուածավախ մարդ , բոլոր Հրէից ազգին քաջ վը-
կայված՝ սուրբ հրեշտակէ մը հրաման առաւ , որ
քեզ իրեն տունը կանչէ և քու խօսքերդ լսէ :
Ասոր կանչեց անոնք՝ և իր բովը կեցուց . 23

Եւ եւեւի օրը Պետրոս
եկաւ՝ անոնց հետը գնաց, և քանի մըն ալ ան
24 եղբայրներէն որ Յոպպէ էին՝ իր հետը եկան ։ Ու
եւեւի օրը Կեսարիա մտան. Կոռնելիոս ալ իր
ազգականները և մտերիմ բարեկամները կանչած՝
25 անոնց կը սպասէր ։ Եւ եղաւ որ երբ Պետրոս ներս
մտաւ, Կոռնելիոս իր դիմացն ելաւ, անոր ոտ-
26 քը իյնալով երկիրպագութիւն կընէր ։ Պետրոս
ալ անիկա կանգնեցուց՝ և ըսաւ, Ելիր կայնէ.
27 ես ալ մէկ մարդ մըն եմ ։ Եւ իրեն հետը խօսելով
ներս մտաւ. ու շատերը ժողվուած գտաւ ։
28 Եւ ըսաւ անոնց. Դուք ձեզմէն գիտէք թէ ինչ-
պես անմաքուկ է որ մէկ Հրեայ մարդ մը պէտքի
մը դպչի՝ կամ մտնէ այ. բայց Աստուած ինծի
ցուցուց որ մարդիկներէն մէկը խառնակ կամ
29 պիղծ չըսեմ ։ Անոր համար ես ալ որ կանչուե-
ցայ՝ առանց խօսք մը դէմ բերելու եկայ. բայց
հիմայ կը հարցընեմ՝ Ինչ բանի համար իս
30 կանչեցիք ։ Կոռնելիոս ալ ըսաւ. Չորս օր առաջ
երբոր աս տունս ժամը իննին իմին տանս մէջ ա-
ղօթք կընէի, մէյմալ ձերմակ լաթերով մարդ
31 մը եկաւ կայնեցաւ առջեւս՝ և ըսաւ, Կոռնելիոս
քու աղօթքդ լսուեցաւ, և քու ողորմութիւններդ
32 Աստուծոյ առջեւը յիշուեցան ։ Ուստի Յոպպէն
մարդիկ խրկէ, ու կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս
կըսուի, որ ան ծովին մօտ մէկ Սիմոն կաշի բանո-
ղին մը տունը մտած է. որ ան գայ, ու խօսի քու
33 հետդ ։ Ես ալ ատոնցմէ քեզի խրկեցի, աղէկ
ըրիր դուն որ եկար. հիմայ մենք ամէնքս Աստու-
ծոյ առջեւը կեցեր ենք լսելու ան ամէնը, որ Տէրը
քեզի հրամայեց լսել է ։
34 Պետրոս իր բերանը բացաւ՝ և ըսաւ. Ճշմա-
րիտ կիմանամ՝ որ Աստուծոյ քովը աստուածութիւն
35 չի կայ. հապա ամէն ազգի մէջ՝ ան որ անկից կը-
վախնայ, ու արդարութիւն կըգործէ, ինքը կընդ-
36 դունի անիկա ։ Ան խօսքը որ Իսրայէլի որդոց

խրկեց Աստուած խաղաղութիւն քարոզելու Յիսուսի Քրիստոսի ձեռքով, (ասիկա է ամենուն Տէրը) դուք ձեղմէն գիտէք ան խօսքը որ բոլոր 37
Հրէաստանի միջը եղաւ Գալիլեայէն սկսած ան մկրտութենէն ետև՝ որ Յովհաննէս քարոզեց։
Յիսուսը որ Նազարեթէն էր՝ որ Աստուած անի- 38
կա օծեց Հոգւով Սրբով և զօրութիւնով, որ պտըտցուցաւ բարիք ընելու, ու Սատանայէն բռ-
ըրը բռնվածները բժշկելու. որովհետև Աստուած իրեն հետև էր։ Եւ մենք վկայ ենք ան ամեն բանե- 39
րուն՝ ինչ որ ըրաւ Հրէաստանի երկրին մէջ ու Երուսաղէմի մէջ. որ ինքը փայտէն կախած սպան-
նեցին ալ։ Աստուած անիկա երրորդ օրը յա- 40
րուց, և յայտնի ըրաւ անիկա. (չէ թէ բոլոր 41
ժողովուրդին, հապա մեզի՝ առաջուց Աստուծմէ
վկայ րլլալու ընտրվածներուս. որ մենք իրեն
հետ կերանք և խմեցինք ալ) իր մեռելներէն յա-
րուցէն առնելէն ետքը։ Եւ ինքը պատգեցոյց 42
մեզի՝ որ ժողովուրդին քարոզենք ու վկայու-
նանք, թէ Աստուծմէ սահմանած կեն-
դանիներուն և մեռելներուն դատաւորը։ Ասոր 43
բոլոր մարգարէները վկայ են՝ թէ ամեն իրեն հա-
ւատացողները իր անունովը մեղաց թողութիւն
կառնեն։
Ու Պետրոս երբոր ասս խօսքերը կըսեսէր՝ Հո- 44
գին Սուրբ Հանդիսեցաւ ամենուն վրայ, որոնք որ
ան խօսքը կըլսէին։ Թլփատվածներէն Եղած հա- 45
ւատացեալներն ալ՝ որոնք Պետրոսին հետը եկած
էին, զարմացան՝ որ Հոգիանութենուն վրայ ալ
Հոգւոյն Սրբոյ պարգեւները կըլեցվին։ Ինչու 46
որ կըլսէին անոնցմէ որ ուրիշ լեզուներով կըխօ-
սէին, և Աստուած կըփառաւորէին։ Անատներ 47
Պետրոս պատասխան տուաւ, Հապա՞ կրնայ ջու-
րը արգիլել որ ասոնք չմկրտվին. որոնք Հո-
գին Սուրբն ալ ընդունեցին մեզի պէս։ Ու հրա- 48
ման ըրաւ անոնց՝ որ Յիսուս Քրիստոսի անունո-

վը մկրտվին · անատնները իրեն ազաչեցին որ քանի մը օր հոն մնայ ։

ԳԼ · ԺԲ ։

1 Ա ռաքեալները եւ եղբայրները որ Հրէաստանի կողմերն էին, լսեցին թէ հեթանոսներուն 2 մէջն ալ Աստուծոյ խօսքը ընդուներ են ։ Ասոր երբոր Պետրոս Երուսաղէմ եկաւ, թլփատեալ- 3 ներէն էղող հաւատացեալները իրմէն կը բերդճա- 4 ռէին · եւ կըսէին թէ Անթլփատ մարդոց քովը մտար՝ եւ անոնց հետ կերար ։ Պետրոս ալ սկսեց 5 բանը կարգով պատմել անոնց, ու բաւ · Ես Յոպպէ քաղաքը աղօթք կընէի՝ ու ապշութիւնով տեսիլք մը տեսայ · մէկ տան մը մեծ սաւանի պէս 6 բան ճօթերէն երկինքէն կախված իյաւ, ու մին- չեւ ինծի հասաւ ։ Անոր վրայ աչք տնկեր կընայ- էի, ու տեսայ երկրի չորքոտանիները եւ գազան- 7 ները՝ ու սողունները՝ և երկնից թռչունները ։ Եւ ձայն մը լսեցի որ կըսէր ինծի, Ելիր Պետրոս՝ 8 մորթէ ու կեր ։ Հայց ես ըսի, Չէաւ, Տէր · ինչու որ խառնակ կամ պիղծ բան մը ամենեւին 9 մտած չէ իմ բերանս ։ Պատասխան տուաւ ինծի երկրորդ անգամ ան ձայնը երկինքէն · Ան որ Աստուած սրբացուց՝ դուն խառնակ մի՛ սեպեր ։ 10 Ա՛յս իրիք անգամ՝ եղաւ, ու նորէն բոլորը երկին- 11 քը վերցաւ ։ Եւ ահա յանկարծ անատնները իրիք հոգի Կեսարիայէն ինծի էրկրված՝ եկած էի՛ եղած տա- 12 նքս առջեւը կեցան ։ Հոգին ալ ինծի բաւ որ՝ ա- նոնց հետը երթամ՝ և ամենեւին տզեմնանք չընեմ՝ աս վեց եղբայրներն ալ ինծի հետ եկան, ու մը- 13 տան ան մարդուն տունը ։ Ուր ան մեզի պատմեց՝ ինծար իր տանը մէջ հրեշտակը տեսաւ, որ կայ- ներ էր՝ և իրեն կըսէր · Մարդ խրկէ Յոպպէ ու 14 կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս կըսվի · որ ան քեզի խօսքեր պիտի խօսի, որ անով փրկըվիս դուն՝ և 15 քու բոլոր տունդ ։ Եւ երբոր սկսեցի խօսիլ՝

Հոգին Սուրբը անոնց վրայ եկաւ , ինչպէս որ ա-
ռաջուց մեր վրայ : Միայն բերի Տէրոջը խօսքը՝ 16
որ կ՚ըսէր , Յովհաննէս ջուրով մկրտեց , բայց
դուք Հոգւով Սրբով պիտի մկրտուիք : Ուստի 17
թէ որ ան հաւասարակաց շնորհքը Աստուած անոնց
տուաւ՝ ինչպէս որ մեզի , երբոր Տէր Յիսուս
Քրիստոսի հաւատացին . ես ինչո՞ր կրնայի Աստու-
ծոյ դէմ դնել : Ան որ լսեցին՝ ձայներնին կտրե- 18
ցին , ու կրկսաւուրէին Աստուած և կըսէին .
Ընանկ է նէ Աստուած հեթանոսներուն ալ կեա-
նաց համար ապաշխարութիւն տուաւ :

Ու Ստեփաննոսին վրայով եկած նեղութիւնէն 19
ցիրուցան եղածները մինչև Փիւնիկէ ու Կիպրոս
և Անտիոքիա հասան . մէկու մը բան չէին խօսեր ,
միայն թէ Հրեաներուն : Անոնց մէկ քանիներն 20
էին Կիպրացի և Կիւրենացի մարդիկ՝ որոնք եր-
բոր Անտիոք մտան , Յոյներուն հետը կըխօսէին՝
Տէր Յիսուսը քարոզելով : Ու Տէրոջը ձեռքը 21
անոնց հետ էր , և հաւատացողներուն բազմու-
թիւնը Տէրոջը դարձաւ : Ես բանը անոնց վրայով 22
Երուսաղէմի եկեղեցիին ականջը հասաւ . ու
Բառնաբասը մինչև Անտիոք խրկեցին . որ երբոր 23
եկաւ՝ և Աստուծոյ շնորհքը տեսաւ , ուրախա-
ցաւ . ու կըսդրդռեր ամէնքն ալ՝ որ յօժար սիր-
տով Տէրոջը հետ կռչէ՜ մնան : Որովհետև նէ՜ 24
միաբը արիմուն մարդ էր , ու Հոգւով Սրբով՝
և հաւատքով լեցուն . ու Տէրոջը շատ ժողովուրդ
էվելցաւ : Եաթը Բառնաբաս Տարսոն եկաւ՝ Սօ- 25
ղոմ փնտռելու , և անիկա գտնալով Անտիոք
բերաւ : Ու եղաւ որ անոնք մին տարի մը եկե- 26
ղեցիին հետը ժող վըվելցան՝ և շատ ժողովուրդ
սորվեցուցին . ու պիտի առաջ Անտիոքի մէջ ա-
շակերտները Քրիստոնեայ անուանեցին :

Ան օրերը Երուսաղէմէն մարգարէներ իջան 27
Անտիոք : Անոնց մէկը Ագաբոս անունով եկաւ՝ 28
իմացուց Հոգիին զօրութիւնովը , թէ մէկ մեծ սով

մը պիտի ըլլայ բոլոր աշխարհ · որ Կղաւդիոսին
29 ատենը եղաւ : Հայց աշակերտներէն խոսք դրին՝
որ իւրեանցմէ ամէն մէկը ոչնչի որ կրնար , հրե-
աստանի մէջ բնակող եղբայրներուն կարօտու-
30 թիւնը խրկեն · որ ըրին ալ · եղեցներուն խրկե-
լով Առնաբասին և Սողոսին ձեռքովը :

ԳԼ. ԺԱ. ։

1 Ն ատենները Հերովդէս թագաւոր ձեռք ձգեց
2 Եկեղեցիէն մէկ քանիները չարչարելու : Եւ
Յակոբոսը Յովհաննէսին եղբայրը Թուրով սպան-
3 նեց : Տեսնելով որ Հրեաներուն ուզածն է , ա-
նոր վրայ Պետրոսն ալ բռնեց · (ու բաղարջակե-
4 րին օրերն էին) անիկա երբոր բռնեց՝ բանտը ղր-
րաւ , և չորս չորսական զինուորներու ձեռքը տը-
ւաւ որ պահեն անիկա · և կուզէր զատկէն ետև
5 Ժողովուրդին հանել անիկա : Ուստի Պետրոս
բանտին մէջը պահված էր , բայց անդադար եկե-
ղեցին աղօթք կընէր Աստուծոյ անոր համար :
6 Հերովդէս երբոր ուզից անիկա բերել , ան գի-
շերը Պետրոս երկու զինուորներու մէջ կքընա-
նարկոյ՝ երկու շղթայներով կապված , ու պա-
հապանները դռանը առջև բանտը կըպահպանէ-
7 ին : Եւ ահա Տէրոջը հրեշտակը եկաւ վրան կայ-
նեցաւ · ու տանը մէջ լոյս մը ծագեց , ու Պետ-
րոսին կողը հարեց՝ արթընցուց անիկա և ըսաւ ,
Շուտով ելիր · ու շղթաները իր ձեռքէն վար
8 իյնան : Եւ հրեշտակը ըսաւ անոր · Կապէ գօ-
տիդ , ու հողաթափներդ ոտքդ հագիր · ան ալ
անանկ ըրաւ · և ըսաւ ՚ին , Հագիր վրադ ա՛ռ՝
9 ու եկոր իմ ետևէս : Ին ալ ելաւ ետևէն կեր-
թար , և չէր գիտեր թէ ան հրեշտակին եղած
բաներ իրա՛ւ է մի · ինչու որ կըսեպէր թէ երազ
10 կըտեսնայկոր : Եւ երբոր անոնք առաջին ու երկ-
րորդ գիշերապահները անցան , եկան մինչև
երկաթի դուռը , որ քաղաքին մէջը կը հանէր · որ

ան ինքներէնը բացվեցաւ անոնց , և անոնք մտան
մէկ փողոց մը անցան . հրեշտակն ալ շուտ մը իր-
մէն զատվեցաւ : Պետրոսն ալ երբոր ինքզինքին 11
եկաւ՝ ըսաւ . «Իսկապէս ճշմարիտ գիտեմ , որ Տէրը
իր հրեշտակը խրկեց՝ և ազատեց իս Հերովդէսին
ձեռքէն , ու Հրէից ժողովուրդին բոլոր սպասած
բաներէն : Եւ մտմտալով եկաւ Մարկոս ըսած 12
Յովհաննէսին մօրը Մարիամին տունը , ուր անդ
շատերը ժողվված էին՝ և աղօթք կընէին : Եւ 13
տանը դուռը որ չալեց՝ մէկ աղախին մը գնաց ա-
կանջ դնելու . որ անոր անունը Հռոդէ էր :
Եւ երբոր Պետրոսին ձայնը ճանչցաւ , ուրախու- 14
թենէն դուռը չի բացաւ՝ ներս վազից պատմեց
թէ , Պետրոս դուռը կայներ է : Իսկոնք ալ ըսին 15
անոր , Խենդեցար . բայց ինքը էվիրջ ուր կրկո-
խէր որ՝ անանկ է . անոնք ալ կրսէին , Անոր հր-
եշտակը պիտի ըլլայ : Բայց Պետրոս անդադար 16
կբաղխէր . երբոր բացին՝ զինքը տեսան , և զար-
մացան : Բայց ան ձեռքով կրցուցընէր անոնց՝ որ 17
մտնէ կենան , ու պատմեց ինչպէս որ Տէրը զին-
քը բանտէն հանեց , և ըսաւ . «Յակոբոսի և եղբայրներուն . ու ելաւ ուրիշ տեղ
գնաց : Եւ երբոր առտու եղաւ՝ մեծ իրարանցում 18
մը կար զինուորներուն մէջը թէ՝ ինչ եղաւ Պե-
տրոս : Հերովդէս ալ երբոր ուզեց ա- 19
նիկա՝ և չի գտաւ , պահապանները քննելով՝ հր-
ամայեց բռնել որ սպաննվին . ինքն ալ Հրէաս-
տանէն կեսարիա իջաւ , և հոն կրկենար :
Ու Հերովդէս խիստ սրդոզած էր Տիւրացիներուն 20
ու Սիդոնացիներուն հետ . անոնք ալ բոլո-
ր մէկտեղ իրեն եկան , ու Բղաստոս թագաւո-
րին սենեկապետին խօսք անցուցնելով՝ հաշտու-
թիւն կուզէին . ինչու որ իրենց երկիրը անոր տէ-
րութենէն ապրուստ կառնէր : Ա՛ւէկ երևելի օր 21
մը Հերովդէս թագաւորական լաթերը հագած ու
աթոռը նստեր էր , և անոնց առնեարանու թիւն

22 կրներ ։ Յաղագս հարցանելոյն ալ կրկանչէին [ձէ] Ա-
23 տիկա Աստուծոյ ձոյն է ու չէ [ձէ] մարդու ։ Եւ
շատ մը Տէրոջը հրեշտակը դնելը զարկաւ , անոր
համար որ՝ Աստուծոյ փառք չի տուաւ , և որդ-
նալից եղաւ ատակեցաւ ։
24 Ու Աստուծոյ խօսքը կաճէր և կը շատնար ։
25 Առնաբաս ու Սօղոս Երուսաղէմէն դարձան եր-
բոր իրենց չանդիպեցած պաշտօնը լմնցուցին · իրենց
հետը առած Յովհաննէսն ալ , որ Մարկոս կըսվէր ։

ԳԼ · ԺԳ ։

1 Նախքը եղած եկեղեցին քանի մը մարգարէներ
և վարդապետներ կային , Առնաբասը , ու
Շմաւոնը՝ որ Նիգեր կըսվէր , և Ղուկիոս
Կիւրենացին , ու Մանայենը՝ Հերովդէս չորրոր-
2 դապետին ծիծմօր որդին , և Սօղոսը ։ Երբոր ա-
տոնք Տէրոջը պաշտամունքին մէջ էին և ծոմ կը-
բռնէին , Հոգին Սուրբը ըսաւ · Ծառնցէք ինծի
Առնաբասը և Սօղոսը ան գործին համար , որուն
3 ես կանչեր եմ զանոնք ։ Ընտանեօք ծոմ բռնելով
և աղօթք ընելով ձեռք դրին անոնց վրայ ու
խրկեցին ։
4 Անոնք ալ Հոգին Սուրբէն խրկըված Սելևկիա
5 իջան , ու անկէց նաւով Կիպրոս գացին ։ Եւ
Սալամիսա որ հասան Հրէից ժողովարաններուն
մէջ Աստուծոյ խօսքը կըքարոզէին · ու Յովհաննէս
6 ալ Էրենց սպասաւոր ունէին ։ Պըտըտելով ան
բոլոր կղզին մինչև Պափոս , հոն գտան մոգ մարդ
մը սուտ մարգարէ Հրէայ մը , որուն անունը
7 Բարէյեսու էր ։ Ան ինքը բդեշխին փոխանորդին
հետն էր , որ Եղէվէր Սերգիոս Պօղոս , խնամուտ
մարդ մը · որ ասիկա Առնաբասին և Սօղոսին
8 կարգաչէր , կուզէր Աստուծոյ խօսքը լսել ։ Անոնց
դէմ դրաւ Ելիմաս ան մոգը , (ինչու որ սասկ
կրթարգմանվի անոր անունը) որ կու գէր բդեշխին
9 փոխանորդը հաւատքէն նա դարձնել ։ Այլ

Սողոմ՝ (որ Պողոս ալ [ըսվի) Հոգւով Սրբով լեցեալ՝ դէպ ի անոր նայեցաւ , և բսաւ ։ Ո՛վ 10
մէն կերպ խարեբայութիւնով ու խորամանկու-
թիւնով լեցեալ Սատանայի որդի՝ թշնամի բոլոր
արդարութեան , չես մի դադրիր Տէրոջը շիտակ
ճամբանները ծռեցնել ։ Ու ալ ահա՝ Տէրոջը ձեռքը 11
քու վրադ է , ու կոյր պիտի ըլլաս՝ առանց մը արեւը
չի տեսնալու , և ան կէտին իրեն վրայ մշուշ ու
խաւար մը իջաւ , և կրպրպտելէ առաջնորդ մը
կը ինտրեր ։ Ասատանը բռնեխին փոխանորդը ա- 12
եցած բանները որ տեսաւ՝ հաւատաց , զարմանալով
Տէրոջը վարդապետութեանը վրայ ։
Ու Պողոս և իր ընկերները Պափոսէն ելան , 13
եկան Պամփիլիայի Պերգէն ։ Յովհաննէս անոնց-
մէ զատվեցաւ՝ Երուսաղէմ դարձաւ ։ Անոնք ալ 14
Պերգէէն գացին՝ եկան Պիսիդիայի Անտիոքը , և
շաբաթին օրը ժողովարանը մտան՝ նստան ։ Ու 15
օրէնքները և մարգարէները կարդացվելէն ետև՝
ժողովրդապետները խրկեցին իրենց և ըսին ,
Ա՛րդիկ եղբայրնե՛ր՝ թէ որ դուք ժողովուրդին
յորդորանք տալու խօսքեր ունիք նէ՝ խօսեցէ՛ք ։
Ասոր վրայ կայնեցաւ Պողոս , ձեռքը շարժեց և 16
բսաւ ։ Ո՛վ Իսրայէլի մարդիկ՝ և աստուածա-
վախնե՛ր , մտիկ ըրէք ։ Ա՛ս Իսրայէլի ժողովուր- 17
դիս Աստուածը՝ մեր հայրերնիս ընտրեց , ու ժո-
ղովուրդը բարձրըցուց Եգիպտացւոց երկրին մէջ
օտարութեան ատեն , և բարձր թեւով անոնք
անկէց հանեց ։ Ու քառասուն տարիան ժամանակի 18
չափ անապատին մէջը կերակրեց անոնք ։ Եւ 19
Քանանի երկիրը եօթը ազգ քակեց , անոնց եր-
կիրը իրենց տուաւ որ ժառանգեն ։ Եւ անկէ և 20
տև չորս հարիւր յիսուն տարիի չափ դատաւոր-
ներ տուաւ անոնց մինչև Սամուէլ մարգարէն ։
Ու ետքը թագաւոր ուզեցին , և Աստուած Կիսին 21
որդին Սաւուղը տուաւ իրենց Բենիամինի ցեղէն
մարդ մը , քառասուն տարի ։ Եւ երբոր անիկա 22

փոխեց՝ Դաւիթը հանեց իրենց թագաւոր , և անոր վրայ վկայելով՝ ըսաւ . Իսրայէլին որդին
23 Դաւիթը գայլ իմ սրտիս պէս մարդ , որ իմ լո-
ւոր կամքս պիտի կատարէ ։ Ասոր ցեղէն Աստուած
իր խոստմունքին պէս Իսրայէլին Փրկիչ մը հանեց՝
24 Յիսուս . Ինչպէս որ առաջ Յովհաննէս բոլոր
Իսրայէլի ժողովրդոց ապաշխարութեան մկրտու-
թիւնը քարոզեց , անոր գալէն մինչեւ առաջ ։
25 Եւ երբոր Յովհաննէս իր ընթացքը լմնցուց ,
ըսաւ . Ո՞վ կրնարձէք ինծի համար , որ ըլլամ .
ես անիկա չեմ . Հապա ան ա՛ւա իմ ետեւէս կու-
գակոր , որ ես արժանի չեմ անոր ոտքին կօշիկ-
26 ները քակելու ։ Ա՛րդեկ եղբայրներ՝ Աբրահամի
ցեղին որդիքը , ու անոնք որ ձեր մէջը աստուա-
ծավախ են , ձեզի այս փրկութեան խօսքը խրկը-
27 վեցաւ ։ Հայց Երուսաղէմ բնակողները և անոնց
իշխանները չճանչցան անիկա՝ ու մարգարէնե-
րուն զուրցածները , որ ամէն շաբաթ օրերը կը-
կարդային՝ կատարեցին , վրնջը դատապարտելով .
28 և մէկ մահուան պատճառ մըն ալ չի գտնալով՝
29 Պիղատոսէն ուզեցին սպաննել անիկա ։ Ու երբ
բոլոր բաները լմնցուցին որ անոր համար գրված
30 էր , փայտէն վար իջուցին՝ գերեզմանը դրին ։ Հայց
Աստուած անիկա յարուց մեռելներէն . որ ինքը
31 շատ օրերով երևցաւ անոնց , որ իր հետը Գա-
լիլեայէն Երուսաղէմ եկեր էին . որոնք հիմայ ա-
32 նոր վկաներն են ժողովուրդին դիմացը ։ Մենք
ալ ձեզի աւետիս կուտանք այն խոստմունքը որ
33 հայրերուն եղած էր ։ Որ անիկա Աստուած մեր
վրայ կատարեց՝ որ անոնց զաւկըներն ենք , Յի-
սուսը յարուցանելով . ինչպէս որ երկրորդ սաղ-
մոսին մէջն ալ գրված է , Դուն իմ որդիս ես ,
34 ես քեզ այսօր ծնայ ։ Եւ որ անիկա մեռելներէն
յարուց , ու ետքը ապականութիւն չի պիտի
տեսնայ . ասանկ կըսէ , Թէ՝ Ձեզի պիտի տամ
Դաւիթին հաւատարիմ սուրբ խոստմունքները ։

Ընոր համար ուրիշ տեղ մըն ալ կըսէ , Պիտի 35
թող չի տան՝ որ քու Սուրբդ ապականութիւն
տեսնայ : Բայց Դաւիթ իր աղքին մէջը ծառայու- 36
թիւն ըրաւ , և Աստուծոյ կամքովը մեռաւ , ու
իր հայրերուն քովը դրվեցաւ , և ապականութիւն
տեսաւ : Բայց անիկա որ Աստուած յարուց՝ ա- 37
պականութիւն չի տեսաւ : Հայտնի ըլլայ ձեզի 38
մարդիկ եղբայրներ , որ ասով ձեզի մեղաց թո-
ղութիւն կըքարոզվի : Եւ ան ամէն բաներէն որ 39
Մովսէսին օրէնքովը չի կրնաք արդարանալ , ա-
սով՝ ամէն մի որ հաւատայ , կարդարանայ :
Զգուշ կեցէք , որ չըլլայ թէ ձեր վրայ գայ ան որ 40
մարգարէներուն մէջ ըսված է : Նայեցէք արհա- 41
մարհողներ՝ և զարմացէք , ու ոչընչացէք . ինչու-
որ գործ մը պիտի ընեմ՝ ձեր օրերը , գործ մը՝ որ
անոր չի պիտի հաւատաք , թէ որ մէկը ձեզի պատ-
մէ :

Ու երբոր անկէց դուրս ելան՝ կաղաչէին որ 42
մէկալ շաբաթի ալ ան նոյն խօսքերը իրենց խօսին :
Եւ ժողովուրդը երբոր արձրկեցաւ՝ ան Հրէա- 43
ներէն ու նորահաւատ աստուածապաշտներէն
շատերը Պօղոսին և Բառնաբասին ետևէն կեր-
թային . որոնք կրխօսէին անոնց հետ ու կրյոր-
դորէին անոնք , որ միշտ Աստուծոյ շնորհքին մէ-
ջը կենան մնան : Եւ մէկալ շաբաթը որ եկաւ , 44
սեպէ թէ՝ բոլոր քաղաքը Աստուծոյ
խօսքը լսելու : Հրեաները երբոր տեսան ան բազ- 45
մութիւնը , նախանձով լեցվեցան , ու Պօղոսի
դուրցածներուն դէմ կրդնէին՝ հայհոյելով ը-
նելով : Անոքիրէ Պօղոս և Բառնաբաս համար- 46
ձակութիւն մը ընելով՝ ըսին . Առաջ ձեզի պէտք
էր Աստուծոյ խօսքը խօսիլ . բայց որովհետև դուք
անիկա մէկդի կրձգէքիրը , ու ինքզինքնիդ յա-
ւիտենական կենացը արժանի չէք սեպներով , ա-
հա մենք հեթանոսներուն կրդառնանք : Ընդու- 47
որ ասանկ պատուիրեց մեզի Տէրը . Քեզ հեթա-

նոսներուն լսյս դրի , որ դուն փրկուելեան պատ-
48ճառ ըլլաս մինչև երկրի ծայրը ։ Ան որ լսեցին
հեթանոսները՝ ուրախ կըլլային , և Աստուծոյ
խօսքը կըփառաւորէին . ու հաւատքի եկան անոնք
49որ յաւիտենական կենաց սահմանուած էին ։ Եւ
Տէրոջ խօսքը բոլոր գաւառը կըտարածուէր ։
50Հայց Հրեաները իրար անցուցին բարեպաշտ ազ-
նիւ կիներները՝ ու քաղաքին մեծերը . և Պօղոսին
ու Բառնաբասին վրայ հալածանք հանելով՝ ա-
51նոնք իրենց սահմաններէն դուրս ըրին ։ Իրենք
ալ ոտքերնուն փոշին անոնց վրայ թօթուելով՝ Ի-
52կոնիոն եկան ։ Ու աշակերտները ուրախութիւ-
նով և Հոգւով Սրբով կըլեցուէին ։

ԺԳ · ԺԴ ։

1 Ա Ու եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք միասեղ
Հրեաներուն ժողովարանը մտան . ու անանկ
խօսեցան , մինչև որ հաւատաց շատ Հրեաներ և
2Յոյներ հաւատացին ։ Հայց անհաւատ Հրեաները
ոտք հանեցին՝ ու չար բաներ ձգեցին հեթանոս-
3ներուն սիրտը ան եղբայրներուն դէմ ։ Հ ատ
ատեն կրպտրտեին Տէրոջը վրայ համարձակելով
որ վկայութիւն տուաւ իր շնորհաց խօսքերուն
նշաններ ու հրաշքներ ընել տալով անոնց ձեռ-
4քովը ։ Ու քաղաքին բազմութեանը մէջ բաժան-
մունք մը եղաւ . ոմանք Հրեաներուն կողմը և
5ոմանք ալ առաքեալներուն ։ Երբոր հե-
թանոսները և Հրեաները իրենց իշխաններովը
չարչին վազեցին՝ անոնք նախատելու ու քարկոծե-
6լու , իրենք իմանալով ի կէսյոնացոց քաղաքները
փախան՝ ի Լիւստրա ու Դերբէ՝ և ան գաւառին
բոլորտիքը , ու հոն աւետարանը կըքարոզէին ։
7 Եւ մէկ ի Լիւստրացի մարդ մը նստեր էր՝ ոտքերովը
տկար , մօրը փորէն կաղ ծնած , որ բնաւ քալած
8չէր ։ Նոյնա Պօղոսին խօսքերը մտիկ կընէր . որ
ինքն ալ նայեցաւ անոր՝ և տեսաւ որ բրնտնալու

Հաւատաք ունի , ամուր ձայնով մը բսաւ , Ա՛ր 9
Տէր Յիսուս Ա՛րիաւտի անունովը կրսեմ քեզի՝
Ելիր կայնէ շիտակ ոտքիդ վրայ · ան ալ կրվազ-
վզվզէր՝ ու կերթար : Եւ ժողովուրդները Պօղո- 10
սին ըրածը տեսնալով՝ ձայներնին վերսացին ու
Լիկաոնարէն բսին · Աստուածները մարդու նը-
մանութիւնով մեզի իջեր են : Ու Առնաբասին 11
Պօտս կրկանչէին , և Պօղոսին Հերմէս · ինչու որ
ասիկա էր դլխաւոր խօսողը : Պօտսին քուրմն ալ 12
որ քաղքին առջևը կրկենար , ցուլեր և պսակներ
Հասցուց դուռը բաղմութիւնովը մկսեղ , կուզեր
որ զոհ ընէ : Առնաբաս ու Պօղոս առաքեալներն 13
ալ երբոր լսեցին , իրենց լաթերը պատռելով՝
դուրս վազեցին բազմութեան մէջէն · կրկանչէին ,
ու կրսէին · Ա՛րդիկ ատ ինչ կընէիքոր · մենք 14
ալ ձեզի պէս կիրք ունեցող մարդիկ ենք , ու ե-
տարանը կրքարոզենք ձեզի՝ որ ատանկ փուճ բա-
ներէն կենդանի Աստուծոյն դառնաք , որ ինքը
բսաւ երկինքը և երկիրը՝ ու ծովը , և բոլոր ա- 15
նոնց մէջի եղածները : Ար անցած դարերուն մէջ
Թող տըւաւ ամէն ազգերուն իրենց ճամբաները
երթալ : Այսու ամենայնիւ ինքզինքը առանց 16
վկայութիւնի չի Թողուց , բարերարութիւնով
երկինքէն ձեզի անձրևներ՝ և պտղաբեր եղանակ-
ներ տալով , կերակուրներով ու ուրախութի-
նով ձեր սիրտերը լեցուն եղով : Ու ասանկ բսե- 17
լով՝ Հազիւ կրցան ժողովուրդները դադրեցնել ,
որ իրենց զոհ չընեն , Հապա ամէն մկկը երթան
տեղերնին :

Եւ իրենց պրտրտած ու սորվեցուցած տեսնը՝ 18
Անտիոքէն և Իկոնիոնէն եկան Հասան Հերէանե-
րը · և իրենք որ Համաձակ վիճաբանութիւն կը-
նէին՝ ժողովուրդները խաբեբբեցին անոնցմէ մկկ դի
կենալ · ու կրսէին , Թէ Աստուք մկկ ճշմարիտ բան
մը չեն բսեր , Հապա բոլոր զուրցածնին սուտ է ·
և Պօղոսը քարկոծելով քաղքէն դուրս քաշեցին ,

19 ու անիկա մեռած կրկարծէին : Եւ աշակերտները երբոր իր քովը բոլորվեցան , երեք քաղաքը մըտան . ու ետևի օրը Յառնաբասին հետ մեկտեղ
20 Վերբէ եկաւ : Ուր քաղաքին մէջը աւետարանը քարոզելով , և շատերը աշակերտ ընելով՝ Լիւստրա , ու Իկոնիան և Անտիոքիա դարձան .
21 աշակերտներուն սիրտը հաստատելով և յորդորելով՝ որ հաստատ մնան հաւատքի մէջ . և որ՝ շատ նեղութիւններով պէտք է մեզի Աստուծոյ
22 թագաւորութիւնը մտնել : Անոնց ամէն մէկ եկեղեցիներուն երէցներ ձեռնադրեցին . աղօթք ընելով ու ծոմ բռնելով Տէրոջը յանձնեցին ա-
23 նոնք , որուն որ հաւատացեր էին : Եւ Պիսիդիային մէջէն պըտրտելով՝ եկան Պամփիլիա :
24 Պերգէին մէջն ալ Տէրոջը խօսքը խօսկէն ետև՝ իջան
25 դէպի Աթալիա : Անկէց ալ նաւով Անտիոք գացին , ուսկից որ Աստուծոյ շնորհքին յանձնված
26 էին ան գործին համար որ կատարեցին : Երբոր եկան՝ եկեղեցին մէկտեղ ժողվեցին , պատմեցին որչափ բան Աստուած ըրեր էր իրենց . և որ՝ հե-
27 թանոսներուն հաւատքի դուռ բացեր էր : Ու հոն շատ ժամանակ աշակերտներուն հետ կեցան :

ԳԼ. ԺԸ :

1 Ա ու մէկ քանիները Հրէաստանէն իջած՝ եղբայրներուն կըսորվեցուներին թէ որ Մովսէսի օրինացը պես չի թլիատվիք նէ , չէք կրնար
2 փրկըվիլ : Ուստի Պօղոս և Յառնաբասս անոնց դէմ շատ մը հակառակութիւն ու վէճ ընելէն ետքը , վճռեցին որ Պօղոսը ու Յառնաբասը և ուրիշ մէկքանիներն ալ անոնցմէ Երուսաղէմ երթան առաքեալներուն ու երէցներուն այս վէճին համար :
3 Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ դրված՝ կրպրտըտէին Փիւնիկէ և Սամարիա , հեթանոսներուն դարձի գալը կրպատմէին , և մեծ խնդում կուտային
4 բոլոր եղբայրներուն : Եւ երբոր Երուսաղէմ

Հասան՝ եկեղեցիէն ու առաքեալներէն և երէցներէն ընդունվեցան . և պատմեցին որչափ բան որ Աստուած իրենց հետը ըրած էր : Փարիսեցւոց 5
ազանդէն հաւատացեալներէն ոմանք ելան ու կըսէին թէ Պէտք է թլփատել անոնք , և ապրեցըլ որ Մովսէսի օրէնքը պահեն :
Եւ ժողվվեցան առաքեալները ու երէցները աս 6
բանս տեսնալու համար : Եւ շատ վիճաբանուց 7
թիւն ըլլալէն ետև՝ Պետրոս ոտքի վրայ ելաւ , ու ըսաւ անոնց . Մարդիկ եղբայրներ՝ դուք ձեզմէ գիտէք որ շատ օրերէն առաջ ձեր մէջէն Աստուած ընտրեց , որ իմ բերնովս հեթանոսները աւետարանի խօսքին լսեն և հաւատան : Եւ ան 8
Սրտագէտ Աստուածը վկայեց անոնց վրայ՝ Հոգին Սուրբը տալով անոնց , ինչպէս որ մեզի . ու 9
մեկ տարբերութիւն մը չըրաւ անոնց և մեր մէջը , հաւատքով մաքրելով անոնց սիրտը : Ուստի ին- 10
չի Աստուած կըփորձէք , աշակերտներուն վիզը անանկ լուծ մը դնելով , որ անիկա ոչ մեր հայրերը՝ ոչ ալ մենք կրցանք վերցունել : Հապա Տէր 11
Յիսուս Քրիստոսի շնորհքովը կըհաւատանք որ կըփրկըվինք , ասանկ ալ անոնք :
Ետքը ժողովուրդը լուռ կեցաւ , և մնիկ կընէ- 12
ին Barnabasին ու Պօղոսի պատմածներուն , որ Աստուած ինչ նշաններ ու հրաշքներ ըրեր է հեթանոսներուն մէջ անոնց ձեռքովը : Եւ անոնք 13
խօսքերնին կտրելէն ետև՝ Յակոբոս պատասխանեաւ ու ըսաւ , Մարդիկ եղբայրներ՝ լսեցէք մնիկ ըրէք . Շմաւոն պատմեց , թէ Ինչպէս ա- 14
ռաջուց Աստուած տես եկաւ , որ հեթանոսներէն ժողովուրդ առնէ իր անունին համար : Եւ ասոր 15
մարգարէներուն խօսքերն ալ կըմիաբանին . ինչպէս որ գրված է . Ետկէ ետև պիտի դառնամ , 16
ու Դաւիթին փլված բնակարանը պիտի չինեմ . և անոր կործանածը նորէն պիտի չինեմ՝ և կայնեցունեմ անիկա . որ մնացած մարդիկը Տէրը 17

փնտրեն, և բոլոր հեթանոսները որոնց վրայ որ
իմ անունս դրված է, կրսէ Տէրը. որ ինքը աս
18ամէն բաները կընէ, Յայտնի է Տէրոջը իր գործ-
19ք՚երը աշխարհիս սկիզբէն հետէ: Ասոր համար ես
ալ իրաւունք կրսեմ՝ Նեղութիւն չի տալ ա-
նոնց որ հեթանոսներէն Ատենօդ կրդառնան:
20Հապա թուղթ մը տալ անոնց կուռքի կերակուր-
ներէն եա քաշվելու՝ և պոռնկութիւն գործելէն՝
21ու մեռած բաներէն՝ և արիւնէն: Ինչու որ
Մովսէս ալ ասչի նախնիքներէն հետէ ամէն քա-
ղաքի մէջ զինքը քարոզողները ունի՝ և ժողով-
բաններուն մէջ ամէն շաբաթ օր կրկարդացվի:
22Նահատակներուն և երէցներուն բոլոր
եկեղեցիին աղէկ երևցաւ որ իրենցմէ քանի մը
հոգի րնտրած Անտիոք իրկեն Պօղոսին ու Բառ-
նաբասին հետ Յուդան Բարսաբա բսմածը, և
23Շ՚իղան, ան գլխաւոր մարդիկը. նեղբերնութեան
ատ բանը գրելով անոնց ձեռքովը. առաքեալներ
ու երէցներ և եղբայրներ՝ Անտիոքի ու Սիւրիայի
և Կիլիկիայի մէջի հեթանոսներէն հղած եղ-
24բայրներուդ ողջոյն: Որովհետև լսեցինք որ ո-
մանք իրէ մեր կողմանէ ձեզ իրար անցուդարձ
եին խօսքերով՝ ձեր անձերը խախտելով, բսելով
ինչ պէտ է թլիատվիլ՝ ու օրէնքը պահել. որ
25անոնց մենք ասան՝ Չհրամայեցինք: Ա՚եղի միա-
բան ժող վրմածնեղնուս աղէկ երևցաւ, որ ընտ-
րված մարդիկ իրկենք ձեղի Բառնաբասի և Պօ-
26ղոս մեր սիրելիներուն հետը. անանկ մարդիկ՝ ո-
րոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունին հա-
27մար իրենց անձերնին մահեցընեն: Ուստի իրկե-
ցինք Յուդան և Շ՚իղան, որ իրենք ալ բերնով
28նոյն բաներ յեղ զուրցեն: Ինչու որ աղէկ երևցաւ
Հոգին Սուրբին ու մեզի ալ՝ ձեր վրայ էվել բեռ
չի դնել, միայն թէ աս չարկաւորներէս ի զատ,
29որ եա կենաք կուռքերուն զոհվածը ուխլէն՝ և
արիւնէն՝ ու խըղդվածէն, և պոռնկութիւն

ընելէն · որ աս բաներէն ինքզինքնիդ պահե-
լումնիդ՝ աղէկ պիտի ընէք · Ողջ եղէք :
Անոնք ալ ճամբայ կեցած՝ իյան Անտիոք , և 30
ժողովուրդը մէկտեղ ժողվելով թուղթը տըվին :
Եւ երբոր կարդացին՝ ուրախացան ան մխիթա- 31
բական բանին վրայ : Յուդան ու Շ իղան՝ որ ի- 32
րենք մարգարէ ալ էին , շատ խօսքերով մխիթա-
րեցին եղբայրները՝ և հաստատեցին : Եւատեն 33
մը հոն կենալէնետև՝ եղբայրները խաղաղու-
թեամբ ճամբու դրին դէպի առաքեալներուն :
Բայց Շ իղային աղէկ երևցաւ հոն մնալ : Պօղո- 34
ս ու Բառնաբասն ալ Անտիոքին մէջը կըպըտը- 35
տէին Աստուծոյ խօսքը սորվեցունելու ու քարո-
զելու , և շատերն ալ հետերնին :
Եւ քանի մը օրերէն ետքը Պօղոս Բառնաբասին 36
ըսաւ · Դառնանք և նորէն պըտըտինք եղբայրնե-
րուն քովը ամէն մէկ քաղաքները , ուր որ Տէրոջը
խօսքը քարոզեցինք , թէ՝նանա՛ թէ ինտր բըռ-
ներ են : Բառնաբաս կուզէր որ Յովհաննէսն ալ 37
առնեն , որ Մարկոս կըսուէր · բայց Պօղոս կա- 38
զաչէր որ Պամփիւլիայի մէջ իրենցմէ զատվողը՝
ու իրենց հետը գործի չկողը հետերնին չառնեն :
Եւ Ըզըմանն կուիւ մը եղաւ՝ մինչև որ անոնք 39
մէկըզմէկէ զատվեցան · Բառնաբաս Մարկոսը
առաւ նաւով Կիպրոս գնաց : Պօղոսն ալ Շ իղ- 40
ային ընտրեց՝ ելաւ , եղբայրներէն Աստուծոյ
շնորհացը յանձնըվելով : Եւ Ասորիներուն ու 41
Կիլիկեցիներուն կողմերը կըպըտըտէր , և կըհաս-
տատէր եկեղեցիները :

ԺԶ · ԺՕ ·

Ա կաւ Պէրբէ ու Իւստրա հասաւ · և ահա 1
հոն աշակերտ մը կար Տիմոթէոս անուն , որ
հաւատացեալ Հրէայ կնկան մը զաւակ էր , և
հայրը՝ Հելլանոս : Որ ասիկա Իւստրացի ու Ի- 2
կոնացի եղբայրներէն ալ Բարի վկայված էր : Պօ- 3

դոս ուզից ասիկա իր Հնար տանել , և առաւ թլփատից անիկա ան տեղւանքը եղած Երեանեցոյն Համար ։ Ընչու որ ամէնքն ալ գիտէին անոր
4 Հայրը՝ որ Տնեցոնս էր ։ Երբոր ալ քաղաքներէն կանցնէին , Երուսաղէմ եղած առաքեալներէն ու երէցներէն ապրպրըմած հրամանները կաւանդէին անոնց որ պահեն ։
5 Եկեղեցիներն ալ Հաւատքի մէջ կրՀաստատուէին , և օրէ օր անոնց Համրանքը կէվէլնար ։
6 Եւ Փռիւգիա ու Գաղատացոց կողմերը պըտըտեցան՝ Հոգին Սուրբէն արգիլելով որ Ասիոյ
7 Խօսքը Ասիային մէջը խօսին ։ Գայ Միսիայի քովերը որ եկան՝ կուզէին դէպի Բիւթանիա երթալ , և Յիսուսի Հոգին թող չի տուաւ իրենց ։ Եւ Միսիային անցան՝ Տրովադա իջան ։
9 Եւ Հան գիշերը Պօղոսին տեսիլք մը երեցաւ . Մակեդոնացի մարդ մը կայներ կաղաչէր իրեն՝
10 ու կըսէր . Մակեդոնիա անցիր , մեզի օգնէ ։ Եւ երբոր ան տեսիլքը տեսաւ՝ շուտ մը ուզեցինք Մակեդոնիա ելլալ , Հասկընալով որ Տէրը մեզ կըՀրաւիրէ աւետարան քարոզել անոնց ։
11 Եւ Տրովադայէն ելանք՝ շիտ շիտակ Սամոթրակէ գացինք , ու վաղուն օրը Նէոր քաղաքը ։
12 ու անկէց ալ Փիլիպպոս , որ է Մակեդոնացոց վիճակին առաջին քաղաքը՝ գաղթականներուն մէկ երկիրը , Կողոնիա ըսւած ։ և ան քաղքին մէջ քանի մը օրեր կանկ առինք մենք ։ Շա-
13 բաթն օրը քաղաքէն դուրս ելանք՝ գետին եղերքը , ուր որ սովորութիւն ունէին աղօթք ընելու ։ ու նստեցանք ժող վըլած կնքտոցր Հետ կը-
14 խօսէինք ։ Եւ Լիդիա անուն կնիկ մը ծիրանի բան ծախող՝ Թիւատիր քաղաքէն Աստուծմէ վախցող մէկ մը , մտիկ կընէր . որ անոր սիրտը Տէրը բացաւ՝ Պօղոսին բաններուն խելքը պահկելու ։
15 Եւ երբոր ինքը՝ և իր տունը մկրտվեցաւ , կաղաչէր ու կըսէր . Թէ որ իս Տէրոջը Հաւատացիա-

լը կրսեպէք նէ՝ իմ տունս մտէք բնակեցէք . և բոնեց տարաւ մեզ :

Եւ եղաւ որ երբ մենք աղօթքի կերթայինք՝ 16
մեզի մէկ աղախին մը պատահեցաւ , որ Ա՛ստղուկ դեւ ինքը բոներ էր . որ կախարդութիւնովը իր տէրմոնաքներուն շատ վաստակ կըբերէր : Ա՛սիկա 17
կա Պօղոսին և մեր ետեւէն իյնալով կըգոռար՝ ու կըսէր . Ա՛ս մարդիկը Ա՛ստուծոյ ծառաներն են , որ ձեզի փրկութեան ճամբան կըքարոզեն : Եւ աս բանը շատ օրեր կընէր . Պօղոս 18
բարկանալով՝ դարձաւ ու ըսաւ ան դեւին , Յի՛սուս Ք՛րիստոսի անունովը հրաման կընեմ քեզի , Ելիր ասկից . և Նոյն ժամին ելաւ դեւը : Երբոր 19
տեսան անոր տէրմոնաքը՝ որ իրենց վաստակին յոյսը կորեցաւ , Պօղոսը ու Հ՛իղան առին՝ ա՛ստեղը քաշեցին իշխաններուն առջև : Եւ տարին 20
անոնք զօրագլուխներուն քովը՝ ըսին , Ա՛ս մարդիկները մեր քաղաքը իրար կանցուննենկոր . իրենք Հ՛րէայ են , և մեզի օրէնքներ կըսորվեցունեն՝ որ 21
արժան չէ մեզի ընդունել , ո՛չ ալ ընել . ինչու որ Հ՛ռոմայեցի ենք : Եւ բազմութիւնը անոնց 22
վրայ դիմեցաւ . զօրագլուխներն ալ իրենց լաթները պատռեցին , և հրաման ըրին որ ծեծ զարնեն . և շատ վէրքեր դնելով անոնց վրայ՝ բանտը 23
ձգեցին , պատուիրելով բանտապետին որ զգուշութեամբ պահէ անոնք : Ան ալ ասանկ հրաման 24
որ առաւ՝ անոնք ներսի բանտը դրաւ , և ոտքերնին ալ փայտի մէջ ամրցուց :

Եւ կէս գիշերին Պօղոս ու Հ՛իղա աղօթք 25
կընէին և Ա՛ստուած կօրհնէին , ու բանտագեալներն ալ մեկ կընէին իրենց : Եւ յանկար- 26
ծակի մէկ շարժ մը եղաւ , անանկ որ բանտին հիմնները դընտացին . և ան կէսին ամէն դուռները բացվեցան , ու ամէնուն կապերը արձկվեցան : Ա՛նտապետը երբոր արթնցաւ՝ և բանտին դուռ- 27
ները բացված տեսաւ , թուրը քաշեց՝ և կուզեր

ինքըզինքը սպաննել , կըկարծէր որ կապածնե-
28րը փախեր են ։ Պօղոս ալ ամուր ձայնով կանչեց
ու ըսաւ . Վնաս քու անձիդ վնաս մը մի՛ ըներ .
29ինչու որ ամէնքս ալ հոս ենք ։ Ն՚ուագ մը ուզեց
և ներս վազեց , ու զարհուրելով Պօղոսին և
30Շ հոգւոյն առջեւը ինկաւ . և անոնք դուրս բերե-
լով ըսաւ . Պարոններ՝ ինծի ի՛նչ պէտք է ընել
31որ փրկըվիմ ։ Անոնք ալ ըսին . Հաւատա՛ Տէր
Յիսուս Ք՚րիստոսի , ու պիտի փրկըվիս դուն՝ և
32քու բոլոր տունդ ։ Եւ Տէրոջը խօսքը խօսեցան
անոր , ու ան ամէնուն՝ որ իր տունին մէջն էին ։
33Եւ առաւ անոնք գիշերուան նոյն ժամուն՝ խոցեր-
նին լըւաց , և շուտ մը մկրտեցաւ ինքը ու բոլոր
34իրենները ։ Եւ անոնք իր տունը տարաւ , անոնց
առջեւը սեղան դրաւ , և բոլոր տունովը ուրախ
35եղաւ՝ Հաւատացյ հաւատալով ։ Եւ երբոր առաւ-
եղաւ , զօրապետները խրկեցին սպասաւորները՝
36ու ըսին . Ը՚րձակէ այս մարդիկը ։ Քահանապետն
ալ ան խօսքը Պօղոսին պատմեց , Թէ զօրագլուխ-
ները խրկեցին որ արձակվիք . ուստի ելէք և խա-
37ղաղութեամբ գացէք ։ Պայց Պօղոս ըսաւ անոնց .
Մ՚եզի յայտնապէս ծեծելով՝ որ Հռոմայեցի
անմեղ մարդիկ ենք , բանտը դրին , ու հիմայ
գաղտնի մի կրշանեն մեզ . աստանկ չէ , հապա
38թող բուն իրենք գան մեզ հանեն ։ Եւ սպասա-
ւորները պատմեցին զօրագլուխներուն ան խօս-
քերը . երբոր լսեցին Թէ Հռոմայեցի են՝ խիստ
39վախցան , ու եկան աղաչեցին անոնց ։ Եւ Երբոր
դուրս հանեցին աղաչեցին անոնց որ ան քաղաքէն
40երթան ։ Անոնք ալ բանտէն ելան Լ իւդիային
տունը մտան , ու եղբայրները տեսան՝ մխիթա-
րեցին անոնք , և գացին ։

ԳԼ. ԺԲ ։

1 Ա՚ռ Ա՚մփիպոլիսէն ու Ա՚պողոնիայէն պտտելով՝
Թեսաղոնիկէ եկան , ուր որ Հրէաները ժո-

զոլարան մը ունէին : Պօղոս ալ սովորութեանը 2
պէս անոնց քովը մտաւ , և իրեք շաբաթ օր խօսե-
ցաւ անոնց հետ գիրքերէն : Կրբանաբ և առջև- 3
նին կը դնէր Թէ , Պէտք էր Քրիստոսի չարչար-
վիլ ու մեռնիլներէն յարութիւն առնել , և Թէ
Յիսուսը Քրիստոսն է , որ ես ձեզի կը պատմեմ :
Եւ անոնցմէ ոմանք հաւատացին , ու Պօղոսին և 4
Շիղային հետ միացան . բայց բարեպաշտ Յոյ-
ներէն խիստ շատ կար , և գլխաւոր կիներուն ալ
քիչ չէ : Հայց Հրէաները նախանձեցան , և քա- 5
նի մը անշահ անօրէն մարդիկ առած՝ բազմու-
թեամբ քաղաքը տակնուվրայ ըրին . և Յասոնին
տանը առջև դիզվելով՝ կուգէին անոնք ամբոխին
դիմացը բերել : Եւ երբոր անոնք չի գտան նէ 6
Յասոնը ու մէկ քանի եղբայրները քաղաքապետ-
ներուն դիմացը քաշեցին , կանչ վըռտելով Թէ
անոնք որ աշխարհը տակնուվրայ ըրին՝ իրենք հոս
ալ հասան . որ իրենք Յասոնը ընդուներ է , և 7
ասոնք ամէնը կայսրին հրամանին դէմ կը գոր-
ծեն , Հիսուս մէկ ուրիշ թագաւոր մըն է կըսեն : Եւ 8
իրար անցուցին ժողովուրդը ու քաղաքապետնե-
րը , որ ասոնց բաներէն կըլսէին : Հայց երբոր Յա- 9
սոնէն և ուրիշներէն երաշխաւոր առին՝ թող
տըվին անոնք որ երթան : Սակայն եղբայրները 10
շուտ մը գիշերով Պօղոսը և Շիղան Բերիա
խրկեցին . անոնք երբոր հոն հասան՝ Հրէից ժո-
ղովարանը գացին : Ինչու որ՝ ասոնք Թեսաղոնի- 11
կէին մէջ եղողներէն շատ ազնիւ մարդիկ էին ,
որ Բառնաբայ խօսքը բոլոր սրտանց ընդունեցին .
ամէն օր գիրքերը կըքննէին Թէ՝ ասոնք բաները ա-
սանկ է մի : Եւ անոնցմէ շատերը հաւատացին , 12
և Յունաց պարկեշտ կիներէն ու մարդիկներէն
քիչվոր չէ : Հայց երբոր իմացան Թեսաղոնիկէն 13
եղող Հրէաները որ Բերիայի մէջ ալ Բառնաբայ
բանը քարոզեցաւ Պօղոսին՝ հոն ալ եկան ժո-
ղովուրդը դրդելու ու իրար անցուներու : Ասա- 14

տէրն եղբայրներդ շուտ մը Պօղոսը խրկեցին որ մինչև ծովեզերքը երթայ. և Հ Յոյն ու Տիմո-
15 թէոսը հոն մնացին։ Եւ անոնք որ Պօղոսը կը-
տանէին՝ մինչև Աքէթը բերին անիկա. և իրմէն
հրաման առին Հ Յոյներն ու Տիմոթէոսին՝ որ
շուտով իրեն գան. և գացին։
16 Եւ Պօղոս Աքէթքի մէջ անոնց որ կրպասեր՝
իր Հոգին կրտանջվէր նեղսիր դին, որ քաղաքը
17 կրտապաշտութեան մէջ կրտեսնար։ Եւ ժողո-
վարանին մէջը Հրէաներուն կրխօսէր ու բարե-
պաշտ մարդոց, և ամէն օր շուկաներուն մէջը որ
18 պատահէր նէ։ Ա՛ևկ քանիները Եպիկուրեան
և Ստոյիկեան փիլիսոփաներէն իրեն դէմ Հակա-
ճառութիւն կրտեսին՝ և ոմանք ալ կրսէին, Ա՛ս
սերմանաքաղը ի՞նչ բան կուզէ, ուրիշներն ալ
կրթուին թէ Ակրևայ որ քանի մը օտար կուդքերու
քարոզիչ է. ինչու որ Հիւսուսը ու յարութիւնը
19 կրաւետարանէր։ Եւ առին անիկա Արիսպագոսը
տարին, և կրսէին. Կրնանք մի խմանալ թէ ի՞նչ
է սա նոր վարդապետութիւնը՝ որ դուն կրպարո-
20 զեակը։ Ա՛ևր ականջին մէկ օտար բան մը կրբե-
րեսկոր. կուզենք դիտալ թէ ի՞նչ պիտի ըլլայ
21 սա. (Ինչու որ Աթենացիները ամէնքն ալ ու հոն
կեցող օտարականները ուրիշ բանի չէին պարա-
պէր, միայն թէ նոր բան զրցելու կամ լսելու.)
22 Պօղոս Արիսպագոսին մէջը կայնեցաւ՝ ու ըսաւ,
Ով Աթենացի մարդիկ՝ ամէն կողմանէ կրօնասէր
23 մը կրտեսնամ ձեզ։ Որովհետև ես պտրտակրտի
ու ձեր պաշտամունքը տեսնալով՝ մէկ կուռքի տե-
դան մը գտայ, որուն վրայ գրված էր՝ Անծանօթ
Աստուծոյն. ուստի անիկա որ դուք չի ճանչնալով
24 կրպաշտէք, ես ոյնիը ձեզի կրքարոզեմ։ Աստ-
ուած՝ որ աս աշխարհը բրաւ և անոր մէջի բոլոր
բաները, անիկա երկինքի և երկրի Տէրն է. ան
25 ձեռագործ տաճարներու մէջ կրբնակի, ան ալ
մարդոց ձեռքովը կրպաշտրվի՝ բանի մը կարօտ

պէս · ինքը կուտայ ամէնուն կեանք ու շունչ՝ և
ամէն բան : Ոչոք մարդոց ցեղը մէկի մը արիւնէն 26
ըրաւ՝ որ բոլոր երկրի երեսին վրայ բնակին · ա-
ռաջուց դրված ժամանակներ հաստատեց՝ և անոնց
բնակութեան սահմաններ , Աստուած փնտրե-
լու · որ ըլլայ՝ թէ գինքը քննեն ու գտնան · թէ 27
պէտ մը ամէն մէկէն ալ հեռու չէ : Ինչու որ՝ 28
անով կապրինք և կըշարժինք ու կանք , ինչպէս
որ ձեր բանաստեղծներէն մէկ քանիներն ալ ըսին ,
թէ Մենք անոր ցեղէն ալ ենք : Ուստի որով- 29
հետև Աստուծոյ ցեղէն ենք նէ՝ պէտք չէ որ ա-
նանկ սեպնք , թէ Աստուածութիւնը նման ըլլայ
ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդուս
վարպետութիւնովը և հնարքովը փորված շինված
է : Ուստի Աստուած տգիտութեան ատենները 30
անտես ընդունի , հիմայ ան կըպատուիրէ մարդիկ-
ներուն՝ որ ամէն մէկը ապաշխարէ : Ինչու որ 31
ինքը մէկ օր մը դրաւ , որ անաստները աշխարհս
արդարութիւնով պիտի դատէ՝ այն մարդուն ձեռ-
քովը , որ անոր ինքը սահմանեց ապահովութիւն
տալուն ամենուն՝ մեռելներէն անիկա յարու-
ցանելով :

Երբոր մեռելներուն յարութիւնը լսեցին՝ ո- 32
մանք ծաղր կընէին . կէսերնին ալ կըսէին՝ Ա-
նդիման համար հեղմամբ մըիկ ընենք քեզի : Եւ այդ 33
ալ Պօղոս ելաւ անոնց մէջէն գնաց : Եւ քանի մը 34
մարդիկ ալ իրեն յարելով հաւատացին . որոնց
հետև էր Դիոնեսիոս Արիոպագացին , և Դամա-
րիս անունով կնիկ մը , ու անոնց հետ ուրիշներ
ալ :

ԺԸ · ԺՈՂ :

Ասկէ ետև Պօղոս Աթենացիներէն զատվելով՝ 1
Կորնթոս եկաւ , և մէկ Հրէայ մը գտաւ Ա- 2
կիւղաս անունով ազգով Պոնտոսցի , որ նոր ե-
կեր էր Իտալիայէն՝ և իրեն Պրիսկիղա կնիկը ,

(Կազդիոսին հրամանին համար՝ որ բոլոր Հրեաները Հռովմայեցւոց դուռս հանեց) ալ անոնց քովը
3 կրկենար ։ Եւ որովհետև ինքը նոյն արհեստէն էր՝ անոնց քովը կնստաւ , և կբանէր · ինչու որ՝
4 արհեստովին վրան կարող էին ։ Եւ ամէն շաբաթ օրերը ժողովարանին մէջ կբխօսէր , և Հրեաները ու Հեթանոսները կրտեղկացուներ ։
5 Երբոր Շիղա և Տիմոթէոս Մակեդոնիայէն իջան՝ Պօղոսին հոգին եվեռք վառված բլլալով , Հրեաներուն վկայութիւնով կրհաստատեր՝ թէ
6 Յիսուսը Քրիստոսն է ։ Անոնք ալ երբոր դէմ կնայան՝ ու կրհայհոյէին , ինքը լաթերը թօթվեց՝ և բսաւ անոնց · Ձեր արիւնը՝ ձեր գլուխը , ես անպարտ եմ , ասկէ ետև հեթանոսներուն կեր-
7 թամ ։ Եւ անկէց գնաց մտաւ մէկու մը տուն , որուն անունը Տիտոս Յուստոս էր՝ Աստուածապաշտ մարդ մը · որ անոր տունը ժողովարանին
8 մօտ էր ։ Կրիսպոս՝ ան ժողովարանին մեծը բոլոր իր տունովը հաւատաց Տէրոջը · և Կորնթացիներէն
9 շատերը լսելով՝ հաւատացին ու մկրտեցան ։ Եւ գիշերը տեսիլքին մէջ Տէրը բսաւ Պօղոսին ,
10 Մի՛ վախնար՝ հապա խօսէ , և մի՛ դադարիր · ինչու որ ես քեզի հետ եմ , և մէկը քեզի դէմ պիտի չվլլայ՝ քեզի նեղութիւն տալու · պատճառն որ
11 աս քաղաքիս մէջը ես շատ ժողովուրդ ունիմ ։ Եւ հոն տարի մը մի վեց ամիս նստաւ · Աստուծոյ խօսքը անոնց սորվեցնելու ։
12 Բայց երբոր Գաղիոն փոխանակ բդեշխին ժամանակը Հրեաները ամէնը մէկ եղած Պօղոսին վրայ
13 եկան , և զինքը դատաստանի քաշեցին · և կրսէին , Թէ Աստիկա կրխաբէ մարդիկը օրէնքէն դուրս
14 Աստուած պաշտելու ։ Եւ երբոր Պօղոս իր բերանը բանալու պատրաստ էր , Գաղիոն բսաւ Հրեաներուն · Թէ որ մէկ անիրաւ բանի մը կամ չար գործքի մը համար բլլար նէ ով Հրեաներ ,
15 հարկ էր ինծի՝ որ ձեզի մտիկ ընէի ։ Բայց թէ որ

կռիւնիդ բառի ու անուններու՝ և ձեր օրէնքին համար է նէ, դուք ձեզմէն տեսէք. ինչու որ ես ատանկ բաներու դատաւոր չըլլալ չեմ ուզեր : Եւ վերնոյ անոնք տանելէն : Ընտանիք 16 բոլոր Յոյներուն Ասթենէս ժողովրդապետը առին՝ 17 հոն տանելին առջևը կրծնեցին. և անոր վրայ Գաղիոնին բնաւ հոգը չէր :

Պօղոս ալ տակաւին խել մը օրեր հոն մնալէն 18 ետքը՝ եղբայրներուն մնաք բարով ըրաւ, նաւով դէպի Ասորեստան գնաց. ու իր հետն ալ Պրիսկիլլան և Ակիւղասը. ուրկէ կենչրէային մէջը էր գլուխը փորրած, ինչու որ ուխտաւոր էր : Եւ 19 Եփեսոս որ հասաւ՝ անոնք հոն ձգեց, և ժողովարանը մտաւ՝ Հրէաներուն հետ կրնստէր : Եւ 20 իրեն կաղաչէին որ աւելի մը հոն մնայ. բայց չանձնառաւ չեղաւ. հապա մնաք բարով բրաւ 21 իրենց՝ ու բաւ, Ւսորէն կրդառնամ ձեզի Ասուածոյ կամքովը. — Եփեսոսէն ելաւ, և Կեսա- 22 րիա որ հասաւ՝ ելաւ և եկեղեցիին բարև տուաւ, իջաւ Ընտիոք : Եւ տաեն մը հոն ըլլալէն ետև՝ 23 ելաւ կարգով Գաղատացոց երկիրը և Փռիւգիայ պտտելով, բոլոր աշակերտները հաստատելու համար :

Ապողէս անունով Հրէայ մը, ազգով Ալէք- 24 սանդրացի ճարտասան մարդ մը եկաւ հասաւ Եփեսոս. որ ինքը զօրաւոր էր սուրբ գիրքերով : Սակայն Տէրոջը ճամբան լաւ հասկըցեր էր, և 25 հոգովը կեփէր. կրխօսէր և կրսորվեցուներ ճըշմարտութեամբ Յիսուսի վրայ. ինքը Յովհաննէսին մկրտութիւնը միայն գիտէր : Սկսիկ սկսաց 26 ժողովարանին մէջը համարձակ խօսիլ. և երբոր Ակիւղաս ու Պրիսկիլլա անոր լսեցին՝ ան ինկա իրենց քովը առին, և տեղեներուը Ասուածոյ ճամբան անոր հասկըցուցին : Երբոր անիկա ու- 27 զեց Աքայիա երթալ, եղբայրները յորմարելով գիր գրեցին ան գէնէ աշակերտներուն՝ որ զինքը

ընդունեն · որ երբոր հան հասաւ՝ չատ օգուտ եղաւ
28 հաւատացեալներուն հնարքով ։ Պատճառն որ՝
չատ քաջութեամբ ամէնուն դիմացը Հրէաներուն
երեսը վար կառնէր , ասոնք գիրքերէն ցուցընե-
լով որ՝ Յիսուս Քրիստոս է ։

ԴԱ · ՀԱԹ ։

1 Ա եղաւ որ երբոր Ապողոս Կորնթոս էր , Պօ-
ղոս վերի կողմերը պտտեցաւ՝ ու Եփեսոս ի-
2 ջաւ · և քանի մը աշակերտներ գտնելով , ըսաւ
անոնց , թէ՝ երբոր հաւատացիք նէ Հոգին Սուրբ
առիք մի · անոնք ալ ըսին իրեն , Հայց մենք լը-
3 սած ալ չենք՝ թէ Հոգի Սուրբ կայ ։ Ան ալ ը-
սաւ · Հապա ինչով մկրտուեցաք · անոնք ալ ը-
4 սին , Յովհաննէսին մկրտութիւնովը ։ Պողոս ալ
ըսաւ · Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւն
քարոզեց բոլոր ժողովուրդներուն , և կըսէր թէ՝
Ան որ իրմէ ետքը պիտի գայ՝ անոր հաւատան ,
5 այսինքն՝ Յիսուս Քրիստոսին ։ Եւ երբոր լսեցին՝
6 Տէր Յիսուսի անունովը մկրտեցան ։ Եւ Պողոս
երբոր անոնց վրայ ձեռք դրաւ՝ Հոգին Սուրբ ա-
նոնց վրայ եկաւ · լեզուներ կրխօսէին՝ ու կըմար-
7 գարէանային ։ Եւ ան ամէն մարդիկը տասներ-
8 կու չափ էին ։ Եւ ժողովարանը մտնելով իրեք
ամիս համարձակ էր , և Աստուծոյ թագաւորու-
9 թեանը վրայով կրտեղկացուներ ։ Երբոր մէկ
քանիները պինտ կրկենային՝ ու դէմ կրդնէին
բազմութեան առջեւը ան ճամբան բամբասելով ,
անոնցմէ զատվելով աշակերտները որոշեց · ամէն
օր Տիւրաննոս անուն մէկու մը դպրատանը մէջ
10 կրխօսէր ։ Եւ աս երկու տարի քրշեց՝ մինչև որ
բոլոր Ասիայի բնակող Հրէաները և Հեթանոս-
11 ները Տէրոջը խօսքը լսեցին ։ Եւ քիչ հրաշքներ
12 Հէր ըներ Աստուած Պողոսին ձեռքովը · մինչև որ
անոր քրտինքէն թաշկինակներ ու գոտիներ կը-
տանէին հիւանդներուն , և իրենց ցաւերէն կը-

որ ինձանից ։ Ա՛յդ ան- 13
դին պատահող Հրեաներէն՝ որ երդում տուող
էին , մէկ քանիները համարձակութիւն ըրին Տէր
Յիսուսի անունը անոնց վրայ տալու՝ որոնք որ
չար դևեր ունէին . և կրսէին , Երդվիմ ձեզի կերդվե-
ցունիմ Յիսուսով , որ Պօղոսը կքարոզէ ։ Սկևի 14
ըն՚ե՛ մէկ Հրեայ քահանայի մը եօթը որդիքն
էին՝ որ այս բանը կընէին ։ Պատասխան տուաւ 15
չար դևը՝ և ըսաւ անոնց , Յիսուսը գիտեմ՝ ու
Պօղոսը կճանչնամ , բայց դուք ով էք ։ Եւ ան 16
մարդը որ իր մէջը չար դևը ունէր՝ վազեց , ևր-
կուքն ալ բռնեց տակը առաւ անոնք , մինչև որ
մերկ ու վիրաւորած տունէն դուրս փախան ։
Եւ այս բանը յայտնի եղաւ բոլոր Հրեաներուն 17
և Հեթանոսներուն՝ որ Եփեսոսի մէջ կբնակէին .
և անոնց ամենուն վրայ վախ մը ինկաւ , և Տէր
Յիսուսի անունը կըմեծնար ։ Եւ ան հաւատա- 18
ցեալներէն շատերը կուգային ուկըխոստովանէին՝
և իրենց րդածները կրպատմէին ։ Եւ կախարդա- 19
կան բանի հետևողներուն շատերը գիրքերնին
կըբերէին՝ ամենուն առջև կերէին . և անոնց գինը
համրեցին՝ և գտան ։ Եւ այսուն Հաղար արծաթի չհՀիկան
գտան ։ Եւ ասանկ Աստուծոյ խօսքը կաճէր և ուժ 20
կառնէր ։

Եւ երբոր այս բաները լրնցաւ՝ Պօղոս միտքը 21
դրաւ Մակեդոնիայի ու Աքայիայի վրայով սը-
արտիլ և Երուսաղէմ գալ . կրսէր՝ Թէ հոն եր-
թալէս ետքը պէտք է ինծի որ Հռոմայ ալ տես-
նամ ։ Իրեն սպասաւորութիւն ընողներէն երկու 22
քը Տիմոթէոսը ու Երաստոսը իրկեց Մակեդո-
նիա . և ինքը տակն մըն ալ Ասիայի մէջ կեցաւ ։
Եւ այն ատենները քիչ իրարանցում չեղաւ 23
Ասպօնծոյ ճամբուն համար ։ Եւ Դեմետրիոս ա- 24
նուն արծաթագործ մը՝ արծաթէ խոյաններ կը-
շինէր Արտեմիս կուռքին , ու քիչ շահ չէր ըլլար
վարպետներուն . որ ինքը բոլոր այն արհեստին 25

բանվորները մէյտեղ ժողվեց՝ ու ըսաւ · Ա՛ր-
դեկ՝ դուք ձեզմէ գիտէք որ , աս գործքէս է մեր
26 վաստակը : Եւ կըտեսնաք ու կըլսէք որ չէ թէ
միայն Եփեսացոց , հապա գրեթէ բոլոր Ա՛սիացոց
շատ ժողովուրդները աս Պօղոսը Հաւոզեց՝ խել-
վերնին դարձուց , ըսելով թէ՝ Ձեռքով շինած
27 բաները աստուած չեն : Եւ աս բանը չէ թէ մի-
այն մեր բաժինը նախատուելու վտանգին մէջ կը-
ձգէ , հապա Ա՛րտեմիս մեծ աստուածուհւոյն տաճարն
ալ ոչինչ մը կրնայվի . մանաւանդ որ անոր մե-
ծութիւնը պիտի խափանվի , որ ան բոլոր Ա՛սիա
28 ու աշխարհ կրպաշտուեն : Եւ երբոր աս լսեցին՝
բարկութիւնով լեցան . կրկանչ վրատուին ու կը-
29 սէին , Մեծ է Եփեսացիներուն Ա՛րտեմիսը : Եւ
քաղաքը խռովութիւնով լեցվեցաւ . ամէնքը մէկէն
թափառանք վազեցին , և յարձակեցին Գայիոս
ու Ա՛րիստարքոս Մակեդոնացիները՝ Պօղոսին ձա-
30 նապարհորդակիցները : Ինքը Պօղոս երբոր ու-
զեց ան բազմութեան մէջը մտնալ՝ աշակերտները
31 չզող չի տըվին զինքը : Ասիայի մեծերէն ալ ո-
մանք՝ որ իրեն բարեկամներն էին , խոր կրկրը-
կէին իրեն և կաղաչէին՝ որ ինքզինքը թափառու-
32 նին մէջը չի ձգէ : Ուրիշներն ալ ուրիշ կերպ
բան մը կըպօռըտային . ինչու որ իրենց ժողովքը
իրար անցեր էր , և իրենցմէ շատերը չէին գի-
33 տեր՝ թէ ինչ բանի համար ժող վըված են : Եւ
ժողովուրդին բազմութենէն մէկէն Ա՛լէքսանդրոսը առաջ քշեցին . և երբոր Հրէաները առաջ
բերին անիկա , Ա՛լէքսանդրոս ձեռքը շարժեց՝ և
34 ուզեց որ բազմութենէն պատասխան տայ : Եր-
բոր գիտցան թէ մարդը Հրէայ է , ամէնքը մէկ
բերան եղած՝ երկու ժամի չափ կրպօռըտային ,
35 Մեծ է Եփեսացիներուն Ա՛րտեմիսը : Ա՛ն
գրագիրը ան ժողովուրդը դադրեցուց՝ ու ըսաւ ·
Ով Եփեսացի մարդիկ , որ մարդն է որ չի գիտ-
նայ աս Եփեսացոց քաղաքը՝ մեծ Ա՛րտեմիս և Պի-

ոպիտէս կուգերեսն տաճարները զարդարողը ։
Ուրեմն աս որ ասանկ է անշուշտ՝ պէտք է ձեզի 36
խաղաղ կենալ , և չափէ դուրս բան մը չընել ։
Որովք աս մարդիկը հոս բերիք , ոչ տաճարները 37
կողոպտեր են՝ ոչ ալ մեր Աստուծոյն հայհոյանք
բրեր են ։ Ուստի թէ որ Դեմետրիոս և իր հետ 38
եղած վարպետները մէկէ մը հետ բան մը ունին
նէ՝ ատեան բաց կըլլան , ու դատաւորներ կան ,
և թող իրարու վրայ ամբաստանութիւն ընեն ։
Հապա թէ որ ուրիշ բանի համար է վէճը՝ օրի- 39
նաւոր ժողովքով թող լսընցուընեն ։ Ինչու որ 40
մենք ալ վտանգի մէջ ենք՝ աս օրուան կռիւս հա-
մար , առանց յանցանքի բլլալուն՝ որ ան չանգան-
չին վրայով պատասխան մը չի պիտի կրնանք տալ
աս ժողովքին համար ։ Եւ ասանկ ըսելով ժո-
ղովքը արձկեց ։

ԿԱ ։ Ի ։

Ե՛տ իրարանցումը դադրելէն ետև՝ Պօղոս ա- 1
շակերտները կանչեց՝ և մխիթարեց . ճամբ
բարով ըսաւ՝ ու ելաւ Մակեդոնիա գնաց ։ Ին 2
կողմերը պրպտուելով՝ և շատ խօսքերով անոնք
մխիթարելէն ետև Ելլադա եկաւ ։ Հոն իրեք ա- 3
միս որ կնցաւ , Հրէաները իրեն որոգայթ լարե-
ցին՝ երբոր կուզէր Ասորեստան ելլալ . անոր հա-
մար մտմտաց Մակեդոնիայի վրայէն դառնալ ։
Եւ մինչև Ասիա իր հետ կերթային Ներիացի 4
Պիւռոս Սոսիպատրոսը , և Թեսաղոնիկեցիներէն
Արիստարքոսը և Սեկունդոսը՝ և Գայիոս Դեր-
բացին՝ և Տիմոթէոսը , ու Ասիացին Տիւքիկոսը և
Տրիփիմոսը ։ Հոսոնք առաջ գացին՝ Տրովադայի 5
մէջ մեզի կըսպասէին ։ Մենք ալ բաղարջակեր- 6
քին օրերէն ետև Փիլիպպէէն նաւեցինք , և հինգ
օրուան մէջ Տրովադա եկանք անոնց քովը . հոն
եօթը օր կեցանք ։

Եւ շաբաթի օրը երբոր ժողովին էինք հացը 7

կարկառ՝ Պօղոս անոնց կըբարողէր , ինչու որ ե-
ւեւի օրը պիտի երթար · և խօսքը երկրնցուց մին-
8չև կէս գիշեր : Հ ատ լապտերներ կային ան վե-
9րի սենեակը՝ ուր որ մենք ժող վըված էինք : Եւ
մէկ երիտասարդ մը Եւտիքոս անուն պատուհանին
վրայ նստած խորունկ կըքնանար ի ր · Պօղոս ալ
խօսքը որ երկնցուց՝ խորունկ քունի մէջ ինկած՝
երրորդ գահիկնէն վար ինկաւ , և ինքը մեռած
10վերցուցին : Եւ Պօղոս վար իջաւ անոր վրայ ին-
կաւ , և գրկեց անիկա՝ ու կըսէր , Մ՝ի շփոթիք ·
11ինչու որ ասոր հոգին իր մէջն է : Եւ երթ Հացը
կոտրեց ու կերաւ · և մինչև առաւօտ չատ մըն ալ
12խօսեցաւ , և ետքը ելաւ գնաց : Եւ ան պատանին
13ողջ բերին , և էվելըք մխիթարվեցան : Մ՝ենք
ալ նաւը մտանք՝ ելանք Ասոն · յոյն ունէինք
որ անկից Պօղոսը նորէն առնենք · ինչու որ ինքը
ցամաքով որ պիտի երթար՝ անանկ ապրսպըրեր
14էր : Եւ երբոր Ասոնին մէջը մեզի հանդըպե-
15ցաւ՝ ինքը առինք Մ՝ատիլինէ եկանք : Ւ՝նկից ալ
նաւով գացինք՝ հետի օրը Խիային կղզվացը հա-
սանք · և մէկալ օրը Սամոս հասանք · և անոր ե-
16տեւի օրը Մ՝ելիտոն եկանք : Ւ՝նչու որ՝ Պօղոս
միտքը դրեր էր որ Եփեսոսին քովէն նաւով անց-
նի , որ ինքը աստն մը Ա՝սիայի մէջը չուշանայ ·
որովհետև կարուորար որ եթէ կարելի է նէ իրեն՝
Պենտեկոստէին օրը Երուսաղէմ րլլայ :
17 Եւ Մ՝ելիտոսէն Եփեսոս խրկեց՝ եկեղեցիին
18երէցները կանչեց : Եւ երբոր իրեն եկան՝ բսաւ
անոնց · Վուբ ձեզմէ գիտէք՝ որ ան առջի օրէն
չեմ որ ես Ա՝սիա եկայ , ինսոր ձեր հետ վար-
19վեցայ բոլոր ժամանակը · ամէն կերպ խոնարհու-
թիւնով Տէրոջը ծառայելով՝ և շատ արցունքով
ու փորձանքներով , որ Հրեաներուն հնարք-
20ներէն ինծի պատահեցան : Ւ՝նսոր վախնալով ես
չի կեցայ՝ օգտակար բաները ձեզի զրըցելէն և
սորվեցունելէն ձեզի հրապարակով և տանը մէջ ·

վկայութիւն տալով Երբեմն ու երբեմն 21
նորան Աստուած դէպի Աստուած ապաշխարու-
թեան համար , և մեր Տէր Յիսուս Քրիստոսին
հաւատալու համար : Եւ հիմայ՝ ահա ես հոգւով 22
կապված Երուսաղէմ կերթամ . և չեն իմ վրայ-
ես ինչ որ պիտի անցնի չեմ գիտեր : Միայն թէ 23
Հոգին Սուրբ ամէն քաղաքի մէջ ինծի կըվկայէ
ու կըսէ , թէ՝ Կապեր և նեղութիւններ քեզի կըս-
պասենկոր : Բայց ես իմ անձս մէկ բանով մը 24
պատուական չեմ սեպեր , միայն թէ իմ ընթացքս
ուրախութեամբ լմընցուցնեմ՝ և ան պաշտօնը , որ
Տէր Յիսուսէն առի՝ Աստուծոյ շնորհացր աւե-
տարանին վկայ ըլլալու : Եւ հիմայ՝ ահա ես գի- 25
տեմ որ ալ իմ երեսս պիտի չի տեսնաք դուք ա-
մէնքդ , որ մէջերնիդ պատեցայ Աստուծոյ թա-
գաւորութիւնը քարոզելու : Ուստի ես օրըս կը- 26
վկայեմ ձեզի , որ ես անպատրտ եմ ամէնուն արիւ-
նէն : Ինչու որ՝ ետ չի կեցայ Աստուծոյ բոլոր 27
կամքը ձեզի պատմելէն : Ձգուշացէք ինքզինք- 28
ներնուդ և բոլոր հօտին , որ Հոգին Սուրբ ձեզ
անոնց վրայ նայող դրաւ՝ Եկեղեցը Աստուծոյ
հովուելու , որ իր արիւնովը խալսեց : Ինչու որ 29
գիտեմ ես՝ որ իմ գացվելէս ետքը ձեր մէջը յա-
փշտակող գայլեր պիտի գան , որ պիտի չի խնայեն
հօտին : Եւ ձեզմէ ալ անանկ մարդիկ պիտի ել- 30
լեն՝ որ ծուռումուռ բաներ պիտի խօսին , աշա-
կերտները իրենց ետևէն քաշելու : Ինոր համար 31
արթուն կեցէք , և միտքերնիդ բերէք՝ որ երկու
տարի գիշեր ու ցորեկ չի դադրեցայ ամէն մէկը
արցունքով խրատելու : Եւ հիմայ ձեզ Աստու- 32
ծոյ կրկանձնեմ և անոր շնորհացն խօսքին , որ ան
կարող է շինել՝ ու բոլոր սուրբերուն հետ ձեզի
ժառանգութիւն տալ : Ձեր մէկուն արծաթին 33
կամ ոսկիին՝ կամ հագուստին չի ցանկացայ . դուք 34
ձեզմէ գիտէք՝ որ ինծի պէտք եղածը և անոնց որ
իմ հետս էին՝ ես ձեռքերս դատեցան : Եւ ամէն 35

բան ձեզի ցուցցի · որ ասանկ պէտք է աշխա-
տիլ , ու հիւանդներուն հոգ տանել , և Տէր Յի-
սուսի խօսքը միտք բերել , որ ինքը ըսաւ · Լաւ-
36ըք երանելի է տալը՝ քան թէ առնելը : Եւ աս որ
բսաւ՝ ամէնուն հետը ծունկի վրայ գալով՝ աղօթք
37բրաւ : Ամէնքն ալ սաստիկ կուլային , և Պօղոսին
38վիզը ինկած զինքը կրպագնէին : Մերտներնին էվե-
լի կրնեշըշար ան խօսքին վրայ , որ կրսէր թէ՝
Ա՛լ պիտի չի տեսնան իր երեսը · և անկից ետև՝
բայ դրին նաւը Եղեսոս- :

ԳԼ · ԻԶ :

1 Ա՛ւ եղաւ որ երբոր մենք ելանք ու անոնցմէ
զատուեցանք՝ դէպի դիմացի կողմը երթալով
Կոյ եկանք · և միւս օրը Հռոդոս , ու անկէց
2Պատարա : Եւ նաւ մը գտանք որ Փիւնիկէ կեր-
3թար , և անոր մէջը մտանք՝ գացինք : Եւ Կիպրոս
որ երևցաւ՝ անկից ձախ կողմերնիս թողուցինք ,
դէպի Ա՛սորեստան նաւեցինք , և Տիւրոս իջանք ·
4ինչու որ նաւը հոն պիտի թափէր բեռները : Եւ
աշակերտները գտնալով՝ եօթը օր հոն կեցանք · որ
ասոնք Հոգւոյն Աբէս ձեռքովը կրսէին Պօղոսին
5որ Երուսաղէմ չելլայ : Եւ երբոր ան օրերը ան-
ցուցինք՝ ելանք գացինք , ամէնքն ալ կիներով
ու տղաքներով մինչև քաղաքէն դուրս մեզ ճամ-
բայ դրին · և ծովին եղերքը ծունկի վրայ եկանք՝
6աղօթք ըրինք : Ա՛լ իրարմէ բաժնըվեցանք ու
նաւը ելանք · անոնք ալ իրենց տեղերնին դար-
7ձան : Եւ մենք նաւը Տիւրոսէն առաջ քշելով՝
Պտողեմայիդա հասանք · և եղբայրները բարևե-
8լով՝ մէկ օր մը քովերնին կեցանք : Եւ հաւի օրը
անկէց ելանք Կեսարիա եկանք · և Փիլիպպոս ա-
ւետարանիչին տունը մտանք , որ ինքը եօթնին
9Մէն էր , անոր քովը կեցանք : Ինքը չորս հաս
10կոյս աղջիկ ունէր , որ մարգարէ էին : Ա՛ն շատ
օրեր որ կեցանք՝ Հրէաստանէն մէկ մարգարէ մը

իջաւ անունը Ա՛դարտս . Եւ երբոր մեղի եկաւ , 11
Պօղոսին գօտին առաւ՝ իր ձեռքերը և ոտքերը
կապեց , ու ըսաւ . Ա՛սանկ կըսէ Հոգին Սուրբ ,
ան մարդը՝ որ ասոր գօտին իրենն է ,ասանկ պիտի
կապեն Հրէաները Երուսաղէմի մէջը , ու հեթա-
նոսներուն ձեռքը պիտի մատնեն : Եւ երբոր ասո 12
բանեցինք , մենք ալ և հոն եղողներն ալ աղաչեցինք
իրեն՝ որ Երուսաղէմ չելլայ : Ա՛նտեղը Պօղոս 13
պատասխան տուաւ . Ի՞նչ կընէքիկոր , ինչու կու-
լաք և իմ սիրտս կըձմրցնէք . ինչու որ ես չէ թէ
միայն կապուիլու՝ հապա Տէր Յիսուս Ա՛րիմասի
անունին համար Երուսաղէմի մէջ մեռնելու ալ
պատրաստ եմ : Եւ ինքը որ մտիկ չըրաւ՝ լուռ 14
կեցանք , ըսինք՝ Տէրոջը կամքը թող ըլլայ :
Եւ ան օրերէն ետև պատրաստուեցանք՝ Երու- 15
սաղէմ երթանք : Ա՛ն կնակարգի աշակերտներէն 16
ալ Կեսարիայէն մեր հետը եկան , և մեզ տարին
Կիպրոսցի Մնասոնի մը՝ առջի աշակերտներէն մե-
կը , որ անոր քովը պիտի կենայինք : Եւ երբոր 17
մենք Երուսաղէմ մնանք՝ եղբայրները ուրախու-
թիւնով մեզ ընդունեցին : Եւ ետևի օրը Պօղոս 18
մեզի հետ Յակոբոսին քովը գնաց , ու բոլոր երէց-
ներն ալ եկան : Եւ անոնք բարեւելով մէկիկ մէ- 19
կիկ կըպատմէր՝ ինչ որ Աստուած հեթանոսներուն
մէջը ըրաւ իր ծառայութիւնովը : Անոնք ալ լսե- 20
լով փառք կուտային Աստուծոյ . և ըսին իրեն ,
Կըտեսնաս եղբայր՝ քանի՛ հազարաւոր հաւատա-
ցեալ Հրէաներ կան , ու ամէնքն ալ օրէնքին
ջատագով են : Հայց քու վրայովդ խնացան՝ որ 21
դուն բոլոր հեթանոսներուն մէջ եղած Հրէանե-
րուն Մովսէսէն ետ կենալ կըսորվեցունես , բսե-
լով որ՝ տղաքներին չի թլփատեն , և կրօնքին պէս
չի վարուին : Ուստի ինչ պիտի ըլլայ , ինչու որ 22
պիտի լսեն թէ եկեր ես : Ուստի ա ըսինը ըրէ որ 23
քեզի կըսենք . Ա՛ր քովը չորս մարդ կայ ինքնի-
րենին ուխտ ըրած . անոնք առ՝ իրենց հետը մաք- 24

բըվէ , և ան ծախքն ալ ըսէ որ իրենց գլուխը ա-
ծիլեն · որ ամէնքն ալ գիտեան թէ քու վըայիդ
խմացած բաներնին փուճ է · հապա դուն ալ միա-
25բան ես օրէնքը պահելու : Իսպ հաւատքի եկող
հեթանոսներուն համար մենք խրկեցինք ինսոր
որ սահմանեցինք նէ , որ անոնք անանկ բաներ չի
պահեն · միայն թէ կուռքերուն զոհածէն ետ կե-
նան՝ ու արիւնէն , և խըղամէն , ու պոռնըկու-
26թենէն : Ինսատներ Պօղոս ան մարդիկը առաւ՝ և
ուրիշ օրը անոնց հետը մաքրըված տաճարը մտաւ ,
մաքրութենան օրերը լըրնալը ցուցընելու համար՝
մինչև որ անոնց ամէն մէկուն համար պատարագ
եղաւ :
27 Եւ երբոր եօթը օրերը լըրնալու վրայ էր , Ա-
սիացի Հրէաներըղինքը տաճարին մէջը տեսնալով՝
բոլոր ժողովուրդը վրան թափեցին , և անոր ձեռք
28 զարկած կըկանչ վըռտէին : Իսրայէլացի մարդիկ՝
օգնութիւն հասէք · աս ան մարդն է՝ որ հակա-
ռակ ժողովուրդին և օրէնքին՝ ու աս տեղին , ա-
մէնուն ամէն տեղ բան կըսորվեցուցէ · մինչև որ
տաճարին մէջը Հեթանոսներ ալ խօթեց , ու
29 սուրբ տեղը պղծեց · (ինչու որ առաջուց Եփեսա-
ցի Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջը տեսեր
էին , որ կըկարծէին՝ թէ Պօղոս անիկա տաճարը
30 խօթեց ·) բոլոր քաղաքը թնուաց , և ժողովուրդը
դիմեցաւ՝ ու բռնեցին Պօղոսը տաճարէն դուրս
31 քաշեցին · և շուտ մը դուռները գոցվեցաւ · և
կուզէին անիկա սպաննել · լուր հասաւ գունդին
հազարապետին՝ թէ բոլոր Երուսաղէմը իրար ան-
32 ցեր է : Ուր ան շուտ մը զինուորներ և հարիւրա-
պետներ առած՝ անոնց վրայ վազեց · անոնք ալ
հազարապետը ու զինուորները տեսնալով՝ Պօղո-
33 սը ծեծելէն դադրեցան : Ինսատներ հազարապե-
տը գնաց բռնեց անիկա , և երկաներ երկու շղթայով կապեն · և կըհարցընէր թէ՝ ան-
34 կա՞ մը է , ու ի՞նչ բըներ է : Ինսամեթեան մէջէն

ամէն մէկը անոր վրայ մէկմէկ բան կըկանչ վըռ-
տէին . և երբոր չէ կրցաւ ան իրարանցումէն շի-
տակը գիտնալ , հրաման ըրաւ որ ինքը բերդը
տանին : Եւ երբոր սանդուղին հասաւ՝ անանկ 35
պատահեցաւ որ զինուորները ինքը վերցունեն
ժողովուրդին բռնութեանը համար՝ անոնք բե-
րուն : Ինչու որ ժողովուրդին բազմութիւնը ե- 36
տևէն կերթար՝ ու կըսէին , Ա՛ երցուր ատիկա :
Երբոր Պօղոս բերդը մտնելու վրայ էր , հազա- 37
րապետին ըսաւ , թէ՝ Կարելի՛ է ինծի որ քու հետդ
խօսիմ . ան ալ ըսաւ , Յունարէն գիտե՞ս . չը լսե՞ս 38
որ դուն ան Եգիպտացին ըլլաս , որ առ օրերս
առաջ գլուխ քաշել տըվիր՝ և չորս հազար սրի-
կայ մարդիկ անապատը հանեցիր : Պօղոս ալ ը- 39
սաւ , Ես Հրէայ մարդ մըն եմ՝ Կիլիկեցոց Տար-
սոնէն , չէ թէ մէկ պզտիկ քաղաքի մը քաղաքացի .
կաղաչեմ քեզի՝ ինծի հրաման տուր որ ատ ժողո-
վուրդին խօսիմ :

Եւ ան երբոր հրաման տըւաւ՝ Պօղոս սանդու- 40
ղին վրայ կայնելով ձեռքը շարժեց ժողովուրդին .
երբոր աղէկ մը լռութիւն ըրին՝ սկսեց Եբրայե-
ցոց լեզուովը խօսիլ , ու ըսաւ :

ԳԼ . ԻՒ :

Ա՛ րդիկ եղբայրներ և հայրեր՝ մտիկ ըրէք ին- 1
ծի որ հիմա ձեզի պատասխան կուտամ .
(երբոր լսեցին թէ Եբրայեցոց լեզուովը զուրցեց 2
իրենց , ալ էվելըը դադրեցան լուռ կեցած ,) և ան 3
ըսաւ . Ես մէկ Հրէայ մարդ մըն եմ՝ Կիլիկիայի
Տարսոնին մէջը ծնած՝ աս քաղաքիս մէջը մեծցած
Գամալիէլին ոտքը , — Հբ հայրենի օրէնքին
ճշմարտութեանը պէս խրատված , ջատագով էի
Աստուծոյ ինչպէս որ այսօր դուք ամէնքդ էք : Որ 4
ես աս Ճամբան բռնեցի՝ մինչև մեռցունելու , կա-
պելու , և բանտերը մտնելու էրիկ մարդիկ ու
կիներ մարդիկ . ինչպէս որ քահանայապետն ալ 5

կըվկայէ ինծի համար՝ և բոլոր ծերակոյտը · որ ի-
րենցմէ թուղթ ալ առնելով Յոհանսկոս եղած
եղբայրներուն կերթայի՝ անկէց ալ կապուածներ
6 բերելու Երուսաղէմ , որ պատժըվին : Եւ եղաւ
որ երբ կերթայի՝ ու Յոհանսկոսին մօտեցայ , կէս
օրուան դէմ յանկարծակի երկինքէն մեծ լոյս մը
7 շրջս կողմըս ծագեց · և գետինը ինկայ , ու ձայն
մը լսեցի՝ որ ինծի կըսէր , Սաւուղ Սաւուղ՝ ին
8 ինչու կը հալածես : Ես ալ պատասխան տըվի Թէ՝
Տէր ովՙ ես Տէր · ան ալ ինծի ըսաւ , Ես Յի-
սուս Նազովրեցին եմ , որ դուն կը հալածեսկոր :
9 Ասոց անոնք որ իմ հետս էին՝ լոյսը տեսան , սա-
կայն անոր ձայնը որ ինծի հետ կըխօսէր՝ չէին
10 լսեր : Եւ ըսի , Ի՞նչ պիտի ընեմ Տէր · և Տէրը
ըսաւ ինծի , Ելիր գնա՛ Յոհանսկոս · և հոն քեզի
կըզուրցըվի ան ամէն բանին համար , որ քեզի
11 հրամայված է ընելու : Երբոր չէի տեսնար ան
լոյսին փառքէն , հետս եղողները ձեռքէս բռնած՝
12 Յոհանսկոս մտայ : Ումանիա անուն մարդ մը՝
աստուածավախ՝ օրէնքին նայելով , Յոհանսկոս
13 բնակած բոլոր Հրէաներէն ջոջ վկայված · եկաւ
կայնեցաւ քովս՝ ու ըսաւ , Սաւուղ եղբայր վեր
14 նայէ : Ես ալ նոյն ժամուն վեր նայեցայ իրեն ·
և ան ըսաւ ինծի , Ա՛ր Հայրերուն Աստուածը
առաջմանէ քեզ ընտրեց , որ իր կամքը ճանչնաս՝
ու ան Արդարը տեսնաս , և անոր բերանէն ձայն
15 լսես · որ բոլոր մարդոց առջևը իրեն վկայ ըլլաս՝
16 ան բաներուն համար , որ տեսար ու լսեցիր : Եւ
հիմայ ալ ինչ կուշանաս , ելիր մկրտվի՛ ու
17 մեղքերդ լըւա անոր անունին կանչելով : Եւ ե-
ղաւ որ երբոր Երուսաղէմ դարձայ՝ ու տաճարին
18 մէջը աղօթք կընէի , ազդու թիւրեի մը մէջ էի · և
զինքը տեսայ որ ինծի կըսէր , Արտորցիր շուտով
Երուսաղէմէն ելիր · ինչու որ քու ըրած վկայու-
19 թիւնդ ինծի համար պիտի չընդունին : Ես ալ ը-
սի , Տէր՛ իրենք աղէկ գիտեն թէ ես էի որ քեզի

Հաւատացողները բանտը կուտային , և ժողովա-
բանները մէջը կը ծեծէին : Եւ երբոր քու Աստ- 20
փանոս վկայիդ արիւնը կը թափէր՝ ես էի որ հոն
մեռնողներ էի , և կաշկը մէկ էր անոր սպանող-
ներուն . և անիկա սպանողներուն չէր կրնար
կրպակել : Ան ալ բաւ ինծի , Վնաս ինչու որ 21
ես քեզ հետաւոր հեթանոսներուն պիտի խրկեմ:
Եւ անոնք ինչման աս խօսքս ականջ դրին ի- 22
րեն . ետքը ձայներնին վերուցին՝ ու ըսին , Վե-
ցուր աշխարհէն առանկ մարդը . ինչու որ չի
կրնար առանկին ողջ կենալ : Եւ երբոր կրկանչ- 23
մըռուէին՝ ու լաթերնին կը ընետէին , և փո-
շի օդը կը ցանէին , հազարապետը հրաման ըրաւ՝ 24
որ զինքը բանակը խօթեն . կը հրամայէր ծեծով
հարցունել իրեն , որ գիտնայ թէ ինչ յանցան-
քի համար անոր դէմ անանկ կը կանչ մռնէին կոր :
Եւ երբոր կաշի կապերով զինքը կապեցին՝ Պօ- 25
ղոս վրան կայնող հարիւրապետին ըսաւ , Թէ
Հռովմայեցի մարդ մը՝ և ան ալ անմեղ՝ ձեզի կր-
կրկնէ որ ծեծէք : Հարիւրապետը երբոր սա լսեց՝ 26
գնաց հազարապետին պատմեց ու ըսաւ , Ի՞նչ
կուզեսկոր ընել . ինչու որ ան մարդը Հռովմա-
յեցի է : Հազարապետն ալ գնաց՝ ըսաւ անոր , 27
Ա՛ռ ինծի , դուն Հռովմայեցի՞ ես մի . ան ալ ը-
սաւ Այո՛ : Հազարապետը պատասխան տուաւ . 28
Ես շատ բանակով ձեռք բերի աս ազգի զինուո-
րութիւնը . Պօղոս ըսաւ , Ես բուն անոր մէջը
ծնած եմ : Եւ անոնք որ զինքը պիտի ծեծէին , 29
շուտ մը ետ կեցան իրմէն . և հազարապետն ալ
վախցաւ , երբոր գիտցաւ թէ Հռովմայեցի է , և
որովհետև անիկա կապեր էր ալ :

Եւ հետի օրը կուզէր որ շիտակը գիտնայ՝ Թէ 30
ինչ է Հրեաներուն ըրած չարախօսութիւնը .
արձակեց անիկա , և հրաման ըրաւ որ քահանա-
յապետները ու բոլոր ժողովքը կանչեն . և Պօ-
ղոսը իջեցուց անոնց դիմացը կանգնեցուց :

ԳՈՐԾՔ ԻԱ։

1 Եւ Պօղոս դէպի ասեանին նայելով ըսաւ .
Ա՛րդիկ եղբայրներ , ես բոլորովին շիտակ
2 խղճմտանքով կեանքս վարեր եմ Աստուծոյ առ-
3 ջեւը՝ մինչեւ ա օրս : Անանիա քահանայապետն ալ
Հրաման ըրաւ սպասաւորներուն՝ որ անոր բերանին
4 զարնեն : Անատեր Պօղոս ըսաւ անոր . Աստ-
ուած քեզի պիտի զարնէ ծեփած պատ . որ դուն
նստեր ես օրէնքովը իս դատելու , և օրէնքէն
5 դուրս Հրաման կրնես որ ինծի զարնեն : Եւ բո-
լորտիքը կայնողները ըսին : Աստուծոյ քահանայ-
6 ապետին դէմ կրզուըրես : Պօղոս ալ ըսաւ , Եղ-
բայրներ չէի գիտեր որ քահանայապետ է . Քանզի
գրված է Ժողովրդիդ իշխանին դէմ մի
7 զուրցեր : Երբոր գիտցաւ Պօղոս՝ որ մէկ կողմը
Յաղուկեցիներ են , և մէկալը՝ Փարիսեցիներ ,
պօռալով կրսէր ան ասեանին մէջը . Ա՛րդիկ
եղբայրներ , ես Փարիսեցի եմ՝ Փարիսեցիի որդի ,
յոյսի ու մեռելներուն յարութեանը համար ա՛ն
8 ես կրդատուիմ՝ որ : Եւ երբոր ան ըսաւ՝ Փարիսե-
ցիներուն և Յաղուկեցիներուն մէջը երկպառա-
կութիւն ինկաւ , և բազմութիւնը բաժնուեցաւ :
9 Որովհետև Յաղուկեցիք կըսեն՝ Չարութիւն չի
կայ , և ո՛չ հրեշտակ , ո՛չ ալ հոգի . բայց Փարի-
սեցիները երկուքն ալ կըդաւանին : Եւ մեծ ձայն
մը եղաւ . Փարիսեցիներուն կողմանէ կարդացող-
ներէն ոմանք ոտք ելան՝ դէմ կրկենայինն՝ ու կը-
սէին , Ո՛չինչ աս մարդուն վրայ մեզ գէշութիւն
մը չենք գտներ . Հապա որ հոգի մը կամ հրեշ-
10 տակ մը ատոր մէջը խօսեցաւ : Եւ երբոր բազմու-
թիւնը շատցաւ՝ հազարապետը վախնալով որ
չըլլայ թէ Պօղոս անոնցմէ փառատուի , զինուոր-
ներուն հրաման ըրաւ որ իջնան զինքը անոնց մէ-
11 ջէն յափշտակեն՝ ու բանակը բերեն : Եւ հետևի

գիշերը Տէրը իր քովը կայնեցաւ ու ըսաւ , Կըտրիճ կեցիր Պօղոս · վասն զի ինչպէս որ Երուսաղէմի մէջը ինծի համար վկայեցիր նէ , անանկ պէտք է քեզի՝ որ Հռովմա ալ վկայես :

Եւ երբոր առտու եղաւ՝ Հրէաները մէկտեղ 12
ժողվեցան ինքզինքին անէծքի տակ դրին ,
որ չուտեն և չի խմեն՝ մինչև Պօղոսը սպաննեն :
Եւ քառասունէն էվել էին որ ասանկ երդումը իրարու 13
հետ ըրին : Ուր ասոնք քահանայապետներուն և 14
երէցներուն գացին՝ ու ըսին , Մենք անէծքով անիծեցինք մենք մեզ՝ որ բան մը չուտենք մինչև որ Պօղոսը սպաննենք : Հիմա դուք ժողովքին հետ մէկ 15
անդ հազարապետին իմացուցէք որ անոր հետ իջնէ ձեզի իջեցնելէ , որպես թէ դուք տեղին իսկոր բան մը հասկընալ կուզէք անոր վրայով · և մենք անոր մօտ գալէն առաջ պատրաստ ենք զինքը սպաննելու : Եւ Պօղոսին քրոջը որդին երբոր ասոր 16
գայթը լսեց՝ եկաւ բերդը մտաւ Պօղոսին պատմեց : Պօղոս ալ Հարիւրապետներուն մէկը իրեն 17
կանչելով՝ ըսաւ · Այս պատանին հազարապետին տար , ինչու որ բան մը ունի անոր զուրցելու : Անոր 18
ալ առաւ անիկա տարաւ հազարապետին՝ ու ըսաւ · Կապուած Պօղոսը իս կանչեց՝ և աղաչեց որ այս պատանին քեզի բերեմ , բան մը ունի քեզի խօսելու : Հազարապետը անոր ձեռքէն բռնեց 19
մէկդի գնաց · Հարցուց թէ ի՞նչ ունիս ինծի խօսելու : Եւ ան ըսաւ · Հրէաները մէկտեղեցան 20
քեզի աղաչելու՝ որ վաղը Պօղոսը ատեան իջեցնես , որպես թէ կուզեն տեղեհտեղը քննութիւն մը ընել անոր վրայ · բայց դուն անոնց մէրկ մի՛ 21
ըներ · ինչու որ անոնք որոգայթ լարեցին անոր քառասուն մարդէն էվելի , որ ինքզինքնին անէծքի տակ դրին՝ որ չուտեն ու չի խմեն մինչև անիկա սպաննեն · ուստի պատրաստ են և քու հրամանդ կըսպասեն : Հազարապետը 22
պատանին ձամբեց , ապրսպրելով թէ մէկուն մի՛ ըսեր՝ որ ասանկ բանը ինծի իմացուցիր :

23 Եւ հարիւրապետներէն երկուքը կանչեց՝ ու
ըսաւ , Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք ,
և եօթանասուն ձիաւոր , և երկու հարիւր ալ գե-
ղարդաւոր · որ մինչև Կեսարիա պիտի երթան գի-
24 շերվան ժամը իրիքին · և գրաստներ պատրաստե-
ցէք , որ Պօղոսը փոխիքա դատաւորին իջեցուենն
25 ազատեն : Եւ թուղթ մը գրեց ասանկին
26 պէս : Կղավդիոս Լիւսիաս՝ պատուական փոխիքա
27 դատաւորիդ ողջոյն : Այս մարդը Հրէաներէն
բռնուվեր էր , և անոնցմէ քիչ մնաց պիտի սպան-
նուէր · ես զինուորներով վրայ հասած խլեցնելի ,
28 իմանալով որ Հռոմայեցի է : Ուզեցի յանցանքը
գիտնալ որ անոր համար ատոր վրայ ամբաստա-
նութիւն կընէին · իջուցի ատիկա անոնց ատեանը :
29 Որ գտայ ամբաստանուած իրենց օրէնքին վէրա-
բերեալ վէճի մը համար · և մեռցնելու կամ
30 կապուելու արժանի յանցանք մը չունէր : Երբոր
իմացայ որ անոնք ատ մարդուն համար որոգայթի
լարեր են , քեզի խրկեցի , հրաման ընելով ամ-
բաստանողներուն ալ՝ որ քու առջևդ խօսին ա-
տոր վրայ · Ողջ եղիր :
31 Զինուորներն ալ անոր հրամանին պէս առին
32 Պօղոսը գիշերով Անտիպատրոսին տարին : Ու
հետևի օրը ձիաւորները ձգեցին անոր հետը եր-
33 թալու , իրենք բերդը դարձան : Անոնք Կեսա-
րիա մտան , ու թուղթը դատաւորին տվին , Պօ-
34 ղոսն ալ անոր առջևը կացնեցուցին : Երբոր կար-
դաց՝ հարցուց թէ որ գաւառէն է · և իմանալով որ
35 Կիլիկիայէն է՝ ըսաւ , Պիտի լսեմ քեզի՝ երբոր
քու ամբաստանողներդ ալ գան · և հրաման ը-
րաւ՝ որ ինքը Հերովդէսին պալատը պահեն :

ԻԴ · Ի՛ ·

1 Ա՛ւ հինգ օրէն եղաւ Անանիա քահանայապետը
քանի մը ծերերու հետ և մէկ Տերտիւղոս
անուն ճարտասանի մը հետ իջաւ · և ատոնք դա-

տաւորին իմացուցին Պօղոսին վրայով : Եւ երբոր 2
կանչեցին անիկա՝ Տերտիւղոս սկսեց ամբաստա-
նութիւն բնել՝ ու ըսել . Մենք քեզմէ շատ խա-
ղաղութիւն ու քու կին խնամքովդ աս ազգին բա-
ները շտկած երթալ գտեր ենք . ամէն կերպով՝ 3
և ամէն տեղ բոլորովին գոհ ըլլալով , շնորհա-
կալ ենք ով պատուական Փեղիքս : Բայց չըլլայ 4
որ երկար նեղութիւն տամ քեզի . կաղաչեմ որ
կարճրկնկ քու հեզութիւնովդ մեզի ականջ դնես :
Քանզի որ մենք աս մարդը գտանք աւերող և խռ- 5
ովարար բոլոր Հրեաներուն՝ որ աշխարհիս մէջ
են , և Նազովրացիներուն աղանդին առաջնորդը :
Որ ինքը տաճարն ալ ուզեց պղծել . որ անիկա 6
բռնեցինք , և մեր օրէնքին պէս ուզեցինք դատա-
տանը բնել : Բայց իսպառ հազարապետը եկաւ մեծ 7
բռնութիւնով մեր ձեռքէն հանեց : Հրաման ը- 8
րաւ՝ որ անոր վրայ ամբաստանողներն ալ քեզի
գան , որ նորին դատաստան բնելով դուն ալ
կարող ըլլաս ամէն բաներ հակառնալու , որոնցմով
մենք ամբաստանութիւն կրնենք մտոր վրայ :
Հրէաներն ալ ամենը մէկ եղած՝ ըսին , Նոյնպէս 9
է : Պատասխան տուաւ Պօղոս՝ երբոր դատաւորը 10
իրեն աչք ըրաւ որ խօսի . Գիտնալով որ շատ տա-
րիներէ հետէ դուն աս ազգին դատաւորն ես ,
յօժար սիրտով ինծի վերաբերեալ բաներուն
համար պատասխան կուտամ : Որովհետև կրնաս 11
գիտնալ որ ես տասներկու օրէն աւելի չէ , քանի
որ Երուսաղէմ երկրպագութիւն ընելու :
Եւ ոչ հոն տաճարին մէջը գտան իս մէկու մը հետ 12
խօսած՝ կամ շատերը մէկտեղ ժողված , ոչ ժո-
ղովարաններուն մէջ՝ ոչ ալ քաղաքին մէջ . ոչ 13
ալ կրնան քու դիմացդ ցուցընել , ինչ բանի հա-
մար որ հիմայ ամբաստանութիւն կրնենկոր իմ
վրաս : Բայց աս կըխոստովանիմ քեզի՝ թէ ան 14
ճամբուն համար որ հերձուած կըսեն , ես անանկ
կըպաշտեմ իմ Հայրենական Աստուածս , հաւա.

տալով ան ամէն բաներուն որ օրինաց և մարգա-
15 րէից մէջ գրված է : Այս ունիմ Աստուծոյ՝ որ
անոր առնէք ալ կըյուսան թէ արդարներուն և
մեղաւորներուն յարութիւն առնել պիտի ըլլայ :
16 Ասոր համար ես ալ ամէն իմիր կըջանամ
մաքուր խղճմտանք ունենալ Աստուծոյ առջեր ու
17 մարդոց առջեր : Հապա տարիներէն ետև ելայ
իմ ազգիս ողորմութիւն ընելու , և պատարագուց
18 տրվի · ասանկով իս տաճարին մէջը մաքրըված
գտան՝ ոչ բազմութիւնով , ոչ ալ ամբոխով :
19 Ասիացի Հրէաներէն մէկ քանին , որ անոնց պէտք
էր առջեր գալ՝ ու ամբաստանութիւն ընել , թէ
20 որ իմ վրաս բան մը ունէին · կամ թէ ասոնք ի-
րենք ալ Թող ըսեն՝ ինչ անիրաւութիւն գտան
21 իմ վրաս , երբոր առեջը կայներ էի : Այլ
թէ աս մէկ խօսքիս համար՝ որ երբ ժէջերնին կայ-
ներ էի՝ կանչեցի , թէ Յարութեան
22 ներ համար ասօր ես ձեզի կըդատվիմիկոր : Եւ
Փելիքս կսև Թողուց անոնք · ինչու որ աղէկ գի-
տէր ան ճանապարհին վրայ · ըսաւ , Երբոր Լի-
սիաս հազարապետը հոս իջնայ՝ անկէ կրտեղեկա-
23 նամ ձեր վրայով : Հարիւրապետին հրաման ը-
րաւ՝ որ անիկա պահէ , և ընդարձակութիւն
տայ , և իրենիներէն մէկը չարգիլէ անոր սպասա-
ւորութիւն ընելէն :
24 Եւ քանի մը օրէն ետև Փելիքս եկաւ իր Կրու-
սիլլա կնկանը հետ՝ որ Հրէայ էր , Պօղոսը կան-
չեց , և Յիսուս Քրիստոսի հաւատքին վրայով
25 անկէ լսեց : Եւ անիկա երբոր արդարութեան
ու ժուժկալութեան և գալու դատաստանին վրայ
կըխօսէր , Փելիքս զարհուրելով պատասխան տը-
ւաւ . Կրնան հիմայ գնա , և երբոր առեն ըլլայ՝
26 ես քեզ կրկանչեմ : Կսև յոյս ունէր՝ որ Պօղոս
իրեն բան մը տայ · անոր համար շատ անգամ հն-
27 քը կրկանչէր՝ հետը կրխօսէր : Երկու տա-
րին որ լրընցաւ՝ Փելիքսին տեղը Փեստոս Պորկի-

ոսը եկաւ · փեղիքս ալ Հրէաներուն շնորհք մը
ընել ուզելով , Պօղոսը կապած թողուց ։

ԳԼ · ԻԵ ։

Փեստոս երբոր ան գաւառը հասաւ՝ իրեք օրէն 1
ետև Կեսարիայէն Երուսաղէմ ելաւ ։ Եւ քա- 2
հանայապետները ու Հրէաներուն գլխաւորները
Պօղոսին վրայով իրեն իմացուցին , և կաղաչէին՝ 3
շնորհք կընդունէին իրմէն , որ անիկա Երուսա-
ղէմ կանչէ · որովհետև դնելով ճամբան զինքը
սպաննելու ։ Բայց Փեստոս պատասխան տուաւ , 4
որ անիկա Կեսարիա պահուի · որ ինքն ալ շատ
չանցած հոն պիտի երթայ ։ Եւ ձեզմէ ով կրնայ 5
նէ՝ ըսաւ , իմ հետս թող իջնան · և թէ որ ան
մարդուն վրայ չանցանք մը կայ նէ՝ ամբաստա-
նութիւն թող ընեն անոր վրայ ։ Եւ հոն ութը 6
կամ տասը օրէն աւելի չի կեցած՝ եկաւ Կեսարիա
իջաւ · և ետևի օրը առտեան նստաւ՝ հրաման ըրաւ
որ Պօղոսը բերուին ։ Եւ երբոր եկաւ՝ Երուսաղէ- 7
մէն իջնող Հրէաները անոր չորս կողմը կայնեցան ,
շատ ու ծանր չանցանքներ կբդնէին Պաւղոսի վրայ , որ
չէին կրնար ցուցընել ։ Ինչու որ Պօղոս պատաս- 8
խան կուտար , թէ Ես ոչ Հրէաներուն օրէնքին՝
և ոչ տաճարին՝ ոչ ալ Կայսրին դէմ բան մը ը-
րեր եմ ։ Բայց Փեստոս ուզելով որ Հրէաներուն 9
շնորհք ընէ՝ պատասխան տուաւ Պօղոսին ու ը-
սաւ , Կուզե՞ս Երուսաղէմ երթալ , և հոն ատ
բաներուն վրայով իմ առջև դատիլ ։ Պօղոս 10
ալ ըսաւ · Կայսրին առեանը եկեր կայներ եմ ,
ուր որ պէտք է ինծի դատիլ · Հրէաներուն գէ-
շութիւն մը ըրած չեմ , ինչպէս որ դուն ալ աղէկ
գիտես ։ Հապա թէ որ գէշութիւն մը ըրեր եմ՝ և 11
մեռնելու արժանի բան մը ըրի նէ , ես մեռնելէն
չեմ վախնար · բայց թէ որ ոչինչ բան մըն է՝ որ
ասոնք իմ վրաս ամբաստանութիւն կընեն , մէկը
չի կրնար իս առնց ձեռքը տալ · Կայսրին կըթո-

12 ղրկեմ ։ Ընտանեաց փեստոս խորհրդակցին հետը խօսելով՝ պատասխան տուաւ՝ թէ Կայսրին բողոքեցիր , Կայսրին պիտի երթաս ։
13 Ի՛նչ մը օրեր անցնելէն ետև Ագրիպպաս թագաւորը և Բերնիկէն Կեսարիա եկան՝ փես-
14 տոսը բարեւելու ։ Եւ շատ օրեր որ հոն անցուցին՝ փեստոս Պօղոսին համար թագաւորին իմացուց՝ ու ըսաւ . Հոս մէկ մարդ մը մնացեր է փելիքսէն
15 կապված ։ Որուն վրայով երբոր Երուսաղէմ գացի՝ քահանայապետները ու Հրէից գլխաւորները իմացուցին ինծի , կուզէին որ ես անոր պա-
16 տիժ մը տամ ։ Որոնց պատասխան տըվի թէ Հռովմայեցիներուն սովորութիւն չէ՝ որ մէկը ուրիշի մը ձեռք տրվի , մինչև որ ամբաստանվածը ամբաստանողները դիմացը չունենայ , ու ան ամբաստանութեանը դէմ պատասխանի տեղ գըտ-
17 նայ ։ Եւ երբոր հոս եկան՝ ամենևին չուշացուցի . հապա հետևի օրը առեւն նստայ՝ հրաման ըրի որ
18 մարդը բերեն ։ Իր վրայ ամբաստանողներն ալ եկան , մէկ գէշ յանցանք մը չէին կրնար ցուցը-
19 նել՝ ինչ որ ես կրկարծէի . հապա մէկ վէճ մը ունէին անոր հետ իրենց կրօնքին վրայ , և մէկ Յիսուս անուանած մեռածի մը վրայ . որուն համար
20 Պօղոս կրսէր թէ ողջ է ։ Երբոր տարակուսանքի մէջ մնայ ասանկ բաները քննելու համար՝ ըսի , թէ Կուզէ՞ն երուսաղէմ երթալ՝ և հոն ան բա-
21 ներուն համար դատվիլ ։ Հայց Պօղոս երբոր բողոքեց՝ որ պահվի քաջարանց Կայսրին դիմացը նե-
լալու , հրաման ըրի որ զինքը պահեն՝ մինչև որ
22 Կայսրին տանիլ տամ ։ Ագրիպպաս փեստոսին ըսաւ . Ես ալ կուզէի ատ մարդը մտիկ ընել . ան
ալ ըսաւ , Վաղը կրլսես ։
23 Եւ հետևի օրը երբոր Ագրիպպասը ու Բերնիկէն մեծ և փառաւոր հանդէսով եկան՝ ու առտնան մտան հաղարապետներով և քաղաքին պա-
տուաւոր մարդիկներովը մէկտեղ . փեստոս ալ

հրաման ընելով՝ բերին Պօղոսը : Եւ ըսաւ Փես- 24
տոս . Ագրիպպա արքայ՝ և դուք ալ բոլոր մար-
դիկ որ մեր հետ եք , տեսիկա կրնեանաք մի . ասոր
վրայ Հրէաներուն բոլոր ժողովուրդը ամբաստա-
նելիութեան բերին ինծի Երուսաղէմ՝ և հոս ալ , կը-
կանչէին թէ՝ Պէտք չէ որ տեսիկա ողջ մնայ :
Ես այց ես հասկրցայ որ ինքը մեռնելու արժանի 25
բան մը բրած չէ . և ինքը քաջարանց Կայսրին որ
բողոքեց , մտերմացի որ խրկեմ : Որուն համար 26
ինչ հաստատ բան մը չունիմ գրելու իմ տէրոջս .
անոր համար ասիկա ձեր առջեւը բերի , և մա-
նաւանդ քու առջեւդ՝ ով Ագրիպպա արքայ , որ
նորէն քննելով կարող ըլլամ բան մը գրելու :
Ինչու որ ինծի անվայել կերեւայ՝ որ մէկ կապած 27
մը խրկեմ , և անոր վրայով մէկ յանցանք մը չի
ցուցընեմ :

ԿԶ . ԼՕ :

Եւ Ագրիպպա ըսաւ Պօղոսին . Հրաման է 1
քեզի՝ որ դուն քեզի համար խօսիս . անառնները
Պօղոս ձեռքը երկրնցունելով պատասխան տը-
ւաւ : Հրէաներուն իմ վրաս բրած բոլոր ամբաս- 2
տանութեանը համար ով Ագրիպպա արքայ՝ ես
ինք երանելի կրսեպեմ , որ այսօր քու առջեւդ պա-
տասխան պիտի տամ : Մանաւանդ որ դուն Հրէ- 3
աներուն բոլոր կրօնքի բաները և վիճմունքները
աղէկ գիտես . անոր համար կաղաչեմ որ համբե-
րութեամբ ինծի մտիկ ընես : Ինչու որ տղայու- 4
թենէս՝ ի վեր իմ ինչպէս սկսիլը՝ սկիզբէն Ե-
րուսաղէմ իմ ազգիս մէջը ըլլալովս , բոլոր Հրէ-
աները գիտեն : Զի շատ առաջուց գիտեն՝ (թէ որ 5
ուզեն վկայելու) որ մեր օրէնքին պինտ ստոյգ
կարգին պէս՝ Փարիսեցի կեցեր եմ : Եւ հիմայ 6
տեսանը կեցեր կրդատուիմ՝ Աստուծմէ դէպ հայ-
րերուն եղած խոստումնութեին յոյսին համար . որ 7
մեր տասներկու ցեղը անդադար գիշեր ու ցորեկ

պաշտելով կրնաւան անոր հանիլ · ասոր յոյսին
համար Հրեաներէն կամքատանվիկոր՝ ով աք-
8քայ : Ինչո՞ւ չի հաւտալու բան պիտի երևայ ձե-
9զի՝ թէ Աստուած մեռելները կրյարուցանէ : Ես
ինքս արժան կրսեպէի Յիսուս Նազովրեցիին ա-
10նուշին դէմ շատ բաներ ընել : Որ ըսի ալ Ե-
րուսաղէմի մէջ · և սուրբերէն շատերը բանտ
դնել, կուտայի քահանայապետներէն իշխանու-
թիւն առած , ու անոնց մեռածներուն հարմանքը
11կըբերէի : Եւ բոլոր ժողովարաններուն մէջը շատ
անգամ՝ անոնք պատժելով՝ կրբռնադատէի որ
հայհոյեն · և եվրոյք անոնց վրայ կատղած՝ մինչև
12օտար քաղաքները կրհալածէի : Նաև կում երբոր
Դամասկոս կերթայի՝ քահանայապետներուն իշ-
13խանութիւնովը ու հրամանովը , կեսօրին տես-
նըր ճամբուն վրայ՝ ով արքայ , երկինքէն լոյս մը
տեսայ արևին լուսաւորութենէն եվեր՝ բոլոր-
տիքս ծագած , ու անոնց բոլորտիքը որ իմ հետս
14կերթային : Եւ երբոր մենք ամենքս գետինը ին-
կանք՝ ձայն մը լսեցի որ Եբրայեցոց լեզուովը ին-
ծի կրսեր , Սաւուղ Սաւուղ՝ ինչու իս կրհալա-
ծես , կարծր բան է քեզի՝ խթանին դէմ կից զար-
15նել : Ես ալ ըսի , Դուն ով ես Տէր · և Տէրը
բսաւ , Ես Յիսուսն եմ՝ որնոր դուն կրհալածես-
16կոր : Բայց ելիր ու կայնէ ոտքիդ վրայ · ինչու որ
անոր համար քեզի երևեցայ , որ քեզ ձեռք առ-
նեմ պաշտօնեայ և վկայ ընելը՝ ան բաներուն՝ որ
տեսար՝ ու ան բաներուն , որոնցմով պիտի երևամ
17քեզի · քեզ խալըսելով աս ժողովուրդէն ու հե-
թանոսներէն · որ ես անոնց պիտի խրկեմ քեզ ·
18անոնց աչքերը բանալու , խաւարէն լոյսի դար-
ձունելու , և Սատանայի իշխանութենէն Աստու-
ծոյ , որ անոնք ձեղաց թողութիւն առնեն , և
սուրբերուն հետ մասնակից ըլլան՝ ինծի հաւատա-
19լով : Ուստի Ագրիպպաս արքայ՝ ան երկնային
20տեսիլքին անհնազանդ չեղայ ես · Հապա առաջ

Կամասկոս և Երուսաղէմ եղողներուն՝ և բոլոր
Հրէաստանի գաւառները՝ ու հեթանոսներուն՝
քարոզեցի որ զեղչի գան , ու կենդանի Աստու-
ծոյ դառնան , ապաշխարութեան համար արժա-
նաւոր գործքեր գործեն : Ես պատճառին համար 21
Հրէաները իս տաճարին մէջը բռնեցին՝ կուզէին որ
սպաննեն : Աստուծմէ օգնութիւն հասնելով՝ մին- 22
չև աս օրս ողջ մնացի , պզտիկին ու մեծին վկայ-
ութիւն տալով . զուրսէն ո՛րէ բան չի զուր-
ցելով՝ քան թէ ինչ որ մարգարէները և Մովսէս
խօսեցան ըլլալիք բաներուն վրայ . թէ Քրիստոս 23
պիտի չարչարվի , թէ անիկա պիտի առաջ մեռե-
ներէն յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէ ժո-
ղովուրդին և հեթանոսներուն :

Եւ ասանկ որ ինքը պատասխան տուաւ՝ Փես- 24
տոս ամբոխ ձայնով մը ըսաւ , Կրնկընդխօրդ
Պօղոս . շատ կարդացողութիւնդ քեզ խելքէ կը-
դարձուներ : Պօղոս ալ ըսաւ . Ես խելքէ չեմ՝ ով 25
պատուական Փեստոս , հապա խոնարհութեան և
ճշմարտութեան խօսքեր կըզըրցնիկոր : Քան բա- 26
ները թագաւորը գիտէ , որուն դիմացը համար-
ձակ կըխօսիկոր . ինչու որ չեմ կարծեր թէ ա-
սոնցմէ մէկ բան մը քեզմէ ծածկըված ըլլայ . վասն
զի աս բաները չէ թէ մէկ անկիւնի մը մէջ եղած
է : Մարգարէներուն կըհաւատաս Հագրիպպաս 27
արքայ . գիտեմ որ կըհաւատաս : Եւ Հագրիպպաս 28
ըսաւ Պօղոսին , Քիչ մնաց որ իմ միտքս պատ-
կեցուներս քրիստոնեայ ըլլալու : Պօղոս ալ ըսաւ . 29
Աստուծմէ կըխնդրեի որ թէ քիչով՝ թէ շատով
չէ թէ միայն դուն , հապա ամէնքն ալ՝ որ այսօր
ինծի կըլսենկոր , անանկ ըլլան ինծոր որ ես եմ ,
աս կապերէս ի զատ :

Ասոր վրայ երբ թագաւորը և դատաւորը՝ և 30
Բերնիկէն , ու անոնք ալ որ իրենց հետը նստեր
էին : Եւ երբոր կերթային՝ իրարու հետ կրխօ- 31
սէին ու կըսէին , թէ Այս մարդը մեռնելու կամ

---

32 կապվելու արժանի բան մը չընէրկոր ։ Ա՛գրիպպաս
ալ Փեստոսին ըսաւ . Այս մարդը կարելի էր թող
տալ , թէ որ ինքը Կայսրին բողոքած չըլլար ։

ԻԶ . ԻԱ ։

1 Երբոր մեզի հրաման եղաւ նաւով Իտալիա
երթալ , Պօղոսը և ուրիշ քանի մը կապված-
ներ արվին Յարիւրապետի մը՝ որուն անունը
2 Յուլիոս էր , Կեսարացոց գունդէն ։ Եւ մեկ
Ադրամիտացի նաւ մը եղանք՝ գացինք , որ Ա-
սիացոց կողմերէն պիտի երթար . Աբրիստարքոս
3 Մակեդոն Թեսաղոնիկացին ալ մեր հետն էր ։ Եւ
հետևի օրը Սիդոն իջանք . ու Յուլիոս Պօղոսին
մարդասիրութիւն ցուցընելով՝ հրաման ըրաւ որ
բարեկամներուն երթայ , ու օգնութիւն գտնայ ։
4 Անկէց ալ եղանք՝ Կիպրոսին վարի կողմէն նաւե-
5 ցինք հովին դէմ ըլլալուն համար ։ Անտիոք
Կիլիկիայի ու Պամփիլիայի ծովին մէջ տեղէն նա-
ւելով՝ Լիկիացիներուն Միւռա քաղաքը իջանք ։
6 Եւ հարիւրապետը հոն մեկ Աղեքսանդրացի նաւ
մը գտաւ՝ որ Իտալիա կերթար , մեզ հոն խօ-
7 թեց ։ Եւ շատ օրեր կամաց կամաց նաւելով հա-
սանք Կնիդոսին քովերը հասանք . և հովը որ մեզ
չէր թողուր , Կրետէին վարի կողմէն Սաղամի-
8 նայի քովէն նաւեցինք ։ Հազիւ թէ անկէց ալ
անցնելով՝ մեկ տեղ մը եկանք , որ Կեղեցիկ Նա-
ւահանգիստ կըսվէր . որ Ղասեա քաղաքը անոր
մօտ էր ։

9 Եւ երբոր շատ ժամանակ անցաւ՝ և նաւին
ճամբայ ելլալն ալ վտանգաւոր էր , ծովին ատենն
10 ալ որ նոր անցեր էր , Պօղոս խրատ կուտար , և
կըսէր անոնց , Ա՛րդեկ ես կըտեսնամ որ աս
նաւիս ճամբայ ընելը տառապանքով ու շատ վնա-
սով պիտի ըլլայ , չէ թէ մինակ բեռները ու նա-
11 ւին՝ հապա մեր անձերնուս ալ ։ Հայց հարիւրա-
պետը՝ նաւապետին և նաւատէրին էվելի մտիկ

կընէր , քան թէ Պօղոսին խօսքերուն : Երբոր 12
ան նաւաշինգիտը յարմար չէր երևար ձմեռը
հոն անցուներու , շատերը մտրմտացին անկէ եր-
թալ . որ կերպով մը կարող ըլլան փիւնիկէ
հասնիլ , Կրետացոց նաւաշինգիտը ձմեռը կե-
նալու , որ դէպի Հարաւ ու ցամաք կընայէր :
Եւ երբոր Հարաւ փչեց՝ սեպեցին որ երթալու 13
տեղերնին կընդհանին , և մեղ տալով Կրետէին
քովերէն կանցնէին : Եւ շատ առեն չանցած՝ մէկ 14
ուռնգունեղ հով մը ելաւ անոր դէմ , որ Եւրա-
կիկղոն կրսուէր : Երբոր նաւը մէկ դի խլեցաւ , և 15
հովին դէմը չի կրցաւ դիմանալ՝ թող տըւած
կերթայինք ու կուգայինք : Վէպի մէկ կղզի մը 16
շրջակրելով՝ որ Կղաւդա կրսուէր , հազիւ կրցանք
մակոյկը բռնել : Որ անիկա առին՝ օգնութիւն 17
ըլլալու համար նաւին կապեցին . -- վախնալով
որ չըլլայ թէ աւազուտը խյնան , առագաստը ի-
ջեցուցած անանկ կերթայինն ու կուգային : Եւ 18
աստիճ նեղութեան մէջ որ ինկանք , նաւի օրը
բեռնըրը դուրս նետեցին : Եւ երրորդ օրը նաւին 19
գործիքներըը իրենց ձեռքովը դուրս նետեցին :
Երբոր շատ օրեր ոչ արեւ՝ ոչ ալ աստղերը կե- 20
րևային , և փոթորիկը քիչ չէր վրանիս՝ ալ բո-
լորովին մեր ազատելու յոյսը վերցաւ : Եւ որովհ- 21
ետև շատ օրեր անօթի էին , անատնին Պօղոս
անոնց մէջը կայնելով՝ ըսաւ , Ով մարդիկ՝ պէտք
էր ձեզի որ ինծի մտիկ ընէիք և Կրետէէն չել-
լայիք , ու աս տառապանքը և վնասը չի քաշէիք :
Եւ հիմայ ձեզ կրսօրդորեմ՝ որ սիրտ առնէք , որ 22
ձեր մէկերնուդ անձին վնաս մը պիտի չըլլայ՝ նա-
ւէն զատ : Ինչու որ աս գիշերս Աստուծոյ հը- 23
րեշտակը ինծի երևցաւ , որ ես անոր եմ՝ ու
զինքը կրպաշտեմ . և ըսաւ . Ո՛չ վախնար Պա- 24
ղոս՝ կայսրին դիմացն ալ պէտք է որ կայսս դուն .
և աշա Աստուած ամէն քեզի շնորհեց որ քու
հետդ նաւին մէջն են : Ուստի մարդիկ՝ կորիճ ե- 25

ղիք · ինչու որ ես կրհաւատամ Յաստուծոյ որ ա-
սանկ պիտի ըլլայ , ինչպէս որ ան իմ հետս խո-
26սեցաւ : Այ՝իայն թէ պէտք է մեզի որ մէկ կղզի-
27մը խլնանք : Երբոր տասնըչորսերորդ գիշերն էր
Յադրիական ծովին անդունդին մէջը որ կըծփը-
փայինք , կէս գիշերուն նաւատղաները կրկարծէին՝
28թէ մէկ երկիրի մը մօտեցեր են : Եւ գնտակը
ձգեցին՝ քսան գրկաչափ գտան · ու քիչ մըն ալ
կեցան՝ նորէն ձգեցին , և տասնըհինգ գրկաչափ
29գտան : Յաստիկ վախնալով՝ որ չըլլայ թէ քարոտ
տեղվայր խլնան , եւեւի կողմէն չորս երկաթ ձգե-
30ցին , աւտու ըլլալուն կրփափաքէին : Իսկ նա-
ւավարները նաւէն փախչել կուզէին · ուստի մա-
կոյկը ծովը իջեցուցին , պատճառելով որպէս թէ
31առջի կողմէն ալ երկաթ պիտի ձգեն : Պօղոս ը-
սաւ հարիւրապետին ու զինուորներուն , թէ որ
ատոնք նաւին մէջը չի կենան նէ դուք չէք կրնար
32ողջ մնալ : Յետոյ զինուորները մակոյկին
33չուանները կտրեցին և դուրս ձգեցին : Եւ երբոր
աւտու ըլլալու վրայ էր Պօղոս կաղաչէր ամենուն
որ կերակուր առնեն · կըսէր , Այս տասնըչորս օր
է որ դուք ըսպասելով անօթի կեցեր մնացեր էք
34ու բան մը չէք կերած : Ուստի կաղաչեմ ձեզի որ
կերակուր ուտէք · ինչու որ ասիկա ձեր ազատու-
թեանը համար է , որ ձեզմէ մէկուն գլխէն մազ
35մը չի կորսրվի : Եւ ասս որ ըսաւ՝ հացը առաւ ա-
մենուն դիմացը Յաստծմէ գոհացաւ , կտրեց՝ ու
36սկսեց ուտել : Եւ ամէնն ալ սիրտ առին , իրենք
37ալ կերակուր կերան : Եւ նաւին մէջը ամենս եր-
38կու հարիւր եօթանասունըվեց հոգի էինք : Եր-
բոր կիշտացան կերակուրովը՝ նաւը թեթեւցուցին
ցորները ծովը թափելով :
39 Եւ երբոր առտու եղաւ՝ ցամաքը չէին ճանչ-
նար , միայն թէ մէկ գոգ մը կրտեսնային որ ծովին
եզերքը պիտի ըլլար · կրմտմտային որ թէ կա-
40րելի է նաւը հոն խարիսխները

կտրելով ծովը ձգեցին , թևերուն կապերը թու-
ցուցին , և առագաստը մէկ դի առին , ու տըվին
հովին դէպի ան ծովեզերքը : Ա Այլ երկու կողմը 41
ծով տեղ մը որ ինկան՝ նաւը ծռեցին . և նաւին
առջի կողմը խրելով անշարժ մնաց , և ետևի
կողմը ալէհարուածն սաստկութենէն կըքակվէր :
Օ Ինուորներն ալ խորհուրդ կընէին՝ որ կապված- 42
ները սպաննեն , որ չըլլայ թէ մէկը լողալ ու
փախչի : Ա Այլ հարիւրապետը որ Պօղոսը խնը- 43
սել կուզէր՝ արգիլեց իրենք ան խորհուրդէն ,
հրաման ըրաւ թէ՝ Ի՛վ որ կրնայ լողալ , թող
անոնք առաջ նետվին ու ցամաքը ելլան . և ու- 44
րիշները՝ ոմն տախտակներով , և ոմն նաւին ու-
րիշ բաներով . ու եղաւ որ ասանկ բոլորն ալ
ազատ ցամաքը ելան :

Գ Լ Ը Խ Ը :

Ե ր բ ո ր ազատեցանք՝ գիտցանք որ ան կղզի- 1
ին անունը Մ՛ելիտենէ էր . բայց բարբարոս-
ները քիչ մարդասիրութիւն չի ցուցցին մեզի :
Ինչու որ կրակ վառեցին և մեզ ամէնքս ալ ըն- 2
դունեցին ան սաստիկ անձրևին համար ու ցուր-
տին համար : Ե ր բ ո ր Պօղոս շատ մը խախ- 3
ժոդվեց , և կրակին վրայ դրաւ , տաքութենէն
մէկ իժ օձ մը ելաւ՝ անոր ձեռքը բռնեց : Ա Երբա- 4
րոսներն ալ երբոր ան գազանը տեսան անոր
ձեռքէն կախված՝ իրար ու կըսէին , Ա Նանկ է նէ՛
աս մարդը սպաննող մըն է , որ թէպէտ ծովէն
ազատեցաւ՝ իրաւունքը Թող չի տրաւ որ ապրի :
Ե ր բ ո ր գազանը կրակին մէջը թօթվեց իրեն 5
մէկ վնաս մը չեղաւ : Ա Այլ անոնք կըպասէին որ 6
անիկա ուռենայ կամ ինկայ և յանկարծակի մեռ-
նի . երբոր շատ մը սպասեցին՝ և տեսան որ մէկ
վնաս մը չեղաւ իրեն , նորէն խօսքերնին փոխե-
լով կըսէին թէ , Ի՛ Էկ աստուած մըն է : Ե ր ան 7
տեղին բոլորտիքը կղզիին տէրոջը գեղերը կային ,

որուն անունը Պողղեոս էր · որ ինքը մեզ իրեք
8օր իր քովը առաւ , և սիրով ընդունեց : Եւ եղաւ
որ Պողղեոսին հայրը ջերմով և փորքշտութի ցա-
ւով հիւանդցաւ · Պօղոս անոր քովը մնաւ՝ և ա-
ղօթեր ըրաւ , ձեռքը վրան դրաւ՝ և բուրնցուց
9անիկա : Ա՛ս որ եղաւ՝ ուրիշ հիւանդները որ ան
կ՚ունին մէջն էին , կու գային ու կրբժշկըվէին ·
10որոնք ալ էվելի պատիւ ընելով մեզ մեծարեցին ·
և երթալու առենիս ալ՝ ինչ որ պէտք էր նէ
տըվին :
11 Եւ իրեք ամիսէն ետև մեկ Ա՛ղէքսանդրիայի
նաւ մը եկանք , որ ձմեռը ան կ՚ունին անցու ցեր
12էր , Փոսկուրայի նշան ունէր : Եւ Սիրակուսա
13ին՝ իրեք օր հոն կեցանք : Անկէց ալ գացինք
Ռեգիան հասանք · և մէկ օրէն ետև Պուտիոլ որ
14փէց՝ երկու աւուր մէջ Պատիոլոս կեանք : Ուր
հոն եղբայրներ գտանք · որոնք աղաչեցին որ ևօ-
15թը օր հոն մնանք , ու ետը Հռոմա եկանք : Ե-
անկէց եղբայրները երբոր մեր վրայով լսեցին՝ մեր
դիմացը եկան մինչև Ա՛պիոսի վաճառանոցը՝ և
Իրեք Խանու-թները · Պօղոս որ անոնք տեսաւ՝
գոհութիւն տըւաւ Աստուծոյ , և սիրտ առաւ :
16 Եւ երբոր Հռոմա մտանք՝ Պօղոսին հրաման
եղաւ որ իրեն պահապան զինուորին հետ զատ
17կենայ : Եւ եղաւ որ իրեք օրէն ետև անիկա
Հրեաներուն դպրաւորները կանչեց · ու երբոր
եկան՝ ըսաւ անոնց · Ա՛րդիւկ եղբայրներ՝ ես ժո-
ղովուրդին կամ հայրենական կրօնքին դէմ բան
մը չըրած , Երուսաղէմ կապուած՝ Հռոմայեցի-
8ներուն ձեռքը մատնըվեցայ : Որոնք երբոր ին
դատեցին՝ ուզեցին որ թող տան , ինչու որ վրաս
9մէկ մեռնելու մը յանցանք չի գտան : Հայդ Հրե-
րեաները որ հակառակ կեցան՝ պէտք եղաւ որ
Կայսրին բողոքիմ , չէ թէ ես իմ ազգիս վրայ
20չարախօսութիւն մը ունէի : Ա՛ս պատճառին հա-
մար ձեզի աղաչեցի՝ որ տեսնամ և խօսիմ · ինչու

որ Իսրայէլի յոյսին համար ես ասյղ[ա]կապ
մէջն եմ : Չէնոնք ալ ըսին իրեն . Մի՛նչ քու 21
վրայդիվ Հրեաստանէն ոչ մեռելք մը ատեր ենք ,
և ոչ եկող եղբայրներէն քու վրադ գէշութիւն մը
պատմեց կամ խօսեցաւ : Կայց կաղաչենք որ 22
քեզմէ լսենք թէ դուն ինչ միտքի վրայ ես . ինչու
որ ատ աղանդին համար մենք աղէկ իմացեր ենք՝
որ ամէն տեղ ներհակութիւն կըքաշէ : Ա- մկ 23
օր մը ատեն գնելով անոր՝ շատերը անոր բնակա-
րանը եկան , որոնց Աստուծոյ թագաւորութիւնը
կըպատմէր վկայութիւնով , և խոյ վրանին կը-
պատկեցուներ Յիսուսի համար Մովսէսի օրէնքին
ու մարգարէներէն՝ առաւօտուընէ մինչև իրիկուն :
Եւ ոմանք կըհաւատային բսածներուն , և ոչ 24
մէն ալ չէին հաւատար : Եւ իրարու հետ չի մի- 25
պատած գացին՝ երբոր Պօղոս մէկ խօսք մը բսաւ ,
թէ՝ Հոգին Սուրբ աղէկ խօսեցաւ մեր հայրերուն
Եսայի մարգարէին ձեռքովը . և բսաւ , Գնա՛ ան 26
ժողովուրդին ու բսէ . Լսելով պիտի լսէք՝ ու չի-
մանաք . և տեսնալով պիտի տեսնա՛ք՝ ու չի տես-
նաք : Ինչու որ ան ժողովուրդին սիրտը թմրած 27
ըլլաւ , ևականջնին ծանր լսեցին , ու աչքերնին
գոցեցին՝ որ չըլլայ թէ կրնան աչքովը տեսնան , և
ականջովը լսեն , և սրտովը խելան , ու դարձի
գան՝ և ես բժշկեմ անոնք : Ուստի յայտնի ըլլայ 28
ձեզի՝ որ Աստուծոյ փրկութիւնը հեթանոսնե-
րուն խրկըվեցաւ , և անոնք պիտի լսեն : Եւ երբ 29
բսր ատ զուրցեց՝ Հրեաները իրենց քովէն դուրս գա-
ցին . որոնք շատ վիճաբանութիւն ունէին մէջեր-
նին :

Եւ լման երկու տարի իրեն վարձքով բնակած 30
տունը կնցաւ . և իր քովը ընդունելու ամէն 31
կընդունէր . կըքարոզէր Աստուծոյ թագաւորու-
թիւնը , և Տէր Յիսուս Քրիստոսի վրայով ա-
նանց արգիլվելու կըսորվեցուներ բոլոր
համարձակութիւնով :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ԸՆ

ՀՈՎՎՈՒՀԱՅԻՍ։

ԳԼ. Ա։

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ առաքեալ
ընտրեալ՝ կանչուած, Աստուծոյ աւետարանին
2 համար ընտրուած (ան որ առաջուց իր մարգա-
րէներուն ձեռքովը սուրբ գիրքերով խոստացաւ)
3իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին հա-
մար՝ որ մարմնոյ կողմանէ Դաւիթի ցեղէն եղաւ.
4ան որ հանդերձ զօրութեամբ Որդի Աստուծոյ
յայտնուեցաւ Սուրբ Հոգիին կողմանէ, մեռե-
5ներէն յարութիւն առնելով. որ անով ընդունք
և առաքելութիւն ստինք հաւատքի հնազանդու-
թեան համար բոլոր ազգերուն մէջ, անոր ա-
6նունին համար. որ անոնց մէջը դուք ալ Յիսուս
7Քրիստոսի կանչուած էք. ձեր ամէնուն որ Հռո-
մայ էք՝ Աստուծոյ սիրելիներուդ, սուրբ ըն-
տրեալ՝ կանչուածներուդ. Շնորհք և խաղաղու-
թիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յի-
սուս Քրիստոսէն։
8 Պինա առաջ՝ կրկոհանամ իմ Աստուծմէս Յի-
սուս Քրիստոսի ձեռքովը ձեր ամէնուն համար,
որ ձեր հաւատքը բոլոր աշխարհ զուրցուած է։

Ո կայ է ինձի Աստուած , ան որ ես կրպաշտեմ 9
իմ՝ Հոգւովս անոր Որդւոյն աւետարանին մէջը ,
թէ ինչպէս ձեզ կընդիշեմ ամէն առեն իմ աղօթ- 10
քիս մէջ , խնդրելով՝ որ գուցէ անգամ մը Աս-
տուծոյ կամքովը ինձի յաջողութիւն մը ըլլայ ձե-
զի գալու ։ Ինչու որ շատ փափաք ունիմ ձեզ 11
տեսնալու , որ ձեր վրայ մէկ հոգևոր շնորհք մը
դարձունեմ՝ ձեզ հաստատելու համար · այսինքն 12
է՝ ձեր հետ ես ալ միխիթարակից ըլլամ իմ ու ձեր
փոխադարձ հաւատքին համար ։ Ձեմ ուզեր որ 13
չգիտցող ըլլաք եղբայրներ , որ շատ հեղ ուզեցի
գալ ձեզի՝ (և մինչև հիմայ արգիլվեցայ) որ ձեր
մէջն ալ քիչ մը պտուղ գտնամ՝ , ինչպէս որ ու-
րիշ հեթանոսներուն մէջը ։ Ինչու որ՝ Հոյներուն 14
և Խարբարոսներուն , իմաստուններուն և ան-
միտներուն պարտական եմ , անանկ՝ որքան որ 15
ձեռքէս կուգայ յօժարութիւնով ձեզի ալ որ
Հռովմա էք՝ աւետարանը քարոզելու ։

Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր աւետարանը · 16
վասն զի Աստուծոյ զօրութիւնն է ան՝ ամէն հա-
ւատացեալներուն փրկութեանը համար · առաջ
Հրէային՝ ու ետքը Հեթանոսին ։ Ինչու որ Աս- 17
տուծոյ արդարութիւնը հաւատքին հաւատքին՝
անով յայտնի կըլլայ · ինչոր որ գրված է , թէ՝
Արդարը հաւատքէն պիտի ապրի ։

Ինչու որ Աստուծոյ բարկութիւնը երկինքէն 18
պիտի յայտնըվի մարդոց բոլոր ամբարշտու թեա-
նը և անիրաւութեանը վրայ , անոնք որ ճշմար-
տու թիւնը անիրաւութեամբ բռներ են ։ Վասն 19
Ճառն որ Աստուծոյ վրայով գիտնալու բանը
իրենց մէջը յայտնի է · որովհետև Աստուած
իսկ անոնց յայտնեց ։ Ինչու որ՝ աչքի չերևցած 20
իր բաները աշխարհի սկիզբէն աս ստեղծուած-
ներովը կիմացվին կրտեսնըվին , այսինքն է՝ ի-
րեն մշտնջենաւոր ըլլալը , և զօրութիւնը , ու
Աստուածութիւնը · անանկ որ բնաւ ալ պատաս-

21 խան մը չի գտնան տալու ։ Ինչու որ իրենք Աստուած ճանչցան՝ և Աստուծոյ մը պէս չի փառաւորեցին , կամ շնորհակալ չեղան · հապա իրենց ըղձ խորհուրդներովը փճացան , և սիրտերնին
22 անմտութիւնով խաւարեցաւ ։ Իրենք զիրենք իմաստուններուն կարգը դրեր էին , յիմարեցան ·
23 և չաւրբվելու Աստուծոյ փառքը փոխիրեցին՝ նմանցնելով աւրբվելու մարդու , և թռչուններու , ու չորքոտաններու , և սողուններու
24 պատկերին ։ Ընոր համար Աստուած ալ պղծութեան մատնեց անոնք իրենց սիրտին ցանկութիւնովը՝ իրենց մարմինները իրենց անձին մէջ խայ-
25 տառակելու · անոնք որ Աստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին , հնազանդեցան ու երկրպագութիւն ըրին ստեղծուածներուն և չէ թէ Ստեղծողին · ան որ յաւիտեան օրհնեալ է · ա-
26 մէն ։ Ընոր համար Աստուած անոնք ցած կրքութիւն մատնեց , որ իրենց էգերը անբնական բնականին հարկը բնութեան դէմ հարկի հետ փոխեցին ։
27 Նմանկ ալ արուներըը կնկան բնական պէտքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը մէկմէկու հետ վառվեցան · արուները արուներուն հետ խայտառակութիւն կրգործէին , և իրենց անառակութեան վայրագ հատուցումը իրենց վրայ կրնդու-
28 Նէին ։ Եւ որովհետև չուզեցին գԱստուած ընդունիլ գիտութեանը մէջ պահել , Աստուած ալ անոնք ցած մտածմունքներու մատնեց անվայել բաներ
29 ընելու · որոնք որ լեցված էին ամէն կերպ անօրէնութիւնով , պոռնկութիւնով , անզգամութիւնով , ագահութիւնով , չարութիւնով , նախանձութիւնով լեցուն , մարդասպանութիւնով , հակառակութիւնով , խարեբայութիւնով ,
30 չարբերութիւնով · Ի նէն քսուներ , վատ խօսողներ , Աստուած ատողներ , թշնամութիւն բնողներ , հպարտներ , գոռոզներ , չար բաներ
31 հնարողներ , ծնողքին քամահրողներ · անմիտ-

ներ , խօսք չպահողներ , անգութներ , ամբարիշ-
տներ , անողորմներ ։ Որ իրենք հակըղեր էին 32
Աստուծոյ դատաստանը , թէ՝ անոնք որ ասանկ
բաներ կընեն՝ մեռնելու արժանի են , և ոչ թէ
միայն ան ընողները , հապա անոնք ալ որ ան ը-
նողներուն հետ կամքերնին մէկ է ։

ԻԴ · Ը ։

Ասոր ո՛վ մարդ՝ դուն որ դատաստան կրտես- 1
նաս՝ պատասխան չունիս տալու · քանզի ինչ
բանով որ ընկերդ կըդատես , անով քու անձդ
կըդատապարտես · ինչու որ՝ դուն ալ նոյն բաներ
կընես՝ որով կըդատես ։ Մեզի հետև գիտենք՝ թէ 2
Աստուծոյ դատաստանը ճշմարտութիւնով կըլլայ
անոնց վրայ , որ անանկ բաներ կըգործեն ։ Կարդ 3
ո՛վ մարդ՝ դուն որ անանկ բաներ ընողները կը-
դատես և դուն նոյն բաները կընես , ա՞ս միտքդ
կանցունե՞ս թէ դուն Աստուծոյ դատաստանէն
ազատ պիտի մնաս ։ Թէ որ անոր անչափ քաղց- 4
րութիւնը՝ և ներելը՝ ու համբերութիւնը կանար-
գես , չե՞ս գիտեր՝ որ Աստուծոյ անուշութիւնը
քեզ դէպի ապաշխարութիւն կառաջնորդէ · բայց 5
քու խստութիւնովդ և անզղջ սիրտովդ քու ան-
ձիդ բարկութիւն կըդիզես՝ բարկութեան և Աս-
տուծոյ արդար դատաստանին յայտնութեան օրուա-
նը համար · ան որ ամէն մէկուն իրենց գործքե- 6
րուն փոխարէնը կըվճարէ · յատիտենական կեանք 7
անոնց որ բարի գործքերու մէջ համբերութեամբ
կըվնտռեն , փառք ու պատիւ և անմահութիւն կը-
խնդրեն · բայց անոնց որ հակառակ են , և ճըշ- 8
մարտութենէ գլուխ քաշած՝ ու անիրաւութեան
ետևէ գացած , բարկութիւն և սրտողկութիւն՝
նեղութիւն և տառապանք ամէն մարդու վրայ՝ որ 9
չար կըգործէ , առաջ Հրէային՝ և յետը Հեթա-
նոսին · փառք ու պատիւ և խաղաղութիւն ան 10
ամէնուն վրայ՝ որ բարի կըգործէ , առաջ Հրէ-

11 ային՝ եղբը Հեթանոսին : Ինչու որ Աստուծոյ
12 բով ակնառութիւն չի կայ : Ինչք որ առանց
օրէնքի մեղք գործեցին՝ առանց օրէնքի պիտի կոր-
սըվին . և ինչք որ օրէնքի տակ մեղք գործեցին՝
13 օրէնքովը պիտի դատապարտին . (ինչու որ չէ
Թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջևը արդար
են , հապա օրէնքը կատարողները պիտի արդա-
14 րանան : Ուստի Հեթանոսները որ օրէնք չունին՝
երբոր բնականաբար օրէնքին գործքերը որ կը-
գործեն , անոնք որ օրէնք չունին՝ իրենց անձեր-
15 նուն օրէնքը բուն իրենք են . որ կըցուցընեն օ-
րէնքին գործքերը իրենց սիրտին մէջ գրված՝ ի-
րենց խղճմտանքին վկայեմամբը , և իրենց միտ-
քին դատմամբը իրար յիշնդիմանելով կամ Թէ
16 իրաւունք տալով) ան օրը որ Աստուած մարդոց
ծածուկ բաները պիտի դատէ Յիսուս Քրիստոսի
ձեռքովը՝ իմ աւետարանիս պէս :
17 Ուրեմն դուն որ Հրեայ բսվեր ես՝ և օրէնքին
18 կըռնթըներ ես , ու Աստուծմով կըպարծենաս , և
անոր կամքը գիտես . ու ան որ աղէկին է՝ կընտ-
19 րես , և օրէնքէն իրատված ես . անձիդ վրայ յոյս
ունիս՝ կույրերուն առաջնորդ բլլալու , խաւարած-
20 ներուն՝ լոյս , անզգաներուն՝ խրատ սրվող , տը-
զայոց վարժապետ . գիտութեան ու ճշմարտու-
21 Թեան կերպարանքը օրէնքէն ունենալու : Ուրկ
արդ դուն որ ընկերիդ կըսորվեցունես , քու ան-
ձիդ չես սորվեցուներ . որ կըքարոզես գողութիւն
22 չընել , կըգողնաս . որ կըսես շնութիւն չընել ,
շնութիւն կընես . որ կըզզուիս կռատուններէն ,
23 սեղաններըը կրծաչես . որ օրէնքովը կըպարծե-
նաս , օրէնքէն դուրս ելլալով՝ Աստուած կանար-
24 գես : Ինչու որ Աստուծոյ անունը ձեր պատճա-
ռովը հեթանոսաց մէջ կըհայհոյիկոր , ինչպէս որ
գրված է :
25 Թլփատութիւնը շահ կունենայ՝ Թէ որ օրէնքը
պահես . հապա Թէ որ օրէնքին դէմ յանցաւոր

նա՝ քու թլփատութիւնդ անթլփատութիւն եղաւ :
Հապա թէ որ անթլփատութիւնը օրէնքին իրա- 26
ւունքը պահէ , չէ՞ որ անոր անթլփատութիւնը
թլփատութիւն կրնայպլլի . և բնականաբար և- 27
դած անթլփատութիւնը օրէնքը կատարելով՝ քեզ
պիտի դատապարտէ , որ գիրով և թլփատութիւ-
նով օրէնքին յանցաւոր ես : Ինչու որ՝ Հրէայ 28
չէ՛ ան՝ որ դրսովանց է , և թլփատութիւն չէ ան՝
որ դրսովանց մարմինով է . Հապա Հրէայ ա՛ն է՝ 29
որ ներսովանց է , և թլփատութիւն սրտին՝ հո-
գիով , ու չէ թէ գիրով . որ անոր գովութիւնը
չէ թէ մարդկունէն է , հապա Աստուծմէ :

Գ.

Ուրեմն՝ Հրէան ինչ ևվելի բան ունի , կամ 1
ան թլփատութենէն ինչ չահ : Հ՚ամ բա- 2
ներ՝ ամէն կերպով . պինտ առաջ ան՝ որ Աստու-
ծոյ հրամանները անոնց հաւատացուեցաւ : Ուրեմն 3
թէ որ անոնցմէ ոմանք չի հաւատացին , արդեօք
անոնց անհաւատութիւնը Աստուծոյ հաւատքը
կրնափանէր . քա՛ւ լեցի : Ապայն՝ Աստուած 4
ճշմարիտ թող ըլլայ , և բոլոր մարդիկ՝ սուտ .
ինչպէս որ գրուած է , Որ քու խօսքերուդ մէջ
արդար ըլլաս , և դատաստան բնելու առենդ գուն
յաղթես : Ուրեմն թէ որ մեր անիրաւութիւնը 5
Աստուծոյ արդարութիւնը յայտնի կերևցուներ ,
ինչ ըսենք . արդեօք անիրաւ է Աստուած՝ որ էր
բարկութիւնը վրանիս կրբերէ . (մարդկօրէն կը- 6
սեմ՝կոր ա՛ս) քա՛ւ լեցի . Հապա թէ չէ ինչպէս Աս-
տուած կրդատէ աշխարհ : Ինչու որ եթէ Աս- 7
տուծոյ ճշմարտութիւնը իմ ստութիւնովս կևվել-
նայ իր փառքին համար , ինչու ես դեռ մեղաւորի
մը պէս կրդատապարտուիմ : Եւ կամ թէ ինչու 8
չ՚ըսենք՝ (ինչպէս որ գէշ կրխօսին մեր ետևէն ,
և ինտոր ոմանք մեղի համար կրսեն՝ որ կրսենք
թէ) Չարը գործենք՝ որ բարին գայ . որ անոնց
դատապարտութիւնը իրաւամբք են :

9 Ուստի ալ ինչ բանով երկրի մէն ենք հերքո-
նանենք. իրաւ որ մեկ բանով մէն ալ չէ. որ ա-
ռաջ մեղադրեցինք Հրէաները և Հեթանոսները՝
10 թէ ամէնքը մեղաց տակ են: Ինչպէս որ գրված է,
11 թէ Արդար մը չի կայ՝ ոչ մեկ հատ մը. և մեկը չի
կայ՝ որ հասկրնայ, և մեկը չի կայ՝ որ Աստուած
12 փնտրէ: Ամէնքը մոլորեցան՝ մեկտեղ անչէցան.
մեկը չի կայ՝ որ բարի բան ընէ. և բնաւ մեկ հատ
13 մըն ալ չի կայ: Անոնց կոկորդը բաց գերեզման
է. իրենց լեզուներնին խաբեբայութիւն կըսեն.
14 իժերուն թոյնը անոնց պտկանըին տակն է: Ա-
նոնց բերանը անէծքով ու լեղութիւնով լեցուն
15 է: Անոնց ոտքերը շուտ են արիւն թափելու:
16 Կործանումն և թշուառութիւն իրենց ճամբանե-
17 րուն մէջն են. և խաղաղութեան ճամբան չի
18 ճանչցան: Աստուծոյ ահը անոնց աչքերուն
19 առջեւը չէ: Սակայն գիտենք որ օրէնքը ինչ բան
որ կըսէ նէ, անոնց կըսէ՝ որ օրէնքին տակը են.
որ ամէն բերան գոցվի, և բոլոր աշխարհ դատա-
20 պարտված ըլլայ Աստուծոյ առջեւը: Որ անոր
առջեւը մէկ մարմին մը արդարացած չըլլայ օրէն-
քին գործքերովը. ինչու որ օրէնքովը է մեղք
ճանչնալը:
21 Հայց հիմայ առանց օրէնքի Աստուծոյ արդա-
րութիւնը յայտնըված է, օրէնքէն և մարգարէ-
22 ներէն վկայված ըլլալով: Պատճառն որ Աստու-
ծոյ արդարութիւնը Յիսուս Քրիստոսի հաւատ-
քէն՝ բոլոր հաւատացողներուն վրայ է. ու չի կայ
23 զանազանութիւն: Ինչու որ ամէնքը մեղք գոր-
24 ծեցին, և Աստուծոյ փառքէն պակսեցան: Եւ
անոր շնորհքովը ձրի կարդարանան Յիսուս
25 Քրիստոսով եղած փրկութիւնովը. որ անիկա
առաջուց սահմանեց Աստուած՝ հաւատքով քա-
ւութիւն ըլլալ անոր արիւնովը, իր արդարու-
թիւնը ցուցընելու համար՝ թողութիւն տալու ա-
26 ռաջուց գործված մեղքերուն, որ Աստուծոյ

երկայնմտութեան ժամանակին գործեցէք. իր
արդարութիւնը ցուցընելու համար [ես] ա-
տենիս, որ ինքը արդար լիցի, և արդարացուն
ան՝ որ Յիսուսի հաւատքէն է։ Արեմն ուր մնաց 27
պարծենալը, խափանեցաւ. որ օրէնքէն, գործ-
քերուն օրէնքէն մի. չէ. հապա հաւատքի օրէն-
քէն։ Ինչու որ կըսեպնք՝ որ մարդը հաւատքով 28
կարդարանայ առանց օրէնքին գործքերուն։ Մի՞ 29
թէ Աստուած միայն Հրեաներուն է մի, և ՚ի-
թանոսներուն չէ. այո, ՚ի հեթանոսներուն ալ։
Որովհետև Աստուած մէկ է՝ որ թլփատութիւնը 30
հաւատքէն կարդարացունէ, անանկ ալ անթլը-
փատութիւնը նոյն հաւատքով։ Ուստի մենք ան 31
օրէնքը հաւատքով կրխափանենք մի, քան լիցի.
հապա օրէնքը կրհաստատենք։

Կ Ի. Գ։

Ա՞րեմն ինչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրա- 1
համ մեր նահապետը մարմնոյ կողմանէ։ Ին- 2
չու որ եթէ Աբրահամ գործքով արդարացած
ըլլար, իրաւունէ պարծանք կունենար, բայց
չէ թէ Աստուծոյ առջևը։ Հապա գիրքը ինչ 3
կըսէ. Աբրահամ Աստուծոյ հաւատաց, և ան ի-
րեն արդարութիւն սեպուեցաւ։ Ինչ ան որ 4
գործ մը կընէ, վարձքը՝ շնորհքէ եղած չի սեպ-
վիր անոր, հապա՝ պարտքէ։ Եւ ան որ գործք մը 5
չընէր, բայց կրհաւատայ անոր՝ որ ամբարիշտները
կարդարացունէ, անոր հաւատքը իրեն արդարու-
թիւնի տեղ կրսեպվի։ Ինչպես որ Դաւիթ ալ 6
կըզրջէ ան մարդուն երանութիւնը, որ Ա-
ստուած անոր արդարութիւն կրսեպէ՝ առանց
գործքերու։ Երնեկ անոնց [ես] որ իրենց ան օրէ- 7
նութիւնները ներվեցան, և անոնց՝ որ իրենց
մեղքերը ծածկըվեցան։ Երանելի է ան մարդը, 8
որ Տէրը անոր մեղքերը իրեն դէմ չի պիտի գրէ։
Ուստի աս երանութիւնը թլփատութե՞ն վրայ 9

է , թէ անթլփատութեան վրայ · ան որ կըսենք
թէ՝ Հաւատքը Աբրահամին արդարութիւն սեպ-
10վեցաւ : Ինչպէ՞ս ուրեմն սեպվեցաւ · երբոր
թլփատութեան մէջ էր , թէ անթլփատութեան
մէջ · չէ թէ թլփատութեան մէջ , հապա ան-
11թլփատութեան : Եւ թլփատութիւնը նըշ-
ան առաւ՝ անթլփատութեան ատենէն ունեցած
հաւատքին արդարութեանը մակ կնիք մը , որ ին-
քը հայր ըլլայ բոլոր հաւատացողներուն՝ որ ան-
թլփատութենէ կըլլան , (անոնց ալ արդարութիւն
12սեպվելու համար) և հայր թլփատութեան՝ չէ թէ
միայն թլփատութենէ եղողներուն , հապա անոնց
ալ որ մեր Աբրահամ հօրը անթլփատութեան
13ոտքերուն հաւատքին ճամբովը կերթան : Ինչու որ՝
Աբրահամին և անոր զաւկին ըսուած խոստումնըը
աշխարհը ժառանգելու համար՝ չէ թէ օրէնքովը
14եղաւ , հապա հաւատքին արդարութիւնովը : Ին-
չու որ եթէ օրէնքէն եղողները ժառանգ պիտի
ըլլային , ուրեմն փուճ էր հաւատքը , և պարտ՝
15խոստումնըը : Որովհետև օրէնքը բարկութիւն
կըգործէ · բայց ուր որ օրէնք չի կայ՝ հոն մեղք
16ալ չի կայ : Ասոր համար ծառայի ըլլալէ հա-
ւատքէն է , որ շնորհքով մը եղած կըլլայ , խոստ-
մունքը հաստատուն ըլլալու համար ամէն զաւ-
կին , չէ թէ միայն անոր որ օրէնքէն է , հապա
անոր ալ՝ որ Աբրահամի հաւատքէն է · որ ինքը
17մեր ամէնուս հայրն է . (ինչպէս որ գրված է , թէ՝
Քեզ շատ ազգերու հայր պիտի դնեմ) Աստուա-
ծոյ առջևը · որուն որ հաւատաց՝ թէ մեռելները
կեդ ընծացնէ , և չեղած բանը եղածի պէս կըկան-
18չէ : Որ յուսալու բանին յուսով հաւատաց ինքը
շատ ազգերու հայր ըլլալու (ինչպէս որ ալ ըսված
19էր , թէ՝ Ընձանի պիտի ըլլայ քու զաւակդ) և ին-
քը հաւատքէն չի տարակուսեցաւ , թէպէտ անկէ
ետև մեռածի մը պէս նայեցաւ իր մարմինին , (ո-
րովհետև ինքը հարիւր տարեկանի մը չափ էր) և

Աստային արգանդին մեռած ըլլալուն ալ ։ Ոչ 20
անհաւատութիւնով չի տարակուսեցաւ Աստու-
ծոյ խոստմունքին . հապա հաւատքով ուժ ունցաւ ,
Աստուծոյ փառք տուաւ . և իր միտքին մէջ հաս- 21
տատ դրաւ թէ՝ ան որ խոսք տուաւ նէ , ինքը կա-
րող է ընելու ։ Ասոր համար իրեն արդարութիւն 22
սեպվեցաւ ։

Ոչ միայն չէ թէ մինակ անոր համար գրվեցաւ՝ որ 23
աս իրեն սեպվեցաւ . հապա նաև մեզի համար ալ՝ 24
որոնց պիտի սեպվի , թէ որ հաւատանք անոր՝ որ
մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուս . ան որ 25
մեր մեղացը համար մատնվեցաւ , և մեզ արդա-
րացունելու համար յարութիւն առաւ ։

Կ Ե ։

Ա սկէ ետև ան հաւատքովը արդարացած ըլլա- 1
լով , խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ՝
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով . որ իր- 2
մով ընդունելութիւնք հաւատքով աս շնորհքիս մէ-
տեղն ալ . որուն մէջը կեցեր ենք , և Աստու-
ծոյ փառաց յուսովը կրպարծինք ։ Եւ ոչ թէ մի- 3
այն այսքան , հապա մեր նեղութիւններուն մէջն
ալ կրպարծինք . ինչու որ գիտենք թէ նեղու-
թիւնները համբերութիւն կըգործեն , համբե- 4
րութիւնը՝ փորձառութիւն , փորձառութիւնը՝
յոյս . յոյսը բնաւ ամօթով չի ձգեր . ինչու որ 5
Աստուծոյ սէրը մեր սիրտերուն մէջը տարածված
է Հոգւոյն Սրբոյ ձեռքովը , որ մեզի տրվեցաւ ։
Ինչու որ երբ մենք տկար էինք , յաջոր ժամա- 6
նակին Քրիստոս մեզի համար ամբարիշտներուս
վրայ մեռաւ ։ Ինչու որ արդարի մը համար հազիւ 7
կըլլայ՝ որ մէկը մեռնի . բայց մէկ բարի հոգը-
մը համար՝ կարելի է որ մէկը համարձակի մեռնե-
լու ։ Ոչ Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ 8
յայտնեց . որ երբ մենք մեղաւոր էինք՝ Քրիստոս
մեզի համար մեռաւ . Հապա հիմայ որ իրեն արիւ- 9

նովը արդարացանք , որչափ եվելօք իրմով պիտի
10ազատինք Աստուծոյ բարկութենէն ։ Վ ան զի
թէ որ թշնամի եղած ատեննիս Աստուծոյ հետ
հաշտվեցանք իր Որդւոյն մահովը , հապա որքան
եվելի մեր հաշտված ատենը պիտի ապրինք անոր
11կեանքովը ։ Եւ չէ թէ միայն աս , հապա Աս-
տուծմով ալ կրպարծենանք մեր Տէրոջը Յիսուս
Քրիստոսին ձեռքովը , որ անով ևս ան հաշտու-
թիւնը ընդունեցինք ։
12 Վ ան զի ինչպես որ մէկ մարդէ մը մեղքը
աշխարհ մտաւ , և ան մեղքին մահը · ու անանկ
ամէն մարդոց վրայ տարածվեցաւ մահը , որ անով
13ամէնքը մեղանչեցին ։ (Որովհետև մինչև օրէնքին
առնէը աշխարհի մէջ մեղքը կար · բայց մեղքը
14չի սեպվիր՝ ուր որ օրէնք չի կայ ։ Բայց մահը
Ադամէն սկսած մինչև Մովսէսը թագաւորեց ,
նաև Ադամայ մեղքին նման չի մեղանչողներուն
վրայ ալ · որ ան օրինակ էր անոր՝ որ ետքէն պի-
15տի գար ։ Բայց չէ թէ ինչպես մեղքը՝ անանկ ալ
շնորհքը է · ինչու որ եթէ մէկուն յանցանքովը
շատերը մեռան , ալ որքան եվելի Աստուծոյ
շնորհքը և պարգեւը՝ Յիսուս Քրիստոս մէկ մար-
դուն շնորհքովը շատերուն վրայ տարածվեցաւ ։
16Եւ չէ թէ ան պարգեւը անոնկ է ինչպես մէկէ մը
որ մեղանչեց · ինչու որ դատաստանը մէկ մեղքէն
դատապարտութեան մէջ չէ՛ եղ · բայց շնորհքը
17շատ մեղքերէն արդարութիւնի պատ- ։ Պատ-
ճառը՝ թէ որ մէկ մարդուն մեղքովը մահը թա-
գաւորեց ան մէկովը , հապա որքան աւելի անոնք
որ շնորհքի ու արդարութենան պարգեւին առա-
տութիւնը կառնեն , կենաւքով պիտի թագաւո-
18րեն՝ մէկ Յիսուս Քրիստոսի ձեռքովը ։) Ինանկ
է նէ՝ ինչպես որ մէկուն մեղքովը բոլոր մարդոց
դատապարտութիւն եղաւ , անանկ ալ մէկուն
արդարութիւնովը՝ բոլոր մարդոց կենաց արդա-
19րութիւն եղաւ ։ Վ ան զի ինչպես որ մէկ մար-

դուն անհնազանդութիւնովը չատերը մեղաւոր եղան , անանկ ալ մէկուն հնազանդութիւնովը չատերը արդար պիտի ըլլան : Սակայն օրէնքը 20
մէջ ինկաւ՝ որ մեղքերը չատնան . որ ուր աւելի մեղք եղաւ՝ հոն էվելոք շնորհքը չատցաւ . որ 21
ինչպէս մեղքը թագաւորեց մինչև ի մահ , անանկ ալ շնորհքը պիտի թագաւորէ արդարութեամբ մինչև յաւիտենական կեանքը Յիսուս Քրիստոս մեր Տէրոջը ձեռքովը :

Գ Լ Ո Ւ Խ Ը

Ը Ի՞նչ հիմայ ըսենք . մեղքերու մէջ 1
էվելոք կենանք մի , որ շնորհքը չատնայ :
Քաւ լ՛ըլլի . մենք որ մեղքին մեռանք , ինչպէս 2
դեռ անոր մէջը կենանք : Չէ՞ մի գիտեր , որ մենք 3
որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք , անոր
մահովը մկրտուեցանք : Ուրեմն հետ թաղուեցանք 4
մկրտութիւնով մահուան համար . որ ինչպէս
Քրիստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ մե-
ռելներէն , անանկ մենք ալ կենաց նորոգութեան
մէջ պըտրտինք : Ինչու որ եթէ մենք անոր մահ- 5
ուանը նմանութիւնովը , երբեք հեռ անկակից ե-
ղանք նաև անոր յարութեանը նմանութեան ալ
կրլլալ պիտի ըլլանք : Այս գիտնանք որ՝ մեր հին 6
մարդը անոր հետ խաչուեցաւ , որ մեղաց մարմինը
ջնջուի , որ ասկէ ետև մեղքի չի ծառայենք :
Ինչու որ ան որ մեռնի՝ մեղքէն արդա- 7
րացած է : Արդ եթէ որ մենք Քրիստոսի հետ մե- 8
ռանք , կըհաւատանք որ՝ անոր հետն ալ պիտի
ապրինք : Գիտենք որ Քրիստոս մեռելներէն 9
յարութիւն առած է . ասկէ ետև չի մեռնիր , և
մահը իր վրան տէրութիւն չունի : Վասն զի որ 10
մեռաւ նէ՝ մեղքի համար մեռաւ մէկ անգամ . և որ
կենդանի է՝ Աստուծոյ է կենդանի : Այսպէս ալ 11
դուք ձեր անձը մեղքին մեռած սեպեցէք , ու Աս-
տուծոյ կենդանի , Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը

12 ձեռքովը : Ակկեաւե մեղքը չի թագաւորէ ձեր
մահկանացու մարմինին վրայ , որ անոր դէշ ցան-
13 կութիւններուն հնազանդիք : Եւ մեղքի մի՛
պատրաստէք ձեր անդամները իրեն անիրաւու-
թեան գործիքներ . հապա ձեր անձերը Աստուծոյ
պատրաստեցէք՝ որպէս թէ մեռելներէն ողջացած .
և ձեր անդամները Աստուծոյ , իրեն արդարու-
14 թեան գործիքներ . քանզի մեղքը վրանիդ չի
պիտի իշխէ . ինչու որ օրէնքի տակը չէք , հապա
շնորհքայ տակը :
15 Ուրեմն ի՞նչպէս . մեղք մի գործենք՝ որ օրէն-
քի տակը չենք , հապա՝ շնորհքին տակը . քաւ լի-
16 ցի : Չէք մի գիտեր՝ թէ որուն որ անձերնիդ ծա-
ռայ կըպատրաստէք հնազանդելու , ծառայ էք ո-
րուն որ կըհնազանդիք . եթէ մեղքի՝ որ դէպի
մահուան կը տանի , և թէ որ հնազանդելու՝ որ ար-
17 դարութեան : Այլ գոհութի՛ւն Աստուծոյ , որ
դուք մեղքայ ծառայ էիք , սակայն սրտանց հնա-
զանդեցաք այն կերպ վարդապետութեան՝ որ անոր
18 յանձնվեցաք : Ուստի դուք մեղքերէն ազատ ըլ-
19 լալով՝ արդարութեան ծառայ եղաք . (մարդու սո-
վորութեան պէս կըսեմ՝ ձեր մարմինին տկարու-
թեանը համար) ինչու որ ինչպէս ձեր անդամները
անօրէնութեան պատրաստիքիք պղծութեան և
անօրէնութեան ծառաներ (ըլլալու ,) անանկ ալ
հիմայ ձեր անդամները սրբութեան պատրաստեցէք
20 արդարութեան ծառաներ ըլլալու : Ինչու որ ե՛ր-
բոր դուք մեղայ ծառաներ էիք՝ արդարութենէն
21 ազատ էիք : Ուրեմն ի՞նչ պտուղ
ունէիք ան բաներուն՝ որոնցմո՞վ հիմայ կամշ-
նաք . ինչու որ ան բաներուն վերջը՝ մահ է :
22 Այլ հիմայ մեղքերէն ազատուած՝ և Աստուծոյ
ծառաներ եղած , դուք ձեր պտուղը ունիք սրբու-
թիւնով . և անոր վերջն ալ յաւիտենական
23 կեանք : Վասնզի որ մեղայ հատուցումն մահ
է . բայց Աստուծոյ շնորհքը յաւիտենական կեանք
Յիսուս Քրիստոս մեր Տէրոջը ձեռքովը :

Գ Լ։

ՔՀ մի գիտեր Ղազարներ , (քանզի ես օրէնքը գիտացողներուն հետը կը խօսիմ) որ օրէնքը մարդուն վրայ կ'իշխէ՝ որչափ աստն որ ողջ է : Ինչու որ երիկ ունեցող կինիկը իր ողջ երկանը հետ օրէնքով կապված է . բայց թէ որ երիկը մեռնի՝ արձակված է երկանը օրէնքէն : Ուրեմն կ'նանկ է նէ՝ քանի որ երիկը ողջ է , չուն կրսվի՝ թէ որ ուրիշ երիկ մը առնէ . և թէ որ երիկը մեռնի՝ ան օրէնքէն ազատ կըլլայ , Ե չուն չի սեպվիր՝ թէ որ ուրիշ երիկ մը առնէ : Ուրեմն եղբայրներ՝ Քրիստոսի մարմինովը օրէնքին մեռած , որ ուրիշ մը առնէք , ան որ մեռելներէն յարուցեալն առեր է , որ Աստուծոյ պտուղ բերող ըլլաք : Ինչու որ երբ մենք մարմնաւոր էինք՝ մեղաց կիրքերը որ օրէնքով կըլլային , մեր անդամներուն մէջը կուժամնային , որ մենք մահուան պտուղ բերենք : Բայց հիմայ ան օրէնքէն արձակվեցանք . ինչու որ մեռանք անոր որով բռնված էինք , որ մենք Աստուծոյ ծառայենք հոգիին նորոգվելովը . և չէ թէ հին գրվածքովը :

Ուրեմն ի՞նչ ըսենք . օրէնքը մեղք է մի . քան լեցի . բայց ես մեղքը չէի գիտեր , թէ չէ՝ օրէնքով . և ցանկութիւնը չէի ճանչնար՝ թէ որ օրէնքը ըսած չըլլար , Ա՛ի ցանկար : Բայց մեղքը պատուիրանքովը պատճառ առաւ , և իմ մէջս բոլոր ցանկութիւնները գործեց . ինչու որ առանց օրէնքին մեղքը մեռած էր : Ես ալ առանց օրէնքի աստն մը կենդանի էի . բայց երբոր օրէնքին պատուիրանքը վրաս հասաւ՝ մեղքը ող ջընցաւ . և ես մեռայ . ու ան պատուիրանքը որ կենաց հասմար էր՝ նոյնը ինծի մահուան համար եղաւ : Ինչու որ մեղքը պատուիրանքովը պատճառ առնելով՝ իս խաբեց , ու անով մեռուցց : Ուստի օրէնքը

քը սուբբ է , ու պատուիրանքը սուբբ՝ և արդար՝
ու բարի ։
13 Աբրեմն բարին ինձի մահ մի եղաւ · քան լինի ·
Հապա՝ մեղքը · որպէս զի երևայ մեղքը որ ան
բարի բանովը ինձի մահ գործեց , որ մեղքը պատ-
14 ուիրանքով էվելօք մեղաւոր լլլայ ։ Գիտենք որ
օրէնքը հոգևոր է , բայց ես մարմնաւոր եմ՝ մեղ-
15 քերուն տակը ծախված ։ Ինչու որ ինչ որ կը-
նեմ՝ չեմ ճանչնար · չէ թէ ինչ որ կուզեմ նէ՝
ան կընեմ , հապա ինչ որ կատեմ նէ՝ ան կընեմ ։
16 Հապա թէ որ չուզածս կընեմ , օրէնքին համար
17 կըվկայեմ՝ որ ան բարի է ։ Նանակ է նէ՝ չէ թէ ես
կընեմ անիկա , հապա մեղքը՝ որ իմ ներսիդիս
18 կըբնակի ։ Գիտեմ որ իմ ներսիդիս , այսինքն
իմ մարմինիս մէջ մէկ բարի բան մը բնակված չէ ·
ինչու որ կամեցողութիւն կայ քովս , բայց բարին
19 ընելը չի կայ ։ Ինչու որ չէ թէ բարին որ կու-
զեմ՝ կընեմ , հապա չարը որ չեմ ուզեր՝ ան կը-
20 նեմ ։ Հապա թէ չուզած բանս կընեմ՝ ալ չէ
թէ ես կընեմ անիկա , հապա մեղքը որ իմ ներ-
21 սիդիս բնակված է ։ Ուստի ես կըգտնամ անոր
օրէնքը՝ որ ինձի բարին ընելը կըկամենայ , ու չա-
22 րը իմ քովս է ։ Ներսի մարդովը Աստուծոյ օրէն-
23 քին կըհաւնիմ · բայց ուրիշ օրէնք մը կըտեսնամ
իմ անդամներուս մէջը՝ իմ միտքիս օրէնքին դէմ
զինք վերուցած՝ ու իս գերի բռնած մեղքին օրէն-
24 քովը որ անդամներուս մէջն է ։ Ես մէկ խղճալի
մարդ մըն եմ · ով իս պիտի խլացնէ ասս մահացու
25 մարմինէն ։ Բայց գոհութիւն Աստուծոյ՝ Յիսուս
Քրիստոս մեր Տէրոջը ձեռքովը · անանկ է նէ ես
ինքիրմէս իմ միտքովս Աստուծոյ օրէնքին կըծա-
ռայեմ , ու մարմնովս՝ մեղաց օրէնքին ։

Գ · Ը ։

1 Ա՛յէ որ անանկ է նէ դատապարտութիւն չի
կայ Քրիստոս Յիսուսով եղողներուն ։

Ինչու որ Քրիստոս Յիսուսով կենաց հոգիին 2
օրէնքը իս խաղաղեց մեզազ ու մահուան օրէնքէն ։
Ինչու որ ան որ անկարելի էր օրէնքին՝ որովհետև 3
տկար էր մարմինով , Աստուած իր Որդին խրկեց
մեղանչական մարմինի նմանու թեամբ , ու մեղքի
համար , և դատապարտեց մեղքը ան մարմինին
մէջ · որ օրէնքին արդարութիւնը կատարուի մեր 4
մէջը , որ մարմինի պէս չերթանք՝ հապա հոգիին
պէս ։ Ինչու որ մարմնաւոր եղողները մարմինին 5
բաները կըմտմտան , ու հոգևոր եղողները՝ հո-
գիին բաները ։ Ինչու որ մարմնաւոր խորհուրդը 6
մահ է · և հոգևոր խորհուրդը՝ կեանք ու խաղա-
ղութիւն ։ Պատճառն որ մարմնաւոր խորհուրդը 7
Աստուծոյ դէմ թշնամութիւն է · որ Աստուծոյ
օրէնքին չի հնազանդիր , մանաւանդ չի կրնար
ալ ։ Ա ան դի մարմինով եղողները Աստուծոյ 8
հաճոյ չեն կրնար ըլլալ ։ Հայց դուք մարմինով 9
չէք , հապա հոգիով , թէ որ Աստուծոյ հոգին
ձեր մէջը բնակած է · հապա թէ որ մէկը Քրիս-
տոսի Հոգին չունի նէ՝ անիկա անորը չէ ։ Եւ թէ 10
որ Քրիստոս ձեր մէջն է՝ ալ մարմինը մեռած է
մեղքի համար , ու հոգին ոդի է արդարութեան
համար ։ Թէ որ Յիսուսը մեռելներէն յարուցա- 11
նողին Հոգին ձեր մէջը բնակած է նէ , ալ անի-
կա՝ որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուց ,
պիտի կենդանացունէ ձեր մահկանացու մարմին-
ները՝ ձեր մէջը բնակած իրեն Հոգիովը ։

Ասկէ եաև եղբայրնե՛ր պարտական ենք , չէ 12
թէ մարմինին՝ մարմինին ապրելու պէս ապրիլ ։
Ինչու որ եթէ մարմինին պէս ապրելու ըլլաք՝ 13
պիտի մեռնիք · հապա թէ որ Հոգիով մարմինին
գործքերը սպաննէք , պիտի ապրիք ։ Ինչու որ 14
անոնք որ Աստուծոյ Հոգիովը կառաջնորդվին՝
Աստուծոյ որդիքն են անոնք ։ Որովհետև դուք 15
ծառայութեան հոգին չառիք կրկին վախնալու ,
հապա որդեգիր ըլլալու հոգին առիք · որ անով

16 կրկանչենք Հրբայ՝ Հայր : Այդ ան Հոգին
վկայութիւն կուտայ մեր Հոգիին , որ մենք Աստու-
17 ծոյ որդիքն ենք : Եւ թէ որ որդիք , ուրեմն ժա-
ռանգներ . Աստուծոյ ժառանգներ՝ ու Քրիստոսի
ժառանգակիցներ . թէ որ իր չարչարանացը կցորդ
ըլլանք՝ անոր փառացն ալ հաղորդ պիտի ըլլանք :
18 Ինծի ատանկ կերևայ որ՝ աս ժամանակիս չար-
չարանքները արժանի չեն բաղդատելու գալու
19 փառքերուն , որ մեզի պիտի յայտնըվին : Ինչու
որ տեղծուածները յոյսը Աստուծոյ Որդւոյն
20 յայտնըվելուն կըսպասէ : Ինչու որ փուճ բան-
բուն հնազանդեցան տեղծուածները՝ չէ թէ ի-
րենց կամքովը , հապա անոր համար՝ որ յոյսով
21 հնազանդեցուց . որ իրենք ալ տեղծուածներն
ալ ապականութենան ծառայութենէն ազատին՝
Աստուծոյ Որդւոյն փառաւոր ազատութիւնովը :
22 Ինչու որ գիտենք թէ ամեն տեղծուածները
23 միասին հիմայ կըհառաչեն՝ ու ցաւ կըքաշեն : Եւ
չէ թէ միայն այսքան , հապա մենք ալ որ Հոգիին
պտուղը ունինք՝ մենք մեզի մեր անձերուն մէջ
կըհառաչենք որդեգիր ըլլալու սպասելով՝ մեր
24 մարմինին ազատվելովը : Ինչու որ յուսով փրը-
կըվեցանք . բայց յոյսը որ կըտեսնըվի՝ յոյս չէ .
ինչու որ ան բանը որ կըտեսնայ մէկը ալ ինչու
25 պիտի յուսայ : Հապա թէ որ չի տեսած բաներ-
նուս կըյուսանք , ալ համբերութիւնով կըսպաս-
26 սենք անոր : Այնպէս ալ Հոգին օգնութիւն կը-
հասնի մեր տկարութենանը . ինչու որ ինչ բանի
համար աղօթելու ենք՝ ըստ արժանւոյն չենք գի-
տեր . բայց ինքը Հոգին բարեխօս կըլլայ հեզ
27 հառաչանքով մը՝ որ չի զատըվիր : Այլ ան
սիրտերը քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը .
ինչու որ Աստուծոյ կամքին պէս բարեխօսու-
կընէ սուրբերուն համար :
28 Այլ գիտենք որ ամեն բանի մէջ գործակից
կըլլայ բարի բաներու անոնց՝ որ Աստուած կըսի-

րեն , որոնք որ էր նախասահմանութիւնովը կան-
չըված են : Ինչու որ անոնք որ առաջ կըճանչ- 29
նար՝ առաջուց ալ հրաւիրեց իր Որդուըն պատ-
կերին կերպարանակից ըլլալու . որ անիկա անդ-
րանիկ ըլլայ շատ եղբայրներուն մէջը : Եւ որոնք 30
որ առաջուց հրաւիրեց , նաև կանչեց անոնք . և
որոնք որ կանչեց՝ նաև արդարացուց անոնք . և ո-
րոնք որ արդարացուց՝ նաև փառաւորեց անոնք :
Ուրեմն ի՞նչ ըսենք աս բաներս . Թէ որ Աստուած 31
մեր կողմն է՝ ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ : Ան 32
որ իր որդուըն չի խնայեց , հապա մեր ամենուս
համար մատնեց անիկա . ալ ի՞նչպէս անոր հետը
ամեն բաները մեզի չի պարգևեր : Ո՞վ է որ Աս- 33
տուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ . Աս-
տուած է՝ որ կարդարացունէ . Ուրեմն ան ո՞վ է 34
որ կըդատապարտէ . Քրիստոս Յիսուս է որ մե-
ռաւ , մանաւանդ թէ յարութիւն ալ առաւ , ու
Աստուծոյ աջ կողմն է . որ նաև մեզի համար բա-
րեխօս է ինքը : Ուստի ո՞վ պիտի հեռացունէ 35
մեզ Քրիստոսի սիրոյն . նեղութիւնը մի , սրբա-
մաշութիւնը մի , հալածանքը մի , սովը մի , մերկու-
թիւնը մի , վիշտը մի , թուրը մի . (ինչպէս որ 36
գրված է . Քեզի համար ամեն օր կըմեռնինք ,
մորթըվելու ոչխարի պէս սեպվեցանք) Հապա աս 37
ամեն բաներուն մէջ հպարտից կըյաղթենք անով՝
որ սիրեց մեզ : Ինչու որ ես համոզուած գիտեմ՝ որ 38
ոչ մահը , և ոչ կեանքը , ու ոչ հրեշտակները ,
և ոչ իշխանութիւնները , ու ոչ ներկայ բանե-
րը , և ոչ գալու բաները , ու ոչ զօրութիւննե-
րը , և ոչ բարձրութիւնը , ու ոչ խորունկու- 39
թիւնը , և ոչ ուրիշ մէկ արարած մը կրնայ մեզ
բաժնել ան Աստուծոյ սիրոյն , որ Քրիստոս
Յիսուս մեր Տէրոջմով է :

Գ՚ · Թ։

1 Ստոյգը կըսեմ Քրիստոսով , ու սուտ չեմ ը-
սեր · (իմ միտքս ալ ինծի կըվկայէ Հոգւով
2 Սրբով)՝ որ մեծ տրտմութիւն է ինծի , ու իմ
3 սրտիս անպակաս ցաւ : Ինչու որ ուխտով պիտի
ուզէի ես ինքիրէս նզոված ըլլալ Քրիստոսէն՝
իմ մարմնոյ կողմանէ եղբայրներուս ու ազգական-
4 ներուս համար , որոնք Իսրայէլացիներ են · որ
իրենցն է որդեգիր ըլլալը , ու փառքը , և ուխ-
տերը , ու օրինադրութիւնը , և պաշտօնը , ու
5 խոստումնները , իրենցն են նահապետները , իրենց-
մէ Եա՝ Քրիստոս ալ մարմնոյ կողմանէ · որ ինքն
է ամէնուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս ·
6 ամէն : Կարելի չէ որ Աստուծոյ խօսքը գետինը
իյնայ · ինչու որ չէ թէ ամէն Իսրայէլէն եղողնե-
7 րը Իսրայէլացի են · և չէ թէ Աբրահամին ցեղը
եղողները՝ ամէնքը որդիք են · հապա Իսահակով
8 քեզի ցեղ պիտի բսվի : Այսինքն չէ թէ անոնք
որ մարմնին որդիք են՝ Աստուծոյ որդիք ալ են ·
9 հապա խոստմանը որդիքը ցեղ կըսեպվին : Ինչու
որ՝ աւետմունքի է այս խօսքը , թէ՝ Այս ատենիս
10 պիտի գամ , ու Սառա որդի պիտի ունենայ : Եւ
չէ թէ միայն այսքան , հապա Հռեբեկային ալ
յղացաւ մէկ մը , այսինքն մեր Հա-
11 հակ հօրմէն · ինչու որ տակաւին ծնողք չի ծը-
նած , և տակաւին մէկ արդէկ մը կամ գէշ մը չի
գործած , (որ Աստուծոյ վճիռը հաստատ մնայ ը-
12 րած ընտրութեանը պէս՝ չէ թէ գործերէն , հա-
13 պա անկէց որ կանչեց) իրեն բսվեցաւ՝ թէ մեծը
պզտիկին պիտի ծառայէ · ինչպէս որ գրված է թէ
Յակոբը սիրեցի , ու Եսաւը ատեցի :
14 Ուրեմն ի՞նչ բսենք · մի թէ Աստուծոյ քով
15 անիրաւութիւն մի կայ · քան լիցի : Ինչու որ ին-
քը Մովսէսին կըսէ · Որուն որ պիտի ողորմիմ

Նէ՝ կողոպմիմ , ու ոչուն վրայ որ պիտի գթամ
Նէ՝ կրնթամ : Ինանկ է նէ՝ ոչ անկէց է որ կը- 16
կամ , ու ոչ անկէց՝ որ կրվազէ , հապա Աստուծ-
մէն՝ որ կողոպմի : Ինչու որ գիրքը փարաւոնին 17
կրսէ թէ՝ անոր համար քեզ դրդեցի , որ քու
վրադ իմ զօրութիւնս ցուցընեմ , ու իմ անունս
ամէն երկիր զուրցրվի : Ինանկ է նէ՝ ոչուն որ 18
կուզէ՝ կողոպմի , և որը որ կուզէ՝ կրխստացունէ :
Աբեմն պիտի ըսես , թէ ալ ինչու մեղադիր կրլ- 19
լայ , որ անոր կամքին մէկը հակառակ չէ : Ընէ 20
դուն ով՝ ո՛վ դուն՝ որ Աստուծոյ պատասխան
կուտաս . ստեղծուածը իր Ստեղծողին կրնա՞յ ար-
դեօք ըսել , թէ իս ինչու ասանկ շինեցիր : Կը- 21
րուաը իշխանութիւն չունի՞ մի գեղէն վրայ՝ նոյն
շաղմածքէն աման շինելու , մէկը՝ պատիւ , ու
մէկալը՝ անարգանքի : Հապա ինչ՝ եթէ ուզէ Աստ- 22
թէ որ ուզէր Աստուած բարկութիւնը ցուցընել՝
ու իր զօրութիւնը յայտնել , շատ երկայնմտու-
թեամբ համբերելով կորսրվելու պատրաստրված
բարկութեան ամանները՝ վրայ : Եւ՝ կամ որ իր 23
փառքին մեծութիւնը յայտնի ընէ ողորմելու ա-
մաններուն վրայ , որոնք որ փառքի համար պատ-
րաստեց . մեզ՝ որ կանչեց , չէ թէ միայն Հրէա- 24
ներէն , հապա Հեթանոսներէն ալ . ինչպես Ով- 25
սէին մէջ ալ կրսէ . Իմ ժողովուրդս չեղողները
ինձի՝ ժողովուրդ պիտի կանչեմ , ու սիրելի չե-
ղածները՝ սիրելի : Եւ պիտի ըլլայ ուր տեղ որ 26
իրենց ըսվեցաւ թէ՝ Դուք իմ ժողովուրդս չէք ,
ան տեղ անոնք կենդանի Աստուծոյ որդիքը պի-
տի ըսվին : Եսայի՝ ալ Իսրայէլին համար կրկան- 27
չէ . Թէև Իսրայէլի որդոց համրանքը ծովի ա-
զին պէս ըլլայ , միայն քիչ մը պիտի մնայ փրկը-
ւածը : Ինչու որ մէկ բան մը կարճ և համառօտ 28
արդարութիւնով . Հասն ալ Տէրը կարճ բան մը
պիտի ընէ երկրի վրայ : Եւ ինչպես Եսայիս կը- 29
սէ . Թէ որ զօրութեանց Տէրը մեզի զաւակ թո-

զուցած չըլլար նէ՝ Մոդամին պէս կըլլայինք մենք ,
ու Գոմորին կրնմանէինք :
30 Աւրեմն ինչ պիտի ընենք , եթէ Հեթանոսնե-
րը որ արդարութեան չէին հետեւէր՝ արդարու-
թեան հասան . ան արդարութեանը՝ որ հաւատ-
31քէն է : Իսրայէլը արդարութեան օրէնքին
ետեւէն էր , ու արդարութեան օրէնքին չի հա-
32սաւ : Ինչու համար . վասն զի չէ թէ հաւատքէն ,
հապա որպէս թէ օրինաց գործքերէն ուղղ ը-
նդունիլ . ինչու որ գայթակղութեան քարին
33վրայ գըրկեցան . ինչպէս որ գրված է . Ահա Սի-
ոնին մէջը գայթակղութեան քար մը կըդնեմ՝ ու
գըժրկելու ապառաժ մը . և ամէն ով որ անոր կը-
հաւատայ՝ չի պիտի ամչնայ :

ԳԼ · ՀԱ ·

1 Ա ղբայրներ՝ իմ սիրտիս փափաքը ու աղօթքը
առ Աստուած անոնց փրկութեան համար է :
2Ինչու որ ես կըվկայեմ անոնց համար , որ Աս-
տուծոյ նախանձաւորութիւնը ունին , բայց չէ
3թէ գիտնալով : Ինչու որ Աստուծոյ արդարու-
թիւնը չեն գիտեր , ու իրենցը կուզեն հաստա-
տել . անոր համար Աստուծոյ արդարութեանը
4չի հնազանդեցան : Վասն զի օրէնքին վախճանը
Քրիստոս է՝ ամէն հաւատացողներուն արդարու-
թեանը համար :
5 Մովսէս օրէնքէն եղած արդարութիւնը կը-
ստորագրէ , (Թէ որ մարդ անիկա կատարէ նէ՝ ա-
6նով պիտի ապրի : Իսայ հաւատքին արդարու-
թեանը համար ասանկ կըսէ . Մի ըսեր քու սրտ-
տիդ մէջը , ո՞վ պիտի երկինքը երթայ (այսինքն
7Քրիստոս իջեցնելու) կամ թէ՝ ո՞վ պիտի իջ-
նայ անդունդը , (այսինքն՝ Քրիստոս մեռելներէն
8հանելու) Հապա գիրքը ինչ կըսէ . Խօսքը մօտ
է քու բերնիդ մէջը , և քու սրտիդ մէջն է , այ-
սինքն՝ հաւատքին խօսքը որ մենք կըքարոզենք :

Ինչու որ՝ եթէ քու բերնովդ Տէր Յիսուսը խոս- 9
տովանիս , ու քու սրտիդ մէջը Հաւատաս , որ
Աստուած անիկա մեռելներէն յարուց , պիտի
փրկուիս ։ (ինչու որ սրտով կը Հաւատաք արդա- 10
րանալու , ու բերնով կը խոստովանիք փրկուելու)
Վասն զի գիրքը կըսէ ։ Ամէն ով որ անոր կը Հա- 11
ւատայ՝ չի պիտի ամրչնայ ։ Ինչու որ տարբերու- 12
թիւն չի կայ Հրէային ու Հեթանոսին մէջը ։
Վասն զի նոյն Տէրը է ամենուն վրայ , բաւական
ամենուն որ կը կանչեն անոր ։ Ինչու որ ով որ 13
Տէրոջը անունը կանչէ՝ պիտի փրկուի ։

Ուրեմն ինչպէս պիտի կանչեն անոր՝ որուն որ 14
չի Հաւատացին ։ կամ ինչպէս պիտի Հաւատան
անոր՝ որուն վրայով չի լսեցին ։ կամ ինտոր պիտի
լսեն առանց Հռչուն քարոզելուն ։ կամ ինչպէս 15
պիտի քարոզեն՝ թէ որ չի խրկըվին ։ Ինչպէս որ
գրված է , Ինտոր գեղեցիկ են խաղաղութիւն ա-
ւետարանողներուն՝ ու բարի բաներու աւետիս
տըվողներուն ոտքերը ։ Հայց ամենքը Հնազանդ 16
չեղան աւետարանին ։ Եսային կըսէ , Տէր՝ մեր
ձայնին ով Հաւատաց ։ Ինանկ է նէ Հաւատքը լսե- 17
լէն է , ու լսելը Քրիստոսի խօսքէն ։ Հայց կըսեմ , 18
Ի՞ թէ չի լսեցին մի ։ մանաւանդ որ ''բովանդակ
երկիր անոնց ձայնը ելաւ , ու անոնց խօսքը մինչև
աշխարհին ծայրերը'' ։ Հայց կըսեմ ։ Ի՞ թէ 19
Իսրայէլ չի լսեց մի ։ առաջ Մովսէս կըսէ ։ Ես
ձեզ նախանձի մէջ պիտի ձգեմ մէկ ոչինչ ժողո-
վուրդով մը , ու անխելք ազգով մը ձեզ պիտի
բարկացունեմ ։ Հայց Եսայի կըհամարձակի , ու 20
կըսէ ։ Ես անոնց գտնըվեցայ՝ որ իս չէին փնտը-
ռեր , յայտնի եղայ անոնց՝ որ իս չէին Հարցու-
ներ ։ Հայց Իսրայէլին կըսէ ։ Ամէն օր ձեռքս եր- 21
կընցուցի ան մարդկ չընազ ու դիմադարձ ժողո-
վուրդին վրայ ։

ԳԼ · ԺԸ ։

1 Աւրեմն կըսեմ , Ա՛ի թէ Աստուած իր ժողո-
վուրդը մէկ դի՞ ձգեց մի . քաւ լիցի . ինչու որ
ես ալ Իսրայէլացի եմ , Աբրահամին զաւակէն՝
2 Ենիամինի ցեղէն ։ Ա՛ոկ դի չի ձգեց Աստուած
իր ժողովուրդը՝ ան որ ինքը առաջուց ճանչցաւ .
չէք մի գիտեր Եղիային վրայօք գիրքը ինչ կը-
սէ . ինտր անիկա ամբաստանելէն կըսէ Աս-
3 տուծոյ՝ Իսրայէլին դէմ ըսելով . Տէր՝ քու մար-
գարէներդ կոտրտեցին , ու քու սեղաններդ կոր-
ծանեցին . մնակ ես մնացի , և իմ անձս կըփընդ-
4 տրեն ։ Խայց ինչ կըսէ անոր Աստուածային
պատասխանը . Ինծի թողուցի կըսէ եօթը հազար
մարդիկ , որ Բահաղին ծնրադրելէն չըրին ։
5 Անանկ ալ աս ատենս կան մնացածներ՝ որ շնորհ-
6 քին ընտրութեամբը եղան ։ Եւ թէ որ շնորհով ,
անանկ է՝ նէ ալ գործքերէն չէ . հապա թէ չէ՝
7 շնորհքը ալ շնորհք չըլլար ։ Աւրեմն ի՞նչ . Ա-
րայէլը չի հասաւ ան բանին որ կըփնտրէր , բայց
ընտրուածներուն հասաւ ան բանը . ու մկրանե-
8 րը կուրցան . ինչպես որ գրված է . Աստուած ա-
նոնց թմրութեան հոգի տուաւ . աչքեր՝ որ
անոնցմով չի պիտի տեսնան . ու ականջներ՝ որ
անոնցմով չի պիտի լսեն , մինչև աս ատենի օրս ։
9 Եւ Դաւիթ կըսէ . Անոնց սեղանները որոգայթ
թող ըլլայ , ու որս , և գայթակղութիւն , ու ի-
10 րենց հատուցում . աչքերնին խաւարի՝ որ չի
11 տեսնան , ու անոնց կռնակը միշտ վար ծռէ ։ Աւ-
րեմն կըսեմ . Անոր համա՞ր մի անոնք յանցանք
ըրին , որ կործանին . քաւ լիցի . հապա իրենց
յանցանք ընելովը՝ ՀԵԹԱՆոսաց փրկութիւն եղաւ .
12 որ զիրենք նախանձի մէջ ձգէ ։ Աւասի թէ որ ա-
նոնց յանցանքը աշխարհի մեծութիւն եղաւ , ու
անոնց չաղթվիքը Հեթանոսներուն մեծութիւն ,

ալ ոչքան էվելօք անոնց լռութիւնը ։ Ասպց ձեզի 13
կըսեմ Հեթանոսներուդ ։ Աղբսւի ժամանակ որ
Հեթանոսութեան առաքեալ եմ՝ իմ պաշտօնըս
կըփառաւորեմ ։ որ գուցէ անոնք որ իմ մարմի- 14
նումս են անոնք նախանձի մը մէջ ձգեմ , ու ա-
նոնցմէ մէկ քանին ապրեցունեմ ։ Աւ ասոնց որ մեռան 15
որ անոնց մէկ դի ձգվելը աշխարհին հաշտութիւն
է , հապա անոնց ընդունվելը ի՞նչ պիտի ըլլայ ,
թէ չէ՝ մեռելներէն կենդանի ըլլալ ։ Արդ թէ որ 16
առջի բերքը սուրբ է , նաև շաղ վրաձքը , և Ըն-
արմատը՝ անանկ է նէ ճիւղերն ալ ։ Թէ որ ոմն 17
ճիւղերէն մէկ քանին կոտրեցան , ու դուն որ վայ-
րենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պատուաստեցար ,
ու ձիթենիին արմատին և պարարտութեանը հա-
զորդ եղար , ճիւղերուն դէմ մի՛ պարծենար ։ 18
Հապա թէ որ պարծենաս՝ չէ թէ դուն արմատը
վեր բռներ ես , հապա արմատը քեզ ։ Արդեօք 19
պիտի ըսես , Ճիւղերը կոտրեցան՝ որ ես պատ-
ուաստիմ ։ Ղեկ է , անհաւատութեանով անոնք 20
կոտրեցան , ու դուն հաւատքով հաստատվեցար ,
մի՛ հպարտանար , հապա վախցիր ։ Ինչու որ՝ ե- 21
թէ Աստուած բուն ճիւղերուն չի խնայեց , գ-
ԷԷ՛ որ չըլայ թէ քեզի ալ չի խնայէ ։ Արտ՛ 22
նայէ Աստուծոյ անուշութիւնը , ու խըստութիւ-
նը ։ կործանվածներուն վրայ խստութիւնը՝ և
քուկին վրայ Աստուծոյ անուշութիւնը , թէ որ
ան անուշութեան մէջ կենաս նէ ։ Հապա թէ չէ՝
դուն ալ կըկտրըվիս ։ Եւ անոնք թէ որ նոյն 23
անհաւատութեան մէջ չի կենան նէ՝ կըպատուա-
ստին ։ ինչու որ կարող է Աստուած անոնք նո-
րէն պատուաստելու ։ Ինչու որ եթէ դուն բնա- 24
կան լեռանը ձիթենիէն կտրըվեցար , ու ան ազէկ
ձիթենիին վրայ որ ըստ բնական չէր՝ պատուաս-
տեցար , ալ ո՛քան էվելօք անոնք որ բնական
ճիւղեր են՝ կըպատուաստին իրենց ձիթենիին վրայ ։
Ղեմ ուզեր եղբայրներ՝ որ տգէտ ըլլաք աս խոր- 25

հաւրդիս , (որ ինքըզինքնիդ իմաստուն չի սեպէք)
որ ըստ մասին կատարեմուն եղաւ Իսրայէլին ,
26 մինչև որ հեթանոսներուն լրումեմուն մտնայ . և
ամբո բոլոր Իսրայէլ պիտի փրկըվի . ինչպես որ
գրված է . Սիոնէն պիտի գայ Փրկիչը , ու Յա-
կոբէն ամբարբշաւեմունները մէկ դի պիտի դար-
27 ցունէ . և ասա է իմ ուխտս անոնց , երբոր անոնց
28 մեղքերը վերցունեմ : Աւետարանին նայելով՝
անոնք Աստուծոյ թշնամիներն են ձեր պատճա-
ռովը . բնտրեմեանը նայելով՝ սիրելի են հայ-
29 րերնուն համար : Վասն որ Աստուծոյ շնորհքը
30 ու կոչումը առանց զղջանալու է : Ա ման զի ինչ-
պես որ դուք ալ մէկ ատեն մը Աստուծմէ ապըս-
տամբ եիք , ու հիմայ ողորմեմեան գտաք ա-
31 նոնց ապստամբեմեան պատճառովը . ասանկ ալ
անոնք հիմայ ապստամբ եղան , որ ձեզի եղած ո-
ղորմեմեան պատճառովը անոնք ալ ողորմե-
32 մեան գտնան : Վասն որ Աստուած ամենն ալ
անհաւատամեան մէջ արգիլեց , որ ամենուն ո-
ղորմի :
33 Ո՜վ Աստուծոյ մեծութեան ու իմաստութեան
ու գիտութեան խորունկութիւնը . ինչպէս ան-
քննելի են իր դատաստանները , ու չհասկըց-
34 վելու են իր ճամբաները : Վասն զի ո՞վ գիտցաւ
Տէրոջը միտքը , կամ անոր ո՞վ եղաւ խորհրդակից
35 եղաւ . կամ ո՞վ անոր փոխ տըւաւ , ու փոխարէ-
36 նը անկէց պիտի առնէ : Վասն որ ամէն բաները
անկէց՝ ու անով , և անոր համար են . իրեն փառք
յաւիտեանս . ամէն :

ԿԱ · ԺԱՆ :

1 Զնդի կաղաչեմ եղբայրներ՝ Աստուծոյ ողոր-
մութեամբը , որ ձեր մարմինները պատրաստէք
կենդանի զոհ մը՝ սուրբ , Աստուծոյ հաճելի , որ է
2 ձեր բանաւոր պաշտօնը . ու մի՛ կերպարանիք աս
աշխարհիս կերպարանքովը , հապա ձեր միտքին

նորոգուեցայք՝ որ դուք լաւը քըն-
նէք , և թէ ինչ է Աստուծոյ կամքը՝ ան որ լա-
րի ու հաճելի և կատարեալ ։ Ինձի տրված Աս- 3
տուծոյ շնորհքովը ասս կըսեմ բոլոր ձեր մէջը և
ղողներուն , որ արժանի եղածը մտմըտալէն աւե-
լի բան չի մտրըտաք . հապա զգաստ կենալու մըտ-
մըտացէք ինչպէս որ Աստուած ամէն մէկուն բաժ-
նեց հաւատքին չափը ։ Ինչպէս որ մէկ մարմինի 4
մէջ շատ անդամներ ունինք , ու ան ամէն ան-
դամները մի և նոյն գործը չունին · ասանկ ալ մենք 5
շատերնիս մէկ մարմին մըն ենք Քրիստոսով ,
բայց ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք ։
Աստի մենք կերպ կերպ պարգևներ ունինք՝ ան 6
շնորհքովը որ մեզի տրված է · թէ որ մարգարէու-
թիւն՝ հաւատքին չափովը ըսըծանէնք , թէ որ ծա- 7
ռայութիւն՝ ծառայութեան չափովը , թէ ան որ
կըսորվեցնէ՝ վարդապետութեան չափովը , թէ 8
ան որ կըմխիթարէ՝ մխիթարութեան չափովը ·
ան որ առատ է՝ ուրախութեամբ · ան որ վերա-
կացու է՝ ջանքով · ան որ կողորմի՝ ուրախ սրտով ։
Սէրը՝ առանց կեղծաւորութեան ըլլայ , չարը ա- 9
տելով՝ բարիին նեռնէն երթայով · եղբայրսիրու- 10
թեան մէջ մէկզմէկու վրայ գթած եղիք · պատիւ-
լու մէջ մէկզմէկէ անցէք · ջանքի մէջ՝ անձրկած 11
չըլլաք · Հոգիով բորբոքեցէք , Տէրոջը ծառայեցէք ·
յոյսով ուրախ եղիք · նեղութեան համբերեցէք · 12
աղօթքի տեւող կեցէք · սուրբերուն պէտք եղածին 13
խառնըվեցէք · հիւրասիրութեան եռանէ եղիք ։
Ձեզ հալածողները օրհնեցէք · օրհնեցէք՝ ու մի 14
անիծէք ։ Ուրախացողներուն հետ ուրախացէք · լա- 15
յողներուն հետ լացէք ։ Իրարու վրայ մի և նոյն 16
խորհուրդ ունեցէք · ամբարտաւանութիւն մի՛ ը-
նէք , հապա խոնարհներուն հետ խոնարհեցէք ·
Ինքզինքնիդ իմաստուն տեղ մի՛ դնէք ։ Վեչու- 17
թեան փոխարէն մէկուն գէշութիւն մի՛ ընէք ·
ամէն մարդու աղէկ սեպած բաները մտմըտացէք ։

18 թէ որ կարելի է նէ ձեզի՝ ամէն մարդու հետ խա-
19 դաղութիւն ունեցէք ։ Սիրելիք վրէժխնդրու-
թիւն մի՛ ընէք ձեր անձին համար · հապա բար-
կութեան տեղ տուէք · ինչու որ գրած է ,
Ս Ա՛ Վ ՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ ԻՄ Է , ՈՒ ԵՍ ՊԻՏԻ ՀԱՏՈՒ-
20 ցանեմ՝ կըսէ Տ Է Ր ։ Հապա թէ որ քու թշնամիդ
անօթեցնէր է , տուր անոր , և թէ որ ծարաւ
է՝ ջուր տուր անոր · ասով ընելով՝ կրակի կայծերը
21 անոր գլխուն վրայ կըդիզես ։ Չարէն մի՛ յաղթը-
վիր , հապա բարիով յաղթէ չարին ։

ԻԱ · ՀԴ ։

1 Ա՛ՄԷՆ մարդ որ իշխանութեան տակ է՝ հնազան-
դութեան մէջ թող կենայ · ինչու որ իշխա-
նութիւնը մէկ տեղէ մը չէ , միայն թէ Ա՛ստուծ-
մէ · և անոնք որ կան՝ Ա՛ստուծմէ կարգուած են ։
2 Ա՛նանկ է նէ՝ ով որ իշխանութեան դէմ կրկենայ՝
Ա՛ստուծոյ հրամանին դէմ կրկենայ · և անոնք որ
դէմ կրկենան՝ իրենց վրայ դատապարտութիւն
3 կընդունին ։ Ինչու որ իշխանները բարի գործ-
քերուն վախ տրվող չեն , հապա չարերուն · կու-
զես չի վախնալ՝ ան իշխանութենէն բարի գործէ ,
4 ու անկէց գովութիւն պիտի ընդունիս · ինչու որ
անոնք Ա՛ստուծոյ սպասաւորն է՝ քեզի բարիի հա-
մար · հապա թէ որ դուն չար կըգործես՝ վախ-
ցիր · ինչու որ դատարկ տեղը անիկա մէջքը թուր
չէ կապեր · Ա՛ստուծոյ սպասաւորն է՝ վրէժխնդ-
րող բարկանալու անոր վրայ որ չար կըգործէ ։
5 Ա՛սոր համար պէտք է հնազանդ ըլլալ , չէ թէ
միայն բարկութենէն համար՝ հապա խղճմտան-
6 քին համար ալ ։ Ա՛սոր համար է՛ որ տուրք ալ
կուտաք · ինչու որ Ա՛ստուծոյ սպասաւորներն են
7 միշտ ան բանին վրայ կենալու ։ Ա՛նանկ է նէ՝ հա-
տուցէք ձեր պարտքը ամէնուն · որուն որ տուրք
պատճառ է՝ տուրքը · որուն որ մաքս՝ մաքսը · որուն
որ վախ՝ վախնալը · որուն որ պատիւ՝ պատիւը ։

Եւ մէկուն պարտական մի՛ գանըմիւք , միայն թէ 8
մէկըզմէկ սիրելու . վասն զի ով որ ընկերը կըսի-
րէ , անիկա օրէնքը կրկատարէ . Նաև՝ որ ան 9
մի՛ շնար , ու մի՛ սպանաներըր , և մի՛ գողնա-
րը , ու մի՛ սուտ վկայութիւն ընկերը , և մի՛ ցան-
կարը . և թէ ուրիշ պատուէր մրն ալ կայ՝ աս
խօսքին մէջ ըսուըրը կըբովանդակվի , թէ Կու ըն-
կերդ քու անձիդ պէս սիրես ։ Սիրը իր ընկերին 10
գէշութիւն չընէր . օրէնքին բովանդակութիւնը
սէրն է ։ Եւ ասիկա գիտցէք ատենիս համար , որ 11
հիմայ ժամանակ է մեզի քունէն արթննալու . ին-
չու որ հիմայ մեռ է մեզի փրկութիւնը քան թէ
ան ատենը՝ որ հաւատացինք ։ Վախերը մէկ դի 12
գնաց , ու ցորեկը մօտեցաւ . ասկէ եւսև մէկ դի ը-
նենք խաւարին գործքերը , ու զրահիս հագնինք
լոյսին զէնքերը ։ Սրպէս թէ ցորեկ ատեն զգաս- 13
տութեամբ պըտրտինք . չէ թէ անառակութիւն-
ներով՝ ու գինովութիւններով , և չէ թէ խառ-
նակ անկողիններով՝ ու պղծութիւններով , և չէ
թէ նախանձութիւնով ու հակառակութիւնով ։
Հապա զրահիդ հագէք Տէր Յիսուս Քրիստոսը 14
ու մարմինուդ խնամը մի՛ տանիք ցանկութիւնով ։

ԳԼ. ՀՌ։

Ձայց հաւատքին մէջը տկար եղողը ընդունեցէք՝ 1
չէ թէ տարակուսական որոշմունքներով ։
Մէկը կըհաւատայ՝ որ ամէն բան կրնայ ուտել . 2
և ան որ տկար է կանանչեղէն կուտէ ։ Ան որ 3
կուտէ՝ չուտողը թող չանարգէ . ու ան որ չու-
տէր՝ ուտողը թող չի դատէ . ինչու որ Աստուած
անիկա ընդունեց ։ Դուն ով ես որ ուրիշին ծա- 4
ռան կըդատես . իրեն Տէրոջը կըկենայ՝ կամ կը-
նայ . բայց պիտի կենայ , ինչու որ Տէրը կարող
է անիկա հաստատել ։ Մէկը մէկ օրը մեկալ օ- 5
րէն աւելի կըսեպէ , ու մեկալը ամէն օր նո՛ կըսե-
պէ . թող ամէն մարդ իր միտքը հաստատէ ։ Ան 6

որ կըՀոգայ օրը , Տէրոջը կըՀոգայ · և ան որ չի
Հոգար օրը , Տէրոջը չի Հոգար · ու ան որ կուտէ՝
Տէրոջը կուտէ , ու Աստուծմէ կըգոհանայ · և ան
որ չուտեր՝ Տէրոջը չուտեր , ու Աստուծմէ կը-
7գոհանայ : Ինչու որ մեզմէ մէկը ինքըզինքին Հա-
մար չապրիր , ու ինքըզինքին համար չի մեռնիր :
8Թէ որ ապրինք՝ Տէրոջը համար կապրինք · և թէ
որ մեռնինք՝ Տէրոջը համար կըմեռնինք · անանկ
է նէ՝ թէ որ ապրինք , և թէ որ մեռնինք՝ մենք
9Տէրոջն ենք : Ինչու որ՝ Քրիստոս ալ անոր
համար մեռաւ՝ ու ապրեցաւ , որ առ Հասարակ
10մեռելներուն ու կենդանիներուն իշխէ : Դուն ին-
չու քու եղբայրդ կըդատես , կամ ինչու քու եղ-
բայրդ կըքամահըներս · վասն զի ամենքնիս ալ
Քրիստոսի առեւանին առջեւը պիտի կայնինք :
11Ինչու որ գրված է · Ես կենդանի եմ՝ կըսէ Տէ-
րը , որ ամէն ծունկ ինծի պիտի ծռի , և ամէն
12լեզու Աստուծոյ պիտի խոստովանի : Ուրեմն մեզ-
մէ ամէն մէկը Աստուծոյ Հաշիւ պիտի տայ իր ան-
13ձին համար : Ուստի ալ մէկզմէկ չի դատենք ·
Հապա էվելըօք ասիմվընիդ զրէք՝ գայթակղու-
14թիւն չի դնել եղբօրը : Ես գիտեմ՝ ու Տաստատ-
ված եմ Ցիսուս Քրիստոսով , որ ինքիրմէն մէկ
15բան մը պիղծ չէ · բայց ան՝ որ պիղծ կըսեպէ մէկ
բան մը , անոր պիղծ է ան : Ապա թէ որ ու-
րախութիւդ համար քու եղբայրդ տրտմի , ալ դուն
սիրով չի վարվեցար · քու կերակուրովդ մի՛ կոր-
սընցուներ անիկա , որուն համար որ Քրիստոս
16մեռաւ : Ձեր բարիին վրայ չըլլայ որ չար խօսին :
17Ինչու որ Աստուծոյ արքայութիւնը կերակուր
ու խմելիք չէ , հապա արդարութիւն ու խնդու-
18թիւն և խաղաղութիւն Հոգիով Սրբով : Ան-
դր թէ որ մէկը ասանկ բանին մէջ Քրիստոսի կըծա-
ռայէ , անիկա Աստուծոյ Հաճելի է՝ ու մարդիկ-
19ներուն գովելի : Ուստի է նէ ասկէ ետև խաղա-
ղութեան՝ ու մէկզմէկու օգտին ետևէն իրթանք :

Ընդլայ որ կերակուրին պատճառովը Աստուծոյ 20
գործը քակես . ամէն բան սուրբ է . միայն թէ ան
մարդուն է գէշ՝ որ խղճմտանքով կուտէ : Ուղիկ 21
է միս չուտել , և գինի չի խմել , ու ոչ ան բանը
ընել որ անով քու եղբայրդ կրգայթակղի՝ կամ
կրգլորի՝ կամ կրտկարանայ : Դուն հաւատդ ու- 22
նիմ մի . առանձին Աստուծոյ առջևը բանէ . երանէկ
անոր՝ որ իր անձը չի դատապարտեր անով՝ որով
ընկերը կրփորձէ : Ուայց ան որ խղճմտանք կրնէ՝ 23
թէ որ ուտէ նէ կրդատապարտուիլ . պատճառը
որ չէ թէ հաւատքով կուտէ . ինչու որ ինչ բան
որ հաւատքով չէ նէ՝ ան մեղք է : Ուայց ան որ 24
կարող է ձեզ հաստատել իմ աւետարանիս պէս ,
ու Յիսուս Քրիստոսի քարոզութեանը պէս , ան
խորհուրդին յայտնութեանն պէս , որ յաւիտենա-
կան ատեններէն ի վեր ծածկուած էր , և հիմայ 25
յայտնուեցաւ մարգարէական գիրքերով , յաւի-
տենական Աստուծոյ հրամանովը՝ ամէն ազգե-
րուն ծանչցուեցաւ հաւատքի հնազանդե-
լու համար . Ա՛ի միայն իմաստուն Աստուծոյ՝
Յիսուս Քրիստոսի ձեռքովը փառք յաւիտեանս .
ամէն :

ԳԼ. ԺԵ

Պէտք է մեզի՝ որ կարող ենք , տկարներուն 1
տկարութիւնը վերցունել . և չէ թէ մինակ
մեր անձին հաճոյ ըլլալ : Ամէն մեզմէ ամէն 2
մէկիկնիս ընկերին հաճոյ թող ըլլայ բարի բա-
ներուն մէջ՝ շինուելու համար : Ինչու որ Քրի- 3
ստոս ալ չէ թէ իր անձին հաճոյ եղաւ , հապա
ինչպէս որ գրված է . Քեզ նախատողներուն նա-
խատինքը իմ վրաս իյնաւ : Ամէն ինչ որ 4
գրվեցաւ նէ մեր սորվելուն համար գրվեցաւ , որ
համբերութիւնով ու գիրքերուն մխիթարելովը
յոյս ունենանք : Ուայց համբերութեան և բոլոր 5
մխիթարութեան Աստուածը տայ ձեզի իրարու

հետ մի և նոյն խորհուրդ ունենալ Յիսուս Քրիստոսի հանդէպ այս. որ միաբանութեամբ մէկ բերան փառաւորէք Աստուած՝ ու մեր Տէրոջը
7 Յիսուս Քրիստոսի Հայրը։ Սոր համար մեզ կրզմէկ ընդունեցէք, ինչպէս որ Քրիստոս ալ ձեղ ընդունեց Աստուծոյ փառքին։
8 Ասոյց կըսեմ թէ Քրիստոսի թլփատութեան պաշտօնեայ բլլալը Աստուծոյ ճշմարտութեանը համար էր, որ նախնեաց ըսուած խոստումները
9 հաստատէ. սակայն հեթանոսները ողորմութեան համար գԱստուած փառաւորեն. ինչպէս որ գրուած է. Ասոր համար քեզմէ կրդոհանամ հեթանոսներուն մէջ, ու քու անունիդ սաղմոս կերգեմ։ Եւ դարձեալ կըսէ թէ, Ուրախ եղէք
11 հեթանոսնե՛ր անոր ժողովրդեանը հետ։ Եւ դարձեալ թէ, Օրհնեցէք Տէրը բոլոր հեթանոսներ, ու գովեցէք անիկա ամէն ժողովուրդներ։ Եւ դարձեալ Եսայի կըսէ. Յեսսէին արմատ մը պիտի բլլայ, ու ան որ հեթանոսներուն իշխան պիտի կայնի, անոր հեթանոսները պիտի յուսան։ Ասոյց յուսոյ Աստուածը ձեղ լեցունէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղութիւնով, որ առատանաք յուսով՝ Հոգւոյն Սրբոյ զօրութեամբը։
14 Ես ալ ինքնիրենս համոզուած եմ ձեղի համար՝ իմ եղբայրներս, որ դուք լեցուն էք բարութիւնով, լեցուն էք ամէն գիտութիւնով. և
15 կրնաք մէկզմէկ խրատել։ Սակայն համարձակաբար գրեցի ձեղի իմ եղբայրներս՝ շատեն քիչը, որպէս թէ միտքերնիդ ձգեմ ան շնորհքին վրայով՝ որ Աստուծմէ ինծի տրուած է. Յիսուս Քրիստոսի սպասաւոր բլլալուս հեթանոսներուն մէջը Աստուծոյ աւետարանը քահանայութիւն ընելուս, որ հեթանոսներուն ընծան ընդունելի բլլայ՝
17 Հոգւով Սրբով սրբըվելով։ Սոկէ ետև Աստուծոյ քով պարծանք ունիմ Քրիստոս Յիսու-

սի ձեռքով : Ինչու որ չեմ համարձակիր խօսիլ 18
Քրիստոսի իմին ձեռքովս չի գործած բաներըը
Հեթանոսներըը հնազանդեցունելու համար՝ խօս-
քով ու գործքով , նշաններու ու հրաշքներու 19
ուժով , Հոգւոյն Սրբոյ զօրութիւնով , անտեղ
որ ես Երուսաղէմէն սկսած և շրջան ընելով մին-
չև Իլլիւրիկեցոց կողմերը Քրիստոս աւետարանե-
լը լեցուցի : Այնպէս ջանացի աւետարանը քարո- 20
զելու . չէ թէ ուր որ Քրիստոսի անունը լսուած
ըլլար , որ չըլլայ՝ որպէս թէ ուրիշ հիմի վրայ
շինեմ . հապա ինչպէս որ գրուած է , Թէ Որոնց 21
որ չի պատմուեցաւ անոր համար՝ պիտի տեսնան .
ու որոնք որ չի լսեցին նէ պիտի խմանան : Այնո 22
համար շատ խափանուեցայ ձեզի գալու : Հայց 23
հիմայ ես կողմերը ինծի ալ տեղ չի կայ . ու շատ
տարիներէ ի վեր խիստ կրկին ձեզի գա-
լու . երբոր դէպի Սպանիա անցնիմ , կրնամ 24
անոնց երթալու առիթս ձեզ տեսնել , ու ձեզմէ
հեռ իրկըլլել , Թէ որ առաջուց քիչ մը ձեզմով
լեցուիմ նէ : Հայց հիմայ Երուսաղէմ կերթամ 25
սուրբերուն սպասաւորելու : Վասն զի Մա-կե- 26
դոնացիները ու Քայեցիները յօժարեցան որ՝
Երուսաղէմի մէջ եղած աղքատ սուրբերուն քիչ
մը հաղորդութիւն բնեն : Յօժարեցան , ինչու որ 27
անոնց պարտական ալ են . վասն զի Թէ որ անոնց
հոգեւոր բաներուն հաղորդ եղան Հեթանոսնե-
րը , կըպարտաւորին որ անոնց մարմնաւոր բաներ-
րուն ալ կարդ ընեն : Ուրեմն ասիկա կատարե- 28
լով՝ ու կնքելով անոնց պտուղը , ձեզմէ Սպանիա
կանցնիմ : Ես գիտեմ , որ իմին ձեզի գալու ա- 29
տենն՝ Քրիստոսի աւետարանին լեցուն օրհնու-
թիւնովը պիտի գամ : Ձեզի կաղաչեմ եղբայր- 30
ներ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը , ու
Հոգւոյն սիրովը , որ ինծի հետ պատերազմակից
ըլլաք իւր աղօթքներուն մէջ առ Աստուած ինծի
համար . որ Հրէաստանի մէջ եղող ապստամբնե- 31

բէն ազատվիմ , ու իմ Երուսաղէմի Համար ընդ-
ՀԸ- սպասաւորութիւնս սուրբերուն ընդունելի
32 ըլլայ · որ ուրախութիւնով Աստուծոյ կամքովը
33 ձեզի գայով՝ Հանգչիմ ձեզի Հետ : Եւ խաղաղու-
թեան Աստուածը ձեր ամենուդ Հետ ըլլայ ·
ամէն :

ԳՂ· ԺՀ·

1 Չեզի կ՚յանձնեմ մեր Փիբէ քոյրը , որ Կենք-
2 բոցոց եկեղեցիին սպասաւորն է · որ անկա
ընդունիք Տէրոջմով՝ ինծոր որ սուրբերուն ար-
ժան է , և անոր խնամք տարէք՝ ինչ բանի պէտք
ըլլայ ու ձեզ կանչէ նէ · ինչու որ անիկա ալ
շատերուն վերակացու եղաւ , ու ինծի ալ բոլո-
3 րովին : Ներա տվէք Պրիսկային ու Ակիւղասին
4 Քրիստոս Յիսուսով իմ գործակիցներուս · (ո-
րոնք իմ կեանքիս Համար իրենց վիզերը տվին ·
որ անոնցմէ չէ թէ մինակ ես շնորհակալ կ՚ըլլամ ,
Հապա Հեթանոսներուն բոլոր եկեղեցիները ալ ·)
5 և անոնց տանը մէջի եկեղեցիին ալ · Ներա տվէք
Եպինետոս իմ սիրելիիս , որ Ասիացոց առջի պը-
6 տուղն է Քրիստոսով : Ներա տվէք Մարիա-
7 յին , որ ձեր վրայ շատ աշխատեցաւ : Ներա տը-
վէք Անդրոնիկոսին ու Յունիայինի իմ ազգակա-
ներուս , և Հետս գերի եղողներուն , անոնք որ
առաքեալներուն մէջը երևելիներ են · որոնք ինծ-
8 մէ՛ ալ առաջ Քրիստոսի եղան : Ներա տվէք
9 Ամպղիոս իմ սիրելիիս՝ Տէրով : Ներա տվէք
Ուրբանոս իմ գործակիցիս՝ Տէրով , ու Ստաքիս
10 իմ սիրելիիս : Ներա տվէք Ապելէսին՝ որ ընտ-
11 րեալ է Տէրով : Ներա տվէք անոնց որ Արիս-
տաբուղոսի տունէն են · բարև տվէք Հերովդիոն
իմ ազգականիս · բարև տվէք անոնց՝ որ Նար-
12 կիսոսին տունէն են Տէրով : Ներա տվէք Տը-
րիփոնէին ու Տրիփոսէին՝ որ կաշխատին Տէրով ·
բարև տվէք Պերսիդէ սիրելիին , որ շատ աշխա-

տեցաւ Տէրով ։ Խարև տրվէք Իւտիոս Տէրով 13
ընտրվածին, ու անոր մօրը՝ և իմին ։ Խարև 14
տրվէք Ասինկրիտէսին, Փղեգոնտէսին, Երմա-
սին, Պատրոբասին, Երմէսին, ու անոնց հետ
եղող եղբայրներուն ։ Խարև տրվէք Փիլողոգո- 15
սին, ու Ցուլիային, Նկրէոսին, ու անոր քրո-
ջը, և Ոլիմպասին, ու անոնց հետ եղող բոլոր
սուրբերուն ։ Խարև տրվէք իրարու՝ սրբութեան 16
համբուրով . բարև կուտան ձեզի Քրիստոսի
բոլոր եկեղեցիները ։

Աղաչեմ ձեզի եղբայրներ, որ գիտնաք ա- 17
նանկները՝ որ ձեր սորված վարդապետութենէն
դուրս ներձուածողութիւն ու գայթակղութիւն
կընեն . և անոնցմէ ետ կեցէք ։ Ինչու որ անանկ- 18
ները մեր Տէր Քրիստոսին չեն ծառայեր, հապա
իրենց որովայնին . ու անուշ խօսքերով և գո-
վաբանքով անմեղներուն սիրտերը կրնաբեն ։
Որովհետև ձեր հնազանդութիւնը ամէնուն հա- 19
սած է . ուստի ձեր վրայ ուրախ եմ . բայց կու-
զեմ որ դուք իմաստուն ըլլաք բարիին, ու ան-
մեղ՝ չարին ։ Եւ խաղաղութեան Աստուածը 20
ջարդուբուրդ ընէ Սատանան շուտով ձեր ոտքին
տակը . մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը
ձեր հետն ըլլայ ։

Խարև կընէ ձեզի Տիմոթէոս եղբայրը ու իմ 21
գործակիցս, և Ղուկիոս՝ ու Յասոն՝ և Սոսի-
պատրոս իմ ազգականներս ։ (Խարև կընեմ ձեզի 22
ես ալ Տերտիոս, որ այս թուղթը գրեցի Տէ-
րով ։) Խարև կընէ ձեզի Գայիոս, իմ և բոլոր 23
եկեղեցիին վանատուրը . Խարև կընէ ձեզի Ե-
րաստոս քաղաքիս կառավարը, ու Կուարտոս եղ-
բայրը ։ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը 24
ձեր ամէնուդ հետը . ամէն ։

Ցայն մեր որ կարող է ձեզ հաստատել իմ ա- 25
ւետարանիս պէս, ու Յիսուս Քրիստոսի քարո-
զութեանը պէս, այն խորհուրդին յայտնըվելուն

պէս , որ յաւիտենական տաճարներէն ի վեր ծած-
26 կըված էր , և հիմայ յայտնըվեցաւ մարգարէա-
կան գիրքերով , յաւիտենական Աստուծոյ հրա-
մանովը՝ ամէն Հեթանոսներուն ճանչցըվեցաւ հա-
27 ւատքի հնազանդելու համար . մի միայն իմաստուն
Աստուծոյն՝ Հիսուս Քրիստոսի ձեռքովը ,
փառք յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Կորընթիոսէն Հռոմայեցիներուն գրվեցաւ ,
ու Կրկէեայ— Փիբէ Մարկաւագին
ձեռքովը :

ՊՕՂՈՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՈՒՂԹՔ ԸՆԴ

ԿՈՐՆԹԱՑԻՍ։

ԳԼ. Ը։

Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ ըստ կանչուած Աստուծոյ կամքովը , ու Սոսթենէս եղբայրը , Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին՝ Քրիստոս Յիսուսի ընծայուածներուն՝ սուրբեր ըլլալ կանչուածներուն , ան ամէնուն հետ՝ որ ամէն տեղ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը կը կանչեն , իրենցը ու մերը : Ձեզի շնորհք՝ և խաղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիստոսէն :

Ամէն ատեն իմ Աստուծմէս ձեզի համար կը գոհանամ՝ ան Աստուծոյ շնորհքներուն վրայ , որ ձեզի տրուած են Քրիստոս Յիսուսով . (որ դուք անով ամէն բանի մէջ հարուստցաք ամէն խօսքով՝ ու ամէն գիտութիւնով . ինչպէս Աստուծոյ վկայութիւնն ալ ձեր վրան հաստատ եղաւ . որ

դուք չի նըւաղիք՝ ոչ մէկ շնորհքով մըն ալ , մեր
ՏԷր Յիսուս Քրիստոսի յայտնըվելուն սպասե-
8լով ։) որ ձեզ նաև պիտի հաստատէ մինչև վեր-
ջը՝ ոչ անարատ ըլլա՛ մեր ՏԷր Յիսուս Քրիստո-
9սի օրը ։ Հաւատարիմ է Աստուած , որ իրմով
դուք կանչըվեցաք հաղորդ ըլլալու իր Որդւոյն՝
մեր ՏԷր Յիսուս Քրիստոսին ։
10 Ձեզի կաղաչեմ՝ եղբայրներ՝ մեր ՏԷր Յիսուս
Քրիստոսի անունովը , որ ու և նոյն խօսքը ունե-
նաք ամէնքնիդ , և բաժանմունք չըլլայ ձեր մէջը ։
ինչու որ դուք մէկ միտքի ու մէկ խորհուրդի վրայ
11 հաստատուած էիք ։ Ձեզի համար ինծի յայտնը-
վեցաւ եղբայրներ՝ ան Քղուացիներէն , որ ձեր
12 մէջը հակառակութիւն կայ ։ Ասիկա կ՚ըսեմ ձեզ-
մէ , որ ձեզմէ ամէն մէկերնիդ կըսէ եղեր թէ ,
Ես Պօղոսեան եմ , ու մէկալը՝ թէ Ես Ապողոս-
եան , և ուրիշը՝ թէ Ես Կեփասեան , ու միւսը՝
13 թէ Ես Քրիստոսեան ։ Իսկ արդ Քրիստոս բա-
ժանուա՞ծ է մի ։ մի թէ Պօղոս խաչը եղաւ ձեզի
համար , կամ թէ Պօղոսի անունո՞վը մկրտուե-
14 ցաք ։ Գոհութիւն իմ Աստուծոյս , որ ձեզմէ մէ-
կը չի մկրտեցի , միայն թէ Կրիսպոսը ու Գայիո-
15 սը ։ որ մէկը չըսէ , թէ իմ անունովս մկրտուե-
16 ցաք ։ Ստեփանէին ընտանիքին ալ մկրտեցի ։ ուրիշ
մէկը չեմ գիտեր թէ ամենևին մկրտեցի ։
17 Ինչու որ Քրիստոս իս մկրտելու չէր խրկեց ,
հապա աւետարանը քարոզելու ։ չէ թէ խօսքերու
ճարտարութիւնով , որ Քրիստոսի խաչը ոչինչ
18 չըլլայ ։ Ինչու որ խաչին քարոզութիւնը կորուս-
եալներուն յիմարութիւն է ։ բայց մեզի փրկը-
19 վածներուս Աստուծոյ զօրութիւն է ։ Վասն զի
գրված է ։ Իմաստուններուն իմաստութիւնը պի-
տի կորսընդունեմ , ու խելացիներուն խորհուրդը
20 պիտի արհամարհեմ ։ Ո՞ւր է իմաստունը , ո՞ւր է
կարդացողը , ո՞ւր աս աշխարհիս քննողը ։ Աստ-
ուած յիմար չի ցուցո՞ւց մի աս աշխարհիս իմաս-

տութիւնը : Վ՚ասն ոչ որովհետեւ Աստուծոյ ի- 21
մաստութիւնովը աշխարհ չի ճանչցաւ զաստուած
իմաստութիւնով , Աստուած հաճեցաւ քարոզու-
թեան յիմարութիւնովը հաւատացեալները ապ-
րեցուցանել : Եւ որովհետեւ Հրեաները նշան կու- 22
զեն , ու Հեթանոսները իմաստութիւն կրտինը-
ռեն . մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը՝ 23
Հրեաներուն գայթակղութիւն , ու Հեթանոս-
ներուն յիմարութիւն . բայց անոնց՝ որ կանչը- 24
ված են , Հրեաներուն ու Հեթանոսներուն ,
Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւն , և Աստուծոյ
իմաստութիւն : Ինչու որ Աստուծոյ յիմարը 25
մարդիկներէն էվելի իմաստուն է . և Աստուծոյ
տկարը մարդիկներէն էվելի զօրաւոր է : Ըդաւրեւ 26
դուք ձեր կոչումը կրտեսնաք Եղբայրներ , որ
չէ թէ մարմնոյ կողմանէ շատ իմաստուններ , և
չէ թէ շատ զօրաւորներ , և չէ թէ շատ ազնուա-
կաններ կանչեցան . Հապա Աստուած աշխար- 27
հիս յիմարները ընտրեց , որ ամօթով բնէ իմաս-
տուները . ու աշխարհիս տկարները ընտրեց
Աստուած , որ ամօթով բնէ զօրաւորները . ու 28
աշխարհի ցածագիները և անարգները ընտրեց
Աստուած՝ և ոչինչները , որ բան մը կղզիները
խափանէ . որ մէկ մարմին մը չի պարծի Աստուծոյ 29
առջին : Ինչու որ անկէց էք դուք Քրիստոս Յի- 30
սուսի ձեռքով , որ ան մեզի Աստուծմէ իմաստու-
թիւն՝ արդարութիւն՝ ու սրբութիւն՝ և փրկու-
թիւն եղաւ . որ ինչպէս գրված է , թէ՝ Ան որ 31
կը պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ :

Գ Լ .

Ա ու ես եղբայրներ՝ որ ձեզի եկայ , չէ թէ իմաս- 1
տուն խօսքերուն առաւութիւնով մը Աստու-
ծոյ վկայութիւնը ձեզի պատմելու : Ինչու որ ես 2
միտքս չի դրի ձեր մէջը ուրիշ բան մը գիտնալ ,
միայն թէ Յիսուս Քրիստոսը , ու ան խաչը և-

3լաե ։ Եւ ես տկարութիւնով՝ ու վախով և շատ
4դողով՝ ձեր քովը կեցայ ։ ու իմ խօսքս և քարո-
զութիւնս չէ թէ հմտութեան խա-
բէական խօսքերով էր , հապա Հոգիին գործքե-
5րովը ու զօրութիւնովը ։ որ ձեր հաւատքը մար-
դոց իմաստութիւնովը չըլլայ , հապա Աստուծոյ
6զօրութիւնովը ։ Խոյս կատարեալներուն հետ ի-
մաստութիւն կը խօսինք ։ ոչ աս աշխարհիս իմաս-
տութիւնը , ու ոչ աս աշխարհիս ոչընչանալու
7իշխաններուն ։ հապա Աստուծոյ ծածուկ իմաս-
տութիւնը կը խօսինք խորհուրդով , որ աշխար-
հէն առաջ սահմանեց Աստուած մեր փառքին հա-
8մար ։ որ անիկա աս աշխարհիս իշխաններէն մէկը
չի ճանչցաւ ։ որ թէ ճանչցած ըլլային՝ ալ փա-
9ռաց Տէրը խաչ չէին հաներ ։ հապա ինչոր որ
գրված է ։ Ին բանները որ աչք չէ տեսեր՝ և ա-
կանջ չէ լսեր , ու մարդու սրտին մէջ չէ ինկեր ,
10Աստուած իր սիրելիներուն պատրաստեց ։ Խոյս
մեզի Աստուած յայտնի ըրաւ իր Հոգւովը ։ ին-
չու որ Հոգին ամէն բան կրքննէ , Աստուծոյ
11խորունկ բաներն ալ ։ Վ ան զի մարդկիներէն
ով գիտէ մարդուն բաները , միայն թէ մարդուն
հոգին որ իր մէջն է ։ անանկ ալ Աստուծոյ բա-
ները մեկը չի գիտեր , միայն թէ Աստուծոյ Հո-
12գին ։ Խոյս մենք չէ թէ աս աշխարհիս հոգին ա-
ռինք , հապա ան հոգին՝ որ Աստուածմէն է ։ որ
մենք ձանչնանք ան բաները՝ որ Աստուածմէ տրվե-
13ցաւ մեզի ։ Եւ ան բաները որ կրխօսինք՝ չէ թէ
մարդու սորվեցուցած վարպետութեան խօսքերո-
վը , հապա Հոգիին վարդապետութիւնովը հո-
գևոր բաները հոգևորի հետ կբաղդատենք ։
14Վ ան զի հոգևոր շունչ ունեցող մարդը Աս-
տուծոյ Հոգիին բաները չի ընդունիր ։ ինչու որ
ան իրեն յիմարութիւն մըն է ։ ու չի կրնար ալ
գիտնալ՝ որ հոգևոր կերպով պիտի քննըվի ։
15Խոյց ան որ հոգևոր է՝ ամէն բան կրքննէ , ու

ինքը մեկէ մը չի քննուիր ։ Ուստի՝ ով գիտցաւ 16
Տէրոջը միտքը, որ անոր խրատ տուողը ալ ըլլայ ։
բայց մենք Քրիստոսի միտքը ունինք ։

Դ։

Ես ես ուզեցայրներ՝ չի կրցայ խօսիլ ձեր հետը 1
որպես թէ հոգեւորներու հետ, հապա որպես
թէ մարմնաւորներու հետ ։ Որպէս թէ Քրիս- 2
տոսի տղայոց՝ ձեղի կաթ կերցուցի, և չէ թէ
կերակուր. ինչու որ դեռ կարող չէիք. որ հիմայ
ալ տակաւին կարող չէք. վասն զի դեռ մարմնա-
ւոր էք ։ Որովհետև տակաւին ձեր մէջը նախա- 3
նձուելիութիւն կայ. չէ՞ որ մարմնաւոր էք, ու
կը պտրտիք կերթաք ։ Երբոր ձեղմէ մեկը կըսէ, 4
Ես Պօղոսեան եմ, և մեկալը թէ, Ես Ապողո-
սեան. չէ՞ որ մարմնաւոր էք ։ Ուրեմն ի՞նչ է 5
Պօղոսը՝ կամ ի՞նչ է Ապողոսը. պաշտօնեաներ են,
որոնցմով հաւատացիք. և ինչպէս որ Տէրը տըւաւ
ամեն մեկուն ։ Ես տնկեցի, Ապողոսը ջուր
տըւաւ, բայց Աստուած աճեցուց ։ Ուստի ան- 7
որ տնկողը մեկ բան մըն է, ու ոչ ան ջուր տըվո-
ղը, հապա Աստուած՝ որ աճեցուց ։ Տընկողը ու 8
ջուր տըվողը մեկ են. բայց ամէն մեկը իր վարձքը
պիտի առնէ իր աշխատութեանը չափովը ։ Ինչու 9
որ մենք Աստուծոյ գործակից ենք, դուք Աս-
տուծոյ պտուղն էք, Աստուծոյ շինվածքն էք ։
Աստուծոյ ինծի տրված շնորհագ չափովը՝ խոհ- 10
ուն ճարտարապետի մը պէս հիմ դրի. բայց շի-
նողը ուրիշ է. միայն թէ ամեն մեկը թող դուռ-
շանայ՝ թէ ինչո՛ր կը շինէ ։ Ինչու որ մէկը ալ 11
ուրիշ հիմ չի կրնար դնել դրվածէն ի զատ, որ
է Յիսուս Քրիստոս ։ Թէ որ մեկը աս հիմին 12
վրայ կը շինէ ոսկի, արծաթ, պատուական քա-
րեր, փայտ, խոտ, եղէգ, ամեն մեկուն գործը 13
յայտնի պիտի ըլլայ. ինչու որ օրը պիտի ընտրէ,
ինչու որ կրակով պիտի յայտնըվի. և ամեն մէ-

կուն գործը ինչպէս որ ըլլայ՝ կրակը պիտի փոր-
14 ձէ : Թէ որ մէկուն շինած գործը ՝ճարլու ըլլայ՝
15 ինքը վարձք պիտի առնէ · Եւ թէ որ մէկուն շինա-
ծը էրելու ըլլայ՝ անիկա պիտի վնաս քաշէ · բայց
ինքը պիտի ապրի · սակայն անանկ իբր թէ կրակին
16 միջը : Ձեք գիտէր դուք՝ որ Աստուծոյ տաճար
էք , ու Աստուծոյ Հոգին ձեր միջը բնակած է :
17 Թէ որ մէկը Աստուծոյ տաճարը կապականէ՝
Աստուած անիկա պիտի ապականէ · ինչու որ
Աստուծոյ տաճարը սուրբ է · որ դուք էք :
18 Ըրլայ որ մէկը ինքզինքը խաբէ · թէ որ կու-
զէ ձեզմէ մէկը աս աշխարհիս մէջ իմաստուն ըլ-
լալ , թող հիմար ըլլայ՝ որ իմաստուն ըլլայ :
19 Ինչու որ աս աշխարհիս իմաստութիւնը Աստուծոյ
առջեւը հիմարութիւն է · վասն զի գրված է թէ ,
Ընկիա իմաստուններըը իրենց խորագիտութեանը
20 մէջ կբռնէ : Եւ դարձեալ թէ՝ Տէրը կը ճանչ-
նայ իմաստուններուն խորհուրդները , որ պարապ
21 են : Ընանկ է նէ՝ մէկը թող չի պարծենայ մար-
22 դոց վրայով : Ինչու որ ամէն բան ձերն է , թէ
Պօղոսը՝ թէ Ապողոսը՝ թէ Կեփասը՝ թէ աշխար-
հը՝ թէ կեանքը՝ թէ մեռելը՝ թէ ներկայ բաները՝
23 թէ գալիքները՝ ամէն բան ձերն է · դուք Քրիս-
տոսին , Քրիստոս՝ Աստուծոյ :

ԳԼ· Դ·

1 Թող մարդիկները մեզ սանկ սեպեն՝ որպէս թէ
Քրիստոսի սպասաւորները , ու Աստուծոյ
2 խորհուրդներուն անտեսները : Ասոի անտեսնե-
րուն մէջը կրինարավի , թէ մէկը հաւատարիմ
3 գտնըվի : Բայց ինծի սոսկա ոչինչ բան մըն է՝
որ ձեզմէ դատվիմ՝ կամ թէ բնաւ մէկ մարդէ մը ,
մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ քններ ·
4 (վասն զի ես իմ անձիս մէկ բանը չեմ գիտեր ·
բայց չէ թէ սոսով ես կարդարանամ ·) ինչու որ
5 իս քննողը Տէրն է : Ընանկ է նէ ժամանակէն

առաջ գատողութիւն մի՛ ընէք, մինչև որ գայ Տէրը՝ որ խաւարին գաղտուկ բաները կը լու-
սաւորէ, ու սրտերուն խորհուրդները յայտնի կընէ. և անատեն ամէն մէկուն գովեստը Աստուծմէ պիտի ըլլայ :

Ես օրինակ բերի ե՛ղբայրներ՝ իմ վրաս, ու 6
Ապողոսին վրայ ձեզի համար, որ դուք ձեզմէ սո-
վիք սորվիք՝ որ չդատիք վեր՝ քան որ գրուածէն է. որ մէկը միւսին դէմ չհպարտա-
նաք հակառակ ընկերին դէմ: Ասոր ան ո՞վ է որ քեզ կընտրէ. ի՞նչ ունիս 7
որ չես առեր դուն. և թէ որ առեր ես՝ ինչո՞ւ չառածի պէս կպարծենաս :

Լիակուշտ կըշտացաք, ու հիմակվընէ հա- 8
րուստացաք, առանց մեզի թագաւորելու. և երանի՛ թէ թագաւորէիք, որ մենք ալ ձեր հետը թագաւորութիւն ընէինք: Որ- 9
ովհետև ասանկ կերևայ որ՝ Աստուած մեզ առա-
քեալներս վերջի՛ն բոլոր մահապարտներու նման. ինչու որ տեսարան եղանք աշխարհի, ու հրեշտակներուն, ու մարդիկներուն : Մենք 10
յիմարներ Քրիստոսի համար, և դուք խելացի-
ներ Քրիստոսով. մենք տկար՝ և դուք զօրաւոր. դուք փառաւորեալ՝ ու մենք անարգեալ :
Մինչև ասօրվան ատենը անօթեցանք ալ, ծար- 11
ւեցանք ալ, մերկ ալ պըտտեցանք, ծեծվե-
ցանք ալ, անհանգիստ ալ եղանք. ու մեր 12
ձեռքովը աշխատեցանք. մեզ կըբամբասեին՝ մենք կօրհնեինք. կըհալածէին՝ յանձնառու կըլլայինք. 13
դէշ կըխօսէին՝ կաղաչէինք. խաթը ու խայ-
տառակի պէս եղանք բոլոր աշխարհի, ամէնուն ընդոցը բլլալով մինչև այսօր : Ամօ՛չ կըգրեմ՝ 14
չէ թէ ձեզ ամչցնելու համար, հապա կը-
խրատեմ յետ սիրելի որդիներու պէս : Վէ՛րպէս 15
դուք տասը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով, բայց չէ՛ թէ շատ հայր ուն-

ինչու որ Քրիստոս Յիսուսով ես ձեզ ծնայ
16 աւետարանով ։ Ինանկ է նէ կազաւեմ ձեզի՝
ինծի նման եղիք , ինչպէս որ ես ալ Քրիստոսի ։
17 Լսոր համար ձեզի խրկեցի Տիմոթէոսը , որ իմ
սիրելի որդիս է՝ ու Տէրոջմով հաւատարիմ · որ
անիկա ձեր միտքը ձգել տայ իմ Քրիստոս Յի-
սուսով բռնած ճամբաներըս , ինչպէս որ ա-
մէն տեղ ամէն եկեղեցիներուն մէջը կը սորվեցու-
18 նեմ ։ Ինչ քանիները չպարտացան , որպէս
19 թէ ես պիտի չէի գամ ձեզի · բայց շուտով կու-
գամ թէ որ Տէրը կամենայ , և պիտի հասկընամ
չպարտացողներուն չէ թէ խօսքերը՝ հապա զո-
20 րութիւնը ։ Վ ասն զի Աստուծոյ թագաւորու-
թիւնը չէ թէ խօսքերով է , հապա՝ զօրութիւ-
21 նով ։ Ուստի ինչպէս կուզէք , գաւազանո՞վ
գամ ձեզի , թէ հեզութեան և արդարու-
թեան ու խոնարհութեան հոգիին սիրովը ։

ԳԼ · Ե ·

1 Ընդհ աւ հասարակ կը զուցվի կոր
թիւն ընել ձեր մէջը · և անանկ պոռնկու-
թիւն որ հեթանոսներուն մէջ ալ չի կայ · որպէս
2 թէ իր հօրը կնիկը ունենալ ։ Եւ դուք
չպարտացեր էք , ու ոչ մանաւանդ սուգ ըրիք ,
3 որ ձեր մէջէն վերցրվի այն բանը ընողը ։ Ին-
չու որ թէպէտ ես մարմինով հեռու եմ , բայց
հոգիով մօտ եմ · ուստի հիմայ ալ որպէս թէ
4 մօտէն վճռեցի , որ այն բանը ընողը՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը ժողվե-
վիք դուք , ու իմ հոգիով՝ մեր Տէր Յիսուս
5 Քրիստոսի զօրութիւնովը , անանկը Սատանային
մատնէք մարմինը սատկրվելու համար , որ հոգին
փրկրվի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը ։
6 Լաւ ձեր պարծանքը աղէկ չէ · չէք գիտեր՝
որ քիչ մը խմորը բոլոր շաղվրված գունդը կրխոր-
7 նէ ։ Սաբրեցէք այն հին խմորը մէկ կի , որ ըլ-

լաք նոր շաղվ ըսած գուն , ինտոր որ անհամր էք
նէ . ինչու որ Ի բրիստոս մեր զատիկը մորթըվե-
ցաւ : Ա՛սկէ ետև տօն կատարենք , չէ թէ հին 8
խմորով , և չէ թէ չարութեան ու անզգամու-
թեան խմորովը , հապա հաւատարմութեան ու
ճշմարտութեան խմորած հացովը : Ի բրեցի ձե- 9
զի առ թուղթին մէջ , որ պոռնիկներուն հետ
չի խառնըվիք : Եւ ըլրաւ չէ թէ աս աշխար- 10
հիս պոռնիկներուն հետ՝ կամ ագահներուն
հետ՝ կամ յափշտակողներուն հետ՝ կամ կռա-
պաշտներուն հետը , հապա թէ չէ պէտք
էր որ դուք աշխարհէս դուրս ելլայիք :
Ա՛յսչ թէ ձեզի գրեցի չի խառնըվիլ . ոչ 11
ինձն , թէ որ մէկը եղբայր ըսված՝ կամ պոռնիկ
ըլլայ , կամ կռապաշտ , կամ ագահ , կամ բամ-
բասող , կամ գինով , կամ յափրշտակող , ա-
նանկին հետ հաց ալ ուտելու չէ : Վ ան զի 12
ինչ պէտք է ինձի դուրսիններն ալ դատել . չէ
Ա՛ստուած կը դատէ . ուրեմն [illegible] 13
վերցուցէք :

Կ Ո Ր Ն Թ Ո Ս Ա Ց Ի Ս Կ Ա Ն Ա Ց Ի Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն Թ Ի Ղ Թ Ի Ս

6 ընտրել իր եղբօրը մէջ : Հապա եղբայր եղ-
բօրը հետ դատի կը մտնայ , ան ալ անհաւատնե-
7 րուն մէջը : Բոլորովին մատ բան մըն
ալ ան է ձեր մէջը , որ դատաստաններ կան ձեր
մէջը . ինչո՞ւ համաձայն դուք զրկանք չէք քա-
շեր , ու ինչո՞ւ մանաւանդ դուք նեղը չէք մնար :
8 Հապա դուք զրկանք կը տնէք , և ան
9 յէք եղբայրներն ալ : Ձեզ մի գիտեր , որ ա-
նիրաւները Աստուծոյ արքայութիւնը չեն ժա-
ռանգեր . մի խաբուիք , ոչ պոռնիկները՝ ոչ կա-
10 պաշները՝ ոչ շնացողները , ոչ իգացեալները՝
ոչ արուագէտները՝ ոչ գողերը՝ ոչ ագահ-
ները՝ ոչ գինովները՝ ոչ բամբասողները՝ ու
ոչ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորու-
11 թիւնը չեն ժառանգեր : Եւ դուք մէկ քա-
նիներդ անանկներ էիք . բայց լուացուեցաք ,
բայց սրբըուեցաք , բայց արդարացաք մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը , ու մեր Աստուծոյ
Հոգւովը :
12 Ամէն բան ինծի օրինաւոր է , բայց չէ թէ ա-
մէն բան օգտակար . ամէն բան ինծի օրինաւոր
է , բայց ես մէկ բանի մը իշխանութեան տակ չէ-
13 պիտի ըլլամ : Կերակուրը փորին համար է ,
փորն ալ կերակուրին . հապա Աստուած ասոնց ալ՝
անոնք ալ պիտի վերջացնէ : Բայց մարմինը
պոռնկութեան չէ , հապա Տէրոջ , ու Տէ-
14 րը՝ մարմնին : Եւ Աստուած որ Տէրը յարու-
ցաւ՝ ձեզ ալ պիտի յարուցանէ իր կարողութիւ-
15 նովը : Ձեզ մի գիտեր որ ձեր մարմինները
Քրիստոսի անդամներն են . ուստի Քրիստոսի
անդամները առնեմ՝ պոռնիկի անդամներ մի
16 ընեմ . քաւ լիցի : Ձեզ մի գիտեր , թէ ան
որ պոռնիկի կը մտնայ՝ անոր հետ մէկ մարմին
կ'ըլլայ . Պիտի ըլլան՝ կ'ըսէ , երկուքը մէկ
17 մարմին : Եւ ան որ Տէրոջը կը մտնի՝ անոր
18 հետ մէկ հոգի կ'ըլլայ : Պոռնկութենէն փա-

խէք. ամէն մեղքը որ մարդ կը գործէ իր մարմինէն դուրս է. բայց ան որ կը պոռնկի իր մարմինին դէմ կը մեղանչէ։ Չէք ու գիտեր՝ 19
որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին որ ձեր մէջն է, որ անիկա Աստուծմէ ունիք. ու դուք ձեր անձին տէրը չէք. ինչու որ սուղ 20
գինով ծախու առնուեցաք. փառաւորեցէք Աստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջը, որ Աստուծմ է։

Կ Ո Ր Ն Թ Ա Ց Ի Ա Ց Ի Ս Կ Ա Ն

12 կնիկը թող չի ձգէ: Ասայ ուրիշներուն ես
կըպատուիրեմ՝ չէ թէ Տէրը. Եթէ որ մէկ եղ-
բայր մը անհաւատ կնիկ ունենայ, ու անոր
հաճելի ըլլայ իրեն հետ բնակիլը՝ թող չի ձգէ
13 անիկա: Եւ կնիկ մը որ անհաւատ էրիկ ունե-
նայ, ու անոր հաճելի ըլլայ իրեն հետ բնակիլը՝
14 թող չի ձգէ էրիկը: Վասն որ անհաւատ է-
րիկը սրբըված է կնիկովը. և անհաւատ կնիկը
սրբըված է էրիկովը. Հապա թէ չէ ձեր որդի-
15 քը պիղծ են. բայց հիմայ սուրբ են: Ասայ
թէ որ անհաւատը գաղվի՝ թող գաղվի. Ինչու
որ Հարկ մը չէ կայ եղբօր կամ քրոջ անանկ բա-
ներու մէջ. Հապա զի Աստուած մեզ խաղաղու-
16 թեան կանչեց: Վասն ի՞նչ գիտես կնիկ՝ գու-
ցէ քու էրիկդ պիտի ապրեցնես. կամ դուն
ի՞նչ գիտես էրիկ՝ գուցէ քու կնիկդ պիտի ապ-
17 րեցնես: Այլայն թէ ամէն մէկուն ինչպես որ
Տէրը բաժնեց, ամէն մէկը ինտոր որ Աստուած
կանչեց, անանկ թող երթայ. ու ասանկ ես ա-
մէն եկեղեցիներուն պատուէր կուտամ:
18 Թէ որ թլփատված մէկը կանչվեցաւ, թող
չի ցանկայ անթլփատութիւն. չի թլփատված-
ներէն մէկը կանչվեցաւ, թող չի թլփտուի:
19 Ինչու որ թլփատութիւնը բան մը չէ, ու անթլ-
փատութիւնը բան մը չէ. Հապա Աստուծոյ
պատուիրանքներուն պահպանութիւնը ոչՓ է:
20 Ասայ ամէն մէկը ինչ կոչումի մէջ որ կանչվե-
21 ցաւ, անոր մէջ թող կենայ: Ծառայ կանչ-
վեցա՞ հոգ չըլլայ քեզի. բայց թէ որ կրնաս
22 ազատ ըլլալ, քեզի անանկը աղէկ է: Ինչու
որ ան ծառան որ Տէրոջմով կանչված է՝ Տէ-
րոջը ազատ է անիկա. անանկ ալ ան ազատը որ
23 կանչված է՝ Քրիստոսի ծառան է: Գնէք
սուղ ծախու առնվեցաք, մարդիկներու ծառայ
24 մի՛ ըլլաք: Եղբայրներ ամէն մէկը որ կոչումի մէջ
կանչվեցաւ նէ, թող անոր մէջ կենայ Աս-
տուծոյ առջև:

Ասաց կռսեփուն վրայով Տէրոջմէն մէկ հրա- 25
ման մը չունիմ , միայն թէ խրատ կուտամ՝ ինչ-
պէս որ Տէրոջմէն ողջմտութիւն գտայ հաւատա-
րիմ ըլլալու : Ես կըսեմ որ անանկը աղէկ է , 26
մանաւանդ ան հիմակուան եղած վտանգին համար
աղէկ է մարդուս որ անանկ ըլլայ : Կապված 27
ես կնկան , մի՛ փնտրեր արձկվիլ . արձկված
ես կնիկէ , մի՛ փնտրեր կնիկ : Եթէ որ կարգը- 28
վիս՝ չի մեղանչեցիր . և թէ որ կոյսը կարգվի՝
չի մեղանչեց . բայց անանկներուն մարմնոյ նեղու-
թիւն կունենան . սակայն ես ձեզի կխնայեմ :
Ասածս ա՛ս կըսեմ եղբայրներ , որ ասկէ հետև ժա- 29
մանակը կարճցած է . ալ անոնք որ կնիկ ունին՝
որպէս թէ չունին . և անոնք որ կուլան՝ որպէս 30
թէ չեն լար . ու անոնք որ կրկրնդան՝ որպէս թէ
չեն ինդար . և անոնք որ ծախու կառնեն՝ որ-
պէս թէ չեն ունեցած . և անոնք որ աշխարհս 31
կրմարեն՝ որպէս թէ չի վայելեն զայն . ինչու-
որ աս աշխարհիս վայելուչութիւնը անցած է :
Ասածս ես կուզեմ՝ որ դուք անհոգ ըլլաք . ման 32
չի՛ ան որ չի կարգված է՝ Տէրոջը բաներուն կը-
հոգայ , որ ինչպես ինքը Տէրոջը հաճելի ըլլայ .
ու ան որ կարգված է՝ աշխարհիս բաներուն կը- 33
հոգայ , որ ինծի՛ր իր կնկանը հաճելի ըլլայ :
Ես ալ կարգված կնիկը ու կոյսը կրսաբրև- 34
րին մեկզմէկէ . ինչու որ կոյսը Տէրոջը բա-
ներուն կը հոգայ , որ ինքը սուրբ ըլլայ հոգով ու
մարմնով . ու կարգված կնիկը աշխարհիս բա-
ներուն կը հոգայ , որ ինչպես իր էրկանը հաճելի
ըլլայ : Ասածս ա՛ս բանը ձեր օգուտին համար 35
կըզըուշեմ . չէ՛ թէ ձեր վրայ խըզըմվելու պա-
րան մը կրձգեմ , հապա պարկեշտութեան հա-
մար՝ ու առանց բզբաղանց Տէրոջը ծառայելու
համար : Հապա թէ որ մէկը ամօթ կրսեպհ իր 36
կոյսին համար՝ որ չափը անցեր է , ու ինչ որ ա-
նանկ պէտք է ըլլալ . ինչ որ կուզէ՝ թող ընէ ,

37 մեղք չէ՛ գործել, թազ կարգըվի։ Հայց
ան որ իր սըբտին մէջ հաստատեր է, ու անոր
մէկ վտանգ մըն ալ չի կայ, ե՛ իր կամքին վրայ
իշխանութիւն ունի. ու անանկ ընտրեց իր սըբ-
38 տին մէջ՝ որ իր կոյսը պահէ, աղէկ կընէ։ Ե-
ւ անոր հետը ան որ իր կոյսը կըկարգէ՝ աղէկ կը-
նէ. ու ան որ չի՛ կարգեր, էվելն աղէկ կընէ։
39 Կնիկը կապված է քանի ժամանակ որ իր էրիկը
ողջ է. հապա թէ որ իր էրիկը մեռնի՝ ազատ է
կարգըվիլ որուն որ ուզէ, միայն թէ Տէրոջմով։
40 Հայց իմ խրատիս նայելով էվելըք երանելի է
թէ որ անանկ կենայ. ես ասանկ կըսեպեմ, որ
ալ Աստուծոյ Հոգին իմ մէջս ունիմ։

ԳԼ. Ը։

1 Հայց կուց զոհերուն վրայօք՝ գիտենք որ ա-
մէնս ալ գիտութիւն ունինք. գիտութիւնը
2 կըՀպարտացունէ, բայց սէրը կըշինէ։ Թէ որ
մէկը կըկարծէ թէ բան մը գիտէ, դեռ չի գիտեր՝
3 ինչպէս որ պէտք է գիտնալ։ Հապա ան որ
զ՚Աստուած կըսիրէ, ինքը անկէց սորված է։
4 Հայց ան կուռքերուն զոհված կերակուրներուն
համար, գիտենք որ աշխարհիս մէջ. ինչու որ մէկէն ի՛ զատ չի կայ
5 ուրիշ Աստուած մը։ Որ թէպէտ ըլլան ալ
անունով աստուածներ՝ թէ երկինքը, ու թէ
երկրիս վրայ, (ինչպէս որ կան շատ աստուած-
6 ներ, ու շատ տէրեր.) բայց մեզի մէկ է Աստուածը՝
Հայրը, ուսկից են ամէն բաները, և մենք ալ
անով. ու մէկ Տէր Յիսուս Քրիստոս, որ ա-
նով են ամէն բաները, ու մենք ալ անով։
7 Հայց ամէնուն քով ճանաչում չի կայ. ոմանք
կուռքերուն վրայով խղճմտանք ունենալով՝
մինչև հիմայ կուտան կուռքին զոհվածի պէս.
և իրենց խղճմտանքը որովհետև տկար է կըպըղ-
8 ծըվի։ Սակայն կերակուրը մեզ Աստուծոյ

առջև չի՛ կեցուներ . չէ՛ թէ որ չուտենք՝ կը-
պակսինք , և չէ՛ թէ որ ուտենք՝ կէշելնանք ։
Նայց զգոյշ կեցիք , որ չըլլայ թէ աս ձեր իշխա- 9
նութիւնը ակարներուն գայթակղութիւն ըլլայ ։
Եթէ մէկը քեզ տեսնայ՝ որ ճանաչում ունիս , 10
կաստուածին մէջ սեղան նստած՝ չէ՞ որ անոր
խղճմտանքը որ ակարու է նամբ ախտացեր է , նո-
ւընէն կըՀաստատուի խոհեր զոհվածը ուտելու .
ու ան տկար եղբայրը կըկորսըվի քու ճանաչու- 11
մովդ , որուն համար որ Քրիստոս մեռաւ ։ Եւ 12
ասանկ եղբայրներուն դէմ յանցանք ընելով՝ ու
տկարներուն խղճմտանքը վիրաւորելով , Քրիս-
տոսի դէմ մեղք կըգործէք ։ Ուստի՛ թէ որ 13
կերակուրը կըգայթակղեցունէ իմ եղբայրս , միս
չեմ ուտեր յաւիտեան՝ որ իմ եղբայրս չի գայ-
թակղեցունեմ ։

Գ.

Չէ՞ որ ես ազատ եմ , չէ՞ որ ես առաքեալ 1
եմ , չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը իմ
աչքովս տեսայ . չէ՞ որ դուք էք իմ գործս Տէրով-
մով ։ Թէպէտ ուրիշներուն առաքեալ չըլլամ 2
ալ նէ , բայց ձեղի եմ . ինչու որ իմ առաքելու-
թեան կնիքս դուք էք Տէրովմով ։ Իմ պա- 3
տասխանս անոնց որ իս չարցունեն աս է . Մի՞ 4
թէ մենք իշխանութիւն չունինք ուտելու և խմե-
լու ։ Մի՞ թէ մենք իշխանութիւն չունինք քոյ- 5
րեր կնիկներ մեր հետ պտըտցունելու , ինչպէս
որ ուրիշ առաքեալները , ու Տէրոջը եղբայրնե-
րը , ու Կեփասը կընեն ։ Մի՞ թէ ես ու Բառնա- 6
բասը միակ իշխանութիւն չունինք չի գործե-
լու ։ Ո՞վ իրեն զօրութիւն 7
կընէ . ո՞վ այգի կըտնկէ , ու անոր պտուղէն
չուտեր . ո՞վ ոչխարներ կարածէ , ու ոչխար-
ներուն կաթէն չուտեր ։ Մարդկօրէն մի՞ ա- 8
կըզրուցեմ ես . կամ չէ՞ որ օրէնքն ալ նոյնը

9 կըզըուցէ : Ա՛ոտէսին օրէնքին մէջ գըրված
է , կայնի մէջի եղնի գուռնը չըլլայ որ կապես :
Ա՞ի թէ եղեըռուն համար Աստուծոյ հոգն էր·
10 չէ՞ որ մանաւանդ մեզի համար կըսէ . վասն զի
մեզի համար գըրվեցաւ . որովհետև ան որ կըսեր-
մանէ յուսով պէտք է սերմանել , և ան որ ցո-
րեվը յարդէն կըզատէ պէտք է որ յուսով վա-
11 յելէ : Եթէ որ մենք ձեզի հոգևոր բաները ցա-
նեցինք նէ , մեծ բա՞ն մըն է թէ որ ձեզմէ մարմ-
12 նաւոր բաները քաղենք : Եթէ որ ուրիշները ձեր
վրայ իշխանութիւն ունին նէ , չէ՞ որ մենք ալ
եվելօք . բայց մենք աս իշխանութիւնը չի գոր-
ծածեցինք . Հապա ամէն բանի կըհամբերենք ,
որ Քրիստոսի աւետարանին արգելք մը չըլլանք :
13 Չէ՞ք ի գիտեր , որ տաճարին մէջ աշխատող-
ները տաճարէն կուտեն . ու անոնք որ սեղանին
պաշտօնեանեըն են , ան սեղանէն կըվայելեն :
14 Այնպէս ալ Տէրը հրաման տըւաւ . անոնք որ
աւետարանը կըքարոզեն՝ աւետարանէն պիտի
15 ապրին : Բայց ես աս բաներուն մէկը չի գոր-
ծածեցի . ոչ ալ ատ բաները գրեցի՝ որ ինծի ա-
սանկ ըլըլի . ալ ադեկ է ինծի եվելօք որ մեռ-
նիմ , և ոչ թէ իմ պարծանքս մէկը պարապ սը-
16 պէ : Վասն զի թէ որ ես աւետարանը քարո-
զեմ , ինծի մէկ պարծանք մը չի կայ . ինչու որ
հարկ է ինծի . մանաւանդ վայ է ինծի՝ թէ
17 որ աւետարանը չի քարոզեմ նէ : Եթէ որ ա-
նիկա կամաւ ընեմ՝ ինծի վարձք կըլլայ , և թէ
որ ակամայ՝ ան իմ վրաս յանձնված անտեսու-
18 թիւն մըն է : Ուրեմն ի՞նչ վարձք կայ ինծի .
որ՝ քարոզելու ատենս՝ Քրիստոսի աւետարանը
ձրի տամ , որ չըլլայ թէ աւետարանին մէջ իմ
իշխանութիւնս կարգէ դուրս բանեցնեմ :
19 Ինչու որ ես ամէնէն ազատ էի , ու ամէնուն իմ
անձս ծառայութեան մէջ կնցուցի , որ շատերը
20 շահիմ : Հրէաներուն հետ Հրէայի պէս եղայ՝

որ Հրէաները շահիմ. օրէնքի տակ եղողնե- 21
րուն հետ՝ իրենց պէս օրէնքի տակ եղայ . չէ թէ
որ ես օրէնքի տակը էի , հապա որ օրէնքի տակ
եղողներն ալ շահիմ. օրէնքի տակ չեղողներուն
հետ օրէնքի տակ չեղողի պէս եղայ , (չէ թէ ես
Աստուծմէ օրէնք չունեի , հապա Քրիստոսի օ-
րէնքին տակն էի .) որ ան օրէնք չունեցողներն
ալ շահիմ. տկարներուն հետ տկարի պէս եղայ , 22
որ տկարները շահիմ. ամէնուն հետ ամէն բան
եղայ , որ ըլլայ թէ մէկ քանին ապրեցունեմ :
Ես ամէնը աւետարանին համար կընեմ , որ անոր 23
կցորդ ըլլամ ես : Չէք մի գիտեր՝ որ ասպարէ- 24
զին մէջ վազողները վազելով կրվագին ամէնը ,
բայց մէկը կառնէ յաղթութեան վարձքը . ա-
նանկ վազեցէք որ տանիք : Ամէն ով որ կը- 25
մարանչի՝ ամէն բանի մէջ չափաւոր կըլլայ . ա-
նոնք՝ եղծանելի պսակը առնելու համար , ու
մենք՝ անեղծանելին : Ուստի ես ալ անանկ կը- 26
վազեմ, չէ թէ ինծոր անստուգութեամբ . ես
անանկ կըկռուիմ , չէ թէ որպէս թէ հովերը ծե-
ծելով . հապա իմ մարմինս կընեղեմ՝ ու կը- 27
հնազանդցնեմ, որ չըլլայ թէ ես որ ուրիշնե-
րուն քարոզեցի՝ ինքիրենս անպիտան գտնը-
վիմ:

ԳԼ. Ի։

Ձեմ ուզեր որ չգիտցող ըլլաք եղբայրնե՛ր , որ 1
մեր հայրերը ամէնքն ալ ամպին տակն էին .
ու ամէնքն ալ ծովէն անցան , և ամէնքն ալ 2
Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջը .
Եւ ամէնքն ալ նոյն հոգևոր կերակուրը կերան . 3
ու ամէնքն ալ նոյն հոգևոր խմելիքը խմեցին . 4
(ինչու որ կը խմէին ան հոգևոր քարէն որ անոնց
հետ կերթար . ու ան քարը Քրիստոս ինքն էր)
բայց չէ թէ անոնցմէ շատերուն հաճեցաւ 5
Աստուած . ինչու որ անապատին մէջ գետինը

6 ինկած մեռան : Ու ան բաները օրինակով մե-
զի համար կրլլար , որ չար բաներու ցանկացող
7 չըլլանք , ինտոր որ անոնք ցանկացան · Ա՛չ ալ
կուապաշաներ ըլլանք , ինչպես որ անոնցմէ մէկ
քանին , ինտոր որ գրված է · Ժողովուրդը նըս-
տաւ ուտելու ու խմելու , և ելան խաղալու :
8 Եւ պոռնկութիւն չընենք , ինտոր որ անոնցմէ
մէկ քանին պոռնկեցան , ու մէկ օրվան մէջ
9 քսանըչորս հազար հոգի ինկան : Եւ Տէրը չի
փորձենք , ինչպէս անոնցմէ մէկ քանիները փոր-
10 ձեցին՝ ու օձերէն սատկեցան : Եւ տրտունջ
չընենք · ինտոր որ անոնցմէ մէկ քանին տրտունջ
11 ըրին , ու սատակիչէն կորսըվնցան : Այլ ան
ամէնը օրինակով կըպատահէր անոնց · հապա
մեզի՝ որոնց դարերուն վերջը հասաւ , խրատ
12 ըլլալու համար գրվեցաւ : Ուստի ան որ կըսե-
պէ թէ հաստատուն կեցած է , թող զգուշանայ
13 որ չըլլայ թէ իյնայ : Ձեր վրայ մարդկային
փորձութիւնէ չի գար՝ ուրիշ չէ պատահած .
բայց Աստուած հաւատարիմ է , որ ձեզ փոր-
ձութեան մէջ չի՛ ձգեր ձեր կարողութենէն է-
վել · հապա ան փորձութեանը հետ հնարքն ալ
կընէ , որ կարող ըլլաք համբերել :
14 Ընոր համար իմ սիրելիներս՝ կուապաշտութե-
15 նէն փախէք : Որպէս թէ իմաստուններու հետ կը
խօսիմ · դուք ձեզմէ դատեցէք ինչ որ կըզըուցեմ :
16 Օրհնութեան գաւաթը որ մենք կօրհնենք՝ չէ՞
մի որ Քրիստոսի արիւնին հաղորդութիւնն է ·
հացը՝ որ մենք կրկըտրենք՝ չէ՞ մի որ Քրիստոսի
17 մարմինին հաղորդութիւնն է : Ընչու որ մենք
շատերնիս մէկ հաց՝ մէկ մարմին ենք · վասն զի ա-
18 մէնքնիս ալ ան մէկ հացէն կրվայելենք : Նա-
յեցէք մարմնաւոր Իսրայէլը · չէ՞ մի որ ան զոհ-
19 վածները ուտողները սեղանին հաղորդ են : Ու-
րեմն ի՞նչ կսեմ , որ թէ զոհվածը բա՞ն մըն է ·
20 կամ թէ կուռքերը բան մըն են : Այլ՝ — Հե-

ախ թէ ան բաները որ Հեթանոսները զոհ կը-
նեն՝ դեւերուն , ու չէ թէ Աստուծոյ կը զոհեն .
չեմ ուզեր որ դուք դեւերուն հետ հաղորդու-
թիւն ունենաք . Ինչու որ չէք կրնար դուք
խմել Տէրոջը գաւաթը՝ ու դեւերուն գաւաթը .
և չէք կրնար մասնակից ըլլալ Տէրոջը սեղանին ու դեւ- 21
բուն սեղանին : Նախանձմունքո՞վ մի չարժենք 22
Տէրը , մի թէ մենք անկէց զօրաւո՞ր ենք : Ա- 23
մէն բան ինծի օրինաւոր է , բայց չէ թէ ամէն
բան օգտակար . ամէն բան ինծի օրինաւոր է ,
բայց չէ թէ ամէն բան շինութիւն կընէ : Ոչ- 24
ոք որ միայն իր անձին փնտռտէ , հապա
իր ընկերին ալ : Ամէն ինչ որ ապան- 25
դանոցին միջ կը ծախուի՝ կերէք , ու հարցուփորձ
մ՚ընէք խղճմտանքի համար . Ինչու որ երկիրը իր 26
լեցնութիւնովը Տէրոջն է : Եթէ որ անհաւատ 27
ներէն մէկը ձեզ կանչելու ըլլայ և ուզէք եր-
թալ , ամէն ինչ բան որ առջեւնիդ դրուի՝ կերէք ,
ու հարցուփորձ մ՚ընէք խղճմտանքի համար :
Հապա թէ որ մէկը ձեզի ըսէ՝ Այս կո՛ւռբան է 28
զոհված է , մի՛ ուտէք իրեն համար՝ որ խնդացուց ,
ու խղճմտանքի համար մի՛ ուտէք : Ասկայն խղճ- 29
մտանք կըսեմ՝ ոչ թէ իրենը , հապա ընկե-
րինը : Ուրեմն ինչո՞ւ իմ ազատութիւնս պիտի 30
դատուի ուրիշին խղճմտանքէն . Թէ որ ես շնորհ-
քով կերակրեմ , ինչո՞ւ համար պիտի հայ-
հոյուիմ , որուն համար որ կը գոհանամ : Արդ՝ 31
թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ գործ ալ որ ը-
նէք , ամէն բան Աստուծոյ փառքին համար
ըրէք : Առանց դատարկութիւն տալու եղէք 32
Հրէաներուն ու Հեթանոսներուն և Աստուծոյ
եկեղեցիին : Ինչպէս որ ես ամէն կերպով ա- 33
մէնուն համոյ կըլամ . չեմ փնտռեր իմ անձիս
օգուտը , հապա շատերուն՝ որ փրկուին :
Ինծի նման եղէք , ինչպէս ես ալ Քրիս- 1
տոսի :

ԳԼ· ԺԸ·

2 Զնզ կըգովիմ՝ որ իմ ամէն բաներս կըյիշէք,
ու ասպարածներս կըրունէք՝ ինծոր որ ես
3 ձեզի աւանդեցի: Կուզիմ որ դուք գիտնաք,
թէ ամէն մարդուն գլուխը Քրիստոս է· ու
կնկանը գլուխը՝ էրիկ մարդը· և Քրիստոսի
4 գլուխը՝ Աստուած: Ամէն մարդ երբոր աղօթ-
քի կրկայնի՝ կամ մարգարէութիւն կրնէ՝ ու
գլուխը ծածկած կըպահէ, անպատիւ կրնէ իր
5 գլուխը: Եւ ամէն կնիկ երբոր աղօթքի կրկայ-
նի՝ կամ մարգարէութիւն կրնէ բաց գլխով, ան-
պատիւ կրնէ իր գլուխը· ինչու որ անանկ կրսեպ-
6 ի՝ թէ ածըլված է: Ա՛ն՝ թէ որ կնիկը
չի ծածկըվիր նէ՝ թող իր մազերը ածրէ· հա-
պա թէ որ անվայել է կնկան փորրըվիլ՝ կամ
7 ածըվիլ, թող ծածկըվի: Էրիկ մարդու
պէտքը չէ՝ իր գլուխը ծածկել, ինչու որ Աս-
տուծոյ պատկերը ու փառքն է· բայց կնիկը իր
8 էրկանը փառքն է: Ինչու որ չէ՝ թէ էրիկ
մարդը կնիկէն է, հապա կնիկը՝ էրիկ մարդէն:
9 Պատճառը որ էրիկ մարդը չի հաստատվեցաւ
կնկան համար, հապա կնիկը՝ էրիկ մարդուն
10 համար: Ասոր համար պէտք է որ կնիկը շուք
11 դնէ իր գլխուն՝ հրեշտակներուն համար: Հայց
ոչ կնիկը առանց էրիկ մարդու է, ու ոչ էրիկ
12 մարդը առանց կնկան՝ Տէրոջմով: Ա՛ն զի
ինչպէս որ կընիկը էրիկ մարդէն է՝ անանկ ալ
էրիկ մարդը կնիկէն· բայց ամէնը Աստուծ-
13 մէն: Ի՛նք դուք ձեզմէն իրաւունքը տրէք· կը
վայլէ՞ կնիկ մարդու գլուխը բաց աղօթքի կայնիլ
14 Աստուծոյ առջև· չէ՞ որ բնու թիւնն ալ կրսոր-
վեցունէ ձեզի· որ էրիկ մարդ մը թէ որ մազով
15 է իրեն անարգանք է· բայց կնիկը թէ որ մա-
զով է իրեն փառք է· ինչու որ մազերը կա-
16 գուածի տեղ տրված են իրեն: Ա՛կայն թէ որ

մէկը հակառակող ըլլալ կուգէ՝ մենք անանկ սովորութիւն չունինք , ոչ ալ Աստուծոյ եկեղեցիները :

Չտայ աս պատուիրելով ձեզ շէմ գովեր , ինչու որ չէ՛ թէ աղէկին՝ հապա գէշին կերթաք : 17
Պինտա առաջ երբոր մէկ տեղ կրժողովիք եկեղեցիին մէջ , կրլսեմ որ բաժանմունքներ կան ձեր մէջը . ու քիչ մի ես հաւատացի : Չտայ՝ ձեր 18 19
մէջը հերձուածողութիւններ ալ պիտի ըլլայ , որ ձեր մէջի եղող ընտիրները երևան : Աստի 20
դուք որ մէկտեղ կրժողովիք՝ Տէրոջը տուներ ձեզի հաց ուտելու տեղ չէ՛ . Ինչու որ ամէն մէկը 21
առաջ կրվազէ իր ընթրիքը ուտելու . ու մէկը անօթի կրմնայ , ու մէկալը՝ կարբած : Տուն 22
չունիք մի ուտելու ու խմելու համար . մի թէ Աստուծոյ եկեղեցիին կանարգէք , և ամօթով կրնէք չքաւորները . ի՞նչ ըսեմ . ձեզ գո-
[illegible] . աս բասրս ալ չեմ գովեր : Ինչու 23
որ ես Տէրոջմէն ընդունեցի ան բանը , որ ձեզի ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուսը իր մատնըված գիշերը հացը առաւ . գոհացաւ , կտրեց՝ ու ըսաւ , 24
Առէք՝ ու կերէք . ա՛ս է իմ մարմինս՝ որ ձեզի համար կրբաշխի . ասիկա ըրէք իմ յիշելու համար : Նմանկ ալ գաւաթը ընթրիքէն ետև 25
առաւ՝ ու ըսաւ . Այս գաւաթին է նոր ուխտ իմ արիւնովս . ասիկա ըրէք քանի հեղ որ խմելու ըլլաք՝ իմ յիշելու համար : Վասնի անգամ որ աս 26
հացը ուտէք , ու աս գաւաթը խմէք , Տէրոջը մահը պատմեցէք , մինչև որ ինքը գայ : Աստի ան որ աս 27
հացը կուտէ կամ Տէրոջը գաւաթը կրխմէ անարժանութեամբ , պարտական պիտի ըլլայ Տէրոջը մարմինին ու արիւնին : Թող փորձէ՛ մարդ իր 28
անձը՝ ու ետքը ան հացէն թող ուտէ , և ան գաւաթէն խրմէ : Վասն զի ան որ անարժա- 29
նութեամբ կուտէ ու կրխմէ , իր անձին դատապարտութիւնը կուտէ ու կրխմէ . ինչու որ Տէ-

30 բոցը մարմինը չի որոշեր : Այսոր համար ձեր
մէջը շատ հիւանդներ ու ցաւագարներ կան . և
31 շատերն ալ կան՝ որ մեռած ալ են : Ինչու որ
եթէ ինքզինքնիս քննելու ըլլայինք՝ չէինք դա-
32 տապարտուիր : Եւ թէ որ դատուինք՝ Տէրոջ-
մեն կրթոխտուինք , որ աշխարհի հետ չի դատա-
33 պարտուինք : Ուստի եղբայրներ՝ երբոր մէկ
տեղ կը ժողվուինք ուտելու , իրարու սպասեցէք :
34 Եթէ մէկը անօթի է՝ թող իր տունը
ուտէ , որ չըլլայ թէ դատապարտութեան համար
35 ժողվուիք : Ուրիշ բաները երբոր գալու ըլ-
լամ՝ անոնները կարգադրեմ :

ԳԼ. ԺԱ։

1 Բայց հոգևոր պարգևներուն վրայօք չեմ ուզեր
2 եղբայրներ , որ չգիտցող ըլլաք : Դուք գի-
տէք , որ երբ հեթանոս էիք՝ ինչպէս ան մունճ
3 կուռքերուն կերթայիք ու կուգայիք : Ուստի
աս ձեզի կրցուցընեմ , որ մէկը չըլլար որ Աս-
տուծոյ Հոգիովը խօսի՝ ու Յիսուսը նզովեալ
կանչէ . և մէկն ալ չի կրնար Յիսուսը Տէր
4 կանչել , միայն թէ Հոգւով Սրբով : Թէ-
պէտ պարգևները զանազան են , բայց նոյն
5 Հոգին է : Թէ որ պաշտօնները զանազան են ,
6 բայց նոյն Տէրն է : Թէ որ գործողութիւնները
զանազան են , բայց նոյն Աստուածն է՝ որ կը
7 գործէ ամէնը ամէն բանի մէջ : Այլ ամէն
մէկուն Հոգւոյն յայտնութիւնը տրուած է՝ ամէն
8 մէկ օգուտի համար : Վասն մի Ա՛ՀԷ Հո-
գիէն իմաստութեան խօսք տրուած է . ուրիշին
գիտութեան խօսք՝ նոյն Հոգիին տուած չա-
9 փովը . մէկալին հաւատք՝ նոյն Հոգիովը . ու-
րիշին բժշկութեան պարգևներ՝ նոյն Հոգիո-
10 վը . ուրիշին հրաշքներու յայտնութիւններ .
ուրիշին մարգարէութիւն . ուրիշին հոգիի
ընտրութիւն . ուրիշին զանազան լեզուներ ,

ուրիշներ լեզուներու թարգմանութիւն ։ Ասոր 11
ամէնը մի և նոյն Հոգին կը գործէ , և ամէն
մէկուն կը բաժնէ ինչպէս որ կուզէ ։
Մարմինը մէկ է ու շատ անդամներ 12
ունի , և ամէն անդամները մէկ
մարմին են . անանկ ալ Քրիստոսը ։ Ինչու 13
որ մենք ամէնիս մէկ Հոգիով մկրտուեցանք . թէ
Հրեաներ , թէ Հեթանոսներ , թէ ծառաներ , թէ ազատներ , ա-
մէնքնիս ալ մէկ Հոգին խմեցինք ։ Ինչու որ 14
մարմինը մէկ անդամ մը չէ , հապա շատ ։
Թէ որ ոտքը ըսէ , Որովհետև ես ձեռք չեմ՝ ան 15
մարմինէն չեմ , անով ան մարմինէն չէ՞ մի ։ Եւ 16
թէ որ ականջը ըսէ , Որովհետև ես աչք չեմ՝
ան մարմինէն չեմ , անով ան մարմինէն չէ՞ մի ։
Թէ որ բոլոր մարմինը աչք ըլլար , ականջը ո՞ւր 17
էր . և թէ որ բոլորը ականջներ ըլլային , ո՞ւր
էին հոտոտելիքը ։ Հապա հիմայ Աստուած ան 18
անդամները դրաւ անոնցմէ ամէն մէկը մարմինին
մէջ , ինչպէս որ ինքը ուզեց ։ Հապա թէ 19
որ ամէնը մէկ անդամ ըլլար , մարմինը ո՞ւր էր ։
Հապա հիմայ անդամները շատ են , ու մարմինը՝ 20
մէկ ։ Աչքը կրնար աչքը ըսել , թէ 21
Ձեռնին ինծի պէտք չես . և ոչ գլուխը
ոտքերուն ըսել , թէ Ինծի պէտք չէք ։ Հապա 22
մարմինին ան անդամները՝ որ շատ տկար կերե-
ւան , աւելի հարկաւոր են . ու մարմինին ան 23
անպատիւները՝ որոնք կը թերուին թէ շատ անպատիւ
են , անոնց էվելըք պատիւ կընենք . ու ասոնք՝
մեր ամթնեղները շատ աւելի պարկեշտութիւն
ունին ։ Ու մեր պարկեշտ անդամներուն բան 24
մը պէտք չէ . հապա Աստուած մարմինը բա-
րեկարգեց , ու ցածին շատ աւելի պատիւ տուաւ .
որ ան մարմինին մէջ երկպառակութիւն չըլլայ , 25
հապա անդամները իրարու վրայ մէկ հոգ ունե-
նան ։ Թէ որ մէկ անդամը նեղութիւն քաշէ , 26

ամէն անդամները կրնեղէն անոր հետը. և թէ
որ փառաւորի մէկ անդամը՝ ամէն անդամները
27 կրխնդան անոր հետ: Ձայց դուք Քրիստոսի
մարմինն էք, ու անոր անդամներէն անդամներ:
28 Եւ անոնք որ Աստուած եկեղեցիին մէջը դրաւ՝
ասոնք են. առաջ՝ առաքեալները, երկրորդ՝
մարգարէները, երրորդ՝ վարդապետները. ետ-
քը՝ հրաշքները, ետքը՝ բժշկութիւններու
պարգեւները, օգնութիւնները, կառավարնե-
րը, լեզուներուն տեսակները, լեզուներուն
29 թարգմանութիւնները: Ամէնքը առաքեա՞լ են
մի. ամէնքը մարգարէ՞ են մի. ամէնքը վար-
դապե՞տ են մի. ամէնքը հրաշագործնե՞ր են մի.
30 ամէնքը բժշկութեան շնորհ ունի՞ն մի. ամէն-
քը լեզուներ կրխօսի՞ն մի. ամէնքը թարգմա-
նութիւն կընե՞ն մի:

ԺԴ.

31 Ձայց դուք նախանձաւորեցէք ան շնորհքնե-
րուն որ աղէկ են. բայց ես ալ էվելի ապէ-
1 ժամանակ մը ցուցընեմ ձեզի: Թէ որ մարդոց
ու հրեշտակներուն լեզուները խօսիմ, և սէր
չունենամ, ես պղինձի պէս եղայ որ ձայն կը
2 հանէ, կամ ծնծղաներուն պէս որ կրզզնկրա-
նան: Եւ թէ որ մարգարէութիւն ունենամ,
ու ամէն խորհուրդները գիտնամ՝ և ամէն
գիտութիւն. և թէ որ ունենամ ամէն հաւատ-
քը՝ մինչև լեռները փոխադրելու, ու սէր չու-
3 նենամ, ոչինչ եմ: Եւ թէ որ իմ ամէն
ստացուածքս աղքատներուն կերցունեմ, ու իմ
մարմինս էրելու տամ, և սէր չունենամ, բան
4 չեմ շահիր: Սէրը համբերող է, կըքաղցրա-
նայ. սէրը չի՛ նախանձիր, չի՛ գոռոզնար, չի՛
5 հպարտանար. Ըի՛ յանդգնիր, իրենը չի՛ փնտը-
6 ռեր, չի՛ չարանար, գէշ չի՛ խորհիր. Անիրաւու-
թեան վրայ չի՛ խնդար, հապա ճշմարտու-

Թեան վրայ կբնդայ. Ումէն բանի կըդի- 7
մանայ. ամէն բանի կըհատասայ. բոլորովին
կկտեսայ. ամէն բանի կըհամրերէ։ Սէրը 8
բնաւ չէկդեար. Թէ որ մարգարէութիւնները
ըլլան՝ կրխափանին. Թէ որ լեզուները՝ յու-
կըլլան. Թէ որ գիտութիւն՝ կրխափանվի։ Ինչ- 9
չու որ շատէն քիչը գիտենք՝ ու շատէն քիչը կը
մարգարէանանք։ Ուայց երբոր կատարեալը գայ, 10
ան շատէն քիչը պիտի խափանվի։ Երբոր տղայ 11
էի՝ տղի պէս կըխօսէի, տղի պէս կըխորհէի, տղի
պէս համարում ունէի. բայց երբոր այր եղայ՝
տղայութեան բաները մէկդի դրի։ Ինչ հիմայ 12
կըտեսնանք որպէս թէ հայելիին մէջը՝ օբինակով,
բայց անատեսը դիմացէ դիմաց. հիմայ շատէն քիչ
մը տեղեակ եմ, բայց անատեսը ատենկ պիտի
գիտեամ՝ ինչպէս որ անիկա ալ իս ճանչցաւ։
Ուստի հիմայ կըմնայ հաւատք՝ յոյս՝ սէր՝ ասոնք 13
իրեք։ ու ասոնցմէ պիտի մեծը սէրն է։

ԺԴ. ԺՈՂ։

Սիրոյ հետէն գացէք, ու հոգևոր պարգևնե- 1
րուն նախանձաւորը եղէք, Ըայց էվիլոք որ
դուք մարգարէութիւն ընէք։ Ու ան մի՝ ան 2
որ օտար լեզուով կրխօսի՝ չէ թէ մարդոց հետ
կրխօսի, հապա Աստուծոյ հետ. ինչու որ մէկը
չի կայ որ իմանայ, բայց անիկա հոգիովը խոր-
հուրդներ կրխօսի։ Ուակայն ան որ կըմարգա- 3
բեանայ՝ մարդիկներուն կրխօսի օգուտ ու մխի-
թարութիւն և քաջալերութիւն պըտը։ Ան որ 4
օտար լեզուներով կրխօսի՝ իր անձին օգուտ
կընէ. ու ան որ կըմարգարեանայ՝ եկեղեցիին
օգուտ կընէ։ Կուզեմ որ դուք ամէնքդ լեզու- 5
ներ խօսիք, Ըայց մանաւանդ որ մարգարէութիւն
ընէք. ինչու որ ալ աղէկ է ան՝ որ կըմարգա-
բեանայ, քան թէ անիկա որ լեզուներ կրխօսի,
միայն թէ որ թարգմանելու ըլլայ նէ, որ եկե-
ղեցին ալ օգուտ առնէ։

6 Ասայց հիմայ եղբայրնե՛ր՝ թէ որ ես ձեզի գամ
լեզուներո՛վ խօսելով, ի՞նչ օգուտ կը լլամ ձեզի՝
թէ որ չի խօսիմ կամ յայտնութիւնով, կամ
7 գիտութիւնով, կամ մարգարէութիւնով, կամ
վարդապետութիւնով։ Անանկ ինչպէս որ ան-
շունչ բաները ձայն կուտան, թէ փող՝ և թէ
քնար՝ վի եթէ ան ձայնին մէկ զանազանու-
թիւն մը չընեն նէ, ի՞նչպէս պիտի ճանչցուի փողին
8 կամ քնարին ձայն հնչելը։ Ինչու որ
եթէ փողը խառնուկ ձայնով չհնչէ ըլլայ,
9 ո՞վ պիտի պատրաստուի պատերազմի։ Անանկ
ալ դուք՝ թէ որ լեզուներով յայտնի չընէք նէ
խօսածը, ինտո՞ր պիտի իմացվի ան խօսքը.
ինչու որ ալ դուք որպես թէ օդին խօսած պի-
10 տի ըլլաք։ Ա՛ն զի այնքան տեսակ ձայներ
կան աշխարհի մէջ, և առանց ձայնի բան մը
11 չի կայ։ Ասոի թէ որ ես ան ձայնին զօրութիւ-
նը չի գիտնամ նէ՝ ինծի հետ խօսողին ես մէկ
12 ալ ինձի բարբարոս մը պիտի ըլլայ։ Անանկ դուք
ալ, որովհետև հոգևոր պարգևներու նախան-
ձաւոր էք, եկեղեցիին օգուտին համար խնդրե-
13 ցէք որ առաւելանաք նոյն պարգևներովը։ Անոր
համար ան որ օտար լեզուներով կը խօսի՝ աղօթք
14 թող ընէ, որ թարգմանէ՛ ալ։ Ասոի որ ես ա-
ղօթք ընեմ օտար լեզուով՝ իմ հոգիս աղօթք
15 կընէ, բայց միտքս անպտուղ է։ Ուրեմն ի՞նչ
է։ Աղօթք ընեմ հոգիով, աղօթք ընեմ մի-
քովս ալ. սաղմոս երգեմ հոգիով, սաղմոս եր-
16 գեմ միտքով ալ։ Ապա թէ չէ որ դուն
հոգիով օրհնութիւն ընես նէ, անիկա որ տգէտի
տեղ կայնած է ինտո՞ր Ամէն պիտի ըսէ քու գո-
հութիւն տալու ատենդ. ինչու որ ան քու
17 զուցածդ չի՞մանար։ Որ թէպէտ դուն աղէկ
գոհութիւն կընես, բայց ընկերը չի շահիր։
18 Աստուծմէ կը գոհանամ, որ ձեր ամէնէն էվել

լեզուներ կրնասիմ · բայց եկեղեցիին մէջ կու- 19
զեմ հինգ խօսք միտքով խօսիլ , որ ուրիշներն
ալ խրատեմ , քան թէ շատ խօսքեր օտար լե-
զուով ։

Եղբայրներ՝ միտքով տղաք մի ըլլաք , հապա 20
չարութիւններէն տղաք եղէք , ու միտքով կա-
տարեալ եղէք ։ Որովհետև օրէնքին մէջն ալ 21
գրված է , թէ՝ Օտար լեզուներով՝ ու օտար
պսակներով ատ ժողովուրդին հետ պիտի խո-
սիմ , բայց այնպէս ալ չի պիտի լսեն ինծի ,
կրսէ Տէրը ։ Ուրեմն լեզուները նշանի համար 22
են՝ չէ հաւատացեալներուն , հապա անհաւատ-
ներուն · բայց մարգարէութիւնը չէ թէ ան-
հաւատներուն , հապա՝ հաւատացեալներուն ։
Ուրեմն թէ որ բոլոր եկեղեցին միևնոյն դայ , 23
ու ամէնքն ալ օտար լեզուներով խօսելու ըլլան ,
և հոն մտնան տգէտներ կամ անհաւատներ ·
չե՞ն մի ըսեր՝ թէ դուք խենթեցեր էք ։
Ուրեմն հիմա ամէնքն ալ մարգարէանան , ու 24
հոն մէկ անհաւատ մը կամ տգէտ մը մտնայ՝ ա-
մէնէն ալ կը յանդիմանվի , ու ամէնէն ալ իրը
կը քննըվի · և անոր սրտին ծածուկ բաները 25
յայտնի կ՚ըլլան · ու նաբը երեսի վրայ իննած՝ Աս-
տուծոյ երկրպագութիւն կընէ , ու կը խոստովա-
նի՝ թէ իրաւունէ՛ Աստուած ձեր մէջն է ։

Ուստի ալ ի՞նչ պիտի ըլլայ եղբայրներ · երբոր 26
դուք միևնոյ կրժողվիք , ձեղմէ ամէն մէկը
թէ սաղմոս ունենայ , թէ վարդապետութիւն
ունենայ , թէ յայտնութիւն ունենայ , թէ լե-
զուներ ունենայ , թէ թարգմանութիւն ու-
նենայ , ամէնը օգուտի համար թող ըլլայ ։
Թէ որ մէկը օտար լեզուներ կրխօսի՝ երկու հո՛վ- 27
և թէ շատ ատլի՝ իրեք հատ ըլլան , և ան ալ մէ-
կիկ մէկիկ · ու մէկը թող թարգմանէ ։ Ետյց 28
թէ որ թարգմանող չըլլայ՝ եկեղեցիին մէջ լռու
թող կենայ · ինքը իր միտքին մէջ՝ ու Աստուծոյ

29 հետ թող խօսի ։ Խայտ մարգարէները երկուքը կամ իրեքը թող խօսին, ու մէկալները
30 թող քննութիւն ընեն ։ Հապա թէ որ ան նոյն տողին ուրիշ մէկուն ալ բան յայտնվե-
31 լու ըլլայ՝ առջինը թող լռէ ։ Վնչու որ կարող էք ամէնքիդ ալ մէկիկ մէկիկ մարգարէանալ, որ ամէնքն ալ սորվին, ու ամէնքն ալ մխիթար-
32 վին ։ Ա ան ալ մարգարէներուն հոգիները ալ
33 մարգարէներուն հնազանդ կըլլան ։ Վնչու որ Աստուած խռովութեան Աստուած չէ, հապա խաղաղութեան, ինչպէս որ սուրբերուն բոլոր
34 եկեղեցիներուն մէջ ։ Կնիկները ամէն եկեղեցիներու մէջ լռեն կենան. վնչու որ անոնց հրաման չի կայ խօսելու, հապա հնազանդ ըլլալու. ինչպէս որ օրէնքն
35 ալ կըսէ ։ Հապա թէ որ բան մը սորվիլ կուզեն նէ, տունը իրենց էրկանքը թող հարցունեն. որովհետև կնիկ մարդու անվայել է եկեղեցւոյ
36 մէջ խօսիլ ։ Աստուծոյ խօսքը մի թէ ձեզմէ՞ մի ելաւ, կամ թէ միայն ձեզի՞ մի հասաւ ։
37 Խայտ թէ որ մէկը կրկարծէ մարգարէ ըլլալ կամ հոգևոր, թող գիտնայ թէ ինչ որ ձեզի
38 գրեցի նէ Տէրոջը պատուէրներն են. բայց թէ
39 որ մէկը տգէտ է, թող տգէտ ըլլայ ։ Ասոնք եղբայրնե՛ր՝ մարգարէութիւն ընելու նախանձեցէք, ու լեզուներ խօսիլն ալ մի արգիլէք ։
40 Եւ ձեր ամէն բաներ պարկեշտութեամբ ու կարգաւ թող ըլլայ ։

ԳԼՈՒԽ Ե։

1 Եղբայրնե՛ր՝ ձեզի կըցուցընեմ իմ աւետարանս, որ ես ձեզի քարոզեցի. որ դուք ալ ընդունեցիք. ու անոր վրայ հաստատված էք.
2 որ անով դուք փրկվեցաք, թէ որ բռնէք նէ ինչ որ քարոզեցի ձեզի. միայն թէ գուցէ պա-
3 րապ տեղը հաւատացիք ։ Վնչու որ պինտ ա-

ռաջ ես ձեզի ան աւանդեցի , ան որ ես ալ ընդունեցի՝ որ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ գիրքերուն ըստ՝ն պէս , որ թաղուեցաւ , 4
ու յարութիւն առաւ երրորդ օրը՝ գիրքերուն ըստ՝ն պէս . ու որ երեցաւ Կեփասին , ուետքը տասներկուքին . 5
ետքը հինգ հարիւրէն է- 6
ւեղի եղբայրներուն միանգամ երեցաւ . որոնցմէ շատերը մինչև հիմայ կան , և ոմանք ալ նընջեցին : Ու ետքը երեցաւ Յակոբին , ետքը 7
բոլոր առաքեալներուն : Ա՛մէնէն ետքը որպէս 8
թէ մէկ անարգի մը՝ ինծի ալ երեցաւ : Վասն 9
զի ես առաքեալներուն պզտիկն եմ . որ արժանի ալ չեմ առաքեալ ըսուելու . քնչու որ հա-
տուծոյ եկեղեցին հալածեցի : Իսկ՝ ին թէ Ա՛ս- 10
տուծոյ շնորհքով եմ՝ ինչ որ եմ՝ նէ . և անոր շնորհքը որ իմ՝ վրաս է , պարապ բան մը չեղաւ , հապա անոնցմէ ամէնէն աւելի ես աշխատեցայ . և չէ՛ թէ ես , հապա Ա՛ստուծոյ շնորհքը՝ որ ինծի հետ էր : Ուստի՝ թէ՛ ես և թէ՛ անոնք 11
ասանկ քարոզեցինք , ու դուք ասանկ հաւատացիք :

Ուրեմն թէ որ Քրիստոս կըքարոզուի՝ որ մե- 12
ռելներէն յարութիւն առած է , ի՛նչպես ձեզմէ մէկ քանիները կրսեն , թէ Մ՝եռելներուն յարու-
թիւն չի՛ կայ : Թէ որ մեռելներուն յարու- 13
թիւն չի՛ կայ նէ , ուրեմն Քրիստոս ալ յարու-
թիւն չէ՛ առեր : Եւ թէ որ Քրիստոս յարու- 14
թիւն չէ՛ առեր նէ՝ մեր քարոզութիւնը պարապ է , ու ձեր հաւատքն ալ դատարկ է . և մենք 15
ալ Ա՛ստուծոյ սուտ վկաները գտնուած կըլլանք . որովհետև Ա՛ստուծոյ համար վկայութիւն տըւինք , թէ Ա՛նքը Յ-ե-ր-ե-ն-ե-ն յարուց Քրիստոսը . որ իրաւ չի յարուց անիկա , թէ որ մեռելները յարութիւն չառնուն . քնչու որ մեռելները յարու- 16
թիւն չառնուն նէ , ուրեմն Քրիստոս ալ յարու-
թիւն առած չէ՛ : Եւ թէ որ Քրիստոս յարու- 17

թիւն առած չէ՝ ձեր հաւատքը պարապ է, ու
18 տակաւին ան մեղքերուն մէջն էք: Ուրեմն
անոնք որ Քրիստոսով նընջեցին, կորսուեցան
19 մի: Եթէ որ միայն աս կեանքիս մէջ Քրիստոսի
յուսացած ենք՝ մենք բոլոր մարդկիներէն ալ
խղճալի ենք:
20 Նայց հիմայ Քրիստոս մեռելներէն յարու-
թիւն առած է նընջեցեալներուն առջի պտուղը:
21 Ընչու որ մարդով եղաւ մահը, ու մարդով ալ
22 մեռելներուն յարութիւնը: Ընչպէս որ Ադա-
մով ամէնքը կը մեռնին, անանկ ալ Քրիստոսով
23 ամէնքը պիտի կենդանի ըլլան: Նայն մէկը իր
կարգովը. առաջ՝ Քրիստոս, ետքը՝ Քրիստո-
24 սինները իր գալստեանը: Ետ անկէ նոր
հոգեայ վախճանը, երբոր թագաւորութիւնը
պիտի տայ Աստուծոյ ու Հօր ձեռքը. անատեն
որ պիտի խափանէ ամէն իշխանութիւնները,
25 և ամէն պետութիւնը ու զօրութիւնը: Ընչու
որ անոր պէտք է թագաւորութիւն ընել, մինչև
որ բոլոր թշնամիները իր ոտքերուն տակը դնէ:
26 Վերջին թշնամին որ պիտի խափանի, մահն է.
և ՚ի՛նչ ըսե՞ Նայն բաներ անոր ոտքերուն տակը
27 Հնազանդեցուց: Նայց երբոր կըսէ, թէ Նայն
բան անոր հնազանդած է, յայտնի է թէ բաց ՚ի
28 անկէ՝ որ ամէնը անոր հնազանդեցուց: Նայց
երբոր ամէնը անոր հնազանդ ըլլայ, անատեն
ինքը Որդին ալ հնազանդի պիտի անոր, որ
իրեն ամէնը հնազանդեցուց, որ Աստուած
29 ըլլայ ամէնը՝ ամէն բանի մէջ: Ապա թէ չէ,
ի՞նչ պիտի ընեն անոնք՝ որ մեռելներուն համար
կը մկրտուին. թէ որ իրաւցնէ մեռելները յա-
րութիւն չառնուն, ինչո՞ւ ուրեմն անոնց համար
30 կը մկրտուին. ինչո՞ւ համար մենք ալ ներքա-
31 թիւն կը քաշենք ամէն ժամ, և միշտ կը մեռնինք.
երդում կրնեմ եղբայրներ՝ ձեր պարծանքովը
որ ես ունիմ մեր Տէր Յիսուս Քրիստոսով:

ԹՒ որ մարդու պատճառաւ Եփեսոսի մէջ գա- 32
նոնները կռիւի մէջ եղած էի, ի՞նչ օգուտ կր
ինծի, թէ որ մեռելները յարութիւն չառնեն.
ուտենք խմենք, ինչու որ վաղը կմեռնինք։
Մի՛ խաբվիք. գէշ խօսքերը՝ աղէկ բարքը կա- 33
պականեն։ Արդարութիւնով արթնցէք, ու 34
մեղք մի՛ գործէք. ինչու որ չեն ունիք Աստուծոյ
գիտութիւնը չունին. ձեզ ամչցնելու համար
կըզրուցեմ։

Այլ պիտի ըսէ մէկը, որ Ինտո՞ր մեռելները 35
յարութիւն կառնեն, կամ՝ թէ ի՞նչ մարմնով
կուգան։ Անխելք՝ դուն անիկա որ կրցանես, 36
չի՛ կենդանանար՝ թէ որ չի մեռնի։ Ու ան որ 37
կրցանես, չէ՛ թէ ան մարմինը որ պիտի ծնանի՝
կրցանես, հապա մերկ հատ մը՝ թէ ցորենի ե-
լլայ, և թէ ուրիշ սերմերու։ Ու Աստուած 38
անոր մարմին կուտայ ինչպես որ կուզէ, և ամէն
մէկ սերմերուն իր մարմինը։ Ամէն մարմին 39
մէկ մարմին չէ, հապա՝ մարդուն մարմինը ու-
րիշ է, ու անասուններուն մարմինը՝ ուրիշ.
թռչուններուն մարմինը՝ ուրիշ, և ձուկերուն
մարմինը՝ ուրիշ։ Երկնաւոր մարմիններ ալ 40
կան, երկրաւոր մարմիններ ալ. բայց երկնա-
ւորներուն փառքը ուրիշ է, ու երկրաւոր-
ներուն փառքը՝ ուրիշ։ Արեւին փառքը ուրիշ 41
է, ու լուսինին փառքը՝ ուրիշ, և աստղե-
րուն փառքը՝ ուրիշ. ու մէկ աստղ մէկուկ աստ-
ղէն հմայ է փառքով։ Այսպէս ալ մեռելներուն 42
յարութիւնը. ապականութիւնով կրցանվի, ու
առանց ապականութեան յարութիւն կառնէ.
անարգութիւնով կրցանվի, ու փառքով յա- 43
րութիւն կառնէ. տկարութիւնով կրցան-
վի, ու զօրութիւնով յարութիւն կառնէ.
կրցանվի հնչաւոր մարմին, և յարութիւն կառ- 44
նէ հոգևոր մարմին. թէ որ հնչաւոր մարմին
կայ նէ՝ հոգևոր ալ կայ։ Ինչպես որ գրված 45

է · Առջի մարդը Ադամ կենդանի՛ հոգի եղաւ , երկրորդ Ադամը՝ կենդանի՛ ընող հոգի :
46 Այլ չէ թէ առաջ հոգեւորը , հապա շնա-
47 հաւորը · ու յետոյ հոգեւորը : Առջի մարդը եր-
կիրէն է հողեղէն · բայց երկրորդ մարդը՝
48 Տէր է երկինքէն : Ինչպէս հողեղէնը էր , ա-
նանկ ալ մենք հողեղէնքս · ու ինչպէս երկնաւորը , անանկ ալ երկնաւորները :
49 Եւ ինչոր հողեղէնին կերպարանքը որ հա-
գեր ենք , երկնաւորին կերպարանքն ալ
50 պիտի հագնինք : Այլ աս կըսեմ եղբայր-
ներ , որ մարմին ու արիւն Աստուծոյ թագա-
ւորութիւնը չեն կրնար ժառանգել · ոչ ալ ապականութիւնը կրժառանգէ անապականու-
51 թիւնը : Ահա խորհուրդ մը զըուցեմ ձեզի ·
Ամենքնիս չի պիտի նընջենք , բայց ամենքնիս
52 ալ պիտի նորոգվինք , յանկարծակի աչք գոցել
յանդգամ մէջ՝ վերջին փողին չէքէռ տալէնը ·
որովհետեւ փողը կըհարվի , ու մեռելները յա-
րութիւն պիտի առնեն առանց ապականու-
53 թեան · և մենք ալ կրնորոգվինք : Վասն զի
պէտք է որ աս ապականացու մարմինիս անա-
պականութիւն հագնի , ու աս մահկանացուս ան-
54 մահութիւն հագնի : Այլ երբոր աս մահկա-
նացուս անմահութիւնը հագնի , և աս ապակա-
նացուս անապականութիւնը հագնի , անատնը
պիտի ըլլայ ան խօսքը որ գրվեցաւ , թէ Մահը
55 յաղթութեան մէջ ընկղմեցաւ : Որ է ո՛վ մահ
քու յաղթութիւնդ · ո՛ւր է ո՛վ գերեզման քու
56 կսենգդ : Մահին կսենգը մեղքն է , ու մեղքին
57 ուժը՝ օրէնքը : Այլ գոհութիւն Աստուծոյ ,
որ մեզի յաղթութիւն տուաւ մեր Տէր Յիսուս
58 Քրիստոսի ձեռքովը : Ասոր համար իմ սիրելի՛ եղ-
բայրներս՝ հաստատ եղէք , անշարժ կեցէք · ա-
մեն ատեն եվելցէք Տէրոջը գործին մէջ · գիտ-
նաք որ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջը
առջեը :

ԳԼ. Ա.Ո.

Բայց սուրբերուն համար ազբիւրէն հաշուին վրայով , ինտոր որ պատուէր տրվի Կաղատացոց եկեղեցիներուն , դուք ալ անանկ ըրէք : Ամէն մէկշաբթի օրերը ձեզմէ ամէն մէկերնիդ իր քովը լծող դիզէ ինչ որ կրնայծողի : Որ չըլլայ թէ երբոր գամ նէ անատնիը ըլլայ ժողովոդը : Հապա երբոր գամ՝ ով որ դուք ընտրէք նէ ձեր թուղթերովը , ես անոնք կղրկեմ՝ ձեր պարգեւները Երուսաղէմ տանելու : Բայց թէ որ ինծի ալ պէտք ըլլայ երթալ , հետս պիտի երթան : Մակայն ես ձեզի պիտի գամ՝ երբոր դէպի Մակեդոնիա անցնելու ըլլամ . Հապա երբոր Մակեդոնիայի կողմերը պտրտած ըլլամ , կարելի է որ Եղէը ձեր քովը մնամ , կամ ձմեռ ուր հոն կրնեմ . որ դուք իս խրկէք , ուր որ ես պիտի երթամ : Ինչու որ չեմ ուզեր ձեզ հիմայ հարւանցի մը տեսնալ . յոյս ունիմ որ ատեն մը ձեր քովը կենամ , թէ որ Տէրը հրամայ ընէ : Մակայն հիմայ ես Եփեսոս պիտի մնամ մինչև Պենտեկոստէ . ինչու որ ինծի մեծ ու հարկաւոր դուռ մը բացվեր է . ու շատ հակառակորդներ կան :

Ուրդ թէ որ Տիմոթէոսը գայ՝ նայեցէք որ ձեր քովը առանց վախի ըլլայ . ինչու որ անիկա Տէրոջը գործը կը գործէ , ինչպէս ես ալ : Ըրլայ որ մէկը անիկա արհամարհէ . ու խաղաղութեամբ անիկա ճամբայ դրէք , որ ինծի գայ . ինչու որ անոր կրսպասեմ եղբայրներով մէկտեղ : Բայց Ապողոս եղբօրը վրայ , շատ աղաչեցի անոր որ ձեզի գայ եղբայրներուն հետ մէկտեղ . ու կամք չեղաւ իրեն որ հիմայ գայ . բայց պիտի գայ երբոր պարապ ըլլայ : Արթուն կեցէք . հաւատքի մէջ հաստատ կեցէք , մարդ եղէք , զօրացէք : Ձեր ամէն բանը սիրով ըլլայ :

15 Կաղաչեմ ձեզի եղբայրներ· գիտէք Յան-
փանէին ու Փորտունատոսին տունը· որունք որ
Աքայեացոց առջի պտուղն են· ու անձերնին
16 սուրբերուն սպասաւորութեանը մէջ դրին· որ
դուք ալ հնազանդ ըլլաք անանկներուն, և ա-
մէն մէկուն՝ որ ձեր հետը մէկտեղ կը գործէ ու
17 կաշխատի: Ուրախացայ ես Յանփանէին ու
Փորտունատոսին ու Աքայիկոսին գալուն հա-
մար· որ ձեր պակասութիւնը անոնք լեցուցին·
18 ինչու որ հանգիստ պահեցին իմ հոգիս ու ձե-
րը· ուստի անանկները պատուեցէք
դուք:
19 Ուրև կուտան ձեզի Աստուծոյ եկեղեցիները·
շատ բարև կուտան ձեզի Տէրոյմով Ակիւղասը
ու Պրիսկիղան՝ իրենց տանը մէջի եկեղեցիովը
20 մէկտեղ: Ուրև կուտան ձեզի ամէն եղբայր-
ները· բարև տըվէք մէկզմէկու սուրբ համ-
բուրով:
21 Այս բարևը իմ ձեռքիս Պօղոսին է: Թէ որ
22 մէկը Տէր Յիսուսը չի սիրէ նէ, նզովեալ ըլ-
23 լայ՝ Եղբ մեր Տէրը գայ: Ա՛ներ Տէր Յիսուս
24 Քրիստոսի շնորհքը ձեր հետը: Ու իմ
սէրս ձեր ամէնուն հետը ըլլայ
Քրիստոս Յիսուսով·
ամէն:

Առաջին նամակը առ Կորնթացիս գրեցաւ
Փիլիպպեայ գրչէն՝ Ստեփանեայ ի Փոր-
տունատոսէ ի Աքայիկոսէ
յետոյ:

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԿՈՐՆԹԱՑԻՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի Ա- 1
ստուծոյ կամքովը , ու Տիմոթէոս Եղ եղբայ-
րը · Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղե-
ցիին , Ա.քայեցոց ամէն կողմերը եղող բոլոր
սուրբերովը ։ Շ ՆորՀք և խաղաղութիւն ձեզի 2
Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիս-
տոսէն ։

ՕրՀնեալ է Աստուած ու մեր Տէր Յիսուս 3
Քրիստոսի Հայրը , գթութիւններուն Հայրը
և ամէն մխիթարութեան Աստուածը , ան որ 4
մեզ կը մխիթարէ մեր ամէն նեղութիւններուն
մէջը , որ մենք կարող ըլլանք մխիթարել ան-
որ ամէն նեղութիւններու մէջ են , ան մխիթա-
րութիւնովը որով մենք Աստուծմէ կը մխիթար-
վինք ։ Ինչու որ ինչպէս Քրիստոսի չարչա- 5

թանքները մեր վրայ շատ եղան, անանկ ալ
Քրիստոսի ձեռքովը մեր մխիթարութիւնն ալ
6 շատ կըլլայ: Ա՛ ան դի թէ որ նեղութիւն քա-
շենք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը
համար է, և թէ որ մխիթարվինք՝ ձեր մխիթա-
րութեանը ու փրկութեանը համար է. որ կը
յաջողվի համբերելով ան չարչարանքներուն՝
7 ան որ մենք ալ կըչարչարվինք. և մեր յոյսը
հաստատուն է ձեզի համար. քնչու որ գիտենք
թէ ինչու որ չարչարանքներուն հաղորդ ենք
անանկ ալ մխիթարութեանը պիտի ըլլանք:
8 Ինչու որ չեմ ուզեր եղբայրնե՛ր որ չգիտցող
ըլլաք դուք մեր նեղութիւնը, որ Ասիայի մէջ
եղաւ. որ մեր կարողութենէն էվել ծանրըցանք,
մինչև որ կեանքերնուս ալ այլևս եղանք:
9 Այլ մահուան վճիռը մենք վրանիս առինք. որ
ինքզինքնուս չապաւինինք, հապա Աստուծո՛յ
10 որ մեռելները կը յարուցանէ. որ ինքը անանկ մէկ
11 մահուանէն մեզ փրկեց, ու կըփրկէ. քնչու
որ յոյս ունինք՝ թէ տակաւին պիտի փրկէ,
մեզի համար ձեր ըղձած աղօթքին օգնականու-
թիւնովը. որ մեր վրայ եղած պարգևա-
ներուն վրայով՝ շատերն գոհութիւն տրվի
մեզի համար:
12 Ինչու որ մեր պարծանքը ասիկա է մեր խղճմտան-
քին վկայութիւնը, որ մենք սրբութիւնով ու
Աստուծոյ ճշմարտութիւնովը, և չէ թէ մարմ-
նաւոր իմաստութիւնով մը, հապա Աստուծոյ
շնորհքովը ապրեցանք յաշխարհի մէջ վարվելցանք, բայց
13 էվելըը դէպի ձեզի: Որովհետև ուրիշ բան
չենք գրեր ձեզի, հապա ան որ դուք կրկարդաք
ու կրձանչնաք. ևս կը յուսամ՝ թէ մինչև վեր-
14 ջը պիտի ճանչնաք. ինչպես որ շատեն քիչ մը
ճանչցաք մեզ, որ ձեր պարծանքն ենք. ինչու
որ դուք ալ մերը, մեր Տէր Յիսուս Քրիստոսի
օրը:

Եւ ասոր ապաւինելով՝ կուզէի առաջ ձեզի 15
գալ, որ զոյգ կրկին շնորհք ընդունիք. և 16
ձեզմէ երթալ դէպ ի Մակեդոնիա. ու նորէն
Մակեդոնիայէն ձեզի գալ, ու ձեզմէ ճամբայ
դրկիլ դէպ ի Հրէաստան։ Արդարեւ ասոր որ ես 17
մտմտացի՝ նէ՝ թեթեւութիւնո՞վ մի շարժեցայ.
կամ թէ՝ ան որ ես կը մտմտամ՝ նէ, մարմնա-
ւորի՛ մը պէս կը մտմտամ՝ ա՛յնպէս, չէ՞. հապա որ իմ
կողմանէս, այո՛ն՝ այո՛ ըլլայ, ու ո՛չն՝ ո՛չ։
Ճշմարիտ է Աստուած, թէ մեր խօսքը ձեզի որ 18
հասաւ՝ այո՛ և ո՛չ չէ։ Ինչու որ Աստուծոյ 19
Որդին Յիսուս Քրիստոս՝ որ մեզմով ձեզի
քարոզուեցաւ, (ինծմով և Սիղուանոսով՝ ու Տի-
մոթէոսով,) ան այո՛ ու ո՛չ չեղաւ. հապա իր մէջը
եղաւ այո՛ն. քանզի որչափ Աստուծոյ խոստ- 20
մունքները կան՝ անոր մէջը այո՛ են. անոր
համար ալ անով Աստուծոյ փառքին մեր ձեւ-
քովը կ՚ելլայ Ամէն։ Այլ ան որ մեզ ձեզմով 21
մէկտեղ՝ Քրիստոսով հաստատեց, ու մեզ օ-
ծեց՝ նէ, Աստուած է. որ մեզ կնքեց ալ, 22
և Հոգւոյն Սբ՚ոյ գրաւը մեր սրտին մէջը
տրաւ։ Այլ ես իմ անձիս Աստուած վկայ 23
կրկանչեմ՝ որ ձեզ խնայելուս համար տակաւին
Կորնթոս չեկայ։ Ո՛չ թէ որ ձեր հաւատքին 24
վրայ տիրապետենք, հապա գործակից ենք ձեր
շնորհացը. ինչու որ դուք հաւատքով հաստատ-
ված էք. սակայն ես ասոր ընտրեցի, որ նորէն Ի
տրտմութիւնով չի գամ ձեզի։ Ինչու որ թէ 2
ես ձեզ տրտմեցունեմ՝ ալ ո՞վ է որ իս ուրախ
պիտի ընէ, թէ չէ ան՝ որ ինծմէ տրտմեցաւ։
Եւ ասա գրեցի որ չըլլայ թէ երբոր գամ՝ նէ՝ տր- 3
տմութիւն մը քաշեմ՝ անոնցմէ, ուսկէից որ ինծի
պէտք է ուրախ ըլլալ. ձեր ամենուն վրայ յոյս
ունիմ՝, որ իմ ուրախութիւնս ձեր ամենուն է։
Ինչու որ շատ ցաւերէս և սրտիս նեղութիւնէն 4
ես ձեզի գրեցի շատ արցունքով. չէ՝ թէ որ

դուք տրամիք , Հապա որ իմ սէրս գիտնաք՝ որ
ես ունիմ էվիլօք ձեր վրայ ։
5 Հապա թէ որ մէկը տրամեցուց՝ չէ՛ թէ իս
տրամեցուց , Հապա շատէն քիչը , որ ծանրու-
6 թիւնը ձեր ամէնուն վրայ չի ձգեմ ։ Հերիք
է անանկ մարդուն ան պատիժը , որ չատերէն
7 պատժըվեցաւ ։ Հակէ եւս անոր հակառակը՝
էվիլօք դուք նէրելեկք անոր , ու մխիթարեցէք ,
որ ջըլայ թէ անանկը աւելի տրամութենէն ընկղ-
8 մի ։ Ուստի կաղաչեմ ձեզի , որ անոր վրայ
յիւր սէրը հաստատէք ։ (ասոր Համար ալ գրեցի
9 ձեզի , որ ձեզ փորձեմ՝ թէ ամէն բանի մէջ
10 հնազանդ կըլլաք մի ։ Թէ որ դուք մէկուն
կրնէրէք , ես ալ ներնէրեմ ։ ինչու որ եթէ ես ալ
ներեմ , որուն ինչ որ ներեմ նէ՝ ձեզի Համար
11 է Քրիստոսի դէմը ։) որ ջըլայ թէ չղկանք
մը կրնէք սատանային ։ որովհետեւ անոր խոր-
հուրդները չգիտցող մը չենք ։
12 Հայց երբոր Տրովադա Հասայ ես Քրիստոսի
աւետարանը քարոզելու , և ինծի դուռ մը բաց
13 էր Տէրոջմով , իմ Հոգիիս Հանգիստ չտրվի ։
ինչու որ իմ Տիտոս եղբայրս ես հոն չի գտայ ։
Հապա անոնցմէ հրաժարելով Մակեդոնիա գա-
ցի ։
14 Հայց գոհութիւն Աստուծոյ որ ամէն բանի մէջ
մեզ Հոչակաւոր կընէ Քրիստոս Յիսուսով , ու
գինքը ճանչնալուն Հոտը մեզմով յայտնի կընէ
15 ամէն տեղ ։ ինչու որ մենք Աստուծոյ առջև
Քրիստոսի անուշ Հոտն ենք՝ փրկվածներուն
16 մէջ և կորսվածներուն մէջ ։ ոմանց մահուան
Հոտ դէպ ի մահ , և ոմանց կենդանու թեան Հոտ
դէպ ի կեանս ։ և ասոր ո՞վ բաւական կըլլայ ։
17 Ինչու որ մենք ուրիշներուն պէս չենք , որ Աս-
տուծոյ խօսքը կըվաճառեն ։ Հապա որպէս թէ
Հաւատարմութեամբ , Հապա որպէս թէ Աս-
տուծմէ Աստուծոյ առջեը՝ Քրիստոսով կըխօս-

սինք ։ Ասսի կըսկըսինք նորէն անձերնիս ըն- 1
ծայել · Թէպէտ ուրիշներուն պէս պէտք չըլլար
մեզի յանձնարարութեան թուղթեր՝ ձեզի , կամ
ձեզմէ ։ Հապա մեր թուղթերը դուք էք՝ մեր 2
սրտերուն մէջը գրված , ճանչցրված , ու կար-
դացված ամէն մարդկիներէն · յայտնըված , 3
որ դուք Քրիստոսի թուղթերն էք մեր սպա-
սաւորութիւնով · ու գրված՝ չէ թէ մուրով ,
հապա կենդանի Աստուծոյ Հոգիով · չէ թէ քա-
րեզէն տախտակներու վրայ , հապա սրտին մար-
մնեզէն տախտակներուն վրայ ։ Այսանկ յոյս մը 4
ունինք մենք Աստուծոյ վրայ՝ Քրիստոսի ձեւ-
քովը · չէ թէ մենք ինքնիրենիս բաւական ենք 5
բան մը խորհելու՝ որպէս թէ մեզմէ · հապա մեր
բաւականութիւնը Աստուծմէ է · որ բաւական 6
ալ ըրաւ մեզի՝ նոր կտակարանին պաշտօնեաներ
ընելու՝ չէ թէ գրով , հապա՝ Հոգիով · ինչու
որ գիրը կըսպաննէ , բայց Հոգին կապրեցունէ ։
Ասսի թէ որ մահուան պաշտօնը գրով փոր- 7
ված քարեզէն տախտակներու վրայ՝ փառքով
եղաւ , որ Իսրայելի որդիքը կարող չըլլան
Մովսէսին երեսը նայելու՝ անոր երեսին փա- 8
ռացը համար , որ պիտի խափանվէր · որքան
եվեղք Հոգիին պաշտօնը փառքով պէտք է ըլ- 9
լայ ։ Ինչու որ՝ եթէ դատապարտութեան
պաշտօնը փառքով էր , որքան աւելի արդա-
րութեան պաշտօնը փառքով պէտ է ըլլայ ։
Այսան չի ան որ փառաւոր էր՝ ասոր մասին փա- 10
ռաւոր չէ , փառքին առաւելութեանը պատճա-
ռովը ։ Ինչու որ եթէ ան որ պիտի խափան- 11
վէր՝ փառքով էր , որքան աւելի ան որ կրկնայ՝
փառքով պարտի ըլլալ ։ Ասսի՝ ասանկ յոյս 12
որ ունինք , շատ համարձակութեամբ վարվինք
մեր խօսքին մէջը · և չէ թէ ինչպես Մովսէսը 13
իր երեսին վրայ ծածկոց կդնգէր , որ Իսրայելին
որդիքը չի տեսնան ան խափանվելու ին վախ-

14 ձանը : Հապա անոնց միտքը կուրցան . որ
մինչև աւօրվան ատենը ան ծածկոցը ձգված է
հին կտակարանին կարդացմունքին վրայ , ու չի՛
վերնար , (ինչու որ Քրիստոսով պիտի խա-
15 փանվի .) Հապա մինչև այսօր երբոր Մովսէ-
սին գիրքը կկարդան , ան վարագոյրը անոնց
16 սրտին վրայ կեցած է : Սակայն երբոր
Տէրոջը դառնան , անատենը պիտի վերնայ ան
17 ծածկոցը . վասն զի Տէրը Հոգին կ՚ըլլայ ,
գին է . ուր որ Տէրոջը Հոգին կայ , անտեղ
18 ազատութիւն կայ : Հայց մենք ամէնիս բաց
երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ
անդրադառնալով , նոյն պատկերին կըսուրբգ՚վինք փառքէն
ի փառք , ինչպէս Տէրոջը Հոգիէն :

Գ.

1 Ասոր համար պաշտօնը ունինք , ինչպէս որ ողոր-
մութիւն գտանք՝ ու չենք ձանձրանար .
2 հապա մեկդի կեցանք ամօթալի ծածուկ բա-
ներէն , որ խորամանկութիւնով չի վարվինք ,
և խարդախութիւն չընենք Աստուծոյ խօսքին
մէջ . հապա ճշմարտութիւնը յայտնելով ան-
ձերնիս ամէն մարդոց միտքին ընդդէմ կ՚ատե-
3 նոյ առջևը : Հապա թէ որ մեր աւետարանը
ծածկված ալ է նէ՝ կորսըվածներուն մէջը
4 ծածկված է ան . որ աս աշխարհիս աստուածը
ան անհաւատներուն սիրտերը կուրցուց , որ
Քրիստոսի փառաւորեալ աւետարանին լոյսը
անոնց վրայ չի ծագէ . որ Ինքն է անեղեղիի
5 Աստուծոյ պատկերը : Ինչու որ չենք թէ անձեր-
նիս կըքարոզնինք , հապա Քրիստոս Յիսուս Տէ-
րը , ու մեզ՝ ձեր ծառաները Քրիստոսի համար :
6 Վասն զի Աստուած է՝ որ հրաման բրաւ խաւա-
րէն լոյս ծագիլ . որ ծագից ալ մեր սրտին մէջ՝
Աստուծոյ փառքին գիտութեան լոյսը տալու
7 Յիսուս Քրիստոսի դիմաց : Արդ մենք աս

գանձը հողէ ամաններու մէջ ունինք, որ ան
զօրութեան շատութիւնը Աստուծմէ ըլլայ, ու
չէ թէ մեզմէ։ Ամէն կողմանէ նեղուիլ ենք, 8
բայց տկարացած չենք. կարօտանալ ենք, բայց
տարակուսած չենք. հալածուած ենք, բայց և 9
բնաւ ձրգուած չենք. շարչարուած ենք, բայց
սատկած չենք. ամէնատեն Յիսուսի մահը մեր 10
մարմիններուն մէջը կրնանք, որ Յիսուսի կեանքն
ալ մեր մարմիններուն մէջը յայտնուի։
Վասն զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի հա- 11
մար միշտ մահու կը մատնուինք, որ Յիսուսի
կեանքն ալ մեր մահկանացու մարմիններուն
մէջը յայտնի ըլլայ։ Ուստի մահը մեր մէջը կը 12
զօրանայ, և կեանքը՝ ձեր մէջը։ Բայց հաւատ 13
քին նոյն հոգին ունինք, ինչպէս որ գրուած է՝
Հաւատացի՛, անոր համար ալ խօսեցայ. մենք
ալ կը հաւատանք, անոր համար կը խօսինք ալ.
ասիկա գիտնալով՝ թէ ան՝ որ Յիսուսը յարուց, 14
մեզ ալ Յիսուսին հետ պիտի յարուցանէ, ու
ձեզմով պիտի կայնեցունէ ներկայ մէկտեղ. ին- 15
չու որ ամէն բան ձեզի համար է. որ ան առատ
շնորհքը՝ շատերուն գոհութիւն բնակէն էմելնայ
Աստուծոյ փառքին համար։
Ընդ որ համար չենք ձանձրանար. բայց թէ- 16
պէտ ասիկա մեր դուրսի մարդը կապականի, սակայն
մեր ներսի մարդը օրէ օր կը նորոգուի։ Վասն 17
որ ասիկա մեր թեթեւ նեղութիւնը ժամանակաւոր
շատութիւնը յաւիտենական առաւելութեամբ մեզ
փառքին մեծութիւնը կը գործէ մեր վրայ։ Վասն 18
զի մենք ասիկա երևցած բաներուն չենք նայիր,
հապա չերևցածներուն. ինչու որ ասիկա երևցած
բաները ժամանակաւոր են, ու չերևցածները՝
յաւիտենական։ Վասն զի գիտենք՝ որ թէ մեր 5
ասիկա երկրաւոր շինուածքնուս տունը քակուի նէ,
մէկ շինուած մը ունինք Աստուծմէ՝ ձեռքով չի
շինուած տուն մը, յաւիտենական՝ երկինքի մէջ։

2 Եւ աս չինաշխ մէջը կրհառաչենք · որով-
հետև երկինքի բնակութիւնը կուզենք հագ-
3 նել · անանկ որ՝ երբոր ան հագնելու ըլլանք
4 նե , մերկ չի գտնըվինք : Վ աան զի մենք որ
աս շինուածքին տակն ենք՝ կրհառաչենք ծան-
րութիւն քաշելով · ինչու որ չենք ուզեր վրա-
նեն հանել · հապա անիկա ասոր վրայ
հագնել , որ աս մահկանացութիւնը ընկղմի ան
5 կեանքէն : Հայց ան որ մեզի յաջողութիւն
կուտայ աս բանին մէջը՝ Աստուած է · որ մեզի
6 տուաւ հոգիին գրաւը : Վստահ ապահով ենք
ամէնատեն · և գիտենք թէ որքան ատ մարմի-
նին մէջ ուշանալու ըլլանք , Տէրոջմէն օ-
7 տար կըլլանք · (ինչու որ հաւատքով կերթանք
8 մենք , ու չէ թէ կարծիքով ·) ուստի կրհառաչ-
ձակինք՝ և ախորչ ալ կուզենք աս մարմինէն
9 ելլալ , ու Աստուծոյ քով մըտնալ : Հայր հա-
մար կրջանանք ալ , որ թէ ուշանալու ըլլանք ,
և թէ ելլալու ըլլանք , միայն թէ անոր հաճոյ
10 ըլլանք : Վ աան զի մենք ամէնիս ալ Քրիս-
տոսի առեանին առջեւը պիտի կայնինք , որ ամէն
մէկը առնէ իր մարմնովը ինչ որ առաջուց
գործեց նե , թէ բարի՛ և թէ չար :
11 Վստահ Տէրոջը վախը գիտնալով՝ մարդոց
միտքը կրհաճեցուննք · սակայն մենք Աստու-
ծոյ առջեւը յայտնըվելու ենք · բայց ես կը
յուսամ որ ձեր խղճմտանքին մէջն ալ յայտնի
12 ենք : Չէ՛ որ իբր թէ նորէն անձերնիս ձեզի
կրնծայենք , հապա պատճառ մը կուտանք ձեզի
մեր վրայով պարծենալու · որ բան մը ունենաք
պատասխանելու անոնց՝ որ աչքի երեւցածովը կը
13 պարծենան , ու չէ թէ սրտով : Ինչու որ
եթէ խելքէ դուրս բան մը ըրինք նէ՝ ան Աստու-
ծոյ համար է · և թէ որ զգաստ եղանք՝ ան ձեզի
14 համար է : Վ աան զի Քրիստոսի սէրը մեզ
կրստիպէ աս բանը քննելու · որ թէ մենք ա-

մենուն տեղը որ մեռաւ , անանկ է նէ ամենքն ալ մեռած էին . և ամենուն վրայ մեռաւ , որ կենդանի եղողները ալ իրենց անձերնուն կենդանի չըլլան , հապա անոր՝ որ ինքը անոնց վրայ մեռաւ , ու յարուցին առաւ : Ասկէ հետև մենք 16 մէկ մը մարմինով չենք գիտեր . որ թէպետ գիտեինք Քրիստոսը մարմինով , բայց հիմայ՝ ալ անանկ չենք գիտեր : Ուստի թէ որ մէկը 17 Քրիստոսի մէջ է , անիկա նոր ստեղծուած մըն է . հինը որ հինը անցաւ , ու հիմայ ամէն բան նոր եղաւ : Ասկայն ամէն բան Աստուծմէ է . 18 ան որ մեզ իրեն հետ հաշտեցուց Քրիստոսի ձեռքովը . ու տուաւ մեզի պաշտօնը հաշտութեան : Եւ որով հետև Աստ- 19 ուած էր , որ Քրիստոսին ձեռքովը աշխարհս իրեն հետ հաշտեցուց , և անոնց մեղքերը իրենց չի սեպեց , ու հաշտութեան խօսքը մեր մէջը դրաւ . ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպա- 20 նութիւն կընենք , իբրև թէ Աստուած կըլսարեւ խօսէր մեզմով . կաղաչենք յԱնէ Քրիստոսի կողմանէ , հաշտըվեցէք Աստուծոյ հետ : Զան 21 ղի Անպարտ անիկա՝ որ մեղք չէր գիտեր , մեղքի համար մեզմով սեպեց . որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդարութիւն եղած ըլլանք : Զեր. Օ. հետը գործակից ենք , ու կաղաչենք , որ պա- բապ տեղը Աստուծոյ շնորհքը չընդունիք դուք : Ասիկա որ Ընդունելի ժամանակը՝ 2 լսեցի քեզի , կըսէ , և փրկութեան օրը օգնեցի քեզի . ահա ընդունելի ժամանակ , ահա փրկութեան օր : Ընչեայ որ գայթակղու- 3 թիւն տաք մէկ բանով մը , որ չըլլայ պաշտօնը արատաւորի . հապա ամէն բանի մէջ ձեր անձը 4 ընծայեցէք Աստուծոյ սպասաւորներու պէս՝ շատ համբերութիւնով նեղութիւններու մէջ , տա- ռապանքի մէջ , չարչարանքի մէջ , ծեծվելու 5 մէջ , բանտերու մէջ , խռովութիւններու մէջ ,

աչխատութիւններուս մէջ , հսկումներուս մէջ ,
6 ծոմապահութիւններուս մէջ , սրբութիւնով ,
գիտութիւնով , երկայնմտութիւնով , անուշ-
չութիւնով , Սուրբ Հոգիով , առանց կեղ-
7 ծաւորութիւնի՝ սիրով , ճշմարտութեան խօս-
քովը , Աստուծոյ զօրութիւնովը , արդարութեան
8 զէնքերովը՝ որ աջ կողմին ու ձախ կողմին է. փառ-
քով , ու անարգութիւնով , գովութիւնով , և
պարսաւանքով , մոլորցուողներու պէս՝ և
9 ճշմարիտներ , չի ճանչցրվածներու պէս՝ ու
ճանչցրվածներ . մահկանացուներու պէս , և
ահա կենդանի ենք . պատժրվածներու պէս , ու
10 սպանրված չենք . տրտմածներու պէս , ու միշտ
ուրախ ենք . աղքատներու պէս , ու շատերը
կրմծցունենք . որպէս թէ բան մը չունինք , և
11 ամէն բաներ ունինք : Կորնթացիներ բերանները ձեզի
բացված են Կորնթոսացիներ , և մեր սիրտերը
12 լայնցած : Չուք մեզմէ չէք նեղվիր քան , հապա ձեր
13 ուշնեցած գութերին մէջ կընեղվիք . ուստի անոր
հատուցումը ընելու համար՝ (իբրև իմ զաւ-
կներս կըսեպեմ ձեզ ,) դուք ալ ընդարձակ
լայնցէք :
14 Մի անհաւատներուն հետ լուծի բնկեր մի՛ ըլ-
լաք . քանզի որ ինչ հաւատրդութիւն ունի ար-
դարութիւնը անօրէնութեան հետ . կամ թէ
ինչ հաղորդութիւն ունի լոյսը՝ խաւարին
15 հետ . և կամ ինչ միաբանութիւն ունի Քրիս-
տոս բելիարին հետ : Կամ թէ ինչ բաժին
16 ունի հաւատացեալը անհաւատին հետ . կամ թէ
ինչ նմանութիւն ունի Աստուծոյ տաճարը
կռատաններուն հետ . Որպուսզի դուք կենդա-
նի Աստուծոյ տաճարն էք . ինչպէս որ Աստուած
ըսաւ , թէ Անոնց մէջը պիտի բնակիմ , ու ա-
նոնց մէջ պիտի քալեմ , և անոնց Աստուած
պիտի ըլլամ , ու անոնք իմ ժողովուրդս պիտի
17 ըլլան : Ասոր համար ելէք անոնց մէջէն , ու

զատվեցէք , կըսէ Տէրը · և պիղծ բանելու մի
մօտիկնաք · ու ես ձեզ պիտի ընդունիմ , և ես 18
ձեզի Հայր պիտի ըլլամ , ու դուք ինծի տղաք-
ներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝ կըսէ ամենա-
կալ Տէրը : Ասոնք սիրելիք՝ որովհետև ես Ի
խոստումներս մենք ունինք՝ ես մեր անձերը
մաքրմինք ու հոգիի ամէն կերպ պղծութենէ
նէն մաքրենք , սրբութիւն գործելով Աստուծոյ
վախովը :

Ընդունեցէք մեզ · ինչու որ մենք մէկու մը 2
վնաս չի տրվինք , ու մէկը չի պղտոցեցինք , և մէ-
կը չի զրկեցինք : Ձէ թէ ձեզ դատապարտելու 3
համար ասս կըզըուցեմ՝ որովհետև ես առաջուց
ըսեր եմ , որ դուք մեր սրտերուն մէջն էք՝
ապրելու ու մեռնելու ձեզի հետ : Հաստ է իմ 4
համարձակութիւնս ձեր վրայ · շատ է իմ պար-
ծանքս ձեզի համար · լեցուն եմ մխիթարու-
նով , էվելցած եմ ուրախութիւնով մեր ամէն
նեղութիւններուն մէջը : Ա՛ն ալ երբոր 5
մենք Մակեդոնիա հասանք՝ մէկ կերպով մը մեր
մարմիններուն հանգստութիւն չեղաւ · հապա
ամէն կողմանէ նեղութիւն կըքաշէինք · ինչու որ
դուրսէն պատերազմներ էյին , ու ներսէն՝ վա-
խեր : Այց Աստուած՝ որ խոնարհները 6
կըմխիթարէ , մեզ մխիթարեց Տիտոսի գալովը :
Ձէ թէ միայն անոր գալովը , հապա ան մխի- 7
թարութիւնովն ալ՝ որով ինքը մխիթարվեր էր
ձեր մէջը , երբոր մեզի պատմեց ձեր բաղձան-
քը , ձեր ողբը , ձեր ինծի համար եռանդուն բոր-
բոքը , այնքան որ էվելըք ուրախ եղայ ես : Ընչու 8
որ եթէ ձեզ տրտմեցուցի ան թուղթովը չեմ
զղջար , (թէպէտ զղջացեր էի ·) որ տեսայ՝
թէ ան թուղթը ձեզ տրտմեցուց թէկ և քիչ մը
ատեն · էսպէս հիմայ ես ուրախ եմ , չէ թէ որ 9
տրտմեցաք , հապա՝ որ ապաշխարութիւնով
տրտմեցաք · որովհետև դուք Աստուծոյ ու-

զածին պէս տրտմեցաք , անանկ որ մէկ բանի մը
10 մէջ մեզմէ զըկանք չի քաշէք : Ինչու որ Աս-
տուծոյ ուզածին պէս եղած տրտմութիւնը՝
ապաշխարութիւն մը կըգործէ փրկութեան հա-
մար որ զղջանալու բան չէ · բայց աշխարհի
11 տրտմութիւնը մահ կըպատճառէ : Ասոր
նըման բանը որ դուք Աստուծոյ ուզածին պէս
տրտմեցաք նէ , ձեր մէջը որչափ ջանք դո-
ծեց , կամ ջատագովութիւն , կամ սրդող-
կութիւն , կամ վախ , կամ բաղձանք ,
կամ նախանձաւորութիւն , կամ վըէժխնդ-
րութիւն · որ ամէն կերպով ինքզինքիդ
12 ցուցըցիք՝ որ ատ բանին մէջ մաքուր էք : Ա-
նանկ է նէ՝ ան որ ես ձեզի գրեցի նէ , չէ՛ թէ
անոր համար՝ որ զըկանք մը ըրաւ , և չէ՛ թէ
անոր համար՝ որ զըկանք մը քաշեց , հապա՝ որ
ձեր վրայ մեր ունեցած հոգը յայտնի ըլլայ
13 Աստուծոյ առջևը : Ասոր ան մեր մխիթարու-
թեանը վրայ մենք մխիթարեցանք · շատ էվելըք
ալ խնդացինք Տիտոսի խընդութեանը համար ·
ինչու որ անոր հոգին ձեր ամէնէն հանգըստու-
14 թիւն գտեր էր : Ա՛ ան զի ինչ որ ես անոր
առջևը ձեզի համար պարծենցայ նէ՝ ամօթով
չեղայ · հապա ինչպէս ամէն բան ճշմարիտը խօ-
սեցանք ձեզի նէ , անանկ ալ մեր պարծենալը
15 Տիտոսին քովը՝ ճշմարիտ եղաւ : Եւ ան որ
գութը էվելըք է ձեր վրայ · ինչու որ ինքը մեր
միտքը կըբերէր ձեր ամենուդ հնազանդութիւ-
նը , թէ ինչպէս վախով ու դողով անիկա ըն-
16 դուներ էք : Ասոր՝ ալ ես ուրախ եմ , որ ա-
մէն բանի մէջ ձեր վրայ վստահութիւն
ունիմ :

Կ Ա Ղ Ա Տ Ա Ց Ի Ք

Ա՛ղաչեմ զձեզ եղբարք՝ ընդ ողորմութիւն Աստուծոյ զմարմինս ձեր ընծայել զոհ կենդանի սուրբ հաճոյ Աստուծոյ զպաշտօն բանական ձեր։ Եւ մի՛ կերպանայք այսմ աշխարհի, այլ փոխեցարուք նորոգութեամբ միտս ձերոց, զի ստուգիւ ճանաչիցէք զկամս Աստուծոյ զբարին եւ զհաճոյն եւ զկատարեալն։ Զի ասեմ ես շնորհաց որ տուաւ ինձ՝ ամենայն որ կայք ի ձեզ, մի՛ ամբարձցի ոք ի միտս իւր քան զինչ պարտ է խորհել, այլ խորհեսցի ի չափ հաւատոյ զոր բաժանեաց Աստուած ամենայն մարդոյ։ Զի որպէս ի մարմնի մի՛ բազում անդամս ունիմք, եւ ոչ ամենայն անդամք գործ մի գործեն, նոյնպէս մեք բազումք մարմին եմք ի Քրիստոս, եւ մասնաւորապէս անդամք միմեանց։ Եւ ունիմք պարգեւս զանազանս ըստ շնորհացն զոր տուաւ մեզ, եթէ մարգարէութիւն՝ ըստ համեմատութեան հաւատոյ, եթէ պաշտօն՝ ի պաշտօնի, եթէ որ ուսուցանէ՝ ի վարդապետութեան, եթէ որ յորդորէ՝ ի յորդորելն, որ տայ՝ ի պարզութեան, որ կանգնէ՝ ի ջանասիրութեան, որ գթայ՝ ի հեզութեան։ Սէրն անկեղծ լիցի, ատեցէք զչարն, կպչեցարուք բարւոյն։ Սիրով եղբայրական ի միմեանս գթասիրեցէք, պատուով միմեանս յաղագս առաջնորդել։ Ի ջանասիրութեան մի՛ ծուլանայք, ի հոգւոյ եռանդնացարուք, Տեառն ծառայեցէք։ Ուրախ եղէք ի յուսոյ, համբերեցէք ի նեղութեան, յարատեւեցէք ի աղօթս։ Ի պէտս սրբոց հաղորդեցարուք, զհիւրասիրութիւն ջանայք։ Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք եւ մի՛ անիծանէք։ Ուրախ եղէք ընդ ուրախացեալսն, լացէք ընդ լացեալսն։ Զմիմեանս ի միտս ունիք, մի՛ զբարձրագոյնս խորհիք, այլ ընդ խոնարհսն հաճեցարուք։ Մի՛ իմաստուն լինիք առ ինքեանս։ Մի՛ չար փոխարէն տայք ոք չարի, մի՛ հոգայք զբարիս առաջի ամենայն մարդկան։ Եթէ կարելի է, որչափ ի ձեզ է, ամենայն մարդկան հաշտ եղէք։ Մի՛ վրէժխնդիր լինիք, սիրելիք, այլ տուէք տեղի բարկութեան, զի գրեալ է. Ինձ է վրէժխնդրութիւն, ես հատուցից, ասէ Տէր։ Այլ եթէ քաղցէ թշնամի քո, կերակրեա՛ զնա, եթէ ծարաւի է, ջո՛ւր տուր նմա. զի այսպէս արարեալ կրակ հուր կուտես զգլուխ նորա։ Մի՛ յաղթեցիր ի չարէ, այլ յաղթեա՛ չարին բարեաւ։

Ամենայն անձ հնազանդ լիցի իշխանութեանց գերագոյնաց, զի չիք իշխանութիւն, բայց յԱստուծոյ, եւ որ կան՝ յԱստուծոյ կարգեալ են։ Ուստի որ հակառակի իշխանութեան, հրամանի Աստուծոյ հակառակի, եւ հակառակողքն դատաստան ընդունին։ Զի իշխանքն ոչ են սարսափ գործոյ բարւոյ, այլ չարեաց։ Կամիս՞ զի մի՛ երկնչիս ի զօրութենէ, բարի՛ արա, եւ գովեստ ստասցես ի նմանէ։ Զի Աստուծոյ սպասաւոր է քեզ ի բարին։ Եթէ ոչ բարի՛ արասցես, երկի՛ր, զի ոչ զսուր զուր կրէ, զի Աստուծոյ սպասաւոր է, վրիժագործ ի բարկութիւն ի վերայ չարագործին։ Վասն որոյ հարկ է հնազանդել ոչ միայն վասն բարկութեան, այլ եւ վասն խղճի։ Վասն այսորիկ եւ հարկս տայք, զի Աստուծոյ սպասաւորք են, որ ի սմին ինդրեալ կան։ Տուէ՛ք ամենայնի զոր պարտ իցէ, զհարկն զհարկ, զմաքսն զմաքս, զերկիւղն զերկիւղ, զպատիւն զպատիւ։ Ոչ ոքի պարտական լերուք, բայց զմիմեանս սիրել։ Զի որ զընկերն սիրէ, զօրէնսդրութիւն կատարեաց։ Զի զայն՝ Ոչ շնասցես, Ոչ սպանցես, Ոչ գողասցես, Ոչ ստեսցես, Ոչ ագահասցես, եւ եթէ ոք իցէ այլ պատուիրան, ամփոփի ի բանիս այսմիկ, որ է՝ Սիրեսցես զընկերն քո իբրեւ զանձն քո։ Սէրն ընկերի չարիս ոչ առնէ, վասն որոյ լիութիւն օրինացն սէրն է։ Եւ զայս գիտասջիք զի ժամ է, զի ժամ է արդէն յարուցանել զձեզ ի քնոյ, զի արդ մերձ է մեզ փրկութիւն քան զորչափ հաւատացաք։ Գիշերն յառաջացաւ, եւ ցերեկն մերձեցաւ։ Արդ թողցուք զգործս խաւարի, եւ զգեցցուք զզէնս լուսոյ։ Որպէս ցերեկի վայելուչ գնասցուք, ոչ ի գինարբուսս եւ ի հարբեցութիւնս, ոչ ի պոռնկութիւնս եւ ի պղծութիւնս, ոչ ի նախանձ եւ ի հակառակութիւն, այլ զգեցարուք զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եւ զմարմնոյ զհոգս մի՛ առնէք ի ցանկութիւնս։

նէ՝ պակը ունեցածին չափովը ընդունելի է, ու
13 չէ՛ թէ չունեցածին չափովը։ Ինչու որ չէ՛ թէ
ես ուրիշներուն հանգստութիւն կուգամ, ու
14 ձեզի նեղութիւն. հապա հաւասարութիւնով՝
հիմակուան ատենս ձեր աւելին անոնց պակասութեանը լրող ըլլայ. որ անոնց աւելին ալ օր
15 ը օգնութիւնը ըլլայ ձեր պակսութեանը մէջ, որ
հաւասարութիւն ըլլայ. ինծոր որ գրված է.
16 թէ՝ Ան որ շատ առաւ նէ, չէ պակսեցաւ։ Բայց գոհութիւն
Աստուծոյ, որ նոյն հոգը ձեր վրայ՝ Տիտոսին
17 սիրտը ձգեց. որ ձեր աղաչանքը ընդունեց, և
յօժարութեամբ արտօրնօք ելաւ ձեզի գալու։
18 Ու անոր հետ խրկեցինք ան եղբայրը, որուն
գովաստանքը էջ աւետարանչութեան մէջն է՝ բոլոր
19 եկեղեցիներուն մէջ. և չէ՛ թէ միայն այսքան,
հապա նաև եկեղեցիներէն ձեռնադրվելով՝ ճամբորդութեան ընկեր եղաւ մեզի այս տուրքերուն
մէջ, որ մենք կը ծառայենք Տէրոջը փառքին
20 համար, ու մեր յօժարութեամբը։ Բայց աս
խոչընդոտանք կունենինք, որ չըլլայ թէ մեկը արատ
մը դնէ աս հաստատութիւնիս, որուն մենք
21 կը ծառայենք։ Որովհետև մենք բարին կը մտմըտանք չէ՛ թէ միայն Տէրոջը առջեւ, հապա
22 մարդոց առջեւն ալ։ Ու անոնց հետ մեր եղբայրը խրկեցինք, որ ինքը շատ բանի մէջ ընտրած ենք մենք, շատ անգամ՝ ժրի գտնալով.
ու հիմա աւելըր ալ հիմայ չանացող է ան մեծ յոյսովը
23 որ ձեր վրայ ունի։ Բայց թէ որ Տիտոսին համար խօսք մը ըլլայ՝ անիկա ինծի հետ հաւասար
է, և ձեր ընկերս գործքի ընկերս. և թէ որ
եղբայրները իր հոգեւոր անոնք եկեղեցիին առաքեալներն են, ու Քրիստոսի փառքը։
24 Ուստի ձեր սիրոյն և մեր ձեր վրայօքը պարծենալուն փորձը, ատոնց վրայ ցուցցիք բոլոր
եկեղեցիներուն դիմացը։ Բայց սուրբերուն

ըլլալու ծառայութիւնին վրայով՝ ինծի աւելորդ
է ձեզի գրել : Ինչու որ գիտեմ ես ձեր յօ- 2
ժարութիւնը . որ ան պարծենցեր եմ ձեզի Մա-
մար Աքայացոց մէջը , թէ Աքայեցի-
ները անցած տարւընէ հետէ պատրաստ են .
և ձեր եռանդ նախանձը շատերը յորդորեց :
Ու ալ եղբայրները խրկեցինք , որ մեր ձեզի հա- 3
մար պարծենալը՝ ատ բանին մէջ պարապ չըլլայ .
հապա ինչպէս որ ըսի , պատրաստ գտնուիք . որ 4
չըլլայ թէ երբոր Մակեդոնացիները մեզի հետ
գան՝ ու ձեզ անպատրաստ գտնան նէ , ալ մենք
(որ չըսենք թէ դուք) ամօթով մընանք ատ
պարծանքին մէջը : Ուստի հարկաւոր սեպեցի 5
եղբայրներուն աղաչելու , որ առաջուց ձեզի
գան , ու առաջուց կարգի դնեն ան ձեր առաջուց
խոստացած ընծանիվ պատրաստ ունենալ , ա-
նանկ որ պարգեւի պէս ըլլայ , ու չէ թէ ագա-
հութեան պէս : Այսուն ալ ան որ խնայելով 6
կը ցանէ՝ խնայելով կը հնձէ . ու ան որ առա-
տութիւնով կը ցանէ՝ առատութիւնով կը հնձէ :
Մէկն ինչպէս որ իր սիրտովը կը յօժարի նէ , 7
անանկ ընդ պայմանի չէ թէ հարկաւ և տրտմութիւ-
նով . ինչու որ Աստուած ուրախասատ տուողը
կը սիրէ : Հայց կարող է Աստուած բոլոր 8
շնորհքները ձեզի հասկնալ տալու . որ ամէն բանի
մէջ ամէն ատեն բոլոր պէտք եղածնիվ առնելով ,
ամէն բարի գործերով առատանաք . ինչպէս որ 9
գրված է . Փռեաց՝ ու աղքատներուն տուաւ .
անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ : Հայց 10
անիկա՝ որ սերմնացողներուն սերմ կը պարգեւէ ,
և հաց՝ կերակուրի համար , ինքը պարգեւէ ու
հասցնէ ձեր սերմանիքը , ու ձեր արդարու-
թեան պտուղները հասցնէ . որ ամէն 11
բանի մէջ հարստանաք ամէն կերպ առատու-
թիւնով , որ մեր ձեռքովը կը պատճառէ գոհու-
թիւն Աստուծոյ : Ինչու որ այս տուրքին 12

ծառայութիւնը չէ՛ թէ միայն սուրբերուն պակսութիւնը լեցունելու համար է, հապա որ շա-
13 տերէն գոհութիւնը էվելնայ Աստուծոյ. ապ
յէր ծառայութեան փորձովը կըփառաւորեն զԱստուած ձեր Քրիստոսի աւետարանը խոս-
տովանելուն հնազանդութեանը համար, և ձեր առատութեամբ հաղորդութեանը՝ անոնց ու
14 ամենուն. և անոնց աղօթքը ձեզի համար է, որ կըփափաքին ձեզի Աստուծոյ աւելի շնորհքնե-
15 րուն համար, որ ձեր մէջն է։ Ալ գոհութիւն Աստուծոյ՝ անոր չպատմելուլու պարգեւներուն համար։

ԺԱ։

1 Բայց ես Պօղոս ալ ձեզի կաղաչեմ Քրիս-
տոսի հեզութիւնովը ու հանդարտութիւ-
նովը, որ ես ձեր դիմացը խեղճի մը պէս եմ ձեր
մէջը. բայց հեռուէն կըհամարձակիմ ձեզի։
2 կաղաչեմ՝ որ չըլլայ թէ մօտէն ալ վստահ հա-
մարձակութիւն մը ունենամ. կամ անանկ
սեպվիմ որ ես ալ կըյանդգնիմկոր մէկ քանի-
ներուն վրայ, անոնք որ մեզմէ անանկ կըկար-
3 ծեն՝ որ մարմնով ըստ նչէն պէս կըվարուինք։ Ար-
զի թէպէտ մարմնով կըվարվինք, բայց չէ թէ
4 մարմնաւորի պէս զէնք կըյանձնեցնենք. (ինչո-
ւոր մեր զինուորութեան զէնքը մարմնաւոր չէ,
հապա Աստուծմէ զօրութիւն առած՝ բերդե-
րը քակելու.) մենք խորհուրդները կըքակենք,
5 և Աստուծոյ գիտութեանը դէմ եղած ամեն
տացած բարձր բաները. ու ամէն միտքերը
Քրիստոսի հնազանդութեանը կըծառայեցու-
6 նենք. և պատրաստ ունինք վրէժ առնելու ամէն
անհնազանդութենէ, երբոր ձեր հնազանդու-
7 թիւնը ևս կատարեալ ըլլայ։ Ամէն մէկուն
դէմքի երեւութին կընայիք. թէ որ մէկը
վստահ ըլլայ իր անձին վրայ՝ որ ինքը Քրիս-

տոսինը է , աս նորէն Թող իր մտացը մէջ խոր-
հի որ ինչպէս անիկա Ա.բրիստոսինը է , անանկ
ալ մենք ։ Որ թէ հաւնիք ալ պարծենալու բը- 8
լամ աս մեր իշխանութեանը համար՝ որ Տէրը
մեզի տուաւ չինելու , ու չէ թէ քակելու ձեզ ,
բնաւ չեմ ամչնար ։ Որ անանկ չի սեպիմ՝ 9
որպէս թէ ես Թուղթերովս ձեզի վախ մը կը-
գեմ . (կըսէք , որ աս Թուղթերը ծանր ու զօ- 10
րաւոր են , բայց էր մարմինին երևոյթը տկար է ,
ու խօսքն ալ անարգ .) անանկ մարդը Թող աս 11
մտմտայ , որ մենք հեռուէն ինչպէս ենք նէ
Թուղթերուն խօսքովը , մօտէն ալ անանկ ենք
գործքերով ։ Ինչու որ մենք չենք համարձակիր 12
մեր անձը ոմանց հետը կշռադրի դնելու՝ և հաւա-
սարելու , որ իրենց անձերնին ձեզի կընծայեն .
բայց անոնք ինքնիրեննին իրենց անձերնին կը
չափեն , ու իրենք զիրենք կշռադրի դնելով՝ չեն
հասկրնար ։ Բայց մենք չափ դուրս չենք պար- 13
ծենար . հապա այն կանոնին չափովը , որն որ
չափով բաժնեց մեզի Աստուած՝ մինչև ձեզի
հասնելու ։ Չէ թէ որպէս թէ մենք ձեզի հա- 14
սած չենք , ու ինքզինքնիս կերկրնցունենկոր .
ինչու որ Ա.բրիստոսի աւետարանը քարոզելով
մինչև ձեզի հասանք մենք ։ Եւ չէ թէ չափ 15
դուրս կըպարծենանք ուրիշին աշխատանքովը .
բայց յոյս մը ունինք ձեր հաւատքը էվելնալուն ,
որ մենք այս մեր կանոնին չափովը՝ ձեզմով մեծ-
նանք էվելօք . ձեզմէ անդին գաւառներու 16
աւետարանը քարոզելու , ու չէ թէ ուրիշին
կանոնովը պատրաստածներուն վրայ պարծենա-
լով ։ Ինչու որ՝ անիկա որ կըպարծի , Թող 17
Տէրովմով պարծենայ ։ Վասն զի չէ թէ ան- 18
որ իր անձը կընծայէ , անիկա է ընտրեալը .
հապա ան՝ որ Տէրը կընծայէ ։

ԳԼ· ԺԱ·

1 Ա՛ւր էր թէ քիչ մը ներէիք իմ անխոհեմու-
թեանս . և իրաւցունէ համբերեցէք ինձ :
2 Զի վրայ նախանձաւոր եմ Ի՛ստուծոյ նախան-
ձոյը . ինչու որ ես ձեզ մէկ մարդու մը նշանեցի՝
մաքուր կոյսի մը պէս Ի՛րիստոսի դիմացը յե-
3 հանկու : Ա՛խայն թէ կրկիսամ՝ չըլլայ թէ
ինչպէս օձը Եւան խաբեց իր խորամանկու թիւ-
նովը , ձեր միտքերը ապականին Ի՛րիստոսի
4 վրայ եղած միամտութենէն : Վ՛ասն զի թէ
որ մէկը գալու ըլլայ՝ ուրիշ Ի՛րիստոս քարոզէ՝
որ մենք ան չի քարոզեցինք , կամ ուրիշ Հոգի
ընդունիք՝ որ չընդունեցիք , կամ ուրիշ աւետա-
րան որ ան չէք ընդունած , անանկներուն ա-
5 նէկ կը համբերեիք : Ւ՛սկայ ես սանկ կըսեպեմ՝
որ մէկ բանով մը պակաս չեմ երևելի առա-
քեալներէն : Թէպէտ խօսքով տգէտ ալ եմ
նէ , բայց չէ՛ թէ գիտութիւնով . սակայն ա-
մէն բանի մէջ բոլորովին անձերնիս ձեզի յայտնի
7 ըրինք : Վ՛ի թէ վնաս մի գործած եղայ՝ որ
ես անձս խոնարհեցուցի . ան ալ՝ որ դուք
բարձրանաք . ինչու որ Ի՛ստուծոյ աւետարանը
8 ձրի՛ քարոզեցի ձեզի : Ուրիշ եկեղեցիները
կողոպտեցի՝ անոնցմէ վարձք առնելով ձեզի ծա-
9 ռայելու համար : Եւ երբոր ձեզի եկայ՝ թէ-
պէտ բան ալ պակսեցաւ , բայց ձեզմէ մկունն
ձանձրութիւն չի տըվի . ինչու որ իմ պակսու-
թիւնս լեցուցին Վ՛ակեդոնացիներէն եկող եղ-
բայրները . և ամէն կերպով ձեզի ծանրութիւն
չի տալով իմ անձս պահեցի՛ , ու պիտի պահեմ
10 ալ : Ի՛սանդի Ի՛րիստոսի ճշմարտութիւնը իմ
ներսի դիս կայ , թէ սա իմ պարծենալս չի խա-
11 փանվի պիտի ինծմէ Վ՛քայեցոց կողմերը : Ինչ-
չո՞ւ . որպես թէ չե՞մ սիրեր ձեզ . ան Ի՛ստ-
12 ուած գիտէ : Ւ՛սկայ ան որ կընեմ՝ պիտի ընեմ ալ ,

որ կտրեմ անոնց պատճառը՝ որոնք որ պատճառ
կրծնտրեն . որ ինչ բանով կրպարծենան նէ ,
իրենք ալ մեզի պէս գտնրվին : Ինչու որ ա- 13
նանկները սուտ առաքեալներ՝ խաբեբայ բան-
վորներ ըլլալով , Քրիստոսի առաքեալնե-
րուն կերպարանքին կերևնան : Եւ զարմանք 14
մը չէ . ինչու որ ինքը սատանան ալ լու-
սաւոր հրեշտակի կերպարանք վրան կառ-
նէ : Ալ մեծ բան մը չէ , որ անոր պաշտօ- 15
նեաներն ալ՝ արդարութեան պաշտօնեանե-
րու նման կերպարանք կառնեն . որոնց վերջը
իրենց գործքերուն պէս պիտի ըլլայ : Արդէն 16
կըսեմ . Ըրլայ որ մէկը իս անխոհեմ սեպէ .
հապա թէ չէ՝ գոնէ անխոհեմի մը պէս իս ընդու-
նեցէք , որ ես ալ քիչ մը պարծենամ : Եւ ան 17
որ ես կըխօսիմ նէ՝ չէ թէ Տէրոջը խօսքին պէս
կըխօսիմ , հապա որպէս թէ անխոհեմու թիւնով
մը այս պարծենալուն կարգովը : Որովհետև 18
շատերը մարմնոյ կողմանէ կրպարծենան , ես
ալ կրպարծենամ : Ոյժ ա ր ու թիւնով մը կը 19
համբերէք անխելքներուն ձեր իմաստու թիւնո-
վը : Ինչու որ կը համբերէք թէ որ մէկը ձեզ 20
խաբէ , թէ որ մէկը յեղ ծառայացունէ , թէ որ մէ-
կը ձեր բանը ուտէ , թէ որ մէկը ինքզինքը բան մը
առնէ , թէ որ մէկը յերէսը հպարտանայ , թէ որ
մէկը ձեր երեսին զարնէ : Ամ քամահրանքին կեր- 21
պովը կըսեմ , որպես թէ մենք տկար ի եղանք :
Ուրիշ ինչ բանի որ մէկը կրհամարձակի՝ (անխո-
հեմու թեամբ կըսեմ) ես ալ կրհամարձակիմ :
Եբրայեցի՞ են նէ , ես ալ . Իսրայէլացի՞ են 22
նէ , ես ալ . Աբրահամի զաւակն են նէ , ես ալ .
Քրիստոսի պաշտօնեաներն են նէ , (յանդգնու- 23
թեամբ) կըսեմ որ ալ էվելօքը ես . թէ որ ա-
խտանքով՝ էվելօք , թէ որ ծնօթով՝ շատ էվե-
լօք . թէ որ բանտով՝ անոնցմէ էվելի . թէ որ
մեռցունելու նեղութիւններով՝ շատ անգամ .

24 Հրէականերէն հինգ անգամ՝ քառասունէն մէկ մը
25 պակաս ծեծ կերայ · իրիք հինգ անգամ ձողով ծեծ-
վեցայ · մէկ հինգ քարկոծուեցայ · իրիք անգամ
նաւաբեկուեցան հանդիպեցայ · ցորեկ ու գիշեր
ծովէն խորտնկուեցանը մէջը նեղութիւն քաշե-
26 ցի · շատ անգամ ճամբորդութեան մէջ՝ չորսբո-
ւեցայ , գետերէն նեղութիւն · աւազակներէն
նեղութիւն · ի ազգէս նեղութիւն · հեթանոս-
ներէն նեղութիւն · քաղաքի մէջ նեղութիւն ·
անապատի մէջ նեղութիւն · ծովի վրայ նեղու-
27 թիւն · սուտ եղբայրներէն նեղութիւն · չանքի
ու աշխատանքի մէջ · շատ անգամ քնահատու-
թեան մէջ , անօթութեան ու ծարաւութեան
մէջ · շատ անգամ ծոմապահութեան մէջ , ցուր-
28 տ ու մերկութեան մէջ · զգէ ուրիշ նեղու-
թիւնները · որ ամէն իմիր ամբողջութիւնը
վրաս կըդիզուէր , և բոլոր եկեղեցիներուն ալ
29 հոգը : Ո՞վ հիւանդ կըլլայ , ու ես չեմ հի-
ւանդ ըլլար · ո՞վ կրպայծակուի , ու ես չեմ է-
30 րիր : Եթէ որ պարծենալ պէտք ըլլայ՝ տկարու-
31 թեան բաներուս վրայ պարծենամ : Աստուած
և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հայրը , ան որ
քնքը յաւիտեան օրհնեալ է , գիտէ որ սուտ
32 չեմ ըսուցեր : Դամասկոսի մէջ Արետ թա-
գաւորին ազգապետը Դամասկացոց քաղաքը պահ
33 դեր էր՝ ինծ բռնելու համար · և ես պատուհա-
նին մէջէն սակառով պարիսպին մէր կախուեցայ ,
ու անոր ձեռքէն փախայ :

ԳԼ · ԺԲ :

1 Պատի պարծենալ պէտք ըլլայ նէ , բայց շահ
մը չունի · միայն Եթէ տեսիլքներուն ու Տէրոջ
2 յայտնութիւններուն գամ : Ճանչ մը գի-
տեմ Քրիստոսով մարդոյ տարի առաջ ·
եթէ մարմինով էր՝ չեմ գիտեր , և եթէ որ ա-
ռանց մարմինի՝ չեմ գիտեր , Աստուած գիտէ ·

անանկը յարիշտակվեցաւ մինչև երրորդ երկինքը : Ու գիտեմ անանկ մարդ մը · եթէ մարմինով՝ ու թէ առանց մարմինի , չեմ գիտեր , Աստուած գիտէ · որ դրախտը յարիշտակվեցաւ ու լսեց չպատմվելու խօսքեր , որ մարդու արժան չէ խօսել : Անանկին համար պարծենամ ես · բայց իմ անձիս համար չի պարծենամ , հապա միայն տկարութեանս վրայ : Որ թէ պարծենալ ալ ուզեմ նէ անխոհեմ չի պիտի ըլլամ · որովհետև ճշտիկը կրզըսացնեմ որ · բայց կրխնայեմ խօսիլս որ չըլլայ թէ մէկը իմ վրաս էվելի համարում ունենայ , որքան որ իմ վրաս կրտեսնայ , կամ ինծմէն կը լսէ : Եւ որ չըլլայ թէ ես չափազանցամ այն բոլոր յայտնութիւններուն վրայ , ինծի մարմինի խայթոց մը տրվեցաւ Սատան հրեշտակ մը իս նեղելու համար · որ չըլլայ թէ ես չափազանցամ : Ու ասոր համար իրիք հինգ անգամ Տէրոջը , որ մէկ դի ընէ ինծմէն · ու բսաւ ինծի · Իմ շնորհքիս հերիք է քեզի · ինչու որ իմ զօրութիւնս տկարութեան մէջ կրկատարվի ուստի շատ աղէկ է ինծի տկարութեանս վրայ պարծենալ , որ Քրիստոսի զօրութիւնը իմ մէջս բնակի : Անոր համար հաճոյ հաւներ եմ ես տկարութեան , նախատինքի , տառապանքներու , հալածանքի , ու Քրիստոսի համար նեղութիւններուն վրայ · ինչու որ երբոր կրտկարանամ , ան ատենը կրզօրանամ : Ես անխոհեմ եղայ պարծենալէ , որ դուք ստիպեցիք իս · որ ինծի պէտք էր ձեզմէ վկայութիւն առնել , թէ ես երևելի առաքեալներէն բանով մը պակաս չի գտնվեցայ · որ թէպէտ ես ոչինչ եմ · բայց առաքեալի նշանները ձեր մէջը գործվեցան ամէն համբերութիւնով , նշաններով , և սքանչելիքներով , ու զօրութիւններով : Ուստի ալ ինչ կայ , որ անով պակաս գտնվեցաք ուրիշ եկեղեցիներէն ·

միայն թէ ան բանով՝ որ ես ձեզի ձանձրութիւն
չի տրվի · Ներեցեք ինձի սա յանցանքը։
14 Ա՛յս ասս իրեք անգամ է՛ որ կըպատրաստը-
վիմ որ ձեզի գալու · և ես ձեզի բեռ չեմ ըլլար ·
ինչու որ ես ձեր ունեցածը չեմ փընտրեր , հա-
պա՛ ձեզ · որովհետև որդիները պարտաւոր չեն
Հօրերուն համար բան դիզել , հապա Հայրերը՛
15 որդոց համար ։ Եւ ես ամենի յօժարութիւնով
ծախք կընեմ , ու ծախք պիտի ընեմ ալ ձեր
անձերուն համար · թէպէտ և ձեզ եվելըք սիրե-
լովս յե՛ղձ քիչ սիրվիմ ալ ։
16 Սակայն գրեթէ ես ձեզի ձանձրութիւն մը
չի տրվի · բայց որովհետև խորագէտ էի , խել-
17 քով ձեզ բռնեցի ։ Ընոնէք որ ես ձեզի խրկե-
ցի՝ նէ՛ արդեօք անոնցմով ձեզմէ բան մը քաշեցի՞
18 մի ։ Տիտոսին աղաչեցի , ու անոր հետը ան եղ-
բայրը խրկեցի · Տիտոսը ձեր մէկ բանը քաշե՞ց
մի , մենք նոյն հոգիով չի գացի՞նք մի , նոյն ձամ-
բով չի պըտտեցա՞նք մի ։
19 Ա՛յօրէն կրկարծէք որ ես կակուղ խօսքերով
ձեզի արևրա՞նք մի կրնեմ · Աստուծոյ առջևը
Քրիստոսով կրխօսիմ , որ ամէն բան սիրելի-
20 նե՛ր՝ ձեր օգտին համար է · բայց կրվախնամ՝
որ չըլլայ թէ երբոր գամ նէ , ուզածիս պէս
ձեզ չի գտնամ , և ես ալ ձեզի ձեր չուզածին
պէս գտնըվիմ · չըլլայ թէ նորէն գովաբանե՞մ
ես ինձ ձեզի , կամ ձեզմէ ինձի համար , թա-
21 խտութիւն , կռիւ , չարախօսութիւն , բանսարկու-
թիւն , հպարտութիւն , ամբարտաւանութիւն ,
խռովութիւն ։ Ընդ որ նորէն գամ նէ՛ իմ Աստուածս իս խոնարհէ մը ընէ ձեր
քովը · ու սուգ ընեմ ես շատերուն համար՝ որ
առաջուց մեղք գործեցին , և չապաշխարեցին
իրենց գործած պղծութեան՝ և պոռնկութեան
ու գիշութեանը վրայ ։

Գ Ա Ղ Ա Տ Ա Ց Ի Ա Ց։

Ա ս իրեք անգամ է որ ձեզի կուգամիցը. որ 1
երկու ու իրեք վկայութեան բերնէն կըհաս-
տատի ամէն խօսքը։ Ուրաջ բսելեմ՝ և նո- 2
րէն առաջ կըզգուցեմ (պատճէն ԷՆ երկրորդ ան-
գամ ձեր ղէմացը) թէև հիմայ չհաւանին կըզգիմ)
առչի յանցանաւորութեանց և ուրիշ ամենուն, որ
եթէ նորէն գամ նէ՝ չի խնայեմ պիտի։ Ու- 3
դեօք նշան մը կուզէք՝ որ Ուրիստոս ինծմով
ձեզի հետ կրխօսի, ան որ ձեր վրայ զօրացած է,
ու չէ՝ թէ տկարացած։ Որ թէպէտ ինքը 4
խաչվեցաւ մեր տկարութիւնովը, բայց կենդա-
նի է Աստուծոյ զօրութեամբը. մենք ալ թէ-
պէտ կըտկարանանք անոր հետ համար, բայց կենդա-
նի կըլլանք անոր հետ Աստուծոյ զօրութեամբը։
Փորձեցէք ձեր անձը՝ թէ ան հաւատքին մէջն էք 5
մի. քննեցէք անձերնիդ. չէք մի գիտեր ինքը-
զինքնիդ, որ Ուրիստոս Յիսուս ձեր մէջն է.
միայն թէ անպիտան որ չըլլաք։ Յոյս կը 6
յուսամ որ գիտէք թէ մենք անպիտան չենք։
Ուստի կըխնդրենք Աստուծմէ՝ որ մէկ վնաս մը 7
ձեզի չընէ. չէ թէ մենք ընտիր երեւինք, հապա
որ դուք բարի գործէք. ու մենք թող անպիտան
ըլլանք։ Ինչու որ մենք չենք կրնար ճշմար- 8
տութեան դէմ կենալ. հապա վերակացու ենք
ճշմարտութեան։ Ուրախ ենք՝ երբոր ան-
կրտկարտասաք, ու դուք զօրաւոր կըլլաք, և
մենք ալ ատ ձեր հաստատութեանը համար կա-
ղօթենք։ Ասոր համար աս կըգրեմ ձեզի հե- 10
ռուէն. որ չըլլայ թէ երբոր գամ նէ՝ սաստիկ
թեամբ վարվիմ իշխանութենովս, որ Տէրը
ինծի տուաւ շինելու ու չէ՝ թէ քակելու հա-
մար։

Վերջապէս եղբայրնե՛ր, ողջ եղիք, հաստատ 11
կեցէք, միաբանեցէք, միաբան եղիք, խա-

դաղութիւն ըրէք · ու խաղաղութեան և սիրոյ
12 Աստուածը ձեր հետը ըլլայ : Խարև տըվէք
մէկմէկու սրբբութեան համբուրով · բարև կը-
13 նեն ձեզի ամէն սուրբերը : Մեր Տէր Յիսուս
Քրիստոսի շնորհքը՝ և Աստուծոյ սէրը՝ ու
Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը
ձեր ամենուն հետը ·
ամէն :

փիլիպեանե երկրորդ ընդդէմ գրչեցոց ... ու
բնդնոցա՝ Տիտոսէ ... ի ...
յետոյվը :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ ԸՆԴ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա։

Պօղոս՝ առաքեալ Եսուայ Քրիստոսի ձեռքով եւ Տիմոթէոս՝ եղբայր մեր, 1
Կորնթոսի Աստուծոյ եկեղեցւոյն, եւ բոլոր սուրբերուն որ ամբողջ Յունաստանի մէջ են։ 2
Շնորհք ձեզի եւ խաղաղութիւն Հայր Աստուծմէն եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսէն։ 3
Օրհնեալ է մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայր Աստուածը, Ողորմութեան Հայրը եւ 4
ամէն մխիթարութեան Աստուածը, որ մխիթարեց մեզ մեր բոլոր նեղութեանց մէջ, 5
որպէսզի մենք ալ կարենանք մխիթարել զանոնք որ ամէն նեղութեան մէջ են, 6
Աստուծմէն ստացած մխիթարութեամբ մը որով մենք ալ մխիթարուած ենք Աստուծմէն։
Որովհետեւ ինչպէս Քրիստոսի չարչարանքները մեզի վրայ առատացած են, 7
նոյնպէս մեր մխիթարութիւնն ալ առատ է Քրիստոսով։ Ուրեմն եթէ նեղութեան մէջ 8
ենք, ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է, որ ձեզի մխիթարութիւն տանք

հրեշտակ մը մեր քարոզածէն աւելի՝ աւետարանը
քարոզելու. բլլայ նէ ձեզի, նզովեա՛լ բլլայ:
9 Ինչպէս որ առաջ ըսինք, հիմայ ալ նորէն կը
զըուցեմ. Թէ որ մէկը ձեր առածէն աւելի՝ աւե-
տարանը քարոզելու բլլայ նէ ձեզի, նզովեա՛լ
10 բլլայ: Հիմայ մարդիկներո՞ւն հաճելի բլլա՞մ
թէ Աստուծոյ. կամ մարդիկներո՞ւն հաճելի բլ-
լայ փընտռեմ. թէ որ ես տակաւին մարդոց հա-
ճելի բլլայի, ալ Քրիստոսի ծառայ չէի բլլար:
11 Կը ցուցընեմ ձեզի եղբայրներ ան աւետարա-
նը՝ որ քնծմէ քարոզվեցաւ, թէ ան մարդու
12 կընպատ չէ. որովհետև ես ալ մարդէ մը չառի,
և մէկէ մըն ալ չի սորվեցայ. հապա Յիսուս
13 Քրիստոսի յայտնութենէն: Որովհետև լսած
էք դուք իմ վարքս՝ որ առաջուց Հրեութեան
մէջն էր, ինծոր չափէ դուրս Աստուծոյ եկեղեցին
14 կրհալածէի ու կրկողոպտէի անիկա: Եւ Հրէու-
թեան մէջը ես յառաջադէմ էի իմ շատ հասա-
կակիցներէս էվել, որոնք որ իմ ազգիս մէջն էին.
խիստ էվելոք նախանձաւոր էի իմ հայրերուն աւան-
15 դութիւններուս: Բայց երբոր Աստուած ուզեց՝
(որ որոշեց զիս իմ մօրս փորէն, և իր շնորհքովը
16 ինք կանչեց,) ինծմով իր Որդին յայտնի ընել,
որ անիկա ես Հեթանոսներուն մէջ քարոզեմ.
մէկէն ի մէկ մարմինի ու արիւնի բան մը չխմա-
17 ցուցի. ոչ ալ Երուսաղէմ եկայ՝ ինծմէ առաջ
եղող առաքեալներուն քովը. հապա Արաբիա
18 գացի, ու նորէն Դամասկոս դարձայ: Եօթը
իրեք տարիէն ետև Երուսաղէմ եկայ Պետրոսը
տեսնալու. և տասնըչինգ օր անոր քովը կեցայ:
19 Ուրիշ մէկը առաքեալներէն չի տեսայ, միայն
20 Յակոբոս՝ Տէրոջը եղբայրը: Բայց աս որ
կըգրեմ նէ ձեզի՝ ահա Աստուծոյ առջևը, որ
21 սուտ չեմ զըուցեր: Ինկէ եկայ Սորիա-
22 ներուն ու Կիլիկեցիներուն կողմերը: Եւ զիս
դէմ առ դէմ չէին ճանչնար ան եկեղեցիները՝

որ թլփատուածներէն էին՝ Պրիսկոսով : Ա՛ր- 23
այն թէ անոնք լսած էին թէ , Ան որ առեղծ
մեզ կը հալածէր , հիմայ ինքը ան հաւատքը
կը քարոզէր՝ որ առեն մը կրնախատէր · ու ինծ- 24
մով Աստուած կը փառաւորէին : Եւ երբ տես
Ներչորս տարիէն ետև՝ նորէն Երուսաղէմ կ՚ելայ
Առնաբասին հետ , Տիտոսն ալ հետս առնե-
լով : Ու ելայ յայտնութիւնով , և իմացուցի 2
անոնց աւետարանը՝ որ ես Հեթանոսներուն մէջը
կը քարոզեմ , (Բայց առանձին՝ անոնց որ երևելի-
ներ էին ,) որ չըլլայ թէ պարապ տեղը վազած եմ՝
կամ վազած ըլլամ : Հայց չէ՛ թէ Տիտոսն ալ՝ որ 3
ինծի հետ էր , Հեթանոսներէն ըլլալով պար-
տաւորեցաւ թլփատուիլ · Հապա ան նէրս սկզբը- 4
մով սուտ եղբայրներուն համար՝ որոնք որ սկզբը-
մէն ներս մտան մեր Քրիստոս Յիսուսով ունե-
ցած ազատութիւնը տեսնելու համար · որ մեզ
ծառայացունեն : Ա՛ր անոնց մէկ ժամանակ մըն ալ 5
մտիկ չըրինք հնազանդելու , որ աւետարանին
ճշմարտութիւնը հաստատուի ձեր մէջը : Հայց 6
անոնք որ կրկարծուէին բան մը ըլլալ , որոնք որ
էին նէ՝ ան իմ հոգս չէ · ինչու որ Աստուած
մարդոց երես չի՝ նայիր · վասն զի անոնք կար-
ծրմաններըր բան մը չեմացուցին ինծի : Հապա 7
անոր հակառակը՝ երբոր տեսան որ անթլփատ-
ներուն աւետարանը ինծի յանձնուած է , ինչ-
պես Պետրոսին ալ թլփատուածներուն · (վասն 8
զի ան որ Պետրոսին յաջողեց թլփատուածնե-
րուն առաքելութիւն ընելու , ինծի ալ յա-
ջողեց Հեթանոսներուն ·) երբոր ինծի տըր- 9
ուած շնորհքները գիտցան Հակոբոսը ու
Կեփասը և Յովհաննէսը՝ որոնք որ սիւներ սեպ-
ուած էին , հաւանութեան ձեռք տըվին ինծի ու
Առնաբասին , որ մենք Հեթանոսներուն մէջը
երթանք , ու անոնք՝ թլփատուածներուն · միայն 10
թէ յիշեինք որ աղքատները յիշենք . որ ես ալ

11 յաժառաքիւն ունէի ան բանը ընելու : Ապայ
երբոր կեփասը Անտիոք եկաւ նէ ես անոր ե-
րեսին դէմ կեցայ , որովհետեւ ինքը իրր թէ մե-
12 ղադրվելու էր : Վասնզի որ գեռ Յակոբին քո-
մէն մէկ քանին չեկած , ինքը Հեթանոսներուն
հետ անտարաբար կուտէր . բայց երբոր եկան՝
կրզատվէր , ու ինքզինքը մէկ դի կրքաշէր ,
վախնալով անոնցմէ՝ որ թլփատածներէն էին :
13 Եւ անոր հետ կեղծաւորեցան մնացեալ Հրեաներն
ալ , մինչեւ որ Բառնաբասն ալ անոնց կեղծա-
14 ւորութեանը խոնարհեցաւ : Ապայ ես երբոր
տեսայ՝ որ աւետարանին ճշմարտութեանը մէջ
չիտակ չէն երթալկոր , ամենուն առջեւն Կեփա-
սին ըսի ցնծի , Եթէ դուն որ Հրեայ ես , Հե-
թանոսի պէս ու չէ թէ Հրեայի պէս կըվարվիս ,
ինչպէս Հեթանոսներուն կըստիպես Հրեայի
15 պէս ըլալ : Մենք որ մենք բուն Հրեայ ենք ,
16 և չէ թէ Հեթանոսներէն մեղաւորներ : Ես
գիտենք՝ որ մարդ օրէնքին գործերէն չի կրնար
արդարանալ , միայն թէ Յիսուս Քրիստոսի
հաւատքին . մենք ալ Յիսուս Քրիստոսի հա-
ւատացինք՝ որ արդարանանք Քրիստոսի հա-
ւատքէն , և չէ թէ օրէնքին գործերէն . որով-
հետեւ օրէնքին գործերէն մէկ մարմին մը չի
17 պիտի արդարանայ : Հապա եթէ մենք՝ որ
Քրիստոսով արդարանալ , ալ
մեղաւոր գտնվինք . Քրիստոս անանկ է նէ
18 մեղքի պաշտօնեայ մի եղաւ . քան լիցի : Վասնզ
որ թէ ես իմ քակած բանս նորէն շինելու բլլամ
նէ , ուրեմն ես ինքզինքս իմ անձս յանցանաւոր
19 կըցուցընեմ : Վասնզի որ օրէնքովը մեռայ ես
օրէնքին , որ Աստուծոյ ապրիմ՝ ու Քրիստոսի
20 հետ խաչը եղեմ : Ու ալ ասկէ հետև կենդանի
եմ , չէ թէ ես՝ հապա Քրիստոս կենդանի է իմ
մէջս . Ապայ ես որ հիմայ մարմինովս կապրիմ՝
նէ Աստուծոյ Որդուն հաւատքովը կապրիմոր ,

ան որ իս սիրեց , ու անձը ինձի համար մատնեց ։
Եւ ես Աստուծոյ շնորհքները չեմ անարգեր . 21
ինչու որ եթէ արդարութիւնը օրէնքէն էր նէ ,
ուրեմն Քրիստոս պարապ տեղը մեռաւ ։

ԳԼ . Կ ։

Ով անմիտ Գաղատացիներ՝ ո՞վ ձեզ նա- 1
խանձեցուց ճշմարտութեանը չի հնազան-
դիլ . որ գրեթէ ձեր աչքին առջեւը Յիսուս
Քրիստոսը խաչը եւած յայտնապէս գրվեցաւ ։
Այդ միայն ես կուզեմ ձեզմէ սորվիլ . Օրէն- 2
քին գործքերովը դուք Հոգին առիք՝ թէ հա-
ւատքին լսելովը ։ Այդպէս անխելք էք . Հո- 3
գիով սկսեցիք , ու հիմայ մարմինով կվերջա-
նաք ։ Ու այդպէս դիպուածները պարա՞պ տեղը 4
ձեր վրայէն անցան , թէ որ պարապ ըլլայ ալ ։
Ուստի ան որ ձեզի Հոգին բաշխեց , և ձեր մէջը 5
զօրութիւնները գործեց նէ , օրէնքին գործքովն
էր՝ թէ հաւատքին լսելովը ։ Ինչպէս որ Աբրա- 6
համ Աստուծոյ հաւատաց՝ ու իրեն արդարու-
թիւն սեպվեցաւ ։ Ուստի գիտցէք որ՝ անոնք որ 7
հաւատքէն են նէ՝ անոնք են Աբրահամի որդիքը ։
Գիրքը՝ առաջուց գիտնալով թէ Աստուած Հե- 8
թանոսները հաւատքով կարդարացնէ , առա-
ջուց ու Աբրահամին , թէ Քեզմով
բոլոր ազգերը պիտի օրհնվին ։ Ուրեմն 9
նոքա որ հաւատքէն են նէ՝ կօրհնվին հա-
ւատացող Աբրահամին հետ ։ Վասն զի ան 10
ամէնը որ օրէնքին գործքերէն են՝ անէծքի տակ
են . որովհետև գրված է թէ Անիծեա՛լ ըլլայ
ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը գրվածներուն
ամէնուն մէջ չի՛ կենար բոլորը կատարելու ։
Բայց՝ որ օրէնքովը մէկը չի՛ կրնար արդարանալ 11
Աստուծոյ առջեւը , ան յայտնի է . ինչու որ
Հեղինակը կըսէ թէ Արդարը հաւատքէն պիտի ապ-
րի ։ Բայց օրէնքը հաւատքէն չէ՛ . հապա՝ ան 12

որ կըկատարէ ան բանըը՝ անոնցմով պիտի
13 ապրի : Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին
անէծքէն՝ մեզի համար անէծք ըլլալով · (ինչու
որ գրված է թէ՝ Նիհծեալ է ան ամէնը որ փայ-
14 տէն կըկախուի ,) որ Աբրահամին օրհնութիւնը
Յեսուսով · որ մենք ալ Հոգւոյն Սրբոյ խոստ-
15 մունքը առնունք հաւատքով : Ա՛ղբարք սո-
վորութեան պէս կըղօրեմ՝ եղբայրներ , որ
մարդու մը հաստատած կտակը ևս մէկը չի՛
կրնար անարգել , և ուրիշ հրաման մըն ալ ա-
16 նոր վրայ չի՛ կրնար դնել : Խոյց խոստմունք-
ները Աբրահամին ու անոր զաւկին եղան . ու
չըսաւ թէ՝ Զաւկներուն որպէս թէ շատե-
րուն , հապա՝ որպէս թէ մէկի մը , թէ՝ Եւ քրս-
17 կին զաւկիդ , որ ան Քրիստոս է : Խոյց աս
կըղօրեմ՝ . Ան կտակը որ առաջուց Աստուծմէ
դրվեցաւ Քրիստոսով , օրէնքը չորս հարիւր
երեսուն տարիէն ետև որ դրվեցաւ , չի՛ կրնար
խափանել ան խոստմունքը խափանելու համար :
18 Քանի որ ժառանգութիւնը օրէնքէն պիտի ըլ-
լայ նէ , ուրեմն ալ ան խոստմունքէն չէ՛ .
Խոյց Աստուած Աբրահամին խոստմունքով
շնորհեց :
19 Հապա ինչո՞ւ համար է օրէնքը . յանցանքի
համար վրայ եկեցաւ՝ (մինչև որ ան զաւակը գայ՝
որուն որ խոստացվեր էր ,) հրեշտակներով
20 տրված միջնորդի մը ձեռքով : Խոյց միջնորդը
մէկումը միջնորդ չէ՛ . սակայն Աստուած մէկ է :
21 Ուրեմն օրէնքը հակառակ բան մըն է Աստուծոյ
խոստմունքին . քանի լինի՝ թէ որ տրված
ըլլար անանկ օրէնք՝ որ կարող ըլլար կենդա-
նացունելու , անառեներ իրաւցունէ արդարու-
22 թիւնը օրէնքէն կըլլար : Խոյց գրվեաց գիրքը
ամէնը մեղքի տակ գացեց , որ ան խոստմունքը
Յիսուս Քրիստոսի հաւատքէն տրվին հա-

ւատացողներուն : Ուրեմն որ հաւատքը չէր 23
եկած , օրէնքին տակը զոյճած կըպահվէինք ապա-
ւէնի՝ ան եկաքին գալու հաւատքին՝ որ մեր վրայ
պիտի յայտնի ըլլար : Ուրեմն օրէնքը մեզի 24
վարժապետ եղաւ Քրիստոս Յիսուսի քէ հաւա-
տքով արդարանանք : Բայց երբ 25
բոր հաւատքը եկաւ , ալ վարժապետի տակ չենք :
Ինչու որ ամէնքիդ ալ Աստուծոյ որդիք էք 26
Յիսուս Քրիստոսի հաւատքովը : Որովհետև ա- 27
մէնքդ որ Քրիստոսով մկրտուեցաք , Քրիստոսը
զգեցիք Հագաք . չի կայ մէկ զանազանութիւն .
ոչ Հրէային , ոչ ալ Հեթանոսին . ոչ ծառա- 28
յին , ոչ ալ ազատին . ոչ արուն , ոչ ալ էգ-
գին . ինչու որ դուք ամէնքիդ ալ մէկ էք
Քրիստոս Յիսուսով : Ապա թէ որ դուք 29
Քրիստոսինն էք , անանկ է նէ Աբրահամին
զաւակն էք՝ ու խոստումնքին նայելով ժառանգ-
ներ : Բայց աս կըզրուցեմ Որչափ ժամանակ Ի
ժառանգը տղայ է նէ՝ ծառային մէկ աւելի մը չէ ,
թէպէտ ամէնուն ալ տէրը ըլլայ . Ապա ներա- 2
մնականներու ու գործակալներու տակն է մինչև
հօրը դրած ժամանակը : Նոյնն ալ մենք եր- 3
բոր տղայ էինք՝ աշխարհիս գաղափարներուն
տակովը ծառայ եղած էինք : Բայց երբոր ժա- 4
մանակը լեցուեցաւ , Աստուած իր Որդին՝
որ կնիկէ մը եղաւ , ու օրէնքին տակը մնաւ .
որ անոնք որ օրէնքին տակն էին նէ՝ ինքը ծախու- 5
առնէ , որ մենք որդեգրութիւնը ընդունինք :
Եւ որովհետև դուք որդիք էք , Աստուած իր 6
Որդիին Հոգին մեր սիրտը խրկեց , որ կաղա-
ղակէ Աբբա՝ Հայր : Ուրեմն ասկէ ետև ծառայ 7
չես , հապա՝ որդի . և թէ որ որդի՝ ալ Աստու-
ծոյ ժառանգը : Բայց անառնները երբոր չէիք 8
գիտեր Աստուած , կրծառայէիք անոնց՝ որոնք
բնութեամբ Աստուածներ չէին : Ասկայն հի- 9
մայ որ ճանչցաք Աստուած՝ մանաւանդ որ դուք

Աստուածմ ձանչցրիցաբ , ինտոր նորէն կը
դառնաք ան սկար ու չբաւոր աշխարհի գա-
ղափարներուն , որոնց նորէն կուզէք անձերնիդ
10 ծառայ ընել : Օրերը կը դանատանէք , ու ա-
միսները , և ժամանակները ու տարիները :
11 Կը վախնամ ձեզմէ , որ գուցէ պարապ աեղը ես
ձեր վրայ ախատած ըլլամ :
12 Ինծի պէս եղէք . ինչու որ ես ալ ձեզի պէս
էի . եղբայրներ ձեզի կաղաչեմ . դուք ինծի
13 մնաս մը հասուցած չէք : Կը խոէք դուք՝ որ
մարմնոյս սկարութեամբը ես ձեզի առջի ան-
գամին աւետարանը քարոզեցի . և իմ՝ մարմինս
14 վրայ եկած փորձութիւնները , չանարգեցիք ու
չարհամարհեցիք . հապա Աստուծոյ հրեշտակի
պէս իս ընդունեցիք՝ Յիսուս պէս :
15 Ուրեմն ո՞ր է ան ձեր երանութիւնը . ես վկայ
եմ ձեզի , թէ որ կարելի էր՝ ձեր աչքը կը հա-
16 նէիք ու ինծի կուտայիք : Ուստի ձեր թշնա-
17 մի՞ն մի եղայ ճշմարտութիւնը խօսելուս համար : Կայց
ձեզ նախանձութեամբ կը դրգռուին անոնք՝ չէ թէ
բարիին . և ձեզ կուզեն արգիլել , որ իրենց նա-
18 խանձաւոր ըլլաք : Միակայն աղէկ է ամէն ի-
ժիր աղէկին նախանձաւոր ըլլալ , ու չէ թէ
19 միայն երբոր ձեր մէջը ըլլամ : Իմ որդիներս՝
որ ձեզմով նորէն ծաղկելքի ցաւ կը քաշեմ ,
20 մինչև Քրիստոս ձեր մէջը նկարուի նէ : Կու-
զէի հիմայ ձեզի գալ , ու փոխել իմ խօսքս .
ինչու որ ես ձեր վրայով տարակուսած եմ :
21 Ուան մը ըսէք ինծի , դուք որ օրէնքին տակը
կուզէք ըլլալ , դուք չէք մի կարդացեր օրէնքը
22 քը : Որ գրված է թէ Աբրահամ երկու որդի
ունէր . մէկը՝ աղախինէն , ու մէկալը՝ ազատ կնի-
23 կէն : Կայց ան որ աղախինէն՝ մարմնոյ կողմա-
նէ ծնած էր , ու ան որ ազատ կնիկէն՝ խոստ-
24 մանքին նայելով էր· Որ օրինակի նմանու-
թիւն մըն է . ինչու որ սոնք են երկու կտա-

կարաններըր , մէկը՝ Սինա լեռնէն պըղնձ՝ որ ծա-
ռաներ կըծնանի , ան՝ որ է Հագարը , (ինչու որ 25
Հագարը Արաբիայի մէջ Սինա լեռն է ,) հաւա-
սար է աս Երուսաղէմին՝ որ իր զաւկըներովը մէկ
տեղ կըծառայէ : Այլ վերի Երուսաղէմը՝ ա- 26
զատ է , որ մեր ամէնուն մայրն է : Ինչու որ 27
գրըված է , Ուրախ եղիր ամուլ՝ դուն որ չէիր
ծնաներ . կանչէ ու աղաղակէ՝ որ տղաներըքի ցաւ
չէիր քաշեր . վասն զի դուն մէկ դի ձգվածդ է-
իրկ ունեցողէն էվել զաւկըներ ունիս : Ուստի 28
մենք եղբայրներ՝ Սահակին պէս խոստմունքին
որդիներն ենք : Այլ ինտոր անատներ ան որ 29
մարմնով կողմանէ ծնած էր նէ՛ կըհալածէր անիկա
որ հոգիին կողմանէ էր , անանկ ալ հիմայ :
Սակայն գիրքը ի՞նչ կըսէ . Ա՛հկ դի՛ հանէ ատ 30
աղախինը ու անոր տղան՝ որ չըլլայ թէ ազախի-
նին զաւակը ժառանգութիւն ունենայ ազատ
կնկանը զաւկին հետ : Ուստի եղբայրներ՝ մենք 31
աղախինին զաւկըներ չենք , հապա ազատին՝ ան
ազատութիւնովը , որով մեզ Քրիստոս ազա-
տեց :

Գ Լ . Ե :

Ուստի ամուր կեցէք , և նորէն ծառայու- 1
թեան լուծին տակը մի՛ մտնաք : Ահա ես 2
Պօղոս կըզըգուշեմ ձեզի . որ եթէ թլփատիք՝
Քրիստոս ձեզի օգուտ մը չընէր : Ամէն մար- 3
դու կըվկայեմ , թէ որ թլփատվելու ըլլայ՝ պար-
տական է բոլոր օրէնքը կատարելու : Խափա- 4
նած էք դուք Քրիստոսէն , որ օրէնքովը արդա-
րանալ կուզէք , ու շնորհքէն ինկած էք : Ին- 5
չու որ մենք Ո՛ւ-ըէ Հոգիին ձեռքովը Հաւատ-
քով կրսպասենք՝ արդարութեան յոյսին : Ին- 6
չու որ Քրիստոս Յիսուսի քով ո՛չ թլփատու-
թիւնը բան մը կրնայ , ո՛չ ալ անթլփատութիւ-
նը . հապա հաւատքը՝ որ սիրով կըայժողի :

7 Ընդէկ կերթայիքկոր , ո՞վ ձեզ ետ կեցուց՝
8 որ ճշմարտութեան չի հնազանդիք : Ինչու որ
ասա դրդմունքը անկէց չէ՛ որ ձեզ կանչեց .
9 Փիչ մը խմորը ամէն շաղված գունտը կրխմորէ :
10 Ձայց ես յոյս ունիմ՝ ձեր վրայ Տէրոջմով , որ
դուք ուրիշ կերպ բան մը չէք մտմըտար . և ան
որ ձեզ կրխռովեցունէկոր , ինքը դատապար-
11 տութիւն պիտի կրէ՝ ով որ է նէ : Այլ ես թէ
եղբայրնե՛ր՝ թէ որ ես տակաւին թլփատութիւն
քարոզէի , ալ ինչո՞ւ կըհալածվիմ . ուրեմն խա-
12 չին գայթակղութիւնը վերցըված է : Երանի
թէ բոլորովին կըարըվէին անոնք որ ձեզ կը
խռովեցունեն :
13 Ինչու որ դուք ազատ ըլլալու կանչըված էք՝
եղբայրնե՛ր . միայն ձեր ազատութիւնը մար-
մինի դանդ-ղնեցնե՛ր-ո՛ւ պատճառ չըլլայ . հապա
14 սիրով մէկզմէկու ծառայութիւն ըրէք : Ինչու
որ բոլոր օրէնքը մէկ խօսքի մը մէջ կըկատար-
վի , թէ՝ Ու բընկերդ քու անձիդ պէս սիրես :
15 Հապա թէ որ մէկզմէկ խածնէք ու ուտէք ,
զգո՛յշ կեցէ՛ք՝ որ չըլլայ թէ մէկ մէկզը սատ-
16 կեցունէ : Այլ ես թէ ասա կըզըուցեմ՝ Հո-
գիով գացէք , ու մարմինին ցանկութիւնը մի՛
17 կատարէք : Ինչու որ մարմինը կըցանկայ հո-
գիին հակառակ , ու հոգին մարմինին հակառակ .
և ասոնք որ մէկմէկու հակառակ են , չէ՛ թէ ինչ
18 որ կուզէք նէ՝ ան ընէք : Ձայց թէ որ հոգիով
19 վարվիք՝ ալ օրէնքին տակը չէք : Ինչու որ
մարմինին գործքերը յայտնի են , որ ասոնք են՝
շնութիւն , պոռնկութիւն , պղծութիւն , գի-
20 ձութիւն , կռապաշտութիւն , կախարդութիւն ,
թշնամութիւն , վիճմունք , նախանձութիւն ,
բարկութիւն , հակառակութիւններ , երկպառա-
21 կութիւններ , անմիաբանութիւններ , չար նայ-
ուածքներ , սպանութիւններ , գինովութիւններ ,
անառակութիւններ , ու ինչ որ ասոնց նման են .

որ հիմակուց ևս ձեզի կրզուցնեմ , ինչպէս առա-
ջուց ալ կրզուցէի , որ ասանկ բաներ գործող-
ները Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգեր ։
Այլ Հոգիին պտուղը ա՛ս է ՝ սէր , ինդութիւն , 22
խաղաղութիւն , երկայնմտութիւն , քաղցրու- 23
թիւն , բարութիւն , հաւատք , հեզութիւն ,
ժուժկալութիւն ։ ասանկ բաներուն վրայ օրէնքը
հակառակ չէ ։ Եւ անոնք որ Քրիստոսինն են 24
են իրենց մարմինը խաչ հանեցին ընական կիր-
քերով ու ցանկութիւններով միասին ։ Թէ որ 25
Հոգիով կապրինք նէ՝ Հոգիին հետ ալ միասին
երթանք ։ Եւ փառաց պարծենկոտ չըլլանք՝ մէ- 26
կըզմէկ գրգռելով , ու իրարու վրայ նախանձ
ձգելով ։

Գ ։

Եղբայրնե՛ր՝ թէ որ ձեզմէ մէկը պատահմամբ 1
ինչ և իցէ յանցանքով բռնուի՝ դուք որ Հոգեւոր էք՝ անանկը հեզութեան հո-
գիով հաստատեցէք ։ զգայ կեցէք ինքզինքնուդ ,
որ չըլլայ թէ դուք ալ փորձուիլնան մէջ կ՚ընաք ։
Միմեկնիկու բեռ վերցուցէք , ու անանկ 2
Քրիստոսի օրէնքը կատարեցէք ։ Թէ որ մէկը 3
ինքզինքը բան մը ըլլալ կրսեպէ՝ ու չէ նէ , ա-
նիկա իր անձը կըխաբէ ։ Իմն մարդ իր գոր- 4
ծը թող կ՚իշառէ , և ետքը առանձին իր անձին
պարծանք ապ , ու չէ թէ ընկերին քովը ։ Ին- 5
չու որ ամեն մէկը իր բեռը պիտի վերցունէ ։
Ուսուցիչը իր վարդապետին բաժին թող 6
հանէ ամեն բարիքներուն մէջ ։ Մի՛ խաբվիք՝ 7
Աստուած ծաղր չըլլար ։ Վասն զի ինչ որ մէկ 8
մարդ մը կը ցանէ նէ՝ նոյնը պիտի հընձէ , ան
որ իր մարմինին մէջ կը ցանէ՝ ան մարմինէն պիտի
ապականութիւն հնձէ , ու ան որ Հոգիին մէջ
կը ցանէ , ան Հոգիէն յաւիտենական կեանք
պիտի հընձէ ։ Այլ բարի գործելէն ետ չի կե- 9

Նանք մենք, որ իր ժամանակին չի թուլնալով
10 հնձենք: Աւետ քանի՛ որ ժամանակը ձեռքերնիս է, աղէկութիւն ընենք ամէնուն՝ մանաւանդ հաւատքին ընտանիներուն:
11 Այսչափ՝ ինծի՛ գրով ձեզի գրելի իմ ձեռ-
12 քովս: Սրովհետև ան ամէնքը որ մարդու սիրելի ըլլալ կուզեն մարմինով, անոնք ձեզ կըստիպեն որ թլփատուիք. միայն թէ Քրիստոսի
13 խաչին եւևէն չերթան: Ինչու որ անոնք ալ որ թլփատած են, իրենք օրէնքը չեն պահեր. հապա կուզեն որ դուք թլփատուիք, որ իրենք
14 ձեր մարմինովը պարծենան: Ինծի՛ ես՝ քաւ լիցի, որ պարծենամ. հապա միայն թէ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը. որ անով աշխարհ ինծի խաչը եղած է, ես ալ աշխարհի:
15 Ինչու որ Քրիստոս Յիսուսով ո՛չ թլփատութիւնը բան մըն է, ո՛չ ալ անթլփատութիւնը.
16 հապա նոր ստեղծուած ըլլալը՝ բանը: Եւ ան ամէնքը որ ասի կանոնին կը համաձայնին, խաղաղութիւն ու ողորմութիւն անոնց վրայ, ու Աստուծոյ Իսրայէլին վրայ:
17 Ասկէ ետև մէկը ինծի՛ չի յոգնեցունէ. ինչու որ ես Քրիստոսի
18 Յիսուսի սպիները մարմինիս մէջ կը բերեմ: Եղբայրնե՛ր, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հետ ըլլայ. ամէն:

Առ Գաղատացիս:

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԹՈՒՂԹՔ ԱՌ ԵՓԵՍՈՑԻՍ

ԳԼ. Ա.

Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստուծոյ կամքովը, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն ու Քրիստոսի Յիսուսի հաւատացողներուն։ Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիստոսէն։

Օրհնեալ է Աստուած և մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի Հայրը, ան որ մեզ օրհնեցամէն հոգևոր օրհնութիւններով երկինքին մէջ Քրիստոսի ձեռքովը։ Ինչպէս որ մեզ անոր ձեռքովը ան ընտրեց, որ մենք սուրբ ու անարատ ըլլանք անոր առջևը սիրով, առաջուց ինքը մեզ սահմանեց իրեն որդեգիր ըլլալու Յիսուս Քրիստոսի ձեռքովը՝ իր կամքին ուզելովը, իր շնորհաց փառքին գովութեանը համար, որ անով մեզ ուրախացուց սիրելիին ձեռքովը, որ անով փրկութիւն ունինք մենք իր արիւնին միջնորդութիւնովը, մեր մեղքին

թողութիւն՝ իր շնորհքին մեծութեանը չափովը·
8 որ մեր վրայ առնլի եղաւ բոլոր իմաստութեամբ
9 ու գիտութիւնով · մեզի ցուցուց իր կամքին
խորհուրդը իր հաճութեամբը · որոնր առաջ
10 քան զքաւ անոր ձեռքով · որ ժամանակին սահմանադրութիւնը լրանալուն՝ ամէն բան բովանդակվի Քրիստոսով՝ ինչ որ երկինքը ու ինչ որ
11 երկրի վրայ կայ անով՝ որով մենք ալ ժառանգ եղանք՝ առաջուց հրամիրված ըլլալով Աստուծոյ նախասահմանութեամբը · ան որ ամէն բան
12 իր կամքին խորհրդովը կրկաջողէ · որ մենք առաջուց փառքին գովութիւն ըլլանք՝ առաջուց
13 Քրիստոսի վրայ յուսացողներս · որով ալ դուք (երբոր լսեցիք ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան աւետարանը ,) որով ալ հաւատացիք՝ խոստացեալ Սուրբ Հոգիին կնքովը
14 կընքըվեցաք · որ ան մեր ժառանգ ըլլալուն գրաւն է մինչև որ ստացուածները կատարեալ փրկութիւնը , որ իր փառքին գովութիւն ըլլայ :
15 Աստր համար ես ալ երբոր ձեր հաւատքը լսեցի որ Տէր Յիսուսին վրայ է , ու ձեր սէրը
16 դէպի բոլոր սուրբերուն · ալ ես չեմ կենար ձեզի համար գոհութիւն ընելէն՝ աղօթքիս մէ-
17 ջը ձեզ յիշելով · որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ փառաց Հայրը ձեզի տայ իմաստութեան ու յայտնութեան հոգին իրեն
18 գիտութիւնովը · սրտերնուս աչքը լուսաւոր ընելու համար , որ գիտնաք թէ ինչ է անոր հրաւէր կանչելուն յոյսը · ու ինչ է սիրոյը ժառանգելու փառքին մեծութիւնը սուրբերուն
19 մէջ · և ինչ է իր զօրութեանը առատ մեծութիւնը դէպի մեզի հաւատացեալներուս՝ իր կա-
20 րող զօրութեանը յաջողութեամբը , որ Քրիստոսով յաջողեց · որ անիկա մեռելներէն յարուցց , ու նստեցուց իր աջ կողմը երկինքին մէջ ,
21 բոլոր իշխանութեան ու պետութեան՝ և զօրա-

[Թ]եան ու տէրու[Թ]եան՝ և ամէն անունի վրայ որ
կանուանի , չէ՛ [Թ]է միայն աս աշխարհիս մէջ ,
հապա գալիքին մէջն ալ · և ամէն բան անոր ոտ- 22
քին տակը հնազանդեցուց · ու անիկա ամէն բա-
նէրուն վրայ եկեղեցիին գլուխ դրաւ , որ ան 23
անոր մարմինն է , անով կատարելու[Թ]իւնը , որ ա-
մէն բան բոլորովին կը լեցուներ : Եւ դուք որ 1
ձեր մեղքերուն և յանցանքներուն մէջ մեռած
էիք՝ ինչ[Ը] յետ [Ի]նձ[Ը]անացոյց · որոնց մէջը առա- 2
նոք կը քալէիք աս աշխարհիս բանած ձամբովը ,
աս օդուան իշխանու[Թ]եանը իշխանին ուզածին
պէս , ան չար հոգիին՝ որ հիմայ ապստամբ որ-
դոցը նեղսիր դին մտեր է · որ առնով մենք ա- 3
մէնքս ալ ան բաներուն մէջը կրպտրտեինք մեր
մարմինին ցանկու[Թ]իւնովը , ու մարմինին և
միտքին ուզածը կրկատարէինք · ու բուն բար-
կու[Թ]եան որդիք էինք [Ի]նչպէս ուրիշները · բայց 4
Աստուած որ մեծ է ողորմու[Թ]իւնով՝ իր առատ
սիրոյն համար որով մեզ սիրեց · երբոր մեր 5
մեղքերուն մէջը մեռած էինք , Քրիստոսով կենդա-
նացուց մեզ Աբրիստոսով · (ինչու որ մենք
շնորհքով ապրեցանք ,) 6
ու միասին յարուցանեց , ու միասին նստեցուց երկինքին մէջ Աբրիստոս
Յիսուսով · որ գալու դարերուն մէջը ցուցընէ 7
իր շնորհքին հպարտ մեծու[Թ]իւնը մեր վրայ
բուն անուշու[Թ]իւնովը Աբրիստոս Յիսուսով :
Վ[Ա]ան զի անոր շնորհքովը փրկուած էք դուք 8
հաւատքով · և աս չէ՛ [Թ]է ձեզմէ է , հապա
Աստուծոյ պարգեւն է · չէ՛ [Թ]է գործերէն , որ 9
մէկը չի պարծի : [Ի]նչու որ անոր ստեղծուածն 10
ենք , Քրիստոս Յիսուսով հաստատուած բարի
գործերու համար՝ որոնց վրայով Աստուած ա-
ռաջուց պատրաստեց , որ անոնց մէջը քալենք :
[Ա]սոնի դուք ալ միաբերնիդ բերէք , որ 11
առնն մը մարմինով հեթանոսներ էիք · (որոնք
որ չի [Թ]ըլլիասնած կըսվին անկէց՝ որ [Թ]լփատու-

12 [illegible] որ անտանելի դուք առանց Երբհատայի էիք, ու օտարացած էիք Իսրայէլի ընկերութենէն, և դուրս ձրիաբար ան խոստումներուն ուխտէն, ու յոյս մըն ալ չունէիք, և ա[illegible]
13 էիք։ Հայց հիմայ Յիսուս Երբհատայի ձեռքը՝ դուք որ առաջ մը հեռաւոր էիք, մերձա-
14 ւոր եղաք Երբհատայի արիւնովը։ Վասն զի ա-նիկա է մեր խաղաղութիւնը, որ երկուքը մէկ ըրաւ, ու մէջ տեղի բաժանող պատը այն-ձեր-ջնջեց- հինը [illegible]
15 քակեց, և հրամաններով եղած պատուիրաք-ներուն օրէնքը խափանեց, որ իրմով ան եր-կուքը մէկ նոր մարդ մը հաստատէ, ու խաղա-
16 խաղութիւն ընէ, և երկուքն ալ մէկ մարմին եղած Հաշտեցնէ Աստուծոյ հետ իր խաչովը, ինչու որ [illegible] սպանելով իր անձին
17 մէջ։ և եկաւ խաղաղութիւն քարոզեց ձեզի որ հեռու էիք, ու խաղաղութիւն անոնց որ մօտ
18 էին։ Վասն անոր ձեռքովը մենք երկուքիս ալ մէկ Հոգիով Հօր Աստուծոյ քովը մտնենք։
19 Ուրեմն ե՛ն ալ ասկէ ետև դուք օտար ու պան-դուխտ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցներ,
20 և Աստուծոյ ընտանիքը, առաքեալներուն ու մարգարէներուն հիմին վրայ շինված, որ անոր
21 անկիւնին գլուխը Յիսուս Քրիստոս է, որով բոլոր շինվածքը միասին կապված ու յարմար-
22 ված կամքի սուրբ տաճար մը կըլլայ Տէրով։ որ անով դուք ալ միասին կըշինվիք՝ Աստուծոյ բնակարան ըլլալու Հոգիով։

ԳԼ · Գ ։

1 Ասոր ես Պօղոս Յիսուս Քրիստոսի կապված
2 ձեզի Հեթանոսներուդ համար։—Լսած կըլ-
3 լաք դուք Աստուծոյ շնորհքին մասին պարտա-

ինձի ան խորհուրդը յայտնութիւնով երևցաւ .
(ինչպէս առաջուց ալ ձեզի քիչ մը գրեցի , որ
կարող ըլլաք կարդալու ու միտք առնելու իմ
տեղեակ ըլլալս Քրիստոսի խորհուրդին վրայօ-
վը ·) որ ուրիշ դարերուն մէջ մարդոց զաւակը-
ներուն չի երևցաւ , ինչոր որ հիմայ Հոգւով
Աբեալ յայտնըվեցաւ իր սուրբ առաքեալնե-
րուն ու մարգարէներուն · որ Հեթանոսները
ժառանգորդ ու մէկ մարմին ըլլան և աւետաբա-
նովը ան խոստումնին հաղորդ Քրիստոս Յի-
սուսով · որ անոր ես սպասաւոր եղայ՝ Աստուծոյ
շնորհքին պարգևներովը , որ ինձի տրըվեցան՝
իր զօրութեանը յաջողութիւնովը , (ինձի՝ որ
ամէն սուրբերուն պզտիկին իմ , ասս շնորհքը
տըրվեցաւ ,) Հեթանոսներուն մէջ Քրիստոսի
անքննելի մեծութիւնը քարոզելու · և ամէնքը
լուսաւորելու , որ գնչանան թէ ի՞նչ է ան խոր-
հուրդին մատակարարութիւնը , որ բոլոր դարե-
րէն ի վեր ծածկըված էր Աստուծոյ կով , ան որ
ամէն բանը ըրաւ · որ հիմայ Աստուծոյ բազմա-
թեսակ իմաստութիւնը յայտնի ըլլայ երկինքը
եղող իշխանութիւններուն և պետութիւննե-
րուն՝ եկեղեցիին ձեռքովը · իր յաւիտենական
նախասահմանութեանը պէս , որ ըրաւ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի ձեռքովը · որ անով մենք
ալ համարձակութիւն ու քովը մօտենալ ու-
նինք յուսով՝ իրին հաւատալով : Ուստի կա-
ղաչեմ որ չի ձանձրանաք մեր նեղութեանը
վրայ , որ ձեզի համար է · ան որ ձեզի փառք է :
Այսոր համար ծունկ կըշտրեմ ես մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի Հօրը · ուսկից որ բոլոր նահա-
պետութիւնները երկինքի մէջ ու երկրի վրայ
անուն կառնեն · որ տայ ձեզի իր փառքին մե-
ծութեանը չափովը՝ զօրութիւնով հաստատվիլ
իր հոգիովը ներսի մարդուն մէջ · որ Քրիս-
տոս հաւատքով ձեր սրտին մէջը բնակի՝ սիրով

18 արմատ կապած ու հաստատված · որ կարող ըլլաք հասկընալու ամէն սուրբերուն հետ մէկտեղ ,
19 ի՞նչ է լայնութիւնը և երկայնութիւնը՝ ու բարձրութիւնը և խորունկութիւնը · այնպէս ճանչնալ Քրիստոսի սիրոյն գիտութենանը
20 չափազանցութիւնը · որ լցվիք Աստուծոյ ամէն
21 լրութիւնովը : Ասոր անոր որ կարող է առաջնութեամբ ընել ամէն բաներէն էվել՝ որ մենք կընդգրկենք ու կխմանանք ան զօրութիւնովը՝
22 որ մեր մէջը յաջողված է . իրեն փառք եկեղեցիին մէջ՝ ու Քրիստոս Յիսուսով , բոլոր դարերուն մէջ յաւիտենից յաւիտեանս · ամէն :

Դ —— Ուստի կաղաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար կապված եմ , որ դուք ան կոչումին վայելքին պէս
2 երթաք որով կանչվեցաք · բոլոր խոնարհութեանովը ու հեզութիւնով՝ և երկայնմտութեանովը՝
3 սիրով մէկզմէկու մտիկ ընելով · ջանալ Հոգւոյն սբ. միաբանութիւնը խաղաղութեան կա-
4 պովը պահել · Մէկ մարմին ու մէկ Հոգի , ինչպէս որ կանչվեցաք ան ձեր կոչումին մէկ յոյսովը ·
5 Տէրը մէկ է , հաւատքը մէկ , մկրտութիւնը մէկ ·
6 մէկ Աստուած , և ամէնուն Հայրը , որ ամէնուն վրայ՝ ու ամէնուն հետ , և մեր ամէնուս
7 մէջն է : Հայց մեր ամէն մէկուն ալ շնորհք տրված է Քրիստոսի պարգևներուն չափովը :
8 (Անոր համար կըսէ , թէ՝ Ել բարձրը ելաւ , գերութիւնը գերի բռնեց , ու մարդոց պարգև-
9 ներ տուաւ : Ան որ ելաւ նէ՝ ի՞նչ է , միայն թէ՝
10 որ ինքը առաջ երկրին վարի կողմը իջաւ : Ան որ իջաւ նէ , ինքը անիկա է որ ալ բոլոր երկինք-
11 ներէն վեր ելաւ , որ ամէն բան լեցունէ :) Եւ ինքը մէկ քանին տրաւ առաքեալներ , մէկ քանին մարգարէներ , մէկ քանին աւետարանիչներ ,
12 մէկ քանին հովիւներու վարդապետներ · սուրբերուն հաստատութեանը համար , պաշտամունքին գործքին համար , Քրիստոսի մարմնին

շինութեանը համար. մինչև որ ամէնիս ալ 13
հասնինք հաւատքին միաբանութեանը ու Որ-
ուածոյ Որդին ճանչնալու. կատարեալ մարդ
ըլլալու՝ Քրիստոսի լման հասակին չափը ունե-
նալու. որ ալ ասկէ ետքը տղայ չըլլանք պտոյտ 14
ված ու մարդապատութեան ամէն հովերէն և
բերուելիքով՝ մարդոց խարեբայութիւնը, որ
հնարքով կը խարեն մոլորցնելու. հապա ճշ- 15
րով ճշմարտութեան հետևելով՝ ամէն բանի մէջ
անով աճինք՝ որ գլուխ է այսինքն Քրիստոս. որ 16
անկէ բոլոր մարմինը միտղ կցված՝ և ամէն
խազերը միկնիկու հաղորդութիւնով՝ յարմարած՝
ա՛ն մէկ մասին չափով ներգործելով՝ ան մար-
մինին աճումը կուտայ՝ իր անձին օգուտին համար
սիրով։

Ասոր ասս կըսեմ՝ ու Տէրով դաւինք կըդնեմ՝, 17
որ դուք ալ այլևս ան կերպով չերթաք, ինչպէս
որ մեկալ Հեթանոսները կերթան՝ իրենց փուճ
մտածմունքներովը. որ իրենց սրտերնին խաւա- 18
րած է, ու օտար են Աստուծոյ կեանքէն, անոնց
մէջը եղած տգիտութեան պատճառովը՝ իրենց
սրտերուն կուրութեանը համար. որոնք իրենց 19
անձին չյոյսը կըտրեցին, և ինքզինքնին անա-
ռակութեան տըվին, ամէն կերպ պղծութիւն
գործելու՝ ագահութիւնով։ Ձայց դուք ա- 20
սանկ չէ սորվեցաք Քրիստոսը. թէպէտև և անոր 21
վրայով լսեցիք՝ ու անկէ սորված էք, որ ինչպես
է Յիսուսի ճշմարտութիւնը. որ վրանիսնուդ 22
մէկ դի Հանէք՝ ան առջի չէր վարմունքին պէս ե-
ղած հին մարդը խարեբայ ցանկութիւնով ա-
պականվածը. և ձեր միտքին հոգիովը նոր ըլ- 23
լաք, և նոր մարդը վրանիդ հագնիք, ան որ Աս- 24
տուծոյ պատկերին պէս ստեղծված է, արդարու-
թիւնով ու ճշմարիտ սրբութիւնով։ Ասոր 25
համար թիւնը մէկ դի՛ ձգեցէք. ճշմարտութիւն
խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ. ինչու-

26 որ մենք մկրտվեկու անդամներ ենք : Խարկա-
ցեք ու մեղք մի գործէք . արևը ձեր բարկու-
27 թեանը վրայ մարը չի մնայ : Ու Սատանային
28 տեղ մի՛ տաք : Ան որ գողութիւն կընէր նէ,
ալ թող չի գողնայ . հապա մանաւանդ թող աշ-
խատի իր ձեռքովը աղէկ բաներ գործելու , որ
29 կարող ըլլայ տալ որի՛ որ պէտք է նէ : Ամեն
գարշելի խօսք ձեր բերնէն թող չելլայ . հապա
որ բանն որ աղէկ է՝ շինութեան պէտք եղածը ,
30 որ լսողներուն շնորհք տայ : Ու Աստուծոյ
Սուրբ Հոգին մի՛ տրտմեցունէք , որ անով գուք
31 կրնքըվեցաք փրկութեան օրը : Ամեն ըղձու-
թիւն և բարկութիւն՝ ու սրտմտութիւն և ա-
ղաղակ՝ ու հայհոյութիւն վերդրվի ձեզմէ բոլոր
32 չարութիւններով մկտեղ : Ա՛ւելրդմկու հետ
անուշ եղէք , գթած , ներելով մկրդմկու ,
ինչպէս որ Աստուած Քրիստոսով մեզ ներեց :
Ե Աստուծոյ նմանող եղէք՝ սիրելի զաւկներու
2 պէս . և սիրով վարվեցէք՝ ինչպէս որ Քրիստոս
ալ մեզ սիրեց , և իր անձը մեզի համար մատ-
նեց , պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ ա-
3 նուշ հոտի : Հայց պոռնկութիւն և ամեն
կերպ պղծութիւն՝ կամ ագահութիւն չըսվի՛ ալ
ձեր մէջը , (ինչպէս որ կըվայլէ սուրբերուն ,)
4 և գարշելի բաներ՝ կամ խենդութենէ խօսքեր՝
կամ խեղկատակութիւն , որ չի վայլեր . հապա
5 հրնօք գոհութիւն : Աւ իմանալով գիտնաք որ
ամեն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ՝ որ կուա-
պատ է , Քրիստոսին ու Աստուծոյ թագա-
ւորութենէն մէջ ժառանգութիւն մը չունի :
6 Ձրլլայ որ մկը ձեզ խաբէ փուճ խօսքերով .
ինչու որ ասոր համար Աստուծոյ բարկութիւնը
7 կու գայ անհնազանդ զաւկներուն վրայ : Ուս-
8 տի անոնց հաղորդ մի՛ ըլլաք : Ար թէպէտ ա-
ւեն մը գուք ալ խաւար էիք , բայց հիմի լոյս
էք Տէրոջմով . լուսոյ որդիքներուն պէս քայե-

ցէք , ինչու որ լուսոյ պատուղը ամէն կերպ բա- 9
րութիւնով է , և արդարութիւնով՝ և ճշմար-
տութիւնով : Քննեցէք՝ ի՞նչ է Տէրոջը հա- 10
ճելին · ու կցորդ մի՛ ըլլաք խաւարին անպտուղ 11
գործերուն , հապա եվիլօք յանդիմանեցէք :
Ինչու որ անոնց մէջը գաղտուկ գործուած բանը 12
խօսիլն ալ ամօթ է : Բայց ամէն բան լուսէն 13
յանդիմանած յայտնի կըլլայ · ինչու որ ամէն
բան որ յայտնի կըլլայ՝ լոյս է : Վասն համար 14
կըսէ · Արթնցիր դուն որ կը քնանաս , և կանգ-
նէ՛ մեռելներէն , ու Քրիստոս քեզի լոյս պիտի
տայ :
Ուրեմն զգուշացեք ինչպէս շիտակ պիտի երթաք , ան- 15
միտներու պէս չէ՛ , հապա իմաստուններու պէս · 16
ժամանակները գնեցէք , ինչու որ օրերս չար
են : Վասն համար մի՛ ըլլաք անմիտ , հապա ի- 17
մացէք ի՞նչ է Տէրոջը կամքը : Եւ մի՛ գինով- 18
նաք գինիով , որուն մէջ որ անառակութիւն
կայ · հապա եվիլօք Հոգիով լեցվեցեք · սրբոց
նուագ մէջ սաղմոսներ ու օրհնութիւններ , և
հոգևոր տաղեր խօսելով · երգելով ու սաղմոս
ըսելով Տէրոջը՝ ձեր սրտին մէջ : Ամէն իժիր 20
ամէն բանի համար գոհութիւն տալէք Հօրը ու
Աստուծոյ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունո-
վը :
Հնազանդ եղէք մեկմեկու Քրիստոսի վախ- 21
ը : Կիներդ իրենց երիկներուն հնազանդ 22
ըլլան՝ որպէս թէ Տէրոջը · ինչու որ երիկ մար- 23
դը կնկանը գլուխն է , ինչպէս որ Քրիստոս եկե-
ղեցիին գլուխն է , ու ինքը մարմնին Փրկիչն է :
Աստի ինչպէս որ եկեղեցին հնազանդ կըլլայ 24
Քրիստոսին , անանկ ալ կիներդ ամէն բանի
մէջ իրենց երկանը : Երիկ մարդիկ՝ սիրեցէք 25
ձեր կիներդ · ինչպէս որ Քրիստոս սիրեց եկե-
ղեցին , ու իր անձը մատնեց անոր համար · որ 26
անիկա սուրբ ընէ աւազանին մաքրութեամբ՝

27 խօսքով · որ ինքը իր դիմացը փառաւոր կեցուն-
եկեղեցին՝ որ մէկ պատառ մը կամ պտտուելիուն
կամ ուրիշ ասոր պէս բաներ չունենայ · հապա
28 որ սուրբ ու անարատ ըլլայ : Ինանկ ալ պէտք
է որ էրիկ մարդիկ իրենց կիներուն սիրեն՝ իրենց
մարմիններուն պէս · ան որ իր կինը կսիրէ՝ իր
29 անձը կսիրէ · ինչու որ մէկը բնաւ իր անձը չի՛
ատեր , հապա կը կերակրէ՝ ու կը հոգայ անոր ,
30 ինչպէս Քրիստոս ալ եկեղեցին · վասն զի մենք
անոր մարմինին անդամներն ենք , անոր մարմնէն
31 ու անոր ոսկորներէն : Ասոր համար էրիկ մար-
դը իր հայրը ու մայրը պիտի ձգէ , և իր
կնկանը հետ պիտի երթայ , ու երկուքը մէկ մար-
32 մին պիտի ըլլան : Այս խորհուրդը մեծ է ·
բայց ես կը զրուցեմ Քրիստոսի ու եկեղեցիին
33 վրայ : Ուստի դուք ալ անանկ ըրէ՛ ամէնդ ·
որ ամէն մէկը իր կինը անանկ պիտի սիրէ՝ որ-
պէս թէ իր անձը · ու կինը իր էրկընէն թող
Ե վախնայ : Որդիք՝ ձեր ծնողացը հնազանդ ե-
2 ղէք Տէրոջմով , որ ան է արժանը : Պատուէ՛ քու
հայրդ ու մայրդ , (որ ան առջի պատուիրանքն
3 է խոստումնքով ,) որ քեզի աղէկ ըլլայ , ու եր-
4 կան ապրիս երկրի վրայ : Հայրե՛ր՝ ձեր զաւ-
կրնները մի՛ բարկացուներէք · հապա անոնք մեծցու-
ցէք Տէրոջը խրատովը՝ ու վարժութիւնովը :
5 Ծառանե՛ր՝ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէ-
րերուն , ահով ու դողով և ձեր սրտին միամ-
6 տութիւնովը՝ որպէս թէ Քրիստոսին : Չէ՛ թէ
մարդահաճոյի պէս աչքի առջև ծառայելով , հա-
պա Քրիստոսի ծառաներու պէս Աստուծոյ կամ-
7 քը ընելով · սրտանց ծառայելով որպէս թէ
8 Տէրոջը · ու չէ՛ թէ մարդոց : Գիտնալ որ՝ ա-
մէն մէկը ինչ բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն
պիտի ընդունի՝ թէ ծառայ ըլլայ և թէ ազատ :
9 Դուք ալ տէրե՛ր՝ նոյնը ըրէք անոնց , պատիժը
համբերութեամբ ընելով · գիտցէք որ անոնց ալ

ձերն ալ Տէրը երկինքն է ։ ու անոր առջևը ա-
չառութիւն չի կայ ։

Ալ ասկէ հետև զօրացէք Տէրով , ու ա- 10
նոր զօրութեան կարողութիւնով ։ Եւ վրա- 11
նիդ հագէք Աստուծոյ զէնքերը , որ կա-
րող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ
դնել ։ Ինչու որ մեր պատերազմը մարմինի ու 12
արիւնի հետ չէ , հապա՝ իշխանութիւններու ու
պետութիւններու հետ , և աս խաւար աշխար-
հիս իշխաններուն հետ , երկինքին տակը եղած
չար հոգիներուն հետ ։ Անոր համար առէք 13
Աստուծոյ զէնքերը , որ կարող ըլլաք չարին դէմ
դնելու չարութեան օրը ։ Եւ երբոր ամէն բանը 14
կրկատարէք , հաստատուն կեցէք , կանկ առէք՝
մէջքերնիդ ամբրցուցէք ճշմարտութիւնով ու
արդարութեան զրահները հագնելով , ու ոտ- 15
քերնիդ հագցունելով խաղաղութեան աւետա-
րանին պատրաստութիւնով ։ Եւ ամէն բանին 16
վրայ առէք հաւատքին վահանը , որ անով կա-
րող ըլլաք չարին ամէն կրակոտ նետերը մարե-
լու ։ Եւ փրկութեան սաղաւարտը առէք , ու 17
Հոգիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է ։ Ամէն ա- 18
ղօթքով ու խնդրվածքով ամէն ատեն աղօթք
ըրէք Հոգիով , ու ան բանին վրայ հսկեցէք բո-
լորովին համբերութիւնով ու աղաչանքով՝ ա-
մէն սուրբերուն համար , ինծի համար ալ , որ 19
ինծի խօսք տրուի երբոր բերանս բանամ նէ ,
համարձակ ցուցընեմ աւետարանին խորհուրդը ,
որուն համար ես դեսպանութիւն կընեմ կապան- 20
քով , որ անով համարձակութիւն մը ունենամ
ես ինչպէս որ պէտք է նէ խօսիլ ։

Բայց որ դուք ալ գիտնաք իմ վրայովս՝ թէ 21
ինչ կընեմ ես , ամէն բանը պիտի ցուցընէ ձեզի
Տիւքիկոս սիրելի եղբայրը ու հաւատարիմ պաշ-
տօնեան Տէրոջմով , որ անիկա ատոր համար ձե- 22
զի խրկեցի , որ գիտնաք դուք մեր վրայովը , ու
ինքը ձեր սիրտերը մխիթարէ ։

23 խաղաղութիւն եղբայրներուն և սէր հաւատքով մէյտեղ Հօր Աստուծմէն, ու Տէր Յի-
24 սուս Քրիստոսէն: Շնորհք ամենուն վրայ, որոնք որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ կըսիրեն. ամէն:

Հռոմայեցւոց գրէցաւ Եփեսոսէն՝ Տիւքիոսին ձեռօվը:

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ։

ԳԼՈՒԽ Ա։

Պօղոս և Տիմոթէոս Յիսուս Քրիստոսի ծա- 1
ռաները, Քրիստոս Յիսուսով բոլոր սուր-
բերուն որ Փիլիպեցոց կողմերն են՝ եպիսկոպոս-
ներով ու սարկաւագներով։ Շնորհք ու 2
խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու
Տէր Յիսուս Քրիստոսէն։

Իմ Աստուծմէս կը գոհանամ՝ ամէն անգամ՝ 3
ձեզ որ կը յիշեմ, (ամէնատեն իմ՝ ամէն խնդրը- 4
վածքիս մէջ՝ ձեր ամենուդ համար ուրախու-
թեամբ աղօթք կընեմ,) ձեր՝ աւետարանին հա- 5
ղորդ ըլլալուն համար, առջի օրվընէ մինչև հի-
մայ։ Ա՛ս բանին վրայ յոյս ունիմ՝ թէ ան որ 6
ձեր մէջը բարեգործութիւն սկսաւ նէ, մինչև
Յիսուս Քրիստոսի օրը կը կատարէ. ինչպէս ին- 7
ծի ալ իրաւ կերևայ ձեր ամենուդ վրայ ա՛ս բա-
նը խորհիլ՝ ձեզ ի սրտիս մէջը ունենալուս հա-
մար իմ կապերուս մէջ, և իմ պատասխան տա-
լուս, ու աւետարանը հաստատելուս մէջ, դուք

ամենքդ հաղորդ էք ինձի Եղեռ չնորհքներուն :
8 Ա կայ է ինձի Աստուած , որ ինչպէս փափաք ու-
նիմ ձեր ամենուն վրայ Յիսուսի գու-
9 թեամբ : Եւ ան աղօթիք կընեմ , որ ձեր սէրը
էվել էվելօք շատ ըլլայ գիտութիւնով ու բոլոր
10 խնամատարութիւնով , որ գուք լաւը ընտրէք , որ ըլ-
լաք հաստատուն ու առանց դայթակղութեան
11 Քրիստոսի օրը , արդարութեան պտուղներով
լըցեալ Յիսուս Քրիստոսի ձեռքովը , Աստուծոյ
փառքին ու գովեստին համար :
12 Կուզեմ որ գիտնաք եղբայրնե՛ր , թէ իմ վրա-
յովս եղած բաները էվել էվելօք աւետարանին
13 յառաջադիմութեանը համար եկաւ . մինչև որ
իմ կապերս բոլոր պալատին մէջը՝ ու ուրիշ ա-
մենուն ալ յայտնի եղան՝ որ Քրիստոսի համար
14 Ես , և շատ եղբայրներուն Էրդմով . որոնք սիրտ
առին իմ կապերովս՝ էվելօք համարձակիլ Աս-
15 տուծոյ խօսքը խօսելու առանց վախի : Ոմանք
նախանձու ու հակառակութեան համար , ո-
մանք ալ յօժար կամքով Քրիստոս կը քարո-
16 զեն . ոմանք ալ սիրոյ համար . ինչու որ գիտեն
թէ ես աւետարանին համար պատասխան տալու
17 կեցեր եմ . ոմանք ալ հակառակութեան համար
Քրիստոս կը պատմեն , բայց չէ թէ անկեղծու-
թիւնով . որ կը կարծեն նեղութիւններ բերել
18 իմ կապերուս վրայ : Այդ ի՞նչ է աս . որ
կերպով ըլլայ նէ՝ թէ պատճառանքով մը և թէ
ճշմարտութիւնով , Քրիստոս կը պատմըվի . և ա-
սոր վրայ կրնդդամ , ու դարձա ալ պիտի ըլ-
19 լամ : Ինչու որ գիտեմ թէ ասիկա իմ փրկու-
թիւնս պիտի ըլլայ ձեր խնդրուածքովը , ու Յի-
20 սուս Քրիստոսի Հոգիին պարգևովը , իմ ակն-
կալութեանս ու յոյսիս պէս , որ բանով մը ա-
մօթ չըլլամ ես . հապա բոլորովին համարձա-
կութիւնով ինչպէս որ ամէն իւրմէ անուն Հիմայ
ալ Քրիստոս իմ մարմինիս մէջ կրփառաւորի՛

Թէ ապրելովս ու Թէ մեռնելովս ։ Ինչու որ 21
ինծի կեանք Քրիստոսն է , ու մեռնիլը օգուտ ։
Հապա Թէ որ մարմինիս ապրիլը իմ գործիս 22
պտուղ ը նէ , ալ ան չեմ գիտեր՝ որը ընտ-
րեմ ։ Երկու կողմանէ ալ նեղուիմ ու 23
նեմ . ելլալու ու Քրիստոսի հետ ըլլալու փա-
փաքիը ունիմ՝ ասիկ կրնայ եմ . և աս մարմնիս
մէջ կենալ մնալ՝ ձեզի համար շատ հար- 24
կաւոր ։ Ու աս բանին վրայ յոյս ունենալով 25
գիտեմ՝ որ ես ձեր ամենուդ հետը պիտի կենամ
ու մնամ , որ դուք յառգանաք և ուրախ ըլլաք
հաւատքով . որ ձեր պարծանքը իմ վրայովս 26
աւելի ըլլայ Քրիստոս Յիսուսով . երբոր ես
նորէն ձեզի գամ ։

Միայն Թէ Քրիստոսի աւետարանին ինտր 27
կըվայլէ նէ՝ անանկ գացէք . որ Թէ գամ ու ձեզ
տեսնամ , և կամ հեռու ըլլամ , ալ ձեր
վրայով պիտի լսեմ , որ դուք հաստատուն կը
կենաք կոր մէկ հոգիով՝ ու մէկ շունչով կըպա-
տեարգիքկոր աւետարանին հաւատքին համար .
և մէկ բանով մըն ալ մի՛ վախնաք ան հակառա- 28
կորդներէն , որ անոնց յայտնի նշան է կորըս-
տեան , ու ձեզի՛ փրկութեան . և ատիկա Աստուծ- 29
մէն է , որ ձեզի տրվեցաւ Քրիստոսի համար՝ չէ՛
Թէ միայն անոր հաւատալ , հապա անոր համար
չարչարվիլ ալ . ան պատերազմը ունենալով որ 30
իմ վրաս տեսաք , ու հիմայ ինծմէ կըլսէք ։ Ուս-
տի Թէ որ Քրիստոսով մխիթարութիւն մը կայ , 2
Թէ սիրոյ սփոփանք մը , Թէ Հոգիի հաղորդու-
թիւն մը , Թէ գթութիւն և ողորմութիւն . իմ
ուրախութիւնս դուք ման ըրէք . նոյնը խորհեցէք ,
մի և նոյն սէր ունենալով , մէկ շունչ , մէկ
միտք մտածելով . բան մը գործութիւնով ու բան մը 3
անպարծութիւնով՝ չ՛ընէ . հապա խոնարհու-
թիւնով մէկզմէկդ մեկալը ձեր անձէն կրկի սե-
պեցէք . միևնակ անձերնուդ շահը մի՛ նայիք , հա- 4

5 պա ամէն մէկը ընկերին ալ ։ Զկամ ամէն մէ-
կը նոյն միտքը ըմռդ ունենայ, որ Քրիստոս
6 Յիսուսի մէջն էր · որ Աստուծոյ կերպարանքը
ունենալով , յափշտակելու բան մը չի սեպեց
7 Աստուծոյ հաւասար ըլլալը · հապա անձը ունայ-
նացուց ծառայի կերպարանք առնելով մարդոց
նման ըլլալով · և կերպարանքովը մարդու պէս
8 գտնըվելով , ինքզինքը խոնարհեցուց՝ մինչև
մահուան հնազանդ եղաւ , ու ա՛ն ալ խաչին
9 մահուանը ։ Ասոր համար Աստուած ալ անիկա
էվելօք բարձրացուց , ու անոր անուն մը տուաւ՝
10 որ ամէն անուններէն վեր է · որ Յիսուս Քրիս-
տոսի անունին ամէն ծունկ չոքի , երկնաւորնե-
րուն ու երկրաւորներուն , և սանդարամետա-
11 կաններուն · և ամէն լեզու դաւանի թէ Յիսուս
Քրիստոս Տէր է՝ Հօր Աստուծոյ փառաւորու-
12 թեանը ։ Ալ ասկէ եաև իմ սիրելիներս՝ ինչպէս
ամէն կերպով հնազանդ եղաք՝ չէ թէ միայն իմ
ներկայիս եկած ատենս , հապա ալ էվելօք հիմայ
13 որոր ձեզմէ հեռու եմ · աշխատ ու դողով ան-
14 ձերնուդ փրկութիւնը գործեցէք · ինչու որ Աս-
տուած է՝ որ ձեր մէջը կը յայդուզէ կամիլը ու ընդ-
15 լը էր հաճութեանը համար ։ Ամէն բան առանց
տրտնջելու ու մրմնջալու ըրէք · որ ըլլաք ան-
16 բիծ ու անարատ Աստուծոյ որդիքը , առանց մե-
ղադրանքի կամապաշտ ու մոլորեալ ազգին մէջ ·
որոնց մէջը դուք լուսաւորներու պէս երևնաք
աշխարհիս մէջ · կենաց խօսքը վրանիդ ունենա-
17 լով՝ ինծի պարծանք ըլլալու համար Քրիստոսի
օրը , որ պարապ տեղը չի քալեցի , և պարապ
18 տեղը չի աշխատեցայ ։ Այց թէպէտ և ձեր
հաւատքին պատարագին ու պաշտօնին համար
ընծայվիմ , կըխնդամ և ուրախ եմ ձեր ամէ-
19 նուն հետը · անանկ ալ դուք խնդացէք ու իմ
հետս ուրախ եղէք ։

Այլայն թէ կըյուսամ ես Տէր Յիսուսով , որ

Տիմոթէոսը շուտով ձեզի խրկեմ , որ իմ սիրտս
ալ հանգչի , երբոր ձեր վրայով բան մը իմա-
նալու լլամ : Ինչու որ ասոր նման մէկ սիրտ 20
մէկը չունիմ , որ ընտանեբի պէս ձեզի համար
հոգ քաշէ : Ինչու որ ամէնը իրենցը կը փնտռը- 21
ուն , ու չէ թէ Յիսուս Քրիստոսինը : Բայց 22
անոր փորձը դուք ալ գիտէք , որ ինչպէս տղայ
մը հօրը՝ ինծի հետ ծառայութիւն ըրաւ
աւետարանին մէջ : Ուստի ասկիկա կը յուսամ 23
խրկել , շուտ մը իմ ինչպէս բլլալս տեսնեմ-
պէս : Բայց յոյս ունիմ Տէրոջմով որ ես ալ 24
քիչ ատենէն պիտի գամ : Սակայն թէ ադէկ 25
տեսնեցի ՚Էպափրոդիտոս եղ-
բայրը և գործիս ընկերը ու զինուորակից՝ ձեր
խրկածը ու իմ պէտք եղածիս ծառայողը :
Ուզմէհետև ինքն ալ շատ փափաք ունի ձեր ա- 26
մէնն ալ տեսնելու . ու հոգ կրնէր , որ դուք
լսած էիք թէ ինքը հիւանդացաւ : Եւ իրաւ ըսաւ 27
ինքը հիւանդացաւ մահուան մօտ ; բայց Աստուած
ողորմեցաւ անոր . չէ թէ միայն անոր՝ հապա ին-
ծի ալ , որ տրտմութիւն տրտմութիւնի վրայ չէ
քաշեմ : Ուստի աւտարալով խրկեցի անիկա , որ 28
դուք տեսնելով անիկա նորէն ուրախ բլլաք . ու
ես աւանց տրտմութեան բլլամ : Ընդունեցէք 29
անիկա Տէրոջմով ամէն խնդութիւնով , ու ա-
նոնկնները պատուականներու կարգը բռնեն-
ցէք . որ Տէրոջը գործին համար մինչև մահ- 30
ուան մօտեցաւ իր կեանքը վտանգի դնելով . որ
ձեր ինծի ծառայելու պակսութիւնը ինքը լե-
ցունէ :

Գ.

Ուստի իմ եղբայրներս՝ ուրախ եղէք Տէրոջ- 1
մով . ան նոյն բանը ձեզի գրել ինծի ձանձ-
րութիւն չէ , ու ձեզի շատ ապահովութիւն է :
Զգուշացեք ան շուներէն . զգուշացեք ան չար 2

մշակներէն. զգուշացէք ան կրճատութենէն։
3 Ինչու որ թլփատութիւնը մենք ենք, որ հո-
գիով Աստուած կըպաշտենք, ու կրպարծենանք
Քրիստոս Յիսուսով, և մարմինի վրայ չէ
4 պարծանքնիս։ Թէպէտ ես ալ նոյն վստահու-
թիւնը ունիմ մարմինիս վրայ. թէ որ մէկը ու-
րիշ կերպ վստահութիւն ունենայ իր
5 մարմինին վրայ, ալ ես աւելիօքը ես. ութ օրէն
թլփատված. Իսրայէլի ազգէն, Բենիամինի ցե-
ղէն, Եբրայեցի Եբրայեցիէ, օրէնքին նայելով
6 փարիսեցի. նախանձաւոր ըլլալու կողմանէ ե-
կեղեցին կըհալածէի, օրէնքին արդարութեանը
7 կողմանէ անարատ ըլլալով։ Հայց ինչ որ ին-
ծի շահ էր նէ՝ անիկա Քրիստոսի համար վնաս
8 կրնամ։ Ուստի բոլոր բաներն ալ վնաս կը
սեպեմ Յիսուս Քրիստոսի մեր Տէրոջը գի-
տութեանց գերազանցութեանը համար. որուն համար
ամեն բաներէն զրկվեցայ, և աղտեղութիւն կըսե-
9 պեմ, որ Քրիստոս շահիմ, ու իր մէջը
գտնըվիմ. չէ թէ օրէնքէ եղած իմ արդարու-
թիւնս ունենամ, հապա Քրիստոսի հաւատ-
10 քովը ան արդարութիւնը՝ որ Աստուծմէն է. հա-
ւատքով ճանչնալու անիկա՝ և անոր յարութեան
զօրութիւնը՝ ու անոր չարչարանքին հաղորդ
ըլլալը, անոր մահուան կերպարանքը առնելու.
11 որ ըլլայ թէ մեռելներուն յարութենէն հաս-
12 նիմ։ Ոչ չէ իբր թէ ես հիմակուց ա-
ռեր եմ, կամ հիմակուց կատարեալ եղեր
եմ, հապա ետևէ ինկած եմ որ հաս-
նիմ. մանաւանդ թէ Յիսուս Քրիստոսէն ալ
13 բռնըված ըլլամ։ Եղբայրներ ես իմ անձս
չեմ սեպեր որ հասեր եմ. բայց մէկ բան մը կայ,
որ ետևի եղածներըը մոռցած եմ, ու առջևի ե-
14 ղածներուն ետևէն կերթամ. միտք դնելով
կրվազեմ դէպ՚ի նշանակոյ կոչման կէտին Յի-
15 սուս Քրիստոսով։ Ուստի զուք ա-

մէնքդ՝ որ կատարեալ էք , ասիկա մտմըտացէք ,
և թէ որ ուրիշ մէկ բան մը խորհելու ըլլաք՝
անիկա ալ ձեզի պիտի յայտնէ Աստուած ։
Սակայն թէ որ բանի որ մենք հասանք նէ՝ անիկա 16
մտմըտանք , ուսանին միատանինք ։ Ընդ 17
ծի նմանող եղէք եղբայրներ , ու գիտնաք ա-
նանկները որ ան ճամբովը կերթան , ինչպէս որ
մեզ ձեզի օրինակ ունիք ։ Ինչու որ շատերը 18
կը քալեն , որ անոնց համար շատ անգամ ձեզի
կրսեի . և հիմայ լալով ալ կըսըսուցնամ Քրիս-
տոսի խաչին թշնամիներուն համար . որ անոնց 19
վերջը կորուստ է . որոնց աստուածը իրենց փորն
է . ու անոնց փառքը իրենց ամօթին է . որոնք
միայն երկրաւոր բաները կրմտմտան ։ Բայց 20
մեր կենցաղավարութիւնը երկինքն է . որ անկէց
Փրկիչին կրսպասենք Տէր Յիսուս Քրիստոսին .
որ պիտի նորցունէ մեր խոնարհ մարմինը իր 21
փառաւոր մարմինին կերպարանքին պէս ըլլալու ,
ան զօրութիւնովը՝ որ կարող է իր տակը ա-
մէնը հնազանդեցնելու ։ Ուստի իմ սիրելի Գ
ու բաղձալի եղբայրներս , իմ ուրախութիւնս ու
պսակս . ասանկ հաստատուն կեցէք Տէրոջմով
սիրելիներս ։
Եւոդիային կաղաչեմ ու Սինտիքին կաղա- 2
չեմ՝ որ խորհուրդնին մէկ ըլլայ Տէրոջմով ։
Իրաւ քեզի ալ կաղաչեմ իմ հաւատարիմ՝ և 3
լուծի ընկերս , զան ալ օգնական եղիր անոնց՝
որոնք որ իմ հետս աշխատեցան աւետարանին
մէջ Կղեմէսին ու ուրիշ իմ գործու ընկերնե-
րուս հետ , որոնց անունները կենաց գրքին մէջն
է ։ Ուրախ եղիք Տէրով ամէն ատեն . նորէն 4
կրսեմ՝ Ուրախ եղիք ։ Ձեր հեզահոգի ըլլալը 5
ամէն մարդոց յայտնի ըլլայ . Տէրը մօտ է ։
Ոչ մէկ մի հոգաք . հապա ամէն աղօթքով ու 6
խնդրուածքով՝ գոհութիւնով , ձեր խնդրուած-
քը Աստուծոյ յայտնի ըլլայ ։ Եւ Աստուծոյ 7

խաղաղութիւնը որ ամէն միտքերն վեր է ձեր
սիրտերը ու միտքը Քրիստոս Յիսուսով պահ-
8 պանէ ։ Ասած ալ եղբայրնե՛ր ինչ որ ճշմար-
տութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով,
ինչ որ արդարութիւնով, ինչ որ սրբութիւ-
նով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով,
ինչ որ քաջութիւնով, ինչ որ գովութիւնով,
9 ան բաները խորհեցէք ։ Ինչ որ սորվեցաք ու
առիք և լսեցիք ու անոնք իմ վրաս, ան բրէք ։
և խաղաղութեան Աստուածը ձեր հետն ըլլայ ։
10 Շատ ուրախ եղայ ես Տէրոջմով · որ ալ
դուք մտածութիւնիդ համար հոգ քաշելու · ինչ-
պէս որ կը հոգայիք ալ · միայն ձեզ պատեհութիւն
11 չունէիք ։ Ոչ թէ կարօտութեան համար կը-
սեմ · ինչու որ ես սորվեցայ բաւական ըլլալ
12 անով որ կրնամ ։ Գիտեմ պակսու-
թիւն քաշել · գիտեմ ե՛ւ ըլլալ · ամէն տեղ
ամէն կերպով ազէկ հասկըցեր եմ · կըշտանալն
ալ, անօթենալն ալ · ե՛ւ ըլլալն ալ, պակսու-
13 թիւն քաշելն ալ ։ Ամէն բանի կարող եմ անով
14 որ իս զօրացուց ։ Բայց ազէկ ըրիք, որ իմ նե-
15 ղութեանս մէջ ինծի հաղորդ եղաք ։ Դուք ալ
գիտէք Փիլիպպեցինե՛ր, որ աւետարանին սկիզբին
երբոր ես Մակեդոնիայէն ելայ, մէկ եկեղեցի
մըն ալ հետս հաղորդութիւն չբրաւ տալու ու
16 առնելու հարցը · հապա միանակ դուք · որ Թես-
սաղոնիկին մէջ ալ մէկ երկու հատ ինծի պէտք
17 եղածը բերիդ տըվիք ։ Ոչ թէ ես ընդհակառակն
տրտունջ, հապա պտուղը կըմրնարակուի որ ձեր
18 հաշիւին վրայ էվելնայ ։ Բայց ես ամէն բան
առած եմ ու էվելցած եմ · ընդունեցի Եպափրոդիտոսին ձեռքովը ու ըղ-
ձեցայ · որ ձեզմէ անուշ հոտ մըն է, ընդունելի
19 պատարագ Աստուծոյ հաճելի ։ Եւ իմ Աստուած
ձեր ամէն պիտոյքը լեցունէ իր մեծութեան
հարստութեամբ Քրիստոս Յիսուսի ձեռ-

վը ։ Ու Աստուծոյ ու մէր Հօրը փառք յաւի- 20
տեանս յաւիտենից . ամէն ։

Խարև տըվէք ամէն սուրբերուն՝ Քրիստոս 21
Յիսուսով ։ Ձեզի բարև կուտան իմ հետս և- 22
ղած եղբայրները ։ Ձեզի բարև կուտան բոլոր 23
սուրբերը . մանաւանդ անոնք որ կայսրին տու-
նէն են ։ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհ- 24
քը ձեր հոգիին հետ .
Ամէն ։

Հռոմայեն գրվեցաւ Փիլիպեցիներուն՝ Եպափ-
րոդիտոսին յետոյ ։

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼ. Ա.

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստու-
2 ծոյ կամքով, և Տիմոթէոս եղբայրը. Կողո-
սացի սուրբ ու հաւատացեալ եղբայրներուն
3 Քրիստոսով. Շնորհք և խաղաղութիւն ձեզի
Աստուծմէ մեր Հօրմէն և Տէր Յիսուս Քրիս-
տոսէն.

Կը գոհանանք Աստուծմէ ու մեր Տէր Յի-
սուս Քրիստոսին Հօրմէն (ամէն իմիր ձեզի
4 համար աղօթք կընեմ.) երբոր լսեցինք ձեր
հաւատքը՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը
վրայ, և ան սէրը որ դէպի ամէն սուրբերուն
5 ունիք. ան յոյսին համար՝ որ երկինքը կըպահ-
ված ձեզի համար. որուն վրայով լսեցիք աւետա-
6 բանին ճշմարտութեան խօսքովը, որ ձեզի հա-
սաւ. ինչպէս որ բոլոր աշխարհի մէջ կաճիկոր՝
ու պտղաբերը կըլլայ, ինչպէս ձեր մէջն ալ. ան
օրէնքնէ որ դուք լսեցիք ու ճանչցաք Աստուծոյ
7 շնորհքը ճշմարտութեամբ. ինչպէս որ սորո-

վնցաք Եպափրաս սիրելիեն՝ մեր ծառայակիցն ,
որ ձեզի համար հաւատարիմ պաշտօնեայ մրն է
Քհստոսի . որ ինքն ալ մեզի պատմեց ձեր սէրը 8
Հոգիով ։

Վնոր համար մենք ալ ան օրմընէ որ լսեցինք՝ 9
չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէն
ու խնդրելածք մատուցանելէն . որ կատարեալ
ունենաք անոր կամքը գիտնալը՝ բոլոր իմաստու-
թիւնով ու հոգևոր հանճարով . որ գնաք Տէ- 10
րոջը արժանի ճամբան մինչ ի ամէն բանի
մէջ գնելը , ամէն բարի գործքե-
րու մէջ պտղաբեր , ու աճեցուն Վստուծոյ գի-
տութիւնովը . ամէն ուժով ուժանալցած՝ իր փա- 11
ռաւոր ուժին չափովը . ամէն բանի համբերելու
ու երկայնամիտ ըլլալու՝ ուրախութիւնով . գո- 12
հանալով Հօր Վստուծմէն , որ մեզ կանչեց լու-
սի մէջ բնակուելու սուրբերուն վիճակին մասնակից
ըլլալու . որ մեզ խլեցնց խաւարին իշխանութե- 13
նէն , ու մեզ իր սիրելի Որդւոյն Թագաւորու-
թեանը փոխեց . որ անով մենք փրկութիւն ու- 14
նինք իր արիւնովը , ու մեղաց թողութիւն իր
մարմինովը . որ ինքը անեռնելի Վստուծոյ 15
պատկերն է՝ բոլոր առեղծուածներուն առջինեկը .
ինչու որ անով ամէն բան հաստատուեցաւ , ինչ 16
որ երկինքը՝ ու ինչ որ երկրի վրայ , անտես ոյժ
կրնան՝ և անոնք որ չեն երևար , թէ աթոռներ-
ը՝ թէ տէրութիւնները՝ թէ պետութիւնները՝
թէ իշխանութիւնները , բոլոր բաները անով՝
ու անոր համար ստեղծուեցաւ . ու անիկա ամէն 17
բանէն առաջ է , և ամէն բանները անով կկցուր
է լըման . և անիկա է մարմինին այնհան եկեղե- 18
ցիին գլուխը . որ ինքը սկիզբն է՝ մեռելներէն
առջինեկը , որ ինքը ըլլայ ամէն բանի մէջ նա-
խապատիւ . ինչու որ Հայրը ուզեց որ Վստա- 19
ուածութեան բոլոր լեցնութիւնը անոր մէջը
բնակի . և անով ամենը հաշտեցուն իրեն , 20

(խաղաղութիւն ընդով իր խաչին չջոյ խոչեց
արուեստը,) անոնց որ երկրի վրայ են՝ ու ա-
նոնց որ երկինքն են :
21 Եւ ձեզ ալ՝ որ առեն մէր օտարական էիք, ու
22 չար գործքերով թշնամիներ իրեր մտքովը· հի-
մայ ալ հաշտեցուց իր մարմինին անդամներովը՝
իր մահուամբը, որ ձեզ անոր դիմացը սուրբ
23 ու անբիծ և անարատ կայնեցնէ· թէ որ կե-
նաք հաւատքին մէջը արմատ կապած՝ ու հաս-
տատած՝ և առանց խախտելու աւետարանին
յոյսէն՝ որ լսեցիք, որ երկինքին տակը եղած
բոլոր ստեղծուածներուն քարոզուեցաւ· որ ա-
24 նոր ես Պօղոս սպասաւոր եղայ : Հիմայ ուրախ եմ իմ ձեզի համար չարչա-
րանքներուս վրայ, ու Քրիստոսի չքաւ նե-
րելութիւններուն պակսութիւնը իմ մարմինիս
մէջը կրնեցնեմ՝ անոր մարմինին համար, որ ե-
25 կեղեցին է· որուն ես Պօղոս սպասաւոր եղայ
Աստուծոյ անտեսութիւնովը՝ որ ինձի տրուեցաւ
ձեզի համար Աստուծոյ խօսքը կատարելու·
26 ան խորհուրդը որ ծածկուած էր յաւիտենական
դարերէն ու ազգերէն հետէ, որ հիմայ իր սուր-
27 բերուն յայտնուեցաւ· որոնց ուզեց Աստուած
ցուցընել, թէ ինչ է անոր խորհուրդին հան-
գոյն փառքին մեծութիւնը հեթանոսներուն
մէջ· որ ան Քրիստոս է ձեր մէջը՝ փառքին
28 յոյսը· որ անկից մենք կրքարոզենք, ու ամէն
մարդիկ կրնրտանենք, և կրսորվեցուենենք ամէն
մարդիկ բոլոր հոգւով իմաստութիւնով, որ
ամէն մարդ կատարեալ կնցուենենք Քրիստոս
29 Յիսուսով· որուն համար կաշխատիմ ես պա-
տերազմ ընելով իր յաղթութիւնովը՝ որ զո-
րութիւնով ինձի կրյաղթէ :

ԳԼ. Ե։

Կ ուզեմ՝ որ գիտնաք դուք՝ թէ ինչպէս նեղ- 1
դութիւն ունիմ իմ՝ վրաս ձեղի համար ու
Լաւոդիկեացոց համար , ու անոնց համար որ իմ
երեսը մարմինով չեն տեսեր . որ անոնց սիրտե- 2
րը միխիթարուին՝ սիրով տեղեկանալով , ու կա-
տարեալ իմաստութեան բոլոր մեծութիւնովը
Հօր Աստուծոյ խորհուրդը գիտնալու Քրիս-
տոս Յիսուսով . որուն մէջը իմաստութեան ու 3
գիտութեան բոլոր գանձերը պահված են : Եւ 4
աս կըսեմ , որ չըլլայ թէ մէկը խաբեբայ խօս-
քերով ձեզ մոլորցունէ : Որ թէպէտ մարմնով 5
հեռու եմ՝ բայց հոգւով ձեղի հետ եմ . կըխընդ-
դամ երբոր ձեր կարգը կըտեսնամ , ու ձեր
հաւատքին հաստատութիւնը Քրիստոս Յի-
սուսի վերայ : Ուստի ինչպէս որ ընդունեցիք 6
Քրիստոս Յիսուս Տէրը՝ անով գացէք . արմատ 7
կապած՝ ու անոր վերայ շինված՝ և հաւատքին
մէջ հաստատուած՝ ինչպէս որ սորվեցաք , անոր
մէջը եվխըչէք գոհութիւնով : Զգուշացէք՝ մե- 8
կը չըլլայ որ ձեզ կողոպտէ միտքի վարպետու-
թիւնով ու փուճ խաբէութիւնով , որ մարդոց
աւանդութեան պէս է՝ ու աշխարհիս գաղա-
փարներուն պէս , և չէ թէ Յիսուս Քրիստոսին
պէս . ինչու որ անոր մէջը կըբնակի Աստուա- 9
ծութեան բոլոր լըցունութիւնը՝ մարմնապէս :
Ու դուք ալ անով լըված էք . որ ինքը գլուխ է 10
բոլոր իշխանութեան ու պետութեան . որ անով 11
դուք հաւատքով թլփատվեցաք անձեռագործ
թլփատութիւնը , մարմնին անդամներուը մերկա-
նալով Քրիստոսի թլփատութիւնովը . թաղ- 12
վելով անոր հետը մկրտութիւնով , որ անով
ալ իր հետը յարութիւն առիք Աստուծոյ զո-
րութեանը հաւատալով . որ ինքը անիկա մեռել-
ներէն յարուց : Եւ ձեզ որ ատեն մը մեղքի 13

մէջ ու ձեր մարմինին անթերիտութեանը մէջ
մեռած էիք , կենդանացուց իր անձովը · մեր ա-
14 մէն յանցանքները ներելց մեզի · ու իր պատ-
ուէրներովը եղած մեր հակառակութեան ձե-
ռագիրը , որ մեզի հակառակ կրկնար՝ ջնջեց ,
անիկա մէջ տեղէն վերցուց՝ ու խաչափայտին
15 վրայ գամեց : Իշխանութիւնները ու պետու-
թիւնները մերկացուց · բաց յայտնի խայտա-
ռակեց յաղթելով անոնց իր անձովը՝ իր յա-
16 րութիւն առնելովը : Ուստի ալ մէկը ձեզ թող
չի դատէ ուտելու կամ խմելու՝ կամ տօներու
բաժանմունքներու , կամ ամսու գլուխներու
17 կամ շաբաթներու պատճառով · որ գալու բա-
ներուն շուքերն են · բայց մարմինը Քրիստոս
18 է : Ընդհակառակ մէկը ձեզ խաբէ · որ ուզէ խո-
նարհութիւնով ու հրեշտակներու կրօնքով չի
տեսած բաներուն ետևէն ըլլալ զուր տեղը , իր
մարմինին միտքովը փուճ տեղը հպարտանալով ·
19 և չի բռնէ ան գլուխը որմէն Քրիստոսը · ուս-
կից ու բոլոր մարմինը կապերով ու խոպերով
բաժնուած ու մէկ կապած Աստուծոյ աճու-
20 մովը կաճի : Ով որ դուք Քրիստոսի հետ ան
աշխարհիս սկզբունքներէն մեռաք նէ , ալ ին-
չո՞ համար աշխարհիս մէջը ողջերու պէս կրօ-
21 նաւորիքկոր , ըսելով · Մի՛ մօտիկնար , մի՛ հա-
22 մը առներ , մի՛ դպչիր · (որ անոնց ամէնը աւեր-
մունք տալու համար են ,) մարդոց պատուիրան-
23 քին ու սորվեցուցածին պէս : Որ մէկ իմաս-
տութիւն մը կըսեպվի իր կամքովը հնարված
կրօնքովը , ու խոնարհութիւնովը , և մարմինին
չի խնայելովը , ու պատիւ մը չի նայիլը մարմի-
նին պէտք եղածը լեցուներու :

Գ.Ա. Գ.

Ա՛Ն որ Քրիստոսի հետ չարութիւն առիք՝ 1
անանկ է՛նէ վերի բաները փնտռեցէք, ուր
որ Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը:
Վերի բաները մտած եղէք չէ՛ թէ ան որ երկ- 2
րիս վրայ է: Ինչու որ դուք մեռաք ու ձեր 3
կեանքը պահված է Աստուծոյ քովը Քրիստոսի
հետ: Երբոր Քրիստոս ձեր կեանքը 4
յայտնվի, անատանիկ դուք ալ անոր հետ փառ-
քով պիտի յայտնվիք:
Ասոնի ձեր երկրաւոր անդամները բռնա- 5
նեցէք. մեկ դի ձգեցէք պոռնկութիւնը,
պղծութիւնը, աղտեղութիւնը, չար բա-
նեբուն ցանկութիւնը, ու ագահութիւնը՝ որ
կռապաշտութիւն է. որ ասոնց բաներուն համար 6
Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան որ-
դիներուն վրայ կուգայ. որ անոնցմով կերթա- 7
յիք դուք ալ մեկ ատեն մը, երբոր անոնց մէջը
կապրէիք: Ասոնի մեկ դի թողեցեք դուք ալ 8
ան ամէնը. բարկութիւնը, սրդոհութիւնը,
չարութիւնը, հայհոյութիւնը, անպարկեշտ
խօսքերը ձեր բերնէներէն: Իրարու սուտ մի 9
ըսեցէք. հին մարդը իր գործքերովը վրաներ-
նուած հանեցէք. և վրանիդ հագէք ան նորը որ 10
կը նորոգվի՝ իր Ստեղծողին պատ-
կերին պէս. ուր ո՛չ Հրէան է, ո՛չ ալ Հեթանո-11
սը, թլփատութիւնը, ու անթլփատութիւնը,
բարբարոսը, Սկիւթացին, ծառան, ազատը.
հապա Քրիստոս է ամէնը՝ և ամէնուն մէջը:
Ասոնի ինչպես Աստուծոյ ընտրեալներ՝ սուրբեր 12
ու սիրելիներ՝ վրանիդ հագէք գութը,
ողորմութիւնը, անուշութիւնը, խոնարհութիւնը, հե-
զութիւնը, համբերութիւնը, իրարու ներելով, 13
իրարու նեղութիւն տալով՝ թէ որ մեկը մեկու
մը դէմ տրտունջ մը ունենայ. ինչպես որ

Աստուած Քրիստոսով ձեզի թողութիւն տա-
14 ւաւ , անանկ ալ դուք : Եւ աս ամէն բաներուն
վրայ սէրը հագէք , որ կատարելութեան կապն է .
15 ու Քրիստոսի խաղաղութիւնը ձեր սրտին մէջը
հաստատուի . որ դուք անոր կանչուելնուդ մէկ
16 մարմինով . ու գոհացող եղէք : Որ Քրիստո-
սի խօսքը ձեր մէջը բնակի առատապէս՝ ամէն
իմաստութիւնով սորվեցունելու ու խրատելու
մէկզմէկ , սաղմոսներով և օրհնութիւններով ,
ու հոգևոր երգերով և շնորհքով ձեր սրտին
17 մէջը Աստուած օրհնելու : Եւ բոլոր ինչ որ
կընէք խօսքով ու գործքով , ամէնը Տէր Յիսու-
սին անունովը րնէք . գոհացող եղէք Աստուծմէ
ու Հօրմէն անով :
18 Կիներնե՛ր՝ հնազանդ եղէք ձեր էրիկներուն .
19 ինչպես որ կրնայէ՝ Տէրոջմով : Էրիկնե՛ր՝
սիրեցէք ձեր կիներները , ու հետերնին լեղի մի՛
20 վարվիք : Որդինե՛ր՝ ամէն բանի մէջ հնազանդ
եղէք ձեր ծնողքներուն . ինչու որ ան է Տէրոջը
21 առջևը հաճելի : Հայրե՛ր՝ ձեր զաւկրնները մի՛
22 բարկացունէք , որ չի տրտմին : Ծառանե՛ր՝
ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր Տէրերուն .
չէ թէ աչքի առջև ծառայելով՝ մարդահաճո-
ներու պէս . հապա միամիտ սրտով Տէրոջմմէն
23 վախնալով . ինչ որ կրնէք՝ սրտանց րրէք , որ-
24 պէս թէ Տէրոջը՝ ու չէ թէ մարդոց . գիտնալ որ
ձեր ժառանգութեան հատուցումը Տէրոջմմէն
պիտի առնէք . ինչու որ Տէր Քրիստոսին կը
25 ծառայէք . բայց անօրէնը իր անօրէնութեանը
չափովը պիտի ընդունի . ինչու որ Աստուծոյ
Դառջևը աչառութիւն չի կայ :

Տէրե՛ր՝ ձեր ծա-
ռաներուն իրաւունքը ու հաւասարութիւնը
տուէք . գիտցէք որ դուք ալ Տէր ունիք ե-
կինքը :
2 Աղօթքի եաեւէ եղէք . անոր մէջը արթուն
3 մնալով գոհութիւնով : Աղօթք րրէք նաև մե-

զի համար · որ Յատուած խօսքի դուռ բանայ մեզի՝ Քրիստոսի խորհուրդը խօսելու համար ·
որուն համար որ ես կապված ալ եմ · որ յայտ- 4
նի ընեմ անիկա ինչպէս որ ինծի կըվայլէ խօ-
սել ։ Իմայութեամբ վարվեցէք դուրսինները- 5
րուն հետ , ժամանակը ծախու առնելով · Ե- 6
ձեր խօսքը ամէն ժամու Տէրոջը շնորհքովը լեցուն՝
որպէս թէ ազով համեմուած ըլլայ · գիտնալով
որ ինչպէս կըվայլէ ձեզի ամէն մէկուն պատաս-
խան տալ ։

Ձ ինչ որ իմ վրայօքս է՝ բոլորը ձեզի կըցու- 7
ցընէ Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ
պաշտօնեան ու ծառայակիցը Տէրոջմով · որ 8
զինքը անոր համար ձեզի խրկեցի , որ մեր վա-
յրովը գիտնաք , ու ձեր սիրտը մխիթարէ · Ան- 9
սիմոս հաւատարիմ ու սիրելի եղբօրը հետ մէկ
տեղ՝ որ ձեզմէ Ջէն է · իրենք ամէն բանը ձեզի
պիտի ցուցընեն՝ ինչ որ հոս կայ ։ Արև կու- 10
տայ ձեզի Քրիստարքոս իմ գերութիւնի ըն-
կերս , և Մարկոսը Նաւնաբասին եղբօրը տղան ·
(որուն համար պատուէր առիք՝ թէ ձեզի գալու
ըլլայ նէ , ընդունեցէք անիկա ·) և Յիսուս որ 11
Յուստոս ըսված է , որոնք որ թլփատածներէն
են · որ անոնք միայն ինծի գործակից եղան Ա-
տուածոյ թագաւորութեանը մէջ · որոնք ինծի
մխիթարանք ալ եղան ։ Ողջոյն կուտայ ձեզի 12
Եպափրասըր՝ Յիսուս Քրիստոսի ծառան , որ
ձեզմէ Ջէն է · ամէն իմիր աղօթքի մէջ ձեզի
համար պատերազմ ընելով , որ դուք կատա-
րեալ ըլլաք՝ ու Յատուծոյ կամքին մէջ լման ։
Ի բեն համար ես կըվկայեմ , թէ շատ ջանք 13
ունի ձեզի համար՝ ու Լաւոդիկեցոց հա-
մար՝ և անոնց համար որ Յիերապոլիս են ։
Ողջոյն կուտայ ձեզի սիրելի Ղուկաս բժիշկն 14
ալ , ու Դեմասը ։ Ողջոյն տըրէք եղբայրնե- 15
րուն՝ որ Լաւոդիկիա են , և Նիմփասին , ու ա-

16 նոր տանը մէջն եկեղեցիին : Եւ երբոր աս
թուղթը ձեր մէջը կարդացվի , լաւոդիկեցոց ե-
կեղեցիին մէջն ալ կարդացուցէք . և որ Լա-
ւոդիկեցիներէն եղած նոյնը դուք ալ կարդաք :
17 Ու ըսէք Արքիպպոսին . Զգոյշ եղիր քու սպա-
սաւորութեանդ , որ Տէրոջմով առիր , որ ա-
18 նիկա կատարես : Քո բարեը իմ ձեռքիս Պօ-
ղոսին է . իմ կապերըս միտքերնիդ թող
ըլլան : Շնորհքը ձեզի հետ .
Ամէն :

Առ Հռոմայեցս գրվեցաւ Կողոսացիներուն Տի-
մոթէոսին ու Ընեսիմոսին
յԵռոմէ :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ՆԱՄԱՅԻՆ ԹՈՒՂԹԸ ԱՌ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս . Թեսա- 1
ղոնիկեցւոց եկեղեցիին մէր Հայր Աստուա-
ծով՝ ու Տէր Յիսուս Քրիստոսով . Շնորհք 2
և խաղաղութիւն ձեզի .

Մշտնջենաւոր Աստուծմէ ամէն ժամ ձեր ամէ- 3
նուն համար՝ անդադար յիշելով մեր ա-
ղօթքին մէջը . յիշելով ձեր հաւատքին գործը՝ ու
սիրոյ աշխատութիւնը և մեր Տէր Յիսուս
Քրիստոսի յոյսին համբերութիւնը , Աստուծոյ 4
ու մեր Հօրը առջեւը : Գիտէք Աստուծմէ սիր- 5
ւած եղբայրնե՛ր ձեր ընտրութիւնը . որ մեր աւե-
տարանը չէ՛ թէ միայն խօսքով եղաւ ձեզի , հա-
պա զօրութիւնով ալ՝ և Հոգւով Սրբով , ու
շատ կատարելութիւնով , ինչպէս որ գիտէք ալ ,
թէ ինծոր կեցանք ձեր մէջը ձեզի համար : Դուք 6
ալ մեզի ու Տէրոջը նմանելով՝ ընդունեցիք ան
խօսքը աւելի նեղութեան մէջ՝ Հոգւոյն Սրբոյ
ուրախութիւնովը . անանկ որ դուք օրինակ և- 7

ղաք բոլոր հաւատացեալներուն՝ որոնք Աքայ-
8 դոնիայի ու Աքայիայի մէջ են: Ինչու որ ձեզ-
մէ լսուեցաւ Աստուծոյ խօսքը. չէ թէ միայն
Աքայդոնիայի ու Աքայիայի մէջ, հապա ա-
մէն տեղ ձեր հաւատքը որ դէպի Աստուած է
տարածուեցաւ, անանկ որ ալ պէտք չէ մեզի
9 բան մը խօսիլ: Որ բուն անոնք կը պատմեն
մեզի համար, թէ ինչպէս եղաւ մեր քովը
մտնելը, և ինչպէս դուք ան կուռքերէն Աս-
տուծոյ դարձաք՝ կենդանի ու ճշմարիտ Աստու-
10 ծոյ ծառայելու. և սպասելու անոր Որդւոյն
երկինքէն. որ ինքը մեռելներէն յարուց անիկա՝
այսինքն Յիսուս. որ պիտի խլրտէ մեզ գալու
բարկութենէն:

ԳԼ. Բ:

1 Վասն զի ինքներնիդ գիտէք եղբայրնե՛ր մեր
մտնելը ձեզի, թէ պարապ տեղը չեղաւ.
2 հապա առաջուց չարչարանք քաշելով ու անար-
գուելով, ինչպէս որ դուք ալ գիտէք՝ Փիլիպ-
պիներուն մէջ, համարձակութիւն ըրինք մեր
Աստուծմով ձեզի պատմելու Աստուծոյ աւետա-
3 րանը մեծ պատերազմով: Ինչու որ մեր յոր-
դորանքը ոչ մոլորութենէ է, ու ոչ պղծութե-
4 նէ, և ոչ խաբեպայթութիւնով. հապա ինչպէս
որ մենք Աստուծմէ ընտրուելով հաւ-
ներ հաւատացեալ ենք, անանկ ալ կը խօսինք, չէ
որ մարդոց հաճոյ ըլլանք, հապա Աստուծոյ՝ որ
5 մեր սիրտերը կը քննէ: Ինչու որ մենք
ըսած շողոքորթութեան խօսքեր չի գործածեցինք
ձեզի, ինչպէս դուք ալ գիտէք, և չէ թէ ագա-
հութեան պատճառով՝ ինչպէս Աստուած ալ
6 կը վկայէ. և մարդոցմէ փառք չուզեցինք, ոչ ձեզ-
7 մէ, ոչ ալ ուրիշներէն: Կրնայինք՝ Քրիստոսի
առաքեալներու պէս ծանրութիւն տալ, բայց
մենք հիմ եղանք ձեր մէջը, ինչպէս մէկ ծիծմայր

մը՝ որ էր զաւկընները կրմեծցունէ , անանկ ալ 8
մենք ձեր վրայ կրգ թայինք · աղէկ կերևաւ մեղի
չէ՛ թէ միայն Աստուծոյ աւետարանը ձեղի տալ ,
հապա մեր անձերն ալ · ինչու որ դուք մեր սի-
րելիները եղաք ։ Յիշեցէք ևղբայրներ մեր աշ- 9
խատութիւնը ու ջանքը · որ գիշեր ու ցորեկ կը
գործէինք ձեղմէ մէկու մը ծանրութիւն չի տա-
լու համար , և ձեղի Աստուծոյ աւետարանը կը
քարոզէինք ։ Դուք ինքնիրենիդ կրվկայէք , 10
Աստուած ալ , որ ինչպէս սրբութիւնով ու ար-
դարութիւնով և անարատութիւնով վարվե-
ցանք ձեղի հետ որ հաւատացիք · ինչպէս դուք 11
ալ գիտէք , որ ձեղմէ ամէն մէկդ՝ ինծոր հայր մը
իր զաւկրները՝ կըյորդորէինք ու կըմխի- 12
թարէինք · և վկայութիւն կըդնէինք որ դուք
Աստուծոյ վայլածին պէս երթաք , որ ինքը ձեղ
իր թագաւորութեանը ու փառքին կանչեց ։
Ասոր համար մենք ալ Աստուծմէ կըդոհանանք 13
անպակաս , որ մեղմէ Աստուծոյ խօսքը լսելով
ընդունեցիք , չէ՛ թէ մարդոց խօսքին պէս , հա-
պա Աստուծոյ խօսքին պէս՝ ինչպէս որ ճշմարիտ
է , որ յօժողված ալ է ձեր մէջը որ հաւատացիք ։
Ինչու որ դուք եղբայրներ նմանող եղաք Աս- 14
տուծոյ եկեղեցիներուն՝ որ Յրէաստանի մէջ
են Քրիստոս Յիսուսով · ինչու որ դուք
ալ չարչարվեցաք նոյն չարչարանքներովը
ձեր ազգականներէն , ինչպէս որ անոնք ալ
Յրեայներէն · որոնք որ Տէր Յիսուսն ալ 15
մեռուցին՝ մարգարէներն ալ · և մեզ հալա-
ծեցին , ու Աստուծոյ աչքին կպան , ու բոլոր
մարդոց հակառակ եղան · և մեզ կարգիլեին Հե- 16
թանոսներուն խօսելու՝ որ փրկվին · որ իրենց
մեղքերը կատարեն ամէն ի ժիր · որովհետև բար-
կութիւնը անոնց վրայ հասեր է մինչև վերջը ։
Բայց մենք եղբայրներ՝ իրաւ քիչ մը ատեն 17
ձեղմէ որբ մնացինք երեսով , ու չէ՛ թէ սիր-

տով · ալ էվիլոքը ջանացինք ձեր երեսը տեսնա-
18 լու մեծ փափաքով : Ընդ համար ես Պօղոս
մէկ երկու անգամ ուղեցի ձեզի գալ , բայց սա-
19 տանան մեզ արգիլեց : Ինչու որ ո՞վ է մեր
յոյսը , կամ ուրախութիւնը՝ կամ մեր պար-
ծանքին պսակը , թէ չէ դուք Տէրոջմով՝ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի առջեւը անոր գալուա-
20 տեն : Որովհետեւ դուք էք մեր փառքը՝ եւ ու-
Գ րախութիւնը : Ուստի ալ չի կրնալով էվիլն
համբերել , ադէկ երեւցաւ մեզի միայն Աթէնքը
2 մնալ · Եւ Տիմոթէոս մեր եղբայրը ու Աս-
տուծոյ և Քրիստոսի Ճօրը աւետարանին գոր-
ծակիցը խրկեցինք ձեզ հաստատելու ու մխիթա-
3 բելու ձեր հաւատքին համար : Որ ա նեղու-
թիւններուն մէջ չի ձանձրանաք . ինչու որ
դուք ինքներնիդ գիտէք որ մենք սա բանին
4 համար կեցեր ենք : Որովհետեւ երբոր մենք
ձեր քովն էինք՝ առաջուց ձեզի կըղըսցէինք , թէ
նեղութիւններ պիտի հասնին մեր վրայ · ինչպէս
5 որ եղաւ ալ , ու գիտցաք : Ասոր համար ես
ալ որ չէի կրնար համբերել՝ խրկեցի ձեր
հաւատքը գիտնալու , որ չըլլայ թէ ան փորձո-
ղը ձեզ ալ փորձած ըլլայ , և մեր աշխատու-
6 թիւնը պարապ ըլլայ : Հայց հիմայ երբոր
Տիմոթէոս ձեզմէ մեզի եկաւ՝ ու ձեր հաւատքին
և սիրոյն աւետիս մեզի տուաւ , որ ամէն ի-
մէրը մեր բարի յիշատակը ժամանիդ ունիք . կըփա-
փաքիք մեզ տեսնալու՝ ինչպէս որ մենք ալ ձեզ .
7 ասոր համար եղբայրներ՝ ձեր վրայ մխիթարուե-
ցանք մեր ամէն քառած վիշտերուն ու նեղու-
8 թիւններուն վրայ՝ ձեր հաւատքովը . ինչու որ
հիմայ կենդանի ենք մենք . թէ որ դուք հաստա-
9 տուն կենաք Տէրոջմով : Ինչ գոհութիւն
կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր վրայով՝ ան
ամէն ուրախութիւնին համար որ կուրախա-
նանքիոր ձեզի համար մեր Աստուծոյ առջեւ .

դիշեր ու ցորեկ էվելօքք կաղաչեմ ձեր հրեսք 10
անսնալու , ու ձեր հաւատքին պակսութիւնը
հաստատելու : Իսայց ինքը Աստուած ու մեր 11
Հայրը՝ և մեր Տէրը Յիսուս Քրիստոս մեր
ճամբաները դէպի ձեղի յաջողէ : Եւ ինքը 12
Տէրը աճեցունէ ու էվելցունէ ձեղ սիրով մէկ-
մէկու վրայ՝ ու ամէնուն վրայ , ինչպէս մենք ալ
ձեր վրայ · Հաստատելով ձեր սիրտը անարատ 13
սրբութեան մէջ Աստուծոյ և մեր Հօրը առջեւը՝
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի գալուն առենը՝
իր բոլոր սուրբերուն հետ մէկտեղ :

Գ Լ · Գ ։

Ասկէ ետև եղբայրներ , ձեղի կաղաչենք՝ ու 1
կրսորդորենք Քրիստոս Յիսուսով . որ ինչ-
պէս մեզմէ առիք՝ թէ ինծոր պէտք է ձեղի եր-
թալ ու Աստուծոյ հաճոյ ըլլալ · ինչպէս որ
կերթաքկոր ալ , որ առաւել ալ էվելօքքը անոր
մէջը շատնաք : Եւ գիտէք թէ ինչ պատուէր- 2
ներ տուինք ձեղի Տէր Յիսուսով : Ինչու որ 3
Աստուծոյ կամքը ա՛ս է այսինքն՝ ձեր սուրբ ըլ-
լալը , որ մէկ դի կենաք դուք պոռնկութենէն ·
ձեղմէ ամէն մէկերնիդ գիտնայ իր ամանը սրբու- 4
թիւնով ու պատիւով ստանալ · չէ թէ ցաս- 5
կութեան ախտերով՝ ինչպէս ուրիշ Հեթանոս-
ները՝ որոնք չեն ճանչնար Աստուած · չըլլայ որ 6
ատ բանին մէջը չափէ անցնի ու ղրկանք ընէ Ջա-
կը իր եղբօրը · ինչու որ Տէրը ատ բոլոր բանե-
րուն վրայ վրէժխնդիր է · ինչպէս առաջուց
ըսինք ձեղի , ու վկայութիւն դրինք : Ինչու 7
որ Աստուած մեզ պղծութեան չի կանչեց , հա-
պա սուրբ ըլլալու : Ուստի ան որ կանարգէ չէ 8
թէ անիկա մարդ մը կանարգէ , հապա Աս-
տուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ ձեղի տուաւ :
Իսայց եղբայրսիրութեան համար պէտք չէ 9
ձեղի գրելու · ինչու որ դուք ինքներնիդ

10 Յատուածմ սորված էք մէկզմէկ սիրել · որով-
հետև ատ բանը կընէք դուք բոլոր եղբայրնե-
րուն՝ որոնք որ Մակեդոնացոց ամէն կողմերը
են : Ապաչեմ ձեզի եղբայրնե՛ր՝ որ ալ էվելըը
11 չատնաք ու առատ ըլլաք · խաղաղ կենաք , և
ամէն մէկը իր գործը բանի , ու ձեր ձեռքերովը
գործէք , ինչպէս որ ձեզի ապրսպըրեցինք , որ
դուրսիններուն հետը պարկեշտութեամբ վար-
վիք · ու ոչ մէկ բանով մը կարօտութիւն չի
քաշէք :
12 Ձեմ ուզեր եղբայրնե՛ր՝ որ տգէտ ըլլաք
ննջեցեալներուն վրայով · որ չի տրտմիք ինչ-
13 պէս ուրիշները՝ որոնք որ յոյս չունին : Թէ որ
կրհաւատանք որ Յիսուսը մեռաւ ու յարու-
թիւն առաւ · անանկ ալ Յատուած Յիսուսով
14 ննջեցեալները պիտի բերէ անոր հետ : Ասոր
ատ կըզրուցնենք Տէրոջը խօսքովը , թէ մենք որ
ողջ մնացած ենք Տէրոջը գալուն ատենը ննջե-
15 ցեալներուն չենք հասնիր : Ինչու որ ինքը
Տէրը հրամանով հրեշտակապետին ձայնովը ու
Յատուծոյ փողովը երկինքէն պիտի իջնայ , և
Քրիստոսով մեռելները առաջ յարութիւն
16 պիտի առնեն : Ետքը մենք ալ որ ողջ մնացած
ենք՝ անոնցմով մէկտեղ պիտի յափշտակինք
ամպով Տէրոջը առջևը օդին մէջը · և անանկ ա-
17 մէն ժամը Տէրոջը հետ պիտի ըլլանք : Ուստի
մէկզմէկ մխիթարեցէք ատ խօսքերովը :

ԳԼ. Ե։

1 Բայց ան ժամերուն ու ժամանակներուն հա-
մար եղբայրնե՛ր , պէտք չէ՛ ձեզի բան մը
2 գրել · որ դուք ինքներդ ինդիկ ազէկ գիտէք թէ
Տէրոջը օրը գիշերվան գողի պէս անանկ կը
3 հասնի : Երբոր ըսեն թէ խաղաղու-
թիւն ու ապահովութիւն է , ան ատենը յան-
կարծակի անոնց վրայ պիտի հասնի աւտկինը ,

ինչպէս ծոցվորին ցաւը , ու չի պիտի խալըսին :
Այլց դուք եղբայրներ՝ խաւարի մէջ չէք , որ 4
ան օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի . ինչու որ 5
դուք ամէնքնիդ լուսոյ որդիք էք , ու ցորեկվան
որդիք . գիշերվան չենք , խաւարինը չենք : Ա- 6
նանկ է նէ քունի վրայ չկ'ինանք՝ ինչպէս որ ու-
րիշները , հապա արթուն ու զգաստ կ'ըլլանք : Ինչու որ անոնք որ կը քնանան՝ գիշերը 7
կը քնանան . և անոնք որ կ'արբենան՝ գիշերը
կ'արբենան : Այլց մենք որ ցորեկվան 8
ենք՝ արթուն ըլլանք , և հաւատքին ու սիրոյն
զրահները վրանիս հագնինք , ու փրկութեան
յուսոյն սաղաւարտը գլխներնիս դնենք : Ինչու 9
որ Աստուած մեզ բարկութեան համար չի
դրաւ , հապա կենդանութեամբ փրկվելու մեր
Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը . որ ինքը մե- 10
զի համար մեռաւ . որ եթէ արթուն ըլլանք և ե-
թէ քնանանք , իր հետ միասին ապրինք :
Ինչո՛ր համար միմեանց 11
շինեցէք , ինչպէս որ կ'ընէք ալ :
Աղաչեմ՝ ձեզի եղբայրներ . որ ճանչնաք ձեր 12
աշխատաւորները ու վրանակացուները Տէրոջմով ,
ու ձեզի խրատ տրվողները . և անոնք էվելօք սի- 13
րելու արժանի սեպեցէք՝ իրենց գործքին հա-
մար . միմիանց հետ խաղաղութիւն ըրէք :
Աղաչեմ՝ ձեզի եղբայրներ՝ անառակները խրա- 14
տեցէք , անհամբերները մխիթարեցէք , տկար-
ներուն պաշտպան եղէք , ամէնուն ալ համ-
բերող եղէք : Ոչգոյն եղէք՝ չըլլայ որ մէկը 15
չարին փոխ չարիք հատուցանէ . հապա ամէն ա-
տեն բարի բաներուն հետևէն եղէք միմիանց հետ ,
ու ամէնուն հետ : Միշտ խիղճ ուրախ եղէք : 16
Ընդհատ աղօթք րրէք : Ամէն բանի մէջ գո- 17
հութիւն տրվէք . ինչու որ այս է Աստուծոյ 18
կամքը Քրիստոս Յիսուսով ձեր վրայ : Հո- 19
գին մի՛ մարէք : Մարգարէութիւնները մի՛ 20

21 անարդէք : Ամէն բան փորձեցէք , ապէկը
22 ընդունեցէք : Ամէն գէշ բաներէն ետ կեցէք :
23 Եւ ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ բո-
լորովին սուրբ ընէ , ու ձեր բոլոր հոգին և
շունչը ու մարմինը անարատ պահվի մինչև մեր
24 Տէր Յիսուս Քրիստոսի գալուստը : Հա-
ւատարիմ է ան որ ձեզ կանչեց · որ ինքը պիտի
ընէ ալ անիկա :
25 Եղբայրներ աղօթք ըրէք մեր վրայ ալ :
26 Ողջոյն արվէք բոլոր եղբայրներուն սուրբ համ-
27 բուրով : Երդմընցունեմ ձեզ Տէրոջը վրայ ,
որ ատ թուղթը բոլոր սուրբ եղբայրներուն առ-
28 ջև կարդաք : Մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի շնորհքը ձեր հետը ըլլայ ·
Ամէն :

Ա՚ թեսաղոնիկեցւոց առաջին նամակը Աղեքսեան
գրվեցաւ :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս . Թեսա- 1
ղոնիկեցւոց եկեղեցիին մէջ Հայր Աստուծով՝
ու Տէր Յիսուս Քրիստոսով ։ Շնորհք և խա- 2
ղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու
Տէր Յիսուս Քրիստոսէն ։

Պէտք է որ ամէն ատեն Աստուծմէ գոհանանք 3
ձեզի համար՝ եղբայրնե՛ր , ինչպէս որ կը վայլէ
ալ . ինչու որ ձեր հաւատքը շատ կ՚աճի-
կոր , և ձեր ամէն մէկուն սէրը իրարու վրայ կը
չատնայկոր . անանկ որ մենք ալ ձեզմով կը 4
պարծենանք Աստուծոյ եկեղեցիներուն մէջը ձեր
համբերութեանը ու հաւատքին համար բոլոր
ձեր հալածանքներուն ու նեղութիւններուն
մէջ , որոնց որ դուք կը համբերէք . որ է Աստու- 5
ծոյ արդար դատաստանին օրինակը . որ դուք
արժանի ըլլաք Աստուծոյ թագաւորութեանը ,
որուն համար ատ նեղութիւնը կը քաշէք կոր . որ 6
Աստուծոյ առջևը իրաւունք է ձեզի նեղութիւն

7 արվաղներուն նեղութիւն հատուցանել . և ձե-
ղի նեղութիւն քաշողներուդ մեզի հետ հանգիստ
մեր Տէր Յիսուսի երկինքէն յայտնվելու
8 առեներ իր զօրաւոր հրեշտակներովը . բոլորեքան
կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որոնք Աստ-
ուած չեն ճանչնար , և որ մեր Տէր Յիսուս
9 Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր . ո-
րոնք պիտի պատժվին յաւիտենական սատա-
կումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրութեան
10 փառքէն . երբոր ինքը պիտի գայ փառաւորվե-
լու իր սուրբերուն մէջը , և հիանալի ըլլալու բո-
լոր հաւատացեալներուն մէջը՝ (ինչու որ մեր
վկայութիւնը հաւատարիմ եղաւ ձեր վրայ) ան
11 օրը : Ես պատճառով ալ ամէն իժիր ձեզի
համար աղօթք կընենք . որ մեր Աստուածը ձեզ
արժանի ընէ ձեր կոչումին , մինչև որ իր բարու-
թեան բոլոր հաճութիւնը կատարէ , և հաւատ-
12 քին գործքերը զօրութիւնով . որ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսին անունը փառաւորվի ձեր մէջը , և դուք ալ անոր մէջ մեր Աստուծոյ ու Տէր
Յիսուս Քրիստոսին շնորհքովը :

ԳԼ · Բ :

1 Կաղաչեմ ձեզի եղբայրնե՛ր մեր Տէր Յիսուս
Քրիստոսի գալստեանը՝ ու մեր անոր քովը
2 ժողովվելուն համար , չըլլայ որ դուք շուտ մը
խախտիք ձեր միտքէն , ու չըլլայ որ զարհուրիք՝
ոչ հոգիով ու ոչ խօսքով , ոչ ալ թուղթերով
իբր թէ մեզմէ գրվածէ . որպէս թէ Տէրոջը օրը
3 եկած հասած ըլլայ : Ձըլլայ որ մէկը ձեզ խա-
բէ մէկ բանով մըն ալ . ինչու որ ան օրը չի գար
թէ որ ապստամբութիւնը առաջ չի գայ ,
ու յայտնվի անօրէնութեան Մարդը՝ կորըս-
4 տեան Որդին , ան Հակառակորդը հպարտացած
ամէնուն վրայ՝ որ Աստուած կըսվի՝ կամ կրպաշ-
տվի , մինչև ինքը Աստուծոյ տաճարին մէջ

պիտի նըստը , և ինքըզինքը ցուցընէ թէ Աստուած է : Ձեզ ի յիշելը որ երբ ձեր քովն էի ասիկա կըսէի : Եւ հիմայ դուք ինքնիրենն 6
նիդ գիտէք ինչ է ան որ կրնաստանէ , որ ինքը իր ատենին յայտնըվի : Ինչու որ անօրէնու- 7
թեան խորհուրդը հիմակվընէ կըգործանայոր . բայց ան որ հիմայ կրնաստանէ՝ պիտի նսփանի մինչև ան ատենը որ ինքն վերնայ : Եւ 8
նոքը պիտի յայտնըվի ան անօրէնը , որ Տէր Յիսուսը իր բերնին հոգւովը պիտի սատկեցունէ անիկա , ու իր գալուն յայտնըվելովը պիտի փըճացունէ զանիկա . որուն գալը սատանային ազդե- 9
ցութիւնովն է՝ բոլոր զօրութիւնով ու նշաններով ու սուտ հրաշքներով , և կորուսանելու- 10
թեան վերայ բոլոր անիրաւութեան խաբէութիւնովը . անոր համար որ անոնք ճշմարտութեան սէրը չընդունեցին որ ապրին , ու ա- 11
պաշաւովը պիտի խրկէ անոնց Աստուած ուժով մոլորութիւն մը՝ որ սրտութիւնի հաւատան . որ ամէն ալ դատապարտըվին որոնք որ չի հաւատացին ճշմարտութեան , հապա անօ- 12
րէնութեան յօժարեցան :

Բայց մեզի պէտք է ամէն ժամ Աստուծմէ գո- 13
հանալ ձեզի համար՝ Տէրոջը սիրելի՝ եղբայրնե- րը . ինչու որ Աստուած առաջուց մեզ ընտրեց փրկըվելու Հոգիին սրբեցումովը ու ճշմարտու- թեան հաւատքովը . որ անոր ձեզ կանչեց մեր աւետարանելովը մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքը պատռելով փրկըվելու :

Ուստի եղբայրնե՝ հաստատ կեցէք , ու պինդ 14
բռնեցէք ան աւանդութիւններուն որ սորվեցաք , թէ խօսքով ու թէ մեր թուղթովը : Բայց ին- 15
քը մեր Տէր Յիսուս Քրիստոսը ու Աստուած մեր Հայրը , որ մեզ սիրեց՝ ու յաւիտենական մխիթարութիւն տուաւ մեզի և բարի յոյս շնորհեց , ձեր սիրտերը մխիթարէ՝ ու հաստա- 16
տէ ամէն բարի խօսքերու և գործքերու մէջ :

ԳԼ · Գ։

1 Ասսո՛ի եղբայրներ՝ աղօթք ըրէք մեր վրայ , որ
Տէրոջը խօսքը յառաջանայ , և ամէն տեղ
2 փառաւոր ըլլայ , ինչպէս որ ձեր մէջը · որ ա-
նօրէն ու անըզգամ մարդիկներէն խալըսինք ·
3 ինչու որ ամէնքը հաւատք չունին : Բայց Տէ-
րը հաւատարիմ է , որ ձեզ պիտի հաստատէ՝
4 ու չարէն ալ պահէ : Ձեր վրայ յոյս ունինք
Տէրոջմով , թէ ինչ որ ձեզի պատուիրեցինք
5 նէ կընէքդ՝ ու պիտի ընէք ալ : Եւ Տէրը
ձեր սիրտերը շիտակէ՛ դէպ ի Աստուծոյ սիրուն ու
Քրիստոսի համբերութեանը :
6 Կպատուիրեմ՝ ձեզի եղբայրներ՝ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի անունովը , որ ետ քաշվիք ան
ամէն եղբայրներէն՝ որոնք անկարգութիւ-
նով կերթան , ու չէ՛ թէ ան աւանդութեանը
7 պէս որ մեզմէ առիք : Ինչու որ դուք ինքնի-
րենիդ գիտէք որ ձեզի ինչպէս պէտք է մեզի
նման ըլլալ · ինչու որ մենք քնաւ ձեր հետը ան-
8 կարգութիւնով չի վարվեցանք · ոչ ալ մէկուն
հացը ձրի կերանք . հապա ջանքով , և աշխա-
տանքով գիշեր ու ցորեկ կըդատեինք՝ ձեզմէ մէ-
9 կու մը ծանրութիւն չի տալու համար · չէ՛ թէ
որ մենք իշխանութիւն չունեինք , հապա որ ան-
ձերնիս ձեզի օրինակ ընենք՝ մեզի նման ըլլալու :
10 Վ՛ասն զի երբոր մենք ձեր քովն էինք՝ ասս ձեզի
կըպատուիրէինք , թէ ան որ չուզեր գործ գոր-
11 ծել , հաց ալ թող չուտէ : Բայց հիմայ կը լը-
սենքկոր ձեզմէ մէկքանիներուն համար՝ որ ան-
կարգութիւնով կերթան · գործ մը չեն գոր-
ծեր , հապա ծոյլ հետաքրքիր կըպըտրտին :
12 Ընանկներուն պատուէր կուտանք՝ ու կաղա-
չենք Տէր Յիսուս Քրիստոսով , որ հանդարտու-
13 թեամբ գործեն , և իրենց հացը ուտեն : Բայց
դուք եղբայրնե՛ր՝ մի՛ ձանձրանաք բարիք գոր-

ծելէն : Ոչայց թէ որ մէկը չի հնազանդիր մեր 14
խօսքին առ թուղթովը , զայն նշան դրէք անոր .
ու անոր հետը մի խառնըվիք , որ ամչնայ :
Ոչայց չըլլայ թէ իբրեւ պէս սեպիք անիկա . 15
հապա եղբօր պէս խրատեցէք : Եւ ինքը խա- 16
ղաղութեան Տէրը՝ ձեզի խաղաղութիւն տայ ամէն
առեն ամէն բաներու մէջ . Տէրը ձեր ամենուդ
հետը :
Ես պողոսս իմ ձեռքիւն է , որ ամէն 17
թուղթերուն մէջ նշան է . ասանկ կըգրեմ :
Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը 18
ձեր ամենուն հետը .
Ամէն :

Ի թղթոցն Պետրոսի Երկրորդ (Բ-ղէը) Ընդհանր
գրէից :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԳՈՐԾՔԵՐՆ ԹՈՒՂԹԸ ԱՌ

ՏԻՄՈԹԷՈՍ։

ԳԼՈՒԽ Ա։

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ մեր
Փրկիչ Աստուծոյ հրամանովը ու Յիսուս
2 Քրիստոսի՝ որ է մեր յոյսը. Տիմոթէոսի՝ իմ սի-
րելի որդիիս հաւատքով. շնորհք՝ ողորմու-
թիւն՝ խաղաղութիւն Հօր Աստուծմէն՝ և մեր
Տէր Յիսուս Քրիստոսէն։
3 Ինչպէս որ քեզի աղաչեցի Եփեսոս մնալու,
երբոր ես Մակեդոնիա կերթայի. որ պատուի-
րես մէկ քանիներուն օտար ուսմունք չի սոր-
4 վեցնել, և առասպել զբոյցներու չի նայիլ,
ու անթիւ ցեղահամարներուն. որոնք հարցք
վէճեր կը հանեն, ու չէ թէ Աստուծոյ մատակա-
5 րարութիւնը որ հաւատքով։ Ինչու որ
պատուիրանքին գլուխը սէրն է սուրբ սրտով
6 ու բարի միտքով և անկեղծ հաւատքով. ո-
րոնցմէ մէկ քանիները մոլորեցան՝ փուճ բաներու
7 նաև գացին. օրէնքի վարդապետ ըլլալ կուզեն.
Բայց իրենք չեն հասկընար ինչ որ կըխօսին, ոչ

ալ ան բանները՝ որոնց համար ոտք կը կոխեն ։
Վ.իտենք որ օրէնքը աղէկ է , թէ որ մէկը անիկա 8
բան օրինաց գործածելու ըլլայ ։ Ո.այց աս 9
Թող գիտնայ՝ որ արդարներուն համար չէ օ-
րէնքը , հապա անօրէններուն համար ու ան-
հնազանդներուն , ամբարիշտներուն և մեղաւոր-
ներուն , անմաքուրներուն և պիղծներուն ,
հայր ու մայր անարգողներուն , մարդասպաննե-
րուն , պոռնիկներուն , արուագէտներուն , 10
մարդագողցողներուն , սուտերուն , սուտ
երդում՝ ընողներուն , և թէ որ ուրիշ բան մը
կայ հակառակ ողջամիտ վարդապետութեանը . որ 11
երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին պէս
է . որոնր ինծի հաւատացուեցաւ ։ Հ.նորհակալ եմ 12
անոր՝ որ իս զօրացուց այնհետ մեր Տէր Յիսուս
Ք.րիստոսին . որ հաւատարիմ սեպեց զ՝ ա սպա-
սաւորութեանը դնելու . որ առաջուց հայհոյիչ 13
էի՝ ու հալածող ու վնաս տրվող . բայց ողոր-
մութիւն գտայ , ինչու որ անիկա չի գիտնալով
ու անհաւատութեան մէջ կընէի ։ Եւ մեր Տէ- 14
րոջը շնորհքը էվիլօք եղաւ ինծի հաւատքով ու
սիրով՝ որ Ք.րիստոս Յիսուսով է ։ Ա.ս խօսքը 15
ճշմարիտ է՝ ու բոլորովին ընդունելութեան ար-
ժանի . որ Ք.րիստոս Յիսուս աշխարհ եկաւ մե-
ղաւորները փրկելու . որոնց գլուխը ես եմ ։
Ա.այց անոր համար ողորմութիւն գտայ , որ 16
պիտի առաջ Յիսուս Ք.րիստոս իմ վրաս ցուցը-
նէ բոլոր համբերութիւնը՝ օրինակ ընելու ա-
նոնց որ պիտի հաւատային իրեն՝ յաւիտենական
կեանքին համար ։ Ա.այց ան յաւիտենական 17
Թագաւորին՝ չաւրվելու ու չի տեսնվելու , ան
մէկ Աստուծոյ փառք ու պատիւ յաւիտեանս
յաւիտենից . ամէն ։
Ա.ս պատուէրը կուտամ քեզի իմ որդեակս Տի- 18
մոթէոս , քու վրայովդ առաջուց եղած մարգա-
րէու թիւններուն պէս , որ դուն անոնցմով պա-

19 տերազգիս ան գովելի պատերազմը· հաւատք
ունենալիր մաքուր խղճմտանքով· որ մէկ քանին
ան հաւատքը իրենցմէ մէկդի ձգելով՝ նաւակո-
20 ծութիւն քաշեցին հաւատքին մէջը· որոնց համ-
բանքէն են Հիմենոսը ու Աղեքսանդրոսը· որոնք
ես Սատանային մատնեցի, որ սորվին հայհոյու-
թիւն չընել։

ԳԼ· Ե։

1 Ուստի կաղաչեմ ամէն բանէն առաջ՝ աղօթք
ընել, խնդրուած, աղաչանք, գոհութիւն
2 ամէն մարդոց համար, մանաւանդ թագաւորնե-
րուն և բոլոր իշխաններուն համար· որ խաղա-
ղութիւնով ու հանդարտութիւնով վարենք մեր
կեանքը՝ բոլորովին աստուածպաշտութիւնով ու
3 արդութիւնով։ Ինչու որ ան է աղէկը ու ըն-
դունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջևը· որ
4 կուզէ թէ ամէն մարդիկ փրկուին՝ ու ճշմար-
5 տութիւնը ճանչնալու գան։ Ինչու որ մէկ
Աստուած մը կայ, ու մէկ միջնորդ մը Աստու-
ծոյ ու մարդոց մէջը՝ Յիսուս Քրիստոս մարդը·
6 որ իր անձը ամէնուն տեղը ազատչէք տուաւ՝ իր
7 ատենին վկայութիւն ըլլալու։ Ուր ես անոր
քարոզիչ ու առաքեալ դրուեցայ· ճշմարիտ կը-
սեմ՝ Քրիստոսով՝ և սուտ չեմ խօսիր, Հեթա-
նոսներուն վարդապետ եղայ հաւատքով ու ճշմ-
8 արտութիւնով։ Կուզեմ որ երկիր մարդիկ ա-
մէն տեղ աղօթք ընեն, սուրբ ձեռքերնին վեր վեր-
ցունելով առանց բարկութիւնի ու երկմտութիւ-
9 նի։ Նմանկ ալ կընծիկները խոնարհութեան զար-
դով, ամեհաճութիւնով ու պարկեշտութիւ-
նով ինքզինքնին զարդարեն· չէ թէ ոսկիի ման-
ուածք՝ մարգարիտով շարուած հուսուածքներով՝
10 կամ զարդարուած հանդերձներով· հապա բարի
գործքերով՝ ինչպէս որ կըվայլէ Աստուածպաշ-
տութիւնը անձերնին անող կնիկներուն։

Կնիկ մարդը թող սորվի՝ խոնարհութիւնով՝ ա- 11
մենայն հեզաձեւութիւնով ։ Այլ կնիկ մար- 12
դու հրաման չեմ տար սորվեցունելու , ոչ ալ
էրիկ մարդէն աւելի խօսքի տէր ըլլալ , հապա
լուռ կենալ ։ Պատճառն որ՝ առաջ Ադամը 13
ստեղծվեցաւ , ու ետքը Եւան ։ Եւ Ադամը չի 14
խաբվեցաւ , հապա կինը խաբվեցաւ՝ ու մեղք
գործեց . միայն թէ պիտի ապրի անիկա որդե- 15
ծնութեամբ , թէ որ կենան հաւատքի ու սիրոյ ու
սրբբութեան մէջ պարկեշտութիւնով ։

ԳԼ . Գ ։

Ա՚ս խօսքը ճշմարիտ է , թէ որ մէկը եպիս- 1
կոպոսութեան կըցանկայ՝ աղէկ գործի կը
ցանկայ ։ Ա՚ռնի պէտք է եպիսկոպոսին անարատ 2
ըլլալ , մէկ կնկան մը էրիկ , հեզ , խոնարհ ,
պարկեշտ , օտար սիրող , սորվեցունող . ոչ 3
նախատող , ոչ գարնող , հապա հանդարտ . ոչ
կռուող , ոչ արծաթասէր . որ իր տանն ալ աղէկ 4
վերակացու եղած ըլլայ . որ զաւկիրներ ունեցած
ըլլայ՝ հնազանդութեան մէջ կեցած ամէն կերպ
պարկեշտութիւնով ։ (Հապա թէ որ մէկը իր 5
տանը վերակացու ըլլալը չի գիտնայ նէ ի՞նչպէս
Աստուծոյ եկեղեցին հոգաբարձու պիտի ըլլայ ։)
Նորահաւատ չըլլայ . որ չըլլայ թէ հպարտա- 6
նալով Սատանային դատապարտութեանը մէջ
իյնայ ։ Հապա պէտք է անոր դուրսէն եղած- 7
բէն ալ բարի վկայութիւն ունենայ , որ չըլլայ
թէ նախատինքի մէջ ու Սատանային որոգայթին
մէջը իյնայ ։

Ինանկ ալ սարկաւագները պէտք ըլլան պար- 8
կեշտ , ոչ երկու բերնէ , ոչ գինեսէր , ոչ ա-
գահութեամբ ստակ ժողվող . հապա հաւատ- 9
քին խորհուրդը ունենան մաքուր խղճմտան-
քով ։ Իրենք առաջ թող փորձվին , և 10
ետքը ան պաշտօնին մօտենան՝ որ անարատ

11 եղած են : Ինանկ ալ անոնց կնիկները՝ պարկեշտ , ոչ գեղխօսողներ · հեզաշոգի , ա-
12 մէն բանի մէջ հաւատարիմ : Սարկաւագները մէկ կնկան մը երիկ ըլլան · որ իրենց զաւկընե-
րուն ու իրենց տանը աղէկ վերակացու եղած
13 ըլլան : Քանզի Սարկաւագները որ աղէկ կը պաշտեն , բարի աստիճան մը ինքզինքնուն կըշահին , ու Քրիստոս Յիսուսի վրայով հաւատքին մէջն ալ շատ համարձակութիւն :
14 Ես կըգրեմ քեզի , որ կըյուսամ մօտերս
15 գալ · բայց թէ որ ուշանայրս ըլլամ՝ ալ գիտնաս որ ինչպէս պէտք է քեզի Աստուծոյ տա-
նը մէջ պտրտիլ · որ ան կենդանի Աստուծոյ և կեղեցին է , ճշմարտութեան սիւնը ու հաստա-
16 տութիւնը : Եւ յայտնապէս մեծ է աստուած-պաշտութեան խորհուրդը · որ Աստուած մար-մինով երեւցաւ , Հոգիով արդարացաւ , հրեշ-տակներուն յայտնըվեցաւ , Հեթանոսներուն քարոզվեցաւ , աշխարհի մէջ հաւատացվեցաւ , ու փառքով վեր ելաւ :

ԳԻ · Գ ·

1 Բայց Հոգին Սուրբ յայտնի կըսէ , որ ետքի ատեններուն մէկ քանիներնիր հաւատքէ պիտի
2 դնան , ու մոլորեցուցիչ հոգիներու պիտի
3 նային , և դեւերուն ուսմունքներուն , կեղ-ծաւորութիւնով սուտ խօսողներ , իրենց խղճ-մըտանքովը խանձըված , անոնք որ ամուսնանա-լէն պիտի արգիլին , ու ևս պիտի պահեն կերա-կուրներէն՝ որ Աստուած հաստատեր է որ հաւատացողները և անոնք որ ճշմարտութիւնը
4 կըճանչնան՝ վայելեն : Ինչու որ Աստուծոյ բոլոր ստեղծվածները բարի են՝ ու ևս ձգելու բան չի կայ · մանաւանդ թէ որ գոհանալով կրն-
5 դունին · ինչու որ Աստուծոյ խօսքովը ու ա-
6 ղօթքով կըսրբըվի : Եթէ որ խրատ տաս եղ-

բայրներուն՝ Վրիստոս Յիսուսի աղէկ պաշտօ-
նեայ մը կըլլաս. սրինեալ հաւատքին խօսքերովը
ան աղէկ վարդապետութիւնովը, որ անոր ետե-
ւէն եղար։ Մայց պիղծ խօսքերէն՝ ու պառաւա- 7
ներուն առասպելներէն ետ կեցիր. հապա քե
անձդ աստուածպաշտութեան վարժեցնէ. ինչու 8
որ մարմինին վարժութիւնը քիչ բանի օգտակար
է, բայց աստուածպաշտութիւնը ամէն բանի օգ-
տակար է, և կենաց խոստմունքը ունի՝ հիմակ-
ւանին ու գալիքին։ Այս խօսքը ճշմարիտ է՝ և 9
բոլորովին ընդունելու արժանի է։ Ինչու որ 10
բուն ասոր համար կաշխատինք՝ ու նախատինք
կառնենք. վասն զի կենդանի Աստուծոյ յուսա-
ցեր ենք, որ ամէն մարդոց Փրկիչն է, մա-
նաւանդ հաւատացեալներուն։ Այս բաները 11
պատուիրէ ու սորվեցնէ. որ մէկը քե մանկու- 12
թիւնդ չանարգէ. հապա դուն օրինակ եղիր
հաւատացեալներուն՝ խօսքով, վարմունքով,
սիրով, հաւատքով, մաքրութեամբ։ Մինչև 13
որ ես գամ՝ նէ՝ միտք դիր կարդալու, յորդոր-
ելու, սորվեցնելու։ Մի՛ անհոգ ըլլար քու 14
վրադ եղած շնորհքներուն վրայով, որ մար-
գարէութիւնով քեզի տրվեցաւ՝ երէցներէն որ
ձեռնադրըվեցար։ Այտոնց վրայ խորհէ՛ ու ա- 15
տոնց մէջը պարապէ՛, որ քու յառաջդիմու-
թիւնդ ամենուն յայտնի ըլլայ։ Զգոյշ կեցիր 16
քու անձիդ ու վարդապետութեանդ՝ ու ատոնց
մէջը միշտ կեցիր. նէ որ ատիկա ընես՝ քու անձդ
ալ կապրեցնաես. ու անոնք ալ որ քեզի մտիկ
կընեն։

Գ Լ. Ե.

Ծերը սաստիկ մի՛ յանդիմաներ, հապա 1
հօր պէս մխիթարէ՛ անիկա. երիտասարդ-
ները՝ եղբօր պէս. պառաւները՝ մօր պէս. դե- 2
ռահաս կիներնները՝ քրոջ պէս ամէն կերպ մաքրու-

3 թիւնով: Որբևաբրինները պատվէ՛ անոնք որ
4 ստոյգ որբևարի են նէ: Ապա թէ որ մէկ
որբևարի մը զաւկրներ ու թոռներ ունենայ,
թող առաջ սորվին իրենց տանը բարի ընել՝ ու
փոխարէնը հատուցանել իրենց ծնողացը. ինչու
որ անիկա է ազէկը՝ ու Աստուծոյ առջևը ընդու-
5 նելին: Աստի ան որ ստոյգ որբևարի է՝ ալ
առանձնացած՝ Աստուծոյ վրայ յոյս դրած է, և
գիշեր ցորեկ աղօթքի ու աղաչանքի հետ է.
6 բայց փափուկ որբևարին կենդանւոյն մեռած
7 է: Ա՛ս պատուիրէ՛ որ անարատ ըլլան:
8 Հայց թէ որ մէկը իրենիններուն՝ ու մանաւանդ իր
տընվորներուն հոգ չի տանիր նէ՝ անիկա հաւատ-
քէն ուրացած է, ու անհաւատներէն ալ գէշ է:
9 Ա՛ն որբևարին որբևարիներուն կարգը թող
տեսվի, որ վաթսուն տարվընէ պակաս չէ, մէկ
10 երկան մը կնիկ եղած. և բարի գործքերով
վկայված. որ զաւկրներ մեծցուցած ըլլայ, որ
հիւրերը ընդունած ըլլայ, որ սուրբերուն ոտքե-
րը լուացած ըլլայ, որ նեղեալներուն ձեռք տը-
ված ըլլայ, որ բոլոր բարի գործքերու հետևէ
11 գացած ըլլայ: Հայց մատաչ որբևարիներէն
ետ կեցիր. որ երբ Քրիստոսի դէմ անձկներին
կրպարարացունեն, ամուսնանալ կուզեն.
12 բայց դատապարտութիւն կրնդունին. ինչու որ
13 առջի հաւատքնին մէկ դի ձգեցին: Ասա ծոյլ
ինալ կըսորվին. տունէ տուն պըտրտողներ. և
չէ թէ միայն ծոյլ, հապա շատխօսներ, ու հե-
տաքրքիրներ. և ան բանը կըխօսին որ պէտքը
14 չէ: Կուզեմ որ ատ դեռատհաս կնիկները կա-
զմվին. զաւկրներ ծնանին, անաչէն ըլլան, ու
մէկ պատճառ մը չի տան հակառակորդին՝ հայ-
15 հոյութիւն խօսելու համար: Ինչու որ հի-
մակվընէ մէկ քանիները Սատանային կողմը գար-
16 ձան: Թէ որ մէկ հաւատացեալ մը որբևա-
րիներ ունենայ՝ թող օգնութիւն ընէ անոնց,

և եկեղեցիին բնա չըլլայ , որ ճշմարիտ որբևա-
րիներուն օգնութիւն ընէ ։

Ան երէցները որ աղէկ վերակացու կըլլան՝ 17
կրկին պատիւ արժանի թող ըլլան . մանաւանդ
անոնք՝ որ կաշխատին խօսքով ու վարդապետու-
թիւն ընելով ։ Քանզի որ գիրքը կըսէ . Կալին 18
մէջի եզին դունչը չի պիտի կապես . և բան-
ւորը իր վարձքին արժանի է ։ Երէցի 19
վրայ ամբաստանութիւն մի՛ ընդունիր , միայն
թէ երկու ու իրեք վկաներով ։ Յայդ անոնք որ 20
մեղք կըգործեն՝ ամենուն առջեւ չեմէ՛ , որ ու-
րիշներն ալ վախնան ։ Ա կայսրութիւն կըզնեմ 21
Աստուծոյ առջեւը՝ և Քրիստոսի՝ ու ընտ-
րեալ հրեշտակներուն , որ առ բաները պահես
առանց Ճխտի միաբեր հաճեցունելու , բան մը ա-
ռաջնաւորելով ։ Ձեռնադրութիւն 22
ձեռք չի դնես , ու ուրիշներուն մեղացը հաղորդ
չըլլաս . զքեզ քեզ մաքուր պահէ ։ Այսկէ ետև 23
լոկ ջուր չի խմես . հապա քիչ մըն ալ գինի
խառնէ՝ ստամոքսիդ ու յաճախ հիւանդու-
թիւններուդ համար ։ Կան մարդիկ՝ որ իրենց 24
մեղքը յայտնի է , ու առաջուց դատաստանի հա-
սած . և կան՝ որ իրենց ետևէն կերթան ։ Նոյնպէս 25
ալ անոնց բարի գործքերը յայտնի են . ու անոնք
որ ուրիշ կերպ բան մըն են՝ չեն կրնար պահ-
վիլ ։

ԳԼՈՒԽ Զ ։

Ան ամենքը որ ծառայութեան լուծի տակ են , 1
անձն մեկը իրենց տէրերը պատիւ արժանի
սեպեն . որ Աստուծոյ անունը ու վարդապե-
տութիւնը չի հայհոյվի ։ Եւ անոնք որ հաւա- 2
տացեալ տէրեր ունին՝ թող չանարգեն անոնք ,
եղբայրներ ըլլալնուն պատճառաւը . հապա էվե-
լօք ծառայութիւն ընեն . ինչու որ հաւատացեալ
են ու սիրուն . որոնք բարերարութիւն ունենան

անձերնուն · Այս բաները սորվեցուր ու յորդո-
3 րէ : Եայց թէ որ մէկը ուրիշ կերպ բան մը
սորվեցունէ , ու մտիկ չընէ անիկա մեր Տէր Յի-
սուս Քրիստոսին աղջամիտ խօսքերուն , և ան
վարդապետութեանը որ աստուածպաշտութեան
4 պէս է · անանկը հպարտացած է՝ ու բան մը չի
գիտեր , հապա վէճերու մէջ ու հակառակու-
թեան մէջ կըլսրբռքի · ուսկէց որ կըլլայ նա-
խանձութիւն , կռիւ , հայհոյութիւնները , դէշ
5 կարծիքներ · խարդախ բաներ մարդոց ապակա-
նեալ մըտքովը՝ ու ճշմարտութենէն հեռացողնե-
րուն , որոնք որ աստուածպաշտութիւնը շա-
հիլու վաճառ մը կըսեպեն · բայց դուն անանկ-
6 ներէն մէկ դի կեցիր : Սակայն աստուածպաշ-
տութիւնը բաւականութիւնով մէկ տեղ մեծ շա-
7 հիլու վաճառ մըն է : Ինչու որ բան մը չի բե-
րինք աշխարհ , ու բան մը չենք կրնար տանիլ :
8 Հապա ունինք կերակուր ու հանդերձ , և ա-
նով բաւականանանք : Եայց անոնք որ մեծ-
նալ կուզեն՝ փորձութեան մէջ կիյնան ու ո-
գւոյթի և շատ անխելք ու վնասակար ցան-
թութիւններու , որոնք որ սատակումի ու կորըստեան
10 մէջ կընկղմեն մարդիկ : Ինչու որ ամէն չարիք-
ներուն արմատը արծաթի սէրն է · որ սոսո
փափաքելով մէկ քանիներնիը՝ հաւատքէն մոլորե-
ցան , ու ինքզինքնին շատ ցաւերու մէջ ձգե-
ցին :
11 Եայց դուն ով մարդ Աստուծոյ փախիր ա-
նոնցմէ , ու գնա արդարութեան՝ աստուածպաշ-
տութեան՝ հաւատքի՝ սիրոյ՝ համբերութեան՝
12 հեզութեան ետևէն · Եւ պատերազմէ՝ հաւատ-
քին աղէկ պատերազմը · ու ձեռք զարկ յաւիտե-
նական կեանքին՝ որ անոր կանչըվեցար , և
դուանեցար ան աղէկ դաւանանքը շատ վկանե-
13 րու առջև : Կըպատուիրեմ քեզի Աստուծոյ
առջևը՝ որ կենդանի կընէ բոլորը , ու Յիսուս

Քրիստոսի առաքեալ՝ որ Պօղոսացի Պիղատոսին
առջեւը վկայեց ազեկ դաւանութիւնն մը · որ 14
դուն ան պատուիրանը անբիծ անարատ պահես ,
մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յայտնուիլը ·
որ անոնիկա իր ատենին պիտի ցուցընէ՝ Երանելին 15
ու մի միայն Կարողը՝ թագաւորներուն թագաւորը ու տէրերուն Տէրը · որ ինքը միայնակ ու- 16
նի անմահութիւն՝ չի մօտիկնալու լոյսի մէջ
բնակած · որ անոնիկա մարդիկներէն մէկը չի
տեսաւ , ու տեսնալու կարող չէ · որուն պատիւ
ու զօրութիւն յաւիտեանս · ամէն :

Ես աշխարհիս մէջ եղած հարուստներուն 17
պատուէր տուր՝ որ չի հպարտանան , և փուճ
մեծութեան վրայ յոյսերնին չի դնեն · հապա
Աստուծոյ վրայ՝ որ ամէն բանը մեզի առատօրէն
կուտայ վայելելու , բարիք գործեն , բարի գործ- 18
քերով հարուստանան , առատ , սիրուն , ո-ըչընչ
պահոնելնոնը հաղորդ ըլլան · բարի հիմ գան- 19
ձեն անձերնուն հանդերձեալին համար , որ
ճշմարիտ կեանքը ձեռք ձգեն :

Ով Տիմոթէոս , քեզի տրուած աւանդը պահէ 20
փախչելով պիղծ ու նորաձայն խօսքերէն , և
հակառակութիւնէ , և սուտ անուն ո-ունեցող գի- 21
տութենէ : Որ ան մէկ քանիները վրանին առ-
նելով՝ հաւատքէն մոլորեցան : Շ նորհ-
քը քու հետդ ·
Ամէն :

Առաքեալն Պօղոսէ՝ Տիմոթէոսին առաջին նո-
նը · որ Պահապանութեամբ Հայաստանեայ-
ց է :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼ. Ա։

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուածոյ կամքովը՝ կենաց խոստմունքին պէս, որ
2 Յիսուս Քրիստոսով է. Տիմոթէոս իմ սիրելի որդիիս շնորհք՝ ողորմութիւն և խաղաղութիւն Հօր Աստուծմէն, ու Յիսուս Քրիստոս մեր Տէրոջմէն։
3 Շնորհակալ եմ Աստուծոյ՝ որ անիկա կը պաշտեմ իմ նախնիքներէս մաքուր խղճմտանքով, որ անպակաս քեզ իմ աղօթքիս մէջ կը
4 յիշեմ գիշեր ու ցորեկ կրցանկամ քեզ տեսնալու՝ միտք բերելով քու արցունքներդ, որ
5 ուրախութիւնով լեցվիմ. Ա՝տածելով ան զուտ հաւատքը որ դուն ունիս, որ առաջ քու Լաւոդիա մամիկիդ վրայ բնակեցաւ՝ ու քու Եւնիկէ մօրդ. Համոզուն գիտեմ՝ որ ան քու
6 վրադ ալ կայ։ Ասոր համար քու միտքդ կը ձգեմ որ Աստուծոյ շնորհքը հրատրես, որ քու
7 վրայ է իմ ձեռնադրելէս։ Ինչու որ Աստ-

ուած մեզի վախնալու հոգի չի տրուաւ , հապա զօրութիւնի՛ ու սիրոյ՝ ու զգաստ ըլլալու ։ Ուստի ամէն մի՛ սեպեր մեր Տէրոջը վկայութիւնը , ոչ ալ իս անոր Հա՛մար կապուածս . հապա մասնակից եղիր աւետարանին չարչարանքներուն՝ Աստուծոյ զօրութեանը պէս . որ մեզ փրկեց , ու սուրբ կոչումի մը կանչեց՝ չէ թէ մեր գործքերուն նայելով , հապա իր կամքին ու շնորհքին նայելով . որ Յիսուսով Քրիստոս մեզի տրուեցաւ յաւիտենական դարերէն առաջ . Բայց հիմայ յայտնեցաւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսին երեւնալովը . որ մահը խափանեց , և լոյսն դէմը բերաւ կեանքը ու անմահութիւնը՝ աւետարանին ձեռքովը . որ ես անոր քարոզիչ ու առաքեալ դրուեցայ՝ ու հեթանոսներուն վարդապետ ։ Ինոր համար ասս չարչարանքներն ալ կրքաշէմ , բայց ամէն մը չեմ սեպեր . ինչու որ գիտեմ թէ որի՛ եմ հաւատացեր , և հաստատուած եմ՝ որ իմ ներդեն աւանդածս մինչեւ ան օրը ։ Ունեցած բունն կունայ պահել մինչեւ ան օրը ։ Ունեցած բունն՝ ան ողջամիտ խօսքերուն օրինակը՝ որ ինձմէ լսեցիր , հաւատքով ու սիրով որ Քրիստոս Յիսուսով է ։

Ուն աղէկ աւանդը պահէ՝ Հոգւոյն Սրբոյ ձեռքովը որ մեր մէջը բնակած է ։ Ուս գիտնաս՝ որ մեզմէ զատուեցան ան ամէնքը որ Ասիա էին , որոնց համրանքէն են Փիգեղոսը ու Հերմոգենէսը ։ Աստուած ողորմութիւն տայ Ընեսիփորին տանը , որ շատ անգամ իս հանգըստացուց , ու իմ կապերս ամէն չի սեպեց . հապա երբոր Հռոմ եկաւ , շատ ջանքով փընտռեց իս՝ ու գտաւ ։ Տէրը իրեն տայ՝ որ ան օրը Տէրոջմէն ողորմութիւն գտնայ . և Եփեսոսի մէջ ալ որչափ որ սպասաւորութիւն բրաւ նէ ինձի՝ աՆիկա դուն քեզի աղէկ դիտես ։

ԳԼ· Բ·

1 Բայց դուն իմ որդեակ՝ զօրացիր ան շնորհ-
2 քովը որ Քրիստոս Յիսուսով է։ Եւ ան
որ ինծմէ լսեցիր շատ վկաներով՝ անիկա հաւա-
տարիմ մարդոց տուր , որոնք կարող ըլլան ու-
3 րիշներն ալ սորվեցնելու ։ Նեղութիւննե-
րու կցորդ եղիր Քրիստոս Յիսուսի աղեկ զին-
4 ուորի մը պէս ։ Մէկ զինուորեալ մը՝ հոս
աշխարհիս կեանքին բաներովը չի պատաղիր , որ
5 զօրախաբին հաճոյ ըլլայ ։ Եւ թէ որ պատե-
րազմող մէկը ըլլայ՝ չի պսակվիր թէ որ ըստ օ-
6 րինաց չի պատերազմի ։ Ու աշխատող հողա-
գործին ալ պէտք է առաջ պտուղէն վայելել ։
7 Իմացիր ինչ կըսեմ եմակը ։ Տէրը քեզի
8 խնաստութիւն տայ ամէն բանի մէջ ։ Մ՚իտքդ
բեր Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարու-
թիւն առած՝ Դաւիթին ցեղէն իմ աւետարանիս
9 պէս ։ որուն մէջը չարագործի մը պէս կըչարչա-
րիկոր կապերով ։ բայց Աստուծոյ խօսքը չէ՛
10 թէ կապված է ։ Ընոր համար ամէն բանի կը
համբերեմ՝ ընտրեալներուն համար ։ որ անոնք
ալ փրկութեան հասնին , որ Քրիստոս Յիսու-
11 սով է երկնաւոր փառքով ։ Այս խօսքը ճշմա-
րիտ է ։ ինչու որ թէ որ անոր հետ մեռանք՝
12 անոր հետն ալ պիտի ապրինք ։ որ թէ համբե-
րենք՝ անոր հետն ալ պիտի թագաւորենք ։ ու
թէ որ ինքզինք ուրանանք՝ անիկա ալ մեզ կուրա-
13 նայ ։ և թէ որ չի հաւատանք՝ ինքը հաւատա-
րիմ կըմնայ , իր անձը չի կրնար ուրանալ ։
14 Այս բաները անոնց միտքը ձգէ՝ Աստուծոյ առջևը
միայնութեան պնդելով , անպէտ խօսքերու վրայ
վիճաբանութիւն չընել՝ լսողներուն կործանու-
15 մին համար ։ Ջանացիր քու անձդ ընծիր ցու-
ցընել Աստուծոյ առջևը , մէկ բանվոր մը ա-
ռանց ամչնալու , ճշմարտութեան խօսքը շի-

տակ համառօտակով ։ Ասյց պիղծ ու փուճ 16
խօսքերէն մէկ դի կեցէր · որ անոնք էվելօք ա-
ռաջ կրթման ամբարշտութիւններու մէջ · և 17
անոնց խօսքերը քաղցկեղի պէս կուգան · որոնց
կարգն են Հիմենոսը՝ ու Փիլետոսը · որոնք 18
ճշմարտութենէն մոլորեցան , ու կըսեն թէ Յա-
րութիւնները արդէն եղած է , և կը
կործանեն մէկ քանիներուն հաւատքը ։ Ասյց 19
Աստուծոյ հիմը հաստատուն կը կենայ՝ ու ասոր կնի-
քը ունի , որ Տէրը կրճանչնայ անոնք որ իրենն
են · և անիրաւութենէ մէկ դի ձող կենայ ան ա-
մէնը՝ որ Տէրոջը անունը կանուանէ ։ Ասյց մէկ 20
մեծ տան մը մէջ չէ թէ միայն ոսկիէ ու արծա-
թէ ամաններ կան , հապա փայտէ ու հողէ ալ
կան · ոմանք պատուական բանի համար են , ու
ոմանք՝ ցած բանի ։ Թէ որ մէկը իր անձը ա- 21
նանկներէն մաքրէ՝ անկա մէկ պատուական ա-
նօթ մը պիտի ըլլայ՝ սրբըրված ու իրեն Տէրոջը
պիտանի՝ ամէն բարի գործքերու համար պատ-
րաստված ։ Իսկ երիտասարդական ցանկու- 22
թիւններէն փախիր , ու գնա արդարութեան՝
հաւատքի՝ սիրոյ՝ խաղաղութեան՝ սրբութեան
հետևէն , անոնց հետ որ Տէրոջը անունը կրկան-
չեն մաքուր սրտով ։ Ասյց յիմար ու անիմաստ 23
վիճաբանէն մէկ դի քաշվէ · գիտցիր որ անկից
կռիւներ կըծնանին ։ Ասյց Տէրոջը ծառային 24
պէտք չէ կռիւ բնել , հապա հեզահոգի ըլլալ
ամէնուն , սորվեցնող , ոլ չի պահող · չան- 25
դարտութեամբ խրատել հակառակ կեցողները ·
որ ըլլայ թէ Աստուած ապաշխարութիւն տայ
անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու · և Սատա- 26
նային որոգայթներէն ղչտասնան , որ իրմէն
բռնըված են իր կամքին ծառայելու ։

ԳԼ· Գ·

1 Ընս գիտցիր՝ որ ետքի օրերը չար ժամանակներ
2 պիտի գան· ինչու որ մարդիկ պիտի ըլլան
անձնասէր, արծաթասէր, հպարտ, ամբար-
տաւան, հայհոյիչ, ծնողաց անհնազան, ա-
3 պերախտ, անսուրբ, ամարդիներ, անգութ-
ներ, բանսարկուներ, անհամբերներ, բարձրա-
4 միտներ, բաբին չի սիրողներ, մատնիչներ,
յանդուգներ, գոռոզներ, էվելոք ցանկութիւն
5 սիրողներ՝ քան թէ Աստուած սիրողներ· օրոնք
աստուածպաշտութեան կերպարանքը պիտի ու-
նենան, ու անոր զօրութենէն ուրացած են·
6 և գուն անոնցմէ մէկ դի կեցիր: Ինչու որ ա-
նոնցմէն են որ տունէ տուն կրմտնան, ու գերի
կընեն մեդրով բեռցած կնիկները՝ զանազան
7 ցանկութիւններով վարված· որ ամէն իմիր
կըսորվին, ու բնաւ ճշմարտութիւնը ճանչնա-
8 լու չեն կրնար: Հապա ինչպես Յանէսը ու
Յամբէսը Մովսէսի հակառակ կեցան, անանկ
ալ ասոնք ճշմարտութեան հակառակ կըկե-
նան· ապականած միտքով մարդիկներ, հաւատ-
9 քի մէջ անպիտաններ: Բայց բնաւ աղէկ մը
չի պիտի կրնան յառաջանալ· ինչու որ ասոնց
անմտութիւնը ամենուն յայտնի պիտի ըլլայ,
10 ինչպէս որ անոնցը եղաւ: Դուն թէ իմ
վարդապետութեանս եւ կեր, առաջնոր-
դութեանս, յօժարութեանս, հաւատքիս,
երկայնմտութեանս, սիրոյս, համբերութեանս·
11 հալածանքներուս, չարչարանքներուս, ինչ-
պէս որ ինծի եղան Անտիոքի եւ Իկոնիոնի
ու Լիւստրայի մէջ, ինտոր հալածանքներու
համբերեցի, ու ամէնէն իս խլացաց Տէրը:
12 Եւ ամէնքն ալ որ կուզեն աստուածպաշ-
տութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով՝
13 հալածանքի մէջ պիտի կենան: Բայց չար

ու կախարդ մարդիկները չարութեան մէջ
պիտի յառաջանան. մոլորեալներ են, ու
կը մոլորցունեն։ Բայց դուն հաստատուն 14
կեցիր ան բաներուն մէջը որ սորվեցար՝ ու
հաւատացիր. գիտես ուսկից սորվեցար. ին- 15
չու որ դուն մանկութենէդ սուրբ գիրքերը
գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ
փրկութեան՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած
հաւատքովը։ Ամէն գիրքերը Աստու- 16
ծոյ շունչն են, և շահաւոր սորվեցունե-
լու համար, յանդիմանելու համար, շըտ-
կելու համար, ու արդարութեան խրատելու
համար. որ Աստուծոյ մարդը կատարեալ 17
ըլլայ՝ ամէն բարի գործքերու մէջ հա-
մաստատ։

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ն Դ։

Աս վկայութիւնը կը դնեմ Աստուծոյ առջեւը՝ 1
և Յիսուս Քրիստոսի, որ պիտի դատէ կեն-
դանիները ու մեռելները իր յայտնութիւնովն ու
թագաւորութեանը տակը. դուն ալ խօսքը 2
քարոզեա. վրայ հասիր առանձին ու առանձ
դուրս, յանդիմանէ, ընդիմանէ, մխիթարէ՝ ամէն
կերպ համբերութիւնով ու վարդապետութիւ-
նով։ Ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ ող- 3
ջամիտ վարդապետութեանը մտիկ չի պիտի դնեն.
հապա ամէն մէկուն ցանկութիւններուն պէս ի-
րենց վարդապետներ պիտի դիզեն՝ իրենց ականջ-
ներուն եղքին յարմար. և ան ճշմարտութենէն 4
ականջներնին պիտի դարձունեն, ու սուտ մուտ
խօսքերու մէջ պիտի իյնան։ Բայց դուն ա- 5
մէն բանի մէջ արթուն կեցիր, չանք ըրէ,
աւետարանիչի գործ գործէ. քու պաշ-
տօնդ կատարեալ բրնէ։ Ինչու որ ես ասկէց 6
ետև պահ ըլլալու նըւիրված եմ, ու իմ
դառնալուս առնելը հասեր է։ Ըն ազէկ 7

պատերազմէր պատերազմեցաւ · վասնզի ըս-
8 ըրի · հաւատքը պահեցի : Ասկէ ետև կայ
կըմընայ ինծի արդարութեան պսակը , որ Տէ-
ր ը ան արդար Դատաւորը պիտի հատուցա-
նէ ինծի ան օրը · ու՝ չէ թէ միայն ինծի , հա-
պա ան ամէնուն ալ՝ որ անոր յայտնութիւնը
սիրեցին :
9 Աշտարա շուտով ինծի գալու · ինչու որ Դե-
մասը իս թողուց՝ ու աշխարհը սիրեց , և գնաց
10 Թեսաղոնիկէ · Կրեսկէսը Գաղատիա , Տի-
11 տոսը՝ Դաղմատիա · միայն Ղուկասը իմ հետս
է · Մարկոսը առնես քու հետդ՝ բերես · ինչու որ
12 ինծի պէտք է անիկա սպասաւորելու համար : Տիւ-
13 քիկոսը Եփեսոս խրկեցի : Ա՛երարկուն Տրո-
ադա թողուցի Կարպոսին քովը · երբոր գաս
նէ բերես՝ գիրքերն ալ , մանաւանդ մատեան-
14 ները : Դարբին Աղեքսանդրոսը շատ նեղու-
թիւն տուաւ ինծի · Տէրը անոր հատուցանէ իր
15 գործքերուն պոտառիէնը : Ընկէց դուն ալ ին-
քըզնիդ պահես · ինչու որ մեր խօսքերուն
16 շատ դէմ կեցաւ : Առջի տեսանին մէջը
մէկը ինծի կռնակ չեղաւ · հապա ամէնն
ալ իս թողուցին · Ներեսնէ Աստուծմէ որ
17 ան իրենց չի սեպվի : Հայց Տէրը ինծի
օգնեց՝ ու իս զօրացուց , որ ինծմով քա-
րոզութիւնը հաստատվի , ու բոլոր Հեթա-
նոսները լսեն · և ես ան առիւծին բեր-
18 նէն խալսեցայ : Տէրը իս խալսէ ամէն
չար գործքերէն , ու իս ազատէ իր Թագա-
ւորութեանը մէջ՝ որ երկինքն է · իրեն փառք
յաւիտեանս յաւիտենից · ամէն :
19 Դարև տուր Պրիսկային և Ակիւղասին ու
20 Ընեսիփորոսին տանը : Երաստոս Կորնթո-
րոս մնաց · Տրիփիմոսը Միլիտոս թողուցի
21 հիւանդցած : Ձմերան առաջ գալ ·
Եւբուղոսը ու Պու-

գեսը և Պ լինոսը ու Կղաւդիան՝ և բո-
22 լոր եղբայրներըը ։ Տէր Յիսուս Ս.բիս-
տոսը քու հոգիիդ հետը։ Շնորհ-
քը քեզի հետ։
Ամէն ։

Երկրորդ նամակը Տիմոթէոսին՝ որ Եփեսացոց եպի-
սկոպոսին առաջ իւրհաստատուած եպիսկոպոսն էր,
Հռոմայեն գրկելուց՝ երբոր Պօղոս երկրորդ
անգամ ոտքեռնը եղաւ Հռոմայ
Ներոն կայսրին
առջեւը ։

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼ. Ա։

1 Պօղոս Աստուծոյ ծառայ՝ և Յիսուս Քրիստոսի առաքեալ, Աստուծոյ ընտրեալներուն
2 հաւատքին պէս՝ ու ճշմարտութեան գիտութիւ-
նովը որ աստուածպաշտութեան հետն է. յաւի-
տենական կեանքին յուսովը, որ ինքը անսուտ
Աստուածը խոսք տրաւ յաւիտենական դարե-
3 րէն առաջ. բայց իր ժամանակներուվը իր
խօսքը յայտնեց քարոզութիւնով, որ ինծի
հաւատացուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամա-
4 նովը. Տիտոսի՝ որդիիս հասարակաց
հաւատքովը՝ շնորհք և խաղաղութիւն Հօր Աս-
տուծմէն ու Քրիստոս Յիսուս մեր Փրկի-
չէն։
5 Ասոր համար քեզ Կրետէ թողուցի, որ ինչ-
պակաս բան կայ՝ նէ՝ շիտակես, ու ամէն մէկ քա-
ղաքներուն համար երէցներ կարգես. ինչպէս
6 որ ես քեզի պատուիրեցի. թէ որ մէկը անարատ
ըլլայ՝ մէկ կնկան մը էրիկ, հաւատացեալ զաւ-

կրներ ունենայ , որ անառակութեան հետք ամ-
բաստանված չեն կամ անշնազանդ : Ինչու 7
որ եպիսկոպոսին պէտք է անարատ ըլլալ՝ Աս-
տուծոյ տնտեսին պէս . ոչ յանդուգն , ոչ բար-
կացող , ոչ նախատող , ոչ զարնող , ոչ ագա-
հութեամբ ստակ ժողվող . հապա օտար սիրող , 8
բարին սիրող , խոնարհ , արդար , սուրբ ,
ժուժկալ . վերակացու ըլլալ վարդապետու- 9
թեան հաւատարիմ խօսքին . որ կարող ըլլայ
ողջամիտ վարդապետութիւնով յորդորել , և
հակառակ կեցողները յանդիմանել : Որով- 10
հետև շատ են անշնազանդները , պարապ խօ-
սողները , ու միտք խաբողները . մանաւանդ
որ ան թլփատութենէն են . որոնք պէտք է պա- 11
պանեցնել . որ ամրողջ տուները կը կործա-
նեն՝ ու կրսորվեցուցեն ան բանները որ պէտք չէ ,
ագահութեամբ ստակ ժողվելու համար : Ա- 12
նոնցմէ մէկը զուցեց՝ իրենց բուն մարգարէն ,
Կրետացիները միշտ սուտ ըսող են , չար գազաններ ,
դատարկ պորտեր : Եւ ասկէ իմաստութիւնը շի- 13
տակ է . անոր համար սաստիկ կշտամբէ անոնք ,
որ առողջանան հաւատքին մէջը . ու չի նային 14
Հրէական առասպելներուն , և ճշմարտու-
թենէ դարս եղած մարդոց պատուէրներուն :
Ամէն բան մաքուր է մաքրներուն , բայց 15
պիղծերուն ու անհաւատներուն մէկ բան մը
մաքուր չէ . հապա անոնց միտքն ալ ու խղճ-
մտութիւնն ալ պղծված են : Կրխոստանան 16
որ Աստուած կը ճանչնան , և իրենց գործքե-
րով կուրանան . պիղծեր ու անհնազանդներ ,
և անպիտաններ բոլոր բարի գործքերու
մէջ :

ԳԼ· Բ·

1 Բայց խօսէ դուն՝ ինչ որ կը վայլէ ողջամիտ
2 վարդապետութեանը . ծերերուն զգաստ լի-
լալ , պարկեշտ , խոնարհ , ողջամիտ հաւատ-
քով , սիրով , համբերութեամբ , ժուժկա-
3 լութիւնով : Կնանկ ալ պատուներուն զգաս-
տութեան մէջ ըլլալ նկատմամբ որ սրբութեան
կը վայլէ , ոչ բանսարկուներ , ոչ գինիի ինկած-
4 ներ . հապա բարի խրատ տուողներ : Որ խրա-
տեն մատաղ կիներին՝ երիկնին սիրոյ , զա-
5 ւակներն սիրող ըլլալ , խոնարհ , սուրբ , տնա-
շէն , բարեգործ , իրենց երիկիներուն հնազանդ .
որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը ու վարդապե-
6 տութիւնը հայհոյուի : Նմանկ ալ երիտա-
7 սարդներուն աղաչէ խոնարհ ըլլալ . Ամենուն
բարի գործքերու օրինակ ընելով անձդ , վար-
դապետութեամբ անեղծութիւն ունենալ ,
8 մեծութիւն , պարկեշտութիւն , ողջամիտ խօսք՝
մեղադրելի չըլլալու . որ հակառակ կեցողը ա-
մչնայ , ու մեր վրայով գէշ բան մը չունենայ
9 ըսելու : Ծառաներուն տէրերնուց իրենց տէ-
րերուն հնազանդ ըլլալ , և ամէն բանի մէջ
10 հաճելի . ոչ հակառակողներ , ոչ խորոզներ .
հապա ապէկութիւնով բոլորովին հաւատար-
մութիւն ցուցընեն , որ մեր Փրկիչ Աստուծոյ
վարդապետութիւնը ամէն բանի մէջ զարդա-
11 րեն : Ինչու որ Աստուծոյ շնորհքը՝ որ փրկող
12 է , բոլոր մարդոց երեւցաւ . որ մեզ կրթատէ
որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցան-
կութիւնները ուրանանք . զգաստութիւնով և
արդարութիւնով ու աստուածպաշտութիւնով
13 ապրինք աշխարհիս մէջ . և սպասենք ան երջա-
նիկ յոյսին , և Մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ
Յիսուս Քրիստոսի փառքին յայտնութիւնը .
14 որ ինքզինքը մեզի համար տուաւ , որ մեզ բո-

յոր անօրէնութիւններէն ազատէ , ու մաքրէ ի-
րեն յատուկ ժողովուրդ՝ ընէ՝ բարի գործքերու
նախանձաւոր ։ Այս բաները խօսէ և յորդորէ 15
ու յանդիմանէ բոլորովին սաստկութիւ , որ ոչ ոք
մէկը քեզ անարգէ ։

Գլ. Գ։

Ու անոնց միտքը դիր՝ իշխանութիւններուն 1
և կառավարութիւններուն հնազանդ ըլլալ ,
ու հպատակ մնալ , ու ամէն բարի գործքե-
րու պատրաստ գտնըվիլ · մէկուն դէմ չար 2
չի խօսիլ , կռիւ ընող չըլլալ · հեզ ,
ամէն կերպ խոնարհութիւնը բոլոր մարդոց
ցուցընել ։ Ինչու որ մենք ալ մէկ ատեն 3
մը անմիտներ էինք , անհնազանդներ , մոլորեալ-
ներ , զանազան ցանկութիւններու ու անա-
ռակութիւններու կրծառայէինք · չարութիւ-
նով ու նախանձութիւնով կըվարվէինք , ա-
տելի էինք , և մէկզմէկ կատէինք ։ Բայց ե- 4
րբ որ մեր Փրկիչ Աստուծոյն քաղցրութիւնը
ու մարդասիրութիւնը յայտնի եղաւ , չէ 5
թէ արդարութեան գործքերէն որ մենք ըրինք ,
հապա իր ողորմութիւնովը մեզ փրկեց նո-
րութեան ծնանելու աւազանին ձեռքովը՝ ու սուրբ
Հոգիին նորոգելովը · որ մեր վրայ լեցուց 6
առատապէս Յիսուս Քրիստոս մեր Փրկիչին
ձեռքովը · որ շնորհքով արդարացած՝ յա- 7
ւիտենական կենդրին յուսովը ժառանգ ըլլանք ։
Այս խօսքը ճշմարիտ է · և ասոր մէջը կու- 8
զեմ որ դուն հաստատուն ըլլաս , որ Աստու-
ծոյ հաւատացողները ջանք ընեն բարի գործ-
քեր ընելու վրայ ըլլալ · որ ան է բարին ու
օգտակարը մարդոց ։ Բայց դուն ան յիմարա- 9
կան վէճերը ու ճիւղաճամարութիւնները ու
հակառակութիւնները՝ և օրէնքի վրայ կռիւ-
ները մէկ դի ձգէ · ինչու որ անօգուտ են ու

10 անտի : Հերձուածող մարդէն մէկ երկու ան-
11 գամ խրատելէն ետև ետ քաշվէ՛. գիտցիր որ
անանկը ծռած է, և մեղք կըգործէ ինքզինքը
դատապարտելով :
12 Ա՛ր երբոր Արտեման կամ Տիւքիկոսը քեզի
խրկելու ըլլամ՝, արագ ինձի գալու Նիկոպո-
լիս. ինչու որ միտքս դրի ձմեռը հոն ընելու :
13 Եւ Զինան օրինական դպիրը ու Ապողոսը շու-
տով ճամբայ դիր, որ անոնց բան մը չի պակսի :
14 Եւ մերիններն ալ թող սորվին բարի գործքեր
ընելու վրայ ըլլալ հարկաւոր պէտք եղածին
15 համար, որ անպտուղ չըլլան : Քարև կ՚ընեն
քեզի ամէնքն ալ որ իմ հետս են. բարև
տուր մեր սիրելիներուն հաւատքով.
շնորհքը ձեր ամէնուն հետը.
Ա՛մէն :

Արքեպատոյ Եւկեղեցիին առջի յետադրեալ եղե-
կոդոսը Տիտոսին Գրէկոյ՝ Ա՛ւետռնիկոյ
Նկիոպոլեանին :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԻՆ

ԹՈՒՂԹՐ ԱՌ ՓԻԼԻՄՈՆ։

ԳԼ. Ա։

Պօղոս Յիսուս Քրիստոսի կապեալը՝ և Տիմո- 1
թէոս եղբայրը, փիլիմոն սիրելիին ու մեր
գործակիցին, և Ափիա Ֆէք քրոջը, ու Ըրքիպ- 2
պոս մեր ընկեր զինուորին, ու քու տանդ եկեղե-
ցիին։ Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աս- 3
տուծմէ մեր Հօրմէն և Տէր Յիսուս Քրիստո-
սէն։

Կը գոհանամ ամէն իմ Աստուծմէս, քե- 4
զի համար միշտելով աղօթքիս մէջը. երբոր կը 5
լսեմ քու հաւատքդ ու սէրդ՝ որ Տէր Յիսուսին
վրայ ունիս՝ և բոլոր սուրբերուն վրայ. որ 6
քու հաւատքիդ հաղորդակցութիւնը պտղաբեր
ըլլայ բոլոր բարիներուն ճանաչմունքովը, որ
ձեր վրայ է Քրիստոս Յիսուսով։ Շատ ու- 7
րախութիւն ունեցայ, և մխիթարութիւն քու
սիրոյդ վրայ, որ սուրբերուն սիրտը քեզմով
հանգըստացած են եղբայր։

Ասոր համար շատ համարձակութիւն ունիմ 8

ես Պրիսկոսով հրամայն ընելու քեզի վայե-
9 ծը. սիրոյ համար՝ մանաւանդ թէ կաղաչեմ,
անանկ ըլլալ ինծոր որ ես Պօղոս ծերացած, ու
10 հիմայ ալ կապված Յիսուս Քրիստոսի: Կա-
ղաչեմ քեզի իմ որդիիս Ընեսիմոսին համար՝ որ
11 ես իմ կապանքիս միջը ծնայ. որ ան մէկ ա-
տեն մը անպիտան էր քեզի. բայց հիմայ քե-
12 զի ալ ինծի ալ պիտանի է. անիկա քեզի
ղրկեցի. ալ ընդունէ ասիկա՝ որ է իմ ա-
13 ղիքներս: Ընիկա կուզէի ես իմ քովս պահել.
որ քու տեղդ ինծի սպասաւորութիւն ընէ
14 աւետարանին կապանքներուն միջը: Բայց
առանց քու կամքիդ չուզեցի բան մը ընել,
որ քու բարիքդ ի հարկէ եղած չըլլայ, հա-
15 պա կամաւոր: Եւ կարելի է, որ անոր հա-
մար անիկա քիչ մը ատեն պատվեցաւ, որ հն-
16 քը յաւիտեան ունենաս. չէ որ ալ ծառայի
մը պէս, հապա ծառայէն վեր՝ սիրելի եղբօր
պէս. թէ որ ինծի ասանկ, ուրեքան աւելի
քեզի՝ թէ մարմինի կողմանէ ու թէ Տէրոջը:
17 Թէ որ իս քու հետդ մէկ կրսեպես նէ, ընդու-
18 նէ՛ անիկա՝ որպես թէ իս: Եւ թէ որ յան-
ցանք մը բրած է կամ բան մը պարտք ունի
19 նէ, ան իմ վրաս սեպէ՛: Ես Պօղոս իմ
ձեռքովս ա գրեցի. ես կըվճարեմ, ան չեմ
ըսեր քեզի՝ որ դուն ալ քու անձդ ինծի
20 պարտական ես: Այո՛ եղբայր՝ ես քու տեղդ
պիտի ըլլամ Տէրով. հանգչեցուր ատ իմ
21 աղիքներս Քրիստոսով: Քու հնազանդ ըլ-
լալուդ վրայ ապաշով եղած՝ քեզի գրեցի.
որ գիտեմ թէ ըսածէս ալ կվկիլ կընես:
22 Ասկէ՛ ի զատ ինծի բնակարան մըն ալ
պատրաստէ՛. ինչու որ կըյուսամ թէ ձեր ա-
23 ղօթքով ձեզի պիտի տրվիմ: Խարև կու-
տայ ձեզի Եպափրասը՝ իմ գերութեանս ըն-
24 կերը Քրիստոս Յիսուսով. և Մարկո-

սր , ու Բրխատաքքոսը՝ և Վամաքը՝ ու
25 Ղուկասը իմ գործքի ընկերներս։ Ա՛ն
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը՝
ձեր հոգիին հետը.
Ամէն։

Փիլիմոնին — Առաքեալն Յիսուսէ Քրիստոսէ
— Կողոսացոց եկեղեցին Քրիստոս —
Տ—ոքին՝ Հ—ոյնէն գրվեցա—
Ինէսիմոս Ծ—ոյնը
Յետոյը։

ՊՕՂՈՍ

ԵՒՍԿԵՆԵԼԻՆ

ԹՒՒՂԹԸ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ։

ԳԼ. Ե։

1 Ետ կերպերով ու շատ օրինակներով ա-
ռաջուց Յատած խօսեցաւ մեր Հայրերուն
2 հետ մարգարէներով . ասկէ հոգի օրերուս իր
Որդովը մեր հետը խօսեցաւ , որ անիկա ամէն
բանի ժառանգ դրաւ . որ անով աշխարհքն ալ
3 բրաւ . որ ինքը անոր փառքին լոյսն է , ու անոր
էութեանը բուն պատկերը . որ ամէն բան իր
զօրութեան խօսքովը կը բանէ . ինքը մեր մեղքե-
րը սրբելով՝ վերը Յաւիտեան մեծութեան աջ
4 կողմը նստաւ : Յայնքան աւելի եղաւ հրեշ-
տակներէն , որքան որ անոնցմէ ալ աղեկ անուն
5 ժառանգեց : Քանզի որ հրեշտակներէն որի՞ն
եղաւ որ ըսաւ , Դուն իմ Որդիս ես , ես քեզ
այսօր ծնայ . և դարձեալ թէ՝ Ես անոր Հայր
պիտի ըլլամ , ու ան ինծի որդի պիտի ըլլայ :
6 Եւ դարձեալ՝ երբոր ան առջինեակը աշխարհ
խօսիէ , կըսէ . Յաւիտեան բոլոր հրեշտակները
7 երկրպագութիւն թող ընեն անոր : Նայց

հրեշտակներուն վրայով կըսէ. Որ ինքը իր հրեշտակները հոգիներ ըրաւ, ու իր պաշտօնեաները կրակի բոց։ Ասկայն Որդիին կըսէ, 8
Քու աթոռդ ով Աստուած յաւիտեան յաւիտենից է. քու թագաւորութեան գաւազանդ արդարութեան գաւազան է։ Դուն սիրեցիր 9
զարդարութիւնը ու ատեցիր անօրէնութիւնը, անոր համար ով Աստուած քու Աստուածդ ուրախութեան եղով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի։ Եւ դուն ով Տէր սկիզբէն երկիրը 10
հաստատեցիր, ու երկինքը քու ձեռքիդ գործն է։ Անոնք կկորսուին և դուն կաս ու կը 11
մնաս. ամէնը հաներու պէս պիտի մաշին, ու 12
վերարկուի պէս. Հանդերձի մը պէս պիտի պըղտնա անոնք և պիտի պըլլըմին. բայց դուն նոյն ես, ու քու տարիներդ չեն պիտի պակսին։ Հրեշտակներուն որի՞ն եղաւ որ 13
ըսաւ, Իմ աջ կողմն նըստէ՛, մինչև որ քու թշնամիներդ քու ոտքիդ կոթնակը դնեմ։ Չէ՞ որ անոնք ամէնը սպասաւորող հոգիներ 13
են, որ կրկսրկըվին սպասաւորութեան անոնց համար՝ որոնք որ փրկութիւն պիտի ժառանգեն։

Գ.

Անոր համար պէտք է մեզի էվելըք ականջ 1
դնել ան բաներուն, որ չըլլայ թէ
բնաւ պակսինք։ Վասն զի եթէ որ ան խօսքը՝ 2
որ հրեշտակներուն ձեռքովը զուրցըվեցաւ, հաստատուն եղաւ, և ամէն յանցաւորութիւն ու անհնազանդութիւն պատիժ պատուհաս առաւ. Մենք ինչո՞ւ պիտի խոյըսինք՝ թէ որ ան 3
հոգ ըլլանք անանկ փրկութենէն, որ խօսելուն սկիզբը Տէրոջմէն առաւ, ու լսողներուն ձեռքովը մեր վրայ հաստատվեցաւ. Աստուած ալ 4
վկայեց նշաններով ու հրաչքներով՝ և զանազան

զօրութիւններով՝ ու Աւրբ Հոգիին պարգևներովը՝ ինտոր որ ինքը կամեցաւ :

5 Ինչու որ չէ թէ հրեշտակներուն հնազանդեցուց ան գալու աշխարհը , որուն համար որ
6 մենք կը խօսինքգոր · Այլ մէկ տեղ մը վկայեց՝ ու ըսաւ · Այ արդը ի՞նչ է որ դուն կը յիշես անիկա , կամ մարդու որդին՝ որ անոս կեր-
7 թաս անոր : Այ նուն ինչ քիչ մը վար քրիս անիկա հրեշտակներէն · փառքով և պատիւով պսակեցիր անիկա , ու քու ձեռքիդ գործքերուն
8 վրայ դրիր անիկա : Ամէն բան անոր ոտքին տակը հնազանդ քրիր · ուստի ամէնը որ հնազանդեցուց՝ մէկ բան մը անհնազանդ չի ձգեց անկէց · բայց հիմայ դեռ չենք տեսներկոր ա-
9 մէնը անոր հնազանդած : Հապա Յիսուս փառքով ու պատիւով պսակված կրտեսնանք՝ որ հրեշտակներէն քիչ մը վար եղած էր՝ մահուան չարչարանքին համար , որ Աստուծոյ շնորհ-
10 քովը ամէնուն համար մահը ճաշակէ : Արդարև հետև անոր կրվայէր , որուն համար ամէնը՝ և անով ամէն բաներըը են , շատ որդիներ փառքին մէջ մտցունելու , անոնց փրկութեան Հեղինորդն ալ չարչարանքով կատարել :
11 Վ այն գլ ան որ կըսրբէ՝ ու ան որ կըսրբըվի , ամէնքն ալ մէկ մրն են · անոր համար ինքը ամօթ չի սեպեր եղբայր կանչել անոնք՝ ու
12 ըսել · Պատ անուն իմ եղբայրներուս պիտի զգուցեմ , և եկեղեցիին մէջը քիզ պիտի օրհ-
13 նեմ : Եւ դարձեալ թէ Ես անոր պիտի յոսամ · ու դարձեալ Ահա ես ու իմ զաւակներ-
14 րըս , որ Աստուած ինծի տուաւ : Ուստի որովհետև զաւակները արիւնեն ու մարմինեն հաղորդ եղան , ինքն ալ միեաւորութիւնովը անոնց հետ կրցնկացաւ · որ իր մահովը փճացունէ անիկա՝ որ մահուան իշխանութիւնը ունէր ,
15 այսինքն Ս Սատանան · և խալսէ անոնք որ մահ-

ուան վախումը միշտ ծառայութեան մէջ ինկած
էին : Այանդի բնաւ հրեշտակներուն ձեռք չի 16
բռներ , հապա Աբրահամի զաւկին ձեռք կը
բռնէ : Ինոր համար ալ պէտք էր անոր բոլո- 17
րովին եղբայրներուն նման ըլլալ , որ ինքը ո-
ղորմած ըլլայ՝ ու հաւատարիմ քահանայապետ
Աստուծոյ կողմէն , ժողովուրդին մեղքե՛ր
քաւելու համար : Ինչու որ ինք բանով ինքը 18
չարչարվեցաւ նէ՝ փորձ առնելով՝ կրնայ փո-
ձանաւորներուն ալ օգնական ըլլալ :

Կ Ե Փ . Գ :

Ասոր սո՛ւրբ եղբայրնե՛ր՝ երկնային կոչումին 1
մասնակիցներ , նայեցէ՛ք մեր դաւանութեան
Առաքեալին ու Քահանայապետին՝ Յիսուս
Քրիստոսին , որ հաւատարիմ է անոր որ զինքը
դրաւ , ինչպես որ Մովսէս ալ անոր բոլոր տան
մէջ : Ինչու որ ինքը Մովսէսէն ալ էվելի 3
փառքի արժանի եղաւ , որչափ որ աւելի պատիւ
կունենայ տանը շինողը՝ քան թէ տունը :
Որովհետև ամէն տուն որ կըշինվի՝ մէկէ 4
մը կըշինվի , բայց ան որ ամէն բաներըը
շինեց՝ Աստուած է : Մովսէս անոր բո- 5
լոր տանը մէջ հաւատարիմ է մէկ ծառայի մը
պէս՝ դէպքերվելու խօսքերուն վկայ ըլլալու հա-
մար . բայց Քրիստոս որդիի մը պէս իր տանը 6
վրայ . որ անոր տունը մունք ենք . միայն
թէ ան համարձակութիւնը և յոյսին պարծանքը
մինչև վերջը հաստատ բռնենք :

Ինոր համար ասանկ կըսէ Հոգին Սուրբ . Ա- 7
սօր թէ որ անոր ձայնին կըլսէք , ձեր սիրտերը 8
մի՛ ամրացունէք՝ ան սրդոզելու տեղին պէս
անապատին մէջ փորձութեան օրը . ուր որ ձեր 9
Հայրերը իս փորձեցին . քննեցին իս՝ թէպէտև
քառասուն տարի իմ գործերս տեսան . անոր 10
համար զըվխեցայ ան ազգէն , ու ըսի , Միշտ մոլո-

բած են սիրատովնին· և իմ ճամբանեւս չի ճան-
11 ցան անոնք· անանկ որ երդում ըրի իմ բարկու-
թեանս առնեն՝ որ Իմ Հանգիստս չի պիտի
12 մտնան: Տղեկներ եղբայրներ, չըլլայ որ ձեզ-
մէ մէկուն ներսի դին անհաւատութեան չար
սիրտ ըլլայ՝ ապստամբ ըլլալու կենդանի Աս-
13 տուծմէն: Հապա ամէն իմիր մէկզմէկ յոր-
դորեցէք՝ քանի որ աս օրը տևչնիդ կայ· որ
չըլլայ թէ ձեզմէ մէկը ամուրնայ՝ մեղքին խա-
14 բեութիւնովը: Ինչու որ մենք Քրիստոսի
մասնակից եղանք· միայն թէ ան հաստատու-
15 թեան սկիզբը մինչև վերջը պինտ բռնենք· որ
ատեն որ կըսուի, Այսօր թէ որ անոր ձայնին
կը լսեսէք՝ ձեր սիրտերը մի՛ ամուրցունէք ան
16 սրդողելու ատենին պէս: Ինչու որ մէկքանի-
ները լսեցին ու սրդողցուցին· բայց չէ թէ ան
ամէնը որ Եգիպտոսէն նյած էին Մովսէսի ձեռ-
17 քովը: Ասկէց զզվեցաւ ան քառասուն տարին·
չէ՞ որ յանցանաւորներէն· որ անոնց ոսկոր-
18 ները անապատին մէջը ինկան: Ասոր համար
երդում ըրաւ իր Հանգիստը չի մտնալու, թէ
19 չէ՝ անհաւատներուն: Ես կըտեսնանք, որ չի
կրցան մտնալ իրենց անհաւատութեանը հա-
մար:

ԳԼ· Գ·

1 Անանկ է նէ ալ վախնանք, որ չըլլայ թէ ա-
սոր Հանգիստը մտնալու խոստմունքը մէկ դի-
2 ձեղով՝ ձեզմէ մէկը զրկված գտնըվի: Որով-
հետև մենք ան խոստմունքը առինք՝ ինչպես որ
անոնք· բայց անոնց շահ մը չըրաւ ան խօսքը
լսելը՝ որ հաւատքին հնազանդելու չի կակղցան:
3 Ապց մենք՝ որ հաւատացինք, ան Հանգիստը
կըմտնանք· ինչպես որ բսաւ թէ Ինչուր որ եր-
դում ըրի իմ բարկութեանս առնեն, որ իմ
Հանգիստս չի պիտի մտնան· որ իրաւ ան գործ-

քերը աշխարհի սկիզբէն եղած էին։ Ինչու որ 4
Դէյրը ասանկ կրսէ մէկ տեղ մը Եօթնեւորդ
օրման համար. Եւ Աստուած եօթնեւորդ օրը
Հանգչեցաւ իր ամէն գործքերէն. ու հոս նորէն 5
կրսէ որ Իմ Հանգիստս չի պիտի մտնան։
Ասոր որովհետեւ ոմանք արդիւնքվեցան հոն 6
մտնալու, և անոնք որ առաջուց խոստմունքը
առեր էին անհաւատութեան համար չի մտան.
նորէն ուրիշ օր մը կրսահմանէ ու կրսէ Այ- 7
սօրը Դաւիթին ըսելովը այնքան ժամանակներէն
ետքը, ինչպես առաջուց ըսաւ. Այսօր թէ որ
անոր ձայնին կը լսէք սիրտերնիդ մի՛ ամրցու-
նէք։ Ինչու որ թէ որ Յեսու անոնք Հանգչե- 8
ցուցած ըլլար, ալ անկէ ետքը ուրիշ օրման հա-
մար չէր զրուցեր։ Անոնկ է նէ Աստուծոյ ժո- 9
ղովուրդոցը դեռ պահաս կը մնայ Հանգիստ։
Վասն զի ան որ անոր Հանգիստը մտաւ, ալ 10
իրեն Հանգչեցաւ իր գործքերէն, ինչպես որ
Աստուած ալ իրեններէն։ Ուրեմն ջանանք ան 11
Հանգիստը մտնալու. որ չըլլայ թէ մէկը նոյն ան-
հաւատութեան օրինակին պէս իյնայ։ Ինչու 12
որ Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ՝ և ա-
մէն երկու բերնէ դանակէ կտրուկ, որ կանցնի
մինչև շունչը ու ոգին բաժնելու և յօդուածները
և ըղեղը. և կըքննէ միտքը՝ ու սրտին խոր- 13
հուրդները. և չի կայ մէկ արարած մը անոր
դիմացը չերևեցած. հապա ամէն բան բաց ու
յայտնի է անոր աչքին առջևը, որուն հետ որ
մեր հաշիւը է։
Ասոնի ան մեծ Քահանայապետը որ ունինք 14
մենք՝ երկինքը անցած, Յիսուսը Աստուծոյ Որ-
դին, ամուր բռնենք դէպ դաւանութիւնը։ Ին- 15
չու որ չէ թէ քահանայապետ մը ունինք՝ որ կա-
րող չըլլայ մեր տկարութեանը հետ մեկտեղ չար-
չարվիլ. հապա ինքը ամէն կերպով փորձը ա-
ռած է դէպ նման ըլլայ առանց մեղքի։ Ասոր 16

ալ համարձակութիւնով մեռիկնանք անոր շնորհացը աճուռին առջևը · որ ողորմութիւն ընդունենք՝ ու շնորհք գտնանք պէտք եղած ատենը
Ե օգնելու ։ Ինչու որ ամէն քահանայապետ մարդոց մէջէն առնուած՝ մարդկանց համար կը
կենայ Աստուծոյ կողմը · որ պատարագներ ու
2 զոհեր մատուցանէ մեղքերու համար · չափով կրնայ չարչարվիլ անոնց հետ որ տգետ ու մոլորեալ են · ինչու որ ինքն ալ տկարութիւնով
3 պաշարուած է · անոր համար հարկ է ինչպես որ ժողովուրդին համար՝ անանկ ալ իր անձին համար պատարագ մատուցանել մեղքերուն համար ։
4 Եւ չէ թէ մէկը ինքզինքով սա պատիւը կառնէ , հապա ան որ Աստուծմէ կրկանչուի՝ ինչ-
5 պէս որ Ահարոն ։ Նանակ ալ Քրիստոս չէ՛ թէ իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու ,
հապա ան որ իրեն ըսուցից՝ թէ Որդի իմ Ես-
6 դիս ես , ես քեզ ասօր ծնայ ։ Ինչպես ուրիշ տեղ մըն ալ կըսէ · Դուն յաւիտեանս քահա-
7 նայ ես Ա՛նլբիսեդեկի կարգին պէս ։ Ա՛ն որ իր մարմնին օրերը սաստիկ գոչմունով ու արցունքով աղօթք և աղաչանք կրմատուցանէր անոր՝ որ կարող էր զինքը մահուանէ խլրտել ,
8 ու կըլսուէր իր ակնհաւնանը համար · թէեպէտ ինքը Որդի է , Բայց ան չարչարանքներովը
9 հնազանդութիւն սորվեցաւ · և երբոր կատարվեցաւ՝ բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտենական փրկութեանը պատճառ եղաւ · ու Ա-
10 ստուծմէ յաւիտենական Քահանայապետ բսվեցաւ Ա՛նլբիսեդեկին կարգին պէս ։
11 Որուն վրայ կան մեզի շատ խօսքեր՝ ու դժուարին՝ մեկնելու · ինչու որ դուք ականջ-
12 ներնիդ բթամիտ եղաք ։ Որ պէտք էր ձեզի այսչափ ժամանակին մէջ սորվեցնող ըլլալ · Բայց նորէն պէտք է ձեզի սորվիլ թէ ի՛նչ է Աստուծոյ պատգամներուն առաջին սկզբունքը ·

ու գործ կալցի կարօտ եղաք , և չէ՛ թէ հաստա-
տան կերակուրի : Ինչու որ ան ամէնը որ 13
կալինկը է՝ արդարութեան խօսքին տգէտ է ,
որովհետև տղայ է : Հայց հաստատուն կերա- 14
կուրը կատարեալներուն է . որ անոնց՝ հասկա-
ըլլալուն համար , ուսելու զգայարանքը սորված
է աղէկը ու գէշը ընտրելու : Ուստի Քրիստոսի Ը.
վրայով առջի սորվելիքները ձգելով՝ կատար-
եալին գանք . առանց նորէն հիմ՝ ձգելու ան
մեռած գործերէն ապաշխարելու՝ ու դէպ՚ի
Աստուծոյ հաւատք ունենալու , և մկրտութիւն- 2
ներուն վարդապետութեանը , ու ձեռքի ձեռնա-
դրութեանը , և մեռելներուն յարութեանը ,
ու յաւիտենական դատաստանին : Եւ պիտի 3
բնենք ան , թէ որ Աստուած հրամայէ նէ :
Ինչու որ անհնար է մէկ անդամ մկրտեա- 4
րուն՝ որ երկնաւոր պարգեւներուն համը առին ,
ու Հոգւոյն Սրբոյ հաղորդ եղան , և Աստու- 5
ծոյ ազնիւ խօսքին համը առին՝ ու գալու աշ-
խարհին զօրութիւնները , և կործանուին . նորէն 6
ապաշխարութեան նորոգելու . որովհետև
կրկին Աստուծոյ Որդին խաչը կհանեն ի-
րենց անձին , ու նորէն կրհայտառակեն : Ին- 7
չու որ ան երկիրը՝ որ իր վրայ շատ հեղ եկած
անձրեւը կխմէ , և շահաւոր բոյսեր կբերէ
անոնց՝ որ անոր համար իրենք աշխատեցան ,
Աստուծմէ օրհնութիւն կրնդունի . բայց ան որ 8
փուշ ու տատասկ կրբերէ՝ անպիտան է ու ա-
նէծքի մօտ . և անոր վերջը երվիլ է : Հայց ես 9
ձեր վրայ հաստատած եմ սիրելիներս՝ ան աղէկ
կողմը , և ան որ փրկութեան կցուն է . որ
թէպէտ ասանկ կրխօսինք : Ձի թէ Աստուած 10
անիրաւ է , որ ձեր գործքերը մոռնայ՝ ու ան
սէրը , որ իր անունին համար ցուցուցիք , որ
սուրբերուն ծառայեցիք՝ ու կծառայէք :
Ուզենք ալ կերբաղձանք որ ձեզմէ ամէն մէկը 11

նոյն ջանքը ցուցընէ ըմ յոյսին հաստատելուն՝
12 մինչև վերջը · որ դուք տկարամիտ չըլլաք · հապա
նմանող եղէք անոնց որ հաւատքով ու համբե-
րութիւնով ան խոստմունքները ժառանգեցին :
13 Ինչու որ երբոր Աստուած Աբրահամին ան
խոստումնքը ըրաւ , որովհետև ուրիշ մէկ մեծ
14 մը չի կար՝ որ անոր վրայ երդում՝ ընէր , իր
անձին վրայ երդում՝ ըրաւ՝ ու ըսաւ . Իրաւ՝ օրհ-
նելով պիտի օրհնեմ՝ քեզ , ու շատցնելով
15 պիտի շատցնեմ՝ քեզ : Եւ անանկ երկայնա-
16 միտ ըլլալով՝ ան խոստմունքին հասաւ : Ինչ-
պէս որ մարդիկ՝ ինչ որ իրենցմէ վեր
է , անոր վրայ երդում՝ կընեն , ու անոնց
բոլոր հակառակութիւնը հաստատելու վճիռը
17 երդումն է : Ուր անով Աստուած ուզելով
էվելըքը ցուցընել խոստմունքին ժառան-
գաւորներուն իր խորհուրդին հաստատու-
18 թիւնը՝ երդումը մէջ ձգեց . որ ան երկու
անփոխոխելի բաներովը՝ որոնցմով անկարելի է
Աստուծոյ սուտ ըլլուցկլ , մենք՝ որ ապաւինե-
ցանք , հաստատուն մխիթարութիւն ունենանք ան
19 հանդերձեալ յոյսը ամուր բռնելու · որ ան յոյսը
ունենանք իբրև մէկ հաստատ ու անշարժ խարիսխ
մը մեր անձին · որ՝ ան վարագուրին ներսի կող-
20 մը կրմտնայ · ուր որ մեր Առաջնորդը Յիսուս
մեզի համար մտաւ՝ յաւիտենական Քա-
հանայապետ եղած՝ Մելքիսեդեկի կարգին
պէս :

ԳԼ · Ի:

1 Որովհետև ան Մելքիսեդեկը Սաղէմայ թա-
գաւորն էր՝ Խարձրեալ Աստուծոյ քահա-
նան · որ ինքը Աբրահամին դիմացը ելաւ՝ երբոր
անիկա թագաւորներուն կոտրտելէն ետ դար-
2 ձեր կուգարկոր , ու օրհնեց անիկա · որ անոր
Աբրահամն ալ տասանորդ տըւաւ բոլոր բաներ-

բէն . առաջ՝ արդարութեան թագաւոր կըթարգմանվի , ետքը Սաղէմայ թագաւոր՝ որ է խաղաղութեան թագաւոր . առանց հօր՝ առանց մօր՝ 3
ազգաւհամար չունենցող , որ ոչ օրերու սկիզբ ունի՝ ոչ ալ կեանքին վերջը . Նմանեցոյց Որդիին Նման ըլլալով՝ կայ ու կըմնայ միշտ քահանայ ։

Ուստի նայեցէք՝ ինտր մէկ մարդ մըն էր ասիկա . որ անոր Աբրահամ նահապետն ալ տասանորդ տուաւ ան կողոպուտէն ։ Եւ Ղևիին 4 5
որդիքներէն անոնք որ քահանայութիւն կառնեն՝ պատուէր ունին որ ժողովուրդէն տասանորդ առնեն՝ ան օրէնքին պէս , այսինքն է՝ իրենց եղբայրներէն . թէպէտ Աբրահամին մէջքէն ելեր են . բայց ան որ անոնցմէ ազգի մէջ 6
չէր սեպված՝ Աբրահամէն տասանորդ առաւ . ու ինքը օրհնեց անիկա՝ որ խոստմանքը առած էր ։ Ինչու որ առանց մէկ հակառակութիւնի 7
մը պզտիկը լաւէն կօրհնվի ։

Եւ հոս մահկանացու մարդիկ տասանորդ 8
կառնեն . բայց հոն վկայեցաւ որ ապառնիդ առնող կենդանի է . Եւ ինչպէս խօսքին կարգն է ըսել . Թէ Ղևի ալ՝ որ ինքը տասանորդ 9
կառնէր , Աբրահամին ձեռքովը տասանորդ տուաւ . ինչու որ տակաւին իր հօրը մէջքն էր՝ 10
երբոր Մելքիսեդեկ անոր առջևը ելաւ ։

Ուստի թէ որ կատարվիլը Ղևատացոց քահա- 11
նայութեան ձեռքովը էր , (որովհետև ժողովուրդը անոր առևտը Օրէնքին տակը դրվեցաւ ,) ինչ պէտք էր որ Մելքիսեդեկին կարգին պէս ուրիշ քահանայ մը ելլէր , ու չըսվի թէ Ահարոնին կարգին պէս ։ Հապա թէ որ քահանա- 12
յութիւնը փոխվի , հարկ էր որ օրէնքին ալ փոխոխմանք ըլլայ ։ Եւ նրա՝ նկնիցա՝ ինչու որ՝ ան , որուն համար ասանկ կըսվի , ուրիշ 13
ցեղի հաղորդութիւն ունեցաւ . որ ան ոչ-ևէն

14 Մեկը բնաւ սեղանին հաղորդ չեղաւ . որով-
հետև յայտնի է որ Յուդային ցեղէն առաջ
եկաւ մեր Տէրը . որ ան ցեղին վրայով Մով-
սէս բան մը չի դրուցեց քահանայից համար :
15 Ու ալ էվելըքը յայտնի է որ Խէնէօ , թէ որ
Մ՚ելքիսեդեկին նման ուրիշ քահանայ մը ել-
16 լաւը ըլլայ՝ որ ան չէ՛ թէ մարմնաւոր պատուէ-
րին պէս եղաւ , հապա անվախճան կենաց
17 զօրութեանը պէս : Ինչու որ վկայվեցաւ թէ՝
Դուն յաւիտեանս քահանայ ես Մ՚ելքիսեդեկին
18 կարգին պէս : Նախորդութիւն եղաւ առջի
պատուիրանքին իր տկարութեանը ու ան-
19 շահութեանը համար . (ինչու որ օրէնքը մէկ
բան մը կատարեալ չըրաւ ,) և մէկ աղէկ յոյսի
մը մտնալը կ՚այ՝ որ անով Աստուծոյ կը մօտիկ-
նանք :
20 Եւ այնքան՝ որ չէ՛ թէ առանց երդումի հաստատ
եղաւ . (ինչու որ մէկ քահինները կան՝ որ առանց
21 երդումի քահանայ եղած են . բայց ասիկա եր-
դումով՝ անոր ձեռքովը , որ իրեն ըսաւ . Տէրը
երդում ըրաւ , ու ալ չի պիտի զղջայ . դուն
22 յաւիտեանս քահանայ ես .) և այնքան էվելըք
աղէկ ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս :
23 Ու եղած քահանաները շատ են , էրէնց միշտ
24 մնալուն մահը արգելք ըլլալուն համար . բայց
ասիկա յաւիտեան կենալուն համար անանցանե-
25 լի ունի քահանայութիւնը . ուստի բոլորովին
կրնդանի ալ ընելու կարող է անոնք՝ որ իրմով
Աստուծոյ կուգան . որովհետև ինքը միշտ կեն-
դանի է անոնց համար բարեխօս ըլլալու :
26 Ալ այսպէս մեզի ճիշտ անանկ մէկ քահանայա-
պետ մը կըվայլէր , սուրբ՝ անմեղ՝ անարատ՝
մեղաւորներէն զատված՝ ու երկինքէն ալ բարձ-
27 րըցած . որ անոր ամէն իժիր հարկ չէ՛ ինչպես
ուրիշ քահանաներուն՝ առաջ իրենց մեղքին
համար պատարագ մատուցանել , ու ետքը ժո-

ղովուրդին համար · Հապա ասիկա մէկ անգամ
մը ըրաւ ան , իր անձը պատարագ մատուցանե-
լով ։ Օրէնքը տկարութիւն պարարտած 23
մարդիկը քահանայապետ կրկնցուն · բայց ե-
դումին խօսքը որ օրէնքէն ետեւ էր , Որ յիւ ու
յաւիտեան կատարեալ ։

Գ · Ը ։

Ա Ւ զգուցած խօսքերուս գլխոյ ա՛ն է · ունենք 1
քահանայապետ մը ունինք մենք՝ որ նստը
երկինքը Մեծութեան Աթոռոյն աջ
կողմը նստաւ · սրբոց Երեսն ընծան պետին պա- 2
տոնեայ , ու ճշմարիտ խորանին որ Տէրը կանգնե-
ցուց և չէ թէ մարդ ։ Որովհետև ամէն քահա- 3
նայապետ զոհեր ու պատարագներ մատուցանե-
լու համար կրկնայ · ուստի չարի է անոր ալ
բան մը ունենալ՝ որ մատուցանէ ։ Որ թէ երկ- 4
րէս ըլլար , ալ ինքը քահանայ չէր ըլլար · ին-
չու որ կային օրէնքին պէս · (որ անոնք երկնայնոյ 5
բաներուն նմանութիւնովը ու օրինակովը կը
ծառայէին · ինչպէս որ Մովսէսին ատեն պատգամը-
ցաւ՝ երբոր խորանը պիտի շինէր · Տէրն ըսաւ ,
ամէնը ան օրինակին պէս ընես որ լեռը ցոյց
ցաւ քեզի ·) սակայն Յիսուս երկնքը ագռնի պաշ- 6
տօնի մը հասաւ , որչափ որ երկնքը աւելի գա-
չինքը մը միջնորդ է · որ գերազանց խոստում-
քով կարգադրեցաւ ։

Ինչու որ եթէ առջինը անարատ էր նէ , 7
ուրեմն երկրորդին տեղ չէր փնտռտուիր ։
Որովհետև կը բամբասէ անոնք ու կ՚ըսէ · Ա՛յս
օրեր պիտի գան՝ կ՚ըսէ Տէրը , և ես Իսրայէլի
տանը հետ ու Յուդայի տանը հետ նոր դաշինք
մը պիտի ընեմ · չէ թէ ան դաշինքին պէս որ 9
անոնց հայրերուն հետ դրի ան օրը երբոր ձեռ-
քերնուն բռնեցի Եգիպտացոց երկիրէն անոնք

Հանելու · քանզի անոնք իմ դալկութիւնս մէջը չեն
կրնար , ես ալ անհոգ եղայ անոնց վրայով՝
կրակ Ա՛մենակալ Տէրը : Ասոնց ատեն է ան դա-
տին՝ որ Յովսափատ տանը Հնոմ պիտի դնեմ ան
օրհնեալը՝ կրակ Տէրը · Իմ օրհնեալս անոնց
միջին մէջը պիտի դնեմ , ու անոնք իրենց
սրբութեան մէջը պիտի · ու ես անոնց Աստուած պի-
տի ըլլամ , անոնք ալ ինծի ժողովուրդ պիտի
ըլլան : Եւ ալ չի պիտի սոսկացունեն ամէն մէ-
կը իր բազաբային , ու ամէն մէկը՝ իր եղբայրը ,
ու բանն ԼԸ Ա՛նջրը Տէրը · Ինչու որ ամէնքն
ալ դիս պիտի ճանչնան անոնց պզտիկներէն
մինչև մեծերը : Ա՛ան զի ես անոնց անի-
րաւութիւններուն ներող պիտի ըլլամ , և ի-
րենց մեղքերը ու անօրէնութիւնները ալ չի
պիտի յիշեմ :
Ասսի նոր բսելովը՝ առջինը հինցուց · ու ան
որ կը հինենայ և կը ծերնայ՝ ալ մօտ է ապակա-
նելու :

Գ· Թ·

Բայց անոնք առաջին գաղութին ալ ունէր պաշ-
տամունքին արարողութիւնը , ու ան տանը
աշխարհային սուրբ տեղը : Ինչու որ առաջին
խորանը որ Մովսէս սարքեց կրակէր՝ տանի պատ-
րաստեցաւ · որուն մէջը կար աշտանակը՝ ու սե-
ղանը՝ և ընծայվելու հացը : Եւ երկրորդ վա-
րագուրին ետին էր խորանը՝ որ Սրբութիւն
սրբութեանց կ՛ըսվէր · որուն մէջը կար ոսկի
խունկարանը ; ու կտակարաններուն նստուկը՝ ներ-
սէն ու դուրսէն ոսկիով պատած · որուն մէջը ոս-
կիէ սափորը մանանայով լեցուն , և Ահարոնին
գաւազանը՝ որ կանդրցաւ , ու ան կտակարաննե-
րուն տախտակները · և անոր վրայ փառաց քերու-
բէները՝ որ քաւութիւնին վրայ շուք կընէին ·
որուն համար չըլլար հիմայ մէկիկ մէկիկ զրուցել :

Եւ ան ասելը որ անանկ պատրաստուած էր , 6
առջի խորանը ամէն իժիր կըմնայիւն քահանա-
ները պաշտամունքը կատարելու . բայց երկրոր- 7
դը՝ տարին մէկ անգամ մը Ինչն քահանայապե-
տը կըմտնէ . ան ալ չէ՛ թէ առանց արիւնի , որ
իրեն համար՝ ու ժողովուրդին սխալմունքներուն
համար կըմատուցանէր . Հոգին Սուրբ աս ցու- 8
ցընելով՝ որ դեռ սրբութեանց ճանապարհը
յայտնի եղած չէր . քանզի տակաւին ան առջի
խորանը հաստատուն կեցեր էր . որ ան օրինակ 9
մըն էր հիմակու ատենիս . որուն մէջը պատա-
րագներ և զոհեր կըմատուցվէին . որոնք չէին
կրնար կատարել պաշտօնեաներուն խղճմտանքը .
հապա միայն կերակուրներով ու խմիլքներով ,
և կերպ կերպ լուացումներով՝ մարմնի արդա- 10
րութիւնները էին , որոնք մինչև բարեկարգու-
թեան ատենը դրված էին : Բայց Քրիստոս 11
որ եկաւ գալու բարիքներուն քահանայապետ՝
մեծ ու կատարեալ և անձեռագործ խորանով ,
այսինքն՝ ան որ աս ստեղծուածներէն չէ , ոչ 12
ալ նոխազներուն ու զուարակներուն արիւնո-
վը , հապա իր արիւնովը մէկ անգամ մը
սուրբ տեղերը մտաւ՝ յաւիտենական փրկու-
թիւն գտնալով : Վասն զի թէ որ ցուլերուն 13
ու նոխազներուն արիւնը և երիվցներուն մոխիրը
ցանկվողով պղծեալները կըսրբէր մարմնին մաք-
րութեան կողմանէ . ալ որքան էվելըք Քրիստոսի 14
արիւնը՝ որ յաւիտենական Հոգիին ձեռքովը իր
անձը անարատ պատարագ մատուց Աստուծոյ ,
կըսրբէ ձեր խղճմտանքը ան մեռած գործքերէն՝
կենդանի Աստուածը պաշտելու :

Եւ անոր համար ինքը աս նոր դաշինքին 15
միջնորդ է . որ երբ մէկը առջի դաշինքին յանցանք-
ներուն քաւութեանը համար եղած ըլլալով ,
յաւիտենական ժառանգութեան հրաւիրված-
ները ան խոստումնը առնեն : Ինչու որ ուր 16

որ կտակ մը ըլլայ՝ հարկաւոր է որ ան կտակը
17 գրողին մեռած ըլլալը ցուցվի. ինչու որ կտակը
մեռնելէն ետեւ հաստատ է հարկ մը չէ՝ ինչպէս
հաստատ կրնայ՝ քանի որ կտակը գրողը ողջ է:
18 Ուստի համար առջի պաշտօնն ալ առանց արիւնի
19 չէր հաստատվեր: Ապա զի երբոր օրէնքին
ամեն պատուիրնները Մովսէս ժողովուրդոյն
պատմեց, ցուլերուն ու նոխազներուն արիւնը
առնելով՝ ջուրով՝ ու բուրդով՝ կարմիրով՝ և
զոպայով բուն կտակարաններուն և բոլոր ժո-
20 ղովուրդոյն վրայ ցանեց, և ըսաւ. Այսիկ է ան
կտակին արիւնը, որ Աստուած ձեզի պատուի-
21 րեց: Եւ խորանին վրայ, ու սպասին բոլոր
22 կարասիքին վրայ անանկ ցանեց արիւնը: Եւ
գրեթէ ամեն բան արիւնով կրմաքրվեր օ-
րէնքին նայելով, ու արիւն չի թափվելով թո-
ղութիւն չէր ըլլար:
23 Ուստի հարկ էր որ օրէնքով երկնքին նմանները
ասանկ պաշտպանվելով սրբվին. բայց բուն
երկնաւորները անոնցմէ էրելի ազէկ պատարագ-
24 ներով: Որովհետեւ Քրիստոս չէ մտեր ձեռքով
շինված սուրբ տեղերը մտաւ, որ ճշմարիտին
օրինակներ էին. հապա բուն երկինքը՝ մեզի հա-
25 մար Աստուծոյ երեսին առջեւը ըլլալու. չէ մտեր
որ շատ անգամ իր անձը պատարագ մատուցա-
նէ, ինչպէս քահանայապետը որ տարվէ տարի
սրբութիւն սրբութեանցը կրմտնար օտար ա-
26 րիւնով. հապա մեր չէ պէտք էր իրեն աշխար-
հի սկիզբէն հետէ շատ անգամ չարչարվիլ.
բայց ահա հիմայ մէկ անգամ մը ան դարերուն
վերջը իր անձին պատարագովը յայտնվեցաւ՝
27 մեղքը մէկ դի ձգելու համար: Եւ ինչպէս որ
մարդոց սահմանված է մէկ անգամ մը մեռնիլ,
28 ու անկէ ետքը դատաստան. անանկ ալ Քրիս-
տոս մէկ անգամ մը պատարագ մատուցվեցաւ՝
շատերուն մեղքերը վերցունելու համար. բայց

երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտնը-
ւի անոնք փրկելու համար՝ որոնք հաւատով
անոր կը սպասեն ։ Որովհետև օրէնքը գալու ի
բարիքներուն շուքը ունէր , ու չէ թէ ան
բաներուն բուն կերպարանքը · տարին տարի
նոյն պատարագները միշտ կրմատուցանեն , որ
կարող չէ ան մատուցողները կատարել ։
Ապա թէ չէ կդադրէին մատուցանելէն , մէկ 2
անգամ մաքրըված պաշտօնեաները ալ անկէ
ևս ։ Հոգի խղճմտանք մը չունենային հա- 3
մար · բայց ան պատարագներուն մէջը տար- 4
ւէ տարի նորէն մեղքերը կըյիշէին ։ Վասն
որ ան նոխազներուն ու ցուլերուն արիւնը չէր
կրնար մեղքերը մէկ դի վերցուցնել ։ Վասն 5
համար իր աշխարհ մտնելու առենը՝ կըսէ ,
Օրհնի ու պատարագներ չուզեցիր դուն · Պատ
րաստ մարմին մը հաստատեցիր · ողջակէզներուն 6
և մեղքի համար պահերուն չի հաճեցար ։ Ա- 7
ռաջներն ըսի որ՝ Ահա կուգամ ես , գրոց պատմուհեան
մէջը ինծի համար գրված է քու կամքդ ընելու
համար ։ Վերը կըսէ թէ , Օրհներուն 8
ու պատարագներուն և ողջակէզներուն ու մեղ-
քի համար պահերուն չի հաճեցար ու չուզեցիր ,
առնոնք որ օրէնքին պէս կրմատուցվէին ։ Ետ- 9
քը կըսէ , Ահա ես կուգամ որ քու կամքդ ընելու
համար ։ առջինը մէկ դի կրձգէ , որ երկ-
րորդը հաստատէ ։ Որ ան կամքովը մենք ալ 10
սրբըվեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինին մէկ
անգամ պատարագվելովը ։

Եւ ամէն քահանայապետ ամէն իրիկուն պաշ- 11
տօնին մէջ կըկենայ , և նոյն պատարագները
շատ անգամ կրմատուցանէ , որոնք բնաւ չեն
կրնար մեղքերը մէկ դի վերցուցնել · բայց ասկա 12
մէկ պատարագ մը մատուց մեղքերու համար , ու
միշտնենաւորապես Աստուծոյ աջ կողմը նստաւ ·
և ասկէ ետև՝ մինչև որ իր թշնա- 13

14 միները իր ոտքին տակը գրվին : Ինչու որ
մեկ պատարագով մը մշտնջենաւորապես կա-
տարեց ան սրբըլվածները :
15 Ինչպէս Հոգին Սուրբ ալ կը վկայէ մեզի.
16 առաջուց ըսելէն ետև, Թէ Այսիկա է դաշինքը որ
ես անոնց հայրերուն հետ պիտի դնեմ ան օրե-
րէն ետքը, (կ'ըսէ Տէրը) Իմ օրէնքներս անոնց
սրտերուն մէջը պիտի դնեմ, ու իրենց միտքին մէ-
17 ջը պիտի գրեմ անոնք. ետքը կ'ըսէ Թէ Անոնց
մեղքերը և անոնց անօրէնութիւնները ալ չի
18 պիտի յիշեմ : Ասոր ուր որ Թողութիւն է,
ալ մեղքի համար պատարագ պէտքը չէ :
19 Ասոր եղբայրներ՝ համարձակութիւն ունինք
20 սուրբ տեղը մտնելու Յիսուսի արիւնովը. ան
նոր ու կենդանի ճամբովը՝ որ նոր բացաւ մեզի
վարագուրին ձեռքովը՝ այսինքն իր մարմինովը.
21 և մեծ քահանայ մը ունենալով Աստուծոյ տանը
22 վրայ, մօտենանք ճշմարիտ սրտով՝ լիցուն
հաւատքով, սիրտերնիս չար խիղճերէն լուանա-
լով, ու մարմիննիս սուրբ ջուրով լուանալով :
23 Մնար բըռնենք ան յոյսին դաւանութիւնը ա-
ռանց շարժելու. ինչու որ հնքը հաւատարիմ է
24 որ խոսք տուաւ : Եւ մեկզմեկու հոգ տանինք՝
յորդորելով սիրելու ու բարի գործքեր ընելու.
25 և մեկտեղ ժողվվելը չի թողունք, ինտոր մեկ
քանիներուն սովորութիւն ունին. հապա մեկ-
յորդորինք, ու այնքան էվելօք որքան որ ան
օրը մօտեցած կըտեսնանք :
26 Վ ասն զի Թէ որ ճշմարտութիւնին գիտու-
թիւնը ընդունելէն ետև ուզենով մեղք գործելու
ըլլանք՝ ալ անկէ ետև մեղքերու համար պատա-
27 րագ պէտք չէ. հապա մեկ զարհուրելի սպասել
մը դատաստանին ու բարկութեան կրակին, որ
28 պիտի լափէ հակառակորդները : Մեկը Թէ որ
Մովսէսին օրէնքը անարգէր, առանց ողորմու-
թիւնի երկու կամ իրեք վկաներով կըմեռնէր.

ալ որչափ սաստիկ պատիժի արժանի կըսեպիք 29
անիկա , որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ ։
ու նոր դաշինքին արիւնը խառնակ սեպեց , որ
անով ինքը սրբըվեցաւ , և շնորհքին Հոգին ա-
նարգեց ։ Հայց գիտենք անիկա որ ըսաւ , Իմն 30
է վրէժխնդրութիւնը , ու Տառապեցմը ես պիտի
ընեմ՝ կըսէ Տէրը ։ և դարձեալ Թէ՝ Տէրը կը
դատէ իր ժողովուրդը ։ Խիստ վախնալու բան 31
է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը ։
Ուստի միտք բերէք ան առջի օրերը՝ երբոր 32
լուսաւորված շատ վիշտերու ու չարչարանքնե-
րու համբերեցիք ։ երբեմն նախատինքներով 33
ու նեղութիւններով խայտառակված , երբեմն
ալ անանկ ալխատութիւն քաշողներուն կցորդ
ըլլալով ։ Ինչու որ կապալներուն հետը 34
չարչարվեցաք՝ ու ձեր ստացուածքին կողոպտիլը
խնդութիւնով ընդունեցիք ։ որովհետև գիտէիք
որ ալ էվելի աղէկ ստացուածներ ունիք ձեզի
երկինքը , ուր կրկենան ու կրմնան ։ Ուստի 35
ձեզմէ մի՛ ձգէք ան ձեր վստահութիւնը ։ որ ան
մեծ վարձքի հատուցում ունի ։ Պէտք է ձեզի 36
համբերութիւն , որ Աստուծոյ կամքը ընելով՝
խոստումնէին հասնիք ։ ինչու որ ալ ասկէց քիչ 37
մը ատենէն ան որ պիտի գայ՝ կուգայ , ու չի
ուշանար ։ Պատճառն որ իմ արդարս հաւատ- 38
քէն պիտի ապրի ։ և թէ որ մէկը երկու մտքով է
իմ անձս անոր չի հաւնիր ։ Հայց մենք չենք թէ 39
երկու միտքով կորսըվելու վրայ ենք ։ Հապա
հաւատքով հոգիներուն փրկըվելուն ։

ԺԱ. ԿԱՆ ։

Հաւատքը ի՞նչ է , թէ չերեւցած բաներուն հաստատութիւնը՝ ու չերեւցած բա- 1
ներուն յայտնի ցուցվածքը ։ Վասն զի անով 2
առջինները վկայութիւն ունեցան ։
Հաւատքով կհմանանք որ աշխարհքը Աս- 3

տուծոյ խօսքովը Հաստատվեցաւ , անհնազանդ բա-
նսերէն աս երևեցածներըն եղան :
4 Հաւատքով Աբրահամ Հայհնեն աղեկ պատա-
րագ կրմատուցաներ Աստուծոյ . որ անով վկայ-
վեցաւ արդար ըլլալը . ինչու որ իր պատարագ-
ներուն վրայ Աստուծմէ վկայուԹիւն եղաւ իրեն .
որ ԹէպԷտ ինքը անով մեռաւ , բայց տակաւին
կը խօսի :
5 Հաւատքով Ենովք Երկինք փոխվեցաւ , որ
մեռնելու Համը չառնէ . ու մէկ տեղ մը չԷր
գտնվեր , ինչու որ Աստուած փոխեց անիկա .
և անոր փոխվելէն առաջ՝ ինքը վկայվեցաւ որ
6 Աստուծոյ Հաճոյ է : Բայց առանց Հաւատքի
անկարելի է Աստուծոյ Հաճոյ ըլլալ . Հապա
ան որ Աստուծոյ կրմտիկնայ՝ պէտք է որ
Հաւատայ ԹԷ Աստուած կայ , ու պարգև կը
Հատուցանէ անոնց որ ինքը կրփնտրեն :
7 Հաւատքով Նոյ տրաման մը առնելով Ա-
ստուծմէ՝ դեռ չերևցած բաներուն Համար , վախ-
նալով ան տապանը կըշինէր իր տանը փրկու-
ԹիւնըՀամար . որ անով աշխարՀը դատա-
պարտեց , և ժառանգաւոր եղաւ ան արդարու-
ԹիւնըՀամար որ Հաւատքով կըլայ :
8 Հաւատքով Աբրահամ կանչվեցաւ՝ մնիկ դրաւ ան տեղը ելլալու , որ առիկա պիտի
ժառանգեր . ելաւ գնաց , ու չԷր գիտեր ուր
9 կերԹար : Հաւատքով պանդխտուԹիւն քա-
շեց աւետեաց երկիրը՝ որպէս ԹէՀ օտարուԹեան
մէջ . վրաններով բնակեցաւ Իսահակին ու Յա-
կոբին Հետ մէկտեղ , որ իր Հետ ժառանգորդ
10 Էին ան խոստումնըին . ինչու որ ինքը կրսպասէր
ան Հիմերով Հաստատված քաղաքին . որուն
Ճարտարապետը ու արարիչը Աստուած է :
11 Հաւատքով ինքը Սառան ալ՝ որ ամուլ Էր , որ-
դեծնուԹեան սերմ առնելու զօրուԹիւն ընդու-
նաց , և ատենը անցած Հասակին մէջ [illegible]

ծնաւ . ինչու որ Հաւատարիմ սեպեց անիկա որ
նէին խօսք տրուաւ : Ասոնք ան մէկ հատին 12
կը ծնանէին . ան ալ անցած ժամանակի մէջ՝
երկիւղի աստղերուն պէս շատ , ու ծովին քովի
եղած աւազին պէս առանց համրանքի :

Ա՛նոնք ամէնն ալ հաւատքով մեռան , և զիս 13
ան խոստումները չառած . հապա հեռուէն անոնք
զանոնք ու ուրախացան , և խոստովանեցան որ
օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ :
Ինչու որ անոնք որ անանկ բաներ կը խօսին՝ 14
յայտնի կ՚ընեն որ մէկ գաւառ մը կը փնտռտեն :
Ու եթէ անիկա յիշէին ուսկից որ ելան նէ՝ 15
ժամանակ կար Հոն դառնալու : Հապց մէկ ապ- 16
նիւ գաւառի մը կը փափաքէին , այսինքն երկ-
նաւորին . ուստի ամօթ չի սեպեր Աստուած ա-
նոնց Աստուածը կոչուիլ . ինչու որ ինքը ա-
նոնց քաղաք մը պատրաստեց :

Հաւատքով Աբրահամ իր փորձուելու ա- 17
տենը Իսահակը պատարագ մատուց . և ան որ
խոստումները առեր էր՝ իր մէկմէկ զաւակը կը
մատուցանէր . որուն բսմեցաւ որ Իսահակով քու 18
ցեղդ պիտի կանչըվի . իր միտքին մէջը դրաւ , որ 19
Աստուած մեռելներէն ալ կարող է յարուցա-
նել՝ անկա . ուսկից օրինակով մը ընդունեց ա-
նիկա :

Հաւատքով գալու բաներուն համար Իսա- 20
հակ Յակոբը ու Եսաւը օրհնեց : Հաւատքով 21
Յակոբ իր մեռած ատենը Յովսէփին որդոցմէ
ամէն մէկը օրհնեց , և երկիրպագաւ ծերին ըրաւ
իր գաւազանին գլուխն վրայ : Հաւատքով 22
Յովսէփ իր վախճանած ատենը յիշատակեց
Իսրայէլին որդոցը Եգիպտոսէն ելլալը , ու իր ոս-
կորներուն համար ապրպրեց :

Հաւատքով Մովսէսը՝ երբոր ծնաւ , իր 23
ծնողքներէն իրեք ամիս գաղտուկ պահվեցաւ .
ինչու որ տղան գեղեցիկ տեսան , ու չի վախցան

21 թագաւորին Հրամանէն ։ Հաւատով Այ-
ծիկն երբոր մեծցաւ չուզեց փարաւոնի աղջկանը
23 որդի բսվիլ . ադիկ սեպեց Իսրաէլ ժողովրդո-
ւը հետ չարչարվիլ . քան թէ մէկ ժամանակ մը
26 մեղքի մէջ վայելել . եվիլի մեծ սեպեց Քրիս-
տոսի նախատինքները , քան թէ Եգիպտացոց գան-
ձերուն մեծութիւնը . ինչու որ աչքը գրեր
27 կրպասէր վարձքերուն Հաւատվովնէն ։ Հա-
ւատով Եգիպտացոց երկիրը թողուց , ու չէր
վախնար թագաւորին բարկութենէն . ինչու որ
Համբերութիւնով չերևցած բանները անսաձի
28 պէս սեպեց ։ Հաւատով զրաւ զատիկը և ա-
րիւն ցանելը , որ անդրանիկները սատկեցնողը
իրենց չի մօտիկնայ ։
29 Հաւատով կարմիր ծովէն անցան՝ որպէս թէ
ցամաք երկիրէ մը . որ անոր փորձը բնելով
30 Եգիպտացիները բնկղմվցան ։ Հաւատով
Երիքովին պարիսպները բնկան՝ եօթը օր ւանոնց
բոլորտիքը պրտըտելով ։
31 Հաւատով Խոստո պոռնիկը ան Հաւատա-
ւն չհաւ չի կորսրվիցաւ . որ ինքը ան լրտես-
ները խաղաղութեամբ ընդուներ էր ։
32 Ու ասի ալ ի՞նչ ըսեմ . ինչու որ ժամանակը
բաւական չէ պատմելու Գեդէոնին՝ Բարակին՝
Սամփսոնին՝ Հեփթեայինն՝ Դաւիթին՝ ու Սամու-
33 էլին՝ և ուրիշ մարգարէներուն Համար . ո-
րոնք Հաւատով թագաւորութիւնները չար-
թեցին . արդարութիւն գործեցին . խոստումնե-
ներուն Հասան . առիւծներուն բերանը գոցեցին .
34 կրակին զօրութիւնը մարեցին . սուրին բերնէն
խոյսըսեցան . տկարութենէն ուժովցան պատե-
րազմի մէջ զօրաւոր եղան . օտարներուն բա-
35 նակները առին . կիներները իրենց մեռելները ըն-
դունեցին յարութիւն առած . ումանք չարչարվե-
ցան՝ և չընդունեցին ազատվիլ , որ ան յաւագոյն
36 յարութիւնը Հասնին . ումանք ալ ասնչականե-

րու ու ծնծևրու փորձը առին , կապերու ու
բանտերու . քարկոծվեցան՝ սղոցվեցան , փոր- 37
ձանքի մէջ ինկան , սուրով սպաննվելով մե-
ռան , ոչխարի կաշիներով ու այծի կաշիներով
պըտրտեցան . կարօտութիւն քաշած , նեղը ին-
կած , չարչարված . որ անոնց աս աշխարհը ար- 38
ժանի չէ . անապատի մէջ մոլորած , ու լեռները՝
և այրերը՝ ու երկրի խոռոչները :

Եւ ասոնք ամէնը հաւատքով վկայված դէռ 39
ան խոստումնըը չառին : Աստուած ալ աղէկ սե- 40
պեց մեզի համար , որ անոնք առանց մեզի չի կա-
տարվին : Ուստի մենք՝ ալ որ այսքան վկաներուն 1
լայնութիւնը մեր բոլորիքը պատած ունինք ,
բոլոր հպարտութիւնները մէկդի ձգենք՝ և
կարևոր մեղքը . համբերութիւնով վազենք
մեր առջևը եղած ասպարէզին . Յիսուսի նա- 2
յինք դէպ հաւատքին առաջնորդին ու կատա-
րողին . որ ինքը ան ուրախութեանը համար՝
որ իր առջևը կեցած էր՝ խաչը յանձն առաւ , ա-
մօթը բանի չի սեպեց՝ ու Աստուծոյ աթոռին աջ
կողմը նստաւ :

Ուրեմն միտք բերէք անոր , որ ասանկ համ- 3
բերութիւն կրեց մեղաւորներուն իրեն դէմ հա-
կառակ կենալէն . որ չըլլայ թէ ձեր անձովը աշ-
խատիք ու թուլնաք . Որ տակաւին արիւն թափելու 4
չափ պատերազմելով հակառակ չի կեցաք մեղքին .
և մոռցաք ան յորդորանքը որ ձեր հետը որպէս 5
թէ զաւկիներու հետ կըխօսի . Իմ տղաս՝ Տէրոջը
պատիժէն մի՛ թուներ , ու անկէց չեխ լսելով
մի՛ տկարանար : Ինչու որ Տէրը ան որ կըսի- 6
րէ նէ կըպատժէ . կըծնծևէ ամէն որդի՝ որ ին-
քը կընդունի : Պատիժին մէջը համբերութիւ- 7
նով որ կենաք , Աստուած որպէս թէ որդիներու
ձեղի՛ կըվարուիկնայ . ո՞ր որդին է ան՝ որ հայրը
չի պատժէ անիկա : Որ եթէ դուք առանց պա- 8
տիժի ըլլաք , որ անոր ամէնքը մասնակից եղան .

անանկ է նէ խորհի կը դուք՝ ու չէ թէ որդիներ ։
9 Ա՛յսն զի թէ որ մեր մարմնաւոր հայրերէն՝
որոնք մեզի պատժող ունինք , կամբնանք , ալ
ծրչափ աւելի հոգիներուն հօրը պիտի հնազան-
10 դինք՝ ու ապրինք ։ Ինչու որ ասոնք քիչ մը
ժամանակ իրենց կամքին պէս կը պատժեն մեզ .
բայց անիկա Ջէր օգուտին համար՝ որ անոր
11 սրբութեանը հաղորդ ըլլանք ։ Եւ էրաւ՝ ա-
մէն պատիժ նդին ատենը ուրախարար չէ թրւիր ,
հապա տրտմական . բայց ետքը արդարութե-
նով խաղաղութեան պտուղ կը հատուցանէ ա-
նով վարժըվողներուն ։
12 Ուստի թմլցած ձեռքերը ու տկար ծունր-
13 կերը հաստատեցէք . և շիտակ ճամբաներ ըրէք
ձեր ոտքերուն . որ չըլլայ թէ ան որ կաղ
է նէ գլորի , հապա մանաւանդ բժշկըվի ։
14 Խաղաղութեան հետևէ եղէք ամենուն հետ՝
և սրբութեան . որ առանց անոր մէկը չի
15 կրնար տեսնել Տէրը ։ Զգոյշ եղիք , չըլ-
լայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ . չըլ-
լայ որ մէկ լեղի արմատ մը վեր բրւնուելով՝ ին-
16 նդէ , ու անով շատերը պղծըվին ։ Ընըլայ որ
մէկը պոռնիկ ըլլայ՝ ու անառակութիւնը
17 ծախելց ։ Վասնզ որ թէպետ ետքը ուզեց օրհ-
նութիւնը ժառանգել , եայց անարգըվեցաւ .
ինչու որ ապաշխարութեան տեղ չի գտաւ հօրը
արցունքով փընտրելց անիկա ։
18 Ինչու որ դուք չօշափելի լեռը չէք եկեր , որ
ան կրակով կըվառէր , ու մգնդով և մառախու-
19 դով ու խաւարով և մրրիկով պոռաց էր . ուր
տեղ որ փողը կը չալվէր , ու խօսքերուն ձայնը
կը լսուէր . որ անիկա լսողները ետ կեցան , որ
20 մէյմալ ան խօսքը չըսվի իրենց . ինչու որ չէին
կրնար դիմանար ան հրամանին . որ թէև գա-
զան մըն ալ մօտիկնար լեռանը՝ քարկոծ կըլլայ .

և անանկ ահագին էր ան երևոյթը՝ որ Մովսես 21
ալ կըսէր թէ Աստիկ կրժախնամ՝ ու կըդողամ
կոր ։ Ձայց դուք Սիոն լեռը եկեր էք՝ ու կեն- 22
դանի Աստուծոյ քաղաքը Երկնային Երուսաղէ-
մը, և հրեշտակներուն բիւրաւոր խումբին, ու 23
երկինքը գրված անդրանիկներուն ժողովին, և
Աստուծոյ՝ որ ամենուն դատաւորն է, ու ար-
դարներուն հոգիներուն՝ որ կատարվեր են. և 24
Հիսուսի՝ որ նոր դաշինքին միջնորդն է, ու ա-
նոր արիւնին Թաթխելուն՝ որ Աբելին ապե-
ալ ազէկ կրխօսի ։

Զգուշ եղէք՝ չըլլայ որ ետ քաշվիք ան- 25
կեց որ չէնէ հետ կըխօսի. ինչու որ եթէ ա-
նոնք չի կրնային խոյտոկ ետ կենալով ան-
կեց՝ որ երկրի վրայ հրաման կուտար. Հապա
մըշակ աւելի մենք՝ թէ որ երկնաւորին կանակ
դարձունենք. որ անոր ձայնը անսանիք երկիրը 26
շարժեց. և հիմայ խոստացեր է ու կրսէ. Մէորէն
պիտի շարժեմ՝ չէ թէ միայն երկիրը՝ հապա
նաև երկինքը ։ Եւ ան Մէորէն խօսքը կը ցուցը- 27
նէ շարժըված բաներուն փոխոխմունքը՝ եղած
բաներուն պէս, որ անշարժ բաններըը հաստա-
տուն կենան ։ Ուստի չի շարժելու թագաւորու- 28
թիւնը որ առնիք՝ ամէն բանեն ան շնորհքը.
որ անով Աստուած կրպաշտենք հաճոյ ըլլալու
վախով ու դողով. որովհետև մեր Աստուածը 29
մաշող կրբակ է ։

ԺԳ. ԺԹ։

Սիրայրսիրու թիւնը ձեր մէջը հաստատվի ։ 1
Օտարասիրու թիւնը մի՛ մոռնաք. ինչու որ 2
անով ոմանք հրեշտակները բնդունելին չի գիտ-
նալով ։ Մ՚իտքերնիդ բլլան կապվածները. որ- 3
պէս թէ անոնց հետ դուք ալ կապված էք. և
չարչարվածներըը, որպես թէ դուք ալ մարմին
ունեցող էք ։ Աստանութիւնը բոլորովին ապէկ 4

բան է, ու սուրբը անկողինը՝ բայց չունները ու
5 պռունկները կըղտոտէ Աստուած։ Հարքերնիդ
արծաթասէր չըլլայ, բաւական սեպեցէք որչափ
բան որ ձեռքերնիդ կայ. ինչու որ ինքը ըզուա-
ցեց թէ՝ Չըձգեմ չի պիտի թողում, ու երեսէ չի
6 պիտի ձգեմ. անանկ որ համարձակ ըլլանք բսե-
լու, Տէրը իմ օգնականս է՝ ու ես չի պիտի
վախնամ, մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ։
7 Յիշեցէք ձեր առաջնորդները՝ որ Աստուծոյ
խօսքը ձեզի խօսեցան. անոնց վարմունքին վեր-
ջը նայելով՝ էքենց հաւատքին նմանողը եղէք։
8 Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ ու այսօր, և
յաւիտեանս։
9 Օձանգան ու ուրիշ կերպ ուսմունքներու մէջ
մի՛ մոլորիք. ինչու որ սիրտէ ի շնորհքով սիր-
ուը հաստատուի՝ և չէ թէ կերակուրով. որ ա-
նոնցմով օգուտ մը չըբերին անոնք որ անոնկ գա-
10 ցին։ Ունեցան մը ունինք մենք՝ ուսկից իշխա-
նութիւն չունին ուսանելու անոնք որ խորանը
11 կըպաշտեն։ Ինչու որ՝ որ անասուններուն ա-
րիւնը որ սուրբ տեղին մէջը կըմատուցվէր մե-
ղաց համար քահանայապետին ձեռքովը, անոնց
12 մարմինները բանակէն դուրս կ'այրվէին։ Ինչո՛ր
համար Յիսուս ալ՝ որ իր արիւնովը ժողովուր-
դը պիտի սրբէր, դուռնէն դուրս չարչարվեցաւ։
13 Ուստի եկէք իրեն ելլանք բանակէն դուրս,
14 վրանիս առնելով անոր նախատինքը։ Ինչու
որ մենք հոս մնալու քաղաք չունինք, հապա ան
15 գալիքը կըփնտրենք։ Ուստի անոր ձեռքովը
ամէն ի՛ժիր Աստուծոյ օրհնութեան պատա-
րագ մատուցանենք, այսինքն՝ Ի՛ր պոկունքնե-
րուն պտուղը՝ որ իր անունը կըդաւանեն։
16 Խարերարութիւնը ու ազապնէրուն պէտ էղ-
ծին հաղորդ ըլլալը մի՛ մոռնաք. ինչու որ Աստ-
ուած անանկ պատարագներուն կըհաճի։
17 Ձեր առաջնորդներուն մտիկ դրէք, ու անոնց

Հնազանդ կեցէք. ինչու որ անոնք ձեր հոգիներուն համար արթուն կըմնան, որպես թէ իրենք ձեզի համար հաշիւ տալու են. որ խնդութեամբ նոյն ընեն անիկա, և չէ՛ թէ հառաչանք բերելով, որ ան ձեզի օգտակար չէր։ Ա՛ղի 18
Համար աղօթք ըրէք. ինչու որ մենք հաստատ գիտենք՝ թէ ազնիւ խղճմտանք ունինք. ամէն բանի մէջ կուզենք ազնիւ վարմունք ցուցընել։ Եւ ևս կ՛ընեմ զայն՝ որ ան ընէք, 19
որ շուտով ձեզի գամ պարտկվիմ։
Եւ խաղաղութեան Աստուածը՝ որ մեռելներուն 20
հանեց ոչխարներուն մեծ հովիւը՝ մեր Տէր Յիսուսը յաւիտենական դաշինքին արիւնովը, ձեզ բարի գործքերու մէջ հաստատէ՛ իր 21
կամքը ընելու. և մեր մէջը իր դիմացը հաճոյ եղածը ընէ Յիսուս Քրիստոսի ձեռքովը. որուն փառք յաւիտեանս. ամէն։
Կաղաչեմ՝ ձեզի եղբայրնե՛ր՝ ան յորդորական 22
խօսքս ընդունիլ. ինչու որ քիչ գրեցի ես ձեզի։ Եւ կը ճանչնաք մեր Տիմոթէոս Եղբայրը՝ 23
ձեզի թող տրվածը, որուն հետ թէ որ շուտով գայ նէ՝ պիտի տեսնամ ձեզ։ Խաղաղ ըրէք ձեր 24
բոլոր առաջնորդներուն ու բոլոր սուրբերուն. բարև կուտան ձեզի անոնք որ Իտալացոց կողմերն են։ Շնորհքը ձեր 25
ամենուն հետը.
Ամէն։

Ի Տալէացւոց գրեցաւ Եբրայեցւոցն Ա՛ն-
ընթերցեալ յեկեղեցի։

ՅԱԿՈԲՈՍ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ։

ԳԼ. Ա։

1 Յակոբոս՝ Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիս-
տոսի ծառան, տասներկու ցեղերուդ՝ որ
ցիրուցան եղած էք, ողջոյն։
2 Եղբայրներ՝ բոլորովին ուրախ ըլլալու արժանի
բան սեպեցէք, երբոր կերպ կերպ փորձանքներու
3 մէջ կ'իյնաք։ Գիտնաք որ ձեր հաւատքին փոր-
ձառութիւնը աղէկ կարգի դրած համբերութիւն
4 կը գործէ։ Բայց համբերութիւնը կատարեալ
գործ թող ունենայ, որ ամբողջ ու կատարեալ
ըլլաք, ու բանի մը պակսութիւն չունե-
նաք։
5 Հապա թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ
պակսած ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ՝ որ
ամէնուն առատապէս կուտայ՝ ու չի նախատեր,
6 և պիտի տրուի իրեն։ Միայն թէ հաւատքով
թող խնդրէ՝ ու չի երկմտիր. վասն զի ան որ
երկմիտ է՝ ծովին հողմակոծեալ ու տատանեալ
7 ալիքներուն նման է։ Ան մարդը թող յոյս

չունենայ Աստուծմէ բան մը առնելու ։ Ինչու 8
որ երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճամ-
բաներուն մէջը ։

Խոնարհ եղբայրը իր բարձրութեանը վրայ 9
թող պարծենայ , և ան որ հարուստ է՝ իր խո- 10
նարհ ըլլալուն վրայ · ինչու որ՝ անիկա խոտի
ծաղկի մը պէս պիտի անցնի · Ինչու որ արեը 11
խաշող տաքութեամբ մը կը ծագէ ու կը ցամքե-
ցունէ խոտը , և անոր ծաղիկը կը թափի ու
իր երևելութեին ազնուութիւնն ալ կը կորսըվի · ա-
նանկ ալ հարուստը իր վաստկածներովը պի-
տի թառամի ։

Երանելի է ան մարդը որ փորձութիւներու 12
կը համբերէ · ինչու որ եթէ անոր դիմացէն ե-
տիր գտնըվի՝ կենաց թագը պիտի առնէ , որ Ա-
նիկա Տէրը իր սիրելիներուն խոստացաւ ։
Ոչ ոք որ մէկը որ փորձութեան մէջ է՝ ըսէ թէ 13
Աստուծմէ կը փորձըվիմ · ինչու որ Աստ-
ուած չար բաներով չի փորձըվիր · ոչ ալ ինքը
մէկը կը փորձէ ։ Մէն մէկը կը փորձըվի՝ իր 14
ցանկութիւններէն քաշված ու խաբված · ան- 15
կէ նաև ցանկութիւնը որ կը յղանայ՝ մեղք կը ծը-
նի , և մեղքը որ կատարվի՝ մահ կը ծնի ։ Մի՛ 16
խաբվիք իմ սիրելի եղբայրներս · ինչու որ 17
բոլոր բարի տուրքերը՝ ու բոլոր կատարեալ
պարգևները վերէն են՝ լուսոյ Հօրմէն կիջ-
նան , որ անոր մէջ բնաւ փոփոխութիւն՝ և
կամ դառնալու չուք մը չի կայ ։ Իր 18
ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքո-
վը՝ որ մենք իր ստեղծածներուն առջի պտուղը
ըլլանք ։ Ասոնցէ իմ սիրելի եղբայրներս · ա- 19
մէն մարդ լսող շուտ ըլլայ լսելու , ու դանդ՝ խօ-
սելու , և դանդ՝ բարկանալու ։ Ինչու որ մար- 20
դուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը
չի գործեր ։ Ուր անով բոլոր աղտոտութիւն- 21
ները ու չարութիւններուն ևվեցքները մէկ

դի ձգելով՝ հեզութիւնով ընդունեցէք ան չէզ
22 ջանված խօսքը, որ կրնայ ձեր հոգիները
23 փրկել։ Բայց խօսքը բնողներ եղէք, և չէ թէ միայն
24 լսողներ սեպվիք անձերնուդ մէջ։ Ինչու որ՝
25 թէ որ մէկը միայն լսող ըլլայ խօսքին ու կա-
տարող չըլլայ նէ, անիկա նման է մարդու մը՝
որ աչքը տրնկած իր երեսը նայի որ հայելին
մէջը կերևայ։ Ինչու որ նայելով տեսաւ ինքը-
զինքը՝ ու անցաւ գնաց, և չուտ մը մոռցաւ թէ
26 ինսո՞ր մէկ մըն էր։ Բայց ան որ ազատու-
թեան կատարեալ օրէնքին աչք անկկռով նայի,
և անոր մէջը որ կենայ՝ անիկա խօսքը լսող ա-
մոռցող չըլլար, հապա գործքը ընող · որ ինքը
27 ան ընկալով երանելի կրլլայ։ Եթէ որ մէկը ուզէ
կրօնաւոր ըլլալ՝ ու իր լեզուին սանձ չէ դնէ,
հապա իր սիրտը խաբէ, անանկին կրօնաւորու-
թիւնը փուճ է։ Սուրբ ու անարատ կրօ-
նաւորութիւնը Աստուծմէ ու Հօրմէն՝ ան է,
Որբերուն ու որբևայրիներուն տես երթալ ի-
րենց նեղութեանը մէջ · անձերնին անարատ
պահել աշխարհէն։

ԳԼ · Բ ·

1 Իմ եղբայրնե՛ր՝ չըլլայ որ աչառութեամբ
ունէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատո-
2 քը, որ ինքը փառաց Տէրն է։ Եթէ որ ձեր ժո-
ղովքին մէջ մէկ մարդ մը մտնայու ըլլայ՝ որ
ունենայ ոսկի մատնի և փառաւոր լամեր, հոն
մէկ աղքատ մըն ալ մտնալու ըլլայ ապտակ լա-
3 թեկով · կընայիք անոր վրայ որ փառաւոր լա-
թեր ունի, ու ըսէք թէ Դուն հոս նրստէ պա-
տիւով, և ան աղքատին ըսէք թէ Դուն հոս
ոտքի վրայ կայնէ, կամ՝ թէ եկոր նստէ ոտքիս
4 գնելուքին քովը · ձեր մէջը խարութիւն չէք մի
քներ, ու չար մտածմունքներու դատաւոր կրլ-

լաք ։ Ինձի ականջ դրէք սիրելի եղբայրներս. 5
չէ՞ մի որ Աստուած աշխարհիս աղքատները
ընտրեց, որոնք որ հաւատքով հարուստ են, ու
արքայութեանը ժառանգաւոր. որ անիկա իր
սիրելիներուն խոստացաւ ։ Եւ դուք աղքատ- 6
ները կանարգէք. հարուստները չե՞ն մի՝ որ ձեզ
կընեղեն, ու իրենք ձեզ դատաստան կրքաշեն ։
Անոնք չե՞ն մի՝ որ կը հայհոյեն ան բարի անու- 7
նը՝ որ ձեր վրայ կանչուած է ։ Թէ որ դուք 8
արքունական օրէնքը կատարէք գիրքին ըստ ին-
պէս՝ թէ Պիտի ընկերդ քու անձիդ պէս սիրես,
աղէկ կընէք. բայց թէ որ աչառութիւն ընէք՝ 9
մեղք կը գործէք, ու օրէնքէն կը յանդիմանուիք
օրինազանցի պէս ։ Որ որ բոլոր օրէնքը պա- 10
հէ, ու մէկ բանով մը ծռուի, անիկա բոլոր օ-
րէնքներուն դէմ գործող կըլլայ ։ Ասան ալ 11
ան որ ըսաւ թէ Մի՛ շանայներ, ըսաւ որ
Ձնութիւն ալ մի՛ ընար. ուստի թէ որ շան-
նութիւն չընես բայց ընութիւն ընես, օրէնքին
դէմ գործող եղար ։ Անանկ խօսեցէք և ա- 12
նանկ ըրէք, որպէս թէ ազատութեան օրէնքովը
պիտի դատուիք ։ Ասան ալ անողորմ դատաս- 13
տան պիտի ըլլայ անոր, որ ողորմութիւն չընէր.
ինչու որ ողորմութիւնը կրնայ կրպարծենայ
դատաստանին դիմացը ։

Ո՞նչ օգուտ է եղբայրներս, թէ որ մէկը ըսէ 14
թէ հաւատք ունի, ու գործք չունենայ, ար-
դեօք հաւատքը կրնա՞յ մի փրկեր անիկա ։ Թէ 15
որ մէկ եղբայր մը կամ քոյր մը մերկ ըլլայ՝ կամ
օրվանը կերակուրին կարօտ, ձեզմէ մէկը անոնց 16
ըսէ, Կացէք խաղաղութեամբ՝ տաքցէք, ու
կիշտացէք. և մարմինին պէտք եղածը անոնց չի
տաք նէ, ի՞նչ օգուտ է ։ Անանկ ալ հաւատքը՝ 17
թէ որ հեռը գործք չունենայ, ինքը մինակ մե-
ռած է ։ Հապա ալ ըլլայ մէկը որ ըսէ թէ՝ 18
Դուն հաւատք ունիս, ես ալ գործք ունիմ.

դուն քու հաւատդ ցուցուր ինծի առանց գործ-
քերու, ու ես քեզի ցուցընեմ իմ հաւատքս իմ
19 գործքերէս։ Դուն կը հաւատաս որ Մէկ Աստ-
ուած մը կայ, աղէկ կընես. դեւերն ալ կը հաւա-
20 տան՝ և կը սարսափին։ Ուզե՞ս գիտնալ դուն
ով տնօտի մարդ, որ հաւատքը առանց գործքե-
21 րու փուճ է։ Աբրահամ մեր հայրը գործք-
երովը չէ արդարացաւ մի՛ երբոր իր որդին Իսա-
22 հակը սեղանը հանեց զոհ ընելու։ Արտեւանաց
մի՛ որ հաւատքը անոր գործքերուն հետ մէկ
տեղ գործեց. ու ան գործքերովը հաւատքը
23 կատարեալ եղաւ։ Եւ գիրքին խօսքը կատար-
վեցաւ՝ որ կըսէ, Աբրահամ Աստուծոյ հաւա-
տաց, ու ան իրեն արդարութիւն սեպվեցաւ.
24 և Բարեկամ Աստուծոյ բարեկամ ըսվեցաւ։ Կը
տեսնաք՝ որ մարդ գործքերովը կարդարանայ,
25 ու չէ՛ թէ մինակ հաւատքովը։ Այսանկ ալ Ռա-
խաբ պոռնիկը չէ՞ որ գործքերով արգա-
րացաւ, երբոր ան լրտեսները քովը առաւ,
26 ու ուրիշ ճամբայով արձակեց անոնք։
Ինչպէս որ մարմինը առանց հոգիի մե-
ռած է, սանկ ալ հաւատքը առանց գործ-
քերու մեռած է։

ԳԼ. Ը։

1 Ա՛ղբայրներս՝ շատ վարդապետներ մի՛ ըլլաք.
գիտնաք որ մեծ դատապարտութիւն պիտի
2 ընդունինք. ինչու որ շատ սխալմունքներ կը-
նենք ամէնքս ալ. թէ որ մէկը խօսքով սխալ-
մունք չընէ նէ՝ անիկա կատարեալ մարդ է, որ
կարող է իր բոլոր մարմինը սանձի տակ դնել։
3 Տե՛ս որ ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որ մեզի
հնազանդին, ու անոնց բոլոր մարմինը իշևա-
4 նութեան տակ կառնենք։ Ա՛հա նաւերն ալ
ինչպէս բաներ են, և զօրաւոր հովերով կեր-
թան. բայց ան պզտիկ ղեկովը կը դառնան՝ կառա-

վարողն միաբեր որ կողմը ուզէ նէ։ Այսանկ 5
ալ լեզուն մէկ պզտիկ անդամ մըն է՝ ու մեծ
բաներ կրնասի։ ահա քիչ մը կրակը ինչպէս ան-
տառները բոցի կուտայ։ Լեզուն ալ կրակ մըն 6
է՝ անիրաւութեան զարդ։ լեզուն անոնց մէջ ան-
դամներուն մէջ դրված է, որ բոլորը մարմինը
կապականէ և բնութեան շրջանը կրակով կրկա-
ռէ, ու գհեհենեան մէջը բորբոքած կերթ։ Որով 7
գազաններուն ու թռչուններուն և սողացող
կենդանիներուն՝ ու ծովի մէջ եղածներուն
բնութիւնը հնազանդած է՝ և կընդհնազանդի
մարդկային բնութեան։ բայց մարդոց լեզուն ան- 8
կը չի կրնար հնազանդեցնել՝ ան չարը ու
անկարգը՝ և մահացու թոյնով լեցուր։ Ա- 9
նով կօրհնենք Տէրը ու Հայրը, և անով կա-
նիծենք մարդիկ՝ որոնք որ Աստուծոյ նմանու-
թեանը պէս ստեղծված են։ Ան նոյն բերնէն 10
կելլան օրհնութիւն ու անէծք։ Եղբայրնե՛ր
պէտք չէ որ ասիկա ասանկ ըլլայ։ Աղբիւր 11
աղբիւր մը ան մի և նոյն բերնէն անուշ ու լեղի
կրըղնէ՞ մի։ Կարկղի է մի արդեօք Եղբայր- 12
նե՛ր որ թուզն ծառը ձէթ բերէ, կամ որթը՝
թուզ, ոչ ալ աղի գետիր անուշ ջուր կու-
տայ։ Ձեր մէջը իմաստուն ու խելացի ո՞վ 13
կայ։ թող անիկա ուրկէ վարքերովը ցուցընէ իր
գործքերը իմաստութեան հեզութեամբ։ Ա- 14
պա թէ որ նախանձու թիւն ու դաժանութիւն՝
և հակառակութիւն ունինաք սրտերնուդ մէջը,
մի պարծենա՛ք ու ճշմարտութիւնը սուտ հանէ՛ք։
Այս իմաստութիւնը վերէն ինջած չէ։ Հապա 15
երկրաւո՛ր՝ հնչաւոր՝ ու դիւական։ Ինչու որ 16
ուր տեղ հակառակութիւն ու նախանձու թիւն
կայ, հոն է անկարգութիւնը և ամեն չար բա-
ները։ Հապա վերին իմաստութիւնը՝ պիտի 17
առաջ որ սուրբ է, ու երկրորդ՝ խաղաղարար,
հեզ, դիւրահաւան, ողորմութիւնով ու բարի

պատճառով լցուն , անխոհեմ , առանց կեղ-
18 ծաւորութեան : Աստուածպաշտութեան պատճառ խա-
զաղութիւնով կրցանենք անոնց՝ որոնք որ խաղա-
ղութիւն կընեն :

Գ. Դ.

1 Ասկէց ի՞նչ պատերազմներ , և ուսկէց կռիւները ձեր մէջը . չէ՞ որ ձեր առանկ ցան-
կութիւններէն , որ ձեր անդամներուն մէջ
2 զօրացեր են : Կրցանկաք՝ ու չունիք . կըս-
պաննէք , ու կրնախանձիք՝ և չէք կրնար
յեր ո-ղջին հասնիլ . կրպատերազմիք՝ կը
կռուիք , ու չունիք . ինչու որ չէք խնդրեր .
3 կրխնդրէք՝ ու չէք առներ , ինչու որ չա-
րաչար կրխնդրէք . որ ան ձեր ցանկութիւն-
4 ներուն բանեցնէք : Շ՛նացողներ չէք մի
գիտեր՝ որ աս աշխարհիս սէրը Աստուծոյ դէմ
թշնամութիւն է . ուստի ան որ կուզէ աշխար-
հը սիրել՝ ինքզինքը Աստուծոյ թշնամի կընէ :
5 Կամ՝ թէ պարապ կըսեպէք ան որ գիրքը կըսէ , ան
նախանձութիւնը մըսայ՝ որուն մեր մէջը բնա-
6 կած հոգին կրսիրաբէր , թէ եվելի շնորհք պիտի
տայ . անոր համար կըսէ , Տէրը ամբարտաւաններ-
ուն հակառակ կրկենայ . խոնարհներուն շնորհք
7 կուտայ : Ուստի հնազանդեցէք Աստուծոյ , ու
չարախօսին հակառակ կեցէք . և անիկա ձեր մէ-
8 ջէն կրսիրաբէր : Աստուծոյ մօտեցէք , ու ան
ձեզի կրմօտենայ . սրբեցէք ձեռքերնիդ մեղաւոր-
ներ , և շիտակ ըրէք սրտերնիդ երկմիտներ :
9 Տառապանք քաշեցէք , սուգ ըրէք ու լացէք .
ձեր խնդումը սուգի դառնայ , ու ձեր ուրախու-
10 թիւնը՝ տրտմութեան : Խոնարհեցէք Տէրոջը առջև , ու ան ձեզ կրբարձրացունէ :
11 Մի՛ կրղմկիք մի՛ բամբասէք եղբայրներ . ան որ
իր եղբայրը կրբամբասէ՝ կամ իր եղբայրը կը
դատէ , օրէնքը կրբամբասէ՝ ու օրէնքը կրդա-

ան։ Հապա թէ որ օրէնքը դատես, ալ դուն
օրէնքը բնող չես՝ հապա դատաւոր։ Մէկ 12
մըն է օրէնսդիրը ու դատաւորը, որ ինքը
կարող է փրկել ու կորսընցունել. դուն ո՞վ
ես՝ որ ընկերդ կը դատես։

Հիմա կան որ կըսեն, Այսօր ու վաղը 13
երթանք ասանկ քաղաքը. անտեղը տարի մը
կենանք, ծախենք ու վաստկինք. (դուք որ 14
վաղը չէք գիտեր, ինծո՞ր բան է ձեր կեանքը.
ինչու որ շոգիի նման էք, որ քիչ մը ատեն 15
կերեւայ ու կրռնչանայ.) անոր տեղը ըսելու է
քիչ, Թէ որ Տէրը կամենայ՝ ապրինք ու ընենք
ասանկ ան բանը։ Հայց հիմայ ձեր ամ- 16
բարտաւանութեանը մէջ կը պարծենաք. բոլոր
անանկ պարծանքները չարութիւն են։ Ով 17
որ բարին գիտենայ՝ ու չընէ, ան մեղք է
անոր։

ԳԼ. Ե։

Աստի ասկէ ետև հարուստներ՝ լացէք և ող- 1
բացէք ան թշուառութիւններուն վրայ որ
ձեր վրայ պիտի գան։ Ինչու որ ատ ձեր 2
հարստութիւնը ոչնչ է, ու ձեր լաթերը ցե-
ցի կերակուր։ Ձեր արծաթը ու ոսկին ժան- 3
կոտ. և անոնց ժանկը ձեզի դէմ վկայ պիտի
ըլլայ, ու ձեր մարմինը պիտի ուտէ. կրակի
պէս անոնք նոքի օրերուն համար գուք դիզե-
ցիք։ Հիմա բանվորներուն վարձքը՝ որ ձեր 4
արտերը բանեցան, ձեր գողն են. ձեզմէ
զրկվածը կըզոռայկոր, ու հնձողներուն աղա-
չակը զօրութիւններուն Տէրոջը ականջներուն
հասաւ։ Երկրի վրայ փափուկ ապրեցաք՝ և 5
զուարճացաք. սրտերնիդ մեծցիք՝ որպէս թէ
մորթվելու օրվան համար։ Դատեցիք՝ սպան- 6
նեցիք արդարը, որ ձեզի հակառակ չէր կե-
նար։

7 Համբերող եղիք եղբայրներս՝ մինչև Տէրոջը
գալը · ահա հողագործը համբերութիւն ընե-
լով կը սպասէ՝ գետնին պատուական պտուղին,
մինչև որ կանուխ ու ուշ անձրեւը առնէ.
8 դուք ալ համբերութիւն բրէք, սրտերնիդ
հաստատ բռնեցէք · ինչու որ Տէրոջը գալը մօ-
9 է: Մի՛ հեկեկաք միմեանց դէմ եղբայրներ,
որ չի դատապարտուիք · ահա դատաւորը դուռը
10 կայներ է: Եղբայրներ՝ մարգարէները
որ անունովը խօսեցան
համբերութեան · որպէս որ Տէրոջը անունովը
11 Ահա համբերողներուն երանի կ'ուտանք · Յոբին
համբերութիւնը լսեցիք դուք, և Տէրոջը ան-
ընդ վախճանը տեսաք · որ Տէրը բազմագութ
ու ողորմած է:
12 Մանաւանդ առաջ եղբայրներս՝ երդում չը-
նէք, ոչ երկինքի վրայ՝ ոչ երկրի վրայ, ոչ
մէկ ուրիշ երդում մը · հապա ձեր այոն այո
ըլլայ, և ոչը՝ ոչ · որ չըլլայ թէ կեղծաւորու-
թեան մէջ իյնաք:
13 Չեզմէ մէկը որ նեղութիւն քաշէ՝ աղօթք
թող ընէ · մէկը որ ուրախութիւն ունենայ՝
14 սաղմոս թող երգէ: Չեզմէ մէկը որ հիւան-
դանայ՝ եկեղեցիին երէցները թող կանչէ՝ ու
անոր վրայ աղօթք ընեն, Տէրոջը անունովը ե-
15 ղուկ թող օծեն · և հաւատքով եղած աղօթքը
պիտի փրկէ հիւանդը, ու Տէրը անիկա ոտ-
կրկանէ · և թէ որ մեղք ալ գործեր է նէ՝ պիտի
16 նորվի անոր: Մեղքերնիդ մէկզմէկու խոս-
տուանեցէք, ու աղօթք բրէք մէկզմէկու վրայ
որ բժշկուիք · ինչու որ արդարներուն ա-
ղօթքը շատ զօրաւոր են օգնական ըլլալու:
17 Եղիան մեզի պէս կիրքի տակ հնչած մարդ մը
էր · ու աղօթք բրաւ, և իրեք տարի ու
18 վեց ամիս երկրի վրայ անձրեւ չեկաւ · և նորէն
աղօթք բրաւ՝ ու երկինքը անձրեւ տուաւ
և երկիրը իր պտուղը բուսցուց:

Ի՛մ եղբայրնե՛րս՝ թէ որ ձեզմէ մէկը ճշմար- 19
տութեան ճամբայէն մոլորի, ու մէկը անի-
կա դարձի բերէ նէ՝ գիտցած ըլլայ, թէ ան 20
որ մեղաւորը իր մոլորութեան ճամբայէն կը
դարձունէ՝ անոր հոգին մեռնելէն կրնայ զսկ,
ու մեղաց շատութիւնը
կրնայ ծածկել։

ՊԱՏՐԱՍ

ԵՒՐԱԹԵՍԵԱՆ

ԵՒՐՕՊԱՑԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ։

ԳԼ. Ե։

1 Պետրոս Յիսուս Քրիստոսի առաքեալ, օ-
տարականներուն որ ցիրուցան եղած էք
Պոնտացոց, Գաղատացոց, ու Կապադովկացոց,
2 և Ասիացոց, ու Բիւթանացոց մէջ, որ ընտրը-
ված էք, Հօր Աստուծոյ նախագիտութիւնովը,
Հոգւոյն սրբացունելովը՝ Յիսուս Քրիստոսի
հնազանդելովը՝ ու յէր ջրոյ էր արիւնը թափելո-
վը. շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ շատնայ։
3 Օրհնեալ է Աստուած՝ ու մեր Տէր Յիսուս
Քրիստոսին Հայրը. որ իր առատ ողորմու-
թիւնովը մեզ նորէն ծնաւ ան կենդանի յոյսին
համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յա-
4 րութիւն առնելովը, անեղծ ու անպատառ և ան-
թառամ ժառանգութեանը համար՝ որ երկինքը
5 ձեղի պահված է. որ Աստուծոյ զօրութիւնովը
պահված էք հաւատքով ան փրկութեանը հա-
մար՝ որ պատրաստված է ետքի ժամանակները
6 յայտնվելու. որ անով ուրախ պիտի ըլլաք, որ

Հիմայ քիչ մը՝ (ինչպէս բանը կրբերէ) տրտմած
էք զանազան փորձութիւններով · որ ձեր 7
հաւատքին փորձառութիւնը կորստական ոս-
կիէն աւելի պատուական է , որ կրակով փորձ-
ւած՝ կրգտնըվի գովութիւնով ու փառքով և պա-
տիւով Յիսուս Քրիստոսի յայտնըվելու առ-
նը ։ Ան որ դուք չի տեսաք՝ ու սիրեցիք · որ 8
անիկա հիմայ չէք տեսնար , բայց հաւատացիք ,
և ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խըն-
գութիւնով · ձեր հաւատքին վախճանը ընդու- 9
նելով , այսինքն հոգիներնուդ փրկութիւնը ։
Ըր ան փրկութեանը համար մարգարէները 10
փնտռեցին ու քննեցին · որոնք մարգարէացան
ձեզի ըլլալու շնորհքին համար · կրքննէին երբ 11
կամ ինսոր ատեն որ հիմացուներ իրենց մէջը եղած
Քրիստոսի Հոգին՝ որ առաջ կրվկայէր Քրիս-
տոսի չարչարվիլը , ու անկէ ետև փառաւորվիլը ։
Որոնց յայտնըվեցաւ ալ · որ չէ թէ իրենց՝ 12
հապա մեզի մատակարարեցին ան բաները , որոնք
հիմայ պատմըվեցան անոնց ձեռքովը՝ որ աւե-
տարանը քարոզեցին ձեզի Հոգւով Սրբով
որ երկինքէն խրկըվեցաւ · որ ան բաները հրե-
տանները կրցանկային գինե շուքի մը պէս տես-
նալու ։

Ուստի ձեր միտքերուն մէջքը պինդ կապած՝ 13
արթուն կեցած , կատարեալապէս սպասեցէք ան
ձեր վրայ Հանելու շնորհացը՝ Յիսուս Քրիս-
տոսի յայտնըվելու ատենը · Հնազանդ զաւկներ- 14
նու պէս · չէ թէ ձեր տգիտութեան առեներն
առջի ցանկութիւններովը վարվելով · հապա ձեզ 15
կանչող Սուրբին պէս , դուք ալ սուրբ եղէք բո-
լոր ձեր վարմունքներուն մէջ · ինչու որ գրված 16
է թէ՝ Սուրբ եղէք , քանզի ես սուրբ եմ ։ Եւ 17
թէ որ Հայր կրկոչէք անիկա՝ որ առանց աչա-
ռութեան կրդատէ ամեն մէկուն գործքին նայե-
լով , անանկ է նէ վախնալով ձեր աշխարհիս վրայ

18 պանդխտութեան ատենը անցուցէք : Գիտնալ-
որ՝ չէ թէ դուք ապականացու արծաթով կամ
ոսկիով փրկուեցաք ձեր հօրերնուդ աւանդված
19 դատարկ ճամբաներէն . հապա Քրիստոսի պատ-
ուական արիւնով՝ որպէս թէ անբիծ ու անա-
20 բասա գառինը . որ առաջուց սահմանված էր աշ-
խարհիս սկիզբէն առաջ . ու եղաւ ատենները
21 երեւցաւ ձեզի համար . որ անով Աստուծոյ
հաւատացիք , որ անիկա մեռելներէն յարուց ,
և անոր փառաւորութիւն տուաւ . որ ձեր հա-
ւատքը ու յոյսը Աստուծոյ վրայ ըլլայ :
22 Ձեր անձերը մաքրելով՝ ճշմարտութեանը հնա-
զանդելով , եղբայրսիրութեան մէջ կեղծաւո-
րութիւն չունենալով , զանացէ՛ս սրտով
23 մէկզմէկ պինդ սիրել . եղէն ծնած ըլլալով չէ՛
թէ ապականացու սերմէն , հապա անապական
նացուէն՝ Աստուծոյ կենդանի ու յաւիտենա-
24 կան խօսքովը : Վասն զի ամէն մարմին խոտ
պէս է , և մարդուն բոլոր փառաւորութիւնը
խոտի ծաղկի պէս . խոտը կրցամքի , ու ծաղիկը
25 կրթափթրփի : Բայց Տէրոջը խօսքը յաւի-
տեան կը մնայ . այսինքն ան խօսքը՝ որ ա-
ւետա-
Ն քանոջ ձեզի քարոզվեցաւ : Ուստի հանէ մէկ
դի ձգելով բոլոր չարութիւնը ու բոլոր խաբե-
ութիւնը՝ ու կեղծաւորութիւնները , և նախան-
2 ձութիւնը , ու բոլոր գէշ խօսքերը , նոր ծնած
երեխաներու պէս բանական ու անխաբէբայ
կաթին փափաքեցէք , (որ անով մեծնաք միչև
3 փրկութիւնը) թէ որ Տէրոջը անուշ ըլլալուն հա-
4 մը առիք նէ : Որուն մօտեցեր էք դուք ան կեն-
դանի վէմին , որ թէպէտ մարդիկներէն անար-
գված է , բայց Աստուծոյ առջևը ընտրված
5 ու պատուական է . դուք ալ կենդանի քարերու
պէս շինված էք հոգևոր տաճար մը , անարատ
քահանայութիւն , Յիսուս Քրիստոսի ձեռքովը
Աստուծոյ հաճոյ հոգևոր պատարագներ մատու-

ցանելու : Որովհետև գիրքին մէջն ալ կայ՝ թէ 6
Ա՛հա Միոնի մէջ վէմ մը կրդնեմ՝ ընտիր , ան-
կիւնի գլուխ պատուական . ու ան որ անոր հա-
ւատայ՝ չի պիտի ամչնայ : Ուստի ձեզի 7
հաւատացեալներուդ պատուական քար մըն է
ան . բայց անհաւատներուն՝ ան քարը՝ որուն
շինողները անարգեցին , անիկա անկիւնի գլուխ
եղաւ . և գլորցնելու քար ու գայթակղեցու- 8
նելու քար անոնց՝ որ ապստամբելով ան խօսքէն
կրգայթակղին՝ որուն ալ սահմանադրված
էին : Ա՛յց դուք մէկ ազնիւ ցեղ մըն էք . 9
թագաւորութիւն , քահանայութիւն , սուրբ
ազգ , սեպհական ժողովուրդ մը . որ ձեր առա-
քինութիւնները անոր ընծայեցիք , որ ձեզ
խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց . որ առեն 10
մը ժողովուրդ չէիք , բայց հիմայ Աստուծոյ ժո-
ղովուրդն էք . որ առանց ողորմութեան էիք , հի-
մայ ողորմութիւն գտաք :

Սիրելիներ կաղաչեմ՝ , օտարականներու ու 11
պանդուխտներու պէս մէկ դի կեցէք մարմնաւոր
ցանկութիւններէն , որ հոգիներուն դէմ կը
պատերազմին . ձեր վարքը հեթանոսներուն մէջ 12
պարկեշտ ցուցընելով , որ ինչ բանով ձեզ չա-
րագործներու պէս բամբասեցին նէ , ձեր բարի
գործքերը տեսնալով՝ փառաւորեն Աստուած
տես գալու օրը : Ընդարձակ եղէք ամէն մարդ- 13
կային ստեղծվածներու Տէրոջը համար . թէ որ
թագաւորին՝ մեծ մէկու մը պէս . թէ որ դա- 14
տաւորներու՝ որպէս թէ անոր կողմէն խրկրված-
ներու պէս չարագործներ պատժելու , ու բա-
րեգործները գովելու : Ինչու որ Աստուծոյ 15
կամքը սանկ է . որ բարեգործութիւն ընելով
անխելք մարդոց տգիտութիւնը պապանձեցնէք :
Ազատ պէս ըլլալով , և չէ թէ չէք ազատու- 16
թիւնը չարութեան ծածկոցի մը պէս ունենալ .
Տապա Աստուծոյ ծառաներու պէս : Ամենքը 17

պատուհցէք · եղբայրսիրութիւնը սիրեցէք · Աստուածմէ վախցէք , թագաւորները պատուհցէք :
18 Ծառաները ամէն բանի մէջ վախով հնազանդ ըլլան էրէնց տէրերուն , էն թէ միայն բարերարներուն ու հեզերուն , հապա խիստերուն ալ : Որ աս ալ Աստուածմէ շնորհք մըն է , թէ որ մէկը բարի միտքով անիրաւ տեղը նեղութիւններուն համբերելու ըլլայ նէ : Վասն
20 ղի ի՞նչ բարիք կըլլայ , թէ որ մեղք գործելնուդ համար տանջըվիք՝ ու համբերէք · հապա թէ որ բարիք գործելու ըլլաք , չարչարվիք ու համբերէք նէ՝ ան Աստուածմէ շնորհք մըն է :
21 Որովհետև դուք աս բանիս համար կանչըվեցաք · որ Քրիստոս ալ ձեղի համար մեռաւ , ու ձեղի օրինակ թողուց՝ որ անոր ոտացը քայլերուն
22 հետևիք · որ ինքը մեղք մը չի գործեց , ու անոր բերանը խաբէբայութիւն մը չի գտնըվեցաւ ·
23 որ կրբամբասվէր , և փոխարէնը չէր բամբասէր · կըչարչարվէր՝ ու սպառնալիք չէր ըներ · հապա ինքզինքը իրաւունք ունեցող դատաւորին կը
24 յանձնէր · որ մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց · որ մենք ան մեղքերէն ազատինք , ու արդարութեան հետըապրինք · որ իր խոցերովը մենք բժշկվեցանք :
25 Ինչու որ դուք մոլորեալ ոչխարներու պէս էիք , բայց հիմայ ձեր հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դարձաք :

Գ·Ի· Գ·

1 Ասանկ ալ կիներնիդը հնազանդ պրտի ըլլան իրենց էրիկներուն · որ թէ անոնք խօսքի հնազանդ չըլլան նէ՝ ալ առանց խօսքի շահվին
2 կիներուն վարմունքովը , տեսնալով ձեր երկիւղած պարկեշտ վարքը :
3 Որ իրենց զարդարանքը չըլլայ դրսէնից հաստատքներովը՝ կամ

զարդարված հագուստներով . հապա սրբոյն 4
մէջի ծածուկ մարդը՝ անեղծութիւնով հնազանդ
ու հանդարտ հոգիին գործը կ՚ընէր . որ
Աստուծոյ առջև շատ ազնիւ է : Ա՛ն զի ասանկ 5
առնօք ան կինիկները՝ որ իրենց յոյսը Աստուծոյ
վրայ դրած էին , անձերնին կը զարդարէին՝ ի-
րենց էրիկներուն հնազանդ ըլլալով . (ինչպէս 6
Սարրան ալ՝ որ Աբրահամին հնազանդ էր , և
անիկա իրեն տէր կ՚կանչէր . որուն որ դուք
զաւկընդն եղաք ,) բարեգործ էին , ու չէին
կասկածէր ոչ ալ մէկ երկիւղէ մը :

Աստանկ էրիկ մարդիկ ալ խոհեմութիւնով ա- 7
ռնոց հետը կենան . տակաւ ամանի պէս պատիւ ը-
նեն կնիկներուն , և որպէս թէ կենաց շնորհին
ժառանգորդներու . որ ձեր աղօթքներուն խա-
փանում չըլլայ :

Եւ ամէն բանին գլուխը , որ մէկ միտքի վրայ 8
ըլլաք , մէկ յոժարութիւնով , եղբայրասէր ,
քաղցրասիրտ , խոնարհ : Չըլլայ որ չարին տեղը 9
չար հատուցանէք . կամ բամբասանքին դէմ՝
բամբասանք . հապա անոր ներհակը՝ օրհնեցէք .
ինչու որ ասոր համար կանչըվեցաք դուք ,
որ օրհնութիւն ժառանգէք : Ա՛ն զի ան որ 10
կուզէ կեանքը սիրել՝ ու տեսնել օրեր
տեսանել , իր լեզուն թող դադրեցնէ չարու-
թենէն , ու իր պրկուքներըը խարեպայութիւն
խօսելէն . չարէն նա քաշվի՝ ու բարին ընէ . խա- 11
դաղութիւնը փնտրէ , և անոր ետևէն երթայ :
Ինչու որ Տէրոջը աչքը արդարներուն վրայ է , 12
ու իր ականջները անոց աղօթքին կ՚ըլլան . Տէ-
րոջը երեսը չարագործներուն վրայ է :
Եւ ով է ան՝ որ ձեզ պիտի չարչարէ՝ թէ որ 13
դուք բարիին ցանկացող ըլլաք : Այլ թէ ար- 14
դարութեան համար չարչարվիք ալ՝ նէ՛ երանելի
էք . և անոնց վախ տալէն մի՛ վախնաք՝ ու մի՛
տակնուվրայ ըլլաք . հապա նոյն Տէրը Քրիս- 15
տոս սրբարնուդ մէջը սուրբ պահեցէք :

Պատրաստ եղիք պատասխան տալու ամէնուն ,
որ ձեր ուսնեցած յոյսին պատճառը կըհարցունէ :
16 Բայց հեղութիւնով ու երկիւղածութիւնով
անուշ մարք ունենաք , որ ինչ բանով ձեր
վրայ վատ կըխօսին նէ՝ ամօթով մնան անոնք որ
ձեր բարի վարմունքը Քրիստոսով եղած կը
17 բամբասեն : Ինչու որ՝ ալ ադէկ է բարեգործե-
նելուն՝ թէ որ կամենան նէ՝ Աստուծոյ կամքին
պէս չարչարվիլ , քան թէ չարագործներուն :
18 Վ ասն զի Քրիստոս ալ մեղքի համար մէկ ան-
գամ՝ ձեր վրայ մեռաւ , Արդարը անարդարնե-
րուն վրայ , որ ձեզ Աստուծոյ մօտեցունէ . որ
թէպէտ մեռաւ մարմինով , բայց կենդանի է
19 Հոգիով · որ անով բանտին մէջը եղած Հոգինե-
20 րուն գնաց քարոզեց ալ · որոնք մէկ ատեն մը
ապստամբ էին , երբոր Աստուծոյ երկայնմտու-
թիւնը թող կուտար անոնց՝ Նոյի օրերը՝ երբոր
տապանը կըշինվէր · որուն մէջը քիչերը՝ այսինքն
21 ութի Հոգիի չափ չըլէին խաղըստեցան · որ ձեզ
ալ ան օրինակին պէս մկրտութիւնը պիտի ապ-
րեցունէ՝ չէ թէ մարմինին աղտը մէկդի ընելով ,
հապա բարի խղճմտանքին վկայութիւնը առ
Աստուած՝ Յիսուս Քրիստոսի յարութիւնովը ·
22 որ երկինքը գացած Աստուծոյ աջ կողմն է հրեշ-
տակները ու իշխանութիւնները և զօրութիւն-
ները իրեն հնազանդած :

ԳԼ· Դ·

1 Քրիստոս որ մեղի համար չարչարվեցաւ մար-
մինով , դուք ալ այն միտքովը զէնք առէք ·
վասն զի ան որ մարմինով կըչարչարվի՝ մեղք
2 ընելէն կըդադրի · որ ոչ ալ մարդոցը ցանկու-
թիւններուն պէս , հապա Աստուծոյ կամքին
3 պէս ապրի մնացած ատենը : Ինչու որ անցած
ժամանակը հերիք է ձեր ըսխոնած հեթանոսնե-
րուն կամքին պէս ըլլալու · որոնք որ գիճու-

թիւններով՝ ցանկութիւններով , գինեմոլու-
թիւններով՝ անառակութիւններով՝ արբեցու-
թիւններով , անօրէն կռապաշտութիւնով վար-
վեցան . որ ան անկարգ անառակութեան մէջ օ- 4
տարական եղած ձեղի չետ չեն վարվիր , ու հայ-
հոյութիւն ալ կ՚ընեն . որոնք պատասխան պիտի 5
տան անոր՝ որ ինքը պատրաստ է դատելու կեն-
դանիները ու մեռելները : Որ ասոր համար մե- 6
ռելներուն ալ խօսք տրված է , որ նէ՛ դատ-
վին մարդու կողմանէ մարմինով , բայց կենդանի
ըլլան Աստուծոյ կողմանէ հոգիով :
Ամէն բանին վախճանը մօտեցեր է . ասկէ ետև 7
խելքերնիդ գլուխերնիդ բերէք՝ ու աղօթքի մէջ
արթուն եղէք : Ամէն բանէն առաջ մէկմէկու 8
հետ սրտանց սէր ունեցէք . ինչու որ սէրը մեղ-
քերուն շատութիւնը կրծածկէ : Իրարու օտա- 9
բասիրութիւն ցուցը ըլլէք՝ առանց տրտունջ ընե-
լու : Ամէն մէկը ինչ կերպ շնորհք որ առա՝ 10
անիկա մէկզմէկու մատակարարեցէք , ինչպես
աղէկ անտեսներ Աստուծոյ կերպ կերպ շնորհք-
ներուն : Ան որ մէկը խօսի նէ՝ Աստուծոյ 11
պատգամներուն պէս խօսի . թէ որ մէկը
մատակարարութիւն ընէ նէ՝ որպես թէ Աստու-
ծոյ շնորհած զօրութենէն ընէ , որ ամէն
բանի մէջ Աստուած փառաւորվի Յիսուս
Քրիստոսի ձեռքովը , որուն փառք և զօրութիւն
յաւիտեանս . ամէն :
Սիրելիներ՝ օտար բան մը մի սեպիք ան ձեղ- 12
ի՛նչ-որ բորբոքի , որ ձեզ փորձելու համար կ՚ըլ-
լայ , որպես թէ օտար բան մը ձեզի հանդիպած .
հապա ուրախ եղէք՝ որպես թէ Քրիստոսի չար- 13
չարանքներուն հաղորդ ըլլայիք , որ անոր փառ-
քին յայտնվելու ատենն ալ ցնծութիւնով
զմայլիք : Եւ թէ որ Քրիստոսի անունին հա- 14
մար նախատիք ալ նէ՛ երանելի էք . որ փառքին
ու զօրութեան անունը՝ ու Աստուծոյ Հոգին

15 ձեր վրայ հանգչած է : Ձեզմէ մէկը չի չար-
չարվի սպանողի մը պէս կամ գողի մը պէս
կամ չարագործի մը պէս , կամ ուրիշին բանին
16 խառնվողի մը պէս . բայց թէ որ քրիստոնեայի
մը պէս պատճէնի՝ թող չամչնայ . հապա աս ա-
17 նունովը թող Աստուծոյ փառք տայ : Ինչու
որ՝ ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ տու-
նէն սկսի . և թէ որ առաջ մեզմէ հնանէ , հապա
անոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ՝ որոնք որ Աս-
18 տուծոյ աւետարանին չեն հնազանդիր : Եւ թէ
որ արդարը դժուարաւ պիտի փրկվի , հապա
ամբարիշտը ու մեղաւորը ո՞ւր պիտի գտնվին :
19 Ուստի անոնք՝ որ Աստուծոյ կամքին պէս կը
չարչարվին , իրենց հոգիները հաւատարիմ
Ստեղծողին թող յանձնեն բարիք գործելով :

Գ Ի· Ե :

1 Ուստի ալ երէցներուն կազաչեմ՝ ես ալ ա-
նոնց պէս երէց ըլլալով ու Քրիստոսի չար-
չարանացը վկայ , և յայտնվելու հանդերձեալ
2 փառքին մասնակից . Աստուծոյ հօտը որ ձեր
մէջն է արածեցէք , վերակացու ըլլալով չէ՛
թէ ակամայ՝ հապա կամաւ Աստուծոյ ուզածին
պէս . չէ՛ թէ կաշառակերծութեամբ , հապա յօ-
3 ժարութիւնով . չէ՛ թէ վիճակներուն վրայ տի-
րելով , հապա հօտին օրինակ ըլլալով . որ երե-
4 ւոյ ատեն երևցած առնը անթառամ փառ-
քին պսակը ընդունիք :
5 Նմանկ ալ երիտասարդներդ հնազանդ ըլլան
ծերերուն . ամէնքն ալ իրարու հետ խոնար-
հութիւն թող ունենան . ինչու որ Աստուած
ամբարտաւաններուն դէմ կը կենայ , խոնարհ-
6 ներուն շնորհք կուտայ : Աստուծոյ կարող
ձեռքին տակը խոնարհեցէք , որ ձեզ ժամանա-
7 կին բարձրացունէ : Ձեր ամէն հոգը անոր ձգե-
ցէք ինչու որ անոկա է որ ձեզի համար կը հո-
գայ :

Ընդունուն կեցէք, հսկեցէք, ինչու որ ձեր հա- 8
կառակորդը Սատանան գոռացող առիւծի մը
պէս կըպըտրտի ու կըփընտռէ թէ ով կրնայ
կըլլէր. որուն դէմ կեցէք հաւատքով հաս- 9
տատած. գիտնաք որ ձեր եղբայրներն ալ աշ-
խարհի մէջ նոյն չարչարանքները կրքաշեն:
Ապայց ամէն շնորհքներուն Աստուածը՝ որ ձեզ 10
իր յաւիտենական փառքին կանչեց Յիսուսի
ձեռքովը, որուն չարչարանքներուն
քիչ մը կցորդ եղաք, ինքը յեղէ ուժ տայ՝ կարո-
դութիւն տայ՝ հիմնրնիդ հաստատ ընէ:
Անոր իշխանութիւն և փառք՝ յաւիտեանս, 11
ամէն:

Միջոցանոս Հաւատարիմ եղբօր ձեռքովը՝ ինչ- 12
պէս ես կըկարծեմ, համառօտ մը ձեզի գրեցի,
մխիթարանք տալով ու աս բանիս վրայ վկայե-
լով, թէ ան ալ Աստուծոյ ճշմարիտ շնորհքն է,
որուն մէջը հաստատ կեցեր էք: Ասիկա կուտայ 13
ձեզի Ասիացիները եղած եկեղեցին որ յեղէ հետ
ընտրուած է. ու Մարկոս իմ որդիս ալ:
Ասիկա տըվէք միկրզմիկու սիրը համբուրով. 14
խաղաղութիւն ձեր ամէնուն հետ՝ որ Քրիս-
տոս Յիսուսի մէջ էք.
Ամէն:

ՊԱՏՐՈՍ

ԸՈՒՔՆԸԼԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԸՆ

ԹՈՒՂԹԸ։

ԳԼ. Ա։

1 Շմաւոն Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի ծառայ
եւ առաքեալ. ձեզի՝ որ մեր հետը նոյն պատ-
ուական հաւատքին հասաք մեր Աստուծոյ ու
Յիսուս Քրիստոս Փրկիչին արդարութիւնովը.
2 շնորհք եւ խաղաղութիւն ձեր վրայ եվլնայ՝
Աստուծոյ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի գի-
տութիւնովը։
3 Ինչպէս որ իր Աստուածային կարողութիւ-
նովը բոլոր կենաց և աստուածպաշտութեան
վերաբերեալ բանները մեզի տուաւ անոր գիտու-
թիւնովը՝ որ մեզ իր փառքին ու վայելմանը
4 հրաւիրեց. որ անով մեծ ու պատուական խոստ-
մունքներ տրուած են մեզի, որ անոնցմով Աստ-
ուածային բնութիւնը հաղորդ ըլլանք հաւատ-
քով՝ աշխարհի ցանկութիւններէն ու ապակա-
5 նութիւններէն փախչելով։ Եւ ասոր համար դուք
բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հաւատքովը առա-
քինութիւն եվլցուցէք, ու առաքինութիւնով

գիտութիւն . և գիտութիւնով ժուժկալութիւն , 6
ու ժուժկալութիւնով համբերութիւն , և համ-
բերութիւնով աստուածպաշտութիւն . ու աստ- 7
ուածպաշտութիւնով եղբայրսիրութիւն , և եղ-
բայրսիրութիւնով սէր : Այս բաներըս վրա- 8
նիդ ունենալով , ու ասոնց մէջը միշտ ըլլալով ,
պարապ ու անպտուղ չեն ըներ ձեզ անանկ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի ճանչնալուն մէջը :
Այլ որու քով որ աս բաներս չի կայ , կոյր է և 9
կարճատես . որ մոռցեր է իր առջի մեղքերէն
մաքրուիլը : Ասոր համար եղբայրներ էվելըք 10
ջանք ըրէք՝ որ բարի գործքերով ձեր կոչումը
ու ընտրութիւնը հաստատ պահէք . աս որ ընէք՝
բնաւ յանցանք մը չէք գործեր . ինչու որ ասանկ 11
ձեզի առատապէս մէկ մուտք մը պիտի շնորհվի
մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտե-
նական թագաւորութեանը :
Ուստի ես միշտ պատրաստ եմ աս բաներուս 12
վրայովը մոռնիդ ձգելու . Ըէ՛ և էվելըքը գի-
նաք՝ և հաստատուն ըլլաք ներկայ ճշմարտու-
թեանը վրայ : Ինչու որ իրաւունք կրսեպեմ , 13
որ քանի աս մարմինիս մէջն եմ՝ մրտելնիդ ձգե-
լով ձեզ արթընցունեմ : Վխտեմ որ ես շու- 14
տով աս մարմինս պիտի մերկանամ , ինչպէս որ
մեր Տէր Յիսուս Քրիստոսը ցուցուց ինձի :
Ուստի կրջանամ կարտորամ միշտ ձեզ յորդո- 15
րելու , որ իմ աչխարհէ ելլալէս ետքը աս բա-
ները միտք բերէք : Ինչու որ չէ թէ մենք սուտ- 16
ուժուտ հնարած բաներու ետևէ երթալով՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը ու
գալուստը ձեզի ցուցցինք . հապա բուն մեր
աչքովը տեսնալով անոր մեծութիւնը : Վասն 17
զի ինքը Հօր Աստուծմէն փառք ու պատիւ ա-
ուաւ , ան մեծ վայելչութենան փառքէն անանկ
ձայն մը գալով , թէ Ասիկա է իմ սիրական որ-
դի՛ս՝ որ իրեն հաճեր եմ : Եւ աս երկինքէն 18

եկած ձայնը մենք լսեցինք , որ անոր հետ էինք
19 ան սուրբ լեռանը վրայ : Եւ ևվելի հաստա-
տուն ունինք մարգարէական խօսքերն ալ . ու
աղէկ կընէք թէ որ անոր տաք խնդրելիդ , որպէս
թէ մէկ ճրագի մը՝ որ խաւարային տեղը լոյս
կուտայ , մինչև ցորեկը լուսաւորի ու արուսեա-
20 կը սրտերնուդ մէջը ծագէ : Նայց առաջ այս
գիտնաք , որ ամէն մարգարէութիւն իր գրված-
21 քին մեկնութիւնը չունի : Ընչու որ չէ թէ
բնաւ մարգարէութիւնը մարդոց կամքին պէս
տրվեցաւ . հապա Սուրբ Հոգիէն շարժըված
Աստուծմէ եղած մարդիկները խօսեցան :

ԳԼ. Բ :

1 Սուտ մարգարէներ ալ կըլլային ան ժողովրդո-
ցը մէջը , ինչպէս որ հիմայ ալ ձեր մէջը սուտ
վարդապետներ պիտի ըլլան . որ գաղտուկ պի-
տի բերեն կորըստական հերձուածողութիւններ
խօթեն . ու զերենք ծախող առնող Տէրը ուրա-
նալով իրենց վրայ կըբերեն չուտով հասնելու-
2 կորուստը . և շատերն ալ անոնց անառակու-
թեանը հետևէ ինկած պիտի երթան . որ անոր
համար ճշմարտութեան ճամբան պիտի արհա-
3 մարհըվի . և ագահութիւնով մտքէ հնարած
խօսքերով ձեզ դերի պիտի ընեն . որոնց դա-
տաստութիւնը բնաւ դատարկ չըլլար , ու
անոնց կորուստը չի մրափեր :
4 . Վասն զի թէ որ Աստուած յանցանք գործող
հրեշտակներուն չի խնայեց , հապա խաւար կա-
պերով տարտարոսը ձգած դատաստանի պահել
5 տուաւ . ու առջի աշխարհին ալ չի խնայեց . միայն
թէ Նոյը ութերորդ անձը՝ արդարութիւնը քա-
րոզողը պահեց ջրհեղեղին , որ ամբարիշտներուն
6 աշխարհին վրայ բերվեցաւ . և Սողոմայիներուն
ու Գոմորացիներուն քաղաքները մոխիր դար-
ձունելով դատեց , հետքն ամբարշտութիւն ընե-

լու մարդոցը օրինակ ընելով անոնք. և արդար 7
Դ ովսէ՝ որ ձանձրացեր էր անոնց անկարգ ամ-
բիծլի վարմունքներէն, խալըսեց. (ինչու որ ան 8
արդարը անոնց մէջը կենալով՝ աչքովը տեսնա-
լով ու ականջովը լսելով, օրէ օր իր մաքուր
հոգին կը տանջվէր անոնց անօրէն վարմունքովը.)
Տէրը գիտէ աստուածապաշտները փորձութենէ 9
խալըսելը, և անօրէնները տանջանքի համար
դատաստանին օրման պահելը:
Մ՝անաւանդ անոնք որ մարմնոյ պղծութի- 10
նով լեցուն ցանկութիւններուն ետևէ կերթան,
տէրութիւնը կանարգեն, դիմադարձ, յան-
գուգն, չեն վախնար փառաւորներուն դէմ
հայհոյանք ընել: Երբոր հրեշտակները՝ որ ա- 11
նոնցմէ շատ մեծ են զօրութիւնով ու կարողու-
թիւնով, հայհոյութեան դատապարտութիւնը
Տէրոջմէն վրանին չեն բերեր: Բայց ասոնք ան- 12
խօս անասուններու պէս (որ բնականաբար աւերը-
ւելու ու ապականելու համար [illegible]
գիտցած բաներնուն դէմ կը հայհոյեն, և իրենց
ապականութիւնովը պիտի ապականին, անի- 13
րաւութեան վարձքերովը տանջվելով. որ օր-
վան չար ցանկութիւնը երջանկութիւն կըսե-
պեն. ադտոտ, արատաւոր, իրենց խաբեբայու-
թիւններով փափկացած, ձեր հետ կերուխումի
ընկեր ըլլալով: Պոռնիկներու նման աչք ու- 14
նին, որ մեղքէ չեն դադրիր. անհաստատներուն
միտքը կըխաբեն. որոնք ագահու թեան սրտեր
են սիրտերնին, անիծեալ զաւակներ: Շի- 15
տակ ճամբան ձգելով մոլորեցան. Խէոդրեան
Խաղաամին ճամբուն ետևէն երթալով՝ անի-
րաւութեան վարձքերը սիրեցին. որ իր անօրէ- 16
նութեանը յանդիմանող եղաւ. անխօս էշը,
մարդկային ձայնով խօսելովը՝ մարգարէին ա-
նօրէնութիւնը արգիլեց: Այսանկները ջուր չեն 17
նեցող աղբիւրներ են, ու փոթորիկէ չարժըված

ամպեր · որ իրենց համար ան թանձր մուժը
18 պահված է յաւիտեան ։ Խոշոր խոշոր ունայ-
նութեան խօսքեր ընդով գիճութիւններով՝
մարմինին անառակ ցանկութիւններովը կըխա-
բեն անոնք որ իրաւունէ կրփախչին անոնցմէ՝
19 որ մոլորութեան մէջ կըպարտրտին · անոնց ազա-
տութիւն կըխոստանան , և իրենք ապականու-
թեան ծառաներ են · վասն զի ո՛ր բանով որ
մէկը յաղթըվի՝ ան բանին ինքը ծառայ կըլլայ ։
20 Ինչու որ եթէ աշխարհիս պղծութիւններէն
ետ կեցած ենք Աստ. Տէր ու Փրկիչ Յիսուս
Քրիստոսը ճանչնալով , և նորէն ան բաներուն
հետը շաղկըպած փաթթըվին նէ՝ անոնց վերջը
21 առջինէն գէշ կըլլայ ։ Ինչու որ աղէկ էր ա-
նոնց՝ որ բնաւ արդարութեան ճամբան ճանչցած
չըլլային , քան թէ ճանչցան՝ ու ետ կեցան ան
սուրբ պատուիրանէն՝ որ իրենց տրվեցաւ ։
22 Անոնց յարմար կուգայ ան ճշմարիտ խնաստուն
առակը , թէ՝ Շունը նորէն իր փսխածին
կըդառնայ , ու լըւացված խոզը ցեխին մէջը կը
թաւալըլըվի ։

Գ Ի · Գ ։

1 Սիրելիներ՝ աս երկրորդ թուղթը ձեղի կրգը-
րեմ · որով ձեր հաստատ միտքը կարթընա-
2 ցունեմ յիշելու · որ միտքերնիդ բերէք սուրբ
մարգարէներէն ու ձեր առաքեալներէն առա-
ջուց ըսված խօսքերը՝ Տէրոջը ու Փրկիչին
3 պատուէրները ։ Նայց առաջ աս գիտնաք , որ
նաքի օրերը արհամարհողներ և ծաղր ընողներ
պիտի գան , որ իրենց ցանկութիւններովը պիտի
4 վարվին · և պիտի ըսեն · Ո՞ւր է անոր գալուն
խոստմունքը · վասն զի քանի որ հայրերը
քնացան , ամէն բան անանկ կայ կրմնայ ստեղծ-
5 ուածներուն սկիզբէն հետէ ։ Ու անոնք (որ
իրենց ուզածը աս է) ան բանը մոռցեր են , թէ

երկինքը առաջուց եղաւ . ու երկիրը ջուրերէն ,
ջուրերուն ալ Հաստատ կեցեր են Աստուծոյ խօս- 6
քովը . ուստի աւջի աշխարհը ջրհեղեղով ապա-
կանած կորսըվկեցաւ . և հիմակուան երկինքը ու 7
երկիրը նոյն խօսքովը պահված են . մինչև դա-
տաստանին օրը կրակի Համար պահված , ու ամ-
բարիշտ մարդոցը կորսըվկուելուն : Եւ ասիկա ալ 8
ձեզմէ ծածուկ չըլլայ սիրելիներ . որ Տէրոջը մէկ
օրը հազար տարուան պէս է , ու հազար տարին
մէկ օրուան պէս : Տէրը չի ուշացուներ իր խոստ- 9
մունքը . ինտոր ոմանք ուշ կըսեպեն , հապա
ձեզի երկայնամիտ կըլլայ . ինչու որ չուզեր որ
մէկը կորսըվի , հապա որ ամէնը ապաշխարանքի
գան : Միայն թէ Տէրոջը օրը գողի պէս կու- 10
գայ . որ անոնց երկինքը ահռելի կերպով
պիտի անցնի , ու տարրքները կրակով էրված
պիտի Հալին , երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ
անոր մէջը կրգտնըվին նէ : Եւ աս ամէն բանե- 11
րը սասնկ որ պիտի քակվին՝ ձեզի ինչպես պէտք
է որ գտնըվիք . միայն թէ սուրբ ու աստուածա-
պաշտ վարքով՝ սպասել , և ջանք ընել Հասնե- 12
լու Տէրոջը օրվանը գալուն . որ անոնց եր-
կինքը կրակով էրված պիտի քակվի , ու տարրք-
ները բռընկըված պիտի Հալին : Նոյն նոր եր- 13
կինքի մը ու նոր երկիրի մը էր խոստմունքին
պես կրնայինք կրսպասենք , ուր տեղ որ արդա-
րութիւն կըբնակի :
Ուստի սիրելիներ ասոնց սպասելով ջանացէք , 14
որ ան ձեզ անբիծ ու անարատ գտնայ խաղաղու-
թիւնով . և Տէրոջը երկայնամտութիւնը փրկու- 15
թիւն սեպեցէք . ինչպես որ մեր սիրելի եղբայրը
Պօղոս ալ Աստուծմէ իրեն տրված իմաստու-
թիւնովը գրեց ձեզի . ինչպէս որ ամէն թուղ- 16
թերուն մէջն ալ աս բաներուն Համար կրխօսի .
որոնց մէջ քանի մը դժուարիմաց խօսքեր կրգըտ-
նըվին , որ զանոնք տգէտները ու խախուտները

ծուռ կողմը կըզարձուն են, ինտոր բոլոր գիր-
քերն ալ՝ ինքըզինքներնուն կորըստեանը համար։
17 Ընանկ է նէ դուք սիրելիներ՝ առաջուց գիտ-
ցողներու պէս զգոյշ եղէք, որ չըլլայ թէ անա-
ռակ մոլորու թիւնով պըլըշտըկուած՝ ասս հաստա-
18 տուԹենէն իյնաք։ Ընճնցէք մեր Տէր և Փրկիչ
Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտուԹիւ-
նովը. անոր փառք հիմայ ալ, ու մինչև
յաւիտենական օրն ալ։
Ամէն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ը՛Ր Ը՛Ր Ե՛Ր Ե՛Ր Ի՛Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆԵՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ։

ԳԼ՛ Ը։

Կենաց Խանին վըայով՝ որ սկիզբէն էր՝ որուն 1
վըայ լսեցինք · որ զինքը աչքովնիս ալ տե-
սանք · որուն նայեցանք , ու մեր ձեռքերը շօշա-
փեցին · (և կեանքը յայտնըվեցաւ , ու տեսանք · 2
և կըվկայենք , ու ձեզի կըպատմենք ան յաւի-
տենական կեանքին վըայ , որ Հօրը քովն էր՝ ու
մեզի երեւցաւ ·) ան որ տեսանք ու լսեցինք՝ ձեզի 3
ալ կըպատմենք , որ դուք ալ մեր հետը հաղոր-
դութիւն ունենաք · և մեր հաղորդութիւնը
Հօրը հետ ըլլայ՝ ու իր Որդւոյն Յիսուս Քրիս-
տոսի հետ : Եւ ձեզի աս կըգրենք , որ ձեր ու- 4
րախութիւնը կատարեալ ըլլայ :

Եւ ասիկա է ան խոստումնը որ իրմէն լսեցինք՝ 5
ու ձեզի կըպատմենք · որ Աստուած լոյս է , ու ա-
նոր մէջ բնաւ խաւար չի կայ : Թէ որ ըսենք որ՝ 6
Անոր հետը հաղորդութիւն ունինք , ու խաւարի
մէջ պըտրտինք , սուտ կըղուցենք՝ և ճշմար-
տութիւնը չենք ըներ : Հապա թէ որ լոյսի 7

մէջ պատրաստ, ինչպէս անիկա լոյսի մէջ է, մեկտեղու հետ հաղորդութիւն կունենանք. ու
8 անոր Որդւոյն Յիսուսի արիւնը մեզ ամէն մեղքերէն կը սրբէ։ Թէ որ ըսենք՝ Թէ Մենք
մեղք մը չունինք, ինքզինքնիս կը խաբենք,
9 ու մեր մէջը ճշմարտութիւն չի կայ։ Հապա Թէ որ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ
ու արդար է անիկա մեր մեղքերը թող տալու,
10 և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու։ Եւ Թէ որ ըսենք՝ Թէ Մեղք մը չգրինք, սուտղուց
կրնենք անիկա, ու անոր խօսքը մեր մէջը
չէ։

ԳԼ. Ե։

1 Իմ որդիներս՝ աս ձեզի կը գրեմ որ մեղք չի գործէք. և Թէ որ մէկը մեղք գործելու
Ելլայ, Հօտուծոյ քով Խարնիսոս ունինք Յիսուս
2 Քրիստոս արդարը ու անարատը. և անիկա ճեր մեղքերուն քաւութիւն է. և չէ Թէ միայն
մերիններուն, հապա բոլոր աշխարհի։
3 Ու ասով գիտենք՝ որ անիկա ճանչցանք, Թէ որ
4 անոր պատուիրանքները պահենք։ Ան որ կըսէ Թէ Ես անիկա ճանչցայ, ու անոր պատուիրանքներուր չի պահէ նէ՝ սուտ է, և անոր մէջը ճշմար-
5 տութիւն չի կայ։ Հայց ան որ անոր խօսքը կրպահէ՝ իրաւցնէ անոր մէջը կատարեալ է Հօտուծոյ սէրը. ասով կրճանչնանք՝ որ անոր
6 մէջն ենք։ Ան որ կրսէ Ընդ անոր մէջը կրընակի, անանկ պէտք է երթայ՝ ինքնր որ ան գնաց։
7 Սիրելիներ՝ չէ Թէ մէկ նոր պատուիրանք մը ձեզի կը գրեմ, հապա ան հին պատուիրանքը
որ առաջուց ունեցիք. և հին պատուիրանքը ան
8 խօսքն է որ դուք լսեցիք։ Կարձեալ նոր պատուիրան կը գրեմ ձեզի, ան որ ճշմարիտ է
անոր մէջը ու ձեր մէջը. ինչու որ խաւարը անցաւ, ու ճշմարիտ լոյսը հիմայ կերևակոր։

Ան որ կըսէ թէ լոյսին մէջն է , ու իր եղբայրը 9
կատէ , սուտ է , և անիկա տակաւին խաւարին
մէջն է ։ Ան որ իր եղբայրը կըսիրէ , լոյսի մէջ 10
կըբնակի՝ ու անոր մէջը գայթակղութիւն չի կայ ։
Բայց ան որ իր եղբայրը կատէ՝ խաւարի մէջ է , 11
ու խաւարի մէջ կըպտրտի , և չի գիտեր ուր
կերթայ . ինչու որ խաւարը անոր աչքը կուրցու-
ցեր է ։ Կըգրեմ ձեզի որդեակներ , ինչու որ ձեր 12
մեղքերը ձեզի թողուած են անուն անունին հա-
մար ։ Կըգրեմ ձեզի հայրեր , որ դուք ճանչ- 13
ցաք անիկա որ սկիզբէն է . կըգրեմ ձեզի երի-
տասարդներ , որ դուք չարին յաղթեցիք ։
Կըգրեցի ձեզի տղաքներ , որ դուք ճանչցաք Հայ- 14
րը . գրեցի ձեզի հայրեր , որ դուք ճանչ-
ցաք անիկա որ սկիզբէն է . գրեցի ձեզի երի-
տասարդներ , որ դուք ուժով էք , և Աստու-
ծոյ խօսքը ձեր մէջը կըբնակի . ու չա-
րին յաղթեցիք ։ Մի՛ սիրէք աշխարհս , ոչ 15
ալ ան որ աշխարհիս մէջ է ։ Եթէ որ մէկը աչ- 16
խարհը սիրէ , անոր մէջը Հօրը սէրը չի կայ .
ինչու որ ան ամէն բաները որ աշխարհի մէջ է՝
մարմնոյ ցանկութիւն է , ու աչքի ցանկութիւն է ,
և աս կեանքիս հպարտութիւնը . որ ան Հօրմէն
չէ , հապա աս աշխարհէս է ։ Աշխարհս ալ 17
կանցնի՝ անոր ցանկութիւնն ալ . բայց ան որ
Աստուծոյ կամքը կընէ՝ յաւիտեան կըմնայ ։
Զաւակներս՝ վերջին ժամանակն է . ու ինչ- 18
պէս լսեցիք՝ որ Հակառ պիտի գայ , և հիմակուց
ալ շատ հակառներ եկեր են , որ անով կրնանք ի-
մանալ թէ վերջին ժամանակ է ։ Անոնք 19
անոնք , բայց մեզմէ չէին . ինչու որ եթէ մեզմէ
ըլլային՝ ուրեմն մեր քովը կրմնային . հապա Ե-
ղան որ յայտնի ըլլայ՝ թէ անոնք ամէնը մեզ-
մէ չէին ։ Բայց դուք օծութիւն ունիք Սուր- 20
բէն , ու ամէն բան գիտէք ։ Չի գրեցի ձեզի՝ որ 21
ճշմարտութիւնը չէք գիտեր , հապա որ գիտէք

անիկա , ու նաև որ բոլոր ստութիւնը ճշմար-
22 տութենէ չէ : Ո՞վ է սուտ՝ եթէ ոչ՝ ան որ կու-
րանայ թէ Յիսուսը Քրիստոս չէ . անիկա է
բուն Հակառակորդը որ կուրանայ Հայրը ու Որդին :
23 Ամէն ոք որ կուրանայ Որդին , անիկա չընդու-
նիր Հայրն ալ . բայց ան որ կը խոստովանի Որ-
24 դին , անիկա Հայրն ալ կընդունի : Ձեր որ
դուք սկիզբէն լսեցիք , ձեր մէջը թող բնակի .
որ եթէ ան սկիզբէն լսածնիդ ձեր մէջը բնակի
նէ՝ դուք ալ Որդիին ու Հօրը մէջը պիտի բնա-
25 կիք : Եւ ասիկա է ան խոստումը որ ինքը
մեզի խոստացաւ , այսինքն յաւիտենական կեան-
26 քը : Ասիկա ձեզի գրեցի որ մեզ ձեզ չի մոլոր-
27 ցունէ : Եւ ան օծումը որ դուք իրմէն ըն-
դունեցիք , ձեր մէջը մնայ , ու պէտք չէ որ մեզ
ձեզի սորվեցնէ . հապա ինչպէս որ անոր օ-
ծումը ձեզի կսորվեցնէ ամէն բանի վրա-
յով , և ճշմարիտ է ու սուտ չէ , և ինչպէս որ
անիկա ձեզի սորվեցուց , անոր մէջը կեցէք :
28 Ու հիմայ որդեակներս՝ անոր մէջ կեցէք . որ
երբ յայտնըվելու ըլլայ՝ վստահութիւն
ունենանք , ու անկէց չամչնանք իր գալու ա-
29 տեն : Ա՛ն զի թէ որ գիտէք թէ անիկա
արդար է , կիմանաք՝ թէ ամէն ոք որ արդարու-
Գ թիւն կգործէ , անկէց ծնած է : Տեսէք՝ Հայ-
րը ինծի սէր շնորհեց մեզի , որ մենք Աստուծոյ
որդիք ըսվինք . ասոր համար աշխարհ մեզ չի
ճանչնար , որովհետև անիկա չի ճանչցաւ :
2 Սիրելիներ՝ հիմայ մենք Աստուծոյ որդիքն ենք ,
և տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք .
գիտենք որ երբ անիկա յայտնըվի նէ՝ անոր պէս
պիտի ըլլանք . վասն զի անիկա պիտի տեսնանք՝
ինչպէս որ է նէ :
3 Եւ ամէն ոք որ ասոր յոյսը իր անձին մէջը ու-
նի՝ ինքզինքը կըմաքրէ , ինչպէս որ անիկա մա-
4 քուր է : Ամէն ոք որ մեղք կգործէ՝ անիկա

օրէնքի դէմ՝ ալ կ՚ընէ , ու բուն ինքն մեղքը օ-
րէնքին դէմ է : Եւ գիտենք որ անիկա անոր 5
համար յայտնվեցաւ , որ Ղը մեղքերը վեր-
ցունէ , ու իր մէջը մեղք չի կայ : Ա՚մէն ով որ 6
անոր վրայ Հաստատված է՝ մեղք չի գործեր . և
ամէն ով որ մեղք կը գործէ՝ չի տեսաւ անիկա , ու
չի ճանչցաւ անիկա : Տղաքներ՝ մէկը ձեզ չի խա- 7
բէ . ան որ արդարութիւն կը գործէ՝ արդար է ,
ինչպէս որ Ա՚նիկա արդար է : Եւ ան որ մեղք 8
կը գործէ՝ Սատանայէն է . ինչու որ Սատանան
սկիզբէն հետէ կը մեղանչէ . ասոր համար Ա՚ստու-
ծոյ Որդին յայտնվեցաւ , որ Սատանային գոր-
ծը քակէ : Ա՚մէն ով որ Ա՚ստուծմէ ծնած է՝ 9
մեղք չընէր . ինչու որ անոր սերմը իր մէջը կը
մնայ , ու չի կրնար մեղք գործել . պատճառն
որ Ա՚ստուծմէ ծնած է : Ա՚սով յայտնի են մէ- 10
կըզմէկէ Ա՚ստուծոյ որդիքը՝ ու Սատանայի որդիքը :
Ա՚մէն ով որ արդարութիւն չի գործեր՝ անի-
կա Ա՚ստուծմէ չէ . և ան ալ որ իր եղբայրը
չի՛ սիրեր : Ինչու որ սա ան պատգիրքն է՝ 11
որ գուք սկիզբէն լսեցիք , որ մէկըզմէկ սիրենք :
Այլ էնին պէս չէ՝ որ ինքը չարէն էր , ու իր եղ- 12
բայրը սպաննեց . և ինչու համար անիկա սպաննեց ,
անոր համար որ իր գործքերը չար էին , ու եղբօ-
րը՝ բարի : Եւ մի՛ զարմանաք եղբայրներ՝ թէ 13
որ աշխարհ ձեզ ատէ : Ա՚նենք գիտենք որ մա- 14
հէն կեանքի փոխվեցանք . ինչու որ եղբայրները
կը սիրենք . բայց ան որ չի սիրեր՝ մահին մէջը
կը մնայ : Ա՚մէն ով որ իր եղբայրը կատէ՝ մար- 15
դասպան է . ու գիտէք որ ամէն մարդասպան իր
մէջը յաւիտենական կեանք հաստատված չունի :
Ա՚սով գիտցանք Ա՚ստուծոյ սէրը . որ անիկա իր 16
անձը մեր վրայ դրաւ . մենք ալ մեր եղբայրնե-
րուն համար անձերնիս պարտաւոր ենք դնել :
Ա՚ն որ աս աշխարհիս բարիքը ունի , և իր եղ- 17
բայրը բանով մը կարօտ կըտեսնայ՝ ու իր գութը

անկէց կը գոցէ, ինծի՛ Աստուծոյ սէրը անոր մէջը
18 բնակած կը լլայ: Մրդեակներս՝ չե՛ք թէ խօս-
քով ու լեզուով սիրենք, հապա գործքով ու
ճշմարտութեամբ:
19 Եւ ասով ճանչցուինք թէ ճշմարտութենէն
ենք մի. ու մեր սրտերնուս ինչ ըլլալը իր
20 առջեւը կը ցուցընենք: Թէ որ մեր սրտերը
մեզ մեղադրեն նէ՝ Աստուած մեր սիրտերէն
21 մեծ է և ամէն բան գիտէ: Սիրելիներ՝ թէ որ
մեր սրտերը մեզ չի մեղադրեն, համարձակու-
22 թիւն կունենանք դէպի Աստուած. և ինչ որ
ուզենք՝ կառնենք անկէց. ինչու որ իր պատ-
ուիրանքները կը պահենք, ու իր առջեւն հա-
23 ճոյ եղած բաները կընենք: Եւ ասիկա է ա-
նոր պատուիրանքը, որ իր Որդւոյն Յիսուս
Քրիստոսի անունին հաւատանք՝ ու մեկզմեկ
սիրենք, ինչպէս որ մեզի պատուէր տուաւ:
24 Եւ ան որ անոր պատուիրանքները կը պահէ՝ ա-
նոր մէջը հաստատած կը լլայ. ու անիկա ալ ա-
սոր մէջ. և ասկից գիտենք որ մեր մէջը կը բնա-
կի՝ այն Հոգիէն որ մեզի տուաւ:

ԳԼ. Գ:

1 Սիրելիներ՝ ամէն հոգիի մի՛ հաւատաք. հապա
հոգիները փորձեցէք թէ Աստուծմէ են մի.
ինչու որ աշխարհիս վրայ շատ սուտ մարգարէ-
2 ներ ելած են: Ասով մենք ասով կը ճանչնանք
Աստուծոյ Հոգին. ամէն հոգի որ Յիսուս
Քրիստոս մարմինով եկած կը խոստովանի՝ ա-
3 նիկա Աստուծմէն է. և ամէն հոգի որ Յի-
սուս Քրիստոս մարմինով եկած չի խոս-
տովանիր, անիկա Աստուծմէ չէ. ու ասիկա
Անտիքրիստոսին է, որուն համար լսեցիք թէ պիտի
գայ. ու հիմակուընէ ալ աշխարհիս մէջն է:
4 Ասոր Աստուծմէ էք տղաքեակներ, ու անոնց
յաղթեցիք. ինչու որ մեծ է անիկա որ ձեր մէջն

է, քան անիկա որ աշխարհիս մէջն է։ Անոնք 5
աշխարհէ են. անոր համար աշխարհի վրայ կը
խօսին, և աշխարհ անոնց կը լսէ։ Մենք Աս- 6
տուծմէ ենք, ան որ Աստուած կը ճանչնայ՝ մեզի
կը լսէ. ու ան որ Աստուծմէ չէ՝ մեզի չի լսեր.
ասով կը ճանչնանք ճշմարտութեան Հոգին ու
խաբէութեան Հոգին։

Սիրելիներ՝ մեկզմեկ սիրենք. ինչու որ սէրը 7
Աստուծմէն է. ու ամէն ոք որ կը սիրէ Աստուծ-
մէ ծնած է, ու կը ճանչնայ Աստուած։ Եւ ան 8
որ չի սիրեր՝ Աստուած չի ճանչնար. ինչու որ
Աստուած սէր է։ Եւ նաև աս բանին մէջ Աս- 9
տուծոյ սէրը մեր վրայ երևցաւ, որ Աստուած իր
միածին Որդին աշխարհ խրկեց, որ անով կեն-
դանի ըլլանք։ Աս բանին մէջն է սէրը. որ չէ 10
թէ մենք Աստուած սիրեցինք, հապա որ անիկա
մեզ սիրեց, ու իր Որդին խրկեց մեր մեղացը
քաւութեան համար։ Սիրելիներ՝ թէ որ Աս- 11
ուած մեզ ասանկ սիրեց, մենք ալ կրպար-
տաւորինք մեկզմեկ սիրել։ Ոևէր բնաւ Աս- 12
ուած տեսած չէ. թէ որ մեկզմեկ սիրենք՝
Աստուած մեր մէջը կը բնակի, ու անոր սէրը մեր
մէջը կատարեալ է։ Ասով գիտենք որ մենք 13
անոր մէջ բնակած ենք, ու ան մեր մէջը՝ որ իր
Հոգիէն մեզի տուաւ։ Եւ մենք տեսանք ու կը վը- 14
կայենք՝ որ Հայր իր Որդին խրկեց աշխարհի
Փրկիչը ըլլալու։ Ով որ կը խոստովանի թէ 15
Յիսուսը Որդի Աստուծոյ է, Աստուած անոր
մէջը կը բնակի ու ան Աստուծոյ մէջը։ Եւ մենք 16
հաւատացինք ու ճանչցանք Աստուծոյ սէրը՝ որ
մեր վրայ ունի. Աստուած սէր է. և ան որ սիրոյ
մէջ կը կենայ՝ Աստուծոյ մէջ բնակած է, ու
Աստուած անոր մէջը կը բնակի։ Աս բանին մէջ 17
անոր սէրը մեր վրայ կատարեալ է, որ Համար-
ձակութիւն ունինք դատաստանին օրը. ինչու որ
ինքը ինչպէս է նէ՝ մենք ալ անանկ ենք աս աշ-

18 խաւարի՛ս մէջ : Սիրոյ մէջը վախ չի կայ , հապա կատարեալ սէրը վախը մէկ դի կընէ . ինչու որ վախը տանջանքին տակը է . ուստի ան որ կը վախ-
19 նայ՝ սիրոյ մէջ կատարեալ չէ : Մենք Աստուած սիրենք . ինչու որ առաջ անիկա մեզ սի-
20 րեց : Թէ որ մէկը ըսուի Թէ ես Աստուած կըսիրեմ՝ ու իր եղբայրը ատէ՝ անիկա սուտ է . ան որ իր եղբայրը չի սիրեր որ կըտեսնայ , Աստուած որ չի տեսնար՝ ինտո՞ր կրնայ սիրել :
21 Եւ ասիկա պատուէրը անկէց ունինք , Թէ ան որ Աստուած կըսիրէ՝ անիկա իր եղբայրն ալ Թող սիրէ :

ԳԼ. Ե :

1 Ա՛մէն ով որ կըհաւատայ Թէ Յիսուս Քրիստոս է , Աստուծմէ ծնած է . և ամէն ով որ ծնողը կըսիրէ , անկէց ծնածն ալ կըսիրէ :
2 Այսով կրճանչնանք որ Աստուծոյ Որդին կըսիրենք , երբոր Աստուած սիրենք՝ ու անոր պատ-
3 ուիրանքները ընենք : Ինչու որ ասիկա է Աստուծոյ սէրը՝ որ իր պատուիրանքները պահենք . և անոր պատուիրանքները ծանր բան մը
4 չեն : Ինչու որ ան ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ աշխարհին կրյաղթէ . և ասիկա է յաղթութիւնը՝ որ աշխարհին կըյաղթէ , այսինքն մեր
5 հաւատքը : Եւ ո՞վ է որ աշխարհին յաղթէ , Թէ չէ անիկա՝ որ կըհաւատայ Թէ Յիսուս Որդի Աստուծոյ է :
6 Ա՛ս է՝ որ եկաւ ջուրով ու հոգւով և արիւնով այսինքն Յիսուս Քրիստոս . չէ Թէ միայն ջրով , հապա արիւնով ու ջուրով ալ , և Հոգին է որ կըվկայէ . ինչու որ Հոգին ճշմարտութիւն է :
7 Վ՛ասն զի իրեք են որ երկինքի մէջ կըվկայեն , Հայր՝ Խօսք՝ ու Հոգի Սուրբ . և ասոնք իրեքը
8 մէկ են : Ու իրեք են որ երկրի վրայ կըվկայեն , Հոգին՝ ջուրը ու արիւնը . և իրեքը մէկ են :

ԹԵ որ մարդոց վկայութիւն ընդունինք , ալ 9
Աստուծոյ վկայութիւնը մեծ է . ասիկա է Աս-
տուծոյ վկայութիւնը , որ իր Որդւոյն վրայ
վկայեց : Ան որ Աստուծոյ Որդիին կը հաւատայ , 10
աս վկայութիւնը իր վրան ունի . ան որ Աստու-
ծոյ Որդիին չի հաւատար՝ սուտցուցած կրնէ ա-
նիկա . ինչու որ չի հաւատար ան վկայութեանը՝
որ Աստուած իր Որդւոյն վրայ վկայեց : Եւ 11
ասիկա է ան վկայութիւնը , որ Աստուած
մեզի յաւիտենական կեանք տուաւ . ու աս ան
կեանքն է՝ որ իր Որդւոյն մէջն է : Ան որ Որ- 12
դին կընդունի՝ կեանքն ալ կընդունի . և ան որ
Աստուծոյ Որդին չընդունիր , կեանքն ալ չըն-
դունիր :
Ա՛ս գրեցի ձեզի որ գիտնաք թէ յաւիտենա- 13
կան կեանք ունիք . ու որ Աստուծոյ Որդւոյն
անունին հաւատաք : Եւ ան համարձակու- 14
թիւնը որ մենք անոր քովը ունինք՝ աս է , որ ին-
չ որ խնդրելու ըլլանք իր կամքին պէս՝ կըլսէ
մեզի : Եւ թէ որ գիտնանք թէ մեր խնդիրքնե- 15
րուն կըլսէ , անանկ է նէ կրգիտնանք թէ՝
խնդիրքնիս կառնենք , որոնք կրխնդրենք իր-
մէն :
ԹԵ որ մէկը տեսնայ՝ որ իր եղբայրը մեղք մը 16
գործեց չէ թէ մահացու , թող խնդրէ ու Աս-
ուած անոր կեանք պիտի տայ ան մահացու չէ-
ղած մեղքը գործողին . մեղք կայ որ մահացու է ,
անոր համար չեմ ըսեր որ խնդրես : Ամէն ա- 17
նիրաւութիւն մեղք է , և մեղք կայ որ մահացու
է :
Գիտենք որ ան ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ 18
մեղք չի գործեր . հապա ան որ Աստուծմէ ծնած
է՝ ինքզինքը կրպահէ , ու չարը իրեն չի մօտե-
նար : Գիտենք որ մենք Աստուծմէ ենք , ու 19
բոլոր աշխարհ չարի մէջ է : Եւ գիտենք որ 20
Աստուծոյ Որդին եկաւ՝ ու մեզի միտք տուաւ ,

որ ճշմարիտը ճանչնանք. և ան ճշմարիտին մէջն
ենք իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջը. ինչու
որ անիկա ճշմարիտ Աստուած է ու յաւիտե-
21 նական կեանք։ Որդիներ ինքզինք-
նիդ կռապաշտութենէ
պահեցէք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԱՌԱՔԵԱՑԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ։

Արեցէն ընտրեալ Կիւրիային՝ ու իր որ- 1
դիներուն, որ ես ճշմարտութեամբ կըսի-
րեմ՝ և չէ թէ մինակ ես, հապա ամէնն ալ՝ որ
ճշմարտութիւնը կըճանչնան՝ ան ճշմարտու- 2
թեանը վրայով՝ որ մեր մէջը հաստատված է, որ
ձեր հետն ալ ըլլայ՝ ու դուք յաւիտեան մեր
հետը ըլլաք։ Շնորհք՝ ողորմութիւն՝ խաղա- 3
ղութիւն Հօր Աստուծմէն, և Տէր Յիսուս
Քրիստոս Հօրը Որդիէն ձեր հետը ըլլայ ճշմար-
տութիւնով ու սիրով։

Շատ ուրախ եղայ ես, որ քու որդիներէդ 4
գտայ՝ որ ճշմարտութեամբ կերթան ան պատ-
ուիրանքին պէս, որ Հօրմէն առինք։ Եւ հի- 5
մայ քեզի կաղաչեմ Կիւրիա՝ չէ թէ մէկ նոր
պատուիրանք մը քեզի կըգրեմ՝ հապա ան որ
առաջուց ունէինք, որ մէկզմէկ սիրենք։ Եւ 6
սէրը սա է որ անոր պատուիրանքին պէս եր-
թանք՝ ու պատուիրանքը սա է որ ինչպէս ա-

7 ռաջուց լսեցիք՝ անոր պէս երթաք։ Ինչու որ
շատ մոլորեցուցիչներ ելան աշխարհ՝ ով որ Յի-
սուս Քրիստոսը մարմինով եկած չի խոստովա-
8 նիր նէ՝ անիկա մոլորեցուցիչ է՝ ու Հակառ։ Ին-
քըզինքներնուդ զգոյշ կեցէք, որ ըրած աշխա-
տանքնիդ չի կորսընցունէք։ Հապա որ լման
9 վարձք առնէք։ Ամեն ով որ յառաջանք կընէ՝
ու Քրիստոսի վարդապետութեանը մէջ չի կե-
նար, Աստուած չի՛ ճանչնար։ Ան որ վարդա-
պետութեանը մէջ կըկենայ, անիկա Որդին ալ
10 կընդունի՝ Հայրն ալ։ Եթէ որ մէկը ձեզի գայ՝
ու ասվարդապետութիւնը չունենայ՝ անիկա
տուներնիդ մի՛ ընդունիք, և բարև մի՛ տաք
11 անոր։ Որ ով որ անոր բարև կըսէ՝ անոր չար
գործքերուն հաղորդ կըլլայ։
12 Շատ բան ունէի ձեզի գրելու. բայց չուզեցի
թուղթով ու մելանով գրել. ինչու որ յոյս
ունիմ՝ որ ես ինքս ձեզի պիտի գամ. ու բերան
բերնի պիտի խօսիմ. որ մեր ուրախութիւնը
13 կատարեալ ըլլայ։ Քեզի կուտան քեզի քու-
կին ընտրեալ քրոջդ զաւկը-
ները. Շնորհք ձեր
վրայ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԱՌԱՔԵԱԼԻՆ

ԵՐԿՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ։

Ընդեղէն Կայիոս սիրելիին , որ ես ճշմար- 1
տութիւնով կը սիրեմ ։ Սիրելի՛ քու ամէն 2
բաներուդ յաջողութեանը ու առողջութեանը
համար աղօթք կընեմ՝ ինչպէս քու անձդ ալ
յաջողութիւնի մէջ է ։ Շատ ուրախ եղայ 3
երբ որ եղբայրները եկան ու քու ճշմարտու-
թեանդ վրայ վկայեցին , ինչպէս որ դուն ճշմար-
տութիւնով կերթաս ։ Ասկէ մեծ ուրախութիւն 4
մըն ալ չունիմ , որ կըլսեմ թէ իմ զաւկրներս
ճշմարտութեան մէջ կըքալեն ։ Սիրելի՛ դուն 5
հաւատարմաբար կընես ինչ որ կընես եղբայրնե-
րուն՝ նոյնը օտարներուն ալ ։ որոնք եկեղեցիին 6
առջեւը վկայեցին քու սիրոյդ համար , որ Աս-
տուծոյ հնոտր կըվայլէ նէ՝ անոնց բարի ընելով
ճամբու կըդնես ։ Ինչու որ Անոո-ոյ անու- 7
նին համար ելան , ու հեթանոսներուն մէկէն
բան մը չեն առներ ։ Ա՛նոր ասկէ ետև պար- 8
տաւոր ենք անանկները ընդունելու , որ ճշմար-
տութեանը գործակից ըլլանք ։

9 Եկեղեցիին բան մը գրեցի. բայց Դիոտրիփէսը՝
որ մէջերնին առաջին ըլլալ կուզէ, մեզ չընդ-
10 դունիր։ Ասոր համար թէ որ գամ՝ անոր
գործքերը պիտի միտքը ձգեմ՝ որ կլինէ, մեզ
կըչոգնեցուցնէ չատխօսութեան չար խօսքերով.
և ասոնցմով ալ չհերիք ընդունիր
եղբայրները, ու անոնք որ կընդունին նէ՝ թող
11 չիտար, ու եկեղեցիէն ալ կըհանէ։ Սիրելի՝
չարին նմանողմի ըլլար, հապա բարիին. վասն
զի ան որ բարի կլինէ Աստուծմէն է. և ան որ
չարիք կրգործէ՝ անիկա բնաւ Աստուած չի տե-
12 սաւ։ Դմետրոսին համար ամէնն ալ կըվկայէ,
եկեղեցին ալ, ճշմարտութիւնն ալ. մենք ալ
կըվկայենք. և դուն գիտես որ մեր վկայութիւնը
ճշմարիտ է։
13 Շատ բան ունէի քեզի գրելու. բայց չեմ
14 ուզեր թուղթով ու մելանով գրել։ Ինչու որ
յոյս ունիմ մօտերս քեզ տեսնալու, ու բերան
15 բերնի խօսելու։ Խաղաղութիւն քեզի. բարև
կուտան քեզի ՆԷ սիրելիները. բարև տուր
մեր սիրելիներուն ամէն մէկուն՝
անունովը։

ՅՈՒԴԱ

ԸՆԴՀԱՆՈՒԱԼԻՆ

ԸՆԹԵՐՑՈՒԹԻՒՆ։

Յուդա՝ Յիսուս Քրիստոսի ծառայ ու Յակո- 1
բին եղբայրը. Հեղհանումներնուդ՝ որ Հօր Ա-
ստուծմէն սիրված էք և Յիսուս Քրիստոսի պահ-
ված ու ընտրըված։ Ողորմութիւնը ու խաղա- 2
ղութիւնը և սէրը ձեր վրայ շատնայ։
Սիրելիներ՝ բոլոր ջանքը վրաս առնելով ձեզի 3
գրելու մեր հասարակութեան փրկութեանը
համար, իմ անձիս հարկ սեպեցի ձեզի գրել ու
աղաչել, որ պինդ կենաք ան հաւատքին վրայ՝
որ անգամ մը սուրբերուն տրվեցաւ։ Որով- 4
հետև մէկ քանիները սկզբըվեցան մտան, ա-
նոնք որ առաջուց սա դատապարտութեանը հա-
մար պատրաստըված էին. ամբարիշտներ, որ
մեր Աստուծոյ շնորհքը անկարգութեան դար-
ձուցին. և ան մի միայն Իշխանը ու մեր Տէր
Յիսուս Քրիստոսը ուրացան։ Ուստի կուզեմ 5
միտքերնիդ բերել, թէպէտ ամէն բան գիտէք,
թէ Աստուած առջի բերանը ժողովուրդը Եգիպ-

տօսէն խաղսեց , եւ քր անհաւատները կորսըն-
6 ցուց : Եւ հրեշտակները՝ որ իրենց իշխանու-
թիւնը չի պահեցին . հապա իրենց բնակութիւ-
նը որ ձգեցին , յիտնենաւոր կապերով խաւարի
7 մէջ պահեց ան մեծ օրուան դատաստանին : Ինչ-
պէս Սոդոմ ու Գոմորը՝ և անոնց բոլորտիքը եղած
քաղաքները նոյն օրինակին պէս պոռնկեցան ըն-
կերներուն մարմիններուն հետ , առջևնիս օրինակ
կեցեր են՝ յաւիտենական կրակին դատապարտու-
8 թիւնը ընդունելով : Նոր պէս ասոնք ալ քու-
նով խելագարած պէս՝ մարմինը կըպղծեն , տէրու-
թիւնները կը քամահրեն , փառաւորներուն գէշ
9 կըզրպտցնեն : Ան որ Միքայէլ հրեշտակապետը՝
երբոր բանսարկու Սատանային հետ վէճ ընելով
պատասխան կուտար Մովսէսին մարմինին հա-
մար , չի համարձակեցաւ ան հայհոյութեանը
դատապարտութիւնը իրեն տալու . հապա ըսաւ ,
10 Տէրը թող յանդիմանէ քեզ : Ասոնք՝ ան բաներուն որ չեն հասկընար , գէշ կըզրպտ-
ցնեն . և ուրիշ բաներն ալ որ բնապէս անբան
անասուններու պէս գիտեն՝ ասոնց անոնց
11 մէջ կապականին : Ալ ո՛ւ ե անոնց՝ որ Կայէնին
ճամբովը գացին , ու Բաղաամին մոլորութեանը
պէս վարձքի եռեւ գացին , և Կորխին հակառա-
12 կելուն պէս կորսրմեցան : Ասոնք ասոնք երես-
պաշտներ են երբ յոյս իրենց ցանկութեանը
եռեւէն , խաբեպարտութեամբ ձեզի սեր ցուցը-
նելով՝ հեռներիդ ընթրիքներուն կրնկնան , ա-
ռանց վախի ինքզինքին կրկերակրեն . անջուր
ամպեր հովերով ծեծկըռտած . պտուղներին կոր-
սընցուցած ծառեր՝ բնքը չունեցող , երկու ան-
13 գամ մեռած արմատէն խրված . ծովու կատղած
ալիքներ , որ իրենց անձերնուն ամօթը միշտ
կըփրփրեցընեն . մոլորած աստղեր , որ յաւի-
տենական խաւարին անդունդը իրենց պահված
14 է : Անոնց համար մարգարէացաւ Ենովքն ալ՝

որ եօթներորդ էր Դաւիթ, ու ըսաւ. Ահա
Տէրը տասը հազար սուրբ հրեշտակներով եկաւ,
ամենուն դատաստանը ընելու, ու բոլոր ամ- 15
բարիշտները զանդիմանելու իրենց գործքերուն
համար՝ որ ամբարշտութիւն ըրին, և բոլոր
ծանրը խօսքերուն համար՝ որ մեղաւորները
ու ամբարիշտները անոր համար խօսեցան։
Ասոնք տրտունջողներ ու գանգատողներ են 16
իրենց անձերնուն ցանկութեանը պէս եր-
թալով. և իրենց բերանը ամբարտաւան խօս-
քեր կը զրուցէ, երեսպաշտութիւն կընեն վաստա-
կի համար։ Հայց դուք սիրելիներ՝ մի՛ 17
ան առաջուց զուրցուած խօսքերը մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի առաքեալներէն. որ ձեզի կըսը- 18
րուցէին թէ՝ Եօքի ատեններուն արհամարհող
մարդիկներ պիտի ըլլան իրենց ամբարիշտ ցան-
կութիւններուն պէս երթալով։
Ասոնք ինքզինքնին զատած շնչաւորներ են, 19
որ Հոգին չունին։ Հայց մենք սիրելիներ՝ 20
անձերնիս շինենք սուրբ հաւատքի վրայ Հո-
գւով Սրբով. աղօթք ընենք, անձերնիս պահե- 21
լու Աստուծոյ սիրովը, մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսին ողորմութեանը սպասելու յաւիտենական
կենացը համար։ Եւ ոմանց որ դատապար- 22
տուիլ են, խրատ տուէք. և ոմանք ալ խալըսե- 23
ցէք կրակէն դուրս քաշելով, և ոմանց վրայ
գութ ունեցէք վախով դատելով, մարմինէն
աղտոտած լաթն ալ ատելով։
Եւ անոր՝ որ ինքը կարող է ձեզ անարատ ու 24
անրիծ պահել, իր փառքին առջևը անսար-
գանս ցնծութիւնով հաստատել, մի միայն
Աստուծոյ՝ մեր փրկիչին մեր Տէր Յիսուս Քրիս- 25
տոսին փառք մեծութիւն զօրութիւն ու իշխա-
նութիւն բոլոր դարերէն առաջ, և հիմայ
ու բոլոր դարերու միջ.
Ամէն։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԱԶԱԿԵԱՆ

ՈՒ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵՒԹԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԳԼ. Ա.

Յիսուս Քրիստոսին յայտնութիւնը, որ Աստուած անոր ձեռքը սրւաւ իր ծառաներուն յայտնելու ան բաները՝ որ շուտով պիտի ըլլայ. և խրկեց ցուցուց իր հրեշտակին ձեռքովը իր
2 Յովհաննէս ծառային. որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը բրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը, որ տեսաւ, և որ եղաւ՝ և որ
3 անկէ ետև պիտի ըլլայ: Երանէկ անոր որ կը կարդայ կամ կրնէ աս մարգարէութեան խօսքերը, և կրպահէ ինչ որ ասոր մէջը գրած է. ինչու որ ժամանակը մօտ է:
4 Յովհաննէսէն եօթը եկեղեցիներուն որ Ասիոյ մէջն են, շնորհք և խաղաղութիւն ձեր Հետը Աստուծմէ՝ Որ էն և ան որ էր, և ան որ պիտի գայ. ու Յիսուս Քրիստոսէն՝ որ իր
5 ականջին առջևն են. և Յիսուս Քրիստոս Հաւատարիմ վկայէն, որ մեռելներուն մէջը առջինն է, և երկրի թագաւորութիւններուն

իշխանն է · որ մեզ սիրեց , ու մեր մեղքին կա-
պերը արձակեց իր արիւնովը · և մեզ թա- 6
գաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու
իր Հօրը · որուն փառք և զօրութիւն հիմայ ու
ամէն իւիր , և յաւիտեանս յաւիտենից · ա-
մէն ։

Ահա ամպերով պիտի գայ · ու ամէն աչք պի- 7
տի տեսնայ անիկա , ու երկրի ծայրերը պիտի
սեսնան անիկա , և երկրի մէջ ան ամէնքը որ
անիկա վիրաւորեցին , ու անոր վրայ պիտի ողբ-
բան · անանկ է , ամէն ։ Ես պըր եմ , ու ես քէ 8
եմ՝ կըսէ Տէր Աստուած , ան որ է ու էր , և ան
որ պիտի գայ Ամենակալը ։

Ես Յովհաննէս ձեր եղբայրը՝ և նեղութեան , 9
ու արքայութեան՝ և Յիսուսի Քրիստոսոյ Համո-
ռհամբերութեան հետևնիդ բնակեր , հս ան կղզին
էի՝ որ անուանով Պատմոս կըսվի , Աստուծոյ խօս-
քին համար՝ ու Յիսուս Քրիստոսի վրայ վկայե-
լու համար ։ Եւ կիրակի օրը Հոգին իմ վրաս 10
եղաւ , ու ետևէս մեծ ձայն մը լսեցի փողի ձայնի
պէս , որ ինծի կըսէր · Ես եմ ալփա ու ոմ , ա-
ռաջին և վերջին · ինչ որ կրտեսնաս գրքի մէջ 11
գրէ՝ ու խրկէ եօթը եկեղեցիներուն , Եփես-
սոն , Զմիւռնիային , Պերգամային ու Թիւա-
տիրային և Սարդիկէին՝ ու Փիլադելփիային և
Լաւոդիկեային ։ Եւ դարձայ ան ձայնը տեսնա- 12
լու որ ինծի կըխօսէր · ու երբոր դարձայ՝ եօթը
ոսկիէ աշտանակներ տեսայ · և եօթը աշտանակ- 13
ներուն մէջը Մէկը Որդւոյ մարդոյ նման , կապոյ
մը հագած՝ որ մինչև ոտքին պճղունքը կըշօս-
նէր , ու ծիծերուն վրայօքը ոսկի գօտի մը կա-
պած · և իր գլուխը ու մազերը ձերմակ՝ բուրդի 14
պէս ու ձուևի պէս · ու իր աչք բները՝ կրակի
բոցի պէս · և իր ոտքերը ղուռնայի նման 15
էրեխ փոան մէջը կրակ զարձած , ու իր
ձայնը շատ ջուրերու ձայնի պէս · և իր աջ ձեռ- 16

քին մէջ եօթը աստղ ունէր , ու իր բերնէն երկսեր սուր մը կ՚ելլար , և իր երեսը արևի
17 պէս ճառագայթած կ՚երևար : Ես երբոր տեսայ անիկա՝ մեռելի պէս իր ոտքը ինկայ . ու իր
աջ ձեռքը իմ վրաս դրաւ , ու ըսաւ ինծի , Մի՛
18 վախնար . ես եմ առաջինը՝ ու ես եմ ետքինը . և
ես եմ կեանքը , ու եա՛ն եմ որ մեռայ՝ ու կենդանի եմ հիմայ՝ և ամէն իշխ իր , ու յաւիտեանս
յաւիտենից . ամէն . և ես ունիմ մահուան ու
19 դժոխքին բանալիքները : Գրէ՛ ինչ որ կրտեսնաս՝ ան որ կայ , ու ան որ ետքը պիտի ըլլայ , և
20 անիկա որ պատրաստ է ըլլալու . եօթը աստղերուն խորհուրդը՝ որ իմ աջ ձեռքիս մէջը տեսար , և եօթը ոսկիէ աշտանակները . ան եօթը
աստղերը՝ եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են . և եօթը ճրագարանները եօթը եկեղեցիներն են :

ԳՒ· Բ·

1 Ա՛ֆեսացոց եկեղեցիին հրեշտակին գրէ՛ . ա-
սանիկ կրսէ ան կարողը , որ իր աջ ձեռքին
մէջ եօթը աստղեր ունի , ու եօթը ոսկիէ աշ-
2 տանակներուն մէջը կրպտրատի : Գիտեմ քու
գործքերդ և քու աշխատութիւններդ ու քու
համբերութիւնդ . և որ չարերուն չես համբերեր , ու փորձեցիր անոնք որ կըսեն Ին իրենք
առաքեալ են՝ ու չեն , և Եբրայեցիները , ու
3 սուա կրզըուցեն . և համբերեցիր , ու իմ անունիս համար նեղութիւն քաշեցիր , ու աշխատեցար : Այլ քեզի կըսեմ , որ քու առջի սէրդ
4 ձգեցիր : Ա՛յնքա բեր հիմայ ուսկից որ ինկար ,
5 ու ապաշխարէ , և քու առջի գործքերդ ըրէ . հապա թէ չէ շուտով կուգամ , ու քու աշտանակդ իր տեղէն պիտի չարժեմ՝ թէ որ չապաշխարես : Ասոր ատիկա ըրէ , որ Նիկողայոսին
6 գործքերը ատես , որ ես ալ կատեմ : Ան որ

լսելու ականջ ունի՝ նէ թող լսէ ինչ կրսէ Հոգին Սուրբ եկեղեցիներուն. Ան որ կը յաղթէ կեանքին ծառէն ուտել պիտի տամ՝ անոր, որ Աստուծոյ դրախտին մէջն է։

Եւ Ը. Միւռնացոց եկեղեցիին գրէ. 8
Սանկ կրսէ Նախիջեւանի Նախնացեալը, որ մեռաւ՝ ու ողջ ընցաւ։ Տեսայ քու գործքերդ ու 9
նեղութիւնդ՝ և աղքատութիւնդ. բայց քու աղքատութիւնդ հարստութիւն պիտի ըլլայ. ու չխոսիմ ան հայհոյութիւնը որ կըսեին թէ Իրենք Հրեայ են՝ ու չէին, հապա Սատանայի ժողովը մը։ Մի վախնար ան բաներուն համար որ 10
պիտի չարչարուիս. ահա բանսարկուն ձեզմէ Եկեղեցիները բանտը ձգելու վրայ է, որ փորձերիք, և տասը օր նեղութիւն պիտի ունենաք. միայն՝ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը պիտի տամ։ Ան որ լսելու ականջ ունի՝ 11
թող լսէ ինչ կրսէ Հոգին Սուրբ եկեղեցիներուն. ան որ կը յաղթէ երկրորդ մահէն վնաս չի քաշեր։

Եւ Պէրկամոնի եկեղեցիին գրէ. 12
Սանկ կըզրուցէ ան որ երկու բերնէ սրած սուր ունի։ Գիտեմ գործքերդ ասոնց, և որ հոն 13
կը բնակիս՝ ուր որ Սատանային աթոռն է. ու իմ անունս ունիս, և իմ հաւատքս չուրացար ան օրը որ երբ Անթիպաս իմ վկաս հաւատարիմ դանըվեցաւ. ինչու որ անիկա իմ հաւատարիմ վկաս է քոյրերովին հաւատացեալ, որ ձեր մէջէն սպաննըվեցաւ, որ կեցեր էք՝ ուր տեղ որ Սատանան կը բնակի։ Բայց քեզի դէմ քիչ մը բան 14
ունիմ. որ քու քովէդ Հաղաամին վարդապետութիւնը կեռաղ կայ, որ Հաղաքին սօրմեցուց Իսրայէլի որդոցը առջեւը դայթակղութիւն դնել, որ անոնք խոտորեցա՝ զոհած ուտեն՝ ու պոռնկութիւն ընեն։ Սանկ դուն Նիկոլայոսեանց 15
ներուն վարդապետութիւնը կեռաղ ունիս, որ

16 անիկա ես կատեմ : Ուստի ապաշխարէ՛, հա-
պա թէ չէ շուտով կուգամ , ու իմ բերնիս
թուրովը պիտի պատերազմիմ անոնց հետ :
17 Ան որ լսելու ականջ ունի նէ՝ թող լսէ՛ ինչ
կըսէ Հոգին եկեղեցիներուն . ով որ կըյաղթէ՝
պահված մանանայէն ուտել պիտի տամ անոր .
ու սուրբ գիրք մը պիտի տամ անոր , և ան
գրքին մէջ նոր անուն մը գրված , որ անիկա
մէկը չի գիտեր , միայն թէ ան որ կառնէ :
18 Եւ Թիւատիրայի եկեղեցիին հրեշտակին գրէ՛ .
Աստուծոյ Որդին , որ իր աչքերը
կրակի բոցի , ու իր ոտքերը գետ պղնձի
19 ձի նըման են : Գործերդ տեսայ , և հաւատք
սէրդ՝ ու ծառայութիւնդ համբերութիւնով . որ քու վերջին գործերդ
20 առաջինէն շատ է : Սակայն քեզի շատ բան կըգըտնեմ , որ ան Յեզաբէլ կինը թող տալիր ,
որ ինքը զինքը մարգարէ կըսէր , ու իմ ծառաներուս մոլորութիւն կըսորվեցնէր , որ պոռնկութիւն ընեն և ուտեն զոհված ուտեն :
21 Եւ ես անոնց ժամանակ տուի իրենց պոռնկութիւնը ապաշխարելու , ու չապաշխարեցին :
22 Նայ ես անիկա հիւանդ պիտի ձգեմ , ու իր գործակիցներ որոնց հետ շնութիւն ըրաւ , մեծ
մեծ նեղութիւններու մէջ , թէ որ իրենց գործքերուն վերայ չապաշխարեն : Եւ անոնց զաւակները մահով պիտի սպաննեմ . և բոլոր եկեղեցիները պիտի ճանչնան թէ ես ան եմ՝ որ երիկամունքները ու սիրտերը կըքննեմ . և ձեզի
ամէն մէկիդնուդ իրենց գործքերուն պէս կը
24 հատուցանեմ : Նայ ձեզի կըսեմ՝ որ Թիւատիրին մէջն էք , ու ոս վարդապետութիւնը չունիք . որ չի ճանչցած Սատանային խորութիւնները (ինչպէս որ կըսեն) . ձեր վերայ ուրիշ
25 ծանրութիւն չեմ ձգեր . հապա ան որ ունիք
26 պահեցէք մինչև որ ես գամ : Եւ ան որ կը

յաղթէ՝ ու իմ գործքերս մինչև վերջը կը պահէ՝ անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ։
և պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով՝ 27
ու անոնք պիտի փշրե բրուտի ամանի պէս՝ ինծմէ 28
որ ես ալ իմ Հօրմէս առի։ ու անոնց պիտի
տամ առաւօտեան աստղը։ Ան որ լսելու ա- 29
կանջ ունի՝ թող լսէ՝ ինչ կըսէ Հոգին
Եկեղեցիներուն։

ԿԱ։

Ու Սարդիացոց Եկեղեցիին հրեշտակին գրէ՝ 1
Ան որ կը բռնէ եօթը աստղերը իր աջ կողմը՝
ու կը պտըտի եօթը ոսկի մոմակալներուն մէջ՝ կըսէ.
Գիտեմ գործքերդ՝ որ անունդ ունիս՝ թէ կեր- 2
պով կենդանի ես՝ ու մեռած ես։ Արթնցի՝ և
զօրացո՝ որ պիտի մեռնին։ Վասն զի չեմ գտած
գործքերդ կատարեալ առջև Աստուծոյ իմոյ։ 3
Ուրեմն յիշէ՝ թէ ինչպէս ընդուներ ես ու լսեր ես՝
և պահէ՝ և ապաշխարէ։ Եթէ որ չարթննաս՝ կու-
գամ իբրև գող՝ ու չես գիտեր ո՛ր ժամուն կու-
գամ իմ քեզի։ Ունիս ալ քանի մը անուններ 4
Սարդիացիներու՝ որոնք չեն պղծեր իրենց հա-
գուստները՝ և ինծի հետ պիտի գան սպիտակ-
ներով՝ վասն զի արժանի են։ Ան որ կը յաղթէ՝ 5
նոյնպէս սպիտակներով պիտի զգեստաւորուի՝
և անոր անունը չեմ ջնջեր կենաց գրքէն՝ և
անոր անունը կը խոստովանիմ իմ Հօրս առջև՝
և հրեշտակներուն առջև։ Ան որ լսելու ա- 6
կանջ ունի՝ թող լսէ՝ ինչ կըսէ Հոգին Եկեղե-
ցիներուն։

Ու Փիլադելփիացոց Եկեղեցիին հրեշտակին 7
գրէ՝ Ան որ կըսէ՝ Սուրբը՝ ան Ճշմարիտը՝
որ Դաւիթի բանալիները ունի՝ Որ բանայ՝ ու մէ-
կը չի կրնար գոցել՝ և որ գոցէ՝ ու մէկը չի կրնար
բանալ։ Գիտեմ գործքերդ՝ 8
Ահա քեզի բացված դուռ մը դրի՝ որ ան մէկը չի

կրնար գոցել · ինչու որ դուն քիչ մը կարողու-
թիւն ունիս և իմ խօսքս պահեցիր , ու իմ ա-
9 նունըս չուրացար : Ահա ես քեզի կուտամ ան
ժողովը՝ որոնք կըսեն Ես Հրեայ
եմ ու չեմ , հապա սուտ կըսեն . ահա
ընեմ անոնք՝ որ գան ու երկրպագութիւն բ-
նեն քու ոտքիդ առջեւը , և ճանչնան՝ որ ես քեզ
10 սիրեցի : Ինչու որ իմ համբերութեան խօսքս
պահեցիր · ես ալ քեզ պիտի պահեմ քու փոր-
ձութեանդ ատենը , որ պատրաստ է գալու բո-
լոր աշխարհի վրայ՝ երկրիս երեսը բոլոր բնա-
11 կողները փորձելու համար : Ահա ես շուտով
կուգամ · ունեցածդ ամուր բռնէ , որ մէկը չառ-
12 նէ քու թագդ : Ան որ կը յաղթէ՝ անիկա իմ
Աստուծոյս տաճարին սիւն մը պիտի ընեմ , ու
ալ դուրս չի պիտի ելլայ · և անոր վրայ իմ
Աստուծոյս անունը պիտի գրեմ , ու իմ Աս-
տուծոյս քաղաքին անունը , որ նոր Երուսաղէմն
է՝ որ երկինքէն իմ Աստուծմէս պիտի իջնայ , և
13 իմ նոր անունըս : Ան որ ականջ ունի՝ թող
լսէ՝ ինչ կըսէ Հոգին եկեղեցիներուն :
14 Եւ Աւետիկէի եկեղեցիին հրեշտակին գրէ ·
Ամէն կըսէ Ամէնը՝ հաւատարիմ ու ճշմարիտ
վկան , Աստուծոյ ստեղծուածներուն սկիզբին
15 Այիզը : Ահա գործքերդ գիտեմ որ ոչ պաղ
ես ու ոչ տաք · պէտք էր քեզի պաղ ըլլալ՝ և
16 կամ տաք : Այլ դուն գաղջ ես , ու ոչ տաք՝
ոչ ալ պաղ · քեզ բերնէս դուրս փրսկելու վրայ
17 եմ : Որ կըսես , Ես հարուստ էի՝ ու մեծցայ ,
և բանի մը կարօտ չեմ · ու չես գիտեր որ դուն
խեղճ ու թշուառական ես՝ և աղքատ՝ մերկ ու
18 կոյր : Ասոր ես քեզի խորհուրդ կուտամ ·
ինծմէ ոսկի ծախու առ կրակի մէջ փորձուած ,
որ հարըստանաս , ու ճերմակ լաթերը որ հագ-
նիս , որ քու անշնորհք մերկութիւնդ չերեւայ ·
19 և աչքիդ դեղ դիր՝ որ տեսնաս : Ես իմ սի-

բածս կըշեխեմ՝ ու կըխրատեմ ։ ուստի նախան-
ձէ ու ապաշխարէ ։ Ահա ես դուռը կայներ ու 20
կըշալեմիոր ։ Թէ որ մէկը իմ ձայնս լսէ՝ ու ան
դուռը բանայ, անոր քովը կըմտնամ, և անոր
հետը հացկերոյթ կընեմ, ան ալ իմ հետս ։
Ան որ կը յաղթէ՝ անոր կուտամ որ իմ հետս 21
իմ աթոռս նըստի ։ ինծոր որ ես ալ յաղթեցի՝
ու իմ Հօրս աթոռը նըստայ ։ Ան որ ականջ 22
ունի՝ թող լսէ՝ ինչ կըսէ Հոգին եկեղեցինե-
րուն ։

Կ Ա ։

Ու ես ամենէն ետքը տեսայ, և ահա երկին- 1
քին դուռնըը բացվեր էին, ու առջի փողին
ձայնը որ լսեցի՝ կըխօսէր ինծի՝ ու կըսէր ։ Հոս
ելիր՝ և քեզի ցուցընեմ ինչ որ ետքի ատենները
պիտի ըլլայ ։ Եւ Հոգին ինծի հետս, ու ա- 2
թոռ մը տեսայ՝ որ երկինքը կեցեր էր ։ Եւ ան 3
աթոռին վրայ Հէնց նստեր էր, յասպիս ու սար-
դիոն քարերուն երևոյթին նման ։ Եւ ան ա- 4
թոռին բոլորտիքը քահանաներ՝ զմրուխտի երևոյ-
թի նման ։ ու աթոռին չորս կողմը քսանըչորս
աթոռներ, և ան աթոռներուն վրայ քսանըչորս
երէցներ նստեր էին՝ ճերմակ լաներ հագած, ու
իրենց գլուխը ոսկիէ թագեր դրեր էին ։ Եւ ան 5
աթոռէն կայծկըլտուքներ ու ձայներ և որո-
տումներ կելլային ։ ու եօթը հատ լոյսերուն
կրակի ջամբարներ կային աթոռին առջեւ, որ
Աստուծոյ եօթը հոգիներն են ։ Եւ ան աթո- 6
ռին առջեւը ապակիէ ծով մը՝ սառին ճերմակու-
թեանը նման, ու աթոռին մէջ տեղը չորս կեն-
դանիներ, որ աչքերով լեցուն էին առջեւէն ու
ետեւէն ։ Եւ առջի կենդանին նման էր առիւ- 7
ծի, ու երկրորդ կենդանին՝ զուարակի, և եր-
րորդ կենդանին մարդու երես ունէր, ու չորրորդ
կենդանին թռչուն արծիւի նման ։ Եւ չորս 8

կենդանիներուն անունցմէ ամէն մէկը վեց թևեր ունէր , բոլորտիքն ու ակռէն աչքերով լեցուն էին · չէին Հանգչէր ոչ ցորեկը՝ ոչ ալ գիշերը՝ ըսելով , Սուրբ Սուրբ Սուրբ Տէր Աստուած Ամենակալ , որ էր՝ և է , և ան որ պիտի գայ ։
9 Եւ երբոր ան կենդանիները փառք ու պատիւ և գոհութիւն կուտային ամոռին վրայ նստողին՝
10 որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից , քսան-Նբեօթ երէցները ան ամոռին վրայ նստողին առջեւն կ՚իյնային՝ ու երկրպագութիւն կընէին յաւիտեանս յաւիտենից կենդանիին , և իրենց թագերը ամոռին առջեւը կը դնէին՝ ըսելով ,
11 Արժանի ես մեր Տէր Աստուածը փառք ու պատիւ և զօրութիւն առնելու · ինչու որ ամէն բան դուն ստեղծեցիր , ու քու կրկին ուզ-Լոմդ ստեղծուեցան , և հաստատուն կեցեր են ։

Գ·Ե·

1 Եւ ան ամոռին վրայ նստողին աջ ձեռքը մէկ գիրք մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն գրված ,
2 և ևօթը կնիքով զըմուած ։ Ու մէկ զօրաւոր հրեշտակ մը տեսայ՝ որ մեծ ձայնով կը կանչէր · Ո՞վ արժանի է աս գիրքը բանալու՝ ու անոր
3 կնիքը քակելու ։ Եւ մէկը չէր կրնար ան գիր-Քը բանալ՝ ոչ երկինքը՝ ոչ երկրիս վրայ՝ ու ոչ երկրիս տակը , ոչ ալ անոր նայելու կրնար ։
4 Ես ալ սաստիկ կուլայի՝ որ մէկը արժանի չի գտնըվեցաւ ան գիրքը բանալու , ու ոչ ալ ա-
5 նոր նայելու ։ Եւ երէցներէն մէկը ըսաւ ինծի , Մի՛ լար · ահա ան առիւծը որ Յուդայի ցեղէն՝ Դաւիթի արմատէն է , յաղթեց ան գիրքը բա-
6 նալու՝ ու անոր ևօթը կնիքները քակելու ։ Եւ տեսայ ան ամոռին մէջ տեղը՝ ու չորս կենդանի-Ներուն մէջը՝ և ան երէցներուն մէջը մէկ գառ մը կար սպրդ-Ընչ մորթված · որ ևօթը եղջիւր ու ևօթը աչք ունէր , որոնք Աստուծոյ ևօթը հո-

գիներն են՝ որ բոլոր երկիրը խաբկըմած են ։ Եւ 7
անիկա եկաւ՝ աֆոռին վրայ նստաղին աջ ձեռքէն
գիրքը առաւ ։ Եւ երբոր գիրքը առաւ՝ չորս 8
կենդանիները ու քսանըչորս երէցները գառին
առջեւը կիյնային , և ամէն մէկը քնար ունէին ու
ոսկի բուրվառ խունկով լեցուն , որ սուրբերուն
աղօթքն է ։ Եւ նոր երգ կերգէին՝ ու կը- 9
սէին . Արժանի ես դուն առ գիրքը առնելու՝ ու
առար կնիքները բանալու . ինչու որ մորթվե-
ցար , ու մեզ Աստուծոյ քու արիւ-
նովդ բոլոր ազգերէն և լեզուներէն , ու հեթա-
նոսներուն ժողովուրդներէն , և մեզ մեր Աս- 10
տուծոյ թագաւորները ու քահանաները ըրիր՝
երկրի վրայ թագաւորութիւն ընելու ։ Ու նա- 11
յեցայ՝ և շատ հրեշտակներու ձայն լսեցի , որոնք
ան աֆոռին՝ ու չորս կենդանիներուն և քահա-
նաներուն բոլորտիքը կեցեր էին . ու անոնց
համրանքն էր բիւրք բիւրուց՝ և հազարք հազա-
րաց . մեծ ձայնով մը կըսէին , Աս մորթված 12
գառնը արժանի է մեծութիւն առնել՝ ու իմաս-
տութիւն և զօրութիւն՝ ու պատիւ և փառք ու
օրհնութիւն ։ Եւ բոլոր արարածները՝ որ եր- 13
կինքը ու երկրիս վրայ են , և ծովու մէջ , ու
ինչ որ անոնց մէջ կայ՝ ես լսեցի որ կըսէին , Ին
որ աֆոռը նըստած է՝ և ան գառնուկը՝ օրհնութիւն
բարձրացնել ու փառաւորել բլլայ յաւի-
տեանս յաւիտենից ։ Եւ չորս կենդանիները 14
կըսէին Ամէն . ու երէցները անոր առջեւը կիյ-
նային՝ և երկրպագութիւն կընէին ։

Գ Լ ՈՒ Խ Ը ։

Եւ տեսայ՝ որ գառնը ան կնիքներուն մէկը 1
բացաւ , ու չորս կենդանիներուն մէկէն որոտու-
մի պէս ձայն մը լսեցի՝ որ կըսէր թէ Կուգամկոր ։
Եւ նայեցայ՝ ու մէյմալ մէկ ձերմակ ձի մը տե- 2
սայ . և անոր վրայ հեծնողը աղեղ մը ունէր , ու

թագ մը տրվեցաւ անոր . և ան յաղթողը եկաւ որ յաղթէ :

3 Եւ երրորդ ան երկրորդ կնիքը բացաւ՝ երկրորդ կենդանիին լսեցի , որ կըսէր՝ Ելո՛ւգամկոր :
4 Եւ ուրիշ ձի մը եկաւ կարմիր , ու անոր վրայ հեծնողին իշխանո՛ւթիւն տրվեցաւ որ երկիրէս խաղաղութիւնը առնէ , որ մէկզմէկ մեռցո՛ւնեն . ու անոր մէկ մեծ թուր մը տրվեցաւ :
5 Եւ երբոր երրորդ կնիքը բացաւ , երրորդ կենդանիէն լսեցի որ կըսէր Թէ Ելո՛ւգամկոր . և տեսայ՝ ու ահա՛յմայ մէկ սև ձի մը ; և անոր վրայ
6 հեծնողը իր ձեռքը կշռաքա՛ր մը ունէր : Ու ան չորս կենդանիներուն մէջէն ձայն մը լսեցի . Կապիճ մը ցորենը մէկ դենարի , ու իրեք կապիճ գարին մէկ դենարի . և ձէթին ու գինիին զէն չընես :
7 Եւ երբոր չորրորդ կնիքը բացաւ՝ չորրորդ կենդանիէն ձայն մը լսեցի , որ կըսէր Թէ Ելո՛ւ-
8 գամկոր : Եւ տեսայ՝ ահա՛յմայ մէկ դեղին ձի մը . ու անոր վրայ հեծնողը Մա՛հ անո՛ւն ունէր , և դժոխքը անոր ետևէն կերթար . ու անոր իշխանո՛ւթիւն տրվեցաւ աշխարհի չորրորդ մասին վրայ , որ Թո՛ւրով ու սովո՛վ և մա՛հով՝ ու երկրի գազաննե՛րով սպանկոտնէ :
9 Եւ երբոր հինգերորդ կնիքը բացաւ՝ սեղանին տակը ան ամե՛ն մարդոց հոգիները տեսայ , որ զենված էին Յ՛ստուծոյ բանին համա՛ր՝ ու անոր
10 վկայությանը համա՛ր՝ որ իրենք ունէին . որոնք մեծ ձայնո՛վ կրսէին , Մինչ սո՛ւրբ ու ճշմարիտ Տէր՝ մինչև երբ չես դատեր , ու մեր արիւնին
11 վրէժը երկրի բնակիչնե՛րէն չառնե՛ր : Եւ ձեր-մակ հագուստներ տրվեցաւ անոնց ու բսվեցաւ անոնց , որ քիչ մը ատեն հանգչին , մինչև ա-նոնց ծառայակիցները ու անոնց եղբայրները լման ըլլան , որոնք որ իրենց պէս կատարվելու վրայ են :

Եւ տեսայ որ երբ վեցերորդ կնիքը բացաւ՝ 12
մեկ մեծ շարժում մը եղաւ , ու արեւը սեւցաւ՝
այծու մազէ լաթի մը պէս, ու լուսինը ընդհանուր
արիւնի պէս եղաւ : Եւ երկինքին աստղերը 13
գետինը թափթփուելուն թուղի տերեւի պէս որ
հովէն սաստիկ կըշարժըվի : Եւ երկինքը մա- 14
գաղաթեայ գիրքի պէս կոլորվեր , ու բոլոր լեռ-
ները և կղզիները իրենց տեղէն շարժեցան :
Եւ երկրի թագաւորները ու իշխանները՝ հա- 15
զարապետները ու մեծամեծները և զօրաւորներ
ու բոլոր ծառաները և բոլոր ազատները այրե-
րուն ու քարերուն խոռոչներուն մէջ ինքզինք-
նին պահվռտցին . և լեռներուն կրսէին թէ՛ 16
Ա՛ յրանիս ինկէք , ու յոյներուն թէ՛ Ա՛ նդ
ծածկեցէք . ինչու որ անոր բարկութեան մեծ օրը 17
եկաւ . ու ո՞վ կրնայ անոր առջեւը կենալ :

Գ Լ Ո Ւ Խ Ը Ա :

Յետ անկէ եւս տեսայ չորս հրեշտակներ՝ որ երկ- 1
րի չորս անկիւնը կեցեր էին , ու երկրի չորս
հովերը բռներ էին , որ երկրի վրայ հով չի
փչէ . ու ոչ ծովի վրայ , ոչ ալ ծառերու վրայ :
Եւ մէկ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ արեւելքէն 2
եկաւ , ու Կենդանի Աստուծոյ կնիքը ունէր . և
մեծ ձայնով մը կանչեց ան չորս հրեշտակնե-
րուն , որոնք որ իշխանութիւն առեր էին երկի-
րը ու ծովը ապականելու . Ու կըսէր , Երկրին 3
մի՛ նա ոչ ծովին , ոչ ծառերուն , դադ-
րեցէք մինչև որ իմ Աստուծոյս ծառաներուն
իրենց ճակտներուն կնքեմ : Եւ կնքվածներուն 4
համրանքը լսեցի՝ որ էր հարիւր քառասուն չորս
հազար Իսրայէլի որդւոցը տեղէն կնքված :
Յուդայի տեղէն տասներկու հազար կնքված . 5
Ռուբէնի տեղէն տասներկու հազար կնքված .
Գադի տեղէն տասներկու հազար կնքված :
Ասերի տեղէն տասներկու հազար կնքված . 6

Նեփթաղէմի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Մանասէի ցեղէն տասներկու հազար կնքըված:
7 Հմաւունի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Կևիի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Իսաքարի ցեղէն տասներկու հազար կնքըված:
8 Զաբուղոնի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Յովսէփի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Բենիամէնի ցեղէն տասներկու հազար կնքըված:
9 Եւ ասկէ ետքը տեսայ՝ և ահա շատ ժողովուրդներ որոնց համրանքը չի կար, բոլոր հեթանոսներէն ու բոլոր ազգերէն և բոլոր լեզուներէն ու բոլոր ժողովուրդներէն, որոնք աթոռին առջևը ու գառնուկին առջևը կեցեր էին՝ զգեստին ճերմակ լաթեր ձրգած,
10 և ձեռքերնին արմաւենիներ. մեծ ձայնով կըկանչէին՝ ու կըսէին, Փրկութիւնը մեր Աստուծոյ՝ որ աթոռին վրայ կթնըստի, ու
11 ան գառնուկին: Եւ բոլոր հրեշտակները աթոռին ու երէցներուն և չորս կենդանիներուն բոլորտիքը կեցեր էին, և երեսնուն վրայ աթոռին առջևը կիյնային՝ ու Աստուծոյ երկիրպագութիւն կընէին, ըսելով, Ամէն. օրհնութիւն
12 ու փառք և խնամութիւն ու գոհութիւն և պատիւ ու զօրութիւն և զնորհակալութիւն մեր Տէր Աստուծոյն՝ յաւիտեանս յաւիտենից.
13 Ամէն: Եւ ան երէցներէն մէկը ինծի բսաւ, Ասոնք որ ճերմակ լաթեր հագեր են՝ ո՞վ են
14 կամ ուրկից կուգան: Ես ալ ըսի անոր, Տէր դուն գիտես. ու բսաւ ինծի, Ասոնք անոնք են՝ որ մեծ նեղութիւններէն կուգան. որ իրենց լաթերը լուացին՝ ու գառին արիւնովը ճերմկցուցին:
15 Անոր համար Աստուծոյ աթոռին առջևն են, և իրեն կրծառայեն ցորեկ ու գիշեր իր տաճարին մէջը. և աթոռին վրայ նըստողը
16 անոնց մէջը կըբնակի: Ալ կանօթենան՝ ու ոչ կըծարբին. և մեկը չի վնասեր անոնց, ոչ արևը՝

ոչ ալ տաքը։ Եւ ան աշխոյին մէջը էջ 17
գառնուկը անոնք կըհովսէ, ու անոնց կենդանի
ջուրին կենացը աղբիւրը կառաջնորդէ. որովհետև
Աստուած լոյզը արցունքները անոնց երեսէն
սրբրնց։

ԳԼ. Ը։

Եւ երրոր եօթներորդ կնիքը բացաւ՝ լռութիւն 1
եղաւ երկինքը կէս ժամի չափ։
Ու եօթը հրեշտակ տեսայ, որ Աստուծոյ 2
առջևը կեցեր էին. ու անոնց եօթը փող տրվե-
ցաւ։ Եւ ուրիշ հրեշտակ մը եկաւ սեղանին 3
առջևը կայնեցաւ, ու ոսկիէ խնկանոց մը ունէր.
և իրեն շատ խունկ տրվեցաւ, որ բոլոր սրբոց
աղօթքը ոսկիէն սեղանին վրայ մատուցանէ ա-
ստուծոյ առջևը։ Եւ խունկերուն մուխը սրբոց 4
աղօթքովը հրեշտակներուն ձեռքովը
Աստուծոյ առջևը եկաւ։ Ու հրեշտակը խունկ- 5
ին ամանը սեղանին կրակէն լցուց, և երկիր
անիկա երկրին վրայ, ու եղաւ որոտումներ և ձայ-
ներ ու կայծկըլտուք և մեծ շարժում։ Եւ եօ- 6
թը հրեշտակները որ եօթը փողերը ունէին
պատրաստեցին ինքզինքնին որ հնչեն։
Եւ առջի հրեշտակը փողը հնչեց՝ ու եղաւ 7
կարկտան ու կրակ և խառնըված արիւն, ու
երկրի վրայ ինկաւ, ու երկրի երրորդ մասը է-
րեց, և ծառերուն երրորդ մասը էրեց, ու բոլոր
կանաչ խոտերը էրեց։
Եւ երկրորդ հրեշտակը փողը հնչեց, ու որ- 8
պէս թէ մեծ մեծ կրակի լեռան մը նման
ծովը ինկաւ, ու ծովին երրորդ մասը արիւն է-
ղաւ. և ողացող կենդանիներուն երրորդ մասը 9
սատկեցաւ. և ան որ կենդանի հոգի ունէր՝ ա-
պականեցաւ, ու նաւերուն երրորդ մասը ընկ-
ճեցաւ։
Եւ երրորդ հրեշտակը փողը հնչեց, ու երկին- 10

քին մէկ մեծ աստղ մը ինկաւ վառած ճրագի պէս
10 երրորդ մասին վրայ : Եւ ան աստղին ա-
նունը Դեղուխիւն էր . ու շատերը մեռան ջու-
րերուն դեղուխենէն :
12 Եւ չորրորդ հրեշտակը փողը չալեց , ու
արեւին երրորդ մասը ու լուսինին երրորդ
մասը և աստղերուն երրորդ մասը զարնուեցաւ .
ու անոնց երրորդ մասը խաւարեցաւ , և օրուան
երրորդ մասը չէր լուսաւորեր և անանկ ալ գի-
շերվանը :
13 Եւ նայեցայ՝ ու երկինքին մէջը թռչող
հրեշտակի մը ձայն լսեցի , որ մեծ ձայնով կըսէր ,
Վա՛յ վա՛յ վա՛յ՝ երկրի վրայ բնակողներուն՝ երբոր
մնացեալ իրենք փողերուն ձայնը կըլսեյ , որ հրեշ-
տակները պիտի չալեն :

ԿԱ. Թ.

1 Եւ հինգերորդ հրեշտակը փողը չալեց . ու տե-
սայ՝ որ երկինքէն աստղ մը ինկաւ , և անդունդ-
2 դին գաւթին բանալիքը անոր տրվեցաւ . ու ան
գաւթէն մուխ կելլար մեծ հնոցի մը մուխի պէս .
ու խաւարեցաւ արեւը ու օդը :
3 Եւ ան գաւթէն մարախ կելլար երկրի վրայ . ու
անոնց զօրութիւն տրվեցաւ կարիճի խայթոցին
4 զօրութիւնը պէս . և անոնց ըսվեցաւ՝ որ չի
մնասեն երկրի խոտին , ոչ ալ մէկ ծառի մը .
հապա միայն երկրաւոր մարդուն , որ իրենց ճա-
5 կատին վրայ կնիք չունին : Եւ հրաման տրվե-
ցաւ անոնց , որ չըսպաննեն անոնք . հապա ա-
նոնք հինգ ամիս , ու անոնց չարչա-
րանքը կարիճի խայթոցներու պէս՝ որ մարդը
6 կըզարնէ : Եւ ան օրերը մարդիկները մահը
պիտի փընտրեն՝ ու չի պիտի գտնան . և պիտի
ուզեն մեռնիլ , ու մահը անոնցմէ պիտի փախչի :
7 Եւ ան մարախին նմանութիւնը պատերազմի

պատրաստված ձին նմանութեանը պէս, ու
անոնց գլուխներուն վրայ թագի պէս ոսկիի
նման, և անոնց երեսները մարդու երեսի պէս։
ու անոնց մազերը կիներուն մազերու պէս, ու ա- 8
նոնց ակռանները առիւծի ակռայի պէս։ Եւ 9
զրահներ ունէին երկաթէ զրահներու պէս։ ու
անոնց թևերուն ձայնը շատ ձիերուն քաշած
կառքին ձայնին պէս, որ պատերազմի կրվալին։
Եւ կարիճի նման պոչեր ունէին, ու պոչերնուն 10
վրայ խայթոց։ որ իշխանութիւն ունէին մար-
դիկները չարչարելու հինգ ամիս։ Եւ իրենց 11
վրայ թագաւոր ունէին ժահոքին հրեշտակը։ ու
անոր անունը Եբրայեցերէն Աբդաղան։ որ Հայ
լեզուով կրսվի Կորուստ։ Ա՛նա մէկ վայը ան- 12
ցաւ։ ու երկու վայեր ալ պիտի գան։

Եւ վեցերորդ հրեշտակը փողը չարեց։ ու 13
ձայն մը լսեցի չորս կենդանիներէն որ Աստուծոյ
սեղանին առջև էին։ որ կըսէր վեցերորդ հրեշ- 14
տակին որ փող ունէր։ քակէ այն Եփրատ գե-
տին վրայ կապված չորս հրեշտակները։ Եւ 15
այն չորս հրեշտակները քակվեցան, որ պատրաս-
տված էին ժամի ու օրվան և ամիսի ու տարիի,
որ մարդոց երրորդ մասը մեռցունեն։ Եւ ա- 16
նոնց ձիաւոր զօրքերուն համրանքը բիւրք բիւ-
րուց ու հազարք հազարաց էր, ա՛ր լսեցի անոնց
համրանքը։ Եւ տեսիլքի մէջ ձիեր տեսայ, ու 17
անոնց վրայ հեծնողներ. որ ունէին հրեղէն ու յա-
կինթի նման զրահներ ծծումբով վառված. և ան
ձիերուն գլուխները առիւծներու գլուխներու
պէս. ու անոնց բերնէն կրակ կելլար, ու մուխ և
ծծումբ։ Եւ ասոնցմէ մարդոց եր- 18
րորդ մասը մեռաւ ան կրակէն ու մուխէն ու
ծծումբէն, որ անոնց բերնէն կելլար։ Ինչու 19
որ էրէնց զօրութիւնը բերանները մէջն է, ու
իրենց պոչերուն վրայ. և անոնց պոչերը օձի
նման էին, ու գլուխներ ունէին որ անով ա-

20 Նիրաւնները կըսատկըցունէին : Եւ ուրիշ մար-
գիկները որ աս պատուհասներէն չի մեռան , չա-
պաշխարեցին՝ ու իրենց ձեռքի գործքերէն ետ
չի կեցան , դեւերուն՝ ու ոսկիէ և արծաթէ ու
պղինձէ՝ և քարէ ու փայտէ շինված կուռքերէն
երկիրպագութիւն ընելէն . որ ոչ կրնան տես-
21 նար՝ ոչ ալ լսեր , ու ոչ քալեր . և չապաշխա-
րեցին իրենց ըրած մարդասպանութիւննէն ու
խնամբարութիւն դեղեր տալէն , և պոռնկու թիւննէն՝
ու գողութիւննէն :

Գ.

1 Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը՝ որ եր-
կինքէն կիջնար , ու վրան ամպ հագած էր , և իր
գլուխը ծիրանի գօտի մը՝ անէր . ու իր երեսը
արեւի պէս . և իր ոտքը կրակի սիւնի պէս .
2 և իր ձեռքը մէկ պզտիկ գիրք մը ունէր
բաց . ու իր աջ ոտքը ծովին վրայ դրաւ .
3 և ձախը՝ երկրի վրայ . և մեծ ձայնով
կանչեց՝ առիւծի մը պէս պոռաց . ու երբոր
կանչեց՝ ան եօթը որոտմունքն ալ իրենց
4 ձայնովը խօսեցան : Եւ երբոր ան եօթը որո-
տմունքները խօսեցան՝ կուզէի գրել . ու երկինքէն
ձայն մը լսեցի որ կըսէր , Կնքէ՝ ան բաները որ
եօթը որոտմունքը խօսեցան , ու մի գրեր :
5 Եւ ան հրեշտակը որ տեսայ՝ որ իր ոտքը ծովին
վրայ դրաւ , ու մէկալը ցամաքին վրայ , իր աջ
6 ձեռքը երկինքը վերցուց . և երդում ըրաւ
Հաւիտենական Կենդանիին վրայ , որ ստեղ-
ծեց երկինքը՝ ու անոր մէջինները , ու երկիրը
և անոր մէջինները , Թէ ալ ուրիշ ժամանակ
7 չի կայ . Հապա եօթներորդ հրեշտակին ձայնին
օրերը՝ երբոր փողը չալէ , Աստուծոյ խորհուրդը
պիտի կատարվի , որ իր ծառաներէն մարգարէ-
ներէն քարոզվեցաւ :
8 Եւ ան ձայնը որ երկինքէն լսեցի՝ նորէն խո-

սեցաւ ինծի՝ ու ըսաւ , Գնա՛ առ ան պզտիկ գիրքը՝ որ հրեշտակը իր ձեռքը բաց ունի , և կեցեր է ծովին ու ցամաքին վրայ ։ Ես ալ հրեշտակին գացի , ուզեցի անկէց՝ ու ըսաւ ինծի , Առ ասիկա ու կերատ , և քու փորիդ մէջ կըլեղջնայ , բայց բերնիդ մէջ մեղրի պէս անուշ կըլլայ ։ Եւ ան բաց պզտիկ գիրքը հրեշտակէն առի՝ ու կըլլեցի անիկա . և իմ բերնիս մէջը մեղրի պէս էր . և երբոր կերայ՝ փորիս մէջը լեղի եղաւ ։ Ու ըսաւ ինծի , Պէտք է որ դուն նորէն մարգարէութիւն բերես ժողովուրդներուն և հեթանոսներուն ու լեզուներուն և երկրի թագաւորներուն առջին ։

ԺԱ. ՅԱՂ

Եւ ինծի մէկ եղէգ մը տրվեցաւ գաւազանի պէս , և հրեշտակը կեցեր էր՝ ու կըսէր ինծի . Ել ու չափէ՛ Աստուծոյ տաճարը ու սեղանը՝ ու անոր մէջը երկրպագութիւն բնողները ։ Ու գաւիթը՝ որ տաճարին դուրսն է , անիկա ձգէ՛ և մի՛ չափեր . ինչու որ անիկա հեթանոսներուն արված է . ու սուրբ քաղաքը պիտի կոխկրտուին քառասուներկու ամիս ։ Եւ իմ երկու վկաներուս ջըռ–ընչ–ա պիտի տամ , և հագար երկու հարիւր ու վաթսուն օր մարգարէութիւն բնեն՝ վրանին քուրձ հագած ։ Ասոնք ան երկու ձիթենիները ու երկու ճրագները են , որ երկրի վրայ Աստուծոյ առջևը կըկենան ։ Եւ անոնք որ կուզեն անոնց վնաս բնել , անոնց բերնէն կրակ պիտի ելլայ՝ ու անոնց թշնամիները պիտի ուտէ . և որոնք որ կուզեն անոնց վնաս բան մը բնել՝ ասանկ պիտի սատկին ։ Ասոնք իշխանութիւն ունին երկինքը գոցելու՝ որ իրենց մարգարէութեան օրերը անձրև չի գայ , ու ջուրերուն վրայ իշխանութիւն ունին՝ անոնք արիւն դարձնելու , և ամէն կերպ պատուհասներով եր-

7 կիրը զարնելու՝ քանի անգամ՝ որ ուզեն : Եւ
նրբոր իրենց վկայութեան բոլոր օրերը կատա-
րին՝ անասունը ան գազանը՝ որ անդունդէն կելլայ , անոնց հետ պատերազմ պիտի ընէ և ա-
նոնց պիտի յաղթէ , ու պիտի սպաննէ անոնք :
8 Եւ անոնց մեռած մարմինը՝ որ պիտի կենայ
իրենց մեծ քաղաքին փողոցներուն մէջը , որ հո-
գևորապէս կըսուի Սոդոմ ու Եգիպտոս , ուր ու
9 իրենց Տէրն ալ խաչուեցաւ : Ու պիտի տեսնան
զանոնք բոլոր ցեղերը ու ժողովուրդները՝ և
լեզուները ու հեթանոսները , հինգ ու
անոնց մեռած մարմինը իրիկ օր ու կէս ինկած
պիտի կենայ . ու թող չի պիտի տան անոնց
10 ոսկորները գերեզմաններու մէջ թաղելու : Եւ
անոնք որ երկրի վրայ կըբնակին՝ ուրախ պիտի
ըլլան ու ծնդան անոնց վրայ , մինչև որ մեկրը-
մեկու ընծաներ ու պատարագներ պիտի խրկեն .
ինչու որ այս երկու մարգարէները երկրի բնա-
11 կիչները պիտի չարչարեն : Եւ իրիկ ու կէս օ-
րէն ետև Աստուծմէ կենդանի հոգի պիտի մտնայ
անոնց մէջ . ու պիտի ելլան կայնին իրենց ոտքին
վրայ . և մեծ ահ ու վախ ինկաւ ան ամենուն
12 վրայ որ անոնք մեծցուցին : Եւ մեծ ձայն մը
լսեցին որ կըսէր անոնց . Ա՛ եր եկէք հոս եկէք .
ու վերցան ամպերով երկինքը ելան . և իրենց
13 թշնամիները զանոնք տեսան : Եւ ան ժամին
մեծ շարժում մը եղաւ , ու քաղաքին տասնե-
րորդ մասը կործանեցաւ , և ան շարժումէն եօթը
հազար մարդիկ մեռան . ու անկէց ետքը ամենուն
վրայ մեծ վախ ինկաւ , ու փառք կուտային երկ-
14 նաւոր Աստուծոյ : Ահա երկրորդ վայը անցաւ ,
ու երրորդ վայը շուտով պիտի գայ :
15 Եւ երրոր եօթներորդ հրեշտակը կըշալէր
փողը , երկինքը ձայն մը եղաւ որ կըսէր . Խոլոր
աշխարհին թագաւորութիւնը մեր Տէրոջը ու իր
Քհսուս Քրիստոսինը եղաւ . և ինքը պիտի թա-

գաւօրէ ամէնուն վրայ յաւիտեանս յաւիտենից։
Եւ ան քսանըչորս երէցները որ իրենց աթոռնե- 16
րուն վրայ կրնստէին Աստուծոյ առջեւ՝ իրենց
երեսին վրայ կինային, և Տէր Աստուծոյ երկիր-
պագութիւն կրնէին ու կըսէին . Կըգոհանանք 17
քեզմէ Ամենակալ Տէր Աստուած՝ որ էր, ու ես,
ինչու որ քու մեծ զօրութիւնդ առիր ու թա-
գաւորեցիր ։ Եւ հեթանոսները բարկացան . 18
ու քու բարկութիւնդ եկաւ՝ և մեռելներուն ժա-
մանակը, որ դատուին, ու վարձք տաս քու ծա-
ռաներուդ մարգարէներուն՝ ու քուկին անունդ
վախցող սուրբերուն՝ պզտիկին ու մեծին, և
երկրի ապականիչները ապականես ։
Եւ երկինքին մէջ Աստուծոյ տաճարը բաց- 19
վեցաւ, ու Աստուծոյ տապանակը իր տաճարին
մէջը երեցաւ . և եղան կածկառումներ՝ ու ձայ-
ներ՝ և որոտումներ, ու շարժում՝ և խոշոր
կարկուտ ։

ԺԲ. ԺՆ ։

Ու երկինքը մեծ նշան մը երեցաւ . Մէկ կնիկ 1
մը արեւը իր վրայովը առած, ու լուսինը իր
ոտքին տակը . և իր գլխուն վրայ տասներկու
աստղէ թագ մը . և ծոցիկը էր, ու ցաւ քաշելու 2
տանջանք կրպտար, և շատ նեղութիւններով
ծնանելու մօտ էր ։
Ու երկինքը ուրիշ նշան մը երեցաւ, և ահա 3
մէկ մեծ հրեղէն վիշապ մը . որ եօթը գլուխ ու
տասը եղջիւր ունէր . և անոր գլուխներուն
վրայ եօթը թագ ։ Եւ անոր պոչը երկինքի 4
աստղերուն երրորդ մասը կըքաշէր, ու անոնք
երկրի վրայ ձգեց . և վիշապը կեցեր էր ան կըն-
կանոր առջեւը՝ որ ծնանելու վրայ էր . որ երբ ան
կնիկը իր որդին ծնանի, վիշապը կըլլէ անիկա ։
Ու կնիկը մանչ զաւակ մը ծնաւ, որ երկաթէ 5
գաւազանով պիտի հովուէր բոլոր ազգերը . և

անոր զաւակը յարիշտակեցաւ Աստուծոյ քով,
6 ու անոր աթոռին քով։ Եւ կնիկը անապատը
փախաւ. ուր որ անոր տեղ պատրաստուած էր
Աստուծմէ, որ անտեղ կերակրըվի հազար եր-
կու հարիւր ու վաթսուն օր։
7 Եւ երկինքը պատերազմ մը եղաւ. Միքա-
յէլը ու իր հրեշտակները ան վիշապին հետ
կռուեցան. վիշապն ալ իր զօրքերովը կը
8 պատերազմէր. ու չի կրցան դէմ կենալ. և եր-
9 կինքը տեղ չի գտնըվեցաւ անոնց։ Եւ ինկաւ
մեծ վիշապը ան տունկն օձը՝ որ Սկեղծրեցուց ու
Սատանայ կըսվի, որ բոլոր աշխարհ մոլորեցուց.
ու իր հրեշտակները իրեն հետ ներս ինկան։
10 Եւ մեծ ձայն մը լսեցի երկինքէն՝ որ կըսէր.
Հիմայ եղաւ մեր Աստուծոյ զօրութիւնը ու
փրկութիւնը և թագաւորութիւնը, ու անոր
Օծեալին իշխանութիւնը. ինչու որ մեր եղ-
բայրներուն դէմ չար խօսողը ինկաւ, որ անոնց
վայ չարախօսութիւն կընէր Աստուծոյ առջեւը
11 ցորեկ ու գիշեր։ Եւ անոնք անոր յաղթեցին
գառին արիւնովը, ու անոր վկայութեանը խօս-
քով. և ան վիշապին չի ցաւեցան մինչև ի
12 մահ։ Ասոր համար ուրախ լեցէք երկինք՝
ու անոր մէջը բնակողները. վայ երկիրին ու
ծովուն՝ որ բանտարկուն ձեզի ինկաւ, որ շատ
բարկութիւն ունի, ինչու որ քիչ ժամանակ պիւ-
տի կենայ։
13 Ու վիշապը երբոր տեսաւ թէ երկրի վրայ
ինկաւ, ան մանչ զաւակ ծնող կնկանը հալեցուց
14 ինկաւ։ Եւ ան կնկանը մեծ արծիւի երկու
թեւեր տրվեցաւ, որ անապատ իր տեղը թռչի.
ուր որ կրկերակրըվէր ժամանակ ու ժամանակ-
15 ներ՝ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն։ Եւ օձը
իր բերնէն ջուր վաղցուց կնկանը հետևէն, որ
16 անիկա ընկղմի։ Եւ երկիրը ան կնկանը օգ-
նեց, ու երկիրը իր բերանը բացաւ՝ և կլլեց

ան ջուրը , որ վիշապը իր բերնեն վազցուց : Ու վիշապը խետ բարկացաւ կնկանը վրայ , և գնաց պատերազմելու անոր ուրիշ զաւկըներուն հետ , որոնք որ Աստուծոյ պատուիրանները կրպահէին , ու Յիսուսի վկայութիւնը ունէին : Եւ կայնեցայ ծովին եւազին վրայ , Եւ տեսայ որ ծովէն գազան մը կելլար , և ունէր եօթը գլուխ ու տասը եղջիւր . և անոր եղջիւրներուն վրայ տասը սազաւարտ , ու անոր գլուխն վրայ հայհոյութեան անուն : Եւ ան գազանը որ տեսայ՝ ինձի նման էր , ու իր ոտքերը արջուկի պէս , և իր բերանը առիւծի պէս . ու վիշապը իր զօրութիւնը և իր աթոռը ու մեծ իշխանութիւնը անոր տուաւ : Եւ անոր գլուխներուն մէկը մեռնելու չափ վիրաւորված էր . ու իր մեռնելու խոցը կրբժնտարկոր . և բոլոր երկիրը ան գազանին վրայ զարմացաւ , որ վիշապը իր թագաւորութիւնը անոր տուաւ : Եւ երկիրպագութիւն ըրին վիշապին՝ որ գազանին իշխանութիւնն տուաւ , ու կրսէին . Ո՞վ է ատ գազանին նման . կամ ո՞վ կրնայ անոր հետը պատերազմ ընել : Եւ անոր բերան տրվեցաւ մեծ բաներ խօսելու ու հայհոյութիւն . և քառասուն երկու ամիս իշխանութիւն տրվեցաւ անոր : Ու իր բերանը հայհոյութեամբ Աստուծոյ դէմ բացաւ , և հայհոյեց անոր անունը ու անոր խորանը՝ և երկնային բնակութիւնը : Եւ իշխանութիւն տրվեցաւ իրեն սուրբերուն հետ պատերազմ ընելու ու անոնց յաղթելու . և իշխանութիւն տրվեցաւ իրեն բոլոր ազգերուն ու լեզուներուն և ժողովուրդներուն վրայ . Ու անոր երկրպագութիւն ընեն երկրի երեսը բոլոր բնակողները . որ իրենց անունները աշխարհիս սկիզբէն հետէ մորթված գառնուկին կենաց գիրքին մէջը գրված չեն : Որոնք որ լսելու ականջ ունին՝ լսող լսեն : Ինչու որ կան ոմանք որ գերու-

թեան պիտի քշվի ։ ոմանք ալ կան՝ որ սուրով պիտի մեռնին ։ ոմանք ալ կան՝ որ ինքզինքին պիտի սպաննեն ։ ասոնցմէ է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը ։

11 Եւ մէկ ուրիշ գազան մը տեսայ՝ որ երկրէն կելլար , ու գառի նման երկու եղջիւր ուներ , 12 ու կրվոսէր վիշապին պէս ։ Եւ առջի գազանին բոլոր իշխանութիւնը անոր առջեւը կգործէր , ու երկիրը և բոլոր անոր բնակիչները կրնէր որ երկիրպագութիւն ընեն առջի գազանին մինչև որ անոր մահուան խոցը առողջանայ ։ 13 Եւ շատ նշաններ կընէր , ու երկինքէն կրակ կիջցնէր երկրի վրայ մարդոց առջեւը , 14 Եւ երկրի վրայ բնակողները կըմոլորցնէր ան նշաններուն , որ իր ձեռքը տրված էր գազանին առջեւը ընելու ։ երկրի բնակողները ըսին իրեն՝ Հինէ ան գազանին պատկերը , որ սուրին խոցէն 15 ողջ մնաց ։ Ու իշխանութիւն տրվեցաւ անոր , որ ան գազանին պատկերին հոգի տայ ։ որ խօսի պատկերը , ու երկրի բոլոր բնակիչները անոր երկրիպագութիւն ընեն և ով որ ան գազանին պատկերին երկրիպագութիւն չընէր նէ՝ ա- 16 Նիկա մեռցուէ ։ Եւ բոլոր պզտիկները ու մեծերը և հարուստները և աղատները ու աղքատները ու ծառաները անոնց պիտի ընէ , որ անոնց նշան մը տայ աջ ձեռքին մէջ , ու անոնց ճակա- 17 տին ։ և որ մէկը չի կրնայ գնել ու ծախել՝ թէ որ չունենայ գիրին նշանը՝ ու գազանին անունը , 18 և անոր անունին համրանքը ։ Այստեղն է իմաստութիւնը ։ ով որ միտք ունի՝ թող համրէ ան գազանին թիւը ։ մարդու մը համրանք է , ու անոր անունին համրանքը ասիկա է ։ Վեց հարիւր վաթսուն ու վեց ։

ԳԼ. ԺԹ։

Եւ տեսայ՝ և ահա գառնուկը կեցեր էր Սիոն լեռանը վրայ ։ ու անոր հետը հարիւր քառասուն ու չորս հազարը , որոնք ունէին անոր անունը ու անոր Հօրը անունը իրենց ճակատներուն վրայ գրված ։ Եւ երկինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջուրեր կու ձայնի պէս , ու մեծ որոտումի ձայն մը ։ ու լսեցի քնար չալողներու ձայնի պէս՝ որ կը զարնէին իրենց քնարները ։ և նոր երգ կերգէին առջեւը՝ և չորս կենդանիներուն առջեւը՝ և երէցներուն առջեւը ։ ու մէկը չէր կրնար սորվիլ երգերը բայց միայն հինգ հարիւր քառասուներորս հազարը , որոնք որ երկրէն գնեցան ։ Ասոնք անոնք են՝ որ կնիկներու հետ չեն պղծուեցան , ու կոյս են ։ ասոնք գառնուկին կը հետեւին ուր որ ան երթայ ։ ասոնք մարդոց մէջէն գնորդուեցան Աստուծոյ ու Գառնին առջեւը Անարատ ։ և անոնց բերանը սուտ չի գտնուեցաւ ։ ինչու որ անբիծ են ։

Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ կը թռչէր երկինքին մէջ ։ և ունէր յաւիտենական աւետարան քարոզելու երկրի ապգերուն ու լեզուներուն ու երկրի վրայ կրնակին ։ և մեծ ձայնով կըսէր ։ Աստուծմէ վախցէք ու փառք տուէք անոր ։ ինչու որ անոր դատաստանին ժամը եկաւ ։ և երկրպագուեցէք երկինքը ու երկիրը և ծովը ու ջուրերուն աղբիւրները ։

Եւ ուրիշ երկրորդ հրեշտակ մը կու գար անոր հետեւէն՝ ու կըսէր ։ Ինկաւ ինկաւ ան մեծ Բաբելոնը՝ որ բոլոր հեթանոսները արբեցուց կատաղի իր պոռնկութեանը արբեցնող գինիէն ։ Եւ ուրիշ երրորդ հրեշտակ մը անոնց հետեւէն կու գար՝ ու մեծ ձայնով կըսէր ։ Ով որ գազանին ու անոր պատկերին երկրպագու-

Թիւն ըրաւ , կամ թէ անոր նշանին դրոշմը իր
ճակտին վրայ կամ իր աջ ձեռքին վրայ առաւ ,
10 անիկա Աստուծոյ բարկութեան գինիէն պիտի
խմի՝ որ առանց խառնուկի լեցուցած է բարկու-
թեան գաւաթին մէջը . և կրակով ու ծծումբով
պիտի տանջուի Աստուծոյ ու Գառնին առջեւը :
11 Եւ անոնց մուխը պիտի ելլայ յաւիտեանս յաւի-
տենից . և ցորեկ ու գիշեր հանգստութիւն չու-
նին անոնք՝ որ գազանին երկրպագութիւն ը-
րին , ու անոնք որ պատկերին երկրպագութիւն
12 ըրին՝ և անոր նշանը ու անունը առին : Եւ
սուրբերուն համբերութիւնը հոս է . ասոնք են
որ Աստուծոյ պատուիրանքները ու Յիսուսի
13 հաւատքը կը պահեն : Ու երկինքէն ձայն մը
լսեցի՝ որ կըսէր ինծի , Գրէ՛ . երանէկ ան մեռել-
ներուն՝ որոնք ի Տէր կը նընջեցին հիմայ . ասիկա
կըսէ Հոգին , ինչու որ իրենց աշխատութեա-
նէն հանգչեցան . բայց իրենց գործքերը իրենց
14 հետէն գացին :
Եւ տեսայ՝ և ահա ճերմակ ամպ մը , ու ան
ամպին վրայ Որդւոյ մարդոյ
նման . և իր գլուխը ոսկիէ թագ մը՝ ու իր ձեռ-
քը մէկ սուր մանգաղ մը ունէր :
15 Եւ ուրիշ հրեշտակ մը կելլար երկինքէն . մեծ
ձայնով երկնակոչէր ու կըսէր . Կոտն որ ատ ամ-
պին վրայ կը նստիս՝ խրկէ քու մանգաղդ ու
հնձէ . ինչու որ հունձելուն ժամանակը ե-
16 կաւ , ու երկրի հունձերը չոռած են : Եւ ան
որ ամպին վրայ կը նստէր՝ իր մանգաղը գետինը
երկնցուց , ու երկրի բոլոր բնակիչները կը հըն-
17 ձէր :
Եւ երկինքին մէջի տաճարէն ուրիշ հրեշտակ
մը կելլար . ու ասիկա ալ սուր մանգաղ մը ու-
18 նէր : Եւ ուրիշ հրեշտակ մը կելլար սեղանէն՝
որ կրակի վրայ իշխանութիւն ունէր , ու մեծ
ձայնով կանչեց ան հրեշտակին՝ որ սուր ման-

գաղը ունէր , ու ըսաւ ։ Երկրի այգիէն ողկոյզնե-
րը կհնձէ ։ ինչու որ ատոր մէջի խաղողը հասած
է ։ Եւ ան հրեշտակը իր մանգաղը գետինը 19
երկնցուց , ու անոր խաղողը կրկհնձէ , ու Աստու-
ծոյ մեծ հնձանին մէջ կրձգէր ։ Եւ ան հնձան 20
նը քաղաքին դուրսը կոխվեցաւ ։ ու ան հնձանէն
արիւն կելլար մինչև ձիին սանձը ։ և անոր եր-
կայնութիւնը հազար վեց հարիւր ասպա-
րէզ ։

ԺԵ ։ ԺԶ ։

Եւ ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը տեսայ 1
երկինքը ։ եօթը հրեշտակներ՝ որոնք եօթը վեր-
ջին պատուհասները ունէին ։ որովհետև անոնց-
մով կրկատարվէր Աստուծոյ բարկութիւնը ։
Ու տեսայ ապակեղէն ծովի պէս բան մը կրակով 2
խառնած ։ և անոնք որ յաղթեցին գազանին՝ ու
անոր անունին թիւին՝ և անոր պատկերին՝ ու ա-
նոր նշանին , անոնք ան ապակեղէն ծովին վրայ
կեցեր էին , ու Աստուծոյ քնարը ունէին ։ և 3
Մովսէսին Աստուծոյ ծառային երգը կեր-
գէին , ու ան գառին երգը՝ ըսելով թէ , Տէր
Աստուած Ամենակալ՝ քու գործերդ շատ մեծ
ու զարմանալի են , քու ճանապարհներդ ար-
դար ու ճշմարիտ են՝ ով ազգերուն ։ և ով չի վախնար , ու քու սուրբ 4
անունդ փառաւորեր ։ ինչու որ դուն միայն
սուրբ ես՝ և երկիրպագութիւն ընդունելու ար-
ժանի ։ որ բոլոր ազգերը պիտի գան՝ ու
քու առջիդ երկիրպագութիւն պիտի բնեն ։ ով
Տէր , երբոր քու արդարութիւնդ յայտնվի ։
Եւ ասկէ ետև տեսայ՝ ու բացվեցաւ վկայու- 5
թեան խորանին տաճարը , որ երկինքն էր ։ և 6
նոյն ան եօթը հրեշտակները՝ որ եօթը պատու-
հասները ունէին , ու տաճարին մէջը մաքուր ու
պայծառ կտաւներ հագեր էին ։ և իրենց ծիծե-

7 բուն վրայովը ոսկեղէն գօտի կապած : Եւ ան
չորս կենդանիներէն եօթը հրեշտակներուն եօ-
թը սկաւառակ տուին Յաւուրց բարկու-
թիւնովը լեցուն , որ կենդանի է յաւիտեանս
8 յաւիտենից : Եւ տաճարը Յաւուրց փառքին
ու անոր զօրութենանը մխուխովը լեցուեցաւ . ու մէ-
կը չի կրնար ան տաճարը մտնալ՝ մինչև որ կա-
տարուին եօթը պատուհասները ան եօթը հրեշ-
տակներէն :

ԳԼ· ԺՕ։

1 Եւ տաճարէն մեծ ձայն մը լսեցի՝ որ ան եօթը
հրեշտակներուն կըսէր . Գացէք ատ Յա-
ւուրց բարկութենանը եօթը սկաւառակները
երկրի վրայ թափեցէք :
2 Ու առջի հրեշտակը գնաց , և իր սկաւառակը
երկրի վրայ թափեց . ու չարաչար պատուհաս ե-
ղաւ մարդոց վրայ , որոնք գազանին նշանը ու-
նէին՝ ու անոր պատկերին երկիրպագութիւն ը-
ընին :
3 Եւ երկրորդ հրեշտակը իր սկաւառակը ծո-
վին վրայ թափեց , ու ջուրերը մեռած հոգե-
արիւն դարձան , ու ծովին մէջի բոլոր շնչաւոր
կենդանիները սատկեցան :
4 Եւ երրորդ հրեշտակը իր սկաւառակը գետե-
րուն ու ջուրերուն աղբիւրներուն վրայ թափեց ,
5 և անոնք արիւն դարձան : Ու ան հրեշտակէն
լսեցի՝ որ կըսէր , Արդար է ան որ է՝ ու էր , և
սուրբ է իր գործերուն մէջ , որ ասանկ դա-
6 տաստան ըրաւ . ինչու որ սրբերուն ու մարգարէներուն արիւնը
բերուն արիւնը ու մարգարէներուն արիւնը
թափեցին . անոր համար բան արժանացուն
7 անոնց արիւն խմել տուաւ : Եւ ան սեղա-
նէն լսեցի՝ որ կըսէր , Այո՛ Ամենակալ Տէր
Յաւուրց , քու դատաստաններդ արդար ու
ճշմարիտ են :

Եւ չորրորդ հրեշտակը իր սկաւառակէն արե- 8
ւին վրայ թափեց ։ Ու անոր ջերմութիւնը տրուեցաւ 9
որ խորշակահար ընէ մարդիկները կրակով · և
սաստիկ տաքով տաքցան մարդիկ , ու Աստուծոյ
անունին Աստուծոյ , որ ասոնց պատուհասներուն վրայ
ինքը իշխանութիւն ունի · ու չապաշխարեցին
Աստուծոյ փառքին համար ։

Եւ հինգերորդ հրեշտակը իր սկաւառակէն 10
գազանին աթոռին վրայ թափեց , ու անոր թա-
գաւորութիւնը խաւարեցաւ · և ցաւին նեղու-
թենէն լեզուներնին կրծամէին · ու երկնից 11
Աստուծոյն հայհոյեցին իրենց ցաւերէն և դառն
նեղութենէն , ու իրենց գործերէն չապաշխա-
րեցին ։

Եւ վեցերորդ հրեշտակը իր սկաւառակէն մեծ 12
Եփրատ գետին վրայ թափեց , ու անոր ջուր-
րը ցամքեցան , որ արեւելքին թագաւորին ճամ-
բան պատրաստըվի ։ Եւ տեսայ որ վիշապին 13
բերնէն ու գազանին բերնէն՝ և սուտ մարգա-
րէին բերնէն իրեք պիղծ ոգիներ կելլային գոր-
տերու նման ։ Ասոնք որ անոնք դիւական օգի- 14
ներ էին՝ որ նշաններ կընէին , ու բոլոր երկրի
թագաւորներուն կերթային՝ անոնք պատերազ-
մի ժողվելու համար Ամենակալ Տէրոջը մեծ օրը ·
վասն զի Տէրը ասանկ բաւ ։ Ահա գողի պէս 15
կուգամ · երանէկ անոնց որ արթուն են , ու իւ-
րենց հաներնին կրպահեն , որ մերկ չի պրտրտին ,
ու իրենց ամօթը երեւի ։ Եւ անոնք մէկ տեղ 16
մը պիտի ժողվեմ , որ Եբրայեցերէն Արմագե-
դոն կըսվի ։

Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառակէն 17
օդին վրայ թափեց · և երկինքէն ու ան աթոռէն
մեծ ձայն մը եկաւ՝ ըսելով , Եղաւ ։ Եւ կած- 18
կր լուաքներ ու ձայներ և որոտումներ եղան · ու
մեծ շարժ մը եղաւ՝ անանկ որ սկիզբէն հետ
քանի որ մարդը երկրի վրայ եղաւ , անանկ մեծ

19 շարժում եղած չէր։ Եւ մեծ քաղաքը իրեք
մաս եղաւ, ու ազգերուն քաղաքները կործանե-
ցան, և մեծ Բաբելոնը Աստուծոյ առջևը յիշ-
վեցաւ, որ իր սաստիկ բարկութեանը գինիին
20 գաւաթը անոր տայ։ Եւ բոլոր կղզիները փա-
21 խան ու լեռները բնաջինջ եղան։ Եւ խոշոր
կարկուտ մեկ տաղանդի մը կշռադով երկինքէն
մարդոց վրայ կիջնար. ու մարդիկ հայհոյեցին
Աստուծոյ որ երկնքէն է՝ ան կարկուտին պա-
տուհասին համար. ինչու որ մեծ ու սաստիկ էր
ան պատուհասը։

ԺԷ. ԺԱ։

1 Եւ եօթը հրեշտակներէն՝ որոնք եօթը սկաւա-
ռակները ունէին, մեկը եկաւ. խօսեցաւ ինծի
հետ՝ ու ըսաւ, Ելո՛ւ եկո՛ր՝ ու քեզի ցուցնեմ
ան մեծ պոռնիկին դատաստանը, որ շատ ջուրե-
2 րուն վրայ կը նստի. որուն հետ երկրի թա-
գաւորները պոռնկեցան, ու երկրի բնակիչնե-
րը անոր պոռնկութեան արբեցուցող գինիէն
3 խմեցին։ Եւ իս առաւ անապատը տարաւ Ելո-
գիովը. ու տեսայ մէկ կնիկ մը որ կարմիր գա-
զանի մը վրայ նստեր էր. և անիկա լեցուն էր
հայհոյութեան անուններով. և գազանը որ տեսայ
4 եօթը գլուխ ունէր ու տասր եղջիւր։ Եւ ան
կնիկը ծիրանիներ ու կարմիրներ հագեր էր. և
ջաղդարված էր ոսկիով ու մարգարիտով և
պատուական քարերով, իր ձեռքը մէկ ոսկիէ
գաւաթ մը բռնած, որ գարշելի ու պիղծ պոռ-
5 նկութիւնով լեցուն էր. և իր ճակատը ա-
նունն գրված էր՝ խորհուրդ. Մեծ Բաբելոն
պոռնիկներուն ու երկրի գարշելիներուն մայրը։
6 Եւ տեսայ ան կնիկը որ սուրբերուն արիւնովը
ու բոլոր վկաներուն արիւնովը գինովցած էր.
և երբոր տեսայ անիկա մեծ զարմանքով զար-
7 մացայ։ Եւ ան հրեշտակը ինծի ըսաւ. Ինչու

զարմացար , ես քեզի պիտի ըսեմ՝ ան կենդանը
խորհուրդը , ու ան գազանին՝ որ անիկա վրան
առած է · ան որ եօթը գլուխը ու տասը եղջիւրը
ունի : Եւ ատ գազանը որ տեսար՝ ան որ կար , 8
ու չէր , և դժոխքէն ելլելու՝ ու կորուստը եր-
թալու վրայ է · և երկրի վրայ բնակողներուն
բոլորը՝ որոնց անունները աշխարհի սկիզբէն
հետէ կենաց գիրքը գրված չէր , զարմացան ան
գազանին վրայ որ գոն կըտեսնային՝ թէ կար ,
ու չէր , ու մօտ է : Հոս է խմաստութիւնը՝ ան 9
որ միտք ունի , և ան եօթը գլուխը եօթը լեռ-
ներ են , ուր որ կինկը անոնց վրայ նըստեր էր ·
և անոնք եօթը թագաւորներ են · և եօթը թա-
գաւորներ ըլլալով , հինգը ինկաւ՝ ու մէկը 10
մնաց · և մէկը նկած չէ · և երբոր գայ՝ քիչ ա-
տեն ունի : Ու ան գազանը որ կար ու չէր , 11
անիկա ալ ուրերորդ է · և ան եօթներէն է , ու
կորսըվելու պիտի երթայ : Եւ տասը եղջիւրը 12
որ տեսար՝ տասը թագաւորներ են , որոնք դեռ
թագաւորութիւն առած չեն · հապա կառնեն՝
ու մէկ ժամի չափ իշխաններ կրլլան · և անոնք
գազանին հետը իշխանութիւն կառնեն : Անոնք 13
մէկ կամք մը ունին , ու իրենց զօրութիւնը
և իշխանութիւնը գազանին կուտան : Ու գա- 14
ռին հետը կրպատերազմին , և գառը կրյաղթէ
անոնց · ինչու որ անոնց Տէրն է՝ ու թագաւոր-
ներուն Թագաւորը · և անոր հետը եղողները
կանչված են՝ ընտրըված՝ ու հաւատացեալ :
Եւ բսաւ ինծի · Ին ջուրը որ տեսար՝ որուն 15
վրայ պոռնիկը նստեր էր , ժողովուրդներն են՝
ու բազմութիւնները և ազգերը ու լեզուները :
Եւ տասը եղջիւրները՝ որ տեսար գազանին 16
վրայ , անոնք պիտի ատենան ան պոռնիկը ու ա-
տեն անիկա , և անոր մարմինը պիտի ուտեն՝ ու
անիկա կրակով պիտի էրեն : Ինչու որ 17
Ի՛ստուած անոնց սըրտերնուն մէջ դրաւ որ ա-

նոյնք մէկ կամք ըլլան՝ ու թագաւորութիւնը
գազանին տան , մինչև որ Աստուծոյ խօսքը կա-
18 տարվի : Եւ ան կինկը որ տեսար՝ մեծ քաղաքն
է , որ ինքը կըթագաւորէ երկրի թագաւորնե-
րուն վրայ :

ԳԼ. ԺԲ։

1 Ետև ասկէ եարը ուրիշ հրեշտակ մը տեսայ եր-
կինքէն իջած՝ որ մեծ իշխանութիւն ունէր , ու
2 երկիրը անոր փառքէն լուսաւորեցաւ : Եւ մեծ
ձայնով կանչեց՝ ըսելով , Ինկաւ մեծ Բաբելոնը՝
որ դևերուն բնակարան էր եղեր , ու բոլոր
պիղծ դևերուն կենալու տեղ , և բոլոր պիղծ ու
ատելի հոգիներուն պահպանութեան բանտ .
3 ինչու որ անոր պոռնկութեան բարկութիւնէն
գինեէն Հարբեցան բոլոր ազգերը ու երկրի
թագաւորները՝ որ անոր հետ պոռնկեցան . և
երկրի վաճառականները անոր եվելքը փափկու-
4 թենէն Հարբտացան : Ու երկինքէն ձայն մը
լսեցի որ կըսէր . Ելէք ատոր մէջէն իմ ժողո-
վուրդս , որ ատոր մեղքին Հաղորդ չըլլաք՝ ու ա-
5 տոր պատուհասները չունենաք . ինչու որ ա-
տոնց մեղքերը մինչև երկինքը Հասան կըմնացան .
ու Աստուած ատոր ամբարշտութիւնները միտք
6 բերաւ : Եւ կըՀատուցանէ ատոր ինչպէս որ
մեղ Հատուց . ու ատիկա երկուապատիկ իր գործ-
քերուն փոխարէնը պիտի առնէ . և ան գաւաթը
7 որ լցուց՝ երկուապատիկ լցցուցէք իրեն : Եւ
որչափ որ փառաւորեց զինքը ու ուրախացաւ ,
այնչափ ալ սուգ Հատուցէք անոր . ինչու որ իր
սրտին մէջը կըսէր թէ Ես անձն ես թագուհի
մի պիտի նստիմ , ու բնաւ որբևմարի չեմ պիտի
8 ըլլար : Անոր համար մէկ օրվան մէջ պիտի
գան ատոր վրայ պատուհասները՝ մահ , ու սուգ ,
և սով , ու կրակով պիտի երի . ինչու որ կարող
9 է Տէր Աստուածը՝ որ անիկա դատեց : Եւ պի-

տի լան ու ծեծկրտին աստր վրայ երկրի Թա-
գաւորները՝ որոնք որ անոր հետ պոռնկեցան ու
խաղացին , և պիտի ողբան երբոր աստր տան-
ջանքով երկիւղն մուխը տեսնան . աստր տան- 10
ջանքին վախէն հեռուէն պիտի կայնին՝ ու ըսեն ,
Ա՛յ քեզի մեծ Խարհլոն քաղաք . զօրաւոր քա-
ղաք . ինչու որ մէկ ժամու մէջ եկաւ հասաւ քու
դատաստանդ ։ Եւ երկրի վաճառականները պի- 11
տի ողբան ու սուգ ընեն քու վրադ . ինչու որ
անոնց վաճառքը ալ մէկը ծախու չառնեն . ու 12
ալ շատ մը չի պիտի ըլլայ քեզմէ , ոսկիի ու ար-
ծաթի , և պատուական քարերու ու մարգրիթ-
տի և բիսեղի ու ծիրանիի և ոսկեթելէ՝ ու կար-
միր որդի՝ և ամէն խունկի փայտերու՝ ու բոլոր
փղոսկրեայ ամաններու և ամէն պատուական
փայտէ՝ ու պղինձէ՝ և երկաթէ՝ ու կիճէ ման-
ները . և կինամոն՝ ու բոլոր խունկերը՝ և եղը ու 13
կնդրուկը՝ և գինին ու ձէթը՝ և բարակ ալուրը
ու ցորեն՝ և բոլոր ստացուածները՝ արջառը ու
ոչխարը՝ և ձիերը ու կառքերը , որ մարդոց մար-
միններուն ու հոգիներուն վայելքն են ։ Եւ 14
քու անձիդ բոլոր ցանկութիւնը քեզմէ գնաց , ու
բոլոր լուսաւիսյլ վայելչութիւնը՝ պարարտը ու
գեղը ու սպիտակը քեզմէ գնաց , և ալ չի պիտի
գտնաս ատոնք ։ Ա՛ս բաներով հարստացած 15
բոլոր առուտուր ընողները քեզմէ հեռու պիտի
կենան քու տանջանքիդ վախէն լալով ու սուգ
առնելով , պիտի ըսեն . Ա՛յ վայ մեծ քաղաք՝ 16
որ հագած էիր բիսեղներ ու ծիրաններ և որդի
կարմիր՝ ոսկեզէն բաներ ու ազնիւ քարեր և
մարգրիտներ . ինչու որ քու այնքան հարստու- 17
թիւնդ մէկ ժամու մէջ աւերացաւ . ու ամէն
նաւավարները՝ և ան ամէնը որ տեղ տեղ
նաւարդութիւն կընեն , ու նաւաստիները , և
որոնք որ ուռկանով կերրանին , հեռուն պիտի
կենան լալով . և սեսնալով անոր երկիւղն 18

մուխը՝ պիտի կանչեն ըսելով , Ա՛ւ նման է աս
19 մեծ քաղաքիս . ու իրենց գլխուն վրայ հող պիտի
ձգեն , ու մեծ ձայնով կոծելով՝ լալով և սգալով
պիտի ըսեն . Ա՛ւ վայ վայ մեծ քաղաք , որով ամենք-
նիս կը հարստանայինք , որ նաւեր բռնած էինք
ծովերու մէջ քու պատուականութեանդ համար .
ինչու որ մէկ ժամին մէջը ապականած կործանե-
20 ցար : Ուրախացէք անոր վրայ երկինք՝ ու
սուրբ առաքեալներ և մարգարէներ , որ Աստ-
ուած ձեր վրէժը անկէց հանեց :
21 Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մը քար մը առաւ
չաղացքի մեծ քարի նման , ու ծովը ձգեց՝ ըսելով ,
Այսպէս սաստիկ պիտի ինկայ Բաբելոն մեծ քա-
22 ղաքը՝ ու ալ չի պիտի գտնըվի : Եւ քեաթ եր-
գողներուն ու վարպետ երաժիշտներուն և փող
չալողներուն ու թմբուկին ձայնը ալ չի պիտի
23 լսուի քու մէջդ . և ճրագին լոյսը ու չաղացքի
քարին ձայնը ալ չի պիտի երևայ քու մէջդ .
ու փեսային ձայնը և հարսին ձայնը ալ չի պիտի
լսուի քու մէջդ . ոչ ալ քու վաճառականներդ՝
երկրի փառաւորները ու մեծամեծները , որ քեղ-
մով կըզուարճանային . ինչու որ քու գեղ սրբազ
կախարդութիւնովդ բոլոր ազգերը մոլորեցան :
24 Եւ բոլոր մարգարէներուն ու սուրբերուն ա-
րիւնը քու մէջդ գտնըվեցաւ , և ան ամենուն՝
որ կենդանիներուն երկիրը գըբված են :

ԿԱ. ԺԹ։

1 Ե՛տ անկէ ետքը երկինքը մէկ բազմութեան մը
մեծ ձայն լսեցի՝ ըսելով , Ալէլուիա . փրկու-
թիւն ու փառք և պատիւ ու զօրութիւն մեր
2 Աստուծոյն . ինչու որ ճշմարիտ ու արդար են
անոր դատաստանները , որ ան մեծ պոռնիկը իր
պոռնկութեան մէջ դատեց , ու իր ծառաներուն
3 արիւնին վրէժը անոր ձեռքէն հանեց : Եւ
կրկին անգամ օրհնեցին ու ըսին , Ալէլուիա .

ու անոր մուխը յաւիտեանս յաւիտենից կելլար ։
Եւ քանդչորս երէցները ու չորս կենդանիները 4
ինկան , ու երկիրպագութիւն ըրին Աստուծոյ՝
որ փառաց աթոռը նստած էր , ըսելով՝ Ամէն ,
Ալէլուիա ։ Եւ աթոռէն ձայն մը կելլար՝ ըսե- 5
լով , Մեր Աստուծոյ օրհնութիւն տուէք բոլոր իր
ծառաները , ու զուք որ անկէց կրնաք՝ պզտիկներ ու մեծեր ։ Եւ մեծ բազմութեան 6
ձայն մը լսեցի՝ շատ ջուրերու ձայնի պէս ,
ու խիստ որոտումի ձայնի պէս՝ ըսելով ,
Ալէլուիա ։ Ինչու որ Ամենակալ մեր Տէր Աստ-
ուածը թագաւորեց ։ Կրնանք՝ և կու- 7
բասանանք ու փառք կուտանք անոր , որ գառին
հարսնիքը եկաւ , ու կինը իր հարսը ինքզինքը
պատրաստեց ։ և իրեն տրվեցաւ՝ որ բիւսինեղէն 8
հագնի՝ ճերմակ մաքուր ու փայլուն ։ (որ ան
բիւսինեղը սուրբերուն արդարութիւնն է) ։ Եւ 9
ան երէցներէն մէկը կրսէր ինծի , Գրէ՝ ատիկա ։
Երանելի են անոնք որ գառին հարսնիքի
ընթրիքին կանչըված են ։ Ես ալ անոր ոտքին 10
առջևը ինկայ , երկրիրպագութիւն բրի անոր , ու
ըսաւ ինծի , Մ՚տիկ ըրէ՛ իմ առջիս մի՛ ինար ։
ինչու որ ես ալ քու ծառայակիցդ եմ՝ ու քու
եղբայրներուդ , որոնք որ Յիսուս Քրիստոսի
վկայութիւնը ունին ։ միայն Տէր Աստուծոյ երկ-
րիրպագութիւն բրէ՛ ։ ինչու որ Յիսուսին հաս-
տատութիւնովն է առ տեսիլքդ՝ ու մարգարէ-
թեան Հոգիդ ։ պատճառն որ Յիսուսի վկայու-
թիւնն է Հոգւով սրբով՝ որ մարգարէներուն
վրայ էր ։
Եւ տեսայ երկինքը բացված , ու ահմիսկ մէկ 11
ճերմակ ձի մը , ու ան որ անոր վրայ հեծեր էր՝
հաւատարիմ ու ճշմարիտ կոչվի ։ և արդարու-
թեամբ դատաստան կըտեսնայ՝ ու կրպատերազ-
մի ։ և անոր աչքը կրակի բոցի պէս , ու անոր 12
գլխուն վրայ շատ թագեր , ու գրված անուն մը

13 ունէր՝ որ մէկը չի գիտէր, միայն Թէ ինքը. և
արիւնով ներկուած լաթի մը հագած էր. ու ա-
14 նոր անունը Ներ Աստուծոյ կրսէին: Եւ եր-
կինքին զօրավարները՝ ու երկինքին զօրքերը ա-
նոր նմանէն կերթային ճերմակ ձիերով՝ մաքուր
15 ու ճերմակ ընկերներ հագած: Եւ անոր բեր-
նէն սրած Թուր մը կելլար, որ անով ազգերը
զարնէ, ու ինքը երկաթէ գաւազանով պիտի
հովուէ անոնք. ու Ամենակալ Աստուծոյ սաստիկ
բարկութեան գինիին հնձանը ինքը պիտի կոխէ:
16 Եւ իր վերարկուին վրայ ու իր անդամներուն
վրայ գրուած գիր մը ունէր, Թագաւորներուն
Թագաւորը՝ ու Տէրերուն Տէրը:
17 Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ որ արեւին վրայ
կեցեր էր, ու մեծ ձայնով կանչեց երկինքին
մէջը թռչող բոլոր հաւերուն՝ ըսելով, Եկէք
18 մեծ Աստուծոյ ընթրիքին ժողովուեցէք. ու կե-
րէք Թագաւորներուն մարմինները՝ ու զօրաւոր-
ներուն մարմինները՝ ու ձիերուն մարմինները,
և բոլոր անոնց վրայ նստողներուն, ու ազատ-
ներուն և ծառաներուն՝ մեծին ու պզտիկին
մարմինները:
19 Եւ տեսայ գազանը ու երկրի Թագաւորները
ու անոնց զօրքերը մէկ տեղ ժողովված պատե-
րազմ ընելու անոր հետ, որ ճերմակ ձիին վրայ
20 նստեր էր, ու անոր զօրքերուն հետ: Եւ գա-
զանը բռնուեցաւ, ու անոր հետ սուտ մարգա-
րէն՝ որ անոր առջեւը նշաններ կրնէր, և անոնք
որ գազանին նշանը առնել սրսւաւ,
և անոր պատկերին երկիրպագութիւն ընողնե-
րը. ու անոնք ողջ ողջ ծծումբով վառված կրակին
21 լիճը ձգեցին: Եւ ուրիշներն ալ սպաններվե-
ցան ձիին վրայ նստողին Թուրէն, որուն բեր-
նէն կելլար անոնք Թուրը, ու բոլոր Թռչունները
անոնց մարմիններէն կիշտացան:

ԳԼ. Ի։

Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ երկինքէն կիջ- 1
նար , ու գաւթաբին բանալիքները և մեծ շղթայ-
ները ունէր իր ձեռքը ։ Ու բռնեց ան վիշապը 2
առջի օձը՝ որ Սատանան է , և
կապեց անիկա հազար տարի ։ ու անիկա գցաւ 3
քին անդունդը ձգեց՝ և գոցեց ու կնքեց անիկա
որ ալ չի մոլորցունէ ազգերը մինչև որ հազար
տարին լմննայ ։ և անկէ ետքը պէտք է որ քակվի
անիկա քիչ մը ժամանակ ։

Եւ աթոռներ տեսայ , ու նստան անոնց վրայ ։ 4
և անոնց դատաւորութիւն տրվեցաւ՝ ընտրելոց
Յիսուսի վկայութեանը համար ու Աստուծոյ
խօսքին համար չարաշարվողներուն հոգիները ։ և
անոնք որ գազանին երկիրպագութիւն չըրին , ու
անոր նշանը իրենց ճակատներուն վրայ ու ի-
րենց ալ ձեռքին վրայ չառին ։ և ապրեցան՝ ու
Քրիստոսի հետ հազար տարի թագաւորութիւն
ըրին ։ Եւ ասկէ նաև մեռելներէն մէկը չապ- 5
րեցաւ , մինչև հազար տարին որ կատարվեցաւ ։
ասիկա է առջի յարութիւնը ։ Երանէկ ան 6
սուրբերուն , որոնք առջի յարութեան մէջ բա-
ժին ունին ։ ասոնց վրայ երկրորդ մահը իշխա-
նութիւն չունի ։ հապա անոնք Աստուծոյ՝ ու
Յիսուս Քրիստոսին քահանաները պիտի ըլլան ։
ու անոր հետ հազար տարի պիտի թագաւորեն ։

Եւ հազար տարիէն ետքը պիտի արձակվի Սա- 7
տանան՝ ու բանտէն հանվի ։ ան ալ պիտի ելլայ ու
մոլորցունէ բոլոր ազգերը երկրի չորս կողմերը ։
և ձեռք պիտի առնէ Գոգը ու Մագոգը անոնց-
մով բոլոր զօրքերը պատերազմի ժողվելու ։
որոնց համրանքը ծովին աւազին չափ է ։ Եւ 8
երկրի ընդարձակութեան մէջը պիտի ելլան , ու
սուրբերուն բանակները չորս կողմէն պիտի պա-
տեն , ու սիրելի քաղաքն ալ ։ Եւ երկինքէն 9

Աստուածմէ կրակ պիտի ինջնայ՝ ու պիտի ուտէ
անոնք՝ և անոնց զօրապետներ Աստանան՝ որ
անոնք մոլորեցուց · ու պիտի ձգէ անոնք կրակին
ու ծծումբին ծովին մէջ , ուր տեղ որ ան
գազանն է , և ան սուտ մարգարէն · ու պիտի
չարչարվին ցորեկ ու գիշեր :
Եւ մեծ ձերմակ աթոռ մը տեսայ · ու անոր
վրայ Հնէ Նստած էր , որուն երեսէն երկինք ու
երկիր կրվախնային ու կրփախչէին , և տեղ չի
գրանըվեցաւ անոնց : Եւ տեսայ մեծ ու պզտիկ
մեռելներ՝ որ աթոռին առջեւը կեցեր էին · ու
գիրքերը կրբացվէին , և մէկ ուրիշ կենաց գիրք
մը բացվեցաւ · ու մեռը Հնէն գրվածներէն մե
ռելները դատվեցան Հնէն Հնէ իրենց գործքե
րուն պէս : Եւ ծովը իր Հնէն մեռելները տուաւ ,
ու մահը և գերեզմանը իրենց մեռելները · ու ա
մէն մէկը իրենց գործքերուն պէս դատվեցան :
Ա՛հն ու գերեզմանը կրակին լիճին մէջ ձգվե
ցաւ · ասիկա է երկրորդ մահը : Ու ով որ կեն
նաց գիրքին մէջը գրված չի գտնըվեցաւ՝ կրակին
լիճին մէջը ձգվեցաւ :

ԻԱ.

Եւ մէկ նոր երկինք մը ու նոր երկիր մը տե
սայ · ինչու որ առջի երկինքը ու երկիրը ան
ցաւ · ու ծով չի կար : Եւ տեսայ քաղաքը նոր
Երուսաղէմը տեսայ՝ որ Աստուածմէ կիջնար ու
երկինքէն , իր երկանը համար զարդարված ու
պատրաստված հարսի մը պէս : Եւ երկինքէն
ձայն մը լսեցի՝ որ կրսէր · Հնա Աստուծոյ խո
րանը մարդիկներուն մէջը , ու անիկա անոնց
հետ պիտի բնակի · և անոնք անոր ժողովուրդը ,
ու ասիկա անոնց Աստուածը Հնէ ընչ · և ին
քը անոնց աչքէն բոլոր արցունքները պիտի սրբէ
քէ · ու մահ չի կայ , ոչ սուգ և ոչ աղաղակ ,
ոչ ցաւեր և ոչ աշխատանք՝ ալ մէյ մըն ալ չի

կայ · ինչու որ ան առջինը անցաւ : Եւ ան որ 5
ամբոխին վրայ նստեր էր՝ բսաւ ինծի · Կ՚հա ա-
մէն բաներ նոր կընեմկոր · ու բսաւ ինծի , Գրէ՛ ·
ինչու որ ասս խօսքերը ճշմարիտ ու Հաւատարիմ
են : Եւ բսաւ ինծի , Եղայ՝ ես եմ ալֆա ու ով՝ 6
սկիզբ ու վերջը · ես ծարաւներուն ձրի կուտամ
կենաց ջուրին աղբիւրէն : Կ՚ն որ յաղթութիւն 7
կրնէ՝ ասս ամէնը պիտի ժառանգէ · ու ես անոնց
Կ՚ստուած կըլլամ՝ , անոնք ալ ինծի որդիք կըլ-
լան : Եւ ծոյլերուն ու անհաւատներուն՝ սպա- 8
նողներուն ու պոռնիկներուն և կախարդներուն
ու կռապաշտներուն՝ ու դէղ տրվողներուն՝ և
բոլոր սուտզրուց ամբարիշտներուն բաժինը՝
կրակով ու ծծումբով էրված ան լիճին մէջն է ·
որ է երկրորդ մահը :

Եւ եօթը հրեշտակներէն մէկը ինծի եկաւ · 9
որոնք ունէին եօթը սկաւառակներ որ լեցուն
էին վերջին եօթը պատուհասներով · խօսեցաւ
իմ հետս՝ ու բսաւ · Եկո՛ ցուցընեմ քեզի հար-
սը ու Կառին կնիկը : Եւ հոգիով առաւ մէկ 10
բարձր ու մեծ լեռան մը վրայ իս տարաւ · և ցու-
ցուց ինծի ան մեծ ու սուրբ Երուսաղէմ քաղա-
քը , որ երկինքէն իջած էր Կ՚ստուծմէ · ու Կ՚ս- 11
տուծոյ փառքը ունէր · և անոր մէջը լուսաւո-
րութիւն կար՝ որ պատուական քարերու կընմա-
նէր , ինպոզ յասպիս քարը սառի նման ու կենդա-
նի : Եւ անոր պարիսպները մեծ ու բարձր էին , 12
և տասներկու դուռներ ունէր · ու տասներկու
դուռները տասներկու հրեշտակներ · և անոնց մէ-
կուն անուննները դուռներուն վրայ գրված էր՝
Իսրայէլի տասներկու ցեղերուն նայելով :
Կ՚րևելքի կողմն իրեք դուռ · ու Հիւսիսային 13
կողմն իրեք դուռ · և Հարաւային կողմն իրեք
դուռ · ու Կ՚րևմուտքին կողմն իրեք դուռ :
Եւ ան քաղաքին պարիսպը տասներկու 14
հիմ ունէր , ու անոնց վրայ գառին տաս-

նեւրկու առաքեալներուն տասներկու անուն-
15 նները ՝ Երէց էր : Եւ ան որ իմ՝ Հնտս
կրնասէր իր ձեռքը ոսկիէ եղեգ մը ունէր ,
որ ճառ քաղաքը չափէ ու անոր դուռնե-
16 րը ու անոր պարիսպները : Եւ ան քաղաքը
քառակուսի էր . ու իր երկայնութիւնը որչափ
որ էր՝ այնչափ լայնութիւնն ալ ու բարձրու-
թիւնն ալ հաւասար . ու անոր երկայնութեան
չափը տասներկու հազար ասպարէզ . և անոր
լայնութիւնը ու բարձրութիւնը մէկ չափ՝
17 հաւասար : Ու անոր պարիսպը հարիւր քա-
սունչորս ասպարէզ չափեց՝ մարդու չափով ,
18 այսինքն՝ հրեշտակին չափովը : Եւ քաղաքին
պարիսպներուն շինուածքը յասպիս էր . ու
քաղաքը զուտ ոսկի էր՝ մաքուր ու ճերմակ ապա-
19 կիի նման : Եւ քաղաքին հիմերը բոլոր ազնիւ
քարերէ էին . պարիսպին առջի հիմը յասպիս
էր . երկրորդը՝ շափիղայ . երրորդը պղինձի
20 գոյն . չորրորդը՝ զմրուխտ . հինգերորդը՝ ե-
ղեգնաքար . վեցերորդը՝ սարդիոն . եօթներորդը՝
ոսկեքար . ութերորդը՝ բիւրեղ . իններորդը՝
տապազիոն . տասներորդը՝ քրիսոպրասոս . տասնը-
մէկերորդը՝ յակինթ . տասներկուերորդը՝ ամե-
21 թիստոս : Եւ տասներկու դուռներն ալ տասներ-
կու մարգարիտէ էին մէկ ձեւով . ու ամէն մէկ
դուռները մէկմէկ առանձին մարգարիտէ մէկմէկ դուռ
էին . ու քաղաքին փողոցները մաքուր ոսկի էր՝
22 ապակիի նման պայծառ : Եւ անոր մէջը տա-
ճար չտեսայ . ինչու որ Տէր Աստուած Ամե-
23 նակալը ու Գառը անոր մէջը տաճար էր : Եւ
քաղաքին արեւ ու լուսին պէտք չէր , որ անոր
լուսաւորեն . ինչու որ Աստուծոյ փառքը անոր
ամեն առեն կը լուսաւորէր , ու Գառնուկը ճրագ
24 էր անոր մէջ : Եւ հրեշտակ ազգերը անոր լու-
սովը կերթային , ու երկրի թագաւորները անոր
25 փառքովը կը լուսաւորվէին : Եւ անոր դուռնե-

բը ցորեկ ու գիշեր չէին գոցվեր , Հապա ամէն
ատեն բաց կրկենային ։ և անոր մէջը բնաւ դի-
չեր չէր բլլար ։ Հապա ազգերուն փառքը ու պա- 26
տիւը ։ Եւ Հոն չի մտներ ան ամէնը՝ որ 27
կամքերնին չար է , ու պիղծ ու սուտ-
ղբուց (եւ) ։ Հապա միայն անոնք՝ որ գա-
ռին կենաց գիրքին մէջը գրված են ։ Եւ Ի՛
ինծի մէկ մաքուր գետ մը ցուցուց կենդա- .
նի ջուրի՝ սաւ պէս , որ կելլար Աստու-
ծոյ ու Գառին աթոռէն ։ Եւ քաղաքին մի- 2
ջոցներուն մէջէն կերթար ։ ու ան գե-
տին եզերքը մէկ կին ու մէկալ կին կենաց
ծառը էր որ տասներկու պտուղ կը
բերէր ։ որ ամէն մէկ ամիս իրենց պտուղ-
նին կուտային ։ ու ան ծառին տերևը հե-
թանոսներուն բժշկութիւն կըլլար ։ Եւ Հոն 3
նզովք չի կար ։ ու անոր մէջն էր Աստուծոյ
ու անոր Գառին աթոռը ։ և անոր ծառանե-
րը կրպաշտեին անիկա ։ և անոր երեսը 4
կըտեսնային ։ ու անոր անունը իրենց ճա-
կատին վրայ գրված էր ։ Եւ Հոն գիշեր չի 5
կար , ու Հոն ճրագ՝ ու արևի լոյս պէտք չէր ։
ինչու որ Տէր Աստուած անոնք կըլուսաւո-
րէր ։ և յաւիտեանս յաւիտենից պիտի թա-
գաւորեն ։

Ու ըսաւ ինծի ։ Այս խօսքերը հաւատարիմ է 6
ու ճշմարիտ ։ և սուրբ մարգարէներուն Տէր
Աստուածը իր հրեշտակը խրկեց՝ իր ծառային
ցուցընելու ինչ որ շուտով պիտի բլլայ ։ Ահա 7
շուտով ես կուգամ որ ։ Երանէկ անոր՝ որ կրպահէ
այս մարգարէութեան խօսքը ։

Ու ես Յովհաննէս լսեցի՝ և այս ամէնը տեսայ ։ 8
և երբ լսեցի ու տեսայ՝ ինկայ ու երկրպագութիւն
ըրի այն հրեշտակին՝ որ այս ամէնը ինծի կրցուց-
նէր ։ Եւ ըսաւ ինծի , Մի առջևս մի՛ ընար ու 9
երկրպագութիւն ըներ ։ ինչու որ ես ալ քու ծա-

ոայակիցդ եմ ու քոյ եղբայրներուդ , որ աս
գիրքին մարգարէութեան խօսքը կրպահեն .
10 Աստուծոյ երկիրպագութիւն ըրէ : Եւ նորէն
ըսաւ ինծի . Աս գիրքին մարգարէական խօսքե-
11 րը մի կնքեր . ինչու որ ժամանակս մօտ է : Ան
որ ամբարշտութիւն կընէ՝ թող ամբարիշտ ըլ-
լայ . ու ան որ աղտոտ է՝ թող աղտոտ մնայ . և
ան որ արդար է թող արդար մնայ . ու ան որ
12 մաքուր է՝ թող մաքուր մնայ : Ահա ես շուտով
կուգամ . և իմ վարձքս իմ հետս է՝ ամէն մէ-
կուն իրենց գործքերուն փոխարէնը հատուցա-
13 նելու : Ես եմ ալփա ու ովմ՝ սկիզբ ու վախճան ,
14 առաջին ու վերջին : Երանելի են անոնք՝ որ
անոր պատուիրանքները կրպահեն . անոնք իշ-
խանութիւն ունին կեանքին ծառէն ուտելու ,
15 և քաղաքին դուռներէն ներս մտնելու : Հայց
դուրս պիտի ելլան շնացողները ու հնխոպոխան
դեղ տրմողները և սպանութիւն ընողները ու
կռապաշտները , և ամէնքը որ սուտութիւնը կըսի-
րեն :
16 Ես Յիսուս իմ հրեշտակս խրկեցի՝ ձեզի նկե-
ղեցիներուդ աս բաները վկայելու . ես Դաւիթի
արմատը ու ցեղը եմ , ու առաւօտեան պայծառ
17 աստղը : Եւ Հոգին ու փեսան՝ որ պիտի գամ .
և ան որ կըլսէ՝ թող ըսէ թէ Եկո՛ր . ու ան որ
ծարաւ է՝ ու ան որ կուզէ կենաց ջուրը ձրի առ-
նել՝ թող գայ :
18 Եւ ես կրվկայեմ ամէնուն , որ աս գիրքին
մարգարէական խօսքերը կրլսէ . Եթէ որ մէկը
ասոր վրայ բան մը կէւելցունէ , Աստուած ալ
անոր վրայ կէւելցունէ ան նօթը պատուհասնե-
19 րը՝ որ աս գիրքին մէջը գրված է . և թէ որ մէ-
կը աս գիրքին մարգարէական խօսքերէն բան մը
կրպակսեցունէ , Աստուած ալ անոր բաժինը
կրպակսեցունէ ու կրկորչ կեանքին ծառէն ու
սուրբերուն քաղաքէն՝ որ աս գիրքին մէջը

20 գրված է։ Ան որ սա բաները վկայեց՝ ըսաւ. Հաւատով կուգամ ես. ամէն։ Եկոյ Տէր
21 Յիսուս Քրիստոս։ Որ Տէր Յիսուս Քրիստոսին շնորհքը բոլորը սուրբ-
բերուն վրայ։
Ամէն։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԻՐԱՆ
Ц.О.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
*Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպագրութեան սխալները։

Էջն·	Տող·	Սխալ·	Ուղիղ·
1	1	ԵԻԵՏԵՐՔՆ	ԵԻԵՏԵՐՔՆ
4	17	Հաւայի ձայն	Հոգւի մէջ ձայն
10	16	մէջն	մէջը
11	27	տաք . ինչ	տաք՝ ինչ
20	26	մինչև ալ	ալ մինչև
21	14	անոր այո	անոր՝ Եայր
	26	կըսեին ատիկա	կըսեին . Ատիկա
25	15	քարոզութիւն	քարոզութիւն
43	25	չարչարվի	չարչարվի
45	23	գեհենը	գեհեանը
60	32	մարդաբէներուն	մարգարէներուն
67	35	բսին	բսեն
69	15	բրան	բրաւ
70	15	, քեզի	քեզի ,
74	8	Հրէանե	Հրէանե
81	3	Հոգին	Հոգին
106	30	, Աստի	. ուստի
120	31	պատրաստեցէք	պատրաստեցէք
131	9	Տէրոլը	Տէրոջը
134	34	բոլըր	բոլորը
137	14	ժողովուր	ժողովուր
137	24	փանուէլի	փանուէլի
139	10	Յորդանան ու	Յորդանանու
150	36	ու	լու
162	29	սուրդ	սուրբ
168	13	Ա՛արդա	Ա՛արթա
176	15	օրը	օր
179	29	ըլան	ըլլան
189	16	անարդըվի	անարգվի
192	3	թիւնը	թուիթիւնը
197	16	սպաննեցին ուստի	սպաննեցին ·
216	35	նրեն	ներեն
223	11	Ճաբայ	Ճամբայ
235	12	գատուկ	գաղտուկ
247	21	Հան	ու Հան

Էջ·	Տող·	Սխալ·	Ուղիղ·
259	33	որդը	որթը
261	4	խարհէ	խարհէ
271	26	ուրբաթի	շաբաթի
272	11	Հիսուսին	Հիսուսին
277	1	ԱՒԵՒԹԵԼԱՑ	ԱՒԵՒԹԵԼԱՑ
279	24	որ	ու
307	26	եկած	եկան
334	20	ձեղ	ձեզ
310	25	աւ	տաւ
351	11	թլվատնակցի	թլվատնիկնցի
368	21	նմանութիւմը , էրէն	նմանութիւմը էրէն
	22	նգանք նաև	նգանք , նաև
369	25	(ըլլալու)	ըլլալու–
380	10	,և ըն	. և թէ որ
382	3	կատարևալ	կատարևալ է
	31	ցոգնեբուն	ցոգնեբուն
400	34	մէչ	մէջ
412	8	մի	մի
425	3	աւ–ջէ	աւջվ
446	21	կրկատարվի	կրկատարվի .
462	8	Հաւատացողնե	Հաւատացողնե
480	31	է	են
488	18	կուգայ	կուգայ
497	20	Հրամանով	Հրամանով՝
502	20	ամէքն	ամէնքն
	37	խօրհրուս	խորհրդու
545	3	է Հապա	է . Հապա
551	31	ուժովցան	ուժովցան .
556	5	չէր	չէ
573	19	ուխթի	ուխթը
592	26	չէղած	չեղած
623	14	կրի	րի
632	28	պիտի	ու պիտի

Եւ ա՛ռաւօտ կանուխ վաղ,
Երբ հաց ուզեցի ..... չկայ.
Աման ու պաղարտ ապուր. Երբոր
Այդ տեսայ ես ինձ կորայ։

Եւ պաղարտ ապուրն ալ ես,
Ա՛ն, ինչպէս ցանկացած էի,
Ա՛ր հետիոտիկ ուղարկեցի,
Ցորեան ալիւր գնելու համար։